ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԵԾՆ ՍԱՀԻՆ

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Աեծն Վահէն

ԵՐԵՎԱՆ 2011
Հեղինակային հրատարակութիւն

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԵԾՆ ՇԱՀԷՆ

ԵՐԵՎԱՆ, 2011

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Z)
Պ 505

Պետրոսեան Աշոտ
Պ 505 Մեծն Շահէն: [Ազատագրական չարժման գործիչ Շահէն Մեղրեանի մասին] /Աշոտ Պետրոսեան.- Եր.: Հեղինակային հրատ., 2011.-
732 էջ:

Գրքում լուսաբանւում են ազատագրական չարժման նշանաւոր գործիչ, հայդուկապետ ***Շահէն Զինաւորի Մեղրեանի*** *կենսագործունէութեան էջերը, ազատագրական պայքարի ծաւալումը Շահումեանում, հերոսի ծննդավայրի եւ Գիւլիստանի մելիքութեան պատմաաշխարհագրական առանձնայատկութիւնները: Յատուկ ուշադրութեան առարկայ են դարձել նաեւ Մեղրեան տոհմն ու Շահէն Մեղրեանի ընտանիքը, մարտական գործողութիւնները Շահումեանում եւ հայդուկային պայքարի ծաւալումն ու ընթացքը:*

Գրքի ստեղծման եւ հրապարակման ընթացքում հեղինակին նախանձախնդիր աջակցութիւն է ցուցաբերել ***Պետրոս Մեղրեանը*** *՝ սատար լինելով բոլոր հարցերում:*

Հեղինակը չնորհակալութիւն է յայտնում տեղեկատու եւ մեկնաբանող բոլոր անձանց:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Z)

ISBN 978-99939-0-0100-5

© Պետրոսեան Ա., 2011

Ներածություն

Շահումեանի խնդրի եւ Շահէն Մեղրեանի կենսագործնէութեան լուսաբանման վիճակը

20-րդ դարավերջի Հայոց ազատագրական պայքարի մեծագոյն արդիւնքը մեր յաղթանակն է Արցախեան պատերազմում, որ ձեռք է բերուել հազարաւոր հայերի արեան գնով, մեծագոյն զոհերով ու մարտիրոսութեամբ: Փառաւոր յաղթանակների, հերոսական աննկարագրելի սխրանքների ու ջանադրութեան հետ միասին ունեցանք ցաւալի պարտութիւններ, կատարուեցին անարգ գործեր, պատերազմական վիճակից անճնապէս օգտուելու մոլուցք, որոնց քայքայիչ ազդեցութիւնը զգացւում է մինչեւ օրս: Տեղի ունեցան ողբերգական իրադարձութիւններ, որոնց արդիւնքում կորցրինք հայկական այնպիսի տարածքներ, որտեղ հազարամեակների անընդմէջ չարունակականութեամբ հայերն ապրել են իբրեւ հիմնական բնակիչներ: Ի միտ ունենք Գարդման գաւառի չրջանները (Արծուաշէնից մինչեւ Գետաշէն), Մարտակերտի մի չարք գիւղեր եւ յատկապէս Գիւլիստանի գաւառը (Շահումեանի չրջան):

Նախ մի քանի խօսքով անդրադառնանք բուն խնդրի սահմանմանը. ինչպիսի՞ երկրամաս է Շահումեանը եւ ինչո՞ւ այն ընկաւ:

Շահումեանի խնդիրը Արցախեան հիմնահարցի մի մասն է, ինչպէս որ ինքը՝ Շահումեան-Գիւլիստանն է Արցախի մաս եւ դրանց կարելի չէ առանձնացնել ու հակադրել իրար: Սակայն ոչ միայն առանձնացրել, այլեւ բաժանել, կտրել են իրարից: Արդիւնքում՝ Շահումեանը մնացել է թուրքի գերութեան տակ:

Այսօր միջազգային քաղաքական-դիւանագիտական ասպարէզում, ուր չօշափւում է Արցախեան հարցը, մեր հայ դիւանագէտները գոնէ իբրեւ հակափաստարկ, իբրեւ զաւթեալ տարածք չեն ներկայացնում ո՛չ Շահումեանը, ո՛չ Արծուաշէնը՝ կարծես հաշտուելով այն մտքի հետ, որ դրանք հայկական տարածքներ չեն:

*Պաշտօնն ստանձնելուց յետոյ ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին նախագահ **Արթուր Մկրտչեանն** առաջին այցելութիւնը կատարել է Շահումեան՝ դրանով փաստելով շրջանի կարեւորութիւնը ԼՂՀի եւ ՀՀի համար: Նա այց անելով Գիւլիստանի Սբ Աստուածածին եկեղեցի եւ խորապէս տպաւորուելով՝ յիշատակի մի հակիրճ գիր է թողել եկեղեցու Յիշատակաց մատեանում. **«Այս ամէնի տէրը իրաւունք չունի մեռնելու: Մեր պապերի ստեղծածը մերը չի, այլ մեր թոռներինը եւ պարտաւոր ենք յանձնել նրանց այնպէս, ինչպէս ստացել ենք»:** Սակայն Արթուր Մկրտչեանի զոհուելուց յետոյ Շահումեանի եւ ԼՂՀի միջեւ բնականոն կապը դրեթէ չի պահպանուել: Խորհրդային բանակի զինեալ ուժերին իրենցով արած թուրք-թաթարների 1992 թուականի յունիսեան յարձակման ժամանակ վտանգուած եւ մենակ մնացած Շահումեանը օգնութեան ազդակներ էր ուղարկում Երեւան ու Մոսկուա, սակայն դրանք չէին ներգործում հատուածապաշտական չահերով առաջնորդուող ղեկավարների քարացած սրտերին: Նոյնիսկ մտածելն ահաւոր է, թէ Հայաստանում գործող որոշ ուժեր ինչո՞վ են առաջնորդուել հայկական հողերը եւ նրանց վրայ ապրող ժողովրդին թշնամու մագիլների մէջ սառնասրտօրէն թողնելիս:*

***Շահէն Մեղրեանը** մեր վերջին Ազատամարտի նշանաւոր դէմքերից է, ազգային-ազատագրական պայքարի ռահվիրայ, ազգային բանակ ստեղծող ռազմավարներից, Գիւլիստան գաւառի ռազմա-քաղաքական եւ սոցիալ-տնտեսական առաջնորդ, Շահումեանի շրջանում գործող զօրքի գլխաւոր հրամանատար, հայդուկային պատերազմի նախաձեռնող մի բացառիկ անհատականութիւն: Արցախեան հերոսների բոյլի մէջ, սակայն, նա իրեն պատշաճող գնահատմանն տակաւին չի արժանացել: Ինչպէս Հայաստանի Հանրապետութեան ապազգային որոշ իշխանաւորների կամօք Շահումեանի շրջանն օտարուեց, դուրս մղուեց Հայրենիքի ազատագրուելիք սահմաններից, այնպէս էլ Հայրենիքի այդ շրջանի յոգնատանջ եւ հերոս ղեկավարը ո՛չ միայն անտեսուեց, արհամարհուեց, այլեւ բախտորոշ պահին*

դաւաճանաբար լքուեց իր համազգի «հերոսների» կողմից: Ինչպէս թերագնահատուել, անտեսուել եւ հալածուել է կենդանութեան օրօք, այնպէս էլ մահից յետոյ է այդ անարդարութիւնը շարունակւում ցայսօր:

Շահումեանի չրջանը եւ Շահէն Մեղրեանի անձը մենք խորհրդագիտօրէն նոյնացնում ենք, ուստի մէկը ճանաչելու համար պիտի ճանաչել միւսին: Արցախեան պատերազմի ուրիշ ո՛չ մի հերոսի չենք ճանաչում, որ այնքան ներհիւսուած լինէր իր հայրենի երկրամասին, այնքան հարազատօրէն վերարտադրէր այդ երկրամասի բնութեան եւ մարդու առանձնայատկութիւնները: Եւ այդ երկու էութիւնների նոյնականութիւնը թոյլ է տալիս մէկի ողբերգական կորուստն ընդունել իբրեւ մահացու հարուած միւսին:

*Բազմաթիւ յուշագիրներ վկայում են, որ **Շահէն Մեղրեանն իր բարոյա-հոգեբանական նկարագրով, պահուածքով եւ վարքով շատ է յիշեցնում Արցախի մելիքներին**: Տողերիս հեղինակը եւս ճանաչելով հերոսին, նոյն կարծիքին է: Համակողմ զարգացած հզօր անհատականութիւն, հաղորդասէր եւ տիրական, բայց ո՛չ քմահաճօրէն իր կամքը թելադրող,- հեչտութեամբ էր թափանցում մարդկանց հոգեվիճակի մէջ, ի բնութենէ աչքի էր ընկնում նուրբ դիւանագիտութեամբ, միաժամանակ լինելով միանգամայն անկեղծ: Օժտուած էր ներհուն խոհականութեամբ եւ աչխոյժ խառնուածքով, աննկուն էր, ունէր լաւատես բնաւորութիւն, նպատակամէտ էր եւ յոյժ գործնական: Բոլոր պարագաներին ինքն էր անում այն ամէնն, ինչ ուրիշները հաճույքով այլոց վրայ կը բարդէին: Այս եւ այլ յատկանիշների չնորհիւ նա կարճ ժամանակում յայտնւում է համընդհանուր ուշադրութեան կենտրոնում եւ իր կամքից անկախ, կարծես ժառանգաբար յանձն է առնում չրջանի թէ՛ ռազմաքաղաքական առաջնորդութիւնը եւ թէ՛ տնտեսական կեանքի կազմակերպումը:*

Ինչպէ՞ս են արտացոլուած Արցախեան պատերազմը եւ յատկապէս Շահումեանի իրաղարձութիւնները հայկական հրապարակագրութեան եւ գրականութեան մէջ:

Այս հարցին միանշանակ պատասխան տալ հնարաւոր չէ, միայն կարելի է ասել, թէ դա չէ արուած բաւարար խորութեամբ եւ անաչառութեամբ:

*Մեր տարածաշրջանում հազարամեակներ ապրած ազգի՝ հայոց կեցուածեան հերոսականն ու ողբերգականը թելադրում են աւելի լուրջ մօտեցում պատերազմական իրականութեանը. դասեր առնել պատմութիւնից, բացայայտել իրողութիւնների փոխկապակցուածութիւնն ու պատճառահետեւանքային կապերը, այսինքն՝ իմանալ **պատմութեան փիլիսոփայութիւնը**, ազգային կեցուածեան հիմքում ընկած պատմական զարգացման խորքային կապերն ու սկզբունքները, գործօններն ու օրինաչափութիւնները, չարժիչ ուժերն ու հնարաւոր հետեւանքները, եւ որպէս անհրաժեշտ պայման՝ ճշմարտասէր եւ անաչառ լինել: Ահա նախապայման խթանիչները, առանց որոնց դժուար է լաւ արդիւնք ակնկալել: Պատմական իրադարձութիւնները հետազօտող եւ ճշմարտութեան ձգտող մարդը պիտի կարողանայ ենթակայական դիրքորոշումների անտառից դուրս գալ եւ խուսափել աւելորդ վիճաբանութիւններից: Դրա համար անհրաժեշտ է նախ յայտնաբերել որեւէ տեսութեան առանցքը կազմող ելակէտային դրոյթները կամ աքսիոմները, նախնական փաստերը, եւ յստակեցնել այն հիմնորոշ սկզբունքները, որոնց վրայ պիտի յենուի մտքի կառոյցը:*

Հնուց ի վեր եղել են գրագէտ եւ բարեկիրթ մարդիկ՝ պատմիչներ, մատենագիրներ, գրիչներ առհասարակ, ովքեր գերազանց տիրապետել են իրենց խնդրոյ առարկային եւ դա իրենց երկերով մշակութային իրողութիւն դարձրել: Նրանք մեր պատմութեան մէջ մնացել են որպէս Հայոց մշակոյթի երեւելի դէմքեր, որոնց հոգու եւ մտքի արարմունքը մեր ազգային պատմութեան հոգեւոր գանձարանն է մտել: Որպէս յաւիտենական ճշմարտութիւնների արձանագրում՝ սերունդները կրթուել եւ դաստիարակուել են ա՛յդ ստեղծագործութիւններով: Դրանցով մենք որպէս ազգ պատշաճօրէն ներկայանում ենք աշխարհին: Հայոց ռազմագիտութեան հիմքերը նշմարւում են մեր աւանդավէպերի, Հայկի եւ Բելի, Վահագնի, Սասնայ ծռե-

*րի, Տորք Անգեղի եւ այլ գրոյցների մէջ, սակայն ռազմագրութեան հիմքը դրել են մտքի այնպիսի տիտաններ, ինչպիսիք են **Մովսէս Խորենացին**, **Եղիշէն** եւ ուրիշներ: Ներկայումս վիճակն այլ է, գրիչները դարձել են գրողներ, որոնք չա՞տ-չատ են, իսկ նրանց մէջ պատմութիւն աղաւաղողները փոքր թիւ չեն կազմում:*

*Պատմութեան խեղաթիւրումն ու նենգափոխումը սկսւում են պատմական իրաղարձութիւնների հետ միասին: Ներկայումս ի յայտ են եկել պատմաբան կոչուողներ, ովքեր հակադրում են մեր ազգի իրարայաջորդ՝ հեթանոսական եւ քրիստոնէական պատմաշրջանները ու դրանցում ձեւաւորուած քաղաքակրթական եւ մշակութային չերտերը եւ, ընդունելով մէկը՝ միւսը համարում են օտարածին, անտեսում դրանց օրգանական կապը պատմական զարգացման ընթացքում: Պատերազմական իրաղարձութիւնները այսօր պատմագրւում են երբեմն տուրք տալով քաղաքական վնասաբեր դիրքորոշումների, կուսակցական եւ կլանային հատուածական չահերի: Վերջինիս պատճառը նաեւ պատմութիւն սիրող որոշ մարդկանց **անհաւատութիւնն** է: Պատմութեան առարկայական ընթացքն անտեսելով՝ դա վերաձեւում են ըստ իրենց նախասիրութեան կամ մասնատիրական (պարտիկուլեար) չահերի, կանխակալ պատկերացումների՝ կիրառելով նոյնիսկ քմահաճ վերաբերմունք եւ կամայականութիւն: Նոյնիսկ անառարկելի եւ սրբութիւն համարուող փաստական իրողութիւններն ու արժէքները նրանք կասկածի տակ են առնում: Անթոյլատրելի է պատմութիւնը ներկայացնել՝ ելնելով մասնատիրական, կուսակցական, դասակարգային կամ որեւէ այլ խմբային չահերից եւ ո՛չ թէ ելակէտ ունենալով համազգային, ինչու չէ՝ նաեւ համամարդկային չափանիշներն ու արժէքաբանութիւնը:*

Սոցիալական անարդարութեան համախտանիշը թափանցել է նաեւ այս ասպարէզ, եւ աչառու վերաբերմունքն ուղեկցում է մարդուն ո՛չ միայն նրա կեանքի ամբողջ ընթացքին, այլեւ արտայայտւում է նոյնիսկ մահից յետոյ: Մարդու (հերոսի) ճանաչման ընթացքը, նրա իսկական տեղի որոշումը, կենսագոր-

ծունկէ ուժեան բնորոշումը եւ «փառքի բաշխումը» տեղի են ունենում անհամարժէք եւ անարդար կերպով: Իրենց մերձաւորներից հերոսներ են «թխում» եւ պարտադրում ազգին՝ հարուածած հասցնելով սերունդների դաստիարակութեան գործին: Պատերազմական որեւէ իրադարձութեան մեկնութիւնն ու աչխարհին ներկայացնելու ձեւը դառնում է որեւէ իշխողի, կլանի, մեծաւորի քմահաճոյքի առարկայ: Կորցնելով արդարութեան զգացումը՝ հերոսներին դաւաճաններ են դուրս բերում, վախկոտներից զօրավարներ թխում:

Հակասական ու ներհակ տեսակէտների եւ տեսութիւնների հեղինակներ են դառնում, այսպիսով, ո՛չ միայն իրար հետ համեմատող երկրների գաղափարախօսները, այլեւ նոյն երկրի՝ տարբեր նպատակներ հետապնդող քաղաքական ուժերի ներկայացուցիչները: Շահումեանն անպայմանօրէն թշնամուն թողնելու քաղաքական կողմնորոշման կողմնակիցները երկրամասը թշնամուն յանձնելուց առաջ հաւանաբար խորհել են, թէ ինչպէս պիտի փորձեն արդարացնել իրենց արարքը: Այլապէս ինչո՞ւ առանց դոյզն ինչ ամօթի զգացման՝ նրանք պիտի յայտարարէին, թէ շահումեանցիները չկռուեցին, վախեցան, իսկ նրանց հրամանատար Շահէնը ծախեց երկիրը: Նրանք համոզուած էին, որ կ՛անցնի այդ խաբէութիւնը, իսկ յետագայում ամէն ինչ կը խառնուի եւ այլեւս հնարաւոր չի լինի պարզել իսկութիւնը:

*Ովքեր ռազմաճակատում չեն եղել եւ պատմութեան տրամաբանութեանը, պատմական զարգացման օրինաչափութիւններին ծանօթ չեն, գուցէեւ հաւատան, որ իրօք, **Շահէն Մեղրեանը** Շահումեանի չրջանը ծախել է: Ըստ այս ամբոխայինի տրամաբանութեան՝ դուրս է գալիս, որ շահումեանցիները եւ իրենց հրամանատարը հայրենեաց երկիրը ծախել են, որպէսզի թշնամուց հալածուեն, աչխարհէ-աչխարհ ցիրուցան լինեն եւ կարօտաբաղձութիւնից մեռնեն...*

Այդպիսի մոգոնումների հեղինակները ոչ թէ դաչտային հրամանատարներն էին, այլ նրանք, ովքեր պարապ էին մնացել: Այս պատերազմն էլ փայլուն զօրավարների հետ միաժա-

մանակ ի յայտ բերեց «գեներալներ», ովքեր միայն տօնահանդէսներում են փայլում: Միայն մէկ օրինակ. Արծուաչէնը թշնամուն յանձնողներն իրենց արարքը թաքցնելու համար կիրովականի գնդի խեղճ նորակոչիկներին տարան եւ մոլոր գառների նման թշնամու բերանը տուեցին: Դա էլ բաւարար չէր՝ անփառունակ կերպով թշնամուց կրաւորաբար կոտորուածներին յետոյ պարգեւատրեցին Մարտական խաչ շքանշաններով՝ ի սպառ իմաստազրկելով հերոսներին փառաբանելու բարեկիրթ եղանակը: Այդ «սխրագործութեան» հեղինակները, ովքեր կարողացան Արծուաչէնը «հերոսաբար» յանձնել թշնամուն, ներկայումս բարձր պաշտօններ են զբաղեցնում:

*Մարդկային հանրութիւնն աճում է երկու ոտքի վրայ: Դրանցից մէկը **ընկերայնութիւնն է,** որը նաեւ հիմք է մարդկային գոյութեան, իսկ միւսը **եղբայրութիւնն է,** որը միաւորում է ազգը միեւնոյն մարմնի եւ գաղափարի (հոգու) շուրջ: Եղբայրութեան իրողութիւնը ենթադրում կամ միտում է դէպի նահապետականութիւնը: Արցախը միշտ էլ ինչ-որ չափով եղել է նահապետական, եւ Արցախի զաւակաց փոխյարաբերութիւնը կարգաւորուել է հէնց եղբայրութեան, միասնական հարազատական կապի շուրջ: Հայկեան ոգին իր անարատ դրսեւորումներով մինչեւ 20-րդ դարը Արցախում պահպանուել է առաւելագոյն չափով:*

*Մեր ուսումնասիրութիւնից անհրկեայ հանգել ենք այն եզրակացութեան, որ Շահումեանի շրջանի պաշտպանութեան ծանրութիւնը թողել են **Շահէն Մեղրեանի** ուսերին. նրան ո՛չ միայն չեն օգնել, այլեւ իրենց կեղծ խոստումներով նպաստել են շրջանի անկմանը՝ փորձելով հեղինակազրկել ինչպէս իրենց հակառակորդ քաղաքական գործչին, այնպէս էլ քաղաքական կուսակցութեանը: Այո, Արցախեան պատերազմի ժամանակ, ցաւօք, եղել են ստոր հաշիւներ, որի արդիւնքը հայրենիքի, երկրի ամբողջականութեան կորուստն էր:*

Հայաստանի Հանրապետութեան, ԼՂՀ-ի եւ Շահումեանի միջեւ բնականոն կապ չի եղել: Թէեւ Շահումեանի շրջանն այդտեղ ապրող հայերի կամքի արտայայտութեամբ միաւորուել է

ԼՂՀ-ին, սակայն Ստեփանակերտի եւ Շահումեանի միջեւ կա-յուն, բնականոն կապերը չեն պահպանուել: Շահումեանի ողբերգութեան պատճառներից մէկն այն է, որ այդ շրջանը դիտուում էր իբրեւ **Շահէն Մեղրեանի հայրենիք**: *Այսինքն՝ Հայ ազգի աստուածապարգեւ երկրից հրաժարում են, օտարում, մասնաւորեցնում եւ նրա պաշտպանութեան պատասխանատուութիւնն իրենցից թօթափելով՝ գցում են այն մարդկանց վրայ, ովքեր այդտեղ են ծնուել՝ կասկածի տակ դնելով միասնական ազգի, հայրենիքի եւ պետութեան գաղափարը:*

Խորհրդային կարգերը մեծ հարուած հասցրին Արցախին ո՛չ միայն տեղիս հայութեանը տարասփռելու քաղաքականութեամբ, այլեւ անմիջական՝ տարածքային իմաստով: Շահումեանի շրջանը հանեցին, առանձնացրին ԼՂԻՄ-ից: Տասնեակ տարիներ մեկուսացեալ կեանքը խորթութեան զգացում առաջ բերեց այն աստիճան, որ պատերազմական տարիներին Ղարաբաղի կտրիճ տղաներն այլեւս Շահումեանի կտրիճ տղաներին չէին ընդունում որպէս իրենց եղբայրներ: Չէին ընդունում եւ... չէին օգնում: Զօգնեցի՛ն: Զօգնելու հիմքը Արցախի զօրապետներից մէկը հիմնաւորում է նրանով, որ **Շահէն Մեղրեանը** *կապուած էր անմիջականօրէն Երեւանի հետ եւ օգնութիւն այնտեղից էլ պիտի ստանար: Թւում է հիմնաւոր բացատրութիւն է. եթէ դու իմ հրամանատարութեան տակ չես, եւ ինձ չես ընդունում իբրեւ գերագոյն հեղինակութիւն, ուրեմն՝ գնա՛ եւ արեւիդ ճէնն ածա:*

Փոխյարաբերութեան այս կերպը կարօտ է մեկնութեան: Առարկայական դժուարութիւնները եւ ենթակայական հանգամանքները ճակատագրական, օրհասական պահերին պիտի չդրդեն հրաժարել կարօտեալին, կարիքաւորին եղբայրաբար ձեռք մեկնելուց, ինչպէս վարուեց Արցախի գերագոյն հրամանատարութիւնը: Մելիքների ժամանակ, երբ կապի միջոցներն աւելի թոյլ էին, իրար անտեսելու վերաբերմունք չի եղել, եթէ հաշուից դուրս համարենք Մելիք-Շահնազար Բ-ին:

Արցախի հրամանատարութեան հայրենատիրական գործունէութիւնը եղել է նշանակալից եւ արժանիօրէն գնահատուել է,

սակայն Շահումեանի կորուստը պիտի ծանրանայ նաեւ նրանց խղճի վրայ, մանաւանդ դրանից յետոյ Մարտակերտի մեծ մասը դրեթէ ակնթարթօրէն յանձնուեց թուրքերին: Ո՞րն էր այդ ամէնի օգուտը, չահը: Զէ՞ որ Շահումեանի շրջանը Մարտակերտի շրջանի, հետեւապէս ԼՂՀի ապաւէն - պարիսպն էր: Բացի այդ, երբ դեռ Լաչինի ճանապարհը փակ էր, Արցախի մարզն օգնութիւն ստանում էր Շահումեանով եւ Շահումեանն իր հերթին միշտ օգնում էր Մարտակերտին:

Այս ամէնի վերջնական պատճառը անհաւատ ժամանակաշրջանի հոգեբանական խեղումներն էին եւ մեր մէջ թափանցած կուսակցական հիւանդութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան այն ժամանակուայ նախագահի եւ նրա շրջապատի կուսակցամոլութիւնն ու հակադաշնակցականութիւնը:

Հատուածապաշտական վերաբերմունքն այսօր էլ շարունակւում է: Ովքեր Շահումեանի շրջանի ժամանակաւոր կորուստը համարում են միմիայն «շահումեանցիների հայրենի երկրի» կորուստ, նրանք պարզապէս լրացնում են պակասամիտների շարքը: Վա՜յ մեզ, եթէ ամբողջական Հայաստանի գաղափարից դոյզն ինչ նահանջենք, եթէ Հայաստան աշխարհի ամէն հողակտոր, ամէն բնակավայր ամենքիս համար հայրենի եւ հարազատ չլինեն: Ներկայումս միայն անուանական, եւ ոչ էութեամբ, որոշ հայեր մեր հասարակութեան մէջ տարբեր բաժանումներ են մտցնում՝ «ղարաբաղցի», «հայաստանցի», «մարտունեցի», «քեաւառցի»... Մարդկային յիշողութիւնն այնքան է տկարացել, որ չեն էլ պատկերացնում, որ այսօրուայ Թալինի բնակչութիւնը մեծամասնաբար սասունցիներ են, իսկ Վայոց Ձորի, Սիսիանի մէկ մասի, նաեւ Հադրութի, Արարատեան դաշտի որոշ շրջանների բնակիչների զգալի տոկոսը մեծամասնաբար խոյեցիների կամ Պարսկահայքի այլ շրջաններից գաղթածներ են: Շարունակական տեղաշարժերի ենթարկուած Հայ ազգի ո՞ր զաւակն իր հայրենիքը չի համարի Մեծ Հայքն առհասարակ: Այդպիսի տարրական իրողութիւնների մասին ստիպուած ենք խօսել, որովհետեւ նշաւակում ենք իրար, ծննդավայրային հիմքով ենք գնահատում եւ պատկերացում

կազմում, ծաղրական անեկդոտներ պատմում մի որեւէ բնակավայրի վրայ ապրողների մասին, նշաւակում Աստուծոյ ստեղծած էակներին եւ այն տեղանքը, որը նախատեսուած է մարդկային բնակութեան համար: Ծաղրանքի ժանրը եւ սովորութիւնը ծաղկեց խորհրդային անաստուածութեան շրջանում: Եթէ մեր մէջ սպաննենք Աստծուն՝ իրօք ամէն ինչ կը դառնայ զազրելի ու ծաղրելի: Այս բոլորից յետոյ բացւում է ոսոխի ճանապարհը. նա գալիս է եւ մեր երկիրը բռնակցում, իսկ մեզ՝ իրեն հպատակեցնում:

Հայաստանի թշնամիները եւ ոգէտ հայերի գանգուածը ներկայումս մեր ազգը քայքայում են նաեւ էլիտարութեան («ազնուատոհմիկներ») հիմքով, որը գալիս է կրօնական գրականութիւնից, ուր նշուած է Աստուծոյ ընտրեալ ազգի անունը: Մոռանում ենք, որ Քրիստոս եկաւ, վերացրեց ընտրեալութիւնը եւ նոյնիսկ խուժին ու դուժին քրիստոնեայ դարձնելով՝ նրանց էլ փրկութեան հնարաւորութիւն տուեց: Իսկ մենք՝ հայերս, միեւնոյն ազգի մէջ ընտրեալութեան որոմն ենք ցանում, տրոհում, տեսակաբաժանում ենք կենսաբանական հիմքի վրայ եւ կատարելութեան ենք տենչում (տենչո՞ւմ ենք արդեօք)՝ առանց հողը եւ սերմերը պատրաստելու:

Եւ այսպէս, տեսակներ, տեսակէտներ, ամենուր բաժանումներ, մասնակի շահերի գերակայութիւն եւ ազգային շահի ստորադրութիւն: Մեր հանրային կեանքում «էլիտար» կեղծիքն ու պատրանքները, նաեւ սադրանքներն այնքան մեծ տեղ ունեն, որ իբրեւ դրանց տրամաբանական եւ անխուսափելի արդիւնք ի յայտ են եկել սոցիալական ահաւոր բեւեռացումը, աղանդաւորութեան վարակը, արտագաղթը, բռնութիւնները, դաժանահակութիւնը, դաւաճանութիւնը, ծայրայեղ շահագործումը...: Արդիւնքում Մեծ Հայքը փոքրացել է մինչեւ ՀԽՍՀ եւ նրան յաջորդած Հայաստանի Հանրապետութիւն: Այսքանով հանդերձ, էլի փա՛ռք Աստուծոյ, մնում ենք իբրեւ ազգային միաւոր եւ լաւ թէ վատ երկիր ունենք (մեր փոխարէն մէկ ուրիշն այս տարածաշրջանում գուցէ այդքանն էլ չունենար):

Հանրային առաջադիմութեան հիմքում ընկած են բարե-

պաշտուլթեան վրայ խարսխուող բարոյական ապրելակերպն ու մարդկանց համագործակցութիւնը: *Եթէ բացակայում է բարեպաշտութիւնը, բացակայում է եւ բարոյականութիւնը, իսկ եթէ վերջինս բացակայում է, հանրային տարբերութիւններն աճելով՝ դառնում են հակասութիւններ, հակասութիւնները՝ խորանալով՝ վերածւում են հակադրութիւնների, հակադրութիւնները՝ բախումների, իսկ բախումներն աւարտւում են ողբերգութեամբ, հայրենիքի տարածքային եւ պետական կորստեամբ ու ազգաբնակչութեան ջարդով: Մեզ համար անկասկածելի ճշմարտութիւն է այն պատմական փաստը, որ մեր ներկայիս դժուարութիւնները մեծամասամբ պայմանաւորուած են խորհրդային դարաշրջանի անհաւատութեամբ եւ ներկայումս դրա իներցիալ շարունակութեամբ:* Անհաւատութիւնն անհաւատարմութիւն է ծնում: *Մարդկային փոխյարաբերութիւնները բարեպաշտութեան հիմքի վրայ կարգաւորող հաւատքի եւ դրա հաստատութիւնների բացակայութեան պայմաններում հակասութիւններն աճում եւ հասնում են ծայրայեղութեան:*

Հակակշռութեան օրէնքը *(**հակասութիւնները**) իրականութեան բնականոն գոյութեան եւ զարգացման սկզբունքներից է, բնական կարգ, բազմակերպութիւն, որը հարստութիւն եւ յարաշարժ (դինամիկ) զարգացում է ապահովում հանրային որեւէ խմբի կամ նոյնիսկ ամբողջական ազգութեան համար:* ***Ճշմարիտ հաւատքի եւ խելացի ինքնակառավարման ու կառավարման պայմաններում այդպիսի հակասութիւնները, իրօք, անհրաժեշտ են****, որոնց չափաւոր առկայութիւնը թափ է հաղորդում մարդկային գործերին:* ***Իրար հակակշռող տարրերի ներդաշնակութեամբ*** *են հասնում **արդարակեցութեան, ճշմարիտ ապրելակերպի** եւ **բարոյական մաքրութեան:***

Անհատների, խմբերի եւ հանուր ազգութեան կեցութեան հակասութիւնների լուծման համապատասխան միջոցներ գոյութիւն ունեն: *Երկու հակադիր կողմերի անհաշտութիւնը լուծվում է **երրորդի** միջոցով:*

Աչխարհն Աստուծոյ ստեղծագործութիւնն է, ուստի այն պիտի գոյութիւն ունենայ եւ զարգանայ Աստուածային օրէնքնե-

րով կամ Աստուծոյ կամքով, իսկ Աստուածային կամքը հաս-կացւում եւ իրագործւում է միջնորդաւորուած եղանակով՝ իմաստուն եւ բարեպաշտ մարդկանց միջոցով: Աստուծոյ իսկ տնօրինութեամբ բարու եւ չարի ընտրութեան ազատութիւնը մարդուն է թողնուած:

Մի անգամ եւս չեչտենք՝ Աստուածային կամքի անտեսումը կամ նրան հաղորդ չլինելը միշտ աւարտւում է ողբերգութեամբ:

Արդէն քանի դար մեզ պակասում է ժողովրդի հոգու խոր-քում փայփայած արժանաւոր եւ բարեկիրթ իշխանութիւն, որն ի զօրու լինէր իր ձեռքը վերցնելու ազգային պետութեան ղե-կավարութիւնը, որպէսզի կարողանայինք վերոնշեալ բարդոյթ-ներից ազատուել եւ սկսուէր հակադարձ շարժումը՝ Հայաստա-նի Հանրապետութիւնից դէպի ՄԵԾ ՀԱՅՔ:

Բացի էնթակայականից, կան նաեւ առարկայական դժուա-րութիւններ: Մարդուն դժուարամատչելի են ո՛չ միայն անցեա-լի, այլեւ ընթացիկ իրադարձութեանց ընկալումն ու ճշմարիտ ըմբռնումը. դրանք յաճախ լինում են տեսադաշտից դուրս, իսկ տեսնելիս էլ գուցէեւ «չեն տեսնում», այսինքն՝ չեն հասկա-նում: Մեր տեսադաշտից դուրս եղածների մասին մենք պատ-կերացում ենք կազմում ըստ այլոց պատկերացման կամ մեկ-նութեան, որը կարող է լինել ճշմարիտ կամ կեղծ: Սակայն մենք պիտի անտարակոյս հաւատ չընծայենք նաեւ մեր աչքի տեսա-ծին, քանզի այն եւս կարող է լինել թուացողութիւն, պատրանք կամ խաբէութիւն: Սրանով ուզում ենք ասել, որ պատմութիւ-նը գիտութիւն է եւ ոչ թէ մանկական խաղ կամ չարակամու-թեան մարզարան: Ռազմագրութեան ասպարէզ են թափանցում նաեւ մեծաթիւ անպատրաստներ: Պատերազմի եւ ազատամար-տիկների վերաբերեալ ում մտքով ի՛նչ անցնում՝ գրում է, առանց լուրջ ուսումնասիրութեան, առանց ռազմարուեստի տարրերին ծանօթ լինելու, առանց անձնական փորձառութեան եւ այլոց փորձից օգտուել կարողանալու: Այսինքն՝ պատերազ-մական իրադարձութիւնները եւ պատերազմի մասնակիցներին

անլուրջ վերաբերմունքի առարկայ են դարձնում: Ժամանակակից պատմական նիւթի ուսումնասիրութեան պարագային հեղինակն իր իմացական հնարաւորութիւններից բացի պէտք է դիմի իրադարձութեանց մասնակից մարդկանց յուշագիր օժանդակութեանը, ովքեր ժամանակաշրջանն իմաստաւորելու եւ ճանաչելու որոշակի կարողութիւն ունեն, որպէսզի պատահական մէկը երեւութականը, թուացեալը չներկայացնի իբրեւ ճշմարտութիւն, խաբէութիւնն՝ իբրեւ իսկութիւն: Սոյն գրքի հեղինակը հարցազրոյցներ է ունեցել Շահէն Մեղրեանի հարազատների, ընկերների, զինակիցների, քաղաքական եւ ազգային գործիչների հետ՝ այն համոզմամբ, որ ժամանակակից իրադարձութիւնների անաչառ լուսաբանումը հնարաւոր է միայն ազգային հաւաքական գիտակցութեան լոյսի տակ: Բազմաթիւ եւ բազմազան վկայութիւնները, համանման մեկնութիւնները կարող են հիմք դառնալ ճշմարիտ եզրահանգումների: Շահէն Մեղրեանի զինակից ընկերներից եղան դէմքեր, որոնք լռեցին մինչեւ վերջ եւ նրանց փոխարէն քարերը, քարերը խօսեցին:

Քանի որ Շահէն Մեղրեանը պատմական դէմք է, նպատակայարմար է նրա կենսագործունէութիւնն ու հոգեբարոյական կերպարը կապել իր պատմաաշխարհագրական միջավայրին: Ներկայիս չահումեանցիները Գիւլիստանում հազարամեակներ ապրած ժողովրդի ժառանգներն են, ուստի գրքի առաջին մասը՝ պատմական ակնարկը, կազմել ենք՝ օգտագործելով թէ՛ պատմիչների եւ թէ՛ յետագայ դարերի հեղինակների ուսումնասիրութիւնները. ***Կիրակոս Գանձակեցի****, «Հայոց պատմութիւն», եր., 1982,* ***Մովսէս Կաղանկատուացի****, «Պատմութիւն Աղուանից աշխարհի», եր., 1969,* ***Րաֆֆի****, «Խամսայի մելիքութիւնները», Երկերի ժողովածու, հ. 10, եր., 1964,* ***Մակար եպս. Բարխուդարեանց****, «Արցախ», եր., 1999,* ***Լէօ****, «Ազատագրական չարժումներ», Երկերի ժողովածու, հ. 3, գիրք Բ, եր., 1973,* ***Երուանդ Լալայեան,*** *«Արցախ», Երկերի ժողովածու, հ. 2, եր., 1988,* ***Ղեւոնդ Ալիշան****, «Արցախ», եր., 1993,* ***Բագրատ Ուլուբաբեան,*** *«Խաչէնի իշխանութիւնը 10-16-րդ դդ.», եր., 1975, եւ «Արցախեան գոյամարտ», եր., 1994,* ***Կիմ***

Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ. Գոյութեան պայքար», *գիրք Ա եւ գիրք Բ, եր., 1993,* ***Արտակ Ղուլեան***, «Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները», *եր., 2001,* ***Սամուէլ Կարապետեան,*** *«Հիւսիսային Արցախ», եր., 2004,* ***Արտակ Մաղալեան,*** «Արցախի մելիքութիւնները եւ մելիքական տները 17-19-րդ դդ.», *եր. 2007,* ***Բակուր (Կարապետեան)***, «Գիւլիս-տան-նամէ», *գիրք Ա, եր., 2005: Ուսումնասիրութեան ընթացքին ձեռքի տակ ունեցել ենք նաեւ այլ աղբիւրներ:*

Րաֆֆի *եւ* ***Մակար եպս. Բարխուդարեանց*** *հեղինակներն առաջնամարտիկներ են այս գործում, ովքեր իրենց ուսումնասիրութիւնները կատարել են անմիջականօրէն, հետեւակ կամ ձիով շրջելով Արցախի բոլոր գաւառներով եւ իրենց լուսաւոր միտքը յագեցրել ակնազննական հարուստ տեղեկութիւններով: Թէեւ Րաֆֆին իր երկը համարել է ընդամէնը Նիւթեր հայոց նոր պատմութեան համար, սակայն ինչպէս իր մնացեալ երկերում, այնպէս էլ սոյն գործի մէջ մեծ Գրագէտը հոգի է ներդրել, ինչի չնորհիւ նրա ոգեշունչ գրուածքը կարդացւում է յափշտակութեամբ:*

Շահումեանի եւ նրա առաջնորդ Շահէն Մեղրեանի մասին հրապարակուած երկերից են. ***Սեդրակ Նանագիւլեան,*** «Շահէնը», *եր., 1993, եւ* ***կիմ Ղահրամանեան,*** «Հիւսիսային Արցախ. Գոյութեան պայքար», *գիրք Ա եւ գիրք Բ, եր., 1993, աշխատութիւնները: Շահումեանի վերաբերեալ յօդուածներ է պարունակում* ***Վարդան Դեւրիկեանի*** «Չսկսուած եւ չաւարտուած պատերազմ», *եր., 2004 գիրքը: Շահէնի կերպարին եւ գործունէութեանն անդրադարձել է* ***Զօրի Բալայեանը*** «Դժոխք եւ դրախտ», *եր., 1995 գրքում, դրսեւորելով յոյժ ենթակայական մօտեցում: Շահումեանում տեղի ունեցած իրադարձութիւնները լուսաբանուել են նաեւ* ***Բագրատ Ուլուբաբեանի*** «Արցախեան գոյապայքարը», *եր. 1994, նոյնի՝* «Արցախի պատմութիւնը», *եր., 1994 եւ* «Արցախեան գոյամարտի տարեգրութիւն», *եր. 1997,* ***Վահան Ցովհաննիսեանի*** «Բանտային գրառումներ», *«Ազդակ» օրաթերթ, Բէյրութ, 1998*

Թուականի փետրուար 20, բացառիկ: 2001 Թուականին ***Մանուէլ Ջաւախքի*** *խմբագրութեամբ հրապարակուել է «Մռաւայ ամպեր» ասոյթների եւ ստեղծագործութիւնների ժողովածուն՝ նուիրուած Շահէն Մեղրեանին: Արցախեան պատերազմին մասնակցած օդաչուներին է նուիրուած* ***Անահիտ Ջիքուխչեանի*** «Հերոսամարտի պողպատէ թեւերը», *եր., 2003, գիրքը, որում մեծ տեղ է գրաւում դէպի Շահումեան եւ Շահումեանից թռիչքներ կատարած օդաչուների դրուատապատումը:* «Ղարաբաղեան ազատագրական պատերազմ. 1988-1994», *եր. 2004 հանրագիտարանում եւս զետեղուած են յօդուածներ Շահումեանի շրջանի ինքնապաշտպանութեան եւ շահումեանցի ազատամարտիկների վերաբերեալ, սակայն կարելի է ասել, Շահումեանի խնդիրը, պատերազմական իրադարձութիւնները եւ շահումեանցի ազատամարտիկների գործունէութեան լուսաբանումը դրեթէ բացակայում է դրանում:* ***Մովսէս Ղազարեանի*** «Մաքառումների հազար օր. Շահումեան, Գետաշէն», *եր., 2007: Ամբողջ պատերազմի ընթացքում մարտնչող Շահումեանին չարունակաբար օգնութեան ձեռք մեկնած* ***Աշոտ Խաչատրեանի***՝ «Իմ ժողովրդի ողբերգութիւնը» *գիրքը հրատարակել է «Ամարասը» 2008 թուականին /ռուսերէն/:* ***Դնեպրիկ Բաղդասարեանի***, «Դիմակայութիւն» *գիրքը լոյս է տեսել. 2010 թուականին:*

Պարբերական մամուլում եւս հրապարակուել են բազմաթիւ յօդուածներ, որոնց մի զգալի մասը ջատագովական բնոյթի են: Յիշարժան է ***Քերոբ Սարգսեանի*** «Ինչպէ՛ս կործանուեցին «Արաբօ»ի մարտիկները» *եւ այլ յօդուածաշարեր, որ տպագրուել է «Իրաւունք» պարբերաթերթի «Հետաքննութիւն» յաւելուածում 2009-2010 թթ: Օգտագործել ենք նաեւ պատերազմական եւ յետագայ շրջանի պարբերական մամուլը, յատկապէս՝ ՀՅԴ-ի «Դրօշակ», «Ազատամարտ» եւ «Երկիր» պարբերականները:*

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՈԳԻՆ

Պատմական իրողութիւնները պայմանաւորուած են մի շարք գործօններով՝ տեղը (աշխարհագրական դիրք), ժամանակը, գործող անձինք (մարդկային գործօն), երկրի քաղաքա-տնտեսական վիճակը, ժողովրդի հոգեբանութիւնը, ինքնապաշտպանութեան պատրաստուածութիւնն ու ներքին իրաւրութիւնը (դասերի եւ դասակարգերի փոխյարաբերութիւնները) եւ **ազգային միաբանական եւ հայրենապաշտական ոգին**:

Պատմական դէմքի *կենսագործունէութեան եւ յատկապէս մարդկային նկարագրի բացայայտման համար կարեւոր է այն միջավայրը, որտեղ ծնւում, դաստիարակւում եւ ձեւաւորւում է մարդը, ուր անցնում են նրա մանկութիւնն ու պատանեկութիւնը:*

Արցախի եւ մասնաւորապէս Գիւլիստանի պատմութեան համար բնորոշ է ***աշխարհագրական դիրքի*** *առանձնակի կարեւորութիւնը երկրի պաշտպանութեան համար: Սրա կարեւորութիւնն զգացւում է յատկապէս այն ճշմարիտ պատկերացման հենքի վրայ, ըստ որի՝ մենք՝ հայերս մեր հայրենիքը կորցրել ենք մեր բարձր լեռները զիջելով քրդերին: Այս յայտնագործութեան հեղինակը* ***Նժդեհի*** *գաղափարակից* ***Հայկ Աստրեանն*** *է: Աշխարհագրական դիրքի բացառիկ նշանակութիւնը բազմիցս դրսեւորուել է հէնց Արցախի պատմութեան ընթացքին եւ ունեցել իր էական ներգործութիւնը արցախցիների կեանքում:*

Սեւ, Կասպից եւ Միջերկրական ծովերի միջեւ ընկած երկրատարածքը ամբողջական Հայաստան է՝ ***Հայկական լեռնաշխարհ****: Ասուածը յատկապէս վերաբերում է Հայաստանի արեւելեան հատուածին, Սիւնիքից մինչեւ Ատրպատականի ծայր արեւելք՝ պատմութեան ընթացքում հայերից բացի այլ էթնիկ նստակեաց եւ հաստատուն միաւոր չենք տեսնում: Աղուանքն իր Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգներով Հայոց Արեւելից Կողմանց ամփոփ սահմանումն է: Ամբողջական այս երկրամասի վրայ ապրող Հայոց աշխարհները կամ նահանգնե-*

րը եղել են ապակենտրոն, թէեւ Հայաստանը միշտ միասնական մայրաքաղաք է ունեցել: Եւ պատահական չէ, որ հայերն իրենց բնաւորութեամբ եւ խառնուածքով աւելի ապակենտրոն են, քան՝ կենտրոնամէտ եւ դա պայմանաւորուած է երկրի աշխարհագրական դրութեամբ, մակերեւոյթով, երկրապատկերով (ռելիեֆ):

Հայ պատմաբանները վաղուց են սահմանել Արցախի դերը Հայաստանի կենտրոնական (Արարատեան) շրջանները պաշտպանելու համար: Արեւելքից եկող ասպատակ ցեղերի առաջին հուժկու հարուածներն իր վրայ է վերցրել Արցախը, եւ դրանց մեծ մասը մարել են հէնց այս նահանգում: Արցախցիները մեծամասամբ լուծել են հարցերը եւ թշնամուն յաճախ թոյլ չեն տուել թափանցելու կենտրոնական Հայաստան: Այս իմաստով պիտի նշանաւորենք Արցախի ապահովական դերը նաեւ հարեւան Վրաստանի համար: Այս եւ այլ հարցերի մասին հանգամանալից գրել են Րաֆֆին, Լէօն եւ այլ հեղինակաւոր անձինք:

Նշանաւոր պատմավիպասան **Րաֆֆին** գրում է. *«Պատմութեան երկար ընթացքին յարձակման ալիքները բազմիցս բախուել են Ղարաբաղի ամրութեանը՝ նրա խորքը թափանցելով լոկ գետերի հովիտներով, այստեղ էլ չկարողանալով երկար մնալ: Հին ժամանակներում Սիւնիք կոչուած այս երկրամասի իշխանութեան ժառանգ մելիքութիւնները սեփական ոյժերով վանել են թշնամուն»:*

Րաֆֆին իրեն յատուկ պատկերագեղ եղանակով նկարագրում է Արցախեան բնութիւնը եւ աշխարհագրական դետերմինիզմի ոգով բխեցնում Արցախի հայերի տիպարային գծերը: Ըստ արձակագրի՝ վայրենի բնութիւնը, անտառապատ լեռները, անդնդախոր ձորերի մթութիւնը ստեղծել էին այստեղ մի մթին ժողովուրդ, որն իր շրջապատող ժայռերի նման ամուր կուրծք ունէր եւ իր ծմակների վագրերի նման աներկիւղ սիրտ, որը որպէս մի դարանամուտ գազան, իր թաքստոցներից յարձակումներ էր գործում, երբ թշնամին յանդգնում էր վրդովել նրա խաղաղութիւնը (տե՛ս Րաֆֆի, «Խամսայի մելիքութիւնները», էջ 163):

Աշխարհագրական դիրքի կարեւորութեան տեսութիւնն ընդունում եւ իր պատկերացումներն ըստ այդմ չարադրում է **Լէօն**. «Հայկական բարձրաւանդակի գրեթէ ամբողջ հիւսիս-արեւելեան ծայրը, որ սահման ունի Կուր գետի հովիտը հիւսիսում եւ Արաքսի հովիտը հարաւում, ընդարձակ առումով, այնպէս, ինչպէս հասկացուել է վերջին երեք դարերի ընթացքում, կարելի է ամփոփել մի ընդհանուր անուան տակ – Ղարաբաղ…

Հիւսիս-արեւելքից եւ արեւելքից Ղարաբաղը ներկայացնում է մի հսկայական միջնաբերդ, որի ճակատը դարձած է Կուր-արաքսեան եւ Մերձկասպեան անհուն տափաստաններին, բնութիւնից կոչում ստացած լինելով պաշտպանել Հայկական բարձրաւանդակն այս տափաստանների կողմից առաջացող չարժումների դէմ: …Հայ ժողովուրդը մինչեւ այսօր էլ պահպանել է այդ գծի ընդհանուր տարածութիւնը, գրաւած պահելով այն լեռնային բարձրութիւնները, որոնք առաջաւոր պահակներ են Ղարաբաղի սահմանների վրայ: Այսպիսով, **առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երեւակայել Հայաստանի սրտի՝ այն է՝ Արարատեան երկրի պաշտպանութիւնը հիւսիսային եւ արեւելեան տափաստաններից**: …Մենք տեղեկութիւններ ունենք, որ երբ Արարատեան երկիրը յարձակման էր ենթարկւում արեւմուտքից եւ հարաւից, նրա բնակիչները պաշտպանութիւն էին գտնում Ղարաբաղի լեռնային ամուր տեղերը: Դժբախտութեան մատնուած հայ մարդը գիտէր, որ վերջին ապաստան կարող է գտնել Ղարաբաղի թանձրախիտ անտառների մէջ: Այսքանը միանգամայն բաւական է ռազմագիտական հարցն սպառած լինելու համար» (Լէօ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք Բ, Եր., 1973, էջ 9-11):

*Պատմութիւնը աշխարհագրական դիրքի բացառիկ նշանակութիւնը հաստատող բազմաթիւ օրինակներ է տալիս: Բաւարարուենք մէկ-երկուսով. Արցախի մելիքների ռազմական զօրութիւնը թուլացաւ եւ նրանց տարանջատ վիճակը պահպանուեց Շուշիի անառիկ բերդում **Փանահ խանի** հաստատմամբ: Քաշաթաղի եւ Քարվաճառի լեռնաստանի բնակեցումը քրդերով, որ կատարուեց **Շահ Աբասի** օրօք, նրա իսկ կամքով, հա-*

յաստանի կենտրոնական եւ միւս շրջանները բաժանեց Արցախից, եւ այդպիսի իրադրութեան պահպանումը պատճառ դարձաւ բոլշեւիկների համար Արցախը մտցնելու Ադրբեջան կոչուած նորագոյացութեան մէջ:

Մարդաբաններն ի միտ ունենալով բնակավայրի պայմանների որոշիչ ազդեցութիւնը մարդկային հոգեխառնուածքի վրայ՝ մարդկանց բաժանում են հետեւեալ դասերի՝ անտառի մարդ, լեռնական եւ դաշտաբնակ: Արցախի հայերն այս երեքի համադրեալ ամբողջութիւնն են, որովհետեւ երկրի ծածկոյթի եւ մակերեսի կերպարը պայմանաւորող այս երեք բաղադրիչներն Արցախում կան, այն էլ՝ գրեթէ բոլոր շրջաններում: Արցախի բնութիւնն այնպիսին է, որ այստեղ թոյլ մարդ պարզապէս չի կարող լինել, քանզի թոյլը չի կարող յարմարուել լեռներին, փոխյարաբերուել անտառին, զբաղուել երկրագործութեամբ, մանուկ հասակից կատարել ամէն տեսակ աշխատանքներ, որոնք պահանջում եւ արդիւնաւորում են ուժ, չրջահայեացութիւն, ճարպկութիւն, տեղանքում արագօրէն կողմնորոշուելու հմտութիւն, համբերութիւն, նուիրուածութիւն: Այս ամենայն փորձն ու կարողութիւնը մանկութիւնից իրենց մէջ կուտակում են արցախցիները եւ դրանք փոխանցում սերնդէսերունդ՝ որպէս ազգային ընդհանրական յատկանիշ, որպէս հայի հոգու հակուածութիւն:

*Բնութիւնն ու հանրային կեցութիւնը Ղարաբաղում ստեղծել են ուժեղ մարդու մի տիպար, որն ամենուրեք կարող է դրսեւորել իր անհատական առանձնայատկութիւնները. գործնականութիւն, անձնագոհ քաջութիւն, խիզախութեան հակում, ինքնավստահութիւն, յամառութիւն, ուղղամիտ հաստատակամութիւն, նահապետական պահպանողականութիւն եւ կայուն բարոյական բնաւորութիւն: Այս բոլորն արցախցիներին հնարաւորութիւն են տուել առաջադիմելու զինուորական եւ հանրային կեցութեան ղեկավարման ասպարէզներում: Որպէս առանձնայատուկ չնորհ՝ **արցախցիներին տրուած է ռազմագիտական հանճարը**, որ նրանք դրսեւորել են ինչպէս ընդհանրական, հաւաքական ծաւալով, այնպէս էլ անհատական զօրավա-*

*րական չնորհով: Ասուածի ճշտութիւնը հաստատող օրինակներ հարկաւոր չեն, դրանք հանրայայտ են: Արցախցիների **ռազմասիրական ոգին** եւս պիտի ի միտ առնել **Աւետիս Ահարոնեանի** նշանաւոր ասոյթի պարագային, ըստ որի՝ «Հայերն աշխարհի ամենառազմասէր ժողովուրդն են»:*

Շնորհիւ հաստատակամութեան եւ աւանդապաշտութեան, Արցախում գրեթէ անաղարտ կերպով պահպանուել են հայի՝ թէ՛ տղամարդու եւ թէ՛ կնոջ տիպարային գծերը: Ու թէեւ մի քանի դար շարունակ այլազաւանները փորձել են հաստատուել այս տարածաշրջանում եւ իրենց յատուկ արագ բազմացմամբ հասնել ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) յաղթանակի, սակայն չեն յաջողել:

*Սրանով մենք չենք ստուերում մնացեալ գործօնները՝ ժողովրդի դաստիարակութիւնն ազգային ոգով եւ երկիւղածութեամբ վերաբերմունքը հոգեւոր արժէքների նկատմամբ, հզօր բանակը, զարգացած տնտեսութիւնը եւ այլն: Մենք կարեւորում ենք ազգն ու երկիրը պահող բոլոր գործօնները՝ երկրի աշխարհագրական դիրքի առանձնայատկութիւնը, ժողովրդի բնաւորութիւնը, ռազմուժը, կարգապահութիւնը եւ մարտունակութիւնը, երկրի տնտեսական վիճակը, սակայն բացառիկ նշանակութիւն ենք տալիս **ազգային ոգու առանձնայատկութեանը, ճշմարիտ հաւատքի ցեղային ինքնագիտակցութեանը, ազգային միաբանութեանը եւ հոգեւոր ու ռազմիկ դասերի փոխներթափանցական, համադրեալ միասնութեանը**, այսինքն այն, ինչ հակիրճ անուանուել է **Վարդանանց ուխտ** կամ **Ուխտ Մամիկոնէից**: Մեր բոլոր յաղթանակների, նաեւ ազգային անկախ պետութեան հիմքում եղել է վերոնշեալ համադրութիւնը, իսկ մեր կրած բոլոր պարտութիւններն եղել են մեր անհաւատութեան, անմիաբանութեան եւ ոգեթափութեան պատճառով:*

Խորհրդահայ պատմագրութիւնը ձգտել է ամէն կերպ տարփողել այն գաղափարը, թէ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը յատկապէս հայոց ազգի փրկիչը հանդիսացաւ, քանզի դարեր շարունակ, նոյնիսկ հազարամեակներ նա իր պետականութիւ-

նը չի ունեցել, եղել է միշտ ստրկական վիճակում եւ օտար տէրութիւններին ենթակայ: Եւ այս գաղափարը միշտ սրսկուել է յատկապէս մատաղ սերնդին, որը զուրկ էր եօթնակողպէք պահոցներից իրական պատմագրական երկերը հանելու եւ օգտուելու հնարաւորութիւնից եւ համոզուելու, որ հայերս այդքան էլ թշուառ եւ օտարահպատակ չենք եղել, որպիսին ներկայացրել են, այլ Հայկական լեռնաշխարհի գոնէ այս կամ այն մասում չարունակաբար պահպանել ենք մեր փաստացի անկախութիւնը:

Րաֆֆին գրել է. «Հայաստանն իր անկման ղանազան շրջաններում, կորցնելով իր գահը, ամէն անգամ թողել է իր ներկայացուցիչներին, որպէս դեռ չմարած կայծեր պահպանուած նախկին փառքի մոխիրի մէջ: Հայկազանց թագաւորող տունը վերջանալուց յետոյ թողեց **մարզպաններին, կիւրապաղատներին, պատրիկներին** եւ **ոստիկաններին:** Իսկ Բագրատունիները եւ Ռուբինեանները թողին զանազան, միմեանցից բաժանուած, անկախ իշխանութիւններ:

Հայոց իշխանութիւնների ներկայացուցիչները ըստ մեծի մասին եղել են հայոց հին նախարարական տների ժառանգները: Դրանք Հայոց թագաւորութեան մի շրջանի վերջանալուց յետոյ պահպանում էին նրա իշխանութիւնը մինչեւ մի նոր շրջանի ստեղծուելը եւ այսպիսով ծառայում էին որպէս օղակներ, որոնք անխզելի կերպով պահպանում էին հայկական անկախութեան չարունակութիւնը, մինչեւ կործանուած գահի կրկին վերականգնելը: Այդ իշխանութիւնները, թէեւ երբեմն օտարներից նշանակուած եւ օտարներին հարկատու են եղել, բայց երբեք չեն կորցրել իրենց ինքնավարութեան իրաւունքները:

Վերջին դարերում նախարարական հին տների փոխարէն երեւան եկան **մելիքները»** (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964, էջ 161-162):

Մասն առաջին
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլուխ առաջին
Գիւլիստանի մելիքութիւնը եւ գաւառը

Նշմարներ Արցախի պատմութեան

Արցախը Մեծ Հայքի 15 նահանգներից մէկն է (ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»ի): Երկիրը բաղկացած է Լեռնային եւ Դաշտային մասերից: Արցախը եղել է հայ ժողովրդի տարասփռման հիւսիս-արեւելեան սահմանը: Ֆիզիկաաշխարհագրական իմաստով Արցախի մաս են կազմում Հադրութի, Կովսականի, Ֆիզուլու, Քաշաթաղի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Շահումեանի, Քարվաճառի, Խանլարի, Քարհատի (Դաշքեսան), Շամքորի, Գետաբակի, Թովուզի շրջանները:

*Մեր ազգային պատմութեան ամբողջ ընթացքին երկրամասում ապրել են միայն հայեր եւ նահանգը եղել է Հայաստանի երկրամաս, հայկական աշխարհներից մէկը: Մեր թուարկութիւնից առաջ 1-ին հազարամեակի սկզբից պետականօրէն մտել է Հայոց թագաւորութիւնների կազմի մէջ. Արարատեան թագաւորութեան (Բիայնիլի, Ուրարտու – ասուածը հաստատւում է երկրի տարբեր մասերում յայտնաբերուած սեպագրութիւններով), Երուանդունիների (մ.թ.ա. 4-2-րդ դդ.), Արտաշիսեանների (մ.թ.ա. 2-րդ - մ.թ. 1-ին դդ.), Արշակունիների (1-5-րդ դդ.): Կարեւորելով Արցախի դերը՝ **Տիգրան Մեծն** իր անուամբ կառուցած 4 քաղաքներից երկուսը հիմնադրել է Արցախում:*

***4-րդ դարի սկզբից Արցախում տարածուել է Քրիստոնէութիւնը:** Գրիգոր Լուսաւորիչն Արցախում հիմնադրել է դպրոցներ եւ Ամարաս բնակավայրում՝ առաջին եկեղեցին, որի կառուցումն աւարտուել է նրա թոռ՝ Արցախ աշխարհի առաջին եպիսկոպոս **Սուրբ Գրիգորիսի** օրօք (4-րդ դ.): Արցախում պահպանուել են նաեւ քրիստոնէական ճարտարապետութեան*

վաղ նմուշներից Միծեռնավանքը՝ Քաշաթաղում, Դադի վանքը Ջրաբերդի եւ Քարվաճառի սահմանագոտում, վերջերս Տիգրանակերտ քաղաքի շրջակայքում յայտնաբերուել է վաղ քրիստոնէական գուցէ եւ ամենահին ճգնարանը (խաչէնագետի ափամերձ ժայռապատին):

Արշակունիների թագաւորութեան անկումից (428 թ.) յետոյ Պարսից գերիշխանութիւնը վարչական նոր միաւոր ստեղծեց. ***Արցախ*** *եւ* ***Ուտիք*** *նահանգները միացնելով բուն Աղուանքին՝ նա ստեղծեց մէկ մարզպանութիւն, որի մարզպանի նստավայրը* ***Պարտաւ*** *էր: Հայ մատենագիրներն այս նոր կազմաւորումը յաճախ անուանել են* ***Հայոց Արեւելից Կողմանք****: Ի տարբերութիւն ձախափնեայ յետամնաց ցեղերի՝ աջափնեայ Աղուանքը կամ Արցախն ու Ուտիքը արագ միաւորուեցին, քանզի միատարը հայկական բնակչութիւն ունէին: Հայկական պետութեան անկումից յետոյ էլ այստեղ իրենց ազդեցիկ դիրքն էին պահպանում Հայկ Նահապետից սերող* ***Առանշահիկ հայ իշխանները****: Օգտուելով Պարսկական պետութեան թուլացումից, Արցախի եւ Ուտիքի իշխանական տոհմերը (Առանշահիկներ) հիմնում են հայկական միացեալ պետութիւն, որի առաջին թագաւորը* ***Վաչագան Բարեպաշտն էր****: 5-րդ դարի վերջին Աղուանքի հայկական մասում Վաչագան Բարեպաշտի ստեղծած թագաւորութիւնը գոյատեւել է մի քանի դար եւ յետագայում մտել Բագրատունեաց հայկական միասնական թագաւորութեան կազմի մէջ, որում Առանշահիկները պահպանել են իրենց իշխանական դիրքը: Հետաքրքրական է, որ Վաչագանի թագաւորութիւնն ունէր իր սահմանադրութիւնը եւ կառավարւում էր ներքին օրէնսդրութեամբ: Բարեպաշտ թագաւորը պայքարում էր յանուն ընդհանրական լուսաւորութեան, եւ երկիրը վնասակար աղանդներից ու գաղափարներից մաքրելու մեծ պայքար էր ձեռնարկել: Այդ ժամանակաշրջանում հիմնուել են հոգեւոր-մշակութային նշանաւոր կենտրոններ, որոնց թիւը յետագայում աւելացել է:*

«Այդ երկրում *(Արցախում - Ա.Պ.)* **աչխարհից հրաժարած աբեղաների** վանքերի հանդէպ կանգնած էին իշխանական ամ-

րոցները, նրանց սարսափելի բերդերը, իսկ խաչի հետ միացրած էր սուրը» *(Րաֆֆի, «Խամսայի մելիքութիւնները», էջ 164): Հարկ ենք համարում անդրադառնալ Րաֆֆու այս տողերին, որոնք աշխարհայեացքային առումով տարողունակ են եւ բնորոշ մեծ վիպասանին: Րաֆֆին մեր այն գրագէտներից է, ովքեր շատ են ճամփորդել եւ իրենց Հայրենիքը շատ լաւ են ճանաչել: Րաֆֆուն մեծ ցաւ էր պատճառում Հայաստանի բնիկ ժողովրդի՝ հայերի հպատակ վիճակը, որի պատճառով նրանք խեղճացել էին եւ իրենց երկրին վերատիրանալու անկարող դարձել: Մեր ազգային թշուառ վիճակի պատճառներից մէկը նա համարում է այն հանգամանքը, որ Հայաստանում իրեն կարողանում էր պահել եւ վերարտադրել միայն վանական հոգեւորականութիւնը, որը կտրուած էր աշխարհից եւ իր ազգից, եւ անգամ յանձն չէր առնում երեխաներին կրթելը (մանրամասն տե՛ս «Աղթամարի վանքը» ճամփորդական նօթը, Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1963, 280 էջից սկսեալ), որ կուսակրօնների միակ ճգտումն իրենց ներքին խաղաղութիւնն ու անդորրը պահպանելն էր, որ նրանք «աշխարհական գործերին» խառնուել չէին ուզում:* ***Այս իմաստով Րաֆֆին բացառութիւն է համարում Արցախը, որտեղ Խաչին ընկերացած է Սուրը*** *եւ դրանք գործում են միասնաբար:*

Հետաքրքրական է, որ Րաֆֆու՝ մեր վանականութեանը քննադատող յօդուածների եւ նամակների տպագրութիւնն սկսել է մեր ազգի մէկ այլ մեծութիւն՝ Վասպուրականի հոգեւոր առաջնորդ ***Մկրտիչ եպս. Խրիմեանն*** *իր «Արծուի Վասպուրական» հանդէսում: Հայոց Հայրիկը շարունակել է ազգը լուսաւորելու, զօրացնելու* ***Աբովեանի, Պատկանեանի, Նալբանդեանի, Րաֆֆու*** *աւանդները:*

Արցախում գրեթէ բոլոր ժամանակներուում նշանաւոր էին եւ Արցախի ազգային կեանքում մեծ դեր են խաղացել ***Ամարասի, Գտիչայ*** *(Տողասար լեռան/,* ***Կատարոյ*** */Դիզափայտ լեռան վրայ),* ***Ս. Եղիշէ Առաքեալի (Ջրվէժիկ), Հոռեկայ վանքերը, Դադիվանքը, Մեծառանից Սուրբ Յակոբավանքը*** *եւ յատկապէս* ***Գանձասարը****: Կատարոյ վանքը մինչեւ օրս արցախահայե-*

*բի, յատկապէս դիզակցիների սիրելի ուխտատեղիներից է: **Լէոյի** նկարագրութեամբ՝ ամէն տարի յուլիսին, այդ ուխտավայրն էին գալիս տարբեր տեղերից եւ ելնում լեռան գագաթը, ուր բարձրանիստ վանքն է, եւ կատարում իրենց ուխտը: Նշեալ վանքերը միջին դարերում գործել են անընդմէջ եւ անխափան՝ կրթելով հայ մարդկանց միտքն ու հոգին, անմար պահելով բարեպաշտութեան եւ հայրենասիրութեան ոգին: Գանձասարի վանքը եւ կրթամշակութային կենտրոնը հռչակուած էին ամբողջ Հայաստանում: Գանձասարի վանական համալիրի **Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին** հայկական ճարտարապետութեան գլուխգործոցներից է:*

*Առանձնակի խորհրդաւորութիւն ունէին **Շուշիի ամրոցը** եւ բերդաքաղաքը, **Ջրաբերդը**, **Գիւլիստանի բերդը**, իր հսկայական քարագլխով շատ հեռուներից տեսանելի **Կաչաղակաբերդը**, իր գահագլուխ բերդասարով, Գանձասարի դէմը յառնած **Խոխանաբերդը** (Թարխանաբերդ), **Քարագլուխ** բերդն իր մերձակայ հրաշալի դարաւանդներով (տերրաս), **Ասկերանի** վիշապանման ամրոցը, **Տողի** երկնաքեր **ամրոցը** եւ հոգեհմայ **Գորոզ բերդը**, Գարդմանի փառքի վկայական **Փառիսոսը**, մթին պատմութիւնների կայան **Աղջկաբերդը**՝ Մարտունիում եւ այլ ամրոցներ, բերդեր ու բերդակներ, որոնք լուսային եւ այլ ազդանշաններով, միջանկեալ պահակէտերով պաշտպանական մէկ-մի-ասնական համակարգ են կազմել:*

*7-րդ դարի սկզբին հայոց Աղուանքում հաստատուեց **Սասանեան տոհմի** մի ճիւղ՝ 30 հազար ընտանիքներով, ոմն **Միհրի** գլխաւորութեամբ: Սրանք բնակուեցին Գարդման գաւառում: Առանշահիկներից նրանք իշխանութիւնն արագօրէն գաւթեցին եւ սեփականեցին նրանց տիրոյթները: Յետագայում **Միհրանեաններն** իրենց ձեռքը վերցրին նաեւ Ուտիքի իշխանութիւնը, ապա եւ ամբողջ Հայաղուանքի գահերէցութիւնը: **Նրանք տեղում ընդունել էին Քրիստոնէութիւն** եւ արագ կերպով հայացան՝ դրսի թշնամիներին ընդդիմանալով որպէս հայութեան մի մաս, որպէս հայերի իրաւունքների պաշտպան: Այս իմաստով յատկապէս հռչակուեց Միհրանեան*

տոհմի նշանաւոր իշխան **Ջիւանշիրը**, որը գահակալել է 637-683 թթ., մի բարդ ժամանակաշրջանում, երբ երկիրն ստիպուած էր դիմակայել հիւսիսից **խազարներին**, իսկ հարաւից՝ **արաբներին**: Ջիւանշիրն իր երկրամասում հովանաւորում էր արուեստներն ու մշակոյթը: Որպէս օրինակ բաւական է յիշատակել **Մովսէս Կաղանկատուացու** «Աղուանքի պատմութիւնը», որը գրուել է Ջիւանշիրի պատուէրով եւ հովանաւորութեամբ: Ջիւանշիրի օրօք քաղաքները ծաղկում ապրեցին: Յատկապէս բարգաւաճեց աթոռանիստ **Պարտաւը**, հզօրացաւ **Գարդման** բերդը:

Արաբական տիրապետութեան հաստատումից յետոյ Արցախը եռանդուն կերպով մասնակցել է զաւթիչների դէմ մղուող պայքարին: Տեղի են ունեցել բազմաթիւ ապստամբութիւններ: Առանձնապէս տպաւորիչ են 9-րդ դարի առաջին կէսին **Դիզակի իշխան Եսայիի** մղած կռիւները արաբների դէմ: 9-րդ դարում արաբների դէմ մղուող պայքարն աւելի կազմակերպ բնոյթ է կրում, մեծանում է հաւատքը ազգային զօրութեան եւ յաղթանակի նկատմամբ: Այն բանից յետոյ, երբ Մշոյ դաշտում հայկական զօրքը 851-52 թթ. **Խութեցի Յովնանի** եւ **Բագրատունեաց իշխանների** գլխաւորութեամբ կարեւոր յաղթանակի է հասնում, Աբբասեան խալիֆայութիւնը թուրքազգի **Բուղայի** գլխաւորութեամբ 200 հազարանոց զօրք է ուղարկում Հայաստան: Բուղան գրաւում եւ աւերում է Սասունը, Վասպուրականը, Ռշտունիքը, Մոկաց աշխարհը: Այս արիւնարբու զօրապետն աւերում է նաեւ Արեւելեան Վրաստանն ու Թիֆլիսը: Լեռնական ծանարները Բուղային խիզախ դիմադրութիւն են ցոյց տալիս եւ նա չարժումը փոխում է դէպի Հիւսիս-արեւելեան Հայաստան: Այստեղ Արցախն ու Ուտիքը նախընթաց կռիւներին ոչնչացրել էին արաբ հարկահաններին եւ անկախ էին: Արցախի հողի վրայ Բուղայի դէմ հերոսական ինքնապաշտպանական կռիւներ են մղել եւ պատմութեան մէջ իրենց պանծալի անուններն արձանագրել **Սահլ Սմբատեան** եւ **Եսայի Աբու-Մուսէ** իշխանները՝ երկուսն էլ սերած Առանշահիկ տոհմից: Սահլը Բուղայի դէմ յաղթանակ է տանում նախ Շի-

կաքար ամրոցում (յետագայի Շուշիի տեղում), ապա Մուխանքի դաշտում: Աւելի նշանաւոր են եղել Եսայի Աբու-Մուսէի տարած յաղթանակները: Խալիֆայութեան զօրքերը 28 անգամ յարձակում են գործում Քթիշ ամրոցի վրայ եւ նոյնքան անգամ էլ պարտուած ետ չպրտուում Եսայիի զօրքից: Անզօր լինելով գինեալ ճանապարհով ընկճելու Հայոց դիմադրութիւնը, արաբ զօրավարը հայ իշխաններին խաղաղութեան կոչով հրաւիրում է Բաղդադ եւ այնտեղ խարդաւանքով բոլորին ձերբակալում:

*Բացի արաբներից, Հայաստան էին թափանցում նաեւ այլ ասպատակիչներ: Նոյն դարում, ստոյգ՝ 827 թուականին, պարսիկ **Բաբեկն** է կոտորածներ անում Սիւնեաց եւ Գեղարքունեաց գաւառներում:*

Ց-րդ դարի կէսերին Բագրատունեաց տոհմն իր ճեռքն է վերցնում բովանդակ երկրի ղեկը եւ Հայաստանն ամբողջովին թօթափում է արաբական լուծը:

*10-11-րդ դդ. Արցախի հիւսիսում ուժեղանում է **Փառիսոսի թագաւորութիւնը**, որի հիմնադիրը **Սենեքերիմն** էր: Այդտեղ յայտնի անուններ էին մշակութային բեղուն գործունէութիւն ծաւալած **Սահակ Սեւադան** եւ յատկապէս **Յովհաննէս Սարկաւագը**, որ յայտնի էր նաեւ **Իմաստասէր** անուամբ: Ծնունդով Փառիսոսում, հայ մշակոյթի պատմութեան մէջ նա դարձել է համահայկական ղէմք, իբրեւ բանաստեղծ, իմաստասէր, տոմարագէտ, բնագէտ եւ մարդագէտ:*

Արցախում ստեղծուած մանր իշխանութիւնները 10-րդ դարից սկսած ենթարկւում էին Խաչէնի իշխանին:

*1045 թուականին Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ Արցախում բարձրանում է **Խաչէնի իշխանութիւնը**, որը դարձեալ ղեկավարում են Առանշահիկների չառաւիղները: Խաչէնի իշխանութիւնը տարածւում էր **Մուխանք** (Մուղան) գաւառից մինչեւ Սեւանայ լճի ափերը, Արաքս գետից մինչեւ Ղարաբաղեան լեռնաշղթայի հիւսիսային փէշերը: 11-12-րդ դարերում Արցախը ենթարկուել է սելջուկ թուրքերի ասպատակութիւններին: 9-13-րդ դարերում Խաչէն գաւառի անունով*

է կոչուել ամբողջ Արցախ նահանգը:

*Խաչէնի իշխանութիւնը 12-րդ դարի երկրորդ կէսին բաժանուած էր երեք մասի. **Ներքին Խաչէն** (Մեծառանք, Բերդաձոր գաւառները, կենտրոնական ամրութիւնն էր՝ Խոխանաբերդ), **Կենտրոնական Խաչէն** կամ Հաթերք (Փառիսոս, Կողթ գաւառները, Մեծ Կուենք գաւառի մեծ մասը) եւ **Վերին Խաչէն** կամ Ծար, որն ընդգրկել է Սեւանի արեւելեան ափերը, Գեղամայ, Սողք եւ Ծար գաւառները:*

Թուրք-սելջուկների առաջին արշաւանքների հետեւանքները հազիւ թօթափած՝ հայերն ու վրացիները 1220 թուականին են-թարկւում են թաթար-մոնղոլների կործանիչ արշաւանքներին:

*13-րդ դարի նախամոնղոլական շրջանի եւ այդ տիրապետութեան հաստատման ժամանակի Հիւսիս-արեւելեան Հայաստանի պատմութեան նշանակալից երեւոյթներից էր Խաչէնի տէր **Վախտանգի որդի Ջալալ-Դօլայի** իշխանութիւնը: Նա աչքի է ընկել չինարարական մեծ գործունէութեամբ: 1216 թուականին Հասան Ջալալ-Դոլան սկսում է հիմնովին վերակառուցել Գանձասարի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, որն աւարտում է 1238 թուականին:*

*Ջալալ Դօլան ճկուն քաղաքականութեամբ կարողանում է մեղմել մոնղոլների վայրագութիւնը: Ջալալ-Դոլան պատուիրակութեամբ նոյնիսկ հասնում է **Բաթու խանի** մօտ եւ արտօնութիւններ ստանում: Նրա անմիջական մասնակցութեամբ 1254 թուականին ստեղծւում է հայ-մոնղոլական դաշինք, որի չնորհիւ հայկական իշխանութիւնները, ընդհուպ **Կիլիկիայի Հայկական Թագաւորութիւնը,** հիմնականում զերծ են մնում թաթար-մոնղոլների վայրագութիւններից:*

*Արցախցիները ո՛չ միայն չէին տառապում գաւառական սահմանափակ հոգեբանութեան ախտերով, այլեւ լայնախոհ եւ հայրենապաշտ հայի օրինակ կարող են լինել: Դեռեւս Միջին դարերում, երբ արցախցիների մի մասը գաղթեց Կիլիկիա, նրանք գործօն մասնակցութիւնն ունեցան Կիլիկիայի հայկական պետութեան ստեղծմանն ու հաստատմանը: Բաւական է յիշել **Օշին** իշխանին: **Բակուր Կարապետեանն** իր «Գիւլիս-*

տան-Նամէ» (գիրք Ա., եր., 2005) ինքնատիպ եւ արժէքաւոր գրքի մէջ, յղում անելով ***Բագրատ Ուլուբաբեանի*** *«Խաչէնի իշխանութիւնը 10-16-րդ դարերում» աշխատութիւնից, գրում է. «Առանձահիկներից սերուող* **Օշին իշխանը** 1183թ. հեռանալով հայրենի Ուտիքից, Միջերկրականի ափին, Կիլիկիայում **հիմնեց հայկական նոր իշխանութիւն**»: *Նշուած է Ուլուբաբեանի աշխատութեան էջը՝ 95, ուր կարդում ենք. «Ուտիքի Առանձահիկ տոհմի ներկայացուցիչ* ***Օշինը****, որը հեռանալով հայրենի Ուտիքից՝* ***դարձաւ Կիլիկեան հայկական իշխանութեան հիմնադիրներից մէկը****» (շեշտադրութիւնը՝ Ա.Պ.-ի): Այս փոքրիկ չակումը նրա համար է, որպէսզի Օշին իշխանի անունը չդառնայ գայթակղութեան առարկայ, որ նա միայնակ իշխանութիւն է հիմնադրել Կիլիկիայում: Վերոնշեալ յատակեցումը բնաւ չի ստերում Բակուրի գրքից ստացած դրական տպաւորութիւնը:*

Շարունակւում է կենաց եւ մահու պայքարը նաեւ այն պարագային, երբ Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններում վերանում են հայոց իշխանութիւնները եւ այդպիսիք մնում են միայն Արցախում: Արցախի դերը մնացեալ Հայաստանի համար առաւել կարեւորութիւն է ձեռք բերում, երբ պատմութեան թատերաբեմից դուրս է գալիս Աղուանքի Հայկական պետութիւնը *եւ Կուր-արաքսեան տափաստաններն ու Արցախի դաշտային տարածքի մեծ մասը թուրքալեզու վաչկատուն եկուորների կենսապահովման վայրեր են դառնում: Ապա* թաթարմոնղոլներին *յաջորդում են Լենկ-Թիմուրի արշաւանքները եւ Արցախը երեք կողմից շրջապատւում է աւազակակենցաղ այդ ցեղերով: Այս ընթացքում Արցախի հայութիւնն ապաւինում է իր լեռներին եւ իր ստեղծած պաշտպանութեան ամուր ու միասնական համակարգին:*

Թաթարական արշաւանքների հետեւանքով 14-րդ դարում Խաչէնի իշխանութիւնը մասնատւում է: Հիւսիսային Արցախը հիմնականում մտնում էր ***Հաթերքի*** *իշխանութեան մէջ: Արցախահայութիւնը շարունակում է պահպանել ազգային իշխանութիւնը եւ նրա հիմքը հանդիսացող տնտեսութեան աւատատիրական համակարգը: Արցախեան իշխող դասի վեհապետական*

այս իրաւունքները 16-17-րդ դարերում ճանաչեց եւ օրինակա-նացրեց Սեֆեան Պարսկաստանը: Իշխան բառի փոխարէն ար-ղէն գործածւում էր **մելիքը:** Վերջինս սեմական բառ է, նշա-նակում է թագաւոր: Մինչեւ դարերում հայոց ամէն նախարար կարծես թագաւոր լինէր՝ իր ամբողջական իշխանութեամբ:

Արցախի մելիքութիւնների պատմագրութեան համար մենք պարտական ենք նախ եւ առաջ վիպասան մեծն **Րաֆֆուն**, որի կոթողային «**Խամսայի մելիքութիւնները**» երկից օգտուել են յետագայ բոլոր հետազօտողները: Վիպասանի հանճարի դրոշմն իր վրայ կրող ստեղծագործութիւնը ո՛չ միայն ամբող-ջական պատկերացում է տալիս Արցախի մելիքութիւնների պատմութեան վերաբերեալ, այլեւ խորապատկերում է ժամա-նակի հայ ազնուականութեան՝ **մելիքութեան բարոյական նկարագիրը**: Մեր հայեացքի դէմ է յառնում քրիստոնեայ հայն իր առաքինութիւններով՝ ազատասիրութեամբ, խիզախութե-ամբ, բարեգթութեամբ, հայրենապաշտութեամբ եւ այլ յատկա-նիշներով: Սա շատ կարեւոր է, քանզի հայի բարոյական նկա-րագրի մասին կեղծ խմաստակներն ու հայութեան թշնամի քաղքենիները տարբեր վարկածներ են առաջադրում՝ ամէն կերպ ձգտելով նսեմացնել հային որպէս մարդաբանական տի-պար: Հայ-թուրքական բախումների ընթացքին յատկապէս ի յայտ էր գալիս արցախցիների հայրենապաշտական ոգին: Ուր էլ նրանք լինէին՝ իրենց անուան չուրջ բարի համբաւ էին ստեղծում: Ենթագիտակցութեան մէջ թողնելով բազմաթիւ պատմական օրինակները՝ կարելի է ուշադրութեան առարկայ դարձնել արցախահայերի գործօն մասնակցութիւնը 19-20-րդ դարերում Արեւմտահայաստանի ազատագրական պայքարին, որին մասնակից եւ այդ պայքարի կարկառուն կազմակերպիչ արցախցիներից կարող ենք յիշատակել մի քանի տասնեակ նուիրական անուններ:

15-16-րդ դարերում Արցախում առաջացած հայկական վար-չաքաղաքական իշխանութիւնները՝ մելիքութիւնները հինգն էին. **Գիւլիստանի** (ղեկավարել են **Մելիք-Բէգլարեաննները**), **Ջրաբերդի** (**Մելիք-Իսրայէլեաններ, ապա՝ Ալթաբէկեաններ**),

Խաչէնի (Հասան-Ջալալեաններ), ***Վարանդայի*** (Մելիք-Շահնազարեաններ) *եւ* ***Դիզակի*** (Մելիք-Եգանեաններ)։ *Այս մելիքութիւնները 17-18-րդ դարերում գլխաւորել են հայոց ազատագրական պայքարը օսմանեան եւ պարսկական բռնակալութիւնների դէմ։* ***Ազատագրական պայքարի կենտրոնը Գանձասարն էր****։ 18-րդ դարի առաջին քառորդին պայքարի ընդհանուր ղեկավարն էր Գանձասարի կաթողիկոս* ***Եսայի Հասան-Ջալալեանը։***

ԳԻԼԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆԸ

Գիւլիստանն *Արցախի ո՛չ թէ հիւսիսային, այլ՝ հիւսիս-արեւելեան երկրամաս է եւ այս պատկերացման հիմքը Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցն» է, ըստ որի՝ Արցախի հիւսիսային սահմանները չօշափում են ներկայիս Տաւուշի գաւառի հողերը, ներառեալ Գետաբեկի, Շամքորի, Քարհատի, Խանլարի շրջանները, որոնք հետազօտողների կողմից երբեմն անտեսւում են եւ չեն պատկերացւում որպէս Արցախի մաս։ Արցախն ընդգրկում է ո՛չ թէ հինգ (արաբերէն՝ խամսա), այլ՝ 12 գաւառ։ Գիւլիստանը Արցախի 4-րդ գաւառն էր։ Գիւլիստանը, որն աւելի շատ յայտնի է 1813 թուականի իր պատմական պայմանագրով, հիւսիսում սահմանւում էր Քիւրակ գետով, Մռաւ եւ Ալհարակ լեռներից մինչեւ Թարթառ (Տրտու) գետը հարաւում, արեւելքից մինչեւ Գանձակի հարաւային կողմերն էր տարածւում։ Մենք խնդիր չենք դրել մանրամասնօրէն ներկայացնելու Գիւլիստանի պատմաաշխարհագրական բնութագիրը։ Դա հանգամանալից կերպով առկայ է* ***Բակուրի*** *«Գիւլիստան-Նամէ» յիշատակեալ գրքում։*

Իրրեւ Արցախի հիւսիս-արեւելեան ծայրամաս՝ Գիւլիստանն առաջինն է իր վրայ վերցրել դէպի Հայաստան արշաւող Կովկասի կիսավայրենի ցեղերի հարուածները, ուստիեւ այդտեղ պաշտպանական կուռ համակարգ է ձեւաւորուել։ Արցախի ապահովութեան համար յոյժ բարենպաստ էին նրա բարձր լեռները, տուեալ պարագային՝ Մռաւի լեռները, խիտ ու մեծ անտառները, որոնք գրեթէ անանցանելի էին օտարների համար։

Գիւլիստանի մելիքի ամրոցը գտնուել է Գիւլիստան աւանի մօտ, մէկ այլ ամրոց-ապարանք գտնւում էր Հոռեկայ վանքի դիմաց, Թալիշ աւանի մօտ: Մելիքական տոհմի միւս անդամները հաւանաբար պարտաւորուած են եղել ապրել ապարանքից դուրս՝ Գիւլիստանի բերդում:

Գիւլիստան գաւառում, ինչպէս եւ Արցախի մնացեալ վայրերում, եղել են երեք խմբի շինութիւններ՝ հոգեւոր, ռազմական եւ քաղաքացիական: Այլ հարց է, որ միեւնոյն բնակավայրում կամ նոյնիսկ մէկ համալիրի մէջ համատեղուել են նշեալ երեք տիպերը: Այս պարագային մեզ առաւել հետաքրքրողը ռազմա-պաշտպանական կառոյցներն են եւ, առաջին հերթին, Գիւլիստանի բերդը:

Բերդը գտնւում է Արցախի խորքերը տանող ճանապարհների գլխաւոր սահմանագծի վրայ, ուստի նա միշտ եղել է սեւեռուն ուշադրութեան տակ:

Մակար Բարխուդարեանն *այսպէս է նկարագրել Մելիք-Բէգլարեանների* ***Գիւլիստանի*** *բերդը.* «Զորս կողմերից առանձնացած, վիմահերձ, սեպաձեւ բարձրացած եւ դէպի արեւելք երկարած մի բարձրադոյն սար է, որ գտնւում է Կիւլստան գիւղից վերեւ: Ինչա գետակն նախ՝ հոսում էր բերդիս արեւմտեան կողմով, ապա հիւսիսային ստորոտով եւ ապա՝ դառնում է դէպի արեւելք, վասն որոյ գրեթէ թերակղզի ձեւացած է բերդասարս, որի գլուխն բարձրանալու համար կայ մի դժուարատար եւ ոլոր-մոլոր կածան, որ խիստ զառիվեր է: Բերդս ունի կրկնապարիսպ. արտաքինն սարի կիսով՝ արեւելքից արեւմուտք, իսկ երկրորդն՝ սարի գագաթի եզերքներով, որ աւելի բրգաչատ է եւ անմատչելի. կարող ենք ասել՝ եւ անառիկ: Բերդիս երկարութիւնն է 230 մետր, լայնութիւնն՝ 20 մ., պարսպի հաստութիւնն՝ 80 սանտիմետրից մինչեւ մէկ ու կէս մետր: Բերդիս հիւսիսային կողմում կայ աւերակ եկեղեցի եւ շատ աւերակ տնատեղեր: Բայց տակաւին կանգուն մնում են Մելիք-Յովսէփի ապարանն, որ հիմնուած է բերդի հարաւային կողմում՝ մուտքի աջ ու ձախ անկիւններում: Ապարանի ծածկերն խոնարհուած են: Բերդիս հարաւային հանդէպ կայ մի դղեակ, որը տեղական

անուամբ կոչւում է Ղալաչա (Ղալաչայ՝ հայերէն բերդակ է նշանակում.- Ա.Պ.): Դղեակս ամուր է եւ քառակուսի 4 անկիւններում ունի 4 հաստատուն աշտարակ, իսկ հիւսիսային կողմից մի դուռ եւ ամէն կողմերից հրացան արձակելու ծակեր՝ 7,5 մ. երկարութիւն, 7 մ. լայնութիւն, 4 եւ կէս մ. բարձրութիւն եւ պատի հաստութիւնը՝ 1 մ. 28 սմ.: Այս եւս պատկանում է Մելիք-Բէկլարեաններին»:

Բերդի մասնագիտական նկարագրութիւնը, չափագրութիւնն ու ճարտարապետական այլ բնութագրեր տեղ են գտել ***Արտակ Ղուլեանի*** *«Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները» (Եր., 2001) ուսումնասիրութեան մէջ:* «Բերդը գտնւում է Գիւլիստան գիւղից մօտ 2 կմ արեւմուտք, Ինջա գետի ափին, Մռաւ լեռանը հանդիպակաց հսկայական քարաժայռի վրայ: Արեւմուտքից՝ Մռաւի փէշերից հոսող գետակը երեք կողմից չրջանցում է բարձունքը՝ նրան թերակղզու ձեւ տալով եւ միայն հարաւային կողմի համեմատաբար մատչելի լանջով է կապւում ստորոտի հետ, որտեղից էլ ամրոցի հիմնական մուտքն է: Բերդը կառուցուած է ժայռաբարձունքի լեզուակաձեւ հարթութեան վրայ (երկարութիւնը 240 մ է, ամենալայն մասը՝ 30 մ), բրգաւոր չրջապարիսպը դրուած է տարածքը եզերող գրեթէ ուղղաձիգ ժայռերի անկանոն պարագծով, հարաւային կողմը ամրացուած է կրկնապարիսպով: Գետնափոր-թաղակապ դաղտնուղին հիւսիս-արեւմտեան կողմում է՝ քօղարկուած անտառախիտ լանջով» *(Արտակ Ղուլեան, «Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները», էջ 36):*

Կարելի է պատկերացնել Գիւլիստանի բերդի խորհրդաւոր զօրութիւնը եւ հանգուցային նշանակութիւնը տարածաշրջանի համար, բերդ, որի արեւելեան եւ արեւմտեան կողմերը ուղղահայեաց եւ բարձր ժայռապարիսպներ են, հիւսիսային կողմից՝ հաստաբեստ բարձր պարիսպներով, իսկ հարաւային կողմից տեղադրուած էին նաեւ երկրորդական պարիսպներ, մարտկոցներ եւ հրանգքներ: Բերդապարիսպը չորս աշտարակ է ունեցել: Բերդի ներսում եղել են եկեղեցի, զօրանոցներ, զինանոցներ, պահեստներ, արհեստանոցներ, երկյարկ տներ, ջրաւազան եւ

այլ չինուԹիւններ: Հիւսիսային պարսպից մինչեւ գետափ ստորգետնեայ անցուղի է կառուցուել: Բերդի դիմացի հարաւային բարձրադիր տեղանքում կառուցուած են եղել մարտկոցներ եւ դիտանոցներ:

Գիւլիստանի հռչակաւոր բերդի կառուցման Թիւը յայտնի չէ, սակայն որպէս ամրոց օգտագործուել է անյիշելի ժամանակներից: ՊատմագիտուԹեան մէջ այն կարծիքը կայ, Թէ **Աղուէն** ամրոցը, որը յայտնի է **Վաչագան Բարեպաշտ** արքայի հաստատած «Կանոնական ՍահմանադրուԹեամբ», հէնց Գիւլիստանի բերդն է: **Բենիկ Ղուլեանը** եւս հակուած է այդ տեսակէտին:

Գիւլիստանի բերդը վերանորոգել է **Մելիք Բէգլար Ա-ն** 17-րդ դարի երկրորդ կէսին:

Մելիքները սերուել են Սիւնիք-Աղուանքի հայ Թագաւորներից: Պատմական ճշմարտուԹիւնն այն է, որ ինչպէս ամբողջ Արցախի, այնպէս էլ Գիւլիստանի մելիքուԹեան տիրապետողները բնիկներ են եղել եւ սերել են Արցախի իշխանական տոհմերից: Րաֆֆին Գիւլիստանի **Մելիք-Բէգլարեանների** ծագումը կապում է Նիժ գիւղի ուտիացիների հետ: Նոյն կարծիքն ունէր նշանաւոր ազգագրագէտ **Երուանդ Լալայեանը**, Թէեւ նա ստոյգ չի ասում, Թէ **Սեւ Աբովը** եկուոր է եղել. «Մելիք-Բէկլարեանների տոհմը սկսուած է Սեւ-Աբովից, որ տասնվեցերորդ դարի վերջում, յայտնի չէ, Թէ ինչ պատճառներով Նուխու գաւառի Նիժ գիւղից գաղԹում է Գիւլիստան ուրիշ 7 ընտանիքների հետ եւ առժամանակ բնակւում վրաններով ԹուլԹուլաղ (ԴիւԹական) գիւղում: Հաստատապէս յայտնի չէ, Թէ Սեւ-Աբովը Նիժեցի՞ (ուտի) է եղել, Թէ՞ պարսից կամ լեզգիների արշաւանքներից ստիպուած, Թափառելիս է եղել այն կողմերը: Նոր գաղԹած աւերակ գիւղատեղիում Սեւ-Աբովը, որ մի վիԹխարի, հաստաբազուկ եւ սեւերես մարդ է եղել, առժամանակ, օրական ապրուստը հայԹայԹելիս է եղել գլխաւորապէս որսորդուԹեամբ» *(Երուանդ Լալայեան, «Արցախ», էջ 209)*:

ՈղջախոհուԹիւնը յուշում է, որ Սեւ Աբովը չէր յաջողի արագ կերպով բարձրանալ Գիւլիստանում (ըստ աւանդուԹեան՝ Գիւլիստանի գաւառ նոր տեղափոխուած Սեւ Աբովն իր

քաղաքագործութիւնների համար Պարտաւի խանից նուէր է ստա-նում Թառիջ կամ Թալիշ գիւղը եւ այնուհետեւ տարածում իր իշխանութիւնն ամբողջ Գիւլիստանի վրայ), եթէ նա լինէր սո-վորական գաղթական, այլ ոչ թէ իր պապերի հայրենիք վերա-դարձած մի իշխան: Օտարների, յատկապէս գաղթականների անակնկալ եւ արագ բարձրացումն Արցախի նման երկրում դրեթէ անհաւանական է: **Կիմ Ղահրամանեանը** հնարաւոր է համարում, որ Հոռեկի կողմերից գաղթ եղած լինի դէպի Կուրի ձախ ափը, իսկ 16-րդ դարի վերջերին, երբ կեանքն այնտեղ անապահով է դարձել, որոշ ընտանիքներ վերադարձած լինեն պապենական հայրենիք: Այդպիսի գաղթն ու վերադարձը այդ աղէտալի ժամանակներում եւս սովորական են եղել (տե՛ս Կիմ Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ», գիրք Ա, էջ 16-18):

Սեւ Աբովի գերեզմանը գտնւում է Հոռեկայ վանքի մօտ եւ կրում է Հայոց ՌՁԱ (1081 - Փրկչական 1632) թուականը, որ է՝ Աբովի մեռած տարին:

Սեւ Աբովին, ըստ Րաֆֆու, յաջորդում է աւագ որդին՝ **Մելիք-Բէգլար Ա-ը**, որն աչքի է ընկել քաջութեամբ եւ խելքով եւ հիմք է դրել Գիւլիստանի մելիքների իշխանութեանը: Մելիք-Բէգլարից առաջ, ըստ **Երուանդ Լալայեանի**, Սեւ Աբովին նախ յաջորդում է Մելիք-Յաւրին: Սա ճշմարի՞տ է, թէ՞ սխալ, էական նշանակութիւն չունի, քանզի Մելիք-Յաւրու գործունէութեան մասին յիշատակագրութիւն չկայ: Մելիք-Բէգլարը, ոմանց պատմելով, **Աբրահամ Իւզբաշուց** գիւղեր է խլել, որը թիւրիմացութեան արդիւնք է համարում **Կիմ Ղահրամանեանը**, քանզի Աբրահամ Իւզբաշին եղել է հզօր դէմք ո՛չ միայն Գիւլիստանում, այլեւ ամբողջ Արցախում: Մելիք-Բէգլար Ա-ը տիրում է նաեւ Գիւլիստանի բերդին, ամրացնում դա եւ այնտեղ բնակւում: Նրան յաջորդում է աւագ որդին՝ Մելիք-Աբով Բ-ը, որի մի ոտքը վնասուած լինե-լու պատճառով անուանւում է Կաղ Աբով: Մելիք-Աբով Բ-ն առեւանգում է Գանձակի կալուածատէր **Միրզա-Մահմուդ Մուստաֆայի** աղջկան, մկրտել տալիս նրան, ամուսնանում նրա հետ եւ ի վերջոյ տէր դառնում նրա հօր կալուածքներին:

*Աբով Բ-ը վախճանւում է 1728 թուականին: Նրան պիտի յաջորդէր որդին՝ **Մելիք-Յուսուբը** (Յովսէփ), սակայն մանկահասակ լինելու պատճառով երկիրը ժամանակաւորապէս ղեկավարում է Կաղ Աբովի եղբայրը՝ **Թամրազը**: Վերջինս բնակութեան վայր է ընտրում Հոռեկայ վանքի մօտ գտնուող պալատը: Նա մտադիր էր գաւառի լիիրաւ տէրը դառնալ, փորձում էր ամէն ինչ իր ձեռքը հաւաքել եւ որոգայթ լարել պատանի Յուսուբի դէմ: Նրանց հակամարտութիւնն աւարտւում է Յուսուբի յաղթանակով:*

18-րդ հարիւրամեակի սկզբին Հայաստանի անկախութեան համար պայքար մղելու բարենպաստ պայմաններ էին ստեղծուել: Նախ՝ Օսմանեան կայսրութիւնն էր թուլացել, իսկ Պարսկաստանի միապետութիւնն ուժեղ ճգնաժամ էր ապրում: Միւս կողմից, հայ ժողովրդի ազատասիրական ոգին երբեք չի ննջել եւ պատեհ ժամանակներում Հայկական լեռնաշխարհի այս կամ այն վայրում հայերը անկախութիւն են ձեռք բերել: 18-րդ դարասկզբին ծաւալուած Դաւիթ Բէկի պայքարը մեր մտքի հաստատումն է:

*Սակայն 18-րդ դարասկզբի Պարսկական միապետութեան թուլացումից օգտւում էին նաեւ հայութեան թշնամիները, օրինակ՝ աղուանական ցեղերը, որոնք ասպատակ արշաւանքներ էին կազմակերպում դէպի Պարսկաստանի հիւսիսային սահմանները, կողոպտում եւ աւերում: Է՛լ աւելի ուժեղ էին Դաղստանի լեռնաբնակ ցեղերի թափանցումները Պարսկաստանի Անդրկովկասեան տիրոյթները: Թուրքիոյ հրահրումով, լեզգիները 1721 թուականին մտնում են Կուբի հովիտ: Նրանց առաջնորդներից **Դաւուդ Բէկն** անմիջականօրէն էր կատարում սուլթանի հրահանգները: Լեզգիները գրաւում են Շամախին եւ կոտորում ո՛չ միայն քրիստոնեաներին, այլեւ չիա մուսուլմաններին:*

*18-րդ դարի երկրորդ կէսին հայերը **Մուշում** մեծ յեղափոխութիւն են նախապատրաստում համահայկական, նոյնիսկ հայ-վրաց-քրդական ծաւալներով, սակայն հայերիս անմիաբանութեան պատճառով յաջողութեան չենք հասնում: Խօսքը վե-*

*բաբերում է Մուշի առաջնորդ **Յովնան եպիսկոպոսի** եւ **Յովսէփ Էմինի** գլխաւորութեամբ հայ-վրացական (**Վախթանգ Թագաւորի**) եւ հայ-քրդական դաշինքով (քուրդ իշխանների) նախապատրաստուող ազատագրական պատերազմին Օսմանեան Թուրքիայի դէմ, որը ճախողւում է **Սիմէոն Ա Երեւանցի Ամենայն Հայոց կաթողիկոսի** անհեռանկար դիրքորոշմամբ եւ գործելակերպով: Սիմէոն կաթողիկոսի գործողութիւնները նպաստաւոր էին միայն թուրքերի համար: Խնդիրն այդպէս է ներկայացնում **Կարօ Սասունին** իր «Տարօնի պատմութիւնը» գրքի մէջ: Նման մօտեցում է ցուցաբերել նաեւ **Լէօն**: Այլ աղբիւրներ (հիմնականում՝ խորհրդահայ) նշում են, թէ Սիմէոն կաթողիկոսն ստիպուած է եղել այդ ապստամբութիւնը ճնշել տալու եւ այդ նպատակով Երեւանի խանի օգնութեանն է դիմել:*

*Այս պատմութեան մէջ մեր խնդրի հետ առընչուող պահն այն է, որ **Յովսէփ Էմինն** իր նպատակին հասնելը՝ Հայաստանի ազատագրումը կապում էր **Արցախի մելիքների** վճռական զօրակցութեան հետ: Նա տեւական բանակցութիւններ էր վարում ինչպէս Գանձասարում, այնպէս էլ Գիւլիստանում: Սիմէոն կաթողիկոսը բանադրում է ինչպէս Յովնան եպիսկոպոսին, այնպէս էլ Արցախում հռչակուած **Դալի Մահրասային** (Խենթ Աբեղայ): Հայոց աշխարհում կաթողիկոսի հեղինակութիւնն այնքան բարձր էր, որ այդ բանադրանքը եւ նրա ուղարկած նամակները (որոնցում նա կոչ էր անում չհամագործակցել Յովսէփ Էմինի եւ Յովնան եպիսկոպոսի հետ), իրենց ազդեցութիւնն են գործում. Հայոց աշխարհը պառակտւում է եւ այդ մարդկանց ջանքերն ի դերեւ են ելնում: Սիմէոն կաթողիկոսը Յովսէփին եւ Յովնանին մերժել պահանջող նամակ է ուղարկում նաեւ **Վրաց Վախթանգ Թագաւորին**: Այսպիսով, դիմադրութեան եւ ազատագրութեան համահայկական ճակատ չի ստեղծւում: Այս պայմաններում, հասկանալի է, որ Վախթանգ Թագաւորը նման ձեռնարկի պիտի չյարէր: Կաթողիկոսի ներգործութեամբ՝ Արցախի մելիքները եւս խզում են իրենց կապը Յովսէփ Էմինի հետ:*

Այս ձախողութեամբ կրկին հաստատւում է ազգային բոլոր՝ հոգեւոր եւ աշխարհիկ ուժերի ներդաշնակ համագործութեան անհրաժեշտութիւնը:

Արցախի մելիքները երբ համախումբ էին, կարողանում էին արտաքին թշնամիներից յաջողութեամբ պաշտպանել Արցախի անկախ դրութիւնը: Արցախի համար ամենացաւալին այդ դարաշրջանում մելիքական միաբան համագործակցութեան խաթարումն էր:

ՇՈՒՇԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ ԵՒ ԴՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

*Արցախի պատմութեան մէջ անկիւնադարձային մի փոփոխութիւն չրջեց իրադարձութիւնների «բնական» կամ ակնկալուող ընթացքը: Պարսկաստանում **Նադիր շահի** բարձրացումով այս երկիրը հզօրացաւ եւ իր կորցրած բոլոր նահանգները կարճ ժամանակաընթացքում ետ վերցրեց ե՛ւ օսմանցիներից, ե՛ւ ռուսներից: Հայերը Նադիրին շատ օգնեցին յատկապէս Արցախում եւ Սիւնիքում: Շահը երախտամոռ չգտնուելով՝ հայերին վերադարձրեց իրենց իշխանութիւնը: Խամսայի մելիքները աւելի ուժեղացան: Դա չարունակուեց մինչեւ 18-րդ դարի կէսը, քանի դեռ ասպարէզ չէր մտել **Փանահ խանը**: Ճակատագրի քմահաճութեամբ՝ Պարսկաստանի կողմից քաղաքական յանցագործ յայտարարուած ու հետապնդուող այս աւազակը յայտնուեց Հայաստանում եւ հայերը ո՛չ միայն պարսից իշխանութեանը չմատնեցին նրան, այլեւ՝ իրենց մօտ ապաստան տուեցին: Աստուած հայերիցս հաւանաբար վերցրել էր առողջ դատողութեան ընդունակութիւնը եւ մենք օձին ինքներս էինք պահում ու տաքացնում մեր ծոցում: Ո՞մ մտքով կ՛անցնէր, թէ սա պիտի զօրանայ եւ անթիւ աւերածութիւններ գործի Արցախում՝ ի վերջոյ պատճառ դառնալով հայ մելիքութիւնների վերացմանը: Այո՛, Ջրաբերդի **Մելիք-Ալլահվերդի սուլթանն** իր մօտ պատսպարեց այն չարիքին, որ կործանարար դեր պիտի խաղար Արցախի հայութեան համար: Դաշնակցելով Վարանդային նենգութեամբ տիրացած **Մելիք-**

Շահնազար Բ *եղբայրասպանի հետ, Փանահն իր չարունակական խարդաւանքներով խախտեց հայ մելիքների միաբանութիւնը: Արցախի մելիքները բարեպաշտ հայեր էին, սակայն նրանցից մէկի (կարծիք կայ, թէ* ***Մելիք-Շահնազար Բ-ի*** *մայրը թրքուհի էր) դաւաճանութեան հետեւանքով խախտւում է հայ մելիքների դաշինքը: Դրանից օգտուելով՝ թափառաշրջիկ եւ ելուզակ* ***Փանահը*** *18-րդ դարի կէսին տիրանում է Շուշիի բերդին եւ ասպատակում մնացեալ մելիքութիւնները, հալածում եւ նրանց ենթարկում իրեն: Նա իրեն Ղարաբաղի խան է հռչակում եւ նպատակադրում հայկական իշխանութիւնները վերացնել: Այդ ժամանակից սկսուել է օտարացեղ (թուրք, թուրքմէն եւ քիւրդ) տարրերի հաստատումը Արցախում: Փանահին եւ նրա յաջորդին՝* ***Իբրահիմին*** *աջակցում է թուրք սուլթանը, իսկ հայ մելիքները ձգտում էին թուրքական լուծը թօթափել Ռուսական կայսրութեան օգնութեամբ (հայ-ռուսական համագործակցութիւնն սկիզբ է առել* ***Պետրոս Մեծի*** *(1682-1725) օրօք):*

Մելիք-Շահնազարի չար հանճարը միաւորուել էր արեւելեան ելուզակի անօրինակ խորամանկութեանը: Մնացեալ մելիքներին թուլացնելու համար Մելիք-Շահնազարը օտար բռնակալին նուիրեց Շուշիի հինաւուրց ամրոցը, որը կարճ ժամանակում հսկայ բերդապարիսպներով եւ աշտարակներով ամրացրին՝ գործնականում անառիկ դարձնելով: Մելիք-Շահնազարը սպանելով իր եղբօրը՝ ***Մելիք-Յովսէփին****, տէր է դառնում Վարանդային: Յոյժ անբարոյական մարդ լինելով՝ նա իր ընտանիքի մէջ մտցնում է մահմեդական բազմակնութիւնը, իսկ իր դուստրերից մէկին կնութեան տալիս Փանահի որդիներից Իբրահիմին: Մելիք-Շահնազարի այդօրինակ վարմունքը վիրաւորում է հայոց կրօնական զգացմունքը: Նա ատելի է դառնում միւս մելիքների համար, որոնք պիտի վերացնէին այդպիսի պիղծ ապօրինութիւնը, քանզի ընտանի դաւաճանութիւններ Հայոց աշխարհում կատարւում էին շատ հազուադէպ:* ***Եւ այստեղ պիտի պատկերացնենք Ղարաբաղի մելիքական աշխարհը որպէս մի կուռ բարոյահոգեբանական ամբող-***

ջուլֆիւն՝ *նահապետական անարատ սովորութիւններով, որոնք աւելի էին ամրացել քրիստոնէական բարոյականութեան բարձր սկզբունքներով:*

*Ինչեւէ, Մելիք-Շահնազար Բ-ը դաշնակցում է Փանահ խանի հետ, եւ նրանք պատուհաս են դառնում Արցախի հայութեան համար: Խաբէութիւններով, սադրանքներով, դաւերով, սպանութիւններով սրանք կարողանում են նախ թուլացնել եւ իրենց կողմը գրաւել Խաչէնի մելիքների մի մասին: Այս պատմութիւնը շատ հետաքրքրական նկարագրութեամբ կայ Րաֆֆու վերոնշեալ երկի մէջ եւ մենք այստեղ չենք վերապատմելու դա: Միայն նշենք, որ երեք մելիքների զօրաց միաւորումն արդէն դառնում է դժուարին, գրեթէ անհնարին, քանզի Ջրաբերդի եւ Գիւլիստանի մելիքութիւնները կարուած էին Դիզակից, եւ Փանահ-Շահնազար ուժական միասնութեանը յաղթելու համար յաւելեալ, արտաքին ոյժի կարիք էին զգում: Ի վերջոյ, նախ **Ուրմիայի Ցաթալի խանի** եւ ապա վրաց **իշխան Թեյմուրազի** դաշնակցութեամբ, միացեալ ուժերով, ուխտադիր մելիքները երկու անգամ յաջողում են գրաւել Շուշին: Երկու անգամ էլ գերում են **Փանահ խանին եւ Մելիք-Շահնազարին**, սակայն այդ օտար դաշնակիցների ընչաքաղցութեան պատճառով հայոց ոխերիմ թշնամիները երկու անգամ էլ ազատւում են: Թեյմուրազը կաշառքի դիմաց ազատ է արձակում Փանահին եւ վրացի իշխանի ստոր արարքը պատճառ է դառնում հայ-վրացական զօրակցութեան պառակտմանն առհասարակ:*

Այդ ընթացքում եւ դրանից էլ առաջ Արցախի մելիքութիւնները յաջողութեամբ ետ էին մղում ո՛չ միայն օսմանցիների յարձակումները, այլեւ լեզգիների արշաւանքները: Եւ դրանք փշրւում էին Գիւլիստանի եւ միւս բերդերի մատոյցներում:

*Գիւլիստանի տիրակալ **Մելիք-Աբովը** քաջաբար պաշտպանում է իր ժողովրդին լեզգիներից, սակայն երբ **Պետրոս Մեծը** գրաւում է Դերբենդը, Մելիք-Աբովը խզում է բոլոր կապերը պարսիկների հետ եւ կողմնորոշւում դէպի ռուսները: Այդպիսի չուտափոյթ վճիռը, բնականաբար, վատ է անդրադառնում*

հայերի վրայ եւ մի անգամ եւս փաստում մեր դիւանագիտութեան թերութիւնը: Երբ Պետրոս Մեծը դադարեցնում է իր արշաւանքը, հայերը մնում են անպաշտպան պարսիկների եւ թուրքերի դէմ: Եթէ Թուրքիան եղել է հայութեան աւանդական թշնամին, նոյնը Պարսկաստանի մասին ասել չենք կարող:

Հայերիս բացարձակ եւ անհեռատես կողմնորոշման բացայայտումը ծանր անդրադարձ ունեցաւ Հայաստանի ճակատագրի վրայ: Օսմանցիները նուաճեցին Թիֆլիսը, Երեւանը, Նախիջեւանը, իսկ Արցախի հայութիւնն օգնութեան հայցումով իր խնդրագրերն էր շարունակում ուղարկել Ռուսաց կայսրին: Ռուսները, բնականաբար, յոյս էին տալիս, որ չուտով կը վերսկսեն իրենց արշաւանքը եւ Հայաստանը կ՛ազատագրեն: Հայ իշխանների լեզուական իմաստով շատ գրագէտ նամակները, միաժամանակ, արտացոլում են մեր թուլութիւնը, որ հետեւանք է մեր իսկ ուժերին չապաւինելուն, եւ ցուցանում է նաեւ մեր սխալը, որի պատճառով ապաւինել ենք ուրիշներին՝ յոյս դնելով մարդկանց վրայ, որոնք մահկանացու են եւ իրենք էլ կախում ունեն բազմաթիւ հանգամանքներից: Իբրեւ ռազմիկ ազգ որեւէ մէկից պակաս չլինելով՝ հայերս երկար դարեր եղել ենք հարեւան երկրների եւ յատկապէս Պարսկաստանի բանակի գլխաւոր զօրամիաւորումներից մէկը, հայկական այրուձին դարեր շարունակ եղել է փառաբանուած եւ արտայայտել է մեր ռազմաքաղաքական զօրութիւնը: Սակայն Հայաստանը երկու տէրութիւնների՝ Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի միջեւ բաժանուելուց յետոյ (1555) թուլացաւ հայոց ռազմասիրական ոգին եւ բաղձանք առաջացաւ դէպի «քրիստոնեայ» Եւրոպան ու յատկապէս Ռուսաստանը: Հակումն առ Ռուսիան, ինչպէս նշել ենք, ցոյց է տալիս հայոց ռազմաքաղաքական մտքի եւ դիւանագիտութեան թուլութիւնը:

Հայոց մելիքների եւ Փանահ խանին յաջորդած ***Իբրահիմ խանի*** *միջեւ շարունակուող պատերազմները կարծես ապացուցում են, որ մարդկութեան պատմութիւնը պատերազմների պատմութիւն է: Փանահ խանի, ապա Իբրահիմ խանի Շուշիում հաստատուելու եւ Արցախում գերիշխող դիրք գրաւելու փաս-*

տը կարծես մի ակնառու օրինակ է, թէ ինչպէս է օտարը գալիս եւ հաստատւում ուրիշի հայրենիքում, դառնում երկրի տէրը, բնիկներին հպատակեցնում եւ աստիճանաբար կա՛մ ճուլում, կա՛մ ցեղասպանում, պատմութեան ասպարէզից դուրս մղում: Անառիկ լերանց հայկական այս միջնաբերդը՝ Արցախը, որի հայ բնակչութիւնն աներեւակայելի տոկուն եւ հայրենասէր է, այնուամենայնիւ տեղի է տալիս օտար տիրապետութեանը: Երկրային կեանքի հիմքը հաւատքն ու ոգին են, ազգային եկեղեցին է, որը պետականօրէն կազմակերպում է ազգը եւ որի բարեպաշտութեան վրայ հիմնւում է այսպէս կոչուած աշխարհիկ իշխանութիւնը: Ահա՛ այս նուրբը պարագային հայերս համեմատաբար թոյլ ենք գտնուել, չենք կարողացել անկախ պետութիւնը հիմնել եւ ներդաշնակել հոգեւո՛ր պետականութեան վրայ եւ հասնել այնպիսի համադրութեան, որն անուանում ենք ***Վարդանանց ուխտ****: Հոգեւոր ուխտը միաւորում է ազգը ո՛չ միայն հորիզոնական կարուածքով՝ տարածականօրէն, այլեւ ժամանակների միասնականութեամբ, այսինքն՝ յաւիտենականօրէն, ոգով, որով միաւորւում են կառավարումը, պաշտամունքը, երկրի պաշտպանութիւնը, վարդապետութիւնը, գիտութիւնը, մշակոյթը, մի խօսքով՝ այն ամէնը, ինչ կոչւում է Հայկականութիւն կամ Հայ Մարդկութիւն:*

Թուրքը թափանցել է անգամ հայ հոգեւոր կառոյցի ներսը եւ պառակտել. «**Իբրահիմ խանը Յովհաննէս (Հասան-Ջալալեան - Ա. Պ.) կաթողիկոսին** սպանելուց յետոյ Գանձասարի կաթողիկոսութիւնը տուել էր իւր հպատակ **Իսրայէլ կաթողիկոսին,** որ Երիցմանկանց վանքի կաթողիկոս էր համարւում, թէեւ նստավայր ունէր Գանձակը, իսկ Երիցմանկանց վանքի կաթողիկոսութիւնն անցել էր այդ ժամանակ **Փոքր Սիմոն** անունով մէկին, որը նոյնպէս Իբրահիմ խանի հլու հպատակն էր: Այս պատճառով մելիքները ցանկանում են ունենալ իրենց կաթողիկոսը, ուստի մեծ դժուարութեամբ **Յովհաննէս կաթողիկոսի** եղբայր **Սարգիս եպիսկոպոսին** Գանձասարից փախցնում են Գանձակ եւ այդտեղ, 1724թ. օծել տալիս Աղուանից կաթողիկոս: Այսպիսով Աղուանից փոքրիկ երկրում

միաժամանակ երեւացին երեք կաթողիկոսներ, որոնք միմեանց դէմ կռուելով, զբաղեցրին ժողովրդին եւ վնասեցին ընդհանուր գործին» *(Երուանդ Լալայեան, «Արցախ», էջ 226-227):*

Արդէն նշել ենք՝ 1728 թուականին ***Կաղ Աբովի (Մելիք-Աբով Բ)*** *մահից յետոյ իշխանութիւնն անցնում է որդուն՝ ան-չափահաս* ***Յովսէփին:*** *Մինչ սրա հասունանալը մելիքութեան պաշտօնն յանձն առած Կաղ Աբովի եղբայր* ***Մելիք-Թամրազը*** *երկիրը չի կառավարում որպէս ժամանակաւոր խնամատար, այլ իբրեւ լիաբաւ տիրակալ: Յանուն իշխանութեան մղուող այդ ընտանեկան պայքարն աւարտւում է Մելիք-Յովսէփի յաղթանակով, եւ նա հօրեղբօրից խլում է զաւթել իշխա-նութիւնը:*

Մելիք-Յովսէփը, *դաշնակցելով* ***Ջրաբերդի Մելիք-Ադամ Մելիք-Իսրայէլեանի*** *հետ, գործում է Փանահ խանի դէմ:*

Մելիք-Յովսէփը մահանում է 1775 թուականին: Նրան յաջորդում է աւագ որդին՝ ***Բէգլարը****: Մելիք-Բէգլար Բ-ը սպանւում է հայերի կողմից: Մելիքութիւնն անցնում է եղբօրը՝* ***Աբովին (Մելիք-Աբով Գ):***

ԳԱՂԹ ԴԷՊԻ ՎՐԱՍՏԱՆ

Ի լրումն այս ամէնի՝ պատերազմների պատճառաւ հայերը հողերը մշակելու եւ ցանելու անկարող գտնուեցին: Սաստիկ սով եղաւ, որին յաջորդեց նաեւ ժանտախտը: Դա հերիք չէր կարծես, եւ ահա՛, թուրքմէն Ղաջար ցեղից ***Աղա Մահմադ խանը*** *յարձակուեց Շուշիի վրայ, դա գրաւեց եւ ամբողջ Արցա-խում ասպատակ սփռեց: Հետեւեց արցախցիների մի զգալի մասի արտագաղթը:*

Գիւլիստանցիներն երկու անգամ են գաղթել Վրաստան: Առաջին անգամ՝ 1788 թ. Մելիք-Աբով Գ-ի օրօք, եւ Բոլնիսում մնացել են մինչեւ 1795 թ.: Հազիւ վերադարձած՝ սկսել է երեք տարի (1795-1798) տեւած սովը, որին յաջորդել է ժանտախտը: Այսինքն, գոնէ այս անգամ գաղթի անմիջական պատճառ է դարձել ո՛չ թէ թուրքի յարձակման վտանգը, որպիսիք եղել են անթիւ անհամար, այլ՝ 1795-98 թթ. ահաւոր սովը: Գիւլիստա-

նի բնակչութեան մեծամասնութիւնը, ստիպուած, երկրորդ անգամ գաղթել է Վրաստան: Սովը հետեւանք էր տարբեր ուղղութիւններից Արցախի վրայ յարձակում գործած թշնամիների հետ չարունակական բախումների: Երկիրը դարձել էր անընդհատ պատերազմների, ասպատակութեանց եւ արեան ասպարէզ: Գաղթի նկարագրութիւնը կայ ***Րաֆֆու*** «Խամսայի մելիքութիւնները» գրքում:«Այդ արիւնահեղ կռիւների ժամանակ, որ տեւեցին ամբողջ երեք տարի, չինականների կեանքն այն աստիճան անապահով վիճակի մէջ էր, որ չկարողացան ո՛չ ժամանակին ցանել եւ ո՛չ ժամանակին հնձել: Եւ երբ տեղի ունեցաւ 1797 թուականի սարսափելի երաշտը, որ ցամաքեցրեց բոլոր բուսականութիւնը, այդ ժամանակ եղած ցանքերն էլ ի սպառ ոչնչացան»: *Այստեղ պիտի ի միտ առնել այն հանգամանքը, որ Ղարաբաղի վրայ յարձակումների ժամանակ զէնքի տակ էր մտնում գրեթէ ամբողջ արական հասուն բնակչութիւնը:*

«Սովից, ժանտախտից եւ պարսից բռնակալութիւնից տագնապած թշուառ հայ ժողովուրդը սկսեց գաղթել, բայց ո՞ւր՝ ամէն կողմ, ուր մի աղօտ յոյս ճգնում էր նրան. Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան» *(Երուանդ Լալայեան, «Արցախ», էջ 227-228): Ակամայ յիշում ես* ***Եսայի Մարգարէի*** *խօսքը.* «Երկու բաներ են, որ քեզ պատահել են. ո՞վ կարող է քեզ մխիթարել. կործանում եւ կոտորած, եւ սով ու սուր. ես քեզ ո՞ր մէկի համար մխիթարեմ» *(Եսայի, ԾԱ. 19):*

Վաթսուն հազար տուն հայ բնակիչներ ունեցող Ղարաբաղը գրեթէ դատարկուեց: Մելիք-Աբով Գ-ը չարժուում է դէպի հիւսիս-արեւմուտք: Ժողովուրդը հետեւում է առաջնորդին: Մեծ դժուարութիւններով հասնում են Վրաստան, որտեղ տիրում էր հայերին բոլորովին խորթ երեւոյթ եղող ստրկութիւնը: Վրացիների վերաբերմունքն ահաւոր վատ էր, ուստի հայ մելիքները դիմում են Ռուսաց կայսրին: ***Մելիք-Ֆրիդոն Մելիք-Բէգլարեանը եւ Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարեանը*** *1799 թուականին անձամբ գնում են Պետերբուրգ: Ռուս կայսր* ***Պաւել Ա-ի*** *1799 թուականի յունիս 2-ի հրովարտակով առաջարկւում է Ղազախի երկիրը յանձնել Գիւլիս-*

*տանի մելիքներին՝ նրանց թողնելով իրենց մելիքական բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները, եւ պարտականութիւն է սահմանում հաւատարիմ մնալ ընդհանուր բարեկեցութեան շահերին: Բացի այս կենսանպաստ քայլը, կայսրը յանձնարարում է Վրաստանում իր մինիստր **Ս. Ս. Կովալենսկուն**, թէ ինքը ցանկանում է, որ այս քրիստոնեայ նոր համայնքը Վրաստանում որքան կարելի է ծաղկէր. «Նոյնիսկ այդ երկրի սեփականի օգուտների համար Դուք պէտք է աշխատիք, որ թագաւորը այդ հողերը զիջէր մելիքներին ամենաաճեռնտու պայմաններով, եւ որովհետեւ մի այդպիսի հասարակութիւն անկարող է հաստատուել եւ զարգանալ, եթէ նրան ի վաղուց հետէ յատուկ սովորութիւնները եւ կառավարութիւնը պաշտպանած չլինին, ուստի եւ ցանկալի էր, որ նրանք Վրաստանից միմիայն որպէս վասալ կախում ունենային, վճարելով թագաւորին մի չափաւոր հարկ եւ մասնակցելով երկրի պաշտպանութեան» (Երուանդ Լալայեան, «Արցախ», էջ 229):*

*Ստանալով այդ դիւղերը, մելիքները գալիս են Գիւլիստան եւ իրենց հպատակներին փորձում տեղափոխել նոր ստացած գիւղերը: Ճանապարհին ենթարկւում են եռակի յարձակումների. **Իբրահիմ խանին** եւ լեզգիներին այս անգամ միանում են նաեւ բարեկամ համարուող Գանձակի **Ջաւադ խանի** զինեալ ջոկատները: Մելիք Աբովին յաջողւում է 7000 հոգուց Բոլնիս հասցնել ընդամէնը 3000ին: Նոր գաղթավայրում չարունակւում է մելիքական աւանդական կառավարման կարգը: **Մելիք-Աբով Գ-ն** կարճ ընթացքում մեծ անուն է ձեռք բերում Վրաստանում, ուր նա համարւում է պատուաւոր, յարգելի անհատականութիւն: Մանաւանդ Վրաց թագաւոր **Գէորգի Ժ-ն** շատ է գովաբանում Մելիք-Աբովին՝ նրա կատարած ծառայութիւնների համար: Սակայն այդ վիճակը երկար չի տեւում. **Գէորգի Ժ-ն** շատ չանցած մահանում է:*

*Իր քաջութեան համար սկզբնական շրջանում Վրաստանում պատիւների արժանացած Մելիք-Աբովը որոշ ժամանակ անց թուանաւորւում է վրացիների կողմից: Վրաց ազնուականները թունաւորում են Մելիք-Աբովին եւ նրա ընտանիքին, **Մանաս-***

***բէկ որդուն եւ Միրզա-Իսաքաշխ** քարտուղարին: Թունաւորու-մից փրկւում է միայն որդին՝ **Մանաս-բէկը**: Նրա մարմինը տե-ղափոխում են Հոռեկայ վանքի Մելիք-Բէգլարեաններէ տոհմա-կան հանգստարան:*

Մելիք-Աբովի մարմինը փոխադրւում է Հոռեկ եւ թաղւում տոհմական գերեզմանատանը: Այսպիսով, այդ գօրաւոր մարդը չատ փափագեց վերադառնալ հայրենիք իր իրաւունքներով, սակայն չյաջողեց դա անել, եւ միայն մարմինը վերադարձաւ:

*Մելիքների մահից յետոյ ընկճուած ժողովուրդը աստիճանա-բար վերադառնում է հայրենի երկիր: Մելիք-Աբովին յաջոր-դած **Մանաս-բէկի** գլխաւորութեամբ գաղթականները տեղա-փոխւում են Գիւլիստան, ձեռք են բերում իրենց գիւղերը, վե-րականգնում տնտեսութիւնները եւ կենցաղավարում վաղեմի սովորութիւններով:*

*Բոլոր գիւլիստանցիները չէ, որ թողել են հայրենի երկիրը եւ գաղթել: Ձկամեցողներից մէկը Շահէն Մեղրեանի նախապապն է եղել, որի մասին խօսք կը լինի համապատասխան բաժնում: **Արտակ Մաղալեանը** նշում է. «Մելիք-Բէգլարեաններից եւ նրանց հպատակներից Բոլնիսի եւ Բորչալուի գաւառներում մնացին քչերը: Այդ մնացած մասն էլ հետագայում՝ 1812 թ. թողեց Վրաստանն ու հեռացաւ դէպի Ղարաբաղ՝ իրենց հայրե-նի վայրերը, ինչպէս նաեւ Ղազախի եւ Շամշադինի կողմերը:*

Նշենք նաեւ, որ Մելիք-Բէգլարեաններից ոմանք էլ մնացին այդ թուականներին Վրաստանում հիմնադրուած Դաղեթ-խաչէն եւ Բոլնիս-խաչէն գիւղերում» (Արտակ Մաղալեան, «Արցախի մելիքութիւնները եւ մելիքական տները 17-19-րդ դդ.», եր., 2007, էջ 99-100):

Կառավարութիւնն այլեւս Մելիք-Բէգլարեաններին չի ճա-նաչում որպէս մելիքներ, այլ տալիս է կալուածատիրոջ (մահալ սահաբի) կարգավիճակ:

*Իրենց հայրենի գաւառներից կտրուած եւ փաստօրէն գոր-ծազուրկ Գիւլիստանի եւ Ջրաբերդի մելիքներ **Աբովը** եւ **Մեջլումը** իրար հետ թշնամանում են, որը գուցէ հետեւանք էր իրենց ապաստանող Գանձակի տէր **Ջաւադ խանի** սադրանքնե-*

րի (քանզի առիթն առաջին հայեացքից չնչին է թւում՝ Մելիք-Մելչումը պահքի ընթացքում անթոյլատրելի սնունդ էր կերել, որի համար էլ Մելիք-Աբովի յանդիմանութեանն էր արժանացել): Ռազմական գործողութիւնների ժամանակ մենք նրանց տեսնում ենք տարբեր կողմերում:

Հայութեան վրայ յոյժ բացասաբար էր անդրադառնում նաեւ այն հանգամանքը, որ ռուսներն իրենց խոստման համաձայն դեռեւս ի վիճակի չէին օգնելու տարածաշրջանում հիմնական ազդեցիկ էթնիկ տարր հանդիսացող հայերին՝ հաստատելով Հարաւային Կովկասում իրենց տիրապետութիւնը:

*Այդ ընթացքում հայ մելիքներին դաւաճանում է նաեւ Վրաց **Հերակլ Թագաւորը:** Նա ո՛չ միայն չի դաշնակցում հայ մելիքների հետ՝ Իբրահիմ խանի դէմ, այլեւ հայ մելիքներին նրա ձեռքը մատնելու համաձայնութեան է գալիս վերջինիս հետ: Բարեբախտաբար, հայ մելիքները տեղեկանում են իրենց դէմ նիւթուող դաւին եւ խուսափում են այն ճաշկերոյթից, որին նրանք հրաւիրուած էին, եւ փախչում են:*

*Գիւլիստանցիները Վրաստանում մնացել են մինչեւ 1809, կամ մէկ այլ կարծիքով՝ մինչեւ 1817 թուականը, այսինքն՝ 12 կամ 20 տարի: Աւելի հաւանականը 12 տարին է (յամենայն դէպս՝ հեղինակների մեծամասնութիւնն այս կարծիքին է): Վերջին գիւլիստանցիները Բոլնիսից վերադարձել են 1817 թուականին: Եղել են ընտանիքներ, որոնք այլեւս չեն վերադարձել: **Րաֆֆու** պատումի համաձայն՝ **Մելիք-Աբով Գ-ի** հետ Վրաստան էր գաղթել 500 ընտանիք: Նրանց մի մասը այս կամ այն պատճառով մնացել է Բոլնիսում, իսկ մի ուրիշ մասն էլ վերադարձին հաստատուել է հայկական այլեւայլ բնակավայրերում: (Շահումեանցիներին բախտակից ներկայիս Արծուաշէնցիների ապուպապերը հաւանաբար այդ քարաւանի հետ Վրաստանից վերադարձել են եւ թուով 25-30 ընտանիք, մնացել Շամշադինի Զորաթան գիւղում եւ յետագային վերաբնակեցրել այն բնակավայրը, որ թուրքերը Բաչքենդ անուանեցին, ներկայումս՝ Արծուաշէն): Նրանց սերունդները պարզ յիշողութիւն ունէին, որ իրենց պապերն Արցախից են գաղթել:*

Վերադարձից յետոյ գիւղում հաստատուած ընտանիքների թիւը հասնում էր 25-ի:

*Գաղթից Գիւլիստան են վերադարձել հետեւեալ գերդաստանները. **Աղաբէկանք** (որոնք Երկրորդ Աշխարհամարտից յետոյ վերացել են), **Ղըմալանք** (Աղամալեաններ), **Ըբրիզանք** (Արզումանեաններ, Ղլեչեաններ կամ Բալախանումանք), **Քլանանք** (Բալայեաններ, յետագային՝ նաեւ Յարութիւնեաններ, Ջհանեաններ), **Բէգլարանք**, **Դվուէթանք** (Յարութիւնեաններ, Եսայեաններ), **Խոյունք, Կոսունք, Ղուլունք, Դփանանք** (Մակեաններ, Ստեփանեաններ), **Ջատունք,** (Մնացականեաններ, **Արզումանանք**) **Սիրեանանք** (Սէյրանեաններ, Ասկուրեաններ), **Ճիլունք** (Յարութիւնեաններ, կոչուել են նաեւ **Ղոնդաղսազանք**), **Նբաթանք, Իրիցանք** (Մովսիսեաններ, Խաչատրեաններ), **Մեղրունք, Զորանկոսունք** (Միքայէլեաններ), **Հթամանք** (Սեփեաններ՝ Աբրահամ սպարապետի սերունդը):*

***Մելիք-Աբով Գ-ի** առաջին որդին՝ քաջազն **Մելիք-Ռուստամը** սպանուում է Թաւրիզում, իսկ միջնեկ որդին՝ **Սային**՝ կոյր էր: Նա կուրացել էր թուրք բժշկի տմարդի արարմունքով: Մելիքութիւնն այսուհետ պիտի մնար կրտսեր որդուն՝ **Մանասբէկին**, սակայն ռուսական իշխանութիւններն այլեւս չպահպանեցին կառավարման մելիքական եղանակը: «Վերադարձած գաղթականները նորից ձեռք բերեցին իրենց գիւղերը, նորից շինեցին իրենց տները եւ սկսեցին ապրել դարձեալ վաղեմի սովորոյթներով, սակայն նրանց պետերը կառավարութեան կողմից այլեւս չճանաչուեցին որպէս մելիքներ, այլ լոկ կալուածատէրեր եւ **մահալ-նախըբի:** Երկիրը բաժանուեց Մելիք-Աբովի եւ Մելիք-Ֆրիդոնի ժառանգների մէջ» (Երուանդ Լալայեան, «Արցախ», էջ 239-240): **Մելիք-Ֆրիդոնին** յաջորդեց որդին՝ **Մելիք-Յովսէփ Բէն:** Նա 1826 թուականին պարսից արշաւանքի ժամանակ **Սարգիս մետրոպոլիտի եւ Ջրաբերդի Մելիք-Վանի Աթաբէկեանի հետ** կարողացաւ մեղմել Պարսկաստանի գահաժառանգ եւ արշաւող բանակի ընդհանուր հրամանատար **Աբբաս-Միրզայի** ցասումը հայերի նկատմամբ եւ թոյլ չտալ*

հայերի ընդհանուր կոտորածը, քանզի Աբբաս-Միրզան լաւ գիտէր, որ ռուսները Արցախին կարողացան տիրել հայո՛ց օգնութեամբ: Մելիք-Յովսէփ Բ-ն այս մահալի իր ժողովուրդը կառավարեց մինչեւ 1842 թուականը, երբ մեռաւ եւ թաղուեց Հոռեկայ վանքի տոհմական դերեզմանատանը:

ԱՐՑԱԽԻ, ՄԱՍՆԱՒՈՐԱԲԱՐ՝ ԳԻԼԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մելիքական դասի մարդիկ իբրեւ քրիստոնէական արժէքնեբի կրող, մեծամասնաբար առաքինի էին եւ չնայած համակարգեալ կրթուածուքեան պակասին՝ աչքի էին ընկնում բնական, աստուածատուր խելքով եւ այլ շնորհներով: Իշխանը նախ եւ առաջ նա է, ով ինքնիշխան է, բարեկիրթ եւ հայրենապաշտ, ով անշեղօրէն պահպանում է վարքաւոճի այն կանոնները, որոնք իբրեւ բարոյական օրէնք պարտադիր են բոլորի համար: Մելիքների մէջ թոյլ մարդիկ չեն եղել, քանզի թոյլ մարդը լեռնատանի դժուարութիւններին եւ շարունակական պատերազմնեբի ու մարտաբախումների դաժանութեանը չէր դիմանայ:

*Ինչպէս վկայում են բազմաթիւ աղբիւրներ, Արցախի մելիքների միջեւ տիրում էր միանգամայն փոխըմբռնումի, յարգանքի եւ ներդաշնակութեան մթնոլորտ: Պատահական չէ, որ Հայաստանում սարկուածիւն չի եղել: Արցախեան մելիքների դաշնակցութիւնը, նրանց հոգեմտաւոր վիճակը մերձեցել է **Վարդանանց ուխտին**: Արցախի տարբեր մելիքութիւնների միջեւ բարեկամական ամուր կապեր կային: «Խամսայի բոլոր հինգ իշխանութիւնները կազմում էին մի ամբողջ դաշնակցական միութիւն: Պատսպարուած իրենց անմատչելի լեռների եւ մթին անտառների մէջ, նրանք ոչ մի մահմեդականի թոյլ չեն տալիս բնակութիւն հաստատելու իրենց երկրներում եւ ամբողջ Ղարաբաղի ազգաբնակութիւնը բաղկացած էր միայն հայերից, որոնց քանակութիւնը բազմաթիւ էր» (Րաֆֆի, «Խամսայի մելիքութիւնները», էջ 164):*

Եւ այսպիսի պայմաններում արցախցիների մօտ մշակուել են բնաւորութեան այնպիսի գծեր, որոնք նրանց դարձրին տիրա-

կան, յամառ, ուժեղ, հայրենասէր:

Այսպիսով՝ պետականութեան այլ ստորոգելիների հետ կարեւոր է այն հանգամանքը, որ Արցախի մելիքները բարեպաշտ մարդիկ էին բառի բուն իմաստով: Նրանք ժառանգել էին դարերի ընթացքին ձեւաւորուած ազգային-հոգեւոր արժէքները եւ դրանք դրսեւորել գործնականում: Մելիքները դաւանանքով Հայ առաքելականներ էին, ովքեր աչքի լոյսի պէս պահպանում էին բարոյական վարքի սկզբունքները, մաքրութիւնը կենցաղում եւ առաքինի ու հայրենապաշտ մարդու օրինակ էին: Նրանք այնքան հաւատարիմ էին իրենց հայրենիքին եւ ազգային արժէքներին, որ ամէն անհրաժեշտ պահի կարող էին արական ամբողջ հասուն ժողովրդին իրենց շուրջ հաւաքել եւ հզօր բանակ հանել: Դա այդպէս էր յատկապէս Գիւլիստանում: Այդ երեւոյթն իր արմատներով գնում է դարերի խորքը: Այս սկզբունքները պէտք է ողջ Հայաստանում վերահաստատուեն, եթէ ուզում ենք հզօր պետութիւն ունենալ:

*Մելիքների կենցաղավարման մասին կարելի է պատկերացում կազմել **Երուանդ Լալայեանի** վերոնշեալ գրքից: Մելիքների իշխանութիւնը ժառանգական էր եւ հօրից անցնում էր աւագ որդուն: Միւս զաւակները կոչւում էին բէկեր: Նրանք սովորաբար իւզբաշիներ (հարիւրապետներ) էին եւ էական մասնակցութիւն ունէին երկրի պաշտպանութեան գործին: Օրէնքի փոխարէն գործում էին մելիքի կամքն ու ժողովրդական աւանդական սովորոյթները: Սակայն պիտի չմոռանանք, որ ժողովրդին տիրողները ո՛չ թէ բռնակալներ էին, այլ հաւատաւոր, Հայ Եկեղեցու դաւանանքին ու բարոյական սկզբունքներին հաւատարիմ հայ մարդիկ, որոնք իրենց տիրոյթում եղած համազգիներին ընկալել են որպէս արիւնակցական մի ամբողջութիւն, հոգեհարազատների միութիւն, եւ իրենց կեանքի գնով են իրագործել ազգաբնակչութեան կենսապահովման հարցերը:*

***Մելիք-Բէգլարեաններն** իրենց մելիքական տիրոյթում, գոնէ Աբով Բ-ի, Յովսէփ Ա-ի, Բէգլար Բ-ի ժամանակ, գրեթէ բոլորովին անկախ եւ միահեծան տէրեր են եղել: Նրանք տիրապետել են ամբողջ Գիւլիստանին, ուր 24 գիւղ է եղել: Մելիք-*

*Բէգլարեաններն անուանապէս հպատակուել են Պարսից շահե-րին, որոնց պահանջած միջոցին միայն մի փոքրիկ տուրք են տուել: **Մելիք-Աբով Գ-ի** եւ **Մելիք-Ֆրիդոնի** միջոցին նրանք ճանաչել են Վրաց թագաւորների գերիշխանութիւնը եւ որոշ հարկ են տուել նրանց, իսկ Գիւլիստան վերադառնալուց յետոյ միաժամանակ հարկատու են եղել Շուշիի **Մեհդի-ղուլի խանին**: Մելիքական իրաւունքը կորցնելուց յետոյ էլ Մելիք-Բէգլարեանները տիրապետել են ընդարձակ կալուածքների՝ Գիւլիստանի նախկին մելիքական ամբողջ տարածքի ընդգր-կումով: Այդ կալուածքները բաժանուած են եղել **Մելիք-Բէգլարեանների** եւ **Մելիք-Յովսէփեանների** միջեւ, համապա-տասխանաբար՝ 33000 եւ 10000 դեսեատին չափով:*

*Մելիքները տնօրինել են ո՛չ միայն մարմնաւոր, այլեւ շատ անգամ հոգեւոր իշխանութեանը վերաբերող գործերը: Օրի-նակ՝ թոյլ են տուել պսակուել եւ պսակը լուծել, նրանց հրամանաւ են քահանաները ձեռնադրուել, նրանց կամքով է **Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեանը** կաթողիկոս օծուել եւ այլն:*

Այսպէս, ուրեմն, մելիքներն իրաւունք են ունեցել իրենց հպատակ երկրում 1) հարկ վերցնելու, 2) գինուորագրելու, 3) դատ անելու, 4) կարգ պահելու:

Երկիրը կառավարելու համար մելիքը իւրաքանչիւր գիւ-ղում նշանակում էր տանուտէր կամ հաստատում էր ժողովրդի ընտրածին: Տանուտէրը կատարում էր մելիքի հրամանները, իր գգիրի հետ հաւաքում էր հարկը, փոքրիկ դատեր էր անում, հսկում էր կարգը, գինահաւաք էր անում եւ գինակոչիկներին յաճախ առաջնորդում մելիքի մօտ: Իր այս ծառայութիւնների համար տանուտէրը թէեւ ռոճիկ չէր ստանում, բայց ժողովուր-դը երկու օր վարում էր նրա հողը, նրա համար փայտ էր բե-րում եւ այլ ծառայութիւններ կատարում:

Մելիքների ժամանակ կանոնաւոր, մշտական զօրք չկար, այլ հարկաւոր դէպքում հաւաքւում էին եւ ապա կրկին ցրւում եւ պարապում իրենց գործերով:

Ամէն մի տուն պարտաւորուած է եղել մելիքի պահանջած

միջոցին մի զինուոր տալ, իսկ երբ դրուժիւնը ծանր էր լինում, հաւաքւում էին զէնք կրելու ընդունակ բոլոր մարդիկ: Զինուորն ինքն էր իր համար զէնքեր եւ ձի հայթայթում, իսկ եթէ նա բոլորովին աղքատ էր լինում, մելիքն էր տալիս: Առանձին զինուորական համազգեստ չկար: Զինավարժուժեան համար յատուկ օրեր եւ ծառայուժիւն չէին նշանակուած, բայց կային որոշեալ հանդէսներ, երբ երիտասարդ զինուորները մելիքի եւ ժողովրդի ներկայուժեամբ վարժւում էին հրացանաձգուժեան եւ ձիարշաւի մէջ: Զինուորները ռոճիկ չէին ստանում, միայն խլած աւարը, մելիքի բաժինը վերցնելուց յետոյ, իրենց մէջ բաժանում էին:

Մելիքները մօտ 300 զինուոր միշտ պահում էին իրենց մօտ որպէս թիկնազօր, որոնց կերակրում եւ թոշակ էին տալիս:

Պատերազմի ժամանակ մարտավարական յատուկ կարգ չկար. մելիքն ընկնում էր առաջ, զօրքը հետեւում էր նրան:

Զինուորների սպառազինուժիւնը կազմում էին դաշոյնը, թուրը եւ հրացանը:

Հրացանը չինում էին Գիւլիստանում, իսկ վառօդը պատրաստում էին Վերին Շէնում, ուր կար չորա (սելիտրա): Վառօդ պատրաստելը մելիքի մենաշնորհն էր:

ԱՐՑԱԽԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ

19-րդ դարասկզբին ռուսները կարողանում են հաստատուել Վրաստանում, Արեւելեան Հայաստանում եւ Շիրուանի ու Գանձակի խանուժիւններում: Ռուսներին մինչեւ վերջ հաւատարիմ մնացած հայերը մեծագոյն օգնուժիւն են ցուցաբերում:

***1805-ին Արցախն ընդունել է Ռուսաստանի տիրապետուժիւնը**, որն ամրագրուել է 1813 թուականի **Գիւլիստանի պայմանագրով**: Հարաւային Կովկասում Ռուսական կայսրուժեան հաստատումից յետոյ Արցախի մելիքուժիւնների մէջ տեղի են ունենում կտրուկ փոփոխուժիւններ, որոնց առանձնակի անդրադարձն առկայ է **Կիմ Ղահրամանեանի** «Հիւսիսային Արցախ. Գոյուժեան պայքար» (Եր., 1993 թ.) ուսումնասիրուժեան 2-րդ գրքում:*

Արցախի այս տոհմիկներն իրենց դիրքը պահպանեցին մինչեւ Արեւելեան Հայաստանը ռուսների տիրապետութեան տակ անցնելը:

*Հայաստանի համար 18-րդ դարի երրորդ կարեւոր պահն այն էր, որ յատկապէս դարավերջին ուժեղանում են Ռուսաստանի՝ Հարաւային Կովկասում հաստատուելու նկրտումները: Երբ Ռուսաստանն սկսում է արտայայտել իր յաւակնութիւնները Հարաւային Կովկասի նկատմամբ, հայկական շրջանակներում մի աննախադէպ խանդավառութիւն եւ ջերմեռանդ վերաբերմունք են սկիզբ առնում Ռուսաստանի նկատմամբ: Ջանդուածային հոգեբանութեան այս երեւոյթի հիմքն այն պատրանքային պատկերացումն էր, թէ Ռուսաստանն իբրեւ քրիստոնէական երկիր պատրաստւում է ազատագրել Անդրկովկասի եւ Մերձաւոր Արեւելքի քրիստոնեաներին: Հայերի մէջ անճկալի սպասման մի տրամադրութիւն էր տիրում, որ ռուսական բանակները գալու են եւ իրենց փրկեն մուսուլման գաւթիչներից: Եթէ մոռանանք այդպիսի հոգեբանութեան՝ **նժդեհի** կողմից նկատուած անբարոյ բնոյթը,- երբ մի ազգ իր փրկութիւնն ակնկալում է մէկ ուրիշի միջոցաւ, այն պարագային, երբ Աստուած ամէն ազգի ազատութեան եւ ինքնապաշտպանութեան անսահման հնարաւորութիւններ է տուել,- այդ պատկերացումն ինքնին շատ հեռու էր առարկայական իրականութիւնից: Դա սին էր եւ յեղյեղուկ այն աստիճան, որ հայերս չէինք կարողանում ռուս ժողովրդին տարբերել ռուսական իշխանութիւններից: Հաւանաբար չկար մի սթափեցնող ձայն, որ մեզ լուսաբանէր, թէ աշխարհիկ իշխանութիւնն առաջնորդւում է ո՛չ թէ կրօնական մարդասիրութեամբ եւ քրիստոնեաներին փրկելու առաքելութեամբ, այլ՝ տուեալ երկրի պետական շահերն են թելադրում ընթացիկ քաղաքականութիւնը, որը կարող է շատ արագ փոխուել եւ առհասարակ անմիջական կապ չունի կրօնական կողմնորոշումների հետ: Այն օրից, երբ Եւրոպայում եւ Ռուսաստանում վերացել էին կրօնական պետութիւնները, այլեւս «քրիստոնէական» պետութեան աղակցութիւն յուսալը նոյնն էր, ինչ կանգնելը ծովի*

ափին եւ սպասելը, որ ձկներն իրենք իրենց պիտի գան եւ տաշտակդ լցուեն...

Հայերիս համար տակաւին պարզ չէր, որ աշխարհաքաղաքական բեմի վրայ կրօնական գործօնի դերը գրեթէ զրոյի է հաւասար, քանզի տարբեր երկրների ռազմավարական շահերի պարագային կրօնական պատկանելութիւնն առանձնակի դեր չունի, զի կրօնապետութիւնները թէ՛ Եւրոպայում եւ թէ՛ Ասիայում վաղուց վերացած էին: Այլապէս «քրիստոնէական» Եւրոպան թոյլ չէր տայ հայերի ցեղասպանութիւնը թուրքերի ձեռքով:

Քաղաքականութեան մէջ նկատուած փաստ է, որ վտանգաւոր են համակրանքի վրայ հիմնուած կողմնորոշումները: Հայոց «ժողովրդական դիւանագիտութեան» այդ սխալը հայերիս վրայ շատ թանկ նստեց: Ու թէեւ մի սերնդի կեանքն էլ բաւական էր համոզուելու դրանց պատրանքայնութեան եւ վնասակարութեան մէջ (Խաչատուր Աբովեանն իր իսկ անձնական կենսափորձով է զգացել այդ), սակայն այդպէս չեղաւ մեր պարագային: Ըստ երեւոյթին՝ մի սերնդի կենսափորձը բաւարար չէ եւ փոխանցելի չէ յաջորդներին, եթէ կեցութեան տարրական ապահովուածութիւն չկայ: Իսկ երբ տիրում է յատկապէս նիւթապաշտական, շահադիտական հոգեբանութիւնը՝ իւրաքանչիւր սերունդ նոյն սխալը կարծես թէ դատապարտուած է կրկնելու եւ մոլորուելը մի տեսակ ազգային բնաւորութեան յատկանիշ է դառնում:

*Յամենայն դէպս, հայոց՝ համակրանքի վրայ հիմնուած քաղաքական կողմնորոշումը չարունակուեց ո՛չ միայն մինչեւ մեւիքութիւնների վերացումը, այլեւ՝ մինչեւ Շահումեանի անկումը եւ դրանից յետոյ՝ մինչեւ այսօր: **Կիմ Ղահրամանեանն** իր վերոնշեալ աշխատութեան մէջ միանգամայն իրաւացի կերպով գրում է. «Հայ իրականութեան մէջ հիմնականում գունազարդուած, միակողմանի է դիտուել ռուսական քաղաքականութիւնն Արեւելքում, ընդգծելով հաւատակիցներին մուսուլմաններից փրկելու, ազատագրելու խնդիրը: Այս հանգամանքը խանգարել է ճիշտ գնահատելու հայերի դիրքորոշումը: Այդ դիրքորոշումը*

քաղաքական հանգամանքների փոփոխման պայմաններում հիմնականում մնացել է անփոփոխ, ճկունութիւնից զուրկ, մշտապէս ուղղաձիգ ու բացայայտ, որը յաճախ աղէտալի հետեւանքներ է ունեցել ռուսամէտ հայութեան համար» *(Կիմ Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ. Դոյութեան պայքար», գիրք Ա, էջ 23-24)*:

Ի հարկէ, եղաւ մի փոքր ընթացք, երբ այդ «տեսութիւնից» ազատ հայ քաղաքական միտքն ու գործունէութիւնը, չնորհիւ ***Նժդեհի****, բարեբախտ արդիւնաւորութիւն ունեցան՝ Սիւնիքը պահելով հայկական պետութեան կազմի մէջ: Սակայն վերջին հարիւրամեակների պատմութեան մէջ սա մի դրուագ է միայն: Նժդեհը ռուսների թշնամին չէր, այլ՝ թուրքերի եւ բոլշեւիկնե-րի: Այդ իսկ պատճառով, Երկրորդ Աշխարհամարտի աւարտին նա համարձակ կերպով, առանց այլեւայլութեան գնաց համա-գործակցելու նաեւ Խորհրդային իշխանութիւնների հետ՝ Թուրքիայի դէմ: Եւ Նժդեհի կողմնորոշման կտրուկ փոփո-խութիւնը խորապէս արդարացուած էր եւ դիւանագիտական: Պարզապէս միջազգային իրադարձութիւնները նպաստաւոր չեղան ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ ռազմական բախման համար, եւ Նժդեհի այդ անձնուրաց փորձն աւարտուեց իր անձնական մարտիրոսութեամբ:*

Որ կրօնը քաղաքական իրադարձութիւնների վրայ անմիջա-կան ներգործութիւն չի կարող ունենալ, հիմնաւորւում է այն իրադրութեանց ընթացքով, որոնք յաջորդեցին ռուսների եւ Թուրքերի դաշնադրութեան հետեւանքով Ռուսիայի դիրքորոշ-ման փոփոխմամբ. ռուսները հրաժարեցին հայոց մելիքներին օգնելու իրենց խոստումներից: Սրանից չի բխում, թէ քաղա-քական յարաբերութիւնների ասպարէզում ամէն պարագայի տիրում են անհետեւողականութիւնը, անհաւատարմութիւնն ու բարոյական անսկզբունքայնութիւնը: Ո՛չ: Պարզապէս որեւէ երկրի ***ռազմաքաղաքական շահերի եւ համամարդկային հոգեբարոյական սկզբունքների միջեւ պատճառահետեւան-քային անմիջական կապ գոյութիւն չունի:*** *Ի վերջոյ, ռուսնե-րը գալիս եւ «ազատագրում» են Հայաստանը եւ... վերացնում*

Արցախի մելիքների անկախութիւնը, առհասարակ՝ հայկական պետականութեան մնացորդացը:

Պատմառազմավարական լուրջ մտահայեցումը կ՚օգնէր հայերիս հասկանալու, որ մինչ մենք ծուատուում էինք Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ, մեր քաղաքական անկախութեան վերջը դրուեց երրորդ պետութեան՝ Օսմանեան կայսրութեան միջոցով:

Գրուեց մեր պատմութեան սեւ էջերից մէկը. արդէն Թուրքիայի եւ Պարսկաստանի կողմից ծուատուող Հայաստանի անկախութեան վերջը պիտի դրուէր տարածաշրջանի ռազմաքաղաքական ասպարէզ երրորդ տէրութեան՝ Ռուսիոյ մուտքով:

Ռուսական տիրապետութեան հաստատուելուց յետոյ Կովկասում ստեղծուում է Կովկասեան փոխարքայութիւն: Այն բաժանուում է մի քանի նահանգների եւ երկրամասերի: 1822 թուականին վերացել է Ղարաբաղի խանութիւնը: Ռուսաստանի կազմում յայտնուելուց յետոյ, Արցախն սկզբից մտնում էր Կասպիական մարզի *(կենտրոնը՝ Շամախի քաղաքը), իսկ 1868 թուականից՝* Ելիզաւետապոլի նահանգի *մէջ: Արցախի տարածքում ստեղծուել էին* Շուշու, Ջեբրայիլի, Ջիւանշիրի գաւառները: *Այդ բաժանումը մնաց մինչեւ 1918 թուականը:*

Ելիզաւետապոլի նահանգը բաժանուած էր ուեզդների կամ շրջանների եւ սրանք էլ իրենց հերթին՝ գիւղական համայնքների: Վարչական փոփոխութիւնների հետ մասնատումների է ենթարկուում Հիւսիսային Արցախը: Բացի Ելիզաւետապոլում ընդգրկուած գիւղերից, որոնք կազմում էին նահանգի երրորդ շրջանի գիւղական համայնքները, Գետաշէնն իր շրջակայքով կազմում էր չորրորդ շրջանը, իսկ Թալիշը, Հոռեկը եւ Գիւլիստանի բերդը մտնում էին Ջիւանշիրի գաւառի մէջ: Դրա հետ միասին ռուսներն իրենց աղանդաւորներին աքսորում են Կովկաս՝ հիմնելով ծայրամասային ռուսական բնակավայրեր: Դրանցից մէկն էլ Ռուս Պարիսն էր՝ մոլականների գիւղը Գիւլիստանում: Այս եւ նման փոփոխութիւնների պատճառով Մելիք-Բէգլարեանները զրկուում են իրենց դիրքից եւ ունեցուածքից եւ նոյնիսկ ճնշումների ենթարկուում ռուս իշխա-

նուիրեալների կողմից:

*Քաղաքական անկիւնադարձային փոփոխութիւնները, որոնք փոխում են տարածաշրջանի ազգաբանական պատկերը, բանաձեւուած են **Կիմ Ղահրամանեանի** վերոնշեալ ուսումնասիրութեան մէջ. «Շրջակայ խոշոր տէրութիւնների փոխյարաբերութիւնների եւ քաղաքական շահերի պատճառաւ 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբներին Հիւսիսային Արցախի տարածքում ժողովրդագրական փոփոխութիւններ են սկսւում: Շուշուայ խանը, հայոց հողի վրայ իր իշխանութիւնն ամրապնդելու նպատակով, Պարսկաստանից, Վրաստանից եւ այլ կողմերից բռնութեամբ կամ չահագրգռելով հաւատակից քոչուոր անասնապահների տեղափոխում, բնակութեան տեղ է տալիս Արցախում, նստակեաց դարձնում: Եւ տեղաւորում էր ռազմավարական կարեւոր դիրքերում, մելիքների հարեւանութեամբ, ճանապարհների հանգոյցներում եւ այլն: Այսպէս առաջացած դիւղը խանի կամ նրա ընտանիքի անդամներից որեւէ մէկի սեփականութիւնն էր դառնում: Խանի այս քայլերը խրախուսում էր Պարսկաստանը՝ պարսկահպատակ այդ խանութիւնը ռուսական առաջխաղացման դէմ պատուար կանգնեցնելու նպատակով» (Կիմ Ղահրամանեան, «Հիւսիսային Արցախ. Գոյութեան պայքար», Գիրք Բ, էջ 4-5): Բացի այս, Շուշիի խանը կրկնակի խաղ էր խաղում Թուրքիայի հետ:*

Այսպիսով՝ Հարաւային Կովկաս ռուսների մուտքի հայոց բուռն բաղձանքն արդիւնաւորուեց տարածաշրջանում մահմեդական տարրերի՝ թուրքերի եւ քրդերի անակնկալ հաստատմամբ, որպէսզի թուլացնեն հայերին եւ այդ ճանապարհով խոչընդոտեն նրանց անկախանալու փորձերը: Ինչպէս բոլոր նուաճողներին, ռուսներին տարածք էր պէտք, յենակէտ եւ ռազմավարական դիրք: Մնացեալը ռուսական կայսերապետութեանը, ինչպէս եւ միւս տէրութիւններին, այնքան էլ չէր հետաքրքրում: Ուստի, նոյն քաղաքականութիւնը գործադրւում է Արցախի մնացեալ գաւառներում: Ռուսները նման քայլեր, ըստ Կիմ Ղահրամանեանի, կատարում էին դեռեւս հայերի դէպի Վրաստան կատարած առաջին գաղթի ժամանակ: Երբ

հայերը վերադառնում են Վրաստանից, տեսնում են, որ օտար-ները զավթել են իրենց հողերը, որոնք ստիպուած էին լինում կռուով եւ վերցնելու, ինչը միշտ չէր յաջողւում: Այդպիսի պարագային ռուսները կռուին չէին խառնւում որեւէ կողմից: «Նոր տեղափոխուած ու բարեբեր հողերի վրայ նստակեցու-թեան անցած քոչուոր անասնապահները երեք տարով ազատւում էին հարկերից, գտնւում էին որոշ հովանաւորեալ վիճակում: Եւ նորաստեղծ բնակավայրերը կարճ ժամանակում բազմամարդ էին դառնում՝ փոխելով լեռնաչխարհի ժողովրդագ-րական պատկերը, աղէտալի հետեւանքներ ունենալով նրա հե-տագայ ճակատագրի համար» (Կիմ Ղահրամանեան, «Հիւսիսա-յին Արցախ. Գոյութեան պայքար», Գիրք Բ, էջ 5-6): Ռուսա-կան իշխանութիւնները, մնացեալ բռնատիրութիւնների նման, կամայ թէ ակամայ նպաստեցին տեղի հիմնական ազգութեան քաղաքա-տնտեսական թուլացմանը: Այլացեղ զանգուածներով բնիկ ազգին հակակշռելու ճանապարհով իշխողները ազատւում են հայերիս ըմբոստանալու եւ ազգային պետու-թեան համար պայքարելու «գլխացաւանքից»: Յատկապէս Քարվաճառի եւ Բերդաձորի գաւառներում՝ Մռաւի լեռ-նաշղթայից մինչեւ Արաքս գետ հսկայ տարածքի մահմե-դականացումն Արցախը բաժանում էր Սիւնիքից եւ Արեւելե-ան Հայաստանի մնացեալ շրջաններից: Այդ բռնատիրութիւնը չարունակուեց մինչեւ 20-րդ դարավերջ՝ մինչեւ Արցախի ազատագրումը:

Բացի մահմեդականներից, ռուսները տարածաշրջանում բնակեցնում էին նաեւ աղանդաւոր մոլականների, որոնց հա-յերն առաջին տասնամեակներին չատ օգնեցին հաստատուելու տեղում եւ յարմարուելու տեղիս պայմաններին: Մասնաւորա-պէս Գիւլիստանում այսպէս առաջացաւ Ռուս Պարիս գիւղը, որտեղ դրանից առաջ հայերն էին բնակւում: Իշխանութիւննե-րը ռուս վերաբնակներին արտօնութիւններ են տալիս, եւ նրանք կարճ ժամանակ անց բարեկեցիկ կեանք են վարում:

Տարածաշրջանը 19-րդ դարի վերջերին տնտեսական վերելք է ապրում. կառուցւում են ճանապարհներ, երկաթուղի, սկս-

ւում է Բաքուի նաւթի արդիւնաբերութիւնը: Թիֆլիս-Բաքու երկաթուղին անցնում էր Գիւլիստանից ոչ շատ հեռու գտնուող Գանձակով: Այս տնտեսական բուռն զարգացումները խթան են դառնում հայկական գիւղերից մեծաթիւ մարդկանց արդիւնաբերական քաղաքներ եւ յատկապէս Բաքու արտահոսքի՝ աշխատելու նպատակով: Արտագնայ բանուորների միջոցաւ սոցիալ-տնտեսական նոր յարաբերութիւնները թափանցում են նաեւ գիւղերը:

ԱՐՑԱԽԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

*1918-20 թթ. իշխանութիւնն Արցախում գտնւում էր **Հայոց Ազգային խորհրդի** ձեռքում: Արցախահայութիւնը ձգտել է ամէն կերպ միաւորուել Հայաստանի Առաջին Հանրապետութեան հետ, սակայն **օտար դիւանագիտական առաքելութիւնները, Թուրքիայի ազդեցութեամբ եւ հաշուի առնելով այն հանգամանքը, որ Զանգեզուրի եւ Արցախի միջեւ օտարաբնակ տարածք կար Լաչինի եւ Քեդրայիլի շրջաններում, ստիպեցին, որ Արցախը մնայ Ադրբեջանի կազմում**: 1918թ. յուլիսից մինչեւ 1920թ. փետրուարը տեղի են ունեցել Հայոց Ազգային խորհրդի ութ համագումարներ, որոնցում արցախահայութիւնն ընդհանրապէս մերժել է Արցախն Ադրբեջանին միաւորելու պահանջը: Այս ընթացքում, արցախահայութեան վրայ ճնշումներն աստիճանաբար ուժեղացել են: 1918-ի սեպտեմբերի 15-ին Թուրքերը գրաւում են Բաքուն, ջարդում հայերին (զոհուել է 40 հազար հայ) եւ նորից վերջնագիր ներկայացնում Արցախի ժողովրդական կառավարութեանը՝ պահանջելով զինաթափուել եւ ճանաչել Ադրբեջանի իշխանութիւնը, սակայն մերժում են ստանում:*

Համաձայն 1918 թուականի հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարի՝ Առաջին աշխարհամարտում պարտութիւն կրած Թուրքիան իր զօրքերը դուրս է բերել Անդրկովկասից: Թուրքերին նոյն տարուայ նոյեմբերին փոխարինել են անգլիացիները: Նրանք վարել են թուրքամէտ քաղաքականութիւն եւ չանք

*չեն խնայել Լեռնային Արցախը Ադրբեջանի կազմի մէջ մտցնելու համար: 1919 թ. յունուարի 16-ին թուրք-թաթարական կառավարութիւնը Լեռնային Ղարաբաղի գեներալ-նահանգապետ է նշանակել **Խոսրով բէկ Սուլթանովին**, որը վերջնագիր է ներկայացրել Հայոց Ազգային խորհրդին՝ Ադրբեջանի իշխանութիւնը ճանաչելու պահանջով: Ինչպէս այդ, այնպէս էլ յետագայում կայացած համագումարների մեծ մասում Ադրբեջանի պահանջը կտրուկ կերպով մերժուել է: **1920 թ. ապրիլի 23-ին կայացած 9-դ համագումարը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետութեան անբաժանելի մաս է յայտարարել:***

*Մի քանի օր անց՝ ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի զօրքերը մտել են Բաքու եւ Ադրբեջանում խորհրդային իշխանութիւն է հաստատուել: Անդրկովկասը գրաւելու համար կարմիր բանակի հրամանատարութիւնը եւս յենուել է Ադրբեջանի վրայ եւ Ղարաբաղ-Զանգեզուրի հրամանատար **Դրաստամատ Կանայեանից** (Դրօ) պահանջել է թողնել Ղարաբաղը եւ հեռանալ: 1920 թուականի մայիսի 26-ին կայացած* Արցախահայերի 10-րդ համագումարը ***Լեռնային Ղարաբաղը հռչակել է խորհրդային:*** *Ստեղծուել է Լեռնային Ղարաբաղի Յեղկոմ՝ **Սարգիս Համբարձումեանի** նախագահութեամբ: Խորհրդային իշխանութիւնը չի կանխորոշել վիճելի տարածքների հանդէպ Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ադրբեջանի իրաւունքների հարցը: Ադրբեջանը փորձել է «խաղաղ» ճանապարհով զաւթել իշխանութիւնը Ղարաբաղում, սակայն 1920 թուականի աշնանը համաժողովրդական ապստամբութիւն է բարձրացել յետագայում ադրբեջանցի կոչուած թուրք զաւթիչների դէմ:*

*1920 թուականի նոյեմբերի 29-ին խորհրդային կարգեր են հաստատուում նաեւ Հայաստանում: **Յաջորդ օրը Խորհրդային Ադրբեջանի կառավարութիւնը**, նկատի ունենալով քաղաքական իրավիճակի փոփոխութիւնը, ընդառաջ գնալով հայ բնակչութեան բուռն ցանկութեան, **Նախիջեւանը, Զանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը ճանաչել է որպէս Խորհրդային Հայաստանի պատկան տարածքներ:** Սակայն երեք ու կէս ամիս*

*յետոյ, **1921 թուականի մարտի 16-ի Մոսկուայի պայմանագրով, Ադրբեջանը տիրացել է Նախիջեւանին**, իսկ յետագայ ամիսներին՝ նաեւ Լեռնային Ղարաբաղին, որ, **անդամահատուած կերպով եւ ինքնավար մարզի կարգավիճակով, 1923 թուականի յուլիսի 7-ին մտցուել է Ադրբեջանի կազմի մէջ.** **Արցախի հիւսիսային, հարաւային եւ արեւելեան մասերից ընդարձակ տարածքներ դուրս են մնացել ԼՂԻՄ-ի կազմից:***

Խորհրդային տարիներին Ադրբեջանը խոչընդոտել է մարզի սոցիալ-տնտեսական բնականոն զարգացումը եւ յատկապէս խաթարել Արցախահայութեան ազգային մշակոյթի զարգացումը: Ադրբեջանի «պատմաբաններն» ամէն կերպ ձգտել են նենգափոխել պատմութիւնը, ձգտել են հիմքեր գտնել իրենց «ղաչաղ» քաղաքագէտ-դիւանագէտների համար՝ իւրացնել հայոց հոգեմտաւոր եւ մշակութային արժէքները, բռնաճնշել ազգային քաղաքական պայքարի փորձերը, անտեսել Լեռնային Ղարաբաղի խնդիրը:

Սակայն Արցախի հայութիւնը չի դադարեցրել Խորհրդային Հայաստանի հետ վերամիաւորուելու պայքարը: 1965 թուականին հանրագրի տակ դրուել են 45 հազար արցախահայերի ստորագրութիւններ: Շարժումը չի արդիւնաւորուել, աւելին՝ հալածել են պայքարի նախաձեռնողներին ու նրանց ընտանիքները, բռնաճնշումների պատճառով ուժեղացել է հայերի արտագաղթը Արցախից:

Արցախեան շարժման մէջ որակական նոր փուլ է սկսուել 1987 թուականից: Հանրագրեր, դիմումներ, նամակներ են յղուել Մոսկուա՝ Արցախի հարցը լուծելու համար: 1988 թուականի փետրուարի 19-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել մեծ ցոյց, որի մասնակիցները պահանջել են ԼՂԻՄ-ի դուրս բերումը Ադրբեջանի կազմից եւ վերամիաւորումը ՀԽՍՀ-ին: Պայքարն ընթացել է համաձայն ԽՍՀՄ Սահմանադրութեան: Ի պատասխան հայոց խաղաղ պայքարի, Ադրբեջանը կազմակերպել է ջարդեր ու բռնութիւններ Սումգայիթում, Բաքւում, Գանձակում եւ այլուր: Իրենց հայրենիքից առաջին անգամ զրկուել եւ բռնագաղթի են ենթարկուել գարդմանահայերը:

ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի Նախագահութեան 1989 թուականի յունուարի 12-ի որոշումով, նոյն ամսի 20-ից ԼՂԻՄ-ում իշխանութիւնն անցել է **Արկադի Վոլսկու** *գլխաւորած ԼՂԻՄ-ի Յատուկ կառավարման կոմիտէին՝ պահպանելով ինքնավար մարզի կարգավիճակը, վերացնելով, սակայն, իշխանութեան գլխաւոր մարմինը՝ Մարզային խորհուրդը:*

1990-ի դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագոյն խորհուրդն ու Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը համատեղ գումարած նիստում ընդունել են «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» որոշումը, *ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան վրայ տարածուել են խորհրդային Հայաստանի քաղաքացիութեան իրաւունքները: Այնուհետեւ իրաւական հիմքեր են ստեղծուել Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի քաղաքական, տնտեսական եւ մշակութային միաճուլման ու միասնական պետական համակարգի ստեղծման համար:* ***1991-ի սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում հռչակուել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը:*** **1991-ի նոյեմբերին ԽՍՀՄ ՆԳՄ զօրքերը եւ Ադրբեջանի՝ ԼՂԻՄ-ի համար ստեղծած Կազմկոմիտէի անդամները հեռացել են ԼՂՀ-ից, ուր 1991-ի դեկտեմբերի 10-ին անցկացուել է համահանրապետական հանրաքուէ, որի մասնակիցների 98 տոկոսը քուարկել է ԼՂՀ-ի անկախութեան օգտին:** *1991 թուականի դեկտեմբերի 28-ին տեղի են ունեցել ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին գումարման ընտրութիւնները, իսկ ԼՂՀ ԳԽ-ն էլ, իր հերթին, 1992-ի յունուարի 8-ին ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ է ընտրել* **Արթուր Մկրտչեանին:** **1992-ի յունուարի 10-ին ընդունուել է «ԼՂՀ պետական անկախութեան մասին» հռչակագիրը:**

Պայքարն աստիճանաբար կրել է անզիջում բնոյթ եւ սկսուել են մեծածաւալ ռազմական գործողութիւններ հայերի եւ Արցախ թափանցած թուրքերի միջեւ:

Ջայտարարուած պատերազմի սկզբնական շրջանում յաջողութիւնն ուղեկցել է ադրբեջանցիներին, քանզի խորհրդային ամբողջատիրութեան զօրքը ձգտել է պահպանել այդ բռնատի-

րութիւնը եւ մեծապէս օգնել է Ադրբեջանի թուրքերին: Թուրք-ռուսական ՕՄՕՆ-ն իրականացրել է «Կոլցո» («Օղակ») գործողութիւնը, որի հետեւանքը եղել է հայոց տասնեակ բնակավայրերի կողոպուտը եւ դրանց բռնագրաւումը թուրքերի կողմից, հայ խաղաղ բնակիչների կոտորածը:

1992-ի մայիսի 9-ին Արցախի հայկական բանակն ազատագրել է Շուշին, իսկ նոյն թուականի մայիսի 17-ին բացել Լաչինի միջանցքը: Դրան յաջորդել են 1992-ի յունիսի կէսին Շահումեանի եւ Մարտակերտի մեծ մասի կորուստը, չահումեանցիների մեծ բռնագաղթը, որի հետեւանքով չրջանի աւելի քան 20 հազար հայ բնակիչները բռնագաղթել են ԼՂՀ-ի ներքին տարածքներ եւ ՀՀ, իսկ այդտեղից՝ սփռուել աշխարհով մէկ, մեծամասամբ՝ Ռուսաստան:

*Շահումեանի չրջանի ադրբեջանական գրաւումով 1992-ի յունիսի երկրորդ կէսին սկսուել է **Շահէն Մեղրեանի** հրամանատարութեամբ գործող ջոկատների **պարտիզանական պայքարը**, որը չարունակուել է մինչեւ հրադադար: Պատերազմական գործողութիւնները աւարտուել են 1994-ի մայիսի կէսին:*

Պատերազմող երկու կողմերն էլ մարդկային մեծ կորուստներ են ունեցել:

Հրադադարից յետոյ սկսուել է աւերուած Արցախի վերաշինութեան գործը:

*Շահումեանի յանձնումից յետոյ **Շահէն Մեղրեանի** գլխաւորութեամբ սկիզբ առած պարտիզանական պայքարն արձանագրել է մեծ յաջողութիւններ եւ դիւրացրել Քարվաճառի (Քելբաջար) չրջանի լրիւ եւ Մարտակերտի գրաւեալ գօտու մեծ մասի ազատագրումը եւ մեծ դերակատարութիւն ունի Արցախեան պատերազմում հայոց յաղթանակի գործում: Եւ թէեւ պարտիզանական պայքարը չաւարտուեց իր հիմնական նպատակի՝ Շահումեանի չրջանի ազատագրմամբ, սակայն նա մի անգամ եւս ի յայտ բերեց Գիւլիստանի հայութեան՝ անկախ առկայ հանգամանքներից պայքարը չարունակելու անընկճելի ոգին:*

Գլուխ երկրորդ
ՄԵՂՐԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

*Սոյն գրքի ստեղմանն իր օգտակար մասնակցութիւնն է բերել լեգենդար գիւլիստանցին՝ **Զինաւոր Մեղրեանը**, որի պատումն իրենց տոհմի մասին գրի է առել **Պետրոս Մեղրեանը**:*

17-րդ դարի կէսերին գիւղում եղել են 8 գերդաստաններ.

1. Ասկարեանները, 2. Բէգլարեանները, 3. Մեղրեանները 4. Հըթամանք (Սեփեան), 5. Կոսունք, 6. Յովասափեանները (Սաղաթելեան), 7. Իրիցանք /Ավանց/, Դիմանանց /Մակեան, Ստեփանեան/:

Զինաւոր ապայի ազգապատումը. Մեղրի պապը

Կիւղում ճաղաց են ունեցել Հըթամանք՝ 2, Մեղրունք՝ 2, Իրիցանք՝ 1:

Մեղրին ունեցել ա անասունների մեծ նախիր: Նրա տաւարը պահուել ա Կետին կիւմերում:

Մեղրու քաւորը **Հաթամ-Բաչին** ա ըլել, **Խոսրով** դայու հօր պապը:

Խոսրովի հօր անունը Առըստամ ա ըլում:

17-րդ դարի սկզբից Հըթամանք մեր ազգի քաւորն են ըլում:

17-րդ դարի վերջում, վեր Թուրք թշնամին հասնըմ ա Կիւլըստանի սահմանները, ժողովրդին մելիքը տեղափոխում ա Վրաստանի Բոլնիս-Խաչէն: Ըտեղ ապրում են 25-28 տարի ու վերջը ետ են կեալի ընդամէնը 26 ծուխ: Արդէն աղճիկ մարդի տուած ան ըլում, տղայ են ամուսնացնում:

Վեր կիւղի ժըղովուրդը տեղափոխւում ա Բոլնիս-Խաչէն, Մեղրի ապերը Կետին կիւմերում ա ըլում: Պըտմելով՝ կաղթի վախտ կարըմ չեն իրեն լուր տան ու նրա տունը մնում ա ըտեղ, անտառում:

Մեղրին մընալով վեր է՛լ գիւղում մարդ չի մնացել, ինքն իր հըմար տուն ա չինում, կեռմ, պան, ու իր ընտանիքով մենակ ըտեղ ապրում, տուն ու տեղ ա տնում:

Հայերի կաղթից եղը Օսմանլու թուրքերը Կիւլըստան չեն

հասնում եւ աման ինչ մնում ա նհենց, վենց վեր թողել-քնացել են: Ետ կեալուցը եղը՝ իրանք իրանց ծեռով պաց են անում տնեը:

Քոլում ապրող Մեղրու բախեքը մըծանում են ու անասունները իրանք են պահում: Մեղրին ունեցել ա ե՛ւ տղայ, ե՛ւ ըղճկերք:

Օրերից մի օր կումէչները Ինջի կետի ղըրաղով ըրըծելով հասնում են մինչեւ Թուրքի Բուրսըլլու կիւղի տեաչտերը: Տա առաջի ղէպքն էր, վեր անասուններն էտքան հըռանում էին: Մեղրու աղջիկը քնիւմ ա կումչէքի եննայ ու հասնում ա էդ չէնի տեաչտերը, պըրնձի տեաչտեր են ըլում: Մեղրու աղջիկը կարում ա կումչէքը հանի էտ տեաչտից ու պիրում հասցնում ա մինչեւ Պըրմբատի ղալը (Ըրամին աղպիւրը):

Թուրքերն իմանալով վեր իրանց պըրնձի տեաչտերը կումէչ ա մտել, հըվաքւում են մի 4-5 հոգի եւ ուզում են քընան տեսնեն թա ինչ կումչէք են, ումն են: Նրանք ըրմանում են, որ կումէչների իզը տանում ա ղըբա քոլի խորերը: Թուրքերն անասունների վըտնատղերով անվախ կեալի, հասնում են Պըրմբատ ու տենում ի՞նչ, վեր ըտեղից չատ լաւ ըրւացող Կետին կիւմեռում մարդ ա ապրում: Ուզում են ետ քնան, հըկառակի պէս տենում են, վեր կումէչների կողքին աղջիկ ա նստած: Թաքուն մօտիկ են կեալի ու տենում մի չատ սուրուն պան ա: Էնա ուզում են սպանեն, մինը նրանցից, **Սալում ա** անումը ըլում, Բուրսըլլուի բեագի տղան ա ըլում, հրամայում ա ըղճկան փոնեն, վեր իրանց հետ տանեն: Տհենց էլ անում են, իրանց հետ տանում են: Մեղրու ըղճկան փախցնում են եւ յեդը Սալումը տառնում ա էտ ըղճկայ մարդը:

Հիմա տառնանք Մեղրուն: Խեղճ մարդը հըմարեայ թա մի տարի ման ա կեալի ուրա ըղճկան, մի տեղ էլա քըթանում չի, վեչ մի տեղեկութիւն ստանըմ չի: Մեղրին իրողութիւնն իմացնել ա տալի մօտիկ բեագերին ու խաներին, ովքեր կարան մի պեան իմանան: Օրերից մի օր խեաբար են պիրում, որ Մեղրի՛, քու աղճիկը էս ինչ կիւղումն ա ու արթէչն պեանը պեանից անցած ա, պիտի քընաս պարիչես: Մեղրին համաձայնում չի: Էն

օրուանից, վեր իր ըղճկան փախցնում են, Մեղրին էլ իրեսը թրաչում չի:

Անց են կենում տարիք ու գիւղից քընացած տները (ընտանիքները ~ Ա. Պ.) սկսում են ետ կեալ: Պատմում են թա ըռաչից Բոլնիս-Խաչէնից մի քանի մարդ են ղըրգում, վեր կեան տենան, թա գիւղը ինչ վիճակի ա: Կեալիս հասնում, տենում են, վեր գիւղը վենց թողել են, նհէնց էլ մնացել ա, մենակ քոլն ա (անտառը) եկել հայաթները պատել: Էտ մարդիկ մի կերպ մաքրում են իրանց հայաթները, վեր ետ քնան Բոլնիս մնացածին պիրելու համար: Մինը ասում ա. «Արա բա Մեղրին մնացել ա ու վախտին կըրացել չենք իրան իմաց տանք, վեր ինքն էլ կեար: Մի քնանք տենանք ինքը սա՞ղ ա, մեռա՞ծ ա»: Երբ կեալիս հասնում են Միր Մային Ղալը ու հեռուից տենում են, վեր էտ տեղերը ըչխատանքն էփ ա կեալի, էլ քնիւմ չեն Մեղրուն տենալու, ետ են կեալի գիւղ ու հղա ըլում ղըբա Բոլնիս: Հասնում են Բոլնիս ու մեր ժըղովրդին ասում, թա գիւղը նորմալ վիճակում ա: Բեագը ժողովրդին վերցնում, կեալիս հասնում ա Կիւլիստան:

Վեր կեալիս են, աման մինը իր տունը պըդրաստում ա ըպրելու հըմար, մաքրութիւն պան են ընում ու տըղաբուում են: Տրանից յեդը միանգամից քընում չեն Մեղրու յեննա վեր պիրեն: Նրա տունը, պեակերը (բակերը ~ Ա. Պ.) մաքրում են, պըդրաստում ու յետոյ մի քանի մարդ ղըրգում Մեղրու մօտ, վեր ասեն կեայ գիւղ:

Մեղրին հըմճայնում չի, շատ նեղացած ա ըլում, դէ իրեն առանց ըսելու թողած են ըլում, տեղափոխուուած Բոլնիս: Էդ քընացած մարդիկը նորից ետ են կեալի գիւղ ու ասում, թա Մեղրին հըմճայն չի: Էդ ժամանակ ժողովուրդը հըվաքուում ա, որոշում անում վեր Մեղրուն համոզելու համար պէտք ա իր քաւոր **Հըթամին** ղըրգեն: Հաթամ-Բաչին իր հետ վերցնում ա մի քանի հոգի ու ծիերով չարժուում ղըբա Կետին կիւմերը: Վեր հասնում են Մարմարի Ղաչը, ընդեղից բեռում ա Մեղրու տունը, կիւմերը: Էդ վախտ Մեղրու կնիկը տեսնում ա վեր ծիաւեր մարդիկ են կեալի իրենց տան վրայ, ու տրանց մէջ ճընանչում ա իրենց քաւոր Հըթամին: Իմաց ա տալի Մեղրուն, թա

քաւորը կեալիս ա: Մեղրին հըրամայում ա խալիքը հանեն, փռեն հայաթում: Հաթամ-Բաչին կեալիս հասնում ա Մեղրուն: Իրար վզով են ընգնում, պաչ պուոշտի են անում, դէ երգար վախտ ա իրար տեսած չեն ըլում, նստում խօսում են, անասուն են մորթում քաւորի պատուին: Հաց են ուտում, համա Մեղրու քեփը պացում չի, ինքը թունդ նըղացած ա ըլում քաւորից: Քաւորը մեղայ ա կեալի, ներումթիւն ա խնդրում ու Մեղրուն ասում, վեր պիտի կեաս գիւղ, ժողովուրդը էնա գիւղում ապրում են: Մեղրին համաձայնում ա, համա ասում ա, վեր ինքը ըստեղ երկու ճաղաց ունի, բա տրանք վե՞նց տեղափոխի, ի՞նչ անի: Քաւորն ըստեղ ասում ա, վեր սաղ գիւղով կ՚օգնենք ու կը տեղափոխենք, նոյնը կը չինենք գիւղում: Տհենց էլ անում են, ճաղացները տեղափոխում են:

Տենողներն ասում են, թա Մեղրու մօրուքը հասած ա ըլում մինչեւ ծընգները: Վեր թոխկան (գօտի) կապում ա, մօրուքն էլ ա հետը կապում: Մեղրին մինչեւ իր կեանքի վերջն էլ հաշտուում չի թուրքերի հետ, վեր փախցրած են ըլում իր ըղճկան: Մէնակ իր ըղճկայ րախեքը, վեր արդէն հասնում ու մըծաացած են ըլում, կեալիս են տուն, ու գիդում չեմ՝ վեր թիւն ա ըլում, ասում են թա մենք էսինչ մարդու կընգայ րախեքն ենք: Ու տհենց էլ, մինչեւ 1988 թիւը էդ ընտանիքի հետ Մեղրունք կապ են ունեցել:

*Վերոբերեալ պատումը գրաւիչ է իր անպաճոյճ պարզութեամբ: Ասացողի՝ **Զինաւոր Մեղրեանի** ներկայացմամբ՝ Մեղրի ապերը իր միամտութեամբ յիշեցնում է Նոյ նահապետին. նրա նման հաւատքով էր եւ հաստատակամ:*

***Զինաւոր Դայու** վարկածով՝գաղթողները պարզապէս մոռանում են **Մեղրի մեծ պապին** իրենց հետ տանել Վրաստան: Նա մնում է անասունների ճմեռանոցում՝ կետին կիւմերում: Կայ նաեւ այն տեսակէտը, որ Մեղրին իր կամքով է հրաժարուել գնալու եւ նրանց տեղափոխութեան ժամանակ ինքն էլ նախընտրել է անտառային խոր թաւուտներում գտնուող կետին կիւմեր ճմեռանոց-բնակավայրը, որտեղ կային առանձնակի ապրելու լաւագոյն պայմաններ: Այս տեսակէտն է առա-*

*ջադրում **Բենիկ Ղուլեանը**, համոզմունք յայտնելով, որ բոլորը չէ, որ տեղափոխուել են Վրաստան: Եթէ ի միտ առնենք այն հանգամանքը, որ կամաւոր գաղթ կոչուածը տեղի չի ունենում միանգամայն եւ որոշ նախապատրաստութիւն ու ժամանակ է պահանջում, նաեւ այն, որ ձմեռանոցը եւ գիւղը իրարից ընդամէնը 5-6 կմ-ի վրայ էին, դժուար թէ չկարողանային նրան լուր տալ: Աւելի հաւանական է այն վարկածը, թէ Մեղրի ապերը կամովին չի ուզեցել բռնել գաղթի ճանապարհը եւ իր համար բնակութեան վայր է ընտրել անտառի խորքում, գետի ափին բնակուելու յարմար տեղ: Զի բացառւում, որ գաղթից ետ են մնացել կամ հրաժարել են նաեւ ուրիշ մարդիկ, այդ թւում հոգեւորական ճգնաւորներ: Ինչեւէ: Կիւմերը ապրելու համար յարմար տեղ էր ամէն տեսակէտից. կլիման բարենպաստ էր, եղանակը՝ տաք, ջրերը՝ պաղ, անտառը՝ լի ամէն բարիքով: Այդ տարածքը միշտ օգտագործուել է որպէս անասունների ձմեռանոց: Միաժամանակ, աշխարհից կտրուած տեղ էր, իսկական պատսպարան, ուր մի անվախ մարդ տասնամեակներ շարունակ կարող էր ապահով ապրել: Կիւմերում կային թէ՛ լաւ վարելահողեր, թէ՛ ջրաղաց, թէ սառն աղբիւրներ: Նա գտնւում է Ինջա գետի ձախ ափին, ուր աճում են նաեւ վայրի պտղատու բազմատեսակ ծառեր: Շատ աւելի մեծաթիւ էին ուտելի խոտաբոյսերն ու արմատները, սունկը, վայրի մեղրը: Մեղրիի գերդաստանը զբաղւում էր ե՛ւ երկրագործութեամբ, ե՛ւ անասնապահութեամբ: Լիովին հաւանական է, որ Մեղրի ապերն ունեցել է նաեւ մշակովի այգի եւ մեղուներ: Իսկ որ Մեղրունց գերդաստանն ունեցել է անասունների նախիր, վկայում է այն փաստը, որ Կիւմերից ոչ հեռու՝ Հացուտում, գետափին կայ մի վայր, որը կոչւում է Մեղրունց միգիլատեղ (*միջօրէին անասունների հանգստատեղ*):*

Կիւմերից ոչ հեռու, Ինջա գետի աջ ափին գտնւում է Դադիբէկանց վանքը: Պահպանուած կառոյցները վկայում են, որ այդտեղ ժամանակին եղել է միաբանութիւն: Վանքի հանգստավայրում գտնւում են գեղաքանդակ խաչքարեր 17-18-րդ դարերի արձանագրութիւններով, որոնցից կարելի է ենթադրել,

որ Մեղրու ժամանակ էլ վանքում եղել են հոգեւորականներ, այսինքն՝ Մեղրու ընտանիքը փաստօրէն մենակ չի մնացել: Մեզ յայտնի չէ, թէ այդ 500 ընտանիքները նախկին գաղթածների հետ միասին սպառել են գաւառիս ամբողջ բնակչութիւնը. հաւանաբար այլ մարդիկ էլ մնացել են: Սակայն մեզ համար անկասկած է, որ նման տեղաշարժերի պարագային վանական հոգեւորականութիւնը մեծամասամբ մնացել է տեղում՝ ամրանալով անմատչելի վայրերում, ինչպիսին, ասենք, Երիցմանկանց, Հոռեկայ, Եղիչէ Առաքեալի վանքերն են:

Կիւմերին մերձակայ Հացուտ վայրում պահպանուել է նաեւ աւերուած ջրաղաց՝ պիտանի ջրաղացքարերով: **Բենիկ Ղուլեանի** կարծիքով՝ այդ ջրաղացը սպասարկել է ո՛չ միայն Կիւմերի, այլեւ Լեռքարի, Ղըզախոռի, Վանքի եւ չրջակայ այլ բնակավայրերում ապրողներին: Մեղրի ապոր գերդաստանը Կիւմերում ապրել է մինչեւ 1809 թուականը, երբ Վրաստանից վերադարձել է գաղթականների հիմնական մասը: Ներգաղթի ընթացքը չարունակուել է մինչեւ 1817 թուականը: Գիւղում տները հիմնականում գետնափոր, երդիկաւոր, ընդարձակ չինուածիններ էին, որոնցում գերդաստաններ էին ապրում: Բենիկ Ղուլեանի ուսումնասիրութեան մէջ էջեր կան նուիրուած Գիւլիստանի հոգեւոր եւ աշխարհիկ չինուածիններին, ջրաղացներին, ձիթհանքերին կամ սրանոցներին, կամուրջներին եւ այլն: Դրանք շատ հետաքրքրական ազգագրական նիւթեր են, որոնք չեն կարող ներառուել սոյն գրքի մէջ: Հեղինակը յատկապէս անդրադառնում է սրբանոցներին եւ ջրաղացներին: Հետաքրքրական է, որ Շահէն Մեղրեանի երկու պապերն էլ ջրաղաց են ունեցել, այսինքն՝ եղել են ունեւոր մարդիկ:

Գիւլիստան մուտք գործած առաջին ներգաղթողներին բնականաբար հետաքրքրել է Կիւմերում մնացած Մեղրիի ընտանիքի վիճակը: **Զինաւոր դայու** պատմածից իրողութիւնն արդէն մեզ յայտնի է:

Մինչեւ 1930-40թթ. գիւղում գործում էին Աւանց, Քլանանց, Մեղրունց, Իթամանց եւ Սիրեանանց ջրաղացները:

Շահէն Մեղրեանի թէ՛ հայրական եւ թէ՛ մայրական պապերը ջրաղացներ են ունեցել: Շահէնի մայրական պապը՝ Աւանց Աղաջանը գիւղի վերջին ջրաղացպաններից էր: Բենիկ Ղուլեանի նկարագրութեամբ՝ Աղաջան պապը միջահասակ, ամրակազմ, կարմրադէմ, առողջ տղամարդ էր եւ ջրաղացում աշխատեց մինչեւ վերջ: Եղել է շատ համարձակ եւ անմիջական:

Շահէնի հայրական պապը՝ ***Պօղոսը*** *գիւղի տանուտէրն էր:*

Մեղրեանների տոհմածառը

Տոհմի նախնին համարւում է **Մեղրին** (1725–1815 թթ.), որի նախնիները զբաղուել են հողագործութեամբ, անասնապահութեամբ, մեղուաբուծութեամբ եւ այլն: Մեղրեանների տոհմի աւագ սերնդի ներկայացուցիչների պատմելով Մեղրի պապի անուան հետ կապուած, տոհմը կոչուել է **Մեղրունց** *(Մեղրունք): Մեղրիի նախնիների մասին տեղեկութիւնները քիչ են:*

Մեղրիի տղաներից մէկը 1820-ական թթ. ընտանիքի հետ տեղափոխուել է Նուխի: Հաւանական է Մեղրին ունեցել է շատ զաւակներ, բայց մեզ յայտնի է միայն նրա որդի **Վերդին** *(1790–1875 թթ.):*

Նա ունեցել է հինգ որդի և երկու դուստր: Նրանք են՝

1. ***Թիւնի*** *(Յարութիւն) Վերդիի (1820–1910 թթ.)*
2. ***Սաքի*** *(Սարգիս) Վերդիի (թթ.)*
3. ***Քուքի*** *(Գրիգոր) Վերդիի (թթ.)*
4. ***Պետրոս*** *Վերդիի (1825թթ.)*
5. ***Պօղոս*** *Վերդիի (1828–1924 թթ.)*

Թիւնիի (Յարութիւնի) ճիւղը

Մեղրեան Թիւնի (Յարութիւն) Վերդիի *(1820–1910 թթ.): Հիմնական զբաղմունքը երկրագործութիւնը, անասնապահութիւնը ու յատկապէս խոզաբուծութիւնն է, որպէս ապրուստի եկամտաբեր աղբիւր:*

Կինը՝ Սոնա Մնացականեան (գ. Գիւլիստան):

Ունեցել են մէկ դուստր՝ Գիւլի, և երեք որդի:
Որդիներն են՝ 1. Գեւորգ, 2. Բէգլար, 3. Ակուփ (Յակոբ):

1. Գեւորգ Ցարուքիւնի Մեղրեան (1870–1915 թթ.)
Կինը՝ Շուշի Հայրիեան (գ. Վերինչէն):
Ունեցել են երեք դուստր՝ 1. Մաքաղաթ, 2. Ազիզգիւլ, 3. Մարգուշ, և երեք որդի՝ 1. Իչխան, 2. Մեխակ, 3. Վերդի:

1.1. Իչխան Գեւորգի Մեղրեան (1905–1943 թթ.)
Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում:
Կինը՝ Անիչկա Բալայեան (գ. Գիւլիստան):
Ունեցել են երկու դուստր՝ 1. Սեդա, 2. Արաքսիա, և մէկ որդի:
Որդին է՝
Սեոմա Իչխանի Մեղրեան (1936 թ.)
Կինը՝ Զուլիէտա Բէգլարեան (գ. Ներքինչէն):
Ունեցել են երկու դուստր՝ 1. Անուշ, 2. Աննա, և մէկ որդի:
Որդին է՝
Արմէն Սեոմայի Մեղրեան (1970 թ.)
Կինը՝ Իննա Գրիգորեան (գ. Ներքինչէն):
Որդին է՝ Տիգրան (2009 թ.):

1.2. Մեխակ Գեւորգի Մեղրեան (1907–1942 թթ.)
Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

1.3.Վերդի Գեւորգի Մեղրեան (1913–1944 թթ.)
Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

2. Բէգլար Ցարուքիւնի Մեղրեան (1879–1975 թթ.)
Կինը՝ Գեոզալ Բաբայեան (գ. Զայլու):
Ունեցել են երկու դուստր՝ 1. Վարինկա, 2. Ռոզա, և չորս որդի:
Որդիներն են՝ 1. Խաչատուր, 2. Սերգէյ, 3. Վոլոդիա, 4. Գուրգէն:

2.1. Խաչատուր Բէգլարի Մեղրեան (1914–2000 թթ.)

Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Խորհրդային Միութեան բազմաթիւ շքանշանների ու մեդալների ասպետ, գիւղի տնտեսական եւ կուսակցական ղեկավարներից մէկը:

Կինը՝ Նատալիա Բէգլարեան (գ. Գիւլիստան):

Երկրորդ անգամ ամուսնացել է Եւգենիա Պողոսեանի հետ (գ. Ջայլու):

Ունեցել են չորս դուստր՝ 1. Էլմիրա, 2. Մալեն, 3. Ամալիա, 4. Լորետա, և երեք որդի՝ 1. Ռուդիկ, 2. Ռոմա, 3. Լեռնիկ:

1.1. Ռուդիկ Խաչատուրի Մեղրեան (1948 թ.)

Կինը՝ Լիդա Յարութիւնեան (գ. Մանաչիդ):

Ունեն երկու որդի՝ 1. Լեւոն (1976 թ.), 2. աչիկ (1979 թ.):

1.2. Ռոմա Խաչատուրի Մեղրեան (1950 թ.)

Կինը՝ Սվետլանա Յարութիւնեան (գ. Մանաչիդ):

Ունեն մէկ դուստր՝ Նատաչա, և մէկ որդի՝ Նորայր (1978թ.):

1.3. Լեռնիկ Խաչատուրի Մեղրեան (1967 թ.)

Կինը՝ Արփիկ Յակոբեան (գ. Գիւլիստան):

Ունեն երկու դուստր՝ 1. Մերի, 2. Ժենիա, և մէկ որդի՝ Սեւակ (1992 թ):

2.2. Սերգէյ Բէգլարի Մեղրեան (1920–1941 թթ.)

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

2.3. Վոլոդիա Բէգլարի Մեղրեան (1925–1998 թթ.)

Հայրենական մեծ պատերազմի մասնակից, պահեստազօր անցնելուց յետոյ ակտիւ մասնակցութիւն է ունեցել գիւղի խորհրդային եւ տնտեսական շինարարութեանը: Եղել է գիւղխորհրդի քարտուղար, խանութպան, պահեստապետ, անտառապետ և այլն: Մեծ հեղինակութիւն ունէր իրեն շատ ու շատ ճանաչողների շրջապատում:

Կինը՝ Թամարա Բէգլարեան (գ. Գիւլիստան):

Ունեցել են երկու դուստր՝ 1. Արմիդա, 2. Լարիսա, և երկու որդի:

Որդիներն են՝ 1. Լէոնիդ, 2. Նիկոլայ:

3.1. Լէոնիդ Վոլոդիայի Մեղրեան (1949 թ.)

Կինը՝ Նորա Յարութիւնեան (գ. Մանաչիղ):

Երկրորդ անգամ ամուսնացել է Շողիկ Սարգսեանի հետ (գ. Գիւլիստան):

Ունեցել են երկու դուստր՝ 1. Նոնա, 2. Մայրամ, և երեք որդի:

Որդիներն են՝

1. Հայկ Լէոնիդի Մեղրեան (1977–1993 թթ.)

Զոհուել է Շահումեանի շրջանի ինքնապաշտպանութեան մարտերում, Գիւլիստան–Յիղակերի տարածքում:

2. Մաքսիմ (1978 թ.), **3. Հայկ** (1997 թ.)

3.2. Նիկոլայ Վոլոդիայի Մեղրեան (1959 թ.)

Կինը՝ Գոհար Մեղրեան (գ. Կարաչինար):

Ունեն մէկ դուստր՝ Անի (1989 թ.), եւ երկու որդի՝

1. **Յարութիւն** (1991 թ.), 2. **Հայկ** (1994 թ.):

2.4. Գուրգէն Բէգլարի Մեղրեան (1930 թ.)

Երեւանի պետական համալսարանի երկարամեայ դասախօս, փիլիսոփայական գիտութիւնների թեկնածու, դոցենտ:

Կինը՝ Ժենիա Մեղրեան (գ. Գանձակ):

Ունեն երկու որդի՝

1. **Արարատ**, 2. **Սերգէյ**:

4.1. Արարատ Գուրգէնի Մեղրեան (1965 թ.)

Կինը՝ Անժելա Յակոբեան (ք. Ծաղկաձոր):

Ունեն երկու որդի՝

1. Գուրգէն (1991 թ.), 2. **Արմէն** (1995 թ.):

4.2. Սերգէյ Գուրգէնի Մեղրեան (1976 թ.)

Երեւանի պետական համալսարանի դասախօս, իրաւաբանական գիտութիւնների թեկնածու, դոցենտ, քաղաքացիական դատավարութեան ամբիոնի վարիչ:

Կինը՝ Անի Խաչատրեան (ք. Քաջարան):

Ունեն մէկ դուստր՝

1. Եւգենիա Սերգէյի Մեղրեան (2009):

3. Յակոբ Յարութիւնի Մեղրեան (1885–1943 թթ.)

Կինը՝ Շուշի Բալայեան (գ. Գիւլիստան):

Ունեցել են չորս դուստր՝ 1. Անուշ, 2. Նախշուն, 3. Արփենիկ, 4. Նադիա, և երկու որդի՝

1. **Մայիլ**, 2. **Ռուբեն**:

1. Մայիլ Յակոբի Մեղրեան (1925–1943 թթ.)

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

2. Ռուբէն Յակոբի Մեղրեան (1940 թ.)

Կինը՝ Լարիսա Մեղրեան (գ. Զայլու):

Ունեն երկու դուստր՝ 1. Մարիէտա, 2. Գայիան, և մէկ որդի՝ Յակոբ:

1. Յակոբ Ռուբէնի Մեղրեան (1968 թ.)

Կինը՝ Ժաննա Իվաննեան (ք. Սումգայիթ)

Ունեն երկու դուստր՝ Շուշան (2004 թ.), Դիաննա (2010 թ.), եւ մէկ որդի՝ Յարութ (2003 թ.):

Սաքիի (Սարգիսի) ճիւղը

Մեղրեան Սաքի (Սարգիս) Վերդիի

Սաքիի (Սարգիսի) ծննդեան եւ մահուան տարեթուերի մասին տեղեկութիւններ չեն պահպանուել: Նա սպանուել է հայ-թուրքական ազգամիջեան ընդհարումների ժամանակ՝ Ղարաղոյլու թուրքերի կողմից: Անժառանգ:

Պետրոսի ճիւղը

Մեղրեան Պետրոս Վերդիի

Պետրոսի ծննդեան եւ մահուան տարեթուերի մասին տեղեկութիւններ նոյնպէս չեն պահպանուել: Զբաղուել է հիմնականում երկրագործութեամբ եւ որսորդութեամբ:

Ունեցել է մէկ դուստր՝ ***Շարմաղ:***

Շարմաղը հօր մահուանից եւ մօր երկրորդ անգամ ամուսնանալուց յետոյ, սերտ կապեր պահպանելով հայրական (Մեղրեանների) տոհմի եւ մասնաւորապէս տոհմի նահապետ, տոհմասէր Զինաւորի հետ, ամուսնացել է Սերգի (Սերգէյ) Գրիգորեանի հետ:

Ունեցել են մէկ դուստր՝ ***Ռիմա*** *եւ հինգ որդի՝* ***1. Գուրգէն, 2. Մուշեղ, 3. Միքայէլ, 4. Բագրատ, 5. Ռաֆիկ:***

1. Գուրգէն Սերգէյի Գրիգորեան

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում:

Ունեցել է մէկ որդի՝ ***Լաւրենտի:***

2. Մուշեղ Սերգէյի Գրիգորեան

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

3. Միքայէլի, Բագրատի եւ **Ռաֆիկի** մասին տեղեկութիւններ չկան:

Պօղոսի ճյուղը

Մեղրեան Պօղոս Վերդիի (1828-1924 թթ.)

Գիւլիստանի մելիքութիւնում եւ նրա յարակից երկրամասերում յայտնի բարերար էր, հայ-թուրքական ազգամիջեան կոնֆլիկտների հաշտարար:

Կինը՝ Արփենիկ Նաբաթեան (գ. Գիւլիստան):

Երկրորդ անգամ ամուսնացել է Թոխի Գիւլումեանի հետ (գ. Վերինչէն), թաղուած է Գիւլիստանի եկեղեցու մօտ:

Ունեցել են երեք դուստր՝ 1. Հայկանուշ, 2. Մարալ, 3. Սաթենիկ, եւ երեք որդի:

Որդիներն են՝

1. Ալեքսան, 2. Զինաւոր, 3. Ծրիդոն:

1. Ալեքսան Պօղոսի Մեղրեան (1885-1982 թթ.)

Կինը՝ Մարալ Հախունց (գ. Վերինչէն):

Ունեցել են չորս դուստր՝ 1. Փիրուզա, 2. Նունիկ, 3. Նորա, 4. Ամալիա, եւ չորս որդի:

Որդիներն են՝

1. Գարեգին Ալեքսանի Մեղրեան (1920-1942 թթ.)

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմում: Անժառանգ:

2. Բենիկ Ալեքսանի Մեղրեան (1925-1990 թթ.), երկու դուստր:

3. Շամիր Ալեքսանի Մեղրեան (1927-1963 թթ.), երկու դուստր:

4. Միքայէլ Ալեքսանի Մեղրեան (1964 թ.)

Միքայէլը ունի երկու որդի՝ ***1. Ալեքսան*** *(պապի անունն է կրում),* ***2. Արսէն:***

Կինը՝ Մարինա Բալայեան (ք. Բաքու)

2. Զինաւոր Պօղոսի Մեղրեան (1907-2002 թթ.)

Տոհմի հանրայայտ, իմաստուն եւ առասպելական անձը ամբողջ լեռնային եւ դաշտային Ղարաբաղում: Իր առաքելութիւնը տեսնում էր հայ-թաթարական կոնֆլիկտների վերացման մէջ: Հանդէս էր գալիս որպէս ազգային չահերի պաշտպան: Մեծ հեղինակութիւն ունէր ոչ միայն բարեկամների, այլեւ հակառակորդների միջավայրում:

Կինը՝ Մարգուշ Խաչատրեան (գ. Գիւլիստան):

Ունեցել են չորս դուստր՝ 1. Էմմա, 2. Իրինա, 3. Ժենիա, 4. Սոնա, եւ եօթ որդի:

Որդիներն են՝ ***1. Արտուշ, 2. Կառլեն, 3. Եուրա, 4. Ալեքսանդր, 5. Շահեն, 6. Պետրոս, 7. Պօղոս:***

1. Արտուշ Զինաւորի Մեղրեան (1933 թ.)

Վաստակաշատ չինարար է:

Կինը՝ Նադիա Յովասափեան (գ. Գիւլիստան):

Ունեն երեք դուստր՝ 1. Օլիա, 2. Զօյա, 3. Անժելա:

2. Կառլեն Զինաւորի Մեղրեան (1944 թ.)

Կինը՝ Ալվինա Յովհաննիսեան (գ. Գիւլիստան):

Ունեն երեք որդի՝ 1. Սարգիս (1971 թ.), 2. Տիգրան (1973 թ.), 3. Գագիկ (1979 թ.):

2.1. Սարգիս Կառլենի Մեղրեան (1971 թ.)

Կինը՝ Նաիրա Յովակիմեան (ք. Աբովեան):

Ունեն երկու որդի՝ 1. Կառլեն (2001 թ.), 2. Նարեկ (2004 թ.):

2.2. Տիգրան Կառլենի Մեղրեան (1973 թ.)

Կինը՝ Սվետա Արզումանեան (ք. Աբովեան):

Ունեն մէկ դուստր՝ Իննեսա (2007 թ.) եւ մէկ որդի՝ Արման (2003 թ.):

2.3. Գագիկ Կառլենի Մեղրեան (1979 թ.)

3. Թաւադին (Եուրա) Զինաւորի Մեղրեան (1947 թ.)

Շահումեանի նախկին շրջանում եւ այժմ Հայաստանի Հանրապետութիւնում վաստակաշատ անտառապետ է:

Կինը՝ Արփիկ Խաչատրեան (գ. Գիւլիստան):

Ունեն մէկ դուստր՝ Մարմար (1972 թ.), եւ երկու որդի՝ 1. Իսահակ (1974 թ.), 2. Կարէն (1976 թ.):

3.1. Իսահակ Թաւադինի (Եուրայի) Մեղրեան (1974 թ.)

Կինը՝ Աննա Իսահակեան (ք. Աբովեան):

Ունեն մէկ դուստր՝ Արփինէ (2000 թ.), եւ մէկ որդի՝ Վահէ (2003 թ.):

3.2. Կարէն Թաւադինի Մեղրեան (1976 թ.)

Կինը՝ Նարինէ Գեւորգեան (ք. Երեւան):

Ունեն մէկ դուստր՝ Անի (2001 թ.), եւ մէկ որդի՝ Եուրա (2004 թ.):

4. Ալեքսանդր Զինաւորի Մեղրեան (1949 թ.)

Բանակի գնդապետ, Հայաստանի Հանրապետութեան սահմանային N զօրքերի հրամանատարի տեղակալ:

Կինը՝ Նորա Բալայեան (գ. Գիւլիստան):

Ունեն երեք որդի՝ 1. Հայկ (1976 թ.), 2. Արտակ (1977 թ.), 3. Արամ (1980 թ.):

4.1. Հայկ Ալեքսանդրի Մեղրեան(1976թ)

Կինը՝ Աննա Նազարեան (ք. Երեւան):

4.2. Արտակ Ալեքսանդրի Մեղրեան (1977 թ.)

Կինը՝ Լիլիա Մալխասեան (ք. Երեւան):

Ունեն մէկ դուստր՝ Եանա (2009 թ.):

4.3. Արամ Ալեքսանդրի Մեղրեան (1980 թ.)_

Կինը՝ Լիլիթ Խանոյեան (ք. Երեւան):

Ունի երկու որդի՝ Ալեքսանդր (2006 թ.) Դաւիթ (2010 թ.):

5. Շահէն Զինաւորի Մեղրեան (1952-1993 թթ.)

Շահումեանի նախկին շրջանի տնտեսական, քաղաքական եւ իրաւակարգի պաշտպանութեան դեկավար, շրջանի ինք-նապաշտպանութեան ուժերի գլխաւոր հրամանատար, Արցա-

խեան ազատամարտի հերոս: Զոհուել է Շահումեանի շրջանի ազատագրման համար մղուած մարտում, Գիւլիստան-Յիղակեր մօտակայ տարածքում:

Կինը՝ Ստելլա Ոսկանեան (գ. Կարաչինար):

Ունեն երկու դուստր՝ 1. Լուսինէ, 2. Լիլիթ, եւ մէկ որդի՝ Զինաւոր (1983 թ.):

6. Պետրոս Զինաւորի Մեղրեան (1954 թ.)

ՀՊՇ-ի գնդապետ, Շահումեանի նախկին շրջանի ինքնապաշտպանութեան մասնակից եւ կազմակերպիչ: «Եղնիկներ» զօրամասի հրամանատարի տեղակալ: Հետագայում նիւթական մեծ օգնութիւն է ցոյց տուել Շահումեանից եւ նրա յարակից շրջաններից տեղահանուածներին:

Կինը՝ Էլմիրա Սաղաթէլեան (գ. Գիւլիստան):

Ունեն երեք որդի՝ 1. Ֆրիդոն (1982 թ.), 2. Արթուր (1984 թ.), 3. Արման (1991 թ.):

6.1. Ֆրիդոն Պետրոսի Մեղրեան (1982 թ.)

Կինը՝ Լենա Յարութիւնեան (գ. Բերդաձոր):

Ունեն մէկ դուստր՝ Էլմիրա (2009 թ.):

7. Պօղոս Զինաւորի Մեղրեան (1957 թ.)

Բանակի փոխգնդապետ, ԼՂՀ Նոր Շահումեանի շրջանի զինուորական կոմիսար: Այժմ Աբովեան քաղաքի զինկոմի տեղակալ: Տեղափոխման եւ նիւթական մեծ օգնութիւն է կատարել Շահումեանից եւ նրա յարակից շրջաններից բռնի տեղահանուածներին:

Մինչեւ շրջանի բռնի տեղահանումը եղել է Գիւլիստան գիւղի ջոկատի հրամանատարը:

Կինը՝ Անտիկա Պետրոսեան (գ. Գիւլիստան):

Ունեն երկու դուստր՝ 1. Քրիստինէ, 2. Մարգուշ, եւ մէկ որդի՝ 1. Էրիկ (1982 թ.):

7.1. Էրիկ Պօղոսի Մեղրեան (1982 թ.)

Կինը՝ Լիաննա Սիմոնեան (ք. Աբովեան):

Ունեն երկու դուստր՝ 1. Միլենա (2006 թ.), 2. Անտիկա (2007 թ.):

8. **Ֆրիդոն Պօղոսի Մեղրեան** (1920-1942 թթ.)

Զոհուել է Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Անժառանգ:

Մեր ունեցած տարբեր աղբիւրներից մեզ հասել է, որ Մեղրին ունեցել է եւս տղաներ, որոնք 18-րդ դարի սկզբին տեղափոխուել են Նուխի ցարի հրամանով ծառայելու:

*Նրանց մասին իմացել ենք 2008 թ.-ին՝ գտնելով **Անահիտ Արշավիրի Մեղրեանին**, ծնուած 1937 թ.: Նրա պատմելով՝ իր նախնիները եղել են Ղարաբաղից, թէ որ մելիքութիւնից են գնացել՝ ինքը չի հիշում: Անահիտը ունեցել է երկու եղբայր՝ **Հենրիկ եւ Լեւոն**:*

Անահիտը երբ ամուսնանում է, հայրը խնդրում է փեսային, որ դստէր ազգանունը չփոխի, քանի որ Անահիտը միակ Մեղրեան ազգանուն կրողն է, եւ յոյս ունենալով, որ օրերից մի օր կը գտնուի Մեղրեանների միւս ճիւղը: Փեսան համաձայնում է, քանի որ Անահիտի եղբայրները մահացած են լինում:

«Պապիս անունն էր **Ջաւադ**: Իրենք մեծ ընտանիք էին, չատ-չատ են եղել, կարծեմ 10 երեխայ են եղել, ունեցել են չատ հարսներ, բոլորն ամուսնացած էին: Ապրել են Նուխիում: Բացի ամէն մէկն իր երեխաներին նայելը՝ ապրել են համայնական, տոհմական կեանքով, կամ իբրեւ մի ծուխ կամ գերդաստան, եւ հարսներից իւրաքանչիւրը որեւէ գործով է զբաղուել: Շատ հաչտ, համերաչխ ընտանիք են եղել:

Թուրքերը մտել են եւ բոլորին կոտորել մեր պապի աչքերի առջեւ: Փրկուել է միայն հայրս՝ **Արշաւիրը**, որ սովորելիս է եղել Թիֆլիսում, նոյն ժամանակ մամաս է եղել այնտեղ: Մայրս չուշեցի էր: Ուզում եմ ասել, որ մօր աչքի առաջ իր փեչի տակի փոքր աղջկան էլ հանել են, սպանել, բոլորին մորթել են: Հօրս հօրեղբօր տղայի անունը **Արշակ էր**: Նա ապրել է Գերմանիայում, եղել է փիլիսոփայութեան եւ բժշկագիտութեան դոկտոր: Ե՛ւ լաւ բժիշկ է եղել, ե՛ւ գրականագէտ, մանաւորապէս՝ տոլս-

տոյագէտ: Արշակ Մեղրեանը յայտնի մարդ էր, նոյնիսկ էջմիածնում նրա մասին շատ նիւթեր կան: Ունեցել է մեծ գրադարան, որի մի մասը նուիրել է էջմիածնին, միւսը՝ Ազգային գրադարանին, մի մասն էլ՝ Բժշկական համալսարանին:

Ինքը մեզ տեղեկացրել է, որ ամուսնացած չէ, երեխայ չունի, թող մեզնից մէկը գնայ եւ իր ունեցուածքին տէր լինի: Դա 64 թուականին էր: Մենք համաձայնութիւն չտուինք, ասացինք, թէ Գերմանիայում ի՞նչ գործ ունենք, ես էլ նոր էի ամուսնացել: Յետոյ, երբ մենք չգնացինք, նա մեզ համար ծանրոց ուղարկեց, որի մէջ արժէք ներկայացնող բան չկար, մեծահասակ մարդու ճաշակով հագուստ էր: Մենակ է ապրել, երեք սենեակները լեցուն են եղել գրքերով, մնացածներում ինքն էր ապրում, սակայն սեփական տուն չի ունեցել, վարձով է ապրել: Մեզ այնտեղից ուղարկել են մեր այն նկարները, որոնք մենք էինք իրեն ուղարկել: Բայց ինքը մեզ խնդրեց, որ ասենք, թէ ի՞նչ է մեզ պէտք եւ ինքը կ՚ուղարկի: Մենք էլ ամաչում էինք բան ասել, թէեւ այն ժամանակ, գիտէք, որ աշխատավարձը ցածր էր: Հօրեղբօրս տղան ապրել է Վիեննա քաղաքում: Հայրս էլ մի՛շտ գիւղից գիւղ էր գնում, որպէսզի իրեն չբռնեն: Ես երկու եղբայր ունէի, Հենրիկ եւ Լեւոն, մահացած են: Ուրիշ հարազատ չունեմ, եւ երբ **Պետրոսն** ի յայտ եկաւ, ես շատ զարմացայ եւ ուրախացայ: Գիտէինք, որ ուրիշ Մեղրեաններ կան, բայց իրար չէինք հանդիպել: Հայրս եւ Համալսարանն է աւարտել, եւ Գիւղինստիտուտը, մանաւանդ գիւղատնտես էր: Պատերազմի ժամանակ զօրակոչել են, սակայն խիստ կարճատես էր եւ ետ են ուղարկել, եւ եղել է Հայաստանի գլխաւոր գիւղատնտեսը: Չնայած բարձր պաշտօնին, մենք հացի կարօտ էինք, իսկ իր ենթակաները լաւ էլ ապրում էին, մեզ էլ երբեմն օգնում էին, իսկ ինքը շատ ազնիւ էր: Վեց հոգով 300 գրամ հաց էինք ստանում: Հացի գոյնին անգամ կարօտ էինք, որ տեսնենք: Ես 37 թուականի ծնունդ եմ, եղբայրներս՝ **Մեղրեան Հենրիկը** 30 թուական եւ **Մեղրեան Լեւոնը**՝ 33: Մայրս ուսուցչուհի էր: Նա Մելքումեանների հարուստ ընտանիքից էր, ոսկերիչներ էին: Պապիս անունը

Գրիգոր էր: Մայրս միակ աղջիկն էր եւ նախ սովորել է Թիֆլիսի Գայիանեան դպրոցում: Մեր տունը եղել է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու մօտ: Շատ ոսկի ենք ունեցել եւ թաքցրել ենք եկեղեցու մօտ եւ Հայրս ստիպուած է եղել տեղը ցոյց տալու, եւ մղանակիր տրակտորով հանել են: Մայրս երբ գնացել է Գանձակ՝ քեռուս մօտ, քեռիս յորդորել է գնալ եւ փնտրել, գուցէ ինչ-որ բան մնացած լինի: Իրօք գտել են, սակայն ճանապարհին թուրքերը ձեռքներից խլել են: Նուվխում ամենքին կոտորել են, եւ երբ Հայրս մի անգամ գնաց Հայրենի չրջանը տեսնելու, շատ դառնացած եկաւ ու ասաց, որ ոչ մի հայ չի մնացել: Արշակը գնացել է Գերմանիա սովորելու եւ մնացել է այնտեղ: Նա նոյնիսկ մի սպայի էր ուղարկել, որի հետ ես ամուսնանամ եւ գնամ Գերմանիա: Եղբայրս բարկացած ասել է, որ դու Հայաստանից ոչ մի տեղ չես գնա: Այդ սպային վախեցրել են, եւ նա թողեց այստեղից փախաւ: Արշակը շատ սրտառուչ նամակներ էր գրում: Հայրս մահացել է 82 թուականին»:

Նուվխի քաղաքում ունեցել են Մեղրունց գերեզմանատուն, որտեղ թաղուած են եղել ազգի մեծերը:

Մեղրունց տոհմածառի հարեւանցի դիտարկումն անգամ ի յայտ է բերում այդ տոհմի առանձնայատկութիւնները: Նախ, եղել են երկարակեաց եւ բազմազաւակ: Երկարակեցութեան գաղտնիքը բնակլիմայական գերազանց պայմաններն էին, աշխատասիրութիւնը, պարզ կենցաղավարութիւնը, քրիստոնէական բարեպաշտ բարոյականութիւնն ու վարքի համապատասխան կարգաւորումը, որը մարդու մէջ արմատաւորում է սակաւապետութիւն, չափաւորութիւն, դրական այլ յատկութիւններ:

Գլուխ երրորդ
ՄԵՂՐԵԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Շահէնենց ընտանիքը տիպական օրինակն է գիւլիստանցիների աւանդական կենցաղավարութեան, ամրութեան, հաստատակամութեան:

ԾՆՈՂՆԵՐԸ

*Սոյն գլուխը շարադրելիս մեզ համար տեղեկութեան աղբիւր են հանդիսացել **Մեղրեան ընտանիքի զաւակները**, մեր անձնական ծանօթութիւնը **Զինաւոր դայուն**, նրա զաւակներին եւ բարեկամներին, օգտուել ենք Շահէն Մեղրեանի ուսուցիչ **Բենիկ Ղուլեանի** անտիպ ուսումնասիրութիւնից:*

*Արդէն նշել ենք, որ Շահէն Մեղրեանի մեծ պապը՝ **Մեղրին** նոյնիսկ մեծ գաղթի ժամանակ չի լքել Գիւլիստանը: Շահէն Մեղրեանը ծնուել է բնիկ գիւլիստանցու ընտանիքում: Նրա հայրական եւ մայրական տոհմերը գիւղի հնագոյններից էին:*

*Շահէն Մեղրեանենց ընտանիքը բազմանդամ է: Բազմազաւակութեան երեւոյթը պայմանաւորուած է կենսապայմաններով, քրիստոնէական բարոյակարգով, հաւատքով, որն արգելում է արհեստական վիժումները, զի Աստուած Ինքն է կենսատուն, իսկ ծնողները միջոց են Աստուածային կամքը կատարելու: Որոշակի դեր է խաղում նաեւ հայրենասիրութեան ոգին, որը դրդում է շատ զաւակներ ունենալ եւ երկիրը պաշտպանել: Պատահական չէ, որ խորհրդային իրաւակարգը եւս խրախուսում էր բազմազաւակութիւնը եւ տասն ու աւելի զաւակներ ծնած եւ դաստիարակած մայրերին պարգեւատրում էր «Հերոսուհի մայր» կոչումով՝ արժանացնելով Ոսկէ մեդալի եւ բարձրագոյն՝ Լենինի շքանշանի: Հետաքրքրական է, որ 11 երեխայ (7 որդի եւ 4 աղջիկ) ծնած եւ դաստիարակած Շահէնի մայրը՝ **Մարգուշա Մեղրեանը** գաղթի ժամանակ բան չի վերցնում տնից, բացառեալ պարգեւատրութեան վաւերաթղթերը, մեդալն ու շքանշանը: Ի վերջոյ, զաւակները լաւագոյն դաստիարակութեան պարագային մեծ ուրախութիւն են ծնողների համար:*

*Մեղրեաննների նման ընտանիքների գոյութիւնն առաջին հերթին պայմանաւորուած էր ազգային գոյապահպանման եւ ինքնապաշտպանութեան խնդրի լուծմամբ մի տարածաշրջանում, որտեղ հայութիւնը գոյատեւում էր շարունակական բախումներով եւ պարտադրուած զոհերով, որոնք կարծես անխուսափելի էին դարձել: Մեղրեաննների ընտանիքը համապատասխան էր իդէալական ընտանիքի պատկերացմանը, որն իր բիւրեղացումն է գտել մեր հեքիաթ-աւանդութիւնների մէջ եւ դարձել բարեմաղթանք. «Եօթը որդով սեղան նստես»: Եօթը խորհրդաւոր թիւ է, որի մասին **Գրիգոր Նարեկացին** գրել է. «Իսկ միւսը (Աննան - Ա. Պ.) իր որովայնի անմշակ երկիրսենեակը բարգաւաճեց եօթնեակ զաւակներով, որ թիւն է անբաւութեան, նշանակելու համար բուն էութիւնը, Աստուածութեան յարակայութեան սահմանն անհետազօտելի, եւ աւազանի նորածին որդիների անհատելի յորդութիւնը: Սա մի թիւ է պանծալի, որի մէջ կէտ չկայ կցորդութեան եւ ո՛չ էլ ունի սպառելի վախճան, այլ՝ մի կոյս է յաւէտ անճառ վիճակով՝ ուրոյն ընտրութեամբ նուիրուած համակ յաւիտենութեանը դժուար հասանելի մեր ըմբռնումին» (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԼԱ, ա): Ուրեմն Մեղրեաննների նորածին որդիները լինելու են անընդմէջ յորդութեամբ եւ չեն ունենալու սպառելի վախճան, այլ՝ պատկանելու են յաւիտենութեանը: Մնում է Մեղրեաններին եւ մեզ՝ բոլորիս մէկ բան ցանկանալ՝ Գիւղիստանի վերադարձումն իր զաւակներին եւ համայն հայութեանը:*

Մեղրեաննների ընտանեկան այս «մանկապարտէզը» կրթութեան եւ դաստիարակութեան լաւագոյն պայման էր: Այդ ընտանիքի մեծերը ապահովում էին մանուկների ո՛չ միայն հաց հանապազօրեան, այլեւ ստեղծել էին հիասքանչ կարգ ու կանոն, սիրոյ եւ յարգանքի ջերմագին մթնոլորտ, որի պայմաններում զաւակները փոքր-ինչ հասակ առնելով՝ ստանձնում էին փոքրերի խնամքը: Մեղրեան զոյգը Շահումեանում չատ էր յարգուած՝ հզօր ընտանիք ստեղծելու եւ դա պատուով ու համակ նուիրուածութեամբ պահելու համար: Այդպիսի ընտանի-

քը կարող էր գոյատեւել ո՛չ միայն ծնողաց արտակարգ անհատականութեան, այլեւ երեխաների աչխատասիրութեան շնորհիւ, իրար օգնելու եւ սիրելու պայմաններում: Ուստի պատահական չէ, որ այդ ընտանիքում տիրում էր նահապետական պարզ, ազնիւ ոգեղէն կեցութիւն:

*Շահէնի հայրը՝ **Զինաւոր դայլին**, ոչ միայն Շահէնենց ընտանիքի, այլեւ Մեղրեաննների ամբողջ ազգատոհմի **Ապան** էր: Նա հեղինակութիւն էր ամբողջ գիւղի, նաեւ գաւառի սահմաններում: Նրա կերպարը, երեւոյթը, տեսքը վեհութիւն էր արտայայտում, մի խաղաղ խիզախութիւն, որ կարծես թէ դա հէնց կեանքի ինքնավստահութիւնն է, մարդու տիրապետութիւնը տարերքի, բնութեան վրայ, իսկական տղամարդու եւ մարդու տիպարային գծեր: Դա անմիջականօրէն կոդաւորուած, գաղտնագրուած էր Աստուծոյ կողմից նրա մարդկային կերպարի եւ նկարագրի վրայ, Աստուածային չնորհ էր, որ մարդու պարագային լինում է ծննդեամբ, ապա՝ մկրտութեամբ եւ պահպանւում ու բազմապատկւում է բարեկիրթ եւ արժանավայել կենցաղավարութեամբ: Զինաւորի մէջ բոլորն իրենց հարազատին էին տեսնում: Ապայի բնական առողջ եւ սթափ մտածողութիւնը, երկարատեւ կենսընթացքին ձեռք բերած հարուստ փորձը, իրազարձութիւնները կանխատեսելու կարողութիւնն ու չրջահայեացութիւնն ի միտ առնելով՝ հարկ եղած դէպքում նրա հեղինակաւոր խորհրդին էին դիմում թէ՛ ազգականները, թէ՛ բարեկամներն ու դրացիները: Գիւղական համայնքին յուզող եւ հրատապ լուծում պահանջող հարցերի ու խնդիրների քննարկման եւ ճիշտ որոշումներ ընդունելու ժամանակ ծանրակչիռ եւ վճռական էին հնչում Զինաւոր ապայի խօսքն ու կարծիքը:*

Ապայի խորհուրդներն օրէնքի ազդեցութիւն ունէին ազգատոհմի համար, քանզի մարդիկ բազմիցս համոզուել էին նրանից եկող խօսքի բարութեան ուժի մէջ: Թէկուզ դպրոց չէր գնացել ու գրագէտ չէր, սակայն կեանքի ընթացքին ըստ հանգամանքների միշտ դրսեւորել է իր մտքի բնական, հմայիչ զօրութիւնն ու խելացիութիւնը:

Ընտանիքում Զինաւոր ապան մեծարւում էր, այլեւ ընտանիքի անդամները նրանից պատկառում էին եւ նրան երկիւղածութեամբ էին վերաբերում: Ի միտ առնելով հօր խստութիւնն ու անչեղ աւանդապահութիւնը, Շահէնը նրա մասին ասում էր «Մեր տան Ստալինը»: Շահէնն, ընդունելով Ապայի սահմանած խստութեան յոյժ անհրաժեշտութիւնն ընտանիքը ճշմարտութեան սկզբունքով դաստիարակելու գործում, երբեք չէր ընդդիմանում նրան կամ առարկում հօր ասածներին: Նա համոզուած էր նաեւ, որ աւանդապաշտութեան միջոցով են պահպանւում ազգի մշտակայուն դիմագիծը եւ հոգեբարոյական նկարագիրը, մի փոքր լեռնակղզում կենտրոնացած հայութեան մի մասի ինքնապահպանումը քաղաքակրթութիւնների բախման կիզակէտում: «Մեր Ստալինը» անհոգի բռնակալ չէր, այլ՝ կարգապահութեան մուրճ, որի «հարուածների» տակ կոփւում, պողպատ էին դառնում որդիները, որոնք բնածին ռազմիկներ էին, եւ դուստրերը, որոնք բարեհոգի հայուհիներ էին, ամենքը միասին՝ հայրենապաշտների բոյլ:

Ընտանեօք 13 հոգի էին: Հայրն էր աշխատում եւ հասցնում ամէն ինչ: Երեխաները դժուարութիւն չեն զգացել: Հայրը 17 տարեկանից սկսել է աշխատել, երբ Զինաւորի հայրը՝ Պօղոսը մահացել է, իր մօրն ու կրտսեր եղբայրներին է պահել: Ու թէեւ 90ն անցէր, տեսել է ուժեղ, ցնցող դէպքեր, տարել դառէր, որդու՝ Շահէնի, կնոջ մահը, տակաւին առոյգ էր եւ լրջախոհ ու էլի ինքն էր ղեկավարում բոլորին: Շահումեանի վերաբերեալ նա Շահէնին ասել է.

– Տղայ ջա՛ն, անում ես՝ արա՛, լաւ ես անում, բայց տե՛ս մէջդ պլի՞նդ ա, ամրացրո՛ւ, նոր արա՛:

Ըստ Զինաւոր ապայի՝ եթէ մեր ազգին թիկունքից չխփէին, թուրքը դիմացից չէր կարայ:

Հանրութեան մէջ բարձր դիրք ու հեղինակութիւն ունեցող որդիները, եւ յատկապէս Շահէնը, Ապայի հետ խորհրդակցելու, նրան բախտորոշ պահերին տեսնելու անհրաժեշտութիւն զգացել են մշտապէս: «Պաչտօնը,– որդուն ասել է հայրը,– դեռ ամէն ինչ չէ: Նա կարող է ե՛ւ բարիք բերել, ե՛ւ չարիք: Մարդը

կարող է բարձր պաշտօններ զբաղեցնել, սակայն մարդ չլինել, մարդու կոչումը ոտնահարել, փորձանք դառնալ ժողովրդի համար: Մարդու կոչումը յարատեւ է, իսկ պաշտօնը՝ ժամանակաւոր. այսօր կայ, վաղը՝ ոչ: Մարդու կոչումը կորցնողն ամէն ինչ է կորցնում»:

Եւ Շահէնն Ապայի առաջադրած բարոյա-քաղաքական սկզբունքները ո՛չ միայն իւրացնում էր, այլեւ՝ իրագործում: Չնայած խառնուածքային տարբերութիւններին, հայր ու որդի ունէին կենսական միեւնոյն դիրքորոշումները, կարելի է ասել՝ նոյն աշխարհայեացքը, եւ այդ անխախտելի չարունակականութիւնը յատուկ է Արցախին առհասարակ: Անհնար է, որ ծնողասէր մարդը հայրենասէր չլինի, քանզի հայրենիքը հայրերի սերնդական յաջորդականութիւնն է եւ յարատեւութիւնը, մարդկային անհատների միջոցով ազգի յաւէրժութիւնը ժամանակի ընթացքին: Բացի այդ, ծնողասիրութիւնը մարդասիրութեան ամենաբնական ձեւն է, քրիստոնէական պատուիրանի իրականացումը, Սիրի՛ր մերձաւորիդ բանաձեւ-պատուիրանի կենսագործումը:

Իր գիտակցական տեւական գործունէութեան ընթացքին վաստակած արժանաւոր հեղինակութիւնն ու յարգանքը Զինաւոր ապան պահպանել է ամբողջ կեանքում եւ աստիճանաբար մեծացել է նրա բարոյական ներգործութիւնը մարդկանց վրայ: Զինաւոր ապան «Հացի մարդ» լինելով, որպէս հոգու պարտք, միշտ առիթ էր որոնում «ժողովրդին հաց տալու»: Ըստ նրա՝ «Անղոնաղ տունը աւերակ տուն ա»: *Ամենուր նա սեղանապետ պիտի լինէր: **Բենիկ Ղուլեանի** ճշգրիտ յիշողութիւնը պահպանել է նահապետ ծերունու սեղանին ասած կենաց «կարդինալ» ճառերից մէկը.* «Ա՛յ ժըղովուրդ, էս մին կտոր հացը լոխճին տանն էլ ճարւում ա, փառք Ըստծու, ասը սրա կարօտ մարդ չկայ: Մենք կը կրինք էս մին թիքեա հացը ամենքս մեր տներումը օտինք. ամա **վար հըւաքուել ենք ըստեղ, մեր տան հացը մըտեղ ենք օտում, սա սէրուԹեան նշան ա: Մենք սէրուԹեան կենացը եւ ուզենանք, վեր Աստուած մեր Թմահան կտրի՝ սէրուԹեան յրա տնի**: Մենք նաեւ պեարի կործ

փոնողին, պեարի կործաւը ուրխանողին, պեարի կործին թարիփ ընողին կենացը: Ա՛յ Աստուած, Տու ըսկանաս»:

*Ջահել ժամանակից Զինաւոր ապային **Բեագդաղի** են ասել կամ **լեռների իշխան**: Նա 7 շրջանների Բեագդաղին է եղել: Այն տարիներին Զինաւոր ապայի հաղորդական դաշտի մէջ յայտնւում էին ազգային եւ սոցիալական տարբեր կարգավիճակի մարդիկ, որոնց վերաբերւում էր բարոյական եւ ազգային չափանիշներով: Յատկապէս մեծ հեղինակութիւն էր վայելում թաթարաբնակ գիւղերում, թուրքերի հետ մշտական շփման մէջ լինելու հանգամանքով: Երկրորդ աշխարհամարտի տարիներին նա պաշտօնավարել է Թարթառի հովտում, եղել է ոչխարաբուծական ագարակի (ֆերմա) վարիչ, որը խորհրդային ժամանակաշրջանի գիւղական բնակավայրի երկրորդ պաշտօնն էր կոլտնտեսութեան նախագահից յետոյ, որը հնարաւորութիւն էր տալիս ճանաչելու շատ ու շատ մարդկանց: Հայերի եւ թուրքերի միջեւ պայմանագրային համաձայնութիւն կար ձմեռային (դաշտային) եւ ամառային արօտավայրերը օգտագործելու հարցում եւ բնաեղանակային (սեզոնային) քոչը այդ տասնամեակներին նշանաւոր երեւոյթ էր: Դա նշանակում էր հայերի եւ թուրքերի աշխոյժ շփում, ծանօթութեան հաստատում, ապրանքափոխանակութիւն, առեւտուր, որոնք բաւականին հետք էին թողնում ազգամիջեան փոխյարաբերութիւնների վրայ: Խաչնարած թուրքերը սար էին բարձրանում ընտանիքներով եւ ամռանն ապրելու ամէն յարմարութեամբ: Ամառուայ ամիսներին Զինաւոր դայու բակը իւրայատուկ քարվանսարայ էր դառնում: Նրանք գալիս էին իրենց կենցաղային առօրեայ պէտքերի համար, գնումներ անում, շատ հարցերով դիմում էին Զինաւոր քիրվային, եւ նա օգնում էր նրանց ամէն ինչով: Նրան դիմում էին նոյնիսկ անծանօթները, ովքեր միայն լսել էին նրա մասին: Եւ Զինաւոր դային որեւէ մէկին յուսախաբ չէր անում, որեւէ մէկի «վիզը ծուռ չէր թողնում»: Զինաւոր դայու պատիւն այնքան բարձր էր տափաստանի գիւղերում, որ այնտեղ ամէն գիւղխտանցի նրա անունը տալով դրականօրէն էր լուծում իր հարցերը:*

Հետաքրքրական է, որ դաշտավայրերում ապրած եւ յետագայում մահմեդականութիւն ընդունած Կովկասի խաչնարած թաթարների բնաւորութեան փափկութիւնը, չփման որոշակի ընդունակութիւնը, քաղցրախօսութեամբ դիմացինին սիրաշահելու կարողութիւնը հիմք են դարձել որոշ հայերի համար՝ մտածելու, թէ թուրքը (թաթարը) վրացուց լաւն է: Այսպիսի պատկերացման իրական հիմքն այն է, որ հայերի եւ վրացիների միջեւ գործունէութեան արդիւնքների փոխանակման հնարաւորութիւն գրեթէ չի եղել եւ հայերն ու վրացիները տնտեսութեան, առեւտրի եւ այլ ասպարէզներում եղել են մշտական մրցակիցներ, ինչն առիթ է դարձել երկուստէք անվստահութեան եւ զգուշաւոր վերաբերմունքի: Հայերին ճնշելուց ահից՝ վրացիները ընդունել են ուղղափառութիւն եւ, իրօք, ո՛չ միայն ազատուել ճնշելու վտանգից, այլեւ հայերին յաճախ վերաբերել են թշնամաբար, ինչպէս այսօր է ընդունուած ասել՝ «քցել» են: Վիրքը սկզբում եղել է Հայքի ասենք թէ մի նահանգը, որը պոկուելով Հայաստանից, յետագայում որպէս ինքնուրոյն միաւոր, երկրի աշխարհագրական դիրքի չնորհիւ ուժեղացել է եւ ընդունել է որոշ իմաստով ենիչերական դիրքորոշում, որը հալւում է այն պարագային, երբ հայն ու վրացին իրար հետ խմում են եւ զգում, որ եղբայրներ են: Իսկ սթափ վիճակում վրացին իրօք թաթարից վատն է, որի վերջին ապացոյցը ջաւախահայերի նկատմամբ ճուլման եւ բնակավայրը զաւթելու նենգամիտ քաղաքականութիւնն է եւ հայոց հոգեւոր-մշակութային արժէքների նպատակի իւրացումը՝ դրանց վրայից հայկական հետքերի վերացման ճանապարհով:

Հայոց երկրի բնակլիմայական խստաշունչ պայմաններն ու աշխարհագրական բազմակերպութիւնը, ամառուայ տապն ու ձմեռային սառնամանիքները հաւանաբար իրենց դրոշմն են դրել մեր խառնուածքի եւ բնաւորութեան վրայ: Շփումների ժամանակ արտայայտում ենք որոշակի խստութիւն: Ի տարբերութիւն թուրքերի, որոնք մակերեսային, հպանցիկ չփումների ժամանակ աչքի են ընկնում իրենց բնաւորութեան «քաղցրութեամբ», քոչուորական կեցութեամբ ձեռք բերած արտակարգ

*խորամանկութեամբ, որով գրաւում են իրենց հետ չփուողնե-րին, լեռնական կեցուվթեան պարզուվթեան բերումով Հայոց ազ-գը մեծամասնաբար անմիջական է, դիւրահաւատ եւ միամիտ: Մեր **Հայկ Նահապետը**, եւ յատկապէս Սասունցի **Դաւիթը**՝ մեզ օրինակ: Մենք չենք դժգոհում մեր միամտութիւնից, զի Աստուած սիրում է միամիտներին եւ ոչ թէ փոփոխամիտնե-րին:*

Հետաքրքրական է, որ թուրքերի շրջանում այդքան բարե-կամներ եւ ծանօթներ ունեցող Զինաւոր Մեղրեանը հայ-թուրք յարաբերութիւնների սրման ժամանակ առանց յապաղելու եւ տատանուելու արտայայտեց իր կայուն դիրքորոշումը եւ մեր հակառակորդ-հարեւանի էութեան ու բնոյթի ճանաչողութիւնն ի սպաս դրեց երիտասարդութեան մէջ ճշմարիտ վերաբերմունք մշակելուն:

Թուրքերի կողմից բռնակալուած եւ բաքւում արգելա-փակուած, սակայն չընկճուած Զինաւոր դային պահպանել էր մարդկային բարոյական յատկանիշները, այլեւ ազգային ոգին եւ սթափ գիտակցութիւնը. անմարելի էր ազգային անկա-խութեան նրա իդէալը:

*Մեղրեան բազմազաւակ եւ բարեվաստակ ընտանիքում չատ յարգուած է եղել նաեւ **Մարգուշա** մայրիկը՝ Այան:*

*Զինաւոր ապային լիիրաւ հիմքով կարելի է երջանիկ մարդ համարել գոնէ մինչեւ Շահումեանի կորուստը: Նա հիանալի ընտանիք է ստեղծել սիրելի կողակցի՝ հերոսուհի Մարգուշայի հետ: Նախքան կրտսեր որդու՝ **Պօղոսի** ծնունդը, արժանացել է «Հերոսուհի մայր» կոչման, որը տրւում էր ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի Նախագահութեան հրամանագրով:*

***Այան**, իրօք, մի արտակարգ կին էր, ամէն ծանրութիւն կա-րողանում էր տանել: Հայաստանից եկող տղաների սնունդը, ճաշը եւս նա էր պատրաստում, երբ նրանք իջեւանում էին Գիւլիստան: **Այան** էր ամէն ինչ կարգաւորում եւ կարգադ-րում: Եւ չատ կը ցանկալի է որ մեր ազգի մէջ այդպիսի բազ-մաբիւր կանայք լինէին: 11 երեխայ է պահել եւ բոլորն էլ սե-րունդ ունեն, շարունակող ունեն:*

*Մարգուշան, մերձաւորների կարծիքով, Մեղրեանների ընտանիքը հարս է եկել այն ժամանակ, երբ դեռ աւանդութեանց կարգաւ սրբօրէն պահպանւում էին նահապետական սովորութիւնները: Դրանք կարգաւորում էին ծնողաց եւ զաւակների, ընտանիքի անդամների փոխյարաբերութիւնները: Ըստ այդ սովորոյթների՝ նորահարսը պիտի լինէր համեստութեան օրինակ. նա իրաւունք չունէր տղամարդկանց ներկայութեամբ խօսելու, նրանց հետ սեղան նստելու, ջուր խմելու, ուտելու եւ այլն: Այդ սահմանափակումներն առանձին կանայք պահպանում էին նաեւ տարիներ չարունակ, միշտ իրենց հարս զգալով: Հարսը բոլորից չուտ պիտի արթնանար եւ ճրխաւելով բակը մաքրէր, գնար անկն աղբիւրից ջուր բերէր, յարդարուն պահէր տան ներսոյթը: Եւ այդ վիճակը դառնում էր սովորական: Այսպէս անցնում էին տարիները, մինչեւ երեխաները մեծանում էին եւ հարսի հոգսը թեթեւացնում: **Բենիկ Ղուլեանի**. բնութագրմամբ՝ Մարգուշա մայրիկը հեզահամբոյր, մշտաժպիտ, աւանդապահ, Աստուածավախ եւ սրտացաւ հայ կնոջ պայծառ տիպար էր: Որպէս մայր՝ նահատակութեան աստիճան անձնազոհ, քչախօս, համեստ ու անչափ բարի էր: Ամուսնու՝ Զինաւոր հայրիկի խօսքը նրա համար օրէնք էր. Մարգուշա մայրիկը ընտանիքի մեծին վերաբերում էր որպէս անառարկելի հեղինակութեան եւ պատրաստ էր կատարել նրա ամէն խօսք ու պահանջ: Ամուսինն առնական, արդարամիտ խստութեամբ էր վարում իրենց մեծ, համերաշխ ու բազմանդամ գերդաստանի տնտեսութիւնը՝ առաքինութիւն ու հմայք սփռելով իր 11 ուստրերի եւ դուստրերի վրայ:*

Մեղրեան տանտիրուհին ո՛չ միայն բազմաթիւ հոգսերի տակ չէր ճկուել եւ ընկճուել, այլ ամենուր՝ տանը թէ դրսում մարդկանց աչքին երեւում էր պատչաճ հագուստ-կապուստով, մաքուր եւ պայծառ ու մշտաժպիտ կերպարանքով: 11 երեխայներն իրենք իրենց չեն մեծանում. յարատեւ ջանադրութիւնն է միայն ապահով նրանց բնականոն աճն ու դաստիարակութիւնը: Տաշտն ու մաղը հանգիստ չունէին տանը եւ թոնրի կրակը երբեք չէր հանգչում: Զարդա ցորենի նոր թխած հացի ախոր-

ժալի հոտը նրանց թաղից անպակաս էր: Եւ միշտ էլ Այան թոնրից նոր հանած թաժա հաց էր տալիս աղջիկներին, որ տանեն գիւղամէջ, խանութի պատի տակ արեւկող անող ծերերին տան: Նոյն սիրով էլ այդ հացից տալիս էին նաեւ անցնող-դարձողներին, թոնրատուն եկողներին:

*Կեցուվեան ընթացքին համընթաց մարդու հոգսերը աճում բազմանում են: Մեղրեան ընտանիքի հայրն ու մայրը որքան էլ իմաստուն եւ ազնաւուր լինէին՝ պիտի դժուարանային բազմանդամ ընտանիքը պահել Գիւլիստանի նման լեռնային գիւղում, որը զուրկ էր ընդարձակ վարելահողերից եւ կենսապահպան այլ աղբիւրներից: Մանաւանդ կոլտնտեսային ժամանակ ամենից լաւ եւ մեծագոյն մասը պետուվեանն էր, իսկ գիւղացիներին փաստօրէն չնչին բան էր մնում: Աղջիկներն էլ հասունացած էին, իւրաքանչիւրն ընտանիք պիտի կազմէր, օժիտ պիտի պատրաստէին, տղաներին նշանէին, տան, օջախի տէր դարձնէին, եւ այդ կարգի բազմաթիւ հոգսեր: Իսկ Մայրիկը բոլոր երեխաներին, որոնք են՝ **Արտուշը, Էմման, Իրինան, Ժենիան, Սոնիան, Ռաչիդը /կաուչէն/, Իւրիկը /թաւադ/, Շուրան, Շահէնը, Պետրոսը, Պօղոսը,** սիրում էր անխտիր: Վերջինս կոչուել է պապի անունով: **Պետրոս Մեղրեան.** Մենք աշխատանքային լաւ դաստիարակուվիւն ենք ստացել, որովհետեւ եթէ գիւղացին չաշխատի, չի կարող ձմեռը դուրս բերել: Հայրս անտառապահ էր, մենք՝ բոլոր երեխաներս աշխատում էինք: Փայտը անտառից էինք բերում: Հայրս մեզ վրայ դրել էր այսպիսի պարտադրուվիւն՝ օրը երկու իշաբեռ փայտ պիտի բերէինք: Սակայն մեր գործը միայն այդ չէր. ե՛ւ խոտ էինք հնձում, ե՛ւ կարտոֆիլի բերքը մշակում ու հաւաքում: Ե՛ւ տղայի գործ էինք անում, ե՛ւ աղջկայ, որովհետեւ մայրս յաճախ էր հիւանդանում:

Մայրիկը, սակայն, իւրայատուկ էր վերաբերում Շահէնին: Նա զաւակների մէջ ամենաընդունակն էր, աչքաբացը, ո՛չ միայն դպրոցի լաւագոյն սովորող եւ կարգապահ աշակերտն էր, այլեւ բարեկամ-հարազատների եւ ծանօթների նկատմամբ ուշադիր էր ու սրտագին: Շահէնի անմիջականուվիւնը, պար-

զուլթիւնն ու անբռնազբօսուլթիւնը նրան սիրելի էին դարձրել հարազատների, այլեւ՝ իր հետ առընչուողների համար առհասարակ: Շահէնը Մայրիկին շատ էր կապուած եւ մի առանձնակի քնքշուլթեամբ ու ջերմուլթեամբ էր վերաբերում նրան: Յետագայում էլ, երբ աշխատանքի բերումով շրջկենտրոնում էր ապրում, նրա ամէն այցելուլթիւն տօնակատարուլթեան էր վերածւում յատկապէս Մարգուշա այայի համար:

Երբ հայրը վերադառնում էր տուն եւ պիտի երեխաներին գործի դնէր, տեսնում էր Շահէնին գիրք ընթերցելիս եւ գործը միւս երեխաների վրայ էր մնում: Շահէնը շատ բան գիտէր. ե՛ւ ունէր գիտելիք, ե՛ւ կամք, ե՛ւ ինքնաճանաչողուլթիւն: Դժուարագոյն պահերին Շահէնի ինքնատիրապետումը կարելի է բացատրել իր բնական ընդունակուլթիւններով: Եւ դա է պատճառը, որ անուանարկումից եւ պետական սխալ ու անմարդկային մօտեցումից յետոյ Շահէնն ի զօրու եղաւ պահպանել ո՛չ միայն հոգու հաւասարակշիռ վիճակը, այլեւ ստեղծել պարտիզանական ջոկատ եւ գտնել պայքարի նոր չարունակուլթիւն:

*Այդ տասնամեակներին Ադրբեջանի արդիւնաբերական կենտրոնները դէպի իրենց էին քաշում գիւղի երիտասարդուլթեանը: Աւագ զաւակը՝ **Արտուշն** առաջինը գնաց Սումգայիթ, այնուհետեւ նրան հետեւեց **Կառլէնը**: Սումգայիթը, ինչպէս եւ Ադրբեջանի բոլոր բնակավայրերը՝ գիւղ թէ քաղաք, տներ, հանրային չէնքեր, գործարաններ հայ վարպետաց ձեռքով են կառուցուել, կեանքի կոչուել: Թուրքերն այս գործում ամենաչատը լինում էին ցեխարար եւ մատուցող: Եւ պատմուլթեան մէջ ինչպէս յաճախ է պատահել, ինչը եւ եղաւ Սումգայիթում, հայոց կառուցած տները գերեզմաններ դարձան կառուցողների համար:*

***Շուրիկը** (Ալեքսանդր) միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ Երեւանում կրթուլթիւնը չարունակել է Ոստիկանուլթեան դպրոցում եւ աշխատանքի անցել այդ ասպարէզում: Դրան զուգընթաց նա բարձրագոյն կրթուլթիւն է ստանում եւ յետագայում, նաեւ Արցախեան պատերազմի տարիներին ծառայում զինուորական ոստիկանուլթեան համակարգում: **Պետրոսը** եւս*

*միջնակարգն աւարտելուց յետոյ մասնագիտական կրթութիւն է ստանում Երեւանում, ծառայում բանակում, որից յետոյ բնա-կութիւն հաստատում Սիբիրի Կրասնոեարսկ քաղաքում, որ-տեղ էլ աշխատանքին զուգահեռ բարձրագոյն կրթութիւն է ստանում: Պատերազմի լուրն առնում է այդտեղ եւ պատրաստ-ւում է տուն դառնալու: Թուրքերի կողմից Շահէնին պատանդ վերցնելու լուրն ստանալով՝ նա անմիջապէս վերադառնում է հայրենիք եւ միանում Շահումեանի ինքնապաշտպաններին: Շարունակաբար լինելով Երեւան-Շահումեան օդային ճանա-պարհին, նա ստանձնում է նաեւ ջոկատի փոխհրամանատարի գործը: Նա եղբօր՝ Շահէնի պայքարի ընկերն էր, ինչպէս եւ կրտսեր եղբայրը՝ **Պօղոսը**:*

*Մեղրեաննների ընտանիքին ճանաչողները գիտեն Շահէնի կնոջ՝ **Ստելլայի** կարեւորութիւնն ամուսնու անհանգիստ, փո-թորկալից կեանքում: Մեղրեաննների հարսներից միայն Ստել-լան գիւղիստանցի չէ. նա Կարաչինարից է: Ազատագրական պատերազմի բոլոր տարիներին Ստելլան մշտապէս Շահէնի հետ է եղել, նրա կողքին: Իր հոգատարութեամբ ու գօտեպնդիչ խօսքով, սրտագին վերաբերմունքով, յաջողութիւնները հրճու-անքով ընդունող եւ դժուարութիւններն ու անախորժութիւն-ները անտրտունջ տանող արդարասէր հայ կնոջ օրինակ է: Ստելլան ծնուել եւ մեծացել է բարեկիրթ ընտանիքում: Հայրը՝ **Շիմշատ Ոսկանեանը** պատերազմի մասնակից է, ծառայող, մայ-րը՝ **Ֆենիա Աւանեանն** ուսուցչուհի է շրջանում՝ բարձրագոյն կրթութեամբ, մանկապարտէզի յարգուած տնօրէնն: Նա, որպէս բարձրակարգ մանկավարժ, Բենիկ Ղուլեանի հետ մասնակցել է Ադրբեջանի ուսուցիչների չորրորդ համագումարին:*

*Շահէնն ու Ստելլան ծանօթացել են դպրոցական տարի-ներին՝ քիմիայի շրջանային օլիմպիադայի օրերին: **Գրիչա Ղուլեանի** ղեկավարութեամբ երկուսն էլ յաղթող են դարձել եւ իրաւունք ստացել մասնակցելու հանրապետական օլիմ-պիադային:*

Աւարտելով դպրոցը, Շահէնն ուսումը շարունակում է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆա-

կուլտեատում, Ստելլան՝ Ճարտարագիտական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետում: Աւարտելով կրթութիւնը՝ Ստելլան քիմիկոս-ճարտարագէտի մասնագիտութեամբ աշխատում է երեւանում, իսկ Շահէնը վերադառնում է չրջան: Շահէնը Կարաչինարում կրկին հանդիպում է ամառային արձակուրդներին գիւղ վերադարձած Ստելլային: Այս հանդիպումը լինում է բախտորոշ եւ փոխադարձ սիրոյ զգացումը չարունակւում է ամուսնական սրբազան ուխտադրութեամբ: Նրանց պսակադրութիւնը կատարւում է 1977 թուականին՝ արցախեան ծէսով եւ աւանդութեամբ: Դա նոյնական նպատակներ եւ ճգտումներ ունեցող երկու անձանց միութիւն էր, որն անխաթար չարունակուեց մինչեւ վերջ: Նոյնիսկ մահն անզօր եղաւ խախտելու նրանց սրբազան կապը. Շահէնի զոհուելուց յետոյ Ստելլան պահպանեց հաւատարմութեան ուխտը: Այս ամէնի համար պահանջւում են հոգեկան կորով եւ կամքի անսասանութիւն, յաւիտենականը ժամանակաւորից զատորոշելու իմաստութիւն:

Գնալով չրջանում լարուածութիւնը մեծանում էր, իրավիճակը ծանրանում, սակայն Ստելլան գիւղը չլքեց, իր եւ երեխաների համար տաքուկ անկիւններ չփնտրեց: Շահէն Մեղրեանի կինը եւ երեխաները՝ ***Լուսինէն, Լիլիթը*** *եւ տակաւին պատանեակ* ***Զինաւորը*** *բռնագաղթի դառը օրերին բոլորի հետ միասին դուրս եկան չրջանից:*

Շահէնը Գիւլիստանի անտառներից պարբերաբար նամակներ էր գրում երեխաներին, որոնցից վերջինն այս էր. «Բարեւ ձեզ, սիրելի՛ բալիկներ: Հայրիկը շատ լաւ է զգում իրեն. միայն թէ շատ է կարօտում ձեզ: Մեզ մօտ ամէն ինչ նորմալ է: Շուտով կը սկսենք աշխատել Հայրենիքի ազատագրութեան ուղղութեամբ: Հիմա գործում ենք Մարտակերտի չրջանում: Գարնանն անպայման դպրոց էք յաճախելու. դրա համար պէտք են ամենօրեայ պարապմունքներ: Լուսինէ եւ Լիլիթ ջան, օգնեցէ՛ք Զինաւորին. մամային լսէ՛ք. ապային ու այային մի՛ մոռացէք: Շուտով կը հանդիպենք:

Ձեր Շահէն Մեղրեան

17.02. 93թ, Արտաւափ»:

Ստելլան եւ երեխաները սովոր էին Շահէնի տեւական բացակայութիւններին եւ յոյսով սպասում էին, թէ չուտով տեսնելու են նրան, սակայն նրանց հասաւ մահուան գոյժը:

Ստելլան հերոսի կնոջ արժանապատուութեամբ ընդունեց եւ արիաբար տարաւ ամուսնու մահը, քանզի գիտէր, որ պայքարի ելած պատերազմիկ հերոսների մեծ մասը չի հասնում յաղթանակի բերկրալից պահին: Նա այն հայուհիներից է, ովքեր ազգի երեսով չեն տալիս, որ իրենց ամուսինը զոհուել է, ովքեր իրենց զոհուած հարազատի գինը չեն պահանջում ինչ-ինչ արտօնութիւններ ստանալու ձեւով: Մի խօսքով, նա որեւէ կերպ չի չահարկում իր ամուսնու մահը եւ չի ձգտում նոյնիսկ նրան փառաբանել, որպէսզի փառաբանուած լինի նաեւ ինքը: Մեղրեաններն առհասարակ զուսպ եւ բարեկիրթ մարդիկ են նաեւ այս առումով, եւ քնաւ իրենց վիրաւորուած չեն զգում այն բանից, որ պատշաճ մակարդակով յարգուած չէ հերոսի յիշատակը եւ տակաւին ըստ արժանւոյն արտացոլուած ու գնահատուած չէ լեգենդար հայդուկապետի գործունէութիւնը գրքերով, գեղարուեստական կամ վաւերագրական ֆիլմերով, որ նրա մասին քիչ են խօսում, քան այլոց: Նրանք չեն էլ ուզում Շահէնին համեմատել որեւէ մէկին, քանզի հերոսներն անհամեմատելի են եւ բացառիկ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵՑՈՒԹԻՒՆԸ

Տարածաշրջանը ռուսական տիրապետութեան ժամանակաշրջանում, ինչպէս նշել ենք, սոցիալ-տնտեսական առաջընթաց է ապրում: Զարգանում են գաւառի տնտեսութիւնը, գիւղատնտեսութիւնը, առեւտուրը, լուսաւորութեան գործը: Շահումեանը եւս իր վրայ է կրում այդ մեծ երկրի զարգացման դրական եւ բացասական հետեւանքները: Առեւտրական կապեր են հաստատւում Շուշիի, Գանձակի եւ Թիֆլիսի հետ, ուր տեղափոխուել էին Արցախի մելիքները: Բարեկարգւում են ճանապարհները, կառուցւում կամուրջներ, եկեղեցիներ, դպրոցներ: Նոր եկեղեցիներ են կառուցւում Կարաչինար, Մնաչէն,

Խրխափոր, Բուզլուխ եւ այլ գիւղերում: Զարգացում է ապրում դպրոցական կեանքը, կառուցւում են նոր դպրոցներ: Գանձակի գաւառում հռչակւում են Գետաշէնի եւ Կարաչինարի ուսումնարանները:

*Ջնայած Գիւլիստանի մելիքութեան տարածքը Ռուսական կայսրութեան կազմի մէջ է մտել 19-րդ հարիւրամեակի սկզբին (նախ կնքուել է 1805 թուականի Քիւրակչայի պայմանագիրը, ապա 1813 թուականի հոկտեմբերի 12-ի Գիւլիստանի ռուս-պարսկական պայմանագրով վերջնականապէս հաստատուել է), ստեղծուած խաղաղ նոր իրադրութիւնը թէեւ նպաստել է տնտեսական կեանքի որոշ աշխուժացման եւ առաջընթացի, սակայն կրթական գործում էական փոփոխութիւն տեղի չի ունեցել: 1885 թուականին արքայական համարուող դպրոց է բացւում Կարաչինար գիւղում, ուր գալիս են սովորելու նաեւ հարեւան գիւղերից: Ցարիզմը որպէս բռնատիրութիւն, մշակութային եւ կրթական այնպիսի քաղաքականութիւն է վարում, որպէսզի իրեն ենթակայ ժողովուրդները չկարողանան գլուխ բարձրացնել: Ցարիզմը ոչ ռուս ժողովուրդների նկատմամբ վարում էր խտրական, շովինիստական քաղաքականութիւն, հալածանք էր կազմակերպում ազգային կրթութեան եւ մշակոյթի դէմ, փակում հայոց դպրոցները (1885-95 թթ., 1903 թ.), հալածանքի ենթարկում նաեւ Եկեղեցին: Հայութիւնը պայքարում է իր ազգային իրաւունքների համար եւ ցարական կառավարութիւնն ստիպուած է լինում Հայ Եկեղեցուն վերադարձնել իր կալուածքները եւ վերաբացել հայոց դպրոցները, նոյնիսկ աւելացնել դրանց թիւը: Դպրոցներ են բացւում Ներքին Շէնում, Վերին Շէնում, Մնաչէնում: Գիւլիստանում առաջին դպրոցը բացւում է Առաջին Աշխարհամարտի տարիներին, ուր ուսուցիչներ են աշխատել **Անդրէաս եւ Եղիշէ Յովասափեան** եղբայրները, նրանց հօրեղբայրը՝ քահանայ **Տէր Կորիւնը**:*

Մինչեւ 1934 թուականը գիւղի դպրոցը եղել է հնգամեայ: Շրջանի դպրոցները, այդ թւում եւ Կարաչինարը, եօթնամեայ էին: Միջնակարգ կրթութիւն կարելի էր ձեռք բերել միայն Գանձակում, Գետաշէնում, Շուշիում եւ Երեւանում:

1935 թուականին Գիւլիստանի դպրոցը վեր է ածւում եօթնամեայի:

Գիւղի երեխաները բացի ուսումից, նոյնիսկ նախադպրոցական տարիներից ընդգրկւում էին տնային տնտեսութեան գործերի մէջ, իսկ քիչ մեծանալուց յետոյ՝ նաեւ կոլտնտեսութիւնում: Որեւէ գիւղացի երեխայ հնարաւորութիւն չունէր զբաղուելու միայն ուսմամբ: Այդ պատճառով էլ բացակայութիւններ շատ էին լինում: Սակայն դրա փոխարէն երեխաները ձեռք էին բերում աշխատանքային փորձ եւ դաստիարակութիւն, որը նոյնքան կարեւոր է կենսական պայքարում: Երեխաների սոցիալիզացիան, նրանց կեանք մտնելն իրականանում է այսպիսով իրենց ծնողներին օգնելու եղանակով: Նրանք չփւում են բնութեանը, ճանաչւում հայրենի աշխարհը, մաքրւում է նրանց զգացմունքային աշխարհը, պաշտում են բնութիւնը եւ ձեռք բերում չրջահայեացութիւն, դիտողականութիւն:

Շահէն Մեղրեանը *Գիւլիստանի դպրոցի առաջին դասարան է ընդունուել 1959 թուականին: Ուսման գերազանցիկ էր՝ առանձնակի հակուածութեամբ առ հումանիտար առարկաները, յատկապէս՝ Հայոց պատմութիւնը եւ Հայ գրականութիւնը: Սիրում էր գեղարուեստական գրականութիւնը եւ կարդացել էր դպրոցի եւ գիւղի գրադարանի գրքերը: Աչքի է ընկել նաեւ հանրային գործերում: Եղել է դպրոցի կոմերիտական կոմիտէի քարտուղար, աշակերտական կոմիտէի նախագահ: Իր ղեկավարած աշակերտական արտադրական բրիգադը չրջանում ճանաչուել է լաւագոյնը, որի համար նրան զբոսաչրջային ուղեգրով ուղարկում են Մոսկուա:*

Շահէն Մեղրեանի վրայ իր դրական ներգործութիւնն է ունեցել Հայոց պատմութեան ուսուցիչ ***Բենիկ Ղուլեանը****: Նա այդ տասնամեակների եզակի մտաւորականներից էր, ովքեր բարձրագոյն կրթութիւն են ստացել ո՛չ թէ Ադրբեջանում, այլ Երեւանում՝ Մանկավարժական ինստիտուտում, որտեղից Բենիկ Ղուլեանը Գիւլիստան է վերադառնում ազգային արժէքներով աշակերտներին դաստիարակելու ձգտումով, որ պիտի անխուսափելիօրէն իր բարի պտուղները տար: Իր մասին*

համեստ նշումներ անելուց յետոյ Բենիկ Ղուլեանը կա-
*րեւորում է Շահէնի դասղեկ **Մեժլում Բալայեանի** դերը:*
Շահէնի առաջին ուսուցիչը բնաչխարհի սիրահար, անուանի
որսորդ էր, որը մանկութիւնից բաց գրքի նման կարդում էր
հայրենի բնութիւնը, քաջածանօթ էր չրջակայ սրբավայրերին,
որոնք նրա համար ուխտատեղի էին: Շահէնը հէնց առաջին
դասարանից իր վառ անհատականութեամբ, չնորհներով եւ
բնաւորութեամբ գրաւել է ուսուցչի ուշադրութիւնը: Սիրուած
մանկավարժը աշակերտների հետ յաճախ լինում էր չրջակայ
անտառներում, կազմակերպում էր ուխտագնաց ուղեւորու-
թիւններ դէպի հնավայրեր եւ սրբավայրեր, որոնց ընթացքին
աշակերտները չատ բան էին սովորում ազգային պատմու-
թիւնից, համտանում էին խոր անտառներում կողմնորոշուելու
արուեստին, կամայ թէ ակամայ տոգորւում էին հայրենա-
պաշտութեամբ: Նրանց անհագ հետաքրքրասիրութիւնն իր
առատ սնունդն էր գտնում տեղանքում գոյութիւն ունեցող
բերդերի, վանքերի եւ այլ չինութեանց հետ ծանօթանալիս:
*Ահա այդօրինակ ուխտավայրերից է **Եղիչէ Առաքեալի վանքը**,*
որը հինաւուրց կառոյց է եւ վերանորոգուել է մի քանի ան-
*գամ: Ըստ **Մովսէս Կաղանկատուացու**, **Եղիչէն** Աղուանքում*
քրիստոնէական լոյսը տարածող եւ արմատաւորող առաջին
առաքեալն է եղել: Ըստ պատմիչի՝ իր հետ Սուրբ խաչ է ունե-
ցել: Նկատելով, որ իրեն հետապնդում են, խաչը թաղել է
Գիսում: Ուտիք նահանգում այս աւանը եղել է Հայոց
Արեւելից կողմանց քրիստոնէական առաջին քարոզավայրը,
իսկ այդտեղի եկեղեցին պաշտամունքային առաջին կառոյցն է
համարուել ամբողջ Արեւելեան Անդրկովկասում՝ կառուցուած
Եղիչէ Առաքեալի աճիւնի վրայ: Եղիչէ Առաքեալը նահատա-
*կուել է **Գլխոյ կամ Հոռեկայ** վանքում: Հոռեկայ վանքը*
Հայաստանի քրիստոնէութեան հինաւուրց տաճարներից է եւ
եթէ ի միտ առնենք Եղիչէ Առաքեալի այդտեղ լինելու հանգա-
մանքը, դա պիտի համարուի առնուազն 5-րդ դարի կառոյց,
*եթէ ոչ աւելի հին, թէեւ **Րաֆֆին** նրա կառուցման թուականը*
համարում է 728 թուականը: Կառոյցի վիմագիր արձա-

նագրութեան համաձայն այն վերակառուցուել է 1229 թուականին:

Յետագային Հոռեկայ վանքից Եղիշէ Առաքեալի նշխարները տեղափոխուել են ***Ջրվշտիկ վանքը****, որն այդուհետեւ կոչուել է Եղիշէ Առաքեալի անուամբ: Այս վանքը գտնւում է մի լեռնաձորի դժուարամատչելի վայրում, որի չորս կողմը բարձրանում են սեպացած անտառապատ գագաթներ: Վանք տանող արահետներն անցնում են անտառի միջով, խոր ձորի եզերքով ձգուող ժայռերի վրայով, որտեղով մինչ այժմ որսորդներն են անցնում:*

Րաֆֆին *այց անելով վանքին՝ յետագայում գրել է. «Մեր նախնիները մի առանձին հանճար են ունեցել վանքերը կառուցելու այնպիսի խուլ, դժուարամատչելի տեղերում, որ հա՛մ ժամանակի ասպատակութիւններից ազատ պահեն, հա՛մ ուխտաւորներին տանջեն, որ նրանց հոգիներին ապաշխարանք լինի»:*

Վանքասարի հարաւային կողմը վիմահերձ է, խոր անդունդի տակով հոսում է Մատաղիս գետը, որի ջրերի աղմուկից գուցէ ծագել է Ջրվշտիկ անունը: Միւս երեք կողմերից վանքն ամրացուած է եղել հաստ պարիսպներով, որոնց մի մասը պահպանւում է ցայսօր: Տեղիս առաջին չինութեան հիմնադրումը աւանդաբար կապում են ***Վաչագան Բարեպաշտի*** *անուան հետ (5-րդ դ.): Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գաւիթից, եօթ մատուռներից, հանգստարանից եւ այլ շինութիւններից: Գաւիթը կառուցուել է 1284 թուականին: Վանքի մատուռներում թաղուած են* ***Վաչագան Բարեպաշտ թագաւորը****, մեծչէնցի ծայրագոյն վարդապետ, հռչակաւոր* ***Դալի Մահրասային****:*

Բենիկ Ղուլեանն *աշակերտների հետ այս սրբավայր ուխտագնացութեան մասին անկեղծ ոգեշնչումով է գրում. «Վանքից ոչ հեռու, մի փոքրիկ վճիտ աղբիւր կայ, որի սառնորակ ջուրը վայելելով, խարոյկի շուրջը բոլորած, գիշերում էին գիւլիստանցի աշակերտները, երբ այցելում էին Եղիշէ Առաքեալ:*

Վանքին մերձ գիշերելը ունէր մի առանձին հմայք: Բոցկլտա-

ցող խարոյկը, գիշերային անտառի հեքիաթային գեղեցկութիւնը, դարաւոր անտառի հազարաձայն երաժշտութիւնը, բազմազան հաւքերի գիշերային համերգը, կխտարների ու եղնիկների մնչիւնը, կապուտակ երկնքում փայլփլող միլիոնաւոր աստղերը, **Վաչագան թագաւորի եւ Անահիտ թագուհու** հեքիաթը, սուրբ վայրի կախարդական գոյութեան մասին պատմութիւններն այն չարչարանքների վարձատրութիւնն էին, որ աշակերտները կրել էին այստեղ հասնելիս»:

*Երիցմանկանց վանք եւս գիշերակաց էին գնում. մէկ օրուայ ընթացքին հնարաւոր չէր գնալ այնտեղ, մատաղ անել եւ ետ վերադառնալ: Գիշերը մնում էին տեղում կամ **Արտատափում**: **Ամենափրկիչ** անապատից անտառային արահետն անընդհատ վեր է բարձրանում եւ հասնելով ջրբաժան լեռների բարձունքներին՝ կտրուկ իջնում է դէպի հարաւակողմը գտնուող Թրղէ գետը՝ Թարթառի վտակը: Այդ բարձունքում է գտնւում **Արտատափը**՝ հայդուկների յենակէտը, որտեղից **Շահէն Մեղրեանը** վերջին նամակն է ուղարկել երեխաներին ու կնոջը՝ **Ստեփային**: Արտատափից ճանապարհը շարունակւում է դէպի **Երիցմանկաց վանքը**, որը 92-ի ցուրտ ձմռանը պիտի ապաստանէր Շահէնի ջոկատի տղաներին: Եւ այստեղ էլ չենք կարող համաձայն չլինել յարգարժան ուսուցչի հետ, որ վանքի տաք պատերը աւելի են բորբոքել մարտիկների հոգու կրակը՝ նրանց դարձնելով աւելի վճռական եւ լաւատես.*

«Ինչ տրամադրութեամբ էլ մարդ այցելում է **Երիցմանկանց վանքը**, հոգեպէս վերափոխւում է նա, մարդու եւ բնութեան կախարդիչ արարումից զմայլուած: Դեռ հեռուից հիանալի տեսարան է բացւում այցելուի առջ միանգամից թօթափելով նրա հոգնածութիւնը: Շրջակայ տարածուն լեռների մուգ կանաչ ծովում ճերմակին է տալիս վեհաչուք վանքը: Կարծես երկարատեւ դեգերումից յետոյ մարդ հասնի իր փափագելի Տունը»: *Հետաքրքրական է, որ ճգնարանը Ստալինեան բռնապետութեան տարիներին եղել է տաժանավայր կալանաւորների համար: Պահպանուել է կառուցողի անունը.* «Շինաւղ եւ վարպետ եկեղեցոյս **ուստա Սարգիսն** յիշեցէք ի Քրիստոս»:

*Անմատչելի վայրում գտնուող այս վանքը եղել է Աղուանից կաթողիկոսութեան հակաթոռ նստավայրը: **Աղուանից կաթողիկոսութիւնը սկիզբ է առել Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի թոռ Սուրբ Գրիգորիսի կաթողիկոսութեամբ (4-րդ դար) եւ չարունակուել է մինչեւ 1828 թուականը**: Կաթողիկոսական նստավայրը նախ եղել է **Ամարասը** եւ ապա այն տեղափոխուել է **Գանձասարի վանք**: Ամբողջ խաչէնը եղել է **Հասան-Ջալալեան** իշխանական տոհմի ժառանգական կալուածքը: 1651 թուականին ոմն **Սիմոն**, ծննդով խոտորաչէնցի, որը քահանայի որդի էր եւ ոչ Հասան-Ջալալեան տոհմից, որոնց ճեռքին էր գտնուում նաեւ հոգեւոր իշխանութիւնը, հիմնում է երիցմանկանց անուամբ այս վանքը եւ ինքնահռչակ եղանակով յորջորջում իրեն Աղուանքի կաթողիկոս: Երիցմանկանց կաթողիկոսութիւնը տեւել է 1651 թուականից մինչեւ 1800 թուականը: Դա ազգային անկախութեան համար իրենց մելիքների զլխաւորութեամբ թուրքական եւ պարսկական բռնակալութեան դէմ ոտքի ելած Արցախի հայութեան պայքարի ժամանակաշրջանն էր: Երիցմանկանց կաթողիկոսութիւնն իր դիրքորոշմամբ եւ գործունէութեամբ պառակտում էր առաջ բերում հայ մելիքների միաբան գործունէութեան մէջ, որը ռազմաքաղաքական պառակտման հետեւանք է: Այս իմաստով առանձնակի յանցագործ արարք կատարեց Երիցմանկանց կաթողիկոս օծուած, բայց Գանձասարում ապօրինաբար բազմած **Իսրայէլ** հոգեւորական կոչուածը, որը ոչ միայն սպանել տուեց Գանձասարի կաթողիկոս **Յովհաննէսին**, այլեւ սպանեց այն մեծ գործը, որ Ղարաբաղի մելիքներն էին սկսել: Ազգային չիտակ եւ անարատ ճանապարհից խոտորած եւ չեղած հոգեւորականի ծննդավայր Խոտորաչէնի աւերակները գտնուում են Արտատափի եւ Երիցմանկանց վանքի միջեւ ընկած տարածքում:*

*Շրջակայ սրբավայրերից **Նապատը** գտնուում է գիւղից մէկ ու կէս կիլոմետր դէպի հարաւ-արեւմուտք, որի պաշտօնական անունը **Ամենափրկիչ** է: Եկեղեցին բաւականին մեծ չինութիւն է (23x10 մ), նեղ պատուհաններով, երկու խորանով եւ երկու խորհրդարանով (հանդիսարան, ժողովարան): Վանքի մօտ*

գտնուող արձանագրուած վիմաքարերն ու տապանաքարերը, որոնց թւում՝ **Աբրահամ Սպարապետի** շիրմաքարը, խորհրդային տարիներին գործածուել են իբրեւ անասնագոմերի կառուցման շինաքար: Այսինքն՝ թուրքի գործերը չարունակել են բոլշեւիկները: Անապատը եղել է ձեռագրերի ընդօրինակման կենտրոն: Դրա վերաբերեալ կայ Գիւլիստանցի **գրիչ Յակոբի** ընդօրինակած «Մաշտոցի» յիշատակարանում (1466 թ.): Եկեղեցուց 20-25 մետր հեռաւորութեան վրայ գտնւում է կանգուն մատուռ-ուխտատեղի: Այդտեղ է գտնւում Ձգնաւորի գերեզմանը, որտեղ գիւղացիները կրակ էին վառում կամ ջուր լցնում՝ խնդրելով կամ արեւոտ օր, կամ անձրեւ (խոնաւութեան եւ երաշտի ժամանակները):

Գիւղի եկեղեցում դարեր շարունակ պահուել է գրչագիր Աւետարան, որը տեսել է նաեւ **Րաֆֆին** եւ նկարագրել այն: Այդ Աւետարանն ի վերջոյ այս պատերազմի ժամանակ Գիւլիստանցի գեղջկուհու ջանքերով դուրս է բերուել գրաւեալ բնակավայրից եւ հասցուել է ապահով տեղ: Դա երկար ժամանակ պահւում էր **Բէգլարանց Մամաչ** մայրիկի տանը, որի չնորհիւ այդ տունը գրեթէ վերածուել է ուխտատեղիի: Մամաչ մայրիկը գիւղը թուրքերի զաւթումից յետոյ չի լքում այն եւ նրա հարսը՝ **Մեղրեան Սեդան** է Աւետարանը տնից դուրս բերում: Բռնագաղթից յետոյ Աբովեան քաղաքում **Բենիկ Ղուլեանին** յանձնում է. «Տնից դուրս գալիս «Ծեր Աւետարանը» դրի խուրջինի մի աչքում, միւսում էլ՝ մի քիչ ուտելիք, խուրջինն ուսս առայ ու տնից հեռացայ»:

Բենիկ Ղուլեանը իր յուշագրքում նշում է այլ սրբավայրերի անուններ, որոնց մենք չենք կարող անդրադառնալ:

Պատերազմի տարիներին 1010 բնակիչ ունեցող Գիւլիստանից պատերազմ են մեկնել 180 հոգի: Նրանցից զոհուել են 88-ը: Նրանց յիշատակը յարգելու համար գիւղի բնակչութիւնը եւ այլուր ապրող գիւլիստանցիները գիւղում հայկական բազալտից կոթող կանգնեցրեցին, որի վրայ գրուել են բոլոր զոհուածների եւ անյայտ կորածների անունները: Դպրոցում ստեղծուեց մարտական փառքի անկիւն, որը թանգարանային

*սկզբունքով էր, լուսանկարներ, կենսագրական ալբոմներ՝ նուիրուած ե՛ւ զոհեալներին, ե՛ւ պատերազմից վերադարձածներին: Մի առանձին ալբոմ էր յատկացուել Սովետական Միութեան հերոս **Գարեգին Շեգիի Բալայեանին**: Այդ փաստանիւթերը եւ նկարները օգտագործւում էին դասերի ժամանակ:*

*Մեղրեաննների փոքրաքանակ ազգից (այն ժամանակ գիւղում կային վեց ընտանիք), բանակ էին զօրակոչուել տասը հոգի: Նրանցից եօթը՝ **Իչխան, Մելսակ, Վերդի եղբայրները, Ֆրիդոնը** (Շահէնի հօրեղբայրը), **Գարեգինը** (մեծ հօրեղբօր որդին), **Սերգին եւ Մայիլը** զոհուել կամ անյայտ կորել են պատերազմում: Վերադարձել են **Բենիկը, Խաչատուրը եւ Վլադիմիրը** (Շահէնի հետ նահատակուած պատանի **Հայկի** պապը): Եւ այդպիսի հազուագիւտ փրկուածներն են ենթարկուել դաժան բռնագաղթի:*

***Շահէն Մեղրեանի** ուսանողական տարիների վրայ պատուհանը բացուել է ընկերոջ՝ **Կարէն Գէորգեանի** հետ մեր հարցազրոյցով:*

Աւարտելով միջնակարգ դպրոցը՝ Շահէն Մեղրեանը 1970 թուականին ընդունուում է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը:

Շահէնն երեւանաբնակ իր ընկերոջը՝ Կարէնին ծանօթացել է նոյն թուականին, երբ սովորում էին նշեալ ֆակուլտետի առաջին կուրսում: Հէնց առաջին օրուանից մտերմացան եւ նստում էին իրար մօտ: Նրանք ծնուել եւ մեծացել են տարբեր բնակլիմայական եւ մշակութային միջավայրում, սակայն դա արտաքին հանգամանք է. նրանց մտերմութիւնը չարունակուել է մինչեւ Շահէնի մարտիրոսուելը: Շահէնի համար գիւղացի լինելու բարդոյթ չի եղել.. Նա կարողանում էր արագօրէն յարմարուել ամէն նոր կացութեան: Կարէնի հետ միասին էին եւ որեւէ կերպ չէր զգացւում, որ ինքը մայրաքաղաքի բնակիչ չի եղել. քաղաքային ապրելակերպն ու կենցաղի իւրայատկութիւնները ըմբռում էր արագօրէն:

Շահէնն այլ ընկերներ էլ ունէր, որոնց սիրում էր, սակայն

մտերիմ էր Կարէնի եւ **Գագիկ Բալասանեանի** *հետ: Իրական կեանքում հնարաւոր չէ չատերի հետ իսկական կապ պահպանել. մարդու ժամանակը քիչ է: «Մեր յարաբերութիւնները շատ հետաքրքրական եւ իւրօրինակ էին, շատ անկեղծ, եւ չի եղել մի պահ, մի դէպք, երբ մեզանից մէկը որեւէ հարցում վիրաւորած կամ անյարմար զգացած լինի: Մեր փոխըմբռնումն այնպիսի մակարդակի էր, որ նոյնիսկ փոքր վրիպումներ չէին կարող լինել»:*

Որպէս ուսանող՝ Շահէնը փայլուն էր, քանզի տաղանդաւոր էր, արագօրէն ընկալում էր, հեշտութեամբ իւրացնում, հիանալի մտապահում՝ ոչ թէ նոյնութեամբ պատասխանում՝ բարձր թուանշաններ ստանալու միտումով, այլ իսկապէս ճանաչելու, իմանալու: Եթէ պէտք էր որեւէ առարկայից «գերազանց» ստանալ, խնդիր չէր. ստանում էին ե՛ւ ինքը, ե՛ւ Կարէնը, սակայն ո՛չ ինքը, ո՛չ Կարէնը եսասիրական սկզբունքով «գերազանցներ» չեն ստացել: Հոգով եւ հոգեբանօրէն աւելի ազատ էին, եւ կային առարկաներ, որոնցից «գերազանց» ստանալն իրենց համար վիրաւորական կը լինէր:

*Յումորը նրանցից անբաժան է եղել: «Քաղաքացիական իրաւունք» առարկայի քննութեան օրը, առաւօտեան գնում են Յաղթանակ զբօսայգի: Ուտելիք, խմիչք վերցրած՝ նաւակների վրայ զբօսնելով թեթեւ նախաճաշում են եւ սկսում պարապել: Այդպէս «կերած-խմած» վիճակում ներկայանում են քննութեան: Գնում են՝ տեսնում դասախօսը պայուսակը թեւի տակ արդէն դուրս է գալիս: «***Ընկեր Ղուկասեան***, կը ներէք, մի փոքր ուշացել ենք, թոյլ տուէք մտնենք քննութեան...»: Ղուկասեանն էլ իր նուրբ զգացողութեամբ տղաների խմածի հոտն առնում է: Առհասարակ դասախօսներն այս ուսանողներին շատ էին սիրում նրա ուրախ, բարի բնաւորութեան համար, եւ Ղուկասեանն ասում է. «Ոչինչ, տղաներ, ուշացել էք՝ բան չկայ, չուտ եկէք, տոմս քաշէք»: Տոմս են քաշում եւ Շահէնը մօտենում է դասախօսին. «Կարելի՞ է միանգամից պատասխանել»: Ղուկասեանը լուցկին վառում է եւ մօտեցնում Շահէնի դէմքին՝ ստուգելու, թէ չի՞ բռնկուի արդեօք սպիրտը: Կատա-*

կով դասախօսը հասկացնում է, որ իրենց խմածի հոտը դեռ չի անցել: Շահէնը փայլուն պատասխանում է, եւ եթէ չլինէր օղու այդ թեթեւ հոտը՝ անպայման «գերազանց» կը ստանար: Երկուսին էլ «լաւ» գնահատական է նշանակում եւ ասում, թէ յարգում է իրենց՝ կեանքին մօտ լինելու համար:

Կարէնը գիւղից պատկերացում չունէր: Երբ նա բարձր դասարանում ամուսնանում է, կնոջ եւ Շահէնի հետ միասին բազմիցս մեկնում են Շահումեան, լինում Գիւլիստանում եւ հնարաւորութիւն ունենում հիանալու տեղիս բնութեամբ, ճանաչելու ժողովրդին, Շահէնենց ընտանիքին, որով աւելի է խորանում յարգանքը տեղիս ժողովրդի եւ Շահէնի նկատմամբ: Գիւղական բնակչութեանն առհասարակ յարգում է, որովհետեւ այնտեղ համեմատաբար մաքուր եւ անարատ են մնացել:

*Նրանց ընկերութեան, չփումների շառաւիղը շատ լայն էր: Պէտք է յիշատակել Շահէնենց կնքահօրը՝ **Գագիկ Բալասանեանին**, որ հիմա բնակւում է ԱՄՆ-ում: Պատերազմի տարիներին գործի է դրուել Շահէնի չրջապատի կարողութիւնը: Կարէնը եւ իրենց չրջապատը ազատագրական պայքարի ելած շահումեանցիներին լուրջ օգնութիւն են ցուցաբերել:* «Ես անկեղծօրէն պիտի ասեմ, որ անձամբ իմ ջանքերս, գործերը, որ արել եմ, առաւել մեծ չափով կապուած են այն հանգամանքի հետ, որ Շահումեանում առաջնորդը եղել է Շահէնը: Եթէ մէկ ուրիշը լինէր, բնականաբար իմ գործունէութիւնը խթանող գործօն չէր լինի, եւ նոր դրանից յետոյ պիտի նշեմ յանուն մեր ժողովրդի, յանուն մեր ազգի դրդիչը»:

«Երբ ընկերների ջանքերի գնով Տէրեանի վրայ բնակարան յատկացրին, ինքը դեռ չէր եղել այդ տանը: Կինը, երեխաներն այստեղ էին, նոր էին եկել, եւ էլի ուղղաթիռից իջաւ, եկաւ մեր տուն ու ասաց. *«Կարէ՛ն, ուզում եմ առաջին անգամ այդ տուն մտնեմ: Միասին պիտի մտնենք»:* Եւ գնացինք Բալասանեան Գագիկի, իր եւ իմ տիկնանց հետ: Մի բան վերցրինք առիթը նշանաւորելու համար եւ, մտանք տուն»:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

1975 թուականին աւարտեց համալսարանը: Ուսումնառութեան տարիներին հիմնաւոր գիտելիքներ եւ մեծ փորձ ձեռք բերած ***Շահէն Մեղրեանն*** *ունէր ընկերական մեծ շրջապատ եւ կարող էր ուսումը շարունակել համալսարանի ասպիրանտուրայում, տեղաւորուել պաշտօնի պետական կառոյցներում եւ արագօրէն լուծել իր ընտանիքի եւ տնտեսութեան հարցերը: Սակայն ասաց.* «Չէ՛, ես պէտք եմ իմ շրջանին, իմ գիւղին»:

Գաղտնիք չէ, որ այդ տասնամեակներին Ադրբեջանի վարած քաղաքականութիւնը հայոց հողերից նրա իսկական տէրերին հեռացնելն էր: Այդ նպատակով Ադրբեջանի տարածքի հայութեանն ազգային կեցութեամբ ապրելու հնարաւորութիւնից զրկելու ծրագիրը էր իրականացւում: Արդէն նշել ենք, որ Շահէնի երկու եղբայրները՝ ***Իւրան եւ Արտուշը*** *ստիպուած էին թողնել հայրենի գիւղը եւ ընտանիքի նիւթական ապահովութեան համար բնակուել Սումգայիթում: Իսկ Շահէնը երեւանում հայութեան ազգային կենսարար մթնոլորտում հինգ տարիներ ապրելով՝ զգում էր, որ շրջան մեկնելը եւ այնտեղ մնալը իր առաքելութիւնն է: Նա կոչուած էր շրջանը հզօրացնելու տնտեսապէս եւ վերականգնելու ազգային կորչող արժէքները, ապահովելու հաւատքի եւ կրթութեան, եկեղեցու եւ ազգային արժանապատուութեան համար դարաւոր պայքարում հայոց յաղթանակը եւ հարազատ հողում հաստատելու անկախ պետականութիւն: Շահէնը զգում էր, որ իր մէջ մեծ ուժեր կան այդ գործին նուիրաբերելու, որոնք նրան մղում էին դէպի հայրենի լեռներ, դէպի Մռաւ՝ հեռացնելով մայրաքաղաքի փափուկ եւ քաղքենի միջավայրից: Շահումեանում էին ապրում նրա հարազատները՝ ծնողները, եղբայրները, քոյրերը, բարեկամները, մանկական եւ պատանեկան տարիների ընկերութիւնը: Նա այնտեղ է գնում մասնագիտական աշխատանք կատարելու:*

Շահէնը կարճ ժամանակում յաջողութիւններ է ունենում Շահումեանում: Նա այն հազուագիւտ մարդկանցից էր, ովքեր

*կարողանում են ժամանակաւորը տարբերել յաւիտենականից, սոցիալական համակարգը՝ ազգային թագաւորութիւնից, արտաքինը՝ ներքինից: Կարծես հրաշքով՝ Շահէնին է անցել մելիքական հզօր, հայրենասէր եւ աստուածապաշտ ոգին: Ահա այս ամուր հիմքով նա առաջին օրուանից աշխատում էր անձնուրաց կերպով եւ ազգաշահ նպատակադրութեամբ, եւ բնական է, որ այդպիսի աշխատանքն աննկատ մնալ չէր կարող: Ճանաչեցին նրան որպէս խոստումնալից եւ լուրջ տնտեսագէտ: Թէ՛ Գիւլիստանի եւ թէ՛ շրջանի ղեկավարութիւնը յարգում էր նրան եւ հաշուի առնում նրա կարծիքը: Որպէս լաւ տնտեսագէտ՝ ճանաչում է գտնում նաեւ Բաքւում: Այդ տարիներին Շահէնն Ադրբեջանի երիտասարդութեան պատուիրակութեան կազմում մեկնում է Բուլղարիա: Պատուիրակութիւնը լինում է նաեւ Պլովդիւ քաղաքում, ուր **Անդրանիկ Զօրավարի** յուշարձանն էր: Շահէնը ծածուկ պահելով կիսանդրու ազգային եւ անուանական պատկանելութիւնը՝ խմբին առաջարկում է նկարուել յուշարձանի մօտ: Թուրքերն առանց խմանալու՝ ուրախութեամբ համաձայնում են եւ երբ պատուիրակութիւնը վերադառնում է Բաքու՝ բացւում է իրողութիւնը եւ յայտնի է դառնում, թէ ում արձանի տակ են նկարուել: Եւ այդ իրողութիւնն առիթ է դառնում, որպէսզի Բաքւում նրան անուանեն Դաշնակ Շահէն:*

Շահէնն այդ դէպքի մասին պատմում էր բաւականութեամբ, իւրայատուկ յումորով եւ ժպտուն աչքերը կկոցած՝ լիաթոք ծիծաղով:

Շահումեանում հաշուի առան Շահէնի արգասաւոր եւ նուիրական աշխատանքը, նրա կազմակերպելու կարողութիւնը, չփման շնորհը եւ անձնական այլեւայլ առաքինութիւնները, որ մի արտայայտութեամբ անուանւում է անհատական հմայք, եւ նրան կուսշրջկոմը երաշխաւորեց որպէս շրջանի կոմերիտմիութեան առաջին քարտուղար:

Կոմերիտմիութեան քարտուղարը ծանրաբեռն էր հանրային պարտականութիւններով: Այս աշխատանքի մէջ առկայ էին նաեւ համակարգով թելադրուած եւ ունայնութիւն առաջ բե-

րող արհեստական ու կեղծ պահեր, հաղորդակցման պարտադիր կարծրատիպեր եւ նոյնիսկ որոշ ծիսականութիւն, որը փաստօրէն անհիմն էր, գաղափարազուրկ: Շահէնն իր մարդկային անմիջականութեամբ եւ գրաւիչ բնաւորութեամբ կարողանում էր թափանցել թէ՛ մարդկանց եւ թէ՛ իր գործի բուն էութեան մէջ եւ լիովին ձերբազատ լինել կեղծ մշակոյթի այդ կաղապարներից: Այդ տասնամեակներին հէնց կոմերիտական աշխատանքն էր հնարաւորութիւն տալիս դուրս գալու ասպարէզ եւ չփուելու մարդկանց հետ, աշխատելու եւ կազմակերպելու հանրային կեցութիւնը որոշակի օրէնքներով, որոնց ճեւական չրջանակներից ներս էին թափանցում դրական բովանդակութիւն եւ ոգի: Նոր պաշտօնում Շահէնը սկսեց աշխատել եռանդով եւ նուիրուածութեամբ: Նրա համար այսուհետ լայն հնարաւորութիւն էր ստեղծուել չփուելու երիտասարդութեան հետ, լինելու արտադրական բրիգադներում, դպրոցներում, մշակութային օջախներում: Կազմակերպում էր տօնահանդէսներ, փառատօներ, երգի հանդէսներ, մարզական մրցումներ եւ այլ միջոցառումներ, հանդիպումներ չրջանի առաջաւոր մարդկանց հետ: Համեմատաբար փոքր բնակավայրերում մարդն ափի մէջ է եւ հեչտ է ճանաչուում: Նա այդ մի քանի տարուայ մէջ կարողացաւ ծաւալել չրջանի երիտասարդութեան ռազմահայրենասիրական դաստիարակութեան գործը, դպրոցականներին, երիտասարդութեանը մղել նուիրուելու կենսական ճչմարիտ նպատակների:

*Շահէնը կարողանում է իր գործունէութեան ծաւալն ու չրջանակները ընդարձակել: Նա կապեր էր հաստատել նոյնիսկ Ուկրաինայի եւ Ռուսաստանի մի քանի բնակավայրերի հետ, որտեղ կռուել եւ նահատակուել են խիզախ հայորդիներ, որհրդային Միութեան Հերոսներ՝ Գուարդիայի կապիտան **Գարեգին Բալայեանը** եւ աւագ լեյտենանտ **Սերգէյ Օհանեանը**:*

Գարեգին Բալայեանը գիւղիստանցի էր եւ խորհրդային միակ Հերոսը Շահումեանի չրջանից: Շահէն Մեղրեանի նախաձեռնութեամբ կապ է ստեղծուում Ուկրաինայի

*Պիտերասլաւլ քաղաքի հետ, ուր հուղարկաւորուած էր համա-գիւղացի հերոսը: Հերոսի եղբայր **Բախչի Բալայեանը** մեկնում է Ուկրաինա եւ գտնում են եղբօր գերեզմանը, որը մինչ այդ անյայտ էր իրենց:*

Շահէնն Մեղրեանի հրաւէրով հերոսի ծննդավայր այցելեցին Պիտերասլաւլի պատուիրակները եւ չրջանի երկրագիտական թանգարան բերուեցին Գարեգին Բալայեանին պատկանող անձնական իրեր՝ սաղաւարտը, քարտէզատուփը եւ այլն:

*Շահէնի հրաւէրով չրջանում եղան նաեւ Դոնի Ռոստովի մերձակայ Միասնիկեանի չրջանի ներկայացուցիչները, այդտեղ զոհուած խորհրդային Միութեան Հերոս **Սերգէյ Օհանեանի** պատուին: Նա իր 16 հրետանաւոր զինակիցների հետ զոհուել է Մեծ Սոլա հայկական գիւղի մօտ:*

Արարողութեան ղեկավարն ու ընթացք տուողը Շահէնն էր: Հիւրասիրութեան տեղ էր ընտրուել Գիւլիստանի ամրոցը, որ գեղեցկութեան, վեհութեան եւ դարաւոր խորհրդաւորութեան կնիքն ունէր իր վրայ: Ամրոցի մերձակայքում կար սառնորակ աղբիւր, որի մօտ տեղաւորուեցին մեծ խնջոյքի: Բացօթեայ սեղանի կառավարիչն ինքը՝ հանդիսութիւնը կազմակերպողն էր: Շահէնը ռուսերէն արտայայտուում էր գերազանց, ասես ռուսաց բանասիրութեան ճիւղն է աւարտել: Նրա ռուսերէնն էլ ոճաւորուած էր, որը հարազատօրէն արտայայտում էր Շահէնի անհատականութիւնը, եւ նա միատեղուած տարբեր ազգերի ներկայացուցիչներին չատ արագ միաբանեց, ստեղծեց տօնական տրամադրութիւն, եւ իր իմաստախօս կենացներով զարդարեց միջոցառումը:

Գիւլիստանը ոչ միայն պատմական յուշարձաններ ունեցող աւան էր, պատմական անցեալին պատկանող բնակավայր, այլեւ միշտ իր հմայքը պահպանող հանգստավայր, ուր մարդը կարճ ժամանակաընթացքին կարող է վերականգնել ներքին խաղաղութիւնը, հոգեկան առողջութիւնը: Պատահական չէ, որ Գիւլիստանում է կայացել ռուս-պարսկական հաշտութեան պայմանագիրը, Գիւլիստան են այցելել քաղաքական նշանաւոր գործիչներ, գրագէտներ եւ մտաւորականներ, որոնց թւում՝

Իսրայէլ Օրին, Ցովսէփ Էմինը, Րաֆֆին, Մակար Արքեպիսկոպոս Բարխուդարեանը, Երուանդ Լալայեանը, Սուրէն Այվազեանը, Գուսան Շահէնը, Աչոտ Գրաչին, Սերօ Խանզադեանը *եւ այլք:*

Շրջան այցելած հիւրերին Շահէն Մեղրեանն անպայման հիւրասիրութեան համար բերում էր Գիւլիստան, իր հայրական տունը:



Զինաւոր Պօղոսի Մեղրեանը
/1907-2002/

Մարգուշա Աղաջանի Մեղրեանը
/1914 – 1994/



Հայրիկը, մայրիկը, Պօղոսը եւ
հաթերքցի խնամիները՝
Ծատուր եւ Բալախանում
Առուստամեանները

Շահէնը եւ Պետրոսը

Բեգլար Յարութիւնի Մեղրեանը՝
Ջինաւոր ապայի հօրեղբօր որդին
/1879 – 1975/

Մարգուշա մայրիկը

Գիւլիստանի միջ. դպրոցի աշակերտները Նապատում. ուսուցիչները՝
Բէնիկ Ղուլեան եւ Արսէն Խաչատրեան, 1956թ.

Կանգնածը
Ֆրիդոն Պօղոսի Մեղրեանն է, /զոհ. 1943թ/,
եւ Երուանդ Չիրքինեան /վերինշէնցի/

Մեղրեան ընտանիքը, 1960թ.

Գիւլիստանի միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմը



Շահէնենց աւարտական կուրսը, 1975թ.

Բ Աշխարհամարտի ռազմիկները
Կոմերիտ քարտուղար Շահէն Մեղրեանի հետ

Տարեցներն ու ծերերը գիւղի իրենց կենտրոնում, Գիւլիստան

Շահէնը՝ հարազատներով

Մայիսի երկուսի աւանդական արարողութեան մասնակիցների
մի խումբ. աջից՝ Շահէն Մեղրեանն է եւ դուստրը

Մեծն Շահէնը, Կուճուր Շահէնը,
Սամուէլ Կարապետեանը եւ իւր եղբայրը

Շահէնի ընտանիքը

Շահէնի եւ Պետրոսի զաւակները

Զինաւորի հարսները, դուստրը՝ Ժենիկ եւ թոռնուհին՝ Միրա

Մեղրունց Զինաւորի ընտանիքը

Մեղրեան եղբայրները՝
Արտուշը, Կարլէնը, Իւրիկը /Թաւադ/,
Շուրիկը /Ալեքսանդր/, Պետրոսը, Պօղոսը:

Ջահան Յովհաննիսեանը եւ Պետրոսը



Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, Զինաւոր Մեղրեանը
եւ Մեղրուց պապական կնքահայր՝ Սեփեան տոհմից՝ բժիշկ Հենրիկը

Հայրը՝ որդու շիրմաքարի մօտ

Սբ Ամենափրկիչ Նապատը

Գիւլիստանի Սբ Աստուածածինը, 1641թ.

Գիւլիստան. Շէնի թաղը

Գիւլիստան. Սպիտակ թաղը



Շահումեանի շրջանի ուրուագծային քարտէզը



ТЕЛЕГРАММА

Москва
Президенту СССР Горбачеву М.С.
Президенту РСФСР Ельцину Б.Н.
Президенту Казахстана Назарбаеву Н.А.

ПОСЛЕ УКАЗА ПРЕЗИДЕНТА СССР ОТ 4 ИЮЛЯ СЕГО ГОДА ОБ ОТМЕНЕ ЧРЕЗВЫЧАЙНОГО ПОЛОЖЕНИЯ В ШАУМЯНОВСКОМ РАЙОНЕ РУКОВОДСТВО АЗЕРБАЙДЖАНА НЕЗАМЕДЛИТЕЛЬНО С ПОМОЩЬЮ СОВЕТСКОЙ АРМИИ, ВНУТРЕННИХ ВОЙСК МВД СССР И ВООРУЖЕННЫХ ОМОН-овцев ДЕПОРТИРОВАЛИ ДРЕВНИЕ АРМЯНСКИЕ СЕЛА ЭРКЕЧ, МАНАШИД, БУЗЛУХ, РАЗОРИЛИ АРМЯНСКИЕ ОЧАГИ. ИМЕЕТСЯ МНОГО УБИТЫХ И РАНЕНЫХ. СЕЙЧАС, КОГДА БЕЖЕНЦЫ ИЗ ЭТИХ СЕЛ ХОТЯТ ВЕРНУТЬСЯ В СВОИ ДОМА, РУКОВОДСТВО АЗЕРБАЙДЖАНА НАПРАВИЛО В РЕГИОН БАНДИТСКИЕ ФОРМИРОВАНИЯ, ВООРУЖЕННЫЕ СОВРЕМЕННОЙ БОЕВОЙ ТЕХНИКОЙ ДЛЯ ВЕДЕНИЯ БОЕВ. ПРОСИМ НЕЗАМЕДЛИТЕЛЬНО НАПРАВИТЬ В РЕГИОН ВАШИХ ПРЕДСТАВИТЕЛЕЙ И СДЕЛАТЬ ВСЕ ДЛЯ ВОЗВРАЩЕНИЯ БЕЖЕНЦЕВ В СВОИ РАЗОРЕННЫЕ ДОМА. ПРОМЕДЛЕНИЕ ЧРЕВАТО ТЯЖЕЛЫМИ ПОСЛЕДСТВИЯМИ. СЕЙЧАС ЕСТЬ УБИТЫЕ И РАНЕНЫЕ С ОБЕИХ СТОРОН.

ПРЕДСЕДАТЕЛЬ РАЙИСПОЛКОМА ШАУМЯНОВСКОГО РАЙОНА
ШАГЕН МЕГРЯН

НАРОДНЫЙ ДЕПУТАТ РСФСР ВАЛЕНТИНА ЛИНЬКОВА

15.09.91 г.
пос.ШАУМЯНОВСК

Հեռագիր Գորբաչովին, Ելցինին, Նազարբաեւին՝ շրջանում իրավիճակի կտրուկ փոփոխութեան օրերին: Ստորագրել է նաեւ ՌԽՍՖՀ ԳԽ պատգամաւոր Վալենտինա Լինկովան

1-105

22.08.91

ПРЕЗИДЕНТУ РСФСР ТОВ. ЕЛЬЦИНУ Б. Н.

В ночь с 21 на 22 августа со стороны Советской Армии шесть часов подряд было подвергнуто интенсивному артиллерийскому обстрелу поселок Вериншен Шаумяновского р-на Азербайджанской республики. Разрушено половины поселка, есть многочисленные жертвы и раненные. Просим и требуем выявить виновников и наказать.

Председатель райсовета Мегрян

Շահէն Մեղրեանի բողոք-նամակը ՌՍՖՀ նախագահ Բորիս Ելցինին՝ Վերին Շէնը խորհրդային զօրքերի կողմից ռմբահարման ենթարկելու առթիւ, 1991թ., 23-ը օգոստոսի



Կազմողներ՝
Գուրգեն Մեղրյան և Պետրոս Մեղրյան

Մասն երկրորդ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱԽԱԼՈՒՄԸ ՇԱՀՈՒՄԵԱՆՈՒՄ

Գլուխ չորրորդ
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Շահումեանի շրջանի առանձնայատկութիւնները

Պատմական ակնարկից համոզուեցինք, որ Գիւլիստանի գաւառը հայաշխարհ է ի սկզբանէ, հայ բնակչութեամբ, հայկական ազգային կեցութեան բոլոր յատկանիշներով: Լինելով Արցախի մաս եւ այն էլ ոչ ծայր հիւսիսային, ինչպէս սովորաբար պատկերացւում է, Գիւլիստանն ունի որոշ առանձնայատկութիւններ՝ պայմանաւորուած վերջին հարիւրամեակի սոցիալ-քաղաքական, տնտեսական կացութեամբ, աշխարհագրական դիրքի ուրոյն նկարագրով: Այդ տարբերութիւնները այնքան էական չեն եւ ժամանակաշրջանն այնքան ընդգրկուն չէ, որ հիմք դառնան փոխելու Շահումեանի կամ Գիւլիստանի՝ որպէս Արցախի մի գաւառի, պատմա-հոգեբանական նկարագիրը: ԼՂԻՄ-ի համեմատ այդ ոչ էական տարբերութիւնները քաղաքական որոշ գործիչների համար առիթ հանդիսացան քաղաքական դիրքորոշումների անկանխատեսելի փոփոխութեան, որոնց մասին խօսք կը լինի ստորեւ:

Ի՞նչ տարբերութիւնների մասին է խօսքը: Եթէ ՀՀ եւ Արցախի բնակիչները ծանր եւ հակասական վիճակներով անցում կատարեցին տնտեսա-քաղաքական եւ գաղափարական նոր համակարգին, ապա Շահումեանում դա եղաւ շատ աւելի սահուն, առանց առանձնակի լարուածութեան: Կարծես այդտեղ գիտէին, որ խորհրդային համակարգը ժամանակաւոր, պարտադրեալ բնոյթ ունի, եւ բոլորը մտան պայքարի մէջ՝ վերականգնելով ազգային արժէքներն ու գաղափարաբանութիւնը: «Վերակառուցման» ընթացքին շրջանում իրադարձութիւնները նոյնիսկ աւելի արագ էին զարգանում եւ ազգաբնակ-

չութիւնն աւելի էր նախապատրաստուած յեղափոխութեան եւ աւելի պարզորոշ դիրքորոշում ունէր, քան ԼՂԻՄ-ում: ԽՍՀՄ փլուզման ժամանակ Ադրբեջանը յոյս ունէր, որ կարող է այդ տարածքը կարճ ժամանակում հայաթափել, ինչպէս դա արեց Գարդման գաւառի հայաբնակ գիւղերում, նաեւ Գետաչէնին մերձակայ Կամօ եւ Ազատ գիւղերում: Սակայն չահումեանցիները վճռականօրէն էին տրամադրուած ինքնապաշտպանութեան եւ հոգեբանօրէն դրեթէ պատրաստ՝ վերատիրանալու իրենց կորուսեալ անկախութեանը: Ադրբեջանի վարած քաղաքականութիւնը Շահումեանի եւ յարակից շրջանների հայութեան նկատմամբ նոյնն էր, ինչ ԼՂԻՄի հայութեան նկատմամբ, այսինքն՝ ազգայնամոլութիւն պետական մակարդակով, որը կիրառւում էր թէ՛ սոցիալ-տնտեսական ասպարէզում՝ հայութեանը թուլացնելու, քայքայելու նրա կեցութեան հիմքերը, եւ թէ՛ յատկապէս մշակոյթի ասպարէզում՝ վերացնելու համար հայկականութիւնը եւ հայութեանը կա՛մ ցեղափոխելու, կա՛մ ոչնչացնելու: Սակայն Գիւլիստանի բնակչութիւնը շատ աւելի ինքնատիպ էր եւ ամուր, քան կարելի էր ենթադրել:

Հրապարակուած գրքերն ու մեծաքանակ յօդուածները, նաեւ Շահումեանի ինքնապաշտպանութեան բազմաթիւ մասնակիցների վկայութիւնները հաւաստում են, որ չահումեանցիները հոգեբանօրէն պատրաստ էին մինչեւ վերջ պայքարելու իրենց հայրենի երկրի ազատութեան համար:

Իգոր Մուրադեան. «Առաջին հերթին այս շրջանի բնակչութեան ինքնուրոյնութեան, յամառութեան ուժեղ յատկութիւնն է իր վրայ բեւեռում մարդու ուշադրութիւնը: Հաւանաբար հէնց դրանով էր պայմանաւորուած այդ մարդկանց բնաւորութիւնը. մեծ անվստահութիւն օտարների հանդէպ եւ նրանց իրաւունքները սահմանափակելու միտում, նաեւ ճգտումը՝ հասկանալ ոչ բոլորովին գործնական բաներ, ձեռներէցութիւն եւ անսովոր իրավիճակներում որոշում ընդունելու կարողութիւն: Սակայն **Հայոց աշխարհի այս «անկիւնում» ապրող այս մարդկանց մէջ առանձնապէս ապշեցնում է քաղաքական իշխանութեան եւ, ընդհանրապէս, իշխանութեան նշանա-**

կուլթեան ու արժեւորման բացառիկ յատակ եւ որոշակիացած պատկերացումը»:

Իգոր Մուրադեանը համոզուած է, որ նոյնիսկ խորհրդային ժամանակներում շահումեանցիները հանդէս էին բերում ինքնուրոյն գոյութեան ամենաանհատականական մղում: Շահումեան-Գիւլիստանցիների հոգեբանութեան մէջ տակաւին առկայ էին հարիւրամեակներ չարունակ գրեթէ անկախ կեցութեան թողած դրական ազդեցութիւնը, ոգու անկախութիւնն ու անարատ հայկականութիւնը, որոնք անկարող եղան խաթարել նոյնիսկ թուրքերն ու բոլշեւիկները: Շահումեանցիները ո՛չ միայն տեն-չում էին անկախանալ Ադրբեջանից եւ միանալ Արցախի մար-զին, այլեւ իրենց հետ էին պատկերացնում Գետաշէնն ու Մար-տունաշէնը, եւ ստեղծեցին այդ գիւղերը ներառնող ինքնա-պաշտպանութեան ամբողջական համակարգ:

*Իբրեւ մարզիչ Շահումեան եկած **Խաժակ Գեթսեմանեանի** գնահատմամբ՝ շահումեանցիներն աւելի բարենպաստ տպաւորութիւն էին թողնում, քան թէ նախկին ԼՂԻՄի բնա-կիչները:* «Շահումեանցիները, մասամբ չնորհիւ **Շահէնի** ազդե-ցութեան, որոշ չափով պատրաստ էին կռուին: Արտասահմանից եկած տղաների կազմակերպական ինքնայատուկ կեցուածքը որոշ ներգործութիւն ունեցաւ տեղացիների վրայ, իսկ Ղարա-բաղի մէջ ժողովուրդը լրիւ անպատրաստ էր: ԼՂԻՄի հայերն աւելի ուշ որոշակի համոզման եկան, որ պիտի ոտքի ելնեն»:

***Կուճուր Շահէնի** խօսքով՝ Շահումեանում կանխազգում էին պատերազմը, որովհետեւ գիտէին թուրքերի եւ հայ-թուրքա-կան հակադրութեան բնոյթը, եւ լրջօրէն նախապատրաստւում էին մարտական գործողութիւնների:* «Երբ մենք կուում էինք, Ղարաբաղում չգիտէին պատերազմն ինչ է: 91-ին եղել է Գերագոյն խորհրդի առաջին նստաշրջանը: Երբ եկանք նստաշրջանին, ղարաբաղցիները մեզ ձեռքերի վրայ էին պա-հում: Չգիտէին զէնքը ինչ է, գրոհն ինչ է: Ղարաբաղում եթէ «Ալազան» էին տեսնում՝ թողնում, փախչում էին: Իսկ մեզնից մէկն ասում էր. «Եթէ «Ալազանն» ընկնում է բաժակիդ մէջ, հա-նի՛ր, դէ՛ն նետիր եւ չարունակի՛ր թէյդ խմել»:

Արթնացումը Շահումեանում այսուհանդերձ կատարուեց ոչ միանգամից: Պահանջուեց դառնութիւններով լեցուն երկու տարի, որպէսզի մարդիկ հասկանան լեռնաշխարհի ազգային-ազատագրական պայքարի նշանակութիւնը:

Այս չրջանը դրսեկ հայ մարդու կարիք չատ ունէր գուցէ իր տեւական մեկուսացուածութեան պատճառով եւ ինքն էլ առինքնող կամ ինքնաճիգ հսկայական ուժ ունէր եւ ազգայնօրէն ինքնագիտակից ամէն հայ հաւանաբար կուզէր լինել Շահումեանում:

*Մէկ այլ առանձնայատկութիւն ժողովրդի ո՛չ միայն պարզութիւնն էր, պատուասիրութիւնը, այլեւ՝ զինուորագրման պատրաստակամութիւնը, մասնակցութիւնն ազգային պայքարին: **Ցոյժ կարեւոր հանգամանք է այն, որ Շահումեանում ընդհանրական էին ժողովուրդը եւ իշխանութիւնը, որոնք ընդհանուր լեզու էին գտել: Շահէն Մեղրեանը** բոլորի կողմից ընդունուած իսկական ժողովրդական առաջնորդ է եղել: Մնացեալ չրջաններում իրար արագօրէն փոխարինում էին հրամանատարները, իսկ Շահէնը մնաց անփոխարինելի: Ընդհանրութիւն էր մշակուել նաեւ ջոկատների միջեւ: Կարելի է ասել՝ Շահումեանում ջոկատներից կազմաւորուած էր բանակ, չկար ինքնագործունէութիւն, եւ տարբեր ջոկատների փոխօգնութեան անհրաժեշտութիւնն ու իրագործումը լրիւ գիտակցուած էին: Շահէնը նոյնիսկ ռուսների հետ էր լեզու գտնում: Ժողովուրդը կարողանում էր վար ու ցանք անել, մշակել ու հնձել, քանզի ռուսների հետ լեզու էր գտնուած:*

*Համայնատիրական գաղափարներով դաստիարակուած եւ երկրագործ ճողովուրդը միամտաբար հաւատում էր, որ Արցախի եւ մասնաւորապէս Շահումեանի հարցը կը լուծուի առանց պատերազմի, Խորհրդային Միութեան կողմից: Շահումեանցիները չուտ հասկացան, որ **պատերազմի մէջ յաղթանակում է արին. ով սանձահարել է սեփական սարսափը. ով թշնամու հետ չափուելուց առաջ կառուցել է յաղթանակի չէնքն իր հոգում** (Գարեգին Նժդեհ):*

Ինչպէ՞ս յայողեցին կարճ ժամանակամիջոցում հոգեփո-

խուել, հասկանալ իրենց պայքարի իմաստը, ուղղուածութիւնը եւ յաղթանակի հասնելու պայմանները: Անկասկած է, որ այդ հոգեփոխութիւնը պատրաստեցին Դաշնակցութեան գործիչներն ու մարզիչները, որոնք իրենց գործունէութիւնը Շահումեանում սկսեցին աւելի վաղ քան ԼՂԻՄ-ում:

Պօղոս Մեղրեանի *խօսքով՝ «Շահումեանի շրջանում եւ Գետաշէնում ՕՄՕՆ-ը չի կարողացել գլուխ բարձրացնել, մտնել: Բայց Լեռնային Ղարաբաղում միայն 91 թուականի սեպտեմբերին են թուրքերին օդանաւակայանից հանել: Այսինքն, տարի ու կէս յետոյ է Ղարաբաղի մարզը թուրքերից ազատուել: Էլ չեմ խօսում այն մասին, որ պայմանաւորուած են եղել Շահումեանը միացնելու Հարեւան Գերանբոյի շրջանին: **Ֆելիքս Գզողեանը** մասնակից է եղել այդ պայմանագրին: Ես ու Ֆելիքսը Կարաչինարի մօտ պառկած սպասում էինք, թէ Շեֆեկի տակ **Շահէնին** կարո՞ղ են համոզել մեր շրջանն այդ շրջանին միացնելու համար»:*

*Սա թուրքերի ձեռնարկած առաջին փորձը չէր Շահումեանը Ադրբեջանական շրջանին կցելու: **Նովիկ Գիւլումեան** «Այդպիսի փորձ եղել է 1960-ականներին, բայց չնորհիւ Վերին Շէնցի կիրթ եւ գրագէտ **Հմայակ Մարտիրոսեանի** անօրինակ ջանադրութեան՝ ժողովուրդը հասկացել է, թէ ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ այդ անմեղ թուացող իրաւարձութիւնը եւ ոտքի են ելել, բողոքի ակցիա կազմակերպել եւ խափանել Բաքուի չարամտութիւնը»:*

Տեղական փոքրիկ տարբերութիւնները, սակայն, էական չէին Շահումեանը ԼՂԻՄ-ին որեւէ կերպ հակադրելու համար: Ովքեր հակադրութիւններ փնտրելու հակում ունեն, թող այդպիսին գտնեն իրենց մէջ, իսկ մեր միտքը գործում է միասնութիւն, միաբանութիւն, ազատութիւն ծիրով:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Արցախեան ազատագրական պատերազմն աւարտական

*պահերից է այն հակամարտութեան, որ սառեցուած վիճակում գոյութիւն ունէր երկու հարեւան էթնիկ խմբերի միջեւ եւ խորհրդային տիրապետութեան տարիներին չարունակւում էր նրանց մտքի ու հոգու մէջ: Բացի անհատական մակարդակով գոյութիւն ունեցող գործնական կապերն ու յարաբերութիւնները, երկու էթնիկ խմբերի մէջ արմատակալած է հոգեբանական յատկանիշ դարձած դարաւոր թշնամութեան անջնջելի իրողութիւնն՝ անհաշտելի հակասութեան պարբերական դրսեւորումովներով, որոնց իրական հիմքը էթնիկ երկու խմբերի մարդաբանական յատկանիշների մէջ պէտք չէ փնտրել: Երկու ազգերի հակասութեան հիմքը շատ աւելի խորն է, քան դա կարելի է պատկերացնել ատելութեան, վրէժի, հատուցման հոգեբանական կատեգորիաներով: **Դա հողային հակասութիւնն է, պայքար միեւնոյն տարածքում հաստատուելու համար**, որը կարող է լուծուել միայն տարածաշրջանում կողմերից որեւէ մէկի յաղթանակով **Արցախեան պատերազմը կենսատարածքի, հողի հիմքով առաջացած տարածաշրջանային դարաւոր պայքարի նոր բորբոքումն էր այդ հողի վրայ հազարամեակներ ապրած բարեկիրթ ու բնակեցիկ հայերի եւ եկուոր քոչուորների միջեւ**: Ելնելով հակասութեան բնոյթից եւ մեր հարեւանների բնաւորութիւնից՝ անսխալ կերպով կարելի էր եզրակացնել, որ Հայոց ազատագրական պայքարն իր նպատակին կարող էր հասնել միմիայն զինեալ ճանապարհով: Այդ պայքարի մէջ պիտի ներառնուէին ժողովրդական ներքին իմաստութիւնը, ազգային հաւաքական կամքը եւ միաբանութիւնը, բազմաթիւ մարդկանց ինքնազոհաբերութիւնը, անասելի չանքերն ու տանջանքները, տառապանքը՝ բառի բուն իմաստով:*

Այսպիսով, էթնիկ երկու խմբերի պարբերական բախումները տեղի են ունենում անխուսափելի օրինաչափութեամբ: Սակայն այդ օրինաչափութեան գիտակցման մակարդակն ու արտայայտութեան ձեւերը երկու կողմերի հոգեբանութեան մէջ խիստ տարբեր են, գրեթէ հակադիր: Թուրք-թաթարների երկակի վարքն ու հոգեբանութիւնը նրանց հնարաւորութիւն է տալիս հայերի հետ գործնական գետնի վրայ չփուելու՝ առանց

մոռանալու ռազմավարական խնդիրն ու ճակատագրական թշնամութիւնը: Հայերիս վերաբերեալ նոյնն ասել չենք կարող:

Պատմութեան ընթացքին թուրքերի ձեռքով անթիւ կոտորածների ենթարկուած հայերի մեծ մասը կենսական տարբեր իրավիճակներում արագօրէն մոռանալով երկու ազգերի փոխյարաբերութեանց խորքային բնոյթը, խորքային մոտիւացիաները եւ ժամանակաւոր, նիւթական շահեր հետապնդելով կամ զուտ մարդկային ներողամտութեամբ եւ կարճամտութեամբ իրենց հոգում հաշտւում են նրանց հետ, ում կենսական ռազմավարութիւնը հայութեանը ոչնչացնելն ու նրա Հայրենիքը զաւթելն է: Հայերիս նիւթապաշտական հակուածութեան առարկայական հիմքը խորհրդային, բոլշեւիկեան կարգերի հոգեւաերիչ հարիւրամեակն է, որի ընթացքում խիստ թուլացել էր ազգային հաւատքն ու եկեղեցին: Հայերիս վրայ ահաւոր ներգործել են «ինտերնացիոնալ» քարոզչութիւնը՝ «եղբայրութեան» կոչերով եւ յատկապէս՝ բոլշեւիկեան համայնատիրական վերազգայնականութիւնը: Որոշ հայերի կարճուած յիշողութեան համար «այսօրուայ թուրքը երէկուայ թուրքը չէ»: Կեղծ մտապատկերը եւ այսպահային փոքրիկ տնտեսական շահերը կարծես կուրացնում են այն հայերին, որոնք ո՛չ նորմալ հաւատաւոր են, ո՛չ էլ բաւարար շրջահայեացութիւն ունեն, ուստի ամէն անգամ մի նոր եղանակով թպրտում ենք թուրքերի պատրաստած ծուղակներում կամ պատերազմական վիճակներին՝ բացայայտ ցեղասպանութեան զոհեր դառնում, որը բնաւ վայել չէ ինքն իրեն յարգող որեւէ ազգի եւ մարդու: Մեր խաղաղասիրութիւնը հիմք պիտի չդառնայ մեր կրաւորական մարտիրոսութեան համար:

Ովքեր պատմական յիշողութիւն ունեն՝ նրանց համար պարզ է, որ հայ-թուրքական բարեկամութեան կոչերը ժամանակաւոր, պատրանքային բնոյթ ունեն, իսկ տասնամեակներ տեւած «խաղաղութիւնը» յարաբերական է եւ խախուտ: Ջնայած պաշտօնական վերազգային քաղաքականութեանը, ժողովուրդների եղբայրութեան քարոզչութեանը եւ գործնական ձեռնարկներին, զգացւում էր, որ հայ-թուրք հակա-

սուէիւնը հակամարտութեան վերածուելու համար միայն յարմար պահի է սպասում:

Այդ առիթը խորհրդային կայսերապետութեան սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կեանքում այսպէս կոչուած Պերեստրոյկայի (Վերակառուցման) կատարած չրջադարձն էր: Պերեստրոյկայի հետ ներմուծուող «ազատութիւնները» թուլացրին այն զսպանակները, որոնք գոյատարածքի համար մրցակցող հայերին եւ կովկասեան «թաթարներին» պահում էին բացայայտ բախումից: Այս նոր քաղաքականութեան ընթացքում հէնց սկզբից, որպէս ամենազգայուն լար, հանդէս եկան Հայաստանն ու Հայութիւնը՝ դարաւոր չլուծուած հարցերով եւ հարցադրումներով:

*Արցախեան պահանջատիրութիւնը, որպէս Հայ Դատի բաղկացուցիչ մաս, Պերեստրոյկայի առաջին տարիներին արտայայտուեց միանգամայն քաղաքակիրթ եղանակով՝ համապատասխան խորհրդային սահմանադրական դրոյթների: Ժողովուրդը պայքարի ելաւ ցոյցերով ու գործադուլներով: Շահումեանում առաջինը ցոյցի ելան **գիւլիստանցիները**: Նախքան այդ՝ **Շահէն Մեղրեանի** եւ նրա համախոհների հայապահպանութեանն ուղղուած գործունէութիւնը պարարտ հող էր պատրաստել ազգային-ազատագրական պայքարի համար: Գիւլիստանում մի խումբ երիտասարդներ, դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ **Մելիք Յովասափեանի** գլխաւորութեամբ ցոյցի դուրս եկան «Հայե՛ր, միացէ՛ք» կոչով: Այնուհետեւ այդպիսի ելոյթներ լինում էին պարբերաբար: Երբ յայտնի դարձաւ, որ ԼՂԻՄ-ը պահանջում է մարզը միացնել Հայկական ԽՍՀ-ին, նոյնպիսի պահանջ առաջադրեցին շահումեանցիները՝ Շահումեանը ԼՂԻՄ-ի հետ միաւորելու համար:*

*1988 թ. մարտին մի փոքրիկ պատուիրակութիւն (չրջգործկոմի նախագահ **Արթուր Սառաջեանը**, պահածոների գործարանի տնօրէն **Շահէն Մեղրեանը**) գաղտնի մեկնեց Մոսկուա, հանդիպումներ ունեցաւ մարզի առանձին գործիչների հետ (**Հենրիխ Պողոսեան, Արկադի Մանուչարով**), որոնք խորհուրդ տուեցին Շահումեանի չրջանում եւ Գետաչէնի են-*

*թաչրջանում սպասողական դիրք գրաւել, կրքեր չբորբոքել: Երկրորդ հանդիպումն էլ նոյն արդիւնքն ունեցաւ: Ամէն ինչից զգացւում էր, որ ԼՂԻՄ-ում չէին ուզում Շահումեանի հարցով զբաղուել (մանրամասն տե՛ս **Կիմ Ղահրամանեան**, «Հիւսիսային Արցախ», դիրք Բ, էջ 51):*

*Դրանից յետոյ Շահումեանում սկսեցին գաղտնի ստորագրութիւններ հաւաքել ԼՂԻՄ-ի հետ միաւորուելու համար՝ անկախ նրա յետագայ ճակատագրից: Այդ ստորագրութիւնների ցանկերը Ստեփանակերտ հասցրին **Շահէն Մեղրեանը, Արթուր Սառաջեանը եւ Վալերի Բաղեանը**: Դրանք ներկայացրին **Հենրիխ Պողոսեանին** եւ Մոսկուայի ներկայացուցիչ **Արկադի Վոլսկուն**: Մոսկուայի վերաբերմունքը երկակի էր. քաջալերում էր ե՛ւ հայերին, ե՛ւ խրախուսում թուրքերին՝ հայերին իրենց լծի տակ պահելու համար:*

*1988 թուականին շրջկենտրոնում ստեղծուեց «**Բերդ**» բարեգործական միութիւնը: Միութեան նախագահ ընտրուեց **Շահէն Մեղրեանը**: Վարչութեան կազմի մէջ էին **Խորէն Աւագեանը** (Ակսէլ Բակունցի անուան մանկավարժական ուսումնարանի Շահումեանի մասնաճիւղի տնօրէն), **Բենիկ Խաչատրեանը, Բենիկ Ղուլեանը, Սամսոն Խաչատրեանը** եւ այլք: Միութեան խնդիրներն էին. պատմական յուշարձանների պահպանման վիճակի բարելաւում, շրջանի ճանապարհների բարեկարգման օժանդակում, շրջանի միջբնակավայրային կապի աշխուժացում: Այդ հարցերը փորձում էին լուծել թուուցիկների տարածման եւ այլ նիւթերի հրապարակման միջոցաւ:*

1988 թուականի փետրուարի 20-ին ժողովրդական պատգամաւորների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն խորհուրդներին՝ «լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ յանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի առջեւ՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ յանձնելու հարցի դրական լուծմանը»:

Լեւոն Մելիք-Շահնազարեանի *բնորոշմամբ.* «Այդ օրը սկիզբ դրուեց ԽՍՀՄ-ում առաջին ներքին պետա-իրաւական վէճին՝ միութենական հանրապետութեան եւ ինքնավար մարզի միջեւ» (Լեւոն Մելիք Շահնազարեան, «Ադրբեջանի ռազմական յանցագործութիւնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խաղաղ բնակչութեան դէմ», Եր., 1998, էջ 19): «Մի կողմից ԽՍՀՄ-ի եւ Ադրբեջանի իշխանութիւններն ամէն միջոց ձեռնարկեցին չարժումը խեղդելու համար, միւս կողմից սկսեցին խեղաթիւրել հայերի պահանջը, ինքնորոշման հարցը վերածել սոցիալ-տնտեսականի» *(**Կիմ Ղահրամանեան, Ալվարդ Ղազիեան**, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետականութեան ակունքները», Եր., 2008, էջ 62):*

Հակառակ այն իրողութեան, որ խիստ չափաւորուած էր հայոց ազգային վերաբերմունքը խորհրդային արժէքների, Ադրբեջանի եւ Կրեմլի նկատմամբ, բուռն զարգացում ապրեց երկու հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ կովկասեան թուրքերի յարաբերութիւնների պարզաբանման ընթացքը: Հայոց քաղաքակիրթ պայքարին թուրքերը հակադարձեցին իւրովի, իրենց բնորոշ ձեւերով: Սկսուեց չյայտարարուած պատերազմը ազատութեան համար ոտքի ելած մի բուռ ժողովրդի դէմ: Կարծես ակնթարթօրէն մոռացուեց «բարեկամութեան» այն լեզուն, որ մշակուել էր տասնամեակների ընթացքին, եւ ձեռքներն արձակած ազգերն ու անհատներն արդէն պատրաստ էին մէկը միւսի գլուխ ջարդելու: Փոխյարաբերութեան լեզու դարձան սպառնալիքը, բռնութիւնը, զինեալ բախումները՝ նախնադարեան ձեւերից սկսած մինչեւ ժամանակակից ռազմական տեխնիկայով եւ մարտավարութեամբ յագեցած առճակատումները, որոնք աւարտւում էին մեծաքանակ զոհերով, կողմերից որեւէ մէկի թուլացմամբ եւ պարտութեամբ, տարածքների գրաւումով եւ բռնագաղթերով: Այս իմաստով յատկապէս աշխոյժ էին թուրք-թաթարները, որոնց զսպուած բնազդներն ամբողջ ոյժով գործելու անհամբերութիւն էին դրսեւորում:

Պատմական այս աղաղակող փաստերը չյիշելով եւ հաշուի չառնելով՝ մեր իսկ բնական կարճամտութեան բերումով

Հայերս ամէն անգամ մոռանում ենք մի պարզ ճշմարտութիւն, որ Թուրքիան կամ թուրքերը հայերի ճակատագրական թշնամիներն են եւ դա պայմանաւորուած է ո՛չ թէ երկու ազգերի հոգեբանական գործօններով, այլ ինչպէս նշեցինք, մէկ, միայն մէ՛կ պատճառով, որ նրանք տարածաքաղաքական կամ, պարզ ասած, հողի խնդիր ունեն: Այս պարզ ճշմարտութիւնը չգիտակցելը միշտ թանկ է նստել հայերիս վրայ: Հայ-թուրքական հակամարտութիւնը միջազգայնագէտ-դիւանագէտները խնդիրը միշտ փոխադրել են այլ հարթութիւն եւ հայերին դրդել «եղբայրասիրութեան», «ոխ չպահելու», «վրէժխնդիր չլինելու», «թշնամութիւնը չյաւերժացնելու» եւ այլ ներշնչանքներով: Արդիւնքում՝ հայերս անճնատուր ենք եղել, որդեգրել պարտուողական հոգեբանութիւն: Թուրքերը յաջողել են սեպ խրել հայերիս մէջ, «մեղաւոր» հանել, ասենք, Դաշնակցութեանը, եւ ամէն անգամ, պարտութիւններից յետոյ ազատագրական պայքարի համար վիզ դրած կազմակերպութեան խղճին են բարդել պատերազմի մեղքը, զոհերի համար պատասխանատուութիւնը եւ պարտութիւնը: Եւ մեծաթիւ են այն հայերը, ովքեր առիւծի նման կռուող եւ գառան պատրաստակամութեամբ ազգի ու հայրենիքի համար զոհաբերուող մարդկանց ամբոխային տրամաբանութեամբ դուրս ենք բերում մեր թշուառութեանց պատճառ: Հայ ֆիդայիններից բարձր մարդկային անհատականութիւն դժուար է պատկերացնել եւ փոխանակ նրանց սրբացնելու, սկսում ենք թերութիւններ յայտնաբերել նոյնիսկ ամենամեծերի մէջ: Սրանով չենք ուզում ասել, որ ֆիդայականութեան եւ Դաշնակցութեան մէջ չեն եղել անարժանաւոր, մարդկային պատիւն ու խիղճը արատաւորողներ: Ջարութիւնը ներթափանցիկ ուժ ունի եւ եթէ չպատնեշուի, Աստուծոյ հետ հաղորդակից բոլոր անօթներն անգամ կարող են արատաւորուել: Սակայն եթէ մի մարդ կամ մէկ ազգ ի վիճակի չլինի ճանաչելու իր թշնամուն՝ ո՞վ նրան կը յարգի: Առաջին աշխարհամարտի ընթացքին ցեղասպանութեան ենթարկուած ազգն այնուհետեւ եղբայրացաւ «Ադրբեջան» նորագոյացման ներսում ապրող թուրք-թաթարների հետ:

*Արցախեան պատերազմը ճիշտ կը լինէր անուանել **հայ-թուրք դարաւոր հակամարտութեան տեղա-պահային արտայայտութիւն,** որը ո՛չ մի պահ չի էլ դադարել եւ կրել է տարբեր դրսեւորումներ, զի հոգեբանական եւ տեղեկատուական պատերազմները մղւում են յարատեւ չարունակականութեամբ, իսկ զինեալ բախումները, որոնք պահանջում են մարդուժի եւ ռազմական միջոցների մեծ կենտրոնացում եւ վատնում, բռնկւում են ժամանակ առ ժամանակ, մօտաւորապէս մի քանի տասնամեակը մէկ, երբ կողմերը չունչ են առնում, ապաքինում են վէրքերը, վերանորոգում, վերակազմաւորում են ուժերն ու միջոցները, պատրաստ են զգում կռուելու եւ յաղթանակի յոյս են ունենում: Եւ գոյատարածքի համար մարտնչողներն ամէն անգամ իրար են բախւում նոր ուժով: Պայքարի ընթացքին առաւել զօրաւոր գործօն է հակամարտող կողմերի հոգեբանական վիճակը, քան նոյնիսկ ռազմուժի քանակն ու որակը կամ երկրի տնտեսական դրութիւնը: Որովհետեւ բոլոր պատերազմներն ի վերջոյ ոգու պատերազմ են՝ յաղթանակում են զօրաւոր ոգի, ներդաշնակ հոգեբանութիւն եւ ազգային հաւաքական գիտակցութիւն ունեցողները:*

Մեր տարածաշրջանի գոյատարածքային բախումներն առհասարակ լինում են ո՛չ թէ տեղափակ (լոկալ), այլ՝ տարածաշրջանային (ռեգիոնալ): Դրանց մէջ ներգրաււում են բազմաթիւ երկրներ, որոնք հետապնդում են իրենց շահերը՝ ճանապարհների, տեղական հարստութեան եւ առաւելապէս յենակէտային դիրքեր ձեռք բերելու եւ պահպանելու, ազդեցութեան գօտիներ ունենալու համար: Այս տեսակէտից յատկանշական է Հարաւային Կովկասը, իբրեւ Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք ճանապարհների խաչմերուկ: Այստեղից էլ՝ ներքին եւ արտաքին գործօնների առկայութիւնը, որոնք դժուարեցնում են նմանատիպ երեւոյթների անաչառ ուսումնասիրութիւնը:

Գոյատարածքային մեր պայքարին մասնակից կամ դրանում ներկայ երկրները մեծամասամբ պաշտպանել են թուրքերին, նոյնիսկ էական դեր են խաղացել ցեղասպանութեան կազմա-

կերպման մէջ կամ բուն հայկական տարածքները մեր հակառակորդներին նուիրելու եւ նրանց տարածքային ամբողջականութեան մաս դարձնելու գործընթացում: Նոյնիսկ հայերին բարեկամաբար տրամադրուած Ռուսաստանը, որը եթէ ոչ դաշնակցային պարտաւորութիւն ունէր Հայաստանի նկատմամբ, գոնէ հովանաւոր էր, կամայ թէ ակամայ նպաստեց Արեւմտեան Հայաստանի հայաթափմանը եւ, միաժամանակ, փրկարար դեր կատարեց տեւական բախումներից հիւծուած եւ Յունաստանի բանակից տկարացած ու պարտութեան եզրին հասած Թուրքիայի համար:

Վերջին պատերազմի յատկապէս առաջին տարիներին Խորհրդային Միութիւնը (Ռուսաստանը) օգնում էր Ադրբեջանի թուրքերին, քանզի հայերը պիտակաւորուած էին իբրեւ «անջատողական ծայրայեղականներ»: Ռուսների օգնութիւնը թուրք-թաթարներին իր բարձրակէտին հասաւ 1992 թուականի յունիսեան յարձակման ժամանակ, երբ մեծապետական տեխնիկան եւ մարդուժը բարձր չտաբային մակարդակով տրամադրուեցին մեր հակառակորդին:

*Դրանից առաջ էլ եղել են 1908 թուականի սահմանադրութեան ընդունման հայ-թուրք «եղբայրական ողջագուրումները» եւ բարեկամական մթնոլորտն ու բերկրանքները (էֆորիան) Թուրքիոյ սահմանադրական պետութեան մէջ, որտեղ ինն ամիս անց՝ 1909 թուականի ապրիլի առաջին կէսին տեղի ունեցան հայերի զանգուածային կոտորածներն Ադանայի վիլայէթում եւ Հալէպի վիլայէթի հայաբնակ վայրերում: Եւ անարձագանք մնացին **Վանայ Իշխանի** ու այն հայերի տագնապի ձայները, ովքեր ժամանակին զգուշացնում էին չխաբուել այսպէս կոչուած երիտթուրքերի «եղբայրասիրութեամբ»: Եւ պատմական այս համապատկերը դրդում է հարցնել մեր նորօրեայ «դիւանագէտ» ղեկավարներին. «Մինչեւ ե՞րբ, մինչեւ ե՞րբ էք մեր ժողովրդին տանելու եւ գցելու չարերի ծուղակը»:*

1986-ին թուրք-թաթարները սկսեցին արդէն Ջարդախլուի դէմ որոշակի հալածանքներ իրականացնել: Սկզբից էլեկտրա-

էներգիայի մատակարարումը դադարեցրին, հեռախօսներն անջատեցին, ջուրը կտրեցին եւ բնակավայրը փաստօրէն մեկուսացրին աշխարհից: Սա հայերին ճնշելու փորձուած հնարամտութիւն է, որպէսզի բնակավայրը թողնեն եւ իրենք՝ թուրքերը տիրանան հայերի ունեցուածքին ու տարածքին: Սա աւազակային այն իւրայատուկ գործելակերպի եւ վարքի աւելի կազմակերպ ու ծաւալուն դրսեւորումներից է, որն իր նախասկզբնական կերպաւորումն է ստացել թուրքերի նախահայրենիք թուրանական տափաստաններում: Ջունեցողը եղանակներ է կիրառում ունեցողի ունեցուածքին, տարածքին եւ ինչքին տիրանալու: Շահէն Մեղրեանն, ի միտ ունենալով Ջարդախլուի դէպքը, այն օրերին ասում էր. «Եթէ մենք այսօր չնախապատրաստուենք, վաղը նոյն վիճակի մէջ է ընկնելու Շահումեանը»:

Ջարդախլուն բացայայտեց, որ աշխուժացող թուրքական արմատականութեան համար խորհրդային «սրբութիւնները» որեւէ արժէք չունեն եւ Հարաւ-Արեւելեան Կովկասում բնակուող հայութիւնը ենթարկուելու է բռնագաղթի: Ադրբեջանի բռնակալութեան տակ գտնուող տարածքներից 1988-ից սկիզբ առած բռնի տեղահանումները չահումեանցիների համար պարզ դարձրին, որ Ադրբեջանի թուրքական իշխանութիւններին այլեւս հպատակուելը հաւասարազօր է լինելու ինքնաոչնչացման: Բռնի տեղահանութեան սեւ ուրուականը յայտնւում է արդէն Ջարդախլուն եւ մնացեալ հայկական բնակավայրերը դատարկելուց, Սումգայիթի եւ այլ բնակավայրերի դէպքերից յետոյ: Ջարդախլուի հայաթափման օրինակը ցոյց տուեց, որ հայերն ու ադրբեջանցիները փոխադարձ չփման եւ նոյն տարածքում համատեղ ապրելու որեւէ հնարաւորութիւն չունեն, զի նրանք դատարկեցին հայերից Ադրբեջանին մեծ փառք բերած գիւղը եւ պղծեցին անվեհեր հերոսների եւ մարշալների յիշատակային կոթողները: Հայերիս համար մեծ անակնկալ համարուած Մարշալների ծննդավայրի անակնկալ հայաթափումը թուրքերի կողմից ի յայտ բերեց թուրքերի յարմարուողական կարողութիւնները իրարայաջորդ

տնտեսական կացութաձեւերի պարագային. թուրքը մնում է թուրք, եւ սա մենք հաստատագրում ենք ցոյց տալու համար հայ բոլշեւիկների հակազգային եւ ինչ-որ տեղ անմարդկային բնոյթը, ովքեր, ի դժբախտութիւն մեր ազգի, արագ կերպով դաւանափոխ եղան եւ սկսեցին հալածել իրենց համազգիներին. հայութեան մի մասը թշնամացաւ միւսին, եւ արեան գետեր հոսեցին եղբայրասպան բախումներին: Այնինչ թուրքերը միանգամից կերպափոխուեցին իբրեւ «կարմիր համայնավարներ» եւ միանգամից էլ դիմակները նետեցին, երբ դրա կարիքն արդէն չկար:

Նշանակում է՝ հայերն ու ադրբեջանցիները ո՛չ միայն չունեն ընդհանրական հոգեւոր արժէքներ, այլեւ թուրք-թաթարներն այլեւս վախ չունեն Աստուծոյ հանդէպ եւ չիրիմներն են պղծում վայրենիների նման: Շահումեանի միակ յոյսը ԼՂԻՄ-ի հետ վերամիաւորուելու հնարաւորութիւնն էր: Հայ մտաւորականութիւնն ամենուր ձգտում էր ըմբռնել նոր ստեղծուած իրադրութիւնը ազգային պատմութեան հանրապատկերի վրայ, հասկանալ իրադարձութիւնների հաւանական ընթացքը եւ նախապատրաստ վիճակում լինել՝ կատարելու իրեն վիճակուած առաքելութիւնը: Իսկ հայութեան հիմնական առաքելութիւնը հաւանաբար պարզ էր ամենքին. դա թշնամու բռնագրաւած տարածքների եւ յատկապէս **Արցախի** ազատագրումն էր: Դա էր այդ ժամանակուայ ամէն մի ինքնագիտակից հայի հոգու տիրական ցանկութիւնը, եւ հայութիւնը պայքարի էր ելել ու պատմական փորձից զգում էր, որ հայ-թուրքական բախումներն անպայման լինելու են:

Շրջանում ստեղծուած պայթիւնավտանգ վիճակը խաթարում էր «Բերդ» միութեան բնականոն աշխատանքը, եւ նա իր ուժերը կենտրոնացրեց ինքնապաշտպանութեան հարցի վրայ:

Լեռնային Ղարաբաղի պատգամաւորների քաղաքական խնդրանքին Ադրբեջանը պատասխանեց **Սումգայիթեան ջարդերով**: 1988 թ. նոյեմբերի 21-ին Ադրբեջանի ամբողջ տարածքի վրայ հայերի զանգուածային ջարդեր սկսուեցին:

Հայկական տարածքները թուրքերից ազատագրելու եւ

պաշտպանելու համար պայքարի ելած հայերն անհաւասար պայմաններում վճռական էին տրամադրուած: Խորհրդային իշխանութիւնները իրենց հերթին ամէն գնով չանում էին խեղդել ազատագրական շարժումը: Բնական է, որ բռնութիւններ պիտի լինէին նաեւ Շահումեանի շրջանում: Շահէնենց պատուիրակութեան Ստեփանակերտ մեկնելուց կարճ ժամանակ անց սկսուեցին թուրքերի բռնութիւնները Շահէնի նկատմամբ: Իրաւապահների մի խումբ ներխուժեց պահածոների գործարան եւ բռնագրաւեց փաստաթղթերը, սակայն չյաջողեց տանել դրանք. գործարանի բանուորները շրջապատեցին այդ խմբի անդամներին, որոնք ստիպուած եղան մի կերպ ճողոպրել՝ առանց իրենց ակնկալածը տանելու:

Հակամարտութեան առաջին տարիներին խորհրդային մտածողութիւնն ու հոգեբանութիւնն իներցիայով տիրապետում էին Հայաստանի բարձր իշխանաւորների շրջանում, որոնք զուրկ լինելով նախաձեռնող կամքից՝ որդեգրել էին զգուշաւոր, անվճռական դիրքորոշում եւ հաշուի էին առնում խորհրդային սահմանագծերը: Օրուայ հայ ղեկավարների գիտակցութեան եւ ենթագիտակցութեան մէջ տպաւորուել էր Արցախը՝ ԼՂԻՄ-ի սահմաններով: Կոմունիստ հայերի համար օրինականը, առանցքայինը, պետականը ԼՂԻՄ-ն էր: Նրանք ուզում էին «յարգել պետականութիւնը» եւ ԼՂԻՄ-ից բացի բան չէին ուզում: Նրանք չէին պատկերացնում Արցախ ամբողջական աշխարհը, Հայաստանն անկախ: Եւ այդպիսի անատամ դիրքորոշման արդիւնքն այսօրուայ Արցախի հարցի առկախ, անճանաչ վիճակն է միջազգային դիւանագիտական մարմիններում:

Վերազգայնականները նոյնիսկ չհամարձակեցին օգտուել ստեղծուած բարենպաստ իրադրութիւնից եւ գործողութիւն ձեռնարկել գրեթէ անպաշտպան Նախիջեւանի վրայ, այլեւ ձեռքից թողեցին Շահումեանը, որը գրեթէ 100 տոկոսով բնակեցուած էր հայերով: Կրաւորական այս հոգեբանութիւնը, ցաւօք, բնորոշ է խորհրդային հայ «գործիչներին»: Դա սովետական մարդկանց բնաւորութեան առանձնայատկութիւնն

է, վարքաոճ, որից դրանց կրողները մինչեւ օրս չեն ազատուել ու հաւանաբար երկար ժամանակ չկարողանան: Այդ մեռած հոգիների համար ամէն ինչ պիտի վերեւից ասուէր, մանաւանդ Կոմկուսի կենտկոմի ուրուականը դեռեւս կար, որով եաղարձի սին յոյսեր էին փայփայում:

Շրջանի վիճակը գնալով վատանում էր եւ Գիւլիստան գաւառի սահմանների երկայնքով թուրքերի հոծ, աւազակաբարոյ խմբեր էին սկսում երեւալ: Թուրքերը, որոնց համար գողութիւնը, թալանն ու բռնութիւնները կենսական պահանջներ են, օգտւում էին անիշխանութիւնից եւ տրւում էին իրենց բնայատուկ այդ պահանջմունքների բաւարարմանը: Հայերը եւս յարձակումներ էին գործում թուրքերի վրայ՝ ետ բերելու համար նրանց թալանած, գողացած ինչքը եւ անասունները:

Սկսւում են ազգամիջեան բախումները: Թուրքերի զինեալ յարձակումները հայկական գիւղերի վրայ դառնում են յաճախական: Սկզբնական շրջանում կրակում էին հրացաններից եւ աւտոմատներից: Յարձակումներ էին գործում Բաշ-Կշլաղից, Սարիսուից, Թոդանից, Շեֆեկից եւ թուրքաբնակ այլ գիւղերից:

Բախումների ուժգնացմանը զուգընթաց՝ արդէն հայաբնակ գիւղերը հրակոծւում էին նաեւ աւելի հեռաւոր բնակավայրերից՝ հեռահար զէնքերով՝ ալագաններով, հրանօթներով, տանկերով: Հայոց բնակավայրերի վրայ սկսում են պատուել ուղղաթիռներն ու ինքնաթիռները: Թուրքերը հեռահար զէնքերով աւերում էին հայոց բնակավայրերը եւ ահաբեկում այնպիսի զինատեսակներով, որոնցից պաշտպանուելը չափազանց դժուար էր ռազմագիտօրէն չկազմակերպուած ազգաբնակչութեան համար:

*1989-ի յունիսին կամ յուլիսին Կոմկուսի շրջանային կոմիտէի քարտուղարը դեռեւս **Միրզոեան** էր՝ Բաքուից ուղարկուած Ադրբեջանի մարդը: Առգոյ քարտուղարը **Շահէնի** հետ վերջին հանդիպման ժամանակ առաջարկել էր ժողովրդին «օգնելու» մի եղանակ, որը եւ թուրքերի բաղձանքն էր. հանրապետութեան կառավարութիւնը բացում է ճանապարհ-*

*ները, փոխադրամիջոցներ տրամադրում եւ «օգնում» բնակչութեանը Հայաստան տեղափոխուելու, ինչպէս արել էին Շամքորի, Դաշքեսանի եւ Խանլարի շրջաններում: Շահումեանի շրջկոմի առաջին քարտուղարը ջանում էր բնակչութեանը հեռու պահել պայքարից, արգելակել նրա ծաւալումը: Հայրենասէր տղաները մեկուսացրին այդ դրածոյին եւ նրա իշխանութիւնը սահմանափակեցին: Ժողովուրդը պահանջեց հրաւիրել կուսշրջկոմի պլենում, աշխատանքից ազատել առաջին քարտուղարին ու ընտրել նորին: Բնական է, որ ժողովուրդը չէր հանդուրժի նման ղեկավարի: Հաւաքի նախաձեռնողները Գիւլիստանի բնակիչներն էին: Նրանք մի քանի բեռնատար մեքենաներով եւ աւտոբուսներով ուղեւորւում են շրջկենտրոն: Հրահանգ ստացած ոստիկանութիւնը փակում է մեքենաների ճանապարհը, բայց ժողովուրդը ոտքո՛վ շարունակում է երթը դէպի շրջկենտրոն: Մնացեալ գիւղերից եւս մարդիկ շարժւում են դէպի Շահումեան աւան, ուր վերսկսւում են հանրահաւաքները: Հրաւիրւում է պլենում եւ Միրզոեւի փոխարէն առաջին քարտուղար է ընտրւում շրջգործկոմի նախագահ **Վլադիմիր Աղաջանեանը**: **Շահէն Մեղրեանը**, որ մինչ այդ Շահումեանի շրջանի գիւղատնտեսական արդիւնաբերութեան նախագահն էր, ստանձնում է շրջգործկոմի նախագահի պաշտօնը:*

*1991 թուականի յուլիսի 25-ին Շահումեանի շրջանային որհրդի նստաշրջանը դիմում է Ադրբեջանի Գերագոյն խորհրդին՝ խնդրելով շրջանը միացնել ԼՂԻՄ-ին: Նոյն թուականի յուլիսի 26-ին՝ ժողովրդի ճնշման տակ եւ նրա վճռական պահանջով **Շրջխորհուրդը որոշում է ընդունում ԼՂԻՄ-ի հետ միաւորուելու մասին:** Ադրբեջանի իշխանութիւնները նոյն օրը Շահումեան են ուղարկում հանրապետութեան կենտկոմի երկրորդ քարտուղար, յայտնի հայատեաց **Պոլիանիչկոյին**: Սոյն դրածոն հրաժարում է պահանջում այդ որոշումից: Շրջանի ակտիւի հետ ունեցած հանդիպման ժամանակ նա յայտարարում է. «Ով չի ուզում ապրել այստեղ, կարող է գնալ»: **Շահէն Մեղրեանը, Բենիկ Խաչատրեանը** եւ մնացեալ ելոյթ ունեցողները պատասխան են տալիս. «Սա մե՛ր Հողն է, եւ*

մե՛նք ենք ապրելու այստեղ: Դուք կարող էք գնալ ուր ուզում էք»: *Ժողովրդական վրդովմունքից տագնապած՝ թուրքացած այդ նահմութեան տիպարը ետնադռնից պահակախմբի օգնութեամբ ճողոպրում է: Օգոստոսի 1-ին Բաքուն դիմումին պատասխանում է մերժումով:*

1989 թուականի սեպտեմբերի 2-ին ընդունուեց Շահումեանի շրջանի եւ ԼՂԻՄ-ի վերամիաւորման պատմական որոշումը:

Անդրէյ Պրալնիկով. «Շահումեանը յատուկ շրջան է: Վարչականօրէն դա չէր մտնում նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մէջ: 1990-ին, արտակարգ դրութիւն մտցնելուց յետոյ, անցաւ «որոշ կից» շրջանների շարքը, ուր նոյնպէս գործում էր արտակարգ դրութեան ռեժիմը: Այսպէս Մոսկուան հաւասարեցրեց Շահումեանի եւ ԼՂԻՄ-ի հայերի իրաւունքները: Գրեթէ 70 տարուայ պատմութիւն ունեցող բաժանման արհեստականութեան մասին խօսում է այն փաստը, որ անցած դարասկզբի Գիւլիստանի պայմանագիրը, համաձայն որի Ղարաբաղը մտնում է Ռուսաստանի կազմի մէջ, ստորագրուել է մի վայրում, որն ինքնավարութեան մէջ չի մտնում: Գիւլիստանը՝ Շահէն Մեղրեանի հայրենիքը յայտնուեց Ադրբեջանի Շահումեանի շրջանում» *(«Դա կեղտոտ պատերազմ կը լինի», «Երկիր», 1992 թ., 31 հոկտեմբերի):*

*ՀՀ իշխանութիւնների ազդեցութեամբ՝ Շահումեանի նկատմամբ անտարբերութեան ու սառնութեան այդ վերաբերմունքը չարունակուեց յետագայում եւս, եւ այս շրջանն իբրեւ մի օտար մարմին՝ թողեցին բախտի քմահաճոյքին: Դրա վերաբերեալ ներկայումս արտայայտւում են ազատօրէն: **Քերոբ Սարգսեանի** յօդուածաշարում կարմիր թելի նման անցնում է այն համոզումը, թէ Հայաստանի Հանրապետութեան բարձրաստիճան ղեկավարութիւնն ինչ-ինչ ստուերային բանակցութիւնների հիմքի վրայ Շահումեանի շրջանից փաստօրէն հրաժարել է, եթէ ժողովրդական լեզուով ասենք՝ ծախել է (տե՛ս նշեալ հեղինակի «Ինչպէ՛ս կործանուեցին «Արաբօ»ի մարտիկները» յօդուածաշարը «Իրաւունք» պարբերաթերթի «Հետա-*

քննութիւն» յաւելուածի 2008 թուականի յունիս-հոկտեմբերի թիւերը):

Ապագան մարդու աչքերից թաքնուած է եւ ո՛չ ոք գիտէ իրադարձութիւնների այն ընթացքը, որ յետոյ է լինելու: Շահումեանցիներն էլ մեր ամբողջ ժողովրդի հետ միասին եւ նրա նման ձեռնամուխ էին եղել ազատագրական պայքարին:

Գլուխ հինգերորդ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Շահէն Մեղրեանը չրջանի առաջնորդ

Գաղափարական յստակ դիրքորոշում ընդունելուց յետոյ ինքնապաշտպանութեան կազմակերպման գործի մէջ կարեւոր խնդիրը պայքարի համար հաւատարիմ մարդկանց յայտնաբերելն է, հրամանատարի կամ առաջնորդի ընտրութիւնը: Ազատագրական պայքարը նախկինում հանրային կեցութեան մէջ առանձնապէս տեղ չգրաւող համեստ մարդկանցից ծնեց մի շարք երեւելի գործիչներ, հրամանատարներ, մեծաթիւ նուիրեալներ, ովքեր պիտի հերոսանային հէնց այդ պատերազմի ժամանակ: Շահումեանի ակտիւ մարդկանցից կենտրոնական դէմքը ***Շահէն Մեղրեանն էր****:*

Ազատագրական պայքարի ասպարէզ էր մտնում քաղաքականապէս հասուն, բարոյա-կամային բարձր յատկութիւններով եւ կենսափորձով օժտուած մի մարդ: Մեղրեանները Գիւլիստանում եւ գաւառում յայտնի էին որպէս պատմական եւ պատուական ընտանիք: Տոհմի անուանադիր ***Մեղրիի*** *մասին արդէն խօսք եղել է: Բնաւ նշանակութիւն չտալով իշխանական ծագման այսպէս կոչուած էլիտար տեսութիւններին եւ անկախ այն հանգամանքից, թէ Մեղրեան գերդաստանը մելիքական ծագում ունեցե՞լ է թէ ոչ՝ նրանք անհատապէս եւ ընտանեօք կրում են մելիքական հոգեբանութեան գծերը, հայրենապաշտ ոգին, գաւանանքով հայ քրիստոնեայ են, ճանաչում եւ պաշտպանում են ազգային արժէքային համակարգը: Այսինքն՝ Մեղրեանները բարոյական բաւարար հիմք ունէին լինելու ժողովրդի առաջնորդներ: Նրանց կապը հարազատ ժողովրդի հետ եղել է անմիջական եւ անխարդախ, ունեցել են հեղինակութիւն, խորհրդային բռնատիրութեան պայմաններին պահպանել են բարեպաշտ հայութեան որակները: Վերոնշեալ դրական յատկանիշների մարմնացում էր յատկապէս* ***Շահէն Մեղրեանը****: Հակամարտութեան հէնց սկզբից էլ Շահէնը յստակ պատկերացնում էր հայ-թուրքական բախումների անխուսա-*

փելիւթիւնը, նոյնիսկ դա զգում էր բնազդական անսխալականութեամբ: Ի տարբերութիւն քաղաքական-պետական որոշ գործիչների նա լաւ էր ճանաչում թուրքին եւ գերազանց գիտէր թէ՛ հայութեան պատմական, ռազմավարական խնդիրները, թէ՛ իր դերքորոչումից թելադրուող գործունէութիւնը: Նա ասում էր, որ մենք այսօրուանից իսկ պիտի պատրաստ լինենք, որովհետեւ Ջարդախլուի դէպքերը հասնելու են Շահումեան:

*1989-ից, այսինքն՝ հէնց սկզբից, չնայած ներքին զօրաց առկայութեանը, ինքնապաշտպանութեան խմբերը դուրս են գալիս ընդհատակից: **Շահէն Մեղրեանի** առաջարկութեամբ ստեղծւում է ինքնապաշտպանութեան շրջանային խորհուրդ՝ իր իսկ նախագահութեամբ: Անդամներն էին՝ **Աշոտ Խաչատրեանը, Շահէն Յովասափեանը, Բորիկ Բաբաջանեանը, Սամսոն Մարիանեանը**: 1990 թուականին ստեղծւում էին շաբներ, որոնք պէտք է գործէին Ադրբեջանի ենթակայութեան տակ գտնուող հայերի ապահովութեան հարցերով: Այն ժամանակ այդ աշխատանքները ղեկավարում էր ներքին գործոց նախարարի պաշտօնակատար **Աշոտ Մանուչարեանը**, որը նշանակուել էր պայքարի հետ կապուած բոլոր աշխատանքները համակարգող՝ Օպերատիւ շտաբի պետ: Գերագոյն խորհրդի նախագահը **Լեւոն Տէր-Պետրոսեանն էր**, իսկ վարչապետը՝ **Վազգէն Մանուկեանը**: Այն ժամանակ կար որոշում, համաձայն որի՝ գործադիր ոլորտի որեւէ աշխատող շտաբի ղեկավար կազմում աշխատել չէր կարող: Բայց Շահէնի պարագային բացառութիւն արուեց: Նոյն շտաբի անդամ **Վահան Շիրխանեանն** ասաց. «Շահէնն այն մարդն է, որի նկատմամբ այդ բացառութիւնը պիտի անենք»: Քանդի դժուար էր պատկերացնել մէկ այլ մարդու, ով կազմակերպչական այդպիսի ջիղ ունենար եւ դիմացինին համոզելու ունակութիւն: 91 թուականին **Կիմ Բալայեանը** կամաւորականներ էր տանելու Հաթերք: Այնտեղ տեղադրուած էր ռազմական՝ տեղիս եւ Հայաստանից եկած զոհատների համար: Եղանակը թռիչքային չէր եւ զոհատի տեղափոխումը յետաձգւում էր: Յաջորդ օրը Շահէնը*

Շահումեանից եկաւ եւ կարծես իր ոտքը բարի լինէր՝ եղանակը բացուեց: Երկու ուղղաթիռներն էլ բարձած էին եւ պիտի թռչէին: Ուղղաթիռներից մէկը պիտի իջնէր Հաթերք, միւսը՝ Շահումեան: Երբ տեղից պոկուեցին եւ հազիւ 80 մետր էին բարձրացել, օդանաւի հրամանատարը կիմին ասաց.

– Պարոն Բալայեա՛ն, միւս ուղղաթիռը փչացել է, նորից պիտի իջնենք: Շահէն Մեղրեանը գալու է եւ համոզի, որ մեր ուղղաթիռը բեռնաթափենք, որպէսզի իր բեռը տեղափոխի: Նպատակային կը լինի, եթէ ձեր բեռը տանենք թափենք եւ վերադառնանք՝ իրենցը տանենք: Այլապէս աւելորդ ժամանակ եւ ուժ է ծախսուելու:

Կիմը նոյնիսկ զայրացաւ.

– Ինչպէ՞ս կարելի է այդ քայլին գնալ: Ես մէկ չաբաթից աւելի սպասում եմ, որ էս անչափ կարեւոր բեռը տանեմ, ջոկատն ինձ է սպասում, հիմա ի՞նչ գիջում:

Սակայն Շահէնը եկաւ եւ իր մտերմիկ, աչխոյժ ոճով դիմեց Կիմին.

– Հը՞, չեֆ, ի՞նչ ես ասում, մեր մարտիկների վիզը հո ծուռ չե՞ս թողնի: Բե՛ր ձեր ուղղաթիռը բեռնաթափենք, որ մերը շուտ տանենք:

– Շահէ՛ն, մեր վիճակի մէջ մտի՛ր. մի չաբաթ է՝ տղաներն ինձ են սպասում, էս չիլկէքը պիտի շուտ տանենք տեղ հասցնենք, որովհետեւ ուղղաթիռները գալիս՝ յարձակուում են եւ պաչպանուելու հնար չկայ:

– Հաթերքի մօտ էս պահին մարտական գործողութիւններ չկան, չէ՞:

– Այո՛, էս պահին չկան, մենք նախապատրաստուում ենք:

– Բա քո խիղճը ո՞նց կարող է քեզ չտանջել, երբ իմանաս, որ ռազմամթերքի պակասութեան պատճառաւ մենք զոհեր ենք տուել:

Եւ նման մի շարք փաստեր բերելով, հինգ րոպէ անց Կիմին համոզեց: Վերջինս ծիծաղելով ասաց.

– Շահէ՛ն, բոլորը գիտէին, որ դու գալու ես ինձ համոզես: Ես խոստացել եմ, որ դա պիտի չլինի: Հիմա ի՞նչ անենք:

Դա հերթը չզիջելու կիմի վերջին յուսահատ փորձն էր, որին Շահէնը յարմար պատասխան պիտի չգտնէ՞ր.

- Մեր հայրենիքը մէկն է, չէ՞. ուր աւելի անհրաժեշտ է՝ նրան էլ պիտի առաջնահերթութիւնը տրուի: Այդպէս չէ՞:

Ո՞վ կարող էր հակառակն ապացուցել: Իրենց բեռը տարան, յետոյ՝ կիմենք թռան:

*1991 թուականին Ինքնապաշտպանութեան խորհուրդը վերափոխւում է Ռազմական խորհրդի, որին համալրում են **Դնեպրիկ Բաղդասարեանը եւ Սերգէյ Զալեանը**: Այս տեղեկութիւնը մենք վերցրել ենք Աշոտ Խաչատրեանի վերոնշեալ դրքից, սակայն յարգարժան հեղինակը պիտի նշէր, որ Սերգէյ Զալեանից առաջ Ռազմական խորհրդի շտաբի պետը եղել է գնդապետ **Ֆելիքս Գզողեանը**, որի ներդրումը Շահումեանի ինքնապաշտպանութեան գործում անուրանալի է:*

***Շահէն Մեղրեանը** շատ բնական կերպով դարձել էր շրջանի առաջնորդ: Դա զարմանալի երեւոյթ է, որովհետեւ սովորաբար մարդիկ պայքարում են առաջնորդ դառնալու, իրենց կարգավիճակի համար: Շահէնը ո՛չ ընտրուել է, ո՛չ էլ պայքարել: Նա դարձել է առաջնորդ բոլորի լուռ համաձայնութեամբ: Շահէնի ձեռքում էին կենտրոնացել տնտեսական, քաղաքական, ռազմական ասպարէզները. նա պիտի ե՛ւ շրջանը ղեկավարէր, ե՛ւ կազմակերպէր ինքնապաշտպանութիւնը: Կարճ ասած՝ Շահէնը դիկտատոր էր, իր կամքը թելադրող: Եւ եթէ իր կամքը բարի չլինէր, եւ եթէ իր ձեռքում այդքան լծակներ ունեցող մի անձ իմաստութիւն չունենար, ամէն ինչ քաոսի կը վերածուէր: **Անդրէյ Պրեալնիկով**. «Շահէն Մեղրեանին յաճախ են անուանում դաշտային հրամանատար, ինչն այնքան էլ ճիշտ չէ. մարտերը Ղարաբաղում հիմնականում դիրքային բնոյթ են կրում: Ճիշտ կը լինի ասել, որ նա շրջանի ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարն է»:*

***Վալտեր Եղեան**. «Պիտի ասեմ, որ Շահէնը միայն շահումեանցիներին չէր մտերիմ, այլ՝ մարտակերտցիները եւս նրան լաւ էին ճանաչում: Նրա անունը հանրածանօթ էր Արցախում եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ, եւ ամէն ոք կարող էր*

հայցել նրա օգնութիւնը: Ուր էլ նա իր թեկնածութիւնը դնէր, կ՚անցնէր անպայման: Շահէնի հետ չփուելը մեծ բաւակա-նութիւն էր: Մենք իրենից շատ բան ենք սովորել: Ո՛չ մի շա-հումեանցի Շահէնի մասին վատ խօսել չի կարող»:

Շահումեանը Շահէնի եւ նրա զինակիցների չնորհիւ մոռա-ցեալ ծայրամասից դարձաւ ինքնաճիգ հմայքի երկրամաս, որ-տեղ ցանկանում էին լինել շատերը: Արցախում նոյնիսկ մի կարգին հեռուստացոյց չկար, այնինչ Շահումեանում Շահէնն արբանեակային պատկերաորս (անտենա) էր դրել, որով տեղե-կանում էին, թէ աշխարհում ինչ է կատարւում: Աւելին, ստեղ-ծեցին Շահումեանի շրջանային հեռուստացանց, եւ եթէ որեւէ գիւղում հարսանիք կամ այլ հանդիսութիւն էր լինում, ամբողջ շրջանը տեսնում էր: Նման բան չկար նոյնիսկ Ստեփանակեր-տում: Պաշտպանում էին ե՛ւ շրջանը, ե՛ւ ոգին, ե՛ւ հացը, ե՛ւ հողը:

Հրանտ Խաչատրեանը *եւ իր ուղեկիցները* ***Վիգէն Շիրինեանի*** *յուղարկաւորութիւնից յետոյ հնարաւորութիւն են ու-նեցել մէկ շաբաթ հիւրընկալուելու Շահէնի հայրական տանը: Ազատ ժամանակը շատ էր, իսկ Շահէնը, բնականաբար, զբաղուած էր իր գործերով, բայց օրուայ մէկ մասն անց էին կացնում շտաբում, եւ այդ ժամերը յագեցած էին իր առօրեայ գործունէութեամբ: Յաճախ կատակում էր: Մի անգամ անակնկալ հրետակոծութիւն սկսուեց: Արկերը թափւում էին շտաբի շրջակայքում: Երեւանից եկած մի քանի պատգա-մաւորների համար միանգամայն անակնկալ այդ իրադրու-թիւնը փոխեց բնականոն հոգեվիճակը նեարդային տագնա-պով: Շահէնն իրեն յատուկ միջոցներով եւ առաջին հերթին նուրբ հումորով կարողացաւ դրսեկ մարդկանց մէջ վերականգ-նել ինքնավստահութիւնը, եւ համոզուեցին, որ իրենց գլխին արկեր չեն թափւում: Հանգստացան, հանդարտուեցին:*

Ղարաբաղեան շարժումն արդէն սկսուել էր եւ Շահէնը Գիւղարդի տնօրէնն էր: ***Լեւոն Մելիք-Շահնազարեանը*** *բջիջ ստեղծելու նպատակով ուզում էր գնալ Շահումեան: Նրան տեղեկացրին, որ Շահումեանում արդէն եռանդուն գործու-*

*նէութիւն է ծաւալուել եւ կայ մի անձ՝ **Շահէն Մեղրեան**, ում հետ անհրաժեշտ է ամուր կապ հաստատել եւ աշխատել միասին:*

«88-ին եկայ Շահումեանի շրջան, գնացի Գիւղարդ եւ ծանօթացայ Շահէնին: Այդ զրոյցի տպաւորութիւնը մինչեւ օրս վառ է մնացել յիշողութեանս մէջ: Մենք **Իգոր Մուրադեանի** հետ էինք գնացել: Ներկայացրինք մեր առաջարկները մի ընդհանուր գործի վերաբերեալ: Շահէնը համաձայնեց մեր բոլոր կէտերի հետ, բացի մէկից, եւ կարողացաւ արագ եւ շատ հիմնաւոր, կշռադատուած լուսաբանել, թէ ինչո՛ւ ինքը համաձայն չէ: Մենք միանգամից համաձայնեցինք Շահէնի հիմնաւորման հետ: Եւ իմ մէջ համոզմունք առաջացաւ Շահէն Մեղրեան ազգային մտաւորականի վերաբերեալ: Ես բարձր եմ գնահատում նման կերպարը, որովհետեւ **իսկական մտաւորականն ազգայի՛ն մտաւորականն է: Իսկական ազգային մտաւորականը երբեք չի կոտրւում եւ չի չեղւում իր ճանապարհը: Դա Շահէն Մեղրեանն էր: Շահէնի մէջ կար մի ջիղ, մի տրուած չնորհ, որին բոլորը հաւատում էին: Դա հէնց իսկական մտաւորականութիւնն է, որի առաջ նոյնիսկ թշնամին է խոնարհւում**: Դա գալիս էր **Զինաւոր ղայուց»:**

*Շահէնը դարձաւ առաջնորդ՝ բոլորի լուռ համաձայնութեամբ: Նա իրեն ճանաչողներից մէկի արտայայտութեամբ դարձաւ **շրջանի հայրը**: Շահէնից հասակով, ալեհեր մարդիկ գալիս էին, նրանից խորհուրդ էին հարցնում եւ նրա ասածն ընդունում էին որպէս անառարկելի, վերջնական ճշմարտութիւն: Եւ այդ ամէնը կատարւում էր առանց գոռոզամտութեան, նոյնիսկ առանց ձայնը բարձրացնելու, ուժի դիմելու: Շահէնը մտածում էր ո՛չ միայն շրջանը պաշտպանելու, այլեւ շրջանի բնակչութեան ոգին բարձր պահելու ուղղութեամբ:*

***Նովիկ Գիւլումեանը** Շահէնին ճանաչել է, երբ դեռ նոր էին սկիզբ առել պաշտպանութեան ձեռնարկումները: Դեռ կռիւներ չկային եւ շրջանում սկսել էին եկեղեցիներ կառուցել: Դա նշանակում է, որ շրջանում իրենք էին նստած: Այնուհետեւ փոխուեց շրջանի ղեկավարութիւնը.. Շահէնը ղեկավարութիւնն*

իր ձեռքը վերցրեց: Ուրիշ յարմար թեկնածու չկար, որ ի զօրու լինէր կազմակերպել չրջանի ինքնապաշտպանութիւնը: Միակը Շահէնն էր եւ նա դա արեց: Սկսած 1986 թուականից, Շահէն Մեղրեանը կազմակերպական մեծ աշխատանքներ է կատարել ազատագրական պայքարն ընթացքի մէջ դնելու եւ հունաւորելու համար: Իսկ այն ժամանակ կային ԽՍՀՄ զինեալ ուժեր, կար Ադրբեջանի ՕՄՕՆ եւ Շահումեանն իրենց տարածաշրջանը համարող նախանձախնդիր թուրքեր: Այն ժամանակ դեռ ՀՀՇ-ն ի յայտ չէր եկել եւ Արցախեան պայքարը թւում էր բոլորի մտահոգութեան առարկան: **Նովիկ Գիւլումեան.** «Ձափազանց չեմ լինի, եթէ ասեմ, որ Շահէն Մեղրեանը չրջանի միակ մարդն էր, որ ճիշտ ժամանակին գտնուում էր ճիշտ իր տեղում: Նա օժտուած էր հայրենասիրական եւ մարդկային բոլոր առաքինութիւններով: Նա ծնուած էր առաջնորդ լինելու համար: Նա չատ էր վստահում իր չրջապատի մարդկանց: Մի առիթով նա ինձ ասաց. «Պէտք չէ մարդկանց մասին չտապ կարծիք կազմել: Պէտք է հաւատալ, վստահել, փորձել եւ նոր՝ կարծիք կազմել: Պէտք չէ ինչ-որ բանի համար մեղադրել մարդուն, որում դու 100 տոկոսով համոզուած չես: Պէտք է բազմակողմանի ստուգել, նոր միայն մեղադրել»:

Արտակարգ մտածելակերպ ունէր: Կարողանում էր ամենաբարդ իրավիճակները ճիշտ գնահատել եւ կողմնորոշուել, եւ լսելով բոլորի կարծիքները ճիշտ որոշում էր կայացնում, որը վերջնական էր եւ փոփոխման ենթակայ չէր:

Մարդկանց հետ խօսելու, բարեկրթօրէն վերաբերելու, հարցերը պարզաբանելու եւ համոզելու հիանալի յատկանիշներ ունէր: Կարողանում էր կարդալ եւ հասկանալ մարդկանց հոգիները, հասկանալ նրանց վարքի դրդապատճառները եւ մեր պայքարից հնարաւոր չեղումները:

Ես ղեռեւս չէի կարող պատկերացնել, որ, օրինակ, **Լեւոն Տէր-Պետրոսեանն** ազգային պայքարին, Արցախին կարող է այդպիսի վերաբերմունք ցուցաբերել եւ իշխանութիւնները կը գործեն դրսի թելադրանքով: Սակայն Շահէնը երբեմն այսպիսի միտք էր արտայայտում. «Ես տեսնում եմ, որ մենք՝ ինքնե՛րս

պէտք է կազմակերպենք մեր ինքնապաշտպանութիւնը»: Ինքը չատ էր խորաթափանց: Իր հոգեբանութեամբ նա կարող էր լեզու գտնել անգամ իր հակառակորդի հետ: Շահէնի չնորհիւ էր, որ պարետային խստակարգի օրերին կարողանում էինք ռուս հրամանատարութեան հետ լեզու գտնել»:

ՋԷՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ԽՆԴԻՐԸ

Ազատագրական պայքարի ելած եւ հաւատաւոր ազգը միշտ գտնում է բաւարար միջոցներ, Աստուածային օժանդակութիւն՝ ինքնապաշտպանութեան պայքարը յաղթանակով աւարտելու համար:

Ինքնապաշտպանութեան կազմակերպման գլխաւոր խնդիրներից այն օրերին կամաւորականների գրանցումն էր, ջոկատների ստեղծումը, զէնք-զինամթերքի հայթայթումը եւ նմանատիպ հարցեր:

*88-ին երբ սկսուեց Շարժումը եւ ընթացք առան Հայաստանի հետ վերամիաւորման ցոյցերը, պահածոների գործարանի տնօրէն **Շահէն Մեղրեանը** փետրուարի 19-ին իր մօտ կանչեց նոյն գործարանի մատակարար **Պօղոս Մեղրեանին**: Յաջորդ օրը՝ ամսի 20-ին նրանք պիտի Սումգայիթ մեկնէին՝ իրենց հօրեղբօր թոռան համար հարս բերելու: Առանձին զրոյց ունեցան օրըստօրէ ծաւալուող ազգային շարժման մասին: Շահէնը Պօղոսին հարցրեց, թէ կը ցանկանա՞յ արդեօք միասին բացայայտ գործեն այդ ուղղութեամբ:*

- Եղբայր ջա՛ն, ազգի հարց է, դու հասկանո՞ւմ ես, թէ ի՞նչ է ազգային հարցը:

- Եթէ չեմ հասկանում, ասա՝ հասկանամ:

- Ուրեմն, ազգային խնդիր է առաջացել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ: Հայկական հարց է: Էդ հարցի համար իմ թիկունքին կը կանգնե՞ս:

- Խնդրե՛մ:

Այդ օրերին ադրբեջանցիների հետ խնդիրը չատ էր սրուել: Եղբայրները սկսեցին գաղտնի կերպով գործել, բացայայտ կերպով որեւէ բան չէին անում:

Գիւլիստանցիներին միաւորող մտերմութիւնը յայտնի է ամենքին: Շարժումը սկսուելուց յետոյ հայաստանաբնակ շահումեանցիները չրջանի գիւղեր էին հասցնում որսորդական զէնքեր, ինքնապաշտպանութեան տարրական պիտոյքներ, նիւթեր, որոնք իմաստ ունէին միայն փոքրաթաւալ բախումների պարագային եւ որոնք խորհրդաւոր տպաւորութիւն էին գործում այն օրերին, երբ հայ գիւղացին դեռեւս «սուր, զէնք չէր տեսած»:

Վալերի Խաչատրեանի *չանքերով Աբովեան քաղաքում ստեղծուեց «**Նապատ**» հայրենակցական միութիւնը: Հանգանակած միջոցներով միութիւնը չրջան էր ուղարկում մեծ քանակութեամբ սննդամթերք, գրենական պիտոյքներ, գրքեր, հագուստ: Հանրապետութեան տարբեր վայրերից չրջանին օգնութիւն էին հասցնում **Էդուարդ եւ Վլադիկ Ղուլեանները**, քժիշկ **Հենրիկ Սեփեանը**: Կապեր ստեղծուեցին ԼՂԻՄ-ի «Ամարաս» հայրենակցական-բարեգործական միութեան հետ:*

Պօղոս Մեղրեան. «89-ից սկսել եմ Երեւանից ուղղաթիռով զէնք բերել: Իջնում էինք սարերում, որտեղ գիւղացիները չէին հանդիպում: Սկզբնական չրջանում զէնք եմ ձեռք բերել մեր անուանի տղաների տուած փողերով: Դրանից յետոյ կար «Ամարաս» բարեգործական միութիւնը **Բորիս Դաղամեանի** գլխաւորութեամբ, որի գործունէութիւնն իրականացնում էր **Արթուր Ալեքսանեանը (Ամարասի Արթուր)**: Ստեփանակերտից է նա: Ինքն էր բերում բոլոր զէնքերը եւ ինձ էր փոխանցում: Մենք գործի գաղտնիութիւնն ապահովում էինք եւ չրջանի տղաներին ապահովել ենք»:

*Զէնքի ձեռք բերումը դժուարին գործ էր, մեծ գումարների հետ կապուած, եւ այդ իսկ պատճառով ձեռքբերումները շատ չէին: Հանգանակած գումարներով առանձնապէս բաւարար զէնք հնարաւոր չէր ձեռք բերել: Այլ հնարաւորութիւն բացուեց: Ըստ **Վահան Յովհաննիսեանի**՝ 1990 թուականին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի որոշմամբ, դաշնակցականների առաջին զինեալ ջոկատները, հայ հայրենասէրների կամաւորական մարտական միւս ջոկատների հետ*

*միասին, սկսեցին Ղարաբաղի ինքնապաշտպանութեան կազմակերպումը: Այս գործի ընդհանուր համակարգողը եւ ղեկավարը **Հրանտ Մարգարեանն էր**: Հրանտի ստեղծած ռազմական խորհրդում, Վահան Յովհաննիսեանի խօսքով, ՀՅԴ «Երեւան» կոմիտէի չատ տղաներ մեծ դեր խաղացին Հայաստան եւ Ղարաբաղ մեծ քանակութեամբ զէնք գաղտնի հասցնելու եւ մարտական ջոկատներ պատրաստելու գործում: **Նովիկ Գիւլումեանը** յիշում է, որ հաւանաբար 90-ի մայիսին Շահէն Մեղրեանը բարձրացել է Մռաւայ սարը եւ դաշնակցականներից զէնք վերցրել: Մինչ այդ կային որսորդական հրացաններ:*

*Այդ ժամանակ էլ շրջանի ղեկավարութիւնը փոխուեց: Միրզոեւին վտարեցին շրջանից: Ղեկավար նշանակուեց **Վոլոդիա Աղաջանեանը**, որը, ճիշտ է, վարչարար էր, բայց անկարող էր ժողովրդին առաջնորդել. չունէր անհրաժեշտ ջիղ ու եռանդ: Շրջանում ջոկատների կազմաւորում ու զէնքի ձեռք բերումը կարծես թէ իր պարտականութիւններից դուրս էր: Այդ պարտականութիւնը կիսագաղտնի, բայց մեծ չանասիրութեամբ իր վրայ էր վերցրել **Շահէն Մեղրեանը**:*

*Մեծ դժուարութեամբ ձեռք բերած զէնք-զինամթերքը տեղերում պահելը դառնում էր խնդրայարոյց: Ստեփանակերտում նոյն ժամանակ նստած էր ռուս զօրքը **Սաֆոնովի** հրամանատարութեամբ: Այնտեղ չատ էին նեղում մեր տղաներին եւ մեր զինեալ ուժն անկարող էր առանձնապէս գործ անելու: Զինուորական խստակարգ (ռեժիմ) եւ արտակարգ դրութիւն մտցնելու հետեւանքով շրջկենտրոն էր բերուել խորհրդային մի զօրաջոկատ, որը տեղաբաշխուել էր ըստ բնակավայրերի: Գործում էր զինուորական պարետատունը: Զինուորական պարետը չարժուում էր ոչ թէ իր կամքով, այլ՝ Ադրբեջանի իշխանութեան թելադրանքով, ուստի եւ պարբերաբար անակնկալ ստուգայցերի միջոցով զէնքի առգրաւման գործողութիւններ էր կազմակերպում: Մարդկային փոխյարաբերութեանց լեզուին գերազանց տիրապետող **Շահէն Մեղրեանը** կարողացել էր բարեկամական կապ հաստատել պարետի եւ պարետատան սպաների հետ ու ժամանակին տեղեկացուած էր լինում անակնկալ*

ստուգումների մասին: Շահէնի մարդիկ կային ամենուր եւ նրանք հեռախօսային կապով յայտնում էին ջոկատի ու պարետատան տեղաշարժերի մասին: Գիւղերում կարողանում էին զէնքերը թաքցնել նախքան զինուորականների ժամանումը: Այդպիսի դէպքերում դաշտերում աշխատողները, նոյնիսկ դպրոցականները թողնում էին աշխատանքն ու պարապմունքները եւ չտապում զէնքերը թաքցնելու: Զինուորականները երբէք չէին կարողացել զէնք յայտնաբերել:

*Պարետատունը, սակայն, քնած չէր, եւ զինուորականները տեղեկանում էին, որ Շահէնը զէնքով օգնում է Մարտակերտում գտնուող **Վլադիմիր Բալայեանի** ջոկատին եւ որ այդ զէնքը դուրս է գալիս Գիւլիստանից: Պարեկախումբը որոշում է Մարտակերտից անակնկալ մատուցել: Ցրտաշունչ մի օր զինուորական մի ջոկատ անտառային ճանապարհներով եւ կածաններով հասնում է Գիւլիստան: Երկարատեւ դժուարին ճանապարհից յոգնած զինուորականները մի կերպ հասնում են գետափի կամրջին: Նրանց նկատում է հերթապահ **Կիմիկ Խաչատրեանը** եւ ներկայանում իբրեւ անասունը կորցրած մէկը: Զինուորականները խնդրում են իրենց համար տաքանալու մի տեղ գտնել, ապաստանել: Կիմիկը ջոկատը տանում է իր տուն, տաքացնում, հիւրասիրում եւ ընթացքում նրանց մասին յայտնի անում Շահէնենց: Պարեկախումբը չի կարողանում գիւղում որեւէ բան գտնել եւ ստիպուած չրջկենտրոնով վերադառնում է Մարտակերտ: Այսօրինակ դէպքերն այդ օրերին յաճախակի էին լինում*

ՋՈԿԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ

1988-ին դեռ որեւէ ջոկատ չկար. ցոյցեր էին, ստորագրահաւաք՝ Շահումեանը ԼՂԻՄ-ին միացնելու օգտին: Ջոկատներն ստեղծուել են 1989-ին: Թուրքերի յարձակումներից պաշտպանուելու եւ արժանի հակահարուած տալու նպատակով Շահումեանի գիւղերում անհրաժեշտ էր կազմաւորել ինքնապաշտպանական ջոկատներ: Անգնահատելի է Մեղրեանի դերը չրջանում եւ Գետաշէնի ենթաչրջանում, նաեւ

Մարտակերտի շրջանի մի շարք գիւղերում ինքնապաշտպանական ջոկատների կազմաւորման գործում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ջանքերով եւ միջոցներով: Շահէն Մեղրեանը բացառիկ ունակութեամբ կարողացաւ բոլորին բացատրել եւ համոզել, որ պատերազմն անխուսափելի է, ուստի պէտք է միաւորուել, ջոկատներ կազմել, զէնք ձեռք բերել, տիրապետել զէնքին եւ լինել պատրաստ: Ադրբեջանում ուժեղացած հակահայկական շարժումներին դիմակայելու համար Շահէն Մեղրեանի գլխաւորութեամբ հայ երիտասարդութիւնը, նաեւ տարեց մարդիկ, ոտքի ելան պաշտպանելու բնակավայրերը: Ժողովուրդը գիտէր՝ ով ինչով կարողացաւ, մեծամասամբ որսորդական զէնքերով: Կազմակերպիչները Շահէն Մեղրեանի ցուցումով արգելեցին հակառակորդի մուտքը բնակավայրերը, նոյնիսկ բնակավայրերի հողային սահմանները: Առաջին ջոկատ ստեղծուեց այդ տարուայ մայիսին, Վերին Շէնում: *Այդ տարիներին շահումեանցիները պատրաստում էին Շահումեան-Մարտակերտ ճանապարհը՝ կարաչինար գիւղով: Եւ ինքնապաշտպանութեան ջոկատը ստեղծեցին առաջին հերթին այդ ճանապարհի չինարարութիւնը ապահովելու, նաեւ լեռնային դիրքերը պահելու, անասունները հսկելու համար: Ազատամարտիկները ձիերով տարբեր վայրերից բարձրանում եւ պահում էին դիրքերն ու հօտերը: Միայն անասնապահներն էին տեղեակ, որ այդ ծպտեալ մարդիկ ֆիդայիներ են: 1988-ի վերջին Վերին Շէնում եւ շրջանի գրեթէ բոլոր գիւղերում, յատկապէս սարերում թուրքերի կողմից յաճախացել էին անասնագողութեան դէպքերը: Վերին Շէնն ունէր 9 թաղամաս եւ 5000-ից աւելի բնակիչ: Նովիկենց՝ Ներքին թաղում մի քանի տղաներով հաւաքւում են* ***Ժորա Սաղաթելեանի*** *արհեստանոցում եւ որոշում կազմաւորել մարտական խումբ եւ պատրաստ լինել ցանկացած ժամի դուրս գալու՝ անասունների եւ անասնապահների անվտանգութիւնը թուրքերի ոտնձգութիւններից պաշտպանելու համար:*

*Այդպէս ստեղծուեց Վերին Շէնի «**Գէորգ Զաուշ**» ջոկատի կորիզը, որ կազմուած էր իրենց թաղի որսորդ տղաներից.*

Ջանունց Մամիկ, Ջանունց Վալերիկ, Ջանունց Ռաֆիկ, Քեօխեան Գուրգո, Մարտիրոսեան Կոստիկ, Գիզիրեան Ֆեդօ, զինագործ Ժորա Սաղաթելեան: *Յետագայում եկան նուիրեալ այլ տղաներ: Ամէն ինչ կատարւում էր խիստ գաղտնի: Յետոյ տեղեկացան, որ նման մի խումբ կազմաւորուել է Աղի Ջուր կոչուող թաղամասում, որը ղեկավարում էր **Սամսոն Մարիանեանը**, որը լաւ կազմակերպիչ էր: Մի քանի անգամ նրանք հանդիպեցին եւ որոշեցին միաւորել խմբերը եւ կազմել մէկ ընդհանուր ջոկատ: Հաւաքուեցին երկու խմբի բոլոր անդամները, գաղտնի ժողով արեցին եւ ի վերջոյ որոշեցին միանալ: Նովիկի առաջարկութեամբ ընդհանուր հրամանատար ընտրեցին Սամսոնին:*

*1989-ի սկզբին Վերին Շէնում արդէն կար 20-25 հոգիանոց պատրաստի ջոկատ, զինուած միայն որսորդական հրացաններով: Նոյն թուականի գարնանը ջոկատը կանոնաւոր հերթապահութիւն էր անում սարերում: Իր կազմաւորեալ վիճակում Վերին Շէնի ջոկատն ունէր 75 մարտիկ, հրամանատարն էր՝ նախ **Սամսոն Մարիանեանը**, որն առողջութեան խնդիր ունեցաւ, եւ ջոկատն այնուհետեւ ղեկավարեց **Նովիկ Գիւլումեանը**:*

Նովիկ Գիւլումեան. «Վերին Շէնի ջոկատը, կարելի է ասել, նորմալ ջոկատ էր արդէն, մօտ 20 հոգի էինք: Մեզ հանեցին, տարան Կարաչինար: **Մեղրեան Շահէնն** էր ընդունել որոշումը. երեւի մենք վստահելի էինք: Բուն Շահումեանի ջոկատը Հայ Պարիսի դիրքերի վրայ էր: Երբ Կարաչինարում ջոկատ ստեղծուեց, մեզ տարան Մանաչիդ, իսկ Կարաչինարի գօտին պաշտպանում էին Կարաչինարը եւ Գիւլիստանը»:

*Շրջանի կորստից յետոյ հայդուկային հետախուզական թափանցումներից մէկի ժամանակ **Նովիկ Գիւլումեանը** Վերին Շէնում, իրենց տանը գտնում է այն տետրը, որում ցանկագրուած է «Գէորգ Զաուշի» անձնակազմը՝ 58 անուն եւ ռազմավարչական խորհուրդի ցանկը. Նախագահ՝ **Յակոբեան Արթուր**, քարտուղար՝ **Յովհաննիսեան Դաւիթ**: Կազմը՝ **Յակոբեան Արթուր /Քեաք/, Դանիէլեան Կարապետ,***

Խաչատրեան Ռոմա, Շելունց Հայկ, Գիւլումեան Նովիկ, Գզիրեան Շուրա, Սուղեան Շամօ, Գիզիրեան Փեդօ, Ցովհաննիսեան Դաւիթ:

Նոյն տետրում զետեղուած է ջոկատի երդման տեքստը.

Երդում

Ես՝ Վերին Շէնի Գէորգ Զաուշի անուան մարտական կա-մաւորական ջոկատի մարտիկ .....իմ ընկերների եւ իմ ժողովր-դի առջեւ հանդիսաւոր կերպով երդւում եմ՝ լինել ազնիւ, կար-գապահ, մարտունակ, կատարել հրամանատարների հրամաննե-րը, պահպանել մարտական գաղտնիքները եւ մինչեւ արեանս վերջին կաթիլը ծառայել իմ ժողովրդին եւ Հայրենիքին:

Եւ եթէ ես դրժեմ իմ այս սուրբ երդումս, թո՛ղ արժանանամ իմ ժողովրդի ատելութեանը եւ ջոկատի օրէնքներով որոշուած պատժին:

Այնուհետեւ գրուած է ջոկատի կանոնադիր սահմանումը.

Օրէնք՝ Վերին Շէնի **Գէորգ Զաուշի** անուան ջոկատի

1.Գնդակահարութիւն

Ա. Առանց հրամանի ռազմադաշտը լքելու դէպքում

Բ. Մարտական առաջադրանքը կատարելիս ընկերոջ թիկունք-քից փախչելու դէպքում

Գ. Զէնքը կորցնելու դէպքում /բացի ծանր վիրաւոր վիճա-կը/:

2. Հասարակական տոյժ /կալանք/,- որոշւում է ջոկատի ժողո-վում.

Ա. Հարբած վիճակում /թէ՛ տանը, թէ՛ ծառայութեան մէջ/ գտնուելու դէպքում

Բ. Պոստի ռեժիմը խախտելու դէպքում

Գ. Առանց հրամանատարի գիտութեան բացակայութեան դէպքում

Դ. Փամփուշտն անտեղի ծախսելու դէպքում

Ե. ժողովրդի մէջ իրեն զուեհիկ, անկարգ պահելու դէպքում

Զ. Գողութեան դէպքում

Է. Խորամանկելու /կեղծարարութեան/ դէպքում

Ը. Մարտական գաղտնիքը չպահելու դէպքում

Թ. Զէնքը մաքուր չպահելու դէպքում:

3. Զոկատից հեռացւում է

Ա. Անձնական զէնքն ուրիշին տալու դէպքում

Բ. Գիւղում կրակելու դէպքում

Գ. Ժողովրդին վախեցնելու նպատակով զէնքը գործադրելու դէպքում:

Սոյն կանոնագիրը չատ խիստ է եւ այն հանգամանքը, որ զէնքը կորցնելը կարող է աւարտուել գնդակահարութեամբ, պարզապէս արտացոլում է ժամանակաշրջանի պայմանների իւրայատկութիւնը. զէնքն այդ ամիսներին հազուագիւտ էր եւ նրա կորուստը՝ հարուած ջոկատին: Ժամանակաշրջանի ռիթմն էր չատ արագ եւ հաւանաբար յորդորելու, հանդիմանելու, նկատողութեան, վերջին զգուշացմամբ՝ խիստ նկատողութեան ժամանակ չի եղել:

1990 թուականի ապրիլ, մայիս ամիսներին Շահէն Մեղրեանը ցանկացաւ հանդիպել Վերին Շէնի ջոկատի տղաներին եւ խօսել նրանց հետ: Ամէն ինչ կատարւում էր գաղտնի: Հանդիպումը կազմակերպեցին սարերում, որպէսզի որեւէ մէկը չտեսնէր: Նախապէս նշեալ օրը հանդիպումը կայացաւ: Նա խօսեց տղաների հետ՝ բացատրելով գործի կարեւորութիւնը: Համոզուելով, որ բոլոր տղաները վստահելի են եւ գիտակցում են, թէ ինչ դժուարին պատասխանատուութիւն են վերցրել իրենց վրայ, մեքենայից հանեց եւ վերինչէնցիներին յանձնեց գնդացիր եւ մի քանի կարաբին: Զէնքերը հին էին եւ բաւականին մաշուած, բայց որսորդական հրացանների հետ համեմատել կարելի չէր: Տղաների ուրախութեանը չափ չկար: Խոստացաւ, որ մօտ ապագայում աւելի լաւ զէնքեր կ՛ունենան:

Կարճ ժամանակում բոլոր գիւղերում կազմաւորուեցին ջոկատներ եւ սկսեցին զինուել: Զէնք-զինամթերքի գործը, նշել ենք, յաջողում էր Դաշնակցութիւնը: Կազմակերպուեց շրջանի սահմաններով կանոնաւոր հերթապահութիւն: Վերին Շէնի ջոկատը Մեղրեանի հրամանով ուղարկուեց Ինջա գետի ճախ ափի բարձունքները, որտեղով ճանապարհն անցնում էր դէպի Թալիշ: Հարկ եղած դէպքում օգնութեան էին գնում Թալիշ,

որտեղ թուրքերը յաճախ էին յարձակւում Թալիշի անասնապահական ֆերմայի վրայ: Այդ ժամանակ Թալիշում դեռ կազմաւորուած ջոկատ չկար: Այդ գործն իր վրայ վերցրեց **Լէոնիդ Ազգալդեանը** եւ կարճ ժամանակում հաւաքագրեց եւ կազմաւորեց Թալիշի ջոկատը:

Այնուհետեւ ջոկատներ ստեղծուեցին Շահումեան աւանում, Բուզլուխում եւ մնացեալ բնակավայրերում: 1989-ի աշնանը ջոկատ է ստեղծւում ծայրամասային **Բուզլուխում**: Մարտական ջոկատի մէջ մտնում են 13 կամաւորներ, հրամանատար՝ **Համլետ Խաչիկի Ստեփանեան**, եւ ինքնապաշտպանութեան պատասխանատու՝ գիւղխորհրդի նախագահ **Գեղամ Արմենակի Մուրադեանն**: Բուզլուխ էին վերադարձել նաեւ հայաստանաբնակ համագիւղացիները: Տարբեր ժամանակներ Բուզլուխում է եղել նաեւ Արտաշատի երկրապահ ջոկատը՝ **Լաերտ Սաղաթէլեանի** հրամանատարութեամբ: Առաջին անգամ ժամանել են 1990-ի յունիսին, թուով 30 հոգի: Համաբեայ մէկ տարի հերթափոխով մնացին: Յետոյ եկաւ **Կարօտի** ջոկատը՝ **բաղրամեանցիների եւ Ռոմիկի** հետ: «**Արաքսյի**» տղաներն էին՝ **Մանուէլի** գլխաւորութեամբ: Յաջողեցին ստեղծել պաշտպանական համակարգ եւ պաշտպանութեան կորիզ՝ **Շահէն Մեղրեանի** հրամանատարութեամբ: Շահէնի մօտ կանգնած էին **Շահէն Յովասափեանը, Յակոբ Խիդիրեանը, Աւագ Վելեանը**, Վերին Շէնի առաջին հրամանատար **Սամսոն Մարիանեանը, Նովիկ Գիւլումեանը**, Բուզլուխից՝ **Համլետ Ստեփանեանը, Գեղամ Մուրադեանը**, Էրքէջից՝ **Վանիկ Լալայեանը**, Մնաշէնից՝ **Հրաչիկ Մռաւեանը, Բարխուդարը** կամ **Բախօն**, Գիւլիստանից՝ **Պօղոս Մեղրեանը, Պետրոս Մեղրեանը**, Կարաչինարից՝ **Կոլիկ Պետրոսեանը**, Գաղտուրից՝ **Բենօն**: Շահէնի շորջն էին համախմբուած նաեւ Հայաստանից ժամանած ջոկատների հրամանատարները, ազգի անվեհեր նուիրեալներ նաեւ սփիւռքից: Շահումեանում ներկայութիւն էր **Լէոնիդ Ազգալդեանը**: Հիմնականում լինելով Մարտակերտի շրջանում՝ նա անհրաժեշտ պահերին գալիս հասնում էր: Մեր հակառակորդները փորձում էին Շահումեանը կտրել,

մեկուսացնել աշխարհից եւ խեղդել բառի բուն իմաստով: Շահէն Մեղրեանն իր չիտակ, բաց բնաւորութեամբ Շահումեանը բացեց, բացայայտեց ռուս եւ արտասահմանցի հանրային գործիչների, լրագրողների առջեւ: Շահումեանցիները եւ Հայաստանից ժամանած ազատամարտիկներն ստեղծեցին կուռ պաշտպանական համակարգ:

Մինչեւ 90-ի սեպտեմբերը բոլոր գիւղերում եւ շրջկենտրոնում կային մարտական ջոկատներ: **Կուճուր Շահէնի (Ցովասափեան)** խօսքով՝ կային 11 ջոկատներ. Վերին Շէն, Շահումեան, Գիւլիստան, Խարխապուտ, Մանասիշէն, Կարաչինար, Հայ Պարիս, Էրքէջ, Բուզլուխ, Մանաշիդ գիւղերում: 1990 թ. աշնանը Հայաստանից շրջան ժամանեցին զինեալ ջոկատներ:

Շահումեանի ռազմական համապատկերն այս էր. շրջանում կային ընդյատակեայ ֆիդայական ջոկատներ եւ կար խորհրդային բանակի պարետատուն: Ինքնապաշտպանութեան ջոկատներն անհաւասար պայմաններում չարունակում էին պաշտպանել հայկական տարածքները թուրքերից: Իշխանութիւնները ամէն գնով ձգտում էին խեղդել ազատագրական չարժումը: Հայ մարտիկներն ամէն ինչ զգուշօրէն էին անում, եւ պատահական չէր, որ **Պոլիանիչկոյի** ղեկավարած այդ երկու տարուայ ընթացքին ո՛չ պարետատունը եւ ո՛չ ՕՄՕՆականները որեւէ մէկի չէին վերցրել: Գործել են ընդյատակեայ, սակայն հարկ եղած դէպքում ժողովրդին պաշտպանել են, չեն թողել, որ թուրքերը մտնեն եւ անասնագողութիւն անեն: Պատահել է, որ արօտավայրում անասնապահների հետ միասին անասուններն էլ քշել եւ տարել են (Էրքէջում եւ Հայ Պարիսում):

Բացի մարտական ջոկատներից՝ Շահումեանում կար **աշխարհազօրային հսկողութիւն**: Ջոկատների մէջ չմտնող մարդիկ օգնում էին սահմանները պահելու: Ամէն բնակավայրի աշխարհազօր օգնում էր տեղիս ջոկատին, սակայն կային բնակավայրեր, որոնք անմիջական սահման չունէին պաշտպանելու, ուստի դրանց ջոկատներն ու աշխարհազօրը գնում էին օգնելու

այլ բնակավայրերի պաշտպանութեան գործին: Ասենք՝ Վերին Շէնից ամէն օր Մանաշիդ էին գալիս, որովհետեւ Մանաշիդի բնակիչները քիչ էին. Վերին Շէնի ջոկատին օգնութեան էր գալիս գիւղի աշխարհազօրը, որը կազմուած էր վաշտերից: Գիւղի 9 թաղամասերից. ամէն մէկում ցուցակագրել էին 18-45 տարեկան առողջ տղամարդկանց: Ամէն վաշտում կային 80-100 հոգի: Նշանակուեցին վաշտի հրամանատարներ եւ այլ պատասխանատուներ: Նոյն կարգաւ կատարուել էր շրջանի բոլոր գիւղերում: Վերին Շէնի համեմատաբար մեծ աշխարհազօրի հրամանատարը **Ահարոն Շելունցն էր**: Գիւղի աշխարհազօրից 40-50 հոգի պարբերաբար մեկնում էր Մանասիչէնի պաշտպանութեանը զօրակցելու: Բուզլուխի ջոկատը փոքր էր, ունէր 13 հոգի, ուստի Շրջկենտրոնի՝ Շահումեան աւանի աշխարհազօրն աւանային խորհրդի նախագահ **Աւագ Վէլեանի** գլխաւորութեամբ գալիս էր Բուզլուխ: Գիւլիստանի աշխարհազօրը ղեկավարում էր **Ռաչիդ Սեյրանեանը**: Աշխարհազօրի հետ էր նաեւ հայաստանաբնակ գիւլիստանցիների խումբը: Նրանք պաշտպանում էին Ինջա գետի սահմանը (կազմակերպիչներ՝ **Մարկիտ Մակեան** եւ **Վալերի Խաչատրեան**):

Ներքին Շէնի (Շահումեան աւան) ջոկատում կային 39 մարտիկներ: Հրամանատարը **Յակոբ Խիդիրեանն** էր, ապա՝ **Վարդան Մկրտումեանը**:

Բուզլուխի եւ Մանաշիդի միացեալ պաշտպանութեան պատասխանատուն **Սերգէյ Զալեանն էր**: Հայ Պարիսում տեղիս 33 հոգիանոց ջոկատն էր, հրամանատար՝ **Արտուշ Սարգսեան**:

Էրքէչի եւ Հայ Պարիսի տեղամասը գլխաւորում էր **Յակոբ Խիդիրեանը:**

Կարաչինարի գօտում հսկում էին Գիւլիստանը եւ Կարաչինարը:

Ամենավատ պայմաններում էին կարաչինարցիները, որոնք ընդամէնը մէկ մետր սահման ունէին թուրքերի հետ: Կարաչինարն ու Շեֆեկն իրար կպած գիւղեր էին: Այնտեղ հրացանով շատ հեշտութեամբ կարող էին իրար սպանել: Ականանետներն այնտեղ թէժ պահին սկսում էին աշխատել եւ ժողովուրդը շատ

զոհեր էր տալիս: Ուստի կարաչինարցիները բարձրացան Վերին Շէն եւ Գիւլիստան, իսկ տղամարդիկ մնացին գիւղը պաշտպանելու: Նրանք չաբաթը մէկ գնում էին իրենց ընտանիքները տեսնելու: Կարաչինարի գիւղխորհուրդը մէկն էր, իսկ կար երեք գիւղ՝ Մանասիչէնը՝ 150 բնակիչ, Կարաչինարը՝ 2780 բնակիչ, եւ Գաղտուռը՝ 320-330 բնակիչ: Խրխափորի ջոկատը գլխաւորում էր ***Վազիֆ Գէորգեանը****, Գաղտուռինը՝* ***Ռուդիկ Եղեանը****, Մանասիչէնինը՝* ***Վարդան Մալխասեանը****: Այս երեքը Կարաչինարի ջոկատի հետ կազմում էին մէկ գումարտակ՝ 152 հոգի, հրամանատարը կարաչինարցի* ***Կոլիա Պետրոսեանն էր****: Կարաչինարի չտաբի պետն էր Տաչքենդի ռազմական ուսումնարանն աւարտած աւագ լեյտենանտ* ***Գենադի Ղուլեանը****:*

Կարաչինարում ռազմական ուժի ճեւաւորման պատկերը մեզ է ուղարկել գումարտակի հրամանատար, մոսկուաբնակ ***Կոլիկ /Նիկոլայ/ Պետրոսեանը****:* «Կարաչինարի ինքնապաշտպանական ուժերը սկսել են կազմաւորուել 1989 թուականից: Զինուել են՝ ինչով կարող էին: Նոյն թուականին Կարաչինարում ստեղծուել է Դաշնակցութեան բջիջ: Նոյն թուականին էլ Դաշնակցութիւնը գիւղ է ուղարկել ռազմագիտութիւն սովորեցնող մարզիչներ: Ռազմական նախապատրաստութեան դասընթացից յետոյ Դաշնակցութիւնը ջոկատը զինել է 5 ԱԿ աւտոմատներով: Ջոկատն աստիճանաբար մեծացել է եւ պատուով կատարել իր առջեւ դրուած խնդիրները: Կարաչինարի գօտում մարտական գործողութիւնների քառամեայ ժամանակաշրջանում ոչ մի անգամ չեն թողել իրենց դիրքերը, թոյլ չեն տուել կատարուի անասնագողութեան որեւէ դէպք եւ մարդկանց գերեվարութիւն: Բոլոր ռազմական փորձագէտների եւ Շահումեանի շրջանի բնակչութեան կարծիքով Կարաչինարի գօտին եղել է ամենավտանգաւորը, քանզի Կարաչինարով էր անցնում Ադրբեջանին կապող հիմնական մայրուղին, Շահումեանի շրջանը հարեւան Մարտակերտի շրջանին միացնող հիմնական ճանապարհը եւս գտնւում էր Կարաչինարի վերահսկման գօտում:

Մարտակերտի շրջանին կապող այս ճանապարհի գրաւման,

ինչպէս եւ Կարաչինարի պաշտպանութեան տակ գտնուող բնակավայրերի զարթման բազմակի փորձեր է կատարել հակառակորդը: Ու թէեւ ունեցել է մարդուժի մեծ գերազանցութիւն, տրամադրութեան տակ ունենալով զրահամեքենաներ՝ ԲՏՌ, հետեւակի մարտական մեքենաներ՝ ԲՄՊ, տանկեր, աւտոմատ կառավարուող հրանօթներ՝ ՍԱՈՒ, «Գրադ» կայանք, ականանետներ, նռնականետ աւտոմատ սարքեր՝ ԱԳՍ եւ հրաձգային զէնքերի ամբողջ տեսականին, վերահսկողութեան տակ ունենալով շրջապատի վրայ գերիշխող բարձունքային դիրքեր եւ ռազմական ուղղաթիռների եւ ինքնաթիռների զօրակցութիւն, եւ չփման գօտու իր բնակավայրերում չունենալով քաղաքացիական բնակչութիւն եւ առաւելութիւն ունենալով զօրաշարժերի իմաստով, ահա՛ այսքանով հանդերձ Կարաչինարի գօտու ինքնապաշտպանութեան ուժերն իրենց դիրքերից չեն նահանջել եւ ոչ մի քայլ: Ունենալով պաշտպանութեան 15 կիլոմետրանոց սահմանաչերտ՝ Կարաչինարը միայն իր ուժերով բնականաբար չէր կարող փակել այդ տարածքը: Ուստի, Կարաչինար էին ժամանում Հայաստանից եւ Մարտակերտի շրջանից տարբեր ջոկատներ: Բացի այդ՝ Կարաչինարում էին մշտապէս Գիւլիստանի ու Խարխապուտի ջոկատները: Գիւլիստանի ջոկատը 25 հոգուց էր, հրամանատար՝ ***Պօղոս Մեղրեան: Խրխապուտի*** *ջոկատը 17 հոգուց էր, հրամանատար՝* ***Վազիֆ Գէորգեան:***

Որոշ ժամանակ անց, ինքնապաշտպանութեան ղեկավար մարմինները եկան այն գաղափարին, որ առանձին, իրարից մեկուսացուած ջոկատներով մարտական գործողութիւնները չեն կարող լինել արդիւնաւոր: 1991 թուականին շրջանի գլխաւոր հրամանատար Շահէն Մեղրեանը հրաւիրում է խորհրդակցութիւն եւ հրաման է տալիս Կարաչինարի ջոկատի հիմքով ստեղծել գումարտակ, որի մէջ պիտի մտնեն Մնասիչէնի, Գաղտուտի, Խարխապուտի եւ Գիւլիստանի ջոկատները: Խորհրդային բանակի կադրային սպա ***Գեւոնդի Ղուլեանը*** *կարճ ժամանակամիջոցում կարողացաւ միաւորել այդ ջոկատները եւ յաջողեց ստեղծել մոտոհրաձգային*

գումարտակ **Կոլիկ /Նիկոլայ/ Պետրոսեանի** հրամանատարութեամբ, չտաբի պետ նշանակուեց **Գ.Ղուլեանը:** Գումարտակը ստեղծուեց 1991-ի նոյեմբերին՝ Խորհրդային Բանակի նախատիպով: Կարաչինարի նորաստեղծ գումարտակը ներառուած էր Շահումեանի գնդի մէջ: Վերջինիս հրամանատարը ընական նաբար Շահէն Մեղրեանն էր, չտաբի պետը՝ **Ֆելիքս Գզողեանը**, որի Ստեփանակերտ տեղափոխումից յետոյ՝ **Սերգէյ Զալեանը**, թիկունքի պետը **Շահէն Յովասափեանն էր:**

Շահումեանում զօրական ներկայութիւն էին նաեւ Հայաստանից ժամանած ջոկատները: Ամէնից վաղ Շահումեան է եկել Արտաշատի ջոկատը՝ **Լաերտ Սաղաթէլեանի** հրամանատարութեամբ: Յետոյ եկել են «Տիգրան Մեծ» ջոկատը՝ **Արմէն Արմենակեանի** հրամանատարութեամբ, «Արաբօ» ջոկատը **Մանուէլ Եղիազարեանի**, «Սասունցի Դաւիթը»՝ **Աշոտ Մանուկեանի**, «Արամոն»՝ **Արամ Թորգոմեանի** հրամանատարութեամբ եւ այլ ջոկատներ՝ Հրազդանից, Հոկտեմբերեանից: Ժողովուրդը մեծ սիրով էր ընդունում Հայաստանից եկած ջոկատներին եւ մեծ ոգեւորութիւն էր ապրում: Այստեղ էր նաեւ Երեւանի Յատուկ գնդից մի զօրաջոկատ, մօտ 100 մարտիկ, հրամանատար՝ **Վլադիմիր Կարապետեան: Գրիգոր Գէորգեանի** կամ **Մախնոյի** խօսքով՝ գունդը 85 տոկոսով հին, փորձառու մարտիկներ էին:

Դաշնակցութեան ջոկատն ունէր՝ 36 մարտիկ, կար նաեւ **Էջմիածնի Հայկի** ջոկատը: Այստեղ էին նաեւ **Սասուն Սիմոնեանի** (Ալավերդի) ջոկատը, **Կարօտ Մկրտչեանի** գլխաւորած միաւորեալ ջոկատը Նաիրիի շրջանից (Պռոշեան սովխոզ, Նոր Երզնկա, Բուժական): **Բէյրութցի Մերուն Կարբոշեանն** էր բոլորի պատասխանատուն: Դաշնակցութեան բոլոր ջոկատներն իրենց մարտական մկրտութիւնն ստացել են Շահումեանում. նախ փորձութեան են ենթարկուել Շահումեանում եւ բոլորը գործ են ունեցել **Շահէնի** հետ: Եւ եթէ նրանցից մէկն ու մէկը լուրջ թերութիւն կամ պակասութիւն ունենային, նրանք երկրորդ անգամ Շահէնի մօտ այլեւս չէին գայ: **Պօղոս**

Մեղրեանի *հաւաստմամբ,* «Ես թէկուզ միշտ այնտեղ եմ եղել եւ ինքս եմ դիմաւորել ջոկատները ու տեղաւորել, սակայն այդ ջոկատների նկատմամբ այնքան պարտականութիւն չեմ զգացել, որքան Շահէնը: Քանի որ ինքն էր գերագոյն պատասխանատուն, եւ ինքը մեզ միշտ պատուիրում էր, որպէսզի տղաներին միշտ այսպէս-այսպէս նայենք, նրանց ամէն ինչով ապահովենք, լաւ վերաբերմունք ցուցաբերենք»:

Տեղիս եւ Հայաստանի ջոկատների առանձնացումը յարաբերական է եւ մօտաւոր, զի Հայաստանի ջոկատների մէջ կային բաւականին թուով ծագումով շահումեանցիներ եւ, բացի այդ, պաշտպանական մարտերի ժամանակ տեղացի կամ դրսեկ, դաշնակցական կամ ոչ դաշնակցական առանձնակի վիճակները չեն կարծրակաղապարուել, ամենքը դիտուել են իբրեւ հայոց միացեալ զօրաբանակ: Սկզբնական շրջանի հիմնական տարբերութիւնները (շահումեանցիների գերազանց կողմնորոշումը տեղանքում եւ հայաստանցիների համեմատաբար լաւ մարտավիճակը) աստիճանաբար հալուել են, զի Շահումեանի հայոց զօրքի այդ երկու հիմնական խմբերը լրացնում էին մէկը միւսին. նրանց կապն ու փոխազդեցութիւնը եղել է միանշանակօրէն ներդաշնակ, հրամանատարները մարտիկներին հաւասար կռւում էին: Շատ նուիրուած էին, շատ խիզախ:

Էրքէչում *տեղի ջոկատն էր՝ «Տիգրան Մեծ»-ի հետ միասին: Էրքէչի ջոկատը կազմուած էր 37 հոգուց: Հրամանատարն էր՝* ***Վանիկ Լալայեանը****, նրա զոհուելուց յետոյ՝* ***Կամօ Յովհաննիսեանը****, Կամոյի զոհուելուց յետոյ՝* ***Իւրա Սարգսեանը****: Էրքէչ էին վերադարձել Աբովեանում ապրող նախկին գիւղացիները: Այդտեղ էր նաեւ «Տիգրան Մեծ»-ից մէկ ջոկատ, հրամանատար՝* ***Արմենակ Արմենակեան****: Նշել ենք, որ Մանաչիդում էր* ***Մանուէլ Եղիազարեանի*** *«Արաքօ» ջոկատը, որն այնուհետեւ տեղափոխուեց Մարտունաշէն: Մանաչիդում հեղինակութիւն էր եւ իրապէս գործում էր գիւղ վերադարձած* ***Խաչիկ Սահակեանը****:*

Գետաշէնում Թաթուլ Կրպէեանի *հետ կային 35-40 դաշնակցականներ: Այստեղ էին նաեւ* ***Պետրոս Մալայեանի****,*

Հրազդանի ջոկատները եւ գետաչէնցիները: *Ջոկատներն անհրաժեշտ պահերին օգնութեան էին գալիս մէկը միւսին: Ասենք, «Արաբօն» Վերինչէնի ջոկատի հետ միասին օգնութեան էր գալիս Մանաչիդին, դաշնակցականները՝* ***Կարօտի*** *գլխաւորութեամբ՝ Բուզլուխին:*

Այնուհետեւ ստեղծուեց բոլոր ուժերը միաւորող շտաբ: Շտաբի պետը գնդապետ ***Ֆելիքս Գզողեանն էր,*** *որը ստեղծեց, կարելի է ասել, բանակային համակարգ իր բոլոր ստորոգելիներով: 1992ին ԼՂՀ կենտրոնական շտաբ նրա տեղափոխուելուց յետոյ Շահումեանի շտաբի պետը* ***Սերգէյ Զալեանն էր****: Բոլոր ջոկատներն անմիջաբար ենթարկուում էին հրամանատարութեանը, շտաբին:*

Գիւլիստանում ստեղծուեց ռազմակայան, ուր մարզումները վարում էին սպիւռքից եկած տղաները: Պարապմունքները լինում էին ամէն օր:

Սամուէլ Երանեանի *հաւաստմամբ՝ տեղական ջոկատների մէջ ընդգրկուած մարտիկները ձեռք էին բերել բաւականին փորձառութիւն եւ գաղափարապէս աճել. «Զգում էինք, որ մենք լինենք-չլինենք՝ տեղի ընակչութիւնն այնքան կազմակերպուած է, որ կռիւն արդէն իրենցն է եւ ոչ թէ Հայաստանից եկածներինը, եւ իրենք էլ կարող են իրենց պաշտպանել՝ համապատասխան միջոցների առկայութեամբ: Մի քանի դիւղերից Շահէնը կարողացել էր այնպիսի ջոկատներ ստեղծել, որոնք կարող էին առանց որեւէ միջամտութեան թուրքերին քշել, հեռացնել, եւ այդտեղ շատ կարեւոր էր իրենց հոգեբանական վիճակը, որ Շահէնն էր ստեղծել»:*

Շահումեանցի մարտիկները համահայկական զօրաց համապատկերի վրայ, այնուամենայնիւ, դրսեւորել են իրենց առանձնայատկութիւնները: Իբրեւ լեռնցի՝ տեղացիները տոկուն են, չրջահայեաց, հնարագէտ, քաջարի մարտնչողներ եւ ի բնէ՝ կարգապահ, ինչն արդիւնք է մելիքական ժամանակաշրջանի իշխանութեան զօրական կեցութեան եւ հարիւրապետակների ընթացքում թշնամիների դէմ չարունակական բախումների: Տեղանքում շատ լաւ են կողմնորոշւում եւ պատ-

բաստի հետախոյզներ են, ուղեկցորդներ: Օրինապահ են, հայրենասէր եւ պետականասէր: Այդ պատճառով էլ՝ Թաթուլ Կրպէեան, Վահէ Բաղդասարեան, Կարօտ Մկրտչեան, Պետրոս Ղեւոնդեան, Լէոնիդ Ազգալդեան, Սիմոն Աչիգէօզեան, Ջիւան Աբրահամեան, Էդուարդ Մելքումեան (Արջ Էդօ), Վլադիմիր Կարապետեան, Սասուն Սիմոնեան, Մանուէլ Եղիազարեան, Արմէն Արմենակեան, Գրիգոր Գրիգորեան... անուանաթոյլին համարժէք է Վանիկ Լալայեան, Վալերի Ջլաւեան, Սեւան Նահապետեան, Եաչա Շելլունց, Կամօ Յովհաննիսեան, Շուրա Գզիրեան, Շահէն Յովասափեան, Նովիկ Գիւլումեան, Հայկ Շելլունց, Ֆեդօ Գզիրեան, Գեղամ Մուրադեան, Սերգէյ Զալեան, Արթուր Յակոբեան, Կամօ Յարութիւնեան, Շահէն Սայիլեան (Շուն Շահէն), Յովիկ Յակոբեան, Շահէն Սեյրանեան, Հայկ Վերդեան... անուանաշարքը: *Նոյն ազգն է՝ տարբեր շրջաններով:*

Խորհրդային հայ իշխանաւորները ո՛չ միայն անտարբերութիւն էին ցուցաբերում ժողովրդի ճակատագրի նկատմամբ, այլեւ ամէն գնով խանգարում էին նրա ինքնապաշտպանութեան կազմակերպմանը, զինաթափում մարդկանց, մեկուսացնում ազատագրական շարժման առաջատարներին: Ուստի, շտաբի ստեղծման առաջին օրերին քչերը գիտէին, թէ ով է ինքնապաշտպանութեան ուժերի ղեկավարը շրջանում: Սակայն շուտով ինքնաբերաբար պարզուեց, որ ազատագրական պայքարը կազմակերպող առաջատար անձը **Շահէն Մեղրեանն** *է: Ինքնապաշտպանութեան ջոկատների առաջին հաւաքին նրա տպաւորիչ խօսքն անմոռաց մնաց, քանզի այն պայքարի յետագայ ընթացքը մատնանշող եւ հունաւորող մի ծրագիր էր.*

«Մենք բախտորոշ ժամանակներ ենք ապրում: Պատմութիւնը մեր առջեւ մեծ խնդիր է դրել: Սկսուել է ազատագրական, հայրենական մեծ պատերազմը: Թուրքերն սպառնում են տեղահան անել մեր ժողովրդին, եթէ չարունակենք պայքարը: Նրանք որեւէ բանի առաջ կանգ չեն առնելու: Մենք պէտք է պատրաստ լինենք ո՛չ միայն պաշտպանուելու, այլեւ դաժան մարտերում ջարդելու թշնամուն եւ ապահովելու մեր պապերի հողում մեր

ապրելու իրաւունքը: Բոլոր գիւղերի ջոկատները պէտք է դառնան մէկ միասնական զօրամիաւորման մասեր, մէկ հրամանատարութեամբ եւ երկաթէ կարգապահութեամբ: Սպասւում են ծանր մարտեր: Ջոկատներում պէտք է ընդգրկել առաւել նուիրեալներին, որոնք պատրաստ կը լինեն կեանքի գնով պաշտպանելու մեր սուրբ հայրենիքը: Այս լեռնաշխարհը միայն ներկայումս այստեղ ապրողներինը չէ, այլ՝ համայն հայութեանն է: Նրան պարտաւոր ենք պաշտպանել ոյժերի գերագոյն լարումով, արեան գնով»:

Կուճուր Շահէնի *վկայութեամբ Պաշտպանութեան պետական կոմիտէն* իրենց չրջանում աւելի վաղ ստեղծուեց, քան Ղարաբաղում: «Ես այդ ժամանակ Շահէնի տեղակալն էի թիկունքի գծով, սակայն թիկունքն այլ ձեւով էր ըմբռնւում, այսինքն՝ տնտեսական հարցերի գծով էի տեղակալ: Կոլխոզները, սովխոզները, հիւանդանոցը, ամէն ինչ կար եւ ես էի ամէն ինչ կարգաւորում»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻՑ ԺԱՄԱՆԱԿ ՋՈԿԱՏՆԵՐԸ

Ըստ ***Ռուսլան Բաբաջանեանի***՝ *Հայաստանից առաջինը Մալաթիայի* ***Վահանն (Զատիկեան)*** *է եկել իր ջոկատով, որը Շահումեանում եւ Արցախում մինչեւ վերջ նուիրեալ կերպով մասնակցել է կռիւներին: Յետոյ եկել են Հրազդանի տղաները՝* ***Հրաչի*** *հետ, այնուհետեւ՝* ***Թաթուլ Կրպէեանը****: Պօղոս Մեղրեան.* «90 թ. սեպտեմբերին Դաշնակցութեան ջոկատը մտաւ Շահումեան, նրա կազմում էր նաեւ Թաթուլը: Այդ ջոկատին ես եմ դիմաւորել: Թաթուլն էր եւ ջոկատը՝ **Վահան Յովհաննիսեանի** գլխաւորութեամբ»: *1990-ի վերջերին արդէն* ***Դաշնակցութեան*** *ջոկատներն ամիսներով մնում եւ իրար հերթափոխում էին: Այդ ժամանակ Գիւլիստանում ստեղծուեց ռազմակայան, որտեղ տեղացիներին մարզում էին դաշնակցական հրահանգիչները: Մարտական ընդհանուր պատասխանատուն եւ մարզումների կազմակերպիչը* ***Ծերուն Կարբոչեանն*** *էր Բէյրութից:*

Այդպէս չարունակուեց մինչեւ 1991 թուականի ապրիլի 30-ը: Այդ օրը թուրքերը յարձակուեցին ***Գետաչէնի*** *վրայ, որտեղ գտնուում էր տեղիս ջոկատը: Գետաչէնն ինքնապաշտպանութեան եւ վարչական առումով Շահումեանի հետ կազմում էր մէկ ամբողջութիւն: Ինչպէս որ Շահումեանն էր նստաշրջանի որոշումով միացել ԼՂԻՄ-ին, Գետաչէնն էլ նոյն կերպ Շահումեանին էր միացել:*

Թալինի Սաքօ (Սարգիս Կարապետեան). «Մենք պատասխանատուութիւն ենք ունեցել, ենթարկուել ենք տեղական իշխանութիւնների բոլոր հրամաններին: Ուր գնացել ենք՝ ենթարկուել ենք: Սովորել եւ սիրել ենք տեղի ժողովրդին: Մեր գործողութիւններում ինքնագլուխ ոչինչ չի եղել: Տեղի ժողովուրդն ուզեցել է՝ իրեն պաշտպանել ենք, չի ուզեցել՝ չենք կռուել, տեղներս Հանգիստ նստել ենք, սովորական կենցաղով ենք զբաղուել: Ուր որ գնում ես, պիտի ժողովրդին սիրես, որ դու էլ սիրուես ժողովրդի կողմից: Եւ զինուորն ու ժողովուրդը պիտի իրար հետ մերուեն, որպէսզի զինուորը թիկունք ունենայ, իսկ ժողովուրդն զգայ, որ զինուորն իր հողը, իր կեանքը պաշտպանում է»:

Մկրտիչ Ղազարեանը (Թալին) *90-ի օգոստոսի 8-ից Շահումեանում մասնակցել է մարտամարզումներին եւ գործողութիւններին: Քառասունհինգ հոգի էին, բոլորն էլ զինուած ինքնաձիգներով կամ գնդացիրներով: Այս ջոկատի մարտիկները ռուսներին արտաքուստ եւ զինավառութեամբ այնքան էին նման, որ հանդիպած վարորդը չուարած մեքենան քշել է անտառի խորքը՝ նրանց ռուսական անդրանցիկ (դեսանտ) զօրախմբի տեղ դնելով:*

«Մարտական դաժան կեցուածքն էր: Քնում էինք խոզանոցի մէջ, որ մաքրեցինք եւ տեղաւորուեցինք: Մեր տղաների հոգեբանական վիճակը բարձր էր եւ այդտեղ մնալուց մեզ վատ չէինք զգում: Կար առաքելութեան գիտակցութիւն: Էդ երկու ամիսների ընթացքին մեր գործողութեան ձեւը մարզուելն էր եւ մերձակայ գիւղերի տնտեսութեան պահպանումը, չնայած թուրքերն այլազան եղանակներով պարզել էին, որ անտառում

բաւականին զինեալ ուժ կայ: Նոյնիսկ մի անգամ, երբ թուրքերն ուզում էին բռնութեամբ ընտրութիւններ անցկացնել, մենք ոտքի կանգնեցինք եւ արգելեցինք»:

Ընդհանուր պատասխանատուն ***Շահէնն*** *էր, փոխպատասխանատուն՝* ***Կուճուր Շահէնը: Մերուն Կարբոչեանը*** *մարտական պատասխանատուն էր: Ընդհանուր գործերի մէջ խառնուեց նաեւ* ***Աղաջանեանը՝*** *շրջկոմի քարտուղարը:* «Ես միանգամից հասկացայ, որ նա ապարատային համայնավար է եւ մեզ մի տեսակ էր վերաբերում: Մինչդեռ Շահէնի վերաբերմունքն այլ էր: Պահի հետաքրքրութիւնն այն էր, որ երբ մենք իջանք, մեզ դիմաւորեց Շահէնի եղբայր **Պօղոսը**: Օդաչուն ասաց.

– Պօղո՛ս, քեզ համար էնպիսի տղաներ եմ բերել, որ դու չատ լաւ կը զգաս:

Պօղոսն ուրախութիւնից լաց եղաւ»:

90-ի սեպտեմբերին եկան ***Շոթա Քէրոբեանը եւ Թաթուլ Կրպէեանը****: Պարզուեց, որ Շոթան պիտի գործի Շահումեանի կազմակերպական օղակում, իսկ Թաթուլը պատրաստուեց անցնելու Գետաշէն, որպէս կազմակերպիչ: Մի անգամ Բուզլուխի համար համարձակ գործողութիւն ձեռնարկեցին: Ամբողջ ջոկատն էր ուզում մասնակցել, սակայն քիչ մարդ էր հարկաւոր: Գնացին* ***Սաքօն, Էջմիածնեցի Հայկը*** *(նա Շուշիի գործողութիւնից յետոյ հիւանդացաւ): Երկու ջոկատ էին այստեղ՝ Էջմիածինի եւ Թալինի, 10 հոգի էլ Երեւանից: Բոլորը նուիրեալ տղաներ էին, նրանց 50 տոկոսը զոհուեց կամ վիրաւորուեց, մնացեալ մասնակիցներից քչերը ետ կանգնեցին պայքարից: Բուզլուխի գործողութիւնը չիրականացաւ. մեքենաների սպասուած չարասիւնը չանցաւ:*

Զուգահեռ անց էին կացւում ֆիզիկական եւ մարտական մարզումներ: Ամիս ու կէս յետոյ նորից 20 հոգի եկան Շահումեան՝ լրացնելու եւ փոխարինելու համար: Ջոկատները բացայայտուեցին եւ Շահէնի միջնորդութեամբ ռուս զօրքի համաձայնութիւնն առնելով՝ մտան Գետաշէն: Մարտական գործողութիւնների առումով ջոկատը դերակատար չեղաւ,

սակայն բարոյահոգեբանական իմաստով կարեւոր էր: Ժողովուրդն արդէն իրեն իր հողի տէրն էր զգում:

Այդ ընթացքում պատրաստեցին ռմբապաստարանները, ուղղաթիռի վայրէջքի հարթակ եւ հոկտեմբերի 5-ին վերադարձան Երեւան եւ Թալին:

*Շահումեանում Պռոշեանի տղաներն էին՝ **Կարօտը, Պետօն, Հրաչը, Վարդգէսը, Արմէնը**... Սմբուլենց ջոկատն էր, հրազդանցիներն էին, Նոր Երզնկայի **Սարօն է** եղել Գետաշէնում: Վերջում էլ, երբ Շահումեանից դուրս էին գալիս, նա էլ Նոր-Երզնկացի իր 6-7 տղաների հետ պռոշեանցիների հետ էր: Իսկ **Մակիչը** նախ Վերին Շէնում է եղել. մի 6-7 ամիս մենակ էր այնտեղ: **Թալինցիները** եւս շատ էին. **Սաքօն** էր, **Մուկուչը, Վարդգէսը, Ռոմիկը, Աչոտը** (զոհուած), **Աթօն** (զոհուած): Նրանք կարաչինարում էին, որտեղ թուրքի ինքնաթիռ էին գերել, օդաչուներին իջեցրել: Թուրքերը մօտ տարածութիւնից կրակ են բացել եւ երկուսը զոհուել են:*

*Հրազդանցիներն էին՝ **Աբօն, Արարատը, Ռուբօն, Սմբօն, Ճուտ Մհերը,** Արթիկի տղաները, որոնք արթիկցիների հետ 90-ին միասին են եկել Երեւանից, բայց իրենք գնացին Գետաշէն: Պռոշեանի ջոկատն էլ ուզում էր իրենց հետ գնալ, ասացին, թէ այնտեղ «Արաբօ»ի տղաներն են, իսկ այստեղ ջոկատ չէր մնում: **Հարմիկն էր** իրենց հետ, **Մերուժը**, որ մինչեւ իրենց գալը Վերին Շէնումն էր: Գետաշէնում **Թաթուլն** էր, Էրքէչում՝ «**Տիգրան Մեծ» ջոկատը**: Խմբով եկել են եւ գնացել, մնացել են Թաթուլն ու իր մօրաքրոջ տղան՝ **Տիկօն**՝ Արեգ գիւղից: Գետաշէնում խմբերն իրենք էին կազմաւորում, դպրոցում դաս էին տալիս:*

***Առաքել Սարգսեանը** (Էջմիածին, Այգեկ), 90-ին Շահումեան առաջին գնացողներից էր: Մօտ 30 հոգի էին: Նրանց ուղեկցում էր **Կուճուր Շահէնը**: Իջան Մռաւի տակ, Գիւլիստանի անտառի մէջ: Տարբեր շրջաններից (Թալին, Երեւան, Էջմիածին, Արտաշատ) դաշնակցական խմբեր էին: Պատասխանատուն **Մերուժն էր**՝ Բէյրութից: Ռազմակայան ստեղծեցին, մարտավարութեան առաջին պարապմունքներն անցան: Այնտեղ դեռ*

1988 թուական, շարժման սկիզբը. Ըրամի աղբիւրի մօտ, Գյուլիստան

1990 թուական, յունուարի 18,
Գետաշէնում պատանդների փոխանակումից յետոյ

Մկրտութիւն. Գիւլիստանի ջոկատ. մկրտիչ քահանայ՝ Տէր Գրիգոր,
կնքահայրեր՝ Արտաշէս Բարսեղեան /Ֆրանսիա/ եւ Աշոտ Խաչատրեան

Գիւլիստանի ջոկատը 1991թ.,
կենտրոնում՝ հրամանատար Պօղոս Մեղրեանը

Առաջին ռազմակայանի ստեղծումը
Գիւլիստանի անտառներում, 1990թ., սեպտեմբեր

Շահէնը, Գիւլիստանի ջոկատը եւ երեւանցի մի խումբ մարտիկներ,
1990, աշուն, ռազմակայան

Կուճուր Շահենը, էդիկ Ստեփանեանը, Պողոս Մեղրեանը, Վալերի Գրիգորեանը, Յակոբ Խիդիրեանը, Սլաւիկ Մարիանեանը,1991թ.

Տէր Գրիգորը, Շահէնը եւ Վերին Շէնի ջոկատը, 1991թ.

Հրամկազմի ճեպախորհրդակցութիւնը,
աջից երկրորդը՝ Վերին Շէնի հրամանատար Սամսոն Մարիանեան

Շահէն Մեղրեանը /կենտրոնում/, Տէր Գրիգորը,
ԽՍՀՄ ԳԽ պատգամաւոր Վլադիմիր Սմիռնովը
եւ ՀՀ ԱԺ պատգամաւորներ եւ լրագրողներ

Մարտական խումբը Բուզլուխում, 1991թ.

«Մեծն Տիգրանի», Հոկտեմբերեանի ջոկատները
եւ մի խումբ աշխարհազօրայիններ,1991թ.

Սամուէլը, սփիւռքահայ Արմիկը եւ նրանց մարտական ընկերները, 1991թ.

Կարօտ Մկրտչեանը եւ Գեղամ Մուրադեանը /վերջում՝ կանգնած/
եւ մի խումբ մարտիկներ,1992թ.

Գետաշէնի անկումից յետոյ. կենտրոնում՝ Իգոր Մուրադեանը, Մեծն Շահէնը, Կուճուր Շահէնը, աջից՝ Հրանտ Մարգարեանը, 1991թ., մայիս

Արմաւիրի եւ Հրազդանի մարտիկները, Գետաշէն,1990թ., աշուն

Բարօնուհի Քերոլայն Քօքսը եւ Զօրի Բալայեանը, Բուզլուխ,1991թ.

Ռօմա Առուստամեանը, Շահէն Մեղրեանը եւ Զօրի Բալայեանը



Ռօմա Առուստամեանը, Ինեսա Բուրկովան, Վլադիմիր Աղաջանեանը, Աշոտ Խաչատրեանը, Շահումեան,1991թ., գարուն

Նստած են՝ Շահեն Մեղրեանը, օդաչու Գեղամ Գաբրիէլեանը, կենտրոնում՝ Թաթուլ Կրպէեանը՝ գլխարկով, Գետաշէն, 1991թ., գարուն

Ձախից աջ՝ Վարդան Թաշչեան, Ժիրայր Սեֆիլեան,
Սօս Սարգսեան /Գորիս/, Խաժակ Գեթսեմանեան, 1991թ.

Մելիք Յովասափեանը, Արջ Էդոն, Պետրոս Մեղրեանը,
Կուճուր Շահէնը, Վահան Յովհաննիսեանը,
Կարէնը /Մուզմուզ/,1991թ.

Սփիւռքահայ մարզիչները Գառնիի մարտիկների հետ, 1991թ.

Արջ էդոն, Վլադիմիր Բալայեանը, Մոնթէ Մելքոնեանը, Արթուրը /Ճուտ/
Վերին Շէնի դիրքերում, 1991թ.

Ազգային անվտանգութեան մարմնի ջոկատը Շահէնի հետ,
1991թ., աշուն Ինջա գետի դիրքերում

Հրազդանի ջոկատը, Շահումեան, 1991թ.

«Արաբոյի» մարտիկները եւ մի խումբ դաշնակցականներ,
1991թ., Մանաշիդ

Աբովեանի ջոկատը. կենտրոնում՝ Սամուէլ Զոհրաբեանը եւ
Արմէն Աւետիսեանը, 1991 թ., Կարաչինար

Ալավերդու ջոկատը, 1991 թ., Բուզլուխ

Աջից երկրորդը՝ Անատոլի Մակեանը, Կուճուր Շահէնը եւ Հոկտեմբերեանի ջոկատի տղաները, 1991թ.

էրեբունի օդակայան. կենտրոնում՝ Վանցեանը, Շահէնը, Ջահանը, մի խումբ օդաչուներ,1992թ, աշուն

Ուղղաթիռի դիմաւորումը, 1990թ, աշուն, Շահումեան

*մնում են իրենց չինած գետնափոր տները: Մէկ ամսից աւելի գիւղացիները չգիտէին որ անտառումն են: Դրանից յետոյ երկրորդ խումբը եկաւ: **Հարմիկն** էր, **Հենօն, Թաթուլ Կրպէեանը**, «Արաբօ»ի տղերքն էին: Վերին Շէն էին գնացել, վերադարձան եւ տեսան այդ երկրորդ խմբին: Նրանց հետ կային գործիչներ՝ **Շոթան, Սուրիկը**: Նրանք քարոզչական աշխատանքներ պիտի կատարէին: Երկու ամիս յետոյ նրանց փոխարինեցին **Վահանն ու Հրայր Կարապետեանը**: Իրենց էլ փոխարինեցին եւ իրենք եւս վերադարձան տուն:*

«Երկրորդ անգամ Շահումեան եկանք 91-ի ապրիլի 29-ին կամ 30-ին: Երեւանից դուրս եկանք եւ իջանք ամմիջապէս Գիւլիստանի վերեւը: Այդտեղ իմացանք, որ **Թաթուլը** զոհուել է: Նա խփուել էր մէկ օր առաջ: Մեզ հետ էր նաեւ **Իգոր Մուրադեանը**: Խումբը տարբեր տեղերից էր: Էջմիածնից առաջին անգամ 10 հոգի էինք, երկրորդ անգամ՝ 5 հոգի: Առաջին հաւաքի մէջ էին **Հայկ Կարապետեանը** (մեր ենթախմբի պատասխանատուն), **Վաչէ Ռոստոմեանը, Յովիկը, Սպարտակը**՝ մեր գիւղից, **Հրաչը եւ Սուրիկը**՝ Վաչէենց Գրիբոյեդով գիւղից:

Դրանից յետոյ իջել ենք ռազմակայան, էլի նոյն գործերն ենք արել: Երբ բարձունքներից իջնում էինք՝ ցրւում էինք ըստ գիւղերի: Ռազմակայանում նախապատրաստւում էինք եւ իջնում գիւղերը: Առաջին օրերի ժամանակներն աւելի տպաւորիչ էին, որովհետեւ զուտ զինուորական գործ չէր, այլ գաղափարի զինուոր դառնալու, ձեւաւորուելու ընթացքն էր: Մինչեւ մայիսի 23-ը ռազմակայանում էինք»:

***«Գարեգին Նժդեհ»** ջոկատի հրամանատար **Արարատ Մատուրեանը** 1991 թուականին Թաթուլի եւ այլ տղաների հետ դպրոցներում պատմութիւն են դասաւանդել: «Գարեգին Նժդեհ» ջոկատի կազմում կային 24 մարտիկներ: Մասնակցել են երեք գիւղերի ազատագրման եւ դիրքերի պաշտպանութեան գործողութիւններին: Հայ Պարիսում մայիսի 24-ին զոհեր տուեցին. **Ներսէս Բեբրեեանը, Մայոր Յովհաննիսեանը, Աշոտ Խաչատրեանը, Սարգիսը, Աշտարակցի Արմէնը**: Այդ գիւղերը*

ազատագրելուց յետոյ քիչ մարդիկ ետ եկան: 1991-ի դեկտեմբերի 30-ին ետ են եկել Երեւան:

«Արաբոյի» *գաղափարը յղացել է* ***Մանուէլ եղիազարեանը:*** *Ջոկատի հիմքը դրուել է 89 թուականին Սովետաշէնում: Մանուէլն է եղել,* ***Մարսէլը, Մելիքը, Արջը /Էդիկ Մելքումեան/...*** *Սկզբից եղել են 14-15 հոգով, յետոյ կամաց-կամաց չատացել են: 1990թ, վերջին ամիսներն էին: «Արաբոյի» հրամանատար* ***Մանուէլ Եղիազարեանը*** *ժողով է հրաւիրում եւ ոգեշունչ խօսք ասում, նշելով, որ իրենք պէտք է չարունակեն Հայաստանի ազատատենչ եւ քաջարի զաւակաց գործը: Հրամանատարը համոզուած է, որ մեր պայքարն արդար է: Դարերով մեր ազգը պայքարել է իր Հողի համար, իր Ազատութեան համար: Ունեցել ենք ծովից-ծով Հայաստան, բայց մնացել ենք մի բուռ, այն էլ վտանգի տակ է: Ժամանակն է, որ սատար կանգնենք Արցախին, թոյլ չտանք, որ այս փոքրիկ մասնիկն էլ մեզնից խլեն: Հայութեան թշնամիների նպատակն է Ղարաբաղը հայաթափել եւ դրանով հարցը փակել:* «Պէտք է օգնել Ղարաբաղցուն, պէտք է պայքարել ամբողջական Հայաստանի համար: Շահումեանում դրութիւնը լաւ չէ, գիւղերը հայաթափւում են, պէտք է օգնութեան գնալ: Մենք մեր թշնամին ունենք, սակայն Միութեան բանակը մեր դէմ է, Միլիցիան մեր դէմ է, Կոմկուսը մեր դէմ է: Մենք պէտք է խելամիտ լինենք, հասնենք մեր նպատակին, որպէսզի սերունդները մեզ յիշեն: Մենք պէտք է, ունենանք Ազատ ու Անկախ Հայաստան:

Ով կը ցանկանայ պայքարել Ազգի համար եւ չկնայել իր կեանքն ու հնարաւորութիւնները, թող իմանայ, որ շուտով գնալու ենք Արցախ: Խումբը բաժանուելու է երկու մասի, մի մասը շուտով գնալու է, իսկ միսը նրան կը փոխարինի մէկ ամիս անց»:

Ջոկատի մի թեւը կազմաւորուել է Վայքի Խաչիկ գիւղում, ***Նաիրի Մանուկեանի*** *հրամանատարութեամբ: Խաչիկի 20 հասուն տղաներ, ովքեր զինուորական ծառայութեան մէջ են եղել եւ պատկերացում ունէին զէնքից ու զինուորական գոր-*

ծից, եւ 10 աշակերտներ որոնք սկաուտական շարժման հունով զարգանում էին եւ համատեղ պարապել, մարզուել են՝ կազմեցին ջոկատը:

«Արաքօ» ջոկատում էին նաեւ ***Դուշմանը եւ Դուշմանչիկը*** *Սուրբէնաւանից: Երկու եղբայրն էլ ջոկատի սիրուած տղաներից էին: Մինչեւ* ***Կարէնի*** *գալը, թուրքերը* ***Կարոյի*** *անունը դրել էին* ***Դուշման****: Երբ Կարէնը եկաւ, տեսնելով որ նա Կարոյի նման խիզախ է, նրա անունն էլ կնքեցին* ***Դուշմանչիկ****: «Արաքոյում» փորձառու ազատամարտիկներ շատ կային, որոնք յետագայում փառքով պսակեցին իրենց անունները: «Արաքոն» իրրեւ մի ամբողջութիւն՝ հոգեւոր-գաղափարական հիմքի վրայ էր կառուցուած, աճեց զօրացաւ, սակայն ջոկատի մի զգալի մասը 1992-ի ամռանը՝ յունիսին, մի քանի այլ ջոկատների հետ զարմանալի պայմաններում ընկաւ ծուղակի մէջ եւ ջարդուեց:*

1990-ի Օգոստոսի վերջին ծպտեալ, թուրքի գիւղերի միջով «Արաքոյի» տղաներին անց են կացրել ընդերքը հետազօտողներ, հնագէտների անուան տակ: Անցնելով ադրբեջանական զօրքերի միջով եւ իրենց հետ տանելով զէնքերը՝ հաստատուել են Մարտունաշէնում:

Ռուսլան Բաբաջանեան. **«Լաւ կռուողներից պիտի նշեմ Թաթուլին, Մալաթիայի Վահանին: Ջիւանին եւ Եղվարդցի Համոյին՝ իրենց ջոկատներով, Լաւ կռուողներ էին նաեւ «Արաքօ» ջոկատի տղաները: Հոյակապ ջոկատ էր: Նրանցից կը նշէի Արջ կոչեցեալ՝ ողորմած Էդոյին, Տլոտի Արմէնին, Մուզ-մուզին, Մարսէլին, Էրքէջցի Վանիկին, Կամոյին, գետաշէնցի Հայկազ Մարդանեանին, Սերգէյին, Յակոբին, մեր շահումեանցի տղաներին»:**

Ալավերդու ջոկատի *կազմակերպիչը, մարտական պատասխանատուն եւ հրամանատարը* ***Սասուն Սիմոնեանն*** *էր: Հիմնադիր անդամներից էին* ***Ռաֆիկ Ղազինեանը, Արայիկը,*** *Շամլուղեցի* ***Գարիկը,*** *Աքորեցի* ***Անդրանիկ Պետրոսեանը*** *(որ յետոյ զոհուեց),* ***Գագիկը, Արարատը (Պաւօ),*** *Սասունի եղբայր*

Անուշաւան Սիմոնեանը, Սուրիկ Ճուղուրեանը:

Սասունը մի օր ջոկատի տղաներին հաւաքում է իրենց տանը, որը եւ զինապահեստն էր: «Տղանե՛ր, ես գնում եմ Ղարաբաղ, գալի՞ս էք: Ով ուզում է՝ թող գայ»: Մտադրուեցին սարերով հասնել Արցախ, սակայն կատարումը յետաձգուեց եւ 1989-ի սեպտեմբերի 23-ին ջոկատով գնացին Ստեփանակերտ: 7 հոգով էին: Ուխտեցին **Գէորգ Զաւուշի** *գրքի վրայ: Երդումի խօսքը գրեց* **Արտիկ Քոչարեանը**.

«Ես Հայ եմ:

Անդրանիկ եւ արիական ազգի զաւակ:

Կեանքովս եւ պատուովս երդուում եմ Հանուր ազգիս առջեւ՝ լինել ազնիւ, քաջ, հայրենասէր: Այսօրուանից հայդուկ եմ, Վարդանանց եւ Սարդարապատի զինուոր, Արաբոյի, Սերոբի, Գէորգի գործի չարունակողը: Եւ պիտի կռուեմ այնքան ժամանակ, քանի դեռ Հայոց վերջին թիզ հողը ազատագրուած չէ եւ վերացած չէ վերջին թուրքը…

Եթէ ես ետ կանգնեմ երդումիցս, ուրեմն թո՛ղ ինձ վրայ ծանրանայ միլիոնաւոր հայ անմեղ զոհերի անէծքը:

Երդուում եմ, որ դաւաճան ընկերոջս վրայ ձեռքս չի դողայ:

Թո՛ղ Տէրը լինի մեզ զօրավիգ»:

Մտորագրութիւն. ***Սասուն Սիմոնեան, Անդրանիկ Պետրոսեան (զոհուած), Սուրիկ Ճուղուրեան, Արարատ Կիրակոսեան, Միշա Գասպարեան, Գառնիկ Ղազարեան, Համլետ Յովհաննիսեան, Լաղիկ Յակոբեան (զոհուած), Դաւիթ Ամիրխանեան, Արտիկ Քոչարեան:***

Հրանտ Մարգարեանը *Սասունին նշանակել էր մարտական պատասխանատու:*

Ջոկատից ոմանք գնացին մայրաքաղաքի գունդ, ոմանք մնացին Սասունի ստեղծած նոր՝ դաշնակցական ջոկատի մէջ:

Ջոկատով եկել են Երեւան 91-ի յունիս կամ յուլիս ամսին եւ հանդիպել ***Շահէն Մեղրեանին****: Շահէնը եղել էր Ալավերդիում, երբ Շահումեանի կոմերիտմիութեան քարտուղարն էր: Շահէնը Հրանտին ասաց.*

– Ես Սասունին տանում եմ:

– Նրան ուրիշ տեղ ենք ուղարկում:
– Ջէ՛, ես Սասունին պիտի տանեմ:

Յատուկ գնդի հրամանատարներն են եղել **Սերգէյ Առաքելեանը, Աչոտ Պետրոսեանը** եւ **Վլադիմիր (Վոլոդիա) Կարապետեանը**: Վերջինս 36-ամեայ, զինուորական ակադեմիան աւարտած գնդապետ էր: Նա ծառայել է Մարգարայի սահմանապահ զօրքում: Յատուկ գունդն էլ սահմանապահ (երկրապահ) զօրամաս էր: Գնդապետն իր հրամանատարական պարտականութիւններին յաւելեալ, զինուորների հետ հաւասար մասնակցում էր մարտերին, մարտիկների հետ խրամատ էր մտնում եւ իր վրայ կրում նրանց վիճակուող բոլոր դժուարութիւնները: Հէնց մարտական գործողութեան ժամանակ էլ նա «Վիլիսով» պայթեց: **Վոլոդիա Կարապետեանը** (Սեւանից) զոհուել է Մարտակերտում, 1992-ի յունիսի 20-ին: Նոյնը, ցաւօք, կարելի չէ ասել գնդի մասին առհասարակ. նա գործօն մասնակցութիւն չի բերել բազմաթիւ գործողութիւններին, իսկ 1992ի Շահումեանի անկման ժամանակ եղել է մեծամասամբ կրաւորական վիճակում: Յատուկ գնդից տեղում մշտական մնում էր ընդամէնը մի գումարտակ՝ 90-100 հոգի եւ «Տիգրան Մեծ»ից՝ 60-70 հոգի: Հայաստանի մնացեալ զոկատները գալիս-գնում էին:

«Սասունցի Դաւիթ» կամաւորական զօրամիաւորումն ստեղծուել է 1990 թ.յունուարի 20-ին Դաւիթաշէն գիւղում: Այն ղեկավարում էր ռազմական խորհուրդը, ղեկավար՝ **Միքայէլ Երջանիկի Մարտիրոսեան,** կազմակերպութեան նախագահ՝ **Համլետ Բալաբեկի Յովսէփեան**, հրամանատար՝ **Աչոտ Ռուբէնի Մանուկեան**, շտաբի պետ՝ **Սամուէլ Պետրոսի Գէորգեան**: Զօրամիաւորումն իր զոկատներն ունէր ինչպէս Երեւանում, այնպէս էլ Հանրապետութեան տարբեր բնակավայրերում:

Մարտական գործողութիւնների ժամանակ զօրամիաւորումն ունեցել է երեք տասնեակ զոհեր եւ հարիւրաւոր վիրաւորներ:

Զօրամիաւորման շարքերից աճել են բարձրաստիճան սպաներ եւ գեներալներ:

*Առաջ անցնելով ասենք, որ 1991 թ. օգոստոս, սեպտեմբեր ամիսներին «Սասունցի Դաւիթը» **Աշոտ Մանուկեանի** հրամանատարութեամբ մասնակցել է Մանաշիդի պաշտպանութեան, այնուհետեւ՝ Բուզլուխ, էրքեջ գիւղերի ազատագրման մարտերին: Սեպտեմբերի 14-ին վիրաւորուել են **Ռուբէն Յակոբեանը, Ներսիկ Մանուկեանը:** 1994-ի մարտից զօրամիաւորումը «Եղնիկների» հետ միասին, **Սամուէլ Մաթեւոսեանի** հրամանատարութեամբ մասնակցել է Շահումեանի շրջանի մարտերին: Գիւլիստանի մերձակայքում զոհուել է ջոկատի ազատամարտիկ **Նորայր Ղազարեանը:***

***«Մեծն Տիգրան»** աշխարհազօրային միաւորումը ստեղծուել է 1989-ին: Ջոկատի կենսագիրները զօրամիաւորմանը գունդ են անուանում: Զօրաջոկատի ստեղծման գործում կարեւոր աւանդ ունեն՝ **Խաչիկ Գալստեանը, Արմէնակ Արմէնակեանը, Վլադիմիր Առաքելեանը. Լեւոն Մայսուրեանը, Սմբատ Այվազեանը, Կորիւն Ղումաշեանը, Աշոտ Թերզեանը, Նորայր Սարգսեանը...** Ռազմական խորհրդի նախագահ էր **Խաչիկ Գալստեանը:** 1990-ի յունիսից Աբովեանի Գեղաչէն գիւղի ջոկատը **Եղիշ Համբարձումեանի** հրամանատարութեամբ 12 հոգով մեկնել են էրքեջ եւ ստեղծել մարտական հենակէտ, որը դարձել է գնդի բազայի հիմքը: Պարբերական հերթափոխներով մասնակցել են Շահումեանի պաշտպանութեան եւ ազատագրման մարտերին: Նրանց հենակէտը եղել է էրքեջում:*

*Ռազմական խորհուրդի կազմը. **Գալստեան Խաչիկ, Առաքելեան Վլադիմիր, Այվազեան Սմբատ, Արմէնակեան Արմէնակ, Մխիթարեան Աղուան, Միսակեան Լեւոն, Սարգսեան Ժորա, Սարգսեան Տիգրան, Սիմոնեան Ռաֆայէլ, Բաղդասարեան Դենպրիկ, Բաղդասարեան Ռուբէն:***

Զօրամիաւորումն ունեցել է 16 ջոկատներ Երեւանում եւ ՀՀ տարբեր շրջաններում: Ունեցել է մօտ 120 մարտիկներ:

Արտաշատի** 25 հոգիանոց զօրաջոկատը **Լաերտ

Սաղաթէլեանի *հրամանատարութեամբ մասնակցել է Բուզլուխ, Մանաչիդ, Վերին Շէն գիւղերի պաշտպանութեան եւ ազատագրական մարտերին: Շահումեանի պաշտպանութեանն իրենց մասնակցութիւնն են բերել նաեւ Հոկտեմբերանի, Էջմիածնի, Ապարանի ջոկատները:*

Հայաստանի ջոկատները գնում-գալիս էին, իսկ չա-հումեանցիք միշտ տեղում էին: Դրսեկների ներկայութիւնը պարզապէս ոգեւորիչ էր:

Գլուխ վեցերորդ
ՀՈԳԵՒՈՐ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՎԵՐԸՆԹԱՑՔ, ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ. ՇԱՀՈՒՄԵԱՆԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ /ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ/ ԴԱՇՏ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ... ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մարտական եւ մարտավարական փորձառուբեան իմաստով մեծ է յատկապէս ***Դաշնակցութեան*** *եւ* ***Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի*** *դերը, որոնք գործնական պայքարի փորձ են կուտակել թէ՛ Բէյրութի քաղաքացիական կռիւների ընթացքին եւ թէ՛ ահաբեկչական գործողութիւնների ժամանակ: Երրորդ ճիւղը խորհրդային բանակի կազմում հայ մարտիկների մասնակցութիւնն էր Աֆղանական պատերազմին: Հայ «աֆղանների» մեծ մասը կամաւոր մասնակցեց նաեւ Արցախեան ազատամարտին: Եւ պատահական չէ, որ Աֆղանստանում կռուած մարտիկների մեծ մասը իրենց փայլուն դրսեւորեցին նաեւ Արցախեան պատերազմում, ինչպէս օրինակ՝* ***Գրիգոր Գրիգորեանը*** *(Շահէնի զինակից),* ***Դուշման Վարդանը (Վարդան Ստեփանեան), Արարատ Սահակեանը****:*

Երբ Սփիւռքում սկսուեց զինեալ պայքարը, գոյացան երկու հիմնական ուժեր. մէկը ***Հայկական Ցեղասպանութեան Արդարութեան Մարտիկներն էին*** *(ՀՑԱՄ), միւսը՝* ***Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը*** *(ՀԱՀԳԲ, ԱՍԱԼԱ): ՀԱՀԳԲ-ն սկզբնական շրջանում քարոզութեամբ առաջ գնաց, յաջողեց բաւականին մտնել ազգի մէջ եւ սիրաշահել նաեւ դաշնակցական այն տղաներին, որոնք որոշ չափով զեկավարութիւնից նեղացած էին կամ նախապատուութիւնը տալիս էին զինեալ պայքարին: Ուստի նա արագ կերպով թափանցեց ազգային-հանրային տարբեր շերտերի մէջ: Բայց ի վերջոյ, երբ ժողովուրդը կարողացաւ հասկանալ, որ այդ բանակի պայքարը միայն թուրք երեւելի-*

*ներքի դէմ չէ, հասկացաւ նաեւ նման պայքարի վտանգաւո-րութիւնը հայոց ազգային չահերի համար միջազգային գետնի վրայ: **ՀԱՀԳԲ**-ն կորցրեց ժողովրդի վրայ գաղափարապէս ազդելու իր ներգործական ուժը, այսինքն՝ գոյութեան խորհուրդը: Ընդ որում՝ այդ բացայայտումը եղաւ ներսից, նրա առաջադէմ գործիչներից, ովքեր հայոց ազգային չահերի ոտնահարումը չէին ցանկանում: Այնուամենայնիւ, այդ կազմակերպութեան զինեալ պայքարի փորձառութիւնը եւ զէնքով հայրենիքի փրկութեան համար պայքարը գոնէ մասամբ փոխանցուեցին Արցախեան ազատամարտի մասնակիցներին:*

*ՀԱՀԳԲ-ի գործողութիւնները տեւեցին մինչեւ 1985-ը: Պիտի չմոռանանք «**Հայաստանի ազատագրութեան Հայ գաղտնի բանակի**» գաղափարական այն մարտիկներին, որոնց գործելու չարժառիթը համապատասխան էր բարոյական բարձր չափանիշներին: Նրանցից **Մոնթէ Մելքոնեանը** ոչ միայն խնկելի յիշատակ է թողել, այլեւ նրա ոգին մեր յաղթական եկեղեցու սրբերի հետ միասին պայքարում է եւ յաւիտեանս պայքարելու է ի բարօրութիւն Հայոց աշխարհի: Մոնթէն այն եզակի հայերից է, ով նորովի իւրացրեց Արեւելքի եւ Արեւմուտքի ռազմարուեստի նուաճումները եւ այն ներդաշնակեց մեր ազգային հոգեբանութեանը եւ կիրառեց ի խնդիր **ՀԱՅ ԴԱՏԻ**՝ անձնական կեանքի նպատակ դարձնելով Արեւմտահայաստանի ազատագրումը: Եւ պատահական չէ, որ մարդիկ անհուն եռանդով համախմբուեցին Մոնթէի չուրջ, եւ այն մեծագոյն սէրը, որ հայութիւնը տածում է իր հերոսի նկատմամբ: Սկզբնական շրջանում Դաշնակցութիւնը եւ Մոնթէն ունեցել են փոխըմբռնման խնդիր, որն արագ կերպով հալուել է պատերազմական հոգեմաքրիչ գործողութիւնների ընթացքում:*

Սիմոն Գաֆալեան. «Մոնթէն եկաւ Պէյրութ, մասնակցեցաւ Լիբանանեան պատերազմին, յետոյ չեմ գիտէր ինչ խնդիրներ առաջացան եւ ձգեց գնաց, Լիբանանէն դուրս ելաւ: Եթէ մէկու մասին պիտի խօսինք, ժողովուրդն է, որ պիտի խօսի: Մոնթէի մասին արդէն ժողովուրդը կը խօսի, թէ ինչեր է ըրեր, բնական

է, որ որեւէ անհատ արդէն չի կրնար հակասական բան մը խօսիլ: Այդպէս ալ բոլոր տղաքը, ինչ դրօշակի տակ ալ ըլլան, ինչ միութեան անդամ ալ ըլլան, եթէ իրօք իրենց անբասիր պարտականութիւնը կը կատարեն, ոչ մէկն իրաւունք ունի որեւէ բան ըսելու անոնց մասին»:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը *ո՛չ թէ իշխանութիւնը նպատակ դարձրած պարզ քաղաքական կուսակցութիւն է, այլ՝ հայութեան հիմնախնդիրները լուծելու ուխտադիր կազմակերպութիւն, ազգային գաղափարաբանութեան եւ հոգեբանութեան ռազմաքաղաքական եւ հոգեւոր-բարոյական համադրութիւն, որը նոր եւ նորագոյն ժամանակաշրջանում չարունակութիւնն է* ***Վարդանանց ուխտի*** *եւ Տարօնականութեան կամ Յեղակրօնութեան (տե՛ս* ***Գարեգին Նժդեհ,*** *«Յեղի ոգու չարժը», Հատընտիր, Եր., 2006, էջ 145-ից): Դաշնակցութիւնն այդ իմաստով պատրաստի բանակ է: Դաշնակցութեան էութեան լուսաբանումն առկայ է* ***Նժդեհի*** «Իմ Դաւանանքը» *ներբողաճառի մէջ.*

«Կը գտնուիմ Դաշնակցութեան սեմէն ներս եւ ահա ինքզինքս կը զգամ Յեղիս հետ սրբազան դաշինքի մէջ, եւ կ՚ընդունիմ թէ ամէն մէկ ես յանցաւոր ապստամբ մը, ամէն մէկ եսականութիւն բարոյական մահափորձ մըն է այն Մեծ Ամբողջին, որ Ազգ կը կոչենք:

Կը գիտակցեմ, թէ բաժանուելով ցեղէն, անհատը կը մեռնի հոգեպէս եւ ապա կը հաշտուի իր ցեղի մահուան հետ:

Դաշնակցական եմ եւ ահա կ՚ընդունիմ թէ անհատէն ու ընտանիքէն, կուսակցութիւնէն ու դասակարգէն բարձր կայ եւ պիտի մնայ Ցեղը, միակ ճշմարտութիւնը, որու ձայնին չհնազանդող ազգը կը պատժուի առնուազն քաղաքական մահուամբ: Այդ սրբազան ձայնը զոր միայն հոգեւոր խուլերը չեն լսեր, կը պատգամէ մեզ՝ թող ազգը կենտրոնացնէ իր բովանդակ ուժերը եւ տրամադրէ զանոնք իր ինքնապաշտպանութեան գործին:

Կ՚ընդունիմ թէ Դաշնակցութիւնը յայտնութիւնն է հայութեան հաւաքական հոգիին, այն ինքնագիտակից գործիքը, որուն

միջոցաւ ցեղիս հոգին առաջ կը վարէ իր պատմական առաքելութիւնը…» (նոյնը, էջ 156-157):

Գարեգին Նժդեհը նշեալ եւ այլ երկերի մէջ Դաշնակցութեան մասին ունի սքանչելի խօսքեր, որոնք բնութագրում են այդ կազմակերպութեանը որպէս համահայկական գիտակցութեան մակարդակ, Հայաստանի եւ հայութեան ազատութեան պայման, հայի հոգեւոր զարգացման եղանակ (ներքին ազատութեան ընթացք): Նժդեհի հանճարը մարդու հոգեփոխման քրիստոնէական եղանակը կիրառել է դաշնակցականի լինելութեան նկատմամբ եւ հասել հոգեխօսութեան չողարձակ բարձունքներին, որոնցով իմաստաւորւում է հայի մարդկային եւ ազգային կեցութիւնը, մխաբանում է հայ ժողովուրդը, պարզում, սահմանում հայութեան խնդիրներն ու նպատակները, ազատութեան հասնելու եղանակները: Սրանով բնաւ չէինք կամենայ իդէալականացնել Դաշնակցութիւնն իբրեւ կազմակերպ կառոյց, որի մէջ կարող են թափանցել եւ թափանցել են ամէն կարգի մարդիկ, նաեւ վատեր: Երկրի վրայ չկայ մի կազմակերպ կառոյց, որի մէջ անկարող լինի թափանցել չարը, այդ թւում եւ քրիստոնէական կառոյցները, սակայն արժանին պիտի մատուցել նրանց, ովքեր որեւէ կազմակերպութեան միջոցաւ հասնում են ազգին եւ հայրենիքին անմնացորդ նուիրուելու աստիճանին, որը հաճոյ է անկասկած նաեւ Աստծուն: Աւելին, առանց աստուածապաշտութեան, առանց բարոյական մաքրութեան եւ սիրոյ հնարաւոր չէ յաղթահարել եսականութիւնը եւ նուիրուել գաղափարին:

*Դաշնակցութեանն անդամագրուելը նրա գաղափարակիրը դառնալու համար անխախտելի պայման չի եղել: Եւ իրաւացի է **Ռուբէն Տէր-Մինասեանը** գրելով. «Դաշնակցութեանը կուսակցութիւն անուն տալը սխալ պիտի ըլլար, որովհետեւ ան կը ներկայացնէ հայ ժողովրդի գանգուածը: Ան աւելի հայ ազգի կազմակերպութիւնն է» (Ռուբէն, «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ», ա. տ. եւ թ., էջ 114):*

*Ղարաբաղեան չարժումը երբ սկսուեց, **սփիւռքահայոց** համար մի քիչ անսպասելի արագ ընթացք ունեցաւ, իրադարձումներն արագ զարգացան: Լիբանանում դաշնակցականներն ի հարկէ պատրաստ էին մասնակցելու Արցախում տեղի ունեցող ռազմական գործողութիւններին, կար փորձ, կային ազգային դաստիարակութիւն եւ կոփուածութիւն, սակայն փաստ է, որ ամէն մի փոփոխութիւն հնարաւոր չէ արագ եւ սովորական միջոցներով ճչմարիտ անդրադարձ ունենայ, թէեւ 75 թուականից կար արդէն զինեալ պայքարը եւ կային պատրաստի տղաներ:*

Զինուորական գիտելիքներին առընթեր դաշնակցական գործիչները գաղափարապէս պիտի պատրաստէին տեղիս տղաներին, որպէսզի իրենք իրենց ամուր զգային: Այդ բոլորը Դաշնակցութիւնն իր ուժերով կարողացաւ փոխանցել երիտասարդներին, որպէսզի նրանք իրենց վստահ զգային եւ անվախօրէն, անկաշկանդ մտնէին կռուի դաշտ: Այդ ժամանակ հայութեան վաղնջական երազանքն այստեղ իրականացաւ կատարելապէս, եւ երիտասարդութեանը փոխանցեցին այն, ինչ կարողացան:

Մարտարուեստի դասերը Հայաստանում եւ Արցախում վարում էին հիմնականում սփիւռքահայ փորձառու եւ հայրենապաշտ տղաները: Նրանք կարողացան մի քանի ամսուայ ընթացքին իրենց փորձը հաղորդել տեղի չնորհալի տղաներին, որոնք, իրենց հերթին, արդէն դառնում էին մարտարուեստի ուսուցիչներ: Նախքան Հայաստան եւ Արցախ ժամանելը նրանք մեծ ճանապարհ են անցել:

*Իբրեւ մարզիչներ առաջին անգամ Հայաստան են եկել **Մերուն Կարպոչեանը, Սիմոն Գաֆալեանը** եւ **Խաժակ Գեթսեմանեանը:** Կարճ ժամանակ անց նրանք գնացել են Շահումեան: Ապա ժամանել են **Հարմիկ Յովսէփեանը, Հենօ Ամիրխանեանը, Բորիս Ղուկասեանը:** Պատերազմի առաջին օրից մինչեւ վերջ մասնակցել է **Ժիրայր Սեֆիլեանը**: Դաշնակցութեան մարտական պատասխանատուն եւ կազմակերպիչ հրամանատարը **Հրանտ Մարգարեանն էր**: Հետագային՝ պա-*

տերազմին անմիջականօրէն մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեցին նաեւ ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից: Եղել են հաւանաբար նաեւ այլ երկրներից: Պատերազմի վերջին տարում սփիւռքահայերից արդէն ներկայ էին տասնեակներ: Այստեղ միայն նշենք, որ սփիւռքից պարբերաբար Հայաստանի Հանրապետութիւն եւ Արցախ են ժամանել բազմաթիւ հայեր, որոնք իրենց ոգով, նիւթական օժանդակութեամբ, գիտելիքներով, իրենց հոգու ուժով զօրակցել են պայքարող հայութեանը հայրենիքում:

Ներուն ու Սիմոնը *եկել էին նախքան պատերազմական վիճակի սրումը եւ կազմակերպական գործեր էին անում: Ներուն Շահէնի օժանդակութեամբ անտառում ռազմակայան էր ստեղծել եւ մարզական ու գաղափարական դասընթացներ էր տալիս տղաներին: Նա բաւական լաւ աչխատանք կատարեց այդտեղ: Նա սրտամօտ մարդ էր եւ կարողացաւ մարտիկների մէջ մտերմիկ մթնոլորտ ստեղծել, տեղացիների հոգեբանութիւնը հասկանալ, եւ բացի ռազմագիտութիւնից՝ գաղափար եւ ոգի ներարկել պատանիներին եւ մեծերին Սակայն աչխատանքից աւելի տեղաբնակների համար կարեւոր բան կար, որ իրենք իրենց անտէր չզգային, համոզուէին, որ սփիւռքը չանք է գործադրում իրենց օժանդակութեան մէջ, լինի մարտավարական, լինի դէնքով, մարդուժով, գաղափարական հարցերով եւ այլն: Շահումեանցիները զգում էին, որ իրենք մենակ չեն բազմամիլիոն թուրքերի դէմ:*

Խաժակ Գեղեսեմեանեան. «Լիբանանի կռիւներուն ժամանակ մենք ապահովեցինք մեր բոլոր չրջանները, մանաւանդ Պուրճ-Համուտի չրջանը: Դաչնակցութիւնը կատարեց իր կրկնակի դերը՝ դրսում եւ ներսում»: *Խաժակն ապրում էր Հայաչէնի չրջանում: Դա առաջին չրջանն է, ուր բախում ունեցան քրիստոնեայ արաբական ուժերի հետ:* «Մեզի հարուածեցին քանի մը ոյժերու միջոցաւ, որովհետեւ մենք ազգային ոյժ էինք: Սակայն մեզ որքան հարուածեցին, մենք աւելի ուժեղացանք եւ կազմակերպուեցանք: Թէեւ նեղցաւ մեր օղակը, բայց ուժեղացաւ ու շատ աւելի լաւ էր, քան թէ հիմակուայ կացութիւնը»:

Մարտարուեստ էին պարապում: Այն ժամանակ ***Սիմոնն էր*** *վարում ընդհանուր դասընթացները. մարզիչներին հունի մէջ էր դնում, այնուհետեւ նրանք էին գնում գիւղերը պարապելու: Սիմոնն էր կարգաւորում բոլորի գործունէութիւնը: Սփիւռքահայոց մէջ նա աստղով մարդ էր, գաղափարով հասուն: Սիմոնից յետոյ* ***Փոքր Հրանտն*** *էր: Այստեղ էր նաեւ* ***Հարմիկը****:*

Նրանց հետ Շահումեանում էին նաեւ հայաստանաբնակ այն տղաները, որոնց մի մասը նահատակուեցին: Գործակցելով սփիւռքահայ մարզիչներին, տեղաբնակ ռազմիկ-ուսուցիչները միայն ռազմագիտութիւն չէին ուսուցանում, այլեւ երգի դասեր էին տալիս, հումանիտար առարկաներ էին պարապում, ուշադրութիւնը կենտրոնացնելով պատմութեան հարցերին, հայոց արժէքների համակարգի ծանօթացման եւ քարոզութեան հաւաքներ էին կազմակերպում դպրոցներում: Եւ բոլորին ուղղութիւն էր տալիս եւ ոգեւորում ***Շահէն Մեղրեանը****: Նա լաւ գիտէր, թէ որտեղ ինչ է կատարւում, քանզի ամէն ինչ իր հրամանով էր լինում:*

Յաջողութիւնը Սփիւռքից ժամանած մարզիչների ոչ թէ թուով էր պայմանաւորուած, այլ նրանց դաւանած եւ քարոզած գաղափարներով, այդ մարզիչների նուիրական գործունէութեամբ: Նրանց ներկայութիւնն իսկ յուսադրող եւ զօտեպնդիչ էր: ***Շահէն Մեղրեանն*** *ասում էր.* «Ժողովուրդ, ես մարդիկ եկել են իրենց հեռաւոր երկրից մեզ համար կռուելու, ուրեմն ինչպէ՞ս մենք թողնենք էս հողերը եւ ետ քաշուենք»: *Մարդիկ մտածում էին իրենք իրենց մէջ եւ նրանց անելիքը պարզւում էր ինքնին: Հայոց միաբանութիւնը նպատակի միասնութեան մէջ էր, որի գիտակցումն արդէն լիովին բաւարար է Հայի համար յանուն Մեծ եւ Ազատ Հայաստանի գնալու ամէն մի զոհողութեան:* ***Սիմոն Գաֆալեան.*** «Կարող է մենք իրրեւ անհատներ մեծ ճակատների վրայ չկարենայինք մեծ գործեր ընել, սակայն այս պարագային իրենց Հայի մարտունակ ոգին, անոր չունչն էր կարեւոր: Մեր ներկայութենէն ոյժ կ՚առնէին»:

Կարելի է ասել՝ գործը յաջողեցին, փառք Աստուծոյ, եւ

հայոց հայրենապաշտական եւ ռազմասիրական ոգին փոխանցեցին տեղիս երիտասարդութեանը: Այսպիսով, Հայաստանում ապահովուեց Հայկ Նահապետից սկիզբ առած եւ Վարդանանց պատերազմի ժամանակ բիւրեղ պարզութեամբ սահմանուած ռազմագիտական գաղափարաբանութեան եւ փիլիսոփայութեան ժառանգորդումը եւ մի տեսակ վերացաւ ճեղքուածքը, որ սկիզբ էր առել խորհրդային կամ բոլշեւիկեան ապազգայնութեամբ, եւ յեղափոխական ազատագրական պայքարի սերունդն իր հոգեբանութեան մէջ ամբողջականօրէն վերականգնեց հայոց ռազմասիրական ոգին, առանց որի չկայ Հայոց Բանակ եւ յաղթանակ:

*Գիտակցական հիմքով կարգապահութիւնն անցնում է «չոր օրէնքի» սահմաններից: «Չոր, ճեւական օրէնքը» սկզբնական շրջանում ընկալւում է որպէս արտաքին թելադրանք կամ պարտադրուած անհրաժեշտութիւն: Երբ արտաքին խստակարգութիւնը եւ օրէնքը մարդը յաղթահարում է՝ դրանք նրա համար դառնում են բնական կեցութիւն: Հաւատքով ու հայրենապաշտութեամբ զօրացած մարդն օրէնքի պահանջը կատարում է սիրով եւ նուիրուածօրէն, նա յաղթահարում է անհրաժեշտութեան սահմանները եւ մտնում է ազատութեան թագաւորութիւն: Պարտադրանքը վերանում է եւ մնում է ուխտուածութիւնը: **Որոշ ճգնական մարզումներից եւ կամքի զօրութեան փորձարկումից յետոյ «չոր օրէնքը» յաղթահարւում եւ փոխարկւում է ներքին հակուածութեան, սիրոյ եւ ազատութեան: Առաջուայ նման կատարւում է նոյն գործողութիւնը, սակայն ներքին հոգեբանական հակադարձ ընթացքով: Արդիւնքն էլ լինում է տարբեր. ենթարկուող մեխանիզմը վերաճում է գործող անձի:** Գիտակցական կարգապահութեան նման մակարդակ ունէր հայ քրիստոնեայ գինուորականութիւնն առհասարակ, մասնաւորաբար՝ **Վարդանանց ուխտեալները, 19-20-րդ դդ. ֆիդայիները**, Արցախի ազատամարտիկները:*

Այդպիսի կարգապահութիւն սահմանուել եւ կիրառուել է նաեւ Շահումեանում, սակայն այստեղ դժուարութիւններն

աւելի չատ էին: Շահումեանցիները տեղում ինքնաբաւ եւ ազատ անհատներ չէին, այլ իւրաքանչիւր ոք ընտանիքի, ինչքի տէր էր եւ տեղական հոգեբանական բարդոյթների կրող: ***Շահէն Մեղրեանն*** *այս տեղական առանձնայատկութիւնները չէր կարող անտեսել: Շահումեանը կտրուած էր աշխարհից եւ աւանդական կենցաղի ու սովորութիւնների որոշ տարրեր բնականաբար պիտի պահպանուէին եւ կարգապահութիւնը կառուցուէր ոչ այնքան օրէնքի, որքան բարոյական հեղինակութեան եւ մխմեանց վստահելու վրայ: Ուստի այստեղ նաեւ կարող էին իրենց թոյլ տալ որոշ զբաղմունքներ, խաղեր եւ այլն՝ ինչ-որ չափով լիցքաթափուելու համար: Պատերազմը շահումեանցիների կեցութեան չարունակութիւնն էր, եւ որոշ սովորոյթներից նրանք չէին կարող միանգամից հրաժարել: Ուստի հաւասարակչիռ եւ խոհեմ Շահէնը միանգամից անսովոր բաներ չներմուծեց, թէեւ կարգապահական առումով սփիւռքահայ հրահանգիչները եւ նրանց տեղացի ընկերներն ու չարունակողները (որոնց հրամանատարը վստահում էր անսահմանօրէն) չատ նորութիւններ բերեցին եւ առաջին հերթին՝ վերականգնեցին գիտակցական-ռազմագիտական համակարգը: Յամենայն դէպս Շահէնենք կարգապահութեան ասպարէզում միանգամից չէ, որ հասան յաջողութեան:* ***Պօղոս Մեղրեան.*** «Մարդուժի առաջին օգնութիւնը եղել է 90-ի սեպտեմբերի 2-ին: ՀՅԴ Ջոկատն էր՝ **Մերուժի** գլխաւորութեամբ: 29 հոգի էին, որոնց մէջ՝ Էջմիածնի **Հայկը**, **Թալինի Սաքոն**: Սեպտեմբերի 3-ին երբ այդ ուժը եկաւ մտաւ մեր մէջ՝ մեծ ուրախութիւն էր: Հայրս եկաւ, տեսաւ՝ չատ ուրախացաւ, որ Ազգը մեզ չի մոռացել, մեզ օգնութեան է հասել:

Մի զաւեշտալի, բայց կարեւոր բան կատարուեց: Եկանք, մտանք անտառ: Ես **Հայկին** մօտեցայ եւ հարցրի, թէ ո՞վ է ղեկավարը: Հայկն ասաց, թէ այսինչ տղան է: Սկզբում ես չէի հասկանում, թէ ինչ է ասում ղեկավար այդ տղան եւ հարցրի, թէ ո՞վ է թարգմանիչը: Հայկն ասաց, թէ իրեն են յանձնարարել, բայց ինքն էլ չի հասկանում: Եւ այստեղ խօսք եղաւ, որ տղաներին ոտով ե՛ս պիտի տանեմ անտառ, ինքն էլ աւտոմեքենայով

զէնքերը պիտի բարձրացնի եւ մենք պայմանաւորուած տեղը պիտի հանդիպենք: **Ծերունն** ինձ հարցրեց.

- Քանի՞ րոպէից այնտեղ կը լինես:

- 25-30:

Նա պահանջեց, որ ես աւելի ստոյգ ասեմ: Պատասխանեցի.

- Եղբա՛յր, անտառ է, անձրեւ է գալիս, կարող է մէկի ոտը ջարդուի եւ...:

- Եթէ ստոյգ չասես, ես մարդ չեմ կարող տալ քեզ:

- Քսանհինգ րոպէ:

- Դէ գնա՛:

Նախքան մեր գնալը հետախուզութեան առումով մի հետաքրքրական երեւոյթի էլ ականատես եղայ. մինչ մենք խօսում էինք, նկատեցի, որ մեր տղաները եկել, ծխել էին եւ լուցկու հատիկներն ու ծխախոտի մնացորդներն այնպիսի խնամքով էին հաւաքել, ասես մարդ չի եղել այստեղ: Էդ քաղաքավարութիւնը որ նկատեցի, զգացի որ սա արդէն ուժ է:

Այդտեղ ես իմ տղաներին յանձնարարութիւն էի տուել, որպէսզի գառ մորթեն, պատրաստութիւն տեսնեն, տղաներին հաց տան: Տղաները 3 բալոն օղի էին բերել եւ մօտ 10 լիտր գինի: Այդ պահին, երբ նստեցինք տանիքի տակ եւ պիտի ուտէինք, Ծերունը բալոնը վերցրեց եւ հարցրեց.

- Ի՞նչ է սա:

- Օղի է:

- Ինչի՞ համար է:

- Տղաներից՝ մարդը մի յիսունական գրամ օղի խմի, յետոյ մարդը մի բաժակ գինի...

Քսանութ-քսանինը հոգի էինք: Ծերունը վերցրեց բաժակը եւ խփեց քարին ու ջարդեց: Ձիշտը որ ասեմ, ես գիւղում լաւ ուտող-խմող տղայ եմ եղել: Էդ բանը որ արեց, ասացի.

- Արա՛, էս գի՞ժ ա, ի՞նչ ա:

Հարցրի, թէ ինչո՞ւ այդ բանն արեց: Ասաց.

- Կ'ուզե՞ս լինել մեր ընկերը:

- Այո՛:

- Եթէ կ'ուզես լինել մեր ընկերը, ընդհանրապէս պիտի

չխմես: Ծխելն էլ՝ որքան կարող ես՝ քիչ ծխիր: Եթէ անբաւարար է, ես թոյլ տուել, դրան պիտի վերջ տաս:

- Լա՛ւ: Քեզ հասկացայ:

Ժամանակի մէջ հասկացայ, որ էդ տղան ճիշտ ասաց. խմելով Հող պահել չի լինի: Եթէ խմիչքը մէկի ձեռքին լինի, նա ինչպէ՞ս պիտի Հայրենիք պաշտպանի: Հնարաւոր է, որ քսան գրամ օղին էլ մարդուն գցի զոհի տակ: Շահումեանում եղել են դէպքեր, երբ խմիչքի ազդեցութեան տակ մարդիկ են զոհուել»:

Ուրախացաւ Պօղոսը Ծերունի խստութիւնների համար: Ինքն անձամբ այդ չոր օրէնքը դրեց գործողութեան մէջ իր ջոկատի համար: Այդպէս էլ շարունակեցին: Պատահական չէ, որ Շահումեանի պատերազմում, Պօղոսի այնտեղ եղած ժամանակ, տուել ենք ընդամէնը 2 վիրաւոր եւ 2 զոհ: Սակայն պարտիզանական պատերազմի ժամանակ զոհերը չատացան: Մի տասնեակ տղաներ զոհուեցին, երբ մեր ուղղաթիռն ընկաւ Քելբաջարի վրայ: 92 թուականի մարտի 3-ն էր:

Պօղոս Մեղրեանի հաւաստմամբ՝ Ծերունը արժանաւոր տղայ է, դաստիարակչական լաւ գործ էր կատարում մեր մարտական խմբերի մէջ: Նոյնիսկ արտակարգ ու անակնկալ վիճակներին նա խիստ էր եւ անչեղ կարգապահութիւն էր պահանջում: Եթէ խոստացել ես մի բան անել՝ անպայման պիտի անես: Ջոկատը նախապատրաստում էր մեծ նուիրումով եւ ամենայն լրջութեամբ: Բոլորն իրեն յարգում, լսում էին:

«Ծերունը 4 ամիս պարապեց իմ ջոկատում, վարժեցրեց, յետոյ գնաց Վերին Շէնի ջոկատը: Մնացին **Հարմիկը եւ Սիմոնը**: Մեր տղաներից իւրաքանչիւրը մի պարապմունք էր վարում. Սիմոնը զէնքի տիրապետման ուղղութեամբ էր զանում, Հարմիկը վարում էր գրոհային մարտարուեստի դասեր: Պարսկաստանից մի լաւ տղայ էլ ունէինք՝ **Հենո** անունով, փոքրամարմին, չատ ճարպիկ: Ափսո՛ս, այդ տղաները Շահումեանից չուտ թողեցին գնացին եւ ներկայումս այստեղ չեն: 91-ին Ծերունը վերադարձաւ Հայաստան, այնուհետեւ՝ Լիբանան: Միայն Հարմիկը մնաց մինչեւ վերջ:

Սփիւռքահայ տղաներն առհասարակ մեզ ոգի են ներարկել:

Նրանք մեզ մարզում էին, որովհետեւ արտերկրում իրենք տարբեր բանակներում ծառայել էին եւ ռազմագիտութեանը քաջի-մաց էին: Նրանք մեր ջոկատների հետ, ասենք **Նովիկի** ջոկատի, իմ ջոկատի հետ պարապել են եւ արդիւնաւէտ է եղել իրենց այդ գործունէութիւնը: Մեզ կարողացել են տրամադրել բացառիկ իրավիճակներում կողմնորոշուելու եւ ճիշտ ծրագրով գործելու, եթէ մեր դէմ դուրս գայ անգամ ռուսական բանակը: Այսինքն՝ Հայրենիքի պաշտպանութիւնն այլընտրանք կամ զիջում չի ընդունում: Մենք ազատուել ենք կուռքերից»:

*Սփիւռքահայ մարզիչները գործում էին Հայաստանի ազատամարտիկների հետ միասին՝ զօրակցելով միմեանց: **Հրաչ Մուրադեանը** (Պուչեանի ջոկատ) 90-ի նոյեմբեր-դեկտեմբերին **Պետոյի** եւ **Կարօտի** հետ եղել են Գիւլիստանում: Իրենցից էլ առաջ եղել է **Սամուէլ Երանեանը:** Գիւղերը գնալու եւ տղաների հետ պարապմունքներ վարելու յանձնարարութիւն էին ստացել եւ նոր խմբեր էին ուզում ստեղծել: **Սիմոնն** էր այստեղ եւ նրա գլխաւորութեամբ գնացին Գիւլիստան: Շահումեան աւանում մի խումբ կար, որին մարզում էին **Հրաչն** ու **Պետոն: Պօղոս Մեղրեան.** «**Կարօտի** եւ **Պետոյի** մասին մէկ բան ասեմ: Երբ Գետաշէնի գործողութիւնը պիտի լինէր, **Շահէնը** կապուեց մեր ղեկավարութեան հետ եւ խնդրեց, որ Պուչեանի եւ «Արաբօ» ջոկատներն ուղարկեն: Պուչեանի ջոկատում Կարօտի եւ Պետոյի նման տղաներ էին, որոնց հեղինակութիւնը շատ մեծ էր եւ իրենք յուսալի էին ամէն պարագայի»:*

*Գիւլիստանում էին: Վաղ առաւօտեան դասի էին գնում: **Հրաչն** ու **Կարօտը** միասին էին, Պետոն առանձին էր: Նա գնում էր Շահումեան, ինքն ու Կարօտը՝ Կարաչինար: Դա լինում էր մինչեւ կէսօր: Կէսօրից յետոյ գնում էին Հայ Պարիս, Պետոն՝ Մանասիչէն: Միւս օրն էլ ուրիշ գիւղեր էին գնում: Վերջին ժամանակներն արդէն Հայ Պարիսի սրահի մէջ տեղ չէր մնում՝ գիւղացիները գալիս էին եւ լաւ մարզւում:*

***Սիմոն Գաֆալեանի խօսքով՝** եօթը խումբ կար, որոնց մարզում էին: Նրանք գիտէին, որ յետագան լուրջ իրադար-*

ձուլթիւններ պիտի բերէր, ճակատագրական օրեր էին սպասւում: Նրանք դա գիտէին եւ նախապատրաստում էին երիտասարդութիւնը տեղում: Սակայն ժողովուրդը դեռ առիթ չէր տեսնում: Անհրաժեշտ էր այն համոզմունքն առաջ բերել, որ միայն զէնքով կարելի է պահել հայրենիքը: Եւ երբ իրենք տեղ են հասնում, այս խմբակներն արդէն կային, այս տղաները կային:

Նշեալ եօթը խմբերի հետ պարապմունքներ են սկսում: Սիմոնն այդ խմբերի հետ պարապում էր շաբաթը երկու անգամ: 14 պարապմունք էր անում Երեւանում եւ այլ տեղեր: Այս տղաները սկզբում չէին յայտնւում որպէս դաշնակցական: Իրենք անդամ էին որեւէ մէկ կազմակերպութեան, որեւէ մէկ անուան տակ, բայց իրենք դաշնակցական տղերք էին, ամէն մէկը տարբեր շրջաններում: 3-4 ամիս իրար լաւ ծանօթանալուց յետոյ, յաւելեալ մանրամասնութիւններ իմանալուց յետոյ էր, որ առիթ եղաւ գնալ Գիւլիստան:

Սիմոն Գաֆալեան. «Պուշեանի ջոկատի տղաներն ինձի հարազատ էին իրենց մարտունակութեամբ, իրենց հասկացողութեամբ եւ իրենց մօտեցումով ալ, եւ իմ պահանջս էր իրենց հետ երթալ Գիւլիստան: Ես բնականաբար մօտ էի **Կարօտի, Պետոյի, Հրաչէի, Երկար Արմէնի,** Պետոյի եղբայր **Գագիկի, Ապարանի Անդրանիկի** հետ: Աս տղաքն էին, որ ինձի ընկերացան: Պիտի երթայինք Շահումեան եւ գործունէութիւն ծաւալէինք հեռաւոր հաշիւներով, որովհետեւ այդ ժամանակ Շահումեանը չրջափակման մէջ էր, ուղղաթիռային թռիչքներ ալ չկային, որոշակի ժամանակաընթացք անոնք արգիլուած էին: Գետաշէնի վրայ ՕՄՕՆականներէն յարձակումի եւ ներխուժումի մէկ-երկու փորձեր եղան, բայց չկրցան»:

Շահումեանի բոլոր գիւղերի մէջ ժողովրդի հետ բաւական աշխատանք տարուած էր արդէն: Սփիւռքահայ տղաները դա աւելի խորացրին՝ բնակչութեանն ամբողջական ինքնապաշտպանութեան պատրաստելու համար: Ժողովուրդին ոտքի հանեցին եւ սկսեցին պարապել, որովհետեւ մի ռազմիկը չի կարող մի ամբողջ ճակատ պահել:

*Վաղ առաւօտեան մարգիչներին փոխադրում էր **Պօղոս Մեղրեանը**, տանում էր մէկ-մէկ իջեցնում գիւղերը եւ իրիկուններ հաւաքում, բերում: Ամէն մէկն իր մասնագիտութեան համաձայն իր գործն էր անում: Նրանք հերթով փոխւում էին: Բոլոր տղաները հաւաքւում էին Գիւլիստանում, որովհետեւ ռուսական զօրքը դեռեւս կար եւ կարող էր նրանց զէնքերը հաւաքել ու վերցնել. վտանգաւոր էր: Բնական է, որ այդ օրերին արգիլուած էր հայաստանցու նոյնիսկ այստեղ գտնուելը: Բազա կար սարքած Գիւլիստանի լեռներում, գիշերները այդտեղ էին հաւաքւում:*

Սփիւռքահայերի գործնէութիւնը սկզբից մի քիչ խորթ էր թւում, քանզի ժողովուրդը վախենում էր: Մի անգամ Բուզլուխից իրենց ընկերներից մէկի հայրն ասաց. «Տղա՛ս, դուք սեւ աւտօները չէ՞ք ճանաչում»: Այսինքն՝ գիւղացիք մտավախութիւն ունէին, եւ իրենց համար յստակ չէր, թէ մինչեւ ո՞ւր պիտի հասնի այս չարժումը: Վախ ունէր ժողովուրդը, բայց երիտասարդութիւնն այդպիսին չէր, տաքարիւն էր: Երիտասարդութիւնն ուզում էր գործ անել, մի էական փոփոխութիւն մտցնել կեանքում, այն է՝ տապալել օտար բռնատիրութեան լուծը: Նրանք գալիս էին, չէին փախչում: Այդ երիտասարդներն ինքնին օրինակելի անձինք էին: Ժողովուրդն աստիճանաբար համոզուեց, որ այս տղաները Սփիւռքից եւ Հայաստանից որեւէ չար նպատակով չեն եկել, որեւէ բանի չարաշահման համար չեն նրանց գործադրած ջանքերն ու նպատակը:

Սիմոն Գաֆալեան. «Ճիշտ է, որ Շահումեանի ժողովուրդը մարտականօրէն եւ ոգիով աւելի չուտ հասունցաւ, քան բուն Ղարաբաղի, որովհետեւ Դաշնակցութիւնը **Շահէն Մեղրեանի** գլխաւորութեամբ կեդրոնացած էր Շահումեանի մէջ: Մեզի պարբերաբար աւտոմատ զէնքեր կը հասնէին, որոնցմէ Շահումեանէն ձիերով, Մռաւ լեռան կողքով Ղարաբաղ կ'անցնէին: Շահէն Մեղրեանն իրօք այն ղեկավարն էր, որ ամէն ինչ կ'ընէր: Ան սպասում ունէր, գիտէր գալիք օրերը եւ ամէն ինչ կ'ընէր: Եւ այդպէս ըրաւ մինչեւ իր կեանքի վերջը:

Իսկ տեղի ժողովուրդը չէր թողեր, որ տղաքը անօթի մնան: Հաւատում էին, որ մէկ ժողովուրդ ենք եւ մեզի իրենց երեխաներուն նման կը վերաբերէին:

Մերունը ազգային գաղափարախօսութեամբ պատրաստեալ տղաներէն է, նուիրեալ: Ինքը մթնոլորտ ստեղծող մարդ էր, ժողովուրդին հետ կը չփուէր»:

Խաժակ Գեթսեմանեանին *1990-ին Բէյրութէից ուղարկել են այստեղ, որպէսզի կազմակերպական, գաղափարական գործերին մասնակից լինի: «Երեք հոգով գնացել ենք Շահումեան: Առաջին հանդիպումս եղաւ* ***Շահէն Մեղրեանի*** *հետ: Շահէնն ինձ համար մի հետաքրքրական տիպար էր: Շատ աչխոյժ, մեզ շատ մօտ: Մենք առաջին անգամ Պէյրութէից եկել էինք, տեղական խօսուածքն անծանօթ էր եւ իմ խօսուածքն էլ շատ դիւրին չէր տեղացիներու համար: Եւ Շահէնն իրեն շատ հարազատ զգացրեց մեզ»:*

Խաժակի առաջադրանքն էր՝ կազմաւորել խումբը եւ Շահումեանից ուղարկել Գետաշէն: Գետաշէն երկու օր մնաց եւ գնաց Շահումեան, հանդիպեց ***Շահէն Մեղրեանի*** *եւ* ***Թաթուլի*** *հետ: Հրահանգ ունէր համագործակցել Թաթուլի հետ, որ յետոյ ինքը չարունակի: Շահումեանում պիտի կատարէր այդ գործը, որովհետեւ վտանգ կար, որ Գետաշէնը կարող է պարպուել հայերից:*

Նախքան Շահումեան գնալը՝ նրանց յայտնի էր, որ տեղում որոշ չափով առկայ է բնակավայրային անգաղափար հոգեբանութիւնը, եւ դաշնակցական մարզիչները պիտի Շահէնի միջոցաւ մեղմէին այդ հոգեբանութիւնը: Տեսան մեծ թուով երիտասարդներ, որոնք պատրաստ էին Հայրենիքի համար զոհուելու: Շահէնի հետ մի տասը-տասներկու օր մնացին Շահումեանում: Կազմակերպուելիք խմբեր կային: Շահէնի հետ նախ մի խումբ ստեղծեցին, որը կարօտի հրամանատարութեամբ անցաւ Մարտունաշէն: Խաժակը մնաց Շահումեանում:

«Շահէնի հետ մենք պիտի ձգտէինք, որպէսզի Սիւնիք-Հայաստան կապը ամրանար, ծաւալուէր թէ՛ կազմակերպական,

թէ՛ մարտական եւ թէ՛ գաղափարական ուղղութիւններով: Մեր ընկերական կապի սկզբից մեզ համար պարզ դարձաւ, թէ ինչ է հարկաւոր Շահումեանին. այնտեղ պէտք է մարտական տղաք ըլլան, այնտեղ պէտք է զինուորական գործը կազմակերպուի: Ժողովուրդին համար առաջին հերթին ամենակարեւորը զէնքն էր: Շահէնի բարեկիրթ պահուածքը, տղաների հետ մտերմիկ վարուելակերպը նպաստում էին լուծելու այս խնդիրները: Նա առաջին հայեացքից թաքցնում էր, որ հրամանատար է: Միմեանցից խորթանալու հող չկար: Շատ զօրաւոր էր իր ներկայութիւնն այդտեղ»:

*Երկրորդ անգամ **Խաժակը** գնացել է Շահումեան **Ժիրոյի** եւ **Վարդան Թաշճեանի** հետ՝ նոյն պարտականութեամբ: Գէտաչէնն ընկնելու վրայ էր, կռիւները չարունակւում էին, բայց գնացին օգնութեան՝ գիւղերի պաշտպանութիւնը ուժեղացնելու նպատակով:*

*Սփիւռքահայ մէկ այլ մարզիչ՝ **Հարմիկ Յոսէփեանը** ծնուել է Իրանի Ռաշտ քաղաքում եւ 6 տարեկանից տեղափոխուել Թեհրան: Մօրական պապը Նոր Նախիջեւանցի ազգային եւ կուսակցական նշանաւոր գործիչ **Համբարձում Տէրտէրեանն էր**, որ Փետրուարեան ապստամբութեան պարտութիւնից յետոյ տեղափոխուել էր Պարսկաստան: Նա իր գործունէութիւնը չարունակել է այնտեղ: Հայրական կողմով՝ Թաւրիզից են: Տապի հայրը մեծահռչակ **Թումանեաններից** է: 1983-ին ընդունուել է ՀՅԴ շարքերը: Երբ զինեալ պայքարն սկսուեց, «Արդարութեան մարտիկներն» ու ԱՍԱԼԱՆ բաւականին մեծ խանգավառութիւն ստեղծեցին յատկապէս Սփիւռքում: Դրանից հետեւութեան պիտի գային, որ դեռեւս մեծ անելիքներ կան: 1986-ի դեկտեմբերին գնացել է Իրանի բանակում ծառայելու: Ծառայել է 26 ամիս:*

*1989-ի փետրուարին պարզուել է, որ ինքը եւ **Հենրիկ Ամիրխանեանը** վեցամսեայ ժամանակով Հայաստան պիտի գնան եւ մարզեն ջոկատները:*

1990-ի օգոստոսի վերջին Թուրքիայով չրջանցիկ եկան Հայաստան: «Մեզ ասել էին, որ սահմանն անցնելուց յետոյ կը

գնանք կը հանդիպենք **Հրանտ Մարգարեանին**: Ընկեր Հրանտին հանդիպելուց յետոյ նա ասաց. «Մեր տղաները Աղրբեջանի հսկողութեան տարածքում գործ են անում: Դուք էլ կը գնաք այնտեղ եւ բան կը սովորէք: Եթէ ողջ մնաք՝ ձեզ համար էլ լաւ կը լինի փորձութեան իմաստով»:

*Միւս առաւօտեան, ժամը 5-ին օդանաւակայանում էին: Ուշանում էր թռիչքը: «Զուարթնոց»ում նաեւ **Թալինի ջոկատն էր** եւ Երեւանի **Սարի թաղի տղաները էին**: Իրենք Շահումեանի շրջան պիտի տեղափոխուէին: Երկար սպասելուց յետոյ օդանաւակայանի ռուս պաշտօնեայի հետ բերեցին եւ տեղաւորեցին ուղղաթիռում: Զէնք ու զինամթերք պիտի տանէին: Մինչեւ տեղ հասնելը հրամանատարը **Թաթուլ Կրպէեանն էր**: Իրենց հետ **Արթուր եւ Սամուէլ** անուններով տղաներ կային (Արթուրն 1992-ին զոհուեց Գէտաշէնում), նաեւ՝ **Պօնչ Արամն էր (Արամ Պօղոսեան)**:*

*Ոչ ոք չգիտէր, թէ ուր են գնում: Թաթուլը հրահանգեց պատրաստ լինել: Մէկ ժամ անց հասան Շահումեան: Իջան: Իրենց դիմաւորողը **Շոթա Քերոբեանն** էր եւ **Վարդուհի** անուն-նով մի կին: Արագ հասան գիւղխորհուրդ եւ բեռնաթափեցին:*

***Պօղոս Մեղրեանը** եւ **Յակոբ** անունով մի մարտիկ խորհուրդ տուեցին արագ վազքով հասնել անտառախիտ վայրը եւ պատսպարուել: Երկիւղն աւելի չատ ռուսներից էր: Մեքենա-ներով փոխադրուեցին գիւղի անտառը, որտեղ խարսխուած էր առաջին մարտական խումբը. իրենք երկրորդն էին: Գլխաւոր պատասխանատուն **Մերուժն** էր: Էջմիածինի ջոկատի հետ էին: Թալինի տղաներն էին, հրամանատարը **Մուկուչն** էր եւ Արտաշատի ջոկատը՝ Ռաֆոյի գլխաւորութեամբ: «Շահու-մեանից առաջին տպաւորութիւնս այս էր. աժդահա մէկը մենակը կովի վիզը ոլորեց եւ մորթեց ու ճաշ պատրաստեց: Դա լե-գենդար **Սաքօն** էր՝ **Թալինի** Ֆիրմալար գիւղից»:*

Թեւաւոր խօսք կայ, որ զինուորը պէտք չէ պարապ մնայ: Մերուժը եւ Մեղրեանն իրենց զբաղեցնում էին, կեղծ տագնա-պի ազդանշաններ էին տալիս, ձգտում էին, որ մարտիկները միշտ զգայուն, պատրաստի վիճակում լինեն:

*Երկրորդ անգամ **Պօղոս Մեղրեանի** հետ գնացին Շահումեան՝ զէնք տանելու: «Արաբօ»ի փոքր խմբի հետ Գիւլիստանի տղաների մեծ մասը տեղափոխուեց Գետաչէն՝ պաշտպանութիւնը տեղում կազմակերպելու համար:*

*Տեղում մնացին **Հարմիկը, Արթուր Ղարիբեանը, Սամուէլ Երանեանը (Սմբուլ), Արսէնը՝ Երեւանից, Պարգեւը՝ Լենինականից**: Նրանց արտօնութիւն տրուեց տեղի տղաներին մարզելու: Բացի զէնք ու զինամթերքին տիրութիւն անելը, մարզումներից յետոյ կազմաւորում էին խմբերը, դրանք զինում եւ պատրաստում:*

Ծերունին ուղարկեցին Վերին Շէնում մարզելու: «Ընկեր Շահէնը մեզ բազմիցս զգուշացրել էր, որ ռուսները գալու են խուզարկելու: Եւ մենք տեղից տեղ էինք փոխւում: Մենք զբաղուել ենք Վերին Շէնի, Գիւլիստանի, Հայ Պարիսի եւ մի չարք այլ գիւղերի թէ՛ անհատների եւ թէ՛ խմբերի մարզումով»:

Նախքան բոլոր տղերքի հանելը՝ պատահել է, որ ՀՀՇի խումբն է եկել եւ 20 րոպէ յետոյ թռել, ետ է գնացել: Շահէնը նրանց խնդրում էր գոնէ զինամթերքը թողնել, բայց չէին թողնում՝ պատճառաբանելով թէ հրահանգ չունեն:

«Երբ ձմեռն սկսուեց, Շահէնն ասաց, թէ տեղեկութիւն է եկել, որ հետքեր ենք թողել եւ մեր ջոկատների մէջքը պիտի կոտրեն: Պէտք է փոփոխութիւններ անէինք, որ տեսնէին, թէ մենք էլ իրենց նման ենք:

Քանի որ ձիւն էր տեղացել, անտառում պատսպարումը հնարաւոր չէր, որոշեցինք գիւղում դասաւորուել՝ ամէն մէկն իր մասնագիտութեամբ: **Արթուր Ղարիբեանն** այդ ժամանակ բոլորի պատասխանատուն էր, իսկ Ծերունը՝ Վերին Շէնի մարզիչը: Աստիճանաբար մաքրում էինք խորհրդային կեղծ արժէքների հետքերը, Լենինի, Ստալինի նկարներն էինք հանում: Ես դպրոցում ռազմագիտութիւն էի պարապում, Արսէնը՝ արուեստ, Սմբուլը՝ երգ: Իւրաքանչիւրս իր գործին էր:

Զէնքերը հանել, պահել էինք: Գիւղացիների հետ համոզում կազմակերպեցինք եւ իրենք զգացին, որ մենք իրենց հետ ենք: Գիւղի ջոկատը կամաւոր հիմունքներով կազմաւորեցինք:

Նաեւ 12-14 տարեկան երեխաների ջոկատ ստեղծեցինք, որը կարեւոր դերակատարութիւն ունեցաւ Շահէն Մեղրեանի պարտիզանական կռիւներում:

Այնուհետեւ մեզ միացաւ Պռոշեանի ջոկատը: Գիւղի ծայրին էինք մնում: Նրանք առաջին անգամ էին գալիս, 90 թուականն էր: Աւելի լաւ կազմակերպեցինք ջոկատների մարզումները եւ մեծացրինք խմբերը, որոնք Մանաշիդ, Բուզլուխ եւ այլ գիւղեր տեղափոխուեցին:

Այդ ընթացքին մեզ տեղեկութիւններ էին հասնում, որ Գետաշէնում գործողութիւններ են կատարւում, թուրք պաշտօնեայ են ահաբեկել, ՕՄՕՆականներով լիքը աւտոբուս են ծուղակել: Մերոնցից զոհ չէր եղել»:

Նոր տարուայ չեմին բոլորը գնացին: Մնացին Հարմիկն ու Հրաչը: Յետոյ Հրաչն էլ գնաց: Հարմիկը մնաց մենակ: Շահէն Մեղրեանի հետ միասին էին լինում:

Մի օր լուր առան, որ ազերիների ուղղաթիռը վայրէջք է կատարել Շահումեանի օդանաւակայանում: Ռուսների հետ շատ լաւ յարաբերութիւններ հաստատած Շահէն Մեղրեանը նրանց ասել էր, որ եթէ ազերիներին իրաւունք տան իջնելու, ապա պատասխանատուութիւնն իրենց վրայ է լինելու: Խրխաչուտի բարձունքում մի ծանր գնդացիր կար տեղադրուած: Այդ զէնքը Հարմիկը գործադրեց ուղղաթիռի վրայ եւ վնասներ հասցրեց: Ուղղաթիռը խուճապահար փախաւ: Լուր առան, որ Գանձակի մօտերքը պարտադիր վայրէջք է կատարել:

Մի քանի անգամ տագնապի ազդանշանով պատրաստի վիճակի են բերուել, սակայն լուրջ բան չի եղել:

6 ամիս յետոյ Հարմիկը վերադարձաւ Իրան: Ժամանակը լրացել էր: 1991-ի մարտ ամիսն էր:

Ժիրայր Սեֆիլեանը *Շահէն Մեղրեանին ծանօթացել է Երեւանում, Դաշնակցութեան գրասենեակում, երբ Շահէնը եկել-գնացել է Շահումեան: Բայց առանձնակի չեն չփուել, դէմքով ծանօթ չեն եղել, Շահումեան գնալուց յետոյ է չփուել: Գետաշէնի անկման օրն են գնացել, ապրիլի 30-ին: Ժիրոյենք գնում էին Գետաշէնին օգնութեան, սակայն մինչեւ այնտեղ*

հասան, ասացին, որ Գետաշէնն ընկել է: Ժիրօն երկու առիթով է եղել Շահումեանում՝ 91-ի գարնանը եւ ամռանը: Շահումեանում սկզբում եղել է պարզապէս ջոկատի օժանդակ խորհրդատու, չարքային, յետոյ եղել է այստեղից գնացած ջոկատի հրամանատար: Արդէն այդ ժամանակ գործի բերումով Շահէնի հետ չփուել են: «Մի քանի սփիւռքահայ էինք, իսկ ինքը մեզ՝ սփիւռքահայերիս յատուկ ուշադրութիւն էր դարձնում այն իմաստով, որ յանկարծ չլինի թէ հակառակորդի ձեռքն ընկնենք, որովհետեւ այդ ժամանակ կարող էր մեծ աղմուկ բարձրանալ»: *Այդ հանգամանքը նկատի առնելով՝ Ժիրոյենք Շահէնենց տանն էին մնում: Ռուսները պարբերաբար մտնում էին եւ նոյնիսկ մինչեւ Գիւլիստան էին հասնում:*

*Կամաւորական տղաները թէեւ ծառայել էին խորհրդային բանակում եւ դիմացկուն էին բառի բուն իմաստով, սակայն իրականում մարտավարութիւն չգիտէին, զէնքերին չէին տիրապետում եւ ամէն ինչ սփիւռքահայերից են սովորել: **Պօղոս Մեղրեան.*** «Մենք փետացած մարդիկ ենք եղել, գաղափարը տակաւին չիմացող, ազատագրական պայքարին անհաղորդ, թէկուզ եւ մեր հայրենիքն ազատագրուած տեսնելու ցանկութեամբ համակուած: Կուզէի նշել **Ծերունի, Խաժակի, Հարմիկի, Սիմոնի, Հենոյի, Փոքր Հրանտի, Ժիրոյի անունները:** Ժիրօն սկզբում Բուզլուխ, Էրքէջ, Մանաշիդ մնալուց յետոյ մեզ մօտ էլ եկաւ»:

*Ջոկատների մէջ գոյութիւն ունէր պատերազմական իրադրութեանը յատուկ զինուորական, մարտական խիստ կարգապահութիւն, սակայն բոլորի մէջ տիրապետող զգացումը **բարոյական պատասխանատուութիւնն** ու միջմարդկային յարաբերութիւնների ջերմ փոխըմբռնումը, քան թէ **թելադրող կամքի** տիրապետութիւնը, ենթարկուողի եւ ենթարկողի ստորակայութիւնները: Որովհետեւ իրենց գործին ու առաքելութեանը նուիրուած կամաւորներ էին եւ նրանց համար կարգապահութիւնը խնդիր չի եղել եւ որեւէ մէկն իրեն թոյլ չէր տայ վերցնել զէնքը եւ գնալ իր ցանկացած ուղղութեամբ: Ամէն ոք գիտէր իր առաջադրանքը, ամէն ջոկատ ունէր իր պատասխանատուն, տարածքների պատասխանատուները: Շահէնն էր*

այդ ամէնը կազմակերպել:

Տրամաբանութեան եւ փորձի վրայ հիմնուած դաստիարակչական գործունէութիւնը կարեւոր է խորքային գիտակցութիւնն արթնացնելու եւ ազգային ընդհանրական չահերը վարքի հիմնական դրդապատճառ դարձնելու համար, որը նշանակում է անձի հիմնարար փոփոխութիւն, նրա վերածնունդ եւ հոգեկանի բոլորովին նոր ուղղուածութիւն: Աւա՛ղ, ազգաչէն եւ հայրենակերտ այդ գործունէութիւնն այնուհետեւ իր շարունակութիւնը չունեցաւ եւ այսօր ազգապաչտ հոգեբանութիւնը դեռեւս տիրապետող չէ երիտասարդութեան շրջանում եւ գիւղուորների մօտ:

Սամուէլ Երանեանի (Սմբուլ) խօսքով՝ Երեւանից, Էջմիածնից, Արտաշատից երեւի մի 70-80-ի չափ մարտիկներ կային: 90 թուականի օգոստոսին, երբ Դաշնակցութիւնն անցաւ բացայայտ գործնէութեան, գնացին Շահումեան: Տեղաւորուեցին Գիւլիստանի անտառներում: Առանձին ուսանողական ջոկատ էլ կար: Մինչեւ դեկտեմբեր մնացին եւ երբ այլեւս դրսում մնալ հնարաւոր չէր, եկան գիւղ: Դպրոցում Սամուէլը պարապում էր երգ-երաժշտութիւն: «Ամէն պարագայի՝ Շահէնը կարողացել էր մի մթնոլորտ ստեղծել, որ դժուար է խօսքով հաղորդել: Տողից մինչեւ Գետաշէն եղել եմ, սակայն Շահումեանն ինձ համար մի առանձնայատուկ տեղ է գրաւում: Եւ այդ Շահէնի ստեղծած մթնոլորտից էր, որ ժողովուրդը մեր նկատմամբ լցուած էր յարգանքի զգացումով»: *Առանձին պատանեկան կազմակերպութիւն են ստեղծում՝* ***«Գիւլիստանի երիտասարդ մելիքներ»****, որն ունէր իր խորհրդանիշները, դրօշը եւ այլն: Ազգային հոգեբանութեան եւ արժէքների վերածնութեան մի ընթացք էր, այնպիսի տրամադրութիւն, որ, ասենք, պատանիներն աւանակին տարել էին գիւղի կենտրոն եւ վզին վզկապ էին կապել, որովհետեւ իրենց պարտադրում էին վզկապ կապել, իրենք չէին ուզում: Ակնառու վայրերում խորհրդային ղեկավարների դիմանկարները պոկել էին եւ փոխարէնը ֆիդայիների նկարներ դրել:* «Դպրոցն էլ սկսեց այդ վերափոխման ընթացքն ապրել: Երբ տեսնում էիր, թէ ինչպիսին

է գործերի կազմակերպական դրուածքը, զգում էիր՝ ով է այս ամէնի հեղինակը, **Շահէն Մեղրեանը**, ում ակտիւօրէն օգնում էր մէկ այլ **Շահէն՝ Յովասափեանը**: Մի խօսքով, այնպիսի վիճակ էր, որ մեր սփիւռքահայ ընկերը կարող էր ռուս սպայի մօտ նստել, եւ Հարց չէր հարուցւում, թէ էս արտասահմանցին, էս ռուսերէն չիմացողն ո՞վ է, էս զինեալն ո՞վ է: Եւ դա Շահէն Մեղրեանի կազմակերպական չնորհի դրսեւորումն էր»:

Եթէ մարտական գործողութիւններին եւ մարտավարժութիւններին շահումեանցիների հետ մասնակցութիւն էր ունենում նաեւ ռազմագիտական գործի մէջ հմտացած սփիւռքահայերի խումբը, պէտք չէ մոռանալ, որ Ադրբեջանի թուրքերին օգնում էին Թուրքիան, նաեւ մոջահեդանման բազմաթիւ տարրեր: Արտասահմանից ժամանած հայերն ունէին ինքնապաշտպանութեան մարտերի մասնակցութեան նոյնքան իրաւունք, որքան տեղացի հայերը, քանզի նրանք ցեղասպանութիւնից մազապուրծ փրկուած եւ իրենց հայրենիքը կորցրած հայերի զաւակներ էին:

Բացի ռազմագիտական օգնութիւնը, պիտի նշենք սփիւռքահայոց բազմակողմանի օգնութիւնը, որ նրանք այս կամ այն կերպ, այս կամ այն ճանապարհով հասցրել են Արցախին: Դրանց թիւն ու քանակը կարելի չէ ո՛չ հաշուել, ո՛չ որեւէ կերպ որոշել, ոչ էլ բաւարար չափով օրինակներ բերել: Պարզապէս պիտի չեշտենք մեր միասնական ազգ եւ ժողովուրդ լինելու հանգամանքը, որը ծանր պայմաններին արտայայտւում է՝ յաղթահարելով ամէն կարգի դժուարութիւններ: Մենք օգնութիւն ենք համարում ոչ միայն նիւթական, առարկայացուած օժանդակումները, այլեւ մեր հաւատաւոր ժողովրդի յաղթելու կամքը, ցանկութիւնը, առ Աստուած նրա աղօթքներից մինչեւ հայրենասիրական բազմաթիւ դրսեւորումները:

Հազարաւոր օրինակներ կարելի է բերել հաստատելու համար այն ճշմարտութիւնը, որ եթէ հայութիւնը հասնում է յաղթանակի՝ դա կարող է լինել ամբողջ ազգի համադրական ջանքերով:

ՀՈԳԵՒՈՐ ՋԱՐԹՕՆՔ

«Վերջապէս իմ ժողովուրդը լսեց իր նախնիների հոգու կանչը,
որ միշտ ա՛յս է եղել.
սրբազան հաւատով ի Տէր Աստուած Յիսուս Քրիստոս՝
արմատուել ու մնալ հայրենի հողում՝ հաւատալով,
որ Աստուծոյ օգնութեանն ապաւինած ժողովրդին
մահ չկայ եւ չկայ պարտութիւն»: **Արտակ Ղուլեան**

Երիտասարդ ուսուցիչները եւ ռազմարուեստի մարզիչները Սփիւռքից եւ Հայաստանից ***Շահէն Մեղրեանի*** *ղեկավարութեամբ բացի երեխաներին բարեկրթութեան դասեր տալուց, հայրենապաշտութեան եւ արիականութեան ոգին փոխանցելուց, նաեւ մեծահասակների վրայ էին կական ներգործութիւն ունենում թէ՛ զրոյցների ժամանակ իրենց արտայայտած գաղափարներով եւ թէ՛ իրենց բարոյա-հոգեբանական նկարագրով, եւ թէ՛ կարգասիրութեամբ ու կարգապահութեամբ:*

Ազգի հոգեմտաւոր վիճակը, ներազգային ուժերի փոխյարաբերութիւնը, միաղաւանութիւնն ու միաբանութիւնն անմիջական ներգործութիւն են ունենում նրա ռազմաքաղաքական վիճակի վրայ, դիւրացնում կամ արգելակում են քաղաքական հարցերի լուծումը: Ազգային իմաստութեան աստիճանը ուղղակիօրէն կախուածութեան մէջ է ազգային հաւատամքի ուժից եւ հագեցուածութիւնից: Պատճառա-հետեւանքային այս կապը հաստատող օրինակներով լեցուն է ամէն ազգի պատմութիւն:

Ազգային ազատագրական պայքարի, հայրենիքի պաշտպանութեան գործին հայ հոգեւորականութեան եւ Եկեղեցու դերի պարզաբանումը կարեւոր եւ բազմերես խնդիր է եւ ուսումնասիրողները կարող են հատորներ գրել այդ հիմնահարցի վերաբերեալ: Տուեալ պահին մեզ համար կարեւորը միեւնոյն համակարգի (ազգային ամբողջական կեցութեան) եւ նրա ենթահամակարգերի եւ տարրերի փոխազդեցութեան եւ միասնականութեան ճշմարիտ պատկերացումն է, դրանց փոխադարձ

կապերը յայտնաբերելն ու միմեանց երբեւիցէ չհակադրելու հանգամանքը, ինչը լաւ են ըմբռնել մեր ազգի երեւելի գործիչները՝ հոգեւորական թէ աշխարհիկ: Այս հանգամանքը պարզ գիտակցել եւ գործնականում մի սերնդից միւսն են փոխանցել Արցախում, որտեղ հոգեւորականութիւնն անհրաժեշտ պահին երբէք բարդոյթ կամ խնդիր չի ունեցել իր ամբողջ կարողութիւններն ի սպաս դնելու երկրի պաշտպանութեան գործին:

*Շահումեանի, աւելի ճիշտ՝ Գիւլիստանի գաւառի հոգեւոր կեանքի մասին կարելի է յստակ պատկերացում կազմել Արցախեան երկրաշրջանի ընդհանուր համակարգում: Ներածական բաժնում արդէն ակնարկել ենք, որ Գիւլիստանի գաւառի ճարտարապետական բարձրարուեստ յուշարձանախմբերը՝ **Սուրբ Եղիշէ Առաքեալի (Ջրվշտիկ), Հոռեկայ, Սուրբ Երիցմանկաց** վանքերը, բոլոր եկեղեցիները, մատուռները, բազում խաչքարերը հոգեւոր լիարժէք կեանքի արձանացումներ են: Օրինակ, Բուզլուխում կար 15-րդ դարից պահպանուած գերեզմանոց՝ տարբեր ժամանակների խաչքարերով եւ արձանագրութիւններով: Գիւղի մէջ կայ սրբատաշ քարերով կառուցուած եկեղեցի: Այսուհանդերձ պիտի նշենք նաեւ մի ցաւալի հանգամանք, այն, որ Երիցմանկանց վանքը եղել է Գանձասարի կաթողիկոսութեան հակաթոռ նստավայրը: Հոգեւոր կենտրոնից տեւական մեկուսացումը, այլեւ հակադրութիւնն ու պայքարը կարծես իրենց կնիքն են թողել տարածաշրջանի վրայ եւ ինչպէս նախկինում էին խորթ աչքով նայում Ազգային եկեղեցուց հեռացածների բնակավայրերին, այնպէս էլ Շահումեանի շրջանը թէեւ իր ժողովրդի կամքով միաւորուել էր ԼՂԻՄին, սակայն այդ միարարութիւնը փաստօրէն իր կատարեալ վիճակին չհասաւ եւ Շահումեանը Ստեփանակերտում դիտում էին իբրեւ Արցախից (Ղարաբաղից) դուրս մի շրջան:*

Մեր անմտութեան պատճառով Արցախեան պատերազմի սկզբնական շրջանում մեզ վրայ ուղղեցինք ամբողջատիրութիւնը պահպանող պետական մեքենայի մոլագարութիւնը

եւ դրա հետեւանքը զգացուեց մինչեւ պատերազմի աւարտը: Ինչո՞ւ անմտօրէն նոյնանալ նիւթապաշտ համակարգին կամ նրա փլուզման ժամանակ լիովին հակադրուել: Այդպիսի հարցերում Ադրբեջանին հաւանաբար օգնել է Թուրքիան՝ հասկանալու, թէ ո՛ր իրավիճակում ինչպիսի՛ դիրքորոշում է անհրաժեշտ: Մենք երբեմն սնապարծութեան աստիճանի ինքնահաւան ենք, եթէ չասենք՝ պարծենկոտ, որովհետեւ մոռանալով մեր ազգային դաւանանքը, ետ չրջուելով Եկեղեցուց՝ դրանով իսկ մեզ զրկում ենք մեր հաւաքական իմաստութեան աղբիւրից, որը պատմութեան տարբեր շրջաններում, ծայրահեղ իրավիճակներին միշտ փրկութեան հնարաւորութիւն է ստեղծել: Վերջին հարիւրամեակներում տարածաշրջանի բարդ իրադրութիւններում կորուստներ չատ ունեցանք եւ թուլացաւ մեր հաւատքը: Դրա արդիւնքը եղաւ մեր ինքնութիւնից հեշտութեամբ հրաժարուելը եւ բոլշեւիկանալը: Հաւատքի թուլացումը տանում է կործանման: Կարելի չէ ինքնապաշտպանութեան այդ կենսատու զէնքը պարզապէս նետել մի կողմ, քանզի Աստուած նման անտարբերութիւն, եթէ չասենք ուխտադրժութիւն, չի ների, եւ Եկեղեցուց երես թեքողն ու Աստծուն անտեսողը չուտով ընկնում է սարսափելի ողբերգական վիճակների մէջ: Այս իմաստով, նոյնիսկ Թուրքերն են մեր համեմատ պահպանողական եւ ցանկացած սոցիալական համակարգ ծառայեցնում են իրենց ազգային, արմատական շահերին, եւ դրա հետեւանքն այն է, որ մենք մեր հայրենիքը, մեր երկիրը զիջել ենք երէկուայ քոչուորներին:

Յաւօք, հանելուկային եւ մեր ազգի ու հայրենիքի համար ողբալի իրադարձութիւններն ու դէպքերը յետագային եւս չարունակուեցին եւ գոյառում են նաեւ այսօր: Դա կարելի է բացատրել նախ ներքաղաքական ուժերի անհամեմատաչափ եւ թշնամութեան հասնող յարաբերութիւններով, նաեւ, ինչպէս **Պետրոս Մեղրեանն** է նկատել, խորհրդային իշխանութեան առկայութեամբ՝ մեծ տէրութիւնների կողմից քաղաքական յարաբերութիւնների մէջ ներթափանցելու եւ թելադրող դեր ցուցաբերելու փաստով: Այս գործօնները նուազեցնում կամ

զերօի էին հաւասարեցնում տեղական իշխանութեանց կամքը, որ նախկինում էլ մի բան չի եղել: Այո, ձեւականօրէն Արցախն ու Հայաստանը հռչակեցին իրենց անկախութիւնը եւ միաւորումը, սակայն անկախ պետական միաւորի հոգեբանութիւնը դեռեւս տասնամեակներ յետոյ պիտի ձեւաւորուի, Հայկական պետութեան զօրացմանը զուգընթաց:

Անհաւատ պետականութեան դարաւոր թմբիրից յետոյ անհրաժեշտ էր հոգեփոխական, յեղափոխական գործունէութիւն եւ ջանադիր աշխատանք:

*Հոգեւոր ուժի կարեւորութիւնը, ինչպէս եւ վերոնշեալ խնդիրների իմաստը լաւ է հասկացել **Շահէն Մեղրեանը**: Նա սկզբից եւեթ ոչ միայն թոյլ տուեց սփիւռքահայ ուսուցիչների միջոցով ազգային գաղափարաբանութեան եւ հոգեբանութեան ներհոսքը երկիր, այլեւ ամէն կերպ խրախուսում էր այդ գործընթացը եւ նպաստաւոր պայմաններ ստեղծում դրանց արմատաւորման համար: Շրջանի մարդկանց ոգին բարձր պահելու չատ բնական միջոց էր նրանց հոգեւոր ճշմարիտ սնունդ տալը, ճշմարտութեամբ կերակրելը, զի կեղծիքը տանում է դէպի համընդհանուր հոգեւոր անկում եւ քայքայում: Շահէն Մեղրեանը չատ լաւ էր պատկերացնում նաեւ ժողովրդից խլած կենսատու արժէքների վերադարձումն իր տէրերին: Այդ նպատակով նա ոչ միայն իր մէջ հաւատքն էր վերականգնում, այլեւ վերանորոգում էր շրջանի եկեղեցական կառոյցները հէնց առաջին հնարաւորութեան պարագային դրանք վերաբացելու, հոգեւոր ծէսերը եւ սպասաւորութիւնը վերականգնելու հաստատ մտադրութեամբ: Այսօրուայ դրութեամբ եւս՝ Շահէնի նման քիչ հրամանատարներ կամ առաջնորդներ կան:*

Շահէն Մեղրեանի հոգեւոր նկարագրի վրայ էական ներգործութիւն են ունեցել նրա կենսական միջավայրը՝ ընտանիքը, ծնողները, յատկապէս հայրը: Վաղ մանկութիւնից անմիջաբար իր աչքի առաջն են եղել մեր եկեղեցիներն ու սրբազան կոթողները, Գիւլիստանի բերդը: Աւանդապաշտ ծնողները սրբազնագոյն զգացմունքներ են արթնացրել եւ դաստիարակել իրենց բազմաթիւ երեխաների մէջ:

*Խորհրդային աթեիզմի քամիները **Զինաւոր ապայի** կողքովն են անցել, նա մնացել է աստուածապաշտ մարդ: Զինաւոր Մեղրեան հաւատաւոր մարդու մասին վկայում է նրա ժամանակակիցը՝ **Բենիկ Ղուլեանը**.* «Դեռեւս անցեալ դարի վերջին, հայ մեծ վիպասան **Րաֆֆին** Արցախում ճանապարհորդելիս նկատում է գիւղացիների անտարբեր լինելն անցեալի յիշատակների եւ կրօնի նկատմամբ, առանձնապէս պատմական յուշարձանների պահպանմանը, որոնք չատ դէպքերում աւերւում էին հէնց հայերի կողմից: Մեծ վիպասանը այդ վերագրում է ժողովրդի տնտեսական ծանր վիճակին, աղքատութեանը, ի հարկէ նաեւ տգիտութեանը: Հետագային, խորհրդային կարգերի ժամանակ դրանց աւելացաւ եւ պետական քարոզչութիւնը, կրօնի, եկեղեցու, ազգային տօների ժխտմանն ուղղուած նպատակային քաղաքականութիւնը: Եւ չատերը, նոյնիսկ հին սերնդի մարդիկ համակերպուեցին դրան, դարձան անտարբեր ազգային սովորութիւնների, եկեղեցու ու հաւատի նկատմամբ: Սակայն Զինաւոր ապան այդպիսին չդարձաւ»: *Ոչ միայն նա, այլեւ բոլոր **Մեղրեաններն** առհասարակ բարեպաշտ էին. հաւատում էին Աստծուն, հետեւում եկեղեցու խորհուրդներին. չնայած այն չէր գործում, բայց յաճախում էին սրբավայրեր, իսկ գիւղում այդպիսիք չատ կային, մատաղ անում, մոմ վառում եւ այլն: Ցայտնի պատճառով նա մերձակայ ծանօթութիւն չունէր Սուրբ Գրական տեքստերի հետ, սակայն դրանցում արտայայտուած խորհուրդներն ու խրատները բանաւոր աւանդութիւնների միջոցով մեծերից էր ստացել եւ իւրաքանչիւր գաղափար ոչ թէ պարզապէս տպաւորուել, կարծես նոյնիսկ կնքուել էր նրա գիտակցութեան մէջ: Առաւել եւս, նա խորհող մարդ էր եւ կարողանում էր իր ստացած բարեկրթական գաղափարները կիրառել կենսական բազմազան իրավիճակներին, կեանքին մօտենալ այդ ճչմարտութիւններով: Զինաւոր ապան ի սրտէ էր հաւատում Աստծուն եւ Աստուծոյ նկատմամբ ունէր անկեղծ ու երկիւղած սիրոյ զրսեւորում: Նա հաւատացած էր, որ առ Երկնայինն ուղղուած ոչ մի աղօթք անպատասխան չի մնում, քանզի*

Աստուած ներկայ է ամենուր եւ յարաժամ: Հաւատում էր, որ եթէ Աստծուն մարդ դիմի ջերմեռանդութեամբ ու հաւատով, ամբողջ հոգով ու սրտով, այնժամ Նա ուժ եւ զօրութիւն կը տայ իրեն եւ իւրաքանչիւրին, որպէսզի մարդիկ կարողանան հասնել իրենց նպատակին, հեռու մնան նախանձից, զերծ լինեն չարութիւնից, կարողանան բարութիւն անել, օգնել միմեանց, չկորցնեն յոյսի առհաւատչեան:

Աւելի քան քառորդ դար Զինաւոր ապայի հիմնական աշխատանքը եղել է անտառապահութիւնը: Անտառը մարդու մէջ զօրաւորութիւն դաստիարակելու եւ Արարիչ Աստուծոյ ամենազօրութիւնն զգալու իդէալական մի վայր է: Բնութեան հրաշագեղ պատկերները խանդաղատանքով են լցնում մարդկային սիրտը եւ նա արարչագործութեան արտայայտութիւններով կարծես տեսնում է Իրեն՝ Արարչին: Նաեւ բնութիւնը սիրող մարդու սիրտը կապւում է իր հայրենիքի հետ եւ միայն մարդկային նկարագիրը բարեզարդող աննկուն ոգուն պիտի պարտական զգանք՝ հաղորդակից լինելով հայրենիքի եւ սիրելի որդու կորստեան ահաւոր ցաւերը տարած մարդու հոգու հաւասարակշիռ վիճակին: Դոնէ առօրեական մարդկային յարաբերութիւնների պարագային Զինաւոր Մեղրեանը մնաց նոյն ինքնահաւասար մարդը՝ մշտապէս պայծառ իր մտածողութեամբ եւ բարեկիրթ վերաբերմունքով: Գրքիս հեղինակը եւս բախտ է ունեցել տեսնելու այդ իւրայատուկ, մեծ մարդուն. տպաւորութիւնն անջնջելի է: Ես քնաւ չեմ կասկածում, որ թեկուզ մէկ անգամ ***Զինաւոր Մեղրեանին*** *տեսնողը այլեւս անկարող պիտի լինէր նրան մոռանալ: Մարտաֆիլմերի հերոսի նման՝ այդ մարդը տպաւորիչ էր թէ՛ իր կերպարանքով եւ թէ՛ հոգեբանութեամբ: Եւ պատահական չէ, որ Շահէն Մեղրեանին բնութագրող ամէն մեկնաբանութիւն կարող չէ չրջանցել Զինաւոր ապային: Եւ Շահէն Մեղրեանին լաւ ճանաչողները հիացմունքով են մտաբերում Գիւլիստանի Հսկայ Կաղնուն: Այդ է պատճառը, որ երբ Զինաւոր Մեղրեանն՝ աւարտելով իր երկրային ուղին՝ ննջեց եւ փոխուեց առ Քրիստոս, «Երկիր» պարբերականն իր 2002 թուականի*

դեկտեմբերի 12-ի թուով անդրադարձաւ այդ իրողութեանը՝ «Ընկաւ Շահումեանի կաղնին» վերնագրով յօդուածով, որում բնութագրւում են նրա մարդկային բարեմասնութիւնները, ապրած իմաստաւոր կեանքը եւ թողած հզօր ժառանգութիւնը, եւ համոզմունք յայտնում, որ նրա յուշարձանը կանգնեցուելու է Շահումեանում:

Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեան. «***Շահէն Մեղրեանի*** հետ ինձ ծանօթացրեց ***Արթուր Ալեքսանեանը (Ամարասի Արթուրը)***՝ «Ամարաս» բարեգործականի փոխնախագահը: Շահէն Մեղրեանին ներկայացրեց որպէս Շահումեանի շրջանի բարեգործական միութեան նախագահ: Միանգամից հասկանալի դարձաւ, որ Շահումեանի շրջանում Շահէնն ազգային-ազատագրական պայքարի մէջ կարեւոր դեր ունի:

Հէնց այդ օրուանից ես մեծ համակրանքով լցուեցի Շահէն Մեղրեանի անձի նկատմամբ, որովհետեւ շատ պարզ, ուղիղ մարդ էր, ուղղակի չիտակ մարդ: Եւ ես համոզուած եմ, որ Շահէն Մեղրեանն իրեն բոլոր ճանաչողների վրայ թողել է անմոռանալի տպաւորութիւն. իր հայեացքներով, իր մտահորիզոնով, իր վճռականութեամբ, հիւրընկալութեամբ, յարաբերութիւնների մէջ ընկերականութեամբ:

Եւ այդ օրուանից մենք շատ սերտ կապերի մէջ էինք Շահէն Մեղրեանի հետ: Բացի այն, որ ինքն անչափ հայրենասէր քաղաքական գործիչ էր, պիտի ասեմ, որ շատ ***եկեղեցասէր անձնաւորութիւն*** էր: Նա նախապատրաստեց Գիւլիստան գիւղի ընդհանրական ու հաւաք ներկայութիւնը մկրտութեան սուրբ արարողութեանը եւ իր նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ կարողացանք Շահումեանի շրջանում երեք եկեղեցիներ վերանորոգել:

Ինձ վրայ շատ մեծ տպաւորութիւն է թողել եւ այդ տպաւորութիւնն այժմ էլ կայ՝ իր հայրը՝ ***Զինաւոր Մեղրեանը***: Շահէնը քաջատեղեակ է եղել Հայոց պատմութեանը եւ նա տեղեկութիւններ է քաղել նաեւ մեր եկեղեցու պատմութիւնից, եւ նա ամէն ինչ անում էր, որ այդ շրջանն իր քահանան ունե-

նայ: Եկել էր, որպէսզի քահանային տանի, ու այսպիսի դէպք եղաւ. իրենց մեքենան գողացան, եւ խոստացաւ, որ երկու չաբաթ յետոյ գան եւ տանեն քահանային, սակայն այդ ժամանակ Շահումեանն ընկաւ: Ձհասցրեցինք: Մինչ այդ նախապատրաստական աշխատանք էինք կատարել, երգչախումբ էինք պատրաստել եւ այլն, եւ այս ամէնը կատարւում էր իր հոգատար մասնակցութեամբ:

Աննկուն էր, միաժամանակ համբերատար եւ խոհեմ: Մինչեւ վերջ լսում էր իրեն դիմողին, խորհում էր, յետոյ պատասխանում, եզրակացութիւններ անում եւ յստակ արտայայտում պատասխանը»:

Լեւոն Մելիք-Շահնազարեանը *մասնակից ու ականատես է եղել մկրտութեան արարողութեանը Գիւլիստանում: Այդ օրը չափազանց հետաքրքրական էր:* ***Պարգեւ Սրբազանը*** *Շահումեանի չրջանում չէր եղել, եւ իմանալով, որ չրջանի հետ կապը Լեւոնն է պահում, ասաց, որ իրեն ուղեկցի Շահումեան, որպէսզի ինքն իր հոգեւոր պարտքը կատարի: Այդ օրերին Գիւլիստանի եկեղեցին էին թափով նորոգում: Երբ նորոգումն արդէն աւարտուել էր՝ նրանք ճանապարհուեցին դէպի Շահումեան: Շահէնենք Պարգեւ Սրբազանին դիմաւորեցին Ինջա գետի ափին: Սրբազանին աղ ու հաց մատուցեցին, իրենց չրջանում գործած գորգ նուիրեցին: Այնուհետեւ կատարուեց եկեղեցու օծման արարողութիւնը, որից յետոյ ամբողջ Գիւլիստան գիւղը մկրտուեց, ամբողջ գիւղը՝ մանուկից ծեր: Շահէնի հայրը՝* ***Զինաւոր դային*** *էլ մկրտուեց, ընտանիքի անդամները, գիւղի ժողովուրդը եւս: Ընդ որում՝ միանգամից անուններն էլ էին փոխում, եթէ ղրանք անբարեհունչ էին կամ հայկական չէին: Եկեղեցու վերաօծման արարողութիւնը եղել է 1989 թուականի ապրիլի 24-ին ցեղասպանութեան տարեդարձի օրը: Դրա վերաբերալ յիշատակագրութիւն կայ Գիւլիստանի Սուրբ Աստուածածին եկեղեցու Յիշատակաց մատեանի մէջ, որը բացուել է եկեղեցու օծման օրը: Այնտեղ մենք կարդում ենք.* «1989 թիւ. բացումը եղաւ Գիւլիստան /Վարդօտ/ գիւղի եկեղեցու, երկրորդ բացումը, որը տեղի ունեցաւ Հայ

կօտորուածքի 1915 թուին: Այսուհետեւ մենք՝ Գիւլիստանցիներս կը յիշենք Ապրիլի 24-ը եկեղեցւոյ օրը:

Յիշէ՛ք, Հայեր.»:

Երբ մկրտութիւնն աւարտուեց եւ մնացին մօտիկ հարազատները, Շահէնը Լեւոնին ասաց. «Զե՞ս ուզում իմ կնքահայրն էլ դառնալ, չէ՞ որ ես էլ պիտի մկրտուեմ»: Շահէնը ե՛ւ շատ էր ուզում մկրտուել, ե՛ւ ամաչում էր, որ դա ուշ է տեղի ունենում: Մկրտութեան արարողութիւնը կատարուեց, եւ Սրբազան Հայրը, որն ի դէպ շատ մեծ դեր ունի ազատագրական շարժման մէջ, իր բարեմաղթութիւնը տուեց գիւղին:

Դրանից յետոյ հիւրընկալուեցին Շահէնենց նահապետական օջախում, այնուհետեւ Սրբազան Հօր առաջարկով գնացին Գետաշէն՝ նոյնակարգ արարողութեան նպատակով:

Յակոբ Պօղոսեան. «**Նապատը** Շահումեանի տարածքի միակ հատուածն է, որ մնացել է Արցախի կազմի մէջ, ընդամէնը մի 3-4 կմ: Այդ տարածքը ներկայումս հսկւում եւ պաշտպանւում է մեր զօրքերի կողմից: Պարզեւ Սրբազանը եկել էր Նապատ, եւ եկեղեցու վրայ պիտի խաչ դնէին: Նա հոգեւոր այդ կառոյցից եւ տեղանքի բնութիւնից ստացած իր հիացմունքը չէր թաքցնում: Նա մինչ այդ չէր եղել ո՛չ Նապատում եւ ո՛չ էլ Երիցմանկունքում եւ այդ օրը ցանկութիւն յայտնեց տեսնել նաեւ Երիցմանկունքը եւ շատ ուրախ էր, որ դրանք իր թեմի մէջ էին»:

***Տէր Գրիգորին Շահէնի** հետ ծանօթացրել է **Պարգեւ Սրբազանը**, Երեւանում, երբ Պարգեւ Սրբազանը զէնք էր հայթայթել Շահէնի խնդրանքով ու պէտք է այդ զէնքը փոխադրուէր Շահումեան: Շահումեանում Տէր Գրիգորը ոտք է դրել 91 թուականի ապրիլին: Սրբազանի հետ գնացին **Լէոնիդի** ջոկատ, իսկ տեղում հրամանատարը Շահէնն էր:* «Գնացինք, աւելի մօտիկից ծանօթացայ Շահէնին եւ զգացի որ այդ մարդը ահռելի մեծ ուժ ունի եւ հոգով հաւատաւոր մարդ է: Մօտեցայ, զրուցեցինք: Մարտունաշէնը ղեռ մեր ձեռքին էր, մի ղէպք էր եղել, պիտի գնայինք Գետաշէն: Սրբազանն էր, **Գառնիկ Իսագիւլեանը, Իգոր Մուրադեանը**: Ուղղաթիռով գնացինք

Գետաչէն: Շահէնն ինձ ասաց. «Դու այստեղ մնայ, ոչ մի տեղ չգնաս: Սպասում ենք Մարտունաչէնից Սարիսուի վրայ մի թեթեւ հարուածի»: Ասացի. «Հա, կը մնամ հաճոյքով»: Գնացինք, մարտի թէժ պահին ձորի արանքով մի ուղղաթիռ էր գալիս: Թուրքերին թւում էր, թէ մերն է, մենք գիտէինք, թէ թուրքերինն է: Երկու կողմից սկսեցին գնդակոծել էս ուղղաթիռը: Սրբազանի վարորդն էր ինձ հետ՝ **Կարէն Ղազարեանը**: Ինքն ինձ ասաց. «Սրբազանը ուղղաթիռի մէջն է»: Մէկ էլ բոլորն իրենց դիրքերից վեր կացան, կանգնեցին, որ կրակն իրենց վրայ ընդունեն, Սրբազանի վրայից կրակը չեղեն: Իջան, Սրբազանը շատ զայրացած էր ինձ վրայ, կանչեց ինձ.

- Արի այստեղ: Օրհնուքիւն ստացա՞ր, որ գնացիր:

- Սրբազան, դէ կարող է չթողնէիք:

- Մեր ձեռքին ամենամեծ ուժը այս խաչն է: Սրա ուժով ու զօրութեամբ պիտի յաղթենք:

Մի զէնք տուեց ինձ եւ ասաց.

- Ահա՛, հիմա օրհնում եմ:

Մի զէնք էլ ինքը վերցրեց եւ գնաց դիրքեր: Էդ թուրքերի վայնասունը դրեցինք, էդ Սարիսուի:

Շահէնն էլ դէ մեզ հետ էր եւ շատ ուրախացաւ:

Անչափ բարեպաշտ մարդ էր, անչափ յարգում էր Սրբազանին: Յարգելը մի կողմ՝ շատ էր սիրում: Սրբազանն էլ իր նկատմամբ նոյնն էր: Դէ գիտէք, առհասարակ նա զինուորներին ոգի էր տալիս:

Ուրեմն, 91 թուականի մայիսի 25-ն էր: Եթէ յիշում էք՝ Շահումեանից հինգ դիակ բերեցին: Այդ օրը Սրբազանն ինձ զանգեց եւ ասաց. «Գրիգոր, դու գիտե՞ս, որ քո կարիքը Շահումեանում կայ»: Այնտեղ ընդհանրապէս հոգեւորականի կարիք կար եւ, եթէ յիշում էք, «Կրիկ» կազմակերպութիւն կար Մոսկուայում, **Կիրիլ Ալեքսեւսկի** կար: Ինքը նամակ էր ուղարկել եւ ասել, որ այստեղ (Շահումեանում) հոգեւորականի յոյժ կարիք կայ: Սրբազանն էլ ասաց. «Արի գնայ Շահումեան»: Հաճոյքով համաձայնեցի: Ուշ երեկոյեան **Ստեփան Նիկողոսեանի** հետ թռանք Կամօ: Կէսօրն անց էր, ժամը հինգին

*թռանք Շահումեան: Ուղղաթիռում բժիշկն էր՝ **Գուրգէն Սահակեանը, Կոստիա Պետրոսեանը, Սիլվա Խաչատրեանը, Վարդան Շուչմանեանը**: Այնտեղ էին նաեւ **Նշան Մանուչակեանը, բէյրութցի Ռոպերը** եւ **Ռաֆիկ** անունով բուրլիաթ մի տղայ, նաեւ Կոռնիձորի ջոկատի **Արայիկ Խուդավերդեանը**: /Կոռնիձորի ջոկատն այնուհետեւ իրեն լաւ չի պահում եւ Շահէն Մեղրեանն ստիպուած վտարում է: Եւ ափսոսանքի պահն այստեղ այն է, որ Մոնթէն այդ ջոկատի հետ էր.- Ա.Պ./:*

Ցանկացած ուղղաթիռ Շահէնն էր դիմաւորում, ինքն էր ամէն ինչի կարգաւորողը: Շահէնն ուրախացաւ ինձ տեսնելով եւ ասաց. «Դու կը մնաս չտաքում»:

*Այնտեղ ես տեսայ Քարաչէնի ջոկատին՝ իր հրամանատար **Սամուէլ Վարդանեանի** հետ: **Սրբազանն** էր ամէն ինչով այդ ջոկատի լրիւ մատակարարողը: Սամուէլն ինձ ասաց.*

- Զհասկացայ, Սրբազանի ընկերն ես ու մնում ես չտաքո՞ւմ:

- Զէ, մնում եմ այստեղ:

Շահէնն էլ բողոքեց.

- Ունենք-չունենք մի տէրտէր ունենք, ինքն էլ պիտի մնա՞յ կրակի բերան:

Ասի՝ չէ, մնում եմ:

Վերին Շէնում էինք, մեծ երկար գիւղ է, բայց գիւղում գրեթէ մարդ չէր մնացել: Պիտի սկսէինք մկրտութիւնները: Հետաքրքրականն այն է, որ հէնց սկսեցինք մկրտութիւնը, գիւղը լցուեց: Գիւղը լցուեց բառի բուն իմաստով: Ինչի՞ համար: Մարդիկ գալիս էին եւ ասում. «Այ ախպեր Ջան, հիմա ինձ կնքի, մեռնեմ էլ՝ էլ հեչ պէտքս չի»:

*Շահէնն ամենուր էր: Շահումեանն է՛ն չրջանն էր, ուր արտասահմանից շատ հիւրեր, դիտորդներ էին գալիս: Մենք նախապատրաստուում էինք Էրքէչ, Բուգլուխ, Մանաչիդ գիւղերի ազատագրմանը: Շահէնն ուզում էր, որ **Սրբազանը** ներկայ լինի: Հայ Պարիս գիւղում պսակադրութիւն էլ եմ արել, **Անահիտի եւ Սաչիկի** պսակադրութիւնն էր, որին մկրտել էի եւ վերանուանել **Սուրէն**: Ուզում եմ ասել, որ այնտեղ եռուն*

կեանք էր, ժողովուրդը վերադարձել էր, Շահէնի խօսքը, յարգանքը բոլորի մօտ անցնում էր: Ուրեմն, **Արայիկի ջոկատի** հետ վերջում եկաւ, միացաւ **Մոնթէ Մելքոնեանը**: Ու էսպիսի մի դէպք եղաւ: Դէ ակնոցներով, միրուքով, աչխարհիկ զգեստ-ներով էի: Զգիտեմ ինչու՝ էս Մոնթէն հէնց ինձ դիմեց ու ասաց.

– Ի՞նչ կարծիքի ես, հոգեւորականի կարիք չկա՞յ այստեղ:

Նա անտեղեակ էր, որ ես հոգեւորական եմ. նոր, էդ առաւօտեան էր եկել: Պատասխանեցի.

– Ախպեր ջան, ցաւդ տանեմ, մենք մեր գլխի ճարը հազիւ ենք տեսնում, էս հոգեւորականին բերենք՝ մեզ վրայ չառ ու փորձանք չլինի՞:

Մոնթէն մի տեսակ նայեց ու ասաց.

– Դու կնքուա՞ծ ես:

– Հա:

– Որ կնքուած ես, խոստովանութեան, հաղորդութեան կարիք չունե՞ս:

– Ախպեր ջան, ունեմ, տէրտէրի կարիք՝ չունեմ: Դէ ըտենց էլի... քահանային պահել է պէտք, իսկ մենք ուտելու բան էլ չունենք: Էս վիճակին բերենք աւելորդ մի փո՞ր...:

Նայեց, նայեց, նայեց...ահաւոր ջղայնացաւ ու ասաց.

– Դուն թո՛ւրք ես:

Շահէնը եկաւ ու հարցրեց.

– Ի՞նչ է եղել, Աւօ:

Մոնթէն ասաց.

– Ան թուրք է:

Որ տեսայ չատ է լրջանում, Շահէնին աչքով արեցի, իսկ Արայիկի տղաներն էլ գիտէին, որ ես քահանայ եմ: Ասացի.

– Աւօ ջան, կարծեմ Վերինչէնում մի հատ տէրտէր կայ:

– Իրա՞ւ կըսես:

– Հա, ճիշտ եմ ասում:

– Կը գնամ, ստուգեմ:

– Գնա՛, ստուգի՛: Առաւօտեան ժամը ութին Վերին Շէնի եկեղեցում կնունք է անում, գնա տես:

Արայիկին հարցրեց.

– Կամանդի՛ր, կը թողնե՞ս առաւօտեան գնամ Վերին Շէն:

Առաւօտեան ժամը հինգին Կարաչինարից ոտքով դուրս է գալիս Վերին Շէն գնալու: Դէ արդէն ես գիտեմ, որ Մոնթէն պիտի գայ. փարաշաս հագա, խաչս վերցրի եւ սպասում եմ: Եկաւ ու ասաց.

– Օրհնեցէ՛ք, Տէր Հայր:

– Աստուած օրհնի, զաւակս:

Էդպէս զարմացած չուռ եկաւ եւ ասաց.

– Տո ղո՞ւն ես... ամա՛ն:

Ու միշտ ինձ ասում էր՝ կը ներես»:

Բացի մկրտութիւնները, Շահէնը Գիւլիստանի եկեղեցին մաքրել է տալիս, իսկ Վերին Շէնի եկեղեցին արդէն իսկ մաքուր էր: Հայ Պարիսի եկեղեցին Հայաստանից եկած տղաներն են մաքրում, իրենք իրենց ձեռքով պատրաստած խաչքարն են դնում եկեղեցու մօտ:

Շահէնը դաշնակցական էր եւ լաւ դաշնակցական: Բոլորը գիտէին, որ Շահէնը ՀՅԴ անդամ է, իսկ Շահումեանի կէսից աւելին նոյն կազմակերպութեան մէջ է: Ինչպէս որ Սրբազանն էր ջոկատ պահում, մատակարարում եւ կերակրում, Շահէնն էլ Դաշնակցութիւնից էր ամէն ինչ ստանում: Եւ նա նուիրեալն էր թէ՛ Կուսակցութեան, թէ՛ Հայ Դատի, թէ՛ իր հող ու ջրի: Ու որ անունը դրեցին **Հայդուկապետ**, դա այդպէս էլ կար, փաստ է, եւ ուրիշ ոչ ոք կարող էր այդտեղ ղեկավարել: Նախ իր ձիրքը, իր հաստատակամութիւնը, բոլորին վստահութիւն էր ներշնչում: Դէ կային մարդիկ, որոնք Շահէնի անունը լսելիս ամաչում էին՝ վա՛յ Շահէնը յանկարծ չիմանայ: Իրենք համաձայն էին, որ լաւ է, եթէ իրենց հայրերն իմանան իրենց վատ արարքը, բայց Շահէնը չիմանայ:

Սեպտեմբերի 13-14-ին երբ երեք գիւղերը վերցրինք՝ չատ լաւ էր, բայց այդտեղ **Սամուէլ Վարդանեանը** զոհուեց, **Լեւոն Կարապետեանը** զոհուեց, **Մհերիկ Շախեանը** զոհուեց»:

*Սամուէլ Վարդանեանի դիակի հետ **Տէր Գրիգորը** ուղղաթիռով եկաւ. թաղման կարգը պիտի անէին: Շահէնն էլ չա՛տ, չա՛տ ազդուած էր:* «Դէ Սամուէլ Վարդանեանը ուրիշ էր էլի:

ցնդելու, այ Շահէնի պէս, մարդ էր: Մենք չատ զոհ տուեցինք, զոհուեց մեր ջոկատից նաեւ **Էդմոնդ Բարսեղեանը**: Վիրաւորուեց **Կնեազ Համբարձումեանը**, **Սուրէնը**՝ **Եսասուլը**: Այ սա էր, որ մեր ջոկատի մէջքը կոտրեց: Շահէնը գիտէր այդ ջոկատի զօրութիւնը, ուժը: Նա, բնականաբար, **Սրբազանին** էր չատ ընդունում, նրա խօսքը: Մի քանի անգամ Սրբազանը եկաւ, խորհրդակցում էին եւ ինքը ընդունում էր Սրբազանի խօսքը: Իրաւ է, երկուսով էլ լիդերական կարողութիւններ ունէին, բայց Շահէնի մէջ էնքան խոնարհութիւն կար, որ գալիս էր Սրբազանի օրհնութիւնն էր ստանում, խորհուրդն էր ընդունում:

Շահէնը հաւատքի մարդ էր եւ ինքը լաւ գիտէր զինուորի կարիքը, որովհետեւ ինքն էլ զինուոր էր: Ինչքան էլ հայդուկապետ էր, բայց ինքը զինուոր էր: Այ հիմա էլ, ով բանակում կռուել է, ինքը զինուորի արժէքը գիտէ: Իսկ ով չի կռուել՝ զինուորի արժէքը չի կարող իմանալ: Որովհետեւ ինքը չգիտէ, թէ ով է իր թիկունքը պահելու: Եւ որեւէ տարբերութիւն չկայ, թէ ում հետ կը գնայիր, եթէ կար փոխօգնութիւն, եղբայրութիւն: Այնտեղ կար այդ ամէնը: Բացի այդ, գարդմանցիներն աւելի արի են, աւելի կռուարար են, հայրենասէր են երեւի: Էստեղ՝ չէ, երեւի անտառներ են, բան են, եւ կարծես թէ իրենց պաշտպանուած են զգացել: Բայց այնտեղ իրենց ոգին ուրիշ էր, իրենք խենթի պէս էին կռւում: Նոյնն էլ մարտունեցիք եւ հադրութեցիք»:

Շահէն Մեղրեանն այդ իրադարձութեանց ամբողջ ընթացքին ոչ միայն առաջին դիրքերում է եղել, այլեւ, կարելի է ասել, Աստուածային կամքով առաջնորդն է եղել իր տարածաշրջանի: Հրաշալին այն է, որ անչափ սիրելով իր հայրենի բնաշխարհն ու երկիրը՝ վարդենի Գիւլիստանը եւ անմնացորդ նուիրումով պայքարելով նրա ազատագրութեան եւ պաշտպանութեան համար, նրան ոչ մի կերպ չենք կարող բնութագրել իբրեւ գաւառապաշտ մարդու: Ընդհակառակը, ով նրա հետ չփւում էր, զարմանում էր աշխարհի բազմակերպութիւնը ընկալելու, ընդունելու եւ սիրելու նրա կարողութիւնների վրայ: Այդ մարդն առինքնում էր ամենքին, հասկանում բոլորին եւ

ցուցաբերում անսահման համբերութիւն եւ հանդուրժողականութիւն եւ միաժամանակ՝ սկզբունքայնութիւն, նոյնիսկ խստութիւն, երբ պիտի իրականացնէր որեւէ գաղափար, մտայղացում, գործողութիւն, երբ պիտի թոյլ չտար, ասենք, որ Շահումեանից ժողովուրդը ինքնակամ հեռանար: Նա մարդկայնօրէն մեղմ էր, միաժամանակ՝ կարգասէր:

Շահէն Մեղրեանը գերազանց գիտէր, որ Եկեղեցին ոչ միայն պետականութեան եւ պետութեան ամրացման միջոց է, այլեւ պետականութեան դրսեւորման առաջին, բնականոն ձեւը: Վերնային Պետը՝ Աստուած մարդուն տալիս է բանականութիւն, իմաստութիւն, զօրութիւն, լոյս, յոյս, հաւատ, սէր: Միայն Աստծուն ընդունող եւ սիրող մարդկանց են անուանում բարեկիրթ:

Շահումեանի չրջանի հոգեւոր զարթօնքի վերաբերեալ տե՛ս նաեւ «Գիւլիստանի Սբ Աստուածածին եկեղեցու Մատեան յիշատակացը» յաւելուածի նիւթերը:

Գլուխ եօթներորդ
1990 ԹՈՒԱԿԱՆ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Մարգարէների ժամանակներն անցել են եւ չգիտենք թէ ո՞ւմ մտքից կ՛անցնէր, որ ազատագրական պայքար է ծաւալուելու, ազգային պետութիւններ են ստեղծուելու, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ զինեալ բախում է լինելու, ռազմական գիտելիքներն ու հմտութիւնները դառնալու են կենսականօրէն կարեւոր եւ ըստ այդմ անհրաժեշտ է տեւական պայքարի պատրաստուել. զէնք ձեռք բերել, ռազմի գաղտնիքներ տիրապետել: Եթէ այդ ամէնն իմանայինք, նախապէս պատրաստուած կը լինէինք: Սակայն Խորհրդային բանակում հայերին (նաեւ թուրքերին) մեծամասնաբար ընդգրկում էին չինարարական դումարտակներում, եւ հէնց մենք՝ հայերս էլ մի առանձին խանդավառութիւն ու ձգտում չէինք ցուցաբերում մարտական արուեստի հանդէպ: Հակամարտութեան ընթացքին հայերիս ակնյայտ առաւելութիւնը կովկասեան թուրքերի համեմատ այն էր, որ մենք մեր հայրենիքն էինք պաշտպանում: Ի հարկէ, այլ կարգի առաւելութիւններ /գուցէ եւ թերութիւններ/ էլ ունենք, սակայն դրանք խորհրդադիտութեան ասպարէզից են եւ դրանց առայժմ չենք անդրադառնայ:

ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՏԱՆԴ

*Ադրբեջանի կառավարութիւնը լիովին չրջափակում է չրջանը: Փակւում են բոլոր ճանապարհները եւ ի սպառ դադարեցւում մատակարարումը, կտրւում է հեռախօսային կապը: **Շահէն Մեղրեանի** չանքերով նախ ձեռք են բերւում ռադիոկապի միջոցներ եւ տեղադրւում Շահումեանում եւ Գիւլիստանում: Տեղադրւում են նաեւ չարժական էլեկտրակայաններ՝ բնակչութեան նուազագոյն եւ կենսական կարիքները հոգալու համար: Վերականգնւում է կապը Հայաստանի հետ: Այդ ժամանակից սկսած Շահէնը քուն ու դադար չունէր:*

1989-ի վերջին օրերին Գետաշէնում ուղեւար ուղղաթիռը ենթարկւում է վթարի: Զոհեր կային եւ չրջանի ամբողջ ղեկա-

վարուքիւնը բնականաբար այդտեղ էր: Յետադարձ ճանա-պարհին Կուչչի-Արմավիրում թուրքերը ուղեւորների ճանա-պարհը կտրում էն, սակայն ընկրկում են՝ զգալով հայերի զինուածուքեան առաւելուքիւնը:

*1990-ի յունուարի 7-ին Մարտունաշէնում թուրքերը դանակահարում են ագարակի տարեց պահակին: Ամսի 9-ին թաղման օրն էր: Յուղարկաւորմանը մասնակցելու համար նոյն օրը Շահումեանից տասնինն մարդ ճանապարհւում են Մարտունաշէն: Այդ օրը թաղման վայր ուղեւորուած շրջանի ամբողջ ղեկավարուքեանը խանլարի ոստիկանուքիւնը՝ տեղիս մոտոհրաձգային գնդի զինուորականների օժանդակուքեամբ ձերբակալեց, ներառեալ **Վլադիմիր Աղաջանեանին**, **Շահէն Մեղրեանին** եւ շրջանի դատախազ **Գենադի Ստեփանեանին**: Վերջինիս Շահէնենք ուղարկեցին ռուսների հետ բանակցելու: Ռուսները խոստացան, որ հայերին վնաս չեն տայ, թոյլ կը տան, որ գնան եւ խաղաղ կերպով մասնակցեն հանգուցեալի յուղարկաւորմանը: Ամէն ինչ սակայն ունեցաւ այլ ընթացք, քանզի բարձրաստիճան սպաներին թուրքերը կաշառել էին եւ զինուրները եկան, իրենց չրջապատեցին, ձերբակալեցին եւ տարան խանլար: Բոլորին, բացի դատախազից, որին թուրքերի ձեռքից մի կերպ խլում են հայ մարտիկները:*

*Թուրքերը երբ պիտի հայ պատանդներին խուզարկէին՝ որեւէ բան թաքցնելու հնար չկար, իսկ **Շահէնի** ձեռքին մի նուիրական գեղեցիկ ատրճանակ կար: Ի՞նչ պիտի անէր: Ինչպէս միշտ, ժպիտը երեսին, իր ատրճանակը հանեց եւ տուեց հրամանատարին՝ ասելով. «Էս էլ ինձնից քեզ նուէր»: Եթէ թուրքերն իրենք խուզարկէին եւ զէնքը Շահէնի մօտ գտնէին, նրա համար աւելի վատ կը լինէր: Շահէնը գիտէր եւ դրանով թուրքերին հասկացրեց, որ իրենց պիտի վերաբերեն որպէս պատուարժան մարդկանց: Իմանալով, թէ ինչպիսի մեծ մարդ-կանց են գերել, այդ ատրճանակը յաւելեց թուրքերի ուրախու-քիւնը:*

*Մեր պատանդների հետ փոխանակման համար թուրքերի պատանդումը սկսուել է հէնց նոյն օրը: **Աշոտ Խաչատրեանը**,*

*լսելով լուրը, եղբօր՝ **Իւրայի** հետ տնից դուրս են գալիս եւ ձերբակալում չրջանի ազգուխեամբ թուրք երկրորդ քարտուղար **Ջամալովին** եւ նրան տանում են դէպքի վայրը: Ճանապարհին Աչոտը ձայնակապով հրամայում է իր մարտիկներին որքան կարելի է չատ պատանդներ վերցնել: Հասնում են դէպքի վայր եւ պարզւում է, որ թուրք պատանդներ քիչ են վերցրել. Շահէնենք ընդհանուր թուով 21 հոգի էին: Թուրքերի հետ բանակցութեան պահին յայողւում է «յափշտակել» դատախազ Գենադի Ստեփանեանին: Մնացեալին ազատելու համար այնուհետեւ էրքէչում մեր տղաները կալանում են երեւելի մի աւտոբուս, մէջը ճիչտ 18 հոգի եւ 18 հոգուն էլ, Մանաչիդի կռուից յետոյ, աստիճանաբար փոխանակում են եւ ազատում: **Աղաջանեան Վոլոդիային** էլ վերջում են ազատում:*

*Մէկ ամիս պահելուց յետոյ նախ 4 հոգու ազատ արձակեցին, որոնց թւում Շահէնին: Շահէնին ազատեցին յունուարի 19-21-ի սահմաններում, Շահումեանի **ժողովերահսկողութեան նախագահ Արժան Յատուրեանի եւ էրքեչի նախագահ Ասքանազ Յովհաննիսեանի** հետ միասին որոնց ազատագրման համար կարեւր դեր խաղացին Գետաշէնի ջոկատի մարտիկները՝ գերելով Սարի-սու գիւղի նախագահուհու որդուն: Վերջինս իր որդու համար մեծ փրկագին էր խոստանում, սակայն տղաները յամառում են, որ միմիայն Շահէնի հետ փոխանակելու պարագային կը տան տղային:*

Անդրէյ Պրալնիկով. «Հէնց այդ օրերին (Մանաչիդի կռուի - Ա.Պ.) **Շահէն Մեղրեանը** պատանդ վերցուեց: Ադրբեջանի աւտոմատաւորները բռնել էին չրջգործկոմի նախագահի մեքենան եւ նրան ու իր անզէն ուղեկիցներին ուղարկել քննչական մեկուսարան: Սկսուեցին խոչտանգումները՝ դաժան ծեծեր, նուաստացնելու փորձեր, զնդակահարութեան բեմականացում: Յետոյ փոխանակում տեղի ունեցաւ, ինչին մինչեւ հիմա մեծ ափսոսանքով են վերաբերւում ճակատի այն կողմում: Հսկայական գումար են խոստանում հրամանատարի դլխի համար»:

Արթուր Յակոբեանն *այս առումով մի քանի ճչտումներ*

*կատարեց: Շահէնին ձերբակալելուց յետոյ չէին փոխանակի, եթէ ճանաչէին: **Զինաւոր դայու** ծանօթներն են ազատել՝ իրենք էլ չիմանալով, թէ ում են ազատում: Նրանց իմացած Զինաւորի որդին եւ Շահէն Մեղրեանը՝ որպէս չրջանի առաջնորդ, բարեբախտաբար իրենց պատկերացման մէջ չեն նոյնականացուել, այլապէս իրենք, բնականաբար, Շահէնին այդքան հեշտ բաց չէին թողնի կամ առհասարակ չէին թողնի: Իբրեւ Շահումեանի ղեկավար՝ նրանք ճանաչում էին **Աղաջանեան Վոլոդիային**, որն այդ ժամանակ իբրեւ քաղաքական դէմք այլեւս որեւէ ազդեցութիւն չունէր: Շրջանի փաստական առաջնորդը Շահէնն էր: Այդ ամէնը թուրքերը չգիտէին եւ Վոլոդիային են պահել ու յետոյ փոխանակել: Այդ ժամանակ թուրքերի մօտ քաոսն աւելին էր, չկար յստակ կազմակերպուածութիւն եւ տեղեկատուութեան տիրապետում: Ու պատահական չէ, որ մի քանի որդներով ազատել են երեք հոգու:*

Շրջանի ղեկավարութեան պատանդ վերցնելը կազմակերպուած, նախապէս պատրաստուած գործ էր, դա առաջին քայլերից էր Շահումեանի չրջանին ընկճելու, ժողովրդին թեւաթափ անելու, ոգին յօդալուծելու: Իրենք՝ Շահումեանցիները համոզուած են, որ Շահումեանի չրջանը 90 թուականից արդէն ծախուած է եղել: Այսինքն՝ քաղաքական գաղտնի որոշումով այդ հարցն արդէն լուծուած է եղել: Եւ եթէ մինչեւ 92-ի ամառ Շահումեանը մնաց ինքնաբաւ, անկախ միաւոր, դա տեղի ժողովրդի ոգով պիտի բացատրել

***Պետրոս Մեղրեանը** երկրորդ անգամ հայրենիք վերադառնալու սուր սգացում ունացաւ այն պահին, երբ Սիբիրում Ազատութեան ձայնով լսեց Շահումեանի ղեկավարներին ՕՄՕՆի կողմից Գետաչէնում գերելու լուրը: Նրա մէջ կայծակեց այն միտքը, որ Շահէնը նրանց հետ գերուել է: Հեռախօսով կապուեց Ներքին գործոց նախարարութեան աշխատակից եղբօրը՝ **Շուրիկին,** եւ նա հաստատեց Պետրոսի կանխազգացումը: Նոյն օրն օդանաւով թռաւ Հայաստան եւ յունուարի 12-ին արդէն Շահումեանում էր: Դա Արցախեան պատերազմի ընթացքի այն պահն էր, երբ թուրքերը*

յարձակուել էին Մանաշիդի վրայ: Սպասեց մինչեւ փոխանակման միջոցով ղեկավարներին ազատեցին, Շահէնը վերադարձաւ Շահումեան եւ միասին եկան Երեւան: Նոյն տարուայ մայիսին տեղափոխուեց Հայաստան:

*Եթէ անտեսենք Մանաշիդի յունուարի 12-ի դէպքը՝ առաջին անգամ կրակոցներ եղել են Կարաչինարում, Ինջա գետի ձախ ափին: Բարձունքի վրայ տղաները պահակէտի վրայ էին: Մեր տղաներին ուզեցին հանել պահակէտից: **Լէոնիդ Ազգալդեանը** եկաւ իր ջոկատով, Շահումեանից էլ եկան եւ թուրքերին հանեցին: Ռուսական յատուկ նշանակութեան ջոկատը երբ յայտնւում էր, մեր մարտիկները թաքնւում էին: Թուրքերն օգտւում էին այդ հանգամանքից եւ յարձակւում: Ռուսների գնալուց յետոյ մերոնք թուրքերին նորից իրենց տեղերն էին քշում:*

ՄԱՆԱՇԻԴԻ 1990 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԵԱՆ ԿՌԻԻԸ

Ազատագրական պայքարի 1988-90 թթ. տարիները կարելի համարել յարաբերական խաղաղութեան ժամանակ, երբ իշխում էր հանրահաւաքների ոգին եւ սահմանադրական, քաղաքական եղանակով հարցերը լուծելու յոյսը: Ուժային ճնշումներն ի յայտ եկան 1990 թուականից: Նոյն տարուայ՝ հայերի եւ թուրքերի միջեւ առաջին, յունուարեան բախման ժամանակ խորհրդային ուժը ինչ-որ պատահականութեամբ չրջուեց մեր կողմը եւ հարուածն իջաւ թուրքերի գլխին: Սակայն չուտով պիտի իրագործուէր տխրահռչակ «Օղակ» գործողութիւնը, որի նպատակը միութենական նոր պայմանագրին Հայաստանի բռնի ներգրաւումն էր, ահաբեկչութեան ճանապարհով հայութեանն անկախութեան պայքարից ետ կանգնեցնելու փորձերը: Ինչեւէ:

*Շահումեանի չրջանում պատերազմական առաջին լուրջ գործողութիւնը եղել է 90 թուականի յունուարի 12-ին, **Մանաշիդում**, Յատուկ կառավարման կոմիտէի օրերին (նախագահ՝ **Արկադի Վոլսկի**): Պատանդելով չրջանի ղեկավարներին՝ թուրքերը յոյս ունէին դիւրութեամբ ընկճել ժո-*

ղովրդին: Եւ նրանք չուտով յարձակում ձեռնարկեցին Մանաչիդի վրայ: Բախումներ հրահրելով՝ թուրքերն ուզում էին հայ բնակչութեանը դուրս մղել Շահումեանից, բայց կատարուեց հակառակը: Սումգայիթեան դէպքերից յետոյ մարդիկ ճգուեցին եւ համոզուեցին հայ-թուրք զինեալ հակամարտութեան անխուսափելիութեան մէջ: Սումգայիթեան դէպքերից յետոյ Մանաչիդում սկսուել են հերթապահութիւնները: Հերթապահութեան համակարգը **Շահէնն** էր սահմանել: Թէեւ գիւղը փոքր էր. աշխատուժը՝ քիչ, սակայն ցորենի, կարտոֆիլի, խոտի բարձր բերք էին ստանում: Մանաչիդի անասնապահական ագարակը լաւագոյնն էր շրջանում: Մանաչիդում, ըստ **Խաչիկ Սահակեանի,** գիւղացիներն ինքնապաշտպանական դիրքեր էին դրել եւ հերթապահութիւն սահմանել, որին մասնակցում էին բոլոր տղամարդիկ՝ անկախ տարիքից: Կազմակերպիչը գիւղի նախագահ **Բենիկ Վարդանեանն էր**:

Շրջանում Բուզլուխի դիրքերը թուում էին ամենից խոցելին, քանզի թուրքաբնակ Բաշլիչակի հետ մի գիւղխորհուրդ էին, մէկ կոլտնտեսութիւն: Ինքնապաշտպանութեան գործում ակնառու էր գիւղխորհրդի նախագահ **Գեղամ Մուրադեանը**: Էրքէջի ջոկատի հրամանատարն էր **Վանիկ Լալայեանը**, բացառիկ մարդ, որ, աւա՛ղ, ինքն էլ յետոյ զոհուեց: Այդ օրերին կարաչինարում էր գտնուում նաեւ ստեփանակերտցի **Ռազմիկ Պետրոսեանի** ջոկատը: Լսելով յարձակման մասին՝ Ռազմիկը ջոկատով շտապում է դէպքի վայր:

Էրքէջի բնակիչ եւ հրամանատար **Վանիկ Լալայեանի** չնորհիւ շատ հայեր էին համախմբուել Մանաչիդում: Հայկական կողմը, ըստ **Կուճուր Շահէնի**, ունէր մէկ աւտոմատ (ԱԿՄ) եւ երկու կարաբին: Մնացածը որսորդական հրացաններ էին: Թուրքերը մեծաթիւ էին, մեքենաներով, տրակտորով, ունէին աւտոմատներ, կարաբիններ, փոքր տրամաչափի հզօր զէնքեր:

Այդ օրը, առաւօտեան մօտ ժամը 10-ին սկսուեց կռիւը եւ տեւեց մինչեւ ժամը 16-ը: Հակառակորդը Մանաչիդի վրայ յարձակումն սկսեց Թոդանի կողմից: Կռիւն սկսելուց մէկ ժամ անց Աչոտ Խաչատրեանը մի քանի հոգու հետ միասին էրքե-

ջում միանում է Վանիկ Լալայեանի ջոկատին: Ներքինչէնցի Յակոբի եւ Ռազմիկ Պետրոսեանի ջոկատները ետ են մղում Թուրքերի յարձակումը Կուչչի-Արմաւիրի կողմից, որոնք ձգտում էին աջակցել Թոդանի կողմից յարձակուող Թուրքերին: Այդ պահին արեւմուտքից մարտավայր են խոյանում նաեւ վերինչէնցիները: Ըստ Աշոտ Խաչատրեանի, հակառակորդի համար անակնկալ էր իրադարձութեան նման ծաւալումը. փաստօրէն լրիւ վտանգուած էր նրանց թիկունքը, հակառակորդը գրեթէ շրջապատուած էր եւ ստիպուած սկսում է նահանջել: Շուտով նրանց նահանջը փոխւում է փախուստի: Կռուի դաշտում թշնամին թողնում է 30 սպանուած, մեծ թւով վիրաւորուում են եւ 5-ը գերուում, որոնց թւում՝ Թուրքիայի երկու քաղաքի:

*Այս մարտում հայոց զօրքին առաջին, եւ Արցախեան պատերազմի ընթացքում, վերջին անգամ զօրակցում են ռուսները: Բախումից առաջ շրջանի գործկոմի նախագահը գնացել էր **Վոլսկու** մօտ եւ իշխանութիւններին տեղեկացրել, որ Թուրքերը Շահումեանին վրայ են տալիս: Մօտաւորապէս ժամը 12-ին Վոլսկու հրահանգով կապիտան **Սպիրիդոնովի** հրամանատարութեամբ ուղղաթիռով մի փոքր զօրախումբ է իջնում Մանաչիդ՝ խաղաղարարական առաքելութեամբ:*

*Ռուսական զօրախումբը ժամանել էր բախումը կանխելու նպատակով: **Կապիտանը** նախ բարձրախօսով պահանջեց, որ երկու կողմերը կռիւը դադարեցնեն: Սակայն Թուրքերը չարունակում էին, եւ ռուս սպան ձեռքից վիրաւորուեց: Թուրքերի նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխուեց: Ռուսները միանալով հայ մարտիկներին՝ Թուրքերին քշեցին, եւ նոյնիսկ պատանդ վերցրին:*

*Մանաչիդի կռուի մասին գրել է նաեւ **Անդրէյ Պրալնիկովը**.* «Մինչեւ 1990-ի սկիզբը այստեղ յարաբերական հանդիստ էր: Այդ նոյն ժամանակ Նախիջեւանում Թուրքերը հարիւրաւոր կիլոմետրերով ջարդում էին խորհրդա-իրանական պետական սահմանները, իսկ Բաքւում տեղի էին ունենում հայերի մղձաւանջային ջարդերը: Այդուհանդերձ Մոսկուան արտակարգ

դրութիւն մտցրեց նախ եւ առաջ Ղարաբաղում: Դա ոչ մի լաւ բանի չհասցրեց: Յունուարին ադրբեջանցիները յարձակուեցին Մանաչիդի վրայ: Պաշտպանուող տեղացիներին օգնութեան հասաւ ԽՍՀՄ ՆԳՆ զօրախումբը. երեւի առաջին եւ միակ դէպքն էր սա, երբ զինուորները ռազմական գործողութիւններ էին վարում հայերի կողմից» *(**Անդրէյ Պրալնիկով**, «Դա կեղտոտ պատերազմ կը լինի», «Երկիր», 31 հոկտեմբերի,1992»):*

*Ըստ **Մելսիկ Լալայեանի**՝ իրենք սկզբից 20 հոգի էին, յետոյ եկան Հրազդանից, Ջարենցաւանից: Զօկատը կազմաւորուել է 90 թուականի յունուարին:* «Մանաչիդի կուռւմ եղբայրս էր հիմնական ետ տուողը: Շրջանում դեռ ոչ մի աւտոմատ չի եղել, բայց մենք ունեցել ենք: Գիւղի ղեկավարութիւնն ամբողջովին գերի ընկած է եղել: Վանիկին ուղարկեցինք Մանաչիդ, որովհետեւ այնտեղ վիճակը բարդացել էր: Եթէ Մանաչիդը գրաւուէր՝ Շահումեանից մէկ տարի չուտ պիտի դուրս գայինք»:

*Բուզլուխի գիւղխորհրդի նախագահ եւ գիւղի պաշտպանութեան պատասխանատու **Գեղամ Մուրադեանի** վկայութեամբ, երբ 1990-ին առաջին կռիւը եղաւ Մանաչիդում, հայ մարտիկները ոչ մի զէնք չունէին: Միակ աւտոմատը էրքէջցի **Էդոյի** մօտ էր: Յունուարի 14-ին ռուս զօրքը, շրջանի խաղաղ կեանքը, կարգ ու կանոնը պահպանելու կարգախօսով, մտաւ Շահումեան: Այդ օրերին Շահումեանում էր ռուս անուանի լրագրող **Միքայէլ Շեւելեւը**: Շուտով նա կարողացաւ ծանօթանալ շրջանի իրադրութեանը եւ Շահէն Մեղրեանին ճանաչեց որպէս շրջանի փաստական ղեկավարի եւ առաքինի մարդու: Նրանք բարեկամացան, եւ Շեւելեւը Մոսկուայում հրապարակեց Շահումեանի կեանքը ճշմարտօրէն լուսաբանող յօդուած՝ «Շահումեանի շրջան. պատերազմ աշխատաւորների խնդրանքով» (“Московские новости”, 1991թ., N5) վերնագրով, որտեղ կայ նաեւ համընդհանուր հոգեվիճակն ու տրամադրութիւնն արտայայտող Շահէնի խօսքը. «Այս հողի համար պատրաստ ենք պայքարել եւ մեռնել»: Լրագրողի հաւաստմամբ Շահէն Մեղրեանը շրջանում ունի անսասանելի հեղինակութիւն:*

Մանաշիդի կռիւը շահումեանցիների համար ոգեւորիչ էր: Եթէ մինչեւ 1990 թուականի մայիսը Մանաշիդում կար 108 բնակիչ, աւելացան եւս 16 հոգի:

Մանաշիդի կռուից յետոյ իրավիճակն աւելի սրուեց. ժողովուրդն աւելի համախմբուեց: Հայաստանից սկսեցին ջոկատներ գալ՝ ի զօրակցութիւն Շահումեանի: 1990 թուականի յունուարի 15-ին ԼՂԻՄի հետ միասին Շահումեանի շրջանում եւս յայտարարւում է արտակարգ դրութիւն:

Լռելայն շրջանն իրենից օտարում է ծայրամասային 4 թուրք գիւղերը, որոնք մատակարարւում էին Ադրբեջանից, իսկ Շահումեան աւանն ու մնացեալ գիւղերը խզում են իրենց կապերը Ադրբեջանի հետ: Շրջանը զուրկ էր հեռախօսային, փոստային եւ հեռագրային կապերից: Աւտոճանապարհը դէպի Ստեփանակերտ վտանգուած էր թուրք գիւղերով, որոնցով անցնելու միակ պայմանը խորհրդային զինուորների ուղեկցութիւնն էր: Շուրջօրեայ պարեկային հսկողութիւնը դառնում է կեցութեան անբաժանելի մաս: Նաւթամթերքները դառնում են հազուագիւտ երեւոյթ:

1991 թուականի յունուարի 14-ին Ադրբեջանի Գերագոյն խորհրդի նախագահութիւնը որոշում է ընդունում՝ միաւորել հանրապետութեան երկու հարեւան՝ Շահումեանի եւ Կասում-Իսմայլովի շրջանները, որոնք երկուսն էլ սահմանակից են ԼՂԻՄին: Շահումեանում բնակւում էր ընդամէնը 20 հազար մարդ՝ 85 տոկոսով հայեր, իսկ Կասում-Իսմայլովի շրջանում հիմնականում թուրքեր էին բնակւում: Այդ հրամանագրին ենթարկուելը նոյնն է, ինչ կամաւորապէս հողի յանձնումը: Սա Շահէնի միտքն էր, որին միանգամայն համաձայն էին բոլորը: Ձեւական իրաւունքի իմաստով Ադրբեջանը կարող էր երկու շրջանը միաւորել, դարձնել մէկը, սակայն այդ հրամանագրից արեան հօտ էր բուրում, որը շուտով ի յայտ եկաւ բացէ ի բաց: Բաքուի այդ յայտարարութիւնից յետոյ Հայաստանի Գերագոյն խորհուրդը ստիպուած էր յայտարարել, որ ինքը «բոլոր անհրաժեշ քայլերը կ՚անի Շահումեանի շրջանի հայ բնակչութեան կենաց ու կայքի անվտանգութիւնն ապահովելու համար»:

Գլուխ ութներորդ
«ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ. ԳԵՏԱՇԷՆԻ ԵՒ ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Գետաչէնն ու Մարտունաչէնը վարչականօրէն պատկանում էին Շահումեանին հարեւան՝ Խանլարի շրջանին, որտեղ 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբից թուրք տարն աստիճանաբար սկսել է թուական գերակշռութիւն ձեռք բերել: Ազատ եւ կամօ գիւղերի կորստեամբ Գետաչէնն ու Մարտունաչէնը մնացել են կղզիացած եւ չապատուած անթիւ թշնամիներով: Ուստի այդ գիւղերի բնակչութիւնն ամէն կերպ ձգտում էր միանալ Շահումեանին, որին լուրջ խոչնդոտում էր Շահումեան-Գետաչէն ճանապարհի վրայ գտնուող Կուչէի-Արմաւիր վերջերս թուրքերով վերաբնակեցուած գիւղը: Այդ ճանապարհով հայոց մեքենաների անցումը յար վտանգուած էր:

Գետաչէնի եւ Մարտունաչէնի միջեւ տարածութիւնը 2-3 կմ է: Գետաչէնի ուղղութեամբ կամօ, Ազատ եւ Միխայլովկա գիւղերն են, Մարտունաչէնի ուղղութեամբ՝ Ղուչէի-Արմաւիրը, Սարիսուն, Թոդանը: Գետաչէնի եւ Մարտունաչէնի միջով հոսող գետակներն սկիզբ են առնում Կեփասից. Քիւրակի վտակներն են դրանք: Դրանից բխում են սառնորակ աղբիւրներ, որոնցից գոյացել է Գեօլ-գեօլ լիճը: Լճի մերձակայքում կառուցուած էր հանգստեան տուն:

Կեփաս լեռան շրջակայ հսկայ քարակոյտերն արջի բներ էին: Մարտունաչէնից սկսած՝ Կեփասը անտառածածկ է:

Լեռան ստորոտներում ժամանակին եկեղեցիներ են եղել, սակայն հրաբուխից եւ 1139 թուականի երկրաշարժից կործանուել են: Գետաչէնի բարձունքներում կային խոնարհուած եկեղեցական կառոյցներ եւ մի կանգուն եկեղեցի: Մարտունաչէնում կային մի քանի եկեղեցի, որոնցից մէկը գիւղի մէջ եւ գրեթէ լաւ վիճակում էր, միւսները գիւղից դուրս են, խոնարհուած: Գիւղամիջում պահպանուած երեք եկեղեցիներից ամենահինը Աւագ Սբ. Նշանն է (Նահատակ կոչուածը): Գետաչէնի ծխական եկեղեցին Սբ Աստուածածինն է: Երրորդը

Կուսանաց անապատն է: Գետաշէնի շրջակայքում կան մեծաքանակ պատմական յուշարձաններ՝ խաչքարեր, վանքեր...:

*Մելիքանիստ Գետաշէնը գտնւում է Խանլարից 13 կմ հարաւ-արեւելք, կուրակ գետի խոր ձորի մէջ: Փառաւոր անցեալ ունեցող Գետաշէնի մասին կան գրաւոր վկայութիւններ, որոնցում նշւում է գետաշէնցիների քաջութիւնն ու հայրենասիրութիւնը: Գետաշէնցիները 18-19-րդ դարերում յաջողութեամբ պայքարել են թշնամիների դէմ: Արժանայիշատակ է նրանց տարած յաղթանակը Գանձակի **Շահվերդի խանի** նկատմամբ: Վրաց Հերակլ թագաւորը վերահաստատելով Շահվերդի խանին իշխանութեան մէջ, պայման է դնում, որ **Մելիք-Յովսէփը** պիտի վերադառնայ Գետաշէն իր բոլոր իրաւունքներով եւ լինի ինքնագլուխ: Շահվերդի խանը կատարում է այդ պայմանները, բայց չի հաշտւում Մելիք-Յովսէփի ինքնագլխութեան հետ: **Յովսէփ Էմինը** Զառիցց հասնելով Գետաշէն՝ ականատես է լինում, թէ ինչպէս կռուել գիտեն Խամսայի մելիքները, մասնաւորապէս Գիւլիստանի հռչակուած տէրը: Մելիք-Յովսէփի մշտական զօրքը բաղկացած էր 500 մարդուց, սակայն այդ միջոցին նրանք ցրուել էին իրենց տները մի մեծ տօնի պատճառաւ եւ Գետաշէնում մնացել էին ընդամէնը 40 զինուոր: Շահվերդի խանը օգտուելով այդ հանգամանքից, որդու՝ Մամեդ-Հասան խանի հրամանատարութեամբ զիչերը նենգաբար յարձակւում է Գետաշէնի վրայ: Ըստ Էմինի՝ Գանձակի զօրքերի թիւն էր 4500: Յանկարծակիի եկած մի բուռ հայերը գլուխները չեն կորցնում: Հաւաքուելով Մելիք-Յովսէփի որդու, քաջ **Բէգլարի** հրամանի տակ, նրանք ամրանում են Գետաշէնի մերձակայ ժայռերի մէջ եւ պաշտպանւում են մի ամբողջ օր: Գերբնական քաջութեամբ կռուելով, փախուստի են մատնում թուրքերին՝ սպանելով նրանցից 40 մարդ, 50 ձի եւ վիրաւորելով հարիւրաւորներին: Հայերի կողմից սպանւում են 4 հոգի:*

Մի քանի օր յետոյ յարձակումը կրկնւում է աւելի մեծ ուժերով՝ 10000 զինուորներով, թնդանօթներով: Այդ միջոցին արդէն հաւաքուել էր մելիքի փոքրաթիւ, բայց անվեհեր բանա-

կը: Մելիք-Յովսէփը տեղաւորում է իր զինուորներին բարձրութիւնների վրայ եւ սպասում է թշնամու յարձակմանը: Նորից բորբոքւում է պատերազմը եւ նորից յաղթում են հայերը, մեծ ջարդ տալով խանական զօրքին: Մելիք-Յովսէփն ու իր որդի Բէգլարը կոտորելով հալածում են խանի զօրքերին մինչեւ Գանձակի դռները (տե՛ս **Էջ,** Երկերի ժողովածու, հատոր Գ, գիրք Բ, Եր., 1973, էջ 204-206):

Դասեր քաղելով անցեալից՝ 1805-06 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքերը նոյնիսկ չեն էլ համարձակւել յարձակում գործել Գետաչէնի վրայ, եւ գետաչէնցիները կոտորածներից զերծ են մնացել նաեւ 1918-20 թուականներին: Գետաչէնի վրայ թուրքերը նորից չեն յարձակուել, սակայն նրանք աւանից դուրս գետաչէնցիներին բռնացնում էին եւ վարւում նրանց հետ անգթօրէն: Ի պատասխան Գետաչէնից դուրս համագիւղացիների կոտորածի, նաեւ մերձակայ գիւղերի նկատմամբ թուրքերի կատարած բազում յանցագործութիւնների՝ 1905 թուականին Գետաչէնի մարտական ջոկատն իրականացրել է թուրք աւազակաորջերի ոչնչացման ծրագիր: Թոփալ-Հասանլի թուրքաբնակ գիւղը եղել է բառի բուն իմաստով աւազակաորջ, որն իր ասպատակութիւնները տարածել է մինչեւ Գանձակի չուկայ եւ հայկական թաղամաս: Հետաքրքրական է, որ գետաչէնցիների ջոկատը գլխաւորել է Արեւմտահայաստանի Բուլանըխի գաւառի Յանջալա գիւղացի, ՀՅԴ անդամ, հայդուկ, ուսուցիչ **Մարտիրոս Վարժապետը***: Գրաւելով այդ գիւղը, որի բնակիչներն իրենց թուից չատ հայեր էին սպանել, այն աւերակոյտի են վերածում: Զնայած դրան, այդ գիւղի բնակիչներին իշխանութիւնները նորից թոյլ են տալիս վերահաստատուելու այդտեղ:*

Մեր պատմութեան համար յիշարժան է նաեւ այն հանգամանքը, որ ռուսական իշխանութիւնն էր հրահրել հայ-թուրք համակովկասեան բախումները եւ նա կարծես դժգոհ լինելով, որ Գետաչէնը մնացել է անվնաս, գիւղացիներից պահանջում է յանձնել զէնքերը, ապա չգոհանալով, թնդանօթային 20 համազարկ են տալիս Գետաչէնի վրայ՝ աւերելով մի քանի

*հոյակապ տներ (մանրամասն տե՛ս **Սամուէլ Կարապետեան**, «Հիւսիսային Արցախ», Եր., 2004, էջ 323-325):*

Այս ընդարձակ նիւթի մասնակի ներառումը մեր գրքի մէջ միտում ունի ցուցանելու գետաշէնցիների քաջութիւնը, որի պակասը նրանք չեն զգացել երբեւիցէ, եւ հաճելի չէ, երբ պարտութիւնների մեղքը ծանրացնում են տեղացիների վրայ եւ նրանց մեղադրում անվճռականութեան մէջ: Պարզապէս պէտք չէ մոռանալ, որ պատերազմի ելքը վճռւում է ոչ թէ անհատական քաջութեամբ, այլ ինքնապաշտպանութեան կազմակերպութեամբ եւ միաբանութեամբ:

ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՏԱՇԷՆՈՒՄ ԵՒ ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆՈՒՄ

Մանաշիղի կռուից յետոյ երկար ժամանակ Շահումեանում արժանայիշատակ մարտական բախումներ, առանձնակի կարեւոր իրադարձութիւններ չեն եղել: Սակայն դա չի նշանակում, թէ պայքարի լարուածութիւնը դրանից թուլացել է: Շահումեանը պահպանւում էր անասելի ջանքերի գնով: Ցմոռանանք՝ Հայաստանի Հանրապետութեան կապը չրջանի հետ միայն օդային էր, ուղղաթիռների միջոցով: Այդ կապի շարունակական ապահովումը բազմաթիւ դժուարութիւններ էր առաջ բերում եւ, ինչպէս ասում են, թանկ հաճոյք էր: Ամէն մի թռիչք մի բացառիկ բան էր, սկսած եղանակից. Քեալբաջարի երկինքը ամպերով պիտի ծածկուած լինէր, որպէսզի աննկատ հասնէին Գիւլիստան եւ այնտեղ, այդ պահին երկինքը պիտի պարզ լինէր, կամ գոնէ օդային պատուհան լինէր, որտեղից վայրէջք կատարէին ուղղաթիռները: Ուստի, պատահում էր, որ չաբաթներով, անգամ ամսով թռիչք չէր լինում եւ մարտիկներին ու բեռները տեղափոխում էին առափնեայ Սեւան՝ Գաւառ, եւ այդտեղ սպասում եղանակային բարեխառնութեանը: Բացի եղանակից, անհրաժեշտ էր յատուկ թոյլտուութիւն, որը կախում ունէր որեւէ բարձրաստիճան իշխանաւորի կամքից կամ քմահաճոյքից, Շահումեանի եւ Երեւանի փոխյարաբերութիւնների բնոյթից: Եթէ սրան

յաւելենք նաեւ այլ դժուարութիւններ՝ վառելիքի խնդիրը եւ յատկապէս թշնամու կողմից խփուելու վտանգը, պարզ կը դառնայ, որ ամէն մի թռիչք մի իրադարձութիւն էր, որը միշտ մնում է մարդու յիշողութեան մէջ: Այդպիսի թռիչքներից մէկի մասին պատմել է ***Պետրոս Մեղրեանը****. Գետաշէնի պաշտպանութեան օրերին* ***Սերգէյ Վանցեանի*** *օգնութեամբ ուղղաթիռ են յաջողեցնում եւ նախ թռչում են Վարդենիս որտեղից վաղ առաւօտեան պիտի թռչէին Շահումեան: Այդ պահին յատուկ նշանակութեան ջոկատ (ՕՄՕՆ) է գալիս եւ փորձում թռիչքն արգելել: Վարդենիսից հրամանատարութեան հետ կապ չկար, ուստի* ***Գագիկ Սահակեանի*** *հետ դիշերը գալիս են Գաւառ: Գագիկը* ***Վազգէն Սարգսեանին*** *համոզում է եւ թռիչքի թոյլտուութիւն են ստանում: Վերադառնում են Վարդենիս եւ արդէն լուսաբացին Գիւլիստանում էին:* «Մեզ համար առ այսօր անյայտ է, թէ դա ի՞նչ «յատուկ ջոկատ» էր, որ ճակատագրական պահին արգելում էր մեզ թռչել: Դա այնքա՜ն անհեթեթ եւ աներեւակայելի բան էր, որ սկզբում մեզ թուացել էր, թէ այդ ջոկատն օդնական ուժ է եւ չտապում է Շահումեան հասնել: Ինչեւիցէ, մենք թռանք, եւ դա մեր բազմաթիւ թռիչքներից մէկն էր»:

Այսպիսի պայմաններում զօրքի բարձրակարգ մատակարարումը թւում է երազային մի բան: Եւ նման պայմաններում մարտնչողներից մեծ արդիւնքներ սպասելը իրատեսական չէր լինի:

Ռուս լրագրող ***Անդրէյ Պրալնիկովի*** *հաւաստմամբ, չաւերի կարծիքով, Շահումեանի շրջանը մէկ անգամ չէ, որ փորձել են խաղաքարտ դարձնել քաղաքական մեծ խաղերում: Այսպէս, շրջանը պատրաստ էին յանձնելու դեռեւս 1991-ի գարնանը, երբ* ***Գորբաչովն*** *այստեղ արտակարգ դրութիւնը հանելու հրամանագիր ստորագրեց: Դրան անմիջապէս յաջորդեց բանակի «Օղակ» գործողութիւնը՝ մշակուած դեռ Աֆղանստանում. գիւղերը ռմբակոծում էին օդից, տանկերից ու հրետանուց, յետոյ ճանապարհ հարթում ՕՄՕՆականների համար, որոնք սպանում էին, բռնաբարում ու կողոպտում: Աւարտին էր*

մօտենում Գետաշէնից, Մարտունաշէնից եւ 20 այլ հայկական գիւղերից բնակիչների բռնագաղթն ու նրանց տները ադրբեջանցիներին յանձնելու ողբերգութիւնը: Մոսկուան փորձում էր հերքել բանակի մասնակցութիւնը ցեղասպանութեանը, բայց ամէն ինչ ակնյայտ էր:

«Նման գործողութիւններ,- *ասում է* ***Շահէն Մեղրեանը,***- ծրագրում էին անցկացնել նաեւ այլ վայրերում: Եւ Հայաստանի քաղաքական «լիդերների» մէջ կային այնպիսիք, որոնք հնարաւոր էին համարում յանձնել Շահումեանի շրջանը, փոխարէնը՝ Ղարաբաղում ստանալով ժամանակաւոր խաղաղութիւն: Այո՛, ժամանակաւոր, քանի որ բոլորն էին հասկանում, որ հակառակորդի վերջնական նպատակն է Արցախի հայերի արտաքսումը կամ բնաջնջումը, կամ էլ լիակատար ենթակայութիւնը, ինչը սկզբունքօրէն անհնարին է: Մարդիկ մնացել են այնտեղ եւ պիտի պայքարեն, քանի դեռ հնարաւորութիւն կայ» *(«Երկիր», 31 հոկտեմբերի 1992):*

Թուրքերը Գետաշէնն ու Մարտունաշէնը Շահումեանի շրջանից իրենց հաշուարկով հանել եւ կցել էին Խանլարի շրջանին: Դա նրանց հերթական նենգ քայլն էր, որով յոյս ունէին Ազատ, Կամօ, Ղուշչի-Արմաւիր եւ Այգեստան բնակավայրերի օրինակով դատարկել նաեւ մնացեալ գիւղերը:

Պօղոս Մեղրեանը *դժգոհում է, որ Գետաշէնի մասին խօսելիս յաճախ միայն մի անուն են տալիս, միշտ* ***Եղիշին*** *են յիշում: Եղիշի անունը հռչակուել է 90 թուականի յունուարի 9-ին, երբ Շահումեանի շրջանի ղեկավարութեանը թուրքերը պատանդ էին վերցրել: Եղիշն այն ժամանակ այնտեղ, իր երկու տղաներով, որպէս հակագործողութիւն, քանդում է կամուրջը: Նա տեղանքը, ճանապարհները լաւ գիտէր եւ տղաների հետ մասնակցել է բոլոր գործողութիւններին, տեղաշարժերին եւ մտայղացումների իրականացմանը: Սակայն սխալ է, եթէ ասենք, թէ Գետաշէնը միայն Եղիշով է վերջացել: Մնացեալին կարելի չէ արհամարհել: Այնտեղ ուժեղ մարդիկ շատ են եղել,* ***Թաթուլ Կրպէեանի*** *հետ տեղացի մարտունակ տղաներ շատ են եղել: Եղել են նաեւ Հայաստանից: «Արաբոյի» տղաներից են*

*եղել, **Ալաչկերտցի Հրաչը, Զատիկեան Վահանի ջոկատն** էր այնտեղ:* «Երբ 91 թուականին Գետաշէնը հայաթափուեց Զատիկեան Վահանի հետ մեր օղորմած վարչապետը՝ **Անդրանիկ Մարգարեանն** էլ այնտեղ էր: Զատիկեան Վահանի հետ կազմակերպչական գործ էին անում»:

*Պօղոս Մեղրեանի ընդվզումը կարելի է հասկանալ այն իմաստով, որ մարդուժի տեսակէտից Գետաշէնը թոյլ չի եղել, պարզապէս իրադարձութիւնների ընթացքն այնպիսին էր, որ Գետաշէնը պաշտպանողներին դրդեցին սխալուելու եւ ինքնապաշտպանութեան խնդիրը ձախողուեց: Գործը, սեւ գործը կազմակերպում եւ իրագործում էր խորհրդային իշխանութիւնների ռազմուժը, որի դէմ պայքարելու մարտական եւ հոգեբանական հնարաւորութիւններ Գետաշէնը չունէր: Եթէ **Գարեգին Նժդեհի** փորձը գետաշէնցիները ժառանգած լինէին, գուցէ դիմէին դիւերսիոն միջոցների եւ խորհրդային ուժերին չէզոքացնէին, սակայն այս պարագային պիտի ենթադրել, որ գետաշէնցիները Հայաստանի իշխանութիւններից որեւէ ակնկալիք պիտի չունենային: Դա ի հարկէ այդպէս չէր, երկար դարեր յետոյ ազգային երկիր, պետութիւն էր ստեղծուել եւ ակնկալիքները մեծ էին, ուստի պահի տակ ամէն ինչ խառնուել է: Գետաշէնցիներն էլ միայնակ իրենք իրենց կարող էին պաշտպանել, եթէ ազգաբնակչութիւնը ռազմական դրութեան բերուած լինէր եւ ամէն արական անձ իրեն զինուոր զգար:*

*Որոշ չրջանառութիւն ունի նաեւ այն վարկածը, թէ գետաշէնցիներն անկարող եղան տեղացի մի առաջնորդ ունենալ, ով ի զօրու լինէր ղեկավարելու եւ Գետաշէնի ինքնապաշտպանութիւնը դառնար հերոսամարտ: **Թաթուլ Կրպէեանը** որքան էլ խիզախ, սակայն դրսեկ էր եւ ի վիճակի չէր հաւանաբար ինտուիտիւ կերպով պատկերացնել գործընթացների զարգացումը՝ քաջածանօթ չլինելով տեղական հոգեբանութեանն ու պայմաններին: Ի միտ ունենալով նաեւ 20-րդ դարասկզբի իրադարձութիւնները՝ մենք կարեւորում ենք **դիրքորոշման յստակութիւնը եւ վճռականութիւնը**: Այս անգամ խորհրդային*

*ուժերի մասնակցութեան պատճառով զգացւում էր **դիրքորոշման տարտամութիւն**:*

*Թաթուլը Գետաշէնում երկար չի մնացել, մի 8 ամիս, սակայն նա այնտեղ կազմակերպական գործ է արել: Նա իր բնոյթով «արկածախնդիր» էր, խենթութիւն ունէր, որի մէկ արտայայտութիւնն էլ հակառակորդի բարձրաստիճան սպաների գերեվարումն էր: Այն ժամանակ եթէ այդպիսին չլինէիր, չէիր կարող գործ անել: **Պօղոս Մեղրեան**. «Ես կարող եմ ասել, որ Շահումեանի բոլոր ջոկատների հրամանատարները եւ յատկապէս տեղացի հրամանատար-տղաները ջոկովի են եղել, այսինքն ամէն գիւղում իր ջոկատի հրամանատարն էր՝ իսկական ընտրութեամբ, իր փորձառութեան, մարդկային կարողութիւնների, չնորհների հաշուառումով: Լաւ ճանաչել են եւ վստահել: Հրամանատարը յամենայն դէպս պիտի ունենար կազմակերպելու կարողութիւն»:*

*Գետաշէնի մասին բազմաթիւ վկայութիւններ կան, իրար բացառող կարծիքներ, գնահատումներ, վերլուծութեան փորձեր: Իրար են հակադրում երբեմն նաեւ Գետաշէնն ու Մարտունաշէնը. մէկը որպէս առանց կրակոցի բնակավայրը թշնամուն յանձնած, եւ միւսը՝ մարտիրոսուելու պատրաստ մի ժողովուրդ եւ զօրախումբ: Սակայն Արցախեան պատերազմի տեւական ուսումնասիրութիւնը մեզ հիմք չի տալիս հապճեպ եզրակացութեան, ասենք՝ կասկածելու գետաշէնցիների քաջութեանը կամ հայրենասիրութեանը: Նման պարագաներին բարւոք է դիմել մասնակիցների եւ ականատեսների վկայութիւններին, որոնց եւ մենք դիմել ենք: Այդ կարծիքների ծովում ուղենիշային են **Պօղոս Մեղրեանի** աներկբայ դրական տեսակէտը գետաշէնցիների վերաբերմամբ եւ **Վահան Յովհաննիսեանի** վերլուծական պատումը, որից առանձնացուած ամբողջական դրուագը յատակօրէն բացայայտում է իրադրութեան ճշմարիտ պատկերը:*

***Վահան Յովհաննիսեանի պատումով**. առանձնապէս ծանր էր երկու կղզիացած գիւղերի՝ Գետաշէնի եւ Մարտունաշէնի վիճակը: Դրսի օգնութիւնից զրեթէ ի սպառ կտրուած, շրջա-*

պատման դաժան օղակի մէջ՝ այս գիւղերը 1990 թուականի կէսերից արդէն դատապարտուած էին: Սակայն նոյն տարուայ ամռանը ՀՅԴ ջոկատները եւ «Արաբօ» ջոկատը լեռնային կածաններով Շահումեանից հասան այստեղ եւ լիակատար հսկողութիւն հաստատեցին Գետաշէնի ենթաշրջանում: «Սկսուեց **Գետաշէնի 8 ամսեայ անօրինակ պաշտպանութիւնը, որը հսկայական, մինչեւ այժմ չուսումնասիրուած դեր ունեցաւ Ղարաբաղի ազգային ազատագրական պայքարի ղինեալ փուլի բարոյական կայացման գործում»:**

Թաթուլ Կրպէեանի եւ Մանուէլ Եղիազարեանի *առաջադրանքն էր պաշտպանել հայկական երկու գիւղերը... Խնդիրը տեղաբնակներին հնարաւորինս սովորեցնելն ու պաշտպանութեան մէջ ներքաշելն էր: Սակայն Շուտով պարզւում է, որ տեղի չափահաս տղամարդիկ չեն ցանկանում ինքնապաշտպանութեան ջոկատներում ընդգրկուել, այլեւ անվստահութեամբ եւ անբարեացակամութեամբ են վերաբերում Հայաստանից եկածներին:* «Արեւմտեան Հայաստանի ողբերգական անցեալից ծանօթ հին պատմութիւնն էր կրկնւում, որտեղ ֆիդայական ջոկատները միշտ չէ, որ ընդունւում էին տեղի այն բնակիչների կողմից, ովքեր նախընտրում էին իրենց արժանապատուութեան համար պայքարով «չչղայնացնել» կեղեքիչներին...»

Հրանտ Մարգարեանի *հրամանը խստագոյն պատիժներ էր սահմանել այն կամաւորականների եւ յատկապէս դաշնակցականների համար, ովքեր տեղի բնակիչների նկատմամբ բռնութիւն կը գործադրէին: Չնայած դրան, հակասութիւններ են առաջանում եւ դրանց հիմքի վրայ՝ բախումներ:* «Յայտնի **Լենայի** տանը մօտենալով՝ բակից աղմուկ լսեցի: Նայեցի եւ տեսայ, թէ ինչպէս մէկուկէս-երկու տասնեակ փարթամ գեղջկուհիներ ճիչ-աղաղակով պատին են դէմ տուել Թաթուլին: Սփրթնած, դժբախտ դէմքով Թաթուլը խոյս էր տալիս նրանցից, ինչպէս մեղուներից: Նա կարող էր ուսի մի չարժումով պատի մի մասը փլել յարձակուողների վրայ, սակայն նրա կողմից դիմադրութիւնն իսկ բացառւում էր: Նա չէր կարող իրեն թոյլ տալ հարուածել կամ հրել կնոջը: Տեսարանն

սկզբում ինձ զուարճալի թուաց, սակայն տաքացած կանայք ձեռքերում ծանր գրտնակներ, փոցխեր, իսկ մէկի ձեռքում նոյնիսկ սուր բահ տեսնելով՝ հասկացայ, որ գործը լուրջ է»: Պաշտպանական մարտավարութիւնն իրեն չէր արդարացնում: Եթէ հաղորդակցութիւնները, ճանապարհները մնան թուրքերի ձեռքին, Շահումեանի մնացեալ բնակավայրերն էլ կ՚ունենան Կամօ, Ազատ, Կուշչի-Արմաւիր գիւղերի ճակատագիրը. «Որոշեցինք պաշտպանութիւնից անցնել գործողութիւնների: Գետաշէնից հիւսիս-արեւելք ընկած ճանապարհին, իր «Վիլիս» աւտոմեքենայում չորս աւտոմատների դիմահար կրակով սպանեցին Խանլարի գրոհայինների լկտի եւ դաժան հրամանատար **Գիւրզա Ալիեին**, նրա վարորդին եւ թիկնապահին: Այդ օրից վախը բուն դրեց աղրբեջանական գիւղերում…

Մարդիկ հասկացան, որ յաղթել կարելի է նաեւ փոքր ուժերով» *(«Արցախեան ազատագրական պայքարի հիմնարար ժամանակները», «Ազդակ» օրաթերթ, 20 փետրուար, 1998, բացառիկ, էջ 52-55):*

***Արարատ Սահակեանը** ներկայացնում է իրենց մուտքը Գետաշէն. «91-ի մարտն է: **Աբօն, Ռուբօն, Արարատը, Հրաչը, Կարօտը** պիտի գնային «գործ անէին»: Գործն էլ Լեռնոյն ու Խոջալուն էին: Գնացին գործն արեցին: Այդ գործի մէջ **Ասկոլկան** «Ալազան»ն էր գործածում, Կարօտը Հրաչի հետ՝ ՊԿՏն, Արարատը Աբոյի հետ՝ ՊՇԿն էի աշխատեցնում: Գործն արեցին, Ասկերանով, Մարտակերտով դուրս եկան Մանաչիդ: Մարտի սկիզբն է: Պայմանաւորուածութիւնն այնպիսին է, որ իրենք գնում՝ գործն անում են, իսկ ջոկատը թռչում է Գետաշէն: Ջոկատը թռել է Գետաշէն, իրենք եկել, հասել են Մանաչիդ:*

*Ու Մարտունաշէնի առաջին մարտը եղաւ, որ Մանուէլի տղերքը ԲՏՌ խփեցին, «Արաբոյի» **Մանուէլն** էլ վիրաւորուեց: Շահէնն ասաց, որ ուղղաթիռ է կանչել, որ էսա պիտի թռչենք Մարտունաշէն: Ուղղաթիռը եկաւ ու Շահէնը Արարատին ու Կարօտին մի կողմ քաշեց, մի տեսակ նայեց ու ասաց.*

- Տեսէք, թռչում էք Գետաշէն ու Թաթուլը կ՚ուզենա ձեզ Գետաշէնում պահի, դուք Գետաշէնում մի՛ մնացէք, գնացէք

Մարտունաշէն. Մանուէլը վիրաւորուել է, «Արաբոյի» տղաները մնացել են առանց հրամանատարի, դուք էլ իրենց կ՚օգնէք, կ՚աջակցէք:

*Իրենք 10 հոգի էին, լաւ տղաներ էին, եւ Շահէնը գիտէր, զգում էր, որ Թաթուլը կ՚ուզենայ իրենց այնտեղ պահել եւ այդ բանն ասաց: Ասացին՝ լաւ: Ուղղաթիռը եկաւ, նստեցին: **Կարօտն էր, Հրաչն էր, երգիչ Սմբուլն էր, Բաղրամեանցի Մանուէլն էր, Արարատն** էր ու էլի մի քանի հոգի: Եկան Գետաշէն, տեսան, որ Հրազդանի ջոկատն էլ այնտեղ է: Թաթուլը չատ ջերմ ընդունեց: Յետոյ Թաթուլը երբ իմացաւ, որ Արարատը Սովետի բանակից Աֆղանստանում է եղել, հարցրեց.*

- ՄՏՈ-ից գաղափար ունե՞ս:

- Այո, ունեմ: Զինուոր ժամանակ ՄՌԴՄ եմ քշել:

- Տղաները չեն կարողանում ԿՊՎԴՆ հանեն, գնանք, տեսնենք թէ ոնց ենք հանում:

*Մինչեւ եկան կապաւոր **Լենա մայրիկի** մօտ՝ արդէն տղաները հանել էին ԿՊՎԴՆ: Ասաց.*

*- Լաւ, որ հանել են՝ հանել են, գնանք **Մալաթիայի Վահանենց** տուն, էնտեղ ժողով պիտի անենք:*

«Եկանք տարբեր ջոկատներով նստեցինք եւ ցանկացողն իր կարծիքը յայտնեց, թէ ինչ պիտի անենք եւ ինչպէս: Խօսքը երբ հասաւ ինձ, ղէ ես էլ մտածում էի, թէ Սովետական Միութիւնն է, գիւղում էլ կին-երեխայ կայ, չեն կրակի, իսկ եթէ մտնեն գիւղ՝ հետները փողոցային մարտերի մէջ կը մտնենք: Բայց պիտի իմանանք, եթէ սովետական զօրքն է մտնում անձնագրային ստուգման՝ չենք կրակում, իսկ եթէ իրենց ՕՄՕՆն է, պիտի կրակենք: Թաթուլին այդ միտքը դուր եկաւ, ասաց. «Այդպէս էլ կ՚անենք, իրենց լուր կը տանք, եթէ իրենք գալիս են անձնագրային կարգի համար՝ չենք կրակի»: Յետոյ հարց առաջացաւ, թէ այսքան ջոկատներն ի՞նչ կ՚անենք, ասացի՝ կը մտնենք անտառ, մի քանի օր կը մնանք, նորից ետ կը գանք:

Յաջորդ օրը պայմանաւորուած մտանք ջոկատներով Կեփասի տակ, Գեօլ-գեօլի մօտ: Շատ սիրուն տեղ էր: Սոված էինք, բան

չկար ուտելու եւ մի արջ խփեցինք ու կերանք ամբողջովին:

«Կոլցո» օպերացիան աւելի չուտ պիտի սկսուէր, բայց քանի որ տանկ էր չրջուել, մինչեւ տեխնիկայով դրա հանելը բաւականին ժամանակ անցաւ: Մենք գնացինք, հասանք Կեփասի տակ, մի երկու օր մնացինք եւ երկրորդ օրը այդ արջը պատահեց, Մարտունաչէնցի Մեժին արջին խփեց, մաշկեց: Ճուտը եկաւ, ասաց՝ դանակդ տուր: Տուեցի, գնաց արջի սրտից մի կտոր կտրեց եւ հում-հում կերաւ: Երրորդ օրը եկան լուր տուեցին, թէ եկել տանկը հանել ու գնացել են: 4 օրից գնացինք ու մեր յետեւից **Արջը, Մուզմուզը, Տլոտը** եկել էին, որ պիտի գնայինք Մարտունաչէն: Ու այդտեղ վիճաբանութիւն սկսուեց. Թաթուլը չէր ուզում մեզ բաց թողնի, մենք էլ ուրիշ հրահանգ ենք ստացել: Իրարից մի քիչ նեղացած բաժանուեցինք: Ու յետոյ եւ առհասարակ Կարօտն ու Հրաչն էին իրար հետ պոստի կանգնում, ես ու Պետօն, Ճուտն ու Մանուէլը, ու այդպէս խօսում էինք, ասում, որ եթէ իմանայինք, որ այդ տղան պիտի այդպէս չուտ զուհուելու է՝ այդպէս չէինք բաժանուի: Իրար հետ լաւ էինք, խօսք չկայ, բայց մի քիչ վիճեցինք: Մենք ուզէինք-չուզէինք պիտի գնայինք, քանի որ **Շահէնն էր** ասել, որ տղաներին օգնել է պէտք, մանաւանդ Մանուէլը վիրաւորուել էր, իսկ Գետաշէնում լիքը ջոկատներ կային: Վերջը որոշեցինք, որ գնում ենք: Թաթուլն ասաց.

– Լա՛ւ, գնացէք, բայց ՊԿՏն ու նռնականետը թողնում էք:

Նորից վիճեցինք: Ի վերջոյ, նռնականետը թողեցինք, ՊԿՏն մեզ հետ վերցրինք»:

ԳԵՏԱՇԷՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Թշնամին ուզում էր օր առաջ գրաւել Գետաշէնն ու Մարտունաչէնը եւ դրա համար ոչինչ չէր խնայում ռազմական ճնշող գերակշռութեան հասնելու եւ բնակավայրերը կամովին չյանձնուելու պարագային դրանց պարզապէս ճգմելու համար: Եւ նրանք կարողացան խորհրդային ուժերին ներգրաւել այդ գործողութեան մէջ: Շահէն Մեղրեանն այդ երկու գիւղերին մեծ օգնութիւն ցոյց տալ չէր կարող եւ Շահումեանից 10-12

*հոգի ուղարկեց Մարտունաշէն՝ **Յակոբ Խիդիրեանի** գլխաւորութեամբ:*

*Հայաստանից որեւէ օգնութիւն սպասելն ապարդիւն բան էր: Ընդհակառակը, ընդունակ էին աւելի չուտ վնաս տալու: **Մհեր Յարութիւնեանը** Ղարաբաղ է փախել տակաւին 15-16 տարեկան հասակում եւ նրան պարզապէս **Ճուտ** էին անուանում: **Թաթուլի** հետ ծանօթացել են 91-ի մարտի 7-ին, երբ Թաթուլն արդէն հեղինակաւոր հրամանատար էր Գետաշէնում: Մհերը 91 թուականին Շահումեանում կարճ ժամանակահատուած է եղել, երբ Գետաշէնը գրաւեց թշնամին: **Թաթուլ Կրպէեանը, Հրաչ Դանիէլեանը, Սիմոն Աչիգէոզեանը, Արթուր Կարապետեանը** եւ ուրիշներ զոհուեցին ապրիլի 30-ին: Զոհուել էր նաեւ **Երզնկացի Մարտիրոսը կամ Մարտիկը:** Ըստ Մհերի՝ Գետաշէնում ընդամէնը մի 50-55 զինեալ տղաներ էին, իսկ իրենց դէմ դուրս էր եկել մի հսկայ դիվիզիա, զրահատեխնիկայով եւ 4-5 ուղղաթիռով: Այդ տարածքի վրայ հիմնական զանգուածը Հայաստանից ուղարկուած դաշնակցական խմբերն էին, Շահումեանի միւս ընկերները, Ղարաբաղի ընկերները: Կուսակցութիւնն էր տիրութիւն անում ամբողջ շրջանին: Սակայն Դաշնակցութեան նկատմամբ անյարգալից, անտեսման վերաբերմունք կար:* «Երբ **Վազգէն Սարգսեանն** իր ջոկատը Գետաշէնից հանում էր, Թաթուլը շատ էր ջղայնացել, թէ ինչպէ՞ս են թողնում գնում, ինչո՞ւ են պայքարող շրջանից զէնքերը դուրս բերում: 20-25 շատ լաւ զինուած տղաներ էին: Թաթուլը ճակատից այդպիսի զէնքերի դուրս բերումը դաւաճանութեան պէս մի բան էր համարում: Նրանց հրամանատարը մեզ տեղեկացրեց, որ ինքն ընդամէնը հրաման է կատարում, Վազգէն Սարգսեանի հրամանը: Ինքն իր կողմից մարդկայինով թողեց մի ցինկ ԱԿՄ-ի 7,62 մմ փամփուշտ, ասելով, որ դա իրենն է, բայց մնացեալը պետական զէնք է եւ ինքը կարող չէ թողնել: Ամբողջը տարան: Մենք նռնականետ ունէինք, սակայն նռնակներ չունէինք, գնդացիր չունէինք, մի «Դեկտիարեով» գնդացիր կար Մալաթիայի **Վահան Զատիկեանի** տղաների մօտ, մի գնդացիր էլ **Հրաչ Դանիէլեանի** մօտ, Հրազդանի

«Ալաչկերտ» ջոկատից: Տարբեր ուղղութիւնների վրայ չէինք կարող այդպիսի զէնքեր կիրառել: Հրաչիկը նոյն օրը զոհուեց: Եթէ այդպիսի վիճակում զօրքը տարածքից հանում են, նշանակում է իրենք իրենց մէջ պայմանաւորուածութիւն ունէին»:

Իրադարձութիւնները զարգանում էին սրընթաց: Տարածաշրջանի հայաթափման ծրագիրը ուզում էին հասցնել աւարտին: Ապրիլի 19-ին Մարտունաշէնում թշնամին ունեցել էր լուրջ կորուստներ եւ նրանց համար այսուհետ պարզ էր, որ հեչտութեամբ բնակավայր չեն գրաւի: Նրանք բարձրագոյն հրամանատարութեանը պիտի պատասխան տային լուրջ կորուստների համար, ուստի ներգրաւեցին շատ աւելի մեծաթիւ գրոհային ուժեր եւ յատկապէս տեխնիկա: Ապրիլի 30-ի գիշերը Մարտունաշէնի պահադիրքերից նկատուած թուրքերի տեխնիկայի շարժը շարասեան ձեւով շատ տպաւորիչ էր եւ հոգեբանօրէն անպատրաստների համար՝ ահասարսուռ: Գետաշէնի ուղղութեամբ շարժւում էր մօտ 200 միաւոր տեխնիկա՝ միացուած լուսարձակներով, հիմնականում տանկեր եւ հետեւակի մարտական մեքենաներ: ***Կարէն Կարապետեանի (Դուշմանչիկ)*** *հաւաստմամբ՝ 3 տղաների ուղարկում են Գետաշէն՝ համաձայնեցուած գործողութիւնների դիմելու համար: Կարէնի կարծիքով՝ այդպիսի մեծ ուժի բաց դաշտում դիմակայել չէր լինի, իսկ բնակավայրի անձկութեան պայմաններում կարելի էր ոչնչացնել առաջին եւ վերջին մեքենաները եւ թափով յարձակուել ամբողջ շարասեան վրայ: Գուցէ եւ այդ անակնկալը յաջողութիւն բերէր: Կարէնի առաջարկութիւնը Գետաշէնում հաշուի չեն առնում: Գետաշէնից վերադառնալով՝ տղաները տեղեկացրին որոշումը՝ իրենք թող պաշտպանեն Մարտունաշէնը եւ անհոգ լինեն Գետաշէնի համար:*

Հայոց ջոկատները դեռեւս մեծ բախումների փորձառութիւն չունէին եւ կազմակերպուածութեան ու կարգապահութեան աստիճանն այդպիսի պայմաններում բարձր լինել չէր կարող: Կարելի է ասել՝ ջոկատները զբաղուած էին պահակութիւն անելով: Այդ իսկ պատճառով ***Գետաշէնում թուրքերի շարժը յարձակման փոխարէն ընկալել են իբրեւ անձնագրային***

խստակարգի հերթական դրսեւորում: *Յածր է եղել նաեւ ժողովրդի հոգեւոր-բարոյական վիճակը կամ ոգին: Խաղաղասէր գետաչէնցիները, որոնք թուրքաց գերիշխանութիւնն ընդունել են նաեւ 18 թուականին, հաւանաբար ցանկացել են, որ թուրքերի չարժն այդպիսի բնոյթ ունենայ: Եւ հէնց Գետաչէնի բնակիչների պնդմամբ են զինուած տղաները տներում մնացել թաքնուած: Բայց երբ հակառակորդը Գետաչէնի մօտով սրընթաց անցնում է դէպի Մարտունաչէն եւ այնտեղ սկսւում է կռիւը, գետաչէնցիների համար հասկանալի է դառնում, որ սա յարձակում է, իսկական մարտական գործողութիւն: Խորհրդային զինուորների հետ գիւղ մտան նաեւ ՕՄՕՆականները եւ այստեղից միանգամայն պարզ էր, որ թուրքերը բնակչութեանը պիտի տարհանեն: Այդ վիճակից դուրս գալու համար* ***Թաթուլը*** *կրկին դիմում է բացառիկ խիզախ արարքի. տեսնելով, որ միատեղուել են բարձրաստիճան սպաները, եւ կռահելով, որ դրանցից մէկն ընդհանուր հրամանատարն է, մօտենում է գնդապետին եւ հարցնում. «Ո՞վ է այստեղ հրամանատարը»: Գնդապետն ասում է, որ ինքն է: Յարմար պահ գտնելով՝ Թաթուլը նռնակը պահում է գնդապետի վրայ եւ պահանջում զօրքը ետ քաշելու հրաման տալ: Գնդապետը փորձ է անում ազատուել Թաթուլի ձեռքից, բայց չի կարողանում: Տեղի ՕՄՕՆականները լիցքաւորուած զէնքերը պահում են Թաթուլի եւ գնդապետի վրայ եւ առանց հաշուի առնելու գնդապետի ծառայութիւնները եւ աստիճանը՝ կրակահերթեր են բացում: Նռնակն ընկնում է Թաթուլի ձեռքից եւ այդ պահին գնդապետը մինչեւ պայթելը կարողանում է նետուել մի կողմ եւ չնայած ստացած բազմաթիւ վէրքերին՝ ողջ է մնում: Իսկ* ***Թաթուլ Կրպէեանը, Զարգանդ (Հրաչ) Դանիէլեանը եւ իրենցից*** *5-6 քայլի վրայ գտնուող* ***Արթուր Կարապետեանը*** *տեղում զոհւում են: Զոհւում են նաեւ մի քանի հոգի տարբեր ջոկատներից, եւ չիմանալով, թէ ինչ պիտի անեն այդ պահին, մարտիկները մնում են տներում թաքնուած: Այդ նոյն օրը զոհերի ընդհանուր քանակը հասնում է 18-ի, որոնցից 5-ը Հայաստանից եւ մնացեալը՝ Գետաչէնից ու Մարտունաչէնից:*

Զոհուածների թւում էին ***Պապիկ Սեյրանեանը, Բենիկ Գեանջումեանը, Հռիփսիմէ Մինասեանը, Մելսիկ Սողոմոնեանը, Վալերի Նազարէթեանը, Հրաչիկ Աթանէսեանը, Թելման Խաթայեանը:*** *Վիրաւորները բազմաթիւ էին, որոնց բուժօգնութեան համար դրեթէ պայմաններ չկային եւ նրանցից 12-ը մահացան:*

Աւելի մերձակայ հայեացքով է ներկայացնում իրադրութիւնը ***Մհեր Յարութիւնեանը.*** «**Թաթուլն** իր կեանքի գնով մի քանի անգամ ահաբեկել է թուրքերին: Սկզբից ռուսները ձերբակալել էին «Արաքս» ջոկատից երկու հոգու: Լուրը հասաւ Թաթուլին: Գնաց, նռնակ ունէր, քաշել էր նռնակի օղակը եւ պահանջ դրել ռուսներին, որ իր համար մխեւնոյն է՝ կը մեռնի թէ ողջ կը մնայ, ինքն իր ազգի համար է զոհւում, եւ ստիպել է, որ մեր տղաներին բաց թողնեն եւ սպային զինաթափել է: Նրանք կապուել են իրենց հրամանատարների հետ եւ ասել, թէ այսպիսի բան է կատարւում՝ ի՞նչ անենք: Ասել էին՝ սպասէք, գալիս ենք: *«Չէ,- ասել էր Թաթուլը,- նրանց գալն ինձ պէտք չէ: Ես կը պայթեցնեմ ինձ ձեզ հետ միասին»: Այդպէս զինաթափել է ռուսներին:*

Անցաւ երկու օր եւ հետեւակի մի քանի մարտական մեքենայ զօրք եկաւ: Մտան գիւղ եւ ասացին. «Մենք ոչինչ չենք ուզում: Տուէ՛ք մեր զէնքերը եւ տուէ՛ք մօրուքաւոր ուսուցչին»: Մօրուքաւոր ուսուցչին ո՞վ կը տար, իրենց Հերոսն էր: Ժողովուրդը ռուսներին դուրս արեց, թողեցին գնացին: «Գիւղում բոլորը վախենում էին Թաթուլից, այսինքն՝ չատ էին յարգում: Ու եթէ անակնկալ մի սխալ բան անէին եւ Թաթուլը լսէր՝ չատ պիտի բարկանար: Նա չէր սիրում, որ սխալ բան էր կատարւում: Ձգտում էր ամէն ինչի բնականոն ընթացք տալ: Գիւղի ջահելները պատկառում էին Թաթուլից: Երբ մի տեղ նստած թղթախաղով էին զբաղուած լինում ու լսում էին, որ Թաթուլը գալիս է, արագ հաւաքում էին թղթերը, որ Թաթուլը եթէ գայ՝ չտեսնի: Զգուշանում էին, որ յանկարծ չգայ եւ տեսնի, որ զէնքը կեղտոտ է»:

Ապրիլի 21-ին տեղեակ պահեցին, որ զինուորականները

*պիտի գան գիւղ անձնագրային խստակարգ մտցնելու համար: Մինչ այդ, միշտ երեկոները գնում էին դիրքերը ստուգելու: Ինքն էր լինում, **Տիգրանը, Հայկազ Բաղմանեանը**: Մէկ տան մէջ մնում էին 6-7 հոգի: Այն ժամանակ իրավիճակը չատ լարուած չէր, պարզապէս ուզում էր, որ պատրաստ լինէին՝ թուրքերի անակնկալ ի յայտ գալու պարագային: Երբ ապրիլի 21-ին տեղեկացրին, որ այդպիսի բան կայ՝ տղաներով բարձրացան անտառ: **Մհեր Յարութիւնեան**. «Ինձ ասացին, որ մնամ, գնամ դասի նստեմ: Եթէ զինուորականները գան՝ ձեւացնեմ, թէ գիւղի երեխայ եմ, աշակերտ եմ: Սակայն չմնացի, գնացինք եւ սկսեցինք խրամատներ փորել»:*

Թաթուլը երկրորդ անգամ նորից զինաթափեց թուրքերին: Վաղ առաւօտեան գնաց ստուգելու դիրքերը: Արդէն ժամը 5-ին զինուորականները տեխնիկայով մօտեցան գիւղին: Սկզբից Մհերի հետ կանգնած էին: Նայեց, նայեց եւ նախ թուաց, թէ եկել են անձնագրային ստուգումների համար: Գնացին տուն, մարտական զգեստների փոխարէն գիւղական հագուստ առան իրենց վրայ, զէնքերն էին ուզում պահել: Թաթուլին այդ պահին տեղեկացրին, որ թուրքերն արդէն գիւղ են մտնում: Մհերին ուղարկեց իմանալու ինչ կայ: Մհերը վերադարձաւ եւ՝ տեսածը հաղորդեց: Թաթուլը զէնքը վերցրեց, Մհերին էլ ասաց, որ իր հետ դուրս գայ: Գնացին: Ժողովուրդն արդէն դուրս էր թափուել եւ քարերով թուրքերին խփում էին: Մհերին ասաց, որ յետ գնայ տղաներին տեղեկացնի, իսկ ինքը կը մնայ այստեղ: Մհերը գնաց, տղաներին տեղեկացրեց: Եկան, տեսան, որ Թաթուլը բաւականին ետ է քաշուել: ՕՄՕՆը մտնում էր գիւղ: Այդ պահին հրամայեց մարտի բռնուել, սակայն գիւղացիները չթողեցին: Ժողովուրդն ասաց, որ եթէ այստեղ մի քանի թուրք սպանեն՝ ամբողջ գիւղը կը կոտորեն: Զթողեցին: Այդ պահին Թաթուլը ղայնացաւ: Արդէն այլ բան մտածեց, որ ՕՄՕՆականներին գոնէ դուրս հանի գիւղից: Մարտունաչէնում արդէն մարտ էր ընթանում: Իջաւ գիւղ: Մէկ ժամ անց Մհերը հասաւ իր մօտ: Ինքն արդէն գերել էր 16 զինուորական, մէկ ՀՄՄ, մէկ ՌՊԴ-ական զօրէջքային (դեսանտ)

մեքենայ: Մեր մարտիկները զինուորականներին դուրս էին արել, զինաթափել, իսկ ինքը նռնակը քաշած՝ կանգնած էր: Նա պահանջում էր, որպէսզի կապուեն եւ պահանջեն, որ իրենց հրամանատարներից մարդ գայ: Կէս ժամ անց ՕՄՕՆականների հետ մի աւագ լեյտենանտ ժամանեց: Երբ մօտեցան՝ Թաթուլը գոռաց այդ սպայի վրայ. «Այդ զինուորներին ասա՛, որ մնան իրենց տեղում, թէ չէ՝ բոլորիդ կոտորելու եմ»: Զինուորներից ամէն մէկը մեր մարտիկներից մի քանիսին վերցրեցին նշանառութեան տակ: Եւ Թաթուլն էր ՀՄՄի մէջ, նռնակը քաշած, եւ կողքին մի 4 հոգի: Լեյտենանտը չրջուեց եւ տեսաւ, որ իրենց բոլոր զինուորները նորմալ կանգնած են իրենց տեղում: Նա ասաց, որ կը տեղեկացնի հրամանատարութեանը: Թաթուլն ասաց, որ այդ ՕՄՕՆականներին էլ իր հետ տանի: Թաթուլը կանանց հրահանգեց դրանց գիւղից դուրս անել: Կանայք ՕՄՕՆականներին լարեցին դուրս: Մէկ ժամ յետոյ եկաւ իրենց հրամանատարը, որ գնդապետի աստիճան ունէր: Եկաւ, խմած էր, եւ մի քանի հայհոյական խօսք դուրս տուեց: Օդին խփեց Թաթուլի քիմքին: Նա ղայնացաւ եւ գնդապետին մի քանի խօսք ասաց. «Ծախուած ես էլի, քեզանից ի՞նչ քրիստոնեայ»: Այնուհետեւ երբ վիճակն աւելի բարդացաւ, Թաթուլն այդ գնդապետին վերցրած՝ գնաց բանակցութիւննե-րի: Հէնց այդ պահին էլ թուրքերը նրան խփեցին»:

Այսպիսով, հրակարկուտի տարափի տակ թուրքերն իրա-գործում են իրենց ստոր նպատակը՝ տեղահանութիւնը: Ռու-սական զօրքի ներկայութիւնը եւ միջազգային դիտորդների ժամանումը կանխում է զանգուածային կոտորածը եւ բնակ-չութիւնը ուղղաթիռներով տեղափոխւում է Երեւան եւ Ստեփանակերտ: Բնակիչների մի մասը կըտրկան հօտի նման կարողանում է գաղտնօրէն հետեւակ վիճակով հասնել Կեփաս լեռան լանջերը եւ այնտեղից՝ Շահումեան, այնուհետեւ՝ Ստե-փանակերտ, Երեւան: Մի խօսքով՝ պատմութեան ընթացքին երբեւիցէ իր բնակավայրը չլքած Գետաշէնի բնակչութիւնն աչխարհացրիւ է լինում:

Գետաշէնի հիւանդանոցի գլխաւոր բժիշկ **Սարգիս**

Ցակոբքեօխեանին, Երեւանից Գետաշէն գործուղուած վիրաբոյժներ **Վալերի Խաչատրեանին** *եւ* **Գէորգ Գրիգորեանին,** *ռուս զինուորի մատնուածքեամբ, 7-րդ օրը յանձնում են թուրքերին, որոնք նրանց առանձնացնելով մնացեալ 40-ից աւելի պատանդներից, տանում են Գանձակի բանտը եւ երկար ժամանակ ահաւոր տանջանքների ենթարկում:*

Գետաշէնի անկման օրերին /29-30 ապրիլի/, բացի տասնեակ բնակիչներից, զոհուել են. **Կրպէեան Թաթուլ /Թալին/, Կարապետեան Արթուր /Երեւան/, Դանիէլեան Զարզանդ /Հրազդան/, Հայրումեան Բորիկ, Ճաղարեան Կարէն, Նազարէթեան Վալերի, Շահնազարեան Մարտիրոս:**

Մայիսի 1-ին Երեւանի Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ ազգահաւաք, որին մասնակցեցին ՀՀ բոլոր կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների ներկայացուցիչները: Հ.Յ.Դ. ներկայացուցիչ **Հրանտ Մարգարեանն** *իր ելոյթում ասաց, որ Գետաշէնի կռիւը միայն Գետաշէնի համար մղուող կռիւ չէ, այն հայրենիքի բռնագրաւուած մի հատուածի ազատագրման համար է: Այդ կռիւը հրահրուած է ոչ միայն գետաշէնցիների կամ Հայաստանի բնակիչների դէմ, այլեւ ամբողջ հայութեան: Այն Միացեալ Հայաստանի համար կռիւ է: Նա յաւելեց, որ Գետաշէնում կռւում են ժողովրդական ուժերը, բայց ոչ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: «Բաւական չէ, որ պայքարը Արցախում եւ Գետաշէնում չի կազմակերպւում պետականօրէն, մեր կառավարութիւնը՝ փորձելով ազատել ռուսական ստրկութիւնից, մեզ տանում է մէկ այլ՝ թրքական ենթակայութեան» (տե՛ս «Ազատամարտ», 3 մայիսի 1991):*

Պարբերականի նոյն թուի մէջ զետեղուած է ՀՅԴ Բիւրոյի եւ ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի յայտարարութիւնը, որում ի մասնաւորի ասուած է, որ Հ.Յ.Դաշնակցութիւնն իր քաղաքական, մարդկային եւ կազմակերպական ուժերը դնում է Հայաստանի Նախարարաց խորհրդի տրամադրութեան տակ՝ համոզումով, որ Հայաստանի իշխանութիւնները պետականօրէն եւ անյապաղ պաշտպան կը

կանգնեն Արցախի եւ Գետաշէն-Շահումեանի հայութեանը:

Ի պաշտպանութիւն Գետաշէնի՝ իրենց բողոքի ձայնն են բարձրացնում սփիւռքահայ կազմակերպութիւնները ու միութիւնները: Անուանի գործիչներն ու գրագէտները նամակներ են յղում Մոսկուա, դիմումներ ՄԱԿին եւ միջազգային այլ կազմակերպութիւնների, ԱՄՆի նախագահին եւ այլն: ՀՀ Գինն է կոչով դիմում հայ ժողովրդին, ԱՄՆի կոնգրեսականներն են բողոքում: Սակայն ամէն ինչ ապարդիւն էր:

Հրազդանի Սմբոյի *խօսքով* ***Թաթուլի*** *զոհուելուց յետոյ ամէն ինչ խառնուել էր: Գրեթէ ամբողջական խուճապ էր: Ջոկատներն սկսում են դուրս գալ: Հրազդանի ջոկատն էլ չարժուեց: Սմբոն ջոկատից ետ է մնում եւ երեք օր ու գիշեր գնում դէպի Կեփաս լեռը, ուր այդպիսի պահերին հաւաքւում են ջոկատները: Ի վերջոյ գալիս հասնում է Սարիսու եւ տեսնում, որ բոլոր ջոկատները դուրս են եկել: Տեղացիները եւ վերջին ջոկատը պիտի դուրս գային, եւ ինքը միանում է նրանց:*

Պօղոս Մեղրեանը *գտնում է, որ հակառակ տարածուած կարծիքի՝* ***Գետաշէնում թուլութիւն չի եղել,*** *եւ Գետաշէնն ու Մարտունաշէնն իրենք իրենցով չեն եղել, այլ մեր ջոկատները միշտ իրենց օգնել են: Գետաշէնի եւ Մարտունաշէնի վրայ Սարիսուից ինչ հրետակոծութիւն որ լինում էր, իրենք էլ գնում էին Մանաշիդի եւ Բուզլուխի բարձունքից Սարիսուին էին սկսում խփել: Այդպիսի դէպքեր յաճախ էին լինում: Շրջանի տղաները մի քանի անգամ գնացել են, 2-3 անգամ* ***Նովիկն է*** *անձամբ գնացել այնտեղ, մարտի մէջ մտել: Այսինքն՝ ամէն մարդ չէր կարող այնտեղով անցնել, որովհետեւ խիզախ մարդ պիտի գնար, որ գործն առաջ տանէր:*

Վահան Յովհաննիսեան. «Թշնամին կոխկրտում էր Գետաշէնը: Այդ գիւղը տեսաւ շատ բնակիչների խայտառակութիւնը, նուաստացումը, կեղեքումը, կորուստն ու տանջանքները: Բայց, այնուամենայնիւ, **չնայած հակառակորդի ուժային ակնյայտ գերազանցութեանը, մեր պարտութիւնն իբրեւ ռազմական չէր ընկալւում, այլ որպէս քաղաքական: Հայկական ղեկավա-**

րութեան քաղաքական սխալների արդիւնքն էր, որը խորհրդային ղեկավարութեանը դատարկ յոխորտանք էր հակադրել, դատապարտուածութեան գիտակցումն էր, որ կաթուածահար էր արել ոչ միայն Գետաշէնի, այլեւ Բերդաձորի եւ Հարեւան Հաղրութի չրջանի գիւղերի բնակչութեանը, որոնք ենթարկուեցին տեղահանման:

Ներքին հիմնախնդիրներ նոյնպէս կային: Գետաշէնը կարող էր պայքարի նախապատրաստուել միայն տեղացի ժողովրդական առաջնորդ ունենալով: **Գետաշէնի ողբերգութիւնը, սակայն, յատկապէս այն էր, որ այդ գիւղն այդպէս էլ չառաջադրեց դիմադրութեան իր առաջնորդին: Սակայն սա չի նշանակում, թէ Գետաշէնն ընդհանրապէս մարտիկներ չուներ:** Ո՛չ, նրանք կային: Սակայն քիչ էին: **Զկար պաշտպանուելու համաժողովրդական պատրաստակամութիւն: Դիմադրութեան ոգի չկար:** Եւ այդ պատճառաւ գիւղը դատապարտուած էր» *(**Վահան Ծովհաննիսեան**, նոյնը, էջ 56-57):*

***Պետրոս Մեղրեանի** հաւաստմամբ՝ առաջին այդ երկու տարիներին մութ ու հանելուկային բաներ չատ կային, որոնց թուում եւ Արցախի իշխանութեանց պահուածքը: Այդ օրերին գոնէ քաղաքավարութեան համար չէին հարցնում, թէ ինչո՞վ կարող են Շահումեանին օգտակար լինել:* «Ղարաբաղի իշխանութիւնը չէր ուզում մեզ օժանդակել: Դա մեզ համար պարզ էր: Խօսքը վերաբերում է 91-ի մայիսին: Կարծես թէ մեզ չէին ուզում ընդունել իբրեւ Արցախի մաս: Իմ մտորումներից եւ վերլուծութիւններից յաճախ եզրակացրել եմ, որ Արցախի իշխանութիւնները ի զօրու չէին ինքնուրոյն քայլեր անելու: Դա հաւանաբար մեծ երկրների քաղաքական լուծումների հետ էր կապուած եւ այդ բանը, բնականաբար, նրանք չէին կարող մեզ ասել»:

Ցաւօք, մեր ազգի ու հայրենիքի համար ողբալի իրադարձութիւնները ու դէպքերը յետագային եւս չարունակուեցին եւ գոյութիւն ունեն առ այսօր: Դա կարելի է բացատրել այսպէս կոչուած արտաքին գործօնով, որը հենուելով բարոյական եւ ազգային իմաստով անկայուն տարրերի վրայ, գործադրելով

ազդեցիկ միջոցներ, նրանց դարձնում է իր կամակատարը: Ազգային հաւատքի եւ հոգեւոր-քաղաքական դաւանանքի բացակայութեան պայմաններում տեղական քաղաքական ուժերը տարրալուծւում են՝ տրուելով իրարակեր հայրենակործան պայքարին: Թշնամութեան հասնող յարաբերութիւնները իրենց կնիքն են թողնում ժողովրդի հոգեբանութեան վրայ՝ վերածելով նրան կրաւորական զանգուածի: Խորհրդային իշխանութեան առկայութեամբ, մեծ տէրութիւնների քաղաքական ներթափանցումը հանրային յարաբերութիւնների ասպարէզ զրոյի է հաւասարեցնելով տեղական իշխանութեանց կամքը, դառնում թելադրող կամք: Այո՛, Արցախն ու Հայաստանը թէեւ հռչակեցին իրենց անկախութիւնը եւ միաւորումը, սակայն անկախ պետական միաւորի հոգեբանութիւնը պիտի ձեւաւորուի հաւանաբար դեռեւս տասնամեակներ յետոյ՝ Հայկական պետութեան հզօրացմանը զուգընթաց:

«ԱՐԱԲՈՆ» ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆՈՒՄ

Մարտունաշէնը գտնւում է Խանլարից 15 կմ հարաւ-արեւելք, կուրակ գետի աջակողմեան վտակներից մէկի ձորալանջին: Պատմական անուանումը մեզ չի հասել: Գիւղը նախկինում եղել է մեծ բնակավայր, սակայն երկրամասի այլ բնակավայրերի հետ դառարկուել է 18-րդ դարի վերջին եւ գաղթել Վրաստան: 1820-ական թուականներին չաւերի հետ Մարտունաշէնի 4 ընտանիքներ վերահաստատուել են գիւղում: Սբ Աստուածածին եկեղեցին գտնւում է գիւղի կենտրոնում: Գիւղում էր նաեւ Սբ Կիրակոս մատուռը, որը եղել է ուխտատեղի: Գիւղի շրջակայքում եղել են բազմաթիւ պատմական յուշարձաններ. Կուսանաց անապատը գտնւում է Մարտունաշէնից 3,5կմ հարաւ-արեւմուտք: Կուսակալի եկեղեցին, Միջի վանքը՝ Մարտունաշէնից 4կմ հարաւ, Երի վանքը Մարտունաշէնից 5 կմ հարաւ, կանգուն եկեղեցի է, աւերուած հանգստարանով:

Մարտունաշէնի հիմնական պաշտպանական ուժը «Արաբօ»

ջոկատն էր, որին մաս էին կազմում Եղեգնաձորի տղաները, եւ որին այնուհետեւ միացան ***Կարօտի*** *ջոկատի տղաները: Գետաչէնում կային բազմաթիւ ջոկատներ, իսկ Մարտունաչէնում փաստօրէն միայն նշեալ ուժն էր, որ մնաց մինչեւ վերջ:*

«Արաբոն» կարողացաւ ստեղծել պաշտպանութեան համակարգ: Մարտունաչէնն ունէր շտաբ, զինանոց եւ յենակէտեր: 5 յենակէտ ունէին: Ամենակարեւորը չորրորդ յենակէտն էր, ամենաբարձր դիրքը, որը հսկում էր ամբողջ գիւղին: Երկրորդ եւ երրորդ յենակէտերը Գետաչէնի ուղղութեամբ էին եւ կարող էին արագ օգնութեան հասնել միւսներին: Ամէն յենակէտում 4-6 մարտիկներ էին, սակայն, ընդհանուր առմամբ մարտիկներին տեղաբաշխում էին ըստ դիրքի կարեւորութեան:

Սպիտակի ջոկատն էլ ***Միդոյի*** *հրամանատարութեամբ այդտեղ էր, «Արաբոյի» կազմում:* ***Դուշմանի*** *վկայութեամբ Մարտունաչէնում ժողովուրդը եւ մարտիկները կազմել են մի ներդաշնակ ամբողջութիւն: Սկզբնական շրջանում տարաձայնութիւններ, հարկաւ, եղել են, երբ մինչ այդ տեղակայուած ջոկատները մարտական եւ յատկապէս բարոյահոգեբանական անպատրաստ վիճակով էին գալիս եւ կարճ ժամանակ յետոյ թողնում՝ հեռանում, առանց տեղի բնակչութեան վստահութիւնը դոյզն իսկ շահելու: Նրանք չէին գործում որեւէ ծրագրով եւ մարտավարութեան սկզբունքներով, այլ անիմաստ կռիւներ էին հրահրում, աւելորդ բախումների առիթ դառնալով՝ թիրախ էին դարձնում նաեւ ժողովրդին: Նրանք հեռանում էին գիւղից՝ անպաշտպան թողնելով ժողովրդին: Արաբոյական* ***Սասուն Յովհաննիսեանի*** *վկայութեամբ մինչեւ խմբի գալը Մարտունաչէնի շտաբում անստորագիր նամակ են գտնում այսպիսի բովանդակութեամբ, թէ իրենք՝ գիւղացիները չեն ուզում մարտիկների ներկայութիւնը, որ իրենք թուրքերի հետ հաշտ էլ ապրում են, եւ մարտիկները ճիշտ կանեն՝ թողնեն, հեռանան: Գրութեան մէջ, որն ըստ երեւոյթին պատրաստուած է եղել թուրքերի ձեռօք, հայհոյանքների տարափ կար տղաների հասցէին: Այդ ժամանակ խուզարկել եւ գտնել հնարաւոր չէր սադրանքի հեղինակին:*

«Արաբօ» ջոկատը կարճ ժամանակ անց վայելում է տեղիս բնակչութեան վստահութիւնն ու յարգանքը: Տրամադրութեան այդ փոփոխութիւնը տեղի է ունենում նոյեմբերան կռուից յետոյ: Իսկ մինչ ա՞յդ: Առաջին օրն էին Մարտունաշէնում եւ տեսան, որ թուրքերը գիւղի մէջ ազատ ման են գալիս, չրջում, առեւտուր անում: Թուրքերից մէկը մի անգամ հանդիպում է «Արաբոյի» տղաներից ***գորիսցի Մելիքին*** *եւ ասում.*

- Սալա՛մ ալոքիւմ:

- Ալոքի՛ւմ սալամ,- պատասխանում է Մելիքը:

Մելիքը եկաւ եւ ***Մանուէլին*** *ասաց.*

- Գիտե՞ս ինչ եղաւ:

- Ի՞նչ եղաւ:

- Թուրքը կողքովս անցաւ եւ ասաց.«Սալամ ալոքիւմ»:

- Բա դու ի՞նչ ասացիր:

- Ասացի՝ «Ալոքիւմ սալամ»:

Այդ դէպքի առիթով Մանուէլն ասաց.

- Վե՛րջ: Այսուհետեւ է՛լ չենք թողնում այստեղ թուրք մտնի:

Ժողովրդին կանչեց, ժողով արեց եւ ասաց.

- Այսուհետեւ ում տանը թուրք տեսնենք՝ գնդակահարելու ենք: Թուրքերի հետ է՛լ ոչ մի կապ պիտի չլինի:

Այդ օրուանից ժողովուրդը ոգեւորուեց եւ մարդիկ աւելի ինքնավստահ էին: Առանձին մանը դէպքեր էին լինում, ասենք, գնացել են թուրքերից ձիեր գողացել, բերել, որովհետեւ ուրիշ փոխադրամիջոց չունէին եւ ջոկատի տղաներն սկսեցին ձիերով ման գալ, լեռնային տարածք էր:

Բացի թշնամին, կենսապայմանները ծանր էին, սնունդ չկար, եւ երբ շատ էին սովածանում, օգտւում էին անտառի բարիքներից, սակայն դա հարցի լուծում չէր, պիտի մի բան անէին: Ղուշչի-Արմաւիրի եւ Մարտունաշէնի միացեալ ագարակը /ֆերմա/ գտնւում էր երկու գիւղերի արանքում: Երբ սկսուեց չարժումը եւ հայոց գիւղերն սկսեցին հայաթափել, Ղուշչի-Արմաւիրը մնաց թուրքերի հսկողութեան տակ: Ագարակի մօտ էլ երկու գիւղերի միացեալ պահեստներն էին: ***Մանուէլը*** *եկաւ*

այն պահին, երբ թուրքի կովերը պիտի գնային բերէին: Դրանք մի ժամանակ եղել էին Մարտունաշէնինը եւ թուրքերը տարել էին: Մանուէլն ասաց.

- Էսպիսի բան չի լինի: Մարտունաշէնը միայն մի կով ունի, Սերոժի կովը, իսկ Մարտունաշէնի գոմերը դրանք դատարկել, տարել են: Պիտի մեր գիւղի բոլոր տների բակերից անասունի բառաչ լսուի: Հնար չկայ, պիտի կովերը քշենք, բերենք:

- Հարց չկայ, կամանդիր:

Ջոկատի տղաներով հաւաքուեցին եւ մտան թուրքի գոմերը: **Եղիշ դայու** տղաներն էլ իրենց հետ էին: Կովերը քշեցին եւ բերեցին:

Մի անգամ էլ որոշեցին պահեստի կարօֆիլը տեղափոխել գիւղ: Ուտելու բան չկար, ի՞նչ անէին: Բերեցին եւ տեղեկացրին **Շահէն Մեղրեանին**, որ գան տանեն: Շահէնը ռուս զինուորական մեքենաներ ուղարկեց: Մանուէլը տղաներին կատակով հրահանգեց, որ էդ զինուորականների վախը չափեն: Միանգամից աւտոմատները պահած՝ դուրս եկան ռուսների մեքենաների վրայ: Մայորը խուճապահար գոռաց.

- Այդ մենք ենք, ի՞նչ էք անում, Շահէնն է մեզ ուղարկել...

Նոյնիսկ ձիերով գնում էին Շահումեան եւ ալիւր, հագուստ բերում: Դա արդէն մեծ համարձակութիւն էր, որովհետեւ եթէ կորովի մի թշնամի ճանապարհը փակէր, կենդանի մարդ չէր մնայ:

Թուրքերը կատաղած էին եւ ուզում էին ամէն կերպ Գետաշէնն ու Մարտունաշէնը հայաթափել: Մի օր Ադրբեջանի «Խաբար»-ից /«Լրաբեր»/ իմացան, որ որոշում են հանել հայերի տները փողով առնել, ամէն տան դիմաց յատկացրել են 30 հազար ռուբլի: Դա էլ չօգնեց: Նրանց նախագահն այս երկու գիւղերն անուանում էր «օձի բներ»: Նա շատ էր ուզում դրանք քանդել:

Մինչեւ Մարտունաշէնի մեծ կռիւը թուրքերի հետ եղել են բախումներ: Ձիշարժան է 90-ի Նոյեմբերի 30-ի կռիւը: Թուրք ՕՄՕՆականները Գետաշէնից եկան մտան օդակայան: Պատուեցին եւ թողեցին գնացին: Ոչ մի դիմադրութիւն չեղաւ:

*Յաջորդ օրը եկան, ուզեցին մտնել Մարտունաշէն: Այդ պահին պահադիրքի վրայ էին **Դուշմանը**, Շէնգաւթցի **Կարէնը եւ Գեւորգը՝ Զոնչը**: Տեսան, որ մօտ 40 թուրք իջնում են դէպի գիւղ: Դուշմանն ասաց, թէ գնում է տղաներին տեղեկացնելու: Այդտեղ մօտերքում մի չինուԹիւն կար՝ Բելի Դոմ էին ասում: Դրա մօտ հաւաքուած էին թուրք ՕՄՕՆականները: Դուշմանը վազելով իջավ ներքեւ: Մանուէլն այդ ժամանակ այնտեղ չէր: Նրա մայրը վատացել էր եւ նոյեմբերի 28-ին թռել էր Երեւան: Բառացիօրէն մէկ օր անց, հաւանաբար իմանալով, որ հրամանատարը բացակայում է, յարձակուել էին գիւղի վրայ: Դուշմանը հասաւ գիւղամէջ, տեսաւ **Սպիտակցի Միղոյին**: Միղօն հարցրեց.*

- Ո՞ւր ես գնում:

- Արի, արի՛, կ՛իմանաս:

*Միղօն վազեց տուն, զէնքը վերցրեց եւ հետեւեց Դուշմանին: Եկան գիւղի դէմի դիքը եւ տեսան, որ ՕՄՕՆ-ը գալիս է դէպի գիւղ: Դուշմանը հարցրեց՝ ովքե՞ր էք: Շրջուեցին եւ տեսաւ, որ իրօք թուրքեր են: Կռիւը սկսուեց: Երեք րոպէ չանցած, Միղօն եկաւ հասաւ: Թուրքերն իրենցից ընդամէնը 20-30 մետր էին հեռու: Ու այդպէս կռիւը սկսուեց: Մինչ այդ Դուշմանի եղբայր **Դուշմանչիկը** պատահեց ճամփին: Հարցրեց.*

Ո՞ւր ես գնում:

- Վազի՛ր չտաբ եւ տղաներին ասա, որ թուրքերը լցւում են, թող գան օգնուԹեան:

Կռիւն արդէն սկսուած՝ տղաները եկան: Յիշեցնենք, 90 թուականի Նոյեմբերի 30-ն է:

*ՓոխհրաձգուԹիւն սաստկացաւ, աւելի ակտիւ էին մեր մարտիկները եւ առաւելուԹիւնը գգացուեց յատկապէս երբ Դուշմանչիկն ու **Ճուտը** /Արթուր/ հասան: Հարցրին, թէ ուր են թուրքերը: Դուշմանն իրենց ասաց.*

- Վերից գալիս են, դուք վեր բարձրացէք եւ դէմներն առէք:

*Այդպէս կռիւը գրեթէ աւարտին էր հասնում: Եկել էին նաեւ **Մելիքը** եւ **Վալոդ դային**, որ զոհուեց այդ իսկ մարտում: **Դուշմանի** ասելով՝ եկել եւ ամբողջ հասակով կանգնած հարց-*

նում էր.

- Քէ՛ մատաղ, ցոյց տուէ՛ք տեսնեմ, ըշտե՞ղ են թուրքերը:

- Վալոդ դայի, դիրքի արի է՛լի, էստեղ են:

- Զէ՛, ցոյց տուէք:

Էդ ասելուն պէս խփեցին:

Յետոյ մթնշաղն ընկաւ եւ ռուսները եկան եւ հրամայում էին.

-Սդավայտես /յանձնուեցէք/::

Արջ Էդօն էլ այդտեղ էր: Մեր կողմից ռուսներին հակադարձ զգուշացում եղաւ.

- Ձեզ լաւ պահեցէք, թէ չէ ձեր վերջն էլ վատ կը լինի:

Եւ նրանց գլխի վրայով մի հերթազարկ անցաւ: Ռուսները հասկացան, որ իրենց հետ կատակ չեն անում եւ ասացին.

- Նո՛ւ լաղնա, ռեբեատա, դաւայտէ նէ բուդիմ դրատցա: /Լա՛ւ, տղաներ, եկէ՛ք չկռուենք /:

Եւ խնդրեցին գոնէ թողնեն դիակներն ու գերուն տանեն: 28 դիակ էր, դրանք էլ վերցրին: Այն ժամանակ զէնք չկար, շատ քիչ էր եւ արդէն մեր մարտիկներն ունեցան 90 թուրականի զէնքերը: Մի ռուս եւ թուրք եկան, մեր տղաներն էլ օգնեցին բարձելու դիերը եւ տարան:

Մի քանի օր անց **Մանուէլը** եկաւ: Դուշման. «Դրանից յետոյ մենք սկսեցինք թուրքերին մեր կամքը թելադրել: Այդ տարածքում տիրապետողը, տօն տուողը մենք էինք: Մարտունաչէնից մինչեւ Գեօլ-Գեօլ 20 կիլոմետր է: Մենք այդ ամբողջ տարածքը պահում էինք, եւ մեր կողմը միանգամայն հանդիստ էր: Ամէն տեղ մե՛նք էինք դրուելեան տէրը եւ բոլոր տեղերը ման էինք գալիս»:

Լարուած վիճակը չարունակւում է բաւականին երկար ժամանակ, մինչեւ որ մարտերին սկսում են միջամտել խորհրդային կարմիր բերետաւորները: Սկսւում է «կալցօ» գործողութիւնը: Դրանք պարզապէս խժդժութիւններ էին, որոնց նպատակը ազգային անկախ պետականութեան համար պայքարող ուժերի ոչնչացումն էր: Նրանք յարձակումներ էին գործում հայ գիւղերի պահակիրքերի վրայ: Այդպիսի յարձակումներից

մէկի ժամանակ, 1991 թ. ապրիլի 19-ին խորհրդային կարմիր բերետաւորներն անակնկալ գրոհով գրաւում են մեր մի պահակէտը եւ գերում մի արաբոյականի: Մարտունաշէնին օգնութեան հասած **Թաթուլ Կրպէեանը** յարձակւում է... խորհրդային յատուկ ջոկատի եւ նրա հրամանատար գնդապետի վրայ, որի մասին արդէն պատմել է **Մհեր Յարութիւնեանը: Մանուէլի** պատումն այս է: **Շահէն Մեղրեանի** կապը Գետաշէնի հետ էր, քանի որ Մարտունաշէնում կապի համապատասխան միջոցներ չկային: Կարմիր բերետաւորների հետ կռուի ժամանակ Շահէնն էր կապուել Գետաշէնում գտնուող Թաթուլի հետ, որպէսզի վերջինս տեղում փորձէր խաղաղ ճանապարհով կոնֆլիկտը հարթել: Հասնելով մեր մարտիկներին՝ Թաթուլն ասում է, որ պիտի գնայ կարմիր բերետաւորների հրամանատար գնդապետի հետ բանակցութիւններ վարի: Մանուէլը փորձում է նրան համոզել, որ եթէ մօտենայ հակառակորդին, անմիջապէս իրեն պատանդ են վերցնելու ու նրա թիկունքում պատսպարուելով՝ հանգիստ մօտենալու են ԲՄՊ-ին, որից իրենք հեռացել էին մեր դիրքի վրայ գրոհելու ընթացքին: Անհրաժեշտ էր բերետաւորներին ամէն կերպ կտրել իրենց մարտական տեխնիկայից, որին խփելու զէնք Արաբոյականները պարզապէս չունէին: Եւ մինչ Մանուէլը փորձում էր իր մարտիկներին դիրքաւորել նպաստաւոր եղանակով, տաքարիւն Թաթուլը չի դիմանում եւ սպիտակ դրօշ պարզած մօտենում է կարմիր բերետաւորներին: Մանուէլը որոշում է ուղղակի բաց դաշտի վրայով յարձակուել ԲՄՊ-ի ուղղութեամբ: Տեսնելով Թաթուլի արարքը եւ յարձակուող ջոկատին, ռուսները բաց են թողնում նախապէս գերած Արաբոյական մարտիկին: Մանուէլը պահանջում է նաեւ հենակէտում առգրաւուած զէնքերն էլ վերադարձնել: Այդ պահին Թաթուլն արդէն հասնում է կարմիր բերետաւորներին եւ հանելով նռնակը՝ դուրս է քաշում դրա օղակը: Բերետաւորների մօտ խառնաշփոթ է սկսւում եւ օգտուելով դրանից՝ Արաբոյականները գերի են վերցնում գնդապետին եւ տեղափոխում չտաբ: Գնդապետին նորից բաց են թողնում եւ նա մեկնում է Շահու-

մեան: Հանդիպում է Շահէն Մեղրեանին եւ ասում.

–Շահէն, գիտե՞ս, ես գերի ընկայ:

Շահէնն էլ իրը անտեղ է ամէն ինչից, հարցնում է.

–Ինչպէ՞ս թէ, ո՞վ է ձեզ բռնել:

– Լաւ կը լինէր իմանայի: Կարծես թէ հայեր էին, բայց չգիտես ինչու, իրենց արաբ էին համարում:

Գնդապետը «Արաբօ» բառը արաբ էր հասկացել:

Երկու շաբաթ անց Գնդապետը զօրէջքի մարտական 80 մեքենաներով եկաւ Մարտունաշէնի վրայ: Լուր բերեցին **Մանուէլին**, թէ Սպիտակ տունը, այսինքն՝ Մարտունաշէնի կոլտնտեսութեան գրասենեակը թուրքերը գրաւել են: Մանուէլն ու **Կարէնը** յարձակւում են Սպիտակ տան վրայ եւ կրակ բացում: Շէնքի մօտ կուտակուած խորհրդային զինուորներն անմիջապէս մտան տուն: Մօտեցած միւս տղաներն էլ միացան եւ սկսեցին հարուածել հակառակորդին: Վառեցին շէնքի մօտ կանգնած մարտական մեքենան՝ հակառակորդին դնելով դժուարին դրութեան մէջ: Զոհեր տուած խորհրդային զինուորները խնդրեցին իրենց ազատ թողնել որ հեռանան: Թոյլ տուեցին եւ զինուորները գիւղից ետ քաշուեցին: Այնուհետեւ մօտեցան հակառակորդի միւս մեքենաները եւ սկսեցին կրակել եւ հինգ արկ պայթեց մօտակայքում: Վեցերորդից վիրաւորուեցին Մանուէլը եւ էլի 4 մարտիկներ եւ մէկ գետաչէնցի: Մանուէլին հասցրին Գետաչէնի հիւանդանոց: Մինչ այդ, նա իր մօտ կանչեց **Դէդին /Սիմոն Աչիգեօզեան/** եւ հրամանատարութիւնը մի քանի օրով յանձնարարեց նրան, մինչեւ փոխարինող ուղարկելը: Մանուէլը զգուշացաւ երիտասարդի նշանակել՝ որոնք կարող են անհարկի կռիւներ սկսել: Ապրիլի 20-ին վիրաւորներին տեղափոխեցին Երեւան:

Ապրիլի 28-29-ին Գետաչէն-Մարտունաշէնի ուղղութեամբ սկսուեց խոշոր յարձակում:

ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՈԳԻՆ ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆՈՒՄ

Գետաչէնի եւ Մարտունաշէնի միջեւ տարածքային հեռաւորութիւնը մի քանի կիլոմետր է, սակայն հոգեկան կորովի եւ

ոգու տարբերությունը, մասնակիցների վկայությեամբ, չատ մեծ է եղել: *Մարտունաշէնցիների պատուասիրությունը չատ բարձր էր, թէեւ երիտասարդներ այդ գիւղում գրեթէ չկային: 28 հոգի էին ռազմիկները, տեղացի կամ Հայաստանից, կիներեխաներ էլ կային: Կանայք զէնքը ձեռքներին օգնել են ռազմիկներին:*

Գնալով ճնշումը Մարտունաշէնի վրայ ուժեղանում էր: Հէնց այդ ժամանակ, «Արաբօ»ի վրայ թշնամու ճնշումը թուլացնելու նպատակով անդրանցային գործողութիւն է իրականացւում. 6 մարդուց բաղկացած հեծեալ ջոկատը գիշերը Գետաշէնի մօտից անցնում է թշնամու թիկունքը 10-15 կիլոմետր եւ պայթեցնում «Երկաթէ կամուրջը»: Դրանից յետոյ մարտական բախումները միաւժամանակ դադարում են:

Սակայն զգացւում էր, որ թշնամին նոր բան է նախապատրաստում:

Մարտունաշէնի մեծ կռուին չեն մասնակցել ո՛չ ***Մանուէլը,*** *ո՛չ* ***Դուշմանը****: Արդէն նշել ենք, որ Մանուէլը վիրաւորուել էր:*

Մինչ այդ ուզում էր հրամանատարութիւնը ***Մարսէլի*** *վրայ թողնել, սակայն վերջինս վճռական չգտնուեց եւ* ***Դէդին*** *թողնելով պատասխանատու՝ Մանուէլն ապրիլի 23-ին դուրս եկաւ:*

Արարատ Սահակեան. **«Դէդը** լաւ մարդ էր, պրոֆեսոր, եւ իր հետ ամէն ինչի մասին կարող էիր խօսել: Համով մարդ էր: Էդ ժամանակ Մարտունաշէնում ամենաջիգեարով տղերքը «Արաբոյից»՝ **Արջն էր, Մուզմուզը, Տլոտը, Դուշմանչիկը**, բայց նրանք չէին կարող հրամանատար լինել, չահել, տաքարիւն տղաներ էին: Իսկ Դէդը հասուն, կրթուած եւ դատող մարդ էր: Ուրեմն՝ բոլորից լաւ Դէդը կարող էր հրամանատար լինել: Լաւ էլ խզախ մարդ էր»:

Դէդը խոստացաւ, որ ամէն ինչ Մանուէլի ասածի նման կը լինի: Սակայն յաջորդ օրն իսկ ամէն ինչ փոխուեց. Գետաշէնը, Մարտունաշէնը բլոկադայի ենթարկեցին, օդը փակուեց եւ Մանուէլը չկարողացաւ փոխարինող ուղարկել:

«Արաբօն» միակ ուժը չէր Մարտունաշէնում: Ընթացքում

Շահէն Մեղրեանը *տեղեկութիւն էր ստացել, որ ուզում են Գետաշէնն ու Մարտունաշէնը հայաթափել: Ուրուհեցին* ***Կարօտի Ջոկատն*** *ուղարկել Մարտունաշէնին օգնութեան: Ջոկատի հետ էին* ***Պետօն*** */փոխհրամանատար/,* ***Հրաչը, Արմէնը, Անդրանիկ Յովակիմեանը,*** *արթիկցի* ***Մկրտիչը*** */Մարշալ/,* ***Հրազդանի Արարատը, Բաղրամեանի Մանուէլը, Սամուէլ Երանեանը (Սմբուլ)...*** *ՕՄՕՆը պատրաստւում էր իրականացնել «Կալցո» գործողութիւնը: Ապրիլի 18-ին Պուհեանի խումբը* ***Կարօտ Մկրտչեանի*** *գլխաւորութեամբ ուղղաթիռով Շահումեանից հասաւ Գետաշէն: Նրանք ներկայացան տեղիս հրամանատար* ***Թաթուլ Կրպէեանին,*** *որի մասին արդէն խօսք եղել է: Թաթուլը քաջատեղեակ էր, որ այս խմբի մարտիկները նուիրեալներ են, մարդկային բարեմասնական յատկանիշներով, եւ կամենում էր նրանց իր մօտ պահել: Նա ամէն կերպ յորդորում էր նրանց մնալ Գետաշէնում:* ***Կարօտն*** *ասաց.*

- Մենք կուսակցական յանձնարարութիւն ունենք, պիտի զէնքով, զինամթերքով գնանք Մարտունաշէն, զօրակցենք «Արաբոյին», մեզ այդպէս է հրամայուած:

Խնդիր առաջացաւ, կուսակցական ժողով արեցին եւ ի վերջոյ որոշում եղաւ, որ պիտի գնան Մարտունաշէն:

Կարօտի *ջոկատը, Թաթուլից «պոկուելով», եկաւ* ***Մարտունաշէն****: Այնտեղ իրենք էին եւ «Արաբօն» էր: Բացի իրենցից, տեղում կային մարտունակ բնակիչներ:*

Հասնելով Մարտունաշէն՝ խրամատ փորեցին: Երբ նոր էին խրամատից դուրս եկել, յաջորդ րոպէին տանկը ուղիղ նշանառութեամբ մի արկ արձակեց ճիշտ խրամատի մէջ: Փառք Աստուծոյ, տղաները փրկուեցին ակնյայտ կորստից: Խրամատն աւերուեց, ցրիւ եկաւ:

Ապրիլի 23-ին խորհրդային բանակի մի տանկ եկել եւ չուռ էր եկել Մարտունաշէնում: Գործողութիւնն ՕՄՕՆը ապրիլի 24-ին պիտի սկսէր, սակայն տանկը որ չուռ եկաւ, այն յետաձգուեց: Մարտունաշէնի վերեւը գոմեր կային, տանկերը եկել եւ կանգնել էին այնտեղ:

Նախորդ օրն ամենքն անհանգիստ սպասումների մէջ էին:

Իրիկունն իջաւ Մարտունաշէնի վրայ: Պռոշեանցիներից ***Հրաչ Մուրադեանը եւ Անդրանիկ Յովակիմեանը*** *հերթապահում էին դիրքերում: Նրանք գիշերով տեսան, որ մեծ աւտոշարասիւն է գալիս դէպի Գետաշէն: Նոյնը նկատում են նաեւ այլ դիրքերից: Կուշչի-Արմաւիրի կողմից տեխնիկայի չարասիւն էր գալիս եւ ապա՝ հետեւակը: Վաղ առաւօտեան արդէն դրանք հասել էին գիւղ: Անմիջապէս տեղեկացրին տեսածի մասին: Այդչափ մեծաքանակ զօրքի եւ տեխնիկայի առկայութիւնն այլ բան չէր նշանակում, բացի բնակավայրերը հայաթափ անելուց: Հասկանալի է լինում խնդիրը, երբ ամէն անգամ բախւում են հայն ու թուրքը: Սակայն գործողութեան մէջ էին ներգրաւուած խորհրդային զօրքերն իրենց տեխնիկայով: Ամենահեշտը բնակավայրը լքելն ու անտառներում պատսպարուելն էր: Սակայն պատերազմն իր օրէնքներն ունի, որը պահանջում է նաեւ բախումներ աւելի զօրաւոր ուժի դէմ: Պատուի իրողութեան ոտնահարումը կարող է ազգին եւ բանակին դարձնել անմարտունակ առհասարակ: Հոգեբանօրէն դժուար էր առճակատումը նաեւ խորհրդային ուժի դէմ, որը հայի էնթագիտակցութեան մէջ նոյնացւում էր ռուսներին: Ընդհանուր վիճակն այս էր. տանկերը եկել չրջապատել էին, մօտաւոր հաշուով՝ 28, իրենք էլ հազիւ մի 30 ազատամարտիկներ են: Վերեւը ուղղաթիռներն են պտտւում:* ***Դէդը*** *հարցրեց* ***Արարատին****.*

- Արօ, հը, ի՞նչ կասես, Աֆղանստանին նմանւո՞ւմ է:

- Հա, նմանւում է: Միայն թէ այնտեղ մենք էինք գիւղը չրջապատում, իսկ այստեղ մեզ են չրջապատել:

Մի խումբ հայ մարտիկներ՝ զինուած աւտոմատներով եւ կարօտի գնդացիրով ընդդէմ խորհրդային հսկայ բանակի: ***Կարօտի, Պետոյի*** *նման մարդկանց համար երկար ժամանակ չպահանջուեց հանելու իրենց վճիռը. «Բնակավայրը չենք թողնելու առանց կռուի: Եթէ մեռնելու ենք՝ լաւ է մեռնենք կռուով եւ պատուով»: Վճիռը կայացնելուց յետոյ ներկայացան* ***Սիմոն Աչիգէօզեանին****: Նոյնական էր նաեւ* ***Դէդի եւ «Արաբոյի»*** *վճիռը: Հայոց զօրաջոկատների կամային այս որոշումն աննախադէպ իրողութիւն էր Արցախեան պայքարի ըն-*

թացքում: Բաժանուեցին երկու մասի. մէկը գնաց Սարիսուի կողմից եկող ճանապարհի պաշտպանութեան համար, իսկ ***Պետօն, Արարատը, բաղրամեանցի Մանուէլը, Դէդը, Մարշալը, Դուշմանչիկը*** *գնացին Գետաշէնի կողմից եկող ճանապարհը փակելու: Առաւօտեան ժամը 9:30-10-ը կը լինէր: Թուրքերն արդէն վրայ էին տալիս Մարտունաշէնին: Մարտաֆիլմերում պատկերուածի նման նրանք «յաղթական քայլարշաւով» գալիս էին դէպի Մարտունաշէն: Գրեթէ առանց կրակոցի վերցրել էին Գետաշէնը՝ մտածում էին Մարտունաշէնն էլ են վերցնելու: Երկու հակատանկային ական ունէին՝ Արարատը մէկը դրեց ճանապարհի վրայ, բայց օղակը չէր քաշում, պիտի հաստատ պարզ լինէր, թէ տեխնիկան մտնում է, թէ ոչ:* ***Մարշալ Մկրտիչին*** *ասաց.*

– Գնա՛, տես էդ ԲՄՊՆ գալի՞ս է:

Մարշալը գնաց, բայց չրջադարձին չհասած ետ եկաւ ու ասաց.

– Հետեւակն է գալիս:

Ափսոս էր այդ ականը հետեւակի վրայ փչացնել եւ դրանցից մէկը տուեց Մարշալին, միւսը ***Պետոյին*** *ու վազեց դարպասի վրայից իր աւտոմատը վերցնելու: Այդ պահին մի ՕՄՕՆական դէմը դուրս եկաւ եւ հրամայեց՝ կանգնի՛ր: Դէ ի՞նչ կանգնիր, ինքն իր գլխի տէրն է՝ թռաւ, ու վրայից հերթապարկն անցաւ: Այդ պահին Մկոյի ականն ընկաւ, ուզում էր վերցնել եւ հերթապարկից գնդակը դիպաւ իր վատ տեղին: Այդ պահից սկսուեց կռիւը: Իրենց հետեւակը տանկերից առաջ էր անցել. տանկերն ու զրահամեքենաները յետեւից էին գալիս: Մեր տղաները բաւականին կոտորեցին, թուրքերից սպանուածներն ու վիրաւորները բազմաթիւ էին: Եւ դա բաւական երկար՝ ժամ-ժամուկէս տեւեց: Թուրքերն ստիպուած իրենց հետեւակի մնացորդը ետ քաշեցին եւ սկսեցին տները հերթով պայթեցնել:*

Տղաները դեռ այն մտքին էին, թէ սովետական բանակ է, գիւղում էլ կին-երեխայ են՝ չեն կրակի, իսկ եթէ գիւղ մտնեն՝ փողոցային մարտի կը բռնուեն: Կարծես երկրորդ աշխարհամարտի պարտիզանական կռիւները լինէին, սկսեցին չղերը

*բենզին լցնել: Քիչ յետոյ տղաները ձայն տուին, որ ԲՄՊ է գալիս: **Արջը, Մուզմուզը եւ Արմէնը** զէնքերը վերցրին եւ շտապ շարժուեցին դէպի շտաբ, որ Մարտունաշէնի ծայրի տունն էր: Տեսան կալանաւոր փոխադրող մի մեքենայ, եւ դրա հետ միասին զինուորների, որոնք անհոգ եւ ինքնաբաւ վիճակում էին: Կողմերի միջեւ հեռաւորութիւնը մի 50 մետր կը լինէր: Դէ ի՞նչ պիտի անէին՝ սկսեցին կրակել: Դրանք թափուեցին գետնին, եւ յարձակումը կանգ առաւ: Մի ԲՏՌ եկաւ, հասաւ դիակներին ու կանգնեց: Մի հակատանկային զէնք կար, որով **Մուզմուզը** մի ԲՏՌ էր խփել: Այդ ԲՏՌին էլ այդտեղ խփեց: Դրանից յետոյ մի ԲՄՊ եկաւ եւ ճանապարհը տեսադաշտից փակեց, որպէսզի յետեւից կարողանան դիակները հաւաքել: Իրենց դիակները հաւաքեցին, եւ առժամանակ ամէն ինչ հանդարտուեց, կրակոցներ չկային:*

Մինչեւ կէսօր թշնամին անկարող էր մէկ քայլ անգամ առաջ շարժուելու: Սակայն գաղտնիք չէր, որ այդ մարտը այդպէս երկար չարունակուել չէր կարող: Առաջին դէրքում ընդամէնը 13-14 հոգով էին: Դէդը մի պահ ասաց, որ բարձրանում է տանիք, այնտեղից համակարգելու կրակը: Ընկերները յորդորեցին այնտեղից չկրակել, որպէսզի չյայտնաբերուի: Դուշմանչիկ: «Բարձրացաւ, մի որոշ ժամանակ կոորդինացնում էր մեր կրակը: Մի շատ ծանր պահի Դէդը սկսեց երգել: Մի պահ մենք էլ չփոթեցինք.. կատաղի կռիւ է, եւ յանկարծ լսում ենք հայրենասիրական երգ: Մէկ-երկուսը սկսեցին ձայնակցել Դէդին: Եւ կամաց-կամաց տեղում գտնուող 14 հոգիս միացան երգին: Պատկերացնելն անգամ դժուար է, թէ ինչ էր կատարուում. 14 մարդ ոգեւորուած, բարձր հայրենասիրական երգեր են երգում յարձակուող հակառակորդից 30-40 մետր հեռաւորութեան վրայ: Հակառակորդը, որ թերեւս նման բան չէր տեսել, ոչ էլ մտքով կ՚անցնէր, պատկերացրէք ո՞նց կը կատաղի: Պատասխանը չուշացաւ. այնպիսի սարսափելի «կարկուտ» սկսեց թափուել մեզ վրայ, որ հասկացանք, որ ամէն ինչի դիմելու են այդ 14 մարդուս ոչնչացնելու համար: Երգը ոգեւորիչ էր եւ Դէդը՝ մոռացած չկրակելու յորդորները, կրակ բացեց դիպուծ-*

կահարի հրացանով: Ամէն կրակելուց յետոյ ձայն էր տալիս. «Տղերք, մէկին էլ չրխկացրի»: Ներքեւից պահանջեցինք, որ Դէդը չուտ իջնի ցած: Նա չհասցրեց դա անել. այդ պահին տանկի արկը հարուածեց ուղիղ տանիքին, որն ամբողջութեամբ օդ թռաւ: Ձայն տուեցինք՝ Դէ՛դ, Դէ՛դ: Մի քանի հոգով նետուեցինք դէպի այդ տունը: Տան մէջ Դէդին չգտանք, եւ միւսներին ձայն տուեցի. «Շուտ, տնից դուրս ենք գալիս, հիմա երկրորդ արկը կը խփի»: Դուրս նետուեցինք տնից եւ նոյն պահին երկրորդ արկը պայթեց: Շարունակում էինք Դէդին որոնել: Ինձ թուաց, թէ Դէդի ձայնն եմ լսում. «Ես այստեղ եմ»: Տանիքից մի փոքրիկ մաս էր պահպանուել: Ձգուեցի վերեւ եւ լսեցի Դէդի ձայնը. «Դուշմանչի՛կ, այստեղ եմ»: Տանիքի հէնց այդ մասում էլ գտայ Դէդին՝ արեան եւ փոշու մէջ: Ասաց, որ վիրաւոր է, բայց լաւ է իրեն զգում: Խնդրեցի տեղից չշարժուի, մինչեւ մի աստիճան գտնեմ: Աստիճան գտայ, բայց երրորդ արկը հարուածեց ուղիղ այն տեղին, ուր Դէդն էր: Հարուածի ալիքն ինձ մի կողմ շպրտեց: Քիչ անց ուշքի եկայ եւ բարձրացայ: Դէդի ճակատագիրն արդէն պարզ էր»:

Այդտեղ այլեւս մնալ հնարաւոր չէր, եւ ետ քաշուեցին յաջորդ տան մօտ: Նրանց կանգնած տեղն արդէն տասնեակ տանկերի արկերն էին պայթում: Հրանօթային կրակը մեթոդիկ ճշտութեամբ խփում էր այն տներին, որտեղ մեր մարտիկներն էին: Հազիւ էին հասցնում նահանջել: Հասկանալի էր, որ սա արդէն վերջն է: Հակառակորդը որոշել էր գիւղը գետնին հաւասարեցնելով հետեւակի համար ճանապարհ հարթել: Լաւ է, որ բնակիչների մի մասին տեղափոխել էին համեմատաբար ապահով տեղ: Հակատանկային միակ հին հրացանն անզօր էր տանկերի դէմ: Ցետագայ դիմադրութիւնը կը նշանակէր գիւղի բնակչութեան անիմաստ նահատակութիւն, կոտորած: Մնացեալ ժողովրդի հետ համաձայնելով՝ որոշեցին նրանց թողնել գիւղում, քանզի կռուողները խորհրդային զինուորներն էին, թուրքեր չէին եւ նրանց չէին կոտորի: Ժողովրդի հիմնական մասը եւ վիրաւոր մի մարտիկ քարանձաւում էին, իսկ մարտիկները մտածում էին, թէ ինչ ճանապարհով դուրս գան բոլոր

կողմերից չրջապատուած գիւղից: Միայն զէնք-զինամթերք վերցրած զառիվայր մի գետակի հունով սկսեցին վեր բարձրանալ: Սա մի ուղի էր, որ լեռնագնացների համար էլ բարդ էր, բայց ճար չկար:

Մարչալ. «Ես արդէն վիրաւոր էի, ինձ գիւղացիներից մէկի տանն էին թողել: Դէպի զոհուելուց յետոյ գիւղացիները մօտենում են եւ տղաներին ասում, որ եթէ դուք թողնէք դուրս գաք, մի գուցէ գիւղը չոչնչացնեն: Տղաներն էլ մտածում են, որ եթէ գիւղացիներն այդպիսի բան են ասում, մենք էլ զրահատեխնիկայի դէմ ոչինչ չունենք եւ որքան էլ աւտոմատով տանկին կրակես՝ բան չես անի, հետեւակն այլեւս չէր մտնում գիւղ, ուրեմն խելամիտ կը լինի թողնել գիւղը: Ինձ թողեցին գիւղացիների խնամքին, եւ երեկոյեան կողմ տղաները դուրս եկան»:

Այսպիսով՝ ապրիլի 30-ին Գետաչէնն ու Մարտունաչէնն ընկան:

ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՅԵՏՈՑ

*Մեր մարտիկների դուրս գալուց յետոյ թուրքերը երկու օր վախենում էին գիւղ մտնել: Դիրքերը թողնելուց յետոյ մեր ջոկատները եկան Բուզլուխ, եւ այդտեղ հանդիպեցին **Շահէն Մեղրեանին:** Շահէնը հարցրեց.*

- Կարո՞ղ էք երկրորդ անգամ մտնել եւ մեր մոռացած բանները բերել:

*Նորից մտան Գետաչէն, եւ բերեցին ձայնակապի սարքաւորումն ու զէնքերը: **Մուզմուզն էր, Արմէնը, Արջ Էդօն:***

Մուզմուզ. «Շահէնի յանձնարարութեամբ՝ անտառապահ **Արմէնի եւ Արջի** հետ Կեփաս սարով գնացել եւ մտել ենք Մարտունաչէն, որն արդէն դատարկ էր, եւ յետոյ մտանք Գետաչէն: 91-ի մայիսի 3-ին էր: Այդտեղ դեռ տղաներ կային՝ Ալաշկերտի ջոկատից, Հրազդանի տղաներն էին, Մալաթիայի ջոկատն էր՝ **Վահան Զատիկեանի** հրամանատարութեամբ: «Օղակ» գործողութեան հետեւանքով նրանք մնացել էին Գետաչէնում եւ ոչ մի տեղից ելք չունէին դուրս գալու: Իրենց հետ պայմանաւորուեցինք, որ ուշ երեկոյեան պիտի դուրս գանք եւ սարե-

րով հանենք Շահումեան: Այն ճանապարհով, որ գիւղերը յանձնել եւ նահանջել էինք, այդ նոյն ճանապարհով պիտի գնայինք: Ժողովրդին ու ջոկատներին զէնքերով հանդերձ դուրս պիտի հանէինք Շահումեան»:

Գետաշէնի բնակիչներին որեւէ կերպ հանելու կարեւոր հարցը բաց էր մնում: Յատկապէս բնակչութեան ակտիւ մասը դաւաճանութեան պարագային չէր կարող փրկուել: Բացի այդ, անյայտ էր Գետաշէնի վիճակը, այնտեղ տեղակայուած Հայաստանի ջոկատների վիճակը: Որոշուեց այդ նպատակով յատուկ խումբ ստեղծել: Խմբի ուղեկցորդը **գետաշէնցի եղիշն էր**:

Տեղում մնացածները փորձել են դուրս գալ ստեղծուած վիճակից: Եղել է գործելու երեք տարբերակ: Առաջին՝ կռուով դուրս գալ բնակչութեան հետ միասին: Սա նոյնը կը լինէր, ինչ ինքնասպանութիւնը: Բացի թուրքերից, գիւղում խորհրդային բանակի մէկ գունդ էր տեղակայուած եւ պարզ էր, որ կռուով ջոկատները եւ բնակչութեան ակտիւ մասը չեն կարող դուրս գալ: Երկրորդ տարբերակը յանձնուելն էր, մի բան, որը չէր մտածում անել որեւէ մէկը: Մնում էր միայն մնալ տներում եւ սպասել յարմար առիթի: Նման առիթն օգնական ուժի գաղտնի մուտքն էր Գետաշէն:

Եղիշ դայու առաջնորդութեամբ մարտական բաւականին մեծ խումբը գիշերն անցնելով թուրքաբնակ գիւղերով, հասնում է Գետաշէն: Թուրքերն այնտեղ արդէն իրադրութեան տէրն էին եւ ակնյայտ էր, որ գետաշէնցիների գործուն մասը անկարող է լինելու փրկուել:

Գիւղի բնակչութիւնն անասելի ուրախութիւն զգաց՝ տեսնելով իրենց օգնութիւն եկած ազատամարտիկներին: Որոշուեց մաս առ մաս դուրս բերել գործուն զանգուածը եւ ինքնապաշտպանութեան մարտիկներին: Օգնական ջոկատը կարողացաւ երեք անգամ նշեալ մարդկանց դուրս բերել Գետաշէնից, հասցնել Շահումեան եւ կրկին դառնալ: Եւ այդ գործում ամէն գովասանքից վեր էր **Եղիշ դային**: *Ըստ Դուշմանչիկի՝ Եղիշ դային էլ Մանուէլի հետ նոյն օրը՝ ապրիլի 19-ին վի-*

բաւորուել էր գլխից: Ընդ որում՝ գետաչէնցիներից միայն ինքն էր իր տղաների հետ օգնութեան եկել Մարտունաչէնին: Գետաչէնցիների հետ միասին Շահումեան տեղափոխուեցին նաեւ մարտունաչէնցիները, որոնք հասել էին Գետաչէն եւ այնտեղից մարտիկների ուղեկցութեամբ հասան Շահումեան: Գետաչէնի ամբողջ բնակչութեանը հնարաւոր չէր դուրս բերել եւ մնացեալին թողեցին խորհրդային զօրքի վերահսկողութեան տակ: Գիւղերը գրաւելուց յետոյ եւ մասամբ միջազգային աղմուկի ազդեցութեան տակ ռուս զինուորները կանխեցին յետագայ բռնութիւնները: Խորհրդային զօրքի խնդիրը տարածքի հայաթափումն էր եւ ոչ թէ բնակչութեան ոչնչացումը: Այդ նոյն զօրքի հոգածութեամբ բնակիչներին ուղղաթիռներով տեղափոխեցին Հայաստան կամ Ստեփանակերտ: Բախտորոշ այդ պահին Գետաչէնում է եղել նաեւ ***Իգոր Մուրադեանը*** *(աւելի մանրամասն տե՛ս «Հետաքննութիւն», թիւ 17-24, 2008 թ.):*

Գետաչէնցիներին դուրս բերող խմբի մէջ, բացի ***Եղիշ դայուց****, եղել են* ***Արջ Էդօն, Մուզմուզ կարէնը, Տլոտը, բժիշկ Գէորգ Գրիգորեանը****:*

Մուզմուզ. «Երկրորդ անգամ գետաչէնցի ***Ղաչաղ Եղիշի*** հետ գնացինք, մտանք Գետաչէն: Մենք Գէորգին ասացինք, որ մեզ հետ վերադառնայ Շահումեան, բայց նա մնաց, քանզի հիւանդներ կային, եւ ինքը նրանց հետ պիտի գար: Այդպէս մնաց ու բռնուեց թուրքերի կողմից»:

Շահէն Մեղրեանի *հրամանով մարտիկները մեր զոհեալների՝* ***Դէդի, Թաթուլի եւ Արթուր Կարապետեանի*** *դիակները հանում, բերում են: Դէդին անմիջապէս դուրս բերողը* ***Ցակոբ Խիդիրեանն էր****:*

Պետրոս Մեղրեանի *համոզմամբ՝* ***Թաթուլի եւ Դէդի*** *դիակները հանելիս* ***Շահէնը*** *գնացել է մի քայլի, որն առաջին հայեացքից գուցէ եւ խելամիտ չթուայ: Նա վարձատրութեամբ երկու ՀՄՄ է ուղարկում Գետաչէն եւ դրանցով Թաթուլի եւ Դէդի եւ մնացեալ զոհեալների դիակները բերում են Շահումեան: Շրջանի ամբողջ բնակչութիւնն էր եկել հրաժեշտ*

տալու հերոս մարտիկներին, որոնք առաջին զոհերից էին, եւ պահը չատ ազդեցիկ էր: «Թէ ինչ դումար էր տուել Շահէնը ռուսներին՝ ես չգիտեմ: Սակայն փաստ է, որ այդ օրերին, երբ Խորհրդային Միութիւնը տակաւին կար, դա դժուար գործ էր: Շահէնը կարողանում էր արագ, ակնթարթօրէն նման վիճակներին ճիշտ կողմնորոշուել»:

Վալտերի *ասելով՝ Շահումեանի տղաները Գետաշէնից մեր զոհեալների դիակները բերեցին ոչ թէ Սարիսուի, այլ Գանձակի ճանապարհով եւ հասցրեցին Շահումեան:* «Դա մեծ գործ էր: Շահէն Մեղրեանը կարողացաւ կազմակերպել նաեւ ամբողջ ժողովրդի, մարտիկների դուրսբերումը Գետաշէնից Շահումեան: Շահէնի եւ իր մերձաւոր ընկերների չնորհիւ ժողովուրդն առանց զոհերի հասաւ Շահումեան»:

Բժիշկ ***Հենրիկ Սեփեանի*** *խօսքով՝ մայիսի 1-ին բժիշկների մի խումբ* ***Զօրի Բալայեանի*** *հետ միասին ռազմական ուղղաթիռով թռչում են Գետաշէն: Եղանակը թռիչքային չէր եւ ուղղաթիռը սխալմամբ վայրէջք է կատարում Շահումեանում: Այդտեղ զինուորականները մերժում են նրանց Գետաշէն տեղափոխել, բայց խոստանում են վիրաւորների յետեւից զրահամեքենաներ ուղարկել: Բժիշկներից 4-ը մնում են տեղում, իսկ 3-ը մեկնում Մանաչիդ՝ վիրաւորներին առաջին օգնութիւնը ցոյց տալու: Զրահամեքենաները մայիսի 2-ին հասնում են Գետաշէն: 5 վիրաւորի հասցնում են Շահումեան, իսկ 12-ից աւել ծանր վիրաւորների թողնում են Գետաշէնում, քանի որ զրահամեքենաներով վտանգաւոր էր նրանց տեղափոխելը: Գետաշէնում մնացել էին մօտ 100 թեթեւ վիրաւորներ եւ 29 խոչտանգուած պատանդներ: Եւ Երեւանից Գետաշէն է ուղեւորւում բժիշկների եւս մէկ խումբ:*

Մարշալ. «Գօտկատեղիցս ցած մասից էի վիրաւոր: Իրիկունն ինձ ձիով տեղափոխեցին Գետաշէն: Թուրքերն այդ ժամանակ Գետաշէնում չէին. նրանց Գետաշէն մտնելուց յետոյ Հայաստանից աղմուկ էր եղել եւ շտապ նրանք դուրս էին եկել: Մայիսի երկուսին էլ **Իգոր Մուրադեանն** էր եկել որպէս պատգամաւոր, եւ բացի այդ, ինչպէս յուշում է իրադարձութիւնների ընթացքը՝

թուրքերը Հայաստանի իշխանութիւնների հետ պայմանաւորուածութիւն ունէին, որ հայերն այդտեղից պիտի դուրս բերուեն: Ինձ ամսի 31-ի գիշերը տարան Գետաշէն: Ջիուն կապած՝ բաւականին ծանր վիրաւոր էի, իսկ վիրաւորներին չէթողեցին Սարիսուի ճանապարհով ուղղակի տանել Շահումեան, այնտեղ մորեզոյն բերետաւորներն էին եկել մեր ետեւից, վտանգաւոր էր, եւ մեզ խանլարով, Նաւթալանով պատացնելով տարան Շահումեան: Ժողովրդին էլ Հայաստանի իշխանութեանց համագործակցութեամբ դատարկեցին այդ բնակավայրերից: Երբ մեզ Գետաշէնից դուրս բերեցին, այդտեղից մինչեւ խանլար լիքը տեխնիկա էր եւ մեզ ուղեկցող ռուս մայորը գժուել էր, թէ էս մի բուռ ժողովրդի դէմ ահռելի քանակութեան զրահատեխնիկան, այսքան զօրքն ինչո՞ւ են հանել, մանաւանդ՝ նորագոյն տեխնիկա: Ռուս զնդապետներից մէկը խոստովանեց, որ եթէ հայերի պէս մի քանի դումարտակ ունենային (ի միտ ունէին մեր ջոկատները), իրենք Աֆղանստանում պարտութիւն չէին կրի»:

Արարատ Սահակեան. «Գիշերը սխալմամբ թուրքի գիւղ մտնելուց եւ դուրս գալուց յետոյ առաւօտն արդէն Շահէնն իմացաւ եւ աւտոբուս ուղարկեց: Ասել էր՝ գնացէք տղերքին բերէք: Եկանք, լցուանք ՊԱԶիկը, գնացինք Գիւլիստան: Գնացինք Գիւլիստան՝ **Զինաւորի** տունը: Բաղնիքն արդէն վառում են, ախպեր ջան, մտա՛նք՝ մէկ-մէկ լողացանք, մաքրուանք, ախպեր ջան, փոչուց, կեղտից: Յետոյ՝ բա եկէք: Ելանք վերեւ, երկար սեղանը գցած, նստանք, կերանք, խմանք, ախպեր ջան, հոգնած մեռնում ենք: Քնեցինք, հանգստացանք ու դրանից յետոյ գնացինք Բուզլուխ»:

Րաֆֆի Յովհաննիսեանը *մեզ է տրամադրել 1991-ի մայիսին, Գետաշէնի անկումից անմիջապէս յետոյ, Շահումեանի շրջան իր կատարած ուղեւորութեան ընթացքում բազմաթիւ փախստականների եւ շահումեանցի ազատամարտիկների հետ ունեցած հարցազրոյցների տեսաժապաւէնը, որում բազմաթիւ խնդիրներ են լուսաբանուած. նախ, թէ ինչ ուժերի ճնշման կամ անմիջական յարձակումների հետեւանքով տեղի ունեցաւ հայոց այդ բնակավայրերի կորուստը եւ ժողովրդի դուրսհա-*

նումը: Բոլորը չեչոում էին թուրք ՕՄՕՆի եւ ռուսական բանակի միացեալ գործունէութիւնը հայկական բնակավայրերը մէկը միւսի յետեւից վերացնելու նպատակով. նախ՝ Կամօ, Ազատ, Կուշչի-Արմաւիր, ապա՝ Գետաշէն, Մարտունաշէն եւ յետոյ՝ Մանաշիդ, Էրքէջ Բուզլուխ... Բոլոր դէպքերի ժամանակ կիրառուել է նոյն մարտավարութիւնը. ռուսական (խորհրդային) ծանր տեխնիկան մտնում է հայոց գիւղերը՝ իբր հայերին պաշտպանելու նպատակով: Այնուհետեւ կազմալուծում է ինքնապաշտպանական ամէն համակարգ եւ յատկապէս վստահութիւն ներշնչելով՝ համոզում է, որ հայերը պիտի զէնքի չդիմեն: Այսպէս վարուում են նաեւ Գետաշէնի ժամանակ, թէեւ Մարտունաշէնը դիմում է ինքնապաշտպանութեան եւ դաժանօրէն բնակավայրը հողին է հաւասարեցուում: Սակայն այդպիսի մի քանի ինքնապաշտպանական մարտեր կը ստիպէին ռուսներին աւելի յարգանքով վերաբերուել մի ամբողջ ազգի հետ: Թէեւ կար արդէն Սիւնիքի հերոսական ինքնապաշտպանութեան օրինակը, սակայն այն իբրեւ դիտելիք, գաղափարական իրողութիւն հասած չէր հայ ժողովրդի ներկայիս հասարակ զանգուածներին եւ սերունդների դաստիարակութեան մէջ չէր կիրառուել: Դա է պատճառը, որ ռուս զինուորական գործիչները կարողացան այդքան հեշտութեամբ խաբել գետաշէնցիներին եւ ի սկզբանէ հայկական այդ բնակավայրերը հեշտութեամբ մատուցել թուրքերին: Սա Գորբաչովեան քաղաքականութեան պտուղն էր: Րաֆֆի Յովհաննիսեանի տեսաժապաւէնն ի յայտ է բերում իրենց վիճակը նկարագրող փախստականներին, որոնք գրեթէ մերկ, ամէն ինչ թողած՝ դուրս են եկել իրենց բնակավայրերից: Նրանք բոլորը համոզուած էին, որ եթէ չլինէր խորհրդային կամ ռուսական գործօնը, իրենք թուրքերի հետ մեն-մենակ մնալով կարող էին շատ լաւ իրենց պաշտպանել:

Րաֆֆի Յովհաննիսեանը զրուցել է նաեւ **Շահէն Մեղրեանի** եւ այլ ազատամարտիկների հետ, որոնք բոլորն էլ վճռականութեամբ էին լցուած, որ մինչեւ վերջ պիտի մնան եւ պաշտպանեն իրենց հայրենիքը: Րաֆֆիին հիացրել էր մի հայ պատանի.

– Ինչպիսի՞ն է շահումեանցիների տրամադրուածութիւնը. նրանք կը կռուե՞ն յանուն իրենց հայրենիքի:

– Ես բոլոր շահումեանցիների մասին բան ասել չեմ կարող, սակայն իմ մասին կարող եմ. որ այստեղ ծնուել եմ, այստեղ էլ պիտի մեռնեմ:

*Այսպիսի վճռականութիւնը յատուկ էր ամբողջ շրջանին: Րաֆֆին Շահումեանում հանդիպել է բազմաթիւ մարդկանց, որոնց թւում՝ **Բենիկ Ղուլեանին**: Շահէնը Րաֆֆիին Գիւլիստան էր ճանապարհել ժողկրթբաժվար, շրջանի ազգային խորհրդի նախագահ **Վալերի Բաղեանի** ուղեկցութեամբ:*

Բենիկ Ղուլեան. «Շտապեցի գիւղամէջ: Ինձ հարցնողները Շահէնի հայրական տանը կից դպրոցի բակում էին, որը լիքն էր նոր ժամանած ազատամարտիկներով: Նրանց մի մասը բեռնատար աւտոմեքենայ էր բարձում, մնացեալը նստած էին որտեղ պատահեր: Ազատամարտիկ **Սամուէլ Երանեանը** հաճելի ձայնով ազգային երգեր էր երգում՝ հարմոնով ինքն իրեն նուագակցելով: Տեսախցիկով մի թիկնեղ, պարարտ մարմնով, կլոր երեսով, սեւ բեղերով մի երիտասարդ էլ նկարահանում եւ ձայնակցում էր: Բաղեանն ինձ յայտնեց, թէ՝ Ձեզ տեսնել ցանկացողը հէնց նա է: Դադարեցնելով նկարահանումը՝ Րաֆֆին ծանօթացաւ ինձ հետ: Պարզուեց, որ նա ԱՄՆ-ում ծանօթացել է տղայիս՝ **Արտակի** հետ, որը որպէս «Ակունք» համոյթի պարող՝ 1987 թ. հիւրախաղերի էր գնացել ԱՄՆ: Եւ ահա Րաֆֆին ցանկացել է ծանօթանալ ինձ հետ»:

ՀԱՐՈՒԱԾ ՈՒՄՈՒԴԼՈՒԻՆ

«Օղակ» գործողութեան շրջանակներում թուրքերը կարողացան տիրել Գետաշէնին եւ Մարտունաշէնին եւ պատրաստւում էին էլ աւելի առաջ գնալու: Ակնյայտ էր, որ եթէ հայկական ուժերը չփոխէին գործելակերպը՝ թուրքերն օրաւուր պիտի ընդարձակէին իրենց զաւթումները, մանաւանդ նրանց համար նպաստաւոր իրաւրուութիւն էր ստեղծուած եւ խորհրդային իշխանութիւնները տրամադրուած էին Արցախն ամբողջովին, թէկուզ հայաթափման եղանակով, ենթարկելու

Ադրբեջանի իշխանութեանը:

***Շահէն Մեղրեանը**, որ ղեկավարում էր ՀՅԴ «Լեռնապար» կոմիտէն, ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի անդամ եւ Շահումեան գործուղուած **Վահան Յովհաննիսեանի** հետ միասին ծրագրում են հարուածել Ումուդլուին: Թարթառի ափին թուրքական մի գիւղ էր, որը վեր էր ածուել ադրբեջանական ժողճակատի բաժանմունքի եւ զինեալ գրոհայինների յենակէտի: Թուրքերն աղէն 100 տարի էր, ինչ հաստատուել էին այս գիւղում, արագ բազմացել էին, եւ այս բնակավայրը վաղուց ի վեր սպառնալիք էր Մարտակերտի հիւսիսային բնակավայրերի համար: Անհրաժեշտ էր վերացնել ռազմավարական կէտ հանդիսացող այդ բնակավայրը եւ ազատուել գլխացաւանքից:*

Գետաշէնը եւ Մարտունաշէնը կորցնելուց յետոյ Շահումեանի շրջանի վիճակն աւելի էր ծանրացել եւ շրջանը պահող հայոց ջոկատների խնդիրն աւելի էր բարդացել: Սպասւում էին ծանր մարտեր: Ռազմավարական դիրքերին եւ ճանապարհներին տիրելու պայքարն արդէն աւելի լարուած բնոյթ պիտի ընդունէր: Ազգաբնակչութեան տրամադրութիւնը փոխելու եւ ռազմիկներին ոգեշնչելու մի եղանակ կար՝ կատարել որեւէ յաջող գործողութիւն, վրէժխնդիր լինել կորցրած բնակավայրերի համար:

***Վահան Յովհաննիսեանի** խօսքով՝ **Հրանտ Մարգարեանը** եւ պաշտպանութեան միւս կազմակերպիչները, ի պատասխան «Օղակ» գործողութեան, ծրագրեցին հարուածներ հասցնել Ղարաբաղի ամբողջ տարածքում: Արցախի շրջաններում (Տող եւ Խոջալու) այդ գործողութիւնները ղեկավարում էին Հրանտ Մարգարեանն ու նրա մարտական համախոհներ **Ասկոլկա Աչոտը, Ագօն (Արկադի Կարապետեան) եւ Սամօն (Սամուէլ Բաբայեան)**, որոնք ներկայացնում էին դաշնակցական «Անտառ» կոմիտէն: Հիւսիսում գործը յանձնարարուել էր դաշնակցական «Լեռնապար» կոմիտէին, որը ղեկավարում էր **Շահէն Մեղրեանը**, ուր ինքը գործուղուել էր ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան կողմից:*

*Շարժման սկզբից էլ Ումուդլուն վտանգ էր ներկայացնում չրջակայ հայոց բնակավայրերի համար: Այն ոճրագործների բոյն էր: Սակայն չահումեանցիների ճամբարից բաւականին հեռու էր եւ անտառներով ու լեռնային արահետներով այնտեղ արագ հասնելու համար անհրաժեշտ էր տեղացի ուղեկցորդ: **Վահան Յովհաննիսեանի** հաւաստմամբ, Շահէնի մարտակերտցի ծանօթները ուղեկցորդ ուղարկեցին: Նա հիւսիս-ղարաբաղեան գիւղերից էր: Նրան ընդունեցին **Զինաւոր դայու տանը**, որտեղ ապրում էր նաեւ Վահանը: Ծերունին ծանօթանալով ուղեկցորդին՝ իր անվստահութիւնը հաղորդեց եւ խորհուրդ տուեց նրա հետ ճանապարհ չգնալ: Զէին են-թադրում, որ Զինաւոր դայու կանխատեսումը պիտի իրականանայ եւ յայողութիւն պիտի չունենան:*

- Այդ սրիկային մի՛ հաւատա: Ներանց գիւղից ոչ մի պիտանի մարդ դուրս չի եկել:

- Ի՞նչ էք ասում, Զինաւոր դայի, այդ ի՞նչ անվստահութիւն է:

Զինաւոր դային ակնոցների վրայից արհամարհական հայեացք նետեց:

- Ի՛նճ լսիր,- խիստ նետեց ծերունին:

Նա ցնցող մի պատմութիւն արեց, թէ ինչպէս 1918 թուականին գիւլիստանցիները՝ Զինաւոր դայու հօր՝ Պօղոսի հրամանատարութեամբ, պատժիչ արշաւանքի ելան լկտիացած թուրքական բէկերի դէմ: Ներանց ուղեկցորդը Ղարաբաղի հիւսիսում գտնուող այդ նոյն գիւղից էր, որտեղից եւ սոյն ուղեկցորդը: Այդ ուղեկցորդի չիմարութեան եւ ապաշնորհութեան պատճառով գիւլիստանցիները դարանն ընկան, որից յետոյ ստիպուած եղան նահանջել՝ սպանուածներին իրենց հետ տանելով:

- Այնպէս որ, որդիս, աւելի լաւ կը լինի, եթէ այդ զզուելիների հետ յոյսեր չկապէք. կը քաշեն, գլուխ չէք հանի:

Վահանը միայն ծիծաղում էր, թէ անհիմն անհանգստութիւն է: Այն ժամանակներից դար է անցել: Հիմա ամէն ինչ կարգին կը լինի: Հէնց մթնեց, ջոկատն առաջ շարժուեց լեռներով:

«Երբ ադրբեջանական պահակէտից գնդացիրն անսպասելիօրէն սկսեց հայկական փոքրիկ (9 հոգիանոց) ջոկատի շուրջ հնձել վաղորդեան ցօղից թաց թփերը, տղաներին միայն այն փրկեց, որ ադրբեջանական գնդացրորդն իրենցից առաւել վախեցաւ: Փա՜ռք Աստուծոյ, առանց զոհերի պրծանք, եթէ չհաշուենք մէկի թեթեւ մի վէրքը եւ չան օրի յոգնութիւնը: Լեռներում հեշտ չէ հետապնդումից խուսափելը, անգամ վախկոտ ուղեկցորդի հետ: Ահա այդպէս կրկնւում է պատմութիւնը ու ինքնավստահութեան համար հասցնում քթներիս»:

Առաջին անյաջող յարձակումից յետոյ թուրքերն զգօնացել էին, ուժեղացրել պաշտպանութիւնը եւ դարձել առաւել զգուշաւոր: Այնուամենայնիւ, որոշւում է նոր հարուած հասցնել: «Յոյսներս այն էր, թէ պիտի աշխատի մեր տարածած ապատեղեկատուութիւնը. ողջ Մարտակերտով լուր էր պտտւում մեր կողմի կորուստների եւ այն մասին, թէ մենք այլեւս ոչ մի դէպքում Ումուդլու չենք մտնի: Այդ լուրերը հասան ադրբեջանցիներին՝ նրանց պարուրելով ինքնագոհութեամբ ու քնեցնելով զգօնութիւնը»:

Երկրորդ անգամ ուղեկցորդի մանրակրկիտ ընտրութիւն կատարուեց՝ չհետեւելով պատահական մարդկանց խորհուրդներին: Նա ***Վաղուհասցի Կեաժ*** *(կարմրաչէկ)* ***Հայկն էր****, ում ուղարկել էր Դաշնակցութեան Ղարաբաղի կազմակերպութիւնը: Նա ջոկատն աննկատ հասցրեց քնած գիւղ:*

Հարուածը սարսափելի էր: Ահաւոր որոտով նրանց հարուածեց հրանետը: Նպատակը նուաճուած էր: Գիւղից ձգուեց փախստականների չարանը, որոնց տեղափոխեցին ուղղաթիռներով: Այդ հարուածից յետոյ գիւղն այլեւս ուշքի չեկաւ՝ դադարելով սպառնալ հիւսիսային Արցախի անվտանգութեանը (տե՛ս ***Վահան Յովհաննիսեան****, նոյնը, էջ 60-61):*

Անդրանիկ այս գործողութիւնը պիտի իրականացուէր սրընթաց, անակնկալ եւ տպաւորիչ եղանակով, որպէսզի լինէր արդիւնաւոր: Գրոհային ջոկատի մէջ ընդգրկուած էին փորձառու եւ նուիրեալ մարտիկներ, որոնց անունները ներկայումս մարդու հոգում սրբազան դող են առաջ բերում: Զինուած էին

ինքնաձիգներով, ձեռքի նռնակներով, գնդացրով, նռնականե-տով, հրանետով: Ջոկատը նոյն օրը հասնում է Հաթերք եւ տեղում խանդավառութիւն առաջ բերում: Շատերը կը ցան-կանային մասնակից դառնալ ատելի բնակավայրին վերջ տալու գործողութեանը: Յատկապէս մեծ էր լարուածութիւնը Հաթեր-քի, Զագլիկի եւ միւս կողմից՝ Ումուդլուի միջեւ: Ումուդլուն նախկինում էլ հարուածներ էր ստացել եւ թուրքերը դուրս էին եկել բնակավայրից, սակայն ռազմավարական դիրքը դրդել է թուրքերին կրկին ուժեղացնել այն՝ դարձնելով ՕՄՕՆի եւ խորհրդային օգնական զօրքի յենակէտ: Կատարւում է նախ որակեալ հետախուզութիւն եւ Հաթերք հասնելու երրորդ օրը վաղ առաւօտեան սկսւում է նշեալ զինատեսակներից միաժա-մանակեայ կրակը ՕՄՕՆական յենակէտի վրայ: Յարձակումն անկասելի էր եւ թուրքերն ու խորհրդային զօրքը չդիմանալով՝ թողնում են բնակավայրը: Գործողութիւնն աւարտւում է կա-տարեալ յաջողութեամբ:

*Ըստ **Առաքել Սարգսեանի (Էջմիածին)**՝ Շահումեանում անձնագրերն էին ստուգում, եւ իրենք խնդիր ունեցան այդ ընթացքում: Անհրաժեշտ էր մի նշանաւոր գործողութեամբ հասկացնել, որ տեղում բացի իրենցից ուրիշ ուժ էլ կայ, եւ ՕՄՕՆն ամէն կամայականութիւն իրականացնելու ի զօրու պիտի չլինի: Պիտի հարուածի տակ առնէին Ումուդլու գիւղը: Մարտակերտում կազմակերպուած խմբեր գրեթէ չկային, այն պիտի կատարուէր Գիւլիստանից: Մայիսի 23-ին դուրս են գալիս եւ տեղ հասնում նոյն օրը: 11 հոգի էին: Իրենց հետ էր նաեւ Շահէնի եղբայր **Պօղոսը**: Այս գործողութեամբ նախ պիտի խափանէին ՕՄՕՆի մտադրութիւնը, եւ միաժամանակ բարձ-րացնէին շրջանի բնակչութեան հայրենասիրական ոգին, հատատն առ ազգային ազատագրական պայքարը:*

*Վերջին հրահանգներն ստացան **Վահան Յովհաննիսեանից**:* «Ամսոյս 24-ին տեղ ենք հասել, անցել ենք գաղտնի: Սակայն չանցած 2 ժամ՝ ամբողջ տարածքն իմացաւ: Մայիս 24-ին պիտի կատարէինք այդ գործողութիւնը: Մեզ հետ էին. **Հայկը (Հայրապետ Աբրահամեան,** ք. Էջմիածին, կապիտան, պատաս-

խանատու), **Կարօտը, Պետօն, Վաչէ Ռոստոմեանը (դնդացրորդ,** զոհ. 1991-ի դեկտ.- Ա.Պ.), **Յովիկը՝ Ոսկեհատից, Սիմոնն ու Միչիկը՝ Երեւանից, Սօս Սարգսեանը՝ Գորիսից, Արարատը՝ Հրազդանից, Փոքր Հրանտը** (Պարսկահայք):

*24-ի գիշերը պիտի չարժուէին երկու կազմով. մէկը Զագլիկի կողմից պիտի չրջանցէր, իսկ միւսը՝ սարերով: Առաջին օրը յաջող չստացուեց. **Կարօտի** նռնականետի ասեղն էր կոտրուել, **Վաչէի** գնդացիրը լռեց: Իսկ նպատակի մէջ մտնում էր նաեւ Ումուդլուի բնակիչների մէջ երկիւղ առաջացնելը:*

Երկրորդ օրը գործողութիւնը յաջող ստացուեց, լուսադէմին վերադարձան:

Գլուխ իններորդ
ԷՐՔԷՋ, ԲՈՒԶԼՈՒԽ, ՄԱՆԱՇԻԴ

«ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

*Գետաշէնի անկումից յետոյ Հայ Պարիսում տագնապ էր տիրում: Գիւղացիները զգում էին, որ յաջորդն իրենք են: Ընդհանուր տրամադրութիւնն անկումային էր: Թուրքերն, ի հարկէ, տեղեակ էին այս տրամադրութիւններին եւ չյապաղեցին գիւղի վրայ ուժեղացնել ճնշումը: Գիւղի պաշտպանութիւնն աննպաստ դիրքի պատճառով առաւել դժուար էր եւ պահանջում էր մեծաքանակ զինուժ: Ադրբեջանցիները քչել-տարել էին անասունները՝ գիւղը զրկելով գոյութեան միջոցներից: Եւ գտնուեցին մարդիկ, որոնք համագիւղացիների գոյութիւն իսկական թշնամու դէմ ուղղելու փոխարէն, մարդկանց հրահրեցին **Շահէնի** դէմ ելնել:*

*Վճռական գործողութիւնների արդիւնքում յաջողուեց հարեւան թուրքական երկու գիւղերից ոչխարի հօտ խլել: Սակայն միջամտեցին ԽՍՀՄ ներքին գործոց նախարարութեան զօրքերի «խաղաղարարները»: Երկարատեւ ծանր մարտ սկսուեց: **Վահան Յովհաննիսեան.*** «Խոր գետահովտի եզրին ձախից տեղաւորուել էր ՕՄՈՆը, իսկ աջից՝ ռուսական զրահամեքենաները: Եթէ դրանց անձնակազմերն իմանային, որ հակատանկային զէնք չունենք, պարզապէս կը փոշիացնէին մեզ, քանի որ մեզ չէր կարելի նահանջել, մեր ետեւում այդ դժբախտ ու աղքատ գիւղն էր: Դա իսկական հնոց էր, ու բոլորս կը զոհուէինք, եթէ դիւլիստանցի տղաների հետ մեզ օգնութեան չհասնէր Շահէնի կրտսեր եղբայր **Պօղոսը**: Տեսնելով, որ օժանդակութիւն ենք ստացել, չհամարձակուեցին ճակատ առ ճակատ դուրս գալ: Այս տեսնելով՝ վճռական գրոհի չդիմեց նաեւ ադրբեջանական հետեւակը»:

*...Հայ Պարիսի տակ 1991ի մայիսի 24-ին զոհուել են. **Ներսէս Բերբերեանը, Մայիս Յովհաննիսեանը, Ատոմ Մելյոյեանը, Աշոտ Խաչատրեանը, Սարգիս Մաթեւոսեանը:** Զրահամեքենան կտրել էր նրանց պաշտպանուող ջոկատից: Մարտիկները*

կռուեցին մինչեւ վերջին փամփուշտը՝ հրաժարուելով յանձնուել: «Նրանց փրկելու գործը չյաջողուեց, չնայած ձեռնարկած յուսահատ գրոհին, որի ընթացքում գրաւեցինք առջեւի լերկ բլուրը: Բայց մեզ վրայ բառացիօրէն կրակ էր թափւում նռնականետներից: Մենք պառկած էինք կրակի տակ, գետնին սեղմուած, իսկ բլրից այն կողմ սպանում էին մեր ընկերներին, ու մենք չկարողացանք նրանց օգնել...»

Հայ Պարիս գիւղի մարտից յետոյ, խորհրդային զօրքերի հրամանատարութեան հետ փոխյարաբերութիւնները կտրուկ վատանում են: «ԽՍՀՄ Ներքին գործոց նախարարութեան ներքին զօրքերի գումարտակի չտաբից մեր գործակալը նախազգուշացրեց մօտակայ օրերին «գրոհայինների» (այսինքն՝ մեր) դէմ պատժից խոշոր գործողութիւն նախատեսելու մասին: Այն ժամանակ հանդարտեցման գործողութիւններ էին տարւում Ղարաբաղի չատ չրջաններում, որ կրում էին «անձնագրային ռեժիմի ստուգում» անունը»:

Եւ ահա 1991ի յունիսը: Շահումեանի չրջանի հայ բնակչութեան «դուրս մղման» բացայայտ ձախողումից անհանգստացած, տեսնելով, որ իշխանութիւնն իր ձեռքում է կենտրոնացրել աննկուն **Շահէնը**, **որին անհնար էր թէ՛ կաշառել եւ թէ՛ վախեցնել**, *թշնամին վճռեց լայնածաւալ գործողութիւն իրականացնել՝ «գրոհայիններին վնասազերծելու» համար: Ընդորում, այդ ժամանակ նոյնպէս հիմնական կեղտոտ աշխատանքը ռուսների վրայ դրեցին: Սակայն նախքան նրանք կը հասցնէին յարձակման անցնել՝ Շահէնն ուղիղ կապի մէջ մտաւ նախատեսուած գործողութեանը մասնակից ստորաբաժանումների հրամանատարութեան հետ եւ զգուշացրեց, որ եթէ չրջանի տարածք ոտք դնի թէկուզ մի ադրբեջանցի՝ լինի ՕՄՕՆական, թէ ժողովրդական ճակատի գրոհային, կը սպանուի: Եթէ չրջան մտնեն միայն խորհրդային զօրքերը, ապա զինեալ դիմադրութիւն չի լինի: Բենիկ Ղուլեանն իր յուշատետրում գրել է.* «Շրջանի համար այդ օրհասական օրերին ԽՍՀՄ եւ ՌՍՖՍՀ Գերագոյն խորհուրդների մի չարք պատգամաւորներ (**Ս. Բելօզերցեւը, գնդապետ Վ. Սմիռնովը** եւ

ուրիշներ) բազմիցս այցելում են Շահումեան, լինում Վերին Շէնում: Նրանք նոյնիսկ կեանքը վտանգի ենթարկելով Մեղրեանի հետ լինում են դաշտերում, գուցէ թէ ետ պահեն յարձակուողներին: Բայց ամէն ինչ անարդիւնք է անցնում: Այդ օրերին էր, որ Շահէն Մեղրեանը պատասխանելով «Մետրոպոլիտ էքսպրես» թղթակցի հարցերին ի լուր աշխարհի յայտարարում է. «Թող իմանան Մոսկուայում, եթէ ռուսական տանկերը չարժուեն մեր դիւղերի վրայ, ապա ռուս մայրերն իրենց զինուորներին կը դիմաւորեն ցինկէ դագաղներում: Մենք թոյլ չենք տայ, որ մեզ հետ վարուեն ինչպէս կամենում են»:

Շահէն Մեղրեանի բնական դիւանագիտական հանճարը դրսեւորուել է վաղուց, երբ նա տակաւին պատանի էր, կոմերիամիութեան քարտուղար: Եւ նա կարողացաւ հասնել այն բանին, որ արգելեց ադրբեջանական ՕՄՕՆի մուտքը շրջան, որը ստուգումների անուան տակ պիտի բռնակալէր (օկուպացիա) շրջանը եւ գաւթէր: Շահէնը կարողացաւ այդ բանն անել չնորհիւ իր դիւանագիտական կարողութիւնների եւ սկզբունքայնութեան: Ի տարբերութիւն Արցախի այլ շրջանների, որտեղ Յատուկ յանձնարարութեան ջոկատները խժդժութիւններ էին անում, որոնց արդիւնքը ժողովրդի ահաբեկումն էր եւ բնակավայրերի յանձնումը թուրքերին, բուն Շահումեանում այդ բանը տեղի չունեցաւ չնորհիւ Շահէնի անվեհեր եւ առաքինի դիրքորոշման: Իրադրութեան ստոյգ եւ կենդանի նկարագրութիւնն առկայ է ***Վահան Յովհաննիսեանի*** *«Բանտային տետրակների» մէջ:*

Շահէնը գիտէր, որ Շահումեանի զօրամասերում գործող ռուս հրամանատարների վրայ ճնշում են գործադրում Բաքուի եւ Մոսկուայի պետերը՝ ստիպելով որեւէ յաջողութեան հասնել «զինեալ աւազակների» դէմ պայքարում: Եւ նա որոշում է «զեկավարութեան առջեւ թուացեալ յաջողութեամբ հաչուետու լինելու հնարաւորութիւն տալ սպաներին»: Դա ՆԳ զօրքերին թոյլ կը տար հեռանալ պատուով: Կարեւոր էր համատեղել նրանց թուացեալ յաջողութիւնը եւ մեր դիրքերի վերականգնումը: Իմաստուն Շահէնն այստեղ էլ ելք գտաւ…

Շահէն Մեղրեանը յաջողում է ռուսների հետ լեզու գտնել եւ հասնել փոխհամաձայնութեան հետեւեալ պայմաններով. ռուսները նախալեռնային անտառներից հանում են Յատուկ նշանակութեան ջոկատը եւ հեռանում շրջանի բոլոր գիւղերից, սակայն չարունակում են պաշտպանել դրանց սահմաններն ինչպէս ադրբեջանցի, այնպէս էլ հայ գրոհայինների թափանցումներից: Իսկ մեր կողմը պարտաւորւում է երեք շաբաթուայ ընթացքում յանձնել զէնքը:

Ի հարկէ, որեւէ լուրջ զէնք չեն յանձնում եւ կարողանում են ժամանակ շահել:

*Շահէն Մեղրեանն այդ յաջողութեանը հասաւ կիրառելով դիւանագիտական հիանալի կարողութիւններ: Նախ սպաներին համոզեց, որ պէտք է բանակցութիւններ վարեն ոչ միայն իրենց, այլեւ՝ հէնց «աւազակային կազմաւորումների» հետ, որը ներկայացնում էր **Վահան Յովհաննիսեանը**: Շահէնն ապացուցեց, որ «անտառը» չի ենթարկւում իրեն եւ որ «անտառը» ինքնավար ուժ է: «Երեւանի մեր այսօրուայ դիւանագէտները երանի ունենային բանավէճի մէջ համոզիչ փաստարկներ բերելու Շահէնի ունակութիւնը»: Սպաներին բացատրեցին, որ կամաւորական զինեալ ջոկատներն ստիպուած կատարում են ադրբեջանական բռնութիւններից շրջանի հայ բնակչութեանը պաշտպանելու գործառոյթը: Կարո՞ղ են ռուսներն ապահովել հայ բնակչութեան անվտանգութիւնը: Սպաները խոստովանեցին, որ այդպիսի գործառոյթ իրենք չեն կարող կատարել:*

Ռուսները կատարում են պայմանը: «Նրանց հեռանալուց յետոյ, երբ կրկին զբաղեցրինք հայկական գիւղերը, բնակչութիւնը մեզ օղիով դիմաւորեց» *(**Վահան Յովհաննիսեան**, նոյնը, էջ 56-57):*

91 թուականի յաջորդ կարեւոր իրադարձութիւնը Էրքէջ, Բուզլուխ, Մանաշիդ գիւղերի պաշտպանութեան եւ ազատագրման մարտերն էին: Ռուսներն ու թուրքերն էլի միասին էին: Դեռեւս պահպանւում էր ԽՍՀՄը եւ մեծապետականներին թւում էր, թէ Արցախի անջատումն Ադրբեջանից՝ անջատում է ԽՍՀՄից:

Շահումեանի շրջանում հիմնական հարուածները լինում էին Բուզլուխի, Մանաչիդի եւ Էրքէջի վրայ: Կարաչինարի, Հայ Պարիսի ուղղութեամբ էլ մինչեւ Ինջի գետը՝ Թոդանով եւ այլն վտանգ լինում էր, բայց ոչ յաճախ եւ առաւելապէս անասնագողութիւն եւ այլն աւազակութիւններ, որոնցմեր մարտիկներն արագ արձագանքում էին:

*Գրոհային հիմնական խմբերը կազմել, պատերազմի ծանրութիւնն իրենց վրայ են վերցրել **Վերին Շէնի, Բուզլուխի, շրջկենտրոնի՝ Խիդիրեան Ցակոբի** մարտիկները՝ Բուզլուխի ծաւալով, այդ տարածքով եւ Էրքէջի ուղղութեամբ: Էրքէջի ուղղութեամբ էլ շրջանում գլխաւոր գործողութիւններին նչեալ ջոկատներն են եղել հիմնական դերակատար:*

*Նախ այս գիւղերի մասին համառօտ տեղեկանք՝ ըստ **Մակար Բարխուդարեանի** «Արցախ» աշխատութեան:*

***Էրքէջը** հիմնուած է մի խոր եւ նեղհորիզոն ձորի մէջ, որի երեք կողմերը (բացի արեւմտեան) բարձր լեռներ են: Բնակիչները Գիւլիստանի գաւառի մնացեալ գիւղերի նման գնացել են Բոլնիս-Խաչէն եւ նորից ետ վերադարձել: Օդն ու ջուրը՝ գերազանց, երկարակեցութիւն՝ 115 տարի: Եկեղեցին՝ Սուրբ Սարգիս՝ հոյակապ, բարձրաշէն, մօտ 22:15 չափերի: Գիւղի արեւմտեան ստորոտի խոր ձորով հոսում է Փոքր Կուրակ վտակը:*

***Բուզլուխ շէնը**, որ թարգմանաբար կը լինի Շիկահող, հիմնուած է Էրքէջից վերեւ՝ Կուրակի նոյն օժանդակի ձախ ափի բարձրութեան վրայ: Եկեղեցին՝ Սուրբ Մինաս, ծածկը՝ փայտաշէն: Նոյն անուամբ ուխտատեղի կայ գիւղից վերեւ նոյն օժանդակի աջ կողմում, մի հին քարուկիր փոքր եկեղեցի է, որի մօտ կան աւերակ գիւղ եւ հանգստարան:*

***Մանաչիթ** կամ Մանուչ շէն. հիմնուած է Բուզլուխից ներքեւ՝ նոյն օժանդակի ձախ կողմի բարձրութեան վրայ: Տեսարանն՝ գովելի, օդն ու ջուրը եւ կլիման՝ պատուական, երկարակեցութիւն՝ 110 տարի: Եկեղեցին՝ նորաշէն, կիսակառոյց: Գիւղի արեւելեան կողմում Նահատակ անունը կրող մատուռ կայ, գերեզմանով:*

Նոյն հեղինակը նշում է մերձակայ Թեոդան գիւղատեղի. քարուկիր եւ սրբատաշ քարով շինուած եկեղեցին, գլուխը՝ խոնարհուած, որն ունի արձանագիր յիշատակագրութիւն. «Կամաւն Աստուծոյ ես տէր Եղիշէս շինեցի սուրբ եկեղեցիս յիշատակ հոգւոյն իմոյ, կողակցին, եկաղին, որդիքն Աթաբէկին (Ատի բէկ) եւ Նիկողայոսին (Նկեղ)»: Սա թուրքերով բնակեցուած նոյն Թոդանն է:

Շրջակայ բնութեան մէջ առանձնանում է կեփաս ապառաժ լեռը, որը թուրքերն իրենց հանգոյն Քեափազ են հնչիւնափոխել, որի գագաթի վրայ կեփաս ճգնաւորի գերեզմանն է, տապանաքարի վրայ գրուած է ճգնաւորի անունը: Կեփասի նախկին անունն է Ալհարակ, որը յետագայում տեղի է տուել ճգնաւորի անուանը: Կեփասին մօտ կայ մի գեղեցիկ լիճ՝ Ալհարակ անուամբ: Լճակը երի-վանքից գտնւում է մի մղոնի վրայ, շրջապատուած անտառախիտ լեռներով: Լեռներից բարձրագոյնը մեր յիշատակած կեփասն է, որը հպարտօրէն արձանացած է լճակի հարաւ-արեւելեան կողմում: Լճակը բաժանուած է երկու մասի. վերնամասը կոչւում է «Ըստծու ծով»: Լճակի խորանարդ տարածութիւնն է 54 օրավարաչափ (դեսեատին): «Սարիս լանջերի դժուարատար տեղերում հօրանիներով ճարակում են քօչեր», այսինքն՝ հօտերով արածում են վայրի այծեր:

Մակար Բարխուդարեանցը *գրել է նաեւ Կոսի կալի մասին, որը Միջի-վանքի հանդէպ գեղեցիկ սարահարթի վրայ գիւղատեղի է հանգստարանով, որտեղ կայ փոքր եկեղեցի: Անուանի հոգեւորականն այնուհետեւ գրում է. «Բոլոր հին եկեղեցիներս խոզանոց արած են Գետաչէնի խոզարածներն»:*

Ցաւօք, նման վերաբերմունքի առումով, գետաչէնցիք տխուր բացառութիւն չեն:

Շահէն Մեղրեանը ճգտում էր համակարգել կռուող ուժերը: Նորաստեղծ չտաբի պետը ***Ֆելիքս Գզողեանն էր****, մարտական գծով տեղակալը՝* ***Յակոբ Խիդիրեանը,*** *տնտեսական գծով՝* ***Շահէն Յովասափեանը (Կուճուր Շահէն)****, հրետանու պետը՝*

Դնեպրիկ Բաղդասարեանը**: Ասենք, որ կար ընդամէնը թշնամուց խլուած 5 հրանօթ: Շահումեանի ինքնապաշտպանութեան տրամադրութեան տակ կային 6 ՀՄՄ-1 եւ ՀՄՄ-2, 1 տանկ եւ երկու քարշակ՝ էլի խլուած թշնամուց: Զէնքի եւ ռազմական տեխնիկայի նորոգումը գլխաւորում էր **Բորիկ Բաբաջանեանը:

***Ցելիքս Գզողեանի** խօսքն էլ պատասխանատու անձի տեսակէտ է եւ պիտի որ այլեւս կասկած չթողնի Շահումեանի զօրաց կարողութիւնների նկատմամբ. «Երեւանում, Հայաստանի Նախարարաց խորհրդին կից ստեղծուել է Պաշտպանութեան կոմիտէն: Եղել եմ այդ կոմիտէի անդամ: Իմ իսկ կամքով ես մեկնել եմ Շահումեան եւ ստանձնել տեղիս չտաբի պետի պաշտօնը կամ պարտականութիւնը: Բանակ որպէս այդպիսին չի եղել, կամաւորական խմբեր են եղել, որոնցից պիտի բանակ ստեղծուէր: Իմ առաջին խնդիրը եղել է չտաբի կազմաւորումը, երկրորդ՝ եղած բոլոր ջոկատներից միասնական ուժ ստեղծելը, նրանց մարզելը, մարտական պատրաստութեան եւ վիճակի բերելը, մի խօսքով, բոլոր այն խնդիրները, որոնք լուծում է չտաբի պետը: Ի հարկէ, ամենից առաջ, ինքնապաշտպանութեան համակարգի ստեղծման խնդիրը պիտի լուծէինք: Շնորհիւ **Շահէն Մեղրեանի**, շնորհիւ այն օգնութեան, որ Հայաստանից էր ուղարկւում, յատկապէս Դաշնակցութեան կողմից, մենք կարողացանք 91 թուականի մայիս ամսից ծաւալել այդ գործունէութիւնը, եւ հասցնել իր աւարտին: Կարող եմ ասել, որ **Շահումեանում կար մարտունակ, մարզուած եւ անհրաժեշտ չափով զինուած բանակ**»: *Ցելիքս Գզողեանի այս ակնարկային գնահատականը Շահումեանի զինուժի վերաբերեալ թէեւ որոշ իմաստով հանդիսաւոր խօսքի տպաւորութիւն է գործում՝ առանց բացայայտելու իրական հակասութիւնները, սակայն բարձրաստիճան սպայի տեսակէտի արժանահաւատութեանը մենք չենք կասկածում:*

*Շահումեանի հրետանու մասին պատկերացում կարելի է կազմել **Դնեպրիկ Բաղդասարեանի** «Դիմակայութիւն» (Եր., 2010) յուշերի գրքից: 1991 թ. սեպտեմբերին **Շահէն Մեղրեանը** հրետանու աւագ սպայ Դնեպրիկ Բաղդասարեանին հրաւիրում*

է Շահումեան հրետանու գործը կազմակերպելու: Փորձառու սպային յաջողւում է հնարաւորինս բարձրացնել հրետանային զօրատեսակի մակարդակը շրջանում: Ըստ Դնեպրիկ Բաղդասարեանի՝ 91-ի վերջին ամիսներին հակառակորդը Շահումեանի պաշտպանութեան դէմ ակտիւ ու լայնածաւալ յարձակողական գործողութիւններ չի ձեռնարկել, այլ փորձում էր բնակչութեանը դուրս մղել սաստիկ հրետակոծութիւններով: Հրետանային միջոցներով թուրքերը շահումեանցիներին զերազանցում էին 5 անգամ, չհաշուած ռուսական օգնութիւնը, որը տասնապատկում էր նրանց ուժերը: Է՛լ աւելի վատ վիճակում էր մեր հրետանու ռազմամթերքի վիճակը. չկային տարբեր տեսակի արկեր եւ եղածն էլ խիստ սակաւ էր: Շուտով այդ խնդիրը փոքր ինչ մեղմւում է Շահէն Մեղրեանի ձեռնարկած միջոցներով: Հրետանու պետը կարողանում է նաեւ կարճ ժամանակում շահումեանցիներով համալրուած անձնակազմ ստեղծել՝ ***Գեղամի Արզումանեանի*** *հրամանատարութեամբ: Հրետանային միաւորների հրամանատարներ էին* ***Ռոման Գրիգորեանը, Սպարտակ Տօնոյեանը, Լեւոն Յովսէփեանը:***

Բուզլուխ-Մանաշիդ հատուածը պաշտպանում էր Վերին Շէնի, շրջկենտրոնի եւ այլ գիւղերի մարտիկներից կազմուած հաւաքական ջոկատը: Ունէին երկու դիրք՝ Ջամբազ լեռան լանջերին եւ Մանաշիդ գիւղի հիւսիսային մատոյցներում: Էրքէչի ուղղութիւնը վերահսկում էր «Մեծն Տիգրանը», տեղի ջոկատի օժանդակութեամբ: Հայ Պարիս գիւղի շրջակայքը պաշտպանում էր տեղիս ջոկատը: Կարաչինար, Գաղթուտ, Մանասինչէն, Խարխապուտ գիւղերի տակ պատրաստուած դիրքերում բնագիծ էին գրաւել Յատուկ գնդի զօրամասը եւ նշեալ գիւղերի ջոկատները: Մարտակերտի շրջանի հետ կապող Կարաչինար-Թալիշ ճանապարհը պաշտպանում էին Զինար սարի դիրքերում հերթապահող Գիւլիստանի եւ Խարխապուտի ջոկատները: Դիրքերում անձնակազմերը փոխւում էին 24 ժամը մէկ: Ինքնապաշտպանութեան ամբողջ զօրքի թուաքանակը չէր անցնում 300 մարդուց: Ընդ որում՝ մարտական հրաձգային զէնքով զինուած էին ոչ բոլորը: Հակատանկային

եւ հակաօդային պաշտպանութեան միջոցներ բոլորովին չկային: Միայն նոյն թուականի դեկտեմբերին Երեւանից յատկացրին մի քանի հակատանկային նռնականետներ: Հակառակորդի հետ չփման սահմանագիծը 30 կմ էր: Թոյլ կէտեր շատ կային, որոնցով թուրքերը կարող էին թափանցել մեր դիրքերի թիկունքը, սակայն առանց խորհրդային մասնագէտների թուրքերը չէին համարձակւում այդ բանն անել (տե՛ս նշեալ գրքի 112-114 էջերը):

Դնեպրիկ Բաղդասարեանի *կարծիքով՝ այդպիսի ուժերով անհնար էր պահել Շահումեանի նման շրջանը, եւ նա յատուկ զեկուցագրով պահանջել է գոնէ պաշտպանութեան մարտիկների թիւը հասցնել 1000 հոգու եւ բարձրացնել սպառազինման մակարդակը: Նրա կարծիքով՝ երկրորդ պահանջը կարող էին բաւարարել արդէն 1992 թուականի սկզբին: Բարձրաստիճան հրամանատարների, ըստ այդ սպայի, անտարբերութեամբ, այլեւ արհամարհանքով են վերաբերել սթափօրէն մտահոգ նրա ահազանգին եւ առաջարկութիւններին: Այդպիսի վերաբերմունքը Բաղդասարեանը համարում է* ***կանխամտածուած եւ քօղարկուած դաւաճանութեան յատկանիշ****: Բազմափորձ հրետանաւորն ու ռազմագէտը մեծ վտանգ էր տեսնում այս ամէնի մէջ եւ մեղադրում էր, իր խօսքով ասած, «բիրդան սպարապետներին» եւ նրանց մի քանի «ստորաքարշ ու պատերազմը հեռուից դիտող ենթականերին, որոնք իրենց պետերին մատուցում էին անստոյգ եւ անպատասխանատու զեկուցումներ»: Այնպէս որ որեւէ քայլ չի կատարուել Շահումեանի պաշտպանունակութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Ընդհակառակը, այդ ամիսներին իրենց տեղը չիմացող ջոկատներ էին գալիս-գնում՝ զբաղեցնելով այնքան փափագելի եւ հազուագիւտ ուղղաթիռները: Օրինակ կարող է լինել 92 թուականի սկզբին Շահումեանում յայտնուած ՀՀՇական մի խմբաւորում՝* ***Արայիկ Խուդավերդեանի*** */«Կոռնիձորի» հրամանատար/ գլխաւորութեամբ:* «Նրա տղաները ծեծել էին չրջկենտրոնի գիւղխորհրդի նախագահին, որը համարձակուել էր հարցնել, թէ ովքե՞ր են նրանք եւ ի՞նչ գործ ունեն չրջանում:

Յետոյ այդ Արայիկն իր տղաների հետ ներխուժել էր Շահէնի չտաբ՝ զէնք չաչեցնելով աղմուկ-աղաղակ բարձրացրել, հայհոյել նրան ու բոլոր շահումեանցիներին: Այս միջադէպը, որ տեղի էր ունենում իմ ներկայութեամբ, կարող էր արիւնալի հետեւանքների հասցնել, եթէ Շահէնը զսպուածութիւն չցուցաբերէր ու չսահմանափակուէր չգիտեմ ո՞ւմ կողմից ուղարկուած այդ պրովոկատորներին շրջանից դուրս վտարելով» *(նոյնը, էջ 114-115):*

Եւ սա դեռ ամէնը չէ: «Յատուկ զգուշացրել եմ ռուսական (խորհրդային - Ա.Պ.) զօրքերի աստիճանական ակտիւացման մասին՝ Շահումեանի ճակատներում, որոնց հետ ես արդէն բազմաթիւ մենամարտերի մէջ եմ եղել» (նոյն տեղում):

Այսպիսով, առաջուայ նման հիմնական խնդիրը մնում էր ոչ թէ արտաքին թշնամուն դիմակայելը, այլ Հայաստանի իշխանութիւնների քմահաճ եւ վերամբարձ վերաբերմունքը Շահումեանի շրջանին: Հայաստանի պետական իշխանութիւնների հետ կապուած խնդիրներ կային, որի պատճառով չէր ստացւում Շահումեանի պաշտպանութիւնը հասցնել ցանկալի մակարդակի: Համակարգեալ մարտական մէկ կառոյցի ստեղծումը Շահումեանում տիրող իրադրութեան պայմաններում շատ դժուար էր, մանաւանդ տարբեր էին զանազան ջոկատների մարտավարական եւ մարտունակութեան վիճակները եւ ամենուր հնարաւոր չէր լինում պահպանել կարգապահութեան բարձր մակարդակ: Շահումեանի դիրքն էր այդպիսին՝ կտրուած մնացեալ աշխարհից: Զգացւում էր նաեւ կադրային զինուորականութեան պակաս, սակայն ներազգային իրադրութիւնն էր գլխաւոր խնդիրը. այսպէս կոչուած ՀՀՇական խմբերը գալիս-գնում էին՝ առանց յստակ նպատակադրութեան, նրանք ցուցամոլութիւն էին դրսեւորում եւ ապակայունութիւն էին ստեղծում իրենց անկարգապահութեամբ:

Շրջանը լուծարելուց յետոյ Ադրբեջանի իշխանութիւնները ձգտում էին աւարտին հասցնել իրենց գործը: Շրջանի նախկին ղեկավար գործիչներն անկարող եղան յանձն առնել ղեկավարի պատասխանատուութիւնը եւ զանազան պատրուակներով հեռացան Շահումեանից: Գարնանից շրջանը փաստօրէն ղեկավա-

րում էր Շահէն Մեղրեանը: Յունիսին Շահէն Մեղրեանն ընտրուեց գործկոմի նախագահ: Ամբողջ Արցախը ոտքի էր ելել ապրելու իր բնականոն իրաւունքը պաշտպանելու համար:

ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐԻ ԿՈՐՈՒՍԸ

*Նկատի ունենալով խորհրդային բանակի անթաքոյց աջակցութիւնը թուրքերին՝ **Շահէնը** խստագոյնս կարգադրութիւն էր արել՝ զերծ մնալ սադրանքներից, ռուսների հետ առճակատումից: **Վահան Յովհաննիսեանի** նօթատետրից գիտենք, որ այս կարգադրութիւնը նաեւ **Հրանտ Մարգարեանի** կողմից էր: Սակայն թուրքերը հաւատարիմ էին իրենց հին փեշակին, որի հերթական դրսեւորումը եղաւ էրքէջցի անասնապահ **Բորիկ Դադեանի** սպանութիւնը: Այդ ոճիրը նրանք 13 երեխաների հօր նկատմամբ գործադրեցին, երբ վերջինս հանդում իր անասունն էր պահում: Բորիկին տեղում սպանեցին, իսկ **Կոլիա Ստեփանեանին** գերեցին, իրենց հետ տարան եւ այնուհետեւ տանջամահ արեցին՝ ղրղելով հայերին յարձակուել Թոդանի վրայ, որին պիտի հետեւէր խորհրդային զօրամասերի յարձակումը հայ գիւղերի վրայ: Այդ սադրանքը չանցաւ: Սա միակ դէպքը չէր:*

Շարունակւում էր «Օղակ» գործողութիւնը, որի նպատակն էր հայաթափել մի շարք բնակավայրեր ինչպէս ԼՂԻՄի տարածքի վրայ, այնպէս էլ Շահումեանի շրջանը եւ Արծուաշէնը: Սա թուրքերի նուազագոյն ծրագիրն էր. նրանց գլխաւոր նպատակը ամբողջ Արցախի հայաթափումն էր: Սա է պատճառը, որ Գետաշէնի ենթաշրջանի հայկական բնակավայրերի հայաթափմամբ «Օղակ» գործողութիւնը չաւարտուեց: Եթէ նոյնիսկ մոռանանք կենտրոնական իշխանութիւնների, մեղմ ասած, անբարոյ վերաբերմունքն անկախութեան ձգտող մի բուռ հայութեանը, ստեղծուել էր մի իրադրութիւն, երբ տարածաշրջանում առկայ խորհրդային բանակի հրամանատարութիւնն այլեւս չէր ենթարկւում կենտրոնական իշխանութիւններին եւ թուրքերը շարունակում էին նրանց հայերի դէմ օգտագործել որպէս Տրոյական ձի: Ամէն պարագայի՝ «Օղակ»

գործողութիւնն ահաւոր մի վտանգ էր Արցախի համար:

Ուստի սպասելի էր, որ Գետաշէնի ենթաշրջանի գրաւումից յետոյ ակտիւ գործողութիւնների դաշտը տեղափոխուելու է Շահումեան. թուրքերը պատրաստւում էին յարձակում գործելու առաջնային դիրքերի՝ Բուզլուխ, Էրքէջ, Մանաշիդ գիւղերի վրայ, որոնք փակում էին Շահումեանի շրջկենտրոնի մուտքը: Նշեալ գիւղերից Բուզլուխն ունէր գերիշխող դիրք եւ տեսադաշտի տակ էր պահում ամբողջ շրջանը:

1991 թ. յունիսի 4-ին Շահումեանի շրջանում վերահաստատւում է պարետային ժամն ու արտակարգ դրութիւնը: **Մեղրեանի** համար դա սպասելի էր, քանզի շրջանում գտնուող զինուորականութեան, բնակչութեան եւ ազատամարտիկների միջեւ փոխըմբռնման եւ բարեկամութեան պայմաններում հնարաւոր չէր հայաթափել շրջանը: Վերջին պարետն արդէն խուսափում էր շրջանի ղեկավարութեան հետ մտերիմ կապեր հաստատելուց եւ անբարեացակամ էր հայերի հանդէպ:

1991 թուականի յունիսի 6-ի վաղ առաւօտեան թուրքերը լայնածաւալ յարձակում գործեցին երեք գիւղերի ուղղութեամբ:

Հայ մարտիկները թուաքանակով եւ յատկապէս զինուածութեան մակարդակով չատ էին զիջում թուրքերին: Իրենց առաջխաղացումների համար իբրեւ ամրապատ եւ յարձակուղ ուժ՝ թուրքերը չարունակում էին օգտագործել խորհրդային զօրքը: Կռիւը տեւեց առաւօտեան 5.30-ից մինչեւ 19.00-ի սահմանները:

Մանաշիդում կռիւն սկսուեց **Կոլիա Տօնեանի** բացած կրակով, եւ անմիջապէս բորբոքուեց մարտը: Դիրքերը պահում էր Վերին Շէնի ջոկատը եւ տեղիս ջոկատի մի քանի մարտիկներ՝ **Խաչիկ Սահակեանի** գլխաւորութեամբ: Այս օրը վիրաւորուեցին **Շամօ Սուղեանը** եւ **Հայկ Յովակիմեանը**: Մեր դիմադրութիւնը ուժեղ էր եւ ճիշտ էր կազմակերպուած. Քիրամէջ կոչուող հանդամասում թուրքերը մնացել էին մեր կրակի տակ, եւ թիրախ էին դառնում մեր տղաների համար: Նրանք կարող էին թաքնուել միայն բարձր խոտերի մէջ,

սակայն չոգ օր էր եւ ստիպուած դուրս էին ելնում, եւ գնդակը հասնում էր նրանց: Գիւղում կռուողներին փամփուշտ ու ջուր էին հասցնում տարեց բնակիչները: Մարտը տեւեց մինչեւ ժամը 13-ը: Յաղթանակը կատարեալ էր: Հակառակորդն ունենալով բազմաթիւ զոհեր՝ ետ քաշուեց:

*Բուզլուխում ունեցանք մէկ զոհ՝ Էդիկ Յարութիւնեան: Մեր մարտիկները պատրաստ էին կռուելու, իսկ թուրքերը փորձում էին երկիւղ, յուսալքում եւ ընկճուածութիւն առաջ բերել, որպէսզի հայերը թողնեն գիւղերը: Տպաւորիչ էր այն պահը, երբ ոչխարի հօտն առաւօտեան տանում էին այն ուղղութեամբ, որտեղից թուրքերն ուզում էին մտնել գիւղ: **Ռոմա դային** տեսնելով թուրքերին՝ չհասցրեց ոչխարը ետ բերել, թողեց եւ գիւղ վերադարձաւ: Սկսուեց մարտը: Աւտոմատների կրակոցներից խրտնած հօտը փախաւ դէպի Ջամբազ սարը, որտեղ թուրքերն էին: Մեր զինագործ **Դիմա Յովսէփեանը**, նկատելով հօտի շարժումը դէպի թուրքերը, նետուեց հօտը վերադարձնելու, եւ յաջողեց թուրքերի քթի տակից հօտն անվնաս ետ բերել: Դիման խուլ էր, կրակոցները չէր լսում, ուստի չէր հասկանում, որ իր վրայ կրակ է թափւում: Սա համարուեց օրուայ խիզախ արարքը:*

*Նոյն թուականի յունիսի 10-ին Գերանբոյի ոստիկանութիւնը, մօտ 250 հոգով, եկել մօտեցել էր Էրքէչին: Անձնագրային ստուգումների անուան տակ ուզում էին գիւղը վերցնել: **Մելսիկ Լալայեանի** հաւաստմամբ, այդ նոյն գիշեր իր եղբայր **Վանիկը** հերթապահում էր: Յերեկը մեծահասակներն էին հերթապահում, գիշերը՝ երիտասարդները: Երիտասարդները եկել էին տուն հանգստանալու:*

«Առաւօտեան 8-ից ես փերմայում էի: Մի հորթապահ երեխայ կար՝ եկաւ եւ ասաց.

- Մելսիկ դայի, թուրքերը մտան գիւղ:

Վազեցի, տեսայ մեծ խմբով են՝ Շտապօգնութեան մեքենայով եւ ամէն արք ու կարգով. ուզում էին որոշել, թէ ինչ կերպ մտնեն գիւղ: Երեխային ուղարկեցի Վանիկի մօտ. «Գնա ասա, չուտ, չուտ...»: Վանիկը 5 հոգու հետ հասան եւ գիւղում

դիրքեր բռնեցին: Ուզում էր աւտոմատով կրակել՝ ասացի.

– Աւտոմատն արդէն էլ պէտք չէ: Մեզ մեծ զէնք է պէտք, որպէսզի դրանց զոռենք:

Ինքնաչէն ԱԳՍ կար, փիդայիներից էլ արկեր էի գողացել, բերեցի իր մօտ, տուեցի եւ ասացի.

– Եթէ առաջին արկով մարդ չընկնի, էլ չեմ տալու:

Հենց առաջին կրակոցից մի խումբ թուրքեր ընկան: 4 տասնեակից աւել սպանուած թողնելով՝ նահանջեցին, իսկ վիրաւորները շատ-շատ էին: Ռուսական զօրք կար՝ եկան, բայց մեզ ձեռք չտուեցին: Թուրքերի վրայ իրենք էլ մի քանի անգամ կրակեցին: Յետոյ եկան թուրքերի դիերը հաւաքեցին ու տարան»:

91-ի յունիսի 12-ին անձնագրային խստակարգի կիրառման անուան տակ ռուսական զօրքերի միջոցով նորից փորձեցին զինաթափել էրքէյցիներին եւ ճանապարհ բացել դէպի Շահումեան: Մինչ այդ՝ հրամանատարութիւնը դիմել էր որոշ նախապատրաստական միջոցների. ***Վանիկ Լալայեանի*** *եւ նախկին էրքէյցիների ջոկատներին օգնութեան էին հասել Աբովեանի եւ Վերին Շէնի ջոկատները: Յիշեցնենք, որ այդտեղ էր նաեւ «Մեծն Տիգրանը»՝* ***Արմենակ Արմենակեանի*** *հրամանատարութեամբ:*

Յունիսի 13-ի ամբողջ գիշերը ***Մանաչիդի*** *երեք կողմերով եւս տեխնիկայի տեղաշարժ էր կատարւում: Գիւղին թողել էին Պիլոր Հողի եւ Նհատակին եալի ճանապարհները՝ կտրելով մնացեալ ճանապարհները:*

Առաւօտեան գիւղն արթնացաւ եւ տեսան ռազմական մեծաքանակ տեխնիկա՝ տանկեր, ՀՄՄ, զինուորական շարժական խոհանոցներ, շարժական բուժարաններ, մինչեւ ատամները զինուած ռուս գրոհայիններ, որոնք բարձրախօսով անընդհատ կրկնում էին, որ իրենք եկել են գիւղն ազատագրելու «հայ գրոհայիններից», եւ գիւղի վարչութիւնից պահանջում էին իրենց հետ բանակցել: Թուրքերը լիովին պաշարեցին գիւղը: Բարձրախօսով նրանք պահանջեցին, որ գիւղի ներկայացու-

ցիչը գնայ իրենց հետ բանակցութեան: **Գեղամ Մուրադեանը** երկու մեծահասակ մարդկանց հետ առաջացան: Հասան գիւղի վերջին տունը, եւ թուրքերը ՀՄՄով եկան եւ կանգնեցին: Զինեալ երեք մարդ դուրս եկան, աւտոմատները դէմ տուեցին եւ ասացին, թէ **գեներալը** բարձունքի վրայ սպասում է, պիտի գնաք բանակցութեան: Բանակցութեան ընթացքին ներկայ էր քօղարկազգեստով մի բարձրահասակ զինուորական: Գեղամը չգիտէր ազգանունը, բայց զգաց, որ գեներալ է: Բանակցութիւնը տեւեց երկու եւ կէս ժամ: Ներկայ էր Ադրբեջանի ներքին գործոց նախարարի տեղակալ **Մամեդովը**: Նա ծառայել էր Աֆղանստանում, եւ փորձում էր ահաբեկութեան մթնոլորտ ստեղծել: Համոզում էին մերոնց առկայ զէնքերը յանձնել, այսինքն՝ անձնատուր լինել, եւ խոստանում էին ոչ մէկին ձեռք չտալ: Առաջարկեցին նաեւ առձեռն վճարել տների գնը, եւ պահանջում էին հայերից՝ թողնել, հեռանալ, դուրս գալ տարածքից. խոստանում էին մարդկանց եւ կայքը բարձել եւ տեղափոխել մինչեւ Հայաստանի սահման:

Գիւղի ամբողջ բնակչութիւնն սպասում էր Գեղամի պատասխանին: Նրան գրոհայիններին եւ զէնքերն իրենց յանձնելու, այսինքն՝ անձնատուր լինելու ժամանակ էին սահմանել, այլապէս պիտի ներխուժէին: Ի պատասխան՝ թուրքերին ասացին, որ դուրս գալու բոլորովին մտադրութիւն չունեն, ինչ մնում է զէնքերը յանձնելուն՝ զէնք այլեւս չունեն, որ յանձնեն: Բանակցութիւնները թուրքերի համար աւարտուեցին անարդիւնք:

Խաչիկ Սահակեանի խօսքով՝ բանագնացներին բաց են թողնում՝ իրենց մօտ պահելով **Հրանտ Գալստեանին**: Այնուհետեւ, ոստիկանութեան աշխատակից՝ վերինչէնցի **Հայկ Շելունցն** ինքնակամ գնում է ռուսների մօտ բանակցելու: Նրան պահում են իրենց մօտ, եւ բաց թողնում Հրանտին: Մեր կողմը չգիտէր, որ Հայկը մեքենայով է գնացել, պահել մեքենան թփերի արանքում: Երբ կռահեցին, որ մեքենան պիտի ետ բերել, արդէն ուշ էր. ռուսները տեսել էին մեքենան եւ տարել: Հայկին տարան Խանլար, Գանձակ, ապա բերեցին եւ կարաչինարում բաց թողեցին:

Ենթաշրջանի ընդհանուր կորիզը տեղափոխուեց Էրքէչ, որպէսզի արժանի հակահարուած տրուէր՝ արգելելով Թուրքերի մուտքը շրջանի խորքերը:

Յունիսի 13-ի մարտերը տեւեցին մէկ ու կէս օր:

Որոշ ժամանակ անց յարձակումը կրկնուեց արդէն տեխնիկայի ուղեկցութեամբ: Զգալով, որ հայերին թեթեւ զէնքերով եւ բաց ճակատում, անկախ թուային գերակշռութիւնից՝ յաղթել հնարաւոր չէ, թուրքերն օգնութեան բերեցին Գորբաչովեան կանոնաւոր բանակը: ՕՄՕՆականները խորհրդային բանակի հետ միասին ռազմական տեխնիկայով, ուղղաթիռների աջակցութեամբ պաշարեցին երեք գիւղերը: Նրանք փորձում էին ահ ու սարսափ տարածել: Միայն Բուզլուխի ուղղութեամբ յարձակմանը մասնակցում էին 17 ՀՄՄ (ԲՄՊ եւ ԲՏՒ), 20 աւտոմեքենայ, 2 Կրոկոդիլ տեսակի ուղղաթիռ, Մի-8 կործանիչ ինքնաթիռ, Գրադ հրթիռանետ-հրետանի: Կարելի է չնչել մարդուժի եւ զինուժի մնացեալ առաւելութիւնները:

*Ջոկատի հրամանատար **Նովիկ Գիւլումեանը** կապուեց Շահումեանի հետ, **Մեղրեանին** տեղեկացրեց իրավիճակը եւ օգնութիւն խնդրեց: Շահէնն ուղարկեց **Կարօտի** ջոկատը: Ամենամեծ դիրքերից մէկը Կարօտն իր տղաներով էր պահում: Երեւանցիների հետ միասին այդ ժամանակ Կարօտի խումբը 28 հոգի էին: Մնացեալը Բուզլուխի ջոկատն էր՝ 17 հոգուց բաղկացած:*

*Յուլիսի 6-ին թուրքերը 300-ի հասնող զօրախմբով փորձեցին Սպիտակ եկեղեցու կողմով մտնել Էրքէչ: Գիւղի դիրքերը Թոդանին անմիջապէս կից էին: Մի կողմը Մանաչիդն էր, միւսը՝ Թոդանը: Մանաչիդի դիրքը բարձր էր, նաեւ Բուզլուխինը, իսկ Էրքէչը ձորի մէջ է: Թուրքերի դիրքերն այդտեղ մեզանից բարձր էին եւ իրենք աւելի հեշտ էին մերոնց նշանառութեան տակ պահում: Էրքէչի վերեւը Մարտինի ջոկատն էր պահում, ներքեւը՝ Էջմիածնի Հայկն իր դաշնակցական ջոկատով, նրանց միջեւ Յատուկ գնդի Ջիւանն էր՝ իր ջոկատով: Էրքէչի ջոկատի հրամանատար **Վանիկ Լալայեանն** այդ պահին բացակայում էր, նա գնացել էր Բուզլուխ-Մանաչիդ*

պաշտպանական գիծ: Հրամանատարութիւնն ստանձնել էր նրա աւագ եղբայր **Մելսիկը**: Վանիկը չտապ վերադարձաւ, եւ իր համար պարզ էր իրադրութիւնը: Խմբի մի մասին հրահանգեց շարունակել մարտը, իսկ ինքը փոքր խմբով գրաւեց աւելի բարձրադիր աջակողմեան բլուրը, եւ այդ լաւագոյն դիրքից սկսեցին մեծ կորուստներ պատճառել թշնամուն: Յատկապէս արդիւնաւէտ էր Վանիկի գնդացիրը: Այդ զէնքը խափանուելուց յետոյ նա գործում էր նռնականետով: Այդ պահից սկսած մինչամուտ են խորհրդային զօրքերը եւ պահանջում դադարեցնել թուրքերի համար աննպաստ այս մարտը: Դրա չնորհիւ մեծ կորուստներ կրած թուրքերը փրկուեցին ի սպառ ոչնչացումից: Մեր կողմից նոյնիսկ վիրաւորներ չկային: Էրքէջում հայ ազատամարտիկները յաջողեցին աքցանի մէջ առնել Ադրբեջանի ՆԳ նախարար **Մամեդովին**՝ իր մերձաւորներով եւ անպայման կը գերէին, սակայն ռուս դեսանտայինները դրանց փրկեցին:

Յուլիսի 13-ի առաւօտեան Էրքէջի դիմացի բարձունքից բարձրախօսով պահանջեցին յանձնել զէնքն ու «աւազակներին», այլապէս գիւղը կ՚աւերեն: Մանաշիդի եւ Բուզլուխի բնակչութիւնը փորձում էր այդ պահին պատսպարուել շրջակայ անտառներում: Կիրովաբադի դիւիզիան իր բոլոր մարտակայքով շրջապատել էր երեք գիւղերը: Յուլիսի 14-ի կէսօրին թշնամու զրահատեխնիկան երկու ուղղութեամբ ներխուժեց Էրքէջ: Նախապէս ծրագիր էր մշակուած, որ նման իրավիճակում դիմադրութիւնը պիտի լինի միայն Էրքէջում, քանզի երկու գիւղերից հնարաւոր չէր լինի բնակչութեան նահանջը, բոլորն անմիջապէս կը յայտնուէին կրակէ օղակում: **Վանիկը** փոքր խմբով գնում է կազմակերպելու բնակչութեան նահանջը: Նահանջի միակ ուղին Վերին Շէն տանող ճանապարհն էր: Շուտով նկատւում է թուրքերի մի ջոկատ, որը փորձում է փակել նահանջողների ճանապարհը: Վանիկը մի քանի մարտիկի հետ նետւում է թշնամու դէմն առնելու: Մարտիկներին յարմար դիրքաւորելով՝ նա կրկին դառնում է գիւղ, ուր արդէն փողոցային մարտեր էին տեղի ունենում: Այլեւս գաղտնիք չէր,

որ խորհրդային զօրքը հայոց գիւղերը հայաթափելու իր մտադրութիւնը չի փոխել: Հայ հրամանատարները գտնում են, որ պէտք է մարտերով նահանջել: Անհրաժեշտ էր ապահովել նահանջը: Ամենայարմար դիրքը Մեծ Հաթերք կոչուող բարձունքն էր: Բարձունքից Վանիկը նկատում է, որ երկու տանկ նշանառութեան տակ են պահում նահանջի ճանապարհը: Բայց տեղանք էր եւ անցնելը՝ գրեթէ անհաւանական: Սակայն այլ ելք չկար, եւ Վանիկն իր Վիլիսով ***Բաղդասարի՝ Արջի*** *հետ միասին վերջին արագութեամբ սլանում են առաջ: Նախապէս նշանառութեան կէտ դարձրած հատուածի վրայ նոյն պահին պայթում է արկը, որը դիպչում է մեքենային: Բաղդասարը վիրաւորւում է եւ Վանիկը սկսում է վիրակապել ընկերոջը: Այնուհետեւ նա դիրքաւորւում է եւ սկսում է կրակել: Թուրքերը յայտնաբերում են Վանիկի կրակակէտը եւ արկահարում:* ***Մելսիկ Լալայեան. Վանիկին*** *թուրքերը ճանաչում էին, իր մեքենան էլ գիտէին եւ խփել են գիւղից մի 500 մետր հեռու:* «Ես իրեն պատահեցի եւ ասացի՝ մեքենան կը թողնես ու կը փախչես: 91-ի յուլիսի 14-ն էր: 2 գիշեր մնացել է եւ երրորդ օրն ենք բերել դիակը: Սրտով տղաներով գիւղերից եկել ենք եւ գիշերը տարել ենք»:

Նրա դիակը գտան միայն երկու օր յետոյ: Ծանր վիրաւոր՝ նա արիւնաքամ էր եղել: ***Վանիկին*** *տեղափոխում են եւ յուղարկաւորում Զարենցաւանում, զրոյցական ընկերոջ՝ ազատամարտիկ* ***Սլաւիկ Դանիէլեանի*** *մօտ:*

Գիւղից դուրս գալով՝ ինքնապաշտպանութեան ուժերը դիրքեր գրաւեցին բարձունքներում: ***Գեղամը*** *կապուեց* ***Մեղրեանին****, պատմեց եղելութիւնը: Մեղրեանն ասաց, որ նոյնը տեղի է ունեցել միւս գիւղերի հետ եւ կ՛աշխատի, որ բնակչութիւնը դուրս բերեն դէպի շրջկենտրոն, քանզի ուժերի առկայ յարաբերակցութեան պարագային դրանց դիմադրելն անիմաստ է:*

Յուլիսի 14-ին լրացաւ ռուսների սահմանած ժամկէտը, եւ նրանք սկսեցին շարժուել գիւղի ուղղութեամբ: Բնակչութիւնը հիմնականում դուրս էր եկել: «Գրոհայիններն» էլ դուրս եկան

*առանց դիմադրութեան: Գիւղում մնացին մի քանի ծերեր, որոնց հնարաւոր չեղաւ համոզել: Ասում էին. «Ռուսի բանակը հո մեր թշնամին չէ՞, որ թողնենք հեռանանք»: Կոյր հաւատ: Մնացին **Մեխակ Վարդանեանը, Ռուբէն Սահակեանը, Հրանտ Մուրադեանը** եւ գիւղխորհրդի նախագահ **Արկադիա Յովհաննիսեանը**:*

Գիւղում մնացած ծերերը յետոյ պատմեցին, որ ռուսների հետ գիւղ մտած թուրքերն իրենց ծեծել են, եւ մեքենայով հասցրել Նհատակի եալը, եւ այնտեղ նորից լաւ ծեծելուց յետոյ բաց թողել՝ ասելով, որ այլեւս մոռանան Մանաչիդի մասին:

*Յուլիսի 14-ից յետոյ Վերին Շէնում բոլոր տղաները, բացի **Հայկից, Նիկալից, Մոսիից եւ Նորայրից**, գէնքերը բերում, յանձնում են **Խաչիկ Սահակեանին**:*

*Յուլիսի 14-ին **Բուզլուխն ու Մանաչիդն** ընկան: Խաչիկ Սահակեանի խօսքով, Մանաչիդը մինչ այդ ցնծութեան մէջ էև. Երեւանից ընտանիքներ էին եկել իրենց միանալու եւ այդ պատճառով տեղահանութիւնը դադարեց մինչեւ 1991 թուականի ապրիլը, երբ թուրքերը գիշերը անսոնա..... նպատակով դարանից խփեցին:*

*Ֆերմայում հերթապահող **Էդիկ Յարութիւնեանին**: Այդ օրը հերթապահում էին 4-ով՝ **Խաչիկը, Էդիկը, Արարատը եւ Արտուշ Վերդեանը**: Վերջինս աշխատում էր Դիլիջանի Ներքին գործոց բաժնում եւ արձակուրդը որոշել էր անցկացնել գիւղում՝ մասնակցելով ինքնապաշտպանութեանը: Մեր մարտիկները պատասխան կրակ բացեցին, եւ թշնամին նահանջեց: Առաջինն օգնութեան հասաւ Սաչիկը, չնայած նրանց տունը հեռու էր ֆերմայից եւ մութ գիշեր էր, մօտ ժամը 2-ը կը լինէր:*

Թշնամին անկարող եղաւ անասունը տանել, սակայն Էդիկի սպանութիւնը եւ անասունների յանձնումը Վերին Շէնի տնտեսութեանը ժողովրդի մէջ կասկած եւ վախ առաջացրեց եւ տարբեր պատրուակներով սկսեցին թաքուն դուրս գալ գիւղից: Յատն այն էր, որ գիւղից հեռանում էին նաեւ ջոկատի անդամները:

Դա այսպէս եղաւ: Մարտիկները երկու օր չէին քնել: Այդ

գիշեր **Խաչիկ Սահակեանենց** խմբին յանձնարարուած էր մի առանձնակի խմբի հետ Բուզլուխ-Մանաչիդ հատուածում մտնել թշնամու թիկունք եւ խփել տեխնիկային: **Ցեղիքս Գզողեանը** մարտիկներին ուղարկեց Շտաբ հանգստանալու: **Հայկը** խոց ունէր եւ պիտի մի բան ուտէր, որ ցաւն անցնէր: Մարտիկները քնեցին, իսկ ճաշը դեռ պատրաստ չէր, եւ Հայկը սպասում էր: Այդ պահին հերթափոխ եկաւ եւ նրանց պիտի դիրքերը հասցնէին: Հայկն ուղեկցում էր մեքենան, իսկ այն ճամփին «փչացաւ»: Ոտքով տարաւ ջոկատը եւ դասաւորեց դիրքերում: Այդ միջոցին թշնամական ուղղաթիռը կրակ բացեց մեր դիրքերի վրայ, եւ Հայկը խփուեց գլխից: Ամբողջ գիշեր Խաչիկը քայլում էր վառուող գիւղով: Նա յաջողեց հանգցնել միայն Նիկոլի տունը:

Հայկը հինգ երեխայ ունէր, վեցերորդը ծնուեց Հայաստանում, Մասիսի շրջանում: Խաչիկենք Հայկի յուղարկաւորմանը ներկայ չէին, իրադրութիւնը շատ էր ծանր: Երբ մի փոքր կայունացաւ, սեպտեմբերի սկզբին **Խաչիկին** եւ **Նիկալէին Շահէնը** թոյլատրեց գնալ Երեւան. Նիկալն աղջիկ էր ունեցել, ծնուելուց ութ ամիս էր անցել, եւ երեխային չէր տեսել:

Դժուարագոյն այդ ժամանակներին Շահումեանն ապրում էր գրեթէ ինքնաբաւ տնտեսական կեանքով. իրենք ցանում-հնձում էին, ջրաղացներն ու սրանոցներն էին (ձիթհան ձեռնարկութիւն) աշխատեցնում:

Մելսիկ Լալայեան. Յուլիսի 14-ին գիւղերից դուրս ենք եկել: Երկար ժամանակ չէինք համարձակւում մտնել, կարծում էին ուժեր, զօրք կայ: Մենք նահանջեցինք Վերին Շէն: Մեզ հանեցին գիւղերից, բայց Վերին Շէն չմտան»:

Խորհրդային զօրքերի անմիջական մասնակցութեամբ թուրքերը կարողացան հայաթափել էրքէջ, Մանաչիդ, Բուզլուխ գիւղերը: Բնակչութիւնն ապաստան գտաւ Վերին Շէն, Շահումեան, Գիւլիստան բնակավայրերում: Լրագրողական-քաղաքական մեծ աղմուկ բարձրացաւ այս առումով, սակայն ամէն ինչ ի զուր էր:



Մանաշիդի կռիւը, 1990, յունուարի 12, Արցախի առաջին մարտական գործողութիւնը



Բուզլուխ, էրքեջ, Մանաշիդ գիւղերի անկումը, 1991թ., յուլիսի 14



Բուզլուխ, էրքեջ, Մանաշիդ գիւղերի ազատագրումը, 1991թ., սեպտեմբերի 14



Շահումեանի անկումը, 1992. յունիսի 13-14

Արարատ Սահակեան. «Մարտունաշէնից յետոյ Էրքէջ, Բուզլուխ, Մանաշիդը յանձնեցինք: Վերին Շէնում էլ Նովիկենց հետ ծանօթացանք: Դէ ճանապարհները ովքե՞ր պիտի իմանային, որսորդները: Իրենք էլ գիւղի որսորդներն էին: Դէ պասպորտնի ռեժիմ էր եւ իրենք մեզ պիտի տանէին Մռովի փէչերը, իրենք գիտէին ճամփեքը եւ իրենք էլ կրակելու վարպետ էին, որսորդի վիճակ է»:

ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Երեք գիւղերի կորուսեալ դրութիւնը պահպանուեց մինչեւ սեպտեմբերի կէսերը: Այդ գիւղերը վերցնելուց յետոյ, տիրելով նաեւ ռազմավարական բարձունքներին, թուրքերը յարձակումը չարունակեցին դէպի Վերին Շէն:

Պաշտպանութիւնն այնուհետեւ կենտրոնացաւ Վերին Շէնի բարձունքների վրայ: Հակառակորդին կանգնեցրին այդ բարձունքների վրայ, եւ նրանք չկարողացան մտնել բնակավայր: Ուղիղ երկու ամիս շրջկենտրոնն ամէն օր ռմբակոծում էին, շատ զոհեր էին լինում, ամէն օր մի քանի թաղում էր լինում:

*Յուլիսի երկրորդ կէսին **Սասուն Սիմոնեանն** իրենց պահադիրքում իմացաւ, որ թուրքերը սպառնում են Վերին Շէնին: Շահէնը Սասունին շատ էր յարգում: Կապուեց Շահէնին իմանալու, թէ ինչպէս է դրութիւնը Վերին Շէնում: Շահէնն ասաց, որ վատ է: Սասունը մի ինքնաթափ մեքենայով հասաւ Վերին Շէն: Կողմերի ուժերն անհաւասար էին՝ թէ՛ մարդուժով, թէ՛ տեխնիկայով: Թուրքերը խփում էին ուղղաթիռներով, եւ անհաւասար կռիւ էր գնում: Շահէնը Սասունին տեսնելով՝ ուրախացաւ: «Շահէն,- ասաց Սասունը,- սրանք միայն իմ դիակի վրայով կը մտնեն Վերին Շէն»: Շահէնը մտերմաբար խփեց Սասունի մէջքին:*

*Ուժգին փոխհրաձգութիւն էր, եւ Ալավերդու ջոկատից զոհուեց **Անդրանիկ Պետրոսեանը** (Աքորի գիւղից), վիրաւորուեցին **Վովա Զաքարեանը** եւ **Գագիկ Գալստեանը**: Սասունը Գագիկին հանելիս օգնութեան աղերսագին կանչեր լսեց. խնդրում էին օգնել Անդրանիկին: Գագիկին փոքր-ինչ հեռաց-*

նելով վտանգաւոր գօտուց՝ Սասունը խնդրեց իրեն այդտեղ սպասել եւ նետուեց այն ուղղութեամբ, որտեղից կանչերը էր լսել: Անդրանիկին իսկոյն վիլիսով ուղարկեցին գինբուժարան: Թէեւ այնտեղ երեք վիրաբոյժներ կային, սակայն Անդրանիկի վիճակն այնպիսին էր, որ այլեւս հնարաւոր չէր որեւէ բան անել: Երկու վիրաւորին տեղափոխեցին հիւանդանոց, իսկ Անդրանիկին Սասունը բերեց ծննդավայր՝ Աքորի:

Շահումեանը ոչ մի կերպ չէր հաշտւում գիւղերի կորստեան հետ, եւ ակտիւ գործողութիւնները չարունակւում էին: Յունիսի 19-ին նոյնիսկ յաջողեցին գրաւել Էրքէչի բարձունքները եւ քիչ էր մնում մեր մարտիկները մտնէին գիւղ: Ռուսական տեխնիկան արդէն ետ էին քաշել եւ տեղաւորել Թոդան գիւղում. այդ օրերին Շահումեան էր ժամանել ԽՍՀՄ ԳԽ պատգամաւոր, գնդապետ **Սմիռնովը:** Այդ իրավիճակում, նաեւ նրա ջանքերով, կասեցուեց խորհրդային զօրքերի յարձակումը Շահումեանի շրջկենտրոնի վրայ, որին հակադիր ուժ չէր լինի: Երբ հայոց մարտիկներն ուզում էին մտնել Էրքէչ, խորհրդային տեխնիկան կրկին մտաւ գիւղ:

Տեղիս եւ Հայաստանի տղաները մէկ շաբաթ պահեցին բարձունքը: Մէկ շաբաթ յետոյ թուրքերը ուղղաթիռների օգնութեամբ նորից ետ գրաւեցին Բուզլուխը: Բացի շրջանի տղաներից, մասնակցում էին **Աբովեանի Սամուէլի** ջոկատը, **«Արաքոյի» տղաները, Ալավերդու Սասունի** տղաները:

Ջիւանը Յատուկ գնդի հետ ժամանել էր երեք գիւղերի գրաւումից յետոյ եւ մօտ երկու ամիս Վերին Շէնի բարձունքների պաշտպանութեան կազմակերպիչներից էր: Յուլիսի 20-ին էր, երբ Ջիւանը նռնականետով մենակ դուրս եկաւ թուրքի զրահատեխնիկայի դէմ, խփեց մի զրահամեքենայ եւ ինքն էլ զոհուեց: Ջիւան Աբրահամեանը /1961-1991/ զոհուեց 1991 թուականի յուլիսի 20-ին Վերին Շէն գիւղի բարձունքներում: Ջիւանին ետմահու /1996թ. Սեպտեմբերի 20-ին չնորհուել է ազգային հերոսի կոչում: Ջիւանի կորստեան համար գունդը շատ տխրեց:

*Անորոշ վիճակ էր շրջանում յատկապէս ԳԿՋՊի օգոստոսեան օրերին: Պետական հեղաշրջման փորձը ձախողւում է: 4-րդ բանակի հրամանատար գեներալ **Սոկոլովը** եւ 23-րդ դիւիզիայի հրամանատար, գնդապետ **Բուդեյկինն** անտեսում են կրակը դադարեցնելու մարշալ **Շապոշնիկովի** հրամանը, որով պիտի հակառակորդը Վերին Շէնի բարձունքներից զօրքը ետ քաշէր:*

Օգոստոսի 22-ին եւ յետագայում եւս ազրբեջանական իշխանութիւնները չարունակում էին Շահումեանը հայաթափելու իրենց ծրագիրը: Կրակի տակ են առնւում Վերին Շէն եւ Կարաչինար գիւղերը: Օդային յարձակումների հետեւանքով Վերին Շէնում կործանւում են տասնեակ տներ, զոհւում եւ վիրաւորւում են մարդիկ: Գիւղի բնակչութեան մի մասը փախուստի է դիմում եւ ապաստանում է Գիւլիստանում եւ ոմանք էլ՝ Ստեփանակերտում: Ճգնաժամային վիճակը յաղթահարւում է ինքնապաշտպանութեան ուժերի հակայարձակումով:

*Օգոստոսի 24-25-ին թէժ մարտեր են ընթանում Կարաչինարի մատոյցներում: Երկու մարտիկ է զոհւում եւ վիրաւորւում են մի քանիսը: Թշնամին ետ է շպրտւում: Յարձակման հետեւանքով մեծ աւերածութիւններ են լինում Կարաչինար եւ Մանասին Շէն գիւղերում: **Շահէն Մեղրեանի** հրամանով Կարաչինարի եւ հարեւան գիւղերի բնակիչներին տեղափոխում են Գիւլիստան:*

Օգոստոսեան ռազմական ձախողուած յեղաշրջումից յետոյ առժամանակ դադարեցւում է հայ գիւղերի աւերման ընթացքը: Հայոց ջէմ-յանդիման մնում է միայն թուրքը: Մեր ջոկատները թշնամու թիկունքում եւ առճակատ սկսում են ակտիւ գործողութիւնները:

1991 թուականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը՝ ԼՂԻՄի եւ դրան կից Շահումեանի շրջանի սահ-

մաններում: Սա հաստատումն էր հայ ժողովրդի միասնութեան բնական եւ օրինական ձգտումի, որը միանգամայն համապատասխան է միջազգային իրաւունքի նորմերին:

Այդ ճակատագրական պահերին Շահումեանի խորհրդային հայ ղեկավարների մեծ մասը ճողոպրեց վտանգաւոր գօտուց՝ հաստատուելով Հայաստանում կամ Երեւանում: Նրանք խորամանկօրէն տեղափոխեցին իրենց ընտանիքները եւ ունեցուածքը: Այդ երեւոյթն աւելի տարածուն դարձաւ, երբ արդէն յունիսին Հայաստանի Գի պատգամաւոր դարձած ***Վլադիմիր Աղաջանեանն*** *ընտանիքով տեղափոխուեց Երեւան: Ինչպէս միշտ, ժողովուրդը մնաց հաւատարիմ իր հողին եւ համախմբուեց նոր ղեկավարութեան չուրջ: Ժողովրդի եւ նրա ղեկավարութեան կամքի արտայայտութիւնը եղաւ Հանրապետութեան հռչակումը Արցախում, որն իր մէջ ներառաւ նաեւ Շահումեանը: Միասնական պետական կառուցուածքով էր հնարաւոր բարձր մակարդակով կազմակերպել ինքնապաշտպանութիւնը եւ հանրային կեցութիւնը:*

ԼՂՀի հռչակումից յետոյ Ադրբեջանն աւելի ուժեղացրեց իր պայքարը յանուն Արցախի բռնազաւթման: Նոյեմբերի վերջին Ադրբեջանի խորհրդարանի փակ նիստը որոշում է խզել բոլոր կապերը Հայաստանի հետ, ուժեղացնել շրջափակումը, «պաշտպանել» ԼՂում բնակուող թուրքերին, ստեղծել ազգային բանակ: Նրանք նախանձելի արագութեամբ իւրացրին Ադրբեջանի տարածքում գտնուող խորհրդային բանակի զէնքն ու զինամթերքը: Մինչ այդ էլ Ադրբեջանը Հայաստանի եւ ԼՂՀի դէմ վարում էր քարոզչական ակտիւ պատերազմ:

Իրավիճակը տարածաշրջանում է՛լ աւելի սրուեց: Փակւում է Ստեփանակերտի օդանաւակայանը, արգելւում թռիչքները Շահումեան, կտրւում են կապի բոլոր միջոցները: Հայաթափուած երեք գիւղերը սկսում են բնակեցնել թուրքերով: Հեռուստաաշտարակի բարձունքից՝ Շըմփըրպտուկից հրթիռներով եւ հրետակոծութեամբ սկսում են աւերել Վերին Շէնը: Ռուսների հեռանալուց յետոյ այդ բարձունքի ազատագրումը դառնում է այրող անհրաժեշտութիւն:

Ծելիքս Գզողեան. «Այդ ժամանակ Շահումեանի երեք գիւղերը՝ Էրքէչը, Բուզլուխը, Մանաչիդը, խորհրդային զօրքերի 23-րդ բանակի օգնութեամբ, թշնամու ձեռքին էր: Մեր առաջնահերթ խնդիրն բռնազաւթուած այդ երեք գիւղերի ազատագրումն էր: Այդ գործողութիւնը մենք յաջողութեամբ կատարեցինք: **Այն իր ժամանակի համար ունիկալ, ինքնայատուկ մի գործողութիւն էր:** Պիտի նշեմ ոչ միայն **Շահէն Մեղրեանի,** այլեւ իմ տեղակալ **Սերգէյ Զալեանի**, եւ մեր մարտական զօրամասերի հրամանատարների՝ **Յակոբ Խիդիրեանի, Նովիկ Գիւլումեանի** անունները, որոնք եղել են գերազանց: **Շահէն Յովասափեանը** բարձր մակարդակով ղեկավարում էր թիկունքը. պատերազմական շրջան էր, ուստի նկատի ունեմ ե՛ւ թիկունքի ապահովութիւնը, ե՛ւ միաժամանակ տեխնիկայի ապահովութիւնը»:

Գործողութիւնը մշակուել եւ ծրագրուել է համագործական (կոլեգիալ) եղանակով:

Սեպտեմբերի 14-ին ***Շահէն Մեղրեանի*** *գլխաւորութեամբ սկսւում է երեք գիւղերի ազատագրման գործողութիւնը: Առաջինը նախատեսուած էր բարձրադիր Բուզլուխը, որը գործնականում ապահովում էր Մանաչիդի եւ Էրքէչի ուղղութեամբ յարձակման յաջողութիւնը: Բուզլուխն ազատագրելու համար անհրաժեշտ էր գրաւել գիւղի դիմացի երեք բարձունքները: Այնտեղ տեղակայուած հակառակորդին գիւղից ստացուող օգնութիւնից զրկելու համար գիշերը 20 հոգիանոց մի խումբ տեղակայւում է բարձունքների եւ բնակավայրի միջեւ: Յարձակումն ունէր երեք ուղղութիւն. ալ թեւից՝ Շրմփըրպտուկ բարձունքի ուղղութեամբ գործելու էր* ***«Արամօն»՝ Արամ Թորգոմեանի*** *գլխաւորութեամբ, Վերին Շէնի ջոկատի մի մասը* ***Արթուր Յակոբեանի*** *հրամանատարութեամբ, այլ խմբերի համագործակցութեամբ: Կենտրոնում լինելու էր* ***Աբովեանի ջոկատը՝ Սամուէլ Վարդանեանի*** *հրամանատարութեամբ՝ այլ խմբերի հետ եւ ձախից՝* ***«Արաբօն» եւ չահումեանցիները****: Բարձունքի միւս կողմից թուրքերին պիտի չրջանցէր Վերին Շէնի մի խումբ՝* ***Նովիկի*** *գլխաւորութեամբ:*

Այլ եւ ձախ թեւերի յարձակումները յաջող էին, եւ թշնամին քաշուեց դէպի կենտրոնական դիրքերը: Ամենադրական ձեւով կարելի է արտայայտուել «Արամոյի», «Արաբոյի» եւ շահումեանցիների մասին: Կենտրոնով յարձակուող խմբերը կորուստներ ունէին, զոհուածների թւում էր Աբովեանի ջոկատի հրամանատար **Սամուէլ Վարդանեանը**, վերինչէնցի պատանի **Մհեր Շախեանը**:

Մանուէլ Եղիազարեանը գրոհային նոր խմբով յաջողում է ազատագրել կենտրոնական բարձունքը: Բարձունքները վերցնելուց յետոյ բնակավայրի ազատագրումը հեշտացել էր, մանաւանդ թշնամու թիկունքն անցած զօարախումբը **Նովիկ Գիւլումեանի** գլխաւորութեամբ լաւ էր կատարել իր առաջադրանքը: Շրջանցելով թշնամու պահադիրքերը 6 ժամ դիշերային երթով խումբը տեղ հասաւ առանց նկատուելու: Դա հնարաւոր եղաւ այն բանի շնորհիւ, որ ջոկատի մէջ ընդգրկուած մարտիկների կէսը (11 հոգի) Շահումեանից էին, եւ նրանք տեղանքին քաջածանօթ էին: Միւս կէսը՝ սխրանքի միչտ ծարաւ արաբոյականներ էին: Լոյսը բացուելիս դիրքաւորուեցին, եւ քիչ անց լսուեցին կրակոցները: Հիմնական ուժերը յարձակումն արդէն իսկ սկսել էին: Երբ փոխհրաձգութիւնը թէժացաւ, գիւղից մի վիլիս դուրս եկաւ եւ, բնականաբար, կալանուեց մեր մարտիկների կողմից: Վիլիսի երեք ուղեւորներից մէկը **մայոր Կումբաթովն էր**: Իբրեւ աւար վերցրեցին ձայնակապի սարքը, որով լսում էին հակառակորդի խօսակցութիւնը: Այնուհետեւ գիւղի կողմից արկերով բեռնուած մի բեռնատար երեւաց: Մեքենան մի խումբ պահապաններ ունէր: Մինչ ուղեկցորդների ուշքի գալը՝ նրանց հարցը լուծեցին: Հրաձգութիւնից արկերն սկսեցին պայթել:

Բուզլուխում խուճապային վիճակ էր տիրում: Հակառակորդի մի ուղղաթիռ իջաւ իրենց դիրքերի վրայ եւ հասցրեց թշնամու մի քանի մարտիկների վերցնել եւ արագ հեռանալ: Թուրք մնացեալ մարտիկներն սկսեցին վազել խմբի ուղղութեամբ: Հանդիպակաց կրակահերթերը ստիպեցին նրանց փոխել ուղղութիւնը, եւ մի ձորակով փախան դէպի էրքէջ:

Նրանք դէն էին նետել ամէն ինչ, եւ ոտաբոբիկ ճողոպրեցին: Ժամանակի սղութիւնն արդէն թելադրեց յարձակուել Բուզլուխի վրայ: Բաւականին դիմադրելուց յետոյ Թչնամին թողեց գիւղը:

*Բուզլուխից յետոյ Թուրքերի խուճապային նահանջը շարունակուեց եւ առանց էական միջադէպերի ազատագրուեց Մանաչիդը: Բարձունքը վերցնելուց յետոյ խմբերը հաւաքուել են Բուզլուխում, որպէսզի շարժուեն դէպի Մանաչիդ: **Արթուր Յակոբեանի** գլխաւորութեամբ իբրեւ հետախուզական խումբ Մանաչիդ պիտի գնային 5 հոգով: Ջնախատեսուած ուղիով խումբը բարձրանում էր դէպի Մանաչիդ: Թուրքերը նկատեցին իրար եռեւից շարժուող հետախոյզներին եւ նրանց թուաց, թէ Շահումեանցիները կորում են իրենց թիկունքը: Խուճապահար թողեցին Մանաչիդը եւ ճողոպրեցին: Արթուր Յակոբեանն առանց գնդակ արձակելու իր փոքրիկ խմբով գրաւեց գիւղը՝ ռազմաւար վերցնելով երկու նոր 100 մմանոց ականանետ, տրակտոր եւ փոքր տրամաչափի հրաձգային զէնքեր:*

Բուզլուխից եւ Մանաչիդից փախած ուժերը կուտակուել էին Էրքէչում, եւ սեպտեմբերի 15-ի ամբողջ օրն այստեղ կատաղի մարտեր էին ընթանում: Թուրքերն անկարող էին տեւական ժամանակ դիմադրել, եւ ազատագրուեց նաեւ Էրքէչը: Ռուսներն այդ ժամանակ չկային: Թուրքերը թողեցին ինքնագնաց հրանօթ, զրահամեքենայ, նաեւ 30-ից աւել դիակներ:

***Խաչիկ Սահակեանը** շտապում էր ազատագրուած Մանաչիդ: Հաւանաբար քչերն են իրենց գիւղը տեսել լրիւ դատարկուած. ո՛չ շուն էր հաչում, ո՛չ աքաղաղ էր կանչում, ո՛չ լոյս էր վառուում գիշերները, եւ մարդ մի ահաւոր դատարկութիւն էր զգում գիշերային այդ լռութիւնից: Գիւղում ոչինչ էր փոխուել, միայն **Երուանդի** տունն էին վառել: Շէնում կենդանի շունչ չկար: **Վանիկի** շունն էր մնացել կապուած՝ ոսկոր ու կաշի դարձած: Խաչիկը շանը բաց թողեց, կենդանին ջուր խմեց եւ կերակրելուց յետոյ Խաչիկից էլ չէր պոկւում:*

Մի անգամ, օրը ցերեկով, Խաչիկն անցնում էր եկեղեցու մօտով եւ ականջին հասաւ մի հմայիչ երգեցողութիւն: Եկեղե-

*ցու դռանը յենած էր մի աւտոմատ, ներսում մի հոգի երգում էր: Ներս մտաւ. մի երիտասարդ էր խորանի առջեւ երգում: Ասես գիւղը միանգամից կենդանացաւ: Երգողը **Աչտարակցի Մակիչն** էր:*

*Գիւղի ազատագրումից յետոյ պաշտպանութիւնը ղեկավարում էր **Նովիկը**, եւ հերթապահում էր աշխարհազօրը, բոլորը վերին Շէնից էին եւ մի փոքր խումբ Հոկտեմբերեանի տղաներից՝ **Ալիկի** հրամանատարութեամբ: Ջոկատի տղաները միշտ մարտական դիրքերում էին: Գիւղից **Խաչիկն ու Նորայրն էին**: Մի քանի ամիս էր ինչ գիւղում էին բնակւում նաեւ **Արկադիա Աւագեանը, Ռոմա Աւագեանը եւ Գերասիմ Մնացականեանը: Ցեղիքսն** աշխարհազօրի հետ գալիս էր հերթապահութիւնների:*

*Դրանից յետոյ յարձակումը զարգացաւ աւելի բարձրադիր դիրք գրաւող **Բաշքշլաղի** վրայ: Յաղթահարելով պաշտպանուող թշնամու յամառ դիմադրութիւնը՝ այս բնակավայրն էլ գրաւեցին, որից յետոյ ճանապարհը դէպի Գետաշէն եւ Մարտունաշէն երկար չէր: Բարեյաջող սկսուած գործողութիւնը, ցաւօք, չունեցաւ իր տրամաբանական աւարտը, քանզի Գետաշէնի եւ Մարտունաշէնի ազատագրման «հրամանը չկար»:*

*Հետաքրքրական է երեք գիւղերի ազատագրմանը մասնակցած **Մօնթէ Մելքոնեանի** ամփոփ նկարագրութիւնն այդ գործողութեան, որ նա կատարել է եղբօրը՝ **Մարգարին** գրած նամակի մէջ:* «Մօտ երկուս ու կէս շաբաթ առաջ մեկնեցի Լեռնային Ղարաբաղի Հիւսիսային՝ Շահումեանի շրջան: Տեղ հասայ Սեպտեմբերի 12-ին, այնպէս որ կարող էի մասնակցել հայկական այն գիւղերի յետգրաւման գործողութեանը, որոնք մի քանի ամիս առաջ զաւթել էր Ադրբեջանի ռազմական ոստիկանութիւնը՝ «ՕՄՕՆ»ը: Յարձակումն սկսուեց ամսի 14-ին: Հայկական կողմն ունէր 120 մարտիկ, այդ թւում՝ տեղի գիւղացիներ, զինեալներ Մարտակերտից եւ ՀՀ տարբեր շրջաններից ժամանած ջոկատներ: Ես այնտեղ ներկայ միակ սփիւռքահայն էի: Ողջ գիշեր անպատասխան կրակում էին մեզ վրայ: Առաւօտեան 6:20-ին մեր հրանօթը կրակեց առաջին անգամ՝

ազդարարելով գրոհի սկիզբը: Գործողութիւնը լաւ ծրագրուած եւ իրօք կազմակերպուած էր: Մենք յաջողեցինք գրաւել չորս բարձունքներից 3-ը, նաեւ գլխաւոր գիւղը՝ Բուզլուխը, եւ այդ ամէնը՝ չորս ու կէս ժամում: Յաջորդ օրը մենք առանց կռուի մտանք երկրորդ գիւղը՝ Մանաչիդ, սակայն երեկոյեան 6:00-ին ազերիները զրահամեքենայի օժանդակութեամբ հակայարձակման անցան: Այն յետ մղուեց երկու ժամ անց: Յաջորդ օրը /սեպտեմբերի 16-ին, նրանք եւս երկու հակայարձակում ձեռնարկեցին՝ երեք զրահամեքենաների աջակցութեամբ: Դրանք եւս յետ մղուեցին: Նոյն օրը նրանք սկսեցին ռմբակոծել Շահումեանի շրջանի արեւելեան մասում գտնուող Կարաչինար գիւղը: Ռմբակոծութիւնը չարունակուեց երեք օր անընդմէջ եւ նիւթական մեծ վնաս պատճառեց, նաեւ երկու հոգու կեանք խլեց: Սեպտեմբերի 18-ին մենք մտանք երրորդ գիւղը՝ Էրքեջ, մեր դիրքերի եւ Մարտունաշէնի միջեւ մնաց չորս կիլոմետր տարածութիւն: Ընդհանրապէս, ես տպաւորուած էի ողջ ռազմարշաւով: Վերջին գործողութիւնները ցոյց տուեցին, որ կարելի է շատ բան անել, եթէ հայերը հարկ եղած սպառազինութիւնն ունենան»:

Այսպիսով, սեպտեմբերի 14-18-ին Շահումեանի ուժերը ազատագրում են Բուզլուխ, Էրքէջ եւ Մանաչիդ գիւղերը: Հայկական երեք գիւղերի ազատագրումն ունէր բարոյահոգեբանական մեծ նշանակութիւն: Առաջին անգամ արցախեան հողի վրայ հայ բնակավայրեր են ազատագրւում եւ պաշտպանողի վիճակից հայոց զօրակատները դառնում են իսկապէս գրոհային եւ բարձրանում է թէ զօրաց եւ թէ ազգաբնակչութեան ոգին: Զաւթուած հողերը կրկին վերադարձուեցին իրենց իսկական տիրոջը: Այն վստահութիւն ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ եւ որերորդ անգամ փաստեց հայկական զօրքի յաղթականութիւնը միայն մէկ հակառակորդի պարագային: Յատկապէս այդ գիւղերի բնակիչները ոգեւորուած էին եւ նրանց սրտերից քար ընկաւ ու թեթեւացած էին զգում իրենց: Հասկանալի էր, որ այսուհետեւ շատ կարեւոր է չահել կենտրոնի գոնէ չէզոքութիւնը:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԵՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՇԱՀՈՒՄԵԱՆԻՆ

*Շրջանի համար այդ ծանր օրերին ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի պատգամաւորներ **Ս.Բելօզերցեւը, գնդապետ Վ.Սմիռնովը** եւ այլ գործիչներ ու լրագրողներ այցելում են Շահումեան, լինում Վերին Շէնում: Հայոց կողմին որոշակի օգնութիւն մատուցեց պատգամաւոր **Անատոլի Շաբադը**: Ներանք նոյնիսկ **Շահէն Մեղրեանի** հետ լինում են դաշտերում՝ յարձակուողներին ետ պահելու յոյսով, որոնք թոյլ չեն տալիս գիւղացիներին հաւաքելու բերքը: Սակայն այդ ակտիւութիւնը եւս ապարդիւն էր: Պատգամաւորներն այդ հարցով բազմաթիւ դիմումներ են յղում միջազգային կազմակերպութիւններին, նոյնիսկ հայցում են **Ջորջ Բուշի** օգնութիւնը, սակայն էլի անօգուտ: Այդ օրերին էր, որ Շահէն Մեղրեանը, պատասխանելով արտասահմանեան մի թղթակցի հարցերին, բացէիբաց յայտարարեց. «Եթէ ռուսական տանկերը չարժուեն մեր գիւղերի վրայ, ապա ռուս մայրերն իրենց զինուորներին կը դիմաւորեն ցինկէ դագաղներում»: Բռնագրաւուած երեք գիւղերի բնակիչներն այդ օրերին 700 հոգու ստորագրութեամբ համախօսական դիմում են ուղարկում **Գորբաչովին եւ Լուկիանովին** եւ արցախցուն յատուկ հաւատարմութեամբ եւ միամտութեամբ նրանցից խնդրում են օգնել վերադառնալու իրենց հայրենի գիւղերը: Շուտով այս յոյսն էլ ի դերեւ է լինում:*

*Կացութիւնը բարելաւելու նպատակով օգոստոսի 30-ին ռուս պատգամաւորները կազմակերպում են Շահէն Մեղրեանի հանդիպումը Գերանբոյի գործկոմի նախագահ **Իրշադ Ալիեւի** հետ: Հանդիպումը տեղի է ունենում, եւ կողմերը պայմանաւորւում են դադարեցնել կրակը եւ փոխադարձ մարդորսութիւնը, վերականգնել հեռախօսային կապը, չխանգարել բերքահաւաքի աշխատանքներին: Սակայն այդ համաձայնութիւնը եւս արդիւնք չտուեց:*

*1991ի սեպտեմբերի 21-22-ին ՌՍՖՍՀի եւ Ղազախստանի նախագահներ **Բ.Ելցինը եւ Ն.Նազարբաեւը, Ա.Մութալիբովի***

ուղեկցութեամբ խաղաղարար միսիայով ժամանում են Ստեփանակերտ եւ այնտեղից Գանձակով թռչում Ժելեզնովոդսկ: Ժելեզնովոդսկում երեք հանրապետութիւնների ներկայացուցիչների հետ հանդիպումներ ունեցան եւ նոյնիսկ դիտորդների խումբ ստեղծեցին՝ անաչառ լրատուութեան համար: Շահումեանի ներկայացուցիչն այդ հանդիպման ժամանակ կառաչինարցի **Սամսոն Ոսկանեանն** էր: Սակայն Ռուսաստանում տիրող իրադրութիւնն այնպիսին էր, որ այդ խումբը չէր կարող վճռական քայլեր կատարել՝ տարածաշրջանում իրադրութիւնը կայունացնելու, գոնէ թուրքերի կողմից ռուս վարձկանների գործունէութիւնն արգելելու համար: Բոլոր յոյսերն այդ ուղղութեամբ նորից սին դուրս եկան: Ադրբեջանի թուրքերը նոյնիսկ կարծես աւելի լաւ ըմբռնելով իրադրութիւնը՝ սաստկացրին յարձակումները եւ իրենք սկսեցին կիրառել նաեւ ռազմական ուղղաթիռներ: Նրանք Կարաչինարին սահմանակից Ջէյվա եւ Շեֆեկ գիւղերից տեղափոխեցին բնակիչներին եւ այդ տարածքից սկսեցին հրակոծել Կարաչինար, Մանասին Շէն, Գաղթուտ եւ Խրխապուտ գիւղերը: Հեռահար հրետանիով տներն էին ոչնչացնում: Շահումեանի հրամանատարութիւնն այդ գիւղերից դուրս բերելով կանանց եւ երեխաներին՝ տեղափոխեց Գիւլիստան: Գիւղերում մնացեալ ջոկատները հզօր հակահարուած տուեցին թուրքերին: Ետ մղեցին նաեւ Թոդանի կողմից Մանաչիդի վրայ յարձակումը: Հոկտեմբերին այդ բնակավայրերում եղան բարոնուհի **Քերոլայն Քոքսը** եւ քրիստոնէական մի կազմակերպութեան ղեկավար **Ջոն Այքները**: Բարոնուհին վերադառնալով Անգլիա՝ արտայայտուեց յանուն արցախահայութեան արդար պայքարի: Թուրքերն ամէն կերպ ուզում էին արգելակել Արցախեան հարցի խաղաղ կարգաւորումը՝ դիմելով զանազան արկածախնդիր արարքների:

Այլեւս կասկած չկար, որ Ադրբեջանի հետ հարցերը պիտի լուծուեն պատերազմական մեծածաւալ գործողութիւններով: Այնինչ Շահումեանի ինքնապաշտպանութեան միջոցները ծայրագոյնս նուազ էին, զինանոցը՝ աղքատ, տեխնիկան՝

հազուագիւտ, վառելիքը՝ չնչին, գինամթերքը եւ մնացեալ պիտոյքները՝ փոքր ժամկէտի վրայ:

*Երեք գիւղերի ազատագրումից յետոյ Շահումեանի շրջանում է լինում լրագրող **Նիկոլայ Կալինկինը**: Այնուհետեւ նա Մեղրեանին հանդիպում է Մոսկուայում եւ հարցազրոյց անում նրա հետ: Լրագրողի հետ այդ հարցազրոյցը ստոյգ եւ հաւաստի պատկերացում է տալիս Շահումեանում տիրող իրադրութեան մասին՝ լինելով Շահէն Մեղրեանի կերպարն արտացոլող առաջին հրապարակումներից մէկը: Լրագրողի վրայ մեծ տպաւորութիւն է թողել հայ փոքրաքանակ ռազմիկների եւ ժողովրդի համակամ վճռականութիւնը՝ մինչեւ վերջ պաշտպանելու հայրենի երկիրը: Իրրեւ Շահէն Մեղրեանի մասին արտաքին հայեացքով դիտուած առաջին լուրջ հրապարակումներից՝ այն ներառում ենք գրքի մէջ: Շահէն Մեղրեանի հետ ունեցած **Ն. Կալինկինի** հարցազրոյցը տպագրուել է «Նովոյէ վրեմիա» ամսագրի 1991-ի թիւ 47-ում՝ «**Հայդուկապետ Շահէնը**» վերնագրով: Իրրեւ բանալի խօսք՝ խմբագրութիւնը գրել է. «**Ժ»ի թղթակից Նիկոլայ Կալինկինը հանդիպել է մի մարդու հետ, որին փորձում են որսալ դիպուկահարները**»:*

«Եթէ դուք գնաք Հայաստան եւ որեւէ մէկի հետ զրուցելիս յիշէք Լեւոն անունով ձեր ծանօթին՝ անպայման կը նշէք ազգանունը, քանզի ձեզ կարող են չհասկանալ. այնտեղ Հայաստանի նախագահին բոլորը նոյնպէս կոչում են պարզապէս՝ Լեւոն:

***Ղարաբաղում ամենայայտնի անունը Շահէնն է:** Եւ եթէ որեւէ մէկն ասի. «Ես հէնց հիմա Շահէնի մօտից եմ գալիս»՝ ուրեմն հաստատ իմացէք, որ նա եկել է Շահումեանի շրջանից՝ ինքնապաշտպանութեան տեղական ջոկատների հրամանատարի մօտից:*

*Շահէնի մասին առաջին անգամ լսեցի Գետաշէնի բնակչութեան զանգուածային տեղահանումից քիչ յետոյ: Եւ միայն վերջերս իմացայ, որ նա ազգանուն էլ ունի՝ **Մեղրեան**:*

Նրա մասին լսել եմ ամէնաանորոշ ասէկոսներ եւ ամենահա-

կասական բնորոշումներ. «աւազակախմբի պարագլխից» մինչեւ «ժողովրդական հերոս»: Առաջին բնորոշումը գալիս է մա-մուլից, «Ընկեր Պուգօեազովի» նման մի բան, ուստի վստա-հութիւն չի ներշնչում: Միւս կողմից՝ «ժողովրդական հերոսը» չափազանց պինդ բնորոշում է՝ այն անառարկելիօրէն ընդու-նելու համար: Իսկ իմ անձնական տեսակէտն ունենալն ու արտայայտելը կը լինէր չափից դուրս համարձակ երազանք: Ես համոզուած էի, որ Մեղրեանը նոյնքան անորսալի է, որքան «Գետաչէնի վրիժառուները»: Ուստի, բոլորովին մտքովս չէր անցնում, որ Շահէնն է լինելու գրեթէ առաջին մարդը, որին ես պիտի հանդիպէի Շահումեանի շրջանում: Եւ ընդ որում՝ նա արտաքուստ չէր տարբերւում շրջապատողներից: Եւ միանգա-մից չէ, որ կռահեցի, որ սա «հէնց նոյն» Շահէնն է: Ընդ որում՝ դա Կարաչինարում ցնցահարուած ստանալու յաջորդ օրն էր եւ ես խելքս դժուարութեամբ էի հաւաքում...

*Միջահասակ, ամրակազմ Շահէնը, եթէ արեւահարուած չլինէր՝ իսկը փոխնախագահ **Ռուցկոյի** կրկնորդը կը լինէր: Ընդ որում նրա կարգավիճակը շրջանի չափումներով պակաս չէր. գործկոմի նախագահն էր /պրեզիդենտը/ եւ պաշտպա-նութեան ուժերի ղեկավարը /պաշտպանութեան նախարարը/: 39 տարեկան էր, ամուսնացեալ, երեք զաւակներ ունէր, Երեւանի համալսարանի դիպլոմ, տնտեսագէտ: Դիպլոմն ի զո՞ւր է փոչու մէջ կորչում: Շահէնը հակիրճ պատասխանեց. «Բոլորինն է այդպէս»:*

Երկրորդ անգամ մենք հանդիպեցինք Մոսկուայում, երբ պատահաբար իմացայ, որ նա մայրաքաղաք է ժամանել: Հե-ռախօսազանգերի երկար շարքը, վստահելի մարդկանց հետ հանդիպումը, պահախումբը... Շատ տպաւորիչ էր:

- Մէկ օրից աւել է ինչ իմացել եմ Ձեր Մոսկուայում գտնուելու մասին, սակայն Ձեզ գտնելը բաւականին բարդ էր: Ինչո՞վ է պայմանաւորուած գաղտնագործութիւնը:

- Ադրբեջանի պատժիչ մարմինների համար ես կը լինէի ցանկալի որս: Եթէ ադրբեջանական օմօնականները բռնում, տանջում եւ սպանում են պատահական մարդկանց, ուրեմն

կարելի է կռահել, թէ ինչ կը սպասէր ինձ, եթէ նրանց ձեռքն ընկնէի:

- Ես լսել եմ, որ Կարաչինարից իմ վերադառնալուց յետոյ Ձեզ վրայ մահափորձ են արել: Դա ինչպէ՞ս է եղել:

- Փառք Աստուծոյ, նրանք չյաջողեցին ինձ սպանել: Դա տեղի է ունեցել չէզօք գօտում, բանակցութիւնների ժամանակ: Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ սպան հրաւիրեց ինձ: Եւ ցոյց տուեց այն ծառը, որի վրայ տեղաւորուել էր դիպուկահարը... Ռազմական ներկայացուցիչների պահանջով դիպուկահարին այդտեղից հեռացրին եւ միայն դրանից յետոյ մենք չարունակեցինք բանակցութիւնները:

- Կենտրոնական իշխանութեան որոշ ներկայացուցիչների կարծիքով՝ Դուք գլխաւորում էք անօրինական զինեալ խմբաւորումներ, որոնց պէտք է զինաթափել, իսկ նրա ռազմիկներին՝ ձերբակալել եւ պատասխանատուութեան ենթարկել...

*- Այդ պարագային պիտի պատասխանատուութեան ենթարկել Շահումեանի շրջանի 11 հայկական գիւղերի 20 հազար բնակիչներին: Սակայն արդէն սկսում են հասկանալ այն իրավիճակը, որում մենք ենք գտնուում: Երկխօսութիւնը կայ եւ դա մեծ առաջընթաց է: Մեզ արդէն ընդունել են **Վոլսկին, Լոբովը** - դրանք այն մարդիկ են, ովքեր աշխատել են Ղարաբաղում եւ ծանօթ են խնդրին: Մենք եղել ենք **Բուրբուլիսի** մօտ:*

- Եւ ինչ, փոխըմբռնման հասե՞լ էք:

- Ինձ թւում է, այնուամենայնիւ, նրանց դարդը մենք չենք: Բոլորն ուզում են աչք փակել Շահումեանի դէմ: Սակայն մեր շրջանը Ղարաբաղի ջիղն է, եւ եթէ ցանկութիւն կայ լուծելու Ղարաբաղի հարցը, ուրեմն առաջինը պիտի լուծուի Շահումեանի հարցը:

Հայերն այդ հողակտորի վրայ ապրում են անյիշելի ժամանակներից: Դա Ղարաբաղի պատմական տարածքն է: «Ցեղափոխական նպատակայարմարութիւնից» դրդուած հարցին տուել են կամայական լուծում՝ մեր երկիրը միացրել են

Ադրբեջանին՝ չհարցնելով նրա վրայ ապրող ժողովրդի կամքը: Եւ արդ, այդ ժողովուրդը երկնքի եւ երկրի միջեւ ինչ-որ տեղ է, լրիւ անորոշութեան մէջ: Շահումեանի շրջանը ո՛չ Ադրբեջանի կազմի մէջ է, ո՛չ Հայաստանի, ո՛չ ԼՂԻՄի: Այն միայն որեւէ մէկի կողմից չնդունուած Ղարաբաղի Հանրապետութեան մէջ է...

Այն յայտարարութիւնը, որ մեր գիւղերում խաղաղ բնակիչներ չկան,- միայն ռազմիկներ են, ժողովրդին զրկել է ինքնապաշտպանութեան իրաւունքից, իսկ դրա հետ միասին՝ նաեւ գոյութեան իրաւունքից: Առաջուայ նման մենք զրկուած ենք մեր իրաւունքների եւ շահերի պետական պաշտպանութիւնից: Ո՛չ կենտրոնը, ո՛չ Ադրբեջանը չեն ցանկանում ընդունել մեր իրաւունքները:

- Դուք գտնում էք, որ իրաղրութիւնը Շահումեանում աւելի դրամատի՞կ է, քան բուն ԼՂԻՄում:

- Եթէ ԼՂԻՄի հայերին կարելի է պաշտպանել՝ այնտեղ զօրք մտցնելով, ապա Շահումեանի շրջան այդպէս վարուել այլեւս կարելի չէ. Նախագահ Գորբաչովի հրամանագրով այնտեղ հանուած է արտակարգ դրութիւնը: Որպէս դրա հետեւանք՝ ամենախոսական պատերազմ է ընթանում՝ մարդկային զոհերով եւ տնտեսական հսկայական կորուստներով: Բնական է ուստի մեր ճգտումը վերադառնալու Ղարաբաղի կազմի մէջ:

- Դուք ասել էք, որ ձեզ վրայ մահափորձ են արել բանակցութիւնների ընթացքին: Պարզւում է ուեմն, որ բանակցութիւններն այնուամենայնիւ տեղի են ունենում: Տեղաշարժ կա՞յ արդեօք:

- Մեր ճակատագիրը չի կարող լուծուել այդ մակարդակով: Ենթադրենք անհաւանականը, ընդունենք, որ մենք համաձայնուել ենք կրակի դադարեցման հարցում: Յաջորդ իսկ օրը Բաքուն կը փոխի իր ներկայացուցչին եւ ռազմական գործողութիւնները կը վերսկսուեն:

Եթէ տեղական մակարդակի բանակցութիւններն ինչ-որ իմաստ ունենային, մեր գիւղերի բնակիչները վաղուց արդէն իրար մօտ կը հիւրընկալուէին: Այդպիսի հարցերը կարաչինա-

րում չեն որոշւում: Իսկ արդ առճակատումն այնպիսի մակարդակի է հասել, որ «ժողովրդի անունից» խօսող քաղաքական գործիչները արդէն ի զօրու չեն խաղաղութիւն հայթայթելու. ատելութիւնը դուրս է եկել վերահսկման սահմաններից: Մարդիկ կուրացել են քարոզչութիւնից:

Բանակցութիւնների ժամանակ մենք ադրբեջանցիներին ասել ենք, որ ոչ ոք չունի իրաւունք մեզանից հող կորզելու: Զրուցակցիդ ասում ես. «Տե՛ս, չէ՞ որ երեք տարի առաջ դու չէիր հաստատում, որ սա քո հողն է»: Լռում է... Այնքան են /լկտիացել/, որ մեր բոլոր եկեղեցիներն ու խաչքարերն անսքօղ կերպով յայտարարում են ադրբեջանական եւ պահանջում են, որ բոլոր հայերը թողնեն չրջանը:

Մենք նրանց առաջարկել ենք ազատել Էրքեջ, Բուզլուխ, Մանաչիդ զաւթեալ գիւղերը, սակայն մեզ պատասխանել են, որ գիւղերն արդէն ադրբեջանական են եւ հայերն այլեւս այդտեղ չեն ապրելու... Դժուար է դրական արդիւնքներ ակնկալել այդպիսի բանակցութիւններից: Սակայն զէնքով էլ կարելի չէ լուծել բախումը - դրանով կարելի է միայն պաշտպանուել: Բանակցութիւնները հնարաւոր են միայն փոխադարձ բարի կամքի առկայութեամբ:

Ադրբեջանական ղեկավարութիւնը ոչ մի կերպ չի ուզում հասկանալ, որ կարելի չէ յոյսը դնել միայն զինեալ ուժերի մեծաքանակութեան վրայ, եւ նրանց գործողութիւնների հետեւանքով քանդուելու են ոչ միայն հայերի տները: Ոչ մի կարաչինարցի չի կամենայ գիտակցաբար քանդել Հարեւանի տունը: Սակայն պատերազմի ընթացքում այլեւս չես կարող մտածել՝ ամէն կերպ կանգուն թողնել այն տունը, որտեղից կրակում են: Դուք անձամբ էք տեսել՝ ինչպէս է տուժել ադրբեջանական Շեֆեկ գիւղը: Մենք հրետանի չունենք՝ բացառեալ այն երկու միաւորը, որ մեզ են հասել իբրեւ ռազմաւար: Սակայն մեզ քիչ արկեր են «թողել», ուստի զէնքը դեռեւս պահեստային է: Շեֆեկի բոլոր վնասուած տները ձեռքի զէնքի տեւական փոխհրաձգութեան հետեւանք են, եւ ոչ թէ գիւղի ծրագրուած ոչնչացում է եղել հրետանային

կրակով, ինչպէս մեր գիւղերի հետ է վարւում ադրբեջանական կողմը…

- Ինչպիսի՞ եղանակով են կազմաւորւում ինքնապաշտպանութեան խմբերը:

- Մեզանում համընդհանուր զինապարտութիւն չկայ: Մեզ մօտ գալիս են նրանք, ովքեր դա իրենց պարտքն են համարում: Լինում են կադրային սպաներ, կան նաեւ ռազմական փորձառութիւն ունեցող մարդիկ: Եւ նոյնիսկ Խորհրդային Բանակի զինուորներ, որոնք չեն ցանկացել մասնակցել քաղաքացիական բնակչութեան դէմ կատարուող գազանութիւններին, որի ականատեսներն են նրանք դարձել Գետաշէնում եւ Մարտունաշէնում: Նրանց մէջ կան ռուսներ, ուկրաինացիներ, կորեացիներ /հաւանաբար վրիպակ է թոյլ տրուել եւ խօսքը ղազախների մասին է.-Ա.Պ./:

Մեզ մեղադրում են այն բանում, որ այստեղ կռւում են ոչ միայն շրջանի բնակիչները: Ինչ անես, եթէ մարդը ծնուել է Շահումեանում, սակայն գնացել է աշխատելու՝ փոխելով գրանցման վայրը, միեւնոյնն է՝ նա իր հայրենիքը համարում է Շահումեանը: Ինչո՞ւ նա իրաւունք պիտի չունենայ պաշտպանելու իր հողը, նախնիների չիրիմները:

- Խրամատներում ես տեսել եմ 14-17 տարեկան դեռահասներ…

- Բուզլուխում 15 մարդիկ պաշտպանւում էին 200 օմօնականներից: Անյուսալի էր վիճակը: Եւ երկու անտուն անտէր երեխաներ հասցնում էին բացել արկղերը, թափել փամփուշտները, լիցքաւորել աւտոմատի պահունակները, մատակարարել եւ դադարներ չեղան: Գրոհը ետ մղելուց յետոյ ռազմիկներն իրենք փորձեցին նոյն գործն անել, բայց նրանց մօտ ոչինչ չէր ստացւում, իսկ այդ երկուսն անում էին:

Երբեմն օմօնականների պատրաստուածութեան վիճակը համեմատում են հայ «ռազմիկների» մակարդակին: Ես դրա մասին դատել չեմ կարող: Սակայն մեր մարտիկները գիտեն ինչի համար են կռւում, իսկ դա արդէն բաւական է: Մեր կարգապահութիւնը շատ բարձր է, սակայն այն դագանակային

չէ: Դա արդար գործի խորագոյն գիտակցութիւնն ունեցող մարդկանց կարգապահութիւն է: Մեզ մօտ կուռւում է ժողովուրդը եւ ոչ թէ թափթփուկները: ՕՄՕՆի բարոյական մակարդակի մասին կարելի է դատել այն հիմքով, թէ ինչպէս է այն կազմաւորուում եւ ինչպիսի մարդկանցից: Նրանք «հէնց այնպէս» զոհուել չեն ուզում:

Սակայն նրանց մէջ էլ հաւանաբար կան մարդիկ, որոնք նուիրուած են իրենց գաղափարին...

Օմօնականների գաղափարայնութիւնը անկարելի է բարձր լինի այն տղաների գաղափարապաշտութիւնից, որոնք պաշտպանում են իրենց տները, իրենց երեխաներին կամ նրանց, որոնց քրոջն են բռնաբարել...սպանել են զաւակին: Կարծում էք մե՞ծ ջանքեր ենք գործադրել այդ երեք գիւղերը ազատագրելիս: Այնտեղ եղել են 600-700 օմօնականներ, եւ նրանք փախել են այն ջոկատից, որը թուաքանակով 7-8 անգամ փոքր էր:

Երբեւիցէ, եթէ ողջ մնացինք, մենք ձեզ հետ կը հանդիպենք Գետաշէնում:

-Դուք գտնո՞ւմ էք, որ Գետաշէնը դեռեւս կարելի է ետ վերցնել:

- Այն կարելի է ետ վերցնել հէնց հիմա... Սակայն սկսուել են բանակցութիւնները եւ մենք չենք կամենում Հայաստանին անյարմար վիճակի մէջ դնել: Իսկ Գետաշէնը վերադարձնելուն մեզ չեն կարող խանգարել ոչ ԲՏՌները, ոչ օմօնականների քանակը, որոնք տեղաբաշխուած են այնտեղ: Այդ ամէնը դեռեւս մեծ բան չէ, քանզի նրանց համար Գետաշէնը ինչ-որ վերացական առարկայ է, որը պիտի պաշտպանել հրամանի համաձայն: Սակայն մի գուց է դա իրենց համար դեռեւս տաքուկ, յարմար բնակարաններ են:

- Ժելեզնովոդսկի համաձայնագրի պայմաններով հոկտեմբերի 1-ից բախման շրջաններում պէտք է սկսէին աշխատել դիտորդները Ռուսաստանից եւ Ղազախստանից: Հոկտեմբերի 8-ին, երբ ես մեկնում էի Շահումեանից, դեռեւս դիտորդներ չկային: Երեւացե՞լ են նրանք արդեօք իմ մեկնելուց յետոյ:

- Նրանք չկան առ այսօր: Ես չեմ ուզում քննադատել համաձայնագիրը, սակայն փաստը մնում է փաստ. այն ոչ միայն չի գործում, այլեւ նրա ի յայտ գալուց յետոյ մեր վիճակը կտրուկ վատացել է: ՕՄՕՆի գործողութիւնները դարձել են աւելի լկտի, աւելի դաժան: Նրանք ուժեղացրել են գիւղերի հրակոծումը՝ գործածելով բնակիչների դէմ ԲՏՒները եւ տանկերը, իրենց բոլոր ծանր զէնքերը:

- Շահումեան աւանում ես ուշադրութիւն դարձրի հիւանդանոցի կողքի չէնքերի խմբին: Ցետոյ ես իմացայ, որ դա դպրոց է: Ինձ զարմացրեց նրանց տեսքը. կարծես նրանք «Ալազանով» հրթիռակոծուած լինէին: Լուսամուտները չկային, պատերը վնասուած էին, հրդեհի հետքեր կային... Ինձ բացատրեցին, որ ամռանը դպրոցը վերածուել է զօրանոցի. այնտեղ տեղաւորուել են ներքին զօրքերը:

- Մենք նրանց ոչ մի առիթ չենք տուել մեզնից նեղանալու: Աւելին, բնակիչները զինուորներին հեռուստացոյցներ, տեսամագնիտոֆոն էին տրամադրում ժամանակաւոր օգտագործման համար: Շրջանային թերթի խմբագրութիւնը նրանց տուել է «գազիկ»... Նրանք գնացել են գիշերը, իրենց հետ տանելով այդ ամէնը, ինչ իրենց չէր պատկանում: Դպրոցը դարձրել են լիովին անպիտան, աւերել սպորտային գոյքը, քանդել տախտակամածը, ցեմենտով լցրել զուգարանների կոնքերը...

- Ինչո՞ւ:

- Անկարելի է բացատրել: Սակայն նրանք Շահումեան էին եկել, ըստ իս, յատուկ նպատակով՝ ապահովելու «խաղաղ» տարհանումը. ուղեկցելու տարհանուող բնակչութեան շարասիւնները ԼՂԻՄի ճանապարհով: Նրանք ապրում էին մեզ հետ եւ սպասում էին թէ երբ ՕՄՕՆը 4-րդ բանակի հետ միասին դուրս կը հանի բնակչութեանը: Այն ժամանակ յայտորդը լինելու էր Վերին Շէնը: Շնորհակալ ենք Ռուսաստանի պատգամաւորներին, շնորհակալ ենք լրագրողներին, երկնային արքայութիւն մեր տղաներին, որոնք գոհուել են այնտեղ, որոնց շնորհիւ տարհանումը կանգնեցուել է:

* * *

Իմ վերջին հարցը ոչ թէ Շահէն Մեղրեանին է ուղղուած, ոչ էլ ինքնապաշտպանութեան ջոկատների հրամանատարներին, այլ ԽՍՀՄ ՆԳՆ ղեկավարներին, որին ենթարկւում է ներքին զօրքը. Նախարարութեան ծրագրի մէջ մտնո՞ւմ է իր իրաւասութեան տակ գտնուղ ստորաբաժանումների հացրած վնասի փոխհատուցումը: Շահումեան աւանում հրակոծուած գիւղերից փախած երեխաների զգալի հոսքի պատճառաւ չեն բաւականացնում դպրոցական տեղերը: Ամենամեծ դպրոցը ներքին գործոց յաղթական տղաները դարձրել են անպիտան: Երեխաները դպրոց չեն գնում: Վերանորոգման համար ոչ միջոցներ կան, ոչ տեխնիկայ, ոչ նիւթեր:

"Новое время" N 47, 1991

ԲԱԽՈՒՄՆԵՐ ԿԱՐԱՋԻՆԱՐՈՒՄ

*Բախումներ լինում էին գրեթէ ամէն օր եւ լարուածութիւնը չատ մեծ էր: Կարաչինարում գտնուղ թալինցիներից **Արշաւիր Ասլանեանը** օրագրել է իրենց տարածքի իրադարձութիւնները եւ օրագրի ընթերցողը յստակ կը պատկերացնի ենթաչրջանում այդ օրերին բնորոշ պատերազմական պատկերի մասին: Նմոյշի համար վերցրել ենք 1991ի հոկտեմբերի 1-ի ամփոփումը.* «Դեռ նոր էինք մտել դիրքերը, ժամը 10.30-ին թուրքերը սկսեցին գնդացրային ուժեղ կրակը եւ դրանով սկսուեց նրանց յարձակումը: Նախորդ օրը նրանք մեծ ուժեր էին կենտրոնացրել Շեֆեկ գիւղում... Եւ սկսուեց նրանց յարձակումը, Շեֆեկի միջից աչխատում էին նրանց գնդացիրները դէպի մեր խմբի դիրքերը: Դրանից անցաւ...զգուշացրէք, որ այդ զրահամեքենան չարժուում է դէպի մեր դիրքերը, բայց մի քանիսը բացառում էին այդ կողմից զրահամեքենայի մուտքը: Զանցած 30 րոպէ, զրահամեքենան դուրս եկաւ մեզանից մօտաւորապէս 100մ հեռաւորութեան վրայ գտնուղ ձորից եւ չարժուեց մեր դիրքերի վրայ, իր յետեւից բերելով օմօնականների հետեւակը: Այստեղ իր մեծ ազդեցութիւնը թողեց մեր խմբապետի բացակայութիւնը, որին լսում էին բոլորը: Դիրքերում սկսեց խուճապը: Դիրքերը լքե-

ցին վաշտի տղաները, բացի մէկից՝ **Աբրահամ անունով /Ապարանից**/ եւ մեր խմբի 8 տղաներ, բացառութեամբ խմբապետի եւ 16-ի, որոնք, ասացի, որ հետախուզութեան էին: Մեր տղաներն էլ, տեսնելով, որ ոչ մի հակատանկային զէնք չկայ մօտները, կամաց-կամաց ետ նահանջեցին, բայց չհասցրեցին ետ քաշուել միասին, կտրուեցին՝ զրահամեքենայից ներքեւ եւ վերեւ... Զրահամեքենան եկաւ անցաւ դիրքերի վրայից: Աբրահամը մնաց զրահամեքենայի տակ, դիրքերի մէջ, իսկ **Խաժակը** դարձաւ եւ կրակ բացեց հետեւակի վրայ: Ես, **Գէորգը եւ Արծիւը** բարձրացանք զրահամեքենայից աջ, գոմի մօտ եւ կրակ բացեցինք հետեւակի կողմ: Հէնց այդ ժամանակ էր, որ վրայ հասաւ մեր խմբապետը տղաների հետ եւ կարգաւորեց ամէն ինչ: Միայն դրանից յետոյ դիրք վերադարձան միւս տղաները եւ սկսուեց կռիւը հետեւակի հետ, որոնք փորձում էին մօտենալ մեր դիրքին: Դա նրանց չյաջողուեց: Կէս ժամ անց հետեւեց զրահամեքենայի երկրորդ գրոհը, սակայն այն արդէն հեշտութեամբ ետ մղեցինք...»:

*Նախքան մեծ գործողութիւնները՝այդ օրերին մի միջադէպ եւս եղաւ: 1991ի հոկտեմբերի 11-ի մառախլապատ օրը թուրքերի ուղղաթիռը կարաչինարի եւ Շեֆեկի միջեւ մեր տարածքի վրայ սխալմամբ վայրէջք կատարեց: Մեր մարտիկները սպասում էին ուղղաթիռին եւ թշնամու ուղղաթիռը կարծում են, թէ մերն է: Դիրքերում Թալինի եւ Աբովեանի տղաներն էին:Նրանք չտապում են դէպի ուղղաթիռը, որպէսզի դիմաւորեն Երեւանից եկող մեր ջոկատին: Ուղղաթիռի վայրէջքից յետոյ թուրք զինուորներն իջնում են եւ երկու խմբերը մօտենում են իրար: Առջեւից ընթացքող **Արշաւիր Ասլանեանը եւ Աթաբեկ Վարդանեանը** յանկարծ լսում են, որ եկողները թուրքերէն են խօսում: Կողմերը ճանաչում են իրար եւ փոխադարձ կրակ բացում: Արշաւիրն ու Աթաբեկը զոհւում են տեղում: Մեր մնացեալ տղաները կրակ են բացում ուղղաթիռի վրայ, որն օդ բարձրանալով՝ գնդացրային կրակ է տեղում մեր տղաների վրայ: Օգնական ուժերը երբ հասնում են՝ ուղղաթիռը ծուխ արձակելով հեռանում է դեպի Շեֆեկ եւ յայտնի չէ՝*

խփուել էր թէ ոչ:

Քաղուածք Աբովեանի ջոկատից ***Սամուէլ Զոհրաբեանի*** *օրագրից*

12.10.1991./Դիրքերից վերադառնալուց յետոյ/ հաւանաբար ննջել էի, բայց լսեցի ուղղաթիռի ձայնը, որը պտտւում էր գիւղի վրայ: Յետոյ նրա ձայնը մի պահ կտրուեց եւ քիչ անց գիւղի վրայ սկսեց կրակել ԱԳՍը շատ մօտիկից: Իրարանցում սկսուեց գիւղում: Մեր տղաները տագնապած դիմեցին զէնքին, բայց ***Տիգրանն ու Կարէնը*** *միանգամայն անվրդով էին: Վեր կացայ, կապեցի գօտին, աւտոմատը վերցրած գնացի: Տեղացիները տագնապած ինչ-որ բան էին պատմում... Հասկացայ, որ ՕՄՕՆի ինքնաթիռը սխալմամբ մեր գիւղն է իջել /ամպամած էր եղանակը/ եւ տեղացի տղաներից մէկին դիմել է թուրքերէն, վերջինս էլ շատ նման էր թուրքի, ինձ ասաց, որ ինքը պատասխանել է թուրքերէն ու իրեն դցել փչի /՞/ տակը: Այդ ժամանակ գիւղի տղաներից* ***Փոքր Գագոն*** *վազելով եկաւ ու ասաց, որ աւտօ է պէտք, գիւղից Արտուշը խփուել է: Ես անմիջապէս կողքիս կանգնած վիլիսը ուղարկեցի այդտեղ ու ես էլ առաջացա: Բեկորը դիպել էր փորին ու գլխին: Արեան մէջ էր: Մի երկու կին էլ երեւի վիրաւորուել էին: Դրանց էլ Մոսկվիչով ուղարկեցին: Կանայք տարբեր բաներ էին ասում, բան չէր հասկացւում՝ ՕՄՕՆը գիւղո՞ւմ է թէ ոչ: Տղաներին վերցրած՝ տեղացի* ***Սամուէլի*** *ուղեկցութեամբ գնացինք: Ճանապարհին վերադառնում էին* ***Ռոմիկը եւ Տիկոն****: Ռոմիկն ասաց. «Եթէ դա մեր ուղղաթիռն էր, ապա ինչո՞ւ Աչոտին ու Արտաւազդին տարան»: Ես անցայ մեր դիրքը, ուր* ***Ժորան ու Միշան*** *մի քանի րոպէ առաջ էին հասել: Իմ յետեւից եկան միայն ... ու* ***Գնէլը****: Յետոյ լսեցինք* ***Մարատի*** *աղիողորմ ճիչը, որը՝ Աչո՜տ, Աչոտ էր կանչում: Ուղղաթիռը հեռացել էր մեր դիրքերից 150 մետրի վրայ գտնուող տանձի ծառի մօտ, ցորենի հարթ արտում: Այդտեղ էլ գտան Աչոտի դին, ոտքերը կտրուած, բեկորներից, գնդակներից... Սարսափը պատել էր ամենուր: Ես կատաղած էի եւ թուրքերի մի կրակոցին պատասխանեցի հրանօթի 3-4 կրակոցով: Դա մերոնց ուշքի բերեց եւ*

որոշ ժամանակ անց **Վարդանը**, իր ընկերը /գնդի տղերքից/, մեր տղաները, բացի Կարէնից ու Ժորայից վազքով ու լրիւ զինավառ հասան դիրքերը: Բերել էին նաեւ տաք չորեր: Ես կարգադրութիւններ արեցի եւ Շէյկի հետ վերադարձայ գիւղ իմ տաք չորերը հագնելու եւ տղաներին հաց բերելու: Թալինի ու Բաղրամեանի տղաները որոշում էին, թէ ով գնայ, ով մնայ /Շահումեան/, բոլորն էլ գնացին ի վերջոյ: Մեր սենեակում միայն **Արտակն էր:** Երբ հարցրի՝ ինչ կայ, չկայ, նա ասաց, որ ուսը ուժեղ ցաւում է: Պարզուեց, որ երբ ուղղաթիռն իջել է, **Ռօմիկն ու Արտակն** անմիջապէս վազել են այդ ուղղութեամբ: Ուղղաթիռը կանգնած է եղել: Արտակը կարաբինով նշանառութեան տակ է պահել օդաչուին եւ Ռօմիկից թոյլտուութիւն է վերցրել կրակելու: Վերջինս թոյլ է տուել, բայց հէնց այդ ժամանակ գնդի կողմից ինչ-որ ապարանցի ուժող գոռացել է՝ թէ մերոնք են, մի՛ կրակէք: Օգտուելով դրանից՝ թուրքերը ուղղաթիռը օդ են բարձրացրել: Այդ պահին Արտակը խփել է խցին, մի հատ էլ հասցրել է պոչին խփել: Ողղաթիռից արձակած կրակահերթը ստիպել է մի կողմ նետուել, որն էլ վնասել է նրա ուսը: Այդ բոլորը պատմելիս՝ մենք հագնում էինք մեր չորերը, հանկարծ մի վիլիս կանգնեց դպրոցի դուռը եւ սկսեց ազդանշան տալ: Ես ճայնեցի, թէ ով կայ: Արտակն ընդառաջ գնաց: Ես մինչեւ առաջացայ՝ տեսայ վիլիսի ետեւի մասում մի դիակ կայ: Կարծեցի, թէ Արտուշն է մահացել, բայց Արտակն ասաց, որ Աչոտի դիից մի 20 մ այն կողմ գտել են **Արտոյի** դին: Աւտոմատը բերել էր հետը: Ես ստուգեցի պահունակը, պարզուեց, որ կրակել է Արտոն»:

Կարաչինարի ուղղութեամբ պաշտպանութիւնն այս միջադէպից յետոյ բաւականաչափ լաւ է կազմակերպւում՝ առանձին ջոկատները **Գենադի Ղուլեանը** վերակազմաւորում է գումարտակի՝ նախատիպ ունենալով Խորհրդային բանակի համանուն զօրամասը եւ չնայած տեղանքի բարդութեանը թուրքերը չեն կարողանում ճեղքումներ կատարել մինչեւ 92 թուականի յայտնի դէպքերը:

Նոյեմբերի 26-ին թուրք գինեալ ջոկատները յարձակւում են

Շահումեանի չրջանի վրայ՝ փորձելով ներխուժել ***Կարաչինար****: Նրանք ուժգին հակահարուած են ստանում եւ նահանջում: Սակայն դա ղրուագային մի պահ էր եւ վիճակը գնալով բարդանում է:*

ԹՈՂԱՆԻ ՄԱՐՏԸ

Դեկտեմբերի 12-ի վաղ առաւօտեան սկսւում է Թողանի վրայ մարտական գործողութիւնը: Արդեօ՞ք ռազմական անհրաժեշտութեամբ էր պայմանաւորուած այս մարտը, թէ կամայականութեան արդիւնք էր, ինչպէս մեկնում է այն ***Դնեպրիկ Բաղդասարեանը****: Թողանի մարտը Դնեպրիկ Բաղդասարեանը ներկայացնում է որպէս վրիժառութեան գործողութիւն՝ ականի վրայ պայթած «Մեծն Տիգրան» ջոկատի տղաների համար:* «Դեկտեմբերի 10-ին Էրքէչի մեր բազայում յայտնուեցին **Դեւ** մականունով **Դաւիթ Սարապեանը**, որի հետ ես ծանօթ չէի, Էրքէչի տարածքն ականապատած աւագ լեյտենանտ **Համլետ Մինասեանը** եւ նրանց մի ընկեր: Նրանք ինձնից գաղտնի ինչ-որ խօսակցութիւններ էին վարում տղաների հետ, ու երեկոյեան եկան եւ իմ կարծիքն էին ուզում իմանալ՝ **Տիգրանի** համար վրէժխնդիր լինելու վերաբերեալ այն պարագային, երբ տղաները զոհուել էին ոչ թէ թուրքերի ձեռօք, այլ Համլետի դրած ականից, եւ որին ուղարկել էին իմ ահազանգերից մէկ ու կէս ամիս անց, այն էլ՝ պատահարից յետոյ: Մեր դէպքում պարզ չէր, թէ ինչո՞ւ Տիգրանը մեքենան լցրել էր «Մեծն Տիգրանի» լաւագոյն մարտիկներով եւ չարժուել դէպի հակառակորդի կողմը: Նոյեմբերի վերջի օրերին ականի պայթիւնից զոհուել են.«Մեծն Տիգրանի» չտաբի պետ **Տիգրան Սարգսեանը, Արտուշ Ծատուրեանը** /Շահումեան աւանից, վիլիսի վարորդը/ եւ վիրաւորուել են 4 մարտիկներ: «Մեծն Տիգրան»ից երբ ոչ մի մարտական խնդիր չէր առաջադրուած, ինքն էլ նոր էր ժամանել եւ ծանօթ չէր մարտական իրադրութեանը եւ ընդհանրապէս ոչ մի գործողութիւն չէր կարող կատարել: Պայթիւնից յետոյ կենդանի մնացած տղաներից ոչ մէկը չէր կարողանում պատասխանել այդ հարցին: Ինչ վերա-

բերում է վրիժառուներին, մասնաւորապէս Դեւիին, որի ազդեցութեան տակ էր յայտնուել Համլետ Մինասեանը, ապա մէկ օր ու գիշեր նրա հետ չփուելու, զրուցելու եւ վիճաբանելու ընթացքում համոզուեցի, որ այդ երիտասարդն ինչ-որ պատճառներով ընկել է հոգեկան ստրեսի մէջ, ցուցաբերում է կամքի բացարձակ ազատութիւն (ի միտ ունի կամայականութիւնը - Ա.Պ.) եւ ձգտում է գիտակցուած, բայց անիմաստ ինքնազոհողութեան, եւ իր յետեւից ուզում է տանել ուրիշների» *(նոյնը, էջ 123-124): Հրետանաւոր սպան, իր ասելով, չի յաջողում կանխել այդ «արկածախնդիր» գործողութիւնը: Ըստ հրետանաւորի՝ վրէժխնդրութեան հարց չի կարող լինել, իսկ Թոդանը զրոհել կարելի է միայն յստակ մարտավարական նկատառումներով՝ ելնելով անհրաժեշտութիւնից եւ մեր պաշտպանութեան շահերից, այլ ոչ թէ առանձին անձանց զգացմունքներից:* «Ասացի նաեւ, որ նրանք ոչ մի առընչութիւն չունեն չրջանի պաշտպանութեան հետ եւ իրաւունք չունեն ուրիշներին ներքաշել այդ անիմաստ գործողութեան մէջ, ուստի, կա՛մ թող մնան եւ ուրիշների նման իրենց հայրենասիրական պարտքը կատարեն ընդհանուր շարքում, կա՛մ անմիջապէս ետ վերադառնան: Դրանից յետոյ նրանք ետ քաշուեցին ինձնից եւ գործ էին ունենում **Սերգէյ Զալեանի** հետ: Ես նոյնիսկ զարմացել էի, որ **Շահէն Մեղրեանն** էլ է ներքաշուել այս արկածախնդրութեան մէջ, բայց յետոյ իմացայ, որ «Թոդան» գործողութեանը հաւանութիւն է տուել **«Գուրգէնը»՝ գեներալ Դալիբալթայեանը**, եւ դա ինձ համար առաւել անհասկանալի էր» *(նոյն տեղում):*

Թոդանի ազատագրումն այնքան էլ ենթակայական մի դիրքորոշման խնդիր չէր, այլ վաղուց հասունացած անհրաժեշտութիւն: Ոչ ոք չէր հանդուրժի իրենից այդքան մօտ թշնամական կրակակէտի գոյութիւն: Պարզապէս պահը ճիշտ չէ ընտրուած եղել: Թոդանի մարտը սկսւում է հրետանային հարուածով: «Դիմահար կրակով սկսեցի մաքրել «Մեչիդի» առաջապահ դիրքերը, իսկ երբ ազերիները փախան այնտեղից, կրակը փոխադրեցի Թոդանում գտնուող հակառակորդի վրայ:

Քանի որ թշնամու հրետանին մի քանի դիրքերից սկսեց կրակ վարել մեր միակ հրանօթի վրայ՝ հրետանաւորներիս ուղարկեցի թաքստոց, պատսպարեցի նաեւ ինձ հետ գտնուող «Մեծն Տիգրանի» անձնակազմը: Հրանօթից կրակ էի վարում մենակ՝ միաժամանակ կատարելով նշանառուի, տեղակայողների եւ լիցքաւորող-հրաձիգի պարտականութիւնները... Մօտ 80 արկ արձակեցի թշնամու դիրքերի ու Թոդանի վրայ, որպէսզի մեր հետեւակը կարողանայ առաջ շարժուի եւ կորուստներ չտայ: Մինչեւ Թոդան մտնելը, երբ ինձ խնդրեցին դադարեցնել կրակը, մեր կողմից ոչ մի զոհ ու վիրաւոր չկար» (նոյնը, էջ 125-126):

*Ոգեշնչումը մարդկային գրեթէ ընդհանրական յատկանիշ է եւ չի բացառում, որ հրետանաւոր սպան էլ՝ համակուած այդ զգացումով՝ իր վերաբերմունքի մէջ ցուցաբերէր ենթակայական հակում: Մասնաւորապէս այս հարցում պիտի ասենք, որ Թոդանի գրաւումը մեր զօրաց համար եղել է բնական անհրաժեշտութիւն եւ նախատեսուած է եղել վաղուց, բայց գործողութեան ծրագիր չի եղել: Իրադրութիւնն այսպիսին էր. ղեկտեմբերի 10-ին պիտի ազատագրուէր Թոդանի մերձակայ Մեչիդի դիրքը, որտեղից թուրքերն ուղիղ նշանառութեամբ խփում էին էրքեչին: Մի երկու ժամուայ ընթացքում առաջադրանքը կատարուած էր, թուրքը՝ ետ չպրտուած: Մեր մարտիկները կանգնած էին **Թոդանի** վերեւը: Ոչ ոք չէր ուզում ետ դառնալ, սակայն Թոդանը գրաւելու հրաման չունէին: Մարտիկներն իրար երեսի են նայում եւ լուռ համաձայնութեամբ գրոհով մտնում Թոդան: Թշնամին փախել էր: Թոդան է մտնում նախ **Նովիկի ջոկատը** եւ գիւղի մի ծայրից տները վառելով հասնում է գիւղի վերջը: Աւար են վերցնում մէկ ՈՒԱԶ մեքենայ, մէկ հրանօթ եւ տրակտոր, որով էլ հրանօթը տեղափոխում են մեր դիրքերը: Երբ տները սուուգեցին, դրանք դատարկ էին, գոյքը վաղուց հանել էին: Ուրեմն թուրքն իր տանը վախենում էր, քանզի ի վերջոյ դա իր տունը չէր: Ինչեւէ, դա լաւ դաս էր: Գիւղը վառեցին, եւ աւարով ետ եկան: Թոդանը գրաւելիս զոհուեցին **Դաւիթ Սարապեանը (Դեւ)**, աւ. լեյտենանտ **Համլետ Մինասեանը**, Արտաշատցի **Արարատ Գոլեցեանը**,*

*Մուսալեռցի **Մերուժան Սարգսեանը**: Յաջորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին զոհուեց Էրքեչի ջոկատի հրամանատար **Կամո Յովհաննիսեանը**: Ինչ մնում է վրէժի զգացումին տուրք տալը՝ դա էլ բնական է պատերազմական իրավիճակում եւ որոշակի պայմաններում կարող է զօրաւոր գործօն դառնալ:*

*Թոդանի մարտին մասնակցել են նաեւ **Մոնթէ Մելքոնեանը** եւ իր զինակից, Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի մարտիկ **Մարտիրոս Ժամկոչեանը**: Մոնթէի մասնակցութեան պատկերը մեզ համար անյայտ է, իսկ Մարտիրոսը պատմել է իր մասնակցութեան մասին:* «Ես, **Յովսեփը** /«Հայրենասիրական» ջոկատի մարտիկ Յովսեփ Յակոբեանը - Ա.Պ./ եւ եւ ուրիշ տղաներ մեկնեցինք Շահումեան՝ Կարաչինար գիւղը: Մասնակցեցինք մի քանի կռիւների, մանաւանդ Թոդանի կռիւներին: «Մեծն Տիգրանի» տղաները փոխգնդապետ **Բաղդասարեանի** գլխաւորութեամբ ուզում էին գիւղից դուրս գալ: Հասանք, երբ գիւղը վառւում էր, սպասեցինք, որ դուրս գալուց յետոյ տղաների թիկունքն ապահովենք: Եւ **Մոնթէն** էլ մեզ հետ էր: Ջեռքիս ինքնաչէն գնդացիր կար, հետս էլ «Կոռնիճորի» ջոկատի Արմէնը, որն ինձ գնդացրի փամփուշտներ էր տալիս: Դիմացը մեզ պաշտպանող ոչինչ չկար: Մասուրի թփի ետեւը մենակ նստած՝ կրակում էի թուրքերի վրայ, որպէսզի չկարողանան խոչընդոտել տղաների նահանջը: Թուրքի ԲՄՊ էր գալիս: Խփեցի, թուրքերը ցած թռան ու մի քանի տեղից սկսեցին կրակել: Գնդակներն ընկնում էին չուրջս ու ինձ չէին դիպչում: Ոնց որ մի անտես վահան պաշտպանում էր ինձ: Ներքեւում՝ Թոդանից դուրս գալիս փոխգնդապետը հարցնում է. «Ո՞վ է այս խենթը, որ մեն-մենակ կրակում է»: Տղաները դուրս եկան չրջապատումից: Գնդացիրը հաւաքեցի, հեռացայ: Դեւի զոհուելու օրն էր:

«Վրիժառուների խումբն» էլ, ինչպէս նշուած է Դ.Բաղդասարեանի գրքում, «Բեղաւորի» (ի միտ ունի Զալեանին - Ա.Պ.) գլխաւորութեամբ Մանաչիդի կողմից մտնում է Թոդան, հասնում գիւղի կենտրոն եւ կորուստներ կրելով՝ ետ նահանջում: Էրքէչցիներից եւ Մեծն Տիգրանի»

*մարտիկներից կազմուած գրոհային հետեւակ խումբը գրաւում է «Մեչիդի» յենակէտերը: Արիւնով գրաւուած այդ կարեւոր դիրքերի վրայ թէեւ հերթապահութիւն է սահմանւում, սակայն այն չի պահւում, եւ թուրքերը նորից գալիս, նստում են այնտեղ: «Պարզուեց, որ **Սերգէյ Զալեանի** հրամանը չի կատարուել, չահումեանցի տղաները լքել էին «Մեչիդը» ու գնացել իրենց տները, իսկ դեկտեմբերի 11-ին էրքէչից դէպի մեր բազա տանող լեռնային արահետի վրայ յայտնաբերուել էր էրքէչցիների ջոկատի հրամանատար **Կամօ Յովհաննիսեանի** գնդակահարուած մարմինը: Թչնամո՞ւ ձեռքով էր զոհուել Կամօն, թէ՞ սոր սպանութիւն էր կատարուել՝ պարզել չյաջողուեց» (նոյնը, էջ 127):*

Նովիկ Գիւլումեան. «Որ Թողանի վրայ պիտի յարձակուէին՝ ես չգիտէի, **Խիդիրեան Յակոբն է** եկել ինձ ասել: Ես Յակոբին ասացի. «Յակո՛բ, նախ ես չգիտեմ, թէ ով պիտի յարձակուի: Ասենք թէ մեր տղաները մտնելու են. որ անեն՝ ես չիմանա՞մ իմ ուղղութիւնը որն է, իմ անելիքը որն է, ի՞նչ պիտի անեմ»: Դրա համար մի քիչ խառնաչփոթութիւն էր առաջացել:

Ես չեմ կարող ասել, թէ դա վրիժառութեան կամ մէկ այլ մոտիւով է եղել, բայց այդ գործողութիւնը կատարուել է առանց նախապատրաստութեան եւ նախնական ծրագրի: Այսինքն՝ այդպիսի գործողութիւն նախատեսուած չի եղել: Եթէ նախատեսուած չէ, ուրեմն լաւ նախապատրաստուած չէ: Եթէ այս դիրքերը պիտի նորից ետ տայինք՝ անիմաստ էր 4 հոգու զոհուելը: Այդ զոհերն էլ եղել են չփոթութեան պատճառով, այսինքն մառախուղի պայմաններում չեն կարողացել կողմնորոշուել եւ մեր ջոկատներից մէկը գնդակոծել է միւսին: Խառնաչփոթութիւն է եղել եւ երբ վերցուած էր այդ բնակավայրը, մեր տղաները մառախուղի եւ անկազմակերպութեան պատճառով մէկը միւսին են խփել, մի խումբը միւսին թչնամու տեղ է դրել: **Դեւը եւ Համլետ Մինասեանը** նոյն օրն են խփուել: **Կամօ Յովհաննիսեանը** զոհուել է յաջորդ օրը»:

Թողանի մարտը, ուրեմն, մի ինքնուրոյն եւ ծրագրաւորուած մարտ չէր:

Մարտիկների մեծ մասը փողոցային մարտերին ծանօթ չէին, պատրաստ չէին, ամէն ինչ անում էին անկանոն: Եթէ պատրաստուած լինէին՝ գուցէ այդ զոհերը չլինէին:

Յետագայում եւս մի քանի անգամ այդ տարածքում գրոհային գործողութիւններ են եղել թուրքերի դիրքերի վրայ, եւ միշտ յաջող են եղել այդ գործողութիւնները:

Դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզումով նոր վտանգ առաջացաւ: Ադրբեջանում տեղակայուած խորհրդային զօրքերը կրկնակի, գուցէ եռակի մեծաքանակ էին, եւ այդ ամբողջ զէնքը պիտի անցնէր Ադրբեջանին: Թէեւ Հայաստանը պահանջեց, որ զէնք չտրուի ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին, սակայն ակնյայտ էր, որ ստեղծուած իրադրութեան պայմաններում այդպիսի զրոյական համակշռութիւնն անիրագործելի էր թէկուզ եւ այն պատճառով, որ դրանից արդէն շատ առաջ թուրքերը իւրացրել՝ գողացել, յափշտակել կամ գնել էին խորհրդային զէնք-զինամթերքի մի մասը: Զէնքի տէրերին էլ ձեռնտու էր բաժանուել այդ զէնքից, քանզի նորաստեղծ ՌՍՖՍՀը դրա անհրաժեշտութիւնը չունէր եւ այն զէնքի տէրերին որոշ եկամուտ կարող էր բերել: Պարզ էր, որ երկու հանրապետութեան մէջ էլ պիտի զէնքը փոխանցուէր եւ մեծ բաժինը հասնելու էր Ադրբեջանին: Ադրբեջանում մեծ չափերի հասան զէնքի յափշտակումները, իսկ Հայաստանում դրանց մեծ պաշարները պայթեցուեցին Բալահովտում:

ՅԱԻԵԼՈՒԱԾ. *Գիւլիստանի Սբ Աստուածածին եկեղեցու Ձիշատակաց մատեանը*

Գիւլիստանի Սբ Աստուածածին եկեղեցին վերաօծուել է 1989 թուականի ապրիլի 24-ին:

Նոյն օրն էլ ի սպասաւորութիւն ուխտաւորաց՝ բացուել է յիշատակաց մատեան: Ձիշատակաց գրութիւնները չարունակուել են մինչեւ շրջանի կորստեան օրը: Ուխտաւորների գրուածքը կազմել է չորս մեծ տետր, որոնք ***Պետրոս Մեղրեանի***

հոգատար պահպանութեան տակ են եղել եւ նա սիրով տրա-մադրեց այն՝ օգտագործելու իբրեւ Շահումեանի չրջանի եւ յատկապէս Գիւլիստան գիւղի հոգեւոր կեանքի վերաբերեալ կարեւորագոյն վաւերագրական աղբիւր: Տպաւորութիւններն ու աղօթքները գրուած են մեծամասնաբար հայերէն, այդպիսի չրջանի համար ոչ սակաւ թուով՝ նաեւ ռուսերէն, քանզի Շա-հումեան աւանում, նաեւ կարաչինարում եղել են ռուսական դպրոցներ: Ընդ որում կարաչինարի դպրոցը տարա-ծաչրջանում հնագոյններից է եւ համարւում էր արքայական հաստատութիւն: Գրութեանց մեծ մասի հեղինակները դպրո-ցականներն են, որոնք խմբերով Գիւլիստանից, չրջանի միւս բնակավայրերից, նաեւ Արցախից ուխտի են եկել Սբ Աստուածածին եկեղեցին: Ուխտաւորներ եղել են նաեւ Հայաստանից, մեծամասամբ այնտեղ ապրող չրջանի նախկին բնակիչներից: Մեծ թիւ են կազմել նաեւ ազատամարտիկները եւ առանձին ընտանիքներ: Պարզապէս զարմանալ կարելի է հոգեւոր կեանքի նկատմամբ այդքան բուռն հետաքրքրութեան փաստից:

*Բացի հոգեւոր գարթօնք ապրող չրջանի բնակչութեան ընդհանուր քրիստոնէական գաղափարներն ու ըմբռնումները՝ Յիշատակարանն արտացոլում է հոգեւոր գիտակցութեան մշակութային տեղական որոշ առանձնայատկութիւններ: Այսպէս, եկեղեցին դիտւում է ոչ միայն, ի՞նչ այլեւ Օջախ, որտեղ վառւում են ճրագները: Թէ՛ Օջախը եւ թէ՛ Ճրագը մելիքութեան մէջ ապրողների համար ունեցել են առանձնակի խորհուրդ. Օջախն դիտուել է իբրեւ հայութեանն իր մէջ բովանդակող եւ միաբանող, բոլորին միաւորող եւ ոգեչնչող Աստուծոյ Տուն, իսկ Ճրագը՝ որպէս հոգու լոյս: Հնաւանդ է նաեւ **Աստծուն Աստօծ** հնչեղութեամբ կոչելը: Եթէ Աստօծ բառը գրէինք՝ Աստոծ, պիտի սխալ համարուէր, քանզի Օ-ն գրաբարում համարժէք է Վա-ին, Ուա-ին՝ Աստուած:*

Գիւլիստան անունն ուխտաւորների եւ գիւղի բնակիչների մօտ տարբեր զուգորդումներ է առաջ բերում, դասական Վարդուտից մինչեւ Ծաղկանոց: Գտնուել է նաեւ աչխար-

հագրօրէն աւելի համապատասխան՝ վարդաձոր տարբերակը: Թող Գիւլիստանը ազատագրուի եւ ինչպէս կամենում են՝ կոչեն:

Յիշատակարանն արտացոլում է նաեւ չրջանի պատմութեան կարեւոր իրադարձութիւնները եւ երբեմն կարող է սկզբնաղբիւրի դեր կատարել:

Յիշատակագրութիւնների մէջ մեծ թիւ են կազմում հակիրճ գրութիւնները, որոնք կարդացւում են մեծ հետաքրքրութեամբ՝ իբրեւ մտքի եւ անեղծ զգացմունքի խտացումներ: Մինչին դարերում գրասալերը կամ գրատախտակները մեծ չեն եղել եւ մէտքը պիտի տեղաւորուէր փոքր մակերեսի վրայ եւ դրանք մեծամասամբ քարեղէն էին, իսկ քարերի վրայի արձանագրութիւնները ծանծաղամիտ լինել չէին կարող: Յատկապէս սկզբնական չրջանում մեծաթիւ են հէնց հակիրճ գրութիւնները, յետոյ են գալիս որոշ գրութիւններ, որոնք դպրոցական չարադրութեան տպաւորութիւն են թողնում:

Ընտրողաբար ներկայացնում ենք յիշատակագրութեանց մի մասը:

1.05.89թ. «Ես նախկին բնակիչս Գիւլիստանի՝ ***Մարկոսեան Նիկոլայի Մակեանս*** *սրտից չնորհաւորում եմ գիւղի եկեղեցու երկրորդ բացումը եւ ինչ հնարաւոր լինի՝ իմ կեանքում կ՛օգնեմ եկեղեցու վերակառուցմանը»:*

04.06.1989թ. «Ես՝ ***Ռ. Հիւսնունեցս*** *առաջին անգամ այցելեցի եկեղեցին, եւ թող այն յաւէրժանայ»:*

19.06.89թ. «Ես ***Լ. Զաքարեանս, Մ. Մովսէսեանի*** *թոռը, մտնելով այս եկեղեցին՝ ցանկանում եմ, որ այն յաւէրժ մնայ, եւ Հայ ազգը երջանիկ լինի ու հպարտանայ իր հայ լինելով»:*

2.07.89. «Ես ***Համլիկ Սարգսեանս*** *՝ այցելելով մեր եկեղեցին, ցանկանում եմ, որ մեր հայ ազգը լինի ազնիւ եւ հայ կրօնին հաւատարիմ, եւ այն ամէնը, որ մեր երիտասարդները լինեն քաջ եւ խելօք»:*

19.07.89թ. Ես՝ Վերին Շէնիից ***Ժորա Սաղաթելեանս*** *այսօր նուիրում եմ եկեղեցուն 2 մոմակալ:*

*22.07.89թ. «Ես՝ **Լենա Ասկարեանս** 45 տարուց յետոյ գալով հայրենի հող, մտանք մեր պատմական եկեղեցին: Կը ցանկանայի, որ միշտ լինեմ հայրենի հողում, հարազատների եւ բարեկամների հետ»:*

*1.10.89թ. «Այսօր մենք՝ **Սանթրոսեան Ռաֆիկի** ընտանիքի անդամներս ուխտի ենք եկել Գիւլիստանի Կարմիր Աւետարանի Սուրբ Եկեղեցին, մեզ ներշնչելով մեծ հաւատ...»*

*«Այսօր, հոկտեմբերի մէկին, մենք՝ **Խաչատրեան Մինասի** ընտանիքը ուխտի եկանք, որ յաջող գնացինք արտասահման, աշխատեցինք եւ առողջ վերադարձանք, որովհետեւ միշտ մեզ ներշնչել ենք մեծ հաւատ: **Վարսիկ**»:*

«Քանիցս հաստատուել է, եւ այս սուրբ օջախի վերաբացումը եւս հաստատեց, որ այն ժողովուրդը, որ ուզում է իր ապագան պապերի արիւնով թաթախուած հողում տեսնել, պէտք է երկրպագի իր անցեալի սրբացած պատմութեան էջերը: Իսկ այդ պատմութեան Սրբութեան Սրբոցը ամէն ճշմարիտ հայի համար եկեղեցին է՝ Տէր Աստուծոյ տաճարը, ուր ամէն անգամ սրբագործւում են այս մեղաւոր աշխարհի մեղաւոր զաւակաց հոգիները՝ անթեղուած պահելու համար քրիստոնեայ - հայի այն անբեկանելի ճշմարտութիւնն ու հաւատքը, որ է.- բարութեամբ ու սիրով միմեանց եւ բոլորի նկատմամբ յաղթել չարին եւ Աստուծոյ օգնութեամբ նոր հրաշքներ արարել երկիր-դրախտավայրում՝ ի փառս ընտրեալ եւ հանճարեղ հայ ժողովրդի:

Մայր ժողովրդին միանալու արդար ճգտումը մեր նախնիներից հասել է մեզ եւ այսօր նոր թափ ստանալով՝ ապաւինել ամենակարող Աստուծոյ զօրութեանը: Ճշմարիտ ճանապարհ է ընտրել իմ ժողովուրդը՝ բացելով /աւելի ճիշտ՝ վերաբացելով/ մեր նախապապերի քրտինքով ու հոգու թռիչքով կառուցուած այս սրբակամար եկեղեցին, որ մեր հոգեկան վերածնութեան օրօրոցն է, մեր արդար ընդվզումի պահապան ու օգնական սուրբ ուխտատեղին: Վերջապէս իմ ժողովուրդը լսեց իր նախնիների հոգու կանչը, որ միշտ այս է եղել. սրբազան

հաւատով ի Տէր Աստուած Յիսուս Քրիստոս՝ արմատուել ու մնալ հայրենի հողում՝ հաւատալով, որ Աստուծոյ օգնութեանն ապաւինած ժողովրդին մահ չկայ եւ չկայ պարտութիւն: Թող երիցս փառաւորուի Գիւլիստանի /հնօրեայ Վարդուտի/ քաջակորով ու Քրիստոսասէր ժողովրդի անցեալն ու ապագան, թո՛ղ երկնային լոյսով ողողուեն մեր նախնիների մեսրոպատառ հանգստարանները, որ այսօր, իրաւամբ, հանգիստ են, որովհետեւ տեսնում ես իրենց զաւակների վերածնունդը՝ ի դէմս նորաբաց ու պաշտելի եկեղեցու:

*Այսօր առաջին անգամ ոտք դրեցի եկեղեցու չէմին եւ վեհաչունչ կամարների տակ կարծէս լսուեց **Մելիք-Յովսէփի ու Աբրահամ Սպարապետի** աստուածառաք խօսքը: Տէր մնանք մեր բազմաչարչար հողին եւ թո՛ղ դարէդար այստեղից դուրս եկողի հանդէպ պարզուի ալեհեր Մռաւի՝ այսօր արդէն ուրախութեան չիթերով պատուած ճակատը:*

Ի նշան երախտիքի իմ հայրենակիցների աստուածահաճոյ գործի՝ Սուրբ Եկեղեցուս եմ նուիրում ՏՐ ԱԺ Յիսուս Քրիստոսի Աւէտարանը՝ բազում դարերի միջով մեզ հասած հայերէն առաջին մատեանը, ամէն հայի ընթերցանութեան Սուրբ Գիրքը»...

*28. հոկտեմբերի - 89թ. **Արտ. Ղուլեան***

Գրութեան տակ գծանկրուած է մի աքանչելի խաչքար:

Աստուած, եթէ Լեւոն Տէր Պետրոսեանն ունենար Արտակ Ղուլեանի հաւատքի մի քանի նշոյլներ... այսօր մե՛նք կը լինէինք Վարդուտի տէրը:

*20.01.1990թ. «Ի ուրախութիւն բոլոր Կիւլիստանցիների՝ ազատուեց թուրք բարբարոսների ճանկերից մեր յարգարժան զաւակ **Շահէն Մեղրեանը**: Բոլոր կիւլիստանցիներն աղօթում էին յանուն նրա ազատութեան»: **Ս. Ղուլեան**:*

*«Մենք՝ զաւակներս Մեղրեանների ընտանիքի՝ սրտով եւ հոգով պարտական ենք մեր համագիւղացիներին, որ մի մարդու տխրութիւնը եւ ուրախութիւնը կիսում են մեզ հետ. մեր հրաշատ **Շահէն Մեղրեանի** վերադարձի համար խորին շնորհակալութիւն ենք յայտնում»:*

Նախշուն, Նուշի եւ Նանիկ Մեղրեաններ *21.01. 1990թ.*

«Սոյն 1990թ. մարտի19-ին մենք «Գթութիւն» հայկական բարեգործական միութեան նախագահութեան անդամներս՝ ***Կարէն Ապրէսեան, Ռաֆիկ Մխիթարեան,*** *ինչպէս նաեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սարկաւագ* ***Հայկ Զիլինգարեանը*** *կատարեցինք այս սուրբ եկեղեցում Անդաստան ի պահպանութիւն Հայոց Հայրապետութեան եւ Հանրապետութեան, Արցախ աշխարհի, Շահումեանի շրջանի, Գիւլիստան գիւղի եւ բնակիչների համար, եւ ի խորոց սրտի գոհութիւն ենք մատուցում ամենակալ Աստծուն, որ մեզ հնարաւորութիւն ընձեռնեց, նորից ներկայ լինել Գիւլիստանում եւ տեսնել մեզ համար այնքան հարազատ դարձած մեր սանիկներին:*

Աղօթում ենք, որ Աստծոյ հզօր բազուկը եւ նրա յաղթական Սուրբ Խաչը պահի պահպանի Գիւլիստանի մեր եղբայրներին եւ քոյրերին, ինչպէս նաեւ մեր համայն հայութեանը»:

12.08.90թ. «Ես՝ ***Բարիս Կարապետի Գզողեանս*** *այսօր այցելեցի այս սուրբը տաճարումը իմ խորին շնորհակալութիւնը յայտնելու բոլոր սուրբերին՝ իմ խնդրուածս կատարուած լինելու պատճառաւ: Դրանով բաւարարուած եմ եւ ցանկանում եմ բոլոր հաւատացեալներին հասնեն իրենց նպատակին»:*

«Կեանքումս միշտ երազել եմ գնալ եկեղեցի եւ ճրագ վառել: Եւ վերջապէս ցանկութիւնս կատարուեց: Ես եկայ Գիւլիստանի Սուրբ Եկեղեցին: Հիացած եմ եկեղեցով: Թող յաւէրժ կանգուն մնայ այս եկեղեցին»: ***Ղուլեան Հերմինէ,*** *17.08.1990:*

«Մենք այսօր ժամանեցինք մեր սուրբ եկեղեցին: Մենք ցանկնում ենք, որ մեր սուրբ եկեղեցու ճրագները միշտ վառուած լինեն եւ միշտ եկեղեցու ճրագները վառեն հայերը: Խնդրում եմ մեր եկեղեցու սուրբերին, որ իմ ***Սամուէլին ու Սեւադին*** *պահեն երկար եւ առողջ»:*

*«****Արտաշատի հայդուկներս*** *ցանկանում ենք գիւլիստանցիներին մաքուր երկինք եւ պարզ արեւ, որպէսզի նրանք մնան իրենց պապական հողում հաստատ: Թո՛ղ վերականգնուի այս տաճարը, որպէսզի Գիւլիստանցիները մնան իրենց հաւատքին եւ կրօնին»: Արտաշատի մի խումբ հայդուկներ:*

28.10.90թ. «Մեր ամենայն հաւատքով պիտի ծառայենք մեր ազգին, ուստի գաղօթենք, որ Աստուած լսի մեր Աղօթքը եւ յաւիտեան յաղթանակ տանինք մեր ազգին սիրոյն:

*Այս պարտականութիւնը թողած է մեր պապերէն /**Ս. Գաֆալեան**/ /**Դրօ**/, որ սկսում է Արցախից կամ Ղարաբաղից եւ կը գալէ դէպի Արարատ»:*

8.11-90 «Անդրանիկս առաջին անգամ եմ լինում Գիւլիստանում: Աստծուցս մի նպատակ ունեմ. Ազատ Արցախի հետ եւ Միացեալ Հայաստան: Աստուած, Քո բահած բալեքն ենք, մի՛ թող մեզ անտէր:

*Պուօչեան սովխոզ, **Անդրանիկ Յովակիմեան***

3.01.91. «Ես Վերան եմ, հիւր եմ եկել Գիւլիստան եւ այցելել եմ ձեր եկեղեցին: Ուզում եւ ցանկանում եմ ձեզ, որ եկեղեցին գործի գոնէ տաղաւար տօներին: Ցանկանում եմ խաղաղ, մաքուր երկինք եւ ամենաբարին հայ ժողովրդին, որպէսզի բոլորիս իղձերը 1991-ին կատարուեն, ով ինչ մտածել է՝ կատարուի յոյսով եւ հաւատով»:

*Յարգանօք՝ **Վերա Մալիարենկո**, Մուրմանսկի մարզ*

*«Հաւատացեալ **Սարգսեան Մինասի** ընտանիքից նուիրում ենք Գիւլիստանի Սուրբ Եկեղեցուն սեղանն իր աբեղիկներով եւ մոմակալներով: **Լենա Սարգսեան**», 10. 02. 91:*

*17.03.91թ. «Այս օրուայ համար ես՝ Լենա Մնացականեանս չատ եմ ցաւել, որ հասնեմ միայն եկեղեցի այն բանի համար, որ իմ տղայ **Մխիթար Քեօխեանը** մի բախտի տիրանայ եւ այս հիւանդութեան համար էլ ես մոմ կը վառեմ իմ երեխու համար, թող Մխիթարս առողջանայ»:*

*Գրող՝ **Լենա Մնացականեան***

*11.04.91թ. «Ես՝ **Կարէն Բաղդասարի Սարգսեանս** այցելեցի Գիւլիստանի մեր հայկական եկեղեցին եւ վառեցի մոմեր, որպէսզի կատարուի հայ ազգիս բոլոր նպատակները. Միացեալ*

եւ մէկ Հայաստան, միացեալ եւ մէկ Հայութիւն»: Կ. Սարգսեան, Գառնի:

«Մոռացած տուն ու ընտանիք՝ ես զէնք եմ վերցրել, իմ սիրասուն Հայրենիք, կը պաշտպանենք պատիւը ու դատը մեր ազգի, թէկուզ հազար տարի անցնի: Ով Գիւլիստանի պատանի, հայի անունդ միշտ վեհօրէն կրի, թող թշնամու ոտքը մեր սուրբ հողը երբէք չպղծի ձեր կուռ բազուկի չնորհիւ: Կեցցէ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանս»: 11.04.91 թ.

Կոտայքի շրջ. Արամուս, ***Սամուէլ Զոհրաբեան***

18.04.91 «Ես՝ ***Խաժակ****, Գիւլիստանի եկեղեցին եկա իմ ընտանիքով իրիկուան ժամը 9.00-ին եւ իրիկ մոմ վարիցի»: /ստորագրութիւն/ /Ա.Պ.՝* ***Խաժակ Գեթսեմանեան****/*

*«****Սպիտակի Փիդայիների*** *կողմից չնորհաւորում ենք եկեղեցին եւ ցանկանում ամէն տարի այցելել»:* ***Արտուշ, Միհրդատ, Սամսոն, Հայկ, Տիգրան, Դանիէլ, Լադօ*** *02.05.1991*

«Մենք՝ 9-րդ դասարանի աղջիկներս մեծ սիրով ու բարձր եռանդով 5.05.91թ. այցելեցինք մեր հայրենի գիւղի Սուրբ Եկեղեցին: Հաւատալով մեր Սուրբ Քրիստոսին, ցանկանում ենք, որ դարերից ի վեր տանջուած ու տառապած հայ ազգին յաջողութիւններ բերի, եւ հայը ձեռք բերի այն, ինչ երազել է դարերի ընթացքում: Թող այլեւս հայ ազգը դառնութիւններ չտեսնի, եւ բոլորս էլ միանանք մեր ազատ, անկախ, Մայր Հայաստանին»

Իրա, Միրա Մակեաններ
Սոնիա Մնացականեան
Ռուզաննա Սիմոնեան
Ռուզաննա Ղուլիան
Լուսինէ Սարգիսեան

*«Մեր «****Մխիթար Հերացի****» մարտական ջոկատը եկաւ*

Գիւլիստան, այցելեց Սուրբ Եկեղեցին իր հինգ երդուեալնե-րով»: 07.05.1991 , անուանացանկ չկայ.-Ա.Պ.:

8.05-91 «Ադրբեջանական ելուզակներից վախեցած հայկա-կան կարաչինար, Գաղտուէթ, Ենիքենդ եւ այլ գիւղերից այս-տեղ են եկել միայն հայ կանայք եւ երեխաներ: Երեկոյեան ժամը 8-ին հաւաքուել ենք այստեղ՝ Գիւլիստանի եկեղեցին եւ խնդրել ու ցանկացել երջանկութիւն, ազատութիւն»: Կայ մի ստորագրութիւն:

15.05.1991թ. «Այստեղ ենք տնուում ես՝ ***Լիւդմիլ Յունանի Միքայէլեանս****՝ իր ընկերներ* ***Գարիկի եւ Աշոտի*** *հետ եւ մեր միակ խնդրանքը մեր Աստծուց հետեւեալն է՝ Մահ ոսոխին եւ անկախութիւն ու ազատութիւն մեր հայ ժողովրդին»:*

*19.05.91թ. «Մեր տղաների հետ մեկտեղ ժամանեցինք Սուրբ Եկեղեցին Գիւլիստանի, ցանկանում ենք «****Մեծն Տիգրան****» գնդով միայն յաղթանակ, ոչ մի դէպքում՝ ետ նահանջել, դա նշանակում է հայ ազգի խորտակում: Թո՛ղ այս Սուրբ Եկեղեցին մեր հայ ազգին միշտ կանգուն մնայ եւ պահապան»:* ***Եղիչէ, Սաքօ, Նաիրա, Հայկ»:***

18.07.91 «Հերոսաբար զոհուեց ***Վանիկ Լալայեանը****. Թո՛ղ նրա յիշատակը յարատեւ լինի: Թէեւ նա զոհուեց՝ սակայն նրա հոգին մեզ հետ է առյաւէտ: Մենք պէտք է յիշենք այդ հերոսի անունը: Իմ հայրս՝* ***Շահէն Զինաւորի Մեղրեանը*** *Վանիկ Լալայեանին համարում էր իր աջ թեւը»:* ***Մեղրեան Լուսինէ Շահէնի***

«1991-ի օգոստոսի 2-ին ես առաջին անգամ մտայ Գիւլիս-տանի եկեղեցին, որ չմոռանայ հայ ազգին եւ ամբողջ հայ ժողովրդի համար մի լոյս բացուի: Կորչի թուրք-օսմանը, ապրի հայ ժողովուրդը: Ամէն»:

Գրող՝ ***Գայանէ Յակոբեան****, իմ որդի՝* ***Գարրի Յակոբեան****, իմ*

*քոյր՝ **Մանուշ Յակոբեան**:*

3-ը օգոստոսի, 1991թ. «Այսօր ես տխուր սրտով այցելեցի այս եկեղեցին: Թող այս օրը, որ մտայ այստեղ, իմ սրտիս ուզածը կատարուի, այսինքն՝ մենք փախստական չդառնանք»:

*Գրող՝ **Մ. Ղուլեան** /Խարխապուտ/*

*16.08.91թ. «Այսօր մենք եկանք Գիւլիստանի Սուրբ Եկեղեցին՝ խնդրելու Տէր Աստծուց, որ նա պահի Գիւլստանի քաջարի բնակիչների ոգին եւ երբէք չընկճի նրանց: **Հրազդանի վաշտի մարտիկները** պատրաստ են նրանց հետ միասին պայքարելու հայ ժողովրդի անկախութեան համար»: **Ս. Սամուէլ, Ա. Կորիւն, Ա. Արթուր, Հ. Գրիգոր**:*

31.08.91. «Ամսի 29-ի կէս գիշերին փախանք Գիւլիստան՝ թշնամու կրակոցներից պաշտպանուելու համար: Թէ ինչպէս տեղ հասանք՝ երեխաների դէմքից պարզ էր...

Բայց ոչինչ, Թող Աստած միշտ վեր գլխներիս լինի, միշտ մեզ լսի: Երեւի այսպէս էլ կայ, քանի որ ուժեղ դրմբոցների ժամանակ նստում էինք գետնին՝ Աստած կանչում, վերջը թշնամին պարտուեց»:

Ղարաչինարցիներ

1991, սեպտեմբերի 8 «Մեր պապենական օջախներից զրկեցին մեզ անիրաւները, մարեց մեր օջախի լոյսը, դարձանք կարօտ մեր փոքրիկ ու անմոռանալի ծննդավայրին: Կանգ առանք Գիւլիստանում եւ առաջին անգամ ոտք դրինք այս Սուրբ Եկեղեցին: Թո՛ղ հայ ժողովրդին տա Աստուած խաղաղ ու երջանիկ կեանք, մեր մանուկներին՝ ուրախ մանկութիւն, կապոյտ երկինք»:

Թամարա, Աստղիկ, Սասուն, Վաչիկ Բաբայաններ, Մերի եւ Գենիա Յովհաննիսեաններ *Բուզլուխ-Մանաչիդ*

1991, սեպտեմբերի 8. «Երեւանից եկած երկու ջղաախտա-

*բաններ /նեւրոպաթոլոգ/՝ **Մերին եւ Թագուհին** մի համեստ, խելօք ընտանիքի ուղեկցութեամբ այցելեցինք Սբ Աստուածածին եկեղեցին:*

*Աստուած, օգնի՛ր այս բարի, հաւատացեալ ժողովրդին, բաւական համարիր նրա տանջանքները»: **Թագուհի***

13-ը Հոկտեմբերի, 1991

*«Այսօր կեանքում առաջին անգամ մտանք Գիւլիստանի եկեղեցին: Վառեցինք 6 զոյգ ճրագ եւ Աստծուց խնդրեցինք, որպէսզի վերջնայ հայ-թուրքական երկարատեւ կռիւը: Մեղք են մեր հայերը՝ իրենց գոյութեան առաջին օրուանից մինչեւ հիմա տանջւում են թուրք մարդասպանների ձեռքին: Խնդրում ենք Ձեզնից՝ ամենայն հայոց սուրբ **Վազգէն Ա,** վերադառնանք մեր օջախը, էլ երբէք չբռնենք գաղթի ճանապարհը»:*

/Մի անընթեռնելի ստորագրութիւն/:

*Ա.Պ. Գալիք սերունդների համար յիշեցնում ենք **Մեծն Նժդեհի** խօսքը. «**Խաղաղութի՞ւն ես ուզում՝ պատրաստուի՛ր պատերազմի»***

Մեր «խաղաղասիրութեամբ», իրօք, մենք շատ ենք մեղքանում՝ մոռանալով, թէ ինչ աչխարհում ենք ապրում: Սակայն պետութիւն չունեցած ազգը բացի «խաղաղութիւնից» ի՞նչ պիտի ցանկանար:

10-ին դեկտեմբեր, 91 թիւ

«Մենք այսօր մտանք Գիւլիստանի եկեղեցին երեք հոգով: Եւ սրտանց կոչ ենք անում հայ ժողովրդին, որ ոչ մի անգամ ծունկի չգանք թշնամու առաջ, մենք պիտի չյուսահատուենք, պէտք է դիմադրել մինչեւ վերջ: Եւ Սուրբ Եկեղեցուն խնդրում ենք՝ օգնի մեզ: Այսքանով վերջացնում ենք մեր խնդրանքը. թող խաղաղութիւն լինի աչխարհում»:

*գրող՝ **Անդրանիկ Խալափեան Ա***
Արագած Մեժլումեան Ռ.
Սամուէլ Խալափեան Ռ.

«Այս ամէնի տէրը իրաւունք չունի մեռնելու: Մեր պապերի ստեղծածը մերը չի, այլ մեր թոռներինը եւ պարտաւոր ենք յանձնել նրանց այնպէս, ինչպէս ստացել ենք»:

Ա. /Արթուր/ Մկրտչեան
23.01.92թ

Մարտի 29. յեկա յեղեցին ***Վոսկի Բաբաջանյան,*** *73 տրեկան հսակում յես ցնկանում եմ բոլրաս հաջողութուն առողջութուն*

29.03.-92 թիւ. «Ես ***Նինա Մուրադի Բաբաջանեանս*** *1951 թուի ծնունդ, այսինքն 40 տարեկան հասակում ես իմ ամուսնու եւ 5 երեխոցը հետ գաղթուեցի Գիւլուստան գիւղը: Մարտի 22-ին եկայ եկեղեցի եւ իմ ցանկութիւնը գրեցի տետրում, մարտի 29-ին երկրորդ անգամ եկայ Սուրբ Եկեղեցի եւ տեսա իմ գրած ցանկութիւնը պոկած էր, եւ ես եկեղեցի մանողներից չատ եմ խնդրում, որ կարդում էք՝ մի՛ պոկէք, թողէք մնայ յիշատակ, որ գան կարդան: Էտ պոկողը վնասը կը քաշի:*

Ես Սուրբ Եկեղեցուցը չատ եմ խնդրում մեր ընտանիքին եւ մեր բոլոր հարազատներին՝ մօրս, եղբայրներիս, քոյրիկիս քաջ առողջութիւն եւ յաջողութիւն եւ յաջող հասնենք մեր նպատակին»:

Գրող՝ Խարխափուէ գիւղից ***Յակոբեան Ֆրեդիկի*** *կին* ***Նինա Բաբաջանեանը,*** *երեխաների անունները՝* ***Նունէ, Նուէր, Մհեր, Նարինէ, Սեյրան****:*

«Ես՝ ***Ֆրեդիկ Յակոբեանս*** *1950 թուական, Խարխաբուէից գաղթուեցինք Գիւլիստան գիւղը եւ մնալով այս հայկական գիւղում յաճախեցի իմ ընտանիքով Գիւլիստանի եկեղեցին եւ ցանկանում եմ իմ ընտանիքին եւ հայ ազգին այս պատերազմի մէջ յաջողութիւն եւ միշտ յաղթանակ»: 29. 03.92թ.*

04.04.92. «Տէր, Քո կամքն է. Դուք գիտեք»: ***Խաչիկ, Կամօ*** *Ախլցխա:*

12.04.92 թուական «Մտանք մեր ս. Աստուածածին եկեղեցին, ցանկանալով նախ մեր ամբողջ ազգին յաջողութիւն, Ազատ եւ Անկախ Հայաստանի որբուկ մնացած սանիկներիս:

Հաւատալով մեր Աստուածին պատրիք վառեցինք մեր Արցախի ապագայ յաջողութիւններին:

Հաւատացեալ ենք եւ հաւատում ենք Աստծուն»:

«Ես ***Անուշ Ղահրամանեանս*** *արդէն երկրորդ անգամ է գալիս եմ յեգեղեցի եւ շատ դուր եկաւ եւ շատ հիացայ եւ շատ տխրուեցի որ մենք գտնուում ենք դարդակուած /՞/ վիճակում օգնող չունենք*

էլի ոչինչ Քրիստոս Քեզ Յերկնային Աստուած եւ Մեծ Յեգեղեցի իմ սրտի փափագը ցանկանում եմ եւ յայտնում ձեզ Աստուած, Յեգեղեցի. այս է որ աշխարիս խաղաղութիւն մեր հայ ազգիս, բոլորիս:

Յետոյ սրտանց մեծ աղաչանք ու ցանկութիւն եւ պաղատանքս քեզ որ իմ մի հատ տղայիս տաս սաղ-սալամաթ առողճութիւն իրան 2 բալիկների հետ ***Աննայիս, Արտեմիս*** *մեծ առողճութիւն եւ յաջողութիւն նոյնը իմ հարսը* ***Մարոյին*** *լինեն առողճ, սաղ-սալամաթ փորցանքից շատ հեռու յերկար կեանքով սէրով բախտաւոր միշտ էլ ապահով Աստօած եւ ինձ էլ էստեղ սաղ-սալամաթ պահես մինչեւ մի լոյս բացուի մեզ համար ու ինձ համար արժանանամ իմ յերեխոցը իմ թոռնիկներին իմ հարսին իմ տղայիս Աստծուց շատ գոհ եմ ու շնորհակալ, լինես մեր գլխավերեւ միշտ էլ»:* ***Անուշ Ղահրամանեան***

25.04.92 թ. «Ես, ***Հասմիկ Դալլաքեանս****, խնդրում եմ մեր հայ ժողովրդից, որ հաւատան մեր Տէր Աստծուն՝ Յիսուս Քրիստոսին ամբողջ հոգով, ամբողջ սրտով: Հաւատացէ՛ք, իմ ժողովուրդ, որովհետեւ փրկութիւնը միայն դրանով կը լինի, ինչպէս գրուած է. «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ ուղարկեց իր Որդուն՝ Յիսուս Քրիստոսին աշխարհը փրկելու համար, եւ Նա Իր արդար արիւնով քաւուեց մեր մեղքերը»:*

Մի՛ նեղուէք, հայ ժողովուրդ այս նեղութիւններից, որով-

հետեւ այս մեր անարդարութեան եւ անհաւատութեան հետեւանքն էր. եւ եկէ՛ք այսուհետեւ հաւատանք Աստծուն եւ լինենք հաւատարիմ ու արդար Աստուծոյ առաջ: Ես խնդրում եմ Աստծուց, որ ների մեր բազում մեղքերը եւ ողորմի մեզ: Ամէն»

Ղազարեան Սարգիս, Ջիւանի վաչտից *«Վաչտի մարդիկ, կը ցանկանամ իմ հայ ժողովրդին աւելի շատ սիրեն իրենց հող ու ջուրը եւ սիրեն իրենց Աստծուն: Աստուած շատ մեծ է ու զօրեղ, հաւատացէք Աստծուն: Ու տայ Աստուած, որ մենք միշտ գանք մեր հող ու ջուրը բարի նպատակներով»: 29. 04. 92 թ.*

«Թող ի զուր չանցնի այս ժողովրդի տառապանքը եւ այդ տառապանքից ծնուած լոյսով լուսաւորուի մեր երազած Հայաստանի ճանապարհը» ***Վարդան Դեւրիկեան,*** *19. 05. 92թ*

Մայիսի 19. ***Սալահեանների ընտանիք՝ Ջուլիետա, Անդրանիկ, Մերուժան, Սասուն,-*** *«Աստծուց յաջողութիւն կ՛ուզենք մեր Հայ ազգին»:*

23.05.92թ. «Այսօր մենք այցելեցինք Սուրբ Եկեղեցի, մոմ վառեցինք եւ Աստծուն խնդրեցինք, որ գոնէ Դու լինես մեր Տէրը, մէկ է, մեզ տէր չունենք, որ մեզ փրկի այս դժուար դրութիւնից»: Ի.Լ.Ռ. Ղ.Մ.Վ. Ի.Լ.Վ.

Մայիսի 24. Այսօր այցելեցինք Գիւլիստանի եկեղեցին, մոմ վառեցինք եւ խնդրեցինք հայ ամբողջ ժողովրդին յաջողութիւն, խաղաղութիւն, ինքնուրոյն պետականութիւն: Թող միշտ ջինջ լինի Հայոց երկինքը, թող բերքառատ լինի Հայոց հողը»: ***Յովհաննիսեանների ընտանիք***

«Ես ***Նելլի Տօնեանը*** *իմ կողմանից շատ ու շատ եմ խնդրում Աստծուն, որ մեր հայ ժողովուրդը էլ արիւն չթափէն: Ես շատ եմ խնդրում որ այստեղից ոչ մէկը ոչ մի տեղ էլ չի գնայ»:*

«Մայիս է եկել, վարդեր են բացուել,
Մեր աչքերը արտասուք ու արիւն է լցուել,
Յիսուս Քրիստոս, խնդրում ենք Ձեզ,
Որ կեանքում երբէք չմոռանաք մեզ:
Գիշեր ու ցերեկ չի տանում մեր քունը,
Խնդրում ենք Ձեզանից՝
Վերադարձնէք մեր հալալ տունը»:
Գիւղ Ենիքենդ, ***Էմմա Անտոնեան*** *30. 05. 92 թ.*

Ա. Պ. -Երեք գիւղերի՝ Էրքեջ, Բուզլուխ եւ Մանաշիդ, նաեւ Խրխապուտ, Կարաչինար եւ նոյնիսկ Վերին Շէնի բնակչութեան Գիւլիստան տեղափոխելուց յետոյ որակապէս փոխւում է եկեղեցի մտնողների կազմը եւ բնականաբար՝ նրանց աղօթքների բովանդակութիւնը: Եթէ մինչ այդ ազգային եւ անհատական բարեկեցութիւն, ազատութիւն եւ բախտաւորութիւն էին հայցում, 91-ի աշնանից եւ յատկապէս 92-ի առաջին կէսից չատերի աղաչանքը դառնում է փրկուելը «նեղ տեղից» եւ Հայաստան թռչելը: Հայաստան տեղափոխուելը դառնում է նրանց համար փրկութիւն, այլեւս քիչ մտածելով Հայրենիքի փրկութեան մասին: Խուճապային /ամբոխային/ դիտակցութիւնը աստիճանաբար դառնում է տիրապետող եւ խիստ թուլացնում անսասանութեան, ամէն եղանակով Հայրենիքը պաշտպանելու ռազմական ոգին: Պիտի չզարմանալ այսպիսի ոգեթափութեան առիթով, չէ՞ որ հոգեւոր զարթօնքը չրջանում նոր էր սկսուել եւ ճչմարիտ հաւատքը չէր խորացել մարդկանց հոգիներում, որպէսզի պատրաստ լինէին /մանաւանդ կանայք/ Քրիստոսի ճանապարհով մարտիրոսուելու յանուն Հայրենիքի, հողի եւ հայութեան: Նիւթական /աշխարհիկ/ կեցութեան արժէքները, ինքնապահպանման բնազդային մակարդակը սկսում է իշխել եւ խաթարել առողջ դատողութիւնը: Միւս կողմից, պիտի չմոռանալ, որ «Հայրենիքի»՝ այսինքն նորաստեղծ «պետութեան» լիդերների կողմից Շահումեանի ժողովուրդը եւ Շահումեանը վաղուց են մոռացութեան մատնուել: Ուստի՝ մենք դատաւորի դերում

չենք հանդէս գալիս, այլ միայն ուսումնասիրողի եւ փորձում ենք դա կատարել հնարաւորինս համակողմանի: Շահէն Մեղրեանը եւ հայդուկները Շահումեանում չատ բան արեցին եւ էլի կ՛անէին, եթէ Շահումեանն իրենցից օտարած չլինէին Արցախի փաստական «տէրերը», որոնք կը տեսնենք ինչպէս են տրամադրուած նախագահական թեկնածու Շահէն Մեղրեանի նկատմամբ: Ի՞նչ պիտի անէին հայաչխարհի կողմից մոռացուած եւ, ինչ-որ իմաստով, ամբողջ աշխարհի դէմ կռուող մի բուռ քաջեր:

Խիստ տարբերութիւններ կային նաեւ կանանց եւ տղամարդկանց աղօթքների միջեւ: Կանացի գիտակցութիւնը միտուած էր աւելի չատ անձնականին, ընտանիքին: Կնիկները աղաչում էին խաղաւութիւն եւ որպէսզի այլեւս կռիւ չլինի, իրենց զաւակների քթից արիւն չգայ, լինեն բախտաւոր, առողջ եւ երկարակեաց: Պատերազմը ատում էին ամէն կերպ, մոռանալով, թէ ինչ աշխարհում էին ապրում, մոռանալով սրբազան պատերազմի մասին, մոռանալով Քրիստոսի յաղթանակը սատանայի հանդէպ, մոռանալով փրկչի յորդորը՝ հագուստը վաճառելու եւ սուր գնելու մասին, մոռանալով, որ Նարեկը ծայրէ ծայր պատերազմ է չարի դէմ: Ովքեր կասկածում են, կարող են ընթերցել ՂԲ / 92/ գլուխը՝ կոչնակի մասին: Վախկոտ ժողովուրդը միշտ էլ մնում է ոսոխի /չարի/ ողորմածութեան բաժին, իսկ չարը երբէք չի ողորմում: Աստուած կատարում է մարդու բոլոր խնդրածները, ուստի անհրաժեշտ է ճշմարիտ, մեծ բաներ խնդրել եւ խնդրել ոչ թէ անհատաբար, այլ՝ ազգովի, իսկ դրա համար անհրաժեշտ է միաբանութիւն. երկրի գլուխը՝ իշխանաւորները միաբա՞ն են արդեօք եւ ՀԱ՞Ց են արդեօք /ոչ էթնիկ իմաստով/: Ահա եւս մի աղօթք.

*22.05.92թ. «Եկանք սուրբ եկեղեցու տակ աստծուց խնդրում եմ ինձ լաւ բախտ տայ, առողջութիւն, յաջողութիւն, իմ ախպօրցս՝ **Իւրիկին, Ռուդիկին** առողջութիւն, երկար կեանք, յաջողութիւն քվորցս էլ նոյնը ցանկանում եմ երկար կեանք **Արմինէին, Լիային** էլ աստուած չատ պահի երկար կեանք տայ*

ծնողներիս էլ նույնը առողջութիւն եմ ցանկանում երկար կեանք չատ եմ խնդրում մենք յայլող հասնենք մեր երեխոցը կոչտը ուրախ ապրենք բախտաւոր լինենք»

Մենք ծաղրելու համար չենք ընտրել այս աղօթքը, այլ իրողութիւնը ցոյց տալու համար, որ աղերսանքն առ Աստուած շրջապտոյտ է կատարում ինքնապահպանման բնազդի շուրջը, մինչդեռ իսկական քրիստոնեան այնքան զօրութիւն է զգում իր մէջ, որ նոյնիսկ իր թշնամիների համար է աղօթում, որ դարձի գան, ուղղուեն եւ արժանանան փրկութեան, իբրեւ Աստուծոյ ստեղծածներ:

*Նորից ուզում ենք չեչտել շրջանում հոգեւոր զարթօնքի սկիզբը, իսկ ո՞վ է նրանց սովորեցրել, որ փրկութիւնը Յիսուս Քրիստոսով է եւ այն էլ երկարատեւ ապաշխարութեամբ եւ չարունակական, պարբերական հաղորդութեամբ Սբ. Պատարագի ընթացքում: «Եկեղեցու տակ» եկողը բնականաբար չի պատկերացնում, որ եկեղեցին առաջին հերթին հաւատաւոր ազգն է իբրեւ միասնական համայնք, որտեղ բոլորն իրար քոյր ու եղբայր են, քանզի բոլորն են Աստծուն դիմում իբրեւ **Հայր մեր: Եթէ բոլորս միասնաբար միակ Հայր ունենք, մենք իրար ի՞նչ ենք գալիս:***

Այնուհետեւ՝ եկեղեցին սպասաւոր հոգեւորականութիւնն է, դաւանանքն ու վարդապետութիւնը, եւ դրա հետ միասին եւ միաժամանակ՝ եկեղեցին իբրեւ չինութիւն, սրբավայր՝ Աստուծոյ տունն է իր բոլոր յատկանիշներով եւ դերերով: Սրանով չենք սպառում Եկեղեցու խորհուրդը, զի այն անսպառելի է, փառք Աստուծոյ, այն Քրիստոսի Հարսն է:

*Մենք չենք յորդորում, որ մարդն իր համար չաղօթի, բայց թող աղօթի այն եղանակով, ինչ, ասենք, **Գայանէ Աղաջանեանը**՝ Շահումեանից: Ապրիլի 26-ին*

«Այսօր ես մեծ հաւատով եմ մտնում մեր այս Սուրբ Եկեղեցին, եւ միաժամանակ խնդրում եմ մեր Սուրբ Եկեղեցուց եւ ինչքան սուրբութիւններ կան բոլորից որ մի յաջողութիւն տայ մեր այս փոքրիկ հայ ազգին եւ իմ ընտանիքին նրանց հետ միասին... Թող մեծ յաջողութիւն տայ Աստուած մեզ բոլորիս»:

3.05.1992

*«Ես **Յարութիւն Գասպարի Աւետիսեան**, եկել եմ այս աշխարհ եւ ցանկանում եմ հիասքանչ այս աշխարհին բարի միացում Հայաստանին»:*

*«1992 թ. մայիսի 5-ին ես եկայ Գիւլիստանի եկեղեցին, որպէսզի Աստծուն խնդրեմ, որ հայ ժողովրդին ազատութիւն պարգեւի: Ես ցանկանում եմ ամենուրեք հայ ժողովրդին տեսնեմ ազատութեան մէջ»: Վերին- Շէնից՝ **Մարինէ Աւանէսեան**: Ամէն:*

*Վերջին գրութիւնը. «Ես **Մարինէ Սողոմոնեանս** առաջին անգամ եղայ պատմական Գիւլիստանի եկեղեցում: Ես եկայ նրա համար, որ հայ ժողովուրդը ոչ մի դանութիւն չտեսնի:Ես կը ցանկանամ, որ ոչ մի փախստական չլինի: Թող չվիրաւորուեն ո՛չ փիդայիններըը, ո՛չ մարդիկ: Թո՛ղ օդում ծածանուի խաղաղութեան դրօշը»:*

14-ը յունիսի 1992

Գլուխ տասներորդ
1992 ԹՈՒԱԿԱՆԻ ՍԿԻԶԲԸ

«Զինուորական բարոյականը չէ ասում յաղթանակը բոլոր դէպքերում, դա ասում է՝ յաղթականօրէն մեռնել գիտցիր բոլոր պայմաններում»:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆՆ ԱՑՑԵԼՈՒՄ Է ՇԱՀՈՒՄԵԱՆ

1991 թուականի վերջին ամիսների բուռն իրադարձութիւնները չարունակուեցին նաեւ 92 թուականին: Առաջուայ նման թուրքերը չարունակում էին յարձակումները հայոց գիւղերի վրայ: Տարին սկսւում է ողբերգական իրադարձութեամբ: 92-ի Ամանորի գիշերը Սարիսու գիւղի կողմից թշնամին անակնկալ յարձակումով գրաւում է Բուզլուխի մերձակայ՝ Ջամբազի դիրքերը: Այդ օրը գերում դիրքապահներին, գլխատում եւ քառատում են: Զոհուեցին ***Արայիկ Յարութիւնեանը***՝ */Մասիսից/,* ***Աւետիս Յարութիւնեանը*** */Կոստան/,* ***Աշոտ Մովսիսեանը***, ***Վաչիկ Սարգսեանը*** */բոլորը Արտաշատից/,* ***Արսէն Հայրեանը*** */Շահումեան աւանից/:*

Յակոբ Խիդիրեանը *փորձեց գրոհով ետ գրաւել կորցրած դիրքերը, սակայն չյաջողեց եւ ինքն էլ վիրաւորուեց եւ տեղափոխեցին Երեւան:*

Թուրքերի կողմից գրաւուած դիրքերը ետ գրաւելու նոր գործողութիւնը շահումեանցիները ձեռնարկեցին յունուարի 6-ի առաւօտեան: Լոյսը դեռ չբացուած՝ ***Դաւիթ Բաղդասարեանի*** *հրետանին խփում է Ջամբազում ամրացած թուրքերին: Մեր հետեւակ խմբերը կենտրոնացել էին Ջամբազի ստորոտում եւ Բուզլուխի ու Մանաչիդի կողմից յարձակւում էին ներքեւից վեր եւ, մթան քօղի տակ, սկսում գրոհային գործողութիւնը: Թուրքերը չդիմացան եւ սկսեցին նահանջել դէպի Սարիսու: Այնուհետեւ փախուստի դիմեցին եւ գիւղից դուրս եկան նաեւ Սարիսուի բնակիչները: Հրետանու պաշարները աւարտուել էին*

եւ յաջող գրոհն իր կատարեալ աւարտը չունեցաւ, այլապէս թուրքերը պիտի նահանջէին մինչեւ Գետաշէն եւ Մարտունաշէն:

1992 թուականի յունուարի 8-ին ԼՂՀ Գերագոյն խորհրդի նախագահ ընտրուեց ***Արթուր Մկրտչեանը****: Ընտրութիւնների ընթացքին եղաւ մի պահ, երբ քաղաքական հոսանքների պայքարում չէր որոշւում նախագահի ընտրութեան հարցը, ուստի առաջադրուեց նաեւ* ***Շահէն Մեղրեանի*** *թեկնածութիւնը: Շահէնն անհրաժեշտ քանակութեան ձայներ չհաւաքեց, սակայն չընտրուելը բնաւ էլ նրա մէջ բացասական յոյզեր առաջ չբերեց: Նա ի սրտէ ուրախ էր Արթուր Մկրտչեանի համար: Շահումեանի չրջանի պատգամաւորներն էին՝* ***Յակոբ Խնդիրեանը եւ Ռօմա Առաստամեանը*** *Շահումեան աւանից,* ***Արկադի Զըլաւեանը եւ Սերգէյ Զալեանը***՝ *Վերին Շէնից,* ***Սամսոն Ոսկանեանը եւ Շահէն Յովասափեանը***՝ *Կարաչինարից,* ***Շահէն Մեղրեանը***՝ *Գիւլիստանից:*

Մեր ազգային պատմութեան դարերի փորձը ցոյց է տալիս, որ եթէ քաղաքական մի ուժ հոգեւոր ճշմարիտ հիմքեր չունի, այնպիսին, ինչպիսին պատկերագծել է ***Գարեգին Նժդեհը****, որն ըստ էութեան հոգեւորի եւ ռազմա-քաղաքականի ներդաշնակ եռամիասնութիւն է եւ որն ի վերջոյ հանճարեղ զօրավարն ու մտածողն անուանել է* ***ցեղակրօնութիւն****, այդ ուժը չարիք է դառնում ազգի եւ մարդկութեան համար: Եթէ բոլշեւիկ դարձած հայը կեանքում զղջումի եւ ապաշխարութեան ընթացք չի ապրել եւ միայն իրաւաքաղաքական համակարգի փոփոխութիւնն է ստիպել նրան փոխելու իր բառապաշարը եւ լոկ խօսքի մակարդակով է ընդունել ազգային արժէքների համակարգը, նման մարդուն երբեք կարելի չէ երկիր վստահել: Մանաւանդ յոյժ կարեւոր է, որպէսզի անկախութիւն ստացած ազգի հանրապետութեան ղեկավարութիւնն անցած լինի վերափոխման հոգեւոր այդ ճանապարհը, որպէսզի բարձրանայ հոգեբարոյական ամուր վէմի վրայ: Երկրի ղեկավարութիւնը պէտք է անձամբ ոչ միայն իմանայ եւ ընդունի ազգային բոլոր արժէքների համակարգը, այլեւ դաւանանքով լինի Հայ եւ*

վարք ու վարմունքով՝ բարեկիրթ:

*Արցախում այդպիսի մարդ էր **Արթուր Մկրտչեանը**, ում իր բնազդով ճանաչեց ազգը եւ նախագահական իշխանութիւնը վստահեց նրան: Խորհրդային համակարգի փլուզումից յետոյ Արթուր Մկրտչեանն առաջին քաղաքական գործիչն էր, ով իր անխաթար հոգե-բարոյական նկարագրով միաժամանակ ազգային մշակոյթի քուրայով անցած պայծառ անհատականութիւն էր, միանգամայն նոր երեւոյթ Արցախում: Նա յայտնութիւն դարձաւ Ստեփանակերտում եւ կայծակնօրէն գրաւեց քաղաքական չրջանների եւ ժողովրդի համակրանքը: Նա իր անաղարտ հայկականութեամբ կարծես լոյս էր սփռում, փայլում եւ հմայում էր իր ինքնաձիգ ուժով: Նրա միայն մէկ ելոյթը գերեց ստեփանակերտցիների սրտերը: Ամէն բանական մարդու համար հասկանալի է, որ եթէ մէկն ի զօրու է արտայայտելու իր ժողովրդի սրտի խորքերում փայփայած ազգային նուիրական իդէալները, ուրեմն հէնց նա էլ Աստուծոյ համար հաճելի ղեկավար անձն է: Եւ պատահական չէ, որ նոյնիսկ **Ռոբերտ Քոչարեանի** անմիջական մտերիմներն իրենց ձայնը տուեցին Արթուրին:*

Իբրեւ Արցախի պաշտպանութեան պատուար՝ Արթուր Մկրտչեանն առաջին այցելութիւնը կատարում է ազատութեան դրօշը պարզած Շահումեանի չրջան: *Նա տեսաւ, որ Շահումեանի չրջանն անցել է կատարեալ ինքնաբաւութեան եւ կիրառում է էքստրեմալ վիճակներին բնորոչ կենցաղավարութիւն՝ հիմնականում ապահովելով Շրջանի բնակչութեանը գոյութեան միջոցներով, մշակելով հողերը եւ գործածելով ջրաղացներն ու կենցաղապահովման առկայ հնարաւորութիւնները: Արթուր Մկրտչեանը հասցնում է լինել նաեւ Սբ Աստուածածին եկեղեցում, խորապէս տպաւորւում է եւ գրում.* ***«Այս ամէնի տէրը իրաւունք չունի մեռնելու: Մեր պապերի ստեղծածը մերը չի, այլ մեր թոռներինը եւ պարտաւոր ենք յանձնել նրանց այնպէս, ինչպէս ստացել ենք»:***

Ա. /Արթուր/ Մկրտչեան
23. 01. 92թ

Սակայն Արթուր Մկրտչեանի գլխավերեւ ամպեր էին կուտակւում:

Պետրոս Մեղրեանը *յիշում է ԼՂՀ Դխ նախագահի հետ իրենց առաջին հանդիպումը «Հրազդան» հիւրանոցում:* ***Շահէնն*** *այդ օրը Երեւանում էր, եւ Պետրոսը եկել էր նրա հետ տեղ գնալու: Մտաւ, տեսաւ հաց են ուտում: Իրեն յատուկ անմիջականութեամբ Պետրոսն ասաց.*

- Շահէ՛ն, գիտե՞ս, էս ղարաբաղցիք լաւ չեն աշխատում:

Նա Արթուրին դէմքով չէր ճանաչում, դեռեւս չէին հանդիպել: Շահէնը բարկացաւ.

- Արա՛, ձէնդ կտրի՛:

- Դէ՛, ի՞նչ է եղել, լաւ չեն աշխատում էլի՛:

Պետրոսն այդ ժամանակ երկու ամիս Գաւառումն էր, այնտեղից Շահումեան վառելիք, սնունդ էր ուղարկում: Լարուած աշխատում էին եւ հնարաւորութիւն չկար, չէին թողնում գիւղ գնար: Դա 92 թ. յունուարից մինչեւ մարտի 3-ն էր, մինչեւ Պետրոսի վիրաւորուելը:

Շահէնը կրկնեց.

- Ձէնդ կտրի՛, Ղարաբաղի Գերագոյն խորհրդի նախագահն է այստեղ նստած, իսկ դու ձէնդ գցել ես: Ի՞նչ Ղարաբաղցի, ի՞նչ բան:

Դա այն պահն էր, երբ Արթուր Մկրտչեանը եկել էր Ռուսաստանից եւ այստեղ ղեկավարութեան հետ լեզու չէր գտել եւ մէկ շաբաթ Երեւանում ուղղաթիռ չէին տրամադրում, որ թռչէր Արցախ: Պետրոսը լաւ է յիշում՝ Արթուրը մի հասարակ դիւանագիտական (դիպլոմատ) պայուսակով էր, որի մէջ ***Ելցինի*** *նուիրած ժամացոյցն էր:*

Շահէնը Պետրոսին մի կողմ քաշեց եւ ասաց.

- Արթուրին չենք կարողանում այստեղից թռցնել, եղանակ չկայ, պայմաններ չկան, չենք յաջողում: Դու նստեցրո՛ւ մեքենան, թող որեւէ մէկը չիմանայ, եւ հետդ տա՛ր Գաւառ:

Ամենից լաւ Արթուրի վիճակը Շահէնն էր հասկանում, չէ՞ որ այդպիսի վերաբերմունքի առարկայ էր նաեւ Շահումեանի առաջնորդը:

Պետրոսն ու Արթուրը այդ օրը երկար են զրուցել: Ղարաբաղի Գերագոյն խորհրդի նախագահը մէկ չաբաթ գտնուում էր Երեւանում եւ ինչ-ինչ պատճառաբանութեամբ չէին կարողանում կամ չէին կամենում թռցնել: Այստեղ խորհելու հարցեր կան, որ գուցէ յետոյ կը պարզաբանուեն:

*Գաւառում ուղղաթիռի անձնակազմի ղեկավարը **Գեղամ Գաբրիէլեանն էր**, որն այդ պահին հերթապահում էր: Պետրոսն ասաց.*

- Գեղա՛մ, պիտի թռչենք Շահումեան:

Գեղամն էլ չէր ճանաչում, թէ ով է իրենց ուղեւորը:

- Հա՛, Գեղամ, գոնէ մի ռեյս այսօր պիտի անենք:

- Այսօր հնարաւոր չէ:

- Գեղա՛մ, անպայմա՛ն պիտի թռչենք:

- Դէ լա՛ւ:

Եւ կարծես իրենց բախտից՝ սարերն իրենց վրայից սկսեցին թօթափել ամպէ վարագոյրները: Հրանօթները բարձեցին եւ Պետրոսն էլ Արթուրի հետ թռաւ: Երբ Քարվաճառն անցան, ասաց.

- Գեղա՛մ, պիտի թեքուես Քոլատակ:

- Ա՛յ մարդ, Քոլատակում ի՞նչ կայ էս խառը ժամանակ:

- Պիտի իջնես Քոլատակ:

Եւ մօտենալով չզնջաց, թէ ով է իրենց ուղեկիցը:

Պիտի թռչէին Քոլատակ, Արթուրին իջեցնէին, դրանից յետոյ ուղղուէին Գիւլիստան: Այդպէս էլ եղաւ:

Պետրոս Մեղրեանի յիշատակած դրուագից պարզ երեւում է Հայաստանի բարձրագոյն իշխանութեան եւ կառավարութեան ղեկավարների վերաբերմունքը ԼՂՀ Գխ նախագահի նկատմամբ: Հայաստանի իշխանութիւնները, որոնք արդէն ամրապնդել էին իրենց վլաստը, խորագոյն թշնամանքով էին վերաբերում իրենց ոչ հպատակած քաղաքական այլ ուժի յաղթանակին, եւ նրանց միջեւ հակասութիւնները ծայրասահման սրուեցին: Եւ այդ ամէնը վերջացաւ ողբերգութեամբ: Արթուր Մկրտչեանը Գերագոյն խորհրդի նախագահի

պաշտօնին մնաց ընդամէնը 97 օրեր եւ զոհուեց հէնց իր տան մէջ: Նախքան նահատակութիւնն՝ իր վրայ կրեց ոչ այնքան Արցախի Գիմ անդրանիկ նախագահի պատիւը, որքան Հայաստանի իշխանաւորների եւ յատկապէս իշխանապետի անարգանքը: Սակայն մարտիրոսի հէնց այդպիսի վախճանը սրբացրեց նրա անունը ժողովրդի սրտում եւ նոյնիսկ այդքան կարճատեւ կեանքը բիւր անգամ գերադասելի է, քան անուանարկուած ՀՀՇականի հարիւրամեայ գոյութիւնը, որի ուղեկիցն ու աւարտը ժողովրդի նզովքն ու անէծքն է: Ընտրէ՛ք, որը կամենում էք:

Արթուրի մահը համընդհանուր ցաւով ընդունուեց: Նրա կորուստը միաժամանակ հայութեան բարոյաքաղաքական իդէալի խամրումն էր անորոշ ժամանակով: Արթուրի շրջապատի նորօրեայ բոլոր դաշնակցականները չէ, որ դաւանանքով ու կրթութեամբ հայեր էին: Առաւել եւս՝ այդպիսին չէին Արցախի քաղաքական բազմաթիւ գործիչներ, ովքեր կրթութիւն էին ստացել օտար լեզուով եւ անհաղորդ մնացել հայրենի մշակոյթին: Ազգային ոգուց եւ մշակոյթից այս օտարուածութիւնը Արթուր Մկրտչեանի շուրջ ստեղծուած հեղաշուիչ մթնոլորտի հիմնական պատճառ դարձաւ, որի սեւակնումի ընթացքն ուղղորդւում էր Հայաստանի իշխող շրջաններից: Այնժամ եւ այժմ այդ մարդիկ ձգտում էին ամբողջատիրութեան՝ իրենց ձեռքը վերցնելու նաեւ ԼՂՀ ղեկավարութիւնը: Եւ նրանք իրենց նպատակին հասնելու համար նախ փորձեցին քաղաքականապէս սպանել ԼՂՀ Գիմ անդրանիկ նախագահին՝ նրան չընդունելով որպէս այդպիսին եւ նրա մասին կարծիք տարածելով՝ իբրեւ անընդունակ ղեկավար, վտիտ քաղաքական գործիչ: Ազգային առումով անլիարժէք եւ մարդկային իմաստով նուաստ տարրերը, որոնց կեանքի միակ նպատակն իշխանութիւնն էր, որն ապահովում էր նիւթական փարթամութիւն եւ ցածրակարգ հաճոյքներ, բնականաբար չէին կարող հանդուրժել Արթուրի նման մարդուն:

ԿԱՐՃԱՏԵՒ ԲԱԽՈՒՄ ԵՒ ԱՂԷՏ ԵՐԿՆԴՈՒՄ

*1992ի փետրուարի 17-ին իրիկնադէմին թուրք հրոսակները յարձակւում են Մանաշիդի վրայ: Այդ օրը հերթապահում էին Վերին Շէնի ջոկատի մաս կազմող մարտիկները՝ **Արթուր Յակոբեանի** գլխաւորութեամբ եւ աշխարհազօրայինները: Անակնկալ յարձակումով թուրքերը մտնում են գիւղ: Գիւղի պաշտպանները նահանջում են: Նահանջի ժամանակ զոհւում են երկու աշխարհազօրային՝ **Ռուբէն Պետունցը եւ Արշակ Մարտիրոսեանը**: Գիշերը տղաները Արթուրի հետ նոյնիսկ գիւղից դուրս չեն գալիս: Առաւօտեան Վերին շէնի ջոկատն իր հիմնական կազմով, **Նովիկ Գիւլումեանի** հրամանատարութեամբ հասնում եւ գրոհով ետ է վերցնում գիւղը: Զոհւում է **Հայկ Շելունցը**: Վերինշէնցիների փոքրաթիւ ջոկատը նահանջել էր:*

***Շահէն Մեղրեանը** մեծ տարողութեան ուղղաթիռներ բերելու համար օգտագործեց իր կապերը եւ գնաց Թիֆլիս: Երկու ուղղաթիռ բերեցին, որոնցից մէկը թռչում էր դէպի Արցախի մարզ, միւսը՝ Շահումեան: 1992-ի Մարտի 2-ին ՄԻԳ 26 հսկայ ուղղաթիռը Վարդենիսից թռիչք է իրագործում Գիւլիստան՝ տեղափոխելով «Գրադ» կայանքը, հակատանկային արկեր, հրթիռներ, ալիւր եւ փիդայական մի ջոկատ: Պատասխանատուներն էին **Պետրոս Մեղրեանը** եւ գործարար **Աչոտ Խաչատրեանը**, որն անշեղ հետեւողականութեամբ մշտապէս օգնել է Շահումեանի ինքնապաշտպանութեանը եւ այս անգամ էլ իր մի հերթական բարեգործական նպատակով էր թռչում Շահումեան: Անձնակազմը ռուսներ էին: Ուղեկցում էին երկու «Կոբրա» ռազմական ուղղաթիռներ: Համատարած մառախուղ էր եւ մեծ թժուարութեամբ վայրէջք կատարեցին Գիւլիստանում: Բեռնաթափեցին ուղղաթիռը: Ետդարձին ուղղաթիռը թուրքերը խփեցին եւ 20-21 հոգի զոհուեցին: **Պետրոս Մեղրեանը** վիրաւորուեց: Դա 92-ի մարտի 3-ին էր: Թէեւ **Շահէն Մեղրեանը** հրահանգել էր ետադարձին մարդ չվերցնել, քանզի ուղղաթիռները պիտի վայրէջք կատարէին ռազմական*

*օդակայանում, սակայն երբ բարձեցին դատարկ տակառները, Երեւան մեկնել ցանկացողներն այնքան բազմաքանակ էին, որ Պետրոսն ու **Սերգէյ Զալեանը** չդիմացան ուղղաթիռ լցուելու նրանց հախուռն ճնշմանը: Ուղղաթիռում տեղաւորուեցին մօտ 40 մարդ՝ մարտիկներ, կին ու երեխաներ: Իրիկնադէմ էր արդէն, աղջամուղջ, երբ ուղղաթիռներն օդ բարձրացան: Մշուշէ գօտին անցան եւ հրաշագեղ տեսարանը միանգամից հափշտակեց նրանց, ովքեր հազուագէպ էին անցնում երկնքի այս հատուածով: Մռաւի ձիւնափառ գագաթները մի առ ժամանակ մոռացնել էին տալիս պատերազմական արհաւիրքները եւ խաղաղեցնում մարդկային հոգին, նրան մի պահ հաղորդակից անում յաւիտենականին:*

Ուղեւորներից ոմանք յանկարծ նկատեցին, թէ ինչպէս է ներքեւից հսկայ հրէգունդը դէպի իրենց սուրում: Մի ակնթարթ յետոյ լսուեց ահաւոր պայթիւն եւ ուղղաթիռը ցնցահարուեց: Յածում լեռներ էին միայն եւ հնարաւոր չէր իջնել: Մի քանի վարկեան անց տեղի ունեցաւ երկրորդ պայթիւնը: Ուղեսրահը բռնկուեց բոցով: Նոյն պահին օդանաւի հրամանատարը Պետրոսին խնդրեց նայել, թէ ինչ է կատարւում սրահում: Սրահում ճարճատիւնով բոցկլտում էին ինքնաթիռի էլեկտրալարերը եւ չարժիչից իւղերը թափւում էին մարդկանց վրայ: Պետրոսը պահանջեց հնարաւորինս չուտ վայրէջք կատարել, սակայն այդ պահին երկրորդ հրթիռը դիպաւ ուղղաթիռին: Ինքնաթիռի մեքենագէտը Աչոտին մի կրակմարիչ տուեց՝ խնդրելով մտնել ուղեսրահ եւ փորձել մարել կրակը: Աչոտը դուռը բացեց եւ բոցի լեզուակներն արդէն հասնում էին խցիկին: Ուղեսրահից լսւում էին ճիչեր, օգնութեան կանչեր, աղաղակներ: Կային զոհուածներ, վիրաւորներ: Ծուխը լցուեց օդաչուական խցիկը եւ այլեւս հնարաւոր չէր ուղղաթիռի թռիչքի ղեկավարումը: Այն խփուել էր 3600 մետր բարձրութեան վրայ: Հրամանատարը ձգտում էր մեքենան իջեցնել համեմատաբար հարթ մի հողակտորի վրայ: Ծուխը խանգարում էր: Եւ այդ պահին լսուեց դղրդիւն. մեքենան նստել էր հողին: Ուղղաթիռն ընկաւ Օմարի լեռան

վրայ: Բարեբախտութիւն էր, որ ուղղաթիռի վերնամասում տեղաւորուած չարժիչը պոկուել էր եւ ուղղետարային սրահը տաշտակի նման ընկաւ գետնին, այլապէս ոչ ոք չէր փրկուի: 35-40 հոգուց զոհուեցին 21-ը: Ուղղաթիռի հրամանատատար **Իգորը**, որ փորձառու եւ քաջ մարդ էր, կարողացաւ սրահը նստեցնել գետնին: Յետոյ փրկարար ուղղաթիռներ եկան եւ ողջերին ու վիրաւորներին տարան: Զոհերին տարան յաջորդ օրը: Զոհուել էին մի խումբ ազատամարտիկներ, մեծամասամբ գիւլիստանցիներ: Պետրոս Մեղրեանը եւ Աչոտ Խաչատրեանը փրկուեցին կոտրուածքներով: Ուղեկցորդ ռազմական ուղղաթիռը սարսափելի այն պահին թողնում է խփուած ինքնաթիռը եւ թռչում դէպի երեւան: Սակայն այն նորից է վերադառնում, երբ ընկնում է ուղղաթիռը: Նախքան ռազմական ուղղաթիռի գալը թուրքի մի ուղղաթիռ փորձում է գրոհել ընկածների վրայ՝ պակասը լրացնելու համար: Ոմանք, ովքեր չէին կորցրել ինքնատիրապետումը, հանում են զէնքերը թուրքի ուղղաթիռից պաշտպանուելու համար: Այդ պահին ուղեկցորդ ինքնաթիռը հասնում է եւ կրակ բացում թուրքի ուղղաթիռի վրայ: Այնուհետեւ մէկ այլ ուղղաթիռ է գալիս եւ ողջերն իրենց գցում են ուղղաթիռի մէջ եւ գերբեռնուած ուղղաթիռը դժուարութեամբ պոկւում է հողից եւ թռչում: Վիրաւորները խիստ սառնամանիքի պայմաններում սպասում են այլ ուղղաթիռի: Արդէն մթամած՝ գալիս է երկրորդ ինքնաթիռը եւ մի կերպ հաւաքում են վիրաւորներին եւ տանում Երեւան: Ուղղաթիռում զոհուածների թիւը, ըստ Աչոտ Խաչատրեանի՝ 60 է, որոնց թւում՝ Աբովեանում ապրող գիւլիստանցի ազատամարտիկներից 11 հոգին, որոնք գնում էին կարճատեւ հանգստի: Զոհուածների թիւը ըստ Վանցեանի՝ 16 է:

1992-ի ապրիլի 15-ին Սարխոսի կողմից թուրքերը նորից անակնկալ յարձակում են գործում այս անգամ Ջամբազի ճակատագրական թիւ 25 դիրքի վրայ: Թէժ մարտը շարունակւում է 5-6 ժամ: Զոհւում են **Ստեփան Ղաբուլեանը, եւ Գէորգ Յարութիւնեանը** Շահումեան աւանից: Ծանր վիրաւորւում է բուզլուխեցի **Պետոն**: Թուրքերը կարողանում են մեր երկու

զոհեալ ազատամարտիկների դիերն իրենց հետ տանել, որոնց մի քանի օր անց փոխանակում են մեր կողմից գերած ռուս սպայի հետ:

Նախքան ողբերգական յունիսի 17-ը եղան ոչ այնքան մեծ իրադարձութիւններ

Թուրքերը էրքեջի մերձակայ Ղունանայ հակակարկտային կայանքի բարձունքի գերազանց դիրքից մեծ ճնշում էին գործադրում էրքեջի, Հայ Պարիսի եւ առհասարակ չրջակայ տարածքի վրայ: Ելնելով այդ վիճակից, **Շահէն Մեղրեանը** զինուորական խորհուրդ է հրաւիրում եւ որոշում են վերցնել բարձունքը: Դիրքերի վրայից չատ էին նեղութիւն պատճառում մեր ջոկատներին: Որոշւում է գործողութիւնն իրականացնել Վերին Շէնի, էրքեջի եւ «Մեծն Տիգրան» ջոկատների ուժերով /մօտ 70 ազատամարտիկներ/՝ **Նովիկ Գիւլումեանի** հրամանատարութեամբ: Մի քանի օրուայ մանրազննին հետախուզութեամբ թուրքերի դիրքերի եւ ուժերի յստակ պարզաբանումից յետոյ յարձակման օր նշանակուեց 1992-ի մայիսի 1ը: Որոշուած էր յարձակումն իրականացնել գիշերը: 70 մարտիկների փոխարէն կռուին իրական մասնակցութիւն բերեցին ընդամէնը 20-25 հոգի: Յարձակման ժամկէտն էլ չպահպանուեց, քանզի սխալմամբ չատ էին մօտեցել թուրքերի դիրքին մօտ եւ մառախուղի պայմաններում: Մարտը պիտի սկսուէր առաւօտեան ժամը 6-ին, սակայն, թուրքերի քթի տակ անհոգաբար ծխող մարտիկների ներկայութիւնն զգացին թուրքերը եւ սկսուեց իրարանցումը: Թանձր մառախուղը չէր ցրւում եւ անթափանց խաւարը տիրում էր տակաւին: Սակայն կարելի չէր երկար սպասել. մեր մարտիկները բացարձակ մերկ լանջերի վրայ էին եւ կարող էին մեծ վնասներ կրել: Ժամը 5-ին հրամանատարը ձայնակապով հրահանգեց սկսել գրոհը: Հակառակ սպասածին մարտը տեւեց մինչեւ ցերեկուայ ժամը 2-ը: Թուրքերը, ինչպէս յետոյ պարզուեց, ունէին եռաչերտ խրամատներ: Մեզ համար նպաստաւոր պայմանն այն էր, որ չինարար **Արթուր Յակոբեանը** քաջածանօթ էր այդ

*բարձունքին, ժամանակին նրա ղեկավարութեամբ այդտեղ չէնքեր էին կառուցել: Վճռականօրէն անցան մերձամարտի եւ մեծ դժուարութեամբ թուրքերին դուրս մղեցին խրամատներից: Մեր մարտիկներին աջակցող ՀՄՄ խփուեց: Վարորդ մեքենագէտը **Սերգէյ Զալեանն** էր: Թողնելով բազմաթիւ դիակներ եւ /երկու 82մմանոց ականանետ իրենց ռազմամթերքով, բարձած երկու բեռնատարների վրայ, մէկ Ուազ մարդատար մեքենայ, երկու 100մմանոց հրանօթ, որոնցով հրակոծում էին մեր դիրքերը, տեխնիկայի վրայ տեղադրած ՆՈՒՐՍ զինատեսակ, մեծ քանակութեամբ աւտոմատ զէնք/ եւ խփելով մէկ ռազմական տեխնիկա՝ Շիլկա, որը նռնականետով խփեց Արթուր Յակոբեանը /Քեաբ/, թուրքերը թողեցին դիրքերը: Եղանակային բարդ պայմաններում մենք եւս չխուսափեցինք կորուստներից. զոհուեցին Վերին Շէնի ջոկատից **Արտակ Հախունցը, Իսահակ Վիրաբեանն ու Տիգրան Յակոբեանը**՝ «Մեծն Տիգրան»ից եւ մի քանի վիրաւորներ:*

Գլուխ տասնմեկերորդ
1992 ԹՈՒԱԿԱՆԻ ԳԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՂՀՈՒՄ

*Ինչպէս որ ՀՀ տարածքի վրայ ՀՀՇականները հասան բացարձակ մենիշխանութեան, նոյնին էլ ձգտում էին նաեւ ԼՂՀում: Եւ ահա **Արթուր Մկրտչեանի** սպանութիւնից յետոյ Գերագոյն խորհրդի նախագահի համար նոր ընտրութիւններ պիտի լինէին:*

*Դաշնակցութեան ազդեցութիւնը մեծ էր ոչ միայն Շահումեանում, այլեւ ամբողջ Արցախում: Դաշնակցության գործունէութեան չարժառիթները մաքուր էին, եւ նա ոչ մի իրադրութեան մէջ չէր դառնայ գրպանի կուսակցութիւն, հանգամանք, որը շատ էր անհանգստացնում ՀՀՇին եւ նրա առաջնորդ **Լեւոն Տէր-Պետրոսեանին**, յատկապէս երբ վերջինս դարձաւ ՀՀ նախագահ: Տարածուած այն տեսակէտից, որ Շահումեանն առհասարակ դաշնակցական չրջան է՝ դաշնակցականների վիճակը չէր լաւանում, ընդհակառակը՝ ծածուկ թէ յայտնի բոլոր միջոցներով, ընդունելի կամ անընդունելի գործելակերպով փորձում էին նրան ճնշել, հեղինակազրկել, նսեմացնել՝ կարծես չարունակելով քաղաքական ասպարէզից նրան հեռացնելու բոլշեւիկների երբեմնի մոլեռանդ վերաբերմունքը, որը վերստին ծնունդ էր առել Հայաստանում Դաշնակցութեան վերահաստատման օրից: Միայն չարունակուող պատերազմն էր որոշ չափով զսպում կառավարող իշխանութեանը Դաշնակցութիւնն օրէնքից դուրս յայտարարելու եւ նրան վերստին վտարելու մոլուցքից, քանզի պատերազմի առաջին տարիներին մարտնչող հիմնական ուժը դաշնակցական ջոկատներն էին, որոնք ռազմաճակատում, թշնամու առաջը փակելով, հնարաւորութիւն էին տալիս օրուայ իշխաններին ամրապնդելու իրենց դիրքերը եւ վայելելու պաշտօններն ու դարաւոր ազգային ունեցուածքը: Սա էր Հայաստանի ճակատագիրը եւ սրանից խուսափել չէր լինի: Նեոբոլշեւիկները որեւէ երեւելի պաշտօնում դաշնակցա-*

կանների չէին հանդուրժում: Այդ իսկ պատճառաւ Արցախի դաշնակցական ղեկավարների նկատմամբ թշնամական մթնոլորտ էր ստեղծուած եւ ամէն ինչ արւում էր իրենց չափանիշների սահմաններում չտեղաւորուող գործիչներին փոխելու կամ նոր պաշտօնների մօտ չթողնելու համար: Եթէ խարդաւանքով կամ այլ եղանակներով դրան չէին հասնում, նրանց նկատմամբ կիրառում էին վերջին միջոցը՝ սպանութիւնը, լինի դա քաղաքական, բարոյահոգեբանական կամ քրէական ճանապարհով:

Արթուր Մկրտչեանի *զոհուելուց յետոյ առաջիկայ նախագահական ընտրութիւններին պայքարն էլի ընթացաւ ՀՀՇի եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան միջեւ:*

Այդ տարիներին ՀՀՇ կուսակցութիւնը ՀՀում արդէն իր ձեռքն էր վերցրել երկրի բոլոր պաշտօնները անխտիր եւ տրամադրել իր անդամներին: Սա իշխանութեան նկատմամբ նոյնպիսի վերաբերմունք է, ինչ տեսել ենք բոլշեւիկների եւ կոմունիստական 70-ամեայ պատմութեան ընթացքին:

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ Դաշնակցութեան ֆենոմէնն ատելի է «չափաւոր» հայեացքներ, նաեւ չափաւոր «հայրենասիրութիւն» ունեցող մարդկանց՝ քաղքենիներին, որոնց իրականում հետաքրքրում է միայն մի բան՝ իշխանական աթոռներ եւ անձնական ապահով կեցութիւն, որն իրականում է իրենց միլիոնաւոր համազգիների ահաւոր ճնշման եւ անկման, իրենց քաղաքական հակառակորդների ոչնչացման գնով:

Իշխանամոլները Դաշնակցութեանը Արցախում եւս կարող էին հանդուրժել միայն զինուորի, ազատամարտիկի կարգավիճակով, մի պայմանով, որպէսզի նա չյայտնուի քաղաքական դաշտի վրայ: Այստեղ միանշանակ բացարձակ մենատիրութիւն էր, մոնոպոլիա, եւ ՀՀՇ կուսակցութիւնը չէր պատրաստւում իշխանութիւնը կիսելու որեւէ այլ ուժի հետ:

Արթուր Մկրտչեանին նուիրուած մենագրութեան մէջ մենք բազմաթիւ վկայութիւնների միջոցով փաստարկել եւ ապա-

ցուցել ենք Արցախի Դերագոյն խորհրդի առաջին նախագահի նկատմամբ կիրառուած անմարդկային վերաբերմունքը: Եւ խորաթափանց միտք պէտք չէ կռահելու համար, որ նոյն վերաբերմունքը պիտի չարունակուէր ԼՂՀ ԳԽ նախագահի դաշնակցական յաջորդ թեկնածուի նկատմամբ:

Արթուր Մկրտչեանից յետոյ ***Շահէն Մեղրեանը*** *մաքառող Արցախի առաջնորդի միւս արժանաւոր թեկնածուն էր, մարդ, որն ստացել էր իսկական հայադաւան դաստիարակութիւն եւ կրթութիւն: Շահէնի ուսուցիչը եղել է մեծ մանկավարժ* ***Բենիկ Ղուլեանը****: Ինքը՝ Շահէնն իր բնոյթով իսկական մելիք էր, այսինքն՝ թագաւոր: Շահէնի մելիքութիւնն արտայայտւում էր ոչ այնքան իբրեւ սոցիալական կարգավիճակ, որքան նրա հոգեբարոյական մակարդակով: Այսինքն՝ նրա մարդկային յատկանիշները եւս համապատասխան էին նման պաշտօնավարութեանը: Եւ պատահական չէ, որ Դաշնակցութեան մէջ բոլոր թեկնածուներից չուտով առանձնացաւ այս անունը: Դերագոյն խորհրդի նախագահութեան ընտրութիւններին նրա թեկնածութեանն իրենց համաձայնութիւնը տուեցին բոլորը, քանզի Շահէն Մեղրեանն իբրեւ ռազմաքաղաքական առաջնորդ եւ կազմակերպիչ՝ ճանաչման է արժանացել ի սկզբանէ:*

Շահէն Մեղրեանի թեկնածութիւնն առաջադրուեց՝ նոյն պաշտօնի թեկնածու ***Գէորգի Պետրոսեանի*** *չընտրուելուց յետոյ: Յաւելեալ պատճառներ կային, որպէսզի Շահէնի նկատմամբ անհանդուրժողականութիւնը հասնէր ծայր աստիճանի: Այդ հանգամանքը նկատելի է եղել նոյնիսկ օտարներին.*

Անդրէյ Պրալնիկով. «Դեռ մէկ տարի առաջ **Մեղրեանն** իրեն քաղաքական գործիչ չէր համարում: **Նա իր գլխաւոր խնդիրը տեսնում էր Մոսկուայի հրամանով բանակի զաւթած եւ աղրբեջանցիներին յանձնած հայկական գիւղերի ազատագրումը**: Բայց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումից, որի կազմի մէջ մտաւ Շահումեանի շրջանը, եւ ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ **Արթուր Մկրտչեանի** մահից յետոյ համաձայնեց նոր ընտրութիւններին իր թեկնածութիւնը մտցնել: Հնարաւոր է, որ **այդ պաշտօնը զբաղեցնելուն նրան խանգարեց**

«Դաշնակցութիւն» կուսակցութեանն իր անդամակցութիւնը, որը Հայաստանում այսօր իշխող ՀՀՇին ընդդիմադիր կուսակցութիւն է, բայց նա ամենալուրջ թեկնածուներից մէկն էր»:

Եւ անվարան կարելի է ասել, որ իսկապէս դաշնակցական լինելը խանգարեց Շահէնին ընտրուել նախագահ եւ ոչ թէ նրա բնածին աստուածային չնորհները, հոգեբանութեան գծերը: Դրանք էլ, անկասկած, ՀՀՇականների սրտով չէին, քանզի Շահէնի հոգեպատկերի վրայ տեսնում էին իրենց աղաւաղուած դիմագծերը եւ նրանց թւում էր, թէ իրենց տգեղութեան պատճառը Շահէնի հոգու մաքուր հայելին է: Շահէնի առաւելութիւնը զգում էին նաեւ իր քաղաքական հակառակորդները, որոնք կենտրոնացած էին ՀՀՇ կուսակցութեան մէջ եւ պարզ է, որ որքան բարոյապէս եւ իմացականօրէն բարձր լինէր այդ հակառակորդը, այնքան նա անընդունելի պիտի լինէր: Այսպիսին է քաղաքական պայքարի բնոյթը, ասպարէզ, որտեղ պայքարող կողմերը հակադիր դիրքորոշումներ են ունենում գրեթէ բոլոր կարեւոր հարցերում: ***Վազգէն Մանուկեանն*** *էլ Շահէն Մեղրեանին բնութագրել է որպէս միջնադարեան ֆէոդալ, այսինքն անձ, ով շատ հեռու է ժողովրդավարութիւնից: Հիմա Վազգէն Մանուկեանը թող հայեացք նետի իր չրջապատին եւ տեսնի, թէ ովքեր են իսկական ֆէոդալները: Սա՝ ի դէպ:*

Հոգեբանական վերոնշեալ առանձնայատկութիւններն այնքան դեր չունէին, որքան նրա դաւանած արժէքների համակարգը եւ մշակութային միջավայրը: Հայաստանի արեւմտամէտ իշխանութիւններին հէնց այս մարդն էր խանգարում անարգել կերպով քարտէզը վերաձեւել ***ըստ Պօլ Հոբլի ծրագրի****: Առանց այդ էլ՝ բնաւորութեամբ եւ հոգով զօրաւոր Շահէն Մեղրեանը եթէ դառնար նաեւ Արցախի առաջնորդ, արտերկրային ոչ մի ուժ այլեւս չէր կարող այս տարածաշրջանում նկատելի ներգործութիւն ունենալ:*

ՀՀՇականների համար անտանելի էր նաեւ ազգային եւ սոցիալիստական գաղափարաբանութիւնը, որի յաղթանակի դէպքում նրանով առաջնորդուող իշխանութիւնը կը զրկէր

երբեմնի ծայրայեղ աղքատ եւ ներկայումս «բիրդան աղաներ» դարձած ոճրաընտանիքներին (կլան) իրենց անաչխատ եւ անբաւ նիւթական եկամուտներից:

***Իգոր Մուրադեանի** վկայութեամբ, **Լէոնիդ Ազգալդեանը** մի անգամ Շահէնին ասել է. «Հասկացի՛ր, դու ո՛չ միայն հրամանատար ես, այլեւ քաղաքական գործիչ, եւ պէտք է երեւանում ապացուցես, բոլորին համոզես, որ այժմ աւելի հեշտ է պաշտպանել Շահումեանը, քան յետոյ ազատագրել»: Շահէնը կատարեց նաեւ այդ պահանջը:*

*Իր չնորհալիութեամբ հանդերձ՝ Շահէն Մեղրեանը երէկ դաշնակցական չլինէր բառի բուն իմաստով, նա չէր կարող ղեկավարել մարտնչող չրջանը: **Դաշնակցութիւնը** որպէս ազգային միաբանութեան տեսակ՝ համահունչ էր Շահէնի հոգեբանութեանը: Դաշնակցութեան մէջ էլ միաւորւում են ամենատարբեր խառնուածքի եւ բնաւորութեան մարդիկ, որոնց համար գերակայ են ազգային չահերն ու արժէքները: Եւ դաշնակցական հոգեբանութիւնը հնարաւորութիւն է տալիս առաջադրեալ գործի մէջ ներգնելու հոգեկան եւ մարմնական կարողութիւնները: Երկրորդ, Դաշնակցութիւնն ուներ մեծ հնարաւորութիւններ, համաշխարհային կապեր, որոնց չնորհիւ կարողացաւ պատերազմի առաջին տարիներին ինքնապաշտպանութեան կազմակերպման առումով հսկայական գործ կատարել:*

*Այս ամենով հանդերձ՝ Շահէն Մեղրեանն ամէն կերպ խուսափում էր «քաղաքական գործիչ» պիտակից, այնքան էլ բուռն մղումով չէր մասնակցում քաղաքական բնոյթի գործընթացներին որպէս այդպիսիք, սակայն, անկասկած, կայացել էր որպէս քաղաքական գործիչ, զի **մանկութիւնից սովոր էր անել անհրաժեշտը եւ ոչ թէ հաճելին**: Իրականութիւնը, կեանքը մի օրգանական ամբողջութիւն է եւ անհնար է այն տարրալուծել. քաղաքական գործընթացները ներհիւսեալ են ընդհանուր կեցութեան մնացեալ կողմերին եւ Շահէնը կամայ թէ ակամայ պիտի մտնէր քաղաքական ասպարէզ:*

Յայտնի փաստ է, որ Շահէն Մեղրեանն ուրախութիւն չի

զգացել, երբ ՀՂՀ Գերագոյն խորհրդի նախագահի պաշտօնում ընտրուելու համար իր թեկնածուքիւնն է առաջադրուել: Սակայն նա դաշնակցական էր, եւ եթէ կուսակցուքիւնը որոշել էր նրա թեկնածուքեան հարցը՝ ինքը չէր կարող մերժել:

Թէեւ Շահէնը չէր ուզում ճակատագրական պահին թողնել Շահումեանը, սակայն նման մարդու համար գաղտնիք չէր, որ նախագահական բարձր պաշտօնը հնարաւորուքիւն կը տար օգնելու Շահումեանի ինքնապաշտպանուքեանը չատ աւելի, քան ամէն մի լծակից գուրկ վիճակում:

ՀՂՀ Գխ անդրանիկ նախագահի ընտրուելը խիստ եւ անյաճոյ անակնկալ է եղել ՀՀՇական իշխանուքիւնների համար, ուստի այս անգամ նրանք նախապատրաստուած էին եւ ընտրուքիւնների նախօրէին **Բաքոյէն Արարքցեանի, Վազգէն Սարգսեանի եւ Բագրատ Ասատրեանի** գլխաւորուքեամբ Արցախ գործուղեցին պատգամաւորների, նախարարների եւ քաղաքական այլ գործիչների մեծ բրիգադ՝ նախագահի իրենց թեկնածուին զօրակցելու, կամ, կոպիտ ասած, ընտրուքիւններին իրենց մարդուն անցկացնելու համար: Դրանք հիմնականում այն դէմքերն էին, ովքեր նախքան այդ Գորիսից այն կողմ չէին անցել:

Յակոբ Պողոսեան.- ՀՀՇական ստեփանակերտեան դեսանտն իր գործն արեց: **Վազգէն Սարգսեանն** էր այնտեղ, **Բաքոյէն Արարքցեանը** եւ իշխանական մեծ այլ գլուխներ, եւ ես տեսել եմ, թէ ինչպէս Շահէնն Մեղրեանը Վահրամ Փափազեանի անուան թատրոնի մօտ դէմ-դիմաց դուրս եկաւ **Սամուէլ Բաբայեանին** եւ էլի մի քանիսի եւ ծանր խօսքերով յանդիմանեց նրանց:

Մեր տրամադրուքեան ներքոյ եղած նիւթերից՝ ՀՂՀ պետական արխիւի թիւ 254 թղթապանակը մանրամասն տեղեկուքիւններ է պարունակում այդ ընտրուքիւնների ընթացքի մասին:

1992 թ. յունիսի 2-ին Ստեփանակերտի Վ. Փափազեանի անուան պետական դրամատիկական թատրոնի շէնքում իր

աշխատանքն սկսեց ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին գումար-ման առաջին նիստը: Օրակարգում 20 հարցերի հետ միասին դրուած էին նաեւ ԳԽ նախագահի, Նախարարաց խորհրդի ընտրութիւնների հարցերը:

Արցախեան մեր բարեկամների միջոցաւ կարողացանք առանց երկարաձգման օգտուել ԼՂՀ պետական արխիւի նիւթերից, յատկապէս ԼՂՀ ԳԽ նախագահական երկրորդ ընտրութիւնների նիստերի սղագրութիւնից, որը զետեղում ենք առանց էական կրճատումների:

Նստաշրջանին 64 պատգամաւորներից ներկայ էին 51-ը: Այդ 64-ից 20-ը Ստեփանակերտից էին, 16-ը՝ Մարտակերտից, 7-ը՝ Շահումեանից, 8-ը՝ Մարտունուց, 6-ը՝ Ասկերանից, 6-ը Հադրութից, 1-ը՝ Շուշիից (Քարինտակ): Նստաշրջանը վարող ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտօնակատար **Գէորգի Պետրոսեանը** *տեղեկացրեց, որ նստաշրջանին մասնակցում են Հայաստանի տարբեր կուսակցութիւնների ներկայացուցիչներ: Բացման խօսքով հանդէս եկան* **Քերոլայն Քոքսը, ՀՀ ԳԽ պատգա-մաւորներ Հրանտ Խաչատրեանը, Բաբկէն Արարքցեանը, Վազգէն Սարգսեանը**:*

***Բաբկէն Արարքցեանի** ելոյթից.* «Այն կարծիքը, որ պիտի յայտնեմ, Հայաստանի իշխանութիւնների կարծիքն է: Եկէք խօսենք այն հարցերի մասին, որոնք հրատապ են: Ես պիտի ասեմ, որ Հայաստանի իշխանութիւնները ամէն բան արել են, որ Արցախում ստեղծուի նման վիճակ: Կարծում եմ՝ պաշտպա-նութեան նախարար **Վազգէն Սարգսեանն** աւելի մանրամասն կը խօսի այդ մասին: Կրկնում եմ, արուել է ամէն հնարաւորը: Անհրաժեշտութեան դէպքում կարող եմ բերել թուային տուեալներ եւ՛ տնտեսական, եւ՛ քաղաքական տեսակէտից: Հիմ-նական հարցը, որ դրուած է, հետեւեալն է. ինչպէ՞ս են տեսնում Հայաստանի իշխանութիւնները եւ՛ Արցախի, եւ՛ Հայաստանի ապագան: Սա շատ բարդ հարց է, բայց այս հարցին պէտք է գտնել պատասխան: Ես կը փորձեմ դա անել:

Առաջին հերթին՝ Արցախը պիտի դառնայ ամէն տեսակէտից ապահովուած եւ, ամենակարեւորը՝ պէտք է լինեն երաշխիքներ

Արցախի ընակչութեան անվտանգութեան համար: Սա է ամենակարեւորը: Իսկ ի՞նչ ճանապարհով: Բաւական երկար ժամանակ մենք աշխատում էինք այդ հարցը լուծուի միջազգային մասչտաբով: Եւ գտանք, որ միայն այդ ձեւով կարելի է ստեղծել ինչ-որ երաշխիքներ: Եւ այդ հարցը կարծես թէ մենք կարողացանք լուծել: Հարցը դարձաւ այնպիսի բարձր ատեանների քննարկման հարց, ինչպիսին են ՄԱԿը, ԵԱՀԿը եւ այլն:

Այն իրավիճակը, որ ստեղծուել է Արցախում, մենք համաբուում ենք բաւարար, եւ պէտք է այն պահպանել: Պահպանել Արցախը եւ ունենալ այն միջանցքը, որ ստեղծուել է երկու պետութիւնների միջեւ: Իսկ դա հնարաւոր է միայն միջազգային ուժերն օգտագործելով: Ես սկզբունքօրէն ղէմ չեմ, որ այդ գործին մասնակցեն Անկախ պետութիւնների խաղաղարար ուժերը: Այնուհետեւ սա մեզ թոյլ կը տայ... մեղմել ռազմական իրավիճակը եւ սկսել քաղաքական բանակցութիւնները: Դա մեծապէս կախուած է Ղարաբաղի խորհրդարանի որոշումից: Պէտք է գտնել բոլոր հնարաւոր տարբերակները միայն տեւական պահի հաշուառումով: Կան երկու կոնցեպտուալ մօտեցումներ՝ պատերա՞զմ, թէ՞ խաղաղութիւն: Կայ տեսակէտ, որին հակուած է մեծամասնութիւնը՝ մեծապէս խորացնել պատերազմական գործողութիւնները եւ ուշադրութիւնը կենտրոնացնել Արցախի հարցի վրայ: Միւս մօտեցումը հետեւեալն է՝ ամրապնդելով ձեռք բերածը, դիւանագիտական ուղիներով պատասխան որոնել:

Այսօրուայ միջազգային իրավիճակը մեզ համար բարենպաստ չէ: Հելսինկիում մեծ ճնշումներ եղան մեր պատուիրակութեան վրայ, Թուրքիան մեծապէս օգնում է Ադրբեջանին: Որոշել էին ընդունել մի փաստաթուղթ ոչ մեր օգտին: Եղան չատ խոչոր քաղաքական կոնսուլտացիաներ, զրոյցներ ԱՄՆի, Ֆրանսիայի կառավարութիւնների հետ, որպէսզի վիճակը փոխուի: Պէտք էր կարողանալ դուրս գալ այս վիճակից եւ պահպանել այն բոլոր նուաճումները, որ կան»:

Այնուհետեւ Արարքցեանը գտնում է, որ պէտք է պահպանել այդ ուղղուածութիւնը եւ բոլոր ուժերը լարել Հայաստանը լաւ

ներկայացնելու համար: Մի խօսքով՝ Արարքցեանը ուշադրութիւնը ներքին խնդիրներից չեղուում է եւ երկրի բախտը լիովին կախման մէջ է դնում միջազգային իրավիճակից: Նա յոյս է յայտնում օգտագործել միջազգային ուժերը՝ գուցէ առանց վախենալու, որ միջազգային ուժերն էլ կ՛օգտագործեն իրեն: Մենք պարոն Արարքցեանի ճառը զետեղեցինք առանց խմբագրելու, որպէսզի ընթերցողն ինքը հաւաստիանայ, թէ որքան գրագէտ եւ կատարեալ է մեր երբեմնի առաջնորդներից մէկի խօսքը:

Վազգէն Սարգսեանի *ելոյթից.* «Այն, ինչ կատարուել է Արցախում, հրաշք է: Ամէն ինչ առաջին հերթին կատարուել է ժողովրդի եւ զինուորների չնորհիւ, որոնցից շատերն այսօր չկան:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը երբեք տարբերութիւն չի դրել, Արցախը միշտ էլ դիտել ենք որպէս Հայաստանի մի մաս: Արցախի համար կռուել է ամբողջ Հայաստանի ժողովուրդը պետական մակարդակով: Արցախ է ուղարկուել (այսքան) զինամթերք, (այսքան) արժողութեամբ: Շուշիի օպերացիան մանրամասն մշակուել է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան շտաբում: Եղել են լրացումներ: Մենք այդ պարտաւոր էինք անել:

Այսօր մենք ուժեղ ենք նրանով, որ միասնական ենք, չկան հակասութիւնները: Եթէ Աղրբեջանում կռւում էին ռուսական զինուորներ եւ համաձայնութիւն չկար նրանց եւ աղրբեջանցիների միջեւ, ապա մեր տղաների միջեւ միասնութիւն կար եւ կռւում էին որպէս կամաւորականներ: Մի՛ դրէք տարբերութիւն զինուորների միջեւ: Ոչ ոք մեզ չի կարող յաղթել, եթէ մենք չպառակտուենք: Պէտք չէ շահարկել պաշտպանութիւնը: Դա ժողովրդական է: Այստեղ կան տարբեր կուսակցութիւններ, խմբեր, պէտք է լինի պետական մօտեցում: Ռազմական եւ պետական քաղաքականութիւնը պէտք չէ բաժանել իրարից: Մինչեւ Գետաշէնի իրադարձութիւնը, անկախութեան մթնոլորտը Հայաստանում միասնական էր: Իսկ յետոյ այլ մօտեցում եղաւ: Պէտք չէ ասել մի բան եւ անել ուրիշ բան: *(Սա ամէնից*

չատ վերաբերում է այս խօսքը ասողի կուսակիցներին - Ա.Պ.): Անհրաժեշտ է ճշմարիտը հասցնել ժողովրդին, եւ դա պէտք է անեն քաղաքական գործիչները:

Պայքարը մտնում է նոր փուլ եւ պէտք է որակական նոր մօտեցումներ մտցնել: Պարտիզանական պայքարը պէտք է շարունակել, Արցախի ինքնապաշտպանութիւնը դնել ամուր հիմքերի վրայ» *(այստեղ պարզ չէ, թէ նախարարը ի՞նչ ի միտ ունի պարտիզանական պայքար ասելով - Ա.Պ.):*

*Այնուհետեւ նստաշրջանի մասնակիցները մէկ րոպէ լռութեամբ յարգեցին ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ **Արթուր Մկրտչեանի** եւ պատգամաւոր **Վաղարշակ Առուշանեանի** յիշատակը:* «Ինչպէս գիտէք,- *ասաց **Գ. Պետրոսեանը**,-* ապրիլի 14-ին իր բնակարանում զոհուեց Արթուր Մկրտչեանը: Ստեղծուած է յանձնաժողով, որը հետաքննում է մահուան պատճառները: Այդ գործում մեծ օգնութիւն են ցոյց տալիս Հայաստանի ներկայացուցիչները: Առայժմ յանձնաժողովն աշխատում է եւ վերջնական եզրակացութեան չի եկել»:

Այնուհետեւ, նիստի ընթացքում, մի շարք հարցեր են քննարկւում եւ յայտարարւում է երկրորդ ընդմիջումը:

*Ընդմիջումից յետոյ նիստին ներկայ էին 49 պատգամաւոր: ԳԽ քարտուղար **Վլադիկ Յակոբեանը** տեղեկացնում է, որ ընդմիջման ժամանակ դէպք է տեղի ունեցել՝ անյայտ անձանց կողմից առեւանգուել է ՀՀ ԳԽ պատգամաւոր **Կիմ Բալայեանը**: Կատարուածը պէտք է մտահոգի բոլորին: Որոշւում է ստեղծել յանձնաժողով՝ տեղի ունեցածը պարզելու համար: Նիստը յետաձգւում է:*

Յունիսի 3-ին ԼՂՀ ԳԽ նստաշրջանը շարունակում է աշխատանքները:

*Գրանցուած 64 պատգամաւորներից ներկայ էին 52-ը: Նախագահում էր **Գէորգի Պետրոսեանը:** Մինչեւ օրակարգի յաջորդ հարցին անցնելը՝ նախագահողն առաջարկեց լսել **Արմէն Իսագուլովի** հաղորդումը՝ նախորդ օրը **Կիմ Բալայեանի** հետ ունեցած միջադէպի հետաքննութեան արդիւնքների մասին: Արմէն Իսագուլովը ԼՂՀ ներքին գործոց*

նախարարն էր: Նա պիտի լուսաբանէր, թէ ինչպէս են առեւանգել ճշտախօս, իրաւաքաղաքական տեսակէտից՝ գրագէտ, մասնագիտօրէն յստակ բանաձեւուած հարցեր առաջադրող եւ համարձակ այդ ակտիւ գործչին, որը խոչընդոտել է իրենց մեքենայութիւններին դեռեւս նախագահական նախկին ընտրութիւնների ժամանակ: «Ստիպուած» էին առեւանգել այդ մարդուն, որպէսզի իրենց «գործը» հեշտանայ: Ինչպէս սովորաբար լինում է նման պարագային՝ Իսագուլովը խուսափողական պատասխան տուեց՝ ասելով, թէ բացատրութիւններ են վերցրել երեկուայ միջադէպի մասնակիցներից: Ընդմիջումից յետոյ կ՛իմանանք յանձնաժողովի կատարած աշխատանքի մասին:

Գ. Պետրոսեան.– Կարող ենք անցնել ԼՂՀ Գհ նախագահի ընտրութեան հարցի քննարկմանը:

Գաբրիէլեանը Գերագոյն խորհրդի նախագահի համար առաջակում է **Ռոբերտ Քոչարեանի** թեկնածութիւնը:

Գրիգորեանն առաջարկում է **Գ. Պետրոսեանի** թեկնածութիւնը:

Նիստն այնուհետեւ վարում է **Վլադիկ Յակոբեանը**:

Վ. Յակոբեան.– Համաձայն գործող կանոնի՝ առաջադրուած թեկնածուները պէտք է հանդէս գան իրենց առաջիկայ ծրագրային հաշուետուութիւններով:

***Հրանտ Խաչատրեանն** առաջարկում է ձայն տալ Բ. Արարքցեանին:*

Բ. Արարքցեան.– Նախ եւ առաջ ուզում եմ ասել, որ կացութիւնը ծանր է: Պէտք է լինի անպայման համագործակցութիւն, որի մասին ասուել է նաեւ ԼՂՀ Գհ նախագահութիւնում: Դա պէտք է լինի երկկողմանի: Սուտ խոստումներ պէտք չէ տալ: Մեր կողմից եղել են բազմաթիւ առաջարկութիւններ եւ անց են կացուել կոնսուլտացիաներ: Հանրապետութեան առաջին նախագահ **Արթուր Մկրտչեանը** եղաւ Հայաստանում: Ցաւօք, նրա ողբերգական մահից յետոյ ընդհատուեցին կոնսուլտացիաները *(Արարքցեանը, բնականաբար, չասաց, թէ ինչպիսի ճնշումների եւ բարոյական նուաստացումների ենթարկուեց*

Արթուր Մկրտչեանը, երբ եկել էր Երեւան՝ «Հայրենիք» իշխանութիւններից բարոյական աջակցութիւն ստանալու, սակայն ստացաւ արհամարհանք, ատելութիւն եւ ցաւ, եւ վիրաւորուածութեան անհուն զգացումով ետ դարձաւ Արցախ, որից կարճ ժամանակ յետոյ նահատակուեց): Այնուհետեւ եղել են խորհրդատուութիւններ, չնայած ծանր է եղել իրավիճակը Ղարաբաղում: Եղել են կոնսուլտացիաներ քաղաքական եւ ռազմական բնագաւառներում: Մեր տեսակէտն այն է, որպէսզի համաձայնեցուեն բոլոր քայլերը, այսինքն՝ հարցերը պիտի քննարկուեն միասին, յատկապէս այն դէպքում, երբ ընդհանուր յայտարարի չեն եկել: Հաշուի առնելով բոլոր գործօնները՝ կարողանալ համագործակցել: Սա ոչ միայն իմ տեսակէտն է, այլեւ Հայաստանի Հանրապետութեան Գհ Նախագահութեան: Սա ընդհանուրի կարծիքն է եւ լաւ կը լինի, որ խորհրդարանը բոլոր հանգամանքները հաշուի առնի: Կարծում եմ՝ Արցախի խորհրդարանը կ՚ընդունի ճիշտ որոշում:

Վ. Յակոբեան.– Այժմ ես ելոյթի համար ձայնը տալիս եմ Գհ նախագահի թեկնածուներին:

Առաջինը հանդէս եկաւ **Ռ. Քոչարեանը:**

(Մենք չյաջողեցինք ձեռք բերել բոլոր հիմնական ելոյթները – Ա.Պ.):

Հ. Խաչատրեան.– Գհ նախագահ ընտրուելու դէպքում ՀՀՇին պատկանելութիւնը կ՚ազդի՞ Ձեր աշխատանքի վրայ:

Ռ. Քոչարեան.– ՀՀՇն սկզբնական կազմակերպութիւն մեզ մօտ չունի: Շարժման սկզբում գործում էր «Միացում» կազմակերպութիւնը: Այն ժամանակ բոլորիս մտահոգութիւնը մէկն էր եւ ինձ թւում էր՝ ուժեղացնելով «Միացում» կազմակերպութիւնը՝ թուլացնում ենք մեր իշխանութիւնների գործունէութիւնը: Այն ժամանակ ես թողեցի նրա անդամ լինելը (այսինքն՝ դադարեցրեց անդամակցութիւնը – Ա.Պ.): Ես այժմ ոչ մի կուսակցութեան անդամ չեմ:

Ի. Մուրադեան.– Ինչի՞ մէջ էք տեսնում Ձեր եւ Ձեր ընդդիմախօսի քաղաքական հայեացքների միջեւ եղած տարբերութիւնը: Նախագահ ընտրուելու դէպքում Դուք կը կարողանա՞ք

համագործակցել Ձեր ընդդիմախօսի հետ: Եւ երկրորդ՝ ի՞նչ էք հասկանում կոռումպացուած տարրեր ասելով:

Ռ. Քոչարեան.- Ինձ թւում է, Ձեր առաջին հարցին ճիշտ կը լինէր պատասխանել Գ. Պետրոսեանի նախընտրական ելոյթը լսելուց յետոյ: Զգիտեմ, միգուցէ տարբերութիւն չի լինելու: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա, ինչպէս ասում են, **չարժումը սկսելուց յետոյ մեր ժողովրդի աչքերը բացուեցին: Ի հարկէ, դժուար է աշխատել կաշառակեր մարդկանց հետ: Բայց եթէ դրա տակ հասկանում ենք գործունեայ մարդկանց, դա ուրիշ հարց է: Նրանց հետ կարելի է համագործակցել:**

Այնուհետեւ ելոյթ է ունենում ***Գ. Պետրոսեանը****, որից յետոյ նա էլ պատասխանում է տրուած հարցերին:*

Գ. Պետրոսեանի ելոյթն ամփոփումն է հնգամսեայ մի ժամանակաշրջանի, որի ընթացքում բազմաթիւ կարեւոր հարցեր են լուծուել: «Մեր ժողովրդի տիտանական աշխատանքի լուսապսակը դարձաւ Ադրբեջանի ղեկավարութեան կողմից Արցախը շրջափակման օղակում խեղդելու քառամեայ քաղաքականութեան ձախողումը»: *Այնուհետեւ յայտնում է մի ոչ համեստ արտայայտութիւն.* «**Մեր ժողովուրդը ցոյց տուեց, որ թոյլ չի տայ ոչ մի ոտնձգութիւն իր հողի, իր ազատութեան նկատմամբ եւ ոչ ոքի թոյլ չի տայ իր հետ խօսել ուժի դիրքերից**»: «Հանրապետութեան ներկայ ղեկավարութեան ընտրութիւննեբից յետոյ անցած հինգ ամիսների ընթացքում ԼՂՀ ողջ տարածքում ապաշրջափակուել են ներքին բոլոր աւտոճանապարհները, Ստեփանակերտի օդանաւակայանը, վնասազերծուել են ադրբեջանական բանակի աւելի քան քառասուն ռազմակայաններ, ազատագրուած է Շուշին եւ վերջապէս դէպի Հայաստան բացուել է մարդասիրական միջանցք: **Նոյն այդ ժամանակամիջոցում մեզ յաջողուել է ծանրակշիռ յաջողութիւնների հասնել հանրապետութեան ինքնապաշտպանական ուժերի կազմակերպման եւ յագեցման ուղղութեամբ: Որոշակի յաջողութիւններ ենք ձեռք բերել մեր ջոկատների ղեկավարման, կենտրոնացման եւ մարտական ոգին բարձրացնելու հարցերում: Տարածաշրջանում այսօր մենք ոչ միայն**

քաղաքական, այլ նաեւ ռազմական ուժ ենք ներկայացնում»: Շուշիի յաղթանակից յետոյ հասկանալի է խորհրդային ժամանակների ոգով տրուած այս «հաչուետուութիւնը», որից յետոյ Գ. Պետրոսեանն անցնում է արտաքին քաղաքականութեան յաջողութիւնների թուարկմանը՝ այդ գործում նշելով **Արթուր Մկրտչեանի** մեծ աշխատանքը: «Անցած ողջ ծանր ժամանակաշրջանում Գերագոյն խորհրդի ղեկավարութիւնը ոչ մի օր չի դադարեցրել ԼՂՀի եւ Ադրբեջանի միջեւ քաղաքացիական յարաբերութիւնների կարգաւորման դիւանագիտական գործողութիւնները: Այդ աշխատանքի արդիւնքը մեր ժողովրդի հիմնահարցի միջազգային ճանաչման փաստն է: Այս գործում մեծ է Գերագոյն խորհրդի առաջին նախագահ **Արթուր Մկրտչեանի** ներդրումը: Նրա արտաքին քաղաքական ակտիւ գործունէութիւնը համաշխարհային դիւանագիտութեան մէջ Լեռնային Ղարաբաղի շուրջ փառքի պսակ է ստեղծել: Այդ մասին գրում են շատ թերթեր»:

Այնուհետեւ նախագահի թեկնածուն անցնում է երկրի ներքին կացութեանը եւ այդտեղ առարկայական հաւաստիութեամբ նշում վիճակի ծանրութիւնը:

*Ընդմիջումից առաջ վերջին ելոյթը **Լ.Մելիք-Շահնազարեանինն** է.* «Յարգելի պատգամաւորներ, մեր առաջիկայ դժուար ընտրութիւնները մեզ համար հեշտ կը լինէին, եթէ առաջադրուէին չատ թեկնածուներ»:

Յայտարարւում է ընդմիջում:

*Ընդմիջումից յետոյ նախագահում է **Վ. Յակոբեանը**: Նստաշրջանին ներկայ էին 48 պատգամաւորներ: Հաշուիչ յանձնաժողովի նախագահ **Մանուէլ Սարգսեանին** լսելուց յետոյ խորհրդարանը ձեռնամուխ եղաւ ընտրութիւններին: Փակ գաղտնի քուէարկութեան առաջին փուլում պատգամաւորներից ոչ մէկը չընտրուեց:*

Ի. Մուրադեան.- Առաջարկում եմ պարզաբանել երէկուայ միջադէպը, այնուհետեւ առաջադրել նոր թեկնածուներ:

*Յայտարարւում է ընդմիջում: Ընդմիջումից յետոյ նախագահում է **Վ. Յակոբեանը**: Նախորդ օրը ՀՀ պատգամաւոր **Կիմ***

Բալայեանի հետ տեղի ունեցած միջադէպի կապակցութեամբ ելոյթ ունեցաւ **Կարէն Բաբուրեանը:** Նա հաղորդեց, որ այժմ կոնկրետ ինֆորմացիա չկայ եւ խնդրեց չշտապել վերջնական եզրակացութիւն անելիս:

Ելոյթի համար խօսքը տրւում է Գորիսի քաղխորհրդի նախագահ **Սամուէլ Յարութիւնեանին:** Նա իր ուրախութիւնն է արտայայտում **Բաբկէն Արարքցեանի** եւ **Վազգէն Սարգսեանի** բերանով արտայայտուած Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների հաւաստիացման առիթով, որ այսուհետ էլ ամէն ջանք կը գործադրեն, որպէսզի ամրապնդուի ձեռք բերած յաղթանակը: Հռետորը յորդորում է կատարել ճիշտ ընտրութիւն, հաշուի չառնել թեկնածուի որեւէ կուսակցական պատկանելութիւն:

Նստաշրջանն անդրադառնում է նախագահի ընտրութեան համար նոր թեկնածուների առաջադրմանը: Դէմ նախագահի թեկնածուներ են առաջադրւում **Գ. Պետրոսեանը, Ռ. Քոչարեանը, Վ. Գալստեանը, Լ. Պետրոսեանը**: Քանի որ առաջին երկու թեկնածուները հանդէս էին եկել հաշուեհաւութեամբ, վերջին երկուսն էլ հանում են իրենց թեկնածութիւնը, տարբեր հարցերի երկար քննարկումից յետոյ որոշում են նոր թեկնածուներ ընդգրկել, քանի որ առանց նախագահի ընտրութեան նստաշրջանը կարելի չէ աւարտուած համարուել:

Արթուր Մկրտչեանի զոհուելուց յետոյ ո՞ւմ թեկնածութիւնը պիտի դրուէր Ազգային ժողովի նախագահի պաշտօնում ընտրուելու համար: Ստեփանակերտի պատգամաւորների մի մասն առաջարկում էր **Լեւոն Մելիք-Շահնազարեանի** թեկնածութիւնը, եւ տարբեր թեկնածուների անուններ էին տալիս: **Ռոմա Աղաբէկեանի** առաջարկով նախագահի թեկնածու է առաջադրւում **Շահէն Մեղրեանը**: Առաջարկւում են նաեւ **Վլադիկ Յակոբեանի, Բորիս Առուշանեանի** թեկնածութիւնները: Վ. Յակոբեանը, Բ. Առուշանեանը, Գ. Պետրոսեանը ցանկից հանում են իրենց անունները:

Վալերի Բալայեանը խօսք է ասում յօգուտ Շահէն Մեղրեանի՝ բերելով այն փաստարկը, որ նա գործադիր

*իշխանութիւններում աշխատելու փորձ ունի, զինուորական հրամանատար է, որն էական նշանակութիւն ունի պատերազմող Արցախի համար: Քննարկում է ծաւալուում: Կարճ ծամանակ անց բոլորը համոզուում են, որ իրօք Շահէն Մեղրեանը միակ ընդունելի, անառարկելի թեկնածուն է: /Ըստ **Զօրի Բալայեանի՝ Վալերի Բալայանն** առաջարկել է **Ռոբերտ Քոչարեանի** թեկնածութիւնը, սակայն մենք պիտի ապաւինենք նստաշրջանի արձանագրութեանը/:*

Շահէն Մեղրեան.- Յարգելի նախագահութի՛ւն, յարգելի պատգամաւորնե՛ր, պատգամաւորութեանս ընթացքում ես ոչ մի անգամ հանդէս չեմ եկել, ինձ հետաքրքրել են միայն ազգիս շահերը: Այսօրուայ իմ ելոյթը ոչնչով չի տարբերուում նախընտրական իմ ելոյթից: Ես Դաշնակցութեան անդամ եմ եւ փաստօրէն ներկայացնում եմ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Այսօր ելոյթ ունենալով ձեր առջեւ, ես ուզում եմ չեչտը դնել Ղարաբաղի ռազմական եւ տնտեսական հզօրութեան վրայ: Ղարաբաղում պատերազմական վիճակը թելադրում է իր օրէնքները: Ընտրուելու դէպքում ես իմ գործունէութիւնը կը սկսեմ տնտեսական եւ ռազմական հարցերից: Ինչ վերաբերում է մեր անկախութեան հարցին, մենք կը շարունակենք մեր գիծը՝ կ՛աշխատեմ ամրապնդել մեր անկախութիւնն ու անվտանգութիւնը:

Լ. Մելիք-Շահնազարեան.- Ես չատ եմ եղել Շահումեանի շրջանում եւ մօտիկից գիտեմ, թէ ինչպիսի հերոսական գործեր են կատարում այդ շրջանի բնակիչները: Գործում են եռանդով, համագործակցուած: Կարծում եմ Շահէն Մեղրեանը կ՛արդարացնի մեր վստահութիւնը:

Վ. Գաբրիէլեան.- Աշխարհագրական առումով Մարտակերտի եւ Շահումեանի շրջանները մօտ են իրար: Այդ իսկ պատճառաւ չատ յանդիպումներ եմ ունեցել Մեղրեանի հետ, միասին եղել ենք տարբեր հաւաքներում: Կարծում եմ կ՛արդարացնի իրեն Գիս նախագահի պոստում:

Պատգամաւոր Շահումեանից.- Ես մօտիկից գիտեմ Մեղրեանին, արդէն 4 տարի է միասին կուռում ենք: Շահէն

Մեղրեանը հանդիսանալով Դաշնակցութեան անդամ, միշտ լինում է ռազմաճակատի տարբեր գծերում. ՀՀ իշխանութեան ներկայացուցիչները յաճախակի յանդիպումներ են ունեցել Շահէնն Մեղրեանի հետ եւ նրա օգնութեամբ միասին լուծել բազմաթիւ խնդիրներ: Նա չրջանից դուրս եւս մեծ աշխատանքներ է կատարում:

Ռ. Գալստեան.– Ես կը փորձեմ խօսել մի մարդու մասին, որին գիտեմ վաղուց: Նախ ասեմ, որ Շահէնն Մեղրեանի մօտ ցանկացած ղեկավար գնում է հաճոյքով: Գաղափարական այն չտաբը, որ ղեկավարում է Շահէնն Մեղրեանը, սրբօրէն է կատարում բոլոր որոշումները: Արցախին հարկաւոր է նման նախագահ: Նա մեծ յարգանք ու հեղինակութիւն է վայելում ոչ միայն Շահումեանի չրջանում, այլեւ ամբողջ Հայաստանում:

Վլադիկ Յակոբեան.– Ի տաբերութիւն միւս ելոյթ ունեցողների՝ Շահէնն Մեղրեանին մօտիկից չգիտեմ, բայց նրան գիտեմ իր գործունէութեամբ: Ուզում եմ ասել հետեւեալը. եթէ իսկապէս մտածում ենք Ղարաբաղի մասին, եթէ պատասխանատու տանք մեր սերունդների առաջ, ապա այսօր կը խնդրէի մեր ձայնը տալ Հանրապետութեան նախագահի համար Մեղրեանի օգտին:

Գ. Պետրոսեան.– Անհրաժեշտ է հաշուի առնել երեք հանգամանք: Առաջին, Շահումեանի չրջանը միշտ կտրուած է եղել Ղարաբաղից: Եւ մենք պէտք է քաղաքագէտներ լինենք ու հասկանանք, որ Շահումեանի ներկայացուցիչն այսօր մեր Հանրապետութեան ներկայացուցիչն է: Երկրորդ, Շահումեանի չրջանը մեզնից առաջ սկսեց հայրենի հողը ազատագրել զինուած պայքարի միջոցաւ: Երրորդ, Շահէնն Մեղրեանը բարձրագոյն կրթութեամբ տնտեսագէտ է: Երեք կարեւոր հանգամանք, որոնք անհրաժեշտ են մեզ: ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրել ենք Հադրութից՝ Լեռնային Ղարաբաղի ամենահետաւոր չրջանից: Շահէնն Մեղրեանը կարող է գտնել ժողովրդի հետ համագործակցելու բոլոր ձեւերը ե՛ւ Ղարաբաղում, ե՛ւ Հայաստանում: Թող նա խոստանայ մեզ, որ Մարտունու, Մարտակերտի մասին կը մտածի այնպէս, ինչպէս Շահումեանի չրջանի:

Առաջարկութիւն կայ առաջադրուած թեկնածուի անունը մտցնել քուէաթերթիկի մէջ:

Յայտարարուում է ընդմիջում:

Ընդմիջումից յետոյ նստաշրջանը լսեց հաշուող յանձնաժողովի նախագահի հաղորդումը քուէարկութեան արդիւնքների մասին:

Մեղրեանի օգտին կողմ են քուէարկել՝ 33, դէմ՝ 23:

Այսպիսով՝ Շահէն Մեղրեանի թեկնածուութիւնը չի անցնում:

Վաղիք Գալստեանն առաջարկում է անցնել օրակարգի միւս հարցերի քննարկմանը:

Զ. Բալայեան.- Ես ընդունում եմ փոխհամաձայնեցնող յանձնաժողովի տարբերակը:

Ի. Մուրադեան.- Ես խնդրում եմ մանդատային յանձնաժողովին ուշադիր լինել, որովհետեւ **այստեղ արւում են անբարոյական յայտարարութիւններ:**

Վ. Աղաբալեան.- Մենք անպայման պէտք է աւարտենք ԼՂՀ Գ նախագահի ընտրութեան հարցը: Մի՞թէ դժուար է գալ փոխզիջողութեան: Եկէք առաջադրենք նոր թեկնածուների: Թէ չէ՝ կ՚ընկնի պառլամենտի հեղինակութիւնը:

Վ. Գաբրիէլեան.- Ստեղծել երկու կողմերից բաղկացած յանձնաժողով:

Օ. Եսայեան.- Ստեղծուած լարուած վիճակից դուրս գալու համար առաջարկել էի ստեղծել յանձնաժողով, որը միգուցէ փոփոխութեան հասցնէր, չնայած ես ինքս յոյս չունեմ:

Որոշուեց անցկացնել փակ նիստ: Նիստում պատգամաւորները պաշտպանեցին համաձայնեցնող յանձնաժողովի ստեղծման առաջարկը: Կողմերի առաջին հանդիպումից յետոյ Գ. Պետրոսեանն ասաց, որ կոնսուլտացիաները շարունակւում են եւ յաջորդ օրը յայտնի կը լինեն արդիւնքները:

Այսքանով նիստն աւարտեց իր աշխատանքը:

Յունիսի 5-ին ԼՂՀ ԳԽ առաջին գումարման առաջին նստաշրջանը շարունակում էր աշխատանքը:

*Նիստը նախագահում էր ԳԽ քարտուղար **Վ. Յակոբեանը:***

Նիստին ներկայ էին 44 պատգամաւորներ:

*Խօսք է խնդրում Գխ մանդատային եւ պարկեշտութեան յանձնաժողովի նախագահ **Հրանտ Խաչատրեանը**.*- Կ՚ուզենայի մեր յանձնաժողովի կողմից անել յայտարարութիւն: Ինչպէս տեսնում էք, Գխ աշխատանքը սկսուեց 15 րոպէ ուշացումով: Դա պառլամենտական էթիկայի ոտնահարում է: Նստաշրջանում մթնոլորտը չիկացած է եւ, իմ կարծիքով, հիմնաւորուած չէ այն փաստը, որ Սրբազանը ներկայ չէ: Պէտք է անպայման հրաւիրել նրան: Կան լուրջ խախտումներ, որոնք խանգարում են նստաշրջանի աշխատանքը:

Շահէն Մեղրեան.- Երեկ իմ թեկնածութիւնը առաջարկելուց յետոյ, նստաշրջանի ընդմիջման ժամանակ եւ կուլիսների ետեւում հնչել են տարբեր յայտարարութիւններ, իբր բանակի զօրամիաւորումները խանգարում են նստաշրջանի աշխատանքին: **Խօսակցութիւնները են եղել նաեւ Շահումեանի շրջանի պատուիրակութեան հասցէին: Ասել են, թէ ինչու ԼՂՀ Գխ նախագահը պիտի ընտրուի Շահումեանի շրջանից:** Ի նշան բողոքի՝ Շահումեանի շրջանի պատուիրակութիւնը թողնում է դահլիճը:

Շահէնի հէնց վերոնշեալ դրական յատկութիւններն ի միտ ունենալով՝ որոշ ղեկավար անձինք ձգտում էին նրան զցել իր ժողովրդի աչքից, վարկաբեկել: Արցախում Շահումեանի պատգամաւորութեան անդամներից մէկին մօտենում են եւ սպառնում. «Դու էլ իրենցի՞ց ես: Դուք ո՞վ էք, որ Շահումեանից զաք եւ Արցախը ղեկավարէք»:

*Եւ տեղապաշտ հոգեբանութեան ախտերը սկզբից եւեթ այստեղից եղան: Եւ 10 օր չանցած տեղի ունեցաւ Շահումեանի անկումը: ՀՀՇն կարողացաւ բորբոքել Արցախի մայրաքաղաքի ղոչաղ, մի քիչ էլ անգրագէտ (այլապէս ինչո՞ւ մարդկանց պիտի տարբերէին ըստ բնակավայրի, մի կողմ թողած Աստուածային բնատուր չնորհները, կրթութիւնը եւ այլն) տղաների տեղապաշտական կրքերը եւ նրանց գրաւել իրենց կողմը, այդ թւում՝ մի քանի ղաշնակցականի: Այդ մի քանիսն էլ բաւական էին, որպէսզի Շահէնի ձայները պակասէին, թէեւ կան մարդիկ, որոնք պնդում են, որ **Շահէնը նախնական***

քուէարկութեամբ անհրաժեշտ քանակութեան ձայներ հաւաքել է: Արթուր Յակոբեանի (Քեաք) իրազեկմամբ՝ նախագահական ընտրութիւններին Շահէնն արդէն անհրաժեշտ քանակութեամբ ձայներ ստացել էր եւ պիտի ընտրուէր, սակայն «ՀՀՇական իշխանութիւնները իրարով անցան, մեքենայութիւններ արեցին եւ հէնց դաշնակցականներից ոմանց, ստոյգ՝ 6 հոգու, կարողացան այս կամ այն ճանապարհով թեքել, որպէսզի Շահէնը չընտրուի: Սկզբնական տարիներն էին Դաշնակցութեան վերահաստատման եւ նրանց շարքերում էլ կային գաղափարապէս եւ հոգեբանօրէն անկայուն մարդիկ: Սկզբից Շահէնն իրօք ընտրուած է եղել»:

Նոյն սադրանքի մասին վկայում է նաեւ ***Դաւիթ Իշխանեանը*** *(Աշանի գումարտակի հրամանատար).*- Կեանքի թելադրանքն այնպիսին էր, որ Շահէնի հետ չփուում էինք առիթից առիթ, որոնց ընթացքին աւելի սերտ կապեր հաստատել հնարաւոր չէր: Երբեմն հանդիպել ենք նաեւ սեղանի շուրջ, բայց գլխաւորաբար եղել են ընդհանուր քննարկումների ժամանակ, որոնք վերաբերում էին պատերազմական գործողութիւններին, ժողովրդի անվտանգութեան հարցերին, ազգի եւ երկրի ընդհանրական խնդիրներին:

Արթուր Մկրտչեանի եղերական մահից յետոյ Դաշնակցութեան կողմից մի քանի անգամ թեկնածուներ էին առաջադրում՝ **Գէորգի Պետրոսեան, Լեւոն Մելիք-Շահնազարեան** եւ այլք, իսկ խորհրդարանական միւս թեւն անփոփոխ առաջադրում էր **Ռոբերտ Քոչարեանի** թեկնածութիւնը: Եւ ամէն անգամ թեկնածուներից ոչ մէկը չէր անցնում: Դաշնակցութիւնը փոխում էր թեկնածուներին, որ միգուցէ հաշուի առնեն թեկնածուի անհատական յատկանիշները եւ մէկը նրանցից ընտրուի: Ի վերջոյ կանգ առանք **Շահէն Մեղրեանի** թեկնածութեան վրայ, ի միտ առնելով նրա իւրայատուկ կերպարը, դիրքը, գործունէութիւնը, շնորհների բոյլը, որ դրսեւորում էր իր գործունէութեան ընթացքին:

Յիշում եմ, այդ օրերին Հայաստանից ներկայ էին **Բաբկէն Արարքցեանը, Վազգէն Սարգսեանը, Վահան Շիրխանեանը** եւ

խորհրդարանականների ու գործիչների մի բազմութիւն, որոնք ձգտում էին ապահովել **Ռոբերտ Քոչարեանի** յաջողութիւնը: Յատկապէս մէջս տպաւորուել են **Վազգէն Սարգսեանի եւ Վահան Շիրխանեանի** խօսքերը, եւ յատկապէս **դաշնակցական-ների տրամադրութիւնը փոխելու նրանց ձգտումն ու ստոյգ փորձերը, կոչտ ելոյթները, անսպասելի կեցուածքը: Եւ շատ տարօրինակ էր, թէ ինչպէս կարող էին Հայաստանի բարձր իշխանութեանց ներկայացուցիչներն Արցախում այդպիսի կեցուածքով եւ վիճակով իրենց դրսեւորել, մարդկանց մօտ թուլութիւններ փնտրել իրենց կողմը գրաւելու միտումով:**

Որքան յիշում եմ, քուէարկութեան առաջին փուլից թեկնա-ծուներից ոչ ոք չի անցնում, ընդմիջումներին տեղի էին ունե-նում խորհրդակցութիւն, համապատասխան քննարկումներ, այդ ընդմիջումներին յաճախանում էին չշուկազրոյցները, բազմանշանակ ակնարկները, ձայներ առնելու մաքառումները, յատկապէս Դաշնակցութեան կորպուսի վրայ տարատեսակ ճնշումներ էին գործադրւում: **Նման առաջարկներ եւ մօտեցում ցուցաբերուել է նաեւ իմ նկատմամբ**, եւ այս ամէնը կատարւում էր թէ՛ Հայաստանի բարձր իշխանաւորների, թէ՛ Արցախի խորհրդարանականների եւ թէ՛ գործադիր իշխա-նութեանց պաշտօնեաների կողմից: **Ի հարկէ, Դաշնակցութեան ֆրակցիայից որոշների կարողացան իրենց կողմը քաշել,** սակայն մեծամասամբ մնացին աներես եւ հաւատարիմ իրենց սկզբունքներին, եւ նորից առաջադրուեց Շահէն Մեղրեանի թեկնածութիւնը: **Նոյնիսկ չօշափուել էր ստեփանակերտցինե-րի տեղապաշտական պատուասիրութիւնը՝ մթնոլորտ տարածե-լով այն մտայնութիւնը, թէ ինչո՞ւ ԼՂՀ Գէն նախագահը պիտի լինի ոչ թէ Ղարաբաղից, այլ Շահումեանից,** եւ նոյնիսկ մի անգամ ուզում էին դնել **Գրիշա Հայրապետեանի** թեկնա-ծութիւնը: Եւ նոյնիսկ ասում էին, թէ ինչո՞ւ նախագահը պիտի լինի չրջանից, այլ ոչ Ստեփանակերտից: Արդէն մի անգամ, **Արթուր Մկրտչեանի** դէպքում, թեկնածուն եղաւ չրջանից. տեսա՞ք, որ լաւ վերջաւորութիւն չունեցաւ: Այդ կարգի բաներ, որով **ներգործում էին արդէն մարդու ենթագիտակցական**

Համակարգի վրայ, որը եւս դեր խաղում է: Այս ամէնն ի հարկէ ներմուծուած էր եւ այս ամէնն աւելի չանտաժի ընոյթ էր կրում, եւ այդպիսի ոչ առաքինի մօտեցում ցուցաբերուում էր առհասարակ Դաշնակցութեան դէմ, քանզի նրանք մեծ վտանգ էին զգում Շահէն Մեղրեանից, որ նա կարող է ընտրուել: Ահա թէ ինչու Շահէն Մեղրեանը մի անգամ եկաւ եւ ասաց, թէ ինքը պիտի հանի իր թեկնածուութիւնը, որովհետեւ քիչ առաջ իր հետ կապուել են Շահումեանի շրջանից եւ ասել, որ **սպասուող ուղղաթիռները տեղ չեն հասել, այն ուղղաթիռները, որոնք դուրս են եկել Երեւանի օդակայանից եւ ուղղուել են Շահումեան, եւ դրանց հրահանգ են տուել՝ օդից ետ դառնալ, մերժել են նաեւ անհրաժեշտ զինամթերքն ու սննդամթերքը**: Ահա այս հանգամանքներում Շահէն Մեղրեանն ասաց, որ ինքը չի կարող իր անձի հետ կապուած խնդիրները զերադասել Շահումեանի ընդհանուր խնդիրներից: Ինքն այսպէս էր մեկնաբանում եւ ոչ թէ վախ էր զգում, որ չի անցնի: Շահումեանի շրջանի ճակատագրի հարցն էր եւ բոլորս յիշում ենք, թէ այդ օրերին Շահումեանի շրջանն ինչ ծանր կացութեան մէջ էր: Շահէն Մեղրեանը չէր ուզում Շահումեանը լքուած տեսնել եւ խնդրեց, որ ֆրակցիան որոշում ընդունի իր թեկնածուութիւնը հանելու համար:

Շահէն Մեղրեանը միշտ չէր մասնակցում բոլոր նիստերին, քանզի շրջանի պաշտպանութեան խնդիրները հրատապ էին, բայց միշտ լինում էին Շահումեանի պատգամաւորական կորպուսի միւս դէմքերը:

*Սպառնալիքներ են եղել, ուստի ընտրութեան առաջին փուլից յետոյ դուրս են գալիս Շահէնի գլխաւորութեամբ, եւ այդ ժամանակ գալիս հասնում է **Արկադի Տէր-Թադէոսեանը** եւ այնտեղ ամօթանք տալով պահանջում, որ վերջ տրուի տեղապաշտական, հատուածապաշտական այս հոգեբանութեանը, որ մէկը շահումեանցի է, միւսը՝ մարտակերտցի եւ այլն: Վերջում ասել է.* «Մեր երկրի վիճակը ծանր է, եկէք մտածենք, թէ ինչպէս պիտի պաշտպանութիւնը կազմակերպենք: Եկէ՛ք դադարենք տարբերութիւններ դնելուց»:

Կիմ Բալայեանը *գտնում է, որ ներկայումս բոլորին է պարզ, թէ ինչու Շահէն Մեղրեանը չընտրուեց: Պատճառն այն է, որ* **Հայաստանի իշխանութիւնները սկսեցին ամենաբիրտ ու վայրենի ճնշումներ գործադրել, ընդհուպ մինչեւ ուղղակի սպառնալիքները, որ Շահումեանը որեւէ զէնք, զինամթերք չի ստանայ, եթէ Շահէն Մեղրեանը դառնայ նախագահ: Ուզում էին, որ նախագահն անպայման ՀՀՇական լինի**: *Շահէն Մեղրեանը կարողացաւ դիմակայել բոլորին, նաեւ Հայաստանից եկած կառավարութեան, վարչակազմի ղեկավար մարդկանց, ապացուցելով, որ թեկնածուն Շահումեանից ոչ միայն վնաս չէ, այլեւ իրական հիմք է Շահումեանն Արցախի հետ միաւորելու համար:* «Դժբախտաբար գտնուեցին մարդիկ, այդ թւում մեր որոշ համախոհներ, որ եթէ նախագահը ստեփանակերտցի չէ, պէտք չէ, որ լինի, ի՞նչ է, Ստեփանակերտում մարդ չկա՞յ, որ չահումեանցին գայ Ստեփանակերտ եւ ղեկավարի: Ձայն չտուեցին, եւ 3 ձայնի պակասութեամբ Շահէն Մեղրեանը չդարձաւ Գերագոյն խորհրդի նախագահ: Եթէ այն օրերին Շահէն Մեղրեանը դառնար Արցախի Գերագոյն խորհրդի նախագահ, Արցախեան պայքարը շատ աւելի արդիւնաւէտ եւ բարձր կը լինէր: Եթէ Շահէն Մեղրեանը լինէր, Շահումեանը ոչ միայն թուրքերին չէր մնայ, այլեւ մեծ նուաճումներ կ'արձանագրէինք այսօր»:

Սամուէլ Յարութիւնեան (Գորիսի վարչութեան ղեկավար). «Նստաշրջանում Դաշնակցութիւնը երրորդ անգամ արդէն դրել էր Շահէն Մեղրեանի թեկնածութիւնը: **Ռոբերտ Քոչարեանի** համար շատ էին աշխատել, նոյնիսկ ուժային ներգործութեան էին դիմել որոշ պատգամաւորների վրայ: Այդ հանգամանքը, որ ինքը «ղարաբաղցի չէ», չխանգարեց, որպէսզի Շահէն Մեղրեանն աւելի շատ ձայն ստանայ, քան նոյնիսկ **Գէորգի Պետրոսեանը**: Մեղրեանն ստացաւ 33 ձայն, որը մեծ վստահութիւն էր նրա անձի նկատմամբ. պատգամաւորների մեծ մասը նրա մէջ տեսնում էր իսկապէս Արցախի առաջնորդին, եւ վստահեցին նրան: Ցաւօք, այդքան ձայներն էլ բաւարար չեղան»:

Պետրոս Մեղրեանի վկայութեամբ՝ երբ արդէն Շուշին ազատագրուած էր, իրենք գիտէին, որ Շահումեանի վրայ վաղ թէ ուշ խաչ են քաշելու, որովհետեւ նա յիշում է 92-ի մայիսի 26-ին **Շահէնի** հանդիպումը **Լեւոն Տէր Պետրոսեանի** հետ: Պետրոսը մուտքի մօտ սպասում էր մեքենայով: Երբ Շահէնը դուրս եկաւ, տրամադրութիւն չունէր: Պետրոսը հարցրեց.

– Եղբա՛յր, ի՞նչ է պատահել:

Ասել էին, թէ Շահէնը Գերագոյն խորհրդի նախագահի համար իր թեկնածութիւնը պիտի չդնի: Կը լինի այսինչ մարդը, եւ Շահէնին խոստացել էին, որ լինելու է նրա տեղակալը:

– Լեւոնին ասացի, որ նախ ե՛ս չեմ ուզում իմ չրջանը թողնել, եւ երկրորդ, կայ կուսակցութիւն. եթէ կուսակցութիւնն առաջարկի՝ չէ՛ ասել չեմ կարող: Եւ դա կուսակցութեան որոշումով պիտի լինի: Դա կուսակցութեան որոշելիք հարցն է:

Բայց ստացուեց այլ կերպ: Պետրոսն այսօրուայ նման յիշում է մի մոլի տգիտութիւն. «Հա՛յ-հա՛յ, Ղարաբաղում չկա՞յ մէկը, որ դառնայ Գերագոյն խորհրդի նախագահ եւ Շահումեանի՞ց պիտի բերենք»: Կարծես Շահումեանը Արցախից դուրս էր: Խորհրդային ժամանակներում եւ միայն խորհրդային ժամանակներով ապրած «ղարաբաղցիների», այսինքն ԼՂԻՄի բնակիչների համար Շահումեանն Ադրբեջանի մաս էր, իսկ իրենք Մարզի մէջ էին: Նրանք մոռացել էին Գիւլիստանի մելիքութեան եւ գաւառի գոյութիւնը, որը Շահումեանի ներկայիս չրջանի տարածքով հէնց մելիքութեան չարունակութիւնն է եւ ամենահսկական Արցախն է որ կայ՝ պահպանելով իր հայկականութիւնը ոչ աւելի վատ, քան բուն ԼՂԻՄի հայ բնակչութիւնը:

Սակայն, չգիտես ինչու, մարդկանց յիշողութիւնն արագօրէն կարճւում է եւ նրանք երբեմն մեծ սխալներ են գործում այդ հողի վրայ: Գերագոյն խորհրդի նստաչրջանի արձանագրութիւնից իմացանք, որ նոյնիսկ կարկառուն դաշնակցական **Գէորգի Պետրոսեանն էր** համոզուած, որ Շահումեանը «միչտ կտրուած է եղել Ղարաբաղից»:

Շարունակենք հետեւել իրադարձութեան ընթացքին:

Վ.Աղաբալեան.– Այն, ինչ կատարուեց, լիովին կանխագուշակուած է եղել: Ես այդ մասին ասում եմ, որովհետեւ նախօրօք յայտնել էի նախագահութեանը: Բանը նրանում է, որ, **թէում է, հասկացել են, բայց ոչինչ չեն արել կանխելու համար**: Եւ եթէ Շահումեանի շրջանի պատուիրակութիւնը թողեց դահլիճը, դա պատահական չէ: Եկէք մարդ լինենք, հասկանանք իրար, շահումեանցիներին վերադարձնենք դահլիճ, պարզենք պատճառները, դուրս գանք ստեղծուած վիճակից: Սա տանում է դէպի քաղաքացիական պատերազմ ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Հայաստանում:

Պարզաբանումներ է անում ԼՂՀ Գիւ նախագահի պաշտօնակատար ***Գ. Պետրոսեանը.***– Նիստը սկսելուց առաջ իմացայ այդ կոնֆլիկտի մասին, բայց չէի կարծում, թէ դա կարող էր վերաճել այդպիսի լուրջ միջադէպի: Կարծում եմ՝ պէտք է ստեղծել փոքր յանձնաժողով պատգամաւորների կողմից եւ անյապաղ վերադարձնել Շահումեանի ներկայացուցիչներին: Դա մեզ համար մեծ հարուած է:

Լ. Մելիք-Շահնազարեան.– Դա ծանր հարուած է ոչ միայն նստաշրջանին, այլեւ ԼՂՀին: Ես ձեզ խնդրում եմ՝ թողնել բոլոր փառամոլութիւնները, փոքր խմբով գնալ նրանց յետեւից, բոլորից ներողութիւն խնդրել կատարուածի համար:

Գրիգորեան.– Յարգելի պատգամաւորներ: Հասկանալի է, որ Ղարաբաղի բախտը մե՛նք պիտի լուծենք: Ամբողջ ժողովուրդը ոտքի է կանգնել հարցի լուծման համար, սակայն այսօր մեզ չի յաջողուում միասնական լինել: Այդ սխալ է, որ պառլամենտը կիսուել է երկու մասի: Բայց պէտք է գիտակցել, որ այսօր կարեւորը ազգային շահն է, այլապէս կը պարտուենք: Դեռ վաղ է յաղթանակի մասին խօսելը: Լարուած է վիճակը շրջաններում, իսկ մենք ճգճգում ենք նստաշրջանի աշխատանքը: Այդ ամէնը հասցրին նրան, որ Շահումեանի շրջանի պատուիրակութիւնը թողեց դահլիճը: Պէտք չէ վիրաւորել պատգամաւորի ինքնասիրութիւնը: Նդրում եմ զգոյշ լինել արտայայտուելիս:

Ա. Գաբրիէլեան.– Երէկ ես եղել եմ Ասկերանում եւ պիտի

ասեմ՝ ժողովուրդը վրդովուած է, որ չենք կարողանում ընտրել նախագահ: Ինձ համար պարզ չէ, թէ ինչպէս աւարտուեցին կոնսուլտացիաները: Գիտեմ, կայ ճնշում, չեն թողնում մարդուն ազատ արտայայտուել: Շատ ցաւալի է, որ այսօր Շահումեանի շրջանի պատուիրակութիւնը թողել է դահլիճը: Ես Շահէն Մեղրեանին չեմ ճանաչում, բայց լսել եմ նրա կազմակերպական ընդունակութիւնների մասին: Կարծում էի՝ պիտի անցնէր նրա թեկնածութիւնը: Պէտք է վերջ տալ բամբասանքին եւ ելնել ժողովրդի շահերից: Եթէ չենք կարողանում ընտրել նախագահ, հրաժարուենք մեր պատգամաւորական մանդատներից:

Ի. Մուրադեան.– Կարծում եմ՝ ոչ ոք չի կասկածում կատարուածի լրջութեան մէջ: Հասկանալի է, մարդիկ չէին կարող հէնց այնպէս վեր կենալ եւ դուրս գալ նստաշրջանից: Նշանակում է, իրօք, չշուկներ եղել են: **Գտնում եմ, որ դրանում մեղաւոր են նախկին ԼՂԻՄի ղեկավարները, որոնք, դժբախտաբար, շահումեանցիներին դիտում էին որպէս աչքի փուշ: Եւ շահումեանցիները վիրաւորուած են ստեփանակերտցիներից դեռեւս այն ժամանակներից, երբ պատերազմական ծանր օրերին Ստեփանակերտից ոչ մի օգնութիւն չեղաւ:**

Գ. Պետրոսեան.– Առաջարկում եմ յայտարարել ընդմիջում, քանի որ քուորում չկայ:

Ռ. Քոչարեան.– Առաջին հերթին կը ցանկանայի խօսք ասել խօսակցութիւնների մասին: Իսկապէս քաղաքի բնակչութեան մէջ դա նկատւում է, բայց հիմք ընդունել այդ խօսակցութիւնները, իմ կարծիքով, սխալ է: Այն պէտք չէ ընդունել հիւանդագին: Դա բնական է, վերաբերում է ստեղծուած համաձայնողական յանձնաժողովին: Կ'ասեմ հետեւեալը: Առաջին, երկու կողմից էլ առաջարկեցին քուէարկել մի երրորդ, անկախ թեկնածուի օգտին: Երկրորդ, առաջարկեցինք ընդունել որոշում պրեզիդենտական ընտրութիւններ անցկացնելու մասին եւ մինչեւ անցկացնելը փոփոխութիւն չկատարել, Գ. Պետրոսեանը մնայ որպէս ԳԽ նախագահի պաշտօնակատար: Մեր կողմից զրոյցին մասնակցում էինք **ես, Լ.Պետրոսեանը, Օ. Եսայեանը, Ս. Սարգսեանը**: Միւս կողմից՝ **Գ. Պետրոսեանը, Շահէն**

Մեղրեանը, Լ. Մելիք-Շահնազարեանը, Վ. Բալայեանը: Որոշեցինք անցկացնել ընտրութիւններ եւ դուրս գալ ստեղծուած վիճակից: Միւս կողմից ասուեց, որ պէտք է կոնսուլտացիաներ անցկացնել: Պայմանաւորուեցինք հանդիպել 10-ն անց կէսին: Հանդիպումից պարզուեց, որ պատասխանը բացասական է: Եւ նորից միւս կողմից առաջարկուեց **Շ. Մեղրեանի** թեկնածութիւնը: Ինչ վերաբերում է բանակի մասին դնացող խօսակցութիւններին, ես տեղեակ չեմ:

Ի. Մուրադեան.- Իսկ Ձեր կարծի՞քը:

Ռ. Քոչարեան.- Կար առաջարկ՝ մշակել համաձայնեցուած գործողութիւնների մեխանիզմ: Դա, իրօք, կարող էր դրական ազդեցութիւն ունենալ:

Ռ. Աղաբէկեան *(Մարտակերտ)*.- Հիմա ո՞ր տարբերակի վրայ էք կանգնել:

Ռ. Քոչարեան.- Փաստօրէն, միւս կողմի առաջարկն այն էր, որ նորից կ՝առաջարկեն Մեղրեանի թեկնածութիւնը: Իսկ մենք համաձայն էինք միայն պրեզիդենտական ընտրութեան: Թւում է, դա փոխզիջողութեան տարբերակ է, բայց համաձայնութեան չեկանք:

Գ. Պետրոսեան.- Փակ նիստից անմիջապէս յետոյ մինչեւ քննարկումն սկսելը արուեցին այն առաջարկութիւնները, որի մասին Ռ. Քոչարեանն ասաց: Միջանցքում ինձ մօտեցաւ **Բ. Բաբայեանը** եւ ասաց, որ ուզում է զրուցել հետս: Ինչպէս ինձ յայտնի դարձաւ, ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարութիւնը պատրաստւում էր հանդէս գալու յայտարարութեամբ:

Դրանից յետոյ մեր քննարկումներն անցկացուեցին այդ բողոք-յայտարարութեան փոնի վրայ: Ուզում եմ աւելացնել միայն մի բան: **Ես համաձայնել եմ անկախ թեկնածուի տարբերակի հետ:** Ինչ մնում է երկրորդ տարբերակին, կարծում եմ, որ կարելի է քննարկել բոլոր սկզբունքային դիրքորոշումները եւ դալ ընդհանուր որոշման: Յայտարարութիւնը մեր կուսակցութեան էութիւնն է: Դաշնակցութիւնը միշտ կարող է պաշտպանել իրեն, բացառում է չանտաժը որպէս մեթոդ,

ազգային կուսակցութիւն է, անկախ կազմակերպութիւն, եւ մենք չենք կարող համաձայնել այնպիսի տարբերակների, որոնք տանում են դէպի արիւնայեղութիւն: Մեր կազմակերպութեան գիծը բաւականին լուրջ է, եւ եթէ այսօր իմ կարծիքը ինչ-որ մէկին չի հետաքրքրում, ի սէր Աստուծոյ, հանգիստ եղէք, բայց մեր կուսակցութեան ներկայացուցիչը պէտք է լինի: Դրա համար առաջարկել եմ **Շահէն Մեղրեանի** թեկնածութիւնը:

Ռ. Քոչարեան.– Այժմ ես կարող եմ շարունակել մեր պատմութիւնը: Հէնց որ լսեցի գինուորների յայտարարութեան մասին, խնդրեցի լսել գինուորների ղեկավարներին: Ես դիմեցի նրանց ներկայացուցիչներին եւ խնդրեցի բացատրութիւն: Մենք կուտում ենք արիւն թափելով, հասնում յաջողութիւնների, ինչո՞ւ քաղաքագէտները յանուն մի ընդհանուր նպատակի փոխզիջման չեն գնում: Եւ քանի որ այստեղ պէտք է լուծուեն ռազմական հարցեր, ինչո՞ւ իրենք պիտի մի կողմ կանգնեն:

Գ. Պետրոսեան.– Ես լրացում ունեմ: Մեզ ասել են, որ այսօր առաւօտեան մենք կը ստանանք դիմումի տեքստը:

Ռ. Հայրիեան.– Ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարութեան դիմումն ընթերցելուց յետոյ առաջարկում եմ իր թեկնածութիւնը նախագահի պոստի համար միայն յաջորդ նստաշրջանում:

Լ. Մելիք-Շահնազարեան.– Ես կը խնդրէի այստեղ հրաւիրել ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարներին եւ տեղականներին:

Զ. Բալայեան.– Շահումեանի պատուիրակութիւնը գտնուում է Ստեփանակերտում, չի գնացել, սպասում է մեր որոշմանը: Խնդրում եմ նստաշրջանին մասնակցող մամուլի եւ հեռուստատեսութեան ներկայացուցիչներին, ոչինչ չհաղորդել մինչեւ հարցի լուծումը, քանի որ իրավիճակը շատ բարդ է: Երբ շահումեանցիները վերադառնան, խնդրում եմ պարզաբանել եւ շարունակել նստաշրջանի աշխատանքները: Ես կատարուածը համարում եմ բնական: Եթէ մենք յետաձգենք նախագահի ընտրութիւնը մինչեւ միւս օկրուգներում ընտրութիւնների անցկացումը, վտանգաւոր ոչինչ չկայ: Բայց ճեղքուածքն աւելի խո-

բացնել չի կարելի: Պէտք է ընտրել պառլամենտ: Այն օրէնսդրական մարմին է եւ պէտք է ունենայ իր ղեկավարը: Անպայման պէտք է ընդունել բանակի մասին օրէնքը, դա շատ կարեւոր է:

Վալերի Բալայեան.- Արդէն պատրաստ են զինապարտութեան եւ պաշտպանութեան մասին ԼՂՀ օրէնքները: Բայց ահա թէ ինչ է ստացւում. մի կողմից ասում ենք, որ բանակը պիտի լինի համազգային եւ ենթարկուի Հայաստանին: Միւս կողմից՝ մեր անկախութեան ճանաչման մասին ենք խօսում...

Այսպէս տարբեր հարցեր էին քննարկում, մինչեւ որ ***Վ. Գաբրիէլեանը*** *նորից է յիշեցնում, որ անպայման պէտք է հրաւիրել չահումեանցիներին եւ բոլոր ընդունուող որոշումներին մասնակից անել:* «Պառակտումը խօսքից վեր է ածւում պրակտիկ գործերի: Բանակը եւ ժողովուրդը պէտք է միասնական լինեն: Նախագահ չընտրելով՝ մենք ցոյց ենք տալիս մեր թուլութիւնը, անկարողութիւնը»:

Արկադի Մանուչարովն *իր ելոյթում նշում է, որ 70 տարի մենք եղել ենք գաղութային վիճակում: Ստանալով ազատութիւն, մենք չենք կարողանում քայլ անգամ առաջ գնալ: Խօսելուց բացի, մենք ոչնչով չենք զբաղուել:*

«Ես լսել եմ, թէ ինչ են ասել Շահէնի մասին, բայց այդ խօսքերի մէջ Շահէնի հասցէին վիրաւորական ոչինչ ես չեմ տեսնում: Ընդհակառակը, նրա մասին լսել եմ որպէս հեղինակաւոր մարդու, քաջ զինուորի, որ նա աւելի շատ հարկաւոր է Շահումեանի շրջանում: Եւ ես համաձայն եմ դրան»:

Այսպիսով, ***Արկադի Մանուչարովն*** *ուզում է փափուկ բարձ դնել Շահէն Մեղրեանի գլխի տակ՝ անտեղի եւ անգիտակցական քայլ համարելով Շահումեանի պատուիրակութեան արարքը, կարծես Շահէն Մեղրեանն անտեղեակ լինէր, թէ ինչ անտանելի, անհանդուրժողական մթնոլորտ էր տիրում եւ շատ յետամնաց հոգեբանութիւն: Ստեփանակերտցիները, որոնք գլխաւորապէս իրենց հոգեւոր սնունդը ստացել են ռուսական մշակութային միջավայրում եւ հեռացել ազգային արմատներից, արհամարհանքով էին վերաբերում հեռաւոր շրջանի մարդկանց եւ գոռոզաբար բացառում, որ այդպիսի մարդը*

կարող է ղեկավարել Ղարաբաղը: «Արա, բա մունք պակա՞ս տղայ ինք, վեր չահումեանցին կեայ մեզ կառավարի»,- չչնջում էին նրանք իրար մէջ՝ քնաւ չմտածելով, որ այդ թոյնն իրենց հոգում կաթեցրել են ուրիշ տեղից: Իրենց համար միանգամայն ներելի է այն, որ հայութեան ղեկավարութիւնն Արցախում, փոքր բացառութեամբ, հայերէն ճիշտ խօսել եւ գրել չէր կարող: Ցենտր տղերքի մեծամտութիւնը գալիս է շատ վաղուց. յիշենք՝ Նազարէթից լաւ մարդ կը լինի՞ Սուրբգրական արտայայտութիւնը: Հիմնաւոր չէ, նոյնիսկ սնանկ է Մանուչարովի այն պնդումը, որ Շահէն Մեղրեանն աւելի շատ Շահումեանին է պէտք: Այսինքն՝ իրենց պէտք չէ:

Շիրխանեանի ելոյթից.- 1988 թ. Արցախը դարձաւ ազգի միաւորման պատրուակ (ինչո՞ւ պատրուակ եւ ոչ թէ պատճառ կամ առնուազն՝ պայման - Ա.Պ.), բայց այսօր պառակտուում ենք: Ռազմական յաջողութիւնները չեն ամրապնդուում քաղաքական որոշումներով: Այստեղ լուրջ սպառնալիքներ հնչեցին, թէ չի կարելի թոյլ տալ, որ Հայաստանի իշխանութիւնները ներթափանցեն ԼՂՀ: Բայց Հայաստանը միշտ էլ պաշտպանել է Արցախին:

(Եթէ պաշտպանել է, ինչո՞ւ է ոտնահարում իր համար իշխանական մարմին ստեղծելու արցախցու իրաւունքը):

Գ. Պետրոսեանի ելոյթից.- Մենք լսեցինք **Վ. Սարգսեանի** յայտարարութիւնը եւ ես չեմ ընդունում նրա դիրքորոշումը, որ իբր Հայաստանը ներքաշուել է պատերազմի մէջ եւ այդ ամէնը կատարուել է Դաշնակցութեան մեղքով:

Յետոյ ելոյթ է ունենում ***Արկադի Տէր-Թադէոսեանը.-*** **Բարոնուհի Քոքսը** համոզմունք յայտնեց նոր հանրապետութեան ծննդեան մասին: Դա շատ հաճելի է: բայց հիմա ի՞նչ ենք անում մենք:

Մարդիկ են զոհւում, ցորենն են գողանում, ո՞ւմ է յուզում սա: Այս 4 օրերում մոռացել ենք, թէ աշխարհում ինչ է կատարւում: **Հարկաւոր է արգելել կուսակցական ֆրակցիաները**: Ես հասկանում եմ, որ այն, ինչ այստեղ իրականացւում է, լիովին նորմալ քաղաքական պայքար է: Բայց դուք

պիտի պատկերացնէք ձեր բոլոր արարքների հետեւանքները: Ինչո՞ւ մենք՝ զինուորականներս պիտի լուծենք ձեր հիմնահարցերը: Մեր կողմից զինուորական յեղաշրջում չի սպառնում: Բանակն առայժմ անպարտելի է, բայց ձեր գործողութիւնները նեարդայնացնում են նրան: Դաշնակներն այստեղ են բերել բանակը: Ո՞վ է այդ իրաւունքը տուել նրանց: Ես յարգում եմ այդ կուսակցութիւնը, սակայն չի կարելի այդ կուսակցութեան անունից խառնաշփոթութիւն սարքել: Խնդրում եմ ընդհատել նստաշրջանը, անցկացնել... ընտրութիւններ:

Յետոյ էլ՝ հիմա զօրքերի կուտակում է նկատւում սահմաններում. մեզ հարկաւոր է լրջօրէն վերաբերել այդ բանին:

Ի. Մուրադեան.– Շատ դժուար է վիճարկել այնպիսի մի հեղինակաւոր մարդու կարծիք, ինչպիսին **Արկադի Տէր-Թադէոսեանն է:** Սակայն թող նա իմանայ, որ **եթէ չլինէր Դաշնակցութեան կուսակցութիւնը, այսօր չէինք ունենայ ո՛չ ռազմական ուժեր ԼՂՀում, ո՛չ իրեն՝ Արկադի Իվանովիչին:**

Լ. Մելիք-Շահնազարեան.– Ես ուզում եմ խօսել զինուորների յայտարարութեան մասին: Այստեղ իրօք գնում է քաղաքական պայքար: Դա նորմալ երեւոյթ է եւ ձեր օգնութեամբ այն պիտի դուրս չգայ այս դահլիճի սահմաններից:

Կարողացէք ներել սխալները: Ես այստեղ չեմ տեսնում հայ ժողովրդի ոչ մի թշնամու, հարկաւոր է միայն լրջօրէն աշխատել: Իսկ ինչ վերաբերում է Շահումեանի շրջանի պատուիրակութեանը, ապա ես ուզում եմ միայն շնորհակալութիւն յայտնել նրանց վերադառնալու համար:

Մուրադ Պետրոսեան.– Ես խօսում եմ իմ անունից, մեր փոքրիկ կազմակերպութեան անունից: Առաջարկում եմ լինել անկախ որեւէ կուսակցութիւնից: Առաջարկում եմ Բ. Առուշանեանի թեկնածութիւնը:

Շ. Մեղրեան.– Ես նախ ուզում եմ բացատրել մեր հեռանալու պատճառը: Ոչ մի միտում հեռացման մէջ չի եղել: Մենք չենք ցանկանում դրանով Լեռնային Ղարաբաղն անջատել Շահումեանի շրջանից: Պարզապէս մենք հանդէս եկանք այն հիւանդագին երեւոյթների դէմ, որ կան: Յարգելի հրամանա-

տարը ելոյթի ժամանակ ցոյց տուեց, որ երբ բանակը խառնուում է քաղաքականութեանը ապա կարող է լինել արհաւիրք: Ուժերը պէտք չէ պարպել... պառլամենտի վրայ: Իսկ այսօր ոչ ոք չի ուզում այդ մասին խօսել: Ազգի առաջ պատասխան կը տանք դրա համար: Պատգամաւորական խմբի անունից եմ ասում, վերադառնալով դահլիճ՝ ցանկանում ենք լսել բանակի մասին օրէնքը: Այն ամէն բան կը դնի իր տեղը: Բանից պարզուում է, որ չարունակուում է նոյն կուրսը:

Մի բան պարզ է. դեմոկրատիա տարածող Ղարաբաղը կարող է վերածուել ուրիշ կատեգորիայի: Առաջարկութիւն անելու ժամանակ յիշենք, որ իզուր պէտք չէ օգտագործել ամբիոնը: Յարգելի պատգամաւորներ, եկէք խօսենք պարզ. եթէ տալիս ենք իշխանութիւնը, ապա ո՞ւմ ենք տալիս եւ ինչու ենք տալիս: **Ծանր ժամանակներ են եւ մեզ լաւ օրեր չեն սպասում: Բայց ի՞նչ ենք անում դրա համար: Ոչինչ:** Եթէ նախագահի ընտրութիւն չի լինելու, ապա պէտք է անցնել միւս հարցերին: **Բոլոր սպառնալիքներն ունեն կուսակցական միտում, եւ այսօր դա պէտք չէ թաքցնել:** Հանգամանքների բերումով մենք դասւում ենք տարբեր կուսակցութիւնների թուին, բայց դա չի նշանակում ներկայացնել մեղադրանք: Կրքերը պէտք է հանգստացնել:

*Այսպիսով, հակառակ ՀՀՇական կարկառուն ներկայացուցիչների ելոյթներում հնչած ազգային միասնութեան եւ համերաշխութեան կոչերին, նրանց առաջին գործը եղաւ **կիմ Բալայեանի** առեւանգումը, որն այդպէս էլ պատանդ վիճակում մնաց մինչեւ նստաշրջանի աւարտը: Նրանք չարունակում էին Դաշնակցութեանը վերաբերել այնպէս, ինչպէս բոլշեւիկները: Այդ քաղաքական գործիչները մարդկային բարոյահոգեբանական մակարդակով բոլորովին էլ չէին բարձրացել բոլշեւիկներից, եւ ինչպէ՞ս ու ինչի՞ չնորհիւ պիտի մէկ-երկու օրում փոխուէին: Այդպիսի հրաշքներ բնապատմական համակարգերում տեղի չեն ունենում: Գերագոյն խորհրդի ընտրութիւնները բազմիցս արձագանքներ են գտել, եւ պարզ էր թէ՛ տեղի ունեցածը եւ թէ՛ դրա անաչառ գնահատումը:*

Բագրատ Ուլուբաբեան *(1992, յունիսի 7).* «Ես կաթուածահարի պէս էի, երբ ԳԽ նախագահ **Բաբկէն Արարքցեանի** գլխաւորութեամբ հեղինակաւոր պատուիրակութիւնը գնաց Ստեփանակերտ, տապալեց ԼՂՀ ԳԽի նախագահի ընտրութիւնները եւ իր առաքելութիւնը կիսով չափ կատարած համարելով՝ վերադարձաւ: Կիսով չափ, քանի որ գնացել էր ապահովելու միայն իր իւրայինների (ՀՀՇ) թեկնածուի յաղթանակը: Եւ քանի որ իրենց թեկնածուն չի անցել, խանգարել է նաեւ, այսպէս կոչուած, հակառակ թեւերի թեկնածուների՝ **Լէոնարդ Պետրոսեանի, Լէոնիդ Յակոբեանի ու Շահէն Մեղրեանի** յաջողութիւնը» *(Բագրատ Ուլուբաբեան, Արցախեան զոյապայքարի տարեգրութիւն, եր., 1997, էջ 446):*

Իգոր Մուրադեան. «1992 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի նստաշրջանի ժամանակ Շահէն Մեղրեանին առաջարկեցին ընտրուել Գերագոյն խորհրդի նախագահ: Նա ընդունեց այդ առաջարկութիւնը եւ, չնայած ԼՂՀ Գերագոյն խորհրդի իր վրայ գործադրած ճնշմանը, չնայած չանտաժին եւ «Շահումեանի ճակատագիրը դեռեւս պարզ չէ» անխիղճ յայտարարութեանը, չհրաժարուեց մինչեւ վերջ նախագահի պաշտօնի համար պայքարելու մասին տրուած խօսքից» *(Իգոր Մուրադեան, «Գիւլիստանցի Շահէն Մեղրեանը», «Գոլոս Արմենիի», 17 ապրիլի 1997):*

Շահէն Յովասափեան. «Յաւօք սրտի, թէեւ մենք պայքարեցինք, սակայն օրերից մէկ օր՝ 92-ի յունիսի 3-ին մեզ հրաւիրեցին Ղարաբաղ՝ նստաշրջանի: Գնացինք այնտեղ եւ հարցն այնպիսի ընթացք ստացաւ, որ Շահէն Մեղրեանը պիտի լինէր Գերագոյն խորհրդի նախագահ: Մենք վիճաբանում եւ հակաճառութիւնների մէջ էինք, սակայն այնպէս ստացուեց, որ 7 օր յետոյ Շահումեանն անցաւ թշնամու ձեռքը»:

Ռաֆիկ Ղազինեանը *յիշում է, որ երբ յունիսի 2-ին Շահումեանի ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատար* ***Շահէն Մեղրեանի*** *եւ միւս պատգամաւորների հետ եկան Ստեփանակերտ՝ մասնակցելու ԼՂՀ ԳԽ նստաշրջանին, զգացին, որ Շահումեանի դէմ դաւադրութիւն է նախապատ-*

բաստւում: Իրենց հետ Ստեփանակերտ էր եկել նաեւ ***Ցակոբի*** *ջոկատից՝ ռազմական տեխնիկայի մասնագէտների խումբը, որպէսզի Շահումեան տեղափոխի Շուշիի ռազմական աւարի բաշխումից իրենց հասանելիքը՝ ԲՄՊ-2 զրահամեքենան եւ մէկ հրասայլ: Սակայն, երբ նստաշրջանում երկրորդ անգամ դրուեց Մեղրեանի թեկնածութիւնը, նրանց ուղղակի ասացին, որ զրահամեքենան ձեզ չի տրուի: Եւ սա այն դէպքում, երբ նախարար* ***Վազգէն Սարգսեանը*** *նախապէս ջոկատների ապակուսակցականացման կոչեր էր անում...* «Եւ մենք, առանց ԼՂՀ նախագահ ունենալու, առանց հրասայլի եւ զրահամեքենայի ձեռնունայն վերադարձանք Շահումեան»:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻ ԱՋԱՏ ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՓՐՓՐԱԲԱՇ ԳԵՏԻ ՋՐԵՐՈՎ

Այդպէս չէին մտածում ՀՀՇական իշխանաւորները եւ Ստեփանակերտեան նրանց մանկլաւիկները, որոնք տառապում էին տարածքային /մայրաքաղաքային/ հպարտութեամբ: Այդպէս չէր մտածում նաեւ ***Ջօրի Բալայեանը: Աչոտ Խաչատրեանի*** *"Трагедия моего народа", Ер., 2008, գրքի ներածականում Ջօրի Հայկովիչի խօսքի վերջին մասը զետեղում ենք ամբողջապէս.* «Եւ այսօր մենք լուսթեան ենք մատնում հայրենիքի կորուստը, նրանց, ովքեր կեանքի գնով պաշտպանել են Արցախի հիւսիսային դարպասները, նաեւ նրանց, ովքեր դաւաճանել են շահումեանցիներին:

Հէնց այս պատճառով էլ դժուար է գերագնահատել **Աչոտի** /Խաչատրեանի.- Ա.Պ./ երկը: Ընթերցողը պակերացում կը կազմի, թէ ինչպէս է սկսուել պայքարը Արցախի հիւսիսում: Նա լիովին զետեղել է Շահումեանի առաջին պատանդների ցանկը, որոնք դարձել էին **Պոլիանիչկո-Մութալիբովի** /Մոսկուայի ու Բաքուի/ չարանենգ համաձայնութեան զոհերը: Շատերն են արդէն հաւանաբար մոռացել այն, որ Շահումեանում երկար ժամանակ գործում էր շատ լուրջ մարմին, որը կոչւում էր **Պաշտպանութեան խորհուրդ**, որի չնորհիւ Շահումեանը դիմացել է մինչեւ Շուշիի եւ Լաչինի ազատագրումը: Կարդալով

Աչոտի ձեռագիրը եւ յիշողութեան մէջ թարմացնելով այն տարինների իրադարձութիւնները, նորից ես համոզւում, որ չահումեանցիների հերոսական սխրանքն, ըստ էութեան, յարձակման ճանապարհն է հարթել Շուշի բերդաքաղաքի վրայ, որը դարեր ի վեր համարւում էր անառիկ: Շահումեանցիներն Արցախը պաշտպանում էին հիւսիսից, որն առարկայական արդելք հանդիսացաւ հակառակորդի համար բացելու երկրորդ ճակատը: Անկասկած է, որ անկախ իրադրութեան վիճակից, մենք, ի հարկէ, կ'ազատագրէինք Շուշին, սակայն հաւանաբար կը կորցնէինք շատ աւելին:

Հիւսիսային ռազմաճակատում հսկայական դերակատարութիւն ունեցաւ Ղարաբաղեան չարժման բոցավառ մարտիկներից մէկը, ազգային-ազատագրական պայքարի տաղանդաւոր կազմակերպիչ եւ առաջնորդ, Դաշնակցութիւն կուսակցութեան անդամ **Շահէն Մեղրեանը**: Եւ ուրախալի է, որ գրքի հեղինակը ձգտում է բացայայտել ոչ միայն Շահէնի կերպարը, այլեւ իր զինակիցներից չատերին, որոնցից մէկն էլ անմոռանալի **Շահէն Յովսաափեանն** էր: Ես սա ոչ պատահաբար եմ չեշտում: Հարցն այն է, որ ժամանակ առ ժամանակ մամուլի մէջ ի յայտ են գալիս զրպարտչական հրապարակումներ այն մասին, որ Պաշտպանութեան խորհրդի առաջնորդներն ամենավտանգաւոր պահին ճողոպրել են, ժողովրդին թողնելով անպաշտպան... Կեանքով է ապացուցուած, որ ամէն զրպարտիչ, որպէս կանոն, իր իսկ անձնական արատները, իր երկչոտութիւնը, իր դավաճանութիւնը վերագրում է իր զոհին: Պակաս վտանգաւոր չեն պատմական փաստերի նենգափոխումը, որն առաւել յաճախակի ի յայտ է գալիս մեր ժողովրդի ապրած ողբերգութեան յանցաւոր մոռացման համապատկերի վրայ: Եւ աստ, արժանին պէտք է հատուցել Աչոտ Խաչատրեանին, որն արդէն միայն իր յիշողութեանց անուանումով նախազգուշացնում է ընթերցողին ժողովրդական անսփոփելի վշտակրութեան մոռացման վտանգի մասին: Մենք պարտաւորենք հաստատապէս պարզել ինքներս մեզ համար այն, որ Գիւլիստանի երկրամասը մեր հաւաքական, բոլորիս ի մի բերող ցաւն է, ոգեկնդումն է, առանց որի

յաղթանակներ չեն լինում»:

Հոգու եւ մտքի այս պայծառութեանը ***Զօրի Հայկովիչը*** *միանգամից չի հասել եւ վերոբերեալ հատուածը կարելի է ընդունել նաեւ իբրեւ ինքնաքննադատութիւն դի յարգարժանի «Դժողք եւ դրախտ» /եր. 1995/ գրքի մէջ մենք այնքան էլ համարժէք /ադէքուատ/ վերաբերմունք չենկատեցինք Շահէնի եւ Շահումեանցիների նկատմամբ:*

Շահէն Մեղրեանին եւ չահումեանցիներին իր գրքում պարօն Բալայեանն անդրադարձել է երկու դրուագով՝ կապուած ԼՂՀ նախագահական երկրորդ ընտրութիւնների եւ այդ իրադարձութեանն անմիջապէս յաջորդող Շահումեանի կորստեան կապակցութեամբ: Ահա՛ հատուածներ առաջին անդրադարձից. «Գլխաւոր հարցը Գեղադոյն խորհրդի նախագահի ընտրութիւնն էր... Մարդիկ բաժանուել էին երկու խմբի. մէկը Գեղադոյն խորհրդի նախագահի պաշտօնակատար **Գէորգի Պետրոսեանի** կողմն էր, միւսը՝ **Ռոբերտ Քոչարեանի**: Դաշնակները համոզուած էին, որ ես կողմ եմ լինելու Գէորգի Պետրոսեանին: Հաւանաբար միմիայն **Ժորան** /Գէորգի Պետրոսեանը/ գիտէր, որ ես կողմ չեմ քուէարկելու իրեն: Նա պէտք է հասկանար, որ ես չափից դուրս շատ եմ սիրում իրեն, որպէսզի թոյլ տամ նախագահ դառնայ /տեսնո՞ւմ էք՝ ինչպիսի ինքնավստահութիւն,-Ա.Պ./: Այսպէս ասած, նոր սերնդի ուղղամիտ ու ազնիւ երիտասարդներից մէկն է նա: Ես տեսել եմ նրան գործի մէջ, /պաշտօնական հանդիպումներին,-Ա.Պ./, նա խօսում էր շատ բարձր, յստակ, պատճառաբանուած, երկաթեայ տրամաբանութեամբ, լիակատար պարտութեան մատնելով իր ընդդիմախօսին: Նա աչքի էր ընկնում իր բարեկրթութեամբ /ինտելիգենտութիւն/ եւ համեստութեամբ: Բայց ահա զարմանալի բան՝ հէնց որ դարձաւ Գեղադոյն խորհրդի նախագահի պաշտօնակատար, ասես ինչ-որ մէկը փոխեց նրան: Ընդհանրապէս, խորապէս համոզուած եմ՝ մարդիկ կան, որ պէտք չէ անցնեն իշխանութեան գլուխ, դա ոմանց համար հակացուցուած է, ինչպէս չաքարը՝ չաքարախտների»/173-174/:

Ենթատեքստն ակնյայտ է. Գէորգի Պետրոսեանը դաշնակցա-

կան է եւ նրան կարելի չէ պաշտօն տալ: Դաշնակցութեանն առհասարակ իշխանութիւն տալը հակացուցուած է: Ինչ մնում է անհատներին՝ Զօրի Հայկովիչը տեսնում է նրանց խորութեամբ եւ գիտէ, թէ ով ինչի է ընդունակ եւ յետագային ինչպիսի վարքագիծ է դրսեւորելու: Բայց չէ՞ որ սա Ատածուածային կարողութիւն է: Ինչեւէ, հետեւենք գրագէտի խօսքի ընթացքին:

«Գործը շատ աւելի հեշտ է **Ռոբերտ Քոչարեանի** հետ: Սա ուղղակի պատրաստի խարիզմատիկ առաջնորդ է: Ես տեսել եմ նրա ազդեցութիւնը երիտասարդ տղաների վրայ, որոնք մտնում էին ընդհատակի բանակի մէջ **Պոլիանիչկոյի եւ Սաֆոնովի** ժամանակ»/ 174/:

Այսքանից յետոյ անուանի մարդն իրեն առանձնացնում է երկու կողմերից էլ /ե՛ւ ՀՀՇ, ե՛ւ Դաշնակցական/, գետի երկու ափերից եւ իրեն պատկերացնում գետի մէջտեղը: Լաւ լողորդն է՛լ ուրիշ որտե՞ղ պիտի լինի: Սակայն չարունակենք:

«Նատաշլջանը խորհրդարանի նոր խօսնակ չնտրեց: Ոչ Պետրոսեանն անցաւ, ոչ էլ Քոչարեանը: Առաջարկեցին նոր թեկնածուներ առաջադրել: Դրանց մէջ էր **Շահէն Մեղրեանը**: Մինչ կը նախապատրաստէին նոր քուէաթերթիկները, ընդմիջմանը ես խօսեցի Շահէնի հետ: Ասացի, թէ ոչ մի սարսափելի բան չի պատահի նրան, եթէ չնտրուի: Նա չի դադարի Շահէն Մեղրեան լինելուց... Ես խնդրեցի նրան հրաժարուել քուէարկուելուց: Գիտէի, որ չի ընտրուելու, եւ աւելի են սրուելու նրա յարաբերութիւնները Ստեփանակերտի որոշ ղեկավարների հետ...»:

Շահէնը, ինչպէս եւ ենթադրւում էր, չանցաւ: Զափից դուրս շատ էր «ղէմ» հաւաքել... */Շահէն Մեղրեանին չի բաւականացրել միայն երեք քուէ, սակայն մեզ համար գաղտնիք չէ, որ նա իրականում ընտրուել է եւ անկասկած տեղի են ունեցել կեղծարարութիւն, խարդախութիւններ, քուէների կորուստ եւ ներկայիս վիճակը, երբ բոլորովին հնարաւոր չէ արդար ընտրութիւններ անցկացնել, մի՞թէ միանգամից է ստեղծուել: Մենք ներկայացրել ենք արդէն Գերագոյն Խորհրդի նատաշլջանի արձանագրութիւնները եւ ընթերցողն ինքը կարող է ճիշտ*

պատկերացում կազմել ամէնի վերաբերեալ-Ա.Պ./:

«Նոր թափով սկսուած քննարկումների ամենաթէժ պահին Շահէն Մեղրեանն ու Շահումեանի ամբողջ պատգամաւորական խումբը լքեց դահլիճը՝ ի նշան բողոքի: Ինձ համար դժուար է այդ ամէնի մասին գրել: Դժուար է ընդհանրապէս անաչառ լինելը» */էջ 175-178/:*

Այնուհետեւ գրագէտը խօսում է այն մասին որ Պոլիսնիչկոյի ժամանակներում ընդհատակեայ պայմաններում վտանգների ենթարկուելով եկել եւ հանդիպել են իրար այսօրուայ պատգամաւորները:

«Եւ յանկարծ այսօր, երբ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովրդական պատգամաւորներն ազատ հայրենիքի ազատ ճանապարհներով եկել են մասնակցելու իրենց խորհրդարանի նստաշրջանին, Շահէնը եւ իր ընկերները լքում են դահլիճը: Ողորմելի գենետիկական ինքնասիրութիւն: Հինգ րոպէ անց ես գնացի նրանց յետեւից»:

Ի՞նչ է նշանակում՝ ողորմելի գեմետիկական ինքնասիրութիւն, *թող գրագէտն ինքը լուսաբանի:*

Խարիզմատիկ առաջնորդներն *այսօր Հայաստանը հասցրել են մի վիճակի, երբ հացադուլ արած քաղաքական եւ պետական գործչի նկատմամբ ահաւոր բռնութիւն են գործադրում՝ չրջապատը լցնելով թմբուկների եւ ռոք «մուզիկայի» անտանելի ոռնոցներով: Հին Չինաստանում այդպիսի թմբուկների գործադրմամբ իրականացնում էին դատապարտուածների մահապատիժը: Հազար տարուց աւելի Հայաստանը հայերը չեն կառավարել, այլ օտարները: Արցախի առաջին նախագահը ՀԱՅ էր եւ նրան իր տան մէջ սպանեցին եւ բնականաբար մարզի մայրաքաղաքի «զարգացած», այսինքն՝ այլակերպուած տղաները հո պիտի չթողէին, որ «Շահումեանից մէկը գար եւ դառնար առաջնորդ»:*

Մեզ համար անչափ տհաճ է գրել այս ամէնի մասին, սակայն սա է իրականութիւնը: Շահէնը ՀԱՅ էր, նա պիտի չնտրուէր եւ ***Զօրի Հայկովիչը*** *դա անսխալ գիտէր, քանզի իրեն նախապէս ասել էին այդ մասին եւ գուցէ յանձնարարել…*

*Զօրի Բալայեանը միայն տարիներ յետոյ **Աչոտ Խաչատրեանի** վերոնշեալ՝ «Իմ ժողովրդի ողբերգութիւնը» գրքի առաջաբանում պիտի **Շահէն Մեղրեանին** գնահատէր ըստ արժանւոյն եւ Շահումեանի մասին գրէր այս տողերը. «...հրապարակումների մեծ մասը ենթակայական գովերգումներ են՝ այսպէս թէ այնպէս կապուած այս կամ այն ճակատամարտում ունեցած ռազմական յաջողութիւնների հետ: Եւ այդ համապատկերի վրա ինչ-որ ամօթխածօրէն կամ հանցաւորապէս լռում ենք մեր անվերականգնելի, ոչ միայն մարդկային առումով, այլեւ հայրենիքի, կորստեան հետ: Տպաւորութիւն է ստեղծւում, որ մենք կարծես հաշտուել ենք դրա հետ: Ընդ որում, հազուադէպ ենք մտածում այն մասին, որ Շահումեանի շրջանը, կամ, աւելի ստոյգ, Գիւլիստանի պատմական մելիքութեան մի մասը մենք յանձնեցինք Շուշիի եւ Լաչինի փառաւոր յաղթանակներից յետոյ... Ինչպէ՞ս պատահեց, որ 1993ի ամռանը մեր բանակի յաղթարշաւը յանկարծ կանգ առաւ հէնց Գիւլիստանի մերձակայքում»/ տե՛ս նոյն գրքի առաջաբանը» :*

Ներկայումս կորստած է Շահումեանի շրջանը եւ զոհուած է Շահէն Մեղրեանը եւ հեշտ է նրանց մասին լաւ խօսքեր գրելը: Թող այն տպաւորութիւնը չստացուի, որ ուզեցել ենք յարգանք վայելող անուանի մարդուն «քցել»: Ոչ: Գրական եւ գործնական մեծ կենսափորձ ունեցող յարգարժան գրագէտին կը կամենայինք, որ նրա բերանից հնչած եւ գրչի տակից դուրս եկած խօսքերն ու մտքերն արտայայտեն յաւիտենական ճշմարտութիւնները եւ ժամանակի ընթացքին «չհնանան»: Ունենք իրաւունք կամենալու, նաեւ աղօթելու, որ կեանքում շատ բանի հասած մարդը յոյսը պիտի չդնի միայն մարդկային իմաստութիւնների, իր մտքի անսահման հորիզոնների վրայ, այլ Հոգով, Հոգով պիտի ներսուզուի մեր առաքելական դաւանութեան եւ հոգեւոր ժառանգութեան անհուն անդաստանները: Թող Աստուած օգնական լինի իրեն այդ գործում եւ ինքը իւր արարմունքը սրբագրելու կարիք չունենայ:

ԱՑԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հրանտ Խաչատրեանն *իր համար պատիւ է համարում, որ Արցախի Գերագոյն խորհրդի ընտրութիւնների ժամանակ ԼՂ Գերագոյն խորհրդի ամբիոնից պաշտպանել է* ***Շահէն Մեղրեանի*** *թեկնածուութիւնը:* «Մենք յոյս յայտնեցինք, որ Շահէն Մեղրեանի ղեկավարութեամբ Լեռնային Ղարաբաղը կը շարունակի իր վճռական քաղաքական գիծը: Սակայն պատմական պահը Շահէնի նման մարդու օգտին չէր եւ ԼՂ քաղաքական ուժերը եւ ժողովուրդը մեծամասնաբար չպաշտպանեցին Շահէն Մեղրեանի թեկնածուութիւնը»:

Այստեղ ժողովրդի դերն այնքան էլ մեծ չէր, քանզի էքստրեմալ պայմաններում մեծանում է հէնց փոքրաքանակ խմբի դերակատարութիւնը:

ԼՂՀ Գերագոյն խորհրդի ընտրութիւնների վերաբերեալ բազմաթիւ վկայական անդրադարձներ ունենք, որոնցից ներկայացնենք մի քանիսը:

Յակոբ Պօղոսեան (օպերատոր). «Մինչեւ «Եղնիկները»՝ ես եղել եմ Ղարաբաղի տարբեր վայրերում: Ի՞նչն էր պատճառը, որ գնացի «Եղնիկներ»: 91 թուականից ես ծանօթ էի **Շահէն Մեղրեանին**: 92-ի յունիսին, երբ Շահումեանն ընկաւ, ինձ Շահէնին աւելի հարազատ զգացի, մտերմացայ: Ձիշում եմ, ԼՂՀ Գնի ընտրութիւնները պիտի լինէին Ստեփանակերտում: Շահէնն էր այնտեղ, **Յակոբ Խիդիրեանն էր**, Շահումեանի միւս պատգամաւորներն էին: Շահէնն ինձ վրայ չատ լաւ տպաւորութիւն թողեց, լուրջ տպաւորութիւն թողեց որպէս այդ հող ու ջրի նուիրեալ: Եւ այդտեղ ելոյթներ են ունենում **Կոմանդոսը, Վազգէն Սարգսեանը, Ստամբոլցեանը** եւ այլք, եւ սկսում են խօսքերով հրեատակոծել, որ պիտի ընտրուի **Ռոբերտ Քոչարեանը**: Հայաստանում ճանաչուած ղէմքերից քչերն էին ղէմ այդ թեկնածուին, որոնցից յիշում եմ՝ **Մեխակ Գաբրիէլեան, Վահան Յովհաննիսեան, Հրայր Կարապետեան**, մի խօսքով՝ Դաշնակցութեան ֆրակցիան: ՀՀՇի ամբողջ անձնակազմն էր թափուել այդտեղ: Ես չեմ ուզում քաղաքական երանգներ տալ, այլ լոկ իրողութիւնն եմ ասում: Այդ ժամանակ

ինձ ասելի դուր եկաւ Շահէն Մեղրեանը, երբ փաստարկներով բանավիճում էր **Սամուէլ Բաբայեանի** հետ»:

Սամուէլ Ցարուքիւնեան. «Այդ նստաշրջանում պարզ, ակնյայտ կերպով զգացւում էր անհաշտելի, սուր հակասութիւնը ՀՀՇի եւ ՀՅԴի միջեւ, որոնցից իւրաքանչիւրը ձգտում էր, որ ԼՂՀ Գխ նախագահ դառնար իր ներկայացուցիչը: ՀՀՇ-ն ամէն կերպ ուզում էր այդ պաշտօնում տեսնել **Ռոբերտ Քոչարեանին** եւ ոչ մի բան չէր խնայում դրան հասնելու համար»:

Այդ նստաշրջանին մասնակցում էին Հայաստանից ժամանած պետական ազդեցիկ այրեր, իշխանութեան բազմաթիւ ներկայացուցիչներ, որոնց օժանդակութեամբ ՀՀՇն պիտի տիրէր ընտրութեան դաշտին: «Նրանք միջոցների միջեւ խտրութիւն չէին դնում եւ արգելքների առջեւ կանգ չէին առնում **Քոչարեանին** Արցախի Գերագոյն խորհրդի նախագահ դարձնելու համար: Եւ բնաւ զարմանալի չէ, որ ոչ մի փոխզիջման չգնացին եւ մի քանի անգամ կրկնուեց քուէարկութեան ընթացքը: ՀՀՇի անփոփոխ թեկնածու Ռոբերտ Քոչարեանը, չնայած կիրառուող բոլոր միջոցներին, անհրաժեշտ քանակութեամբ ձայներ չէր ստանում, ասելին, քիչ էր ստանում, քան Դաշնակցութեան թեկնածուն՝ **Գէորգի Պետրոսեանը»**:

*Բոլորը գերազանց էին պատկերացնում, որ մանաւանդ պատերազմական իրավիճակին իսկական առաջնորդի դերն անգնահատելի է, եւ Արցախը յատկապէս **Արթուր Մկրտչեանի** զոհուելուց յետոյ պարտաւոր է ունենալ իսկական առաջնորդ, որովհետեւ **չրջանառութեան մէջ էր եւ իր ստոր ազդեցութիւնն էր զգացնել տալիս Հոբլի ծրագիրը, որը նպատակ ունէր Հայաստանին միացնել միայն Արցախի մէկ մասը եւ դրա դիմաց Ադրբեջանին զիջել Արցախի միւս մասը՝ նաեւ հարաւային Զանգեզուրը, որով հնարաւորութիւն է տրւում Թուրքիայի եւ Ադրբեջանի ազատ, անմիջական տարածքային չփումը եւ փաստացի միաւորումը:* Սա հայակուլ մի ծրագիր էր, որի իրագործմանը միտուած էր ամենայն հաւանականութեամբ ՀՀՇն իր վարած քաղաքականութեամբ:*

Դաշնակցականները զգում էին այդ վտանգը, որ քաղաքական անկայունութիւնն անմիջաբար ազդում է դիրքերում, խրամատում կանգնած մարտիկների հոգեվիճակի վրայ եւ հրաշալի յաղթանակներին հնարաւոր է յաջորդեն խայտառակ պարտութիւններ:

Սուրէն Գրիգորեան (Սուրէն Գրիգոր). «Այդտեղ ամենաաարտառոց հանգամանքն այն էր, որ չէին կարեւորում Շահումեանի խնդիրը: Շահումեանը պատկերացնում էին Արցախից դուրս: Նոյնիսկ քննարկման ժամանակ գտնում էին, թէ Շահումեանի խնդիրը միգուցէ խանգարի Արցախի խնդրին: Եւ դրանով էր պայմանաւորուած նաեւ այն մտայնութիւնը, որ չէին ուզում Մեղրեանին հրաւիրել»: *Ի հարկէ, ՀՅԴ հրաւերով Մեղրեանը ներկայ եղաւ: Ի վերջոյ կարծէս հասկացան, որ Մեղրեանի ներկայութիւնն անհրաժեշտութիւն է, որովհետեւ թէեւ Շահումեանի չրջանը ԼՂԻՄի տարածքից դուրս է, սակայն այդ չրջանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մաս կազմելու կամք է ցուցաբերել, որն արտայայտուել է ի սկզբանէ եւ ամրագրուել է համապատասխան ժողովների որոշումներով:* «Կարելի է պատկերացնել այն անհեթեթութիւնը, որ Շահումեանի հարցը առաջադրուի եւ նրա առաջնորդը ներկայ չլինի: Դրանից ելնելով՝ պահանջուեց, որ ինքը ներկայ լինի, եւ ներկայացաւ: Այլ բան է, որ հիմնական խնդիրը չլուծուեց, այսինքն չմշակուեց յստակ մի ծրագիր, որի կէտերի իրագործումը հանդեցնէր Շահումեանի համամիացմանը ԼՂԻՄի տարածքի վրայ ստեղծուած նոր Հանրապետութեանը:

Այնտեղ եղան ելոյթներ եւ **կարեւորներից մէկը Մեղրեանի ելոյթն էր**, որտեղ նա հիմնաւորում էր, որ Շահումեանի չրջանը թէ՛ իր ազգաբանութեամբ, թէ՛ տնտեսութեամբ, թէ՛ աշխարհաքաղաքականօրէն միչտ եղել է Արցախի մաս, կազմելով մնացեալ չրջանների հետ օրգանական մէկ ամբողջութիւն, եւ միայն խորհրդային տարիներին են արհեստականօրէն անջատել միմեանցից Արցախի մասերը»: *Սուրէն Գրիգորը բառացիօրէն յիշում է Շահէնի խօսքը.* «Եթէ խնդիրներ են առաջ գալիս՝ դրանք պիտի միասնաբար լուծենք: Այստեղ անձի, Մեղրեանի

խնդիրը չէ, այլ երկրի տարածքների միաւորման, որ ժամանակին կանխամտածուած կերպով Շահումեանը դուրս է բերուել Արցախի կազմից: **Անխոհեմ վարքով հաստատուել ու արդարացուել է միայն 1920 թուականի ապօրինի եւ հակահայկական որոշումը»:**

Պօղոս Մեղրեան. «Բուն ընտրութիւնը քաղաքական մի երեւոյթ է, որով մենք այնքան էլ շատ չենք հետաքրքրուել, քանզի մենք համակուած ենք եղել մարտական գործողութիւններով եւ քաղաքականութեամբ չենք հետաքրքրուել: **Սակայն Շահէնին խանգարող գլխաւոր գործօնը ոչ թէ Արցախից էր, այլ Հայաստանից:**

Ընդհանրապէս, մինչեւ չարժումն սկսուելը Շահէնը պաշտօնի վազող տղայ չի եղել: Ինչ աշխատանքի էլ որ դրել են, ուր որ ուղարկել են՝ գնացել է եւ մարդկանց ակնկալութիւնները արդարացրել է:

Ինչ մնում է կուսակցականութեանը, Շահումեանում բացի ՀՅԴ-ից այլ կուսակցութիւն չի եղել: Առաջին ջոկատը, որ եկել է Շահումեան, ես եմ ընդունել, ինչպէս եւ բոլոր ջոկատները: Էն ժամանակ ոչ մի կուսակցութիւն չէր մտածում, թէ Շահումեան կայ, կամ Գետաշէն կայ, կամ Ղարաբաղ կայ»:

*Շահումեանն այն ժամանակ ոչ թէ ծայրամասային, այլ երկրի ռազմավարական լրջագոյն խնդիր էր, որը պիտի ներառէին ռազմաքաղաքական ծրագրերի մէջ, որպէսզի թոյլ չտրուէր տեղի ունենար այն, ինչ եղաւ հետագայում: Վճռորոշ պահին Շահումեանն էական օգնութիւն չստացաւ ո՛չ ՀՀ-ից, ո՛չ Արցախից: Արդիւնքն այսօրուայ՝ հայերից դատարկուած եւ Ադրբեջանին բռնակցուած Շահումեանն է: **Փաստօրէն Հոբելի տխրահռչակ ծրագիրը գործողութեան մէջ էր եւ ըստ այդ ծրագրի լուրջ աշխատանք էին տանում կազմալուծելու բանակը Շահումեանում, կոտրելու ժողովրդի ոգին, նրա մէջ արմատաւորելու պարտուողի հոգեբանութիւն, վախ:** Ամերիկեան քանդիչ հզօր մեքենան գործում էր եւ դրան, որքան էլ տարօրինակ է, նպաստում էր ռուսների ներկայութիւնը, որոնք էլ գործում էին ի վնաս հայերի, յօգուտ Ադրբեջանի ամբող-*

*ջատիրութեան: Ահա այսպիսի պայմաններում չատ կարեւոր էր Մեղրեանի կամային դրսեւորումները: **Իր դիւանագիտական գործունէութեամբ՝ Մեղրեանը ձգտում էր հասնել այն բանին, որ Շահումեանի խնդիրը չառանձնացուի Արցախի խնդրից**: Հայաստանի եւ Արցախի մէջ այնպիսի գործունէութիւն չծաւալուեց, որպէսզի ժողովրդի գիտակցութեան մէջ Շահումեանը եւ Արցախը դիտուէր որպէս մէկ ամբողջութիւն: Նոյնիսկ **Կրպէեանի**, **Աչիգէօզեանի** եւ իրենց զինակից ընկերների հերոսական ոգու դրսեւորումներն անկարող էին քանդիչ մեքենայի դէմն առնելու, քանզի ժողովուրդը հիմնականում կրաւորական էր եւ իր ինքնապաշտպանական բնազդ-մեխանիզմների մէջ չէր կարողանում դրսեւորել իր երկրին տէր կանգնելու անհրաժեշտ կամք:*

*Մեղրեանը նախ ազգային գործիչ էր, քանզի քաղաքականութիւնը ծառայեցնում էր ազգային շահերին: Նա կարողացել էր խորապէս ըմբռնել **խնդրի նաեւ իրաւական կողմը**, հասկանալով, որ Ադրբեջանն Արցախին իրաւայաջորդ լինել չէր կարող եւ որեւէ իրաւունք չուներ Շահումեանի նկատմամբ:*

***Շահէն Մեղրեանը Նժդեհեան ոգու եւ մտածելակերպի զինուորական էր, որը հաշուի չէր նստում այն հանգամանքի հետ, թէ ով է իր դէմ կանգնած.** եթէ թշնամի կայ՝ ինքը պիտի պայքարի նրա դէմ:*

Գլուխ տասներկուերորդ
92 ԹՈՒԱԿԱՆ, ՅՈՒՆԻՍԻ 13, ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Անկատար նպատակ. իրադարձութիւնների կտրուկ շրջադարձ

Շահումեանի կորուստը մեծ ողբերգութիւն է, սակայն սե-րունդները պիտի իմանան իրադարձութիւնների ստոյգ ընթաց-քը եւ այն, թէ շրջանը պատրա՞ստ էր ինքնապաշտպանութեան:

*1992 թուականի ամառային հիմնական իրադարձութեան նախօրէին Շահումեանում էին հաւաքուել Դաշնակցութեան մարտունակ ուժերը, որոնք տեղի ջոկատների հետ միասին անձկութեամբ սպասում էին հրամանատարութեան հրահան-գին սկսելու **Գետաշէնի եւ Մարտունաշէնի** ազատագրման գործողութիւնը: Կարելի է կռահել, թէ ինչպիսի ոգեւորութիւն էր տիրում ռազմիկների շրջանում եւ որքան մեծ էր այն բնակավայրերի վերաղարձման յոյսը, որոնք երբեք թուրքերին չեն պատկանել: Մի քանի ամիս առաջ ազատագրուած երեք գիւղերը լիովին պատրաստ էին ինքնապաշտպանութեան, եթէ նրանց դէմ լինէր միայն դարաւոր թշնամին եւ ոչ թէ խորհրդային բանակի ահռելի զինուժը: Շուշին, Լաչինը եւ Լաչինի շրջանը նոր էին ազատագրուել եւ հոգեցնծութեան մէջ գտնուող մարդկանց երեւակայութեան մէջ հեշտութեամբ մտապատկերւում էր ազատագրուած Գետաշէնն ու Մարտունաշէնը: Ակնկալուող այդ գործողութեան յաջո-ղութեան պարագային հայկական ռազմական ուժերն ուղղակի արդէն նշանառութեան տակ կը պահէին մերձակայ դաշտա-վայրերը եւ կարող էին սպառնալ հայոց հինաւուրց քաղաք Գանձակին, որը ներկայումս դարձել էր հակահայկակա-նութեան առաջնային ֆորտպոստը: Շատ երիտասարդներ էին երազում մասնակցել հայոց բնակավայրերի ազատագրման գործողութեանը, իսկ **Կարօտ Մկրտչեանն** ամբողջ Պուճեանի առջեւ ուխտել էր տուն չվերադառնալ, մինչեւ Գետաշէնը չազատագրեն:*

Շահումեանում մանրագնին մշակուած էր Գետաչէնի եւ Մարտունաչէնի ազատագրման գրոհային գործողութիւնը, ընտրուած էին մասնակիցներն ու հրամանատարները, որոշուած էին յարձակման ուղղութիւնները: Գործողութիւնն սկսելու հրամանը, սակայն, ձգձգւում էր, եւ անհամբերութիւնից նեղւում էին ազատամարտիկները: Նրանց համար պարզաբանուած չէր տարածաշրջանում դերակատար երկրների նկրտումները եւ չգիտէին, թէ հակառակորդը ինչ է ապատրաստւում անել: Արցախեան բարձրագոյն հրամանատարութիւնը բաւարար տեղեկատուութիւն ունէ՞ր հակառակորդի մօտ կատարուող տեղաշարժերից, դրա մասին միայն կռահումներ կարող ենք անել:

Յունիսի 1-ին ադրբեջանական Շեֆեկ ռազմակայանից վերսկսուել էր Շահումեանի շրջանի Կարաչինար գիւղի հրետակոծումը. գիւղի վրայ արձակուել էր 120 հրթիռ...

Ստացւում էին տեղեկութիւններ այն մասին, որ հակառակորդը կուտակւում է էրքէջ եւ Բուզլուխ գիւղերի շրջակայքում...

...Յունիսի 12-ին ամփոփւում են հետախուզական տուեալները (մեր կողմից) «Գետաչէն» գործողութիւնն սկսելու համար: Եւ ի վերջոյ, երբ յստակ էր, թէ երբ են սկսելու գործողութիւնը, թշնամին կանխում է մեզ եւ ինքն է առաջինն անցնում լայնածաւալ յարձակման՝ տրամադրութեան տակ ունենալով հսկայական զինուժ, մարդուժ եւ տեխնիկա:

Իրադարձութեան վերաբերեալ Գխի կազմած Շահումեանի յանձնման պատճառները հետաքննող յանձնաժողովի նիստին հանդէս է եկել ***Շահէն Մեղրեանը****: Շատերի հետ ենք առիթ ունեցել զրուցելու Շահումեանի անկման մասին եւ այլեւայլ կարծիքներ, տեսակէտներ են արտայայտուել եւ նոյնիսկ վերլուծական յօդուածներ են գրուել, սակայն խնդիրն ու համապատկերը Շահէն Մեղրեանից աւելի խորը եւ ամբողջական ոչ մէկն է պատկերացրել եւ ներկայացրել:*

Յունիսի 9-ին եւ 11-ին եօթ հոգուց կազմուած մեր հետախուզական խումբը մտել է Գետաչէն եւ հետախուզել այդ

*ամբողջ շրջանը՝ առաջիկայ գործողութիւնն անցկացնելու համար: Ոչ մի արտակարգ փոփոխութիւն թուրքերի դիրքերում եւ նրանց ուժերում չի նկատուել: Նոյն ամսուայ 12-ին նշանակուած էր արդէն վերջին պատրաստութիւնը Գետաշէնի ազատագրման գործողութիւնն սկսելու: Եւ այդ վերջին նախապատրաստութեան ստուգման համար հաւաքուեցին ռազմական խորհրդի անդամները եւ ջոկատների հրամանատարները: Նախորդ օրերի հետախուզութիւնն, ասացինք արտակարգ ոչ մի բան չէր յատնաբերել, բայց երեկոյեան ժամը 21.00-ին, երբ արդէն **Վլադիմիր Կարապետեանը** վերադարձել էր եւ **Մեղրեանի** հետ միասին գտնուում էր շտաբում, ստացան առաջին ահազանգը, որ Գետաշէնի կողմից բաւականին երկար շարասիւն է գալիս եւ, հաւանաբար, տանկեր էլ կան: 15 րոպէ յետոյ երկրորդ ազդանշանն ստացան էրքէյից, որ Գիւրզալար գիւղի ճորից դէպի Թողան է բարձրանում արդէն ստոյգ տանկերի շարասիւն: Քիչ անց այդպիսի տեղեկութիւն ստացան Թալիշից, որ Ինջի գետի մօտակայքում մօտ քսան միաւոր տեխնիկա է կանգնած դէպի մեր պահակակէտերի ուղղութեամբ, ի միջի այլոց Թալիշի ինֆորմացիան ստացան Մարտակերտի ռազմական շտաբի միջոցով: Ստանալով այդպիսի տեղեկութիւններ, իսկոյն բոլորին ոտքի հանեցին եւ տուեցին թիւ մէկ հրամանը, պաշտպանական մարտեր մղելու համար: Վաղ առաւօտեան թուրքերն անցան յարձակման: **Երեկոյեան ժամը 9.00-ից մինչեւ առաւօտեան ժամը 5.10-ը՝ այդքան ժամանակ են ունեցել որեւէ բան ձեռնարկելու համար:***

Գանձակում տեղադրուած խորհրդային **Զորրորդ բանակի երկրորդ դիւիզիան** փաստօրէն անցել էր թուրքերի տրամադրութեան տակ: Մինչ այդ էլ՝ Ռուսաստանի Դաշնութիւնից Ադրբեջանին էին յանձնել հարիւրաւոր տանկեր եւ հետեւակի մարտական մեքենաներ, հրանօթային համակարգեր եւ ականանետեր, մեծաթիւ «Գրադ» կայանքներ, ռազմական ուղղաթիռներ, ռմբակոծիչներ, Մի-8 տեսակի ռազմական ինքնաթիռներ, տասնեակ հազարաւոր ինքնաձիգներ, գնդացիրներ եւ այլն: Նրանք ոչ միայն զինուժ են ձեռք բերել, այլեւ բարձ-

1992 թուական. ԼՂՀ ԳԽ Յունիսեան նստաշրջանը.
Հայասանից պատվիրակութեան անդամներ՝ Վազգէն Սարգսեանը,
Բագրատ Ասատրեանը, Աշոտ Նավասարդեանը,
հետին պլանում Շահէն Մեղրեանը եւ Կիմ Բալաեանը



ԼՂՀ ԳԽ նստաշրջան.
Լեւոն Մելիք-Շահնազարեանը, Կուճուր Շահէնը, Մեծն Շահէնը,
1992 թ., Յունիսեան նստաշրջան

1992 թուական. ԼՂՀ ԳԽ Յունիսեան նստաշրջանը

ՀՅԴ Ընդհանուր ժողովը Ֆրանսիայում. Շահէնը,
Վահան Յովհաննիսեանը, ֆրանսահայ մի ընկեր,
Ռուբէն Յովսէփեանը, Հրայր Կարապետեանը, 1992 թ., սեպտեմբեր



1992 թ., յուլիս. Շահէն Մեղրեանի մամլոյ ասուլիսը



Վազգէն Սարգսեանի գրութիւնը Շահէն Մեղրեանին, յունիսի 25, 1992

Հայդուկային զօրամասը Երեւանից ուղեւորւում է «Եղնիկներ»

Ջոկատը թռչում է «Եղնիկներ»

«Սպիտակ Արջի» մարտիկները մեկնում են «Եղնիկներ»

Ռազմագիտական խորհրդակցութիւն զորամասում

Ռազմատնակի կառուցման սկիզբը

Ռազմակայանի կառուցումը



Հայդուկային ռազմակայանի հիմնումը

Ճաշի պատրաստութիւն
/Սաշա Կուրեպին, Վանիկ Ասլանեան, Շահէն Սեյրանեան/

Օպերատոր Յակոբ Պօղոսեանը լաւաշ է թխում

Կուրեպին Սաշան լողացնում է Յակոբ Պողոսեանին

Ճաշի համտեսումը

Հայդուկային երթ

Ծնկածածկ ձիւնը ճեղքելով /Եղակեր-Սարսանգ ճանապարհին

Դադար

Մռովի փեշին

Մարտադաշտի ճամփին

Ջուրն հայրենեաց

Գետանցում

Հայկ Մեղրեանը գետն անցնելիս

Թալիշեցի Անդոն



Շուրա /Վանիա/ Գզիրեանը

Հասարակ մի այր չէ, այլ՝ Ֆեդօ Գզիրեանը



Բժիշկ Սմբատ Ջամալեանը

Բժշկուհին /Արմինէ Նալբանդեան/ օգնականի հետ

Մելսիդան «Տիգրան Մեծ»-ից

Բժիշկ Գէորգը եւ ընկերները



բակարդ ռազմագէտ մասնագէտներ, գրոհային հրամանատար-ներ եւ տեխնիկան գործադրողներ, այսինքն՝ բարձրակարգ անձնակազմ: Արցախին առանձնակի մեծ չափերով վնաս հասցրին այսպէս կոչուած սլաւոն օդաչուները երկնքից եւ դիպուկահարները, հրասայլորդներն ու հրետանաւորները՝ երկրի վրայ: Սլաւոն բառացի նշանակում է ուղղափառ, սա-կայն խորհրդային զօրքի մէջ ուղղափառութիւնից նշոյլներ չեն մնացել, այլապէս 20-րդ դարավերջին այս էլ երկրորդ անգամ Հայաստանին ու հայութեանը՝ իրենց «ռազմավարական դաշնակցին» չէին կանգնեցնի կործանման եզրին: Առաջին անգամ նրանք արհեստական երկրաշարժով հողին հաւասա-րեցրին Հայաստանի մի քանի մարզեր եւ խլեցին մի քանի տասնեակ հազար /եթէ ոչ աւելի/ մարդկանց կեանք, էլ աւելի մեծ թիւով դարձնելով հաշմանդամներ, անբուժելի հիւանդներ: Զմոռանանք Առաջին Աշխարհամարտի աւարտական շրջանը, երբ պարտութիւն կրած թշնամին՝ Արեւելքի ոստիկանը չուներ փչելու վրայ էր եւ Ռուսաստանն իր զօրքերը հանեց ռազմա-ճակատից եւ պատերազմում անասելի կորուստներ կրած հայ զօրքերն այլեւս անկարող էին փակել հսկայական ռազ-մաճակատը: Այնպէս որ պիտի հաւատալ միայն Աստծուն եւ ոչ թէ մարդուն եւ յատկապէս նոր ժամանակաշրջանի պե-տութիւններին: Ինչեւէ, օգտագործելով նաեւ ռուսական բանակի ռազմավարութեան եւ մարտավարութեան ամբողջ զինանոցը, թուրքերը յարձակման անցան՝ առաջապահ ունենալով հէնց սլաւոն ռազմիկներին:

Պատմական ակնարկներից էլ տեսանք, որ հայերս հազուադէպ ենք մենակ, դէմ առ դէմ առճակատուել մեր թշնամուն. մենք միշտ ունեցել ենք յաճախ մէկից աւելի հա-կառակորդներ, եւ սա մեր տարածաշրջանի բնոյթից է բխում: Յաւօք, այս անգամ մեր դէմ էին նաեւ մեր «դարաւոր բա-րեկամները», որոնց դէմ կռուելը կապուած էր հոգեբանական բարդոյթների յաղթահարման հետ: Շահումեանի հրամանա-տարութիւնն, ինչպէս արդէն նշել ենք, բնականաբար չէր ուզում ռուսների հետ խնդիր ունենալ եւ մինչ 92-ի յունիսը

միշտ հրահանգներ է տուել սլաւոններին թշնամու տեղ չդնել եւ չկռուել նրանց դէմ: ժամանակաշրջանի բարդութիւնը դրդել էր խորհրդային զօրքի ռուս զինուորին կռուելու իր բնական եւ յաւէրժական դաշնակցի դէմ եւ ջուր լցնելու նաեւ Ռուսաստանի հակառակորդ միջազգային ուժերի ջրաղացին, որոնք այս պարագային գործում էին ***Հոբելի*** *նախագծած ծրագրով: Յատկանշական, խորհրդային բանակի այդ ճախաւէր գիծը չարունակուեց այնքան ակնյայտ կերպով, որ Ռուսաստանի Գին պատգամաւոր* ***Անատոլի Շաբադը*** *1992 թուականի յունուարի 17-ին ելոյթ ունենալով հայկական հեռուստատեսութեամբ, դառնացած եւ զարմացած ասում է. «Ամբողջ Ղարաբաղն է յարձակման ենթարկւում, բայց Շահումեանի դէմ, իմ կարծիքով, գործում է խորհրդային բանակը»: Իրար միացած եւ մեր դէմ ելած հակառակորդների մարդուժի եւ ռազմուժի անհամեմատ մեծութեանը գումարւում էր ուժեղի հոգեբանական գերազանցութիւնը դեռեւս լիովին չկազմակերպուած հայոց բանակի համեմատ:*

Յունիսի 13-ին հակառակորդը յարձակւում է 25-րդ, 29-րդ, 16-րդ հենակէտերի վրայ... Օգնութիւն են խնդրում Հայ Պարիսը, 16-րդ հենակէտը... Հակառակորդը գրաւում է էրքէչի հակակարկտային բարձունքները... Նոյն օրը, ժամը 8.00-ին սկսւում է օդային յարձակումը չրջկենտրոնի եւ Բուզլուխի վրայ: Ժամը 16-ին հրաւիրւում է ինքնապաշտպանութեան խորհրդի կարճ խորհրդակցութիւն, որը որոշում է՝ որքան հնարաւոր է բնակիչների անվնաս դուրս բերումը ռազմական գործողութիւնների գօտուց: Այլ հնարաւորութիւն չկար եւ ժողովուրդը կարող էր պարզապէս վերածումը կրաւորական նահատակութեան նոր օրինակի:

Ժ. 23.00-ին Շահումեանի չրջանի իրավիճակի մասին զեկուցւում է ***Վազգէն Սարգսեանին****: Սարգսեանն ասում է, թէ տեղեակ է իրավիճակին եւ յորդորում է սպասել մինչեւ առաւօտ, մինչ օգնութիւն լինի ԼՂՀից:*

Մօտ 15 հազար մարդ էր հաւաքուած Գիւլիստանում: Գիչերը որոշուեց տարհանել նաեւ Վերին Շէնի բնակիչներին:

*Սկսուեց նաեւ Գիւլիստանի ռմբակոծութիւնը (4.00-ին): Ժ. 8.00-ից սկսուեց ողջ ժողովրդի տարհանումը /էվակուացիա/՝ Հաթերքի ուղղութեամբ: Ժողովրդի մէջ խուճապ էր: Վերջում դուրս եկան զինեալ ջոկատները: Օգնութիւն չեղաւ: Զրահատեխնիկան՝ Տանկը «Գրադ» կայանքը, զրահատանկային մեքենաները հանուեցին: Զինամթերքի պահեստները պայթեցուեցին, իսկ մի պահեստ ականապատուեց: ԼՂՀ պաշտպանութեան նախարարութեան կողմից Շահումեանի ջոկատները զինաթափուեցին: Շահումեանի շտաբը **Շահէն Մեղրեանի գլխաւորութեամբ որոշում է պայքարը շարունակել պարտիզանական պատերազմի եղանակով:***

*Նոյն օրը Երեւանում ժ. 17.00-ին ՀՅԴ հրաւիրած հանրահաւաքին քննարկւում էին ներկայ իշխանութիւնների վարած քաղաքականութեան հետեւանքները: Թշնամին գրաւել էր արդէն Կիչան, Սրխաւենդ գիւղերը: ՀՀ նախագահ **Լ. Տէր-Պետրոսեանը** /կամայ թէ ակամայ/ հանդէս եկաւ պաշտօնական յայտարարութեամբ, որով դատապարտեց Ադրբեջանի կատարած գործողութիւնները, համաշխարհային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեց ԼՂՀի վրայ լայնածաւալ յարձակումը կանգնեցնելու եւ նոր մարդկային զոհերից ու աւերածութիւններից խուսափելու համար:*

Յունիսի 14-ին «Սու-25» ինքնաթիռից քիմիական նիւթեր պարունակող ռումբեր էին նետում Շահումեանի վրայ, 10-ից աւելի մարդ թունաւորման նշաններով տեղափոխւում է հիւանդանոց: Քիմիական զէնքի գործադրումից առաւել տուժում են Բուզլուխի բնակիչները (ՀՀ, թիւ 116, 92 թ.): Նոյն օրը ադրբեջանական բանակը շարժւում եւ գրաւում է Շահումեանի շրջանի գրեթէ բոլոր գիւղերը, բացառութեամբ Գիւլիստանի...

«Գրադ» կայանքից հրթիռակոծւում են Մարտակերտի շրջանի Զայլու եւ Թալիշ գիւղերը, որտեղ կենտրոնացուած էին Շահումեանի շրջանի մեծ թուով բնակիչներ:

Մարտական խմբերը մինչեւ վերջին հնարաւորութիւնը դիմադրել են: Հրամանով նահանջել են բոլորը եւ շրջապատու-

միջ դուրս են եկել Մանաշիդում, էրքէչում: Մանաշիդում, Բուզլուխը գրաւելուց եւ էրքէչ մտնելուց, Հայ Պարիսը գրաւելուց յետոյ, տեղի ջոկատը, «Մեծն Տիգրան» ջոկատը եւ այնտեղ գտնուող վերինչէնցիների ջոկատը մնացել են շրջապատման մէջ: Հրամանով նրանց հանել են այնտեղից: Ոչ թէ նրանք նահանջել են, այլ դուրս են եկել հրամանով: Կարաչինարում ջոկատները կռուել են մինչեւ վերջ, մինչեւ որ բնակչութիւնը դուրս է եկել եւ նոր միայն գիշերը, մթութեան մէջ կարողացել են հեռանալ, իւ հարկէ կորուստներով:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԷԿՆՈՒԹԻՒՆԸ ՀԱԹԵՐՔՈՒՄ

Շահումեանի անկումը մի հասարակ բնակավայրի ժամանակաւոր կորուստ չէր, այդ պատճառով իրադարձութիւնից ընդամէնը մի քանի օր անց՝ յունիսի 20-ին Շահումեանի հրամանատարութիւնը եւ շտաբը Հաթերքում կայացած մի հարցազրոյցի ընթացքին համակողմանի լուսաբանում է շրջանի կորստեան պատկերն ու պատճառները: Պահպանուել է այդ հարցազրոյցի ամբողջ բովանդակութիւնը՝ տեսաֆիլմով եւ իւրաքանչիւրը կարող է ցանկութեան պարագային այն դիտել: Ահա մի քանի հրամանատարների խօսքերի սղագրութիւնը:

Շահէն Մեղրեան. *«Ամբողջ շրջանը փաստօրէն լցուած էր զրահատեխնիկայով: Տարբեր տեղերից մեզ էին հասնում տարբեր տեղեկութիւններ, մինչեւ որ եղան առաջին զոհերը: Արդէն պարզ էր, որ Բուզլուխի ուղղութեամբ դէպի մեր դիրքերն են բարձրանում 25-30 տանկ: **Սերգէյը** կապուեց եւ ասաց, որ կազմակերպում են պաշտպանութիւն եւ խնդրեց, որ երկրորդ ԲՄՊՆ ուղարկենք Բուզլուխ, քանզի առաջինի մէջ անսարքութիւն է ի յայտ եկել: Եւ մեր միակ ԲՄՊՆ ուղարկեցինք Բուզլուխ, որպէսզի 29-ը դիրքը շրջապատման մէջ չնկնի:*

*Արդէն թշնամու կողմից սկսուել էր համատարած հրակոծումը եւ բոլոր տեղերից օգնութիւն էին խնդրում: Ամէնից թոյլ տեղը էրքէչի եւ Հայ Պարիսի արանքում էր եւ տանկն ուղարկեցինք այնտեղ: **Ցակոբի** գնալուց յետոյ Հայ Պարիսից զանգեցին, որ տանկերը շրջանցումեն մեր դիրքերը եւ այդ ուղ-*

ղուխեամբ փորձում են մտնել բնակավայրերը: Մինչ այդ՝ տղաները սկսել էին վերանորոգել Բուզլուխից բերուած ԲՄՊ-2-ը: Տղաները քանդեցին հրանօթը, արագ մաքրեցին, խափանուած մասերը փոխեցին եւ անձնակազմով ուղարկեցինք ճանապարհը փակելու: ԲՄՊի անձնակազմը հերոսական գործ արեց՝ խփելով 1 տանկ, «Գրադի» 1 կայանք եւ ընդհանուր թուով 5 զրահատեխնիկա: Անձնակազմը թշնամու 15 տանկերի դէմ ուղղակի ակրոբատ մարզիկի նման աշխատում էր:

Մինչ այդ՝ Թալիշից տեղեկութիւն ստացանք, որ 15 տանկ փակել են Թալիշի ճանապարհը՝ փակելով բոլոր ուղիները: Չէինք ուզում հաւատալ, որ այդչափ տեխնիկայով մեզ բոլոր ուղղութիւններով կտրել են, որ Ադրբեջանն այդքան հնարաւորութիւններ ունի: Յամենայն դէպս կապուեցինք Կարաչինարի հետ, որպէսզի լրացուցիչ ուժեր ուղարկեն Հայ Պարիսի թոյլ կէտը: Յատուկ Գունդը 30 հոգի ուղարկեց: Մեր տեւալները հաստատուեցին, որ երկու ուղղութեամբ տանկերը չարժւում են՝ մէկը՝ դէպի 12-րդ, միւսը՝ դէպի 17-րդ դիրքերը: Յետոյ տեղեկացանք, որ մի քանի տանկ արդէն մտնում են Մանաչիդ: Այնուհետեւ հաստատուեց, որ տանկերը մտնում են Բուզլուխ եւ բնակչութիւնը վտանգուած է: Զգալով, որ այդքան տեխնիկայի, ուժերի դէմ հնարաւոր չէ նորմալ դիմադրութիւն կազմակերպել, մեր ուժերն անհամեմատ նուազ են, որոշում հանեցինք՝ բնակչութեանը դուրս բերել: Մինչ այդ՝ մեր նշանառուն մի տանկ էր խփել, չարքից հանել եւ ժողովուրդը կածանով սկսեց դուրս գալ:

Շարժուելով դէպի Գիւլիստան՝ մենք որոշեցինք պաշտպանական երկրորդ գիծը ստեղծել Վերին Շէնի տարածքում՝ Շամփրապատուկ բարձունքին առընթեր: Շատ անգամ խնդրեցինք Ղարաբաղից եւ Հայաստանից գոնէ փոքր-ինչ օգնութիւն ցուցաբերել, գոնէ ժողովրդի եւ մարտիկների ոգին բարձրացնելու համար, որ իրենք մենակ չեն, սակայն որեւէ կերպ օգնութիւն չեղաւ: Այս ամէնի միակ դրականն այն էր, որ ժողովուրդը յարաբերաբար անվնաս դուրս եկաւ: Ամբողջ ազգաբնակչութեանը կոտորելու թուրքերի մտադրութիւնն ակնյայտ էր,

որովհետեւ նրանք որեւէ հնարաւորութիւն չէին թողել մեզ նահանջելու, այսպէս կոչուած մարդասիրական միջանցք, ինչպիսին մենք ընձեռնեցինք նրանց Շուշիում եւ Լաչինում: Այստեղ նման բան չեղաւ եւ եթէ փոքր-ինչ յապաղէինք, ոչ ոք չէր փրկուի: Լաւ թէ վատ՝ ժողովրդին հանեցինք: Մենակութեան զգացումը, որ որեւէ տեղից օգնութեան յոյս չկայ՝ ժողովրդի մէջ անկումային տրամադրութիւն էր առաջացրել:

Զգիտեմ այս հարցում ում են մեղադրում, այդպիսի պայմաններում մեր շրջանը թշնամու դէմ կռուել չէր կարող»:

***Սերգէյ Զալեան**, Շահումեանի ինքնապաշտպանութեան ուժերի շտաբի պետ.-* «Գիտէք որ մենք պատրաստւում էինք Գետաչէնի ազատագրման գործողութեանը: Ամէն ինչ ծրագրուած էր եւ ամսի 11-ին ես բոլոր հրամանատարներին, ովքեր պիտի մասնակցէին այդ գործողութեանը հաւաքեցի խորհրդակցութեան: Ստացանք լրիւ հանդերձանքը եւ զէնք-զինամթերքը: Ամսի 12-ի երեկոյեան ես գնացի Մանաչիդ եւ Բուզլուխ գիւղերը, որտեղ գրոհային խմբերն էին: Նրանց ստուգեցի հէնց տեղում՝ Մանաչիդում: Մնացել էր դեռեւս մի հարց. պիտի ականազերծուէր ճանապարհի մի հատուած, որտեղից մեր տանկը պիտի դուրս գար: Ես այդ հատուածում Կարաչինարի ուղղութեան հրամանատար **Նովիկ Գիւլումեանին** ցոյց տուեցի, թէ ինչպէս պիտի ականազերծել ճանապարհը եւ ինքս էլ ականազերծեցի: Երեկոյեան ժամը 11-ին ուղղուեցի դէպի Բուզլուխ: Բուզլուխում ինձ տեղեկացրին, որ տեղի են ունենում տեխնիկայի մեծ կուտակումներ՝ Սարիսուից դէպի մեր 25-դիրքը: Ես Բուզլուխից նորից զանգեցի Մանաչիդ եւ Նովիկին ասացի, որ նա նորից ականապատի ճանապարհը: Քիչ անց նա ինձ զանգեց եւ ասաց, որ գործը կատարուած է: Ես չգիտեմ՝ ո՞րտեղից են տարածուել այդ չշուկները՝ ճանապարհներն ականազերծելու մասին:

Ժամը 1-ին ես վերադարձել եմ շտաբ եւ ուժեղացրել բոլոր դիրքերը: Գրոհային այն խմբերը, որ պիտի մասնակցէին գործողութեանը՝ եղել են հէնց դիրքերում: Առաւօտեան կողմ զան-

գահարել եւ հաղորդել են, որ 25-րդ դիրքի վրայ թուրքերը յարձակուել են: Ես հրամայեցի, որ տեխնիկան գնայ այդ դիրքը եւ ես էլ իսկոյն դուրս եմ եկել եւ մեկնել այնտեղ: Երբ տեղ հասայ, ինձ ուղղակի զեկուցեցին, որ բոլորը դիրքերի վրայ են եւ փոխհրաձգութիւն է ընթանում թուրքերի եւ 25-րդ դիրքի միջեւ: Թուրքերն այդ դիրքի վրայ գրոհել են 4 տանկերի աջակցութեամբ: Մեր տարածքից այդ դիրքի վրայ տեխնիկայ չէր բարձրանում, իսկ թուրքերի կողմից երկու տանկ գրոհում էին, իսկ երկուսը՝ տեղից կրակով ապահովում նրանց տեղաշարժը: Այդ դիրքը տղաները պահել են 4-5 ժամ:

Դրանից յետոյ, երբ այդ դիրքից իջանք Նովիկի մօտ, մեկ ժամից զեկուցեցին, որ այդ դիրքերը յանձնուել են: Իսկ դիրքը յանձնելուից յետոյ մեր տղաները միայն 30 մետր են խորացել անտառի մէջ: Ադրբեջանցիները վերցրել են այդ դիրքը, իսկ մեր տեխնիկան խափանուել է եւ ես ուղարկել եմ ետ՝ Շահումեան, որպէսզի նորոգեն: Խափանումը վերացրել են եւ այնտեղ խփել են հակառակորդի 5 միաւոր զրահատեխնիկա, այդ թուում՝ 1 տանկ եւ 1 «Գրադ» կայանք:

Երբ վերցրել են 25-ի մեր դիրքը, ովքեր ծանօթ են տեղանքին՝ գիտեն, որ դա ամենաբարձր կէտն է, որի գրաւումից յետոյ սկսել են արկահարել մեր բոլոր դիրքերը: Ես հրահանգ եմ տուել այդտեղի դիրքապահ գետաչէնցիներին, որպէսզի նրանք նահանջեն անտառ: Թուքերը վերցրել էին նաեւ կողքի 17-րդ դիրքը, իսկ դա նշանակում է, որ նրանք կրակում էին ե՛ւ առջեւից, ե՛ւ ետեւից, եւ այդտեղ ոչինչ կարելի չէր անել, քանզի թուրքերը խփում էին 2 կիլոմետրից, որտեղից նշանառութեան լաւ կէտեր են դառնում ամէն ինչ, բայց ոչ հրաձգային զէնքերի համար: Մեր տանկի աջակցութեամբ տղաները նահանջել են Բուզլուխ: Զրահատեխնիկայի մեր մարտապաշարը 50 արկ էր եւ եթէ զրահատեխնիկան աշխատում է 5 ժամ, նշանակում է այնտեղ ոչինչ չի մնացել: Եւ արկերը հեռուից բերում էին ու տեղում լիցքաւորում:

Տանկերը եւ «Գրադ» կայանքները հրահեղեղ էին թափում ամենուր, ես կարող եմ հաստատել, որ գիւղի վրայ միանգամից

6 կայանք էին աշխատում, ամէն մի դիրքի վրայ 2-3 համազարկ էին տալիս եւ մեր բախտը բերեց, որ մնացինք անվնաս: Ժամը 1-ին ես հրաման տուեցի նահանջել գիւղ: Դրանից յետոյ տանկերն ու «Գրադը» հասել են բարձունքի կատար եւ այլեւս չրջակայ տարածքում մի կէտ չկար, որ չհսանէր նրանց կրակը: Մեր գիւղ նահանջելուց յետոյ սկսել են արկահարել գիւղը: Մենք ի վիճակի չենք եղել վերցնել դիակները եւ անտառով տղաները նահանջել են: Վերջին պահին զեկուցել են, որ տեխնիկան մտնում է Մանաչիդ: Գիւղի վրայ են դուրս եկել միանգամից 12 տանկ: Ականի վրայ մի տանկ է պայթել, եւ անտեսելով այդ՝ ասում են, թէ իբր տանկերն անցել են անարգել: Այդ 12 տանկերը չեն մտել Մանաչիդ, այլ շրջանցելով՝ ուղղուել են դէպի Հայ Պարիս: Մեր տանկն այնտեղից արձակել է միայն 4 արկ եւ խփել է հակառակորդի մէկ տանկ: Այդտեղ էլ մեր նշանաձիգը ծանր վիրաւորուել է: Եւ երբ դրանք գնացել են Հայ Պարիսի վրայ՝ այնտեղ տղաները հոգեբանօրէն բնականաբար պատրաստ չեն եղել, եւ բացի այդ՝ տանկերի այդ արմադայի դէմ 4 նռնականձիգներով ի՞նչ պիտի անէին, քանզի անվտանգ հեռաւորութիւնից մօտաւորապէս 20 տանկ աջակցում էին գրոհողներին: Դա շատ լաւ մարտավարութիւն էր եւ ամէն ինչից զգացւում էր, որ գործում են բարձրակարգ արհեստավարժներ:

Երբ նրանք վերցրին Հայ Պարիսը՝ Մանաչիդ-Էրքեչի տղաները մնացին շրջափակման մէջ: Այնտեղ կար միայն մի ելք, որ մեր տանկը աջակցի մեր տղաներին: Սակայն երբ տանկը խափանուեց՝ ես հրահանգեցի մանաչիդցիներին անտառով նահանջել: Եթէ ես 20 րոպէ ուշ տայի հրամանը, Մանաչիդից դուրս չէր գայ ոչ մի մարդ, իսկ այնտեղ եղել են մօտ 80 մարդ: Արդէն բարձունքն իրենց ձեռքին էր եւ եթէ աշխատէին միայն Գրադով՝ Մանաչիդից բան չէր մնայ:

Մենք պաշտպանական երկրորդ գօտին բռնեցինք Շամփրապատուկ բարձունքի մօտ: Ես ետ դարձայ այնտեղ, տուեցի հրաման, որ պաշտպանական դիրքեր ընդունեն: Մենք թողել էինք Բուզլուխը եւ մերձակայ Ջամբազ բարձունքը, որտեղից նոյն մեթոդով կրակէ հեղեղ էին թափում: Մենք որեւէ

տեղից այլեւս որեւէ տեղեկութիւն չունէինք, չգիտէի, թէ մնացեալ տեղերում ի՛նչ է կատարւում, կապ չկար: Մեր կապը հեռախօսային էր, որը մի քանի համազարկից յետոյ խափանուել էր: Տղաները եկան եւ ասացին, որ չկայ Կարաչինարը, Հայ Պարիսը: Ես այնտեղ թողեցի տղաներին եւ իջայ Շահումեան: Այնտեղ ասացին, որ տղաները դիրքեր գրաւեն Խարխապուտ գիւղի մօտ: Տղաները վճռել էին պահել ներքին եւ վերին դիրքերը: Դիրքերում մնում էին այլեւս նրանք, ովքեր կին ու երեխայ չունէին, իսկ մնացեալները մտահոգուած էին, թէ ինչ եղան իրենց ընտանիքները: Նրանցից 8 մարդ մնացել են մի դիրքում մինչեւ վերջ: Գիւլիստանից եկաւ իմ վարորդը եւ ասաց, որ թուրքերը վերցրել են Վերին Շէնը: Տղաները ականապատել են զինամթերքի պահեստը եւ մի քանի կարեւոր օբյեկտներ:

Մեզ հետ տանելով մեր տեխնիկան՝ հասել ենք Գիւլիստան, Նապատ: Ամբողջ շրջանում մի կէտ չկար, որ չհրակոծուէր: Այն բնակիչները, ովքեր հասել են Գիւլիստան՝ հրթիռակոծուել են եւ առաջացել է ահաւոր խուճապ եւ դա հասկանալի է: Գիւլիստանում մեր խմբերը կազմակերպել են բնակչութեան տարհանումը լեռներով եւ անտառների դժուարանց վայրերով: Մենք Գիւլիստանում հրահանդեցինք գնդապետ **Կարապետեանին**, որպէսզի իր մարդկանց բերէր եւ վերջին մեքենան բերեցին, որ մարդկանց նստեցնեն, սակայն պարզուեց, որ թուրքերը ճանապարհը փակել են եւ ստիպուած ոտքով երկար ճանապարհ են բռնել դէպի Հաթերք եւ Մատաղիս: Նրանք հասել են այդ բնակավայրերը:

Ես կարողեմ մի բան ասել, որ որեւէ կարգի օգնութիւն ոչ մէկի կողմից չի եղել եւ այդ ամբողջ ընթացքում հակառակորդը մեր դէմ կիրառում էր աւիացիա եւ քիմիական զէնք, թունաւորուել են բազմաթիւ մարտիկներ, որոնք մի քանի օր չարունակ կորցրել էին սթափ մտածելու կարողութիւնը:

Պիտի ասեմ նաեւ, որ կային այնպիսիներ, ովքեր լքել են իրենց դիրքերը եւ փախել, սակայն եղել են այնպիսիներ, ովքեր մնացել են մինչեւ վերջ եւ նահատակուել»: */թարգմանութիւն ռուսերէնից/*

Յակոբ Խլղիրեան, *– Շահումեան աւանի հրամանատար, նաեւ Շահումեանի ինքնապաշտպանութեան հրամանատարի տեղակալ՝ մարտական պատրաստութեան գծով*

«Ձերկարացնեմ, պատմեցին իրական տեղի ունեցածը թէ՛ հրամանատարը, թէ՛ Շտաբի պետը: Առաւօտը երբ սկսուեց մարտը, Բուզլուխի դիրքերում մարտիկները 4-5 ժամ կռուի մէջ էին: Մեր ղէմ 15 տանկեր էին չարժուում: Մեր մի տանկն էլ որոշեցինք ուղարկել ամենաթոյլ կէտը՝ Հայ Պարիսի եւ Էրքեջի արանքը: Էդ ժամանակ մեզ մօտ էր դիրքի հրամանատար **Կարապետեանը**, որն իր տղաներով մեզ օգնում էր՝ ինչպէս կարող էր: Նա իր 30 տղաներով մեզ օգնեց տանկը տեղափոխելու Հայ Պարիսի դիրքեր: Շտաբի պետը պատմեց, թէ տանկն ինչպէս է աշխատել եւ մնացել չրջափակման մէջ, հազիւ ենք հանել: Մենք որեւէ այլ ելք չունէինք եւ մեր հետեւակը պիտի դուրս բերէինք Բուզլուխից, որովհետեւ ՍՈՒով ամբակօծելուց յետոյ ահաւոր վիճակ էր, ժողովուրդը խառնուել էր, ի՞նչ պիտի անէինք, ո՞ւր պիտի գնայինք: Որոշեցինք դուրս գալ անտառ, մինչեւ որեւէ յաջողութիւն լինէր մեզ մօտ: Որպէսզի ժողովուրդը չկոտորուէր, էն տղաները, որ չունէին կին, երեխայ, նրանց տեղաւորում էինք տարբեր կէտերում, որպէսզի կարողանանք ծերերին ու մանկանց դիշերը հանել: Իսկ ինչ մնում է մեր ուժը նրանց ուժի դէմ, դէ հաշուէք նրանց 87 զրահատեխնիկան եւ մեր մի տանկն ու 3 ԲՄՊները, որոնց կռուի ընթացքին 4 անգամ վերանորոգեցինք: Եւ երբ լսում ես, որ առանց կռուի ետ քաշուեցին, թող մտաբերեն մեր է՛ն տղաներին, որոնք հերոսաբար զոհուեցին եւ հնարաւորութիւն չունեցանք նրանց դիակները հանելու: Էդ ո՞նց ստացուեց…

Մեր տղաների մի մասը ժողովրդին մի կերպ հանեցին: Մեր շտաբի պետը եւ «Արաբոյի» տղաներից եւ այլ ջոկատների տղաներից մնացին, որ գոնէ տարհանումը ժողովրդի կազմակերպենք: Պայթեցրել ենք պահեստը եւ մի քանի կարեւոր օբյեկտներ, տեխնիկան դժուարութեամբ դուրս ենք բերել դիւղերի արանքով եւ բերել Գիւլիստան եւ ժողովրդին տարանք

Հաթերք եւ Գիւլիստան: Ես այդ ճանապարհին միայն 4-րդ օրն եմ գտել իմ ընտանիքը»:

*Նոյն հարցազրոյցի ժամանակ արտայայտուել են նաեւ Կարաչինարի հրամանատար **Կոլիա Պետրոսեանը**, Կարաչինարի չտաբի պետ **Գեննադի Ղուլեանը**, Վերին Չէնի հրամանատար **Նովիկ Գիւլումեանը**: Ձայնագրման որակը թոյլ չտուեց այդ բոլոր նիւթերը զետեղել:*

Հարցազրոյցի՝ Շահէն Մեղրեանի եզրափակիչ խօսքը

«Երեւի թէ բոլոր պատերազմներում լինում են յաղթանակներ, պարտութիւններ: Եւ երեւի թէ ամենից կարեւորն այն է, որ յաղթանակներից դլխապտոյտ չզգանք եւ պարտութիւններից մեզ չկորցնենք: Եւ երբ անցեալ տարի ամբողջ Ղարաբաղը համարեայ պարտուողական իրադրութեան մէջ էր, Շահումեանում ռազմական յաղթանակներն ազդակ դարձան որպէսզի ամբողջ Արցախի ժողովուրդը ոտքի կանգնի եւ գուցէ հակառակորդը զգալով, որ Շահումեանի այդ ոգին, որոշակի առումով կայուն դիրքը, կայուն հնարաւորութիւններն օրինակ հանդիսացան մնացածների համար, նա եւրեւի առաջին հերթին որոշեց պատժել Շահումեանը: Եւ մեր տղաները եթէ զգային, որ իրենց դէմ միայն թուրքն է, թէկուզ նման պայմաններում գուցէ թէ այլ բան էլ կատարուէր եւ կռուէին մինչեւ վերջին մարդը: Բայց ցաւը նրանումն է, որ տղաները մոռացան ասել, եւ եթէ հարկ լինի՝ հարցրէք, որ առաջին գծի թէ՛ հետեւակը եւ թէ՛ տեխնիկան սլաւոններ էին եւ, գիտէք ինչ, լինելով այդ վիճակի մէջ ես պէտք է ասեմ՝ մեր տղաները ոչ մէկը գլուխը չկորցրեց: Ճիշտ է, դուրս գալու ժամանակ մեր ժողովրդը չգիտէր եւ չէր էլ մտածում, թէ որեւէ մէկը կը ծախէր շրջանը: Բայց հէնց առաջին քարաւանը Հասաւ Մարտակերտի շրջան, այստեղ այդ վարկածը, չգիտեմ ում կողմից պատրաստուած, հրամցուեց ժողովրդին: Տանջուած, աւիրուած, անտուն, սոված ժողովրդին մատուցուեց այդ վարկածը: Գուցէ չատերի հաշուարկների մէջ կայ նաեւ այն, որ օգտագործուի բարոյալքուած ժողովրդի այսպէս կոչուած աւելորդ այդ դառնութիւնները, քաւութեան

նոխազ գտնելով այս կամ այն անճանճ, այս կամ այն կազմակերպութիւններին եւ այլն, եւ այլն: Քիչ առաջ արդէն **Նովիկն** ասաց, որ Ստեփանակերտում որոշ մարդիկ ասել են, թէ Շահէնը որ ներկայացնում էր իր թեկնածուութիւնը, ստացա՞ւ Շահումեանը, եւ այլ բաներ: Ես պէտք է ասեմ մի բան. մենք կազմակերպուած էւակուացրել ենք ժողովրդին մի մասըս եղել ենք Մատաղիսում, մի մասըս այստեղ՝ Հաթերքում, անընդհատ աշխատել ենք, որպէսզի ժողովրդին հանենք այս վիճակից: Այժմ ռազմական շտաբն իր ամբողջ կազմով հաւաքուած է Հաթերքում: Աշխատանքներ են տարուում խմբերը կազմաւորելու եւ նորից մարտի մէջ մտնելու համար: Եւ **ոչ մէկն առանձին հաշուարկներ թող չտանի, թէ հնարաւոր է մեզ հաւասարակշռութիւնից հանել:** Մենք այն մարդիկը չենք, մենք ազգին նուիրեալ եղել ենք ու կանք: Ո՛չ մի բան մեզ չի հետաքրքրում՝ թէ ով ինչ կ՛ասի, միայն մի բան գիտենք՝ **մեր թշնամին մեզ յաղթեց, թէ ինչ ձեւով յաղթեց, բայց փաստօրէն յաղթեց: Մենք կ՛աշխատենք մեր բոլոր հնարաւորութիւններով մեր տանուլ տուածը ետ բերել: Եւ եթէ ազգը, եթէ պետութիւնը եւ թէ մնացած բոլոր հայկական ուժերը սատար կանգնեն մեզ, ապա գործը դրանով աւելի հեշտ կը լինի:** Եւ ինձ թւում է, թէ արժէ, որ պաշտօնական օրգանները, լինի դա Ղարաբաղի ռազմական շտաբը, լինի դա Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը, լինի դա Հայաստանի կառավարութիւնը, անկասկած պէտք է շուտափոյթ պաշտօնական յայտարարութիւն տայ, թէ ինչ է կատարուել Շահումեանում, առաւել եւս եթէ նրանք չեն իմացել, իրենց ասելով, թէ ինչ է նախապատրաստուում, ապա այժմ նրանք ունեն բոլոր տեւեալները: Ես դրանում չեմ կասկածում, որ նրանք շատ լաւ գիտեն, թէ ինչ ուժ է օգտագործուել Շահումեանում, ով է եղել, կռուել շահումեանցիների դէմ: Նրանք դա գիտեն **Կոզիրեւից**, նրանք դա գիտեն **Ելցինից**, նրանք դա գիտեն **Գրաչովից** եւ հանգիստ կարող են այսօր գոնէ ժողովրդին պաշտօնական յայտարարութեան մէջ նշել, թէ ինչ է կատարուել Շահումեանում, այլ ոչ թէ թոյլ տան, որպէսզի ամբոխը, որպէսզի կեղտոտ, ազգին ոչ պիտանի մարդիկ օգտագոր-

ծեն այդ կեղտոտ ջրում ինչ որ բաներ որսալու համար: Ուղղակի դա իմ ցանկութիւնն է, եւ ինձ թւում է, թէ տղաներն ինձ հետ համաձայն են, մենք չուտով նորից կ՚ասենք, թէ մենք ով ենք եւ թո՛ղ ոչ մէկը հաչուարկ չանի, թէ մենք կարող ենք փախնել կամ թողնել մեր ժողովրդին: Այսքանը»:

Հաթերք, 20.06.1992թ.:

*Տեսաֆիլմից վերցուած վերոգրեալ նիւթերը պատմական կարեւոր վաւերագրեր են, որոնք առաջին հերթին վկայում են, որ պայքարը Շահումեանի համար Շահէն Մեղրեանի ուժերը ոչ մի պահ չեն դադարեցրել եւ **հայդուկային պայքարի գաղափարը Շահէն Մեղրեանը յղացել է հէնց նահանջի առաջին օրը**, նահանջի ճանապարհին: Ո՞ր մի ազգը չէր ուրախանայ նման զաւակով:*

Գլուխ տասներեքերորդ
1992 Թ., ՅՈՒՆԻՍԻ 13.
ՌԱԶՄԱԴԱՇՏԱՅԻՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ

ԲՈՒԶԼՈՒԽԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ

*Թուրքերի գրոհի գիշերը բարձունքի վրայ հերթապահում էր **Սասունի ջոկատը**, 29-րդ յենակէտը պաշտպանում էր **Կարօտի ջոկատը**: Յունիսի 11-ի լոյս 12-ի գիշերը, ժամը 1-ի սահման-ներում տղաները հաղորդեցին, որ թուրքերը կիրովաբադի կողմից մեծ քանակութեամբ ռազմական տեխնիկա եւ զինուժ են տեղափոխում: Հաշուել էին 12 մեքենայ՝ խիտ լցուած հետեւակով:*

***Ալավերդու ջոկատին** բաժին էր ընկել ամենավտանգաւոր բնագծերից մէկը՝ 25-րդ պահակէտը (Ջամբազի՝ Առաջին): Գիւլիստան թռչելուց առաջ **Հրանտն** ասել էր, որ Կարօտի ջոկատն այնտեղ է, եւ հրահանգել էր՝ գնալ եւ զօրծել միաս-նաբար: **Սասունի** եւ **Կարօտի** ջոկատները պիտի համակարգէին ընդհանուր գործողութիւնները, որովհետեւ հիմնական հարուածային ուժն իրենք էին: Ալավերդու 33 հոգիանոց ջո-կատի ընդհանուր հրամանատարը **Սասուն Սիմոնեանն** էր, երկու խումբ էին, հրամանատարներն էին **Վովա Զաքարեանը եւ Միշան**՝ Շամլուղից: Իբրեւ անտառի մարդիկ՝ ալավերդցի-ներն այստեղ եւս շուտ յարմարուեցին: Ջոկատի մէջ էր բժիշկ, ՀՀ Գհ պատգամաւոր **Ռաֆիկ Ղազինեանը**, որը նաեւ դիրքեր էր պահում, օգնութիւն էր ցուցաբերում շրջակայ գիւղերի բնակիչներին: Նոյն ջոկատումն էր **Մհեր Դաւոյեանը**, որ Շահումեան էր եկել լրագրողի կարգավիճակով:*

Շտաբը զպրոցի շէնքի մէջ էր: Նախօրէին մեծ ոգեւորութիւն էր տիրում, որ պիտի շուտով Գետաշէնը ազատագրեն, թէկուզ հակատանկային զէնք չունէին, սակայն նախապատրաստւում էին յարձակման:

*92-ի մեծ բախումից առաջ **Պետօն** եկաւ եւ **Սասունին** ասաց.*

- Մի քանի տղայ տուր, հետախուզութեան պիտի գնամ:

*Պետօն **Կարօտի** տեղակալն էր եւ հետախուզութիւնն ինքն*

էր անում:

– Ես ինքս եմ գալիս:

Գնացին մինչեւ թուրքի դիրքերի տակ: Ճանապարհներն ստուգեցին, տեսան ականները տեղն են: Ամսի 12-ն էր:

Յարձակման նախորդ օրն ասել էին, թէ թուրքերը տեխնիկա են կուտակում: Ամսի 13-ին, առաւօտեան ժամը 4:25-ին անակնկալ կերպով թուրքերն սկսեցին գրոհը: **Միշան** զանգահարեց **Սասունին** եւ յայտնեց, թէ թուրքերը չարժւում են: Սասունը տագնապ հնչեցրեց: Մարտիկները գիւղումն էին: Բելառուս քարշակով հասան Ջամբազ սարի ստորոտ եւ չղթայ կազմած բարձրացան դիրքերը: Կռիւը սկսուած էր: Մինչ Սասունենք դիրքերին կը հասնէին՝ արդէն թէժ մարտեր էին ընթանում: Մեր կողմից 4 վիրաւորներ կային: Շամլուղեցի **Գարիկ Սարգսեանը** ծանր վիրաւորուել էր եւ նրան իջեցնում էին:

Իրենց տեղադրած ականները չէին պայթել: Ալավերդցիների դիրքերի վրայ մէկ տանկ, մէկ ՀՄՄ էին դուրս եկել: Ընդհանրապէս բոլոր դիրքերի վրայ համաժամանակեայ հրետակոծութիւնից յետոյ գրոհային ուժեղ գործողութիւն է սկսուել: Ամէն ինչից զգացւում էր, որ յարձակման կանխապէս մշակուած ծրագիրը եւ նրա իրականացման եղանակները արհեստավարժների գործ է: Ռուսական հետախուզութեան համար Շահումեանի զինեալ ուժերի եւ ինքնապաշտպանութեան համակարգի պարզաբանումը որեւէ դժուարութեան հետ կապուած չէր եւ այն վաղուց յայտնի էր, քանզի այստեղ ռուսները մշտական ներկայութիւն էին եւ Ռուս Պարիս գիւղից ամէն կարգի տեղեկատուութիւն ստացել են, խնդիր չեն ունեցել իմանալու, թէ հայկական կողմում ինչ է կատարւում կամ ինչ կայ: Սակայն նման խնդիր ունեցել է հայկական կողմը, որը փաստօրէն զրկուած էր խորքային հետախուզութեամբ ստացուող տեղեկատուութիւնից, որով միայն կարելի է բացայայտել թշնամու ռազմավարական ծրագրերը:

Ժամը 4.20-ին սկսուեց հրետակոծումը: Իւրաքանչիւր յենակէտի հարուածում էին «Գրադ» կայանքից: «Գրադ»ներից յետոյ գործի դրուեցին Սարիսու գիւղում տեղադրուած

հաուբիցները, հրասայլերը, այնուհետեւ օդ բարձրացած երկու ինքնաթիռ՝ մէկ «Սու-25» եւ մէկ «ՄիԳ»: Պարաշիւտներից ռումբեր թափելով՝ հեռացան գիւղերի կողմը:

Մինչ նրանք կը բարձրանային դիրքերը, տղաներն արդէն մարտի մէջ էին մտել. գլխից վիրաւորուել էր **Գագիկը**. վիրաւորուել էին **Հենրիկը, Ռուսլանը, Վրէժը**: Մեր երկու ռազմիկներ նրանց հանել էին կրակի տակից: Այդ պահին վիրաւորուել էր նաեւ **Վիգէն Ազարեանը**, բայց կարողացել էր ընկերներին օգնել: Քիչ յետոյ իմացան, որ, փառք Աստուծոյ, փրկուել են **Մհեր Դաւոյեանը եւ Վարուժան Փամբուխչեանը**: Նրանց ինքնաձիգներ էին տուել, բայց չէին ուզում, որ մարտին մասնակցեն: Բայց յանկարծ տեսան, որ Մհերն իրենց կողքին կուռւում է: Երբ փորձեցին արգելել, ասաց. «Դուք ինձանից ոչ մի բանով առաւել չէք, որ ուզում էք զոհուել, իսկ ինձ արգելում էք. ես պիտի կռուեմ»:

Մեր ջոկատների դէմ կռուում էին «մորեդոյն բերետաւորները», հատուկենտ թուրքեր էին երեւում: Մեր իւրաքանչիւր յենակէտի դէմ գործում էին երկու հրասայլ, երկուական ԲՏՌ եւ ԲՄՊ: Մարտիկները մեծ քաջութեամբ էին կռուում: Նրանք ամբողջ հասակով կանգնած՝ կռուում էին տանկերի դէմ: Յենակէտից ոչ մի փախուստ չի եղել, բոլորը կռուել են անօրինակ քաջութեամբ: Բոլորը միաբան մի բան էին ասում. «Գոնէ մի հակատանկային ական լինէր, կապէինք մեզ վրայ, մտնէինք տանկի տակ՝ մնացածը փրկուէին»: Զկար: Խրամատում էին **Բաբկէնը, չամլուղեցի Միշան, Ագօն, 45-ամեայ Արեստակը**՝ հիւանդութիւններ տարած մի անձնաւորութիւն, որ բոլորի համար ե՛ւ խորհրդատու էր, ե՛ւ ընկեր: **Արարատը** դիրքաւորուեց ներքեւում եւ խփեց իրենց վրայ եկող ԲՄՊն, յետոյ նշանառուն նրան թեւից վիրաւորեց: Արկերի պայթիւնից **Բաբգէնը** կոնտուզիա ստացաւ, բայց այդ վիճակում, ոչինչ չլսելով, երեք ժամ կռուեց: Յանկարծ զգացին, որ իրենց խփում են 29-րդ յենակէտի կողմից: Սարսափեցին այն մտքից, որ մեր տղաները չկան: Հետագայում իմացան, որ **Կարօտի** ջոկատի **Ալիկն ու Գառնիկը** մարտում զոհուել են...:

*Ստիպուած նահանջում են դէպի քերծերը եւ մարտը չարունակեցին այդ տեղից: **Ռաֆիկ Ղազինեանը** նաեւ բժիշկ էր, նա թողեց մարտադաշտը, որովհետեւ ծանր վիրաւորուել էին **Ռուսլանը**, ականաձիգ **Արարատը**: Ամբողջ դաշտը հրետակոծութեան տակ էր: Վիրաւորներին տեղափոխեցին Վերին Շէն: Դրանից յետոյ տղաները երկու ժամից աւելի դիմադրել են եւ սկսել են մարտով նահանջել միայն Բուզլուխի գրաւումից յետոյ: Բոլոր ջոկատներում կար մի դիտակցութիւն՝ որքան հնարաւոր է երկար դիմադրել, որ ժողովուրդը հասցնի հեռանայ: Տղաների ինքնամոռաց դիմադրութեան հետեւանքով յարձակուած 400-500 մոբեզոյն բերետաւորներից սպանուել էին չատերը:*

Աննախադէպ սաստկութեան եւ ծաւալների հրետակոծութիւնը չարունակւում էր: Թշնամին կիրառում էր նաեւ ինքնաթիռներ, որոնք հարուածում էին մեր դիրքերին: Այս ահաւոր հրակոծումները պիտի որ իրենց հետեւանքները թողնէին մարդկանց հոգեկանի վրայ: Ահաբեկել անակնկալութեամբ, զօրքի եւ զինատեսակի ահաւոր ծաւալներով եւ ուժգնութեամբ, արդիւնազօր տեղաշարժերի տպաւորութեամբ եւ անհարկի քանակութեան հրակոծումներով: Հայերի համար ողբերգական այս ներկայացումը խորհրդային ռազմական տեխնիկայի եւ ռազմարուեստի ցուցադրանք լինէր կարծես: Մինչ այդ պահը փոքր տեղափակ բախումներ տեսած հայ մարտիկները պիտի պողպատի նման ամուր լինէին՝ թէկուզ փոքր-ինչ դիմադրաւելու համար մարդկանց եւ տեխնիկայի այդ հեղեղին: Ի պատիւ մեր մարտիկների՝ պիտի ասել, որ նրանք կարողացան որոշակի դիմադրութիւն ցոյց տալ. հրամանատարութիւնն այդ դիմադրութեան չափը սահմանել էր այնքան, որ բաւարար լինէր ժողովրդին դուրս բերելու համար: Ո՛չ աւելին, քանզի այդ չափի խախտումը ոչնչացում կը լինէր թէ՛ զինեալ ուժի եւ թէ՛ ժողովրդի համար: Խորհրդային, կամ, եթէ այսպէս կարելի է ասել, սլաւոն զինուորականութիւնը, որն աւանդարդն էր յարձակուող թուրքերի, մի հիմնական խնդիր ունէր՝ բնատարածքից հայերին դուրս մղել, հեռացնել, որի համար նրանք փորձում էին ահաբեկել, փախցնել տարածքի

տէրերին: Յարաբերական այդ «մեղմութիւնը» նաեւ իրենց անվտանգութեան չահից էր բխում: Այս իսկ պատճառաւ սլաւոնները դաժանութիւն չեն ցուցաբերել: Իսկ թուրքերը, որ նրանց փող էին տուել, իրենց լիովին ապահովուած էին զգում սլաւոնների թիկունքում. նրանց հիմնական գործը եղել է թալանը, որն իրականացնում էին բնակավայրն իրենց ձեռքն անցնելուց անմիջապէս յետոյ: Իսկ թալանելու չա՜տ բան կար, դարերի կուտակած ամբողջ ունեցուածքը, որը գրեթէ ամբողջութեամբ մնաց թշնամուն, քանզի յարձակումը եղել է խիստ անակնկալ եւ որեւէ մէկը չի հասցրել նախապէս մի բան տեղափոխելու: Ռազմաճակատի այն հատուածներում, ուր թուրքերը համարձակել են առաջ մղուել՝ չարդուել են, ինչպէս, օրինակ, Ջամբազի դիրքերում:

4-5 ժամ կռուելուց յետոյ ***Սասունի ջոկատը*** *նահանջեց 10-15 մ եւ քանի որ դիրքերից ցած մեծ քարեր էին, այդտեղից չարունակեցին խփել, այսինքն՝ նահանջում էին պաշտպանուելով: Ջախից էլ թուրքերը սկսեցին խփել եւ ուզում էին Ջամբազից ձախ թեւով մտնել, որովհետեւ այդ պահին այնտեղ ամենավտանգաւոր դիրքն էր: Ջոկատին օգնութեան էր եկել նաեւ գիւղի ինքնապաշտպանական խումբը՝* ***Գեղամ Մուրադեանի*** *գլխաւորութեամբ: Թուրքերի տեխնիկան չնայած մեր դիրքերն էր մտել, էրքէչի ուժերը չարունակում էին պաշտպանուել: Այդքան առաւելութեամբ հանդերձ՝ թուրքերի տեխնիկան թաքստոցից զգուշանում էր դուրս գալ եւ տղաները խփում էին հետեւակին: Երբ մի քանի ժամ էր անցել՝ ետ քաշուելու հրահանգ եկաւ: Վիրաւորուել էին* ***Վրէժ Պետրոսեանը (Ճոռ), Գարիկն*** *ու տեղացի մի մարտիկ: Ճանապարհին Գարիկը մահացաւ: Սասունը հեռակապով ուզում էր դիմել* ***Շահէնին****: Կարօտի պահադիրքն արդէն ընկել էր աջ թեւում: Լուր չունէին, թէ Բուզլուխում ինչ է կատարւում: Շատ կարեւոր էր կապը Շահէնի հետ: Ժամը կը լինէր 9.30: Ամբողջ Շահումեանում էրքէչի այս պահակէտն էր մնացել մինչեւ ժամը 11.30-ը: 4.30-11.30ը եօթ ժամ է: Ջայնակապից լսւում է* ***Սերգէյ Ջալեանի*** *ձայնը: Սասունը*

օգնութիւն էր խնդրում:

– Սասո՛ւն, դո՞ւ ես:

– Հա...

– Բա մենք գիտէինք, թէ դու արդէն չկաս:

Միւս յենակէտերից բոլոր ջոկատներն արդէն ետ էին քաշուել եւ հասել գրեթէ Գիւլիստան:

– Սասո՛ւն, դու շրջապատման մէջ ես: Եթէ կարող ես՝ դուրս արի:

Դիմադրութեան շարունակումն այլեւս խելամիտ չէր, որովհետեւ ամբողջ զօրքը նահանջել էր եւ վտանգ կար շրջապատման մէջ ընկնելու: Տղաները հարցրին, թէ չտաբի պետն ի՞նչ է ասում:

– Ասում է, թէ գալիս ենք օգնութեան, կը հասնենք կէս ժամից:

Եթէ Սասունը ստոյգ ասէր, թէ ինչ է ասել Զալեանը, տղաները կարող էին թեւաթափ լինել, ընկճուել: Մօտ կէս ժամ մարտը շարունակեցին եւ Սասունը հրամայեց.

– Տղաներ, երկու շղթայ կազմէք:

Իրար հրափակելով պիտի նահանջէին: Բայց դէպի ո՞ւր:

– Ինչո՞ւ ենք նահանջում, Սասո՛ւն:

– Դա յատուկ մարտավարութիւն է: Մենք պիտի նորից ետ գանք եւ գրոհով վերցնենք դիրքերը:

Սասունի ասածի մէջ կեղծ բան չկար: Ինքն էլ հաւատացած էր, որ յետոյ կարող են ետ գալ եւ գրաւել ժամանակաւոր կորցրած դիրքերը: Շղթայ կազմած նահանջեցին մինչեւ վերին անտառը: Այնուհետեւ պիտի շարունակէին կա՛մ անտառով, կա՛մ երկու բարձունքների միջեւ տարածուած բաց դաշտով: Եթէ անտառով նահանջէին, շատ վտանգաւոր էր, այնտեղ արդէն թշնամու զօրքերն էին, եւ անտառում կարող էին պարզապէս իրենց կոտորել, իսկ բաց դաշտով հեռանալիս անմիջապէս կը յայտնուէին թշնամու հայեացքի տակ եւ անխուսափելիօրէն կ՛ընկնէին հրէ կարկուտի տակ: Ի՞նչ անել: Սասունն ընտրեց խելահեղ տարբերակը՝ բաց դաշտը:

– Բաց դաշտի միջով ենք դուրս գալիս. դէպի Բուզլուխ ենք

գնում, դէպի գիւղ: Մեզ պիտի չխփեն, այլ պիտի փորձեն գերի վերցնել:

Անտառը վերջացաւ եւ Սասունն աւտոմատը վերցրած՝ հասաւ դաշտի կենտրոն, կանգնեց եւ կանչեց բոլորին: Անվնաս հասան անտառ եւ այնտեղ մի փոքր դադար տուեց, որպէսզի տղաները փոքր-ինչ ուժ առնէին: Հանգստանալուց յետոյ առուի ուղղութեամբ սկսեցին դէպի վեր բարձրանալ, դէպի Ջամբազ, այսինքն՝ դէպի թուրքերը: Սասունը գիտէր, որ թշնամին իրենց բոլոր շարժումներին հետեւում է:

Հասան մի ժայռի տակ, որի գագաթին երեք թուրք տեսան: Դուրս եկան իրենց պահպետքից էլ բարձր տեղ, թուրքերը մնացին ներքեւում: Մի ինքնաթիռ էր մօտենում եւ պատկելու հրաման տուեց: Սուն գիւղի վրայ մի ռումբ գցեց: Դիմացից, մի բլրի վրայ տանկ էր կանգնած, եւ հրամանատարը թոյլ չտուեց աւելի առաջանալ:

Սպասեցին այդտեղ մինչեւ մութն ընկնելը: Ընդամէնը մի 20-30 մետր անցնելու համար այդքան պիտի սպասէին: Մթնշաղին մի չնչով անցան վտանգաւոր հատուածը եւ պատսպարուեցին: Հրահանգով իջան եւ այնուհետեւ հանդիպեցին **Պետոյի** տղաներին: Այստեղ էին ինքնապաշտպանական բոլոր ուժերը: Ինչքան ջոկատներ կային՝ պիտի միացեալ կերպով ճորով դուրս գային Վերին Շէն: Ճանապարհ բռնեցին դէպի Վերին Շէն: Միայն գիշերուայ 2-ին հասան այդ բնակավայրը, սակայն այդտեղ գրեթէ մարդ չէր մնացել: Մի մարդ էր անցնում՝ ունեցուածքն էչին բարձած: Շատ էին հոգնած: Մի տուն մտնելով՝ ժամապահներ դրեցին եւ քնեցին: Մի քանի ժամ մնացին եւ առաւօտեան ջոկատով ճամփայ ընկան դէպի Շահումեան: Ճանապարհին հանդիպեցին Շահումեանից վերադարձողների, որոնք յայտնեցին, թէ այնտեղ ոչ ոք չկայ, եւ հրահանգ էր տրուած, որպէսզի Շահումեան գնացող ջոկատները թեքուեն դէպի Գիւլիստան: Բուզլուխում միայն ծերերն էին մնացել, որոնք հրաժարեցին դուրս գալ՝ յոյս յայտնելով, թէ մերոնք նորից ետ կը գան: Նրանք ընդհանուր առմամբ յանդիմանում էին. «Ո՞ւր էք գնում, ինչո՞ւ բնակա-

վայրերը չէք ուզում պաշտպանել»: Խեղճ ծերուկներ եւ պառաւներ էին, որոնք որեւէ ստոյգ պատկերացում չունէին, թէ ինչ է կատարւում շրջակայքում: Մարտիկները նրանց յոյս էին տալիս, թէ Գիւլիստանում ուժերը պիտի վերակազմաւորեն եւ հակայարձակման անցնեն:

*Ընթացքի պահին դիմացից զինուորականներ տեսան. պահակէտ էր դրուած: Վիրաւորներին արդէն ուղարկել էին: **Մհերն ու Անուշաւանը** դեռ չէին եկել: **Սասունը** գնաց չտաբ: Գիւլիստանում **Շահէնն** էր, Երեւանի Յատուկ գնդի (հրամ.՝ գնդապետ **Վլադիմիր Կարապետեան**, զոհ. 1992, յունիսի 17-ին) մի խումբ մարտիկներ (մնացեալը հեռացել էին նախորդ օրը): Բացի Ալավերդու ջոկատից, Երեւանի Յատուկ գնդում կար ալավերդցիների մի խումբ:*

Շահէնը բնականաբար խառնուած էր: Եթէ նոյնիսկ ծննդավայրը եւ հայրենի գաւառը չլինէին, իր պատասխանատուութեան տակ գտնուող այդպիսի մեծ տարածքի անակնկալ կորուստը, զոհերն ու պարտութեան դառնութիւնը, հայրենիքի կորստեան ցաւը, վիրաւորանքն՝ անօգնական մնալուց, ամէն մէկի կարող էր հունից հանել: Ասաց.

- Տղե՛րք, ինչ գնով էլ լինի, պահելու ենք Գիւլիստանը:

- Ի՞նչ պիտի անենք:

- Խրամատներ ենք փորելու:

Դուրս եկան, որ խրամատներ փորեն, թուրքի տանկերը հրանօթներից սկսեցին արկահարել: Ժողովուրդն իրեն անտառին տուեց: Սասունին հասաւ իրեն վերաբերող Շահէնի կարգադրութիւնը.

- Ժողովրդին հասցրէք Հաթերք:

*Բոլոր ջոկատները, անհաւասար մարտերում նահանջելով, իրենց վիրաւորներով հաւաքուեցին Գիւլիստանում: Այդտեղ իմացան, որ չկայ **Կարօտի** ջոկատի **Գառնիկը**, չկայ **Ալիկը**, խփուել եւ մնացել են խրամատում. ծանր վիրաւորուած էր **Մուշեղը**, որը վերջին պահին էր եղել Կարօտի հետ: Յաջորդ առաւօտ յայտնուեցին **Պետոն ու Վարդգէսը**:*

*Գիւլիստան հասաւ **«Տիգրան Մեծ»** ջոկատը **Խաչիկի** ըն-*

կերակցութեամբ: Մանաչիդից եկան Հոկտեմբերեանցի **Ալիկը** եւ վերինչէնցի **Նովիկն** իրենց ջոկատներով: Տարբեր պարբերականութեամբ գալիս էին բոլոր ջոկատները: Պէտք էր պահել Վերին Շէնը, Գիւլիստանը: Անհրաժեշտ էր ռազմական տեխնիկա, օգնութիւն: **Շահէն Մեղրեանը** յաջողեց վերջապէս կապուել **Վազգէն Սարգսեանի** հետ եւ վերջինից օգնութիւն խնդրել: Պարոն Սարգսեանը խոստացաւ երկու մարտական ուղղաթիռ եւ 30 հրասայլ: Նոյն գիշերը եւ նոյն ալիքով ռադիոկապի ժամանակ նախարարը տեղեկացրեց, որ հինգ միաւոր զրահատեխնիկա արդէն ճանապարհին է, որ հարկաւոր է ամէն գնով դիմանալ մինչեւ լուսաբաց: Դիմացան ոչ միայն մինչեւ լուսաբաց, այլեւ մինչեւ ժամը 15-ը ոչ մի օգնութիւն չեղաւ: Դրանից յետոյ թշնամին արագօրէն գրաւեց Վերին Շէնը («Երկիր», 20 յունիսի 1992):

Բուզլուխից, Մանաչիդից, Շահումեանի շրջանի տարածքից վերջին դուրս եկողները եղել են **Նովիկի** տղերքը: Նովիկի մասին **Մեղրեան եղբայրների** կարծիքը շատ բարձր է. **Նովիկի նման ռազմիկ Շահումեանի շրջանում չի եղել: Պետրոսի** ասելով՝ **Նովիկը եղել է Շահէնի աջ թեւը, իսկ ձախ թեւը եղել է Շուրա Գզիրեանը**: Նովիկն է գլխաւորել մինչ այդ ողբերգական պահը կատարուած բոլոր կարեւոր գործողութիւնները: Նովիկի տղաներն են վերջինը Գիւլիստանի գերեզմանոցների մօտից նահանջել եւ, ինչպէս յետոյ կը տեսնենք, Նովիկի անմիջական հրամանատարութեամբ են կատարուել հայդուկային գրեթէ բոլոր գործողութիւնները: Խոնարհութեան աստիճանի համեստ այս մարտիկ-հրամանատարը անգերազանցելի մարտավար է՝ զօրաւոր ոգով եւ աննկուն կամքով: Շահումեանի տարածքի վերջին կռւում՝ Մանաչիդում «Արաբոյի» տղաները եղել են Նովիկի հետ: 7 թէ 8 տղաներ էին, նաեւ Հոկտեմբերեանի տղաներն էին, **Ալիկը, Մայիսը** եւ ուրիշներ:

Պօղոսը Գեօգթափայի եալում սպասել է իրենց: Երբ իրենք հասել են, Պօղոսն էլ թողել եւ իրենց հետ դուրս է եկել: Նրանք իջել են Մատաղիս եւ Նովիկենք էլ հասել են լուսաբացին: Տանկն ու «Գրադը» իրենք են բերել:

Վարուժան Փամբուխչեան. «Գրեթէ բոլոր բնակավայրերքերում եղել եմ այդ օրերին. Կարաչինարում, որտեղ արդէն զոհեր էինք տուել, Հայ եւ Ռուս Պարիսներում, Թոդանում: Վստահ էինք, որ լաւ է լինելու: Ժողովուրդն էլ դաշտերն էր մչակում, շատ բաներ էին ցանել, մտածում էին, որ յաւէրժ իրենց է մնալու, բայց անսպասելի բան եղաւ: Անսպասելի էր գուցէ ջոկատների համար, բայց հարուածը իրականում շատ հզօր էր: Կարող եմ ասել, որ առաջին մարտն էր, որտեղ օգտագործուել է անչափ շատ տեխնիկա, մարտական տեխնիկա, կանոնաւոր բանակ: Մի ամբողջական շրջան գրաւուեց, եւ Ղարաբաղում այդչափ գաղթականութիւն չէր եղել: Շահումեանի շրջանից 14-15 հազար մարդ է գաղթել»:

*Բազմաթիւ մասնակիցներ հաստատում են, որ պատերազմի առաջին իսկական դրուագը Բուզլուխը գրաւելիս եղաւ, որովհետեւ կռիւը եղել է հիմնականում տեխնիկայով, տանկերով. աւտոմատներով կռիւ չի եղել: Ջամբազում են մեր մարտիկները դիմադրել, բայց երկար ժամանակ հնարաւոր չէր պահել այդ դիրքը: Զոհեր են եղել, **Գառնիկն է** զոհուել, **Վիտօն** քիչ մնաց՝ սարի գլխին՝ Ջամբազում մնար. ինքը մի 30 մետր հեռաւորութեան դիրքի վրայ է եղել եւ իրեն ձայն են տուել, չի լսել: Իջել են, ինքն էլ այնտեղ մենակ դիրքաւորուած կրակում էր: Յանկարծ զգացել է որ ձայներ չկան... Որտեղ մեր տեխնիկան մի քիչ աչխատել է, այնտեղ դիմադրութիւն եղել է, բայց թուրքերն իրենց առաջադրանքը լիովին կատարել են: Գիւլիստանում փորձեցին դիմադրութիւն կազմակերպել, բայց հնարաւորութիւն չկար. արդէն մի երկու-երեք օր անքուն եւ անսնունդ էին, հիմնական բնագծերը թողած **պաշտպանութեան հետագայ փորձը կը նշանակէր աւելորդ մարդկային զոհեր տալ**, որ էական փոփոխութիւն չէր մտցնի ռազմական իրադրութեան նկարագրի վրայ. կացութիւնն այդ ժամանակ փոխել հնարաւոր չէր, քանզի կարեւորագոյն հիմքերը՝ կազմակերպ ուժն ու տեխնիկան բացակայում էին: Այդ հզօր երկաթէ հեղեղի դէմն ինչպէ՞ս պիտի առնուէր մերկ ձեռքերով: Դիմադրելը միշտ լաւ է, բայց ոչ միշտ է ճիշտ: **Դիմադրելու***

համար նախադրեալ եւ հիմքեր պիտի լինեն: Նաեւ հոգեբանական հիմքն էր պակասում, քանզի այդպիսի մեծածաւալ ու հզօր գրոհ ոչ մէկը չի ակնկալել, եւ համապատասխան բան հակադրելու որեւէ հնարաւորութիւն չկար: ***Վազգէն Սարգսեանն*** *էր խոստացել օգնել, բայց ոչ մի օգնութիւն չստացուեց: Խիստ անհաւասար ուժեր էին, անհամեմատելի:* ***Շահումեանով փաստօրէն ատերազմի բնոյթը փոխուեց՝*** *գործադրութեան մէջ դնելով մեծաքանակ տեխնիկա եւ մարդուժ:* ***Նահանջելու եղանակը միակ ճիշտն էր, այլապէս ժողովուրդն էլ իզուր կորստեան կը մատնուէր:***

ԿԱՐՕՏԻ ԱՆՀԵՏԱՑՈՒՄԸ

Բուզլուխումն էին: Ալավերդու ջոկատի դիրքին առընթեր պակաս վտանգաւոր չէր Կարօտի ջոկատի 29-րդ դիրքը: Կարօտը դասական ֆիդայու կերպարը մարմնաւորած, ճանաչողներից սիրուած եւ հեղինակութիւն վայելող մի նուիրեալ էր: Արդէն նշել ենք, որ ***Շահէն Մեղրեանը*** *նրա ջոկատը յատկապէս հրաւիրել էր Գետաչէնի ազատագրման գործողութեանը մասնակցելու համար:*

Բոյով Արմէնը *ներկայ է եղել, երբ* ***Կարօտը*** *լուսաբանում էր, թէ մենք ինչ պիտի անենք Գետաչէնի վրայ յարձակման ժամանակ: Բայց թուրքը չսպասեց, այլ ամսուայ 12-րդ օրն ինքը սկսեց: 12-ի լոյս 13-ի գիշերը:*

Մեծ Ջամբազը (1895 մ) Արայի լեռան նման երկարաւուն բարձունք է, որի մի կողմից Բուզլուխի գետակն է, միւս կողմից Գետաչէնի գետը: Սարից կապուեցին եւ հաղորդեցին, թէ դրութիւնն այսպիսին է: Կարօտն էր դիրքի պատասխանատուն եւ նրան հարցնում էին, թէ ինչ պիտի անել: Կարօտն ասաց, թէ ամէն ինչ լաւ է լինելու, թշնամին պարզապէս զօրաշարժեր է անում: Ռադիոսարքով մեր տղաները յաճախ կապւում էին Կարօտի հետ եւ տեղեկութիւններ տալիս, թէ, ասենք, Գետաչէնի վերեւից թուրքերն իջնում են... Տեսնում են, որ կամօ եւ Ազատ գիւղերի մօտից տեխնիկան ինչպէս է գալիս, ...Սարիսու այսքան մեքենայ եկաւ, լցուեց, ...Արդէն տեխ-

նիկան անտառի մէջ է... Արդէն երեւում է, թէ ինչպէս են տան-կերի համար թաքստոցներ պատրաստում, որտեղից պիտի հարուածեն, նախքան գրոհի անցնելը: Մի խօսքով՝ ստացւում էին այդօրինակ տեղեկութիւններ, որոնք պատկերացում էին տալիս, թէ ինչ է կատարւում: Կարօտն էլ դիչերային այդ անհանգիստ իրադրութիւնն էր փորձում փոխել, հանդարտեցնել, որ տղաները յանկարծ չթուլանան, խուճապի չմատնուեն:

Վաղ առաւօտեան ռադիոսարքից լսւում էր **Պետոյի** կարգադիր հրահանգները, եւ իր ազդականչերն էին լսւում բոլոր դիրքերում՝ 25-ի, 29-ի, 17-ի, Գիւլիստանի եւ Շահումեանի դիրքերի տղաների հետ հրահանգներ էր փոխանակում: Կարօտը պառկած էր Արմէնի կողքին: Երբ Արմէնն արթնացաւ՝ Կարօտն ասաց.

- Դո՞ւ էլ արթուն ես: Քնի՛ր, քնի՛ր, դեռ ժամանակը չէ:

Յետոյ Պետոն եկաւ եւ Կարօտին զեկուցեց իրավիճակի վերաբերեալ: Կարօտը **Հրաչին** ձայն տուեց, որ վեր կենայ, մի քանի հոգով նռնականետերով գնան, որպէսզի տանկերը չգան լցուեն:

Արդէն պարզ էր, որ թշնամին մտնում է գիւղ եւ մեր ուժերը սակաւ են: Արմէնն ու Հրաչը միանգամից ելան, Ազատին արթնացրին: **Արմէնն էր, Հրաչն էր, Ազատը, Պետոն**: Հասան գետաչէնցիների մօտ, վերցրին նռնականետերը եւ գնացին: Երբ հասան ալավերդցիների բանակատեղին, տեսան Բելոռուսը կանգնած, տղաները լցուած են տրակտորի թափքը: Նրանց հետ բարձրացան եւ իրենց դիրքերի մօտ իջան, միացան դիրքապահ տղաներին:

Հասնելով տեղ՝ **Մուշեղը** գնդացիրը մարտական դրութեան բերեց: Տեսան, որ Մուշեղի մօտ լաւ է ստացւում, իջան 29-ի եւ 25-ի արանքը, որը մի փոքր բլուր էր: Ելան դրա վրայ եւ սպասում էին, որ յանկարծ թուրքերը 25-ի եւ 29-ի արանքով չմտնեն, քանի որ առաջին հարուածը 25-ի ալավերդցի տղաներն էին արդէն ընդունել իրենց վրայ: Եթէ նրանց պռոշեանցիներից կտրէին, մնացեալ դիրքերն ինքնըստինքեան կը վերցնէին, որովհետեւ այդ դիրքերը 25-ի եւ 29-ի համե-

մատուռեամբ չատ ցածր էին: Թուրքերն ի վերջոյ սկսեցին բարձրանալ 29-ի խրամատների վրայ: Ուղիղ գիծ կազմած ուղղակի բարձրանում էին դէպի մեր խրամատները: Սկզբից **Արմէնն ու Ազատն էին**, յետոյ եկան **Հրաչը, Վարդգէսը, Պետօն, Մուրադը** եւ էլի մի քանի տղաներ: Նրանց մի մասը հսկում էր 29-ի սարալանջը, իսկ միւսը՝ 25-ի սարալանջը:

Թուրքերը տղաներից կը լինէին 5-6 հարիւր մետրի վրայ, եւ լաւ երեւում էր, թէ ինչ է կատարւում այնտեղ: Սպասում էին, որ նրանք նորից կ'երեւան: Այդպէս էլ եղաւ: Թուրքերը երկու կողմից հասան, որ իրենց վիրաւորներին դուրս բերեն: Հրաչենք դրանց էլ հնձեցին: Յետոյ թուրքերն իրենցից աջ՝ 17-րդ պահակէտի կողմից էին սկսում վրայ տալ: Իրենցից ձախ՝ 25-ն էր: 29-ի տղաներից մէկը նկատում է, որ թուրքերն արդէն հասնում են իրենց խրամատներին: Տեսնելով, որ 25-ում կոտորւում են՝ թուրքերը թեքուել էին դէպի աջ, որտեղ իրենց մինչեւ գագաթ նեղութիւն տուող չկար: Թուրքի հրետանին ճշտօրէն գործում էր: Հեռահար զէնքի ուրիշ տեսակներ էլ ունէին, եւ տղաները ստիպուած էին սպասել մինչեւ թշնամու հրետանին դադար տար, երբ իրենց հետեւակը ընդհուպ մօտեցած կը լինէր մեր դիրքերին: Եկաւ պահը եւ թուրքերն ու հայերը խառնուեցին իրար եւ մօտ կէս ժամի չափ ահեղ մերձամարտ էր: Մեր տղաները մարտնչում էին, սակայն ուժերի յարաբերակցութիւնն անհամեմատելի էր, եւ արդէն ստիպուած էին իջնել: Երզնկայի տղաներն էին նաեւ այդ պահին՝ **Սարոյի** գլխաւորութեամբ: Քանի որ տարածքը չատ փոքր էր, միջոց չկար դիմադրութիւն կազմակերպելու: Թուրքերի կողմից մեծամասամբ ռուսներ էին եւ ղազախներ: Դեսանտային ինչ-որ զօրամաս էր: Ու յետոյ լսում են աղաղակներ.

- Փախէ՛ք այդտեղից, տանկը գալիս է ձեզ վրայ:

Չէին կարող պատկերացնել, որ տանկը կը գայ ու կը կանգնի 29-րդ պահակէտի վրայ, քանզի բարձունքի մեր լանջը խիստ զառիթափ էր, իսկ միւս լանջը, որից թուրքի տեխնիկան է բարձրացել՝ աւելի մեղմ էր թեքութիւնը: Ալավերդու տղաներն ինչպէ՞ս են նահանջել... Տանկը որ եկաւ կանգնեց, դրա

ձախ կողմից մի 7-8 թուրքեր կային կանգնած, սկսեցին հռհռալ մեր տղաների վրայ, որոնք փախչում էին: Այդտեղ Մուշեղը դրանց հռհռոցը կտրեց գնդացրով: Փախան դէպի աջ: Արմէնն էլ սկսեց դրանց վրայ կրակել: Յետոյ **Ֆելիքսը** եկաւ: Արմէնը հարցրեց, թէ ինչ տեղեկութիւն կայ տղաներից: Պատասխանեց, որ Պետոն վիրաւորուել է թեւից, **Վարդգէսի** հետ ընկել են քերծի արանքը, չեն կարողանում դուրս գալ: **Հրաչը** գնացել է, որ դուրս բերի:

Թուրքերն արդէն սանրելով գալիս էին: Մացառների միջով իջան. գլուխները երեւում էին դրանց միջից: Երբ իջան, Հրաչը մտաւ ժայռի տակ, որ տեսնի, թէ ինչ կերպ կարելի է Պետոյենց իջեցնել:

Արմէնն իջաւ հիմնական խմբերի մօտ: Մօտ 20 հոգի կը լինէին: Արդէն լուսին պարզ էր, որ մեր դիրքերը գրեթէ կորած են, եւ որպէսզի թուրքը չլցուի գիւղերը, նորից պիտի ետ գրաւել 29-ի դիրքերը եւ հնարաւորինս դիմագրաւել թուրքի տեխնիկային: Այդ դիրքերը անտառոտ տեղ էր, կռուելու շատ յարմար: Արդէն պատկերացնել կարելի է, թէ ինչ պիտի լինի, եթէ թուրքերը յարձակուեն: Այդ պահին Կարօտը վազելով եկաւ: Նրան զեկուցեցին դրուածքը: Կարօտն ասաց.

– Ինչո՞ւ էք իջել: Ո՞վ է ձեզ թոյլ տուել իջնել:

Երբ բացատրեցին իրավիճակը, ասաց.

– Իսկ գիտէ՞ք, որ սարի վրայ երկու զոհ ունենք:

Ոչ, չգիտէին: Սակայն հնարաւո՞ր էր կրկին բարձրանալ այնտեղ, միանգամայն մերկ, անտառազուրկ սար. բարձրացողը կենդանի թիրախ պիտի դառնար:

Կարօտն ասաց.

– Էս սարերը նորից պիտի ետ վերցնենք:

Ոմանք ասացին, թէ լաւ, համաձայն են, կը գնան՝ ուր իրենց ուղարկեն, որովհետեւ զինուոր են. պարզապէս դէմի ուժին հակադրելու բան չկայ: Նրանք տեխնիկա ունեն, մենք չունենք:

– Էսա, մեր տեխնիկան կ՛սկսի աշխատել:

Եւ, իրօք, մեր ԲՄՊ-2-ը սկսեց աշխատել եւ բաւական վնաս տուեց դրանց: Եղած մարդկանց կարօտը երկու խմբի բա-

ժանեց, հրամանատարներ կարգեց:

– Ես էս խմբով սարի միւս ճակատով անցնում եմ: Կը յանդիպենք այսինչ տեղը:

Երբ Արմէնենց խումբը բարձրանում էր, Հրաչը ձայն տուեց.

– Արի այստեղ: Երկուսով պիտի մտնենք դրանց թիկունքը, տեսնենք այնտեղ ինչ է կատարւում, ու տղաներին ինչ-որ կերպ պիտի իջեցնենք:

Ողջ ետ վերադառնալու հաւանականութիւնը նուազագոյն էր: Ինչեւէ, հրամանատարին տեղեակ պահեցին եւ Ազատի հետ գնացին Հրաչի մօտ: Բարձրացան եւ Ազատին թողեցին անտառի եզրին, որպէսզի իրենց թիկունքը պահի: Հրաչը առջեւից էր գնում, Արմէնն էլ Հրաչին էր հրափակում 25-րդ դիրքի վրայ լցուած թուրքերից: Անտառն արդէն վերջացավ, բաց տարածք էր: Ու Հրաչն առաջացաւ, մինչեւ այն տեղը, ուր տանկն էր կանգնած: Յետոյ չրջուեց եւ վազքով ետ եկաւ.

– Բարձրանալու տարբերակ չկայ: Էնքան ժողովուրդ կայ, որ կանգնելու տեղ էլ չկայ: Գործողութիւն անելու հնարաւորութիւն չկայ:

Երեքով իջան ներքեւ: Տղաներից արդէն կտրուած էին եւ չգիտէին ինչ է կատարւում այնտեղ: Մի պահ փոխհրաձգութիւն գնաց: Մտածեցին, որ գործողութիւնն այնտեղ սկսուել է: Փորձ արեցին գնալ եւ թիկունքից խփել, սակայն հրաձգութիւնը տեւեց ընդամէնը երկու րոպէ եւ դադարեց: Պետոյենց նորից ձայն տուեցին, բայց պատասխան չեղաւ:

*Սկսեցին իջնել եւ Բուզլուխի խմբի ձայները առան: Մօտեցան, տեսան ռադիոկապ կայ մօտները՝ ուրախացան: Մտածեցին՝ կարօտին կը գտնեն: Փորձեցին կապուել՝ ոչ մի ձայն: Խմբերն արդէն հաւաքուել են իրար մօտ: Կարօտի հետ գնացած տղաներից ո՛չ մի տեղեկութիւն: Այնուհետեւ կապի մէջ մտաւ Բուզլուխի նախկին հրամանատար **Համլետը**: Ասաց, որ ժամ ու կէս առաջ Կարօտն իրեն կապով ասել է, թէ ինքն իջնում է, որ անհնար է այստեղ պահելը: Այնուհետեւ կապը Կարօտի հետ կտրուել է: Համլետն ասաց.*

– Բոլորդ պիտի դուրս գաք:

Դուրս եկան, անցան գետը, եւ դրանից յետոյ մառախուղ իջաւ, եւ առանց դժուարութեան կարողացան նշանակուած տեղը հասնել: Ամառուայ կէսին քըշաթուխպը ոնց որ յատուկ իրենց համար եկաւ եւ պարուրեց ամէն ինչ՝ անտեսանելի դարձնելով տղաներին:

*Դրանից յետոյ **Մակիչը** բարձրացել է այն տարածքը, որտեղ կարօտը պիտի լինէր: Ձայն է տուել, պատասխան չի եղել: Ան-հետ կորել է: Երկու տարբերակ կարող է լինել. կամ սպանուել է, կամ գերի է յանձնուել: Կարօտն, անկասկած, եթէ հնարաւորութիւն ունենար՝ երբեք չէր յանձնուի: Սակայն կայ իրավիճակ, երբ բոլորովին անհնար է լինում զէնքի դոր-ծադրումը եւ հնարաւոր է գերի ընկնելը:*

Պետօն ամբողջ գիշեր վիրաւոր ձեռքով սանդուղքներ է քանդել եւ գիշերուայ 3-ին ինքն ու Վարդգէսը դուրս են եկել եւ գիշերը հասել են Գիւլիստան:

Կարօտը շատ հանգիստ, խաղաղ բնաւորութեան մարդ էր: Նա մտածում էր եւ երբեք չէիր կռահի նրա մտածումը, որովհետեւ վճիռները սովորական (շաբլոն) չէին: Նա խորամիտ էր եւ միշտ ճիշտ: Նա միշտ նեղեալին էր պաշտպանում: Կարօտն ինչ տեղ որ ընտրուել է՝ դա եղել է առանց ձգձգումի, հէնց առաջին անգամից, եւ ինչ տեղ էլ նրա թեկնածութիւնը լինում էր՝ անառարկելիօրէն անցնում էր: Երբեք չեմ տեսել, որ նա լրջութեամբ ջղայնանայ: Կարօտը միշտ հանգիստ էր եւ աւելի շատ սէր, յարգանք էր վայելում: Նրա քաջութիւնն էլ իր սիրոյ նման անսահման էր: Կարօտը թուրքին երբեք չէր յանձնուի եւ միշտ իր համար գնդակ կը պահէր: Սակայն պատերազմը բարդ իրողութիւն է, եւ հնարաւոր է, որ վիրաւորուել է, ուշագնաց եղել եւ իրեն վերցրել են:

*Այնուհետեւ իրենք՝ Հրաչը, Ազատը, Արմէնն իջան Վերին Շէն, մի քիչ հաց կերան, դուրս եկան, հանդիպեցին **Հոկտեմբերեանի տղաներին** եւ իմացան, որ շատերն արդէն գիւղից դուրս են եկել եւ ամէն ինչ խառնուած է: Առաւօտեան ուղեւորուեցին դէպի Գիւլիստան, որովհետեւ մարդ չէր մնացել: Այնտեղ շատերին հանդիպեցին, բայց պարզուեց որ*

կարօտը չկայ:

Պետօն ու Վարդգէսը եւս օգտագործել են քըշաթուխպի պահը եւ Պետոյի դանակով նախապէս պատրաստած աստիճաններով իջել են ոչ լրիւ 90 աստիճան զառիթափը եւ տեղ են հասել: Նրանք իրենց ընկերների կանչերը չէին լսել եւ, բնականաբար, չէին արձագանքել:

*Պետոյին տարան վիրահատարան, վիրակապեցին թեւը: Սոված էին, ոչ մի բան չկար: Գիւլիստանի բնակչութիւնը խուռն բազմութեամբ **Նապատ** սրբավայրն էր հաւաքուել: **Վազգէն Սարգսեանի** խոստացած օգնութիւնը ոչ մի կերպ տեղ չէր հասնում: Թէեւ պատրաստուում էին նոր ինքնապաշտպանութեան, սակայն ակնյայտ էր, որ դա առայժմ անհնար է: Մեծամասամբ արդէն հեռացել էին եւ նուազ քանակութեամբ մարդիկ էին մնում: **Շահէնը** հարցրեց.*

– Ովքե՞ր են այստեղ մնում: Ով մնայ-չմնայ՝ չահումեանցի տղաներին հրամայում եմ մնալ:

*Այդ պահին «Գրադը» խփեց եւ տեղում գրեթէ մարդ չմնաց: Փորձառու հին տղաներն էին՝ **Պետօն, Ռոմիկը, Մանուէլը, Ազատը...** Պետօն ասաց.*

- Արմէն, ելնում ես, գնաս Նապատ եւ մեր բոլոր տղաներին հաւաքես ի մի:

Արմէնը ելաւ գնաց: Տղաները հաւաքուեցին ի մի, սակայն երբ «Գրադը» մի քանի անգամ էլ խփեց, արդէն իրենք գրեթէ մենակ էին: Նայելով դիրքերին, Պետօն լիովին համոզուած էր, որ դրանք առայժմ ետ վերցնել չի լինի: Շահումեանի հրամանատարութիւնն արդէն դուրս էր եկել:

ՄԱՆԱՇԻԴԻ ԴԻՐՔԵՐ

Մայիս Մխիթարեանը եւ Ալեքսան Ալեքսանեանը /Ալիկ/ /Հոկտեմբերեանի Ջոկատ/ *ապրիլից եղել են Բուզլուխում: Այդ ժամանակ պաշտպանական մի ընդհանուր գիծ էր: Մեր ջոկատները խնդիր ունէին ազատագրելու մեր գիւղերը: Ճիշտ է, ծանր տեխնիկա չկար, մէկ տանկ էր, մի երկու այլ տեխնիկա եւ մնացեալը ուսամբարձ տանելու զէնքեր էին: Նման պարագա-*

յին յարձակուող կողմի առաւելութիւնն անակնկալութեան գործօնն է եւ հայրենիքն ազատագրելու ցանկութիւնը: Բացի դրանից, մենք ստոյգ տեւեալներ ունենք ***Գեղամ Գաբրիէլեանից****, որ մեր ուղղաթիռային խումբը նախապատրաստուել էր մասնակցելու Գետաշէնի ազատագրման գործողութեանը եւ ճշտորոշուած էր, թէ ուղղաթիռները որ կէտերին պիտի խփէին: /տե՛ս «Օդաչուները» յաւելուածում/:*

*Մայիս ամսից Հոկտեմբերեանի ջոկատը տեղափոխեցին Մանաշիդ: Նրանց հետ էին տեղի աչխարհազօրայինները: **Մանաշիդը** սեպի նման խրուած էր Թուրքերի տարածքի մէջ. աջ կողմից Թոդանն էր, ղիմացից Սարիսուն էր, յետեւից՝ աջից՝ էրքէչն էր, ձախից՝ Բուզլուխը: Մանաշիդի դիրքը երկու նշեալ գիւղերի համեմատ՝ բարձրադիր էր եւ այս իմաստով՝ շատ կարեւոր: Էրքէչը փոսորակի մէջ է: Պաշտպանական գօտին գտնուում էր գիւղից վերեւ, անտառի փէչին, ուր «**Մեծն Տիգրան**» ջոկատն էր:*

*Թէեւ Մանաշիդի դիրքերը մտած էին հակառակորդի զբաղեցրած տարածքի մէջ եւ բնականաբար պիտի որ առաջինը այդ դիրքի վրայ լինէր գրոհը, սակայն **Մայիսի եւ Ալեքսանի** տեսակէտով, ռուս հետախոյզները լաւ տեղեկացուած էին, որ այս դիրքերը համեմատաբար ուժեղ են եւ հակակարկտային հրանօթներ կան տեղադրուած, հակատանկային զէնքեր՝ ԿՊՎԴ, ԴՇԿ, թուրքերն իրենց վրայ ուղղակի չեկան, այլ երկու կողմից իրենց չրջանցեցին: Ուրեմն, թուրք-ռուսական զօրքի մուտքը եղել է Բուզլուխի եւ էրքէչի ուղղութեամբ: Ամբողջ չրջակայքը Մանաշիդի դիրքերից տեսանելի էր, ինչ էլ որ չէին տեսնում, ձայներից էին կռահում: Սակայն Մանաշիդի կողմից չարժ չեղաւ, եկան Հոկտեմբերեանի ջոկատին յետեւից չրջանցեցին:* «Կապի ոչ մի միջոց չկար, մեզ որեւէ հրահանգ տուող չկար՝ նահանջե՞նք, մնա՞նք... Մեր ամբողջ կապի միջոցները վերանորոգման տակ էր, մեր ձեռքին բան չկար, շատ հին սարք կար, որ խոստանում էին արդիականացնել»: ***Շահէնի չտաքում*** *քննարկում են, թէ ինչ կերպ կարելի է կապ ստեղծել, թէկուզ կենդանի կապ: Եւ այդ պահին մի պատանի խնդրում է իրեն*

ուղարկել՝ հրահանգ տանելու Մանաշիդին: Նա խնդրում է իրեն ձի տալ, որպէսզի գնայ եւ լուր տանի: Սա արդէն երեկոյեան կողմ էր: Մանաշիդը պաշտպանող մարտիկներն անհանգիստ եւ անորոշ վիճակի մէջ էինք: Այդ պատանեակը հասնում է նրանց եւ ասում, որ Շահէնը հրամայել է թողնել դիրքերը եւ նահանջել: Անհրաժեշտ էր չտապ հեռանալ՝ չրջափակող օղակը իրենց թիկունքից արդէն փակւում էր: Այսպիսով հասկանալի էր, թէ ինչ է կատարուել, եւ դուրս եկան այդ կացութիւնից: Մանաշիդից ոտքով դուրս են եկել եւ հասել **Պըրըսա արխ** կոչուող վայրը՝ **Բուզլուխի եւ Մանաշիդի** անտառի վերջը: Իրենք հազիւ հասցրեցին անտառով մի կերպ դուրս գալ, եւ օղակը փակուեց: Մանաշիդից բոլորն են դուրս եկել, թէ՛ մարտիկները, թէ՛ բնակիչները:

Տպաւորութիւն կարող է առաջանալ, թէ ամէն ինչ պատահական ստացուեց եւ մտածուած բան չի եղել: Ո՛չ: Բոլորը հասկանում էին, որ Շահումեանը եւ Գետաշէնը Արցախի հիւսիսային պատուարն են, մուտքն են, եւ անհրաժեշտ է Գետաշէնն ազատագրել: Շահումեանի ղեկավարները գիշեր-ցերեկ անհանգիստ վիճակում ջանքեր էին գործադրում այդ ուղղութեամբ: «Մենք, այո՛, քայլելով կը հասնէինք մեր նպատակին: Կուչչի-Արմաւիր գիւղի մօտ էր նրանց ռազմական տեխնիկան եւ մենք պիտի հէնց այդ հատուածով առաջանայինք, գրաւէինք տեխնիկան եւ բնակավայրերը: Այն ժամանակ նոյնիսկ իրար հետ վիճում էինք, թէ ով է Գետաշէնն մտնելու, եւ նախապատուութիւնը տրուեց **Կարօտ Մկրտչեանին**, նա՛ պիտի մտնէր Գետաշէնն: Իր հարուածային ջոկատի թուաքանակը մեծացրեց Պռոշեանի, Ալավերդու, Բաղրամեանի եւ բազմաթիւ այլ մանր խմբերի հաշուին»: Գլխաւոր հրամանատարն անմիջականօրէն բոլոր ջոկատների հրամանատարներին հրահանգ է տուել, թէ ամէն ջոկատ որտեղից պիտի մտնի գործողութեան:

Եւ առեղծուածն այն էր, որ 14-ի կամ 15-ի առաւօտեան երբ պիտի հայոց խմբերը յարձակումն սկսէին, թուրքերը նախայարձակ եղան: «Մեր հետախուզութիւնը, որ գնաց եւ ետ եկաւ, որին մասնակցել էինք նաեւ մենք՝ **Մայիսը**, ես եւ

տեղացի մի չատ լաւ երիտասարդ, վերինչէնցի **Դաւիթը**, պարզեց, որ տեխնիկայի ձայն է լսւում: Յաջորդ օրը մենք երկու ուրիշ տղաների՝ **Արոյին եւ Արտակին** ուղարկեցինք արդէն ուրիշ՝ Թոդանի ուղղութեամբ: Մենք գնացել էինք Սարիսուի ուղղութեամբ՝ պարզելու, թէ տեխնիկան որ ուղղութեամբ են բերում եւ հաղորդեցինք հրամանատարութեանը»:

Վոլոդիա Ջանունց. «Մեր ջոկատը 70 հոգի էր: Յունիսի 12-ին, երբ թուրքերը յարձակուեցին, մինչեւ երեկոյեան ժամը 5-ը դիմադրել ենք: Գիւղից բոլորը դուրս են եկել, բացի մեր ջոկատից: Մենք վերջում գիւղը թողեցինք: Մեր ջոկատը Մանաչիղն էր պահում: Մեր ջոկատից զոհուեցին **Համազասպ Նահապետեանը, Արեգ Սողոյեանը**, վիրաւորուեցին մի քանի հոգի: Դուրս գալուց երկու հոգի են վիրաւորուել»:

Մարտին Քեօխվեան. *«Յունիսի 13-ին մեր տղաներից 2 հոգի զոհուեցին Մանաչիղում: Մէկի անունը **Համազասպ էր**, միւսինը՝ **Արէգ**: Հօրեղբօրս տղային՝ վիրաւոր **Մհերին** տարել էի հիւանդանոց: Էդ ժամանակ արդէն Շահումեանի ամբողջ շրջանին, շրջկենտրոնին խփում էին «Գրադ»ով: **Շահէն Մեղրեանին** ուսանողական տարիներից գիտեմ. նա տնտեսագիտականն է աւարտել, ես էլ սովխոզ-տեխնիկումը, միասին աշխատել ենք: Հիմա՝ 92-ի էդ օրերին գնացել եմ շտաբ, տեսնեմ Մեղրեանը նստած է, եւ մի գնդապետ էլ կար «Տիգրան Մեծից»: Շահէնը Երեւանի հետ կապի մէջ էր, ասում էր.*

- Ասացիք 3 ժամ պահեցէք, մենք 5 ժամ պահում ենք:

Նրանք կապի միւս ծայրից ասում են.

- 7 ժամ պահեցէք, օգնութիւն լինելու է:

- Եօթ էք ասում, տասն էլ ասէք՝ կարող ենք պահել, բայց օգնութիւն չէք տալու: Մեզ թւում է, որ չէք տալու:

- Չէ, գալիս է:

Այդպէս էլ մեզ օգնութիւն չեկաւ փաստօրէն:

Մեղրեանին մնում էր, հիմնականում, որպէսզի զոհեր չատ չլինէին: Ասաց.

- Հաւաքուեցէք մի տեղ, Գիւլիստանի Նապատում, որպէսզի վերականգնենք ուժերը եւ էնտեղից հակայարձակուենք եւ ետ

գրաւենք մեր եղածը: Հնարաւոր է, որ օգնութիւն գայ, բայց ուշ լինի:

Էդ ժամանակ, որ հաւաքուեցին Նապատում, եկան երկու ուղղաթիռ, որ երեխաներին տեղափոխեն: Իրենց հետ նոյնիսկ զէնք չէին բերել»:

ԿԱՐԱՋԻՆԱՐԻ ԴԻՐՔԵՐ

Կարաչինարի մասին տեղեկութիւն է հաղորդել տեղիս գու-մարտակի հրամանատար, մոսկուաբնակ ***Կոլիկ Պետրոսեանը****.* «Յարձակման ընթացքին հակառակորդը գործողութեան մէջ է դրել ինքնաթիռներ, տանկեր, ԲՄՊ, ԲՏՌ, ՍԱՌԻ, Հաուբիցներ: Հակառակորդը փորձ արեց հսկողութեան տակ առնելու Ինջա գետով անցնող Շահումեանը Մարտակերտի շրջանին կապող ճա-նապարհը: Ինջա գետի շրջանում մեր դիրքերի վրայ ճակատա-յին գրոհի ընթացքում հակառակորդը ետ շպրտուեց: Կէսօրին Շահէն Մեղրեանը հրամայեց Կարաչինարի գօտու բնակչու-թեանը տարհանել, քանզի այդ ընթացքում Էրքեջ, Բուզլուխ, Մանաչիդ գիւղերը արդէն հակառակորդի վերահսկման տակ էին եւ թշնամու ռազմական տեխնիկան Հայ Պարիսը շրջանցելով մօտենում են Կարաչինարին: Հակառակորդի զրահատեխնիկայի մի մասը ռազմաշարժով անցնում է Կարաչինարի դիրքերի թի-կունքը Մանասինչէնի դիրքերի աջ թեւի եւ Զինարվի շրջանում գտնուող առանձնակի դասակի պաշտպանական դիրքերի միջեւ: Այդ ժամանակ զրահատեխնիկայի շարասիւնը, որը շարժւում էր Հայ Պարիսի կողմից թափանցեց մեր դիրքերի աջ թեւը եւ մտաւ Գաղթուտ: Կարաչինարի ՄՀ Գումարտակի պաշտպանութեան հիմնական շրջանը գործնականում շրջապատման մէջ էր: Քանի որ գումարտակի եւ ազգաբնակչութեան ֆիզիկական ոչնչացման վտանգն ակնյայտ էր, բնակչութեան դուրսբերման եւ պաշտպա-նութեան շրջանային ուժերին միանալու համար գումարտակի նահանջի որոշում է ընդունուել: Այն յաջողուեց իրագործել միայն գիշերը: Յաւօք, խաղաղ բնակչութեան մէկ մասը զոհուեց կամ գերի ընկաւ: Բնակչութեան լրիւ տարհանումը չյաջողուեց, քանզի ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ ուժ ու միջոցներ:

Այսպիսով թուրքերն ամենաուժող հարուածն առաւօտեան ժամը վեցին հասցրեցին **Ջամբազին**, **Կարօտի** պաշտպանական ուղղութեանը, երկրորդ հարուածը հասցրեցին Էրքէչին»:

Ջամբազի բարձունքի դիրքերը ետ գրաւելու ***Կարօտ Մկրտչեանի*** *անձնուրաց եւ հերոսական փորձը յուշում է, թէ որքա՜ն սխալ են նրանք, ովքեր Շահումեանում արիութեան պակաս են նկատում, որ իբր այնտեղ խիզախներ չեն եղել եւ փոքրոգօրէն յանձնել են դիրքերը՝ իրենց գլուխն են պրծացրել: Սակայն բոլորն էլ Կարօտի նման եթէ թշնամուն ամէն կերպ դիմակայելու փորձ անէին, ռազմիկները խոտերի նման կը հնձուէին, իսկ ժողովուրդը կը մնար թշնամու վայրագութեան բաժին: Կարօտի հոգեվիճակն էլ պէտք է հասկանալ, քանզի նա Պռոշեանում ուխտել էր գնալ Շահումեան, Գետաչէնն ու Մարտունաշէնը վերցնել իր ընկերների հետ եւ վերադառնալ: Եթէ Կարօտը ողջ մնար, նա չէր կարող Պռոշեան մտնել, քանզի ուխտել էր:*

Կարօտը չհանդուրժեց պարտութիւնը եւ գնաց բացարձակ նահատակութեան, նրա խառնուածքը, բնաւորութիւնը, նրա ոգին չէին հանդուրժում պարտութիւն, նա նախապէս տրամադրուած է եղել յաղթանակի եւ այդ ասել է Պռոշեանում, եւ նա առաջնորդուել է «Յաղթանակ կամ մահ» երկընտրանք չհանդուրժող, բացառիկ ուխտով: Կարօտին այս անգամ նահատակութիւնը բաժին հասաւ, սակայն նման ոգի ունեցող բանակը իրապէս կարող է յաղթական լինել: Պարտութեան նախադրեալներ կային. եւ դիրքերի աննպաստ վիճակը, եւ բարձրութեան կորուստը, եւ տեխնիկան, եւս առաւել՝ հրազատների ղաւաճանութիւնը:

Որեւէ մէկի մտքով չի անցել, թէ միգուցէ Շահումեանը կորցնենք: ***Շահումեանի հայն ինքն իրեն զգում էր իր երկրի, իր փոքր աշխարհի տէրը եւ բոլոր նախադրեալները կային այն պահելու, եթէ քաղաքական յայտնի խաղերը չլինէին եւ հայը լինէր մենակ թուրքի հետ ղէմ-յանդիման: Այս իմաստով շահումեանցիների հանդէպ այս խաղը կիրառելը ղաւաճանութիւն է գոնէ շահումեանցիների նկատմամբ, իսկ մեղքը***

չահումեանցիների վրայ բարդելը, Շահէնին մեղաւոր հանելը՝ ստորութիւն:

ԱՑԼ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահէն Յովասափեան. «Ինչպէ՞ս յանձնուեց Շահումեանը: Մինչ այդ, բոլորս գիտէինք, որ Գետաշէնը պիտի վերցնենք: Գետաշէնցիները 25 հոգիանոց ջոկատով սպասում էին Բուզլուխում, որ էսօր-վաղը պիտի վերցնենք գիւղը: Յունիսի 11-ին հրաւիրուեց չտաբի նիստ: Բոլոր ջոկատների հրամանատարներն էին, **Սերգէյ Ջալեանը** եւ Յատուկ գնդի հրամանատար **Վոլոդիա Կարապետեանը**:

Առաջին հարցով քննարկեցինք թիկունքի պետի պատասխանատուութիւնները: Յիշում եմ, որ շտապ օգնութեան մեքենաներով Բուզլուխում ժամանակաւոր զինբուժարան (հոսպիտալ) պիտի բացուէր, սննդի հետ կապուած հարցեր էին եւ այլն: Մի խօսքով՝ այդ հարցերն իրենց լուծումներն ստացան եւ Շահէնն ասաց, որ ես ազատ եմ, ու ես դուրս եկայ: Ուղղակի՝ գործեր ունէի եւ գնացի: Իրենք գտան, որ ամէն ինչ բնականոն է եւ գնացին իրենց դիրքերը: Սերգէյն այդ գիշեր գնաց Բուզլուխ եւ ետ վերադարձաւ: Միւս գիշեր նորից գնաց Բուզլուխ եւ գիշերուայ մէկին եկաւ Բուզլուխից եւ պառկեց քնելու: Այսպէս, թուում էր, թէ ամէն ինչ բարեյաջող է եւ **Վազգէն Սարգսեանը** մեզ իրաւունք պիտի տար յարձակումն սկսելու: Իրաւունք, ի հարկէ, վաղուց էր տուել, պարզապէս մե՛նք պիտի յայտնէինք պատրաստուածութեան մասին եւ գործողութիւնը պիտի սկսէինք:

Ու այդ առաւօտեան ժամը 5 անց 30-ին (ես չտաբում էի քնում) զանգ եկաւ Բուզլուխից: Հրամանատարն էր, ասաց, որ թուրքերը մեծ ուժերով յարձակուել են: 5-10 րոպէ անց Մանաչիդից եւս զանգեցին, թէ Էրքէչի ու Մանաչիդի վրայ են յարձակւում: Այսինքն՝ բոլոր կողմերից սկսել են»:

Ի տարբերութիւն Շահումեանի նկատմամբ իշխանութիւննե-րի անտարբեր եւ դաւաճանական դիրքորոշման, Գիւլիստանի

գաւառի կորուստը խորապէս յուզել է եւ հիմա էլ յուզում է հայոց ամենատարբեր խաւերի եւ շերտերի մարդկանց: Շահումեանի անկման պատկերը եւ նոյնիսկ պատճառաբանութիւնը բաւականին որոշակիութիւն է ստացել եւ շատերի համար է պարզուել, որ Շահումեանն, իրօք, ծախել են: Հայրենավաճառութիւն է եղել, ինչպէս մէկը կը ծախի իր պատկանելիք հողատարածքը: Մոռացել են, որ հայրենիքը միայն հող չէ, այլ նրա վրայ ապրող ժողովուրդն է, ազգն է՝ անչարժական, որ պիտի տեղում հաստատ եւ յաւիտենապէս մնայ, որպէսզի արարի, զարգանայ, ապագայ ունենայ: ***Մկրտիչ Մկրտչեան (Մակիչ)***. «Պիտի չմոռանանք, թէ ինչ կատարուեց Գետաշէնում, որը եւս թելադրուած էր ժամանակի քաղաքականութեամբ, եւ մենք յանուն ժողովրդի պիտի նահանջէինք: Գետաշէնում **Թաթուլը** նահանջը չհանդուրժեց եւ գնաց ինքնազոհաբերութեան:

Սակայն Շահէնն աւելի հեռատես եւ սառնախոհ էր. նա իր ժողովրդին դուրս բերեց, այլապէս ակնյայտ է, որ ե՛ւ ժողովուրդը պիտի ոչնչանար, բանակը ջարդուէր, ե՛ւ Շահումեանը պիտի կորցնէինք: Շահէնը փրկեց իր ժողովրդի կեանքը յանուն ապագայի: Թաթուլի պարագային ե՛ւ տարածքը կորցրինք, ե՛ւ թանկ զոհեր տուեցինք:

Չմոռանանք, որ Գետաշէնի բռնազաւթումից յետոյ խորհրդային զօրքերը թուրքերի հետ միասին յարձակուել էին Շահումեանի Բուզլուխ, Մանաշիդ, Էրքէչ գիւղերի վրայ: Այդ գիւղերը, ռուսների ծրագրի համաձայն, պիտի գրաւուէին Գետաշէնի հետ, բայց երեք ամիս դա յետաձգուեց, որովհետեւ Շահումեանի ինքնապաշտպանական ուժերը հաւաք եւ վճռական էին, եւ ռուսները հաւանաբար վախենում էին: Ղեկավարութիւնն ու ռազմիկները Շահէնին հաւատում եւ վստահում էին: Նրանք 92-ի ամռանը Շահումեանի վրայ եկան արդէն մի քանի տասնեակ անգամ գերազանցող ուժերով՝ համեմատ Գետաշէնի, որովհետեւ գիտէին, որ Շահումեանի ինքնապաշտպանութիւնը մարդուժի տեսակէտից ամուր է: Իսկ Շահումեանի ժամանակ նրանք մի քանի գլխաւոր ուղղու-

թիւններով, ահռելի տեխնիկայով անակնկալ կերպով յարձակուեցին: Մենք այդ ուժին հակադրելու, դիմակայելու ուժ չունէինք:

Այն օրերին եւ այսօր էլ գուցէ, մարդիկ ասում էին, թէ իբր Շահումեանը չդիմակայեց, չահումեանցիք չկռուեցին: Մենք ի՞նչ ունէինք այդ ուժին հակադրելու: Շահումեանի ջոկատներն ի՞նչ պիտի հակադրէին Զորրորդ բանակի երկրորդ դիւիզիային, որը Շահումեանի դէմ էր հանել 130 տեխնիկա: Եթէ Շահէնը չկարողանար ժամանակին նահանջը կազմակերպել, ամբողջ ժողովուրդը եւ ջոկատները կ՚ոչնչանային»:

*Շահումեանի անկման պատկերն ու պատճառները պարզորոշ կերպով տրուած են **Շահէն Մեղրեանի** մամլոյ ասուլիսում եւ հարցազրոյցներում, որոնց դեռեւս կ՚անդրադառնանք: ՀՀ իշխանութիւնների կողմից Շահումեանի յանձնումն այլեւս որեւէ կասկածի տեղ չի թողնում եւ պատմութեան առեղծուածային էջերից չէ, մանաւանդ մամուլում արդէն յօդուածներ են հրապարակուել:*

«Հետաքննութիւն» պարբերականի յօդուածաշարի** հեղինակ **Քերոբ Սարգսեան. «Թէեւ 1991-1992 թուականից մինչեւ օրս Գետաշէնի տարածաշրջանի անկումը համարւում է Արցախեան պատերազմի ամենամեծ կորուստներից մէկը, սակայն երբ 1992-ի յունիսին այդ տարածաշրջանը հակառակորդը թողել էր գրեթէ անպաշտպան եւ հնարաւորութիւն էր առաջացել առանց մեծ ջանքերի այն ազատագրել, հայկական բարձրաստիճան ղեկավարութիւնը կարծես թէ այնքան էլ ոգեւորուած չէր դրանով... Շահումեանում կուտակուած էին ընդամէնը 400-500 ազատամարտիկներ, 4-5 միաւոր զրահատեխնիկա, նոյն քանակի էլ հրետանի: Ասել, թէ չունենալու պատճառով այդ օրերին հնարաւոր չէր Շահումեան ուղարկել գոնէ 1-2 հազար հետեւակային, գոնէ 10-ական տանկ եւ ՀՄՄ, ի հարկէ, ծիծաղելի կը լինէր թէկուզեւ այն առումով, որ հէնց նոյն օրերին այդ միջոցներից շատ աւելին առկայ էր թէկուզեւ միայն Մարտակերտում»:

«Հետաքննութիւն», թիւ 53, 8-10 յուլիս, 2008

Գլուխ տասնչորսերորդ
ԲՌՆԱԳԱՂԹԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՋՈԿԱՏԸ ԲՌՆԱԳԱՂԹԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Պետրոս Մեղրեան. «Երբ մեր հետախոյզները մտնում եւ տեսնում են, որ ահռելի ուժ է կանգնած, այնինչ մեր յարձակումն էր նախապատրաստուած, գալիս եւ **Շահէնին** յայտնում են: Երբ արդէն սպառուած էին պաշտպանուելու հնարաւորութիւնները՝ **նա հրամայում է առաջաւոր բնագծի գիւղերի բնակիչներին տեղափոխուել Գիւլիստան: Դա ամենաճիշտ քայլն էր: Որովհետեւ այդտեղ ժամերի, րոպէների հարց էր: Եթէ մի քիչ տեղափոխումը ձգձգուէր, ժողովրդի 60 տոկոսը տեղում կը մնար**: Երբ թուրքերը երեք ուղղութեամբ յարձակւում են, այդ գիւղերում նուազ քանակութեամբ մարդիկ էին մնացել, ծերեր, որոնք անկարող էին կամ չէին ցանկանում լքել իրենց բնօրրանը, կամ պատահական մնացած մարդիկ: 14-15 հազար մարդուց մնացել կամ անյայտ կորել են մի քանի հարիւր մարդ»:

Ընդհանուր պատկերն այս է. Շահումեանի գիւղերի բնակչութիւնը տեղափոխւում է Գիւլիստան: Հայ Պարիսի եւ Բուզլուխի գրաւումից յետոյ Մանաչիդի եւ Էրքէչի դիրքերում գտնուող ջոկատներն ընկնում են չրջապատման մէջ եւ մեծ դժուարութեամբ անտառներով նահանջում են դէպի Գիւլիստան: Գիշերը սկսւում է Գիւլիստանի ռմբակոծումը, ուր այդ պահին հաւաքուել էին 12-13 հազար մարդ: Տանկերը սկսում են մօտենալ Գիւլիստանին Վերին Շէնի կողմից: Որոշւում է ժողովրդին հանել Գիւլիստանից: Նահանջը կազմակերպւում է երկու ուղղութեամբ: Ժողովրդի տարհանումը կատարւում է հիմնականում Հաթերքի ուղղութեամբ, իսկ մարտական տեխնիկան՝ տանկը եւ երկու զրահամեքենաները, Մատաղիսի ուղղութեամբ:

*Անտառում, **Սասունից** բացի, էլ ուրիշ հրամանատար չկար, բայց Հաթերքի անտառային ճանապարհը նա էլ չգիտէր: Տեղի ժողովրդին եւ զինուորականներին ասաց.*

- Ես եմ հրամանատարը, ի՛նձ պիտի ենթարկուէք:

Ժողովրդին մարտիկները չրջակալած սկսեցին առաջանալ, որպէսզի վտանգի չենթարկեն: Որսորդներից մարդ չէր մնացել եւ Հաթերքի ճանապարհը փաստօրէն իմացող չկար: Մի որոշ ճանապարհ անցնելուց յետոյ այն բաժանուեց երկու մասի:

*Ժողովրդի փոքր մասի հետ Սասունը **Մէչիկին** ուղարկեց դէպի աջ, իսկ իրենք մեծամասնութեան հետ՝ դէպի ձախ: Դուրս եկան դէպի **Եղիչէ Առաքեալ** վանք, որը հեռու չէր Մատաղիսից, հասան Մատաղիսի մերձակայքը, եւ մի մեքենայ եկաւ եւ ժողովրդին տեղափոխեց:*

Սկզբում ուզում էին պաշտպանական դիրք գրաւել, դիմակայել թշնամուն: Սասունին հեռախօսային կապից յայտնի էր, որ գնդապետի հետ պիտի օգնական ուժեր գային, սակայն գնդապետը հայհոյում էր, քանզի ուժեր չէին տալիս, խաբում էին, այնինչ եղած ուժերով թշնամուն դիմակայել չէր լինի:

*Համոզուելով, որ օգնական ուժ չի լինի, հրամանատարութիւնը որոշեց կազմակերպել դիմադրութիւն՝ ժողովրդի տեղափոխութիւնը ապահովելու համար: Ժողովուրդը գետի հունով բարձրանում էր դէպի Մռաւի փէշերը: Գաղթի սարսափազդու պատկեր էր: Թշնամին «Գրադով» խփում էր ճանապարհներին: Գիւղերի ամբողջ տեխնիկան մնաց ձորում, որքան հնարաւոր էր՝ բարձրացրին: Ժողովուրդը վերցնում էր միայն առաջին անհրաժեշտութեան իրերը: **Սասունի եւ Պետոյենց** ջոկատներն օգնում էին ժողովրդին: Հասան Մռաւի փէշերը եւ այնտեղ ժողովուրդը բաժանուեց երկու մասի. մէկն ուղղութիւն վերցրեց դէպի Հաթերք, միւսը՝ դէպի Մատաղիս: Պետոյենք գնացին վերեւ, իսկ Սասունենք դէպի **Երիցմանկունք: Ղազինեանը** Ալավերդցի երկու տղաների հետ առաջ էր անցել, որպէսզի կառավարութիւնը մեքենաներ ուղարկէր ժողովրդին ընդառաջ: Հոծ ժողովուրդ էր կուտակուել, եւ Մարտակերտից պիտի մեքենաներ գային ժողովրդին տեղափոխելու համար: Ամբողջ ժողովուրդը փաստօրէն տեղափոխուեց, մնացին ալավերդցիների 7 հոգին: Սիպտուած ոտքով նոյն ճանապարհն անցան: Ընկան չրջապատման մէջ եւ մեծ դժուարութեամբ դուրս եկան Հաթերք: Այնտեղ հանդիպեցին*

Պետոյենց: Այնուհետեւ գնացին Մարտակերտ, որպէսզի մասնակցեն տեղի գործողութիւններին: Սակայն հրահանգ եկաւ, որ պիտի գնան Շուշի եւ մի քանի օր հանգստանան:

Ռաֆիկ Ղազինեան. «Գիւլիստանում կար 14000 բնակիչ: Ժողովրդի վերջին մասի հետ մենք էլ, շուրջ 200 աւտոմատաւորներ, հեռացանք Գիւլիստանից: Վերջին անգամ **Սարոյին** այդտեղ տեսայ, որ Կարօտի տղաների հետ մնաց ժողովրդի այդ հատուածի դուրսբերումը թիկունքից ապահովելու համար: Ինչով կարող էինք՝ օգնում էինք մարդկանց դէպի Հաթերք բարձրանալու ճանապարհին: **Շամլուղեցի Միշան** երկու ոտքը կտրած մի գիւլիստանցու իր ուսերին դրած՝ բարձրացրեց սարը: Քսան կիլոմետրից աւելի վեր բարձրացող ճանապարհը մարդիկ յաղթահարեցին 5-6 ժամում: Անօրինակ մի տոկունութեամբ քայլում էին կանայք՝ տանելով իրենց երեխաներին: Հազարաւոր մարդկանց այդ գաղթը անհնարին է առանց յուզմունքի յիշել: Տանեակ կիլոմետրեր յաղթահարելուց, անձրեւի տակ թրջուելուց եւ չորանալուց յետոյ անտառներով հասանք **Երիցմանկանց վանքը**, որտեղ գտած մի մատեանում գրեցինք մեր տառապանքի պատմութիւնը: Մեզ անհրաժեշտ էր ռադիոկապ, որովհետեւ, ինչպէս յետոյ պարզեցինք, ոչ ոք տեղեակ չէր այդ ժողովրդից: «Արաբօ» ջոկատի երեք տղաների հետ **ես, Հրաչիկը եւ Բաբկէնը** շարժուեցինք առաջ՝ լուր տալու համար: Վերստին 17-18 կիլոմետր քայլելով, հասանք Մաղաւուզ, որտեղ ռադիոկապ կար: Կապուեցինք Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարի հետ ու տեղեակ պահեցինք Երիցմանկանց մերձակայ անտառներում գտնուող 2-3 հազար մարդկանց մասին: Միաժամանակ լուր տուեցինք հակառակորդի գրօհի հետագայ ուղղութեան մասին, որին տեղեակ էինք: Առաւօտեան Մաղաւուզից ու Մարտակերտից մեքենաներ իջան՝ ժողովրդին տեղափոխելու համար» («Երկիր», 20 յունիսի 1992 թ.):

Վարուժան Փամբուխչեան. «Նոյն թափով յարձակումը չշարունակեցին, այլապէս կը հասնէին Մարտակերտ: Ճանապարհ

տուեցին, որ ազգաբնակչութիւնը դուրս գայ: Մենք բարձրացանք Ինջա գետի ափով դէպի վեր, սարերը, Մռաւ, որպէսզի գնանք Մարտակերտ, բայց մեզ էլ ուղեկցող չկար, ճանապարհը չգիտէինք: **Ղազինեան Ռաֆիկենք** երիցմանկունքով են բարձրացել, մենք գնացել ենք դէպի Հաթերք: Յետոյ իրենք դուրս են եկել Մատաղիս: Ժողովուրդը Ինջա գետի ափին, Գիւլիստանից վերեւ, նստել էր հանգստանալու՝ թուրքերը խփեցին: Դէպի սարերը խփում էին քշելու համար: Սկզբից երթը չատ անկազմակերպ էր. յոգնած էին, ծարաւ, յետոյ կազմակերպեցին, եւ ուղղութիւններն արդէն որոշելով գնում էինք, տղաները տեղանքը գիտէին եւ բերին իջեցրին Հաթերքի գլուխ:

Մի երկու-երեք օր տեւեց էդ ամբողջը, որովհետեւ 70 կիլոմետր էր: Հաթերքցիները կեցցէն, իրենք էլ ուտելու կարգին հաց չունէին, սեւ հաց էր, բայց էդ ամբողջ ժողովրդին ընդունեցին չատ սիրով, անունդ, քնելու տեղ տուեցին:

Այդ գաղթին, բնականաբար, է՛լ հնարաւոր չէր կազմակերպուած բնոյթ տալ. ամէն մէկն իր տնից մի վիճակով դուրս էր եկել եւ բռնել փախուստի ճանապարհը, ինչպէ՞ս կազմակերպես: Ջոհեր էլ եղան, երեխայի էլ ջուրը տարաւ, չատ բաներ եղան...

Մենք հասանք Հաթերք, երկու օր մնացինք եւ եկանք Շուշի: **Մհերն ու Անուշաւանն** էլ 10 օր կորած էին: Նրանք անտառների մէջ մոլորուել էին եւ մնացել այնտեղ:

Ամենայն ուշեցուածք մնաց թուրքին: Արժէքաւոր չատ բաներ կային, ազգագրական, թանգարանային իրեր, մի երկու հարիւր տարուայ կարպետներ, չատ բաներ, որ հիմա երեւակայել անգամ չենք կարող, ժողովրդի մի քանի հարիւր տարուայ հարստութիւնը մնաց թուրքի բաժին»:

Ոմանք հնարաւոր ամէն ինչ արեցին եւ կարողացան իրենց հարազատներին ԼՂՀից անմիջապէս դուրս տանել եւ հասցնել Հայաստան: Նրանց հետեւեց եւ բռնագաղթուածների այն մասը, որոնք Հայաստանում հարազատներ ու բարեկամներ չունէին: Եւ մարդիկ, որոնք մտածում էին միայն Արցախից չուտափոյթ հեռանալ՝ ոտքով Ստեփանակերտից բռնեցին

Գորիս տանող ճանապարհը: Փախստականները հասնելով Գորիս, այնուհետեւ ճանապարհը չարունակեցին ու ցրուեցին Հայաստանի քաղաքներում ու գիւղերում, ապա սկսուեց արտագաղթը Ռուսաստան, Միջին Ասիա եւ այլուր:

*Դա մի ահասարսուռ, մխաժամանակ ամօթալի ու անպատուաբեր տեսարան էր, բնապատմական մի ներկայացում, որի հեղինակները Հայաստանի նորանկախ Հանրապետութեան երիտասարդ վարիչներն էին: Արցախում ՀՀՇի նորանշանակ տեղապահի հետ այդ օրերին փոքր հարցազրոյց ունեցաւ սոյն գրքի հեղինակը: Արցախեան ղեկավարութիւնը համօրէն չփոթմունքի մէջ էր, միայն այդ տեղապահի դէմքից էր ճառագում զուարթութիւն. նա հէնց այդ օրերին հասել էր բաղճալի պաշտօնին եւ այնքան էլ մտահոգուած չէր իր երկրի կէսի բռնագաղթով: Գաղթի վերաբերեալ մեր մտահոգիչ հարցումին նա հետեւեալ պատասխանը տուեց. «Գաղթը հետեւանք է աղրբեջանցիների ոմբակոծումներից առաջացած խուճապի: Բնակչութեան զանգուածային *տեղափոխութիւնը* կարելի է հասկանալ մարդասիրական առումով, բայց ոչ ռազմավարական: Նրանք, ովքեր հեռանում են իրենց ունեցուածքով, հազիւ թէ այլեւս յետ վերադառնան» (*«Ազատամարտ», թիւ 37, սեպտեմբեր, 1992*): Այդ պաշտօնեան բռնագաղթ եզրը փոխարինել էր զանգուածային տեղափոխութիւն բնորոշմամբ, կարծես նպատակային կերպով բնակչութեանը տեղափոխում են մի երկրից միւսը: Նաեւ չնշեց, թէ գաղթն ինչի հետեւանք է: Ինչեւէ, եղածն իրօք ողբերգութիւն էր, այնպիսին, ինչպիսին Առաջին Աշխարհամարտի տարիներին Արեւմտահայաստանում: Վերոնշեալ յօդուածում, որը հրապարակուել է իրադարձութիւնից անմիջապէս յետոյ, գրուած է.* «Գաղթի իրական պատճառը գտնելու բանալին, մեր կարծիքով, հետեւեալն է: Պէտք է պարզել, թէ ում է ձեռնտու 4 տարի մարտնչող Շահումեանի անկումը, Արցախի հացի չտեմարան Մարտակերտի մեծ մասի կորուստը: Պատասխանը, կարծում եմ, որոշակի է: Նրան, ով պայքարում է Հայ Դատի դէմ, Արցախի կորստեան գնով ձգտում է «խաղաղութեան», նրան, ով չի ընդունում Արցախը որպէս ինքնիշխան պետութիւն: Ո՛վ կարողացաւ

աստիճանաբար վերացնել Արցախեան օրինականօրէն ընտրուած իշխանութիւնները, նա՛ էլ կարողացաւ տեղահանել աւելի քան հարիւր հազար մարդ *(ի միտ ունի նաեւ Ադրբեջանի միւս վայրերի հայութիւնը)*, որպէսզի տարածքի հետ կարողանան վարուել այնպէս, ինչպէս կամենում են» *(նոյն տեղում)*: /Շահումեանի այդ գաղթը ողբերգաբար համակեց Հայաստանի եւ Արցախի հայութեանը, որ առ այսօր գաղթում է Հայաստանից, որպէսզի անասելի ծանր պայմաններում փող աշխատի, ուղարկի երկրում ապրող իր հարազատներին: Այդ դառը քրտինքի արդինքը, աւաղ, երկրի ժողովուրդը չի վայելում, այլ բազում մեթոդներով հոսում է հարուստների գրպանը, այդտեղից էլ՝ միջազգային որոշ կազմակերպ ուժերի տրամադրութեան տակ/:

Շահումեանցիներին որեւէ տեղ հնարաւորութիւն չտուին համախումբ ապրելու, պայմաններ չստեղծեցին, եւ շատերը աստանդան եղան, իրենց գոյութիւնը պաշտպանելու համար լքեցին Հայաստանը:

ՊՈՇԵԱՆԻ ԽՈՒՄԲԸ ԲՌՆԱԳԱՂԹԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Արդէն մնում էր միայն գաղթը կազմակերպել, բնական ընթացք տալ, քանզի թշնամին կռահում էր, թէ որ կէտերին պիտի խփի, որպէսզի նահանջողներն այլեւս հնարաւորութիւն չունենան ինքնապաշտպանութիւն կազմակերպելու:

Տղաները բարձրացան Մռաւի ստորոտի ամենաբարձր կէտը եւ ուզում էին գիշերել այնտեղ: Սակայն մի արկ պայթեց հէնց այդտեղ, եւ ժողովուրդը խուճապի մատնուեց, բաժանուեց երկու մասի. մի մասն ուղեւորուեց դէպի **Հաթերք**, միւսը՝ նետուեց դէպի ձորը մի ուղեկցորդի հետ: Որպէսզի ժողովուրդն արկածահար չլինի՝ **Հրաչն** իջաւ ձոր, իսկ տղաները պիտի այս մի հատուածի հետ մնային: Գիշերուայ կէսն էր: **Արմէնն ու Ֆելոն** կամաց-կամաց կարգաւորեցին երթը: Ալավերդու տղաներն էլ այդտեղ էին եւ կային «Տիգրան Մեծ»ից: Հասան Երիցմանկունք: Մարտակերտից սնունդ բերեցին եւ գիշերը մնացին այդտեղ:

Նախքան Երիցմանկունքը, մի քարանձաւ էին գտել եւ

կանանց ու երեխաներին տեղաւորել: Մնացածն իրենց գլխի ճարը պիտի իւրովի տեսնէին: Ահաւոր անձրեւ էր: Մի կերպ լուսացրին եւ ճամփայ ընկան: Արդէն երրորդ օրն էր՝ որ հաց բերեցին: Մինչ այդ, երեխաներ կային՝ սովամահ էին լինում: Հովիւներին ստիպեցին, որ կովերին կթեն, տան երեխաներին: Հովիւները նոյնիսկ չէին ուզում կովերին կթել, աւտոմատով են ստիպել: Երիցմանկունքից մէկ օր անց արդէն Հաթերքում էին:

Սողոմոն Լալայեան.– Վերջին տեղահանութեան լուրը երբ լսեցինք, հրապարակի վրայ հաւաքուեցինք, որպէսզի Շահումեանի ժողովրդին դոնէ դուրս գալուց քեոմակ անենք: Մենք պիտի ուղղաթիռով գնայինք, բայց օդանաւը թափել է արկերը եւ գնացել է վիրաւորներին վերցրել եկել ու դրանով մենք չենք գնացել: Ես էի, Լեոնիկն էր, Եաշան էր, Բենոն էր, Բենոյի եղբայրն էր, Զէյթունի տղերքն էին, մի 10-15 հոգի էինք: Գնացինք **Վազգէն Սարգսեանին** ասացինք, որ գնում ենք Շահումեանի ժողովրդին օգնութեան: Գնացել ենք, զէնքերը, մնացած ամէն ինչ ստացել. Վազգէնն ասաց, թէ դուք գնալու էք **Կոմանդոսի** հրամանատարութեան տակ, ինչ ասի՝ էն անէք: Մենք ասացինք՝ ըտենց պեան չկայ: Մենք գնում ենք Շահումեանի ժողովրդին օգնութեան... Կոմանդոսը մեզ կարայ բոլորովին ուրիշ պեանի ուղարկի, տեա մեզ ձեռք չի տալիս: Բա թա ձեռք չի տալիս, ուրեմն պէտք չի, որ դուք գնաք:

Մենք զէնքերը ետ տուինք, **Եաշան** ասաց՝ չէ, ես ետ չեմ տալիս, ես գնում եմ: Իրեն ասացինք. «Արա, տրա ըսկի զէնքն էլ մեզ պէտք չի, արի մեր ընթացքով գնանք»: Տեա մեզ չլսեց, ինքն իրեն գնաց, ըտենց էլ անյայտ կորաւ: Բայց մենք ուրիշ մեքենայով գնացինք, հացի փուռից հաց պեռնեցինք ու մենք գնացինք Հաթերք: Ժողովրդին օգնեցինք: Բայց Եաշան մեզ հետ չեկաւ, գնացել է, ընկել «Արաբոյի» տղերքի հետ, Զայլուում վարի են գնացել:

Մեղրեան Շահէնը եթէ չլինէր, մեր չրջանը նոյնիսկ 90 թուականին կարային հանէին: Մարդը դօշ ա տուել, նա կռիւ ա արել, կազմակերպել ա: Ուժը ինչքան պըտացել ա՝ արել ա:

Շահումեանի գաղթականութեան թուաքանակի մասին տարբեր կարծիքներ են արտայայտուել: Ահա մի պատկեր Շահումեանի գաղթականութեան վիճակի, քաղուած «Մռաւի ղօղանջներ» պարբերականի 1997 թուականի թիւ 2-ից.

Շրջանի բնակչութիւնը 1989 թ.-16110

Բռնագաղթից յետոյ Հայաստանում մնացածները. 1997թ.,

Շահումեան աւան 4200	*Շահումեան աւան 387*
Վերինշէն 5050	*Վերինշէն 604*
Ղարաչինար 2100	*Ղարաչինար 286*
Մանասիշէն 850	*Մանասիշէն 150*
Գիւլիստան 880	*Գիւլիստան 250*
Հայ Պարիս 800	*Հայ Պարիս 128*
Էրքէջ 620	*Էրքէջ 260*
Բուզլուխ 550	*Բուզլուխ 150*
Խրխափոր 490	*Խրխափոր 160*
Գաղթուտ 340	*Գաղթուտ 100*
Մանաչիդ 230	*Մանաչիդ 78*

Ընդամէնը՝ 2553

***Ռոբերտ Այդինեանի** տուեալներով՝ Շահումեանի բնակիչների թիւը եղել է 16600:*

Շահումեանի անկման հինգերորդ տարում աւելի քան 16 հազար բնակիչներից Հայաստանում մնացել են ընդամէնը 2500-ից մի քիչ աւելի մարդ:

Շահումեանում զոհուել են հարիւրաւոր խաղաղ բնակիչներ: Բազմաթիւ մեծահասակ բնակիչներ ուժ եւ հնրաւորութիւն չեն ունեցել դուրս գալու եւ մնացել են բնակավայրերում, սպանուել կամ մնացել պատանդեալ վիճակում: Գաղթի ծանր ճանապարհին էլ եղել են մահացողներ: Բուն մարտերի ժամանակ զոհուել կամ անհետ կորել են.

Կարօտ Մկրտչեանը /Պռոշեան սովխոզ, անհետ կորած/,

Գարիկ Սարգսեանը /Ալավերդի/

Գառնիկ Յովհաննիսեանը /Մարտակերտ,ապրում էին Երեւանում/

Ալիկ Ասատրեանը /Հոկտեմբերեան/

Նորիկ Խաչատրեանը

Համազասպ Նահապետեանը /Վերին Շէն/

Արէգ Սուղեանը /Վերին Շէն/

Մեծ թիւ են կազմել վիրաւորները:

Գլուխ տասնհինգերորդ
ԱՏԵԱՆ ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱԽՈՒԹԵԱՆ ՆՈԽԱԶՆԵՐ

Դաւեր նիւթելու չարի հնարամտութիւնն աներեւակայելի է ու անսահման:

Կոտորածից, թուրքի սպանդից փախչող շահումեանցիներին առաւել ծանր հարուածը սպասւում էր առջեւում: Մեծ պարտութիւնների իսկական պատճառները պարտակելու համար քաւութեան նոխազներ են փնտրում: Շահումեանի անկումը բացառութիւն չեղաւ: Շահումեանցիների նկատմամբ կիրառուեց ամենաանմարդկային վերաբերմունք: Եւ սկսուեց շահումեանցիներին քաւութեան նոխազ դարձնելու գործընթացը: Դա նախօրօք մտածուած, մշակուած ծրագրի մաս է կազմել, քանզի մեր երկրի ճակատագիրը որոշողները լաւ են իմացել զանգուածային հոգեբանութեան օրինաչափութիւնները:

Հակահայ քարոզչութիւնն այդպէս է աշխատել եւ տեղեկատուութիւնն այդպէս է հաղորդուել՝ հաշուի առնելով հոգեբանական այն բոլոր հանգամանքները, որոնք կիրառւում են քայքայիչ գործունէութեան ժամանակ: Ո՞ւմ վրայ պիտի մեղքը բարդէին: Ի հարկէ նրա, ով Աւիւծի նման կռուել է եւ նուիրական է եղել Մատաղի Գառան նման: Շահէնը եղել է Շահումեանի պատասխանատուն, նա էլ պիտի պատասխան տար: Սակայն չհամբերեցին լսել այդ պատասխանը, այլ զրպարտչական մեքենան նախայարձակ սկսեց իր ոմբահարումները՝ նախքան ճակատագրի անողոք հարուածներից շահումեանցիների ուշքի գալը: Եւ քանի դնում էին Ղարաբաղի խորքը, այդ քարոզչութիւնն աւելի մեծ չափերի էր հասնում, իսկ Սեւեփանակերտում այն ստացաւ իր վերջնական ձեւակերպումը, որովհետեւ գործի մէջ էին ներգրաւուել Ղարաբաղի այսօրուայ բաւականին ակտիւ քաղաքական կասկածելի դէմքեր, որոնք անմիջապէս, ուղղակի պետականօրէն յայտարարեցին, թէ Շահումեանը ծախել են, ժողովուրդը հասել է էս օրուան նրա

համար, որ **Շահէնը** որոշել է Շահումեանը յանձնել: **Մարտա-կերտ մտնելուց անմիջապէս յետոյ, բնակչութեանը հրամցուեց դիւական մի «բացայայտում», որ բոլոր դժբախտութիւնների՝ հողը տալու, զոհերի եւ զրկանքների պատճառը, մեղաւորը, այսինքն՝ հայ ազգի դաւաճանը մի մարդ է՝ Շահէն Մեղրեան անուամբ:**

Շահումեանի անկումից յետոյ ծանր ժամանակներ սկսուեցին ***Մեղրեանների*** *եւ յատկապէս* ***Շահէնի*** *համար:*

Վլադիմիր Յարութիւնեան. **«Շահումեանի անկումից յետոյ մեզ մօտ Մեղրեան ընտանիքին անուանարկելու բաւականին ստոր մի գործընթաց սկսուեց, թէ տեսէք՝ ամէն ինչում նրանք են մեղաւոր»:**

Դաւիթ Իշխանեան. «92 թուականին ինձ համար անսպասելի բան տեղի ունեցաւ: Ստեփանակերտի կապի պատասխանատու-ներից մէկն այդ օրերին գտնուում էր Աչանում, Աբդալ-Գիւլափ-լու-Աղդամի այդ հատուածի վրայ գործողութեան իրականաց-ման ծրագիրը էր մշակուում: Այդ մարդը, չիմանալով, որ ես դաշնակցական եմ, ինձ համար շատ անսպասելի, ուղղակիօրէն ինձ վստահելով որպէս դաշտային հրամանատար, որպէս տարածքի պատասխանատու, մի տեսակ նայեց ինձ ու ասաց.

– Դաւիթ, տեսա՞ր ինչ եղաւ, դաշնակները Շահումեանը ոնց յանձնեցին:

Կարծես ցնցահարուած ստանայի: Նայեցի եւ ասացի.

– Մի՞թէ դաշնակնե՛րը յանձնեցին:

Ես որ իրադարձութիւններին շատ լաւ տեղեակ էի եւ իրա-զեկուած բազմաթիւ խողովակներով, հասկացայ, որ այդ օրերին յատուկ այդ թեզը ներմուծուել է՝ իրականութիւնը խեղա-թիւրելու նկատառումով, որպէսզի ժողովուրդը չեղուի եւ **Շահէն Մեղրեանին** մեղաւոր համարի Շահումեանի անկման համար: Եւ ես անկեղծօրէն պիտի ասեմ, որ նման վերաբեր-մունքն ինձ հիմք տուեց յետագայում մտածելու, որ Շահէն Մեղրեանի զոհուելը օդային հրթիռակոծման ժամանակ կազ-մակերպուած դաւադրութեան հետեւանք է: Յամենայն դէպս դա իր մէջ առեղծուած է պարունակում, բազմաթիւ այն դէպքերի

հետ միասին, երբ չատ կասկածելի պարագաների Արցախում հերոսներ էին զոհւում»:

Այդ շրջանի ղեկավարութեան դէմ գործում էր իշխանական մի ամբողջ համակարգ, որն իր առջեւ խնդիր էր դրել վարկաբեկել Շահէնին, ոտնատակ անել նրա պատիւը եւ փորձել քաղաքական ասպարէզից հանել առհասարակ:

Պօղոս Մեղրեան. «Երբ Շահումեանն ընկաւ, նահանջողները հասել էին Հաթերք: Յունիսի 15-ին մենք Մատաղիսում էինք, ուզում էինք մեր ժողովրդին հանել Հաթերք: Մի լուր հասաւ, թէ ուզում են Շահումեանի շրջանի բոլոր տղաներին ճանապարհին զինաթափել: Որոշ խոնարհ տղաներ՝ լսելով հրահանգը, տուել էին իրենց զէնքը: Իրօք, կար հրաման եւ այն ստորագրուած էր յունիսի 13 թուով, ըստ որի պէտք է զինաթափել Շահումեանի շրջանի բոլոր մարտիկներին: Սակայն մենք յունիսի 13-ին դեռեւս մարտեր էինք մղում Բուզլուխում: Այդ նոյն օրը, երբ մենք դուրս եկանք Մարտակերտի չտաբից եւ հասանք Մեծ Շէնի եւ Մաղաւուզի խաչմերուկը, մեզ համար այդտեղ պարզուեց, որ **Շահումեանի յանձնումը քաղաքական գործարք էր**: Եւ մեր ժողովուրդը, որ հասել էր Հաթերք, **արդէն հասցրել էին տեղացիներին թշնամութեան թոյնով ներարկել մեր ժողովրդի հանդէպ:** Եւ այնտեղ արդէն շրջանառութեան մէջ էին դրել այն նենգամիտ ստայօդութիւնը, թէ **Շահէն Մեղրեանը Շահումեանը ծախել է:** Այս իրադրութեան մէջ ժողովուրդն այնպիսի հոգեվիճակում էր, որ ինչ էլ ասէին՝ կը հաւատար: **Մարդիկ կորցրել էին սթափ դատելու կարողութիւնը»:**

Այդ պահերին մթութեան մէջ խարխափող ժողովուրդը գուցէ եւ նզովում էր Շահէն Մեղրեանին եւ Շահէնենց առհասարակ, քանզի սոցիալական հոգեբանութիւնից լաւ յայտնի է, թէ ինչպէս կարող են ժողովրդին անկառավարելի կրքերով ամբոխ դարձնել կամ նրան կառավարել իրենց կամեցողութեամբ: Գուցէ եւ եղան անհատներ, որոնք թշնամու մտքի ծուղակն ընկնելով՝ անգիտակցական մոլուցքով թունաւոր նետեր արձակեցին տարբեր տեղերից: Շահէնի դէմ ճգնաժամա-

յին պահին ծնունդ առած բամբասանքները, բացասական վերաբերմունքը, անէծքն իրենց հիմքում առարկայական ոչինչ են ունեցել: Միշտ այդպէս է, հերոսին փոխանակ սիրելու եւ պաշտելու, ատում եւ նզովում են, միանգամայն անտեղի, անհիմն կերպով: Ատելութիւնն առհասարակ անհաւատութեան արդիւնք է, նախանձը եւ չարութիւնը լափում են հաւատազուրկ ժողովրդին եւ որպէսզի այդ զգացումն իրենց չխեղդի, դրանք պարպում են առաջին առիթով, եւ յաճախ, բնականաբար, սխալ ուղղութեամբ: Իսկ ուղղութիւնը յաճախ որոշում են ոչ թէ իրենք ժողովրդի ներկայացուցիչները, այլ օտար ուժեր, որոնք բամբասանքի կամ սխալ տեղեկութեան թոյնը դաւադրաբար կաթեցնում են ծայրայեղ լարուած մարդկանց հոգիներում եւ նրանք որեւէ բան հաշուի չառնելով, կարող են դատաստան անել իրենց հերոսներին: Շահէնի եւ իր ընտանիքի մասին ՀՀՇն ստայօղ լուրեր էր տարածել եւ խեղճ ժողովրդի հոգում պարարտ հող էին գտել, որպէսզի առաջնորդի կերպարը լրիւ սեւ գծերով ներկայացնեն

Ու այդ մթնոլորտում չատերը հակուեցին հաւատալու չրջանի ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարի կողմից իբր «հողի ծախելուն»: Մարդ, ինչ խօսք, ինչքան էլ մեծահոգի եւ հզօր կամքի տէր լինէր, որքան էլ անբասիր լինէր եւ խիղճը մաքուր, այնուամենայնիւ իր հայրենակիցների այդօրինակ վերաբերմունքը նրան թեւաթափ կ'անէր, անասելի ցաւ ու հիասթափութիւն կը պատճառէր: Ու կը վարուէր, ինչպէս չատերը վարուեցին՝ կը քաշուէր մի ապահով անկիւն եւ կ'ապրէր լռութեան մէջ: Բայց **Շահէն Մեղրեանն** ուրիշ կոփուածքի, խառնուածքի ու մտածողութեան տէր քաղաքական գործիչ էր, զերծ փոքրոգիներին յատուկ մանրախնդրութիւնից, անձնականն ազգայինից վեր դասելու եսականութիւնից: Շահումեանցիները հիմնականում լաւ էին ճանաչում Մեղրեաններին, եւ նրանք, երբ փոքր-ինչ ուշքի եկան ահաւոր հարուածից, չուտով հասկացան, թէ քամին որ ուղղութեամբ է փչում, մանաւանդ չուտով այդ թունաւոր նետերն ուղղուեցին հէնց բոլոր շահումեանցիների դէմ: Հայրե-

նազուրկ եղած, անասելի ծանր հարուած ստացած, իրենց զաւակներից, ամուսիններից զրկուած շահումեանցիներին առաջին իսկ պահից, երբ նրանք հասան Հաթերք, դիմաւորեցին հետեւեալ մեղադրանքով. ***«Դուք ծախեցիք Շահումեանը»****: Նրանց արդէն վերաբերում էին իբրեւ հայրենիքը լքածների, իրենց գլուխը պրծացրածների: Տիրող իշխանիկներն իրենց անբարոյ բնոյթով եւ դիրքորոշմամբ իւրեանց թուլութիւնն ու նենգամտութիւնը քօղարկում էին՝ պարտութեան մեղքը գցելով կա՛մ տեղիս ժողովրդի վրայ, նրան համարելով անընդունակ, վախկոտ ու դաւաճան, կա՛մ տեղական հրամանատարութեան հասցէին մոգոնում բազմապիսի մեղքեր:* **Նորից զգացւում է ՀՀՇի սարսափը պատերազմից եւ նրա պատերազմ վարելու անպիտանութիւնը**:

Բազմահազարանոց գաղթ էր, եւ այդպիսի տեղաշարժի ժամանակ շատ բաներ են պատահում: Այդ ամէնի համար մեղադրել մէկ մարդու, դա մեղմ ասած՝ լաւ բան չէ:

Շահումեանի իրադարձութեանց ականատեսների եւ մասնակիցների համար, ովքեր չեն կորցրել առողջ դատողութեան ընդունակութիւնը, սնանկ են հնչում շահումեանցիների դէմ ուղղուած բամբասանքները, թէ իբր շահումեանցիները չեն ուզեցել կռուել եւ երկրամասը պարզապէս փոքրոգօրէն, այսինքն՝ վախկոտաբար յանձնել են թշնամուն:

Ընդ որում՝ ամենից շատ խօսում էին այն մարդիկ, ովքեր պատերազմական գործողութիւններին իսկական մասնակցութիւն չեն ունեցել: Բացի հոգեբանական այս պահից, առկայ է նաեւ քաղաքական դիրքորոշման գործօնը. Հայաստանի այն ժամանակուայ իշխանութիւնները հայրենի հողը գրեթէ կամաւոր թուրքին յանձնելու խայտառակութիւնն իրենց վրայից թօթափելու համար, մեղքը գցել են շահումեանցիների վրայ: Սա շատ հնուց եկող ինքնարդարացման ձեւ է: Առիւծին կապել են եւ գցել շնագայլերի առաջ: Ահա Շահումեանի դէպքերի ժամանակ ցուցաբերած «ռազմավարութեան» իշխանական «սխրանքը»:

Մեր այս մտածումներով մենք եզակի չենք, յիշում եմ՝ այսպէս էին մտածում հայրենիքի պաշտպանութեամբ եւ ազատութեամբ մտահոգ հայ գիտակից մարտիկները: Եւ առաջինը մեր խօսքը չէ, որ տպագրւում է այս առումով: Ահաւասիկ մէկ օրինակ. «Անձամբ ես համոզուած եմ, որ Հայաստանի առաջին «մութ» նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեանը** եւ նրա համախոհներից ամենամերձաւորները մի ինքնատիպ մասոնական լոժա էին կազմել, որն էլ մշակում էր Հայաստանի նախագահի գաղտնի ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը: Նախատեսւում էր աստիճանաբար արգելակել արցախեան ազատամարտի թափը, հրաժարուել Ղարաբաղեան շարժման իրենց իսկ կեղծաբար հռչակած նպատակներից, քանի որ նրանց հիմնական նպատակն է եղել ԽՍՀՄի վերացումը, իսկ արցախցիների ինքնորոշման իրաւունքը, Արցախը Հայաստանի հետ միաւորելը կամ անկախ պետութիւն հռչակելու գաղափարը՝ երկրորդական: Միաժամանակ օտարերկրեայ պետութիւնների գործակալներ հանդիսացող մասոնների այդ ռէակցիոն կազմակերպութեան անդամները՝ հասկանալի պատճառներով, չէին կարող իրենց նոր գաղափարները բացայայտ ու բարձրաձայն քարոզել, նոյնիսկ՝ համարեա ստրկացուած եւ մոլորուած մեր ժողովրդի մէջ, որը դեռեւս վերջնականապէս չի կորցրել ազգային եւ քաղաքացիական արժանապատուութիւնը եւ կարող էր ոտքերի տակ գցել նրանց: Հաշուի առնելով այդ ամէնը՝ իրենց նպատակների իրագործումը լեւոնականները սկսել էին զգուշօրէն վարուող պարտուողական քարոզչութիւնից, որի նպատակն էր բարոյալքել ժողովրդին եւ պատերազմի մէջ ներքաշուած ազատամարտիկներին: Նրանց վախեցնում էին Ադրբեջանի հզօրութեամբ եւ Հայաստանի թուլութեամբ, պաշտպանութիւնը պետականօրէն կազմակերպելու հարցում պասսիւութիւն եւ անգործութիւն էին ցուցաբերում: Ես պնդում եմ, որ դա կատարւում էր Հայաստանն ու Արցախն աննկատ պարտութեան եզրին կանգնեցնելու նպատակով եւ դրանով իսկ իրենց արեւմտեան տէրերի պատուէրը կատարելու համար:

Ինչ որ այստեղ ասուեց՝ պատրաստ եմ ապացուցելու ցան-

կացած դատարանի կամ տրիբունալի առջեւ՝ ոչ միայն սոյն դրքում բերուած փաստերով» *(Դնեպրիկ Բաղդասարեան, «Դիմակայութիւն», եր., 2010, էջ 163-164):*

Ըստ Շահէնի՝ ոչ մի հայ իր հայրենիքը չի ծախի: Այդպիսի լաւատեսական մօտեցումը հայութեան բարոյական նկարագրի եւ ոգու նկատմամբ անտարակոյս չատ կարեւոր է եւ ուժաւորող, ի հակադրութիւն հակազգային անկումային եւ թուլացնող գաղափարաբանութեան:

Առարկայական փաստերի հիմքի վրայ պիտի ամէն մի իրադարձութեան վերլուծութիւնն սկսել: Այս մօտեցումն է միակ իրատեսականը, ճշմարիտը եւ ոչ թէ չահումեանցիների վրայ հոգեբանական յարձակումը՝ օգտագործելով ժողովրդի անտեղեակութիւնը: Շահումեանն իր ուժերին համապատասխան դիմադրութիւն այնուամենայնիւ ցուցաբերել է: Այդ իրադարձութեան ստոյգ լոսաբանումն առկայ է ***Շահէն Մեղրեանի*** *մամլոյ ասուլիսում, որում նա* ***հիմնաւորեց, որ Շահումեանի անկումը Հայաստանի ռազմաքաղաքական պարտութիւնն է:*** *Եւ նա կարողացաւ ամէն ինչ դնել օրինական հիմքերի վրայ: (տե՛ս «Դրօշակ», թիւ 7, 1992):*

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՔՆՆՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Պատերազմները միմեանց կրկնութիւն չեն եւ ամէն անգամ գետը գերան չի բերում: Մի պատերազմում հերոսացած չրջանը յաջորդին կարող է ոտնատակ լինել թշնամուց: Նոյնիսկ մէկ պատերազմի ընթացքին մի բնակավայրը կարող է բազմիցս ձեռքից ձեռք անցնել: Արցախեան պատերազմն այս իմաստով բացառութիւն չէ: Առաջին աշխարհամարտին թշնամին անկարող եղաւ Գիւլիստանի նոյնիսկ կողքովն անցնել, իսկ այս անգամ Շահումեանը ոտնակոխ եղաւ, չան բաժին դարձաւ:

Ստեղծելով համապատասխան մթնոլորտ, որը հագեցած էր Շահէն Մեղրեանի եւ Մեղրեան ընտանիքի հասցէին արուող տարատեսակ զրպարտանքով, պիտի կատարուէր յաջորդ

քայլը՝ իւրատեսակ մի բաց դատավարութիւն, որը պիտի «բացայայտէր» Շահէն Մեղրեանի «յանցանքները»:

*Արցախեան պատերազմի ընթացքին միայն մէկ անգամ քննիչ յանձնաժողով ստեղծեցին, որպէսզի նա ուսումնասիրէր թշնամուն գիջած շրջանում պարտութեան պատճառները: Եւ դա եղաւ Շահումեանի պարագային. այդ ողբերգական իրադարձութիւնից որոշ ժամանակ անց, յունիսի 29-ին, Գերագոյն խորհրդում ստեղծուեց խորհրդարանական յանձնաժողով՝ պատգամաւորներ **Սմբատ Այվազեանի եւ Հրանտ Խաչատրեանի** համանախագահութեամբ: Շահումեանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի հիւսիսային հատուածի անկման պատճառներն ուսումնասիրող ժամանակաւոր պատգամաւորական յանձնաժողովի կազմը՝ **Սմբատ Այվազեան, Հրանտ Խաչատրեան, Կիմ Բալայեան, Երջանիկ Աբգարեան, Սուրէն Զոլեան, Իւրա Յարութիւնեան, Լէոնիդ Յակոբեան, Սամուէլ Շահմուրադեան, Ռաֆիկ Ղազինեան, Շաւարշ Քոչարեան, Դաւիթ Շահնազարեան, Աշոտ Նաւասարդեան, Ալեքսանդր Մանուչարեան, Ռոբերտ Մնացականեան, Ազատ Արշակեան:***

*Ազգային ժողովում արդէն ստեղծուած այդ յանձնաժողովի հետ միասին 12 հայդուկներ Շահէնի գլխաւորութեամբ մասնակցեցին նիստին, որպէսզի բացայայտ կերպով ապացուցեն, թէ ինչ պատճառով Շահումեանն ընկաւ: Այնպէս ստացուեց, որ որոշ պատգամաւորներ առաջին հարցն ուղղեցին **Շահէն Մեղրեանին** եւ պատասխանը լսելով՝ ելան գնացին: Նորակոչիկ իշխանաւորները մասամբ զուրկ էին քաղաքական բարեկրթութեան նշոյլներից եւ անսքօղ ամբարտաւանութեամբ էին վերաբերում կենդանի մարտիրոսներին: Բաւարար է **Երջանիկ Աբգարեանի** օրինակը, որը հարցումով դիմեց Շահէնին.*

- Պարոն Մեղրեա՛ն, Դուք Դաշնակցութիւն կուսակցութեան անդա՞մ էք:

Շահէնը պատասխանեց.

- Այստեղ մենք հաւաքուել ենք հողի յանձնման պատճառը

պարզաբանելու կամ՝ ինչո՞ւ Շահումեանում պարտութիւն կրեցինք: Ի՞նչ կապ ունի՝ կուսակցական եմ, թէ ոչ:

Այդ մարդը հարցին ստիպողական երանգաւորում տալով՝ կրկնեց.

- Ձէ՛, Դուք ինձ ասէք՝ ՀՅԴ անդա՞մ էք, թէ ոչ:

Եւ Շահէնը դրական պատասխան տուեց.

- Այո՛, ես ՀՅԴ անդամ եմ եւ այստեղ ներկայ 11 հոգին էլ բոլորը ՀՅԴ անդամներ են, դա ի՞նչ կապ ունի:

Երջանիկ Աբգարեանը ելաւ, դիպլոմատը վերցրեց, թղթերը դրեց մէջը եւ ասաց.

- Ինձ կը ներէք, ես գնացի:

Այստեղ էլ պարզուեց, թէ ովքեր են Հող տուողները: ***Ի՞նչ կապ ունի Դաշնակցութիւնը Հողի յանձնման հետ***, երբ այնտեղ 4 օր մարտ էին մղում, օգնութիւն էին խնդրում, իսկ Երջանիկ Աբգարեանի կուսակիցներն ասում էին՝ այո՛, օգնութիւն կ՚ուղարկենք եւ մինչեւ օրս էլ ուղարկում են: Եւ այդ ամենից յետոյ փոքրիկ գրուբիւն են ստանում Շահումեանի ազատամարտիկները. ***«Կը ներէք, որ օգնութիւն չը կարողացանք ցոցաբերել, մեզ թոյլ չտուեցին օգնելու»:*** Այսինքն՝ նոյնիսկ Մարտակերտի չրջանից չկար օգնութիւն, որովհետեւ հրաման չկար: Եւ այդտեղ Շահէն Մեղրեանն ապացուցեց իր մաքրութիւնը:

Երկշաբաթեայ ժամկէտում նա ԳԽ քննարկմանը պիտի ներկայացնէր իր ուսումնասիրութեան արդիւնքները՝ համապատասխան եզրակացութիւններով: Յանձնաժողովը գործեց մի քանի ամիս եւ այդպէս էլ իր եզրակացութեան մէջ գլխաւոր հարցին վերջնական պատասխան չտուեց՝ թէ ով է մեղաւոր յանձնման համար:

Հրանտ Խաչատրեանի վկայութեամբ՝ Շահումեանի ողբերգական իրադարձութիւնը երեւանում բաւականին մեծ լարուածութիւն էր առաջացրել: Շահումեանի եւ Մարտակերտի դէպքերի կապակցութեամբ ստեղծուեց յատուկ յանձնաժողով եւ իրենք բաւականին լուրջ ուսումնասիրութիւններ կատա-

*րեցին: «Շատ մարդկանց հետ էինք զրուցել, եւ Գերագոյն խորհուրդ հրաւիրեցինք ականատես եւ մասնակից զօրահրամանատարների, եւ այլ մարդկանց: **Մեր կատարած աշխատանքը լուսաբեան մատնուեց եւ չհուչակեցին մեր գործունէութեան արդիւնքները»:***

*Յանձնաժողովը յամենայն դէպս կարողացաւ ինքն իր համար պարզաբանել այդ հարցի ընդհանուր բնոյթն ու էութիւնը, եւ եզրակացութեան մէջ առաջարկում էր ուսումնասիրութիւնները շարունակել այլ մարմիններում: Սակայն պաշտօնատար չատերը մերժել էին առաջարկութիւնները: **«Արցախի ներկայացուցիչները, այդ թւում Շահէն Մեղրեանը, սպառիչ պատասխաններ տուեցին մեր հարցերին, եւ յանձնաժողովը գտաւ, որ այդ հարցի շուրջ շահարկումները պիտի դադարեցուեն**, յատկապէս ոչ ճիշտ տեղեկութիւնների տարածումը»:*

***Խաչիկ Ստամբոլցեան**. «Հիմա էդ պարտութեան պատճառները մենք պիտի քննենք, ամէն պարտութիւնից դաս քաղենք, պատճառն իմանանք, որ յաջորդ անգամ չկրկնուի: Ես բացատրեցի որ այսպիսի բաներ են տեղի ունեցել, յանձնաժողով կազմուեց՝ **Սմբատ Այվազեանի** նախագահութեամբ, անդամներից յիշում եմ **Հրանտ Խաչատրեանին**, էլի կային մարդիկ: Նրանք մի անգամ գնացին, որպէսզի հանդիպեն ազատամարտիկներին, հրամանատարներին, գնացին՝ եկան: Նախատեսուած էր, որ պիտի հաշուետուութիւն տային Գերագոյն խորհրդին, յանձնաժողովը ոչ մի հաշուետուութիւն չտուեց: Եւ ամէն անգամ երբ **Բաբկէն Արարքցեանին** հարցնում էի, թէ ինչու յանձնաժողովը պատասխան չի տալիս, միշտ կոիւ էր սարքում, որպէսզի չեղի հարցից, եւ այդպէս էլ հաշուետուութիւն չեղաւ: Երբ յանձնաժողովը կազմում էին, այնպէս արեցին, որ ես չընտրուեմ յանձնաժողովի մէջ: Վերջին չրջանում մի քանի յօդուած գրել եմ էդ մասին, թերթերում տպել են:*

***Սմբատ Այվազեանն** էլ մի անգամ մամուլի ասուլիս էր տալիս եւ ես ուղիղ կապով նրան հարցրեցի, թէ ինչու յանձնաժողովը պատասխան չի տալիս այն հարցին, որի համար կազմուել*

*է: Եւ Սմբատ Այվազեանը խնդրեց, որ ինքն առանձին ինձ կը պատասխանի, որ լաւ կը լինի այդ հարցը հանենք: Սակայն ոչ մի բան էլ չասաց: **Հրանտ Խաչատրեանին** էլ ասել եմ, թէ՝ Հրանտ ջան, դու այդ յանձնաժողովի մէջն էիր, գնացիք Ղարաբաղ, ի՞նչ տեղի ունեցաւ, ինչի՞ մասին խօսեցիք, մի բան դրիր, էլի, այդ մասին, թող մարդիկ իմանան: Ոչ մի բան:*

*Մի խօսքով՝ այդ գործը կոծկուեց, արգելուեց եւ մինչեւ օրս գաղտնիք է մնացել, մինչեւ այսօր ոչ մի տեղեկութիւն, ոչ մի հաշուետուութիւն չի եղել: **Արգելեցին այդ թեման, եւ պարզից էլ պարզ է, որ դա կազմակերպուած ակցիա էր եւ կազմակերպուած կերպով էլ Շահումեանը յանձնեցին»:***

Շահումեանի ողբերգութեան նախադէպը ոչ մի լուրջ գնահատական չստացաւ, չնայած ՀՀ Գ ն ինչ-որ անյաջող փորձեր կատարեց, եւ պէտք չէ բոլորովին զարմանալ, որ այն կրկնութիւնները ունենայ: Իսկ դա արդէն նշանակում է, որ ձեւաւորուել է ներկայ քաղաքական վարչակարգի ռազմավարութեան հիմնադրոյթներից մէկը՝ այն տարածքները, որոնց պաշտպանութիւնը մտքի, ուժերի, կամքի գերլարուածութիւն է պահանջում, պէտք է ժողովրդից քօղարկուած ձեւերով յանձնել հակառակորդին: Իսկ ժողովրդին պարզապէս նայում են որպէս նախագահին ու ՀՀՇին ձայն տուող ամբոխ…

Շահէն Տօնոյեան. «Ժամանակի քաղաքական թելադրանքով էր ստեղծուած այդ յանձնաժողովը, որպէսզի արհեստական մեղաւոր գտնեն, որոշ ուժերի քաղաքական նոխազ դարձնելու համար: Թէեւ քաղաքական իրավիճակը թոյլ չտուեց բացայայտելու իրական մեղաւորներին, բայց փաստ էր այն, որ թէ՛ այն ժամանակ յանձնաժողովում, թէ՛ Շահումեանի անկման առաջին իսկ պահից առ այսօր ժողովրդի մէջ չըլանաուում են մի շարք վարկածներ, որոնք հիմնականում կենտրոնանում են այն առանցքի շուրջ, որ Շահումեանը ծախուել է քաղաքական հաշուարկների արդիւնքում»:

(«Հետաքննութիւն», թիւ 11, մայիս, 2004)

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻ ՄԱՄԼՈՑ ԱՍՈՒԼԻՍԸ

*Շահումեանի ազատամարտիկներից չատերը զոհուել են, մեծ թիւ են կազմում նաեւ Հայաստանից հեռացածները: Բարեբախտաբար մնացել են վաւերական արձանագրութիւններ, որոնք լոյս են սփռում երբեմնի իրադարձութիւնների վրայ: Շահումեանում տեղի ունեցածի ամենալաւ բացատրութիւնը ստանում ենք հէնց **Շահէն Մեղրեանից**՝ իր հետ տեղի ունեցած հարցազրոյցներից: Ինքը լինելով գործի մարդ եւ գործնականօրէն ակտիւ, շատ չի խօսել, գրել, սակայն եղածն էլ բաւարար է պատկերացում կազմելու նրա մտածումների որակական բարձրութեան, նրա նկարագրին յատուկ՝ մտքի, խօսքի եւ գործի համապատասխանութեան մասին, որը մարդկային բարոյականութեան ամենակարեւոր չափանիշներից է:*

Շահումեանի ազատագրական պայքարի ղեկավար Շահէն Մեղրեանը, բացի Հաթերքում 1992-ի յունիսի 20-ին կայացած եւ ֆիլմով տեսագրուած հարցազրոյցից «հաշուետուութեամբ» է հանդէս գալիս ՀՀ Գնում: Այդ հաշուետուութեան հիմնական մտքերն առկայ են Շահէն Մեղրեանի մամլոյ ասուլիսի մէջ:

*Յուլիսի 8-ին ՀՅԴ կէնկէն-ում **Շահէն Մեղրեանը** տուեց իր մամլոյ ասուլիսը, ուր ի մասնաւորի ասաց. «**Շահումեանի պարտութիւնը դա Հայաստանի ռազմաքաղաքական պարտութիւնն էր: Եթէ Ադրբեջանը, չլինելով ԱՊՀ անդամ, հասել էր այն բանին, որ մէկ անգամ եւս կարողացաւ օգտագործել ԱՊՀ 4-րդ բանակը մեր դէմ, ապա Շահումեանի անկումը իրօք պիտի դիտել ռազմաքաղաքական պարտութիւն**»:*

«Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհուրդը դեռ չէ աւարտած իր որոշած հետաքննութիւնը՝ Շահումեանի անկումին ռազմական եւ քաղաքական պատճառներուն մասին: Բայց նկատի ունենալով որ ՀՀՇի ներկայացուցիչներու կողմէ պաշտօնական հաղորդակցութեան միջոցները լայնօրէն օգտագործուեցան՝ Շահումեանի անկման պատասխանատուութիւնը յատկապէս Շահումեանի հրամանատար ընկ. Շահէն Մեղրեանի եւ անոր ընդմիջէն Դաշնակցութեան վրայ բեռցնելու համար, 5ուլիսի 8-ին ՀՅԴ Հայաստանի Կ.Կոմիտէի կենտրոնատեղիին

մէջ տեղի ունեցաւ **մամլոյ ասուլիս**, ուր ներկայ թղթակիցներուս հարցումներուն պատասխանեց եւ իր վկայութիւնը տուաւ Շահումեանի հրամանատարը»: /«Դրօշակի» նախաբանը/:

ՀԱՐՑ.- Հարցս ուղղում եմ շահումեանցիների անունից: Վերջերս ես չփուեցի շահումեանցիների հետ եւ նրանք յամառօրէն պնդում էին, թէ Շահումեանը Շահէնը ծախեց: Ինչո՞ւ է այս մտայնութիւնն այդ հասարակ մարդկանց մօտ, կարո՞ղ էք փաստարկներ բերել:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ պիտի ասեմ, որ իսկական ռազմական վիճակի մասին ո՛չ կանայք, ո՛չ երեխաները եւ ոչ էլ բնակիչների մեծ մասը տեղեկութիւն չեն ունեցել եւ չեն կարող ունենալ: Ի հարկէ, **մենք տրամադրուած չէինք պաշտպանական մարտերի,** այլ հիմնական նախապատրաստական աշխատանքը տարուում էր Գետաշէնի ազատագրման համար: Երբ կատարուեց այն, ինչ որ կատարուել էր, այսինքն 5:10-ին սկսուեց թշնամու օպերացիան, ժամը 4:00-ին յայտնի դարձաւ, որ մեր ուժերը **զսպողական ֆունկցիայից բարձր**, աւել բան չեն կարող անել այսպիսի ուժերի դէմ: Առանց խուճապի մատնուելու, առանց գլուխները կորցնելու որոշեցինք էվակուացնել բնակչութեանը: Այդ գործում ի հարկէ ուշացանք Հայ Պարիսում եւ Կարաչինարում: Տանկերն արդէն մտել էին այդ երկու գիւղերը: Ով որ աշխարհագրական պատկերացում ունի Շահումեանի մասին, նա կը հասկանայ, որ Հայ Պարիսից մինչեւ Շահումեան աւանը հինգ կիլոմետր է եւ քանի որ Հայ Պարիսի եւ Շահումեան աւանի միջեւ որեւէ պաշտպանական գիծ չունէինք, ապա տանկերը մօտ 10-15 րոպէից պիտի անարգել մտնէին շրջկենտրոն: Եւ առանց տեղեակ պահելու բնակչութեանն էվակուացիայի պատճառների մասին, մենք յայտնեցինք, որ պէտք է ոտքով գնալ Վերիշէն, Գիւլիստան գիւղերը: Հետագայ իրադարձութիւնների ժամանակ պարզ դարձաւ, որ օգնութեան բացակայութիւնը եւ նաեւ այլ գործօններ մեզ համոզեցին, որ մենք ոչ մի իրաւունք չունէինք: Մենք բնակչութեանը տեղահանեցինք անտառային արահետներով դէպի Հաթերք եւ Մատաղիս գիւղերը: Մատաղիս գիւղի ճանապարհը համեմատաբար աւելի կարճ էր, բայց մենք

դիմեցինք ռիսկի, քանի որ թշնամին արդէն կարող էր մտնել Թալիշ եւ Մատաղիս գիւղերը: Դրա համար խորհուրդ տուեցինք բնակչութեանը հանել Հաթերքի ճանապարհով, որը երկար էր, դժուար էր, բայց համեմատաբար անվտանգ: **Մարտակերտ մտնելուց անմիջապէս յետոյ, բնակչութեանը հրամցուեց պատրաստի վարկածը, որ բոլոր դժբախտութիւնների՝ հողը տալու եւ այս գրկանքների հեղինակը, մեղաւորը եւ նոյնիսկ հայ ժողովրդի դաւաճանը հանդիսանում է Շահէն Մեղրեանը:** Եւ քանի գնում էին Ղարաբաղի խորքը, այդ պրոպագանդան, այդ քարոզչութիւնն աւելի մեծ չափերի էր հասնում: Իսկ Ստեփանակերտում այն ստացաւ այսպէս ասած իր վերջնական ծաղկեփնջի ձեւը, որովհետեւ գործի մէջ էին ներգրաւել Ղարաբաղի այսօրուայ բաւականին ակտիւ քաղաքական կասկածելի դէմքեր, որոնք անմիջապէս, ուղղակի պետականօրէն յայտարարել էին, որ Շահումեանը ծախել են, ժողովուրդը հասել է այս օրուան նրա համար, որ Շահէնը որոշել է Շահումեանը յանձնել: Հիմնական եւ գլխաւոր պատճառը դա է, որ ժողովուրդը այսօր գտնւում է ծանր կացութեան մէջ, նա հնարաւորութիւն չունէր իր հետ վերցնել նոյնիսկ ուտելիքի պաշար, ճանապարհին սնուելու համար, որովհետեւ ամէն ինչ շատ արագ կատարուեց: Իսկ գազազած ժողովրդին հրամցնելով նշուած յերիւրանքները, նրա ներսում կուտակուածը ինչ-որ մէկի կամ որեւէ կազմակերպութեան մեղադրելու համար է արուել:

ՀԱՐՑ.- Մի քանի հարց՝ կապուած ժամանակի հետ: Մինչեւ այս մամլոյ ասուլիսը, փաստօրէն, Շահէն Մեղրեանի մասին խօսք տպագրուել է: Բացի այդ, դէպքերից անմիջապէս յետոյ, երեւան է բերուել տեսագրուած Շահէն Մեղրեանի եւ ջոկատների հրամանատարների խօսքը, բայց մեր պետական հեռուստատեսութիւնում, բնականաբար, հնարաւոր չի եղել այդ տեսաժապաւէնը ցուցադրելու:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Ի միջի այլոց, մինչեւ հիմա Շահումեանի պաշտպանութիւնն իրականացնող ոչ մի զինուորական գործիչ չի խօսել անկման պատճառների մասին: Իսկ այն

կեղծ մարդիկ, որոնք ներկայացել են այս կամ այն ձեւով, թէ նրանք ինչ-որ ջոկատի հրամանատար են, այսպիսի մարդիկ գոյութիւն չունեն, դրանցից շատերը դասալիքներ են եղել երկու-երեք օր առաջ, փախած են եղել կա՛մ Ստեփանակերտ, կա՛մ Երեւանում են եղել, ի վերջոյ նրանք այս կամ այն անճանց յորդորանքից ելնելով կամ երեւի այլ գործօնների ազդեցութեան տակ դուրս են գալիս եթեր եւ օգտագործում են բաւականին կասկածելի փաստեր՝ իբր իրականութիւնը մերկացնելու համար: Եթէ որեւէ մէկին հետաքրքրում է, կարող եմ նշել բոլոր պատասխանատուների անուն-ազգանունները, որոնք եղել են ճակատներում եւ որոնք պատասխանատու են եղել այս կամ այն տեղամասի համար, եւ դուք կարող էք հնարաւորութիւն ունենալ խօսելու այդ մարդկանց հետ, իմանալու իսկական իրողութիւնը, եթէ իմ ասածը ձեզ չբաւարարի:

Ուրեմն՝ ասեմ, ամսի 9-ին եւ արդէն ամսի 11-ին, եօթ հոգուց կազմուած մեր հետախուզական խումբը մտել է Հաջիքենդ, որը Գետաշէնից 12 կիլոմետրի վրայ գտնուող թուրքական բնակավայր է, եւ հետախուզել այդ ամբողջ շրջանը՝ առաջիկայ օպերացիան անցկացնելու համար: Ո՛չ մի արտակարգ փոփոխութիւն թուրքերի դիրքերում եւ նրանց ուժերում չի նկատուել: Ամսի 12-ին նշանակուած էր արդէն վերջին պատրաստութիւնը եւ, այդ վերջին պատրաստութեան ստուգման համար, գնացին մեր շտաբի պետ **Սերգէյ Զալեանը** եւ սահմանապահ գնդի հրամանատար **Վլադիմիր Կարապետեանը**, որը զոհուեց Մարտակերտում: Նա եւս ընդգրկուած էր մեր ռազմական խորհրդի մէջ, եւ մենք համատեղ մշակում էինք Գետաշէնի օպերացիայի անցկացման մանրամասնութիւնները: Ցերեկը նրանք արտակարգ ոչ մի բան չէին նկատել, բայց երեկոյեան ժամը 21.00-ին, երբ արդէն Վլադիմիր Կարապետեանը վերադարձել էր եւ ինձ հետ միասին գտնուում էր շտաբում, մենք ստացանք առաջին ահազանգը, որ Գետաշէնի կողմից բաւականին երկար շարասիւն է, բաւականին այլ հիմքեր էլ կային ենթադրելու, որ գալիս են տանկեր: 15 րոպէ յետոյ երկրորդ ազդանշանը ստացանք Էրքէչից, որ Գիւրզալար գիւղի ճորից դէպի Թոդան է բարձրանում արդէն

կոնկրետ տանկերի չարասիւն: Քիչ անց այդպիսի տեղեկութիւն ստացանք Թալիշից, որ Ինջի գետի մօտակայքում մօտ քսան միաւոր տեխնիկա է կանգնած դէպի մեր պահակակէտերի ուղղութեամբ, ի միջի այլոց Թալիշի ինֆորմացիան ստացանք Մարտակերտի ռազմական չտաբի միջոցով: Ստանալով այդպիսի տեղեկութիւններ, մենք իսկոյն բոլորին ոտքի կանգնեցրինք եւ տուեցինք թիւ մէկ հրամանը, պաշտպանական մարտեր մղելու համար: Իսկ առաւօտեան արդէն թշնամին յարձակուեց: **Երեկոյեան ժամը 9.00-ից մինչեւ առաւօտեան ժամը 5.10-ը, այդքան ժամանակ ենք ունեցել որեւէ բան ձեռնարկելու համար:**

ՀԱՐՑ.- Բացի աղրբեջանցիներից, ովքե՞ր էին կուռւում:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Առանց որեւէ քաղաքական աստառի՝ ուղղակի մեր վրայ յարձակուած զօրքերի աւանդարդում գտնուում էին սլաւոնները: Ես չեմ կարող ասել, թէ նրանք ռուսներ էին, ուկրաինացիներ էին, թէ բելոռուսներ, բայց **ե՛ւ հետեւակը, ե՛ւ տեխնիկան վարում էին սլաւոնները**: Դա՝ միանշանակ: Առաւօտեան, երբ բերեցին առաջին վիրաւորին, նա Ալավերդու ջոկատից էր, բուզլուխցիները յայտնեցին, որ իրենց դէմ կուռւում էին ռուսներ: Յետոյ արդէն Հայ Պարիսում եւ Կարաչինարում մերձամարտի ժամանակ տղաները տեսել էին, որ **առաջին գծում միայն ռուսներ կամ սլաւոններ են,** իսկ աղրբեջանական կազմաւորումները մօտ մէկ կիլոմետր հեռաւորութեան վրայ զրահամեքենաների, հրասայլերի եւ այլ ռազմական տեխնիկայի հետ սպասում էին վերջնական արդիւնքին: Այնպէս որ, միանշանակ կարող եմ ասել, որ **23-րդ դիվիզիան, որ տեղաւորուած է Գեանջա քաղաքում եւ որը ունի բաւականին մեծ վորձ մեր դէմ կռուելու, եւս մէկ անգամ իրեն ցոյց տուեց:** Նրանց ներկայութիւնը Մարտակերտում կամ ուրիշ տեղ, ես ինքս չեմ տեսել եւ չեմ կարող վկայել, գուցէ դա արդէն ուրիշների գործն է, բայց Շահումեանում այդ դիվիզիան մասնակցել է մինչեւ վերջ: Մենք նահանջում էինք պատճառելով նրանց մեծ կորուստներ: Մենք խփել ենք մօտաւորապէս 17 զրահատեխնիկա, որից 4-ը տանկ: **Նրանք չատ-չատ էին եւ ուղղակի այդպիսի պատերազմի մենք պատրաստ չէինք: Դա արդէն գաղտնիք**

չէ: Այդպիսի ուժերին մենք դիմակայել չէինք կարող: Մեր ամբողջ արածը ուղղուած էր նրան, որպէսզի կարողանանք ամբողջ բնակչութեանը դուրս բերել, քանի որ նրանք մտադիր էին մեզ վերցնել ամբողջական շրջափակման մէջ եւ ոչնչացնել ժողովրդին: Որովհետեւ չորս կողմից միակ ճանապարհը, որ կապում էր մեզ Մարտակերտի հետ, կտրուած էր:

ՀԱՐՑ.- Ինչպէ՞ս էք գնահատում Շահումեանի պարտութիւնը, ինչի՞ հետեւանք էր դա:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Ես գտնում եմ, որ **դա աւելի շատ ռազմաքաղաքական պարտութիւն էր** եւ **հետեւանք** ոչ շահումեանցիների, ղարաբաղցիների, այլ՝ **Հայաստանի իշխանութիւնների քաղաքականութեան ինչ-որ բացթողումների, ինչ-որ սխալների, որը հասցրեց նրան, որ այդպիսի ուժեր մէկ չաբաթուայ ընթացքում փաստօրէն ներգրաւուեցին խաղի մէջ եւ այդպիսի դաժան ռազմական պարտութեան հասցրին Արցախի հիւսիսը:**

ՀԱՐՑ.- Ո՞վ էր Շահումեանի պատասխանատուն:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Տեղում ես էի: Երեւանում՝ Հայաստանի պաշտպանութեան նախարարը: Ի միջի այլոց, ստանալով այդպիսի տեղեկութիւն, անմիջապէս հեռագրել ենք պաշտպանութեան նախարարին, յետոյ երկու անգամ ռադիոկապ ենք ունեցել իր հետ, ասուել է իրավիճակի մասին, ասուել է, որ դա սովորական յարձակում չէ, ինքը գիտէր, որ Շահումեանի համար 10-15 տանկերով յարձակումը սովորական երեւոյթ է, որ մենք այդպիսի յարձակումները հանդիստ յետ էինք մղում, որ նոյնիսկ ինչ մտադրութիւններ ունենք: Նա պատկերացրեց ինչ է կատարուում մեզ մօտ, քանի որ ինձնից յետոյ նրա հետ խօսեց գնդի հրամանատար **Կարապետեանը**, որը նշեց, որ ճակատում առկայ է երկու տանկային գնդի ներկայութիւն եւ ուժեղ զրահատանկային միջամտութիւն է հարկաւոր, որպէսզի կարողանանք կանգնեցնել այդպիսի յարձակումը:

ՀԱՐՑ.- Որքա՞ն էք ձեզ պատասխանատու զգում պարտութեան համար:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նոյնքանով, որքանով որ պատասխա-

նատուրթեան չափանիշ կայ այն հարցում, որ թոյլ ենք եղել եւ պարտուել ենք: Պատրաստ եմ ամէն պատասխանատուութիւն կրելու: Դա հարց չէ, քանի որ **պարտուել ենք աւելի ուժեղ, մարզուած, աւելի լաւ զինուած եւ բոլորովին այլ որակի ու վիճակի բանակից:**

ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ն է եղել Շահումեանի պաշտպանական կառոյցը եւ ինչպիսի՞ օգնութիւն էք ստացել:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Առանց որեւէ գլուխ-գովութեան, կարող եմ յայտարարել, **որպէս պաշտպանական կառոյց, Շահումեանի շրջանը համեմատաբար աւելի ամուր էր, քան Ղարաբաղի մնացած շրջանները**: Ի հարկէ, դա օրինաչափ էր երեւի եւ այն առումով, որ **Շահումեանի շրջանում պետութեան եւ Դաշնակցութեան միջամտութիւնը պաշտպանութեանը՝ ներդաշնակւում էր, չէր հակադրւում եւ մենք բաւականին կուռ համակարգ ունէինք**: Ինձ համար շատ աւելի ցաւալի կը լինի, որ ես յայտարարեմ, որ իսկապէս դա ինչ-որ ազդեցութիւն ունեցել է վերջնական արդիւնքի վրայ, այսինքն շրջանը պաշտպանելու կամ յանձնելու վրայ: Միակ բանը, որ կարող եմ ասել, դա այն է, **որ ոչ մի ձեւի օգնութիւն – ոչ զրահատեխնիկայով եւ ոչ էլ հետեւակով – մենք չենք ստացել**: Չնայած այդպիսի օգնութիւն մենք միշտ էլ ցոյց ենք տուել Մարտակերտի շրջանին, որը մեր հարեւանն էր, իսկ Թալիշ եւ Զայլու գիւղերի պաշտպանութեանը միշտ անմիջական մասնակցութիւն ունեցել ենք՝ անկախ թէ մեր վիճակն ինչպիսին է եղել: Իսկ **մեր բոլոր այսպէս կոչուած դիմումները՝ օգնութիւն ստանալ Ղարաբաղից եւ Հայաստանից, մնացել են անարդիւնք:**

ՀԱՐՑ.- Վաղո՞ւց էք եկել Շահումեանից եւ ե՞րբ էք մտադիր վերադառնալու:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Պիտի ասեմ, որ երէկ եմ վերադարձել Շահումեանի շրջանից: Այնտեղ պարտիզանական կռիւէ մղւում: Դա արդէն գաղտնիք լինել չի կարող: Մեր ոտքի տակի հողը իսկապէս այրւում է, ահագին վնասներ, ահագին կորուստներ ենք պատճառել եւ շուտով պիտի վերադառնամ Շահումեան:

ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ն է այսօր իրավիճակը Շահումեանում:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.– Ես ձեզ ասեմ. **այն րոպէից, երբ մենք դուրս եկանք Շահումեանի վարչական տարածքից, կայացաւ ռազմական խորհուրդ, որոշում ընդունուեց սկսել պարտիզանական պայքար**: Այդ մասին համապատասխան հեռագիր ենք յղել ռազմական նախարարին, եւ անցել ենք մեր գործողութեան ռազմական ծրագրի իրականացմանը, որը ի հարկէ որոշակի հարցերում համաձայնեցուում է նախարարութեան, միւս այլ կազմակերպութիւնների հետ, որոնք չահագրգռուած են այդ գործում: Կոնկրետ երէկ եւ այսօր այս հարցով խօսել ենք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համապատասխան գործիչների հետ: Մեր ներկայացրած ծրագիրը ստացել է կոնկրետ պատասխան եւ, կարող եմ ասել, որ համարեա ներկայացրած բոլոր հարցերը դրական լուծում են ստացել:

ՀԱՐՑ.– Շահումեանի անկումից յետոյ չատ էր գրւում եւ նոյնիսկ Գերագոյն խորհրդում լսուեց ինչ-որ ակնապատուած դաշտերի մասին: Ի՞նչ կ'ասէք այդ մասին:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.– Ամբողջ պաշտպանական կառոյցի ստեղծման ընթացքում մենք ստացել ենք ընդամէնը 400 ական: Ովքեր տեղեկութիւններ ունեն ականադաշտերի եւ ականների մասին, նրանք պատկերացնում են ինչ է դա նշանակում Շահումեանի համար: 400 ականները տեղադրուած են եղել սովորական աւանդական ճանապարհների վրայ, որոնք տանում են հայկական այս կամ այն գիւղը, այսինքն՝ թուրքական գիւղից հայկական գիւղ տանող ճանապարհի վրայ ականներ չարուել են: **Եւ ո՛չ մի ական, կրկնում եմ՝ ո՛չ մի ական իր տեղից ոչ մի ձեւով չի հանուել:** Ուրիշ բան, որ թշնամին ունէր իր պրոֆեսիոնալ ականադերծող այն խմբերը, որոնք կրակային այդ պատնէշի տակ հանգիստ աշխատում էին: Այդ բոլոր ասեկոսէները սկսուել են ահա՛ որտեղից: Ովքեր եղել են Մանաչիդում՝ գիտեն, որ Մանաչիդը հարեւանութիւն ունի ադրբեջանական եւ՛ Թոդան գիւղի, եւ՛ Սարիսու գիւղի հետ: Մէկ օր առաջ, ամսի 11-ին, չտաբի պետ **Սերգէյ Զալեանը** գալիս է Մանաչիդ իր մօտ հրաւիրելով – ես անուններով նշում եմ, որպէսզի դուք, եթէ ցանկանաք, ստուգէք – Վերիշէնի խմբի

հրամանատար **Գիւլումեանին** եւ ասում, որ մեր ԲՄՊ-2-ի համար հարկաւոր է ստեղծել մէկ միջանցք, որպէսզի Գետաշէնի օպերացիան սկսուի: Շտաբի հրամանատարին ասում է, որ անպայման կ՚անենք եւ չորս ական հանում է: Սակայն ամսի 12-ի երեկոյեան, տեղեկութիւններ ստանալով թշնամու մօտ կատարուած տեղաշարժերի մասին, ականները նորից դնում են իրենց տեղը: Բացի դրանից, Մանաշիդի ուղղութեամբ, թշնամին զրահատանկային գրոհ չի ձեռնարկել, իսկ այդ ականներն ընկել են չահագրգռուած անձանց ձեռքը, եւ խօսւում է այն մասին, որ նոյնիսկ ականադաշտերը հանուել են եւ այլն: Ասեմ, որ Կարաչինարի մօտ երկու տանկ պայթեցին ականների վրայ, չնայած իրենք շատ գրագէտ էին գործում. մէկ տանկ պայթել է Էրքէչի տեղամասում: Իսկ ականների պատմութիւնն ահա սկսուել է այստեղից:

ՀԱՐՑ.- Իսկ ի՞նչ կ՚ասէք ձեր ընտանիքի մասին:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Խօսում եմ փաստերով: Իմ ընտանիքը դուրս է եկել ոտքով, Շահումեանի բնակչութեան հետ: Նոյնիսկ իմ մնացած հարազատներից զատ: Այդ ընթացքում տղաս կորել է անտառում եւ նրան գտել են «Ալաչկերտ» ջոկատի տղաներն ու բերել: Կինս չի նկատել, որովհետեւ ճամփին քնով է անցել եւ ընկել: Ինքը երկու աղջկաս հետ առջեւում էր: Կարող էք հարցնել եւ իմանալ, եւ դա յայտարարում եմ: Ինչ մնում է առանձնատուն եւ միւս այլեւայլ հարցերին, ահա այդ հարցը, ինչքան ինձ տեղեկացրին, բացայայտուել է: Եղբայրս, որ Սումգայիթի փախստական է, երկու-երեք տարի առաջ հաստատուել է Աբովեանում եւ այսքան տարի իր համար տուն է կառուցում: Այդ հարցը, ինչքան գիտեմ, փաստացիօրէն հերքուել է եւ այդ հարցին ուղղակի պատասխանել ես չեմ ցանկանում, որ Հայաստանի որեւէ անկիւնում որեւէ բնակարան կամ տուն չունեմ, եթէ լինէր, շատ շուտ կ՚իմացուէր եւ ոչ թէ հեռուստացոյցից: Իսկ ընտանիքս այժմ գտնուում է Երեւանում, երէկ Ստեփանակերտից տղաները բերել են: Ընտանիքս եղել է Ստեփանակերտում երկար ժամանակ բոլորի աչքի առաջ, այնպէս որ փաստ է: Ինչ մնում է ժողովրդի հետ մեկնելուն,

դժուարութիւններ չկան: «Ալաչկերտ» խումբը Հրազդանից է, կարող էք հարցնել, իմանալ, նրանց հարեւանութեամբ եղել են նաեւ գետաչէնցի տղաներ, որոնք եկել էին իրենց գիւղը ազատագրելու, այնպէս որ դա փաստացիօրէն կարող էք ստուգել:

ՀԱՐՑ.- Ի՞նչ կ'ասէք այն մասին, որ այսօր Շահումեանցիները Ղարաբաղում չեն, այլ գտնուում են Հայաստանի Հանրապետութեան տարածքում: Ի՞նչ քայլեր կ'առաջարկէք:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ ես չատ ցաւում եմ, որ նրանք գտնուում են Հայաստանում: Եւ առաջին նախապայմանը, որ դարձել է դրա պատճառը, դա այն էր, որ համարեա բոլոր տեղերում բնակչութիւնը չատ վատ էր տրամադրուած չահումեանցիների նկատմամբ, արդէն նախօրօք, ես կ'ասէի՝ ծրագրաւորուած կերպով պատրաստուած էր եւ բոլորը միաձայն ասում էին՝ ծախել էք, մեզ պէտք չէք եւ այլն եւ այլն: Ժողովրդին ստորացնում էին մինչեւ վերջին աստիճանը: Շատ-չատ փաստեր կան, նոյնիսկ մեր ներկայութեամբ եղած ունեցուածքի թալանի, իսկ միւս կողմից՝ **մեր զինուած տղաները դեռ չէին հասել Մարտակերտի սահմանը, երբ նրանց բոլորին անյապաղ զինաթափեցին Սերժիկ Սարգսեանի կողմից ստորագրուած մի հրամանագրով, որ նախկին Շահումեանի չրջանի բոլոր զինուած տղաները կոպտօրէն զինաթափուեցին,** իսկ մեր առաջարկը, նրանց կանոնաւոր ձեւով հաւաքել եւ ներգրաւել պաշտպանական կառոյցում, սկզբում մերժեցին, իսկ յետոյ՝ երբ բոլորը համարեա ցրուած էին, նոր միայն առաջարկեցին հաւաքուել եւ այլ բաներ:

ՀԱՐՑ.- Իսկ ի՞նչ պատճառաբանութիւններ կային:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Միակ պատճառաբանութիւնն այն էր, որ մենք ծախել ենք չրջանը, որ չենք կռուել, որ չորս տանկից փախել ենք, չգիտեմ՝ այդ չորս տանկի վարկածը ով էր տուել իրենց եւ որ արժանի չենք զէնք կրելու:

ՀԱՐՑ.- Իսկ դուք, որպէս հրամանատար, ինչպէ՞ս էք նայում ջոկատների զինաթափման հարցին:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ ասեմ, որ զինուած ջոկատները բոլորը տեղակայուած են եղել բնակչութեան ստուար

հատուածների հետ, որպէսզի նրանց ուղեկցեն անտառով - ափսոս, դուք պատկերացում չունէք, թէ դա ինչ տանջալից ճանապարհ է - եւ նրանք բոլորն անտառից դուրս են եկել տարբեր ժամանակներում: (Ով ծանօթ է այդ տեղանքին, նա կարող է հասկանալ, որ այլ բնակավայրերի բնակչութիւն դուցէ չկարողանար տանել նման ծանր երթի տանջանքները եւ մասամբ կը մնային ճանապարհին, սակայն Շահումեանի ժողովուրդը բնականից տոկուն էր եւ կարողացաւ հասնել անվտանգ տեղանք): Մէկը երկրորդ օրը, միւսը՝ երրորդ օրը, մէկը չորրորդ օրը եւ այլն: Ես օրինակ գտնուել եմ Մատաղիսում, ռազմական խորհրդի երկու անդամ ուղարկել եմ Հաթերք: Մատաղիսում մօտ երկու հազար բնակչութիւն կար, որը իսկոյն տեղափոխուեց, իմանալով, որ թշնամին արդէն յարձակուել է Թալիշի վրայ: Եթէ Մատաղիսում զինաթափման փաստեր չեն եղել, որովհետեւ մենք այնտեղ էինք, իսկ Հաթերքում եւ ուրիշ տեղերում՝ տղաներին արդէն զինաթափել էին: Իսկ ամենագլխաւորը մոտիւն էր, որ ծախել էք, որ տուել էք հողը, որ դուք կուսուցներ չէք եւ, ամենակարեւորը, որ ամենամարտունակ ջոկատները որոշ մարդկանց ցանկութեամբ դարձան դաւաճաններ, ծախողներ եւ այլն:

ՀԱՐՑ.- Կարո՞ղ էք նշել զոհերի թիւը:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Ուրեմն մի քանի տուեալներ դեռ ճշտուած չեն: Կարաչինարում զոհերի թիւը դեռ ճշտուած չէ: Բուզլուխում քսան էր, Մանաչիդում՝ երկուս, 4 հոգի զոհուել են Էրքէջում, Կարաչինարում զոհերի թիւը տատանւում է 20-30, որոնցից մի քանիսի ճակատագիրը անյայտ է:

ՀԱՐՑ.- Ադրբեջանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը յայտարարեց, որ Շահումեանում եւ Մարտակերտում զոհուել է 1500 մարդ: Մօտաւորապէս զոհերի թիւը ինչքա՞ն է:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Ես կարող եմ պաշտօնապէս յայտարարել, որ Շահումեանում հիմնականում զոհուել են ծերերը, որոնք չեն ցանկացել տներից դուրս գալ, այսինքն մնացել են տներում: Եւ բացառութեամբ Կարաչինար եւ Մանաչիդ

գիւղերի, որտեղ տանկերն անցել են գիւղերի թիկունքը, այդ գիւղերում նաեւ եղել են զոհեր քաղաքացիական բնակչութիւնից: **Զոհերի քանակը մեր հաշուումներով, 100-120 հոգի** են եղել, որոնք զոհուել են ճանապարհին եւ գիւղերում՝ Շահումեանից դուրս գալիս:

ՀԱՐՑ.- Պրն. Մեղրեան, դուք աւելի շատ նկարագրեցիք ձեր մօտեցումը խնդրին: Երէկուանից դուք երեւանում էք, հանդիպումներ ունեցե՞լ էք իշխանութիւնների հետ, մասնաւորապէս ռազմական իշխանութիւնների: Եւ ի՞նչ հեռանկարներ էք տեսնում Շահումեանի, Մարտակերտի գրաւուած տարածքները յետ բերելու գործում:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ հարկաւոր է, եթէ դա թուրքերի կողմից է, յարձակումը կասեցնել եւ անցնել պարտիզանական պայքարի, որի արդիւնքների մէջ ես համոզուած եմ, նրանք չեն կարող դիմանալ պարտիզանական պայքարին, որովհետեւ մեր տեղանքը հնարաւորութիւն է տալիս բաւականին բարձր մակարդակով այն իրականացնել. դա ի հարկէ կարող է հանդիսանալ գլխաւոր գործօններից մէկը, քանի որ թշնամին պէտք է իր ուժերը ետ բերի ճակատով եւ այդ հնարաւորութիւն կը ստեղծի մեր հակայարձակման համար: Ինձ թւում է, որ բոլորս պիտի լաւատես լինենք, որովհետեւ հարկաւոր է կայունացնել գիծը եւ անցնել հակայարձակման, այլապէս կարող ենք կորցնել ամբողջ Արցախը: Ես ի հարկէ չեմ կարող որեւէ պատասխան տալ, թէ ինչ մտադրութիւններ ունի ռազմական նախարարութիւնը, բայց ինձ թւում է, թէ իւրաքանչիւր ռազմական նախարարութիւն անպայման ցանկութիւն կ'ունենայ կորցրածը յետ բերել, այլապէս դա ռազմական նախարարութիւն չէ եւ դա ղէմ է որեւէ տրամաբանութեան...

ՀԱՐՑ.- Ինչի՞ հետեւանք էր Շահումեանի յանձնումը, կա՞յ արդեօք այստեղ դաւաճանութիւն:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Իմ պատասխանը, որ դա ռազմաքաղաքական պարտութիւն է, արդէն խօսում է այն մասին, որ այստեղ աւելի չուտ մեր քաղաքական բացթողումների արդիւնք էր, որ թշնամին ստացաւ այդպիսի աջակցութիւն եւ փաստօրէն ռազմի

դաշտում մեզ պարտութեան մատնեց: Աւելին ասել՝ դաւաճանութեան կամ այլ հարցերի վերաբերեալ, ես ճիշտ չեմ գտնում:

Դա աւելի շուտ մեր որոշ քաղաքագէտների քաղաքական հաւկուբրութեան արդիւնք է: Եւ յայտարարում եմ ամենայն պարզութեամբ: Դաւաճանութեան մասին չեմ ուզում խօսել, որովհետեւ **բաւականին դժուար է պատկերացնել մի հայի, որի մատը խառն է այս սադրանքին**, բայց եթէ կայ այդպիսի հայ, ինձ թւում է դա այնպիսի բան է, որ ուշ թէ շուտ պէտք է բացայայտուի եւ նա կը կանգնի ազգի դատարանի առաջ: Ոչ թէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ոչ թէ ՀՀՇի, այլ ազգի դատարանի առաջ: Եւ եթէ կայ այդպիսի հայ, նա անպայման կը կանգնի դատարանի առաջ:

ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ն է ներկայումս դրութիւնը Շահումեանում:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Բուզլուխը, Էրքէջը եւ Մանաչիդը ամբողջութեամբ այրուած են: Գիւլիստանի տների 50 տոկոսից աւելին վառուած է, մնացած բոլոր գիւղերում գնում է ակտիւ թալան:

ՀԱՐՑ.- Ձեզ մեղադրում են Շահումեանի յանձնման մէջ:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Ես մէկ անգամ եւս նշում եմ, որ այդ վարկածը շահումեանցիներին հրամցուել է արդէն անմիջապէս Մարտակերտի շրջան հասնելուց յետոյ, եւ դրա այսպէս կոչուած մանրամասնութիւնները աւելի են թէժացել, երբ զաղթականների առաջին քարաւանները հասել են Ստեփանակերտ, որտեղ Լեռնային Ղարաբաղի որոշ քաղաքական եւ պետական գործիչներ իրենց լուման են ներդրել այդ գործում, որպէսզի ժողովրդին համոզեն, հաւատացնեն, որ այն ամէնը, այն դժբախտութիւնը, որ կատարուել է իրենց հետ, դրա հիմնական մեղաւորը Շահէն Մեղրեանն է: Ի՞նչ պատճառներով, ի՞նչ անձնական դրդապատճառներով, չեմ կարող ասել, բայց փաստը առկայ է:

ՀԱՐՑ.- Դուք, ըստ էութեան, հիմա խախտում էք ՀՀ Գնի այն որոշումը, որ մինչեւ Գնի կողմից ստեղծուած յանձնաժողովի վերջնական եզրակացութեան գալը, ոչ ոք պէտք չէ խօսք ասի Շահումեանի իրադրութիւնների մասին:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ ես ոչ մի բան չեմ խախտում, լսել եմ Հայաստանի Գերագոյն խորհրդի որոշումը. նրանք այդ մասին իսկապէս հաւաստի տեղեկութիւններ չունեն, չեն էլ կարող ունենալ: Ես ինքս եղել եմ այդ տեղամասի ընդհանուր հրամանատարը, ես տեսել եմ այն ամէնը, ինչ որ կատարուել է, եւ ես յայտնում եմ այն ամէնի մասին, ինչ տեսել եմ, զգացել եմ եւ ինչ եղել է իմ մօտ: Եթէ որեւէ մէկին իմ ասածներից որեւէ բան հաւատ չի ներշնչում, ապա նա կարող է փաստերը ստուգել իմ նշած մարդկանց միջոցով:

ՀԱՐՑ.- **Դուք պնդում էք, որ Շահումեանի անկումը ռազմաքաղաքական պարտութիւն է:**

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Այո՛, ես ասում եմ, որ **դա ռազմաքաղաքական պարտութիւն էր, քանի որ ռուսական բանակի մասնակցութիւնը՝ հայկական բնակավայրերը գրաւելու գործում, դա էր ապացուցում: Այդպիսի հարցերը լուծւում են միայն ու միայն քաղաքական ճեւով, եւ եթէ Ադրբեջանը հասել է նրան, որ 4-րդ բանակը եւս մէկ անգամ ծառայել է իրեն - անկախ նրանից Ադրբեջանը ԱՊՀի անդամ է, թէ՝ չէ - այլ Հայաստանի ռազմաքաղաքական պարտութիւնն է, քանի որ ինքը լինելով ԱՊՀի անդամ, իր իսկ զօրքերը ուրիշը կարողացել է օգտագործել իր դէմ**: Ես դա յայտարարում եմ եւս մէկ անգամ եւ դա իմ մօտեցումն է, իմ գնահատականն է տուած բոլոր հարցերին:

ՀԱՐՑ.- **Պրն. Մեղրեան, արդեօ՞ք Հայաստանի իշխանութիւնները ստեղծել են նպաստաւոր պայմաններ, որպէսզի պառլամենտում կազմաւորուած այդ յանձնաժողովը Շահումեանում եւ Մարտակերտում աշխատի նորմալ պայմաններում:**

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ ասեմ, որ այդպիսի յանձնաժողովի մասին մենք իմացել ենք մէկ շաբաթ առաջ, բաւականին ուշացած ստանալով Հայաստանի թերթերը: Կարդալով թէ ո՞ւմ հետ են հարցազրոյց անցկացնում Շահումեանի անկման մասին, մեզ համար պարզ դարձաւ, որ Հայաստանում գնում է բաւականին չքօղարկուած կամպանիա: Այդ պատճառները քննելու համար, նախ **եւ առաջ նպատակայարմար կը լինէր ստանալ Ղարաբաղի ռազմական շտաբի գնահատականը** կատարուածի մասին,

որի ժամանակ լսուէր իմ՝ որպէս հրամանատարի, հաշուետուութիւնը եւ որից յետոյ հաշուետուութիւնը ներկայացուէր Հայաստանի պառլամենտին: Բայց ինչ-որ կասկածելի անճանց ճնշման, պառլամենտում գործող ինչ-որ ֆրակցիաների ճնշման տակ, գոյացել է մի յանձնաժողով, որի պարտականութիւնները ես չեմ հասկանում ինչում պիտի կայանայ: Եթէ նրա պարտականութիւնը Շահումեանի անկման պատճառները պարզելն է, ապա թող ներկայանայ Շահումեանի ռազմական շտաբի անդամներին, պիտի լինէին այն մարդկանց մօտ, որոնք պատասխանատու են ռազմաճակատի այս կամ այն տեղամասի համար եւ պարզէին ընդհանուր պատկերը: Դա կը լինէր պարզաբանում: Այլ ոչ թէ սպասել Երեւանում եւ փախստականների հետ, որոնց հետ անպայման կը լինէր չարախօս, անպայման օգտագործեն կա՛մ հեռուստատեսութեամբ, կա՛մ թերթում: Եթէ կայ իսկապէս միտում բացայայտել իրավիճակը, ապա թող ուղղաթիռով գայի Մարտակերտի շրջան, որտեղ մենք գտնուում էինք: **Մենք եղել ենք Մարտակերտի շրջանում մօտաւորապէս վեց օր, եօթներորդ օրը մտել ենք Շահումեանի տարածք**: Կամ՝ նոյն ուղղաթիռով, որով մենք թռել ենք Շահումեան, նրանք նոյնպէս գային, հանդիպումներ ունենային մեզ հետ եւ պարզէին, թէ ինչ պատճառներով այդ ռազմական պարտութիւնը կրեցինք: Եթէ մինչեւ հիմա այս ամէնը չեն պարզել, ես չեմ հասկանում այդ յանձնաժողովի նշանակութիւնը եւ ընդհանրապէս ինչի համար է այդ յանձնաժողովը: Կարելի էր հէնց Ղարաբաղում, տեղում պարզել անկման պատճառները, քանի որ Ղարաբաղում գործում է ռազմական շտաբ իր գեներալներով, իր զրահատեխնիկայի միջոցներով եւ այլն եւ այլն: Եւ հեշտ կը լինէր այնտեղ պարզել: Ոչ թէ Հայաստանի պառլամենտի անդամը պիտի պարզի, թէ ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի ռազմական շտաբը գոնէ երկու հատ զրահամեքենայ չի ուղարկել Շահումեան, որպէսզի գոնէ ժողովուրդը նորմալ ճանապարհով կարողանար իր ունեցուածքի հետ դուրս գալ, այլ ոչ թէ անտառներով, մագլցելով, եղնիկի արահետներով փախչէին: Աւելի ճիշտ չի՞ լինի խօսել այդ մասին, քան թէ ասել, որ մենք խախտում ենք պառլամենտի որեւէ որոշում:

ՀԱՐՑ.- Ռազմական նախարարը մերժեց այն փաստը, որտեղ ինքը ռադիոկապով խոստացել էր 30 հրասայլ եւ 3000 զինուոր:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Նախ ասեմ, որ երեք հազարի մասին խօսք չի եղել, այլ երկու հազարի մասին է խօսքը, ասեմ, որպէս-զի ամէն ինչ տեղը-տեղին լինի: Հրասայլերի մասին խօսակցու-թիւնը եղել է, երբ արդէն ռազմական շտաբը որոշում ընդունեց տեղափոխել բնակչութեանը եւ քանի որ մեր շտաբը գտնուում էր Շահումեան աւանում եւ փաստօրէն չրջափակուած տան-կերով: Վերջին պահին մենք մի կերպ դուրս պրծանք, այդ նոյն երեկոյեան ես կապուեցի **Վազգէն Սարգսեանի** հետ: Սարգսեանն անմիջապէս ինձ հաւաստիացրեց, որ ինքը գիտի իրավիճակը եւ թէ իսկապէս ինչ ուժեր են յարձակուել մեզ վրայ: Երբ մենք ստացանք սահմանապահ գնդի հրամանատար գնդապետ **Կարապետեանի** զեկոյցն այն մասին, որ թշնամու կողմից մասնակցում են երկու տանկային գունդ, դրանից յետոյ ես ռադիոկապով նորից խնդրեցի Վազգէն Սարգսեանին, որ եթէ ինքը օգնութիւն պէտք է ուղարկի, ապա անպայման հաշուի առնի գոնէ 30 հրասայլ, որը կարող է որոշակի առումով իրական նախապայման հանդիսանալ նրան, որ մենք կայունացնենք պաշտպանական գիծը, այսինքն՝ Ղարաբաղի կողմից: Ի միջի այլոց ասեմ, որ այդ պահակակէտերը մենք չյանձնեցինք, մինչեւ վերջին պահը: Եւ Վազգէնն ասաց, որ ինքը կ՚անի ամեն ինչ, որպէսզի օգնութիւնը հասնի ժամանակին: Զգիտեմ ինչ-ինչ պատճառներով, ես դեռ Սարգսեանի հետ չեմ հանդիպել, օգնութիւնը ո՛չ այդ օրը, ո՛չ միւս օրը տեղ չհասաւ: Ղարաբաղի ռազմական շտաբի պետ **Ֆելիքս Գզողեանը** երկրորդ օրը կապուեց ինձ հետ եւ ասաց, որ Հայաստանից արդէն դուրս է եկել 30 հրասայլով եւ 2000 հետեւակով չարասիւնը:

ՀԱՐՑ.- Հայաստանի կառավարութիւնը փաստօրէն անցել էր փաստացի օգնութեան: Յայտնի է, որ Շահումեանի անկմանը նախորդել էին ԼՂՀ Գնի իրաւարձութիւնները եւ այստեղ ստեղծուել էր հակադիր վերաբերմունք Հայաստանի իշ-խանութիւնների նկատմամբ:

ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆ.- Այդ հարցը եղել էր, ես ուզղակի փաստեր եմ նշում, որ որեւէ օդնուժեան փաստ՝ Ղարաբաղի ռազմական շտաբի եւ Հայաստանի ռազմական նախարարուժեան կողմից, այդ օրերին մենք չենք ստացել: Ես չեմ ցանկանում մտածել, որ դա արդիւնք է եղել ինչ-որ քաղաքական նկատառումների կամ այլ բաների: Չեմ կարողանում մտածել եւ չեմ ուզում մտածել, քանի որ դա անբարոյական բան կը լինի, եթէ դա այդպէս լինի: Բայց յամենայն դէպս **ինձ թուում է, թէ այստեղ աւելի շատ դեր է խաղացել այն փաստը, շատ-շատերի մօտ եղել է այն միտումը, որ Շահումեանը վերջին հաշուով պիտի տալ եւ որ Շահումեանի տալը ինչ-որ տեղ կարող է թեթեւացնել հարցերի լուծումը, ինչ-որ տեղ դուցէ եւ համարժէք հանդիսանալ Շուշիի, Լաչինի հետ**: Թուում է թէ ոչ թէ պատերազմի մասին է խօսքը, այլ առեւտրի. ինչ-որ բան տաս՝ ինչ-որ բան առնելու դիմաց: **Իսկ միտումը միշտ զգացել ենք բոլոր դէպքերում, քաղաքական բոլոր մակարդակներում եւ այն, ինչ որ կատարուեց, անհնար է այլ ձեւով բացատրել: *Դա ինչ-որ տեղ քաղաքական հաշուարկների արդիւնք էր, որովհետեւ շատերը դեռեւս չէին հասկանում, թէ ինչ է նշանակում թուրք եւ ինչ է նշանակում թուրքական քաղաքականութիւն:***

Վերջում ուզում եմ յայտարարել, որ մեզ մօտ եղել է մէկ տանկ, ասեմ, որպէսզի բոլորդ իմանաք, այդ մասին եւս շատ ասեկոսէներ կան - եւ եղել է չորս ԲՄՊ, որից երկուսը ԲՄՊ-1, երկուսը՝ ԲՄՊ-2: Այդ երկու ԲՄՊ-1ից մէկը կռուել է Մանաչիդում, մէկը՝ Ղարաբաղ տանող ճանապարհի վրայ, այսինքն՝ Մարտակերտ տանող ճանապարհի վրայ, միւս երկուսը եղել են մէկը՝ Բուզլուխում, միւսը փակել է Շահումեանի յետդարձի ճանապարհը: Ուրեմն, կռուի ընթացքում երկու ԲՄՊները խփուել են, տանկը վնասուել է, տանկի նշանառուն վիրաւորուել է ու շարքից դուրս եկել, բայց տանկը, երկու ԲՄՊ-2ը եւ «Գրադ» կայանքը մեր կողմից դուրս է բերուել այս լեռնային կածաններով: «Գրադ» կայանքը եւ տանկը յանձնուել է Մարտակերտի ռազմական շտաբին, իսկ երկու ԲՄՊ-2ը մնացել են անտառում, որովհետեւ հնարաւոր չէր անցկացնել: Ռազմական

պահեստները, ռազմական մթերքները բոլորը պայթեցուել են: Եւ խօսել այն մասին, թէ մենք տանկեր ենք ունեցել, ամենամեծ հնարաւորութիւնները եւ այլն եւ այլն, սուտ է: Ունեցել ենք այնքանը, ինչքան նշեցի:

(«Դրօշակ», թիւ 7, 20 յուլիսի 1992)

Այսպիսով՝ ահաւոր ողբերգութիւն ապրած, հայրենիքը կորցրած առաջնորդն ու հրամանատարը ստեղծուած իրադրութեանը մօտենում է միանգամայն հաւասարակշիռ, սթափ գիտակցութեամբ, եւ շարունակում է պահպանել իր երկիրն ազատագրելու յոյսն ու լաւատեսութիւնը: Ոչ մի ջղաձգում, ոչ մի վիրաւորական խօսք եւ ոչ մի չափազանցում, այլ ինչպէս նախկինում, հիմա էլ կարողանում է ինքնիշխանօրէն լուսաբանել բաւականին խրթին եւ քօղարկուած ռազմաքաղաքական մի կացութիւն, որի հեղինակներն ամէն կերպ ճգտում էին մարդկանց հեռու պահել իրավիճակի յստակ գիտակցումից, մոգոնում կեղծ բացատրութիւններ, դիմում սադրանքների, իրագործում դաւեր, չարամտութիւն, հակազգային եւ հակաժողովրդական հեռահար ծրագրերով՝ մեզ համար բացասական արդիւնքները ներկայացնում իբրեւ այլոց դաւաճանութեան, անճարակութեան կամ խաբէութեան արդիւնք: Սա օտար եզրով կոչւում է մանիպուլիացիա: Այս նենգամտութիւնները բացայայտում եւ լուսաբանում է ***Շահէն Մեղրեանը*** *եւ ցոյց տալիս, ակնարկում կամ մատնանշում, թէ ովքեր են դրանց յօրինողները: Թշնամու դէմ պայքարող հրամանատարը եւ իր ժողովրդի դոյութեան խնդիրները մինչ այդ ծանր պայմաններում լուծող վարչական եւ ռազմական առաջնորդն այժմ հանդէս է գալիս գաղափարական պայքարի ասպարէզում եւ ցուցաբերում է քաղաքական խճողուած հարցերը քննելու նրբամտութիւն եւ բարդ հարցերին պարզ պատասխանելու վերնատուր շնորհ:*

Հետաքրքրական են նաեւ երկրի ներսում գոյացած հակասութիւնների եւ դրանց ներկայացնող կողմերի բախման հոգեբանական հիմքերի եւ առհասարակ հասարակական հոգե-

բանուլթեան կարեւոր կողմերի նրա լուսաբանումները, իշխանութիւնների կողմից մարտունակ եւ հաւատքով զօրեղ ժողովրդի աստիճանական ոգեզրկման եւ կազմալոյծ մասնատման տեխնոլոգիայի բացայայտումը: Շահէն Մեղրեանը նոյնիսկ այստեղ քաղաքագիտական երեւոյթն արտայայտում է իր կողմից հնարամտօրէն ներմուծած եզրով՝ ***ներքաղաքական կիրք****: Այդպիսի բան շատ ժամանակ չեն յայտնում նոյնիսկ քաղաքագէտ տեսաբանները:*

Շահէն Մեղրեանը ծանր պարտութիւնից յետոյ ողջ մնաց ընդամէնը 11 ամիս եւ դրա սկզբնամասում նա անաչառ եւ միանգամայն ճիշտ գնահատական տուեց իրադրութեանը եւ ապա նորից անցաւ երկրի ազատագրման գործին: Գրեթէ անհնարին պայմաններում նա պայքարի, ազատագրական պատերազմը չարունակելու ճակատ է յարդարում աներեւակայելի՝ պարտիզանական եղանակով:

ՓՈԽԱՆԱԿՈՒՄ. ՇԱՀՈՒՄԵԱՆԸ ԼԱՋԻՆԻ ԴԻՄԱՑ

«Այսօր, երբ Շուշիի ազատագրումից մէկ ամիս յետոյ զաւթուել է հայկական Շահումեանը, թերեւս արժէր մտովի վերադառնալ Շուշի-Շահումեան առընչութեանը: Յիշեցնենք, որ ղարաբաղեան ընդհարման սկզբում ***Եակովլեւը Սախարովի*** *գլխաւորութեամբ Հայաստան եւ Ադրբեջան ուղարկեց մի խումբ, որի կազմում էին նաեւ* ***Բոնները, Պարկհինը, Ստարովոյտովան*** *եւ ուրիշներ:*

Խումբն էլ իր հետ բերել էր տարածքների «փոխանակման» յատուկ նախագիծ, ըստ որի՝ Շահումեանը պիտի փոխանակուէր Շուշիի հետ: Բացի այդ՝ նախատեսւում էր, որ մինչեւ 1988 թ. ադրբեջանցիներով բնակեցուած որոշ տեղամասեր — Սեւանայ լճի ափը, Կապանի, Գորիսի շրջանների որոշ հատուածներ - անցնելու են Ադրբեջանին, ստեղծուելու էին Հայաստանը Ղարաբաղին կապող եւ Նախիջեւանը Մեղրիով Ադրբեջանին կապող միջանցքները: Այդ մասին մերձբալթեան թերթերից մէկում մանրամասնօրէն պատմել է Ստարովոյտովան: Նախորդ իշխանութիւնները ինչպէս Հայաս-

տանում, այնպէս էլ Ադրբեջանում կտրականապէս հրաժարուեցին առաջարկուած տարբերակից: Յետագայում նման «փոխանակումներ»ի գաղափարը մի քանի անգամ վերածնուել ու չրջանառուել է քաղաքական չրջանակներում: Վերջին անգամ, որքան մեզ յայտնի է, այն քննարկուել է Շուշիի ազատագրումից առաջ:

Ազատագրելով Շուշին եւ Լաչինը, թւում էր, վերջնականապէս թաղուելու են վերը յիշուած նախագծերը: Սակայն ԱՊՀ 23-րդ դիվիզիայի սրընթաց գրոհը Գեանջայից Շահումեան «անորսալի» Սու-25-ի օգնութեամբ թոյլ տուեց մէկ ու կէս օրուայ ընթացքում մաքրել ԼՂՀ Շահումեանի չրջանը հայերից եւ նուաճել մեր տարածքից 500 քառակուսի կիլոմետր: Այսպիսով, փոխանակման մռայլ ուրուականը կրկին երեւաց հորիզոնում»: («Ազատամարտ», 19-25 յունիսի 1992):

*Հայաստանի իշխանաւորները դէմ էին Շահումեանը պահելուն եւ շահումեանցիների հերոսական չանքերն ակնկալիք յաղթական արդիւնքը չտուին: Սա յայտնագործութիւն չէ, այլ միայն ետահայեաց արձանագրութիւն այն բանի, ինչ տեղի է ունեցել: Մանաւանդ արդէն հրապարակուած են գրքեր, յօդուածաշարեր, որոնցում հիմնաւորւում է Շահումեանի եւ Մարտակերտի որոշ տարածքների՝ Շուշիի եւ Լաչինի հետ փոխանակելու փաստի գոյութիւնը (տե՛ս **Քէրոբ Սարգսեան**, «Շուշին ու Լաչինը՝ Շահումեանի եւ Մարտակերտի դիմա՞ց».- «Հետաքննութիւն» պարբերական, թիւ 3-ից, **Դանիէլիկ Բաղդասարեան**, «Դիմակայութիւն», Եր., 2010) որոնց փաստական հերքմանը որեւէ տեղ չենք հանդիպել:*

***Կիմ Բալայեան**.- «Ես հիմա կարող եմ փաստաթղթերով, վկաներով միանշանակ փաստարկել եւ վկայակոչել, որ այն ժամանակ Հայաստանի իշխանութիւնները փաստօրէն փոխանակում կատարեցին **Շահումեանը Լաչինով**: Եւ դա կազմակերպուած յանձնում էր, որի համար փորձում էին քաւութեան նոխազ դարձնել **Շահէն Մեղրեանին**, Դաշնակցութեանը, եւ այսպիսով հասնել իրենց ստոր նպատակներին: Դա ես համարում եմ **Հոբլի** ծրագրի իրագործման քայլերից մէկը: Որով-*

հետեւ, ըստ այդ ծրագրի, Թարթառ գետի ամբողջ ձախ հատուածը պիտի անցնէր Ադրբեջանին»:

Ինչ-որ մէկին ձեռնտու էր ազատուել Շահումեանից

Հարցազրոյց Շահէն Մեղրեանի հետ

(«Ազատամարտ», թիւ 30, յուլիս, 1992)

Հարց.- Մեր թերթի նախորդ համարում զետեղուած էր հա-մառօտ հաշուետուութիւն Ձեր մամլոյ ասուլիսի մասին: Ես կը ցանկանայի, որ մեր ընթերցում Դուք անդրադառնայիք շա-հումեանցիների այսօրուայ պրոբլեմներին:

*Պատ.- Այսօրուայ պրոբլեմների էութիւնը հասկանալու հա-մար անհրաժեշտ է նորից վերադառնալ այն օրերը, երբ շա-հումեանցիները հարկադրուած էին լքել իրենց տները եւ փրկուելու փնտրել Ստեփանակերտում ու Մարտակերտի շրջանում: Ամենակարեւորն այն է, որ հասնելով Մարտակերտի շրջան, նրանք բախուեցին **Շահումեանում իբր կատարուած դաւաճանութեան մասին** պատրաստի վարկածին: **Այդ վար-կածը տարածողները նրբօրէն հաշուարկել էին, որ մարդիկ, որոնք չորս տարիների ընթացքում խիզախօրէն կռուել են եւ յանկարծ դարձել են փախստական՝ կարող են հեշտութեամբ ենթարկուել հոգեբանական ճնշման:***

Անմիջապէս Վ. Սարգսեանի հրամանով զինաթափուեց 500-ից աւելի ազատամարտիկ, որոնք յայտարարուեցին դաւաճաններ, իսկ Շահումեանի շրջանը՝ «նախկին»: Ամէն ինչ նախապատրաստուած էր: Անմիջապէս քարոզչական մեքենան սկսեց աշխատել բոլոր մակարդակներով, եւ ժողովրդին ներշնչուեց, ու նա հասկացաւ, որ ինքը չի կարող յոյս ունենալ ո՛չ միայն վերադառնալ Շահումեան, այլեւ մնալ ո՛չ Ստեփանակերտում եւ ո՛չ էլ Լ.Ղ.Հում:

Հարց.- Պարզ է, որ մնում էր միայն մէկ ճանապարհ՝ Հայաստան: Իսկ այստեղ՝ ի՞նչ:

Պատ.- Այստեղ, Հայաստանում նրանք բոլոր կողմերից լսում էին նոյն մեղադրանքները, անկախ իրավիճակից, կենցաղային դժուարութիւններից ժողովուրդը կրկին ենթարկուեց հոգեբա-

նական ճնշման... Նորից մեղադրանքները դաւաճանութեան մէջ, անարժան յանդիմանութիւններ, եւ այդ ամէնը հպարտ, խիզախ, տոկունօրէն կռուող եւ երբեք իրենց հայրենի տունը լքելու մտադրութիւն չունեցող մարդկանց մասին:

Պարզ է մի բան, մարդկանց նորից ներշնչում են, որ նրանք այլեւս Շահումեան չեն վերադառնալու եւ հրահրում են, փաստօրէն հարկադրում, լքել նաեւ Հայաստանը:

Հարց.- Մի՞թէ այս ամէնը կատարուեց այդպէս յանկարծակի, անսպասելի եւ ո՞րն էր այդ բոլոր գործողութիւնների իմաստը:

Պատ.- *Ինչպէս չյիշել, որ այդ իրադրութեան որոշակի նախադրեալներ նախապատրաստուած էին նաեւ նախկինում:* ***Ահա արդէն 2-3 տարի է, ինչ խոսակցութիւններ են գնում Շահումեանի ինչ-ինչ տարածքների հետ փոխանակման մասին****: Այդ մտայնութիւնն աւելի նկատելի դարձաւ, երբ* ***Բ. Արարքցեանը*** *ԼՂՀ Գ նստաշրջանում յայտարարեց՝* ***մենք դեռեւս վերջնական չենք որոշել Շահումեանի պլրոբլեմը:*** *Նոյնը հաստատում էր նաեւ ԼՂՀի իշխանութիւնների եւ զինուորական շտաբի վերաբերմունքը: (Օրինակ, ինչպէս բացատրել այն, որ մեր դիմադրութեան երկու օրերի ընթացքում ոչ ոք չարձագանքեց մեր խնդրանքներին):*

Այսօր քարոզչական զանգուածային միջոցներն անդադար կրկնում են՝ բնակչութիւնը կը վերադառնայ Մարտակերտ, իսկ Շահումեանի մասին ոչ մի խօսք: Ժողովուրդը լսելով այդ, եզրակացնում է, որ ոչ մի հեռանկար չկայ: Եւ դա չնայած այն բանին, որ այնտեղ դեռեւս չարունակւում է պատերազմը եւ գնալով թէժանում: ***Շահումեանի ազատագրութեան հարցը յամառօրէն լռութեան է մատնուում****, եւ ակամայից յանգում ես այն եզրակացութեանը, որ* ***ինչ-որ մէկին ձեռնտու է ազատուել Շահումեանից եւ նրա հետ կապուած շատ անորոշութիւններից ու բարդութիւններից:***

Իմ կարծիքով, ի զուր չէր մամուլում ***Շահումեանն առանց մի կրակոցի յանձնելու վարկածի*** *ի յայտ գալը: Եւ,* ***հնարաւոր է, այդ վարկածը յղացուել է որպէս Լաչինն առանց կրակոցի***

*յանձնելու պատասխան քայլ: Ըստ երեւոյթին, քաղաքական ինչ-որ շրջաններում անհրաժեշտ էր արտաքին աշխարհի առաջ յայտարարել, որ Շահումեանն իրենք յանձնել են առանց կրակոցի, եւ փոխանակութիւնը կատարուել է հիմնովին: Այժմ ինձ համար դա ակնյայտ է: Այս ամենում ես տեսնում եմ մի նպատակ՝ **կոտրել ժողովրդի ռազմա-քարոյական ոգին:** Այնպէս անել, որ **այդ ժողովուրդը (շահումեանցիները) դադարի գոյութիւն ունենալ որպէս մէկ ամբողջութիւն:** Որպէսզի վաղը իրաւունք ունենան ասելու՝ **քանի որ չկայ Շահումեանի բնակչութիւնը, ապա չկայ եւ անհրաժեշտութիւն կռուել նրա համար, միեւնոյն է, ոչ ոք այնտեղ չի վերադառնայ:***

***Հարց.-** Ներկայ իրադրութեան մէջ ի՞նչն է շահումեանցիներին միաւորողը՝ ինչ-որ հեղինակութիւննե՞ր, մարդիկ, որոնց նրանք վստահում են:*

Պատ.-** Դա ամենացաւոտ հարցն է: **Նրանց այստեղ գալուց անմիջապէս յետոյ ջանացին խաղից հանել այն մարդկանց, որոնք բոլոր այս տարիներին ղեկավարում էին ժողովրդին,** նրա պայքարը: Ժողովուրդն սկզբնական շրջանում բաւականաչափ իրազեկ չէր, որ **կատարուածը, իրականում, քաղաքական խոշոր խաբէութիւն է:

Հնարաւոր է ինչ-որ մէկին անհրաժեշտ էր քաղաքական նպատակներով ինչ-որ մէկին զրպարտել, բայց մի՞թէ այդ գնով:

Այժմ ասպարէզ են դուրս եկել բոլոր այն մարդիկ, որոնք 2-3 տարի առաջ դաւաճանեցին ժողովրդին, փախան այնտեղից, իսկ այսօր յայտնւում են նոյնիսկ հեռուստաէկրաններին եւ յայտարարում, որ նախապատրաստում են իրենց հայրենիքի ազատագրումը: Շահումեանը կ՚ազատագրուի, բայց ոչ այն մարդկանց ձեռքերով, որոնք խաղում են ժողովրդի ամենասուրբ զգացմունքների հետ:

***Հարց.-** Ձեր կարծիքով, ինչպիսի՞ կոնկրետ քայլեր պէտք է ձեռնարկուեն կանխելու բնակչութեան հեռանալը այսօր արդէն Հայաստանից:*

***Պատ.-** Ինձ թւում է՝ մենք բոլորս ինչ-որ թմրութեան մէջ*

ենք: Անընդհատ սպասում ենք: Բայց ո՞ւմ: Ինչի՞: Ինչո՞ւ ժողովուրդը չի կարող իմանալ ճշմարտութիւնն իր մասին: Ինչո՞ւ նա չի լսում ճշմարիտ մի խօսք, որը կարող է նրան ոգեւորել, մոբիլիզացնել: Ի հարկէ, մենք խաղից դուրս չենք եկել, մենք աշխատում ենք: Այժմ մեր ազատամարտիկների մի մասը պատրաստւում է վերադարձնել Շահումեանը... եւ դա խթան կը հանդիսանայ: Բայց մենք այստեղ չենք լինի, եւ իմ անհանգստութեան պատճառն այն է, որ անհրաժեշտ է խօսել այդ պրոբլեմի մասին: ***Խորհրդարանը վերջապէս պէտք է հարցնի կառավարութեանը՝ ունի՞, արդեօք, նա Շահումեանը ազատագրելու պլան:*** *Այսօր այդ մասին ոչ ոք ոչինչ չի ասում:*

Զգիտես ինչու, ԼՂՀում ռազմաճակատը բաժանուած է վարչական շրջանների, չի ասւում ռազմաճակատի հատուածամասեր, այսինքն՝ այս ու այն բնակավայրեր, այլ ամէն անգամ ասւում է՝ Շահումեանի շրջան:

Այդ ամէնը արւում է ժողովրդին բարոյալքելու, մարդկանց հաւատը կոտրելու համար: Եւ, ընդ որում, այդ տարածքում որոշակի բանի հասել են: ***Այսօր դա այլեւս այն ժողովուրդը չէ, որին ես ճանաչում էի:*** *Յաւալի է այդ մասին խօսել, բայց անհրաժեշտ է:* ***Ժողովուրդն ընկճուել է ոչ թէ պարտութիւնից, այլ այն իրավիճակից, որ ստեղծել են նրա չուրջ:*** *Իսկ այժմ նրան ճանապարհում են (արտաքսում) Ռուսաստան, որտեղ համոզուած եմ, նա ապագայ չունի:*

Գլուխ տասնվեցերորդ
ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀՂԱՑՔ

Պատճառագիտությունը մարդկային իմացության հիմնորոշ ուղղություններից է: Սակայն պատճառն ինքնին վերացական գաղափար է, զի գոյություն ունեն մակերեսային փոխազդեցություններ եւ խորքային պատճառներ, առաջնային պատճառ եւ ածանցեալներ, գլխաւոր պատճառ եւ նպաստող հանգամանքներ, պատճառահետեւանքային շղթայ եւ վերջնական պատճառ, թուացեալ եւ իսկական պատճառներ, պատճառ եւ պայման, պատճառ եւ հանգամանք, պատճառ եւ պարագայ, պատճառ եւ պատահականություն... Եւ այսպէս կարելի է շարունակել եւ մեխանիկական ազդեցությունը տարբերակել ժառանգական կապից, ֆիզիկական գոյացումները՝ օրգանիզմներից, որոնց գոյութեան համար անհրաժեշտ են ծնող պատճառներ, կայ գենետիկ շղթայ եւ սոցիալական պատճառականություն... Մեր ուսումնասիրության ընթացքին առընչուել ենք ամենատարբեր մարդկանց, որոնց ենթակայական խօսքի մէջ արտայայտուել են է՛ռացիոնալիզացիա՝ ինքնարդարացում, է՛ նարցիզմ՝ ինքնասիրահարուածություն, մեծամտություն եւ այլն: Շահումեանի անկման պատճառ են համարուել թէ ներքին՝ դասակարգային, կուսակցական պայքարները, կլանութիւնը, թէ արտաքին ուժերը, թէ առանձին անհատ մարդկանց (դերակատարների) կամայականութիւնը, նիւթապաշտութիւնը կամ դաւաճանութիւնը, թէ առանձին ընտանիքների գերիշխանութիւնը շրջանում, միջոցների (տեխնիկայի) անհամամասնական առկայութիւնը մարտնչող կողմերի մօտ, մարտավարութեան եւ մարտունակութեան թերութիւնները, ժողովրդի թուլակամութիւնն ու անվճռականութիւնն իր հողը պաշտպանելու հարցում...

Պէտք է նշել նաեւ, որ խորքայինը, առաջնայինը, գլխաւորը, հիմնականը, վերջնականը հոմանիշներ են, իսկ մեր պարագային վերջնականը եւ առաջնայինը (նախապատճառը) նոյնական

*են: Եւ մեր երկարատեւ դիտարկումներից յանգել ենք այն մտքին, որ **հայրենական որեւէ տարածքի պաշտպանության առաջնային պայմանը տուեալ տարածքի (ջրջանի, գաւառի, երկրի) ազգաբնակչութեան հոգեւոր մակարդակն է, ոգու ուժը:** Մենք համոզուած ենք՝ որեւէ ժողովրդի թեկուզ մասնակի անհատատութիւնն առաջ է բերում միաբանութեան կորուստ, որը պարտութիւնների նախապայմանն է: Երկրի վրայի բոլոր երեւոյթները պայմանաւորուած են երկնքով, այսինքն՝ հիմնական գործող անձը Ինքը՝ Տէր Աստուած է, որի հետ կապը լինում է հաւատքի միջոցաւ: Անհատատութիւնը կապի խզումն է Աստուծոյ հետ, իսկ Աստուած պատճառ կամ աղբիւր է ամէն մի ուժի եւ զօրութեան, կեանք եւ գոյութիւն տուող ու պահպանող մարդկութեան Փրկիչն ինչպէս վախճանաբանական իմաստով, այնպէս էլ ամէն չարիքից ու փորձանքից: Ճշմարիտ հաւատքով է մարդու երկրային կեանքի ամէն մի իսկական յաջողութիւն: Պիտի անտես չանել կեցութեան կազմակերպման նրբութիւնները: Անհատատութիւնը ծնում է նիւթապաշտութիւն եւ եսասիրութիւն եւ մարդկային կեանքը դառնում է մեղսալից: Հայաստանի ծայրագաւառներում եկեղեցու թուլացումը եւ անհատատութիւնը նպաստել կամ ուղղակի պատճառ են դարձել դրանց կորստեան համար, զի եկեղեցին անփոխարինելի դեր է կատարում մարդու արժանապատիւ կեցութեան կազմակերպման եւ հունաւորման գործում:*

Հայրենիք, հող, երկիր *հասկացութիւններն ընդհանրական են ամբողջ ազգի համար: Եթէ ծննդավայրիդ հեռու հայկական մի բնակավայր դադարում է գոյութիւն ունենալուց, ոչ միայն պիտի կրաւորաբար ցաւես դրա համար, այլեւ քե՛զ պիտի մեղադրես եւ պատասխանատու համարես: Հայրենիքը ընդհանրական մի Տուն է, իսկ մենք բոլորս՝ միասնական Էութեան ծնունդ, մէկ Ծնողի զաւակներ: Քո անդրաթափանց միտքը քեզ հնարաւորութիւն կը տայ մտահայեցաբար ըմբռնել մեր ազգային ամբողջականութիւնը ժամանակի (պատմաժառանգական) եւ տարածութեան (համայն Հայաստան եւ Սփիւռք) մէջ: Մեր միմեանցից առանձնացուածութիւնը թուացեալ է,*

պատրանքային մտախաբութիւն, իսկ մեր միասնութիւնը, նոյնութիւնն՝ անփոփոխելի եւ անփոխադրելի ճշմարիտ էակա-նութիւն:

ԽՈՐՔԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՃԱՌ Է ԹԷ ՊԱՏՄԱՆ

Շահումեանի անկման վերաբերեալ առաջադրուած վարկած-ների մի մասը խիստ անհիմն են, սակայն այդպիսիներն էլ պղտորում են մարդկանց գիտակցութիւնը, ուստի կ՚անդրա-դառնանք դրանցից մէկ-երկուսին:

*Ինչո՞ւ ռուսների յարձակումն այդքան անակնկալ էր, ին-չո՞ւ թշնամին գերազանց է իմացել մեզ, իսկ մենք «էշի ական-ջում քնած ենք եղել», այսինքն, ինչպէս **Կոմանդոսն** է ասում, մեր ներքին, արտաքին եւ քաղաքական հետախուզութիւնները քնած են եղել: Ինչո՞ւ խորքային հետախուզութիւն չունէինք, իսկ ճակատային հետախուզութիւնն արդիւնաւէ՞տ է գործել արդեօք: Այս առումով ասենք, որ ճակատային հետախուզու-թեան խնդիրը չէ բացայայտել թշնամու ռազմավարական ծրագրերը. նա կարճաժամկէտ հաւանականութիւն եւ ընթացիկ մտադրութիւններ է բացայայտում: Ինչ մնում է խորքային հետախուզութեանը, մենք հաւանաբար նոր կազմաւորուող եւ թոյլ երկիր լինելով՝ պարզապէս այդպիսին չենք էլ ունեցել: Անկախ այս հարցի պատասխանից՝ **խորքային հետա-խուզութեան բացակայութիւնը պարտութեան եւ ողբեր-գութեան խորքային պատճառ չէ**: Խորքային պատճառ է, ասենք, երկրի պառակտուածութիւնը կամ երկիչխանութիւնը, քաղաքական ուժերի ներհակութիւնը եւ մոլեգին պայքարն իշխանութեան համար: Հայաստանի ուժեղ, ազդեցիկ մասերը չեն կամեցել օգնութիւն ցուցաբերել Շահումեանին՝ իբրեւ «դաշնակցական» շրջանի, մանաւանդ, որ այն ընկած էր **Պօլ Հոբլի** գծած սահմաններից դուրս:*

Հարցերը շատ են. օրինակ, ասենք, ինչո՞ւ չէին հայոց զօրապետները ճգտում կորցրածը ետ բերել, երբ կար շրջանը լիովին եւ գրեթէ անկորուստ վերագրաւելու հնարաւորութիւն:

Գլուխ տասնեօթներորդ
ՅԱԻԵԼԵԱԼ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Մինչեւ հիմա հայութեան միտքը գործում է Շահումեանի կորստեան պատճառները բացայայտելու ուղղութեամբ եւ այս առումով շատ բանի է հասել: Շահումեանի կորստեան պատկերն այնքան մշուշապատ չէ, որքան Արեւմտեան Հայաստանի, քանզի ոչ միայն ժամանակներն են տարբեր, այլեւ իրադրութեանց միջեւ գրեթէ նմանութիւն չկայ: Արեւմտեան Հայաստանը կորցրեցինք Ա Աշխարհամարտի ժամանակ, երբ Հայաստանը համաշխարհային թատերաբեմում գրեթէ գործող անձ չէր: Իսկ Արցախեան պատերազմի մասնակիցները, գոնէ առերեւոյթ, երկուսն էին՝ Արցախը եւ Ադրբեջանը: Ուստի համեմատաբար դժուար չէ պարզել մեր ազգային նշանակալի կորստեան պատճառագիտութիւնն այն բանից յետոյ, երբ նրա կարկառուն մասնակիցներն իրենց լուսայեղումներն են արել եւ գլխաւոր հրամանատարն արդէն երկրորդ, երրորդ անգամ է անդրադարձել Շահումեանում Հայ-Թուրք բախման տարբեր երեսնեւրին: Բացի դրանից, քաղաքական եւ ռազմական մի շարք գործիչներ լրջօրէն անդրադարձել են այդ խնդրին: Այդ անդրադարձումները մեծամասնութեամբ առկայ են սոյն գրքում եւ ուշադիր ընթերցողը կարող է ամբողջական եւ յստակ պատկերացում կազմել Շահումեանի անկման պատճառների մասին: Հիմնուելով ***Դենպրիկ Բաղդասարեանի*** *արդէն յիշատակած «Դիմակայութիւն» գրքի երկրորդ հրատարակութեան վրայ՝* ***Կիմ Ղահրամանեանը*** *«Մռաւի ղօղանջներ»ի իր մի հրապարակման մէջ գրում է. «Փաստերը վկայում են, որ դա (Շահումեանի կործանումը - Ա.Պ.) յանկարծակի ու անսպասելի է եղել միայն ժողովրդի համար, իսկ ՀՀ այն ժամանակուայ ղեկավարութիւնը ծրագրուած կերպով, քայլ առ քայլ նախապատրաստել է այդ կործանումը» («Մռաւի ղօղանջներ», թիւ 2, 2010): Այնուհետեւ պարբերաթերթի խմբագիրը մէջբերում է անում «Գոլոս Արմենիի» թերթում հրապարակուած նիւթից, որի մէջ ՀՀ այն ժամանակուայ*

հետախուզութեան վարչութեան պետ ***Իվան Ղուկասովը*** *խոստովանում է, որ 1992 թուականի յունիսի սկզբներին հետախուզութիւնը ՀՀ նախագահ* ***Լեւոն Տէր-Պետրոսեանին*** *զգուշացրել է, որ Ադրբեջանը պատրաստւում է յարձակման: Նոյնիսկ յայտնել են, թէ երբ, ինչ ուղղութեամբ, ինչպիսի ուժերով է յարձակուելու թշնամին, սակայն նախագահը լռութեան է մատնել: Նոյնիսկ չի զգուշացրել շրջանի ինքնապաշտպանութեան ղեկավարութեանը: Այդ դէպքում հնարաւոր կը լինէր գոնէ հարիւրաւոր զոհեր չտալ»...*

Կիմ Ղահրամանեանը գրում է. **«Դնեպրիկ Բաղդասարեանի** գրքի մէջ բերուած փաստերը վկայում են, որ **Լեւոն Տէր-Պետրոսեանի** գլխաւորած վարչախումբը Շահումեանի ինքնապաշտպանութեան ամբողջ ընթացքում հետեւողականօրէն, քայլ առ քայլ նախապատրաստել է մեր հերոսական շրջանի ողբերգական կործանումը: Ստորեւ հատուածաբար հրապարակում ենք մի քանի սոսկալի փաստեր այն մասին, թէ ինչպէս են թիկունքից հարուածել մարտնչող շահումեանցիներին» (նոյն տեղում):

Այսպիսով պարզւում է, որ, այնուամենայնիւ, ՀՀն ունեցել է խորքային հետախուզութիւն, սակայն նրա ղեկավարները զուրկ են եղել խղճի խորքային զգացումից:

Դաշնակցութիւնն էլ իր մէջոցներով է տեղեկատուութիւն ստացել թուրքերի եւ խորհրդային զօրքի Շահումեանի վրայ մօտալուտ լայնածաւալ յարձակման մասին եւ տեղեկութիւնը հաղորդել նախագահին:

Դնեպրիկ Բաղդասարեանի այս յայտնութիւնները վերջին տարիների նրա յայտնագործածը չեն, այլ դրանք արել է դեռեւս 1993 թուականին «Ազատամարտ» չաբաթաթերթի «Շահումեանի պաշտպանութիւնը եւ կանխորոշուած ողբերգութիւնը» հրապարակման մէջ: Հետաքրքրական է, որ լեգենդար հրետանաւորի հիմնադրոյթներն ու սկզբունքային մօտեցումները որեւէ փոփոխութեան չեն ենթարկուել, այսինքն՝ եղել են միանգամայն ճշմարիտ եւ վկայում են հեղինակի կատարեալ անկեղծութեան մասին: Խուսափելով Շահումեանի ողբերգութեան բազմաթիւ եւ բազմազան ստոյգ

պաճառները թուարկելուց, հեղինակն առանձնացնում է մի շարք հանգամանքներ.

1. Իշխող քաղաքական խմբաւորման ու ՀՅԴի միջեւ անհաշտելի բնոյթ կրող հակասութիւնները, որոնք իշխող խմբաւորման ջանքերով թշնամանքի են վերածւում:

2. «Անկախ» Հայաստանի «անկախ» նախագահի անողոք ու կատաղի պայքարը Հ.Յ.Դ.ի, մեր ազգային հեղինակաւոր կուսակցութիւններից մէկի դէմ ոչ թէ միջկուսակցական պայքարի ընդունելի եղանակներով ու ձեւերով, այլ բռնատիրական եղանակներով եւ նախագահական պաշտօնական դիրքի չարաշահումով:

3. Հանրապետութեան նախագահի ու նրա անմիջական շրջապատի այն ժամանակուայ յստակ պարտուողական քաղաքականութիւնը եւ տրամադրութիւնները, որոնք դիտաւորեալ բացորոշ արտայայտւում էին մեր անձնազոհ ազգի դիտակցութեան վրայ հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով եւ որի գագաթնակէտը համընկնում է Շահումեանում, Մարտակերտում, Արծուաշէնում մեր կրած տխմար պարտութիւնների ժամանակաընթացքի հետ:

4. Շահումեանի շրջանը, որի ղեկավարութիւնը ՀՅԴի նուիրեալներն էին, կարծում եմ՝ այդ իսկ պատճառաւ յայտնուել էր հարազատ հօրը կորցրած ու խորթ մօր ձեռին նայող զաւակի վիճակում, որին կարելի էր մի կտոր չոր հացով ու մի բաժակ ջրով պահել, ղրանով բարոյական պարտքը կատարած համարել ու սպասել մինչեւ ազերիները բարեհաճեն մեր առաջնորդին ու նրա սպարապետներին Շահումեանի շրջան կոչուող գլխացաւանքից ու աւելորդ անհանգստութիւնից ազատելու:

5. Պարզ է, որ պաշտպանութեան համակարգն իր ձեռքում պահող ՀՀՇի նուիրեալները չէին կարող հաշուի չառնել խմբաւորման առաջնորդի ու զինուած ուժերի գլխաւոր հրամանատարի տրամադրութիւնները ու «խորամիտ» քաղաքական մօտեցումները: Ինչպէ՞ս կարող էին նրանք քօղարկուած անուշադրութեան չմատնել Շահումեանը, որը նախկին ԼՂԻՄի վարչատարածքային կազմի մէջ չէր մտնում, երբ իրենց առաջնորդը ԼՂՀ հանրապետութիւն չէր ճանաչում (Լեռնային

Ղարաբաղ է սկսել անուանել) եւ այն Ադրբեջանի անբաժանելի մասն էր համարում ու ամէն կերպ ճգտում էր այդ գլխաւորապէս նոյնպէս մի կերպ աղաւաղել:

(«Ազատամարտ», թիւ 31, օգոստոս, 1993 թ.)

Հեղինակը ուշարադրութիւն է դարձրել նաեւ մի ստուերոտ երեւոյթի, որը ցարդ գործում է պաշտպանութեան համակարգում: Արհեստավարժ զինուորի մակարդակ չունեցող, նախկինում զինուորական գործի հետ ոչ մի առընչութիւն չունեցող ու այսօրուայ պղտոր ջրի երեսը դուրս եկած, պաշտպանութեան համակարգ ներխուժած անձինք չէին գիտակցում եւ այսօր էլ չեն ուզում հասկանալ, որ պաշտօններում ստոյգ յաջողութեան հասնելու համար ոչ թէ խելք է պէտք ընդհանրապէս, որից նրանք ի հարկէ զուրկ չեն, այլ այնպիսի խելք, որն անհրաժեշտ է այդ պաշտօնի համար:

Դնեպրիկ Բաղդասարեանն իրենց պաշտօններին անհամապասխան բանակային անձանց բնութագրել է մի արտայայտութեամբ՝ «բիրդան սպարապետներ»: Ահա այդպիսիները, ովքեր իրենց կեանքի ընթացքին հաւանաբար գոնէ մէկ անգամ մարտադաշտում մերձամարտի մէջ չեն եղել, կամ առհասարակ կռիւ չեն տեսել, յանձն են առել իրենց քաղաքական տէրերի հրահանգների գործակատարութիւնը, հայրենի որեւէ գաւառ կամ բնակավայր թշնամուն զիջելու կամ ազգապաշտ որեւէ զօրականի թիկունքից խփելու «հարամ» պարտականութիւնը: Պայքարը սկսելու եւ յաղթանակի հասնելու գաղափարը, զէնքով պայքարելու յաջողութեան գրաւականը եւ մարզումնեը, նաեւ հայրենասիրական ոգով դաստիարակութիւնը միանգամայն անհրաժեշտ են արտաքին թշնամիների դէմ պայքարում, սակայն երբ հակառակութիւնը ներսից է, հաւանաբար դա էլ չի օգնում: Պատերազմական իրադարձութիւնների զարգացմանը համընթաց կասկածելի պայմաններում եւ պարագաների զոհւում էին աչքի ընկած գործիչներն ու հրամանատարները այն հեռահար նպատակով, որ պատերազմի աւարտին նրանք «գլխացաւանք» չստեղծեն, այսինքն չխառնուեն իրենց «վլաստը» մենատիրօրէն վայելելու գործին եւ իրենց տէրերի

նախապէս արդէն ծրագրած ղեկավարման ռազմավարութեանը: Զարի պատրաստած ծուղակն է սա, որ նպատակ է ունեցել Հայաստանը միշտ միջակից ցածր երկիր կամ օտար տէրութեանց ոտքի տակի յենարան պահելը: Մերձաւոր Արեւելքում հաւանաբար ոչ մէկին պէտք չէ ուժեղ Հայաստան: Ահա «վլաստ»ին կառչածների հետ է հիմնականում գործ ունեցել Շահէն Մեղրեանը, որոնք Շահումեանի կործանման սառնասիրտ ականատեսներն էին, եթէ ոչ գործակիցները:

*ՀՀՇն ինչ որ արել է Շահումեանին, նոյն կերպ էլ վարուել է Արծուաչէնի նկատմամբ: Երբ 92-ի յանձնման օրը Ճամբարակում տեղակայուած հայոց զօրքի հրամանատարներից մէկին հարցրեցի, թէ ինչո՞ւ մի արկ էլ քո հրետանաւորները չեն արձակում թուրքերի վրայ, գոնէ որպէս սրտհովանք, նա պատասխանեց՝ թէ հրաման չունի: Այսպիսով, որոշ հրամանատարներ գործում են բացառապէս միմիայն վերադաս հրահանգներով, ի միտ չառնելով բացառիկ վիճակները, երբ անհրաժեշտ է քաջութիւն ունենալ էքստրեմալ իրավիճակներում նախաձեռնող կամք ցուցաբերելու եւ պարզապէս իրեն դրսեւորելու որպէս զօրավար, որն ի զօրու է ինքնուրոյն վճիռ կայացնելու եւ պատասխանատուութիւն յանձն առնելու եւ ոչ թէ լինելու փայլուն ուսադիրներով խամաճիկ: Այնինչ Հայաստանի ազատածին զաւակները, որոնք ժամանակին թշնամու դէմ են դուրս եկել, ունեցել են միայն մէկ խնդիր՝ ազատագրել եւ պաշտպանել հայրենի երկիրը եւ վարուել ըստ խղճի մտօք կամ համաձայն Աստուծոյ կամքի: Այդպիսի զօրավար էր **Նժդեհը**, նա, ով խիզախութիւն է ունեցել զանց առնելու, անտեսելու ձեւական հրամանները: Այդպիսի ազատարար էր **Դաւիթ Բէկը**: Եւ շատերը:*

*Հրամանատարների այս շարքի մէջ ամենից ողբերգական վիճակում յայտնուել է **Շահէն Մեղրեանը**, նա, ով ոչ միայն կեանքից զրկուեց, այլեւ հայրենի երկրից:*

*Գուցէ զարմանալի թուայ, որ այս ամէնից յետոյ **Շահէն Մեղրեանը** կրկին համագործակցել է «հայրենի» իշխանութիւնների հետ եւ ծաւալել պարտիզանական պայքար:*

*Յոյսն ո՞ւմ վրայ է դրել: Իրավիճակն է թելադրել հայդուկապետին դիմելու այդ քայլին: Ժամանակին՝ Նժդեհը վճռական պահին փորձել է յանուն Արեւմտահայաստանի ազատագրման, համագործակցել նոյնիսկ իր ոխերիմ թշնամիների՝ խորհրդային բռնապետների հետ: **Շահէնը Նժդեհի ոճի հրամանատար էր** եւ փորձել է ինչ-որ կերպ ազատագրել Շահումեանը:*

*Շահումեանի անկման պատճառների մասին ամենից յստակ եւ որոշակի ասել է նրա հրամանատարը՝ **Շահէն Մեղրեանը**, բնորոշելով այն առաւելագոյնս հակիրճ, որպէս **ռազմաքաղաքական պարտութիւն: Ռազմական** մասն աւելի պարզ է, քանզի տեղի է ունեցել բազմաթիւ մարդկանց աչքերի առջեւ եւ նրանց մասնակցութեամբ: Գրեթէ անսխալ գիտենք, թէ որ կողմից ինչ ուժեր են մասնակցել եւ ինչպիսի մարտավարութիւններ են կիրառուել: Աւելի դժուար է բացայայտել եւ միանշանակ խօսել **քաղաքական** մասի իմաստով, որովհետեւ քաղաքականութիւնը երեւացող գործընթաց չէ, յաճախ քօղարկուած է եւ միշտ մեկնիչները դժուարացել են տալ քաղաքական գործընթացների, մոտիւացիայի եւ հեռանպատակների յստակ պատկերը: Մանաւանդ, որ քաղաքականութիւնը տարբեր երկրների, բազմաթիւ խմբերի եւ է՛լ աւելի մեծաթիւ անհատների շահերի յարաբերակցման ասպարէզ է, որոնք յաճախ լինում են հակադիր եւ միմեանց բացառող: Եւ իւրաքանչիւր մեկնիչ իր գործն անում է որեւէ դիրքորոշումից, եւ մեկնութիւններն էլ, բնականաբար, լինում են միմեանցից տարբեր, նոյնիսկ՝ հակադիր եւ իրար բացառող: Մեկնութիւնները բազմաթիւ են, իսկ ճշմարտութիւնը մէկն է: Քաղաքական իրողութիւնների մեկնութիւնը նոյն քաղաքականութեան չարունակութիւնն է եւ, ի հակադրութիւն հոգեւոր մշակոյթի, չունի համազգային կամ համամարդկային բնոյթ:*

Այս ամէնը չի նշանակում, թէ բոլոր մեկնութիւններն են ենթակայական, կեղծ, մոլար կամ խաբէպատիր: Կան մարդիկ եւ հանրային խմբեր, որոնք ոչ միայն չահագրգիռ են ճշմարտութիւնը բացայայտելու, այլեւ իրենք իսկ ապրում են համաձայն ճշմարտութեան եւ յանուն ճշմարտութեան: Կան մարդիկ,

որոնց համար քաղաքականութիւնը պոռնկանալու ասպարէզ չէ, այլ հերոսութեան, ինքնամաքրումի եւ սրբութեան, որոնց համար քաղաքականութիւնն առանձին եւ մերկ չէ, այլ… հոգեւոր ասպարէզ: Եւ ի վերջոյ՝ կան մարդիկ, որոնց համար իշխանութիւնը ոչ թէ փառքի ու հաճոյքի, նիւթական միջոցների ձեռքբերման ասպարէզ է, այլ կենդանի մարտիրոսութիւն է, եւ խաչի ոսամբարձութիւն է լեռն ի վեր: **Շահէն Մեղրեանն էլ** հէնց այդպիսի մարդկանցից էր, ում համար հայրենիքն աւելի հոգեւոր իրողութիւն է, աւելի երկնային եւ Աստուածային, քան մարմնական եւ երկրային: Հետեւաբար, քաղաքական իրադարձութեան նրա մեկնութիւնը պիտի որ տարբերուէր փառք ու նիւթական շահեր հետապնդողների մեկնութիւններից: Քանզի Շահէն Մեղրեանը եղել է բարեպաշտ հայ եւ Շահումեանի ինքնապաշտպանութեան պատասխանատու: Եւ նա պատասխանատու էր իր Ազգ-Հայրենիքի եւ Աստուծոյ առջեւ: Եւ մենք վստահութիւն ենք տածում նրա խօսքին:

Այսպիսով Շահէն Մեղրեանը մեզ ձերբազատել է անորոշութիւնների անտառից եւ դուրս բերել պարզ, տեսանելի ճանապարհ, միանշանակ ի յայտ բերելով Շահումեանում կատարուած իրադարձութիւնների ընթացքը, ուժերի յարաբերակցութիւնը, Շահումեանի հրամանատարութեան եւ Հայաստանի իշխանութիւնների կապի ձեւը եւ տեղի ունեցածի պարզորոշ բացատրութիւնը: Յատկապէս կարեւոր է այս վերջինը: Եթէ ինքը չկռահէր կամ հաստատ չիմանար եւ անկեղծօրէն չասէր, որ Շահումեանը յանձնել է հայոց տիրապետող իշխանութիւնը, մենք ի՞նչ պիտի իմանայինք:

Ինչեւէ, Շահէն Մեղրեանը յստակ, հակիրճ, փաստարկուած, կշռադատուած եւ հիմնաւորուած պատասխանում է առաջադրուած հարցերին՝ ի յայտ բերելով Շահումեանի ազգաբնակչութեան, այնտեղ տեղաւորուած եւ տեղում գոյացած ռազմուժի եւ իր՝ առաջնորդի ու գլխաւոր հրամանատարի անուան անբասիրութիւնը, նրա անմնացորդ նուիրուածութիւնը հայրենիքին: Առարկայական (օբյեկտիւ) լուսաբա-

նուիրեամբ պարզաբանում է ռազմական իրադրութիւնը, բախուող կողմերի ուժերի յարաբերակցութիւնը, բախման պահը, ընթացքը եւ հետեւանքները, Հայաստանի իշխանութիւնների սխալների (չենք ուզում ասել՝ դաւաճանութեան) հետեւանքով առաջ եկած՝ Շահումեանի եւ չահումեանցիների առանց հայրենի հողի մնալու եւ աստանդական դառնալու դատապարտուածութիւնը: Նա հայութեանը բացայայտ է անում իրականում տեղի ունեցածը, Հայաստանի իշխանութիւնների դիրքորոշումը Շահումեանի նկատմամբ եւ նրանց անարի եւ անարժան պահուածքն ու վերաբերմունքը հայութեան հայրենիքի, այս պարագային՝ Շահումեանի, նկատմամբ, ինչպէս դա տեղի ունեցաւ այնուհետեւ Արծուաշէնի պարագային:

Զնայած սարսափելի կորստեան ահաւոր կսկիծներին՝ **Շահէն Մեղրեանը** միշտ բարձր էր մնում իրավիճակային կարճամիտ, էմոցիոնալ վերաբերմունքից, ամէն անգամ նրա ելակէտն ու նպատակը համազգային չահն էր: Նա գիտէր, որ իր սխալները հեշտութեամբ կ՚օգտագործեն մեր ընդհանուր հաւաքական զօրութեան դէմ եւ զգուշանում էր որեւէ պարսաւիչ, նոյնիսկ ինքնարդարացնող արտայայտութիւններից: Նրա ընդհանուր դիրքորոշումը կարելի է անուանել **խելամիտ անաչառութիւն,** օբյեկտիւութիւն կամ առարկայական մտահայեցութիւն: Շահէն Մեղրեանի խօսքի մէջ զգացւում է հայրենապաշտը, հմուտ դիւանագէտը, հեռամէտ ռազմավարը, պետական, քաղաքական եւ ռազմական գործիչը: Այդպիսի մարդուն ամէն ազգ եւ պետութիւն պիտի ճգտէր պահպանել իր ապագան ահովելու համար: Նման անաչառութիւն պետական իշխանական այրերը ոչ միայն չդրսեւորեցին, այլ, ընդհակառակը, գործադրեցին իրենց գաղափարախօսական սադրիչ վարպետութիւնը Շահէն Մեղրեանին նշաւակելու համար: Ափսո՜ս Շահէնի եւ ամբողջ Շահումեանի կորուստը, որը Նախիջեւանը եւ Արեւմտեան Հայաստանը կորցնելուց յետոյ ամենամեծ ողբերգութիւնն է: Սոյն գրքի հեղինակը հակուած չէ մտածելու, թէ Շահումեանի յանձնումը ռազմա-

քաղաքական անհրաժեշտութեամբ թելադրուած քայլ էր, մի մտայնութեամբ, թէ իբր ազատագրելուց յետոյ այն դժուար կը լինէր այդքան մեծ սահմաններում պաշտպանելը: Փաստ է, որ ինչքան մեծ է երկրի տարածքը, այնքան տւեալ երկիրն օժտուած է ինքնապահպանման զօրութեամբ: Մինչդեռ մենք այդքան էլ չենք մեծացել, այլ միայն կորցրել ենք:

*Մեզ թւում է, թէ «դաշնակցական» Շահումեանն անտեսելու հիմքերից մէկը եղել է ոչ թէ Դաշնակցութեանը «դաս» տալու մանկամիտ մարմաջը, հասկացնելը, որ ՀՀՇական իշխանութիւնների դէմ «խաղ չկայ», այլ իր քաղաքական հակառակորդին վերացնելու, ոչնչացնելու մտադրութիւնը: Մանաւանդ, որ քաղաքական հակառակորդը **Լեւոն Տէր-Պետրոսեանի** նման մարդկանց համար ընկալւում էր իբրեւ ոխերիմ թշնամի: Դրա փաստարկ-օրինակը՝ պատերազմը հազիւ դինադադարի հասցնելուց յետոյ Դաշնակցութեան հալածանքներն ու օրէնքից դուրս յայտարարելն էր: Սակայն իշխանութիւնները երբ հասկացան, որ առանց Դաշնակցութեան դժուար թէ կարողանան բնականոն կապեր պահել սփիւռքահայութեան հետ, իրենք էլ չուզենալով, ստիպուած թոյլատրեցին նրա գործունէութիւնը՝ հաւանաբար փորձելով իրենց ցանկալի հունով կարգաւորելու նրա գործնէութեան ընթացքը:*

Ի տարբերութիւն «տեսաբանների», Շահէն Մեղրեանը ձգտել է անել հնարաւորինս՝ առանց ծայրայեղութիւնների մէջ ընկնելու: Բնաւորութեամբ լինելով հաւասարակշիռ եւ համբերատար, նա կարողացաւ սկսել եւ ծաւալել հայդուկային հզօր պայքար՝ կրկին դրսեւորելով կազմակերպական մեծ եռանդ եւ անմնացորդ նուիրում, դիւանագիտական մեծ կարողութիւններ:

«Եթէ մի թագաւորութիւն ինքն իր մէջ բաժանուի, այդ թագաւորութիւնը չի կարող կանգուն մնալ: Եւ եթէ մի տուն ինքն իր մէջ բաժանուի, այդ տունը չի կարող կանգուն մնալ» *(Մրկ. Գ 24-25)*: *Աւետարանական այս խորհրդաւոր ճշմարտութիւնը դժբախտաբար մէկ անգամ էլ հաստատուեց մեր ազգի պարագային: Մէկ հարցի առումով երկիրը կէս եղաւ եւ կորցրինք երկրամասը, այսինքն՝ հայրենիք:*

Շահումեանը, ինչպէս նաեւ Արծուաչէնը, կարելի էր պահել այն պարզ պատճառով, որ եթէ որեւէ անհատ, խումբ, ժողովուրդ, ազգ, երկիր ազատագրական պայքար է մղում յանուն Աստուծոյ, նրան ամէն պայման տրւում է այդ գործը կատարելու համար, քանզի ինքնապաշտպանութիւնն Աստուածային զօրութեամբ է իրականանում, եթէ ի հարկէ կայ այդպիսի գիտակցութիւն: Ազգային հաւատքի եւ արժէքների համակարգի վրայ հիմնուած մի պետութիւն եթէ որոշի պաշտպանել իր հայրենի երկիրը, կը յաջողի այդ անել, եթէ նոյնիսկ ստիպուած լինի կռուել ամբողջ աշխարհի դէմ: Որովհետեւ ինքնապաշտպանութիւնն Աստծուածահաճոյ սրբազան պատերազմ է: Սակայն, եթէ մի հաւատաւոր ազգի անհաւատ (այլադաւան) իշխանութիւն որոշի իր երկրի մի մասը ծախել կամ «նուիրել» իր հետ պատերազմող երկրին, ազգն ու ժողովուրդը մինչեւ վերջ ի վիճակի չեն լինի դա կանխարգելել, քանզի իրենց դէմ կը գործեն երկրի ոստիկանական, ռազմական, պետական «անվտանգութեան» համակարգերը: Եւ թող ընթերցողը պատկերացում կազմի մի ազգաբնակչութեան վիճակի մասին, որը տեղեկատուական վակուումի պայմաններում չի ընկալում իրադրութիւնն ու ստեղծուած իրավիճակի պատճառը, անկարող է իմանալ, թէ ինչ է կատարւում պահի դրութեամբ եւ իրեն ինչ է սպասւում, չգիտի թէ ում դէմ է կռւում եւ իր դէմ ով է կռւում: Այսպիսի կրաւորական վիճակի մէջ գցելով ժողովրդին՝ հայոց իշխանութիւնները կիսեցին Հայաստանը եւ նրա մի մասը նորից թողեցին թուրքերին: ՀՀ իշխանութիւննեը Շահումեանը թողեցին դաւաճանութեան յատկանիշներով, իսկ երբ նրա ազատագրման համար բոլոր նախադրեալները կային, վերացրեցին Շահումեանի ազատագրութեան գաղափարը մարմնաւորող եւ պայքարի առաջնորդին: Քարվաճառն ազատագրելուց յետոյ Շահումեանի ազատագրումը մեր ուժերի համար խաղ ու պար էր: Թէ դա թուրքերի համար զսպող ինչ դեր կ՛ունենար՝ դժուար չէ կռահել: ***բնականաբար, յատկապէս Գետաշէնի ազատագրումը կարեւորագոյն ռազմական նշանակութիւն կ՛ունենար, քանի որ մեր ջոկատները հնա-***

բաւորութիւն կը ստանային ուղղակի նշանառութեան տակ վերցնել կէս միլիոնանոց կիրովաբադը:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Շահէն Մեղրեանի հարցազրոյցի մէջ արտայայտուած փաստարկումները լիովին բաւարար են յստակ պատկերացում կազմելու Շահումեանում եւ նրա հետ կապուած իրադարձութիւնների վերաբերեալ, սակայն հետազօտութեան այս խնդիրը սպառիչ աւարտին հասցնելու համար զետեղում ենք մի շարք հրապարակումներ եւ իրազեկ անձանց տեսակէտներ:

«ՅԱՂԹԱՆԱԿԱՅ ԵՐԿՐԻ ԿՈՐՑՐԱՅ ՏԱՐԱՅՔՆԵՐԸ»

«1992 թուականի յունիսի 13-ին տխրահռչակ «Կոլցո» օպերացիայի արդիւնքում գրաւուած Շահումեանի շրջանը հայաթափուեց եւ մինչ օրս դեռեւս գտնւում է Ադրբեջանի վերահսկողութեան ներքոյ: Առաջին հայեացքից Շահումեանի շրջանի յանձնումը ռազմական տեսանկիւնից կարծես թէ օրինաչափ երեւոյթ պէտք է դիտուէր, որովհետեւ խորհրդային բանակի մեծաքանակ ուժերի ղէմ Շահումեանի շրջանի ինքնապաշտպանական ուժերը չէին էլ կարող մարտնչել: Դա շատ պարզ երեւում է թէկուզեւ այն փաստից, եթէ համեմատենք կողմերի զրահատեխնիկան: Յարձակուողներն ունեցել են աւելի քան 100 միաւոր զրահատեխնիկա՝ տանկ, մարտական զրահամեքենայ, իսկ Շահումեանի ինքնապաշտպանական ուժերը ունեցել են ընդամէնը 1 տանկ եւ 2 մարտական զրահամեքենայ, որոնցից մէկն էլ վերանորոգման ենթակայ:

Շահումեանի յանձնման պատմութիւնը ծածկուած է շատ մութ կէտերով, որոնք էլ երեւի ժամանակին հիմք հանդիսացան, որպէսզի ԳԽ-ում ստեղծուի յանձնաժողով եւ ուսումնասիրուի այդ պատմութիւնը: Չնայած նրան, որ հայկական ջոկատները ռազմական տեսակէտից չէին էլ կարող դիմադրել խորհրդային զօրքին: Բայց... կան մի շարք հարցեր, որոնց ժամանակին չկարողացաւ պատասխանել յանձնաժողովը եւ յետոյ, թելադրուած

քաղաքական իրաւիճակով, Շահումեանի հարցը դուրս եկաւ օրակարգից: Բայց կան հանգամանքներ, որոնք այսօր էլ, տարիների հեռուից կարող են լոյս սփռել 92 թուականի յունիսեան իրադարձութիւնների մութ մնացած դէպքերի վրայ: Շահումեանի չրջանի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար **Շահէն Մեղրեանի** եղբայր **Պետրոս Մեղրեանը**, որի անուան յիշատակումը միգուցէ նրա տեսակէտներին հակառակուող մարդկանց մօտ հեգնախառն ժպիտ առաջացնի, բայց Պետրոս Մեղրեանն ասում է փաստեր եւ պատասխանատուութիւն է ստանձնում իր յայտարարութիւնների համար, ի տարբերութիւն այն մարդկանց, քաղաքական գործիչների, ովքեր, համաձայն Պ. Մեղրեանի, ժամանակին անում էին յայտարարութիւններ, յետոյ հրաժարւում իրենց ասածից:

«ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՑԱՆՋՆՈՒՄԸ ԵՂԵԼ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ».

Ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում է Դեմոկրատական կուսակցութեան նախագահ **Արամ Գ. Սարգսեանը**: Ի՞նչն է հիմք տալիս պրն. Սարգսեանին նման յայտարարութիւն անելու: 1991 թուականին, երբ ԳԽ նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեանի** հրամանով ազգայնացւում է կոմկուսի ողջ ունեցուածքը, եւ կոմկուսը յայտնւում է տպարանի չէնքի ինչոր յարկաբաժնում, այն ժամանակ կոմկուսի առաջին քարտուղար Արամ Գ. Սարգսեանին են դիմում մի խումբ շահումեանցիներ՝ Շահումեանի չրջկոմի առաջին քարտուղար **Վոլոդիա Աղաջանեանի** գլխաւորութեամբ: Ինչպէս պրն. Սարգսեանն է յիշում. «Նրանք եկան ինձ մօտ, ասացին, որ Շահումեանի վիճակը շատ վատ է, աստիճանաբար հայաթափւում է, եւ խնդրեցին միջոցներ ձեռք առնել»: Երբ Արամ Գ. Սարգսեանը նրանց հարցնում է, թէ ինչու ԳԽ նախագահին դիմելու փոխարէն դիմել են իրեն, այն դէպքում, երբ կոմկուսն այն ժամանակ շատ չնչին, կարելի է ասել նաեւ, որ ոչ մի իշխանական լծակ կամ ազդեցութիւն չունէր, շահումեանցիները պատասխանում են, որ դիմել են, բայց ոչ մի յոյս չունեն, որ իրենց հարցը կը

լուծուի: Եւ կոմկուսի առաջին քարտուղարին դիմել են այն ակնկալութեամբ, որ վերջինս Մոսկուայում Քաղբիւրոյի միջոցով այդ հարցերը կարգաւորի: Արամ Գ. Սարգսեանը, ինչպէս ինքն է ասում. «Համոզուելով, որ իրօք իմ ջանքերով է միայն հնարաւոր հարցը լուծել, մեկնեցի Մոսկուա: Դա 1991 թուականի յունիսն էր: Հանդիպումներ եղան ՆԳ զօրքերի հրամանատար **Շատալինի,** պաշտպանութեան նախարար **Եազովի**, ՊԱԿի նախագահ **Կրիւչկովի,** ՆԳ նախարար **Պուգոյի** հետ: Ես իմ հանդիպումների ժամանակ ներկայացրի Շահումեանի շուրջ առաջացած խնդիրները: Բայց քանի որ այդ պահին չկային Շահումեանում կոնկրետ յարձակումների դէպքեր, գիւղերի հայաթափման գործողութիւններ եւ միաժամանակ ադրբեջանցիներն էլ էին բողոքում, թէ հայ կամաւորները յարձակումներ են գործում իրենց վրայ, ինձ ասացին, որ իրենք կը պարզեն, թէ ովքեր են մեղաւորները եւ խնդիրը կը կարգաւորեն»:

91 թուականի Շահումեանի շուրջ իրադարձութիւնները թէժանում են քիչ ուշ՝ յուլիսի 20-ից յետոյ:

*Սկսում են հայաթափուել Էրքէջ եւ Մանաչիդ հայկական գիւղերը: Պրն. Սարգսեանը յիշում է, որ լուրեր էին պտտւում Շահումեանի յանձնման մասին: Եւ քանի որ վիճակը օրեցօր սրւում էր, ինչպէս պատմում է պրն. Սարգսեանը, ինքը հսպասելով յունիսի 25-ին նշանակուած Քաղբիւրոյի նիստին, **Վոլոդիա Աղաջանեանի, Դերենիկ Պետրոսեանի** հետ նիստից մի քանի օր առաջ մեկնում է Մոսկուա:* «Ես գիտէի, թէ ինչ է կատարւում Շահումեանում: Դիմեցի **Միխայիլ Սերգէեւիչին**, որպէսզի ինձ ընդունի: Քաղբիւրոյի նիստից առաջ ինձ մօտեցաւ Ադրբեջանի առաջին քարտուղար **Մութալիբովը** եւ ասաց, թէ՝ «Արամ Գասպարիչ, ես գիտեմ Դուք ինչ հարցով էք դիմելու Գորբաչովին: Մի երեք օրով յետաձգէք ձեր հանդիպումը, եւ ես կը կանխեմ դեպորտացիան»: Բայց քանի որ ամէն պահի ես ինձ հետ Մոսկուա եկած շահումեանցի տղաների միջոցով գիտէի, թէ ինչ է կատարւում այնտեղ, ես արդէն տեղեակ էի, որ Էրքէջը, Մանաչիդը արդէն հայաթափւում են, մերժեցի Մութալիբովի դիմումը եւ ասացի, որ այդ հարցը Գորբաչովի

հետ անպայման քննարկուելու է»:

Քաղբիւրոյի նիստից յետոյ պրն. Սարգսեանը յիշում է, թէ ինչպէս է մօտեցել Գորբաչովի սեղանին եւ հանդիպում պահանջել: Գորբաչովն իրեն առաջարկել է յաջորդ օրը կայանալիք ՄԿԿ պլենումում հանդէս գալ ելոյթով: Այդ փաստն ուշագրաւ է նրանով, նշում է Արամ Գ. Սարգսեանը, որ դա առաջին դէպքն էր, երբ նոր ընդունուած կենտկոմի քարտուղարին առաջարկել են ելոյթ ունենալ պլենումում: «Պլենումի ընդմիջման ժամանակ նկատեցի, որ Մուրթալիբովը, Կրիւչկովը, Եազովը չէջապատել են Գորբաչովին: Անտեսելով էթիկետի կանոնները՝ ես մօտեցայ եւ կանգնեցի Գորբաչովի կողքին: Եազովը, որ այդ պահին զեկուցում էր, ինձ նկատելով լռեց: Գորբաչովը շուռ եկաւ եւ տեսնելով, որ ես կանգնած եմ իր կողքին, թեւանցեց ինձ եւ առանձնանալով ասաց, թէ «այս ինչ են անում ձերոնք Շահումեանում, սպանում են, պայթեցնում են, կրակում խաղաղ բնակչութեան վրայ»: Ես ասացի, որ ճիշտ հակառակն է կատարւում, որ դա ադրբեջանցիների կողմից է արւում եւ արդէն մի քանի հայկական գիւղեր տեղահանուել են»: *Համաձայն պրն. Սարգսեանի, Գորբաչովը զարմանում է՝ ինչպէ՞ս թէ գիւղեր են տեղահանւում, չէ՞ որ ինքը նման հրաման երբեք չի տուել, եւ խոստանում է անձամբ պարզել, թէ իրականում ինչ է կատարւում Շահումեանում: Սակայն, պարզւում է, որ Գորբաչովն այնքան էլ անտեղեակ չէր, թէ ինչ է կատարւում Շահումեանում, որովհետեւ նա Արամ Գասպարիչին ասում է նաեւ հետեւեալը.* «Այդ ամէնը (կրակոցները, սպանութիւնները) յատուկ անում են դաշնակները, եւ այդ ամէնն ուղղուած է **Լեւոն Տէր-Պետրոսեանի** դէմ»: *Եւ այստեղ իրօք անկեղծօրէն զարմանում է Արամ Գ.Սարգսեանը, թէ այդ ինչպէ՞ս է Լեւոն Տէր-Պետրոսեանը, որը ԽՍՀՄում առաջնեակի սինդրոմ ունէր, քանի որ մշտապէս առաջինն էր կոմկուսի եւ Խորհրդային Միութեան դէմ կատարուող բոլոր գործողութիւններում, եւ այդ ամենից յետոյ պաշտպանւում է Գորբաչովի կողմից: Եւ իր զարմանքն արտայայտելուց յետոյ Գորբաչովը բառացի, ինչպէս այն Սարգսեանն է յիշում, իրեն ասաց.* «Դու ոչինչ չհասկացար», եւ

հեռացաւ: Ես այդ ժամանակ դիմեցի **Լիւդմիլա Ցարուքիւնեանին**՝ հաշուի առնելով նրանց յարաբերութիւնները ԽՍՀՄ Գերագոյն խորհրդից եւ ասացի, որ մօտենայ Գորբաչովին եւ նոյնպէս փորձի նրան պարզաբանել, թէ իրականում ինչ է կատարւում»:

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԷՐ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ

*Բաժանուելով Գորբաչովից Արամ Գ. Սարգսեանը մօտենում է ՊԱԿի նախագահ **Կրիւչկովին** եւ հարցնում, թէ **Եազովի** հետ խորհրդակցելուց յետոյ ինչ են որոշել: Վերջինս պրն. Սարգսեանին պատասխանում է, որ որոշել են ՆԳՆ ծառայութեան զօրքերը դուրս բերել Շահումեանից:* «Բայց չէ՞ որ դա նշանակում է տեղի անպաշտպան հայ բնակչութեանը թողնել ադրբեջանական ՕՄՕՆի դէմ միայնակ, ինչը եւ հէնց նրանց ուզածն է»,- *վրդովուած հակադարձում է Արամ Գասպարիչը եւ ստանում է Կրիւչկովից մի պատասխան, որն այսօր էլ լուրջ մտորումների տեղիք է տալիս եւ որից, ինչպէս պրն. Սարգսեանն է յիշում, «արիւնը տուեց գլխիս, երբ Կրիւչկովն ինձ ասաց. «**Ձեմ հասկանում, թէ Դուք ինչու էք անհանգստանում: Մենք ամէն ինչ համաձայնեցրել ենք Ձեր Գխ նախագահի հետ**»: Համաձայն **Արամ Գասպարիչի**, այդ պահին միայն նրա վճռականութիւնն է ստիպել ԽՍՀՄ ղեկավարութեանը վերանայելու իրենց որոշումը:*

«Ես **Կրիւչկովին** ասացի, որ չգիտեմ եւ ինձ էլ չի հետաքրքրում, թէ Դուք ում հետ ինչ էք համաձայնեցրել, բայց ես այս պահին պաշտօնապէս յայտնում եմ, որ հէնց հիմա պլենումի դահլիճում պրես-կոնֆերանս կը հրաւիրեմ արտասահմանեան լրագրողների համար եւ հանդէս կը գամ յատուկ յայտարարութեամբ»: *Եւ ինչպէս պրն. Սարգսեանն է յիշում, իր այդ յայտարարութիւնից յետոյ ՊԱԿի նախագահը նայում է իրեն որպէս «խելագարի» եւ հարցնում. «Հասկանո՞ւմ էք, թէ ում հետ էք խօսում»: Բայց զգալով Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարի անդրդուելիութիւնը՝ Կրիւչկովը գնում է խորհրդակցելու Գորբաչովի հետ: Որոշ ժամանակ անց, կա-*

պուհլով ***Վոլոդիա Աղաջանեանի*** *հետ, պրն. Սարգսեանը տեղեկանում է, որ Շահումեանում գիւղերի դեպորտացիան դադարեցուել է:* «Ահա այսպէս է կասեցուել Շահումեանի յանձնումը 91-ին, ինչը 92-ին, ԽՍՀՄի անկումից յետոյ, նոյն սցենարով արեցին մեր իշխանութիւնները»:

«ԻՆՁ ՉԵՆ ՀՐԱՒԻՐԵԼ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՈՐՊԷՍԶԻ ԿԱՐՈՂԱՆԱՆ ԿՈՉԿԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Վերադառնալով՝ ***Արամ Գ. Սարգսեանը*** *հանդիպում է արդէն Երեւան վերադարձած Շահումեանի շրջկոմի առաջին քարտուղար Վոլոդիա Աղաջանեանին:*

«Ես Աղաջանեանին մանրամասն տեղեկացրի, թէ ինչ է կատարուում Շահումեանի շուրջ, որպէսզի նա, որպէս ԳՒ պատգամաւոր, քանի որ ես պատգամաւոր չէի, Գերագոյն խորհրդում ներկայացնի իրականութիւնը: Բայց, ցաւօք, Վոլոդիան չատ կցկտուր ձեւով հանդէս եկաւ ԳՒ-ում եւ նոյնիսկ իր այդ աղօտ ելոյթներում չեշտած ձեռքբերումներ վերագրեց իրեն: Եւ այսպէս էլ ոչ մի գնահատական չտուեց իշխանութիւնների գործողութիւններին»: Իսկ Արամ Գ. Սարգսեանն անձամբ այդ հարցով հանդէս չի գալիս, որովհետեւ «այդ ժամանակ եղաւ նաեւ ԳԿՉՊն, սկսուեց Խորհրդային Միութեան փլուզումը եւ իրադարձութիւնների այդ փոնին Շահումեանի հարցը մղուեց 2-րդ պլան: Եւ եթէ ես այդ պահին հանդէս գայի, առնուազն կը դիտուէի որպէս ինքնակոչ»:

Կարելի է կասկածել Արամ Գ. Սարգսեանի ասածների, գնահատումների վրայ եւ այդ ամէնը համարել ինքնաստեղծ յօրինուածք, քանզի նա իր փաստարկումների մէջ չի մտցնում այլոց վկայակոչումներ եւ ամէն ինչ ինքն է պատմում՝ յուսալով, որ իրեն կը հաւատանք: Թէ իրականում ինչպիսի մասնակցութիւն է ունեցել յարգարժան այրը Մոսկուայում Շահումեանի հայ գիւղերի հայաթափման կասեցման ուղղութեամբ՝ դա իր խղճի գործն է եւ այս հարցում մենք որեւէ դիտարկման անհրաժեշտութիւն չենք զգում: Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանութիւնների վերաբերմունքի գնա-

համաձայն առ Շահումեանի հարցը, դրանք միանգամայն պատճառաբանուած են եւ արժանահաւատ, քանզի այդ իշխանութիւններն իրենց գործնական վերաբերմունքով ճակատագրական իրադրութեան մէջ յայտնուած Շահումեանի նկատմամբ նմանուեցին այն անտարբեր դիտորդին, որը հանգիստ նայում է կրակի բոցերի մէջ այրուող անօգնական երեխային:

*Իսկ 1992 թ. ամռանը, Շահումեանի անկումից յետոյ, անկման հանգամանքն ուսումնասիրելու համար Գիւմում ստեղծուած յանձնաժողովի աշխատանքներին պրն. Սարգսեանին չեն հրաւիրել, որովհետեւ «**իշխանութիւնները չատ լաւ գիտէին, որ ես տեղեակ եմ, թէ ինչ է կատարուել իրականում, եւ իմ ներկայութեամբ նրանք չեն կարող կեղծել պատմութիւնը: Իսկ նրանց նպատակը իրականութիւնը կոծկելն էր**»:*

*Իսկ ժամանակին Գիւմում որոշ պատգամաւորների կողմից, թէ իշխանական քարոզամեքենայով Շահումեանի յանձնման համար **Շահէն Մեղրեանին** հասցէագրուած մեղադրանքները համապատասխանում էին իրականութեանը, թէ իրականութիւնը կոծկելու միտում ունէին, Արամ Գասպարիչի կարծիքով՝* «Շահէն Մեղրեանը երբեք Շահումեանը չի յանձնել եւ չէր էլ կարող յանձնել: Որովհետեւ, կրկնում եմ, **Շահումեանի յանձնումը եղել է քաղաքական որոշումով: Եւ կրկին ես դա յայտարարում եմ ամենայն պատասխանատուութեամբ**: Շահէն Մեղրեանը Շահումեանը պաշտպանեց այնքան, որքան կարող էր: Եւ Շահումեանի յանձնումը բարդել մէկ մարդու վրայ, դա ոչ թէ անարդարութիւն է, այլ նաեւ յանցագործութիւն:

Ի դէպ, Մեղրեանից յետոյ երկրորդ թիրախը ես եմ եղել, երբ ՀՀՇի պարագլուխները փորձեցին վարկաբեկել ինձ»:

Իսկ միգուցէ Շահէն Մեղրեանին դարձնելով քաւութեան նոխազ, իշխանութեան նպատակը եղել է մեղադրել ընդհանրապէս «Դաշնակցութեանը», որովհետեւ Մեղրեանը այդ կուսակցութեան անդամ էր:

«Հնարաւոր է, որովհետեւ յետագայ իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ Դաշնակցութիւնն իրօք ՀՀՇի համար թիրախ

էր: Բայց Դաշնակցութիւնը թող ինքն այդ հարցին պատասխանի: Եւ ոչ միայն այդ հարցին: Ինչու նրանք քաղաքական գնահատական չտուին այն ամէնին, ինչը կատարուեց իրենց ղէմ՝ դատեր, ձերբակալութիւններ, հալածանքներ եւ ի վերջոյ, կուսակցութեան փակումը: Ինչու 1998 թ. երբ ՀԴԿն, ՍԻՄը, ԳԻԱՐՔՄն ներկայացրին նախկին ռեժիմի գնահատականը, Դաշնակցութիւնը չստորագրեց: Ինչո՞ւ են լռում: Որովհետեւ նոյնը այսօր կատարւում է ընդդիմութեան նկատմամբ: Ճիշտ է, մեզ ասում են, թէ մեր գործունէութիւնը ոչ ոք չի արգելել, բայց չեն արգելում, որովհետեւ այսօր ժամանակներն են փոխուել: Հայաստանը ԵԽ-ի անդամ է, դրա համար էլ չեն կարող արգելել»:

Շահէն Տօնոյեան

(«Հետաքննութիւն», թիւ 11, 12, 13, 14, Մայիս, 2004)

«ԱՐԻՒՆ ԵՒ ՄՈԽԻՐ»

*Շահէն Մեղրեանին մեղադրելու հանգամանքին անդրադարձել է նաեւ գրագէտ **Ռուբէն Յովսէփեանն** իր «Արիւն եւ մոխիր» էսսէի մէջ:*

«Վհուկային չգիտեմ որ գրասենեակից թունաւոր ու նենգ չչուկները էին արտահոսում փողոցներ, տներ, պուրակներ...

Ասեկոսների այդ տարափը բամբասասէր մեր իրականութեան մէջ աննախադէպ էր, ամբոխային հոգեբանութեանը քաջատեղեակ վհուկային այդ գրասենեակը կանխամտածուած կամ կանխորոշուած իրադարձութիւններից ամիսներ առաջ հետեւողականօրէն կերտում էր ապագայ մեղաւորի կերպարը (ազգային հերոսի կերպարը նշաւակելու տեխնոլոգիան էր մշակում եւ գրեթէ անսխալականօրէն կիրառեց նախապէս իմանալով ներգործութեան չափորոշիչները):

Եւ երբ կատարուեց կատարուելիքը, երբ դատարկուեց Շահումեանը, նախապատրաստուած ամբոխի ցուցամատը ուղղուեց Շահէն Մեղրեանի վրայ: Նրա միջոցով նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վրայ: Վկաներ յայտնուեցին հեռուստաէկրաններին, խղճուկ դասը մի կարգին չսերտած վկաներ, որոնց թոյլ ձայնի տակ աւելի լսելի էր վհուկային

դրասեննեակի յուշարարի ձայնը»:

Ռուբէն Յովսէփեանի այսպիսի խորապատկեր եւ որոշ իմաստով՝ դաժան նկարագրութիւնը պայմանաւորուած էր այն օրերին այդ ստոր մտայնութեան վտանգաւորութեամբ՝ պառակտելու մեր ազգն ու ժողովուրդը: Պատահական չէ, որ Շահէնն Մեղրեանի այն ընկերները, ովքեր այդ օրերին Շահէնի հետ էին եղել եւ իրազէկ էին անցքերին՝ իրենց յանդիմանական ձայնը բարձրացրին ի պաշտպանութիւն Շահէնի, այսինքն՝ ճշմարիտ եւ անաչառ դնահատականի:

«Մամուլի մէկ ասուլիսից յետոյ Շահէնն այլեւս չան տեղ չդրեց ասեկոսէները եւ այլեւս չփորձեց հակազդել այդ կարծիքներին, այսինքն՝ արդարանալու փորձ չարեց, քանզի մեղք չունէր եւ վերադառնալով Արցախ, չարունակեց իր պայքարը այս անգամ պարտիզանական եղանակով: Եթէ նա տուրք տար վիրաւորանքին՝ կը թուլացնէր պայքարի ոգին:

Ափսո՜ս, հազար ափսոս, որ կեանքով լեցուն, առողջ մտածողութեամբ զտարիւն այդ հայ մարդուն Հայաստանում քչերն են ճանաչում: Նա այս երկրին, այս հանրապետութեանը, այս ազգին օդի պէս պէտք էր ողջ եւ առողջ: Մարդիկ պիտի տեսնէին, թէ ինչպէս է նա սիրում իր զաւակներին. մարդիկ պիտի տեսնէին նրա հոգատարութիւնն ընկերների, զինակիցների նկատմամբ, լսէին նրա համով-հոտով պատմութիւնները նոյնիսկ ամենադաժան մարտերի մասին: Մարդիկ պիտի զգային նրա իսկական ամբողջական հայրենասիրութիւնը, որ թէ գործնական էր եւ թէ բանաստեղծական միաժամանակ» («Երկիր» 20 ապրիլի 1993):

ՅԱԿՈԲ ՋԱԴՐԵԱՆ. «ԹՇՆԱՄՈՒՍ ԹՇՆԱՄԻՆ ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ Է» (ՅԱՊԱՒՈՒԱԾ)

Թուրքիան ողջունում է ***Տէր-Պետրոսեանի*** *հակաղաչնակցական դիրքորոշումը*

«Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հեռուստաելոյթը լայն արձագանք գտաւ ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Ընդդիմութեան ներկայացուցիչների կարծի-

քով՝ այն «Ազգային դաշինք»ի պահանջով հրաւիրուած ՀՀ Գերագոյն խորհրդի արտահերթ նստաշրջանը բուն նպատակից չեղելու, Շահումեանի, ապա նաեւ Մարտակերտի անկումը երկրորդ պլան մղելու, ՀՅԴ համագումարը ձախողելու փորձ էր: Միեւնոյն ժամանակ **կարծիք արտայայտուեց այն մասին, թէ Հայաստանի ներկայիս ծանր կացութիւնը բացատրելով Արցախի խնդրի գոյութեան փաստով, նախագահը սեպ խրեց նոյն ժողովրդի երկու հատուածների միջեւ:** Տեղին է նաեւ նշել, որ նա իր ելոյթում ազերի հրոսակների դէմ հերոսաբար մարտնչող **ազատամարտիկներին դաշնակցականների եւ ոչ-դաշնակցականների բաժանելու անզգուշութիւն ցուցաբերեց, դրանով էլ թուլացրեց ինքնապաշտպանութիւնը Մարտակերտի անկման նախօրեակին:** Իսկ **արտասահմանից ղեկավարուելու վերաբերեալ դաշնակցականներին ուղղուած մեղադրանքն ինքնին Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ անդունդն է՛լ աւելի խորացնելու փորձ էր, քանի որ Աթէնքը հայերի համար նոյնպէս Սփիւռք է:**

«Հիւրիէթ»ի յուլիսի 10-ի համարում լոյս տեսած յօդուածով **Քիաճորան Գիւրուզը** նախ մտահոգութիւն է յայտնում Հայաստանում դաշնակցականների ակտիւացման առընչութեամբ, ապա մեզ առաջարկում է մոռացութեան տալ Հայ Դատն ու Պահանջատիրութիւնը, չէզոքացնել Սփիւռքի ազդեցութիւնը Հայաստանում, հրաժարուել Արցախեան պայքարից, քանի որ դա անյոյս է: Միաժամանակ Գիւրուզը գտնում է, որ Հայաստանի ներկայիս ծանր կացութեան համար մեղաւոր են Հայաստանի եւ Արցախի խորհրդարաններում տեղ զբաղեցնող դաշնակցականները: Նա յօդուածի վերջում հաւանութիւն տալով նախագահ **Լեւոն Տէր-Պետրոսեանի** քաղաքականութեանը, ՀՅԴի դէմ պայքարում անկեղծ սրտով յաջողութիւն է ցանկանում նրան: (Փաստօրէն թուրքերի եւ ՀՀՇի քաղաքականութիւնը համահունչ են, նոյնն են - Ա.Պ.):

Սա պատահական չէ: ՀՀՇի իշխանութիւնների երկրորդ տարում Գետաշէնը կրկնւում է երկրորդ անգամ եւ անհամեմատ մեծ ծաւալներով: **Եթէ Գետաշէնը ծածկադմփոց արուեց**

իշխանութիւնների կողմից, ապա Շահումեանը ճարպկօրէն մոռացութեան տրուեց: Սակայն Գետաշէնից յետոյ գոնէ իւրայատուկ քննարկում տեղի չէր ունեցել: Շահումեանի անկումից յետոյ իշխանութեան ներկայացուցիչները, ելոյթ ունենալով արտահերթ նստաշրջանում, աճապարեցին յայտարարել. ***«Եկէք ընդունենք, որ թշնամին ուժեղ է եւ մենք պարտուեցինք»***: Մինչդեռ, անհրաժեշտ էր պարզաբանել՝ թշնամին ազերի հրոսակնե՞րն էին, թէ՞ մեր դարաւոր թշնամիներից քիչ տարբերուող ռուսները:

Թէեւ ընդդիմութեան ճնշման տակ բարձրացուեց ԼՂՀՆ ճանաչելու հարցը, սակայն իշխանութիւնները տապալեցին նաեւ դա: Ճանաչումը Ղարաբաղեան հարցի կարգաւորման գործում գուցէ չօշափելի արդիւնք չտար, բայց գոնէ դրանով Հայաստանը կը ճշտէր իր անորոշ դիրքորոշումը: Եթէ այսօր միջազգային հանրութեան նժարը թեքուել է Ադրբեջանի կողմը, ապա դա մեծապէս պայմանաւորուած է իշխանութիւնների կողմից որդեգրուած քաղաքականութեամբ, իսկ դրանց անորոշ դիրքորոշումը նպաստել է Հայաստանի մեկուսացմանը, դրանով ջուր լցնելով Թուրքիայի ջրաղացին:

Նստաշրջանը չճանաչեց ԼՂՀի անկախութիւնը, աւելին, ***նախագահն իր ելոյթներով նստաշրջանի աշխատանքները վերածեց իշխանութիւններ-ընդդիմութիւն հակամարտութեան:*** Դրան յաջորդեց ԳԽ նախագահ ***Բաբկէն Արարքցեանի*** վերջնագրի բնոյթի յայտարարութիւնը: Նա ցինիկ անկեղծութեամբ յայտարարեց, թէ ԼՂՀի անկախութեան ճանաչումը ՀՀ Գերագոյն խորհրդի լիազօրութիւնների մէջ չի մտնում: Պարոն Արարքցեանին հետեւեց ***Էդուարդ Եգորեանը***, ասելով. «Ազգային դաշինք»ը Արցախում անվստահութիւն է սերմանում Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ, որպէսզի Արցախի բնակչութիւնն իրեն անպաշտպան զգալով՝ գայ Հայաստան, եւ ընդդիմութիւնը գրաւի իշխանութիւնն՝ արդէն առանց Արցախի հիմնահարցի»: (Լաւ տրամաբանութիւն է չէ՞, սելը չի ճռռում, սելուորն է ճռռում - Ա.Պ.):

Ցաւօք, այս ամէնը տեղի էր ունենում Շահումեանի անկման

օրերին»:

(«Դրօշակ», թիւ 7, 29 յուլիս 1992)

ԱՐԿԱԴԻ ՏԷՐ-ԹԱԴԷՈՍԵԱՆԸ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հեղինակային հարցազրոյցի ամփոփագիրը)

*«**Շահէն Մեղրեանը** Շահումեանի հրամանատարն էր, գործում էր գրեթէ ինքնուրոյն, մենք իրար հետ կապի մէջ էինք, համագործակցում էինք: Նա իր կամ **Զալեանի** ստորագրութեամբ ինձ էր ներկայացնում այն, ինչ որ ունէր, ինչ միջոցներ կային իր տրամադրութեան տակ, եւ որոշւում էր այն, թէ ինչպէս պիտի կառուցենք մեր համագործակցութիւնը:*

*Նա ինքն իրեն ապահովում էր պաշտպանութեան միջոցներով՝ զինամթերք եւ այլն, եւ դիմակայում էր մարդուժով եւ զինտեխնիկայով գերազանցող թշնամուն: Յատկապէս պատերազմի առաջին տարիներին ադրբեջանցիներին օգնում էին խորհրդային իշխանութիւնները, հաւանաբար ամբողջատիրութիւնը պահելու յոյսով, իսկ Ղարաբաղը եւ հայերին ներկայացնում էին իբրեւ ապստամբ-էքստրեմիստների: Այս իրավիճակից պիտի չզարմանալ, որ խորհրդային եւ ապա ռուսական զօրքը ադրբեջանցիներին մեծ աջակցութիւն էին ցուցաբերում, եւ փաստօրէն նրանց տրամադրութեան տակ էր նաեւ խորհրդային բանակի բարձր սպայակազմը, որն օգնում էր ադրբեջանցիներին պատերազմի վարման խնդիրների, այնպէս էլ մարտական գործողութիւնների եղանակների մշակման հարցերում: Ես չեմ ուզում խօսել նաեւ այն մասին, որ թուրքական կողմից ամէն կարգի օգնութիւն լինում էր: **Սա է հիմնական պատճառը 92-ի ամառային մեծ ողբերգութեան, ուժերի անհամեմատելի անհաւասարութիւնը**: Ի հարկէ, նաեւ **մեր արտաքին հետախուզութեան, ռազմական հետախուզութեան եւ քաղաքական հետախուզութեան փաստօրէն անգործունեայ կրաւորականութեան պատճառով մեզ յայտնի չանելն էր այդ խոշոր գործողութեան նախապատրաստման ընթացքը եւ իրականացման ժամանակը, որպէսզի կարելի լինէր յամենայն*

դէպս այն դիմակայելու կամ խանգարելու միջոցներ գտնել: Սակայն թէ՛ Հայաստանում, թէ՛ Ղարաբաղում ղեկավարութիւնը զբաղուած էր իշխանութեան համար պայքարով»:

«Ես կը խօսեմ է՛լ աւելի լուրջ պատճառի մասին: Դա գործող իշխանական կուսակցութեան՝ ՀՀՇի եւ Դաշնակցութեան միջեւ առկայ խորը հակասութիւնն էր, որը վեր էր ածուել ներքին թշնամութեան եւ փաստօրէն Շահումեանի շրջանը մնացել էր իշխանական ուշադրութիւնից դուրս:

Եթէ մենք կարողանայինք պահել Շահումեանն, անկասկած կը պահէինք եւ Մարտակերտը:

*Այսուհանդերձ պիտի ընդունենք, որ **այդ ժամանակ ադրբեջանցիները ռազմական ուժի կազմակերպման առումով մեզնից առաջ էին անցել**: Յամենայն դէպս, Մարտակերտի շրջանում նրանք լաւ հանդերձաւորուած, մարզուած ու կրթուած էին եւ այն չէին, ինչ հակամարտութեան սկզբնական շրջանում: Պիտի չմոռանանք նաեւ մեր զօրքի վիճակը, որը դեռեւս ջոկատային բնոյթի էր եւ փաստօրէն միասնական կուռ բանակ չէր եւ համապատասխան մարտավարութեան եղանակները դեռեւս չէին կիրառուել ոչ մի տեղ:*

Կարծում եմ, որ Շուշիի փառաւոր յաղթանակի էֆորիայի (Հոգեցնծութիւն - Ա.Պ.) տրամադրութիւնն էր չարունակւում, որը պատերազմի ժամանակ խիստ բացասական գործօն է:

Շահումեանը կորցրինք, սակայն այնտեղ իրավիճակի համեմատ շատ զոհեր չեղան, որովհետեւ ռուսները մեզ զգուշացնում էին, որ պիտի հեռանաք եւ նշանառու կրակ չէին տեղում, ինչպէս լինում է սովորական մարտական գործողութեան ժամանակ:

***Շահէն Մեղրեանն** ունէր լուրջ սպայակազմ. **Զալեանը, Ֆելիքս Գզողեանը, Վոլոդիա Կարապետեանը, այնտեղ լինում էր Դալիբալթայեանը** եւ ուրիշներ: Նրանց հետ շատ լաւ համագործակցում էր **Լէոնիդ Ազգալդեանը,** նրանց հետ էր նաեւ **Դնեպրիկ Բաղդասարեանը,** որոնք բարձր կարգի զինուորականներ էին, եւ այս իմաստով Շահէն Մեղրեանը թոյլ չէր, թէեւ անճամբ ռազմական կրթութիւն չի ունեցել եւ կադրային սպայ*

չի եղել: Ղարաբաղում մեծ զօրավարներից քչերն են այդպիսին եղել: Հանդերձանք եւ ռազմամթերք Հայաստանից վատ էին մատակարարում, դա կար, թէեւ յետոյ ***Վազգէն Սարգսեանն*** *արդէն վերաբերմունք ցուցաբերում էր:*

Անձամբ բարձր եմ գնահատում ***Շահէն Մեղրեանին*** *իբրեւ մարդկային անձնաւորութիւն, իբրեւ արժանաւոր մարդ: Ինքը եղել է իբրեւ նախագահի թեկնածու, սակայն ես զինուորական եմ եւ քաղաքականութեամբ չատ չեմ հետաքրքրուել եւ չեմ կարող ստոյգ որեւէ բան ասել»:*

Վլադիմիր Յարութիւնեան. «Յիշում եմ, այդ օրերին հանդիպեցի Շահէնին եւ կարծես ակամայ փորձում էի նրան հանգստացնել: Պարզուեց, որ դրա կարիքը նա բոլորովին չունի: *«Թքած,- քմծիծաղեց նա,- ահա համալրում եմ ջոկատը: Եթէ կարող ես՝ տաք հագուստ ճարիր. անտառում ցուրտ է»:* Մեղրեաններին վերջին անգամ տեսել եմ Երեւանում Շահէնի յուղարկաւորման ժամանակ: Զինաւոր դայլն, ինչպէս որ պատշաճում էր ազգին հայդուկապետ տուած հօրը, իրեն հանգիստ էր պահում: Երբ վերադառնում էինք յուղարկաւորութիւնից, նա ասաց. *«Ես յոյս ունեմ, որ ինձ կը յուղարկաւորեն Գիւլիստանում»:*

Որոշ հետաքրքրութիւն կարող է ներկայացնել նաեւ ***Քերոբ Սարգսեանի*** *այն յօդուածը, որտեղ հեղինակը փորձում է ապացուցել, որ Շահումեանի պաշտպանութեանը Յատուկ գունդը չի մասնակցել, եւ նա այստեղ տեսնում է քօղարկուած դաւադրութիւն: Շահէն Մեղրեանը Յատուկ գնդից բողոք չի յայտնում եւ գտնում է, որ բոլոր ջոկատներն ու զօրքը թշնամու դէմ կռուել են ըստ արժանւոյն:*

Վազգէն Մանուկեան

Մենք հարցումներ ենք ուղղել նաեւ քաղաքական, պետական գործիչ ***Վազգէն Մանուկեանին****, որի հիմնական մասը զետեղում ենք ստորեւ:*

Հ.- Կարծիք կայ, թէ իբր Շահումեանի յանձնումը պայմա-

նաւորուած էր սահմանների օպտիմալացմամբ, այն հաշուով, որ սահմաններ պահելը հնարաւոր լինի:

Պ.- Նկատի ունէք 92 թուականի իրադարձութիւննե՞րը: Ճիշտ է, էն ժամանակ վարչապետութիւնից դուրս էի եկել, դեռ պաշտպանութեան նախարար չէի, ընդդիմութեան մէջ էի եւ շատ ինֆորմացիա չունեմ:

Այդ ժամանակ շատ բամբասանքներ տարածուեցին, բայց տպաւորութիւնն այն էր (ես խօսում եմ իմ տպաւորութեան մասին, առանց յաւակնելու, որ դա ճիշտ է), որ ադրբեջանական բանակը որոշ չափով ռուս զինուորների, սպաների եւ տեխնիկայի օգնութեամբ կարողացաւ գրաւել Շահումեանը: Մեր իշխանութիւնների համար դա բաւականին անսպասելի էր: Իմ տպաւորութիւնն այդ է: Ինչ է եղել իրականութեան մէջ՝ ես դժուարանում եմ ասել:

*Շահումեանն, ի հարկէ, շատ կարեւոր տեղ է գրաւում մեր ազգային հոգեբանական դաշտում, մեր ազգային քաղաքականութեան մէջ, եւ երբ որ մենք խօսում ենք Ղարաբաղեան շարժման մասին, Ղարաբաղի մասին, մենք Շահումեանը ենթադրել ենք դրա բաղկացուցիչ մասը: Շահումեանի պրոբլեմ կար, յետագայում էլ **այդ պրոբլեմը կար, որ Շահումեանը ետ վերադարձնելն աւելի նպաստաւոր է, քան ամէն անգամ մի կերպ պահելը, որովհետեւ դա շատ է դժուարացնում ընդհանուր գործը**: Այդ պրոբլեմը կար:*

*Երբ ես արդէն պաշտպանութեան նախարար էի, այնտեղ գործում էր պարտիզանական ջոկատը, եւ շատ արդիւնազօր էր նրա գործունէութիւնը, պայքարը եւ այդ առումով շատ մեծ դեր էին կատարում **Մեղրեան Շահէնը, Սերգէյը**: Շահէնի դերն, ի յարկէ, անհամեմատ աւելի էր եւ երբ նա զոհուեց, դա մեծ հարուած էր բոլորիս համար: Այդ պարտիզանական ջոկատն էլ կապուած էր... չնայեած դա ասելու բան չէ, քանի որ Հայաստանի հետ էր կապուած եւ չարժէ, որ այդպիսի բանը հրապարակենք:*

Հ.- Նաեւ կարծիք կայ, որ Շահումեանի յանձնումը մեծ քաղաքականութեան հետ էր կապուած, որն իրականացնում էին

արցախեան պատերազմում իրենց չահագրգռուածութիւնն ունեցող ոչ հայկական ուժերը, որոնք իրենց չահերին համապատասխան ծրագրեր էին թելադրում եւ իրագործում տեղում եւ ազգային գունաւորում ունեցող քաղաքական գործիչների եւ մարդկանց խմբերի միջոցով:

Ասենք թէ այնպիսի հակասութեան գոյութիւնը, որ առկայ էր ՀՀՇ-Դաշնակցութեան մէջ, ակնյայտաբար վատ դեր էր խաղում երկրի պաշտպանունակութեան առումով: Չի՞ կարելի ենթադրել, որ դաշնակցական ղեկավարութիւն ունեցող շրջանին պարզապէս օգնութիւն ցոյց չէին տալիս: Եւ ինչ-որ իմաստով Շահումեանը ոչ թէ գրաւեցին, այլ յանձնեցին, յանձնեցին ղեկավար այն ուժերը, որոնք չէին ձգտում պաշտպանել այն:

Պ.- Անկեղծ ասած՝ ես անձամբ այդպիսի բանների չեմ հաւատում, քանզի մենք հայերս ամէն ինչի յետեւում տեսնում ենք մի խորամանկ դաւադրութիւն:

Հ.- Երբ ամէն անյաջողութիւն պայմանաւորւում է դրսի ուժերի գործօնով, նման անարի, անդուր մտածելակերպը հոգին թունաւորում է, ոգեթափ է անում, եւ այն կարծես պատասխանատուութիւնն իր վրայ վերցնելու անկարողութիւն է, չենք ուզում ասել՝ ստրկամտութիւն, ներքին գործօնները, գործը եւ երկրի զարգացումն իրականացնող ուժերի դերի ահաւոր թերագնահատում: Միւս կողմից, ետահայեաց ուսումնասիրութիւնը պիտի հաշուի առնի բոլոր գործօնները, այդ թւում եւ արտաքինը, մանաւանդ այնպիսի աշխարհագրական դիրք ունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, որը կարծես թէ ազգամիջեան չահերի բախման յաւիտենական թատերաբեմ լինի. ո՛չ Իսլանդիա ենք, ո՛չ Ճապոնիա՝ մեկուսացուած դրսի աշխարհից եւ համեմատաբար ապահով: Մենք արեւելքն ու արեւմուտքը, հիւսիսն ու հարաւը կապում ենք իրար: Յամենայն դէպս, արտաքին գործօնը գերագնահատելով հնարաւոր չէ հզօր երկիր կառուցել: Սակայն այս պարագային անյաջողութիւն չէ սա, այլ մի ամբողջ շրջանի կորուստ է, մի գաւառի՝ իր վրայ ապրող ժողովրդի եւ նրա ստեղծած մշակոյթի ու հոգեբանութեան հետ միասին: Եւ այն թողել են ոսոխի բերա-

նում, չեն օգնել, մենակ են թողել, ինչպէս մարդուն կարող են թողնել գազազած չան բերանում:

Պ.– Իրականում կատարուող իրադարձութիւնները չատ աւելի պարզ են եւ տեսանելի:

Ես չեմ հակուած այդպէս մտածելու, որովհետեւ եթէ մեծ տէրութիւնները կարողանային խառնուել Շահումեանի հարցում, նրանք խառնուած կը լինէին ընդհանրապէս ամբողջ Ղարաբաղեան պատերազմին եւ թոյլ չէին տայ որեւիցէ մի բան անել: Եթէ մենք մեծ պետութիւնների հետ հաշուի նստէինք այդ հարցերում, մենք որեւէ մի բանի չէինք հասնի: Ես դրա համար կարծում եմ, անկախ նրանից՝ ես ընդդիմադիր եմ եղել, յետոյ կառավարութեան ներսում եմ եղել որպէս պաշտպանութեան նախարար, եւ ընդդիմադիր, եւ իշխանութեան մէջ եղած ժամանակ ես չեմ տեսել, որ որեւէ մէկը գաղտնի խաղերի միջոցով ինչ-որ մի բան դաւաճանի: Շատ բաներ եղել են յիմարութեան պատճառով, սխալների պատճառով, անփութութեան պատճառով, բայց դաւաճանութեան մասին պիտի խօսք չլինի, ինչ-որ գաղտնի համաձայնութիւնների հոտ ես երբեւէ չեմ առել այդ ամէն ինչի մէջ:

– Դուք փաստօրէն կարծում էք…

– Ես կարծում եմ, որ բնական ձեւով եղաւ: Ուղղակի ուրիշ բան, հիմնական ուժը գտնուում էր ղարաբաղցիների ձեռքում, Ղարաբաղեան պատերազմի ժամանակ, եթէ խօսքը գնում է զէնքի, զինամթերքի մասին, դրանք հիմնականում ղարաբաղցիների ձեռքին էր, եւ այն ուժգնութեամբ, որ նրանք պաշտպանում էին Ղարաբաղի հողերը, այդ նոյն ուժգնութիւնը ես չեմ տեսել Շահումեանի հողերի ազատագրութեան համար: Բայց դրա մէջ կայ շատ աւելի մարդկային հոգեբանութիւն եւ գործօն, քան թէ խաղեր: Զգտումը՝ պաշտպանել Շահումեանը եւ ձգտումը՝ պաշտպանել Ղարաբաղը հաւասարաչափ չեն եղել: Եւ այստեղ շատ մեծ ու կարեւոր դեր էր կատարում Մեղրեան Շահէնը, որ եւ Ղարաբաղում, եւ Հայաստանում մեծ ազդեցութիւն ունէր, եւ դա հնարաւորութիւն էր տալիս իրեն պայքարը արդիւնաւէտ կերպով տանել: Երբ

ինքը գոհուեց, առաջացան պրոբլեմներ:

Մենք կորցրեցինք բանիբուն հայկական տարածք, մեր հայրենիքի կարեւոր, անկապտելի մասը եւ ներկայումս բոլոր միջազգային հանդիպումներում, տեղի են ունենում բանակցային պրոցեսներ, պէտք է անպայման Շահումեանի հարցը բարձրացնել:

– Նաեւ Արծուաշէնը....

– *Արծուաշէնը մի քիչ ուրիշ է: Քանի որ այն կղզեակ էր Ադրբեջանին պատկանող տարածքի մէջ, այն պահելու համար պէտք է գրաւուէր նաեւ Արծուաշէնը շրջապատող բարձունքները, գրաւուէր անջրպետող գօտին՝ պաշտպանութիւնը հնարաւոր դարձնելու համար: Այդ ժամանակ ուրիշ խնդիրներ էին առաջանում: Արծուաշէնը մեր պապենական հողն էր, բայց այդպիսի կղզեակները խորհրդային ժամանակների խորամանկութիւններն էին, սադրանքներն էին, Ադրբեջանն էլ մեր տարածքում կղզիներ ունէր, վերացան բոլոր կղզիները, որովհետեւ դրանց պահելը հնարաւոր չէր: Արծուաշէնը պահելու համար... Ես այն ժամանակ ընդդիմութեան մէջ լինելով քննադատում էի իշխանութեանը, բայց ոչ թէ Արծուաշէնը յանձնելու համար, այլ դա չկանխագուշակելու եւ ժողովրդին կրակի տակ գցելու համար: Պէտք էր ժողովրդին էվակուացնել աւելի հանդարտ ձեւով: Արծուաշէնը կարելի էր հանգիստ նորից գրաւել, բայց Արծուաշէնը պահելու համար, այ է՛ն ժամանակ, որ ես պաշտպանութեան նախարար էի, շտաբում քննարկում էինք՝ եթէ մենք վերցնենք Արծուաշէնը, կարո՞ղ էինք պահել, թէ՞ ոչ: Կրկնում եմ, Արծուաշէնը պահելու համար պէտք է բաւականին առաջ գնայինք, շրջակայ լեռնաստանը վերցնէինք, որ հնարաւոր լինէր Արծուաշէնը պաշտպանել: Այդ ժամանակ էլ ռեսուրսներն այնպիսին էին, որ ուրիշ հարցեր կային, եւ դա է՛ն հարցը չէր, որ կարողանայինք դնել:*

– Գործնական չփումներ ունեցե՞լ էք շահումեանցիների եւ յատկապէս Շահէնի հետ:

– *Շա՛տ: Երբ ես էդ արանքում վարչապետի պաշտօնից հրաժարուել էի եւ դեռ պաշտպանութեան նախարարը չէի,*

Շահումեանում հանդիպել եմ Շահէնի հետ, նրանց տանն եմ մնացել, տեսել եմ ռազմակայանը, ֆիդայի տղաներին եմ հանդիպել: Մենք շատ լաւ եւ ջերմ յարաբերութիւններ ենք պահել, եւ ես միշտ յարգանք եմ ունեցել նրա հանդէպ: Ինձ համար ոնց որ պատմութեան դրքից դուրս եկած կերպար լինէր, որովհետեւ, վատ իմաստով չեմ ասում, ինքն ասես միջնադարի մելիք-ֆէոդալ լինէր: Եւ ինքն իրականում ֆէոդալութիւն էր անում: Իր համար ժողովրդավարութիւն, մարդու իրաւունքներ եւ նման բաներ Արեւմուտքի արժէքաբանութիւնից եւ գաղափարներից որեւէ նշանակութիւն չունէր: Ինքը ազգային մարդ էր, ազնիւ եւ կարեւոր մարդ էր, եւ իր համար բոլոր շահումեանցիները՝ ոնց որ մելիքի համար իր համազգիները, իր մելիքութեան անդամները լինէին: Ինչպէս թագաւորի համար իր ենթակաները, որոնց նա շատ էր սիրում:

(Շահէնի մօտ առկայ էր նահապետականութիւնը, սակայն նա նոր երեւոյթներն ընկալում էր շատ արագ եւ շատ արագ էլ կապում, ներդաշնակում աւանդականի հետ: Շահէնին որեւէ նոր ճչացող բանով զարմացնել չէիր կարող, որովհետեւ երեւոյթների հետեւում նա տեսնում էր դրանց զարգացման աստիճանն ու ճակատագիրը, լինելութեան կերպը - Ա.Պ.):

Ինձ համար այդ հոգեբանութիւնը մի քիչ հասկանալի չէր, որովհետեւ իմ միջավայրը, դաստիարակութիւնը եւ կրթութիւնն այլ են եղել: Ինձ համար Շահէնը մի քիչ նոն-սէնս էր, սակայն ես հասկանում էի, որ այդ ժամանակ Շահումեանում հէնց այդպիսի մարդ էր պէտք, որովհետեւ մէկ ուրիշը չէր կարող անել այն, ինչ անում էր Շահէնը: Աչխարհը փոխուել էր, սակայն այդ շրջանը քանի որ անկախ է եղել թէ՛ Ղարաբաղից եւ փաստօրէն հոգով անկախ է եղել թէ՛ Ադրբեջանից, մնացել է մի քիչ պահպանողական եւ հնամեայ նահապետականութեամբ եւ Շահէնն էլ մի այդպիսի նահապետառաջնորդ էր. է՛ւ վարչական ղեկավար էր, է՛ւ ռազմական առաջնորդ, է՛ւ դատաւոր, այսինքն ամբողջ իշխանութիւնն իրենն էր, եւ թշնամական շրջապատման մէջ գտնուող էթնիկ միաւորը շրջանն այլ կերպ չէր էլ կարող ղեկավարուել: Այդ

տեսակէտից Շահէնը համապատասխանում էր այն ժամանակուայ իրավիճակին:

Շահէնը նուիրեալ էր մինչեւ վերջ»:

Այսպիսով, Շահումեանի անկման պատճառները կարելի տեսնել նախ Հայաստանում առկայ քաղաքական ուժերի անհաշտելի հակասութիւններով.

երկրորդ՝ Շահումեանը Արցախից դուրս, ոչ Արցախ դիտելով, որի պաշտպանութիւնը կապուած է մեծ դժուարութեան հետ.

երրորդ՝ դրսի ուժերով, ստոյգ՝ Հոբլի ծրագրի իրականացման քաղաքականութեան հետեւանքով:

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԱՆԿՄԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Շահումեանի անկումը բացասաբար անդրադարձաւ Մարտակերտի եւ ընդհանուր Արցախի ինքնապաշտպանութեան վրայ: 4 տարի Շահումեանի ուժերը Շահէն Մեղրեանի գլխաւորութեամբ զսպում էին թուրքերին՝ հիւսիսից Մարտակերտ չթափանցելու համար: Շահումեանի պատնէշն այլեւս խորտակուած էր եւ ռուս-թուրքական միացեալ բանակը սրարշաւ, գրեթէ առանց լուրջ դիմադրութեան վերցրեցին Մարտակերտի մեծագոյն մասը եւ արդէն կախուել էին Սեյդիշէնի, այսինքն՝ Ստեփանակերտի վրայ: Հիւսիսային ռազմաճակատի հրամանատարներն իրենց անփառունակ պարտութիւնները բացատրում էին խուճապի հսկայ ալիքով, որ եկել էր Շահումեանից: Ռուսական հրամանատարութեամբ եւ անձնակազմերով գործող թուրքերի ահաւոր ճնշումն իրենց վրայ առան Շահումեանցիները եւ եթէ օգնութեան նշոյլներ լինէին, գուցէ թէ կարողանային օգտուելով հայրենի լեռներից՝ փակել այդ հեղեղի դէմը: Մարտակերտի զօրքը երկու երեք օր իր տրամադրութեան տակ ունէր կազմակերպելու պաշտպանութիւն: Սակայն Շահումեանի կորստեամբ հաւանաբար ուրախացած որոշ ռազմական գործիչներ, որոնք հաւանաբար

Հանդիսատեսի դերում էին հանդէս եկել, անճարակութիւն ցուցաբերեցին եւ լաւան Հոսեց մինչեւ Կիչան-Ղազանչի-Սրխաւենդի բնագիծ:

*Մինչ այդ երկու շրջանների բնակչութիւնն ամբոխացած հոսում էր դէպի Ստեփանակերտ:: Ահա մի պատկեր Մարտակերտից եւ Ստեփանակերտից. **Խաչիկ Ստամբոլցեան.** «Եկաւ մի ժամանակ, որ Շահումեանն ընկաւ, սակայն Շուշիի ճանապարհը բաց էր եւ օգնութիւն էինք տանում զօրամասերին: Երբ մեքենան բարձած մտանք Մարտակերտի շրջան եւ առաջին գիւղը, որ պիտի մտնէինք, կարծեմ Ներքին Հոռաթաղն էր, եւ պիտի առաջին տունը մտնէինք, տեսանք, որ գիւղը բացարձակ դատարկ է, մարդ չկայ: Մեքենայով շրջեցի գիւղով, բացականչելով, սակայն մարդ չկար, մի տատիկ-պապիկ դուրս եկան եւ ասացին, թէ էստեղ ո՞ւր է մարդ, բոլորը փախել են: Ո՞ւր են փախել: Դէ, ասացին թուրքերը գալիս են, եւ ամբողջ գիւղով փախել են, մեր փախչելն էլ իմաստ չունէր էս տարիքում, մենք մնացել ենք: Որ սպանեն, թող մեր տան մէջ մեզ սպանեն: Հիմա հարցնում եմ. «Ի՞նչ է եղել, այ ժողովուրդ»: Թէ՝ չգիտենք, ա՛յ էն մեքենաներն էլ փախչում են: Դեռ չենք հասել Մարտակերտ, փոքրիկ երեխայի սայլակները բարձած, էշերը բարձած՝ բոլորը, ով ինչպէս կարող է, փախչում են: Կանգնեցրի մեքենաները, ասացին, թէ էս ա թուրքերը գալիս են, ժողովուրդն էլ փախչում է: Հարցրի, թէ դուք թուրք տեսե՞լ էք, կրակոցներ կա՞ն: Թէ՝ չէ, կրակոցներ չկան: Մի «Վիլիս» զինուորական մեքենայ, մէջը զինուորականներ եւ մի կին էլ մէջտեղը նստած, էլի զինուորական համազգեստով, շրջում էին գիւղերով եւ ժողովրդին ահաբեկում, թէ դուրս եկէք, էսա թուրքերը գալիս են: Կանգնեցի դէմները, ասացի. «Ո՞ւր էք փախչում, գուցէ պրովոկացիա է»: Աղաչեցի, բացատրեցի, նոյնիսկ ծունկի իջայ, ոչ մի բան չազդեց: Վերջում ստիպուած ասացի.«Դուք մարդ չէք, դուք կին էք, իւրկայ հագէք, աւելի ձեզ կը սազի»: Բոլորը դուրս էին գալիս Մարտակերտից: Հասայ Մարտակերտ, գնացի շտաբ, **գեներալ Յարութիւնեանն էր:** Հարցնում եմ, էս ի՞նչ է եղել: Թէ թուրքերը էս ա յարձակւում են: Հարցնում եմ, թէ*

որտեղից են յարձակւում: Կոնկրետ որեւէ բան չի ասում: Մեր բեռները դատարկեցինք չոքաբի պահեստները, այնտեղ հանդիպեցի **Կարինէին,** հանգուցեալ, եւ ինքն ասաց. «Պարոն Ստամբոլցեան, շատ զգուշելի միջավայր է, ես թողել՝ դուրս եմ եկել Երեւանից, որ ինձ այնտեղ չսպանեն»: Սրանք իր բառերն են: Ինքն էր եւ **Դանիէլեան Աղաւնին**: Ասաց. «Էս տղաները չչուկներ են տարածում, թէ այս տարածքները յանձնում են»: Ինքն էլ Աղաւնիի հետ այդտեղ բուժքոյրութիւն էր անում, բայց աւտոմատով էին: Ե՛ւ կռուին էին մասնակցում, ե՛ւ վիրաւորներին էին դուրս բերում, օգնում:

Էդ խօսակցութիւնից յետոյ ես գնացել եմ չոաբ, եւ մութն էլ ընկել է: Եւ այդ գեներալն ինձ ասում է.

- Պարոն Ստամբոլցեան, դու այստեղից գնայ:

- Ինչի՞ համար:

- Շատ վտանգաւոր է:

Ես զայրացայ ու ասացի.

- Կը ներես, քեզ մայր է ծնել, իսկ ինձ մա՞յր չի ծնել: Եթէ քեզ համար վտանգաւոր չէ՝ ինձ համար էլ՝ չէ:

- Դու Գերագոյն խորհրդի պատգամաւոր ես:

- Դու էլ գեներալ ես:

Շրջապատում էլ ո՛չ աղմուկ կայ, ո՛չ կրակոց կայ, ո՛չ ծուխ կայ, սակայն Մարտակերտն արդէն դատարկուել է: Մի թուրք էլ գերի էր ընկել, նրան էլ ցաւազրկող սրսկեցին, որ հանգստանայ եւ խօսի, տեղեկութիւններ հաղորդի: Եւ ամբողջ գիշերը այդտեղ մնացել եմ եւ ոչ մի կրակոց, «Գրադ»ի ոչ մի որոտ: Մեր «Գրադ»ն էլ այնտեղ էր կանգնած եւ դա էլ ոչ մի հրթիռ չէր արձակում:

Ինձ հետ մի հոգի էլ կար, **Վրէժ** անունով, հաւատաւոր տղայ էր, եւ չգիտեմ ինչպէս, խելքս կերան եւ այդ Վրէժի միջոցով առաւօտեան լուսադէմին ինձ Մարտակերտից դուրս հանեցին:

Առաւօտեան երբ հասայ Ստեփանակերտ, տեսայ որ մարդկանց քարաւաններ են գալիս Շահումեանից, քրքրուած հագուստներով, կիսամերկ, խեղճ, քայքայուած: Կեանքում էդքան գաղթականութիւն չէի տեսել: Ինչպէս որ ինձ պատմել

էին Առաջին աշխարհամարտի ժամանակ մեր հայ գաղթակա-նութեան մասին, նոյնն էլ այստեղ էր: Շատերն իրենց երեխա-ներին կորցրած կամ թողած, կիսախելագար վիճակում գալիս էին: Եւ բոլորն էլ ահաբեկուած՝ թէ թուրքերն էս ա գալիս են:

Մի սարսափելի տեսարան ու վիճակ էր, եւ այդ ամբողջ բնակչութիւնը եկել էր եւ թափուել էին կենտրոնական հրա-պարակի վրայ, որտեղ հիմա կառավարութիւնն է: Եւ դրանցով ***Օլէգ Եսայեանն էր*** *զբաղւում: Մէկ էլ տեսնեմ՝ ժողովուրդը, ով ինչքան տեխնիկայ ունի, քշած գալիս են Հայաստան: Դուրս եկայ եւ Շուշիի կողմից Ստեփանակերտի մուտքի մօտ պոստ դրեցի, վերեւն էլ պոստ դրեցի եւ արգելեցի, որ այդտեղից որեւէ մէկը գայ Հայաստան: Մինչեւ մի պտոյտ արեցի՝ եկայ տեսայ, որ պոստը չկայ, բարձրացայ եւ տեսայ, որ վերեւն էլ չկայ, ես էլ եկայ, որ էն ժամանակուայ ղեկավարութեանն ասեմ, որ էսպիսի բան է կատարւում: Ասացի, բայց բանի տեղ չդրե-ցին: Եւ այդ պահին լիքը լցուած մարդիկ են խմբուել, եւ հարց-րի, թէ ինչ է եղել, ասացին, թէ գնում են Հայաստան: Ինչո՞ւ: Որովհետեւ Օլէգ Եսայեանը, չգիտեմ ինչից ելնելով, թուղթ էր տալիս, թէ այսինչ այսինչեանը կարող է մեկնել: Գնացի հարց-րի. «Օլէգ ջան, ինչո՞ւ ես այդպիսի բան անում»: Թէ՝ հիւանդ են: «Ո՞նց են հիւանդ, էս բոլորը հիւա՞նդ էն: Արի գնանք եւ ջերմաչափ դնենք եւ այս բեռնատարի մէջ եթէ մէկը 36,6-ից աւել լինի, ամբողջը թող գնան»: Դա մօտիցս ցւրուեց:* ***Դրանց միտքն այն էր, որ բոլորին ուղարկեն Հայաստան****: Եւ չատ տարօրինակ էր այն, որ Աղաւնոյ (Զաբուխ) գետի մօտ Ա.Մականների պոստն էր, դրանք էլ այդտեղ գնացողներից կաշառք են վերցնում, թէեւ նրա համար են, որ թոյլ չտան անց-նել: Մի հատ խոզ են տալիս, մի հատ կով... ու դրանք բաց են թողնում դէպի Հայաստան: Եւ էդ պահին մի քարիւղատար էլ (բենզավոզ) եկաւ, եւ հարցնում եմ, թէ էս ցիստեռնը ո՞ւր էք տանում: Դու մի ասա, էդ ցիստեռն էլ լրիւ աւտոմատներ են լցուած եւ դա էլ Հայաստան են տանում: Հարցնում եմ. «Ո՞ւր էք տանում, չէ՞ որ պատերազմի դաշտն այնտեղ է»: Այ էսպիսի խայտառակ բաներ են եղել:*

Եւ ես ինչքան փորձեցի, որ դրանք այդտեղից դուրս չգան, էն ժամանակուայ իշխանութիւնները բոլորին ուղարկեցին Հայաստան: Երբ վերադարձայ, որ գամ այս հարցերի չուրջ կռիւ, ղալմաղալ անեմ: Ես եկայ եւ անմիջապէս գնացի մտայ Գերագոյն խորհուրդ, պահանջեցի ինձ ձայն տան: Բարձրացայ ամբիոն եւ ասացի, որ էսպէս, էսպէս, էսպէս»:

Մասն երրորդ
ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

«Մէկ ազգ իրան որ էս աշխարհում չի պահի, թշնամուն ինքը գերի կըլի, Աստուած էլ նրան աչքից կը գցի»:

Խաչատուր Աբովեան

Գլուխ տասնուվեցերորդ
ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ

*Երբ անօրինակ զոհաբերութիւններով լի կեցութիւնը գնահատում են որպէս նիւթապաշտութիւն կամ դաւաճանութիւն, եւ ժողովրդի հոգին թունաւորելով՝ նրան լարում են ընդդէմ ազգային գործչի, մարդ իսկապէս հերոս պիտի լինի այդ իրաւրութեան մէջ նախաձեռնող կամք ցուցաբերելու համար: **Զի հերոսութիւնը ոչ այնքան քաջութեամբ ու արիութեամբ է դրսեւորւում, որքան ծայրայեղ պայմաններում հոգեւոր հաստատակամութիւնը պահպանելու կարողութեամբ: Իր անձի եւ անուան հետ կապուած եւ նախորդիւ նկարագրուած այն ամենայն նենգամտութիւններից եւ դաւերից յետոյ եթէ Շահէն Մեղրեանը կարողացաւ չափազանց սուղ պայմաններում ջոկատ ստեղծել եւ որեւէ մէկի մտքով չանցած եղանակով պայքարել հայրենիքի ազատագրման համար,** դա խօսում է նրա ներքին կարողութեանց, ներզօրութեան մասին:*

Լինելով լրջախոհ մարդ՝ Շահէն Մեղրեանը տուրք չի տուել պարտուողական հոգեբանութեանը, ոչ էլ խճճուել է միջկուսակցական հակասութիւնների ցանցի մէջ, այլ առաջնորդուել է միանգամայն պարզ մտածողութեամբ՝ ելակէտ ունենալով այն հանգամանքը, որ ոչ մի լիարժէք հայ դաւաճան լինել չի կարող, եւ վերոնկարագրեալ պարագային է յայտարարել, որ ինքը բացառում է դաւաճանութիւնը որեւէ մէկի կողմից: Շահէնն ազգի զինուոր էր եւ ոչ թէ ոսոխական, որպէսզի ձեռ-

նարկէր կամ մասնակցէր ազգադաւ յանցագործութիւնների բացայայտմանը: Շահէնն ունէր մէկ թշնամի եւ նրա դէմ էլ պայքարում էր:

*Շահէնի անընկճելի կամքի եւ լաւատեսութեան մասին է խօսում այն իրողութիւնը, որ գրեթէ դաւաճանաբար իրենցից՝ իր իսկ համազգիների կողմից Շահումեանը կորզելուց եւ թուրքին նուիրելուց յետոյ չի յուսահատել եւ շարունակել է համագործակցել նոյն մարդկանց հետ՝ յանուն Շահումեանի ազատագրման: Եւ առհասարակ Շահումեանի ելքն ու մուտքը Շահէնն է հսկել, բոլոր անհատների եւ խմբերի պահողը վերջին հաշուով ինքն էր: Բոլորը նրա ձեռքի տակով էին անցնում, բոլորը նրա տանն էին մնում մի որոշ ժամանակ, ուստի Շահէնը պիտի իր տրամադրութեան տակ որոշակի միջոցներ ունենար չրջանի հետ առընչուող մարդկանց հետ փոխյարաբերութիւն պահելու համար, որն էլ կարող էր շահարկման հիմք դառնալ: Իսկ այդպիսի տրամադրութիւն կարող էին ունենալ թէ՛ իր անձնական հակառակորդները (Շահէնն անկասկած ունեցել է բարի հեղինակութիւն, սակայն նա չուզողներ եւս ունէր ի դէմս նախկին վարչակազմի այն դէմքերի, ովքեր ի զօրու չէին ընկալելու ազգային անկախ պետականութեան ոգին), այլեւ ի դէմս հակադիր դաւանանքի՝ ՀՀՇականների: Շատ աւելի ծանրակշիռ է եղել այն փաստը, որ ՀՀՇական ղեկավարութիւնը ծանր էր տանում Դաշնակցութեան գոյութիւնը Հայաստանում եւ Արցախում: ՀՀՇն փաստօրէն նոր ժամանակներում քաղաքականութեան մէջ բոլշեւիզմի բաւականին ստերէոտիպներ էր կիրառում: Պէտք չէ դրանից զարմանալ, քանզի Հայաստանի անկախութեան հռչակումով նիւթապաշտութիւնը եւ բոլշեւիզմը միանգամից չէին կարող վերանալ: Եւ բնաւ պատահական չէ, որ **Գարեգին Նժդեհն ունեցել է երկու հիմնական թշնամի՝ թուրքը եւ բոլշեւիկը**: Վերջինս մեր օրերում էլ տակաւին կենդանի է եւ ի յայտ է գալիս տարբեր դիմակներով: Հէնց բոլշեւիկներն էլ «կերան Նժդեհի կեանքը» եւ չենք բացառում, որ նեոբոլշեւիկները կազմակերպեցին Շահէնին եւ իր զինակիցներին տեղափոխող ուղղաթիռի ոչնչացումը, սակայն դրան*

դեռեւս կ՚անդրադառնանք:

Շահէնն այնուամենայնիւ զոհ դարձաւ ոչ անձնական թշնամութեան հողի վրայ, որը եթէ կար էլ, չափազանց մեղմւում էր իր պայծառ բնաւորութեան չնորհիւ: Սակայն բարեզարդ բնաւորութիւնն ու հայրենապաշտ կամքը բաւարար չեն տարբեր ուժերի միջեւ դարաւոր հակամարտութիւնը չէզոքացնելու համար: Մի կողմից Երեւանի բարձր իշխանութիւնները՝ կազապարուած ՀՀՇական ճգտումներով, որոնք ամէն կերպ Շահումեանը պիտի յանձնէին, քանզի այդպէս էր որոշել Հայաստանի բախտի տնօրինութիւնն իրենը համարող կենտրոնացեալ ուժը, որի կամակատարները նստած էին Երեւանում: Միւս կողմից՝ արիասիրտ եւ հայրենասէր Շահումեանի քաջամարտիկ ուժերը որեւէ պայմանով պիտի չհամաձայնէին հրաժարել Շահումեանից, որոնց առաջնորդն ու ոգեշնչողը Շահէն Մեղրեանն էր: Նրան վերացնելով միայն կարելի էր Շահումեանից անկաշկանդ կերպով հրաժարել, մանաւանդ կար խելամիտ թուացող փաստարկում. մենք ի վիճակի չենք այդպիսի մեծ սահմաններով ռազամաճակատ հսկել: Երբ մարդ մի բան կատարում է, միշտ էլ հիմնաւորման բազմաթիւ առիթներ եւ մտքեր է յայտնաբերում: Մասնաւորապէս մեծ սահմանները պահելու դժուարութիւնը հերքւում է փոքրատարածք երկրի պաշտպանունակութեան բացակայութեան փաստով: Եթէ Շահումեանը մնար, շահումեանցիները, որոնք հարիւր տոկոսով գաղթեցին, դուրս մղուեցին երկրից, իրենք ոչ միայն Շահումեանը կարող էին հսկել, այլեւ շատ աւելի մեծ տարածք: ***Շահումեանը հայ ժողովրդի գենոֆոնդի եւ զօրութեան կարեւորագոյն օջախներից էր****, որի անփառունակ եւ ողբերգական յանձնումը ՀՀ այն ժամանակուայ իշխանութիւնների յանցանքն է:*

Շահէն Մեղրեանը դեռեւս ստեփանակերտեան ընտրութիւնների ժամանակ ասել է, որ եթէ Շահումեանը մեր ձեռքից խլել տաք, միեւնոյնն է, մենք մեր պայքարը չարունակելու ենք **պարտիզանական եղանակով**: *Դրանից յետոյ Շահումեանի ժողովուրդն է կամք ու ցանկութիւն յայտնել, որպէսզի Շահէն*

Մեղրեանը հայրենիքի ազատագրութեան համար դիմի ամէն տեսակ պայքարի: «Երկիր» օրաթերթի թղթակից ***Յակոբ Սողոմոնեանը*** *«Մի անգամ Շահէն Մեղրեանի հետ» հրապարակման մէջ գրում է. «Գնացինք: Մղձաւանջ էր: Այդտեղ էլ (Շահէնին - Ա.Պ.) անիծողներ եւ մեղադրողներ եղան: Բայց կար մի ծերունի, սպիտակահեր, նիհար, ճիգ մի ծերունի, որն ասաց. «Շահէն, ժողովուրդ է, տունն ու տեղ է կորցրել, իրաւունք ունի: Բայց դուք տղամարդ չէք լինի, եթէ թուրքին հանդիստ տաք: Նրանք ձեր տներում պիտի չապրեն»: **Ու ծերունու առջեւ Շահէնը ուխտեց պարտիզանական կռիւ սկսել**: Կռուել մինչեւ վերջ» («Երկիր», 23 ապրիլի 1993):*

Շահումեանից դուրս գալուց յետոյ մի քանի օր մնում են Հաթերքի հիւրասէր եւ սրտացաւ ժողովրդի հետ: Այնտեղ էլ դումարուում է ռազմական խորհուրդ՝ ***Լէոնիդ Ազգալդեանի, Վլադիմիր Կարապետեանի, Շահէն Մեղրեանի*** *մասնակցութեամբ: «Լէոնիդը Շահէնին զգուշացրեց, որ իրեն ամենուր սպասում են, որպէսզի իբրեւ դաւաճանի ձերբակալեն»,- յիշում է* ***Պետրոս Մեղրեանը***: *Տեսնելով այս ամէնը, եւ դրանից յետոյ էլ ե՛ւ* ***Լէոնիդի մահը***, *ե՛ւ* ***Վլադիմիր Կարապետեանի*** *մահը, Մարտակերտի հրամանատար* ***Վազիճի*** *մահը /յունիսի 17-ին ականի վրայ պայթում է գնդապետ* ***Վլադիմիր Կարապետեանի*** *«Վիլիս»ը՝ այն պարագային, երբ այդ նոյն ճանապարհով նոյն մեքենայով մի քանի անգամ անցել-դարձել էր: Զոհւում է ինքը՝ գնդապետը,* ***Մարտակերտի հրամանատար Վազիճ Գալստեանը, եւ Վազիճի*** *օգնականը, վիրաւորուում է վարորդ* ***Տիգրանը/,*** *դրանցից առաջ էլ՝* ***Վլադիմիր Բալայեանի*** *մահը (Վլադիմիրը Շահումեանի անկումից մէկ շաբաթ չուտ զոհուեց), իսկ այդ ամէնը կատարուեց ակնթարթօրէն, մէկերկու շաբաթուայ ընթացքին, եւ անասելի ողբերգութիւն ապրելով՝ Շահէնը հասկացնել տուեց ժողովրդին եւ բոլորին, որ ինչպիսին եղել է, այնպիսին էլ մնում է. ոչ մի էական փոփոխութիւն չի կատարուել իր հոգում՝ հանդէպ իր հայրենիքն ու ազգը, եւ հէնց Հաթերքում ձեւաւորեց իր 20-25 հոգիանոց ջոկատը եւ վերստին մտաւ անտառ:*

*Չյուսահատելով եւ չհրամելով, թշնամուն ազատ գործելու հնարաւորութիւնից զրկելու համար Շահէնը վճիռ կայացրեց **Շահումեանի տարածքներում պարտիզանական ղեկատով գործելու մասին:** Եւ այդ վճիռը նա ընդունել է դեռեւս Հաթերքում կայացած հարցազրոյցում, որի մասին խօսք արդէն եղել է:*

*Ըստ որոշ աղբիւրների՝ հայդուկային պայքարի որոշումն ընդունել է Դաշնակցութեան Կոմիտէն, սակայն այստեղ հակասութիւն չկայ. մտայղացումն անկասկած Շահէն Մեղրեանինն է, սակայն այդ ժամանակ ամէն մտայղացում Շահումեանում կարելի էր իրագործել Դաշնակցութեան որոշումով, որպէսզի ուժեր եւ միջոցներ տրամադրուէին: Այսինքն, **Շահումեանի հայդուկային պայքարի գաղափարը Շահէն Մեղրեանինն է, իսկ դրա իրագործումը հնարաւոր դարձաւ, երբ ՀՅԴ Դաշնակցութեան Հայաստանի Կենտրոնական կոմիտէն որոշում հանեց՝ Շահէն Մեղրեանի գլխաւորութեամբ ծաւալել հայդուկային կռիւներ եւ պարտաւորեց զօրակցել այդ պայքարին**, այսինքն՝ դրամասնել, պարենաւորել, զինել, մարտազօրք տրամադրել, ամէն կերպ սատարել:*

92-ի յունիսի 17-ին Շահէն Մեղրեանը հաւաքում է մարտունակ տղաներին եւ Շահումեանի շրջանի կուսակցական կոմիտէի անդամներին, նստում են մի տան մէջ եւ յայտարարում հայդուկային եղանակով Շահումեանում գործելու որոշումը: Խիզախութիւն, նուիրում եւ անձնուրացութիւն պահանջող պայքարի այդօրինակ իրականացումը Շահէնը կապում է անհատական ազատակամութեան հետ եւ ընտրութեան հնարաւորութիւն տալիս ներկաներին.

– Ով համաձայն է՝ թող մնայ այստեղ, ով համաձայն չէ, թող հէնց հիմա դուրս գայ:

Բոլոր հաւաքուածները մնում են: **Շահէնը Նովիկ Գիւլումեանին** յանձնարարում է գնալ, հետախուզել եւ մեկուսացեալ մի վայրում ռազմակայան հիմնելու տեղ յարդարել: Նովիկն իր տղաների հետ Հաթերքից նոյն ճանապարհով յուլիսի 22-23-ին ոտքով ետ են գնում, բարձրանում Մռաւի լանջերը: Լաւ ուսումնասիրութիւններից յետոյ ռազմակայանի

տեղ են յատկանշում Արտատափը, արդիւնքը յայտնում Շահէնին: Այդտեղ էլ ռազմակայան են հիմնում: Առաջին այդ խմբի մէջ էին՝ **Նովիկ Գիւլումեան, Ֆեդօ Գիզիրեան, Ռաֆիկ Ջանունց, Զոհրապ Եսայեան, Գեղամ Սուղեան, Ներսէս Աղաջանեան**: Ի դէպ մեր մարտիկները Գիւլիստանի վերեւը՝ Գեօղթափայում գտնում են բռնազաղթի ընդհանուր խմբերից ետ մնացած մի կնոջ՝ վերինչէնցի **Ռոզա Ջանունցին**, կէսրոջ դիակի մօտ՝ կիսագիտակից վիճակում: Այնուհետեւ մէկ այլ խումբ Սերգէյ Զալեանի գլխաւորութեամբ հետեւակ հասնում են Արտատափ: Յունիսի 25-ին մնացեալ մարտիկները ուղղաթիռով անցնում են Շահումեան: Սկսւում է հայդուկային պայքարը:

*Ջոկատի հիմնական կորիզը վերինչէնցիներն էին՝ **Նովիկ Գիւլումեանի** գլխաւորութեամբ: Սկզբից բոլորը Նովիկի հետ 6-7 հոգի էին: Մէկ շաբաթ անց ուրիշ մարտիկներ էլ եկան: Ի վերջոյ թուով դարձան 32 հոգի: Լեգենդար ազատամարտիկներն էին համախմբուել: Կարելի է ասել՝ ամբողջ շրջանի ամենափորձառու, նուիրեալ տղաներն էին, որոնց ամսի 30-ին միացել են Կարաչինարի տղաներն՝ իրենց լեյտենանտի գլխաւորութեամբ: Ստեղծուեց ջոկատի չտաբ՝ **Սերգէյ Զալեանի** գլխաւորութեամբ*

*Երբ որոշում են թափանցել Շահումեան, նոյն օրերին **Հրայր Մարուխեանի** դատեր՝ **Շաղիկի** հետ **Հրանտ Մարգարեանն է** գալիս Հաթերք: Նրանք իրենց հետ վրաններ էին բերել, որ յետոյ հայդուկները տարան Արտատափ: Շահումեանին մերձ անտառներում մինչեւ յուլիսի 16-ը կարեւոր գործեր արեցին եւ ապացուցեցին, որ Շահումեանի շրջանի մարտիկները թոյլ չեն տայ իրենց հողում թշնամին չունչ առնի:*

Պայքարը շարունակելու Շահէնի եւ Դաշնակցութեան կամքը ճիշտ ընկալուեց. ԼՂՀ Գերագոյն խորհրդի Նախագահութիւնը եւ Նախարարաց խորհուրդը համատեղ որոշում կայացրին, իսկ յունիսի 19-ին Պաշտպանութեան խորհուրդը հանդէս եկաւ կոչով՝ ուղղուած շահումեանցիներին. «Բոլոր նրանց, ովքեր ի վիճակի են զէնք կրելու, ում համար թանկ են

հայրենիքը եւ ազատութիւնը, պարտիզանական պայքար ծաւալել զաւթուած ամբողջ տարածքում:

Ում համար թանկ են նախնիների գերեզմանները, մեր եկեղեցիներն ու սրբութիւնները, պէտք է սարսափ տարածեն թշնամու վրայ: Պէտք է զօր ու գիշեր ոչնչացուեն նրանք, ովքեր ձեռքով ոտք են դրել մեր հողի վրայ»:

*Իրադրութիւնն այնպիսին էր, որ քչերն արձագանքեցին այդ կոչին: Կազմակերպուած ազգը բռնագաղթի հետեւանքով վեր էր ածուել ինքնապահպանութեան բնազդով համակուած ամբոխի: Կամաւորական չարժումը թուլացել էր երկրի ներսում եւ ռազմաճակատներում տիրող անբարոյ մթնոլորտի պատճառով: Ժողովրդի մէջ «խաբէութեամբ Շահումեանը յանձնելու համար» առաջ էր եկել յուսախաբութիւն: Շահումեանի ռազմիկները խորապէս ցնցուած էին ճակատագրական պահին իրենց ամէն տեսակ օգնութիւնից զրկելու փաստի գիտակցումից: Այսպիսի պայմաններում միայն գրանիտ ոգի ունեցողները կարող էին շարունակել պայքարը: Ուստի **միայն Շահէն Մեղրեանն ու իր զինակից ընկերների մի մասն իրենց մէջ ուժ գտան շարունակելու պայքարը:***

*Արդիւնազօր գործողութիւններով նման գործունէութիւնն ինքնին ապացոյց էր այն բանի, որ Շահէն Մեղրեանը ոչ մի կապ չունի «Շահումեանը ծախելու» հետ: Այդ ընթացքում դրա վերաբերեալ շահումեանցիք բազմաթիւ գրութիւններ ստացան, որոնց հեղինակներն իրենց հիացմունքն էին արտայայտում հայդուկային պայքարի նախաձեռնողներին: Մարդիկ զգացել են, որ **Շահէն Մեղրեանը** ոչ մի կապ չունի «Շահումեանը ծախելու» հետ: Նոյնիսկ իշխանական ոլորտից Շահէն Մեղրեանի այս նախաձեռնութիւնը չատերն են ողջունել: Մեր ձեռքի տակ է **Վազգէն Սարգսեանի** թուղթն՝ ուղղուած Շահէնին.*

«Շահէն, բարեւ: Դեռ ամէն ինչ չէ, որ կորած է: Ողջունում եմ ձեռնարկդ, կարծում եմ յաջողելու ես: Մեր յարաբերութիւնում ոչինչ չի փոխուել, չնայած.... «երեսուն տանկ» քեզ չտուեցի...

Վերջնական եզրակացութեան եմ եկել. **կուսակցութիւնները**

մեր տունը կը քանդեն: Եկել եմ զգուշացնեմ, եթէ դեռ գլխի չես ընկել: Կը հանդիպենք, կը խօսենք:

Ձիգ մնա՛: Քո ընկեր» *(ստորագրութիւն՝ Վ. Սարգսեան)*:

Այդ ժամանակներից ցարդ սովորութիւն է դարձել՝ ամէն ձախողման համար մեղքը գցել կուսակցութիւնների վրայ: Կուսակցականութեան աբստրակտ քննադատութիւնը յատուկ է զինուորական եւ քաղաքական այն գործիչներին, ովքեր չեն պատկերացնում, որ կուսակցութիւնները աշխատանքները կազմակերպելու ձեւեր են: Խօսքն ազգային կուսակցութիւնների մասին է եւ ոչ թէ մաֆիոզ խմբերի, հարստութիւնը պահելու եւ բազմապատկելու մոլուցքով տարուած «բիրդան աղաներ», չարի գործիք դարձածներով համալրուած զանազան ոճրախմբերի, որոնց գործունէութիւնը հայրենաքանդ բնոյթ է ստանում՝ անկախ նրա ղեկավարների մոտիւացիայից եւ ինքնարդարացման փորձերից: Հետեւաբար՝ ինչո՞ւ նոյնացնել, ասենք, ՀՀՇ-ն Դաշնակցութեանը, որի միջոցով կապ է ստեղծւում եւ պահպանւում Սփիւռքի եւ նրանով իսկ՝ դրեթէ ամբողջ աշխարհի հետ, մի բան, որ սկզբնական շրջանում մեր թոյլ պետութեան ուժերից վեր էր: Բացի այդ, Հայ Դատի կուսակցութիւնը կարողացաւ ազգային ազատագրական պայքարին կազմակերպուած բնոյթ տալ եւ յատկապէս պատերազմի առաջին տարիներին կարեւոր դերակատարութիւն ունեցաւ դիմակայելու Ադրբեջան կոչեցեալ պետական նորագոյացութեան կողմից թուրքական վտանգին՝ նրա դէմ հանելով բազմաթիւ ջոկատներ:

Շահէնն անտառ մտնելուց յետոյ ամիս ու կէս 20-25 նուիրեալ տղաների հետ մնում են այնտեղ: Եւ միայն լիակատար շրջափակման մէջ ընկնելուց յետոյ, երբ թուրքերը գրաւում են նաեւ Հաթերքը՝ փորձում են կապուել Հայաստանի հետ, ուղղաթիռ խնդրել, որպէսզի դուրս գան շրջափակ օղակից: Կապը Երեւանի հետ խզուել էր: Եւ որպէսզի վերականգնէին, մտնում են թուրքերի թիկունք, ինչ-որ մեքենայից հոսանքի կուտակիչ են հանում եւ կապի մէջ մտնում: Սակայն Հայաստանից տարբեր պատճառաբանութիւններով ուղղաթիռ

*չեն ուղարկում: Վերջին հեռագրում Շահէնը գրում է, որ եթէ ուղղաթիռ չեն ուղարկելու, իրենք կը փորձեն Քարվաճառով դուրս գալ. ով զոհուելու է՝ կը զոհուի, ում վիճակուած է կեն-դանի մնալ, կը հասնի Հայաստան: Յուլիսին լիակատար շրջա-պատման մէջ ընկած հայդուկներն անտառից դուրս եկան օդա-չունների օգնութեամբ: Այդ ժամանակ թռիչքներն իրակա-նացնում էին «Էրեբունի» օդանաւակայանից, որը միշտ շրջափակուած էր լինում յատուկ զինեալ խմբերով, որպէսզի յանկարծ եթէ Շահէնն ուղղաթիռով իջնէր՝ ձերբակալէին: Երբ Շահէնենք այնտեղից պիտի դուրս գային, Պետրոսենք չեն կարողանում ուղղաթիռ ուղարկել: Ամէն ինչ անցել էր բանակի տրամադրութեան տակ, թոյլ չեն տալիս ուղղաթիռ թռչի, եւ կային Շահումեանի հետ կապուած այլ հանգամանքներ: **Սերգէյ Վանցեանը** պատասխանատուութիւնն իր վրայ վերցնե-լով՝ համաձայնում է թռիչքն իրականացնել: **Պետրոս Մեղրեան.** «Ես համոզեցի, որ երկու ուղղաթիռ յատկացնեն, որովհետեւ այն ժամանակ թուրքերն արդէն Հաթերքում էին, Քոլատակի մօտերքն էին, սակայն թռիչքի հրաման չկար, ամէն ինչ վերցուած էր Պաշտպանութեան նախարարութեան իրաւա-սութեան տակ, եւ որեւէ մէկը պիտի չթռչէր, իսկ Վանցեանը պատասխանատուութիւնն իր վրայ վերցնելով ազգանուէր գործ արեց, եւ իրենք ծածկագրեր ունէին յատուկ տերմիններով աւտոտեսչութեան համար. իբր թէ ճանապարհներն են ստուգում եւ այդ անուան տակ Քարվաճառն անցան»:*

Օդանաւակայանը հսկող ուժերին ասում է, թէ ուղղաթիռը թռչելու է Շամշադինի սահմանամերձ գիւղերը, իսկ իրա-կանում թռչում են Շահումեան: Օդաչուները կապւում են Շահէնի հետ եւ ասում, որ յայտնի իր կոորդինատները: Նա իր կոորդինատները չի յայտնում, այլ ասում է, որ «Եղնիկները» կը լինեն այսինչ վայրում, որը օդաչուներին քաջ յայտնի էր: Օդաչուները հրաշալի կերպով իրականացնում են թռիչքը, եւ տղաներին հանում թշնամու շրջափակումից: Շահէնն իջնում է Երեւանում:

Յաջորդ օրերին բոլորի, յատկապէս իշխանութիւնների



Շահէն Մեղրեանի գրութիւնը Ասկոլկա Աշոտին ռազմակայանից: Նամակատարը ճանապարհին վիրաւորուել է, որից յետոյ Ասկոլկան է զոհուել եւ նամակը չի հասել Ասկոլկային



Շահէն Մեղրեանի նամակը Նովիկին, 1993, յունուար



Շահէն Մեղրեանի նամակը
Նովիկին՝ առաջիկայ
ընդհանուր յարձակման
կապակցութեամբ,
19 մարտի, 1993



Շահէնի գրութիւնը
Շուրա Գզիրեանին՝
Գիւլիստանի
գործողութեան վերաբերեալ



Շահէն Մեղրեանի վերջին նամակը զաւակներին, 17 փետրուար, 1993



Վրանի տակ. ռազմական խորհրդակցութիւն

Հետախոյզները գործի պահին /Նովիկ եւ կարաչինարցի Ալեոշ/

Ձախից աջ՝ մարզիչ Ղազարոսը, Գրիգոր Գրիգորեանը,
Գարիկ Գրիգորեանը, Սամուէլ Խոստեղեանը

Եղակեր 93

Ականապատում, Սարսանգ, 1993թ.

Թշնամական կործանեալ մեքենայի մօտ. 1993-ի սկիզբ

Մարտական գործողութիւնից յետոյ. Սարսանգ 1993-ի սկիզբ

Հազուադէպ հանգիստ Մռովի փեշերին

Սբ Երեքմանկունք վանքի մօտ

Վիրաւորի տեղափոխումը
(Սեյրանեան Շահէն, մահանում է ճանապարհին)

Եռամսեայ հաւաքի մարտիկները

Շտաբում. կենտրոնում՝ Սերգէյ Չալեանը

Շահէն Մեղրեանի յիշատակի ոգեկոչման օրը. 1999թ. ապրիլի 17

Զոհեալ գիւլիստանցիների հանգստարանը, քաղաք Աբովեան

Յուշարձան-խաչքար Ականաբերդում

Ումուդլու-Ականաբերդում

Հերոսի քառասնօրեայ սուգի օրը

Եղբայրներն ու ընկերները Շահէնի շիրմաքարի մօտ

Շահէն Մեղրեանին նւիրուած յուշամրցում, 1996թ., ապրիլի 17

Շահէն Մեղրեանին նւիրուած միջոցառում, 1999թ., ապրիլի 17

Մելիքների հանգստարանը, Գիւլիստան

Գիւլիստանի համապատկերը

Աւերուած Գիւլիստանը. Շէնի եւ Տւերի /ներքի/ թաղերը

Աւերուած Յերիթաղը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«15» հունիսի 1993թ. Թիվ 314

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների պաշտպանության գործում ցուցաբերած արիության և խիզախության, մարտական առաջադրանքներ գերազանց կատարելու և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հատուկ նշանակության չոկատի զինծառայողների ցանկությանը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հատուկ նշանակության չոկատը կոչել օդչված հրամանատար մայոր Շահեն Զինավորի Մեղրյանի անունով:

Վ.Մ.Մանուկյան

Յատուկ Զօրամասը Շահէն Մեղրեանի անուամբ կոչելու
ՀՀ Պաշտպանութեան նախարար Վազգէն Մանուկեանի
հրամանագիրը՝15-ը յունիսի, 1993

համար անակնկալ էր **Շահէն Մեղրեանի** հրաւիրած մամլոյ ասուլիսը: Ինչպէ՞ս է նա յայտնուել Երեւանում, չէ՞ որ «որոշուած» էր, որ նա Շահումեանից պիտի դուրս չգայ: Եւ իր ասուլիսում Մեղրեանը յայտարարեց, որ «Շահումեանը յանճնուեց քաղաքական հաշուարկների արդիւնքում», որին մենք հանգամանալից անդրադարձել ենք նախորդ բաժնում:

Մուտքի իր խօսքով նա չձգտեց արդարանալ, ձի արդարանում է մեղաւորը: Նա մամլոյ ասուլիսում եւ հեռուստատեսութեամբ պարզապէս յայտարարեց, որ անտեղի են Շահումեանի անկման վերաբերեալ ծաւալուող խօսակցութիւնները: Շահումեանի անկումը բարձր իշխանութիւնների վարած քաղաքական անհեռատես ռազմավարութեան բնական արդիւնքն է: Այդ իշխանութիւններն էին, որ ժամանակին Շահումեան չհասցրին խոստացած զէնքն ու տանկերը: Այդ սխալ քաղաքականութեան հետեւանքն էր, որ Շահումեանը պահող ջոկատները, ինչպէս եւ Արցախի միւս ջոկատները, դեռեւս միաւորուած չեն միասնական բանակի մէջ, որպիսին ստեղծուեց միայն Շահումեանի եւ Մարտակերտի անկումից յետոյ: Յարձակուող թշնամու կանոնաւոր բանակի դէմ մեր ջոկատները չէին կարող կռուել: Ահա սա է ճշմարտութիւնը:

Գաղտնիք չէ, որ Շահէնն ի սկզբանէ գործել է Հայաստանի այն ժամանակուայ իշխանութիւնների նպատակին չհամընկնող ծրագրով եւ ընթացքով, քանզի վերջիններս գործում էին ոչ թէ անկախ քաղաքական սուբյեկտի կարգավիճակով, այլ իրականացնում էին դրսի զանազան «կենտրոններ»ի եւ ուժերի կամքը. քաղաքական պատգամները թելադրւում էին դրսից եւ բնականաբար չէին բխում մեր երկրի շահերից: Սա փաստօրէն նշանակում էր հայրենավաճառութիւն: Օրուայ իշխանութիւնների ռազմավարութիւնն առհասարակ Հայաստանի եւ հայութեան դէմ էր ուղղուած եւ նպատակ ունէր իշխանութեան պահպանումն ամէն գնով: Այդ իշխանութիւնները հակադիր էին պետութեան եւ հայրենիքի հայոց դարաւոր իդէալին: Անփորձ հոգեբանութեան տէր մարդկանց հասկանալի չէր այդ հանգամանքը՝ Հայաստանի բարձրագոյն իշխա-

նուիրեալները, որոնց համար երկրի անվտանգութիւնը պիտի լինէր սրբութեան պէս մի բան, ինչպէ՞ս կարող են գործել արտաքին ուժերի թելադրանքով: Պարզապէս պատերազմական պայմաններում, որոնք անմիջական չարունակութիւնն էին 88 թուականի ազգային ոգու վերելքի, չատ բարձր էր ազգային ազատագրական ուժերի ակտիւութիւնն ու զօրութիւնը եւ իշխանութիւններն այն ժամանակ ի վիճակի չէին ընկճելու այդ ոգին: Իշխանութիւնների ջանքերն առաւելաբար ուղղուած էին ՀՅԴաշնակցութեան, առաւել եւս՝ շահումեանցի մարտիկների եւ Շահէն Մեղրեանի դէմ, որոնք վճռականօրէն դէմ էին Շահումեանը որպէս «խանգարող պերիֆերիա» մի կողմ ձգելու մտադրութեանը:

«ԴՈՒՔ ՄԵՐ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏՆ ԷՔ»

Շահէնը հոգով առողջ եւ գործնական մարդ էր եւ մեծ տեղ չտուեց իր անուանն ուղղուած չարախօսութիւններին:

Եւ նա տէր եղաւ հեռուստատեսութեամբ արած յայտարարութեանը. «**Շահումեանը զաւթուած է, բայց պարտուած չէ: Մենք կը չարունակենք պատերազմն ու կ՛ազատագրենք մեր հայրենիքը**», ու մի կողմ դնելով անձնական վիրաւորանքն ու ասեկոսէները, միայն իրեն յատուկ գործնական եռանդով ձեռնամուխ եղաւ հայդուկային ջոկատի կազմաւորմանը եւ հայրենի հողում թշնամու դէմ սրբազան պատերազմ սկսելու գործին: **Շահումեանի ինքնապաշտպանութեան ուժերը վերակազմաւորելով՝ Շահէն Մեղրեանը մեր նորագոյն պատմութեան մէջ սկզբնաւորեց հայդուկային պայքարը**: Եւ ահա, աշխարհի եւ իր իսկ ազգի զօրավարների եւ թաւադ-ղեկավարների կողմից լքուած, հայրենազուրկ եղած **Շահէն Մեղրեանը** թշնամու թիկունքում ծաւալում է հայրենափրկիչ կռիւ, որպէսզի թոյլ չտա թուրքին յաղթանակի հասնել Կիչան-Սրխաւենդ գծի վրայ եւ մտնել Ստեփանակերտ, որը նոյնչափ իր հայրենիքն է, որքան Շահումեանը:

Թուրքը թալանում եւ աւերում էր մեր չէները, ունեցուածքը: Ճանապարհներին սկսեցին ականներ պայթել եւ

*տեխնիկա ու փոխադրամիջոց ոչնչանալ: **Խաչիկ Սահակեան.*** «Թչնամին իրեն յաղթող ճանաչելով՝ տեխնիկան չըջանից հանել եւ տեղափոխել էր Մարտակերտի ուղղութեամբ: Մեր յաջող գործողութիւններից յետոյ նրանք ստիպուած եւ բերեցին տեխնիկայի մի մասը: Ընդհանուր գործին սա արդէն մեծ օգուտ էր»:

***Շահէն Յովասափեանի** վկայութեամբ՝ **Նովիկի** գլխաւորութեամբ եկել, մտել են անտառ եւ պարտիզանական չարժում սկսել: Կենտրոնական կոմիտէն է աջակցել հայդուկային պայքար սկսելու որոշման իրականացմանը: Իրենք էլ օգնում էին հայդուկներին, տալիս էին սնունդ եւ անհրաժեշտ այլ մթերքներ:*

*Այսպիսով, **Վազգէն Մանուկեանի** հովանաւորութեամբ ստեղծեց զօրամաս, որի 99 տոկոսը չահումեանցի տղաներն էին: Իսկ 93-ի մարտի 13-ին հայդուկային միաւորումը պիտի դառնար զօրամաս՝ Յատուկ նշանակութեան ջոկատ՝ Պաշտպանութեան նախարարութեան վարձատրութեամբ եւ մատակարարմամբ:*

***Պօղոս Մեղրեանը** տեղեկացնում է, որ յունիսի 15-ին, երբ Շահումեանը թողեցին եւ դուրս եկան, Բէյրութից իրենց հետ կային մի երկու տղայ: «Երբ ասում էինք պարտիզան՝ նրանք չէին հասկանում դրա իմաստը եւ Շահէնը նրանց հաղորդ արեց եղրի հայերէն համարժէքը՝ հայդուկ: Եւ այդ տղան ասաց. «Ուրեմն՝ Դուք մեր Հայդուկապետն էք»: Եւ այդտեղից իր անունը կնքուեց՝ **ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏ**: Եւ իսկապէս, առաջին հայդուկապետն ինքն էր: Երկրորդ աշխարհամարտի փորձը կար եւ Շահէնն ասաց, որ մենք պարտիզանական պայքար պիտի մղենք եւ յաղթելու ենք: 93-ի յունուար-փետրուար ամիսներին մենք մեծամասամբ Սարսանգի տարածքում էինք գործողութիւններ անում: Դուք Գերանբոյի գումարտակի ջարդը լսած կը լինէք: Դա «Եղնիկներն»են արել: «Եղնիկ» խորհրդաւոր բառը հէնց այդտեղ է ծնունդ առել: Մեզ **Եղնիկ** էին ասում, մեր գաղտնախօսքը Եղնիկն էր, եւ այդ անունը սիրուեց... Անտառում էինք, կապի ծառայութիւնները տղաներից հարցրին, թէ ձեր գաղտնանունն ի՞նչ դնենք, Շահէնն ասաց՝ **Եղնիկ**»:*

*Սկզբնական շրջանում «Եղնիկները» հիմնականում կատարում էին հետախուզութիւն եւ շատ կարեւոր տեղեկութիւններ հաղորդում բանակի շտաբ՝ հակառակորդի ուժերի քանակի, դասաւորութեան, տեղաշարժերի մասին, որպէսզի պարզ լինի, թէ դրանց դէմ ինչ կարելի է հանել: Հայդուկները մտնում էին նաեւ բնակավայրերը: Շահումեանի անկումից յետոյ ձեռնարկած առաջին հետախուզութիւններից մէկնիրագործում է մարտիկների հնգեակը՝ **Զօհրապը, Շիմօն, Խաչիկը, Գարիկն եւ Ցովիկ դային** գննում են շրջանի տարածքը՝ հաշ-իւրտ կոչուած տեղում: Նրանց հայեացքի դէմ բացւում է մի տեսարան. մեծաթիւ թուրքեր եւ մեծ թուով անասուններ էին խառնուած իրար: Դրանք տարբեր վայրերից քշուած բերած անասուններ էին, որոնք աննկարագրելի ուրախութիւն, ցնծութիւն էին պատճառել դրանց նոր տէրերին: Բախումն անխմասա էր այդ մեծաթիւ թուրքերի հետ, սակայն Զօհրապն ու Շիմօն՝ արհամարհելով վտանգը, մօտենում են եւ երկու թուրքի փռում գետնին: Այդ թիւը այնուհետեւ պիտի օրեցօր աճէր:*

*Աստիճանաբար **անդրանց (դիւերսիոն)** բնոյթի գործողութիւնները յաճախացան: Տեխնիկայի վրայ էին յարձակւում եւ ոչնչացնում, մայրուղիներն էին փակում եւ խաթարում թուրքերի՝ ռազմաճակատի եւ թիկունքի կանոնաւոր կապը: Խափանել են զօրախմբերի եւ տեխնիկայի մուտքը Մարտակերտի շրջան եւ Քարվաճառ, եւ մեծ խնդիր դարձել թշնամու համար՝ իրենց վրայ բեւեռելով թուրք հրամանատարութեան ուշադրութիւնը եւ ստիպել նշանակալից ուժեր ուղղելու իրենց դէմ: Զօրաւորապէս նպաստել են յաղթանակին Մարտակերտում եւ յատկապէս՝ Քարվաճառի ազատագրմանը, որի մասին առ այսօր պատերազմի պատմաբանները լռում են: Անմիջականօրէն դուրս են արել թուրքերին մի շարք բնակավայրերից՝ Սարսանգի աւազանում: Ազատագրել են Տօնաշէնը, Հաթերքը, Մատաղիսը, Թալիշը եւ մի շարք բնակավայրեր: Պարբերական գործողութիւններ են իրականացրել դէպի Սարսանգ, Գիւլիստան եւ Շահումեանի այլ բնակավայրեր:*

ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՌԻՒՆԵՐԸ

Մամիկ Ջանունցի *հաւաստմամբ՝* «Առաջին գործողութիւնն էն ա ըլել, որ **Նովիկը եւ** գառնեցի **Խաչատրեան Ռոմիկը** մի տրակտոր են թխել, դրանից յետոյ՝ ըստէ-ընդէ՝ Թալիշի վրայ ենք դիւերսիա արել, Սարսանգի վրայ ենք դիւերսիա արել... Դիւերսիաներ ենք արել տհենց, մաշիններ ենք թխել, Ումուդլուին ենք թխել: Դիւերսիոննի գրուպա է եղել մերը: Մենք էլ հետեւակ էինք, տեխնիկա չենք տարել-պիրել, էնա մաշիններին թխել ենք, թողել եկել: Մեր ամենակուճուրը **Սուղեան Դաւոն** ա եղե, **Աղաջանեան Վրէժիկն** ա եղել»:

Հայդուկային խմբերը խնդիր ունէին Շահումեան եւ Մարտակերտ թափանցած թշնամուն հանգիստ չտալ, քանի դեռ նա դուրս չէ շպրտուած Արցախից: Գրաւելով հայոց գիւղերը՝ թուրքերը զբաղուած էին թալանով եւ աւերածութեամբ: Պէտք չէր թոյլ տալ, որ լկտիացած թշնամին անպատիժ կերպով տանի այդ հարստութիւնը:

Հայդուկները Նովիկ Գիւլումեանի հրամանատարութեամբ առաջին գործողութիւններիցմէկը ձեռնարկում են Նապատ սրբավայրի չրջակայքում: Հետախուզութեան ընթացքում յայտնաբերել էին մեր բռնագաղթեալների դիակները ճանապարհների վրայ: Նրանք յընթացս հետախուզութեան՝յուղարկաւորում էին զոհեալներին: Այսպիսով հասնում են Նապատ: Այստեղ էր կուտակուած նաեւ Շրջանի հարստութեան գլխաւոր մասը՝մեքենաներ, կայք եւ այլն, որոնք ենթարկւում էին թալանի: Հայդուկները որոշեցին անակնկալ հարուածել թալանողներին, որպէսզի նրանք, ովքեր վախ չունեն Աստծուց, գոնէ մարդկանցից վախենան: Թշնամուն այդտեղ խփում են եւ հեռանում: Թուրքերն արդէն զգում էին, որ այստեղի միանձնեայ տիրակալն իրենք չեն:

Վերին Շէնի աղբիւրների մօտի Պըհող վայրը *թուրքերը վրանային «քաղաք» էին դարձրել: Օգոստոսի 28ին հայդուկների ջոկատը 17 հոգով,* ***Նովիկ Գիւլումեանի*** *հրամանատարութեամբ գիշերը հասնում է Վարարակն գետի ակունքները, որտեղ թուրքի վրաններն էին, եւ լուսաբացին անակնկալ*

յարձակումով ոչնչացնում վրանաբնակների մի մասին՝ մի քանի տասնեակ թուրքերի: Քառասունից աւել թուրքերից ոչ ոք չի յաջողում փախչել: Մեր տղաներից վիրաւորւում է Թիֆլիսեցի ***Էդիկ Մելքոնեանը:***

Յաջորդ գործողութիւնը կատարւում է ***Գիւլիստանում,*** *սեպտեմբերի 20ին: Երբ աւարտել էին գիւղերի թալանը եւ երկրի երեսին բան չէր մնացել իւրացնելու, թուրքերը սկսում են հողի տակից հանել հայերի աշխատանքի արդիւնքը: Նրանք բեռնատարներով գալիս են հայերի մշակած կարտոֆիլը հանելու: Հայդուկները գործողութեան ծրագիր են մշակում՝ ծուղակ պատրաստելով թշնամու համար:Մի մեծ խումբ Գիւլիստանից դէպի Կարաչինար է ուղղւում կարուկ ոլորաններով՝ թշնամուն ծուղակի մէջ գցելու համար: Խուճապ առաջացնող միւս խումբը Գիւլիստանի մօտի բարձունքներից սկսում են հզօր հրաձգութիւնը թալանողների վրայ: Թուրքերը երբ դեռ առաջին պարկերն էին բարձում մեքենաների վրայ, հանդիպակաց բարձունքներից որոտացող հայդուկների հրազէններից ահաբեկ, անասելի խուճապով խրխափորի անտառային միակ ճանապարհով դիմում են փախուստի: Պահապան զինուորներն անգամ չեն հասցնում զէնքի դիմել: Խրխափորի ճանապարհին դարանակալ սպասում էր 20 հոգիանոց մի զինեալ ջոկատ* ***Սերգէյ Ջալեանի*** *գլխաւորութեամբ: Խփում են մօտ 11 աւտոմեքենայ 54 թորք եւ վերցնում մեծ աւար եւ տանում իրենց հետ, որքան կարող էին: Այդ օրը միայն մի թուրք փրկուեց:*

Ջոկատն աւելի է զօրեղանում, հայդուկային կռիւներն աստիճանաբար դառնում են ծաւալուն եւ ինքնավստահ: Ազատամարտիկները գրաւում են Վերին Շէնի եւ Շահումեանի միջեւ գտնուող ադրբեջանական ուղեկալը: Խփում են ռազմական տեխնիկա (երեք ռազմական մեքենայ) եւ 10 զինուոր:

Հոկտեմբերի 21-ին Սարսանգ-Հաթերք ճանապարհի վրայ հայդուկները ոչնչացրին վառելիք փոխադրող չորս բեռնատար մեքենայ, սպանեցին 9 ասկեար:

Նոյեմբերի 7-ին թուրքի կողմից բռնագրաւուած Շահումեանի շրջանում գործող հայդուկային խմբերը ***Նովիկ***

Գիւլումեանի եւ Յակոբ Խիդիրեանի գլխաւորութեամբ երկու յայող գործողութիւն իրականացրին: Նրանք ի սպառ ոչնչացրին Շահումեանի շրջանից դէպի Վերին Շէն տանող ճանապարհի վրայ գտնուող Սպիտակ աղբիւրի ուղեկալը, սպանեցին տասը ասկեար, ոչնչացրին երեք մեքենայ: Մի քանի օր յետոյ նոյն տարածքում սպանեցին 17 ասկեար, ոչնչացրին հինգ զինուրական մեքենայ: Հայկական խմբերը շարունակում են պայքարը Գիւլիստան գաւառը զաւթած անօրէնների դէմ:

Բագրատ Ուլուբաբեան. «Այս տարօրինակ պայքարը գլխաւորում է հայրենանուէր **Շահէն Մեղրեանը**, որի դէմ ամիսներ առաջ Գերագոյն խորհրդի նստաշրջանում բարբաջում էր մի ծուռբերան»:

*1992-ի նոյեմբերին սկսուած յարձակումը Մարտակերտի շրջանում յետաձգուել էր: Այն պէտք է վերսկսուէր ձմռան կէսին: **Շահէն Մեղրեանն** այդ օրերին ժամանեց Երեւան: Նա հանդիպեց ՀՅԴ ղեկավար անդամների հետ՝ փորձելով լուծել մի շարք հարցեր: Ազգի եւ հայրենիքի համար ճակատագրական ժամանակներում ՀՀ իշխանութիւններն անիմաստ պայքար էին ծաւալել Դաշնակցութեան դէմ: Տարբեր կուսակցութիւնների պայքարը կարող էր դառնալ համազգային աղէտի պատճառ: Ազգը կիսւում, պառակտւում էր եւ իսկական թշնամուն մոռացած իրարակերութեան անիմաստ պայքարում պարտւում եւ սպառւում էր աստուածատուր զօրութիւնը, որով պիտի պաշտպանուէինք թշնամուց, երկիր կառուցէինք եւ մշակոյթ ստեղծէինք: Դաշնակցութիւնը խնդիր ունէր ամբողջ ժողովրդին համակելու պայքարի բնապատմական պահանջով, համախմբելու բոլոր ուժերը եւ կենտրոնացնելու ընդդէմ թշնամու: Եւ ինչո՞ւ մեր միաբանութիւնը չարտայայտուէր ճակատագրական, պատմութեան անկիւնադարձային պահին եւ բոլորս չհամակուէինք միեւնոյն գաղափարներով, նպատակով...*

*Ազգային կեանքում, թւում է, առաւել հասկանալին պիտի լինէր **միաբանութեան գաղափարը** եւ առաջնահերթ խնդիրը՝*

ազգային **համագործական դաշտի ստեղծումը**: Մի՞թէ կարող է հայ լինել, ով ժժբախտութիւն կ՚ունենար ցանկանալ իր հայրենիքի կորուստը: Սակայն իրականում ազգային միաբանութիւնը եւ համագործնէութիւնը հայերիս համար, տարածաշրջանի իւրայատկութեան թէ մէկ այլ պատճառով, միշտ եղել է ամենադժուարինը: Մեր կենսափորձի սահմաններում, կարող ենք ասել, որ այս երկու իրողութիւնների՝ միաբանութեան եւ համագործունէութեան հիմքը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից սահմանադրուած ազգային ճշմարիտ հաւատքն է՝ նրա դաւանած ճշմարտութիւնների եւ բարոյականութեան գործնական կիրառումը: Դրանք բիւրեղանում եւ կեցութիւն են ստանում ազգային Եկեղեցում, որտեղ մաքրւում է մարդու զգացմունքային դաշտը: Մարդկային եսակենտրոնութիւնն ու աթեիստական դիրքորոշումը երբեք հնարաւորութիւն չեն տալիս ստեղծելու ոչ միայն գործունէութեան համազգային դաշտ, այլեւ սովորական **լծակցութիւն** ընկերոջ կամ բարեկամի հետ: Աստուածապաշտ մարդն իր ընկերոջն ընդունում է որպէս Աստծոյ արարածի եւ նրան սիրում է իւր անձի պէս: Ազգասիրութիւնն առաւել եւս հաւատքից է բխում եւ զօրանում, զի ամէն ազգ մի հաւաքական անձ է, միասնութիւն եւ ոչ թէ անյաղթահարելի հակասութիւնների թնջուկ: Բնական, ազգակցական կապն անգամ նշանակութիւն չունի, եթէ համազգիների մէջ չկայ միաբանութիւն:

Շահէն Մեղրեանն ի ծնէ ունեցել է չնորհներ, որոնք գործնական դրսեւորումներ են ստացել ընտանեկան եւ դպրոցական դաստիարակութեան ընթացքում, որի մասին մենք արդէն գրել ենք: Այստեղից էլ հասկանալի է Շահէնի խաղաղ բնոյթը, նրա համբերատարութիւնը, համեստութիւնը, աննկունութիւնը եւ հաստատակամութիւնը:

Իսկ այդ ժամանակ ՀՀՇական մամուլը եւ հրապարակախօսները «խաղաղութիւն» էին քարոզում: Դաշնակցական մամուլը ստիպուած էր պաշտպանելու ազգային ազատագրական պայքարի սկզբունքները եւ ռազմավարութեան դրոյթները քաղաքական աղանդամոլութիւնից: Արցախեան ազատագրական

պատերազմը խորութեամբ եւ բազմերես վիճակով արտացոլւում էր այդ մամուլի միջոցով: «Ազատամարտ» ու «Երկիր» պարբերականները լուրջ վերաբերմունք էին ցուցաբերում պատերազմի ռազմավարութեան եւ մարտավարութեան հարցերին, հերոս ազատամարտիկների դիմանկարներ ստեղծում եւ դրուագաշարեր՝ վճռորոշ գործողութիւնների մասին, ընթերցող լայն զանգուածներին մատուցելու համար պատերազմական գօտուց ապահովում էին ճշմարիտ լրատուութիւն: Լրագրողներն ազգային պայքարի մնացեալ նուիրեալների հետ յայտնւում էին ամենավտանգաւոր բնագծերում: «Ազատամարտ»ի արցախեան թղթակից **Նորայր Մարութեանը** 93-ի սկզբին զոհուեց Մարտակերտի ռազմաճակատում: Հայրենական մամուլը բնականաբար մեծ ուշադրութեամբ էր հետեւում Շահումեանի շրջանի իրադարձութիւններին եւ այնուհետեւ՝ Շահէն Մեղրեանի նախաձեռնած հայդուկային պայքարին: Զբաւարարուելով նշեալ պարբերականներով՝ Դաշնակցութիւնը հիմնել եւ հունաւորել է այլանուն պարբերականներ՝ «Ուրբաթ», «Մարտիկ», «Ասպար», «Միտք»... Դաշնակցութեան արտասահմանեան պարբերականները՝ «Դրօշակ», «Հայրենիք», «Ասպարէզ», «Ալիք»... ոչ միայն արտատպում էին Հայաստանեան մամուլի կարեւոր նիւթերը, այլեւ իրենց հնարաւորութեան սահմաններում պարբերաբար լրագրողներ էին գործուղում Արցախ: Շահումեանի ժողովրդի կեցութիւնն ու հայդուկային ջոկատի գործողութիւններն իրենց բազմակողմանի լուսաբանումն են ստացել «Մռաւի ղօղանջներ» պարբերականում, **Դերենիկ Պետրոսեանի եւ Կիմ Ղահրամանեանի** անդուլ ջանքերով: Դերենիկ Պետրոսեանի մահից յետոյ պարբերականը գործել եւ գործում է Կիմ Ղահրամանեանի խմբագրութեամբ: Հայրենիքի եւ տարասփիւռ շահումեանցիների հաւաքական խորհրդաճայնն է այս պարբերականը, շահումեանցիների հոգու լոյսերի խտացանը: Տակաւին պատերազմական տարիներին, թարմ հետքերով պարբերականն անդրադառնում էր մարտնչող մարտիկներին առընչուող հարցերին, ժամանակին լուսաբանում իրա-

դարձուածները, յօդուածներ տպագրում գործողութիւնների եւ անցքերի մասին, բացայայտում չահումեանցի հերոս մարտիկների կերպարները:

Շահումեանցիներն աչքի են ընկել նաեւ ՀՀ սահմանների պաշտպանութեան գործում ***Խաչիկ Սահակեան.*** «1992 թ. դեկտեմբերին **Շահէնը Շուբա Գզիրեանին, Արթուր Յակոբեանին եւ ինձ,** մօտ 30 հոգու հետ, ուղղաթիռով ուղարկեց Կարմիրի չրջանի **Վահան** գիւղ: Այնտեղ ռազմական լուրջ գործողութիւնների պատրաստ չէին, պաշտպանութիւնը տարերային էր եւ թուրքերը մեր դիրքերից 3 տանկ էին տարել՝ սպանելով քնած անձնակազմին: Իրավիճակին ծանօթանալուց յետոյ ծրագիր մշակեցինք: Ես ու Արթուրը հանդիպեցինք չրջանի Կոմենդանտին. այսպէս էին կոչում հրամանատարին: Առաջարկեցինք առանց աւելորդ ուժերի դրաւել դիմացի բարձունքները եւ դիրքերն առաջ տանել դէպի Արծուաչէն: Մեզ առարկեցին, թէ չարժէ բզեզի բոյնը քանդել, եւ մենք այլեւս չտաք չգնացինք: 20 օրից մեզ տեղափոխեցին»:

Յակոբ Պօղոսեան *(լուսանկարիչ-օպերատոր).* «92 թուականի նոյեմբերի վերջն էր: Պիտի այդ մի քանի օրը թռչէինք Շահումեան, բայց չէր ստացւում: Մէկ ամիս անցաւ, եւ երբ ի վերջոյ եղանակը թռիչքային էր, պաշտպանութեան նախարար **Վազգէն Մանուկեանը** կապուեց եւ ասաց, որ Կարմիրի Վահան գիւղի դիրքերում զինուորներին սպանել են, պէտք է օգնութեան հասնել: 92-ի դեկտեմբերի 30-ն էր: Գիչերը թուրքերը մտնում են մեր պահադիրքերը եւ մորթում մեր տղաներին: Հրահանգ եկաւ, թէ պիտի գնաք Կարմիր, վիճակն այնտեղ ծանր է, ժողովուրդը խուճապի մէջ է, փախչում են: Վահան գիւղից փախել էին Կրասնոսելսկ: Մենք գնացինք այնտեղ: Երբ հասանք, իմացանք, որ Հայաստանի չոկատներն այդտեղից փախել են: Այդտեղ մնացել էին Զարենցաւանի տղաները: Այդ տղաներն էլ ամէն ինչ, զէնք-զինամթերք հաւաքել էին եւ իջել Կրասնոսելսկ, եւ ասում էին, թէ Նոր տարի է, մենք տուն ենք գնում: Եւ գնացին:

Մինչեւ յունուարի 10-ը այդ դիրքերը մենք պահեցինք: Մենք

ասելով՝ ես ի միտ ունեմ տղաներին, ես դիրքապահ չեմ: **Շահէնն էր, Շուբան, Քեաթի Արթուրն էր, Խաչիկն էր, Վանիկն էր, Աբովեանի տղաներն էին, Լիովան էր,** որ մահացաւ, Երքէչի Լիովա են ասում, **Վազգէնն էր,** որ անհետ կորաւ:

Միայն յունուարի տասից յետոյ եկանք օդակայան եւ այնտեղից թռանք «Եղնիկներ»:

1992-93 թթ. դժուարին ձմեռը պարտիզաններն անցկացրին անտառներում եւ Մռաւի փեշերին՝ ապաւինելով հայրենի լերանց, անտառների եւ վանքերի ներքին ջերմութեանը: Նրանց ներկայութիւնը Շահումեանի անտառներում բաւական էր թշնամուն մշտական սարսափի մէջ պահելու համար: Հիւսիսային Արցախի երկարատեւ լեռնային ձմեռը գրեթէ անհնար էր դարձնում հետեւակ երթեւեկը: Ուստի անտառային կածանների ճամփեքին անակնկալ յայտնուող հին գիւղատեղիները, վանքերն ու մատուռները հայդուկների համար մի տեսակ փրկութեան փարոսներ էին եւ նրանց հանգիստ, հոգեկան կայունութիւն եւ ուժ էին պարգեւում յոգնաչատ չարչարանքների դիմաց, որ կրում էր նրանցից ամէն մէկը: Նոյնիսկ խաղաղ պայմաններին ձմռանն այս լեռնաստանում գոյատեւելը խաղ ու պար չէ եւ վիճակւում է միայն խիզախ որսորդներին, ում կենդանիներ որսալու կիրքն է միայն տանում դժուարամատչելի վայրեր: Պատահական չէ, որ պատերազմական բախումների ժամանակ լաւագոյն հետախոյզներն ու ուղեկցորդները որսորդներն էին: Բայց ափի նման հ՛լ ուրիշ ո՞վ գիտէ հայրենի բնաշխարհը:

*Գրագէտ **Ռուբէն Յովսէփեանը** մի հոգենկար դրուագ է գրի առել պարտիզանների եւ Շահէն Մեղրեանի մասին: Ահա՛ մի հատուած.* «Ես հիմա չեմ կարող պատմել այնպէս հրաշալի, ինչպէս Շահէնը պատմեց Երիցմանկաց եկեղեցու մասին, որ անակնկալ յայտնուել էր հայդուկների նահանջի գնդակոծուող լեռնանտառային ճանապարհին: Բայց ես նրա նկարագրումով պարզորոշ տեսնում եմ մարդահասակ ձեան չերտով չրջապատուած այն եկեղեցին, որի չորս բոլորը, գաւիթը մաքուր ու չոր էր սակայն, ինչպէս մաքուր ու չոր է լինում գետինը

գարնանը, ձնհալից յետոյ: Եկեղեցու պատե՞րն էին ջերմուխիւն արձակում, թէ՞ Աստուած էր մի կտոր գարուն իջեցրել երկիր՝ օգնելու տառապեալներին: Իսկ մասրենիներից կախ-կախ ծանրացել էին ձեան բարուրից դուրս պրծած կարմիր ողկոյզները:

Եւ ուրիշ ոչինչ: Պատմեց եւ արտասուեց:

Այդ պատկերը կարո՞ղ էր Հանգիստ տալ նրան: Այդ պատկերը կարո՞ղ էր թոյլ տալ, որ ամփոփուի վիրաւորանքի պատեանի մէջ ու հեռանայ...»:

Երիցմանկանց վանքի այդ պատկերը եւ ամբողջ Շահումեանն այսօր հանգիստ չեն տալիս աշխարհասփիւռ գիւղիս-տանցիներին, որոնք տոչորւում են կարօտաբաղձութիւնից եւ կրաւորաբար հալւում ահաւոր կորստեան ցաւից: Եւ ինչո՞ւ միայն գիւղիստանցիները. ո՞ր մէկ ինքնագիտակից հայն է այսօր անտարբեր Գիւղիստանի, Նախիջեւանի, Մեծ եւ Փոքր Հայքի, Կիլիկիայի գերութեան նկատմամբ... Շահումեանի անտառներում Երիցմանկանց վանքի հեքիաթային պատկերի նման բազմաթիւ վայրեր կան, որոնք հիմա անարգուած վիճակում տնքում են թուրքի ոտքի տակ: Նրանք մարդկային կորուստների հետ միասին հալումաշ են անում օտար երկրներին ապաւինած Գիւղիստանի զաւակներին: Անասելի է այս ցաւը եւ դրա պատճառողների նախնիները պէտք է որ հանգիստ չունենան իւրեանց հանգստարաններում:

Շահէն Մեղրեանը լաւ է պատկերացրել այս ամէնը եւ նա ու իր շահումեանցի ընկերներն ինչպէ՞ս մոռանային դրախտային երկիրը եւ հանգիստ սրտով աչք փակէին այդ ամէնի հանդէպ, որ անարգ աւարառուն տէր դառնար իրենց պատկանող Աստուածատուր ունեցուածքին:

Ու յանուն հայրենի բնաշխարհի ազատագրման՝ Շահէն Մեղրեանի հայդուկ ջոկատը շարունակում է իր սրբազան պայքարը: Եւ շուտով ամբողջ աշխարհին յայտնի դարձաւ, որ Շահումեանը կայ, Շահումեանը մարտնչում է ու մարտնչող շահումեանցիներին զօրավիգ են ազգի առողջ ուժերը ո՛չ միայն հայրենիքում, այլեւ նրա սահմաններից դուրս՝ Սփիւռքում: Հեռաւոր ԱՄՆի Սան Ֆրանցիսկոյի Հայ Յեղափոխական

Դաշնակցութեան կոմիտէութեան նախաձեռնութեամբ ստեղծուում է զօրակցութեան եւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչներից կազմուած յանձնախումբ՝ Շահումեանի շրջանում մղուող հայդուկային պատերազմի մասնակիցների ընտանիքներին օժանդակութիւն ցոյց տալու համար:

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՋՈԿԱՏԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Զարզանդ Մարտիրոսեանի *հաւաստմամբ՝ ամէն տեսակի դժուարութիւններ եղել են, սակայն մարտիկները թէկուզ մի հասարակ հայհոյանք իրար չեն տուել:* «Ինչքան որ եղել ենք պարտիզանական ջոկատում, որին միացել եմ 93-ին, միշտ ուրախ եմ եղել, որ գոյութիւն է ունեցել այդպիսի ազգ՝ այդպիսի անկիւնում: Խաղաղ եւ համերաշխ ենք եղել իրար հետ: Դա էլ եղել է Արցախի հողի համար:

Ով կարողացել է շահումեանցի տղաներին հասկանալ՝ ներդաշնակուել են եւ կատարել իրենց պատմական սխրագործութիւնը: Հայաստանի տարբեր անկիւններից շատ տղաներ են եկել եւ զոհուել: Նրանք այն տղաներն էին, ովքեր հասկանում էին շահումեանցիներին»:

Մամիկ Զանուեցի *խօսքով, թուրքերը միշտ էլ զգացել են հայդուկների ներկայութիւնը, բայց տեղները ստոյգ չեն իմացել:* «Արագ խփելուց ենք եղել եւ տեղներս փոխելիս: Սկզբում եղել ենք Ըրտատափում: 16 հոգի էինք: Ըրտատափից յետոյ տեղափոխուել ենք Եղակեր: Երեք տեղ, այդ թուում Գէօգթափայում, բազա էինք պահում: 94-ին աւելացրել ենք Թալիշում: Տարբեր տեղեր տարբեր դումարտակներ ենք եղել: Սկզբից քիչ էինք, յետոյ Թալիշից էլ եկել են, Հայաստանից՝ «Մեծն Տիգրան» ջոկատը, «Արաբօ» ջոկատն էլ, Սփիւռքից էլ մարդիկ կային, **Զորջ Բօղոսեանն** է եղել»:

Նովիկ Գիւլումեանի *հեղինակաւոր կարծիքով՝ թուրքերը համարեա միշտ հայդուկների տեղն իմացել են, ուղղակի նրանք անտառի մէջ կողմնորոշուել եւ այդքան խորանալ չէին կարող, եւ ի զօրու չէին մեր մարտիկների հետ յաճախակի մարտերի*

մէջ մտնել: «Մենք այդտեղ մեծացել ենք եւ նրանք մեր դէմ չէ-ին կարող կռուել: Մերոնք էլ հիմնականում որսորդ տղաներ էին եւ թուրքերը չէին համարձակւում մտնել անտառ: Պատա-հում էր, որ թուրքերը գալիս հասնում էին մինչեւ բազա: Եր-բեմն գալիս էին, մառախուղի ժամանակ մոլորւում, չչկլւում եւ մտնում եղակեր, բազա: Մի անգամ մեզ հէնց տեսան՝ յարձա-կուեցին, եւ մարտի մէջ մտանք: Էդ ժամանակ տեղում **Շուն Շահէնն է** եղել, **Քեօխեան Գուրօն է** եղել, **Սերգէյն է** եղել: Ետ ենք քշել: Դա 93 թուականին էր»:

*Հետախոյզ **Շահէն Սայիլեանը** (Այգեստանից) հայդուկներին միացել է 93-ի փետրուարից: Նա տեղանքը գիտէ իր ափի նման, իրեն քարտէզ պէտք չէր, կարող էր ասել, թէ այսի՛նչ բարձունքը ո՛ր համարն է: Մանկական տարիներից միշտ ոտքով չրջել է այս սարերում եւ անտառներում: Շահէնի մեկ-նութեամբ՝ հետախոյզի մասնագիտութիւնը դժուարին է, ամէն մարդու գործ չէ: Անդրանիկ գործողութիւն կատարողը հե-տախուզութիւնն է: Շահէնի նման հետախոյզների համար միանգամայն պարզ է, որ եթէ ձեռնարկում ես այդ գործը, պիտի իմանաս ո՛ր ճանապարհով գնաս, որո՛վ ետ դառնաս, ասենք՝ գնացած ճանապարհով ետ պիտի չդառնաս, թշնամիդ չի թողնի, կարող է ետ դարձի ճանապարհը ականապատել, կամ էլ գալ, դարանակալել եւ բռնել: Եթէ այս ուղղութեամբ գնում ես, պիտի ճշգրիտ տեւեալներ բերես. քանի մարդ են, քանի տեխնիկա կայ, ինչ զէնքեր ունեն, որ դու նրան հակադրես քոնը եւ յաղթանակի հասնես:*

*Դժուարութեամբ գնում ես, դժուարութեամբ ետ դառնում, սոված ես մնում, չես քնում: Սրանք հետախոյզի կեանքի անբաժան մասն են: Սակայն, ըստ Սայիլեանի, որին կոչում են նաեւ **Շուն Շահէն**, դրանք դժուարութիւն չէ, դժուարինն այն է, երբ ձախողում ես:* «Մեզ համար դրանք դժուարութիւններ չեն, ինձ համար, մեր տղաների համար: **Յովիկ դային է, միւս Յովիկն է, Բոան է (Հախունց Իւրան), Ջանունց Վալերան է (Վալօ):** Մեզ համար դրանք դժուարութիւններ չեն: Էն ա դժուարը, որ չահումեանցիները ներկայ պահին իրենց հողի

վրայ չեն: Ինձ համար շատ է դժուար, որ իմ հայրենի գիւղում չեմ»:

Զարզանդ Մարտիրոսեանը *Շահէն Մեղրեանին ճանաչել է մի կարճ ժամանակ: Եղել են միասին միայն Մատաղիսի գործողութեան ժամանակ: «Նա լեգենդ է: Ես արցախեան չարժման համար եմ ասում: Նա որպէս ե՛ւ մարտիկ է շատ լաւը եղել, ե՛ւ որպէս մեզ ոգեշնչող, ե՛ւ որպէս արդար մարդ: Որովհետեւ նա չէր նայում, թէ ով է դիմացինը»:*

Հէնց որ Զարզանդը ժամանում է հայդուկների ռազմակայան՝ ***Մեղրեանն*** *այս հարցերն է տալիս.*

– Դու որտեղի՞ց ես եկել, գիտե՞ս կռիւն ինչ բան է:

– «Գրադ»ի նշանառու եմ եղել:

– Դու գիտե՞ս, որ մենք ոտքով շատ ենք գնում, դու կարո՞ղ ես:

– Կը փորձեմ, եթէ չստացուի՝ կը հեռանամ: Ինձ համար հեռանալը շատ ցաւալի կը լինի, բայց կը հեռանամ:

Հայդուկ հետախոյզներն իրօք առանձնայատուկ էին իրենց ոգով, ոճով, հոգեկան նկարագրով: Գիշերը երբ գործողութեան էին գնում, իրարից մէկ մետրից աւել կարելի չէր հեռանալ, ձայն տալ չէր կարելի: Ուրեմն, անմիջաբար մէկ մետր հեռաւորութիւն պիտի պահպանէին ետ չմնալով եւ հասնէին նպատակակէտ, որպէսզի մնային աննկատ: Եւ ամենակարեւորը՝ այդքան երկար ճանապարհին վիրաւոր պիտի չթողնէին, անպայման պիտի անվնաս հասնէին: Մէկ վիրաւորն արդէն գործողութիւնն անյաջողութեան կը մատնէր:

Եղել են տղաներ, որ չեն դիմացել, ետ են գնացել: Յատուկ մարզուելու համակարգ հետախոյզները չէին կիրառում, քանզի գործողութեան գնալն ինքնին մարզուել է: Այդ տարածքները լեռնային են եւ անտառածածկ եւ դրանցով հետախոյզները կարողանում էին օր ու գիշեր ճանապարհ անցնել լաւ բեռնաւորուած:

Գլուխ տասնիններորդ
1993-Ի ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՆՆԵՐԸ

ՀԱՑԴՈՒԿԱՑԻՆ ՋՈԿԱՏԸ ՄԵԾ ՁԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏԻՐԱԿԱԼ

Գործնական Շահէնը երկար ժամանակ պիտի չմնար մայրաքաղաքում, մանաւանդ որ ՀՀՇական իշխանութիւնները դարձել էին ամբարտաւան եւ նրանց հետ դժուար էր հարցերը լուծելը: Անհրաժեշտ էր ջոկատը համալրել, հանդերձաւորել եւ զինել բաւարար մակարդակով, որոնք նա կարգաւորում է կուսակցական մարմինների միջոցով:

1993 թուականի յունուարի 15-ին ***Շահումեանի պարտիզանական ջոկատը*** *թռչում է Մարտակերտի շրջանի հիւսիսային կէտերից մէկը՝* ***Արտատափ, երիցմանկունք*** *վանքից ոչ հեռու: Ծրագրուած էր սկսել Արցախի ազատագրութեան նոր փուլը՝ Մարտակերտի եւ Շահումեանի ազատագրումը թշնամուց:*

Ջոկատի կորիզը, ինչպէս նշել ենք, կազմում էին Վերին Շէնի տղաները՝ **Շուրա եւ Ֆեդօ Գալիբեաններ, Արթուր Յակոբեան, Մամիկ Ջանունց, Վալերի Ջանունց, Հայկ Վերդեան, Վալերի Ջլաւեան, Իւրա Հախունց, Գրիգոր Զարգարեան, Սարօ Աղաջանեան, Գուրիկ Քեօխեան, Յովիկ Յակոբեան: Հրամանատար՝ Նովիկ Գիւլումեան:** *Նովիկը Շահումեանում չարժման կազմակերպիչներից էր: Ջոկատում տղաներ կային Շահումեանի շրջանի այլ գիւղերից, նաեւ կամաւորներ Հայաստանից՝* ***Վազգէնը, Նուէրը, Կարէնը, Վանիկը Աբովեանից, Վահէ Բաղդասարեանը՝ Թալինի Կաթնաղբիւրից, Գրիգոր Գրիգորեանը՝ Սիսիանից:*** *Ջոկատի հիմնական մարտիկներից էին* **Արա Յովհաննիսեանը** *(Կամօ Յովհաննիսեանի եղբօր տղան),* **Լիովա Լալայեանը** *(Էրքէջից),* **Մարտիկ Նասիբեանը, Կամօ Յարութիւնեանը, Հայկ Խաչատրեանը, Իշխան Աղամալեանը** *(Կարաչինարից),* **Շահէն Սայիլեանը** *(Շուն)՝* **Այգեստանից** */Զայլուից/, Սեւան Նահապետեանը՝ Հրազդանից** *(ծնողները՝* **Վերին Շէնից),** **Պարգեւ Սաղաթելեանը, Սլաւիկ Բալայեանը, Շահէն Սեյրանեանը, Դերենիկ Սարգսեանը, Արմիկ Եսայեանը** *(Գիւլիստանից),* **Գեղամ**

Մուրադեանը՝ Բուզլուխից եւ *բազմաթիւ մարտիկներ, որոնց թւում՝ հարիւրից աւելի միայն Թալիշից:* ***Շտաբի պետը Սերգէյ Զալեանն*** *էր, սակայն նա 1992 թուականի նոյեմբերին վիրաւորւում է ականի պայթիւնից, կորցնում ոտքի թաթը: Զալեանը ապաքինւում է եւ մարտադաշտ վերադառնում 1993-ի ապրիլի սկզբին, Շահէնի զոհուելուց օրեր առաջ:* ***Շահէնի մարտական գծով տեղակալը Յակոբ Խիդիրեանն էր:*** *Ջոկատի կազմում կային Երեւանի բժշկական ինստիտուտից ուսանողներ, որոնք ե՛ւ ազատամարտիկ էին, ե՛ւ բժշկի գործ էին կատարում՝* **Սմբատ Ջամալեան, Մհեր Աղաջանեան, Ալբերտ Պօղոսեան, Գէորգ Ոսկանեան:** *Հիմնական բժիշկը* ***Արտակ Խաչատրեանն*** *էր: Նա զոհուել է Շահէն Մեղրեանի հետ միասին, նրա զոհուելուց յետոյ բժշկական գործը կազմակերպում էր Արտակի կինը՝* ***Արմինէ Նալբանդեանը:*** *Ուսանողներից առաջ եկել էր* ***Վահէ Բաղդասարեանը,*** *նրա մասին դեռ առիթ կը լինի խօսելու: Թիկունքի աշխատանքները կազմակերպում էին* ***Շահէն Յովասափեանը, Պետրոս Մեղրեանը, Գագիկ Ղուլեանը, Աշոտ Մնացականեանը*** *(բոլորը Գիւլիստանից),* ***Խաչիկ Սահակեանը*** *(Մանաշիդից),* ***Գեղամ Մուրադեանը՝*** *Բուզլուխից,* ***Արամ Հայրեանը, Ռուբիկ Ղարագեօզեանը, Արկադիա Գէորգեանը, Անդրանիկ Հայրեանը, Զարմիկ Խաչատրեանը*** *(բոլորը Շահումեան աւանից),* ***Սեյրան Դալլաքեանը, Սլաւիկ Բայունցը, Զարմիկ Վարդանեանը*** *(Թալիշից):*

Մարտակերտի ռազմաճակատում չարունակւում է 92-ի վերջից սկսած Հայոց բանակի հակայարձակումը, որով նախ թուրքերի առաջխաղացումը կանգնեցրին, ապա 93-ի սկզբից յաջողութիւններ արձանագրեցին: Հայդուկներն առաւել ջանքեր են ներդնում թշնամուն Արցախի հիւսիսում զգեստնելու գործի մէջ: Ճակատից «եղնիկները» մօտ 40 կիլոմետր կտրուած՝ թշնամու թիկունքում էին:

Տոհմիկ գարդմանահայ **Վանիկ Ասլանեանը** *ծնուել եւ ապրում է Աբովեանում: Շահումեանի կորստից յետոյ նա յայտնուեց Շամշադինում: Հօրաքրոջ տղան՝* **Վազգէնն** *էր*

առիթը, որ ինքը 93-ի յունուարին եկաւ Շահումեան: Այն ժամանակ մասնագիտական բաժանում դեռեւս չկար, յատուկ նշանակութեան ջոկատ էր:

93-ի յունուարի 20ին հետախուզական խումբը ***Վազգէն Առուստամեանի*** *գլխաւորութեամբ* ***Վանիկ Ասլանեանը, Վահէ Բաղդասարեանը, Կամօ Ցարուքիւնեանը, Նուէր Գաբրիէլեանը, Կարէն Մարտիրոսեանը*** *եւ* ***Անդրէն*** *մէկօրուայ ճանապարհ անցնելով՝ դուրս է գալիս Մաղաւուզ-Սարսանդ ճանապարհի վրայ. նպատակն այդ ճանապարհի երթեւեկի ինտենսիւութեան, տեխնիկայի, ռազմուժի քանակութեան հաշուառումն էր: Լուսաբացից մինչեւ ժամը տասը նրանց հայեացքի տակ էր ճանապարհը: Անակնկալ ճանապարհին յայտնուեց ՈւԱԶ մեքենայ, որը սպաներ էր տեղափոխում: Այդպիսի անակնկալներ չատ չէին լինում եւ այդ մեքենայի բացթողումը սխալ կըլինէր: Վազգէնը գոչեց. տղանե՛ր, ուշադիր, խփում ենք վիլիսին: Նոյն պահին որոտաց Վահէ Բաղդասարեանի նռնականետը եւ խփուած վիլիսը կանմգնեց: Վազգէնը մօտեցաւ կործանուած մեքենային որպէսզի փաստաթղթեր հանի, զի արդէն ներսը մարդ չկար, բոլորը սպանուած էին: Այդ պահին հասաւ ուղեկցող զրահամեքենան: Անդրէն նռնականետով կրակեց, սակայն չդիպաւ: Վազգէնը հրամայեց ետ քաշուել: Շտապ երկու հակահետեւակային ական դրեցին՝ եւ մտան անտառ: Շուտով այդ ականները պայթեցին, որովհետեւ հետեւազօրը փորձում էր հասնել խմբին: Հասան Թարթառ գետին, անցան եւ սկսեցին Տօնաշէն-Ջրաբերդ ճանապարհն ականապատել: Գործը վերջացնելիս առանձնակի հռնդիւն լսուեց: Վերեւ նայեցին եւ տեսան հակառակորդի երեք մարտական ուղղաթիռ պտտւում են այդ տարածքում: Իսկոյն իրենց նետեցին մօտակայ մի եղեւնու տակ եւ պատսպարուեցին: Վազգէնն ու Վահէն այդ պահին իրենցից առաջ ճանապարհն էին հետախուզում: Նրանք էլ թաքնուեցին, իսկ օդից ենթադրաբար Ջրաբերդի եւ երեքմանկուքի ամբողջ շրջանը նուրսերով հրակոծեցին եւ հեռացան: Երրորդ ուղղաթիռը թռաւ դէպի մեր ռազմակայան ինչ-որ մտադրութեամբ:*

Արդէն մութն ընկնում էր եւ տղաները առաւօտեան 4-ի կողմերը հասան ռազմակայան:

*93-ի փետրուար ամիսն էր, պիտի գնային հետախուզութեան: Քաչալ սարից պիտի իջնէին Մաղավուզ: **Վանիկ Ասլանեանն էր, Շահէն Սայիլեանը, Բոսը, Ջանունց Վալերիկը** եւ **Արսէնը: Շահէն Մեղրեանն** ասաց.*

- Պիտի հասնէք Մաղաւուզ: Ի՞նչ էք մտածում, կարո՞ղ էք:

- Զինաւորի՛չ, ճիշտ է, չատ է հեռու, ձմեռ է, չատ ձիւն կայ, բայց կը գնանք:

Գնացին դէպի Մաղաւուզ ոչ թէ կամրջով, այլ ջրերով: Հագուստները հանեցին եւ անցան: Իմացան որտեղ ինչ ուժեր կան, ստուգեցին մարդուժի քանակը, տեխնիկան: Եղարձին տեսան թուրքերի հետախոյզներն էլ դէպի մեր դիրքերն են գալիս: Թուրքերը պիտի գնային Ջրաբերդ, մեր տղաներն էլ Մաղաւուզի մօտ էին: Ուզում էին թուրքերին գցել աքցանի մէջ: Պատկերացնել կարելի է իրադրութեան դրամատիկութիւնը, երբ երկու կողմի հետախոյզներն էլ փորձառու եւ գերազանց պատրաստութիւն ունեն: Բախտի բերմամբ մեր տղաները նրանց հետախոյզներին չուտ նկատեցին: Թշնամու հետախոյզները երեք հոգի էին՝ մի ռուս գնդապետ եւ երկու թուրք: Թուրքերը նոր սկսել էին հետախուզութիւնը եւ չատ զգոյշ էին, մինչդեռ մեր տղաներն արդէն օրուկէս անտառումն էին, քնել էին, մրսել, յոգնած, ջարդուած ետ էին գնում: Շահէն Սայիլեանը Վանիկին ասաց. «Դու մնա՛, նայի՛ր կամրջին, ճանապարհին, մենք կ՚առաջանանք դէպի Երիցմանկունք: Դու նայի՛ր, մենք անցնենք, յետոյ մենք կը նայենք՝ դու կ՚անցնես»: Արդէն որոշել էին, որ դրանց այդտեղից անպատիժ պիտի դուրս չթողնեն, որովհետեւ իրենք վրիժառու էին, եւ չէին թողնի, որ դրանք գրաւեալ այս տարածքի վրայ ազատ շարժում անեն: Շահէնի, Արսէնի եւ Բոսի անցնելու պահին դրանք չրջադարձ արեցին եւ սկսեցին ետ գալ: Վանիկը չէր կարող ո՛չ ճայն տալ, ո՛չ որեւէ կերպ յայտնել: Պահն իսկապէս բախտորոշ էր: Եւ Վանիկի մտքի անասելի լարումից Շահէնը կարծես կենսա-

հոսանքով գլուխը թեքեց, գիտէր, թէ որ կողմն է Վանիկը, եւ դա էլ բաւական էր, որ Շահէնը նկատէր նշանը, որ դրանք գալիս են: Հեռու չհասցրին թաքնուել, ճանապարհի մօտ մի մեծ քար կար, մտան դրա տակ: Թուրքերը եկան դէմ-դիմաց: Դրանց հարցերը լուծեցին, երեքին էլ տեղում թողեցին եւ իրենք բարձրացան վերեւ: Թուրքերի մօտ նշանագրուած քարտէզ էլ կար՝ թէ որտեղ պիտի որոնեն մեր ռազմակայանը: Փառք Աստուծոյ, յաջող ստացուեց եւ գիշերուայ 3-4-ին վերադարձան ռազմակայան:

Այդպէս մի 5-6 անգամ պատահել է, որ մեր հետախոյզները հանդիպել են թուրք հետախոյզներին, բայց չեն թողել անցնեն, բոլորին կոտորել են: Մէկ ուրիշ անգամ առաջադրանքը մի բարձունքի հետախուզումն էր: Թուրք հետախոյզներն էլ դէպի մեր տղաներն էին գալիս: Թուրքերը 22 հոգի էին, աւտոմատները ուսներին՝ բարձրանում էին: Տղաներն ասացին.

- Ի՞նչ անենք, թողնենք անցնե՞ն:

Շուն Շահէնը վրդովուեց.

- Տղանե՛ր, սա առաջին դէպքը կը լինի իմ կեանքում, որ թուրքին տեսնեմ ու թողնեմ անցնի:

22-ին էլ վերացրին:

ՍԱՐՍԱՆԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

1993 թուականի փետրուարի սկզբին Մարտակերտի հիւսիսում վերսկսւում են մարտական գործողութիւնները: Արցախեան բանակը յարձակման անցաւ: Նպատակ էր դրուած՝ նախ ազատագրել Սարսանգի ջրամբարն ու հիդրոհանգոյցը, որն Արցախի համար ունէր ռազմավարական եւ տնտեսական մեծ նշանակութիւն: Շահէն Մեղրեանի ջոկատի խնդիրն էր՝ փակել Սարսանգ - Հաթերք -Գետաւան - Քեալբաջար ճանապարհը: **Սարսանգի** գործողութեան հիմնական նպատակը հակառակորդի թիկունքը ռազմաճակատից կտրելն էր:

Շահէն Մեղրեանը 15-17 հոգիանոց մի խմբով Սարսանգի շրջանում արդէն հետախուզական նախապատրաստական աշխատանքներ էին անում Սարսանգի ճանապարհը փակելու

ուղղութեամբ: Նովիկն աւելի մեծ խմբով պիտի յետոյ միանար իրենց:

Սարսանգում 93-ի փետրուարին առաջին պայթեցումն արել են **Վահէն, Վանիկը եւ Անդրէն: Մեղրեանն** իրենց ուղարկեցուց առաջ ասաց.

- Գնացէ՛ք, ճանապարհը ականապատեցէք, եկէք:

Գիշերուայ 4-ին իջան ճանապարհ: Լուսնեակ էր եւ բնականաբար անտառում մութ էր: Հինգ րոպէն մէկ, առանց լուսարձակման, թուրքի մեքենաներն էին անցնում, մարդկանց էին տեղափոխում կամ զինամթերք: Մերոնք նոր-նոր էին վերցրել Դրմբոնը եւ թուրքերը լոյսերը միացրած անկարող էին չարժուել՝ մերոնք Դրմբոնից կը խփէին: Այդպէս 5-6 կմ առանց լոյսի գնում էին: Ճանապարհը շատ կարծր էր՝ եռեակը չէր կարող քանդել: Աւագը Վանիկն էր, սակայն Վահէն իրենից փորձառու էր եւ խորհուրդները Վահէից էր հարցնում: Վահէն ասաց.

- Բեր մի ուրիշ բան անենք. ականները դնենք ճանապարհի մէջտեղը. աւտօն, միեւնոյնն է, ընկնելու է ականի վրայ:

- Չէ, Վահէ ջան, լուսնի լոյսը կ՛ընկնի վրեն, կ՛երեւայ:

- Էդ դէպքում ես իմ վերնաշապիկը գցում եմ վրեն:

Միտքը դուր եկաւ Վանիկին: Բերեցին, Անդրէն ականը լարեց, մի տասը մետր հեռացան անտառի մէջ եւ նայում էին, թէ ինչ է լինելու: Սպիտակ վերնաշապիկով ականը լաւ երեւում էր: Մի «Ուրալ» անցաւ՝ փախցրեց, չանցաւ վրայով: Երեք տոննանոց նոր «Կամազ» եկաւ եւ պայթեց: Պայթելուց յետոյ միայն հասկացան, որ շատ մօտիկ են կանգնած, հարուածային ալիքը կարող էր իրենց էլ խփել: Այդտեղից սկսեցին բարձրանալ:

«Կամազ»ի վրայի զինամթերքը երբ սկսում է պայթել, ***Մեղրեանը*** տագնապով հանում է տղաներին՝ մտածելով, թէ տղաները մարտի են բռնուել: Նախքան այդ, Վանիկը ռացիայով կապուել էր Մեղրեանի հետ եւ ասել, թէ չեն կարողանում գործն անել, եւ ռացիան անջատել էր: Այդ զինամթերքը որ սկսում է պայթել, Մեղրեանն ասում է, թէ տղերքը մարտի են բռնուել եւ փամփուշտները քիչ են: Բայց իրենք արդէն

հեռացել էին:

Առաջին տեխնիկան հէնց այդտեղ խփեցին:

Պատերազմի ժամանակ ոչ ոք երաշխաւորուած չէ անվտանգութեան: Քաջամարտիկ եւ մեծահմուտ հետախոյզ ***Վազգէն Առուստամեանն*** *անհետ կորաւ: Նա ռազմական տեղագրագէտ /տոպոգրաֆ/ էր, փորձառու զինուորական, քարտէզագէտ /**Յակոբ Պօղոսեանը** նրան մի քանի անգամ պատկերահանել էր քարտէզների վրայ խորասուզուած/ եւ տիրապետում էր ռազմական մի շարք մասնագիտութիւնների: Թուրքերն այդ չատ կարեւոր վայրում մեծ ուժեր էին կենտրոնացրել: Ջոկատի մի խմբի յաջողւում է մի քանի մեքենաներ ոչնչացնել, որի մասին մեր տրամադրութեան տակ կան բաւականին վկայութիւններ հէնց մասնակիցների կողմից: Առաւօտից գործում էին ճանապարհի վրայ: Կէսօրին թուրքերը աւտոչարասիւն կազմած դուրս եկան: Վազգէնը խփուած մեքենայից փաստաթղթեր վերցնելու պահին չհասցրեց ետ քաշուել: Քանի որ ուժերն անհաւասար էին, խումբը նահանջում է: Վրայ է հասնում մուէզը եւ պարզւում է, որ* ***աբովեանցի Վազգէնը*** *չկայ: Առաւօտեան մարտական ընկերները վերադառնում են գործողութեան վայր եւ գտնում Վազգէնի աւտոմատը, սակայն իրեն չեն գտնում՝ ո՛չ սպանուած, ո՛չ վիրաւոր: Վազգէնը հայդուկային ջոկատի առաջին կորուստն է (անհետ կորած): Ենթադրւում է, որ Վազգէնի զինամթերքը վերջանում է, թուրքերն էլ տեսնելով, որ մենակ է, չեն սպանում, բռնում են: Որոնումներից յետոյ գտնուեց Վազգէնի աւտոմատը եւ դատարկ պահեստատուփերը,ընդորում աւտոմատիվրայ արեան հետքեր կային: Սխալուած չենքլինի ասել, որվիրաւոր վիճակում Վազգէնին գերի են վերցրել: Սա է հաւանական ենթադրութիւնը: Այդ կորստից ելնելով՝ տղաները ցասումով զինուել են եւ եկել Սարսանգ: Եկան Սարսանգ եւ մեծ գործ արեցին:*

Մեր տրամադրութեան տակ եղած ռադիոհեռագրերի մէջ փետրուարի 8-ի ամսաթուով կայ Շահէնի հաղորդագրութիւնը. «Փետրուարի 6-ին, ճաչից յետոյ ճանապարհը փակել ենք

Սարսանգի ջրամբարի մօտ: Փետրուարի 7-ին ճանապարհը բա-նուկ չէր, չէր գործում: Գործողութեան ընթացքին սպանուել են մօտ 40 թուրք, վերցուել է 1գերի, ոչնչացուել է զինամթեր-քով բեռնուած աւտոշարասիւն: Մեր դէմ նետեցին յատուկ նշանակութեան մի զօրախումբ՝ վաչտ: Մեր պաշտպանիչ խումբն ընկելէ ծուղակի մէջ, խմբի հրամանատարն անհետ կո-րել է»:

Նովիկ Գիւլուեանը *մի խումբ մարտիկների հետ 6-7 ամիս անընդհատ անտառումն էր եղել եւ նրանց յունուարի վերջից մի քանի օր հանգստանալու հնարաւորութիւն էին տուել: Նովի-կենք երեւանից վերադարձան փետրուարի 19-ին: Այդ ըն-թացքում տեղի էր ունեցել* ***Վազգէն Առուստամեանի*** *հետ կապուած ցասալի դէպքը:*

Նովիկենք փետրուարի 20-ին միացան Շահէնենց: Ամսի 20-ից 4 օր անընդհատ փակում էին թշնամու ճանապարհը՝ ոչն-չացնելով անցնող ռազմատեխնիկան, մարդուժ, վառելանիւթ, զինամթերք տեղափոխող մեքենաները: Մեքենաները գալիս էին եւ չէին կարողանում անցնել, պայթում էին: Հայդուկները յամառօրէն ոչ մի քայլ ետ չէին նահանջում, թէեւ նրանց դէմ աստիճանաբար մեծ ուժեր էին ուղղում: Թուրքերը ոչ մի կերպ չէին յաջողում վերականգնել ազատ երթեւեկը եւ նրանք ճա-նապարհի ապահովութեան համար այդտեղ նետեցին աւելի մարտունակ զօրքեր. ասպարէզ հանեցին Գորշ գայլերի զօրախմբերը /Գերամբոյի գումարտակը/, որոնց միջոցով թուր-քերը յոյս ունէին մեր մարտիկներին հանել Սարսանգից:

Երրորդ օրը մեծ բախում է տեղի ունենում նշեալ գումար-տակի եւ մեր զօրաջոկատի միջեւ: Թուրքերի «էլիտար» գու-մարտակը չդիմանալով «Եղնիկների» հզօր հարուածներին, մեծ կորուստներ կրելով՝ փախուստի են դիմում եւ կանգ չեն առ-նում մինչեւ Մաղաւուզի բարձունքները: Այս ճակատամարտին է նուիրուած հանրայայտ լրագրող ***Բորիս Նեւզորովի*** *«Գերամբոյի գումարտակը» ֆիլմը:*

Այս ճակատամարտը հոգեբանական հարուած էր չրջակայ բնակավայրերում եւ յատկապէս Հաթերքում հաստատուած

թուրքերին: Նրանք մի քանի օր չարունակ որեւէ օգնութիւն, սննդամթերք եւ ռազմամթերք չէին ստացել: Յորրորդ օրը ամէն օգնութիւնից զրկուած թուրքերը՝ լսելով նաեւ իրենց թիկունքում պայթող արկերի դղրդիւնը, հրթիռների, ականների սուլոցները, դիրքերը թողնում փախչում են: Մեր մարտիկները թուրքերի խփուած մեքենաներում գտած հեռակապի սարքերով լսել են Հաթերքում խուճապի մատնուած թուրքերի աղերսագին օգնութեան կանչերը, որոնց իւրայինները պատասխանում էին միայն խոստումներով: Այսպիսով «Եղնիկները» դերազանց կատարեցին առաջադրուած խնդիրը եւ մեծապէս նպաստեցին Արցախի բանակի ընդհանուր առաջխաղացմանը եւ տեղաշրջանի բնակավայրերի՝ Գետաւանի, Ջափարի, Ջարդախաչի, Հաթերքի, Ականաբերդի /Ումուդլու/ ազատագրմանը: Թուրքազերծուեցին Սարսանգի ջրհովիտն ամբողջապէս եւ հիդրոհանգոյցը, մինչեւ Մաղաւուզ: Մեր բանակը տիրացաւ մեծ ռազմաւարի:

Արցախեան բանակն արդէն ազատ մուտք գործեց նշեալ բնակավայրերը եւ որ յատկապէս կարեւոր է, ընդհուպ մօտեցաւ Քարվաճառի դարպասներին: Պահը կարեւոր է նաեւ նրանով, որ մինչ այդ կատարեալ շրջապատման մէջ գտնուող «Եղնիկները» գրեթէ միացան Արցախեան բանակին:

*Դրանից յետոյ Շահէն Մեղրեանին կանչում են Երեւան: Մեկնելուց առաջ Շահէնը յանձնարարում է **Նովիկին** ուսումնասիրել **Եղակերի** տարածքը, յարմար տեղ ընտրել նոր ռազմակայան հիմնելու համար: Եղակեր կոչուող գիւղատեղին, մերձակայ էր Թալիշին, գտնուում էր Գիւլիստանից հարաւարեւելք: Գիւղը լքուել է 30-ական թուականներին, «կոլխոզաշինման» հետեւանքով: Այդտեղ են գտնուում լեգենդար **Զօրանքարը** եւ **Մեծ քարի աղբիւրը**, որոնց հետ կապուած չատ պատմութիւններ կան: Նովիկը հետախուզում է եւ յարմար տեղում հիմնում են ռազմակայանը: Դա դժուարին աշխատանք էր, քանզի Արտատափից Եղակեր, աելի քան 15 կմ, չալակով պիտի ամբողջ կայքը, զէնք-զինամթերքը տեղափոխէին: Տեղափոխման ծանրութիւնն իրենց վրայ վերցրին Թալիշի*



Սարսանգի գործողութիւնը. «Գերամբոյի» գումարտակի ջախջախումը, 1993թ., յունուար



Դիվերսիոն գործողութիւններ Գիւլիստանի տարածքում, 1992թ., աշուն



Տօնաշէնի ազատագրումը, 1993թ., մարտ 25



Գիւլիստանի ազատագրումը, 1993թ., ապրիլ

ջոկատի մարտիկները:

Թալիշի *առաջին ջոկատը, մօտ 20 հոգի, Շահէն Մեղրեանի ջոկատին միացաւ փետրուարի 20-ին: Սա կարեւոր քայլ էր, եթէ ի միտ առնենք ժամանակա-տարածական այն ընդհանուր վիճակը, որը միացնում էր այդ բնակավայրերը միեւնոյն մելիքութեան մէջ: Մարտակերտցիների հետ Թալիշի ջոկատն էլ բաժանել է երկրի կորստեան ցաւն ու պարտուած լինելու դառնութիւնը: Նրանց մէջ հայրենիքին վերատիրանալու ձգտումն այնքան մեծ էր, որ չտապ անդամագրուեցին «Մահապարտներ»ի «Արծիւ» ջոկատներին եւ չարունակեցին պայքարը: Նրանք կռուեցին Կիչանում եւ Զլդրանում, ու թէեւ այդ ջոկատները փաստօրէն առանց նախնական մարզուածութեան էին մտել մարտադաշտ, կեանքի գնով, քաջավարժ ջոկատների հետ միասին, կանգնեցրին այդքան տարածքներ գրաւած թշնամուն: Թալիշցիներն այնուհետեւ մաս կազմելով «Եղնիկների», կարողանում էին հանել երբեմն 100-ից աւելի մարտիկներ: Նրանք տոկուն էին եւ նուիրեալ:*

Թալիշի ջոկատի մարտիկներից էին ***Այան Սաւոն /Իսկանդարեան/, Անդրանիկ Սարգսեանը, Շալիկօ Սարգսեանը՝ որդու՝ Եիւրայի հետ, Իւրա Մեժլումեանը, Արամ Բայունցը, Յովիկ Սահակեանը, Սուրիկ Դաւթեանը, Սիմա Իսկանդարեանը, Էդիկ Ապրեսեանը, Ռոմիկ Աբրահամեանը, Ենոք Արզումանեանը, Դաւիթ Աղաջանեանը, Արուդիկ Խալափեանը, Սլաւիկ Սահակեանը: 1992-ի մայիսի 4-ին գիւղը պաշտպանելիս զոհուել են Զօրիկ Սարգսեանը, Վագիֆ Սարգսեանը, Աշոտ Ճաղարեանը... Թալիշի համար մղուող մարտերում զոհուել են Վանիկ Օհանեանը, Սամուէլ Խաչատրեանը, Աշոտ Բայունցը, Գրիգոր Օհանեանը, Սաշա Մեժունցը...*** *Գիւղը տուել է 40 զոհ:*

Վերոնշեալ գործողութիւններից առաջ Երեւանում գտնուող ***Սերգէյ Զալեանը*** *յունուարի 26-ին գրութիւն է ուղարկում Շահէն Մեղրեանին՝ հաղորդելով Պաշտպանութեան նախարարութեան առաջարկութիւնը՝ «Եղնիկներ» հայդուկային*

խմբին ՀՀ ՊՆ առանձնակի զօրամասի կարգավիճակ տալու մասին: Զալեանը հարցում է ուղղում ***Շահէն Մեղրեանին՝*** *թէ համաձա՞յն էարդէօք Շահէն Մեղրեանը նման առաջարկութեանը: Հայդուկապետը զարմացաւ եւ զայրացաւ, որ Սերգէյ Զալեանն ինքնակամ կերպով, չըլնանցելով ջոկատի հրամկազմին՝ բանակցութիւնների մէջ է մտել զինուորական շտաբի հետ:*

Այսուհանդերձ, Շահէն Մեղրեանը գնում է Երեւան, Դաշնակցութեան ղեկավարութեան հետ խորհրդակցելուց յետոյ որոշում են համաձայնել ՊՆ առանձնակի զօրամաս դառնալու մտադրութեանը, մանաւանդ՝ մի կուսակցութեան ուժերից արդէն վեր էր ամբողջական զօրամասի մատակարարումը:

Ջոկատը մեծացել, դարձել էր կործանիչ մի զօրամաս, կազմուած մի քանի հարիւր մարտիկից: Ջոկատն ունէր իր շտաբը եւ զինուորական խստագոյն կարգապահութիւն էր մշակուած: Նորեկներին մարզում եւ ուսուցանում էին ճանաչել տեղանքը եւ հմտօրէն կողմնորոշուել, տիրապետել զինատեսակներին, ականապատման եւ ականազերծման (սակրաւորի) գործին: Աւելի փորձառուները մշտական հետախուզութիւն էին անում Գիւլիստան եւ Թալիշ գիւղերի տարածքում, ուշադիր հետեւում թշնամու զօրաշարժերին, իմանում նրանց մտադրութիւնները, ձեռք բերում տեղեկութիւններ թշնամու տեխնիկայի եւ զինուժի վերաբերեալ: Եւ Շահէն Մեղրեանն իր զինուորների հետ էր ամենուր:

1993-ի մարտի 11-ի Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարի N063 հրամանով Շահումեանի պարտիզանական ջոկատի հիմքի վրայ կազմաւորւում է ՀՀ ՊՆ թիւ 15433 զ/մ, որն առաւելապէս յայտնի էր ՀՀ ՊՆ Յատուկ նշանակութեան ջոկատ անուամբ;

1. Հրամանատար՝ մայոր Մեղրեան Շահէն Զինաւորի

2. Հրամանատարի տեղակալ՝ մայոր Խիդիրեան Յակոբ

3. Շտաբի պետ՝ մայոր Զալեան Սերգէյ Ռուբէնի

4. Հրամանատարի տեղակալ անձնակազմի գծով՝ մայոր Մեղրեան Պետրոս Զինաւորի

5. Հրամանատարի տեղակալ թիկունքի գծով՝ մայոր Շահէն

Վարդգէսի Յովասափեան

6. Հրամանատարի տեղակալ սպառազինութեան գծով՝ փոխգնդապետ Կուրեղին Ալեքսանդր Վլադիմիրի

7. Շտաբի պետի տեղակալ՝ լեյտենանտ Գիզիրեան Ֆեդօ

8. Շտաբի պետի տեղակալ չարային եւ կադրերի գծով՝ կապիտան Ղուլեան Գագիկ Բէնիկի

9. Վաշտի հրամանատարներ՝ Գիւլումեան Արմօ /Նովիկ/ Հրանտի, Գիզիրեան Շուրա, Իսկանդարեան Սլաւիկ /բոլորն էլ՝ լեյտենանտ/:

10. Զրահատանկային ծառայութեան պետ, լեյտենանտ Վանիկ Իւրիի Ասլանեան:

Շահէն Մեղրեանի զոհուելուց յետոյ հրապարակւում է ՀՀ ՊՆ 1993-ի յունիս 15-ի թիւ 314 հրամանը.

Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ շրջանների պաշտպանութեան գործում ցուցաբերած արիութեան եւ խիզախութեան,մարտական առաջադրանքները գերազանց կատարելու եւ հաշուի առնելով Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութեան յատուկ նշանակութեան ջոկատի զինծառայողների ցանկութիւնը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան յատուկ ջոկատը կոչել զոհուած հրամանատար մայոր Շահէն Զինաւորի Մեղրեանի անունով:

Նախարար՝ **Վ. Մ. Մանուկեան**

Այսուհետեւ կամաւորականները աշխատավարձ պիտի ստանային, քանզի ընտանիքներ ունէին եւ մատակարարումը պիտի լինէր պետականօրէն եւ ոչ թէ բարեգործական հիմունքներով, ինչպէս առաջ էր: Մինչ այդ մատակարարումն 80 տոկոսով իրագործում էր Դաշնակցութիւնը: Եթէ պետութիւնն ինչ-որ բան անում էր, ապա պետական օգնութիւնն ամիսներով կարող

էր մնալ օդակայանում կամ այլ տեղ պահեստաւորուած:

Տօնաչէնի, Թալիշի, Գիւլիստանի առաջին մարտերը

Նախքան Երեւանից Շահէնի վերադարձը եղակերի ռազմակայանը հիմնուած եւ պատրաստ էր: Մարտի 25-ին Շահէն Մեղրեանը կրկին վերադառնում է եղակեր՝ վերադասաւորելու ուժերը, պիտի տեղի ունենար **Տօնաչէնի ազատագրումը**: Կատաղի մարտ է տեղի ունենում բնակավայրի ազատագրութեան համար: Գրոհային գործողութեանը մասնակցում էին մօտ 25 հոգի: **Շահէն Մեղրեանը** Դաստագիրում մի փոքր խմբով ապահովում էր գրոհայինների թիկունքը: Գրոհային խումբը գլխաւորում էր **Նովիկ Գիւլումեանը**: Գործողութիւնը սկսուեց լուսադէմին: Գրոհը ցանկալի սկիզբ չունեցաւ, թուրքերը պատահաբար կռահել էին հայդուկների մուտքը բնակավայր: Այնուամենայնիւ գործողութիւնը հասաւ իր տրամաբանական աւարտին. թուրքերին դուրս մղեցին Տօնաչէնից, ցաւօք՝ զոհերով: Տօնաչէնի ազատագրման գործողութեան ժամանակ ծանր վիրաւորուեց եւ երկու օր յետոյ մահացաւ բուգլուխցի **Սարգիս Ղազարեանը**: Սաքոյի զոհուելու պահը նկարահանել է օպերատոր **Յակոբ Պօղոսեանը**: Նկարահանելիս Յակոբը բացականչում է՝ «Սաքոյի՛ն, Սաքոյի՛ն խփեցին», եւ գրեթէ նոյն պահին էլ ինքն է վիրաւորւում: Նահատակ որդու՝ Սաքոյի զէնքը վերցնում է հայրը՝ **Մանուէլ Ղազարեանը**: Նա երդւում է վրէժխնդիր լինել եւ մարտնչում է գրեթէ մինչեւ յաղթանակ: Այդ նոյն մարտերում զոհւում են վերինչէնցի **Հայկ Վերդեանը, Վարդան Վահանեանը**՝ Ներքին Հոռաթաղից: Վիրաւորուեցին բժիշկ **Արայիկ Պապիկեանը, Նովիկ Գիւլումեանը, Նորիկ Մարտիրոսեանը**՝ Վերին Շէնից: Թուրքերից սպանուածները բազմաթիւ էին:

Ազատագրելով **Տօնաչէնը**, հայդուկները **Շահէն Մեղրեանի** հրամանատարութեամբ մտնում են Շահումեանի տարածք եւ ազատագրում **Գիւլիստանը**: Նրանք հասնում են մինչեւ **Վերին Շէնի եւ Խրխափորի** մերձակայ բարձունքները: Առաջխաղացումը դէպի շրջանի խորքը հետաձգւում է աւելի յարմար

ժամանակի:

*Շահումեանի ազատագրման համար մարտերը պիտի սկսուէին **Թալիշի** ազատագրումից յետոյ, երբ ճանապարհը բացուէր դէպի **Կարաչինար**: Միայն այդ ճանապարհով կարելի էր ռազմական տեխնիկա մուտքը Շահումեան: **1993 թ. մարտի 27-ին** Շահումեանի Յատուկ ջոկատի հրամանատարութիւնը որոշում է **Թալիշը** մաքրել թուրքերից: Շահէն Մեղրեանը **Սլաւիկ Իսկանդարեանի /Այանց Սաւօ/** խմբին առաջադրանք է տալիս հետախուզել Թալիշի տարածքը՝ Գիւլիստանի գործողութիւնը նախապատրաստելու նպատակով: Գործողութիւնն ընթանում է Տօնաշէնի գործողութեանը համընթաց: Նախ պիտի ոչնչացնէին հակառակորդի պահակէտերը: Սլաւիկը խումբը բաժանում է երկու մասի, որոնցից մէկին ուղարկում է Կարակօյլուի, իսկ միւսին՝ Զայլուի ճանապարհները փակելու: Նախորդ օրը հետախուզութիւնը պարզել էր, որ Զայլու տանող թուրքական պահակէտը դատարկ է: Այստեղ միայն ցերեկային հսկողութիւն էր կատարւում: Մութն ընկնելուն պէս նրանք գնում էին դաշտավայրում գտնուող իրենց զօրակայանը: Լուսադէմին հայդուկներն իրենց առաջադրանքն աւարտում են՝ ականապատելով նշեալ ճանապարհների կարեւոր հատուածները: Հէնց այդ ժամանակ տեղեկութիւն է ստացւում, որ Տօնաշէնի ուղղութեամբ գործող մեր տղաները դժուարին դրութեան մէջ են: **Շահէն Մեղրեանը** 10 հոգու հետ չտապում է օգնութեան: Նրանք դեռ նոր էին իրենց կայանից հեռացել, երբ լսում է ահռելի ուժի դղրդիւն: Պարտիզաններին նախ թւում է, թէ թշնամին է ակտիւացել, սակայն շուտով պարզւում է, որ թշնամու մեքենաներն են պայթել Սլաւիկենց դրած ականներից: Թշնամու երեք մեքենաները ճանապարհի երեք հատուածներում գրեթէ միաժամանակ են պայթել՝ պատճառ դառնալով մարդուժի, զինամթերքի եւ տեխնիկայի զգալի կորստեան:*

Մարտի կէսերին Շահէն Մեղրեանը գտնուում էր Երեւանում: Առաջիկայ մարտական գործողութիւնների կապակցութեամբ անհրաժեշտ էր կարգաւորել մի շարք հարցեր, մտայղացում-

ներն ու ծրագրերը համաձայնեցնել վերադաս հրամանատարության հետ: Նոյնիսկ այդպիսի կարճ բացակայութիւննե-րի ժամանակ Շահէնը մշտական կապի մէջ էր լինում ջոկատի հետ եւ տեղեակ էր կացութեանը: Բացակայութեան ընթացքին հրամանատար մնում էր փոխրամանատարներից մէկը: Այս անգամ փոխարինում էր ***Նովիկը:*** *Ահա Շահէնի երեւանից ուղարկած գրութիւնը Նովիկին.* «Նովիկ ջան (կարդա՛ միայն դու), ուղարկում եմ Գլխաւոր չտաբի ծրագիրը մեր զօրամասի համար: Մարտի 25-ը գործողութիւնը սկսելու նախնական օրն է, կարող է փոխուել կամ մնալ նոյնը:

Մենք պէտք է Թալիշից փախցնենք թուրքերին, բայց գիւղը չենք պահելու: Միւս թեւը պէտք է լինի Մատաղիսի կամուրջը: Երեւի այդ կէտում 25-30-ական երկու դասակը հերիք է:

Հարուածի հիմնական ուղղութիւնը Գիւլիստան - Վերին Շէն - Բուզլուխ հատուածն է: Քարտէզի վրայ ամէն ինչ նշուած է: Ես կը գամ վաղը, մի քանի պակաս բան կայ: Ամէն ինչ տեղա-փոխիր Գիւլիստանի չրջակայքը: Մանրամասները կ՚ասեմ տեղում:

Հրամանատար՝ Ձեր Շահէն Մեղրեան»:

Շահէն Մեղրեանը մի գրութիւն էլ իր անձնական զէնքի հետ միասին, իբրեւ նուէր մարտական ընկերոջը/ արդէն եղակերից/ ***Վանիկ Աւետեանի*** *հետ ուղարկում է* ***Շուրա Գզիրեանին.***

«Շուրա, բարեւ, քեզ նշանակում եմ Գիւլիստանի գործո-ղութեան պատասխանատու: Առաջնահերթ քո գործերն են՝

1. Գտնել Շահումեան-Գիւլիստան ճանապարհի ամենա-յարմար կէտերը ականապատման եւ դարանի համար:

2. Հետախուզել Պըրըմբատ-Գիւլիստան ճանապարհը. եթէ օգտագործւում է՝ ականապատել:

3. Գիւլիստանում հետախուզել գերեզմանոցի բարձունքը, Սարդարի աղբիւրի բարձունքը եւ Ձիրինի հարթը, գործո-ղութեան համար:

4. Լրիւ պատկերացում կազմել թուրքերի քանակի եւ դիրքե-րի մասին:

5. Քեզ տալիս եմ 36 ժամ:
Յաջողութիւն:

Շ. Մեղրեան 30.03. 1993 թ.»:

*Նախքան Գիւլիստանի հիմնական գործողութիւնը, այդ շրջանում հետախուզական գործողութիւններ եւ հետախուզական մարտեր շատ են եղել: **Դերենիկ Սարգսեանի** ասքով, մի անգամ խմբով գնացել էին Գիւլիստան հետախուզութեան: **Շուրան էր, Կամօն, Պօղոսը, Շահէնը եւ Դերենիկը**: Դերենիկենց տան դէմը մի քարանձաւ կայ, որտեղից հետախուզութիւն անելուց յետոյ տեղեկութիւնները հաղորդում էին Ջոկատին: Շահէն Մեղրեանը եկաւ, տեսաւ, որ խմբով այդտեղ նստած, օղին դրած խմում են: Բարկացաւ ու ասաց. «Թուրքերը ձեր խոտը հանած՝ էնտեղ տանում են, դուք էստեղ նստել՝ օղի՞ էք խմում»: Դիչերով գնացին Գիւլիստան եւ առաւօտեան խփեցին եւ կայծակնային գրոհով վերցրեցին գիւղը: **Շուրա Գզիրեանն** էր ղեկավարում այդ մարտը:*

*Շահէն Մեղրեանի մտայղացած գործողութիւնը փայլուն կերպով իրագործւում է ապրիլի առաջին օրերին: **Շուրա Գզիրեանի** գլխաւորութեամբ մի խումբ ազատամարտիկներ **Գիւլիստանում** գիչերն աննկատ չրջապատում են հակառակորդին եւ լոյսը բացուելուն պէս սկսում գրոհը: Մեղրեանի յանձնարարութեամբ մէկ այլ խումբ խնդիր է ստանում փակել Գիւլիստան մտնող՝ Խրխափորի ճանապարհը: Դրանից քիչ ցած, Հին Խրխափորի փոքր լճակի մօտ թուրքերի պահակէտն էր՝ վագոն-տնակով, կողքին էլ հետեւակի մարտական մեքենայ՝ ԲՄՊ-2: Ջոկատը պահակէտի մերձակայ անհրաժեշտ կէտերում դիրքեր է գրաւում: Գիւլիստանում արդէն մարտը սկսուել էր: Մարտիկները նկատում են, թէ ինչպէս զինուորներով լի մի բեռնատար Շահումեանից Խրխափորի ճորով չտապում է Գիւլիստան՝ օգնելու այնտեղ չրջապատուած իւրայիններին: Հրետանաւոր **Տոլիկը** համբերութեամբ սպասում է մինչեւ բեռնատարը գալիս եւ հաւասարւում է մարտական մեքենային, որպէսզի երկուսին միասին խփի: Առաջին իսկ արկով փչրում*

է մարտական մեքենայի աշտարակը, հրկիզում է նաեւ բեռնատարը: Նոյն պահին էլ **Էդիկն ու Վահանը** գործի են դնում իրենց նռնականետները, իսկ գնդացրորդ **Սամուէլը** սկսում է հունձը: **Կամօն եւ Իշխանը** նրանց միանում են ինքնաձիգներով: Այդ կարճատեւ մարտից յետոյ հեռուում նոր բեռնատարներ են երեւում եւ շտապ օգնութեան մեքենայ: Թուրքերն այս անգամ չեն համարձակում մտնել ձորը, այլ ձորաբերանից հետեւակ մտնում են անտառ եւ սկսում անկանոն կրակոցներով առաջանալ: Մեր մարտիկներն իրենց բարձր դիրքերից ուղիղ նշանառութեամբ միագարկ, գետին չնկնող կրակոցներով չեն թողնում թուրքերի առաջխաղացումը: Այդ պահին թիկունքից որոտներ են լսւում: Դա Գիւլիստանից փախած թուրքերի «Գրադ»ն էր, որ ականներ էր արձակում անտառի ուղղութեամբ: Հասկանալով, որ Գիւլիստանում թշնամին ջարդուել ու փախել է, տղաներն իրենց առաջադրանքը կատարած համարելով՝ մտնում են անտառի խորքը եւ միանում ընդհանուր խմբին՝ կազմակերպելով Գիւլիստանի պաշտպանութիւնը՝ դիրքեր դնելով Պըրմբատի եւ Վերին Շէնից ու Խըրխափուրից Գիւլիստան մտնող ճանապարհների բարձունքների վրայ: Նրանք ամէն օր սեւեր հագած օմոնականների երկուերեք յարձակում էին ետ մղում: Թուրքերի հետեւազօրը մեծ կորուստներով նահանջում եւ սկսւում էր նրանց ականանետային հրակոծումները «Կրիստալ» հրթիռային կայանքից, որը չէր յաջողում ճիշտ նշանառութեամբ խփել դիրքերին: Մեծ վտանգ կը լինէր, եթէ թուրքերը դիմէին գիշերային գրոհների, որին չէին համարձակում դիմել:

Գիւլիստանը Շուրա Գիզիրեանի հրամանատարութեամբ մարտիկները պահեցին մինչեւ Շահէն Մեղրեանի գոհուելը, գրեթէ մէկ ամիս: Հայդուկապետի գոհուելուց հինգ օր անց դիրքերն առանց մարտի թողել, հեռացել են:

Շահումեանի հայդուկները Գիւլիստանում բազմիցս ջարդել են թուրքերին, սակայն ամէն անգամ ջարդուած թշնամին համալրուել է եւ մեծաքանակ զօրքով ու տեխնիկայով նորից ետ վերցրել գիւղը: Պարտիզանները ստիպուած թողնում էին

գիւղը եւ հեռանում իրենց անտառային յենակէտը՝ սպասելով անհրաժեշտ օգնական ուժի, որ վերստին գրաւեն այն:

*Շահումեանի հայդուկային զօրամասը կարողանում է թշնամուց ազատագրել Գիւլիստանը, ճանապարհ բացելով դէպի Վերին Շէն եւ Խրխափոր: Բայց չրջանի ամբողջական եւ վերջնական ազատագրումը եւ մարտական գործողութիւնների յաջողութիւնը կախուած էր այն օգնութիւնից, որ պէտք է զօրամասը ստանար: Եւ ահա այդ առիթով **Շահէն Մեղրեանը գրում է Վահան Ծովհաննիսեանին**. «Վահան ջան, թուրքերը, երեւում է, Շահումեանում լուրջ դիմադրութիւն են ցոյց տալու: Երեկ Գիւլիստանը գրաւելուց մէկ ժամ յետոյ օգնութեան հասաւ հարիւրից աւել թուրքերից բաղկացած չոկատը: Մենք չունենք փոխադրամիջոցներ: Ես երեւի այս հարցով այլեւս չդիմեմ, բայց վերջին անգամ խնդրում եմ եւ եթէ իսկապէս ձեւական չեն խոստումները, ապա առաջիկայ 4-5 օրում 100 մարդ է պէտք, 2) 10-15 ձեռքի ռացիա, 3) գոնէ մէկ բժիշկ, 4) 5 հատ ձի (կամ գոնէ էշ, եթէ ի հարկէ Հայաստանում կայ), 5) անունդ մարտական առաջադրանքի մեկնողների համար, 6) քնապարկեր 100 հատ, 7) տղամարդկային մօտեցում ընկերների ազգային կարիքներին:*

Ձեր՝ Շահէն Մեղրեան
02.04.1993 թ., Եղակեր»:

*Շահէնի չոկատում մեծ համարում ուներ **Դերենիկ Բաղիչի Սարգսեանը (Գիւլիստան)**: Մանկութիւնից տեղանքը գերազանց իմացող եւ թուրքերի խարդախութեանը քաջիմաց պատանին Շահէնի հետ էր նրա չոկատի կազմաւորման առաջին օրերից: Մինչ այդ էլ մասնակցել է գիւղի ինքնապաշտպանութեանը: Դեռեւս դպրոցական տարիներից բախուել է աւարառու մի թուրքի, գերուել, սակայն յաջողել է նրա ձին հեծնել եւ փախչել: Դերենիկը շատ լաւ հետախոյզ էր, առաւօտից իրիկուն՝ Նապատի ձորում էր կամ Գեօգթափայի բարձունքում:*

Նահանջից յետոյ 2-3 ամիս մնացել է Երեւանում: Երբ իմացաւ, որ ազատագրական չոկատ կայ, սեպտեմբերի 8-ից եկաւ

եւ միացաւ Մեղրեանի ջոկատին: Կռուել է այդ ժամանակից մինչեւ հրադադար եւ «Եղնիկները»ի հետ է մինչեւ հիմա: Երեւանից թռել, եկել են Արտաշատ, *որտեղ մարտակայանն էր: Առաջին օրուանից Շահէնն իրեն վստահել է ամէն ինչում: Նրանք համագիւղացիներ են:* ***Դերենիկ.*** «Ուղարկել է գործի, եւ ես ոչինչ եմ ասել, ինչ որ ուժս պատել է՝ արել եմ, եւ ինքը գոհ է մնացել: Ես իրեն ուշ եմ ճանաչել, որովհետեւ տարբեր սերունդ ենք, բացի այդ, ինքը եղել է Մեծ Մարդ, իսկ ես՝ մի խոզարած: Նա ինձ վրայ շատ խորը տպաւորութիւն է թողել: Առաջին անգամ երբ տեսանք՝ ասաց. «Մենք պէտք է Շահումեանը վերցնենք եւ ապրենք այնտեղ»: Եւ ես հաւատում էի նրան: Բայց հիմա նա չկայ, եւ ես թերահաւատ եմ:

Մեղրեանին ինչպէ՞ս բնութագրեմ որպէս մարդ եւ ռազմիկ:

Երբ 93-ի յունուարի 16-ին եկանք իջանք ռազմակայան, ինքն էր, մեր աբովեանցի տղաներն էին, 4 հոգի Գիւլիստանի տղաներ էին: Էդ խմբով մէկ ամիս, երկու օրը մէկ, մենք գործուղուեցինք էինք անում: Մենք գալիս էինք Տօնաշէն, գնում էինք Շահումեան, Շահումեանից գալիս, գնում Սարսանգ, եւ ինքը միշտ մեզ հետ էր: Տարբեր տեղեր միշտ խփում էինք, միշտ լարուածութեան տակ էինք պահում: Ահագին վնաս ենք տուել, տեխնիկային, բեռնատար մեքենաներին յատկապէս: Հարիւրնեռով մեքենայ ենք ոչնչացրել: Փչացրել ենք, վառել ենք, ձորն ենք գցել: Ու ասում էր, որ **էս հողը պիտի իրենց ոտքի տակ վառուի: Դա իր խօսքն է**: Ինքն անմիջապէս զէնքը չէր աշխատեցնում, մի քիչ էլ ետ էր քաշուած, ինչպէս որ հրամանատարը պիտի լինի: Ղեկավարում էր ամէն ինչ: Գործում էր ըստ նպատակի, մարտավարութիւն էր մշակում եւ ղեկավարում: Մեզ հետ հաւասար տանում էր ամէն ինչ, կրում նոյն դժուարութիւնները. եթէ սոված էինք լինում, ինքն էլ մեզ հետ, ձեան վրայ էր քնում: Ես իր վատը չեմ տեսել որպէս մարտիկ եւ ընկեր: Միշտ զուսպ էր, բայց որ սխալ անէիր, կը պատժէր: Բոլորի հետ ջերմ էր, մտերիմ, բայց կարգապահութեան վրայ էր ամէն ինչ: Անտեղի երբեք ոչ մէկին չի պատժել: Պատերազմի ժամանակ ամէն ինչ փորձով է ձեռք բերւում: Միշտ տղաներին

հաւաքում եւ խորհրդակցում էր, թէ ինչ պիտի անենք եւ ինչ-պէս պիտի անենք: Բարեկիրթ, խելացի մարդ էր, միանգամից մի թեթեւ նրբութիւնից հասկանում էր, թէ ինչը ինչպէս պիտի լինի, այսինքն՝ գործի էութիւնը կռահում էր: Այդպիսի մարդ էր»:

Ինչպէս նշել ենք, հայդուկների ռազմակայանները երեքն էին, որոնց վերջում աւելացաւ Թալիշի «Օջախը»: Դրանցից, ըստ **Նովիկի**, *Արտատափը թուրքերը երբեք չեն գրաւել, Եղակերն ու Գեօգթափան են գրաւել 93-ի դեկտեմբերին:* «Մենք ուժեր ունէինք, սակայն իրենց մօտենալը շատ ուշ իմացանք, Թալիշի տղաները, որոնք դիրքերում են եղել, մեզ չեն կարողացել զգուշացնեն: Թալիշից բարձրացող ուղիղ ճանապարհ կար, այդտեղ երկու զոհ ունեցանք, իրենցից էլ մեծ կորուստներ եղան, սակայն բազան տուեցինք եւ մէկ ամիս անց բոլորը ետ վերցրինք»:

Գլուխ քսաներորդ
ՈՒՂՂԱԹԻՌԻ ԿՈՐՇԱՆՈՒՄԸ

ՆԵՆԳԱՄՏՈՒԹԻՒՆ

Շահէն Մեղրեանը *վերջին անգամ մէկ ամսից աւելի մնում է* ***Եղակերի*** *ռազմական յենակէտում: Ծրագրուած ընդհանուր յարձակումը եւ դրա համար նախատեսուած օգնութիւնը նորից յետաձգուել էր: Շահէնը որոշում է թռչել Երեւան՝ տեղում բարձր հրամանատարութեան եւ կուսակցական գործիչների հետ լուծել մի շարք հարցեր: Նրա հետ Երեւան պիտի թռչէին մի խումբ ազատամարտիկներ, ովքեր ամիսներ շարունակ գտնւում էին անտառում:*

Այդ օրը՝ ***1993 թուականի ապրիլի 17-ին****, տղաները սովորականի նման գնում են առաջաւոր դիրքեր՝ հսկելու թշնամու տեղաշարժերը:*

Շահէնը վերջին յանձնարարութիւններն է տալիս չտաբի պետ ***Սերգէյ Զալեանին****, որը նոր էր վերադարձել Երեւանից, ուր մօտ կէս տարի (92-ի դեկտեմբերից 93-ի ապրիլ) բուժւում էր: Շահէնը պատուիրում է աչալուրջ լինել, պահպանել մարտիկներին: Հրամանատարը սեղմում է չտաբի պետի ձեռքը եւ գնում դէպի կանգնած երկու ուղղաթիռները: Առաջին ուղղաթիռն օդ է բարձրանում եւ իսկոյն Դաստակերտից կրակ են բացում, բայց յաջողութեամբ հեռանում է: Շահէնը տղաների խմբի հետ տեղաւորւում է երկրորդ ուղղաթիռում, որը հէնց օդ է բարձրանում՝ հրթիռահարւում է : Ուղղաթիռը չրջադարձ է անում եւ արագացնում թռիչքը, բայց թշնամու հրթիռը դիպչում է եւ ուղղաթիռը ծխալով ընկնում է անտառի մէջ:*

Ռազմական յենակէտերում գտնուողները եւ հետախոյզ տղաները, որ հետեւում էին ուղղաթիռին, ականատես են դառնում նրա կործանմանը: ***Հայդուկապետը զոհւում*** *է իր մարտական ընկերների հետ՝* ***անկատար թողնելով կեանքի հիմնական նպատակը՝ Շահումեանի ազատագրումը****:*

Վանիա Բաբայեանի *օրագրից. «17-ը ապրիլի: Այդ օրը հանգստանում էինք, հաղորդեցին, որ ուղղաթիռը պիտի գայ:*

Հրամանատար Մեղրեանն ասաց, որ մէկ շաբաթով գնում է Երեւան՝ ետ գայ, որպէսզի յարձակումները սկսենք: Երկու ուղղաթիռ իջան Յըղակեր: Պիտի դատարկէին՝ թուրքերն անտառից սկսեցին ուղղաթիռին խփել: Տեղները փոխեցին, մոտորներն անջատեցին, քանի որ թուրքերն «Իգլայով» էին խփում: Առաջին ուղղաթիռն առանց դատարկուելու՝ թռաւ, գնաց: Թուրքերը խփեցին՝ չկպաւ. անցաւ գնաց: Երկրորդ ուղղաթիռը դատարկում էինք: Մեր տղաները ԴՇՇԿայով կրակում էին թուրքերի ուղղուածեամբ, որպէսզի ուղղաթիռը կարողանար անցնել: Մի հերթապարկից յետոյ ԴՇՇԿան լռեց, չկրակեց: Մեղրեանը Երեւան թռչող տղաների հետ մտաւ ուղղաթիռ: Մենք իջանք ուղղաթիռից եւ ուղղաթիռը բարձրացաւ օդ, մի քիչ գնաց եւ թուրքերի արձակած հրթիռը կպաւ: Ուղղաթիռն ընկաւ ձորը, 11 հոգի կային մէջը: Վազեցինք դէպի ուղղաթիռը: Շատ բարդ տեղ էր ընկել: Մի կերպ գտանք տղաների դիակները: Մեր բժիշկ ***Արտակին*** *շատ դժուարութեամբ գտանք: Դաժան օր էր այդ օրը. հրամանատարը զոհուել է, ջոկատի մէջ խուճապ է առաջացել»:*

Մամիկ Ջանունց. *«**Շահէնին** մեր աչքի առաջ են խփել, ուղղաթիռին Դաստագիրից են թխալ: Առաջին ուղղաթիռը կարողացաւ թռչի, անցնի: Առաջինին էլ են թխալ, առաջինի օդաչուն չրջադարձ արեց, եւ հրթիռն է՛լ չվերցրեց ու գնաց՝ քերծին կպաւ: Երկրորդին էլ՝ **Ջանփոլադին** աղաչեցինք, ասեցինք՝ խփում են, մի՛ թռի: Ինչ արեցինք՝ չհամաձայնեց, ձեռքի էլ յատուկ չարժում արեց, ու նոյնիսկ աւելի վերեւ բարձրացաւ, քան պէտք էր, ու խփեցին աչքներիս դէմը: Ընկանք ուղղաթիռի յետեւից, որ գնանք տեսնենք որտեղ է ընկած: Գնացինք անտառի մէջ գտանք, օդաչուներն էլ զոհուած էին, լրիւն էլ զոհուած: Երեք հոգի էլ մէջից թռել էին, այսինքն երբ հարուածից պոչը բաժանուել է ինքնաթիռից, իրենք եղել են պոչի մասում. բժիշկ* ***Արտակն էր, Պօղոսը եւ Շահէնի բարեկամ Հայկ Մեղրեանը****: Որ հաքին (պոչը ~ Ա.Պ.) պոկուել ա՝ երեքն էլ մէջից վար են ընկել: Պօղոսի գլուխը ծառին էր կպել, Արտակն էլ նոյնը: Նրանց ման ենք եկել՝ նոր գտել, բայց մնացածին*

ուղղաթիռի մօտ ենք գտել»:

Դերենիկ Սարգսեան. «Երեք անգամ Գիւլիստանը վերցրել ենք: Վերջին անգամ որ վերցրինք եւ բոլոր բարձունքները մեր ձեռքին էին՝ երեք օր Գիւլիստանում Շահէնին էինք սպասում, սակայն նա խփուած է եղել, իսկ մենք չենք իմացել: **Երբ նա խփուեց, հրաման տուեցին դիրքերից ետ քաշուել**»:

Ապրիլի 17-ին զոհուեցին ***Շահէն Մեղրեանը, Հայկ Մեղրեանը, Արմէն Բազեանը, Պօղոս Սիմոնեանը, Ռաֆիկ Բազալեանը, Արտակ Խաչատրեանը, Սեդրակ Սեդրակեանը, Գրիգոր Գրիգորեանը, օդաչուներ Ջանփոլադ Մուրադեանը, Արամ Գրիգորեանը, Իոսիֆ Միքայէլեանը:*** *Նահատակները հողին յանձնուեցին ապրիլի 20-ին, Եռաբլուրի պանթէոնում, իսկ* ***Գրիգոր Գրիգորեանին*** *փոխադրեցին ծննդավայր՝ Սիսիան:*

Շահէն Մեղրեանին իշխանութիւններից օգնողներ քիչ կային, սակայն երբ նա զոհուեց՝ կարեւոր դէմքերը ներկայացան յուղարկաւորմանը, քանզի այդ զոհաբերութիւնը իշխանաւորներին ձերբազատում էր Հայրենիքը ազատագրելու եւ պահելու «գլխացաւանքից»:

Նահատակ Հայդուկապետի դին վաղ առաւօտեան դրել էին ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի շէնքի առջեւ: Նրա մարմինը ծածկուած էր Դաշնակցութեան ալ կարմիր դրօշով:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՍՈՒԳԸ

Հերոսին հրաժեշտ տալու էին եկել մարտական եւ կուսակցական ընկերները: Հրաժեշտի խօսք ասացին ՀՅԴ Բիւրոյի անդամ ***Վահան Յովհաննիսեանը****, ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ* ***Հրայր Կարապետեանը:*** *Սգոյ թափորը շարժուեց դէպի Սպայի տուն, ուր հրաժեշտի էր եկել հայ ժողովուրդն իր բոլոր դասերով: Այդտեղ էին հանրապետութեան նախագահը, պետական նախարար* ***Վազգէն Սարգսեանը****, պաշտպանութեան նախարար* ***Վազգէն Մանուկեանը****, Գերագոյն խորհրդի նախագահ* ***Բաբկէն Արարքցեանը****, Գիս պատգամաւորներ: Յուղարկաւորութեանը մասնակցում էին նաեւ Շահումեանի յանձնման պատճառները քննող յանձնաժողովի անդամներ:*

Ինչպէս բնական եւ աստուածատուր էին Շահէն Մեղրեանի չնորհները ու առաքինութիւնները, նրա կեանքն ամբողջապէս, այդպէս էլ բնականօրէն ընդունուեց հերոսի մահը: Մեղրեանների ընտանիքը, արժանավայել զսպուածութեամբ, առանց արտաքին կերպաւորումների եւ առանց երբեւէ չահարկելու իրենց կորուստը: Նրանք չհեթանոսացան, Ազգային հերոսին մեռել չդարձրին, ինչպէս կարելի էր սպասել եկեղեցուց տեւականօրէն զրկուած մի շրջանի համար, որը կարող էր անյուսութեան մատնուել: Մեր ազգի կորուստը ոչ թէ Շահէնն էր, մարդ, որը բնաւ կորած չէ նաեւ մահից յետոյ, այլ Շահումեանն է՝ մեր Հայրենիքը:

Բագրատ Ուլուբաբեան. «1993 թ. ապրիլի 18-ին հաղորդեցին, որ երէկ ԼՂՀ ազատագրութեան համար զոհուել են պարտիզանական-ֆիդայական զօրախմբի ղեկավար, մայոր **Շահէն Մեղրեանն** ու իր զինուորներից եօթ հոգի:

Անմիջապէս չկարողացայ կողմնորոշուել, մոլորեցնող էր «մայոր» կոչումը, որն առընչութիւն չունի Շահէն Մեղրեան երեւոյթի հետ: Նման անուններ յիշելիս որեւէ բան ասելու համար պարտադիր չէ կապել կոչումների, տարբերանշան-տիտղոսների հետ: Ուրեմն նահատակուեց նաեւ նոր օրերի այդ հերոսը, որ լուռ արհամարհելով չուրջը տարածուած թշնամական ասեկոսէներն ու յիմար բարբաջանքները, իր կռիւն էր անում, հայրենի եղերքի փրկութեան կռիւը...»:

Յարգարժան պատմաբանն այստեղ ակնարկում է այն իրողութիւնը, որ զինուորական կոչումները չեն համապատասխանում զօրականների իրական կարողութիւններին եւ դա պարզապէս խախտում է մարդու բնատուր կամ աստուածատուր չնորհների իրական պատկերը: Հերոսի համար այլեւս ի՞նչ տիտղոս յօրինես, որ այդ յաւիտենական կոչումից բարձր լինի կամ աւելի ստոյգ լինի:

Նահատակութեան լուրը հասել է աշխարհասփիւռ հայերին, հայոց բոլոր բարեկամներին. ցաւակցական հեռագրեր են ստացուել շատ ու շատ տեղերից. «Ցնցուած ենք Ղարաբաղեան ազատագրական շարժման լեգենդար ազգային հերոս Շահէն

Մեղրեանի, ուղղաթիռի անձնակազմի, Ղարաբաղի ազատութեան համար մաքառող զինակիցների նահատակութեան լուրով»,- *այսպէս է սկսւում ռուս մտաւորականութեան «Ղարաբաղ» կոմիտէի հեռագիրը, որն ստորագրել են* ***Ալեքսէեւսկին, Բաբանովը, Բուրկովան, Վերմիշեւան, Նույկինան, Նույկինը, Օսոցկին, Գայդարը, Դաշկեւիչը*** *եւ ուրիշներ:*

Շահէն Մեղրեանի եւ իր զինակիցների մահը խորին ցաւով ընդունուեց հայ ժողովրդի, մեր մտաւորականութեան եւ նրան բոլոր ճանաչողների կողմից: Հրապարակուած բազմաթիւ նիւթերից զետեղում ենք մի քանիսը:

Հրանտ Խաչատրեան. «Խորին ցաւով ընդունեցի Շահէն Մեղրեանի ողբերգական մահը: Դա այն ժամանակներն էին, երբ մէկը միւսի ետեւից հանելուկային պայմաններում զոհ դարձան Արցախեան ազատամարտի երեւելի զօրավարները, չեմ թուարկում, որպէսզի որեւէ մէկին չմոռանամ, եւ մենք լսում էինք Արցախի ինքնապաշտպանութեան երաշխաւորների մահուան գոյժերը, եւ այդ ամէնը ցաւալի էր, նրանցից ամէն մէկի կորուստը պակասեցնում էր յաղթանակի երաշխիքը»:

Քերոլայն Քոքս. «Խորապէս ցաւում եմ ու կիսում անմոռանալի **Շահէնի**, նրա ջոկատի պայծառ տղաների, ուղղաթիռի հերոսական օդաչուներ **Ջանփոլադի, Իոսիֆի եւ Արամի**, որոնց հետ բազմիցս թռել եմ պայքարող Արցախ, ծնողների, հարազատների ու մտերիմների, ողջ Արցախի ժողովրդի անդարմանելի վիշտը:

Յուսով եմ, որ Ղարաբաղի զոհուած որդիների համար իսկական յուշարձան կը դառնան ազատ Արցախն ու խաղաղութիւնն այս հինաւուրց հողի վրայ» *(«Ազատգարդ», 22 ապրիլի 1993 թ., թիւ 8):*

Շահէն Մեղրեանի բազմաթիւ գործընկերներ եւ ճանաչողներ առնուազն կասկածով են վերաբերել հերոսի մարտիրոսութեանը բնական ճանապարհով, այսինքն՝ թուրքի ձեռքով: Ինչո՞ւ ենք կասկածում, որ **Շահէն Մեղրեանի մահը** *ոչ թէ թուրքի ձեռքի գործ է, այլ կանխամտա սպանութիւն: Որով-*

հետեւ Շահէնի դէմ մահափորձ արդէն կատարէլ էին 1991 թուականին, եւ նա պատահմամբ է ողջ մնացել: Այսինքն՝ կային մարդիկ, որոնց համար անհրաժեշտ էր Շահէն Մեղրեանի մահը, եւ նրանք հետամուտ էին այդ միտքն իրականացնելու: Ջենք կարող բնորոշել նրանց ըստ քանակի. քանի՞ մարդ է եղել շահագրգիռ՝ ներգրաւուելով նախ նրա քաղաքական սպա-նուէթեան գործին, որն աւարտուել է իրենց համար անյաջո-ղութեամբ, զի պատերազմական տարիներին անհնարին էր Շահէն Մեղրեանին քաղաքականապէս սպանելը. ընդհակառա-կը, որքան սաստկանում էին անարգանքն ու սադրանքները, այնքան մեծանում էր Շահէնի փառքը: Միայն պարտիզանա-կան պայքարի գաղափարը Շահէն Մեղրեանի քաղաքական հանճարի պերճ վկայութիւնն է: Դժուար չէ որակական բնու-թագրութիւն տալ այն ուժերին, որոնք բազմիցս ձգտել են Շահէն Մեղրեանին վերացնել հասարակ սպանութեան մեթոդ-ներով, սակայն ինչ-ինչ հանգամանքների բերումով նրանք չեն կարողացել դա անել կամ դեռ ժամը չէր հասել: Որովհետեւ հայդուկային ջոկատը մեծ գործեր էր անում եւ հեշտացնում Մարտակերտի եւ Քարվաճառի ազատագրումը: Սակայն երբ արդէն դրանք ազատագրուած էին, որոշակի ուժեր չէին կարող հանդուրժել, որպէսզի Շահէնը ողջ մնար եւ աննկուն կերպով ձգտէր Շահումեանի ազատագրմանը: Դա ամենայն հաւանա-կանութեամբ, ինչպէս կարող է եզրակացնել գրքի ուշադիր ըն-թերցողը, դէմ է եղել տարածաշրջանային խնդիրներն ուղղոր-դողների ծրագրին: Կարելի չէ ստոյգ ասել, թէ ո՛ր ուժերի կողմից, սակայն այդպէս էլ պարզ է, որ դրանք դրսի ուժեր էին, որոնք ուղղորդում էին ներսի իրաղարձութիւնները: Նրանք դա անում էին ներսի իրենց վստահելի «կենտրոն»ի միջոցով, կիրառելով բազմահնար ռազմավարութիւն, հմտօրէն օգտա-գործելով լիդերութեան գործօնը, սրելով հակասութիւնները, կիրառելով ֆինանսական եւ այլ միջոցներ, չհարկելով այլեւ-այլ հանգամանքներ: Շահէն Մեղրեանի պարագային՝ սրուած էին հակասութիւնները՝ քաղաքական կուրսի հակադիր ստրա-տեգիաներ էին կիրառւում, կառավարման լծակների զաւթման

եւ լիդերութեան պայքար էր, մշակութային արժէքների, դաւանանքի եւ վերջնանպատակների, կենսական դիրքորոշումների հակադրութիւններ... Վերոթուարկեալներից միայն մէկն էլ բաւարար էր հակառակորդին «թէկուզ սիրելով» վերացնելու համար: Դրսի օժանդակութեամբ նաեւ աստիճանաբար ու մեթոդիկ կերպով «ներսից» ոչնչացնում էին ազգային կարող ուժերին, որպէսզի պատերազմի աւարտից յետոյ այդ ուժերի ձեռքին չլինէր երկրի վիճակի բարեփոխման որեւէ լծակ: Ուստի ազատւում էին նաեւ այն մարդկանցից, ովքեր շատ բան գիտէին եւ մի օր կարող էին իրենց մերկացնել: Այսինքն՝ ներկայիս քաոսն ու թշուառութիւնն արտաքին ուժերի ծրագրով է եղել, քանզի ուժեղ եւ անկախ Հայաստան, բացի հայերից, չգիտենք է՛լ ո՞ւմ է ձեռնտու:

Ուստի, հաւանական ենք համարում այն վարկածը, որ ուղղաթիռի կործանումը չարամիտ սառնախոհութեամբ նախապատրաստել են այն ուժերը, որոնք չահագրգռուած են եղել Շահումեանը թուրքերին յանձնելու: Հայաստանում հակադիր ուժերի միջեւ եղած հակասութիւնների տեւական եւ համակողմանի ուսումնասիրութիւնը դեդուկտիւ եղանակով մեզ բերել է այդ համոզմանը: Յատկապէս պատերազմական բախումների եւ իրադրութեան պայմաններում հակառակորդ ուժերին առաջնորդազրկելը քաղաքական պայքարում շատ տարածուած երեւոյթ է: Ինչեւէ, Շահէն Մեղրեանի գործունէութիւնը հակադիր էր ազդեցիկ շրջանների եւ երկրների տարածաշրջանային «միջազգային» քաղաքականութեանը:

Շահէն Մեղրեանի եւ Շահումեանի նկատմամբ չարունակւում էր ճիշտ այն վերաբերմունքը, ինչ ազգային-ժողովրդավար ուժերի, եւ յատկապէս՝ Դաշնակցութեան ու նրա առաջնորդների: Ազգային այս երկու պետական գործիչներն էլ քաղաքական մեւնոյն հակադիր վիճակում էին գտնւում այն ժամանակուայ իշխանութիւնները ներկայացնող քաղաքական ուժի հետ:

***Արթուր Մկրտչեանի** սպանութիւնն առաւել պարզորոշ կերպով մակերես հանեց հակահայկական եւ հակաժողովրդական*

ուժերի այդ միտումը: Նպատակասլաց եւ հետեւողական մարդու դէմ ժամանակի ընթացքին պայքարի լարուածութիւնը մեծանում է եւ նրանից ազատուելու ճար ու միջոցներ են փնտրում: Սակայն պատերազմի ժամանակ ո՞վ է մտածում իր անվտանգութեան մասին: Պատերազմական վիճակին մարդուն վնաս հասցնելու, նրան ասպարէզից այս կամ այն կերպ հեռացնելու հնարաւորութիւնները մեծանում են, հետեւաբար, զուրկ չէ հիմքից այն վարկածը, որ Շահենենց ինքնաթիռը ցած են գցել հէնց մեր համազգիները, որոնք հայ են համարւում: **Ո՞ւմ ձեռքի գործն էր ուղղաթիռի կործանումը:**

Դա Արթուր Մկրտչեանի սպանութեանը հաւասար քաղաքական սպանութիւն է: Արթուր Մկրտչեանի սպանութիւնն իրրեւ քրէական գործի բացայայտում՝ ընդամէնը խաղ ու պար է, մի քանի անձանց քննման արդիւնքում, որն առ այսօր չի իրականացւում: Խնդիրն այդ քրէական սպանութեան պատուիրատուի քաղաքական-իրաւագիտական բացայայտումն ու ապացուցումն է, որն անհնարին է ներկայ քաղաքական ռեժիմի պայմաններում: Թւում է՝ յստակ է ամէն ինչ, բայց ժամանակ առ ժամանակ ուշադրութիւնը բուն խնդրից չեղող տարատեսակ տարբերակներ են քննարկւում: Նոյն խնդիրն է նաեւ Մեղրեանի պարագային: **Սխալ տարբերակներ են առաջադրում, որպէսզի ճիշտ տարբերակները չքննարկուեն:** Ուշադրութիւնը չեղելու հոգեբանական այս հնարը կիրառուել է անյիշելի ժամանակներից:

Շահէն Մեղրեանը վաղուց է դարձել հետապնդման «օբյեկտ» եւ պատահակա՞ն է արդեօք երեք ուղղաթիռների կործանումը 1991, 1992 եւ 1993 թուականներին մօտաւորապէս մէկ տարի պարբերութեամբ, որոնց մէջ ամէն անգամ եղել է Մեղրեան ազգանունամբ մի հոգի՝ **Պետրոս, Պօղոս, Շահէն:** Թռիչքների ժամանակ յայտնի էր լինում միայն թռչողների ազգանունը եւ ոչ անունը:

Այսպիսով, մեր խնդրի համատեքստում, Շահէն Մեղրեանի կորուստը նախ քաղաքական մահ է, քաղաքական սպանութիւն՝ անկախ իր իրականացման հանգամանքից եւ ձեւերից:

*Ուղղաթիռի կործանումն առաջին հայեացքից թուում է պատահականութեան, այսինքն ռազմադաշտային դիպուածի արդիւնք: Առաջին անգամ չէր Շահումեանի հողի վրայ ուղղաթիռ ընկնում: Ի՞նչ մտածումներ ունեն դրա վերաբերեալ գործին մօտ կանգնած մարդիկ: **Սերգէյ Վանցեան**.* «Թռիչքը երկու ուղղաթիռով էր՝ **Ռաֆայէլ Մեհրաբեանի** հրամանատարութեամբ: Առաջին ուղղաթիռն անվնաս դուրս եկաւ պարտիզանական չրջանից, իսկ երկրորդը խփուեց: **Ջանփոլադ Մուրադեանի** անձնակազմն էր, զինուորական հերթափոխ էր բերել եւ այնտեղից պիտի գնային արդէն երկար ժամանակ մնացածները, որպէսզի հանգստանային, վերականգնէին ուժերը եւ նորից վերադառնային: Շատ բարեյաջող տեղ էին հասել եւ յետադարձ թռիչքին առաջինն օդ է բարձրացել Ռաֆայէլ Մեհրաբեանը: Ռաֆայէլը նկատում է, որ հրթիռ են արձակում եւ նա ոչ թէ ուղղակի վեր է բարձրանում, այլ բարձունքների ետեւն է անցնում եւ հրթիռն արձակելիս ուղղաթիռը չի երեւում: Երկրորդը Ջանփոլադն է բարձրանում եւ ուղիղ վեր է ելնում եւ դիմացից կարողանում են հրթիռով խփել: Ռաֆայէլի աչքերի առջեւ վառուող ուղղաթիռն ընկել է անտառը:

Ըստ ժամանակի քարտէզագրութեան, մօտակա 30-40 կիլոմետրի վրայ թշնամական որեւէ ուժ պիտի որ չլինէր: Ես չեմ բացառում, որ այդ թեթեւ հրթիռները թուրքերը հասցրել են Բազայի մերձակայքը եւ այնտեղից խփել: Այդ վարկածը ես բացառել չեմ կարող: Միանշանակ է, որ ուղղաթիռը հրթիռահարուել է, սակայն ո՞ր տեղամասից՝ դժուար է ասելը: Յամենայն դէպս այդ հրթիռների գործողութեան չառաւիղը 3-4 կիլոմետրը չի գերազանցում: Դա եղել է մօտակայքից եւ հնարաւոր է՝ եղած լինի թուրք հետախոյզների գործը»:

***Գեղամ Գաբրիէլեան**.* *«Շահէնենց խփուելը քաղաքական հարց է, չգիտեմ, սակայն հաւատս չի գալիս, թէ թուրքերի դիւերսիոն խումբը կը մտնէր մեր թիկունք, մի քանի օր կը մնար եւ կը խփէր Շահէնին: Ես ատոյգ ոչ մի բան չեմ կարող ասել: Էն դէրքերից, որ գտնուել է մեր զօրքերի վերահսկողութեան տակ, էնտեղից են խփել: Հնարաւոր է կամ թուրքերի*

*յատուկ, ուժեղ ջոկատ է եղել, որ թափանցել է, օրեր մնացել՝ մինչեւ ուղղաթիռը գայ եւ խփի: Ինքներդ դատէք: Շատ ցաւալի զոհեր տուեցինք, **Գրիգոր Գրիգորեանն է** եղել, **Բժիշկն** է եղել, **Շահէնի եղբօր թոռն էր,** որ Ռուսաստան էր սովորում, 16 տարեկան էր, դիւերսիոն դպրոց անցած»:*

***Գրիգոր Գրիգորեանի** ընկերը պատմել է, որ Գրիգորը խուսափում էր ղեկավարների հետ նոյն փոխադրամիջոցով որեւէ տեղ մեկնելուց, քանզի կարեւոր դէմքին փոխադրող մեքենայի կամ օդանաւի կործանման հաւանականութիւնը միշտ էլ մեծ է եւ աֆղանստանով անցած զինուորականը հայեացքի տակ ունէր ահաբեկութեան փաստերը, որոնց թիւը շատ մեծ է: Գրիգորը վաղուց Հայաստանում, տանը չէր եղել եւ ուզում էր գնալ, սակայն մի բան նրան ետ էր պահում: Մի երկու անգամ մօտենում է ուղղաթիռին եւ ետ քաշւում, երրորդ անգամ թափահարում է ձեռքը եւ բարձրանում մեքենան... Նրա հոգում հակադիր գործօնների պայքար էր գնում: Հետախոյզի անսխալական ինտուիցիան /ներըմբռնում/ նրան հրահանգում էր չբարձրանալ ուղղաթիռ, քանզի Գրիգորը շատ լաւ գիտէր Շահէնի դէմ գոյացած անհամակրական, այլեւ ատելութեան եւ անհանդուրժողական մթնոլորտի եւ ուժերի մասին. մէկ անգամ չէ, որ Շահէնն «անվտանգ» գօտիներում յայտնուել է ծայրահեղ դրութեան մէջ: Միւս կողմից՝ քաղաքական-պետական «էլիտայից» Շահէնն այն եզակիներից է, ով պատերազմի սկզբից մինչեւ վերջ ապրել է ռազմիկի չարքաշ կեանքով՝ յարատեւ լինելով ռազմական գործողութիւնների առաջաւոր բնագծում իր մարտիկներից եւ հայդուկներից անբաժան: Այս է պատճառը, որ Գրիգորը երրորդ անգամ վճռական շարժումով բարձրանում է ուղղաթիռ եւ գնում է բաժանելու սիրելի հրամանատարի «ճակատագիրը»:*

Գլուխ քսանմէկերորդ
ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻՑ ՑԵՏՈՑ

*Ուխտին հաւատարիմ՝ Շահէն Մեղրեանը կռուեց մինչեւ վերջ եւ զոհուեց: Բայց նրա գերեզմանին կարծես ուխտի նորոգում եղաւ: **Կուճուր Շահէն**. «Կռիւը պիտի չարունակուի մինչեւ հայրենիքի ազատագրումը: Այդպէս է մեզ սովորեցրել Շահէնը»: Սակայն Շահէն Մեղրեանի ողբերգական մահից յետոյ նրա տեղը բռնող չեղաւ: Այլեւս չկար առիւծի քաջութեամբ մարտի մէջ նետուող եւ միաժամանակ գործողութիւնները գլխաւորող հրամանատարը, չկար ոգեշունչ առաջնորդն ու մարդասէր-մարդագէտը, ով միշտ բարձր էր պահում իր մարտիկների ոգին եւ լաւատես խանդավառութեամբ համակում բոլորին, չկար Շահումեանի ազատագրման դրօշակակիրն ու ասպետը, ումից ակնածում էին ամենքը եւ կամայ թէ ակամայ ընդունում Շահումեանի ազատագրութեան անհրաժեշտութիւնը: Շահէն Մեղրեանին յաջորդած **Սերգէյ Զալեանը** շտաբային եւ դաշտային հրամանատար էր եւ մարտավարութեան ասպարէզում յարգուած անձնաւորութիւն: Սակայն նա Շրջանի առաջնորդ չէր, քաղաքական եւ պետական գործնէութեան ասպարէզներում չէր եղել եւ բնականաբար Շահէն Մեղրեանին ժառանգորդ չդարձաւ: Շահէն Մեղրեանի զոհաբերութեամբ Շահումեանի ազատագրութեան խնդիրը անյայտ ժամանակով փոխադրուեց անորոշ ապագայ:*

Շահէն Մեղրեանից յետոյ հայդուկային կռիւները չարունակուեցին մինչեւ ռազմաճակատային գծի հաւասարուելը հայդուկների զբաղեցրած տարածքներին: Դրանից յետոյ էլ Շահէն Մեղրեանի անուան յատուկ ջոկատը մասնակցել է մարտական գործողութիւններին մինչեւ վերջ, սակայն դրանք այլեւս հայդուկային կռիւներ չէին: Շահէնի հետ միասին, լեզուս վրայ չի գալիս ասելու եւ երկիւղով նայում եմ դէպի երկինք՝ կարծես յուղարկաւորուեց Շահումեանի հարցը: Սակայն պատշաճութիւնը թելադրում է հետեւել իրադարձութիւնների ընթացքին:

ԴԱՍՏԱԳԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ. ՎԱՀԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Ջոկատը զօրամաս դառնալուց մէկ ամիս անց Շահէնը զոհուեց: Մարտիկներից ոմանք մտածում էին, թէ պարտիզանուհիւնը Շահէնից յետոյ կը վերանայ, սակայն հին մարտիկները որոշում են չարունակել պայքարը մինչեւ վերջ:

Մենք արդէն նշել ենք, որ մարտական բոլոր գործողուհիւնները ծրագրում եւ կատարում էին մի չարք փորձուած հին հրամանատարների անմիջական մասնակցուհեամբ եւ իրենք էլ գլխաւորում էին դրանց գործնական իրականացումը: Դաշտային այս հրամանատարների անխոնջ եւ անդուլ ջանադրուհեամբ, յաղթահարելով բազմապիսի դժուարուհիւններ՝ հայդուկներին առաջնորդում էին աներեւակայելի դժուարանց տեղերով եւ անակնկալ ներխափանց գործողուհիւններով հասնում յաղթանակների:

Մատաղիսի գործողուհեան վերաբերեալ իրենց մեկնուհիւններն են ներկայացրել ***Վանիկ Ասլանեանը, Նովիկ Գիւլումեանը, Շուն Շահէնը, Դերենիկ Սարգսեանը:***

Սրընթաց երթով հայդուկները հասնում են Մատաղիսի *բարձունքներին, կանգ են առնում, քանզի թշնամին Դաստագիրում կենտրոնացրել էր մեծ ուժեր: Հայդուկներն առահասարակ կիրառում էին բազմապիսի մարտավարուհիւններ՝ ըստ տեղի եւ հանգամանքների: Լինելով փոքրաթիւ, նրանք թուրքերի հետ ճակատ ճակատի դէմ տուած երբէք չէին կուռում, Հայդուկների գործողուհիւնները միշտ եղել են վաղ առաւօտեան եւ մերձամարտով: Դրանից արդիւնաւէտ ժամանակ հաւանաբար չկայ. գիշերը ճանապարհ էին գնում եւ վաղ առաւօտեան ցայգալուսային անակնկալ յարձակումներով, երբ քաղցր քունն է պարուրում մարդկանց, հասնում էին իրենց խնդիրների լուծմանը: Նման պարագային հակառակորդը կենդանի ուժի կորուստ էր ունենում:* ***Դաստագիրի գործողուհիւնն*** *այդպիսին չէր: Տղաները դիրքաւորուել էին եւ սպասում էին, որ Մարտակերտի ուժերը պիտի հրետանակոծեն այդ ուղղուհեան եղած թշնամու դիրքե-*

րը եւ հետեւակը գրեթէ անարգել չարժուի դէպի Յակոբ Կամա-
րի: Հայդուկներն էլ պիտի մտնէին՝ իրենց ուղղութեամբ:
Հրետանին սխալ տեղ խփեց եւ հետեւակն էլ չեկաւ: Տղաները
սպասեցին մինչեւ կէսօր: Յունիս ամիսն էր:

Մեր ուժերը 4 խմբով պիտի իրականացնէին յարձակումը:
25 հոգիանոց գրոհային հիմնական խումբը ***Նովիկի*** *գլխաւորութեամբ պիտի մտնէին թշնամու դիրքերը եւ նրանց*
հանէին այնտեղից: Ծանր զէնքի կրակային դասակը ներքին-
չէնցի ***Բորիկ Բաբաջանեանի*** *գլխաւորութեամբ պիտի քանդէր*
հակառակորդի լաւ ամրացրած կրակակէտերը եւ հսկողութեան
տակ առնէր Մատաղիսից եկող ճանապարհը: Նրանք իրենց
տրամադրութեան տակ ունէին ՍՊԳ-9՝ հակատանկային հաս-
տոցային նռնականետ: ***Վանիկ Ասլանեանը*** *գրոհային մէկ այլ*
խմբով յարձակման նմանակում է իրականացնում ճակատային
մասից՝ չեղելով թուրքերի ուշադրութիւնը եւ իր վրայ առնելով
նրանց կրակային զօրութիւնը: Դրանից օգտուելով՝ գրոհային
հիմնական խումբը, /որին յետոյ միացել է Վանիկի խումբը/
Նովիկի հրամանատարութեամբ պիտի թափանցէր թուրքերի
խրամատները եւ նրանց դուրս բերէր դիրքերից: Դաստագիրի
մարտը, չնայած իր նախագծային եւ կատարման կատարե-
լութեանը, վերոգրեալ պատճառաւ դարձաւ մի դժուարին եւ
ձգձգուած կռիւ, որ տեւեց եօթ ու կէս ժամ: Մեր մարտիկների
ընդհանուր թիւը 62 էր: Սակայն թուրքերի բլինդաժների վրայ
գործողութեան գնացողները հէնց այդ 25 հոգին էին, որոնց մէջ
Վահէն *էր: Թուրքերը 475 հոգի էին, որոնցից 27-ը սպայ: Դա*
պարզուեց երեկոյեան, երբ ցուցակները գտան հրամանա-
տարական հրապաստարանի մէջ:

Երկար ժամանակ չէին կարողանում առաջ գնալ. թուրքերն
ուժեղ ամրացուած գօտի ունէին: Նրանք շատ խորամանկ
ձեւով էին փորել իրենց հրապաստարանները (բլինդաժ), շատե-
րը բնական աճած խոտերի թփուտների տակ, եւ իրենց կրակա-
կէտերը վարպետօրէն քօղարկել էին: Հակառակորդի մի գնդա-
ցիր լաւ աշխատում էր, հնար չէր տալիս առաջ գնալու, խոտն
էլ բարձր էր: Խմբի առաջապահները՝ ***Վահէ Բաղդասարեանը,***

Կամօ Ցարուքիւնեանը, Կարճաղբիւրցի Թաթուլը *ընկան գնդացրային ուժեղ կրակի տակ: Այդ պահին* ***Վահէն*** *փորսող առաջ գնաց, որ գնդացրորդին չարքից հանի: Մօտեցաւ բլինդաժին 10 մետր հեռաւորութեան վրայ եւ խփուեց: Աջից տղաները գոռացին, որ Վահէն վիրաւորուել է: Կարծում էին թուրք գնդացրորդը քաջամարտիկ է եւ թւում էր, թէ միայն ինքն է մնացել մերոնց դէմ: Դրան մեր տղաները մի քանի հոգով խփեցին: Կարծես գործը վերջանում էր, բայց պարզուեց, որ այդպէս չէ. թուրքերի նորանոր կրակակէտեր էին ի յայտ գալիս: Շարունակեցին գործողութիւնը: Վահէի խփուելուց յետոյ մարտն աւելի թէժացաւ: Տղաները խենթացած՝ արդէն ոչ մի բան հաշուի չէին առնում, քանի որ շատ էին սիրում Վահէին: Այդ մարտում Կամոն եւ Թաթուլը եւս վիրաւորուեցին:*

Բժշկական համալսարանի 4-րդ կուրսի ուսանող ***Վահէ Բաղդասարեանը*** *հռչակուած հետախոյզ էր եւ միաժամանակ ջոկատի բժիշկներից: Մարտերում իրեն փայլուն էր դրսեւորում:* ***Գագիկ Ղուլեան.*** «Մեր բազան երբ դեռեւս Եղակերում էր, **Շահէն Մեղրեանի** վրայ տպաւորութիւն թողած **Վահէն դարձաւ դասակի հրամանատար**, իսկ դա այն ժամանակ համարւում էր բարձր պաշտօն, որովհետեւ բազմափորձ եւ քաջարի տղաներն էին պատասխանատու լինում: Դա եւ մեծ պատիւ էր, եւ մենք նոյնիսկ ուզում էինք առարկել, որ ինքը ուսանող է, եթէ գնայ, ո՞վ պիտի իր տեղը լրացնի: Դեռ զօրամաս չկար, ամէն ինչ բանաւոր պայմանաւորուածութեան վրայ էր: Սակայն Շահէնի ասածը գրուած հրամաններից զօրեղ էր, նրա ասածն օրէնք էր»:

Տօնաշէնում սպասող 4-րդ խումբը ***Շահէն Սայիլեանի*** *հրամանատարութեամբ պիտի հետախուզէր Տօնաշէնի տարածքը, եւ պահէր Տօնաշէն-Դաստագիր ճանապարհը՝ թուրքերի հաւանական նեթափանցումից: Նրանք կէսօրուայ ժամը 12-ին տեսան՝ թուրքերը կիսամերկ, անհոգ արեւային ջերմութիւն են վայելում: Շուն Շահէնը մի քանի հոգով անցաւ դրանց թիկունքը: Թուրքերը սկսեցին փախչել եւ կրակի հեչտ թիրախ*

դարձան: Տօնաշէնի կամուրջը պայթեցուած էր եւ փոխարէնը դերաններից պատրաստուած մի կամրջակ կար: Գնդացրային կրակը «կապեցին» կամրջակի վրայ, եւ թուրքերը նմանուում էին գետը քշուած ոչխարների: Մի մասին գետը տարաւ, մնացեալը խփուեցին: Ամբողջ զօրամասը ջարդուեց: 1993-ի յունիսի 13-ն էր:

Դրանից յետոյ բեկում է տեղի ունենում եւ ճակատի թուրք ուժերը գլխապատառ նետւում են դէպի Թարթառի ձորը: Թշնամին մի կերպ ճողոպրում է: Թուրքերը Մատաղիսում գտնուող ռազմակայանից 200 ասկեար են ուղարկում խուճապը վերացնելու համար: Բայց հայդուկները նախապէս իմացել էին դրա մասին եւ դարան պատրաստել: Օգնութեան փութացողներն իրենք են ողորմելի վիճակի մէջ յայտնւում, կրում անբեկանելի հարուածներ եւ հուժկու կրակի զոհ են դառնում: Կենդանի մնացածները միանում են Դաստագիրից փախչողներին եւ նետւում դէպի Կետի կամուրջը: Թշնամու խուճապը պատճառ է դառնում գետի ջրերում նրանց մի մասի ջրասոյզ լինելուն: Այդ մարտերում թշնամին 70 սպանուած թողնում է միայն Դաստագիրի դիրքերում, իսկ մացառուտներում եւ ձորերում ընկածների ու ջրի տարածների թիւն անյայտ է:

Դաստագիրն ու Տօնաշէնը վերցնելուց յետոյ խմբերն իջան եւ դիրքեր դրեցին կախովի կամրջի շրջանում:

ՄԱՏԱՂԻՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Մատաղիսի բարձունքներն իշխող դիրք են գրաւում շրջակայքի վրայ եւ վճռական նշանակութիւն ունէին Սարսանգի հիդրոհանգոյցի ամբողջ տարածքի եւ ընդհանրապէս Արցախի հիւսիսային տեղաշրջանի պաշտպանութեան գործում: Հասկանալով տեղանքի նշանակութիւնը՝ թշնամին այնտեղ բազմաթիւ գնդացրային ամրացուած կէտեր էր կառուցել, ստեղծել պաշտպանութեան ամուր համակարգ: Շտաբում գտնում էին, որ նոյնիսկ ամենայանդուգն գրոհներով այդ դիրքերը գրաւելու համար մօտ 600 զինուոր է անհրաժեշտ, իսկ պարտիզաններն

ընդամէնը 62 հոգի էին: Բացի այդ, թշնամու ամրակէտերը եւ պաշտպանական խրամատների գիծը ճեղքելու համար հեռահար հրետանի էր հարկաւոր, որը կարող էր հասնել միայն Մարտակերտի ազատագրումից յետոյ: Իսկ այնտեղ վիճակը բարւոք չէր, ընդհակառակը՝ ծանր էր: Պարտիզանների անտեսանելի ճակատային գիծն առաջ էր գնացել, իսկ գլխաւոր ճակատում դեռեւս առաջխաղացում չկար: Սպասե՞լ, թէ յարձակման բնական ընթացքով առաջ գնալ:

Զալեանը *սպասում է մէկ օր, բայց իրավիճակի փոփոխութիւն տեղի չի ունենում: «Եղնիկները» ճեռնարկում են անհրեւակայելի մի յարձակում: Առանց նախնական հրետակոծութեան գրոհում են թշնամու դզոտների եւ այլ ամրութիւնների վրայ: Զալեանը ջոկատը բաժանում է 4 փոքր խմբերի: Գրոհային խմբերից առաջինը գլխաւորում է* ***Նովիկը****, երկրորդը՝ ականանետային խումբն էր* ***Յակոբ Խիդիրեանի*** *գլխաւորութեամբ,* ***Բորիկ Բաբաջանեանը*** *գլխաւորում է զրահախոցիչ զէնքի խումբը, չորրորդը Շուն Շահէնի հետախոյզներն էին: «Մալիւտկա»ները վրիժառուների ճեռքին հրաչքներ էին գործում: Այս գործողութեան առանձնայատկութիւններից մէկն այն էր, որ գրոհողները 18 կմ հետեւակ ճանապարհ անցան դժուարանց անտառներով՝ ամէն մէկի ուսին հսկայական բեռ: Եւ այս ամենից յետոյ յոգնած մարտիկները նետուեցին անսպասելի եւ անկասելի գրոհի: Այսպիսի կռիւ ոչ ոք չէր կարող սպասել: Կենաց եւ մահու կռիւ էր:*

Դէմները Մատաղիսն էր: Ամբողջ գիշեր լսում էին Մատաղիսում տեղի ունեցող իրարանցումը. հակառակորդը փորձում էր վերադասաւորել իր ուժերը՝ Մատաղիսն ամէն կերպ պահելու համար: Լուսաբացն սկսուեց մեր մարտիկների հզօր կրակով: Դէմները մի փոքր բարձունք էր, ուր տեղադրուած էին թուրքերի կարեւոր կրակակէտերը: Գրոհայինների հետ էր նաեւ սպառազինութեան գծով հրամանատարի տեղակալ ***Սաչա Կուրեպինը****: Նա ՍՊԳ-ՅԻ մի քանի կրակոցով ոչնչացրեց թուրքերի հզօր կրակակէտը՝ ոչնչացնելով Հետախուզութեան մարտական մի մեքենայ /ԲՏՌ/, մէկ Ուրալ մեքենայ, վերացնե-*

լով նաեւ կապի հանգոյցը: Աւելի ետ գտնուող, թիկունքն ապահովող թալիչցիները հաղորդեցին, որ թուրքերը ճողոպրում են: Մեր մարտիկներն առանց այլեւայլութեան մտան Մատաղիս եւ վերջին բնակավայրը: Կէսօրին այն մեր ձեռքին էր: Դա յունիսի 14-ին էր:

Շուն Շահէնն անդրադարձել է նաեւ Մատաղիսի գործողութեանը: Արդէն ուժեր էին բերել եւ դիրքաւորուել էին: Թալիչի տղաների մէջ **Անդօ** անունով մի մարտիկ կար, Շահէնը նրան ասաց.

- Անդօ՛, տղաներիդ իջեցրու, ճանապարհը փակիր, ճանապարհին դարանախումբ դի՛ր: Այդտեղ սպասէք, ես մի քանի տղաներով գալու եմ՝ անցնեմ թիկունք:

- Սաշկօ, այստեղ սպասէք, մինչեւ ես ասեմ, թէ մեքենայի մէջ քանի մարդ է նստելու: Պիտի խփենք: Բայց կը թողնե՛ս, որ մեքենան նստեն: Անպայման մեքենային կը խփես:

Այդտեղ մէկ այլ **Սաշկօ** էլ կար, թալիչեցի գնդացրորդը: Խօսքը իրեն չի վերաբերում, այլ Կուրեպինին:

Շահէնը մտաւ թիկունք, տղաներին տեղաւորեց եւ ասաց.

- Սպասէք, մինչեւ թուրքերը նստեն մեքենան:

Թուրքերի մէջ մի սլաւոնուհի կար, դիպուկահար էր: Ռուսերէն խօսելով՝ նստեցին մեքենայ: Շահէնն ասաց.

- Սա՛չա, մեքենան ուզում է շարժուել, բայց մի՛ թողէք:

Սաշկոն մալիւտկայով խփեց, մեքենան վառուեց:

Մտան Մատաղիսը վերջին, Մատաղիսն ազատագրուեց, բայց Մարտակերտը թուրքերի ձեռքին էր:

Եւ այսպէս, թշնամին Մատաղիսի իր անառիկ թուացող դիրքերից սարսափահար փախուստի է դիմում: Արեան եւ կողոպուտի ծարաւ հրոսակները, որ եկել էին Թարթառի հոսանքն ի վեր, հայ գիւղերը կողոպտել ու աւերել, հարիւրաւոր խաղաղ մարդկանց կոտորել, գերել, տնաւէր ու փախստական արել, այժմ արդէն մազապուրծ փախչում էին կամ վրիժառուների ձեռքով գնում հոսանքն ի վար՝ վերջին անգամ հարամելով Արցախի խենթ գետի զուլալ ջրերը:

Դաստագիրն այսպիսով վերջին, Մատաղիսը վերջին, եւ

ճանապարհը բացուեց: Հայդուկներից ճակատը բաժանող գօտին ազատագրուեց եւ պարտիզանների զբաղեցրած տարածքն այսուհետ եւս ռազմաճակատ էր:

Մատաղիսը վերցնելուց յետոյ պահել են աւելի քան 40 օրեր: Գրեթէ ամէն օր ետ էին մղում յարձակումները եւ պաշտպանւում ռմբահարումներից: Այսպէս շարունակուեց մինչեւ Մարտակերտեան զօրքերի մուտքը Մատաղիս:

Ռազմաճակատը հայդուկային ռազմակայանին միանալուց յետոյ Յատուկ նշանակութեան ջոկատը շարունակել է իր զօրաւոր մասնակցութիւնը մարտական գործողութիւններին մինչեւ յաղթական հրաղադարը: Ներկայացնում ենք վերջին մարտերից մի դրուագ :

Արեգասարի գործողութիւնը *եւս «Եղնիկների» գործն է, որին մասնակցել են* ***Մանուէլ Գրիգորեանի*** *տղաներից: Թալիշին մերձակայ Արեգասարի /Հոռեկայ/ վրայ ձեռնարկելիք գործողութիւնը խնամքով է նախապատրաստուել, քանզի բարձունքի առումը վճռորոշ էր շրջակայ տարածքների գրաւման համար: Գործողութիւնը սկսուել է 94-ի ապրիլի 9-ի առաւօտեան: Դա թուրքերի համար կատարեալ անակնկալ էր եւ, մասնագէտների կարծիքով, կը մնայ Արցախի հերոսամարտի պատմութեան մէջ:*

Նովիկ Գիւլումեան. «Արեգասարը Թալիշի եւ Եղակերի արանքով ընկած երկարաւուն մի սար է: Այն թուրքերի ձեռքին էր: Թալիշի գրաւման ժամանակ Մանուէլի բրիգադից մի վաշտ էր տրուած եւ մեր տղաները նրանց հետ ե՛ւ ուղեկցորդ էին, ե՛ւ կռուող: Եւ շատ յաջող ստացուեց ու իրենք աւելի շուտ Թալիշ հասան, քան Մանուէլի ամբողջ զօրքը»:

Մատաղիսի ջրամբարի եզրին, Տօնաշէնի մօտակայքում աւարտւում է Թարթառի կիրճը: Հէնց այդտեղից էլ պիտի սկսուէր գործողութիւնը: Անհրաժեշտ էր թուրքերին հարուածել թիկունքից: Դաստագիրից արահետը տանում է դէպի Հոռեկայ սար: Այդքան տարածքն աննկատ անցնելն անհաւանական էր թւում, մանաւանդ իրենց հետ պիտի վերցնէին

մեծ քանակութեամբ ռազմամթերք: Գրոհային ջոկատի մէջ ընդգրկուած էին փորձառու եւ մարզուած մարտիկները: Ամէն մէկն իր վրայ կրում էր փամփուշտներ, նռնականետի երկու լիցքեր, ընդհանուր առմամբ մինչեւ 40 կիլոգրամ ծանրութեամբ: Այդպէս ծանրաբեռն ցեխոտ արահետով պիտի քայլէին տասնեակ կիլոմետրեր, լեռնային դժուարանց տեղանքով: Ճանապարհն անցնում էր Եղիչէ Առաքեալի վանքի տակով:

Մարտական ընդհանուր գործողութիւնը ծաւալուեց երեք ուղղութեամբ՝ դէպի Գիւլիստան, Հոռեկայ սար եւ Եղակեր, որպէսզի թուրքերը զրկուէին տեղաշարժի հնարաւորութիւնից: Ճանապարհի գլխաւոր ուղեկցորդ էր կարգուած **Շուն Շահէնը**:

Անակնկալ սկսուեց անցանկալի անձրեւը: Առաւօտեան ժամը իններից, զէնքերը պահած թիկնոցների տակ, քայլում էին մինչեւ գիշեր: Երբ զօրախումբը հասաւ Եղիչէ Առաքեալի մերձակայքին, մարտիկների մի մասը մտան ներս եւ մոմեր վառեցին: Սակայն անհրաժեշտ էր ամէն կերպ աննկատ մնալ: Գրոհայինների գործը ծանր էր նրանով, որ պարզ չէր, թէ տեղաշարժուող խմբերը թշնամու կողմից նկատուա՞ծ են արդեօք, որովհետեւ հակառակորդի լուսթիւնը գուցէ պայմանաւորուած լինէր ծուղակելու հանգամանքով: Անցնում ես եւ չգիտես՝ նկատուա՞ծ ես, թէ՝ ոչ: Խումբն ի վերջոյ հասաւ Հոռեկայ սարի ստորոտը: Այստեղ բացատ կար, ուր թշնամու զրահատեխնիկան էր եւ ռազմակայանը: Լուսաբացին սկսուեց մարտը: Հրամայուած էր հարուածել վրաններին: Մարտը տեւեց ընդամէնը 30 րոպէ: Տասնեակ սպանուածներ թողնելով՝ թուրքերը փախուստի դիմեցին: Բացատն առնելուց յետոյ պարզուեց, որ առգրաւուած է ամբողջ զրահատեխնիկան: Այդտեղ ճանապարհների խաչմերուկ էր, որոնցից մէկը բարձրանում էր Հոռեկայ սարի գագաթը: Բացատից յետոյ կռիւը տեղափոխուեց խաչմերուկ, որտեղ թուրքերը որոշ դիմադրութիւն ցոյց տուեցին: Այնուհետեւ անտառը մաքրելով՝ մեր խմբերն առաջ անցան: Արեգասարը գրաւուած էր:

Յետագայ երկու օրերի ընթացքին ազատագրուեցին Մատաղիսը, Տօնաչէնը, Դաստագիրը: Ճակատային գիծը

մղուեց առաջ: Գրաւուած էր հսկայ մի տարածք: Գրոհային գործողութիւնների ընթացքին մեր կորուստները փոքրաթիւ էին՝ 18-ամեայ մի երիտասարդ սակրաւոր եւ Մանուէլի գումարտակներից մէկի հրամանատար՝ ***Վեդիի Հրաչը****:*

Անդրանցիկ այսօրինակ գործողութիւնները չատ տպաւորիչ են եւ արդիւնաւոր:

Այս գործողութեան մասին իր յատուկ կարծիքը յայտնեց Շուն Շահէնը: «45-ի հրամանով (տեղանքի ընդհանուր հրամանատարի ազդականչն է - Ա.Պ.) *Մանուէլը 300 մարդ ուղարկեց, թէ էսօր էսինչ տեղանքը պիտի վերցնենք: Հոռեկայ սարն է, որ Եղակերից ճգնում է դէպի Ջրաբերդ, Տօնաչէն: Շահէնը* ***45-ին*** *ասաց. «Մանուէլ ջան, դա մի օրուայ բան չէ, տղերքը պիտի տեղանքն իմանան: Ես իմ աչքով պիտի թիկունքները տեսնեմ, յետոյ իրենց հետքերով գնամ...»: Առաջինը մտածում ես, որ եղարժի ճանապարհը լաւ լինի: Երբ մտնում ես մարտի մէջ, առաջին հերթին պիտի նահանջի ճանապարհը լաւ ընտրես: Մտայ եւ ասացի.*

- Մանուէլ, առնուազն մի 80 հոգի անցկացնենք թիկունք:

Մանուէլը առարկեց, թէ դա հնարաւոր բան չէ:

- Մանուէ՛լ, մեր պարտիզանների համար դա հնարաւոր բան է, մեզ համար դժուար չէ»:

Յաջողեցին, 80 մարդ անցկացրին եւ թուրքի ռազմակայանն առան աջքանի մէջ: Մի փոքր կածան միայն թողեցին, որպէսզի թշնամին նահանջի տեղ ունենայ, որ մենք զոհ չունենանք: Բազան իր տեխնիկայով, ամէն ինչով վերցրին ընդամէնը 15 րոպէում: Մէկ օրուայ մէջ հասան Մատաղիս: Մատաղիսի մօտ մի բարձունք կայ, դա վերցրին եւ ընդամէնը մի զոհ տուեցին այդ ամբողջ տարածքում. դասակի հրամանատարներից մէկն էր, որին ***Ջուվաչ*** *էին ասում: Ամենուր թուրքերի դիակներ էին փռուած. 23-ը մի տեղ, 8-ը՝ մի տեղ, մի քանիսը՝ մի տեղ:*

Այս անդրանցիկ մարտը կարող է զարդարել ցանկացած պատերազմ եւ ամէն մի զօրավարի: Ռազմագիտական ոչ մի ձեռնարկ, ոչ մի ողջախոհ տրամաբանութիւն նման բան չէր ընդունի, թոյլ չէր տայ՝ այն համարելով անհնարին: Սակայն

հրաչքները երբեք մտքի սովորական տրամաբանական ընթացքին չեն համապատասխանում: Կռւռում յաղթանակում է ոչ թէ ուժի մեծաքանակութիւնը, այլ նուրբ մտածողութիւնը, ոգին, նուիրեալ մարտիկները:

Շահումեանի մարտիկներն աւար են վերցնում՝ մեծաքանակ զինամթերք, աւտոմատներ, գնդացիրներ, նռնականետներ, մարտական հետախուզական մեքենայ՝ ԲԷՄԴԷՄ, թրթռւրաւոր ԴԷՏԷ-75 տրակտոր եւ վառելանիւթ::

Ըստ արժանւոյն գնահատելով Շահէն Մեղրեանի հայդուկային ջոկատի մարտիկների ու հրամանատարների կատարած սխրանքը, Հիւսիսային Արցախի առանձնակի պաշտպանութեան եւ նրա տարածքը թշնամուց ազատագրելու ժամանակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի Նախագահութիւնը մի խումբ մարտիկների եւ հրամանատարների պարգեւատրել է հանրապետութեան բարձրագոյն «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ աստիճանի չքանշաններով:

Յաւելուածներ
«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՒՐԵՊԻՆԻ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

«Նովոյէ վրեմիա» ռուսալեզու պարբերականը սոյն վերնագրի տակ տպագրել է Ալեքսանդր Կուրեպինի յիշողութիւնները Արցախեան պատերազմում իր եւ ընկերների մասնակցած գործողութիւնների մասին: Կուրեպինը Մոսկուայի մեր դեսպանութեան միջոցաւ, կամաւոր հիմունքներով 1992 թուականի յուլիսի 18-ին ոտք է դրել հայոց հողի վրայ եւ նոյն օրն էլ Երեբունի օդակայանից ուղղաթիռով թռել է ԼՂՀ: ԼՂՀ բանակի հրամանատար **Սէրժ Սարգսեանի** հետ խորհրդակցելուց յետոյ նրան ուղարկել են Մարտունու շրջան, լեգենդար **Մոնթէ Մելքոնեանի** տրամադրութեան տակ: Կարճ ժամանակ անց ձեւաւորել է հակատանկային կործանիչ խումբ՝ իր տրամադրութեան տակ ունենալով 8 ռուս կամաւորականների, որոնք բաւականին փորձառու էին: Իրենց տրամադրած ԲՄՊ-1 երեք մեքենաները նրանք վերասարքաւորել եւ դարձրել են հակատանկային ղեկավարուող հրթիռանետեր՝ ՊՏՈՒՌ: 1992 թուականի նոյեմբերի վերջին այդ խմբից ողջ են մնացել միայն երկուսը՝ հրամանատար **Կուրեպինը եւ Անդրէյ Սարիչեւը**:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

*«Մեզ հրաւիրեցին **Շահէն Մեղրեանի** ջոկատը՝ մարտնչելու ադրբեջանական թիկունքում՝ Շահումեանի շրջանում: Այսպիսով՝ մեզ վիճակուեց կռուելու **Ղարաբաղեան երկու ամենանշանաւոր հրամանատարների՝ Մելքոնեանի եւ Մեղրեանի** ղեկավարութեամբ: 1992 թուականի դեկտեմբերից մինչեւ 1994 թուականի մարտը ես եղել եմ յատուկ նշանակութեան ջոկատի հրամանատարի սպառազինութեան գծով տեղակալը: Շահէնի մահից յետոյ ջոկատը վերանուանուեց նրա անուան յատուկ նշանակութեան գունդ: Իրականում աւելի յաճախ ես կատարում էի ՀՏՂՀ /Հակատանկային ղեկավարուող հրթիռանետ /ՊՏՈՒՌի «Մալիւտկա», «Ֆագոտ», ՍՊԳ/ հաշուարկի հրամանա-*

տարի պարտականութիւն: Ջոկատը կազմուած էր գլխաւորապէս Շահումեանի շրջանի բնակիչներից: Տարածքը նրանք գիտէին իրենց հինգ մատի նման: Մենք ջոկատի միակ ռուսներն էինք: Շահէնը հէնց սկզբից նախազգուշացրեց, որ շատ մարտիկների յիշողութեան մէջ դեռեւս թարմ է «Կալցո» տխրահռչակ գործողութիւնը, որի ընթացքին հիմնականում սլաւոններից կազմուած ԽՍՀՄ Ներքին զօրքերը փաստօրէն հանդէս են եկել ադրբեջանցիների կողմից: Նա խնդրեց չվիրաւորուել հաւանական անվտահութիւնից եւ ձգտում էր մեզ համար ստեղծել ամենալաւ պայմանները: Նոյնիսկ նա յատուկ պահակախումբ էր առանձնացրել, որը պիտի իմձ ուղեկցէր «որսորդական» ելոյթների ժամանակ:

Շահումեանի անտառներում ամենից յաճախ շարժւում էինք ձիերով: Մեր ելակէտայի կարգն այսպիսին էր. առջեւից, ետեւից եւ կողքերից գնում էին իմ «թիկնապահները»՝ զինուած ՊԿՏ-ով: Կենտրոնում ես էի «մալիւտկա»ներով բեռնուած «էլչիբեյ» անուամբ իշուկի հետ:

ՆՇԱՆԱԿԷՏԸ՝ ԳԵՐԱՄԲՈՑԻ ԳՈՒՄԱՐՏԱԿՆ Է

1993-ի փետրուարին ջոկատը յարձակւում էր Սարսանգի ջրամբարի հարաւային ափով: Աւարտուել էր Մարտակերտի շրջանի ազատագրումը: **Մեղրեանի** առջեւ խնդիր էին դրել՝ ադրբեջանցիներն հանել Հաթերք եւ Ումուդլու գիւղերից: Նախ ուղարկեցին հետախուզելու տեղանքը: Երկու օր յետոյ տղաները վերադարձան եւ զեկուցեցին. ադրբեջանցիներին ունեն 2-30 հրետանային մարտկոց, 5-6 միաւոր զրահատեխնիկա, բազմաթիւ մեքենաներ եւ ոչ պակաս՝ 400 մարդ:

Շահէնը հրամանատարութեան հասցէին թունդ հայհոյանք տեղաց: Սակայն հրամանը՝ հրաման է, պէտք է կատարել: Սկսեցին մտածել՝ ինչպ՞ս: Որոշեցին Գերամբոյի, Մարտակերտի եւ Քեալբաջարի շրջանները միմեանց կապող ռազմավարական նշանակութեան խճուղի ճանապարհը փակել: Յիշում եմ, առաջին անգամ ինչպէս հասանք ճանապարհին, երբ պահեստազօրի համար ռազմամթերքը ամբողջ ջոկատով տանում էինք սկսուելիք գործողութիւնների գօտի: 36 կիլոմետրը յաղթահարեցինք 40

ժամում: Գնում էին լեռներով, մինչեւ գօտկատեղ հասնող ձիւնը ճեղքելով: Գաղտնարաններ պատրաստելով վերաղարճանք: Մեր երկրորդ երթը տեւեց 12 ժամ. տրորուած արահետով ընթացքը չատ աւելի դիւրին էր: Երրորդ անգամ բաւարարեց 10 ժամը:

*Գիշերը հանգստացանք, առաւօտեան ճանապարհին երկու հակատանկային ական դրեցինք: Գետինը սառած էր եւ հնարաւոր չէր ականները թաղել: Անդրէյը մտածեց դրանց քօղարկել ճերմակ վերնաշապիկով՝ իբր ձեան փոքր կոյտ է: /Մեր մարտիկների վկայութեամբ՝ այդ «գիւտի հեղինակը» **Վահէ Բաղդասարեանն է** եղել, որի մասին գրել ենք.- ԱՊ/: Շուտով ականներից մէկին բախուեց ԶԻԼ-131-ի անիւը: Վարորդին դուրս չպրտեց խցիկից եւ նա մեզ գերի ընկաւ: Երկրորդ մեքենան խուսափեց, սակայն իմ «Մալիւտկան» հասաւ նրան: 4 ժամ անց նորից ԶԻԼ մեքենայ եկաւ եւ դրան էլ խփեցինք:*

*Ադրբեջանցիներն սթափուեցին: Երեկոյեան Ումուդլուից իջան 100ի չափ հետեւակայիններ: Լաւ երեւում էր՝ սանրում էին տեղանքը. առջեւց գալիս էին մի քանի մարտիկներ՝ ականորսիչով, ետեւից՝ երկու ՀՄՄ-1 /հետեւակի մարտական մեքենայ/ եւ Գազ- 66: Մեր տղաներից 15 հոգի նստել էին թաքստոցներում, ոչ հեռու ճանապարհի այն տեղից, որտեղ գրպանման ոլորան կար: Այդ խմբի հրամանատարը չտաբի պետն էր: Մենք **Շահէն Մեղրեանի** հետ բլուրի վրայ էինք, որտեղից կարելի էր գործել «մալիւտկայով»: Շահէնը վիճակի բերումով՝ լիցքաւորողն էր: Տղաները կապուեցին մեզ հետ եւ խնդրեցին սպասել այնքան, որ ադրբեջանցիները մտնեն այդ «գրպանի» մէջ եւ իրենք կարողանան գործ անել: Հակառակորդի իջնելուց 10 րոպէ անց սկսուեց թեժ փոխհրաձգութիւն: Տղաները ոչնչացրին մօտ 70 մարդ: Ինչպէս մենք յետոյ իմացանք՝ սպանուածները Ադրբեջանի ազգային բանակի **Գերամբոյի գումարտակի** մարտիկներն էին:*

Ամբողջ գիշեր մենք այդ դիրքերի վրայ էինք: Սարսանգի ջրամբարի հակառակ կողմից, ուր ադրբեջանցիներն էին, մեզ հրակօծում էին «Գրադ»ից եւ երկու տանկերից: Սակայն առաւօտեան տիրում էր կասկածելի լռութիւն: Տարօրինակ է. չէ՞ որ մեզանից 6 կմ հեռաւորութեան վրայ հակառակորդի

մարակոցն էր: Մեր դիրքերից յստակօրէին տեսնում էինք 3 հրանօթ եւ 6 կամազ: Ամբողջ օրը դիտում էինք դրանց. կեն-դանութեան ոչ մի նշան: Շահէնը հրամայեց մեր չտաբի պետ ***Նովիկովին*** */ի միտ ունի* ***Նովիկին****, թերթի աշխատակիցն է ամենայն հաւանականութեամբ Նովիկին Նովիկով դարձրել, իսկ Կուրեպինը հաւանաբար մոռացել է, որ Նովիկը չտաբի պետ չի եղել- Ա.Պ/ հետախուզել Հաթերք-Ումուդլու ուղ-ղութեամբ: Նա վերադարձաւ լուսաբացին. հակառակորդը չի երեւում, լքուած տեխնիկան այնտեղ է, շրջակայքում չունչ չկայ: Ցամենայն դէպս մի քանի տղաներ ուղարկեցին ռազմա-կայան՝ ռազմամթերք բերելու: 6 ժամից վերադարձան երկուսը եւ ասացին, թէ յայտնաբերել են թուրքերի հետքերը: Պար-զուեց, որ թուրքերը գնացել են մեր տրորած արահետով: Մենք կապուեցինք Մարտակերտի չտաբի հետ, ասացինք, որ Հաթերքն ու Ումուդլուն դատարկել ենք թուրքերից: Շտաբում սկզբից թուացել է, թէ մենք կատակում ենք...*

Աւելի ուշ ես իմացայ, որ այս ամէնը նկարահանել է ***Ալեքսանդր Նեւզորովը****, լինելով ադրբեջանական կողմում: Նրա «Գերամբոյի գումարտակը» կինոնկարի մէջ առկայ է նոյնիսկ այն պահը, երն իմ «Մալիւտկան» թռչում է ԲՄՊ-ի վրայ:*

...ԵՒ ԲԱՔՈՒԻ ՑՆՈՂԸ:

Մինչեւ 1993-ի մարտը մեր ջոկատում մշտապէս լինում էին 25 մարդուց ոչ աւելի: Մարդիկ հերթափոխում էին, որպէս կանոն, երք ամիսը մէկ: Մարտին ***Մեղրեանը*** *թռաւ Երեւան եւ մակագրեց հայդուկային ջոկատը Հայաստանի ՊՆ ենթակայ յատուկ նշանակութեան ջոկատի վերափոխելու մասին փաստաթղթերը: Դրանից յետոյ կամաւորները մեզ վրայ էին տալիս բազմութիւններով. ապրիլի կէսերին մենք արդէն 600 մարդ ունէինք: Շահէնի մօտ գալիս էին մեծ հաճոյքով եւ նրա հրամանատարութեան տակ կռուելը համարւում էր պատուի գործ:*

1993 թուականի ապրիլի 13-ին մենք ազատագրեցինք Շահէնի հայրենի գիւղը՝ Գիւլիստանը եւ դուրս եկանք

*Շահումեանի անտառեզրը: Գիւլիստանը պաշտպանում էին ադրբեջանցիների երկու վաշտ, սակայն թողեցին դիրքերը եւ հեռացան: Այնպէս որ, մենք գիւղը վերցրինք առանց մարտի: Ամսոյս 15-ին, ժամը տասին կապի մէջ մտաւ **Անդրէյը**: Հաղորդեց, որ դէպի ինձ են սողում Ադրբեջանական ԲՄՊ-ն եւ աւտոբուսը: Հարցնում եմ.*

- «Հանգցնելու» բան կա՞յ:

- Միայն ՍՊԳ-9:

- Կը խփե՞ս:

- Կը խփեմ:

ՍՊԳ-ի կրակոցով նա խփեց ԲՄՊ-ն: Եւ այդ ժամանակ կամազով նախաճաշ բերեցին այն դիրքերի համար, որոնք իմ դիտարկման կէտերն էին: Ադրբեջանցիները խմբուել էին մեքենայի չուրջ: Այդտեղ եկաւ նաեւ մի ԶԻԼ, որի վրայ ԶՈՒ-23 /զենիթային գնդացիր/ էր տեղադրուած: Մի հրթռով խփեցի կամազը, միւսով՝ ԶԻԼ-ը: Հակառակորդը խուճապահար փախուստի դիմեց:

Միւս երկու օրերը փորձում էին «հոգեբանական գրոհների» նմանակում անել: Ադրբեջանցիները մեզ վրայ էին գալիս մի քանի չղթաներով: Սակայն ամէն անգամ, իրական կրակի գօտիի մօտ կանգ էին առնում եւ ետ գնում: Նրանց համազգեստը ոստիկանական էր: Հայերը պատմում էին, որ այդ կրկեան սկսելուց առաջ նրանց հետ կապուել է ադրբեջանական ոստիկանութեան տեղական բաժանմունքի պետը եւ խորհուրդ տուել «հայրենակիցներին» հեռանալ: Իբր ՅՆՈՋԸ /ՕՊՕՆ-Յատուկ նշանակութեան ոստիկանական ջոկատ/ գալիս է խիստ զայրացած

*Ապրիլի 17-ին խփւում է այն ուղղաթիռը, որով թռչում էր **Շահէն Մեղրեանը**: Մեղրեանի կորստից երեք օր անց Գիւլիստանին մերձակայ մարտում մի քանի րոպէի ընթացքին ես յաջողեցի վառել զրահամեքենայ՝ ԲՏՌ եւ հինգ աւտոմեքենայ: Թողնելով եօթ մեքենայ՝ ՀՆՈՋը փախաւ Գիւլիստանից: Երկու ժամ անց տարօրինակ թափոր նկատեցի. տասնեակ ադրբեջանցիներ վարգով ետ էին գալիս դէպի Գիւլիստան: Նրանց*

կողքից սլանում էր մի Ուազիկ, որից այդ եռմնացողներին, հաւանաբար՝ վարորդներին ~ քչում էին փայտով: Վերադարձան նրանք բնակավայր եւ գործի դրեցին լքած մեքենաները: Սակայն երբ դուրս էին գալիս՝ յայողեցի խփել գլխամասային մեքենան:

Ուազիկը սկսեց հեռանալ մեծ արագութեամբ: «Մալիւտկայով» դրան խփելը քիչ հաւանական էր: Սակայն տղաներն ինձ համոզեցին «գնդակահարել» դրան եւ որքան էլ զարմանալի է՝ յայող էր: Երկու օր յետոյ ուրախ բացականչութեամբ ինձ մօտ վազեց կապի պետը եւ ասաց, որ ադրբեջանական ձայնասփիւռով հաղորդագրութիւն են արել Գիւլիստանի տակ Գերամբոյի պարետի եւ նրա երեք տեղակալների կորստեան մասին:

ՌՈՒՍ «ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ»

1993ի փետրուարին պատահմամբ դէմ առ դէմ հանդիպեցինք ադրբեջանական հետախուզական խմբին: Մենք երեքով էինք, նրանք՝ չորսով. երեք ադրբեջանցիներ էին եւ մէկ ռուս: Անակնկալ հանդիպելով արահետի վրայ՝ մենք արագ կողմնորոշուեցինք: Սպանուածները ադրբեջանցիներ լինելու համար չատ մեծամարմին էին. ֆիզիկապէս հոյակապ զարգացած, լաւ հանդերձաւորուած: Նկատելի էր, որ նրանք սովորական զօրամասի բան չեն, այլ ինչ-որ յատուկ զօրախմբի մաս են կազմում: Ի դէպ՝ ադրբեջանական կողմում սլաւոնները նշանակալից ներկայութիւն էին: Առաջին անգամ ես նրանց առնչուել եմ ԼՂՀ Մարտունու շրջանի Գիւլափլի գիւղը վերցնելիս: Մօտ մէկ ամիս անց, Մաճկալաչէնի մօտ ադրբեջանցիները ռուսական անձնակազմերով գրոհի նետեցին հինգ տանկ: Երկու մեքենայ յաջողեցինք խփել: 1992-ի նոյեմբերին, երբ **Աւոն** վերցրեց Կուբրոպատակինօ գիւղը, տեղիս գինու գործարանի մօտ նա յայտնաբերեց մի մայորի դիակ: Գրպանում ուկրաինացու փաստաթղթեր էին: Ուկրաինացին նրանց կողմից էր կռուել:

Աւելի ուշ, արդէն Մարտակերտի Տօնաշէն գիւղում, մի գետնատնակում ադրբեջանական լրագիր գտանք: Այնտեղ մի գնդապետի յօդուած էր զետեղուած, որը գրում էր, թէ որքան

վատ է կռուել՝ ենթակայութեան տակ ունենալով քմահաճ, վնասակար եւ դժուարկառավարելի «մոջահեղների»: Եւ որքան դիւրին է կռուել՝ գլխաւորելով ռուս վարձկաններին:

ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ

1994-ի ապրիլի 11-12-ին Հինգերորդ բրիգադի երկու գումարտակները, ուր ես գործուղուած էի ՀՏՂՀ /հակատանկային ղեկավարուող հրթիռ/, գրաւեցին Թալիշ բնակավայրը: Յաջորդ օրը ադրբեջանցիները մարտի նետեցին 8 տանկ, 4 ՀՄՄ եւ 500-ի չափ զինուոր: Ուզում էին մեզ օղակի մէջ առնել: «Ֆագոտով» յաջողեցինք խփել մէկ տանկ եւ ՀՄՄ: Էլի մէկ տանկ թողնելով մարտադաշտում՝ ադրբեջանցիները նահանջեցին: Պարզուեց, որ թողած Տ-62 տանկն անուանակիր է. նրա աշտարակի վրայ սպիտակ ներկով գրուած էր՝ «Հեյդար Ալիեւ»: Նախագահի անունն անջնջելի տառերով գրուած եւ փողին արուած «Դէպի Հայաստան» կարգախօսով տանկը մի քանի անգամ ցուցադրել էին հեռուստատեսութեամբ: Այդ տանկը զարճաւ պատերազմում Ղարաբաղի ժողովրդի յաղթանակի իւրայատուկ խորհրդանիշ:

*Աւա՜ղ, դա իմ «կարապի երգն էր»: 1994 թուականի ապրիլի 17-ին Ադրբեջանի Գերամբոյի շրջանի Թուփկարակոյունլու գիւղի մօտ մեր հաշուարկն ընկաւ 120 մմ ականի վրայ: Թիւ երկրորդի՝ **Արսէնի** ազդրը պոկուեց բեկորից: Ես վիրաւորուեցի գլխից, ձեռքերից, ոտքերից, կրծքից, մէջքից, փորից: Սակայն գիտակցութիւնս չկորցրի: Իմ մարտիկներից մէկի՝ **Ռուշանի** օգնութեամբ վիրակապ արեցի: Աւելի ուշ՝ դաշտային մահճաբուժարանում /լազարեթ/ յայտնաբերեցին ձախ ծնկիս, ձախ ուսահոդիս եւ այլ լուրջ վնասուածքներ: Այնտեղ էլ հանեցին 113 բեկորներ:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուշքս տեղը եկաւ 10 օր յետոյ Երեւանում: Սկսուեցին տառապանքները հիւանդանոցային մահճակալների վրայ: Դրանք տեւեցին մինչեւ 1995-ի մայիսը: Այն, որ ես ողջ մնացի եւ ոտքի կանգնեցի, հրաշքից բացի այլ բան չէր: Հիւանդանոցում

*պակասում էր ամէն ինչ՝ վիրակապից մինչեւ սնունդը: Դեղերի մի մասը ճարում էր իմ ընկեր **Գարիկ Կուրքանեանցը**, գործադուրկ, որի խնամքի տակ էին կինը եւ երկու երեխաները: Վիրակապային միջոցները բերեց մեր զօրամասի **«Դոկը»**: Միայն յուլիսին, երբ Գարիկը կարողացաւ ռենտգենեան ժապաւէն գնել, նկարեցին ձախ ոտքս: Վէրքերից թարախ էր հոսում /հակաբիոտիկներ չկային/: Ինձ կերակրում էր նոյն Գարիկը: Ինչպէ՞ս էր ապրում նրա ընտանիքը՝ ունենալով ինձ նման ձրիակեր, կարելի էր միայն կռահել:*

*«Հայրիկ» Հրամանատարներից ոչ ոք էր ինձ այցելում, բացի հանգուցեալ **Շահէնի եղբայր Պետրոսը**: Գալիս էին տեսնելու միայն խրամատային ընկերներս: Իմ գոյութեան մասին աւելի բարձր մակարդակի վրայ, թուում է, մոռացել էին: Պէտք ես՝ քանի դեռ կուում ես: Իմ ծառայողական ցանկի մէջ հաշուած էր հակառակորդի 69 ոչնչացուած եւ 7 աւարային միաւոր: Երբ ինչ-որ կերպ սկսեցի շարժուել, տղաները բառացիօրէն ինձ տարան Պաշտպանութեան նախարար **Սէրժ Սարգսեանի** մօտ: Դրանից յետոյ ինձ տեղափոխեցին Զինուորական կենտրոնական բուժարան: Որոշ ժամանակ անց պատրաստուում էին ինձ նշանակել Հայաստանի հակատանկային ծառայութեան պետի տեղակալ, բայց գործը մնաց առկախ:*

...Եւ յայտնուեցի Մոսկուայում: Հին քօղարկագգեստով, հենակնեով եւ հայկական անձնագիրը գրպանումս /վիրաւորուելուց յետոյ խորհրդային փաստաթղթերս անհետացան/ եւ առանց որեւէ հեռանկարի: Սկզբից իմ բուժուելու համար որոշ գումար յատկացրին Մոսկուայի հայերը: Սակայն դա չբաւարարեց բուժման ընթացքն աւարտելու...»:

Յ.Գ. Ամէն հեղինակի խղճին է մնում, թէ որքան ճշտութեամբ է ներկայացնում իրողութիւնը: Մանաւանդ այլ մասնակիցներ էլ կան եւ յիշում են կատարուած դէպքերը: Ալեքսանդր Կուրեպինի պարագան թելադրում է, որ նա պիտի նախ ուրախ լինի, որ ողջ է մնացել, որ իրեն, այնուամենայնիւ, այցելողներ եղել են եւ օգնութիւն են ցուցաբերել դժուարագոյն

տարիներին: Գրքի հեղինակը լաւ է յիշում Հինգերորդ բրիգադի մի վիրաւոր զինուորի, որ պատերազմից մի քանի ամիս անց միջոցներ չունեցաւ բուժուելու եւ մահացաւ իր տանը: Ամէն պարագայի՝ մենք էլ չնորհակալ ենք ռուս ռազմիկից, մանաւանդ իր զինակիցները չեն ժխտում նրա մատուցած աւանդը մեր յաղթական գործողութիւնների ընթացքին:

2. ՕԴԱԶՈՒՆԵՐԸ

Սերգէյ Վանցեան. *– **Շահէն Մեղրեանի** վիճակը վատ էր. բացի աւտոմատներից եւ հրացաններից, այլ զինատեսակներ չկային եւ թուրքերը տեխնիկապէս աւելի յագեցած էին, առաւել էին Շահումեանի զօրքի համեմատ: Պաշտպանութեան նախարար **Վազգէն Սարգսեանը** մեր առջեւ խնդիր էր դրել այլ զինատեսակներ Շահումեան տանելու համար: Երբ **Շահէն Մեղրեանը** եկաւ Երեւան, Վազգէն Սարգսեանը Շահումեանին յատկացրեց երեք հրանօթ: Բերեցին հասցրին օդակայան, ուր պատրաստել էինք արդէն ուղղաթիռը: Ուղղաթիռի մէջ եղած բոլոր շարժուող առարկաները հանեցի, որպէսզի կարողանանք հրանօթը մի կերպ տեղաւորել: Շահէնին խնդրեցինք, որպէսզի հրանօթից էլ հանի ամբողջից բաժանուող մասերը եւ այլ չուերթով ուղարկի: Երբ տեղաւորել էինք, Շահէն Մեղրեանն ասաց.*

– Շարժական մասերն ու առարկաներն էլ տեղաւորենք:

Ես առարկեցի.

– Դա հնարաւոր չէ, Շահէ՛ն:

– Դրէ՛ք, դրէ՛ք, բան չի լինի:

– Շահէ՛ն, ծանր է, կը տանի եւ մի տեղ կը մնայ, վտանգ կը լինի:

*Այս ամենից յետոյ էլ մի հինգ-վեց մարդ լցուեց ուղղաթիռի մէջ: Օդանաւի հրամանատարը պահեստի կապիտան **Կադենկօն էր**, որին ես վերցրել էի աշխատանքի: Մեծ դժուարութեամբ օդակայանից պոկուեցինք եւ երբ հասանք Զոդի լեռնանցքը, թթուածինը չէր բաւարարում, որպէսզի ուղղաթիռը լեռնանցքը յաղթահարի, եւ մի քանի վորձ անելուց յետոյ ստիպուած*

ետ վերադարձանք Գաւառի օդակայան եւ մի գիշեր մնալուց յետոյ կանչեցի մեր հայ տղաների ուրիշ անձնակազմ, որը շատ բարեյաջող կերպով այդ հրանօթը տեղ հասցրեց:

Ցետագայում, երբ Շահէնը գալիս էր Երեւան, լեգենդներ էր պատմում այդ հրանօթով արուած գործերից: *Դա իրենց համար լուրջ օգնութիւն էր:*

Երկրորդ դրուագը վերաբերում է այն պահին, երբ թուրքերը Ղարաբաղի ամբողջ տարածքով սկսեցին օգտագործել արգելուած «Գրադ» հրթիռանետ կայանքը, որը յատկապէս Շուշիից մեծ վնասներ էր հասցնում Մարզի մայրաքաղաքին: Օգտագործում էին Աղդամից՝ Ասկերանի վրայ, եւ Գանձակի տարածքներից հրակոծութեան դաշտ էին դարձրել Շահումեանը: Ցոյժ կարեւոր էր Արցախում մենք էլ ունենայինք այդ զինատեսակից, այլապէս չէինք կարող թուրքերին համարժէք պատասխան տալ: Ժողովուրդն ահ ու սարսափի մէջ էր:

Այդպիսի բեռը միայն օդային ճանապարհով պիտի տեղափոխէր, «Գրադ»ներն Արցախ հասցնելու միակ տարբերակը Մի Գ-26 ուղղաթիռն էր, որ Ռուսաստանի տարածքից պիտի բերուէր: Այդ օդանաւի բեռնատարողութիւնը մինչեւ 20 տոն-նա է: Որոշակի աշխատանք կատարելուց յետոյ յաջողեցինք Հայաստան բերել երկու Մի Գ-26 ուղղաթիռ: Պարէն տեղափոխելու անուան տակ երեք ձեռք բերուած կայանքներից մէկը հասցրեցինք Վարդենիս, երկուսը՝ Գորիս: Քանի որ սովետական ԿԳԲն դեռեւս գործում էր, նշեալ վայրերում իջնում էինք, ալիւրը թափում եւ կայանքները բարձում ու տեղափոխում Արցախ եւ Շահումեան: Երկուսը տարանք Քոլատակ, միւսը՝ Վարդենիսից Շահումեան: Շահումեան տանելուց յետոյ «Գրադը» տեղադրել ենք Շահումեանին մերձակայ մի բլրի վրայ, որի հրթիռները հասնում էին մինչեւ Նաւթալան, մինչեւ Գանձակի մերձակայ տարածքը: Երկրորդը դրեցին Ասկերանի մօտ եւ սկսեցին աշխատել Աղդամի վրայ, միւսն էլ՝ Ստեփանակերտում, որպէս հակակշիռ Շուշիին:

«Գրադը» նշեալ դիրքերից սկսեց գործել, եւ թուրքերը հասկացան, որ այդ ճանապարհով գործնականում մեզ ընկճել չեն

կարող: Երբ Շահէնը եկաւ Երեւան, պատմում էր, թէ թուրքերն ինչպէս էին խնդրում, որ Նաւթալանին չխփենք. այդտեղ բուժարան կար եւ կուրորտ էր: Այսպիսի դրութեամբ բանակցութիւններ սկսուեցին երկու կողմերի միջեւ: «Գրադը» հնարաւորութիւն տուեց ճանաչել դիմացինին եւս:

*Մի դրուագ էլ յիշեցի: Երբ ես կազմակերպում էի այդ «Գրադ»ների վերոնշեալ տեղափոխումը, որ տարանք հասցրինք Շահումեան, եւ Շահումեանի հատուածում Շահէնը լեգենդներ էր պատմում, թէ ինչ հնարաւորութիւններ ունի դիմացի հարեւանին լռեցնելու: Ուրեմն, Մի Գ-26 ուղղաթիռը ետ վերադառնալու ժամանակ, ճանապարհին Լեւ գիւղի մօտ խփեցին: Անձնակազմն այնքան ողջամիտ գտնուեց, որ այդ վիճակում կարողացաւ պարկերը ձգել եւ գցել սարի էս կողմը: Ձմեռ էր, փետրուար ամիսն էր, չէինք կարողանայ այդ սառոյցի վրայ մօտենալ: Անձնակազմը բաւականին վիրաւորուեց, 16 մարդ զոհուեց: Երեկոյեան կողմն էր, ձմեռ, ժամը 6-7-ին մօտ: Մեր երկու ուղղաթիռները Շահումեանից վերադառնալիս լսել, եկել են եւ օդի մէջ կախուելով ահագին քանակութեամբ մարդկանց հանել են այդտեղից, վիրաւորներ, եւ այլն: Այդ նոյն ուղղաթիռի մէջ էր Շահէնի փոքր եղբայրը՝ **Պետրոսը**, բաւականին ջարդուած վիճակում, եւ ես շատ լաւ եմ յիշում, այդ նոյն ուղղաթիռի մէջ էր **Աշոտ Խաչատուրեանցը**, Առեւտրատան (Տորգի) տնօրէնը, որոնց մենք համարեայ թուրքերի մէջից հանեցինք:*

Ստեփան Նիկողոսեան. *Ամենատպաւորիչ թռիչքը եղել է մի անգամ, երբ եղանակ չկար թռիչքի համար ու ամէն ինչ փակ էր, բայց **ես ու Գեղամը** պիտի թռչէինք: Ամպամած էր, մառախուղ, մենք էլ կամոյում նստած սպասում ենք, որ եղանակը բացուի: Ես ուղղաթիռների էսկադրիլիայի հրամանատար էի: Բոլոր տեղերից հաղորդում էին, որ թուխպ է եւ հնարաւոր չէ Ղարաբաղի որեւէ կէտում վայրէջք կատարել: Մի Կամազով **Մեղրեան Շահէնը** եկաւ:*

- Ո՞նց էք, ի՞նչ էք:

- Շատ լաւ ենք:

Ի՞նչ կար՝ նստած ամենքս ով ինչով ուզում՝ զբաղուում էր:

- Ես անպայման պիտի հասնեմ Շահումեան:

- Էս եղանակին ո՞վ է գժուել, ամեն տեղից փակ է. վերեւից էլ փակ է, ներքեւից էլ փակ է:

- Ջէ՛, պիտի հասնեմ: Փոքր բեռ է, թեթեւ, բայց ես էսօր անպայման պիտի լինեմ այնտեղ:

- Շահէ՛ն, թո՛ղ, մի՛ խանգարի, թուղթ ենք խաղում:

- Ջէ, Աստուած մեզ կ՛ուղեկցի:

Էդպէս երկար-բարակ, ինքը մեզ համոզելով, մենք իրեն համոզելով, որ հնարաւոր չէ, ի վերջոյ ասաց,

- Եկէք, փորձենք: Շատ անհրաժեշտ է:

Էն ժամանակ էլ նաւթի հարցը մի քիչ սուղ էր, ասացինք.

- Շահէն, չենք ասում, թէ անհրաժեշտ չէ, բայց նաւթն ափսոս է: Որ դու ասում ես՝ փորձենք, հա՛, էլի գնանք, բայց իզուր վառելիք ենք փչացնելու:

Ու էդպէս, Գեղամը որպէս հրամանատար, ես էլ որպէս երկրորդ օդաչու-ստուգող, նստեցինք, ասինք՝ փորձենք: Ինչ-որ մի կերպ կարող է ստացուի, թէկուզ կիրովաբադի ճանապարհով մի կերպ փորձենք գնալ: Ինչեւէ, ասինք՝ Աստուած մեզ կ՛օգնի էլի, եւ էդ յոյսով գնացինք:

Անցանք լեռնաշղթան, Գետաշէնն էլ անցանք՝ ամպամած է եւ թէկուզ մի փոքր գետնի կտոր չի երեւում, որ մի կերպ նստենք էլի: Շահումեանն էլ անցանք, գնացինք հասանք Գիւլիստան, մէկ էլ ոնց որ պատուէրով՝ հենց էդ կարտոֆիլի դաշտերի վրայ ամպերը սկսեցին բացուել: Բացուեց եւ տեսանք, որ կարտոֆիլի դաշտը մեր տակն է: 50 մետր չառաւիղով մի բացուածք էր: Նստեցինք, եւ Շահէնն ասաց.

- Տեսա՞ք՝ Աստուած մեզ օգնեց:

Բեռը դատարկեցինք եւ ապշած-զարմացած էինք մնացել: Դէ ոչ մէկն էլ չկար դիմաւորող, եւ որեւէ յոյս չեն ունեցել, թէ ուղղաթիռ կը գայ: Եւ ոչ մի բան էլ չէին բերել, որ հետներս տանենք, էդպէս դատարկ բարձրացանք օդ: Երբ վեր բարձրացանք, ասինք՝ ետ նայենք, տեսնենք ոնց է ամպերի վիճակը: Տեսանք, որ ոնց որ մեզ համար բացուել էր, էդպէս էլ իրա

համար սուս ու փուս փակուեց: Ամենատպաւորիչ թռիչքը դա է եղել մեզ համար:

Շահէնը *մաքուր մարդ էր: Ես Շահէնի հետ շատ եմ չփուել թէ՛ թռիչքների կատարման հարցերով, թէ՛ Երեւանում անձնապէս շատ ենք հանդիպել: Շատ հարցերով եմ այստեղ զբաղուել, լուծել իր ասածով. կը լինէր հրահանգ թէ խնդրանք՝ կարեւոր չէ: Շատ է պատահել, որ իր հետ գնացել ենք թէ՛ Դաշնակցութիւն, թէ՛* ***Վազգէն Սարգսեանի*** *մօտ, երկուսից էլ զէնք եւ սննդամթերք վերցրել: Մի քանի անգամ էլ միասին ենք գնացել Վազգէն Սարգսեանի մօտ: Գալիս էինք օդակայան, վայրէջք կատարում եւ նստելով իմ մեքենան՝ գնում էինք Վազգէն Սարգսեանի մօտ կամ մի այլ տեղ: Այդ առումով, ինձ թւում է, Շահէնը ոչ մի խնդիր չունէր, բոլորի հետ համագործակցում էր եւ պատրաստ էր, կրկնում եմ, նոյնիսկ չարի հետ համագործակցել, միայն թէ Շահումեանին դրանից չահ լինէր: Լինելով մաքուր, ինձ թւում է, ինքը նոյն կերպ էլ, նոյն աչքերով մօտենում էր ուրիշներին: Շատ մտերիմ էր Գետաշէնի պաշտպանութեան հրամանատար* ***Թաթուլ Կրպէեանի*** *հետ: Վազգէնի հետ էր շատ լաւ,* ***Հրանտ Մարգարեանի, Մաֆիոզ Գագոյի,*** *մի խօսքով՝ կարեւոր մարդիկ, որոնք աջակցութիւն էին ցոյց տալիս, եւ ինձ թւում է՝ նա բոլորի՝* ***Վազգէն Մանուկեան, Աշոտ Նաւասարդեան****... բոլորի հետ չփւում էր, եւ անգամ* ***Մախնօ Վրէժի*** *հետ էր չփւում:* ***Սարիթաղցի Վրէժի****: Չեմ կարող ասել, թէ իրար հետ մտերիմ էին, սակայն շատ նորմալ յարաբերութիւնների մէջ էին, եւ գալիս էր այստեղ՝ Վրէժի մօտ, կամ Վրէժն էր գնում իր մօտ հիւր, արդիւնքում ինքն ունենում էր որոշ զէնք եւ զինամթերք, որ կենսականօրէն կարեւոր էր Շահումեանի համար:*

Ինքը շատ հիւրասէր էր, եւ էդպիսի մարդ չկար, որ գնար Շահումեան եւ հիւրասիրուած չլինէր իր կողմից: Այդպիսի մէկը չկար: Բոլորին ընդունում էր ինչպէս կային եւ բոլորի նկատմամբ շատ լաւ էր տրամադրուած:

Մի անգամ Շահէնը զանգեց եւ ասաց,

- Շտապ արի «Հրազդան» հիւրանոց:

– Շահէ՛ն, լաւ էլի, խմած եմ, թող հանգիստ վեր ընգնեմ:

– Զէ՛, անպայման արի՛, չտապ գործ կայ:

– Լաւ, որ չտապ ա՝ գամ…

– Շահէն, ինչո՞ւ ես կանչել:

*– Վաղը կը մտնես այսինչ բանկը եւ այնտեղ քեզ երեք միլիոն փող կը տան մեչոկով: Կ՛ասես, որ իմ անունից ես եկել, էդ փողը կը վերցնես, կը գաս Գաւառի օդակայան, ես էլ մինչ էդ կը մտնեմ **Վազգէնի** մօտ, բան կայ ստանալու, դրանք էլ կը ստանամ, կը հանդիպենք:*

– Եղաւ:

Հիմա էս ամէնն ինչու եմ ասում, այ, ինչպէս ասացի, ինքն ինչ ձեւի որ մաքուր էր, նոյն ձեւի էլ մնացածին էր վերաբերում: Նրա մտքով էլ չէր անցնի, թէ էդ երեք միլիոն փողին մի վատ բան կը լինի:

Շահէնենց տանը չատ ենք մնացել, իրենց Հայաթում չատ ենք քեֆ արել, կերել-խմել: Իրենք չատ հիւրասէր էին, սակայն նա բոլորին իր տուն չէր տանում: Ով որ մտերիմ էր, նրանց էր տուն հրաւիրում, իսկ ում հետ մօտ չէր, Շահումեանում ընդունում էր, այնտեղից էլ ճանապարհում: Ինչպէս բոլորս, նա էլ ունէր իր սիրած, նաեւ չսիրած մարդիկ: Սակայն վերջիններիս թիւը, կարծում եմ, չատ փոքր էր:

Գեղամ Գաբրիէլեան. *Շահումեանի, որպէս հայկական տարածքի մասին այնքան էլ տեղեակ չէինք մինչեւ Գորիսից Հադրութ, Գորիսից Ստեփանակերտ, Մարտունի, Մարտակերտ թռիչքների կատարումը: Ալիւր էինք տանում հիմնականում: Ընդմիջման ժամանակ տղաներ մօտեցան եւ ասացին. «Կարո՞ղ ենք թռչել Շահումեան»: Ասինք՝ էդ որտե՞ղ է: Բացատրեցին, թէ Գետաշէն, բան… Ասի՝ իսկ այնտեղ հայե՞ր են ապրում: Թէ՝ հա՛, հա՛:*

*Էն ժամանակ ամէն մէկին չէիր կարող հաւատալ, բայց դէ թռայ: Զէնք էին բարձել: **Շահէնն էր Մեղրեան, Կուճուր Շահէնը՝ Յովասափեանը**, եւ իրենց մօտիկ տղաները: Տասը հոգի էին: Շահումեանի հէնց ֆուտբոլի դաշտում էլ իջայ, իրենց ունեցածը իջեցրին եւ ես արագ ետ թռայ: Զէի*

հաւատում, որ այդտեղ հայեր են ապրում: Ես ետ եկայ Գորիս:

*Յետոյ, մի տասն օր անցաւ, ինձ ասացին, թէ պիտի մի թռիչք կատարուի դէպի Գետաչէնի կողմերը: Էդտեղ էլ արդէն թռիչքը կատարեցի, եւ էնտեղ էին **Մեծ Շահէնը, Կուճուր Շահէնը, Յակոբը**...: Տարել եմ իջեցրել եւ վերադառնալիս եմ իմացել, որ գէնք եմ տեղափոխել: Յետոյ ես վիճեցի տղաների, Շահէնի հետ: Ես բողոքեցի, թէ ինչու իրենք ինձ չեն ասել, չէ՞ որ ես հրամանատարն եմ, պիտի իմանամ: «Դուք ինձ չէք ճանաչել, չճանաչողի հետ ինչպէ՞ս էք գէնք փոխադրում»: Իրենք ասացին, թէ գիտէն, որ ես յուսալի մարդ եմ:*

Իսկ յետոյ շատ-շատ թռիչքներ կատարեցինք դէպի Շահումեան: Շահէնի հետ արդէն ծանօթացել էինք, մտերմացել էինք եւ ընկերներ էինք: Նախ ինքը լաւ մարդ էր՝ մէ՛կ, լաւ ղեկավար էր՝ երկու, ճիշտ ղեկավար էր՝ երեք: Ով ինչ ուզում է՝ ասի, անկախ նրանից, թէ ինչ խնդիրներ ունեն Շահէնի հետ, ես էդ մարդու մասին կարող եմ միայն լաւը ասել: Ինքը, այո, լաւ ղեկավար է եղել: Ի հարկէ, ինքը որոշ մարդկանց նկատմամբ խիստ է եղել, ամէն անգամ ամէն ղեկավար չի կարող հա ասել: Եթէ այդպէս լինի, ղեկավար չի լինի: Որ Շահէնը շատ ճիշտ է պահել իրեն, ես բոլորովին չեմ կասկածում: Որպէս ղեկավար իրեն շատ լաւ է պահել եւ շատ ճիշտ որոշումներ է կայացրել: Թէկուզ էսպէս ասենք՝ կողմնապահումթիւն անենք, թէկուզ այն խօսքը, որ մեր մասին ասաց. «Օդաչուներին լաւ նայէք, մեր միակ կապը իրենք են»: Էս խօսքը բաւական է, որպէսզի էդ մարդու նկատմամբ յարգանքով լցուես, ոչ թէ ըստ կողմնապահումթեան, այլ արդարումթեան, որովհետեւ ինքը ճիշտ գնահատել գիտէր եւ համապատասխան վերաբերմունք էր ցուցաբերում, որն էլ հէնց ճշտումթիւնն է, արդարումթիւնը: Ճիշտ գնահատելը եւ ճիշտ վերաբերմունքը օդի պէս կարեւոր է պատերազմական պայմաններին: Պատերազմի դաշտում սթափ մտածողումթիւն է անհրաժեշտ եւ արդար վերաբերմունք, որպէսզի ղեկավարը, հրամանատարը հեղինակումթիւն ունենայ: Սթափ գնահատելու համար մարդուն միշտ ինքնատիրապետում է պէտք, որպէսզի չասի՝ սա իմն է, սրան լաւ նայեմ:

Շահէնը գործի չահերից է ելել եւ ինքն իրեն, նաեւ ուրիշներին լծել, նուիրել, կարելի է ասել՝ նոյնիսկ զոհաբերել է: Պատերազմը դժուար, դաժան բան է եւ պահանջում է ինչպէս ուժերի հսկայական լարում, մեծ նուիրում, այնպէս էլ հզօր մտածողութիւն, բարձր կարգապահութիւն: Շահէնն էդպիսին էր:

Հնարաւոր է, որ նա սխալներ է ունեցել, սակայն ե՛ս պիտի չդատեմ այդ սխալների համար, այլ էն մարդը, որ պատրաստ էր Շահումեանը ղեկավարելու եւ իրենից լաւ ղեկավարելու: Ցոյց տուէ՛ք այդ մարդուն: Եթէ այդպիսին լինէր, կ՛երեւար: Նրա մասին ասուող բանները յերիւրանքներ են, սուտ են:

92-93 թթ. մենք արդէն տիրապետում էինք ռազմական ուղղաթիռներին, թշնամու կրակակէտեր էինք ոչնչացնում, ինչ-որ օբյեկտներ եւ այլն: Շահէնն ինձ կանչել էր, որպէսզի մասնակցենք Գետաշէնի ազատագրման գործողութեանը: Ես ուղղաթիռային ջոկատի չեֆ-օդաչուն էի եւ գնացինք, որպէսզի գնդակոծման գօտիները, երկրի վրայից հասարակ աչքով խոցելու ստոյգ կէտերը որոշէինք: Ես տեղանքը զննելով որոշեցի, թէ ինչ կէտեր կան, որտեղ ինչ պիտի անենք: Ես պիտի վերադառնայի եւ իր ասած ժամին մենք ուղղաթիռներով պիտի հասնէինք Գետաշէն: Տեղանքի զննումը կատարել ենք Բուզլուխի սարից, Կարաչինարից, Էրքէջ-Մանաչիդի կողմն ենք գնացել, «Տիգրան Մեծ»ի տղաներն էին այնտեղ: Ես Երեւան վերադարձայ, կարծեմ, մայիսի 30-ին կամ 31-ին: Արդէն ուղղաթիռները պատրաստ էին, հրթիռներն առել էինք, ամէն ինչ կար: Եւ էդ ժամանակ իրենք՝ թուրքերը նախայարձակ գործողութիւնը սկսեցին: Մենք միայն յունիսի 12-ին թռանք Սրխաւենդ: Ես եւ ***Նիկողոսեան Ստեփան*** *էինք երկու ուղղաթիռներով: Մի Մ-26-ով,* ***Տերեոխինի*** *հետ, 250 կիլոգրամանոց ռումբեր պիտի տանէինք եւ գցէինք նրանց գլխին: Սակայն իրադրութիւնը մեզ ճիշտ չէին ներկայացրել, ասելով, թէ հակառակորդը չրջապատման մէջ է, կատաղի դիմադրութիւն են ցոյց տալիս, էդ ռումբերը գցէք, որ իրենց մէջքը ջարդուի: Մենք գիտէինք, որ թուրքը վրայ տուած գալիս է եւ մեզ հրամցրած տեղեկութեանն ի հարկէ չէինք հաւատում: Ի՞նչ*

չրջապատման մասին կարող էր խօսք լինել, եթէ Ղարաբաղը լինել-չլինելու առջեւ էր կանգնած: Այդ օրը մենք կորցրեցինք ***Գուլիաեւին****. իրեն խփեցին հրթիռով, մենք նոյնիսկ ի վիճակի չէինք մեր ռումբերը նետելու, որովհետեւ ահաւոր հակաօդա-յին կրակ էր ամէն տեղից: Էդ օրերին զօրքերը Մարտակերտից ետ էին քաշուել: Այդտեղից ես ու Նիկողոսեան Ստեփանը ետ եկանք Գորիս եւ Գորիսում մեր ձայնակապերով լսեցինք խօսակցութիւնը* ***Շահէնի եւ Վազգէնի*** *միջեւ: Նախ՝ առաջինը* ***Կարապետեան Վոլոդիան*** *էր ուզում խօսել: Նա ասաց, թէ ինքը բան ունի ասելու, չատ կարեւոր բան: Հաւանաբար նա չատ կարեւոր բան էր ուզում ասել, որ էդպէս էլ իրեն թոյլ չտուեցին արտայայտել: Վազգէնը ասել էր Կարապետեան Վո-լոդիային, որպէսզի ինքը գնդով ամրանայ եւ պաշտպանական գօտի ստեղծեն, Թալիշի եւ Կարաչինարի արանքում մի փոքր գիւղ կայ, էդ գիւղում, եւ պաշտպանուեն: Շահէնը հարցրեց, թէ ո՞ւր են տանկերը: Ես լաւ լսեցի, որ Վազգէնն ասաց, թէ 30 տանկ է գալու: Շահէնն ասաց, թէ թուրքի տանկերն արդէն մտնում են Շահումեան, ես աչքով եմ տեսնում: Հնար չունեմ պաշտպանուելու, թողնում եմ Շահումեանը: Իրենք էլ լաւ գիտէին, որ խաբում են էդ մարդուն, թէ օգնութիւն են ուղարկում: Ոչ մի օգնութիւն էլ չկար: Սրխաւենդի կողմից ճանապարհը կտրած էր, թուրքերը ճանապարհը փակել էին, գոնէ որ տեսնէինք տանկեր են գնում, բայց ոչինչ էլ չկար: Որեւէ բան անել չէր լինի, եւ ինձ թւում է՝ որոշումը կայացուած էր՝ յանձնելու: Մանաւանդ որ թուրքերին օգնում էին սովետական զօրքերը, ուրեմն դա պատուէրով բան էր:*

Դաշնակներն են շատ թռել Շահումեան: Գիտեմ, իրենք չատ մեծ ազդեցութիւն ունէին Շահումեանում, իրենք մեզ էին նկա-րում, ուղղաթիռն էին նկարում, ապրանքն էին նկարում մէկ-մէկ, թէ ինչ ենք տանում: Դաշնակները չատ խիստ հաշուետուութիւն էին անում, եւ դա ինձ դուր էր գալիս:

Գետաշէնը վերցնելուց յետոյ մենք իջանք Մռովի լանջերի վրայ, որպէսզի սարով Գետաշէն գնանք հետախուզական թռիչքի: Էդ թռիչքների ժամանակ հրամանատարը ես եմ եղել

*եւ **Նիկողոսեան Ստեփան**, իսկ երկրորդ օդաչուները եղել են **Նորիկը եւ Կարապետեան Էդիկը**: Մեխանիկները՝ **Ջիլաւեան Աբօն** եւ կարծեմ **Արծուիկն** էր, արդէն չեմ յիշում: Մենք առաջին անգամ թռանք երեքմանկունքից վերեւ տեղաւորուած պարտիզանական ջոկատի բազա: Դրանից յետոյ, կարելի է ասել, կանոնաւոր թռիչքներ ենք կատարել թիկունք: Ետ թռչելիս էլ մի քանի անգամ գնդակոծման տակ ենք ընկել, վնասուածքներ են եղել մեքենայի, բայց պրծել ենք:*

Ինչքան պարտիզանական ջոկատն էնտեղ եղել է, էնքան ժամանակ մենք թռիչքներ կատարել ենք:

*Թռիչքներից մէկի ժամանակ էլ **Շահէնի հետ խփեցին Ջամբոյին՝ Ջանփոլադին:***

*Շահէնենց խփուելը քաղաքական հարց է, սակայն հաւատս չի գալիս, թէ թուրքերի դեսանտային խումբը կը մտնէր մեր թիկունքը, մի քանի օր կը մնար եւ կը խփէր Շահէնին: Ես ստոյգ ոչ մի բան չեմ կարող ասել: Էն դիրքերից, որ գտնուել է մեր զօրքերի վերահսկողութեան տակ, էնտեղից են խփել: Հնարաւոր է կամ թուրքերի յատուկ, ուժեղ ջոկատ է եղել, որ թափանցել է, օրեր մնացել՝ մինչեւ ուղղաթիռը գայ եւ խփի: Ինքներդ դատէք: Շատ ցաւալի զոհեր տուեցինք, **Գրիգոր Գրիգորեանն է** եղել, **Բժիշկն** է եղել, **Շահէնի հօրեղբօր թոռը,** որ Ռուսաստան էր սովորում, 16 տարեկան էր, դիւերսիոն դպրոց անցած:*

Շահումեանի ժողովրդին ես միշտ էլ յարգել եմ, պինդ ժողովուրդ են, հայրենասէր: Ասում էին. «Մեզ ուտելիք-բան պէտք չէ, դուք անվնաս թռէք, գնացէք եկէք, որ իմանանք կապ ունենք Հայաստանի հետ»: Շատ լաւ ժողովուրդ են եւ, չգիտեմ, էդպէս ստացուեց: Քաղաքական մեծ խաղերի տակ ընկան: Նոյնն էլ Արծուաշէնն էր: Սահմանները հաւասարեցրել են, թուրքի մի քանի գիւղակներ վերցրել եւ Արծուաշէնը տուել են: Ըստ երեւոյթին Ռուսաստանի վերայսկողութեան տակ համաձայնութեան են եկել: Իմ կարծիքով, ցանկացած կռուի ժամանակ համաձայնութիւններ լինում են:

Համլետ (Ստեփան) Օհաննեան. «***Շահէնենք*** որ Շահումեանից դուրս էին գալիս, առաջին թռիչքը ես եմ արել՝ փախստականներին բերելու համար: Նստեցի Սարսանգի ՀԷԿի վրայ: Իջանք եւ որքան կարողացանք՝ կին ու երեխայ տեղաւորեցինք ուղղաթիռում, մօտ 80 հոգի, բոլորը կանգնած էին: Երբ ես թռչում էի, ինձ ասացին, որ տանեմ այդ մարդկանց Ստեփանակերտ իջեցնեմ: Ես էլ չհամաձայնեցի, ասացի, որ այդ մարդիկ արդէն Ղարաբաղում են, էլ իրենց ինչո՞ւ բերեմ: Եւ բերեցի Երեւան: Ասացին, որ թռիչքս կրկնեմ, բայց էլ չեկայ:

Մենք օդանաւի 4 կորուստ ենք ունեցել: Առաջինը կորցրել ենք Եակ-40-ը: Դա եղել է ***Դալլաքեան Արարատի*** ինքնաթիռը: Երեւանից Ստեփանակերտ թռչելիս Լաչինում խփել են: «Սու»ով խփեցին եւ «Եակ»ը ընկաւ Լաչինի եւ Ստեփանակերտի միջեւ գտնուող սարի վրայ: 90 թուականի օգոստոսի 1-ին էր: Զոհուել են բոլորը: 4 հոգի անձնակազմն էր, 30 հոգուց աւելի ուղեւորներն էին:

Առաջին ուղղաթիռը մենք կորցրել ենք 91 թուականի յուլիսի 14-ին: Դա ***Մուշեղ Անտոնեանի*** ուղղաթիռն էր, որ ընկաւ Երեւանի կենդանաբանական այգու մերձակայքում: Էլի Ստեփանակերտ էր թռչում: Արեգակի ճառագայթներն ընկել են աչքերին, լաւ չի տեսել, բարձրութիւն չի վերցրել եւ դիպչելով լարերին՝ ընկել է: Երկրորդ օդաչուն ***Կարէն Մարգարեանն*** էր, բորտմեխանիկը՝ ***Ժորա Մինասեանը***: Գնում էին Երեւանից դուրս բեռնաւորուելու, Երեւանից դուրս գալիս ցածր էին թռչում, որպէսզի տեսնող չլինի, այն օրերին թռիչքներ չէին թոյլատրւում, գաղտնի էինք անում: Երեքն էլ զոհուեցին: Դեռեւս դատարկ էր, մարդ չկար, գնում էին, որպէսզի ռադիոկայմի մօտից գէնք բարձեն, որպէսզի այստեղ ստուգումներից խուսափեն:

Երկրորդ ուղղաթիռը 92 թուականին էր, ***Հրայր Կիրակոսեանի*** օդանաւն էր, որ բախուեց Գիւլիստանի մօտ Քեաչալ սարին: ***Զանփոլադին*** յայողուեց գալ, իսկ Հրայրը չկարողացաւ. մառախուղի պատճառաւ դիպել էր սարին: 8 հոգի էին. բացի անձնակազմից, Ստեփանակերտի օդակայանի

պետն էր՝ **Մաքսիմը**:

Երրորդ ուղղաթիռը **Ջանփոլադ Մուրադեանինն էր**, որի մէջ էին **Շահէն Մեղրեանն** իր տասներկու զինակից ընկերներով: 93-ի ապրիլի 17-ին:

Պարտիզանների մօտ մենք միշտ երկու ուղղաթիռներով էինք գնում: Միւս ինքնաթիռի հրամանատարը **Ռաֆիկ Մեհրաբեանն** էր: Էդ արանքով, Քեաչալ սարից իջնում էինք եւ գնում Արտատափ: Արտատափից անցնելիս Մատաղիսից միայն 15 վայրկեանի ընթացքին կարող էին մեզ տեսնել: Էդ փոքր տարածքից ես տղաներին միշտ զգուշացնում էի: Մենք գնում էինք եւ անտառին կպած, ծառերին գրեթէ քսուելով անցնում: Որ իրենք եկել են նստել՝ թուրքերի կողմից սկսել են խփել: Առաջինը Մեհրաբեան Ռաֆիկի ուղղաթիռին են խփել: Սարելայի հրթիռը տաք օդի վրայ է գնում: Այդ հրթիռը որ եկել է, Ռաֆիկը սարի վրայ է նստած լինում, իսկ տաք օդը՝ ներքեւ է իջնում: Ռաֆիկը Ջանփոլադին ասել է, որ խփում են, եւ ինքը աւելի անվտանգ ուղղուղեամբ է թեքուել, իսկ Ջան-փոլադը՝ Ռաֆիկին հակառակ ուղղուղեամբ: Ջանփոլադի վրայ էլի հրթիռ են արձակել, որը եկել՝ գտել է ուղղաթիռին: Ես չեմ հետաքրքրւում, թէ ով է խփել եւ որտեղից: Բայց կարող եմ ասել, որ այն կողմից թուրքերը կարող էին խփել: Թուրքերը Եղակերի կողմից, Թալիշի կողմից շատ մօտ էին:

Պարտիզանական շարժումը սկսել, ընթացքի մէջ դնել եւ կազմակերպօրէն վարել կարող էին միայն շատ մեծ կամքի տէր մարդիկ: Մանաւանդ **Շահէն Մեղրեանը** շատ մեծ աշխատանք կատարեց, ես իրենով հպարտանում եմ: Մինչեւ հողերն ազա-տագրելը ուղիղ մէկ տարի անտառում մնալը շատ դժուար է: Բացի մնալը, պարտիզանական պայքար մղել եւ այդչափ մեծ օգտակար գործ անել... Դրա համար ես միշտ ասում եմ, **Շահէն Մեղրեանը մեծ, շատ մեծ մարդ էր: Մեր ազգի մեծ զաւակն էր:** Ես յիշում եմ **նաեւ Խիդիրեան Յակոբին, Նովիկ Գիւլումեանին, Սերգէյ Զալեանին, Քեաբի Արթուրին**: Ես կ՛ուզէի, որ այդ մարդկանց երբեք չմոռանային: Օրինակ Շահէնի չիրիմին այցի ենք գնում միայն յունուարի 2-ին, իր

*ծննդեան օրը, կամ մահուան օրը, այն էլ՝ կուսակցութեան հովանաւորութեամբ: **Նա այն մարդն է, ում պիտի մեծարել համաժողովրդական եւ համապետական ծաւալներով**: Ճիշտ է, նա անդամագրուած էր Դաշնակցութեանը, սակայն նա համայն ազգինն է, չէ՞ որ նա ոչ թէ իր կուսակցութիւնն է ազատագրել, այլ իր հայրենիքը: Ուրեմն, ինչո՞ւ խորութիւն դնել կամ Շահէնին սահմանափակել կուսակցութեամբ, երբ որ նա եղել է ազգային պետական գործիչ: Ամէն ինչ պիտի կառավարական մակարդակով կազմակերպել, ինչպէս որ երբեմն **Արամ Մանուկեանին** են ամբողջ երկրով, ազգով յիշում:*

***Շահէնի հետ** ես չատ մօտ եմ եղել: Շա՜տ: Մինչեւ 91 թուականի մայիսն աշխատում էի Աւիոէքսպորտ հիմնարկում, ասենք՝ ուղաթիռների ձեռք բերման հարցերով էի զբաղւում, չարժիչներ էինք գնում: 89-ից ազատ ժամանակներս եկել եւ տղաներին օգնել եմ: Իրադրութիւնը երբ չատ փոխուեց, ես թողեցի եկայ Հայաստան: Շահէնին առաջին անգամ տեսել եմ 90 թուականին: Նրանք մի տեղ նստած էին **Պարգեւ Սրբազանի հետ**: Ուզեցին տեսնել, թէ այս օդաչու հրամանատարը, այսինքն՝ ես, ով եմ: Նրանց թուում էր, թէ ես ռուսական անձնակազմի մէջ եմ: Ես իրենց ներկայացայ որպէս արտասահմանում աշխատող հայկական անձնակազմի անդամ: Դրանից յետոյ մտերմացանք:*

Շահումեանի ջոկատի մարտիկներն ու հրամանատարները բոլորը եղել են անձնուրաց մարդիկ: Միշտ մեզ հետ են գնացել-եկել, եւ չատերի հետ մտերիմ էինք: Մինչեւ այսօր էլ բոլորի հետ կապի մէջ ենք:

3. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Պօղոս Մեղրեան. «Հայաստանից ինչքան բժիշկներ եկել են՝ նորմալ օգնութիւն ցոյց են տուել, **Նշանն** էլ է եղել, չհաշուած մեր **Վահէն** եւ միւսները, որ զոհուեցին, պարտիզանական չարժման ժամանակ: Հիմնականը **Արտակն էր**: Շատ մեծ տեղ կարող ենք տալ այն բժշկուհուն, որի ամուսինը զոհուեց Շահումեանում եւ ինքը եկաւ եւ մինչեւ վերջ չարունակեց

ամուսնու գործը: Նրա ամուսինը հէնց Շահէնի հետ զոհուեց: **Արմինէ** է անունը»:

Բժշկուհի **Արմինէ Նալբանդեան.** «Արտակը երբ աւարտեց, մենք ամուսնացանք, եւ մի քանի ամիս անց գնաց Շահումեան աշխատելու: Պատերազմը սկսուեց եւ ինքը մնաց այնտեղ: Իմ համաձայն լինելը կամ հակառակելը որեւէ իմաստ չէր կարող ունենալ, որոշումը բոլոր պարագաներին իրենն էր:

Իմ գնալու հանգամանքն այս էր: Արտակի զոհուելուց յետոյ մի բժիշկ եւս վիրաւորուել էր, եւ ո՞ւմ պիտի ուղարկէին այնտեղ: Ո՞վ պիտի գնար: Գուցէ կարողանային հրամայական կարգաւ մէկին ուղարկել, բայց դա լաւ չէր լինի, եւ ես համաձայնեցի: Այսինքն՝ բժիշկ չկար եւ ես գնացի:

Պարտիզանական պայքարն ամբողջ Ղարաբաղում մէկն էր, մի տեղ, եւ դա էլ ժամանակաւոր էր, մինչեւ սահմանների միանալը: Տեղիս առանձնայատկութիւնն այն էր, որ այնտեղից որեւէ այլ տեղ տեղափոխուել չէիր կարող: Տղաների վիճակն էլ նրանով էր վատ, որ այդտեղ աւելի բարդ էր:

Բժշկական ծառայութեան առանձնայատկութիւնը Շահումեանում այն էր, որ այնտեղ չէր կարող գործել ստանդարտ հոսպիտալ, այլ կար վրանային հոսպիտալ: Այնտեղ գլխաւոր բժշկի գաղափար չկար, քանզի մի բժիշկ էր միայն: Կրթութեամբ բուժքոյրեր չեմ ունեցել, բայց օգնական կանայք կային: Յետագային այնտեղ մեր բժիշկներից մի որոշ ժամանակով եկաւ **Նշան Մանուչակեանը**, յետոյ եկաւ նաեւ մի բուժքոյր, էլի Մալաթիայի հիւանդանոցից, անունն **Էլմիրա,** որ պատերազմի աւարտից յետոյ էլ մնաց այնտեղ՝ «Եղնիկներ»ում, իսկ Նշանը վերադարձաւ: Յետոյ, երբ եռամսեայ հաւաքները եղան, այդտեղ էին գալիս մանկաբոյժներ, նոյնիսկ ատամնաբոյժ կամ, ասենք, շտապօգնութեան բժիշկ կամ ռենտգենաբան եւ աշխատում էին որպէս վիրաբոյժ: Բայց դա վերջում էր:

Այնտեղ բնորոշը նաեւ այն էր, որ եթէ վիրաւորներ էին լինում, նրանց թիւը մեծ էր լինում, քանզի, ասենք, ական կամ հրթիռ էր պայթում եւ կամ՝ երբ յարձակողական կամ պաշտպանական մարտեր էին լինում, տուժումը զանգուածային էր

լինում, վիրաւորները մեծ թիւ էին կազմում:

Միջոցների մասին ասեմ. դեղորայքը ՀՕխից էինք ստանում, ինչ պահանջագիր ներկայացնում էինք՝ ուղարկում էին ըստ այդմ: Օգտւում էինք նաեւ Բժշկական վարչութիւնից: Վերջին ժամանակները Ստեփանակերտի Հոսպիտալից էինք ստանում:

Շահէն Մեղրեանին յանդիպել եմ մի քանի անգամ: Մեղրեանի մասին Արտակիցն եմ շատ լսել, իր հետ շատ չեմ առընչուել, այլ իր եղբայրների հետ: Ես իր հետ զրուցել եմ միայն մէկ անգամ, երբ պիտի պարզաբանէինք, թէ ինչ է հարկաւոր Շահումեան բերել»:

*Երկրորդ անգամ **Արմինէ Նալբանդեանի** հետ մեր հարցազրոյցն այլ պայմաններում էր, իր զինակից ընկերների՝ բժիշկներ **Գէորգ Ոսկանեանի, Սմբատ Ջամալեանի** եւ օպերատոր **Յակոբ Պօղոսեանի** հետ միասին:*

Գէորգ Ոսկանեան. *«Գնալուս ղրղապատճառը բժշկական չի եղել: Մեր ընկեր **Վահէ Բաղդասարեանը** Շահումեանում էր, մտածեցինք, որ պիտի գնանք իր մօտ»:*

Սմբատ Ջամալեան. *«22 տարեկան էի, մտածում էի, որ կ՛օգնեմ բժիշկներին: Իմ ղրղապատճառը միայն բժշկական էր: Ի հարկէ, հիմա ես չեմ ափսոսում, որ գնացել եմ: Երբ մենք իջնում էինք, մեր վրայ արդէն կրակում էին, եւ ես դեռ չէի հասկանում այդ կրակելու տրամաբանութիւնը՝ որտեղի՞ց է, ինչպէ՞ս կարելի է պատսպարուել, ո՞նց կ՛աւարտուի: Միանգամից գնդակոծման տակ ընկանք: Ուղղաթիռը չէր իջել, օդում կախուած էր, եւ մարտիկները թռչում էին ուղղաթիռից եւ գնում պահւում էին բլուրի յետեւը: Ես էլ իջել եմ, սքանչելի բնութիւն է, եւ սկսել եմ զմայլուել բնութեամբ: Տղաներն ասացին. «Ի՞նչ էս չշմած դէս-դէն նայում: Շո՛ւտ արա, պահուի՛ր»: Իգլայի հրթիռներ էին պայթում, եւ ես չհասկանալով, թէ ինչ է, նայում էի զարմացած: Ուրիշ մարտիկներ բարձրացան ուղղաթիռ եւ իմ աչքի առաջ այդ ուղղաթիռին խփեցին: Բայց կար մի հոգի եւս, որ չէր գնում բլուրի յետեւը, կարծեմ **Սերգէյ Զալեանն** էր: Մենք կանգնած էինք եւ մեր դիմաց մե՛ծ սիրուն ձոր էր, ամբողջ շրջակայքը՝ անտառներ: Ամէն ինչ ոնց որ*

կինոնկարում լինէր: Յետոյ մենք իջանք ներքեւ: Մինչեւ ներքեւ իջնելը՝ բերեցին երեք վիրաւորի, երկուսը կեանքի հետ անհամատեղելի էին, ուրիշ տեղից բերեցին, իսկ գիշերը գնում էինք, որ այրուած դիակները բերենք: Դժոխքի նման չէ՞»:

Արմինէ Նալբանդեան. *«Երեւանում էինք, եւ **Արտակը** գնում էր Արցախ, բայց պարտիզանական ջոկատի ժամանակ ինքը չէր գնացել: Զուտ պատահականօրէն հանդիպել է **Սերգէյին,** եւ նա առաջարկել է իր հետ գնալ Շահումեան, այնտեղ յարձակում է նախապատրաստւում, բժիշկներ են անհրաժեշտ եւ այլն: Տնեցիները համաձայն չէին, ինքն էլ նոր էր ասպիրանտուրա ընդունուել: Ասացի՝ ես էլ եմ գալիս: Մտածում էի, որ այդ ձեւով մի քիչ ետ կը կանգնի իր մտադրութիւնից: Տեսայ՝ չէ, կարծես աւելի հեշտացրի իր գնալու գործը: Ինքը եկաւ տուն եւ ասաց, թէ Արմինէին Ստեփանակերտ են ուղարկում, ես էլ հետը գնում եմ, որ խնդիրներ չունենայ: Պատկերն արդէն պարզ էր:*

Մենք գնացինք Շահումեան, իջանք Գիւլիստան: Մի քանի օր մնացինք այնտեղ, եւ պիտի հոսպիտալ ստեղծէինք, քանի որ ուրիշ հնարաւորութիւն չկար: Երկուսս էլ վիրաբոյժ էինք եւ լրիւ հնարաւոր էր»:

Սմբատ*. «Ես **Մհերի** հետ եկայ, մտածում էի, որ մէկի ձեռից փուշ կը հանեմ, մէկին փորացաւի կամ գլխացաւի դեղ կը տամ: Ես ի՞նչ իմանայի, որ այդ մէկը կիսուած գլխով կը գայ»:*

Արմինէ*. «Երբ նոր էի գնացել, մէկի կոյր աղիքի ցաւը բռնեց: Նայեցի, Աստուած իմ, ես ի՞նչ եմ անելու այստեղ...: Դէ ես ի՞նչ էի տեսել մինչ այդ. առաջնակարգ հիւանդանոց, լաւագոյն պայմաններ, իսկ այդտեղ ի՞նչ էին տալիս. երկու ինչ-որ թել եւ մի չատ կասկածելի ասեղ, ու դրանով պիտի գործ անէինք: Լաւ էր, գոնէ այն բաներից կային, որ եթէ ծեծում ես՝ սառոյց են դառնում: Այդ սառոյցն անտիբիոտիկնե-րով այնքան դրեցինք, որ սուր ցաւերը նահանջեցին:*

*Վերադարձայ Երեւան, գնացի, հանդիպեցի հանգուցեալ **Մնացական Մելիքսեթի Աղաբաբեանին**: Եւ նա բեռնատարի մէջ տեղաւորուած շարժական հոսպիտալի փոխարէն առաջար-*

կեց վրանային հոսպիտալ: Ինձ տուեց բրեզենտէ վրան, որ դիւրութեամբ չբռնկուէր, այլապէս չէինք հասցնի վիրաւորնե-րին դուրս բերել: Լրիւ դասաւորեցին, բարձեցին մի «կամազ»ի մէջ: Յետոյ կապուեցի Շահումեանի հետ, իմացայ, որ **Արտակը** գալիս է: Գնացի դիմաւորելու, տեսայ՝ ուշանում է: Հարցնում եմ՝ ասում են, թէ ուշացել է ուղղաթիռը: Երկար սպասեցի, եւ ի՞նչ պիտի անէի՝ գնացի տուն: Երեկոյեան **Նորիկ Շահբազեանը** եկաւ իմ զարմուհուս հետ եւ ասաց, որ այսպիսի բան է եղել: Պարզուեց, որ սկզբից կապուել էին **Աբոյի** հետ: Խեղճ Աբօն գնացել եւ չէր ճանաչել, այնքան էր այլակերպուած եղել Արտակը: Ինքը դուրս էր ընկել ուղղաթիռից եւ գլուխը լրիւ ջնջուած էր եւ իրեն կարելի էր ճանաչել միայն հա-մազգեստով: Այլ կերպ հնարաւոր չէր:

Նախքան դէպքը՝ ես իր հետ կապուել էի, եւ ինքն ասաց.

– Այո, ես գալիս եմ:

– Իսկ ինչո՞ւ ես գալիս: Ինչ կայ՝ ես բերելու եմ, դու ինչո՞ւ ես գալիս:

Դրանից առաջ էլ **Մեղրեանին** էի հանդիպել Երեւանում, եւ նա հարցրեց.

– Երեւի այլեւս չե՞ս վերադառնայ մեզ մօտ:

– Ինչո՞ւ, կը գամ:

– Դէ, այնտեղ պայմանները լաւ չեն:

– Չէ, կը գամ անպայման:

– Դուցէ գաս, բայց այլեւս չգտնես:

– Չէ: Գետնի տակից էլ լինի՝ կը գտնեմ:

Սակայն գետնի տակից գտնելը դժուար է: Յետոյ, երբ արարողութիւնները աւարտուեցին, պիտի բժիշկ գնար այնտեղ: Այնտեղ Արտակից բացի գնացել էր վնասուածքաբանը՝ **Պապիկեան Արայիկը**, եւ նա էլ վիրաւորուել էր մարտի 28-ին: Եւ ահա մէկը վիրաւոր է, միւսը՝ զոհուած, ո՞վ պիտի գնար այնտեղ: Հոսպիտալն էլ պատրաստ էր ու դրա հետ մի բան պի-տի արուէր: Ես այդ ամէնը գիտէի, ինձ սովորեցրել էին, բայց ուրիշները չէին կարող: Սուս ու փուս իրերս հաւաքեցի եւ գնացի, որովհետեւ եթէ պարտիզանների մօտ մի բան լինէր,

այդ մարդիկ ոչինչ չէին կարող անել»:

Սմբատ. *«Մի անգամ որ գնում ես, թէկուզ այնտեղ ժժոխք լինի, բայց այնտեղ ընկերներ ես թողնում, մարդիկ ես թողնում, գործեր ես թողնում եւ էլի, բնականաբար, պիտի գնաս»:*

Գէորգ. *«Մի վիրաւոր կար սեռական օրգաններից, Արմինէն վիրահատեց եւ կեանքի վերադարձրեց: Մէկ ուրիշը՝* ***Պարգեւը,*** *մի թոքը լրիւ կորցրել էր: Էլի Արմինէն վիրահատեց եւ իրեն երեւան հասցրինք, ու նա էլ ապրեց»:*

Արմինէ. *«Վիրաւորին ծայրայեղ դէպքում կարող էք վիրահատել, սակայն նուազագոյն հնարաւորութեան պարագային պիտի նրան տեղափոխել: Դա օրէնք է: Եթէ մենք վիրաւորներ պահէինք, կը նուազեցնէինք ջոկատի հարուածային ուժը, նրա տեղաշարժուելու հնարաւորութիւնը, կը կաչկանդէինք նրա գործողութիւնները, որն այդպիսի պայմանների համար խիստ վտանգաւոր է»:*

Գէորգ. *«Մենք այն ժամանակ կիրառել ենք ռուսական բանակում ընդունուած կանոնակարգը, որը համաշխարհային պատերազմների փորձի վրայ էր հիմնուած, որտեղ որոշակիացուած էր, թէ բուժական ո՛ր օղակը ի՛նչ ծաւալի բուժօգնութիւն մատուցելու իրաւունք ունի: Այլապէս զօրամասերը մարտական խնդիրները կը ձախողեն: Պարտիզանական ջոկատն էլ ունէր իր յատկեալ խնդիրները, որ գործունէութիւնը չատ էր բարդացնում: Նախ՝ հաղորդակցման ուղիների բացակայութեան պատճառով կար տեղափոխման խնդիրը: Ասենք, մի անգամ* ***Զալեան Սերգէյից*** *մի ամբողջ գիշեր պահանջուեց, որպէսզի նա վերին օղակներին համոզի ուղղաթիռ ուղարկելու, քանզի* ***Մեղրեանենց*** *դէպքից յետոյ ոչ մի օդաչու չէր ուզում կամ համարձակում թռչել Շահումեան: Եղակեր ոչ մի ուղղաթիռ չէր իջնում, գալիս էր Արտաւափ էր իջնում, իսկ Արտաւափը հեռու է եւ այդ պարագային մենք վիրաւորին չէինք կարող փրկել»:*

Արմինէ. *«Երբ ես գնացի այնտեղ, մէկ օր անց հոսպիտալից միայն վրանն էր՝ բացած վիճակում: Տղաները վրանի մէջ նստած էին.* ***Աբօն էր, Տիկօն*** *էր կարաչինարցի, մէկ էլ մի*

պայթիւն եղաւ: Տրակտորը գնացել էր, որ մի այլ տրակտորի հանէր՝ բերէր: Պարզուեց, որ տրակտորի տակ հակատանկային ական էր դրուած եղել: Գնացել, նստել էին տրակտորի վրայ եւ հէնց ընթացքի մէջ դնելու պահին ականը պայթել էր, տղաներր վիրաւորուել էին, ***Սեյրանն էր*** *թալիշեցի, Հոկտեմբերեանի* ***Գնէլն էր****...*

Որ պայթել է՝ Սեյրանն ու Գնէլը պայթիւնի պահին երկուսով եղել են ականի վրայ: Եւ վիրաւոր տրակտորիստին՝ Սեյրանին 12 կմ վիրաւոր վիճակում տարել են պատգարակով: Որովհետեւ եղակեր ոչ մի ուղղաթիռ չեկաւ: ***Սաշկան*** *էր իր բրիգադով, եւ մէկ էլ գինուորական բժիշկ* ***Գագոն էր****: Եւ այդ վերիվար ճանապարհով վիրաւորին տարել են միշտ պատգարակը ուղիղ, հորիզոնական դիրքով պահած, ոչ մի տեղ չեն խախտել այդ դիրքը: Երբ հասցրեցին Արտաւափ, այնտեղ վատացել էր, թոքի այտուց եւ այլն, մահացել էր, չէին կարողացել փրկել: Ու այդպէս էլ ոչ մի ուղղաթիռ եղակեր չեկաւ, Արտաւափ էին իջնում»:*

Սմբատ*. «Երբ մեր ուղղաթիռը խփեցին, այդ գիշեր շատ ծանր եղաւ եւ մենք գնացինք անտառի մէջից դիակները բերեցինք, ինճ համար շատ ծանր էր: Առաւօտեան 4-ին եկանք հասանք բազա: Այդ ամէնից յետոյ էլ ի՞նչ քնել: Մի թեթեւ կիսաննջելու վիճակում էի եւ առաւօտեան հինգին մեր մօտ ականանետներն էին խփում: Մի փոքր թուլամչուշ էր, թոյլ քշաթուխպ, եւ դրա պատճառով վերեւից, պոստից չէին տեսել, որ հետախուզական խումբ է մօտեցել: Ըստ երեւոյթին մառախուղն իրենց էլ շփոթեցրել է, քանզի սրանք յանկարծ զգացել են, որ հասել են պարտիզանների բազային: Եւ փոխհրաճգուքիւն էր սկսուել, որոշ ականներ պատահականօրէն հասնում էին՝ վրաններրի մօտ պայթում: Մենք էլ չգիտէինք ինչ է կատարւում. միանգամից սկսուեց եւ ինչ-որ խառնաշփոթ վիճակ ստեղծուեց: Դրանից յետոյ շատ վիրաւորները էին գալիս: Ես յիշում եմ, այդ առաւօտեան ես արիւն չունէի, բայց ունէի շատ արիւն կորցրած 2-3 վիրաւոր, որոնցից մէկը մահացաւ: Նաեւ դեղորայքի խնդիր ունէի, եւ որքան*

*յիշում եմ, այն ժամանակ միայն վնասուածքաբան (տրաւմատո-լոգ) կար եւ ոչ մի ուրիշ մասնագէտ: Անգամ սեղան չկար, եւ հիւանդներին մեր ճաշասեղանի վրայ էինք պառկեցնում: Ցաւազրկման հնարաւորութիւններ չկային: Եւ ես՝ մենակ, ուսանող, ի՞նչ անենք, որ աշխատել էի վերակենդանացման բաժնում: **Մհերն էր** ինչ-որ բաներում օգնում: Պատասխա-նատուութիւնն էլ՝ մեծ, եւ բազմաթիւ այդպիսի խնդիրներ կային, նիւթատեխնիկական հնարաւորութիւններ չկային, ոչ էլ փորձ՝ հիւանդի հետ աշխատելու»:*

Գէորգ. *«Ես որպէս բժիշկ չեմ գնացել, այլ զինուոր: Մի անգամ, երբ հետախուզութիւնից ետ էինք գալիս, մեզ համար լիովին անսպասելի ական պայթեց: Մի հոգի տեղում զոհուեց, երկու հոգի շատ ծանր վիրաւորուել էին, մէկը գիտակցութեան կորստով, գլխից էր վիրաւորուել»:*

Արմինէ. *«Ես չգիտէի նրանք ինչ վիրաւոր են: Մէկ էլ տես-նեմ՝ ձին գալիս է. մէկը լանջով պառկած է ձիու վրայ, Գէորգն էլ ոտքերը դրած ուսին բերում էր: Մտածում եմ՝ էս ի՞նչ է եղել, որ էս ձեւով է բերում»:*

Գէորգ. *«Ինքս վարդենիսցի եմ, բարբառով էի խօսում՝ **գեա...**: Ես էլ հաւես չունեմ, յետոյ պիտի պարզուէր, որ **Վահէն** զոհուել է: Վահէն որ զոհուեց, **Թաթուլն էլ** վիրաւորուել էր, **Նովիկը** եկաւ: Մինչ այդ՝ մօտ տարածութիւնից նռնականետով խփեցին՝ ես ընկայ: Նովիկը եկաւ ինձ հանեց: Այդ կրակոցից ես էլ ցնցահարուած (կոնտուզիա) ստացայ: Վախեցել էի, թուում էր, թէ ինչ-որ մի տեղս պոկուած է, եւ չէի շարժւում: 1-2 րոպէ ոչ մի շարժում չէի անում: Նովիկը եկաւ, ձեռքիցս բռնեց, կանգնեցրեց ու ասաց.*

- Կարո՞ղ ես քայլել:

*Գնացինք, հասանք **Աբոյենց**, բայց ես տեղեակ չէի, որ Վահէն զոհուել է: Ասացի.*

- Թաթուլը վիրաւոր է, կարո՞ղ էք հանել:

Ուժգին փոխհրաձգութիւն էր: Թաթուլին հանեցի, դրեցի ծառի տակ, ասացի, որ չշարժուի: Մի քանի ժամ յետոյ մարտն աւարտուեց, Դաստագիրի բլինդաժները գրաւուած էին ու մէկը պիտի բերէր Թաթուլին: Ես չէի կարող Թաթուլին թողնել

այնտեղ ու որոշեցի, որ ես կը բերեմ: Թաթուլը Թեւից էլ վիրաւոր էր, բայց վտանգը դրանում չէր: Նա ինձ հարցրեց.

- Կ՚աշխատի՞ Թեւս:

- Հա, կ՚աշխատի:

- Ես 21 տարեկան եմ, եթէ Թեւս չաշխատի, աւելի լաւ է ես մեռնեմ: Ինձ իջեցրու, ես ինձ վրայ կրակեմ՝ վերջանայ, կ՚ասես՝ մահացել է:

- Դու հոգիս մի՛ հանի, թո՛ղ տանեմ, խելօք ճանապարհ ենք գնում:

*Ես էլ իբրեւ ցաւազրկող՝ մորֆի էի սրսկել, դա էլ ամէն րոպէ խնդրում էր, որ իջեցնեմ, ինքն իրեն սպանի: Այդպէս մի կերպ տարել, հասցրել եմ **Արմինէի մօտ**: Արմինէն վիրահատեց: Դեղերի ազդեցութիւնը որ վերանում է, դոզան անցնում է, թեթեւ պատկերախեղումներ (հալիւցինացիաներ) է առաջանում մարդու մէջ: Թաթուլի մէջ էլ միայն այդ դոմինանտ պատկերացումն էր մնացել, թէ Թեւը կ՚աշխատի կամ չի աշխատի: Վիրահատութիւնից յետոյ վիրաւորուածի այտուցն էլ մի քիչ կար, փաթաթուած Թեւն էլ մեծացել էր, ասաց. «Վա՛յ Գեւօ, էս ի՞նչ ման է ջոջըցել»: Հէնց առաջին խօսքն այդ եղաւ:*

*Հետախուզութիւնների գնացել ենք: Ես նոր էի եւ ինձ համար էդ պահին **Թոքի կամօն էր** միակ հեղինակութիւնը: Ես ինձ չատ ապահով էի զգում, որ կամօն կողքիս էր լինում: **Վահէն** հետս չէր այդ օրը: Դէ մենք, առհասարակ, Վահէի մօտ էինք գնացել, նա մեզ համար հերոս էր: Եթէ Վահէի հետ միասին այդ օրերին ասէին՝ գնացէք Արարատը գրաւէք, մենք հաստատ գնացող էինք:*

*Տեղանքին լաւ ծանօթ էինք եւ գնում էինք հետախուզութեան: Առաջին անգամ ես որ գնացի՝ մեր դէմ ԴՇԿ աշխատեց, բայց ես դեռ բան չէի հասկանում, ոտքերիս մօտ ճիւղերը կտրատւում էին, բայց ես բանից անտեղեակ եմ: Ես ու **Պարգեւն** իրար մօտ էինք. նա ասաց. «Կանգնի՛ր ու մի՛ չնչիր», այսինքն՝ մի՛ շարժուիր: Ես գիտէի, թէ սովորական բան է, մեզնից հեռու են կրակում: Պարգեւն ասաց. «Չէ, արի ցոյց տամ»: Արահետը, որի վրայ էինք, այդ արահետի վրայ հետքեր կային*

գնդակների:

Էդ օրը հետաքրքիրն այն էր, որ ես ու Կամօն էինք մնացել, ես կոնտուզիա ստացած, Կամօն էլ իմ յետեւն էր, կոլոտ էր եւ ոչ մի վնաս չէր կրել: Հիմա հարցն այն էր, որ մօտներս ռացիա չկայ, երրորդ օրն էր, ակումուլիատորը նստել էր եւ մնացել էինք առանց կապի եւ մեզնից մէկը պիտի մնար վիրաւորների մօտ, միւսը՝ գնար բազա, տեղեկացնէր, եւ օգնութեան գային: Այլ տարբերակ չկար: Հիմա ինքն ինձ չէր վստահում, մտածում էր, որ եթէ գան, կամ ծուղակ սարքեն, ես չեմ կարող մնալ եւ կը թողնեմ կը գնամ: Ես հասկացայ, որ նա ինձ այնքան էլ չի վստահում, եւ ասաց.

- Դո՛ւ գնայ բազա:

- Որ ես գնամ՝ ճանապարհը կը կորցնեմ, տեղանքին ծանօթ չեմ, կարող ա գնամ՝ կորեմ:

*Միջանկեալ ասեմ, բացի **Թոքի Կամոյից**, լաւ հետախոյզներ էին **Խուդոյը, Վահէն, Պարգեւը, Սեյրանեան Շահէնը**, որոնք տեղանքը չատ լաւ գիտէին, նաեւ **Շուն Շահէնը**, որը Զայլուղից էր եւ հրաշալի գիտէր, ամէն մանրամասնութեամբ, այդ տեղանքը: Մի անգամ նա ինձ ասաց, որ իջնենք՝ Զայլուղ բարձրանանք: Ինքը միշտ գնում, մտնում էր, ման էր գալիս: Ես պիտի գնայի, բայց ինչ-որ բան արգելք եղաւ:*

*Էդ նոյն գիշերը որ ռացիա չկար, **Իշխանը** գնաց բազա եւ ճանապարհին արջը դուրս էր ելել դէմը եւ վախեցրել ու կակազում էր»:*

- Ինչպէ՞ս էք գնահատում «Եղնիկների» գործունէութիւնն իր ամբողջութեան մէջ:

Գէորգ. *«Արդիւնաւէտութեան իմաստով գնահատելը մի քիչ բարդ է: Մինչեւ «Եղնիկները», չահումեանցիների պայքարը մի խումբ հերոսների պայքար էր իրենց տան եւ հողի համար: Նոյնիսկ այն բանից յետոյ, երբ բոլորն ասում էին, որ քաղաքական տեսակէտից այդ հարցն անյուսալի է եւ Շահումեանը հայոց ճեռքին պահելը հնարաւոր չէ, նոյնիսկ այսօր չահումեանցիներից ոչ մէկն իր յոյսը չի կորցրել: Պարտիզանական*

ջոկատի ձեւաւորման եւ գործելու իմաստն էլ հէնց դրանում էր: Գրեթէ բոլորը գիտէին, որ չանսերը նուազագոյն են, բայց ոչ մի բանի առջեւ կանգ չէին առնում»:

Սմբատ. *«Իրօք արժանապատիւ, հերոսական պայքար էր եւ մարդիկ վճռական կերպով տրամադիր էին իրենց հողը, երկիրը պահելու: Եւ ոչ միայն տեղացիները, այլեւ մենք բոլորս: Այլապէս ի՞նչ իմաստ ունէր, հո խաղ չէի՞նք անում: Ի հարկէ, իրենց մէջ էլ թերահաւատ մարդիկ կային եւ ամէն տեղ բոլորն էլ միատեսակ չեն լինում, բայց խօսքը գնում է սերուցքի մասին: Ինձ թւում է այդ վճռակամութիւնը մարդու հետ ծնւում է: **Դաւիթն** ինչպիսի՞ն էր: **Խուդոյ Դաւիթն** ասում էր. «Ես այստեղից ոչ մի տեղ չեմ գնայ»: Ինքն էլ 19 տարեկան էր եւ մինչեւ հիմա էլ այնտեղ է: **Թոքի Կամօն** էլ նոյնն էր ասում: Դէ մենք ջահել էինք եւ մեծերի հետ չէինք նստում վեր կենում: Բայց էդ մարդկանց ընդհանուր գաղափարը հաստատուն էր, ոգեւորող, շատ ոգեւորող էր: Եւ ում էլ վերցնենք, բոլորն էլ ընտիր մարդիկ էին՝ **Նովիկը, Զալեանը, Յակոբ Խիդիրեանը...** բոլորին չթուարկենք, բոլորն էլ բարձր մարդիկ էին»:*

Գէորգ. *«Ասենք, **Նովիկը** մասնագիտութեամբ պրոֆեսիոնալ զինուորական չէր, բայց մի տեղ որ Նովիկը լինում էր, ասենք, երբ ես իր հետ էի լինում, բոլորովին չէի վախենում: Շատ անող եւ չխօսացող մարդ է»:*

Արմինէ. *«Բոլորն էին այդպիսին»:*

Արմինէն Շահէնի մասին. *«Դժուար է էսպէս հասարակ ձեւով գնահատել, բայց ինքն իրօք ուժեղ մարդ էր: Դէ ո՛վ որ կարողանար մի ամբողջ շրջանի պաշտպանութիւնը կազմակերպել ու ղեկավարել, ստեղծել պարտիզանական ջոկատ եւ ահաւոր պայմաններում գործել, ինքն ինչպիսի՞ մարդ պիտի լինէր: Պատկերացնո՞ւմ էք, կազմակերպել ուղղաթիռների թռիչքը ռազմաճակատի վրայով, երբ շատերը չէին ուզում, որ դա լինի: Անչափ դժուար գործ է, որ ի զօրու էր միայն Շահէնի նման արտակարգ ունակութիւնների տէր մարդը»:*

–Դուք չէ՞ք զղջացել, որ կենսական այդպիսի ճանապարհ էք անցել:

Գէորգ. «*Մայրս տանը մենակ էր մնում փոքր քրոջս հետ, փոքր եղբայրս էլ ուսանող էր, պարզապէս երբ մի քիչ ուշացայ, կապ չէր եղել տեղեկացնելու, քեռիս մտածել էր, որ է՛լ չկամ: Տանը չէի հասցրել տեղեկացնել, որ ես Շահումեանում եմ: Անակնկալ էի գնացել, հրաժեշտ չեմ տուել: Ու երբ ես եկայ, մայրս՝ գիւղի կնիկ, տանջուած, կանաչին ձեռքին, ու մենք հանդիպում ենք: Կանաչին ձեռքից գցեց գետնին եւ ծունկի իջաւ. ո՛չ բարեւեց ինձ, ո՛չ պաչեց, սկսեց լացել: Այդ պահին կարծես փոշմանեցի, որ այդքան ցաւ եմ պատճառել մօրս ու այդպէս մի երկու շաբաթ մտածում էի, որ էլ չեմ գնայ: Բայց ո՛չ, ամիսը չէր անցել՝ ես նորից գնացի:*

Իսկ թէ ինչու եմ հետախուզութեամբ զբաղուել, այն պատճառով, որ նոր էինք փոխուել երրորդ կուրս, բժշկութիւնից բան չգիտէի եւ ուրիշ բանով չէի կարող զբաղուել: Ես պարզ զինուոր էի»:

Սմբատ. «*Ես համարում եմ, որ շատ լաւ կեանք եմ ապրել, ես իմ կեանքից շատ գոհ եմ եւ եթէ նորից ծնուեմ, իմ 39 տարին նորից նոյն կերպ կ՛ապրեմ: Բայց միայն մի բան կը փոխեմ իմ կեցութեան մէջ: Եթէ, Աստուած մի՛ արասցէ, եթէ իմ ազգի դէմ նորից կռիւ լինի, ես ուրիշ կերպ կը պայքարեմ: Գուցէ նորից մարտադաշտում լինեմ, բայց արդէն այլ կերպ կը պայքարեմ: Պատերազմի ժամանակ հազար ձեւ կայ պայքարելու, հազար միջոց»:*

Գէորգ. «*Կարծեմ մի իմաստասէր է ասել, որ տղամարդը պիտի հասկանայ, թէ ինչի է ինքն ի զօրու. իր կեանքում ի՞նչ կարող է փոխել եւ ինչի ի վիճակի չէ: Է՛ն, ինչ որ հնարաւոր չէ, դրա համար պէ՞տք է աւելորդ ջանք եւ ժամանակ զոհել: Սակայն կեանքը հասարակ մի բան չէ եւ հնարաւորութեան ու անհնարինութեան սահմանները յստակ գծուած չեն եւ մենք չենք դա որոշում: Պատերազմը մենք կարող ենք սիրել-չսիրել, բայց կան ժամեր, որոնց մէջ դու քո տեղն ունես: Պահն այնպիսին է լինում, որ այլեւս ժամանակ չի լինում մեծ գործեր անե-*

լու եւ ինքդ էլ ի վիճակի չես լինում գնահատելու, թէ որտեղ աւելի պիտանի կը լինես: Ինձ թւում է, ես մի երկու տարի ուշ եմ գնացել, եւ եթէ այդպիսի բան լինի՝ պատերազմ լինի, ժամանակին կը գնամ»:

– Հիմա կը խնդրէի մարտական եւ մարտաբուժական դրուագներ պատմել:

Արմինէ. *«Երբ նահանջեցինք եւ եկանք այս բազան, մենք այնտեղից հաց էինք ուզում, իրենք մեզ նարինջ ու չամիչ էին ուղարկում: Ինձ մօտ Արտատափից մի քիչ ալիւր էր մնացել: Դէ Արտատափում միայն նախրապաններն էին մնում, ուրիշ մարդ չէր լինում, եւ ով գիտէ, որ ժամանակից էր մնացել: Յետոյ մենք եկանք Եղակերի բազան: Էն ժամանակուանից պահուած մի քիչ ալիւր կար, փոքրիկ տարբեր միջատներ էին մէջը վազվզում: Ջրով բացում էինք, կարկանդակի պէս բան էր դառնում, ուտում էինք, երբեմն նաեւ ոչ տաք վիճակում, քանզի վառարան-բան չկար, էնքան որ մի բան լինէր ատամների տակ: Ի վերջոյ անտառում ինչպէ՞ս կարելի է սոված մնալ, որ բոլորովին բան չլինի՝ էլի մի բան կարելի է գտնել: Ծառի սունկեր տարուայ էդ եղանակին չկային, միայն խոտ էինք ճարում»:*

Սմբատ. *«Ծառերի վրայ չորացած մասուր էլ կար, ես ինքս կերել եմ: Սակայն սովահարութիւնը երկար չէր տեւում, կարող է ալիւր չլինէր, բայց փոխարէնը՝ չորացած նարինջ լինէր կամ խտացրած կաթ: Ամենադժուար շրջանն անտառում՝ գարնան սկիզբն է: Դրանից յետոյ խոտերն են ի յայտ գալիս, կըրմնզուկն է դուրս գալիս, տարբերութիւն չկայ, էնքան որ ուտելու խոտ լինէր: Այնտեղ սնունդը բաժանելիս անարդարութեան խնդիր չենք ունեցել, այնտեղ այդպիսի բան լինել չէր կարող»:*

Գէորգ. *«**Վահէից** մի դէպք եմ յիշում, ամբողջ կեանքում տպաւորուել է իր խօսքերը: Գերիներ էինք բերել, հինգ հոգի թուրքեր են, փոքրը նրանցից՝ **Լաթիֆը**, 15 տարեկան էր, **Գեւորիկ** էինք դրել անունը: Գերիներին առանձնապէս չէինք տանջում, իսկ այդ Գեւորիկին՝ բոլորովին: Գնում էի **Մամիկից** չոկալադ էի յայտնեցնում, բերում տալիս էի այդ պատանուն,*

բայց այնպէս, որ չտեսնեն, այլապէս ղարաբաղցիները կ՚ասէին՝ «Թուրքի համար չոկոլա՞դ ես ճարում»: Մնաց մեր մօտ մինչեւ երեւան ուղարկելը: Վրանի մէջ նստած խօսում էինք, մէկ էլ խօսակցութիւն գնաց պատերազմի մասին, Վահէն գրեթէ բոլորովին չէր խօսում, եւ անակնկալ խօսեց ու ասաց.

- Բոլորովին չեմ ուզում այստեղ զոհուեմ:

Ուրախ բաներից էինք խօսում եւ նա այդ բանն ասաց: Մենք էլ ասացինք.

- Արա, դէ լաւ, ինչե՞ր ես խօսում:

- Հա՛,- ասաց,- սա փոքր պատերազմ է: Այ եթէ Արարատի համար պատերազմ մղէինք, կ՚ուզէի զոհուել:

Ահա նրա այդ խօսքերը երբեք չեմ կարողանում մոռանալ: Նա այդ օրերին 22 տարեկան էր, ես մէկ տարով փոքր էի՝ 21:

Ջոկատի 90 տոկոսը եղել են նուիրեալ, պայծառ տղաներ եւ Արմինէին շատ են յարգել: Նրան շատ ջերմ են վերաբերել, եւ մարդ չի եղել, որ չճանաչէի, նոյնիսկ նրան չտեսածները լաւ գիտէին, այնքան էին պատմել բժշկուհու մասին: Լեգենդար մի կերպար էր դարձած եւ մինչեւ հիմա մարդ չկայ, որ իրեն չյիշի»:

4. ԱՐԹՈՒՐ ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ, ԿԱՄՕ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ /ԹՈՔԻ ԿԱՄՕ/

Արթուր. *«Շահէնը Շահումեանը յանձնելու մտքի հետ մինչեւ վերջ չի հաշտուել, մեզ էլ այնպէս է դաստիարակել, որպէսզի որեւէ կերպ միտք փոխող յանկարծ մէկը չլինի:*

Շահումեանցիներին որեւէ կերպ մեր ազգի մնացեալ չրջաններից տարբերել կամ հակադրել չեմ ուզում. այս պատերազմին ակտիւ մասնակցութիւն բերել է ազգաբնակչութեան 5 տոկոսը: Հայրենիքը կորցրած Շահումեանից էլ էլի այդ 5 տոկոսը մասնակցել են: Այսօր էլ, եթէ անհրաժեշտ լինի, այդ հինգ տոկոսն էլի մասնակցելու է:

Շահումեանն իր ուժերի ներածին չափով օգնել է թէ՛ Գետաշէնին եւ թէ՛ Մարտակերտին, որոնց թէ՛ զինամթերքը եւ թէ՛ սնունդը եղել է Շահումեանից: Մեր ամենադժուար ժամանակներին քանի՛-քանի անգամ ենք թալիչում, Մատա-

դիսում ջոկատներով մասնակցել մարտական գործողութիւննե-րին, դիրքեր ետ գրաւել, թշնամուն ետ մղել այդ տարածքից: Այսինքն, Շահումեանն ինքն իրեն երբեք չի դիտել ինքնաբաւ, ինքն իր համար եւ մեկուսացեալ շրջան, թէեւ նրան այդպէս էլ թողել են շատ ժամանակ:

*92 թուականին Գետաշէնը ետ վերցնելու ուժն էլ կար եւ ամէն ինչ կար, սակայն անհասկանալի բաներ կատարուեցին: **Հայաստանի իշխանութիւնների խնդիրն այդ ժամանակ Շահումեանի վերաբերեալ նրա հանգիստ, անպրոբլեմ յանձ-նելն էր թշնամուն: Շահէնը սկզբից էլ իմացել է, որ վերեւնե-րում Շահումեանը վաղուց ծախել են, յանձնել են, եւ նա, իր ազնուազարմ բնաւորութիւնը, թոյլ չի տուել այդ մասին որեւէ մէկին ասել եւ ոչ էլ հաշտուել է այդ մտքի հետ, որ Շահումեանը պիտի ծախեն**: Եւ յետագայում այդքան չար-չարանքներից յետոյ Շահէնը զոհուեց:*

*Ես վերինչէնցի եմ եւ մեր ջոկատը շատ յայտնի է եղել: Ընդ-հանուր հրամանատարը նախ եղել է **Սամսոն Մարիանեանը**: Որպէս հիմնադիր եւ կազմակերպիչ՝ Սամսոնը լաւ գործ է կա-տարել, սակայն նա ունեցաւ առողջութեան խնդիր եւ ջոկատի հրամանատար դարձաւ **Նովիկ Գիւլումեանը**: Մեր ջոկատն ունեցել է երկու վաշտ. մէկի հրամանատարը ես էի, միւսինը՝ **Յակոբ Խիդիրեանը**:*

***Նովիկը**՝ բնածին մարտիկ, համակ կենտրոնացած էր իր գոր-ծի վրայ, նրան ուրիշ բան չէր հետաքրքրում եւ ամենամեծ դժուարութիւնները հասարակ ձեւով էր ընդունում եւ տանում: Ուժեղ, դիմացկուն եւ մարտավարական գաղտնիքներն արագ ըմբռնող քաջամարտիկ էր, առանց հաւակնութիւնների, առանց հպարտութեան նշոյլների, շատ բնական եւ նոյնիսկ մի քիչ խոնարհ՝ իր կատարած գործերի համեմատ: Ես բնաւ երկմտանք չունեմ այն հարցում, որ Նովիկը Շահէնի աջ թեւն է եղել: Եւ Շահէնը մէկ անգամ չէ խոստովանել, որ Նովիկի ջոկատն իր յենարանն է թէ՛ մինչեւ 92 թուականը եւ թէ՛ պարտիզանական կռիւների ժամանակ:*

Վերին Շէնի ջոկատում աչքի ընկած դէմքեր շատ են եղել՝

Ֆեդօն, Յակոբը, Շուրան, Յովիկ դային: *Շատ անուններ կարելի է թուարկել:*

Վազգէնը *զինուորական տեղագրագէտ (տոպոգրաֆ) է եղել, պրապըրշչիկ, բանակում զինուորական ծառայութեան մէջ է եղել: Ինքը միշտ քարտէզների հետ էր եւ* ***Յակոբ Պօղոսեանը*** *մի քանի անգամ պատկերել է նրան քարտէզով: Այո, իրենք էլ մեծ գործ են արել պարտիզանականի ժամանակ»: (Արթուրը խօսում էր չափաւոր հանդիսաւոր տօնով, կարճ նախադասութիւններով եւ ինչպէս ամէն ղարաբաղցի՝ գնահատելով խօսքի արժէքը, եւ աւելորդ բառեր ու արտայայտութիւններ չկան նրա խօսքի մէջ: Խօսքի ինքնաբերական հոսք չկար, այլ ամէն ինչ մտածուած եւ կշռադատուած էր՝ մի փոքր յումորախառն, հեգնական երանգով, որը կարելի է կարդալ այսպէս՝ դա արդէն անցեալ է եւ առաջ պիտի նայենք: Ճարտար չինարար է եւ մեզ զգուշացրեց, որ երիցմանկունք վանքը վտանգի տակ է): «Երիցմանկունքն այնքան է հիմա վնասուած, որ եթէ աչքաթող արուի, հազիւ կ՚ունենայ 3-4 տարուայ կեանք: Եւ վատն այն է, որ նա տուժել է ոչ այնքան պատերազմից ստացած վէրքերից, որ հասցրել է թշնամին օդից, ուղղաթիռային նուրսերից, որքան չարունակուող գանճախուզութիւնից. Որքան էլ ծանր է, պիտի ասենք, որ այսօր էլ այն ահաւոր վնասուում է գանճախոյզների աւերածութիւններից: Ես չինարար եմ եւ ինձ համար շատ պարզ է, որ նրանք տեղահանում են առանցքային վէմերը, փորում են պահող սիւների տակերը եւ աւելի թուլացնում վանական կառոյցը: Եւ ցաւալին այն է, որ մենք՝ զինուորականներս, զինուորական չինարարներս ի վիճակի չենք մեր միջոցներով վանքը վերականգնել. այդքան զօրութիւն ե՛ւ իրաւունք, ե՛ւ գիտութիւն չունենք համալիրը նորոգելու եւ պիտի որ հասկացող ու շահագրգիռ կազմակերպութիւնները, ուժերը արագ կերպով արձագանքեն եւ օգնեն այս նշանաւոր կառոյցը պահել հետագայ դարերի համար: Նոյնն էլ Թալիշի եկեղեցին է»:

«Ի տարբերութիւն պատանդ վերցուած այն 21 մարդկանց մեծամասնութեան, օրինակ՝ ***Վլադիմիր Աղաջանեանի***, *որ գե-*

*րութիւնից ազատուելուց յետոյ տուն-տեղ, ամէն ինչ տեղափոխեց Երեւան եւ այլեւս չերեւաց, **Շահէնը** սկսեց աւելի բուռն գործունէութիւն եւ կազմակերպական մեծ գործեր արեց չրջանի ապահովութեան համար, ստոյգ պաշտպանութեան խնդիրները լուծելով: Տարածաշրջանում ամենալաւ գինուած չրջանն այդ պահին Շահումեանն էր: Զէնքի ճեռք բերման հիմնական աղբիւրը Դաշնակցութիւնն էր, սակայն Շահէնը կողքից այլ միջոցների էլ դիմում էր: Շահէնը մեծ չրջապատ ունէր եւ իրեն շատերն էին յարգում: Կարող է անհաւատալի թուայ, սակայն այն օրերին մեզ համար նոյնիսկ թուրքեր կային, որոնք զէնքզինամթերք էին բերում: Շահէնն այդ թուրքերին կարողացել էր համոզել, որ մեր ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ է այդ զէնքը, քանզի իրենք՝ թուրքերը սխալ քայլեր, արարքներ են անելու եւ ամէն ինչ փչանալու է: Նրանք էլ յարգում եւ հաւատում էին Շահէնին:*

*Քեալբաջարի չրջգործկոմի նախագահի երեխային թուրքերը վառեցին: Նախկինում, երիտասարդ տարիներին, **Էյվազ անուամբ** այդ ղեկավարն աւազակային գործերով է զբաղուել, յետոյ չրջանի ղեկավար, առաջնորդ դարձել՝ ճիշտ այն եղանակով, ինչպէս որ Շահէնն է դարձել մեր չրջանի առաջնորդ: Ահա այդ թուրքը երիցմանկունք վանքի մէջ գրութիւն է թողել՝ հասցէագրուած **Շահէն Մեղրեանին**: Տետրի ներսի թերթերը հանել էին եւ ստուարաթուղթ կազմի վրայ գրել. «Շահէն, հերիք եղաւ, այսքան ժամանակ ձեզ ներեցինք, մեր համբերութիւնը հատնում է, սրանից յետոյ պատրաստ եղէք՝ ձեզ կոտորելու ենք: Էյվազ»: Այդ գրութիւնը կար, հիմա չգիտեմ ինչ է եղել այդ վերջնագիր-թուղթը: Սակայն դա փաստօրէն իրենց վերջն էր եւ ինքը հազիւ կարողացաւ մազապուրծ լինել կազմակերպուած ծուղակից: Դա 93-ի յունուարին էր հաւանաբար, երբ Մարտակերտի մեծ մասը եւ Քեալբաջարը թուրքերի ձեռքն էր: Նա փախաւ եւ հաւանաբար հիմա էլ նա կայ, այդ Էյվազը»:*

***Ցակոբ**. «Մենք եկանք, այդ թուղթը կարդացինք եւ փոխանցեցինք Շահէնին: Շահէնը կարդաց եւ ասաց. «Պէտք է զգոյշ*

լինել, նա շատ վտանգաւոր մարդ է: Նա իր խօսքի տէր մարդ է եւ կարող է ամէն վայրկեան յայտնուել, ամէն վայրկեան: Եւ Շահէնն այդ օրուանից պոստեր էր դնում»:

Արթուր. *«Երբ հասանք այնտեղ, ես հարայ-հրոց դրեցի, որ եկէք պոստեր դնենք, Նովիկը խառնուածքով՝ դինջ, վէշն էլ չէր, մտահոգ չէր, անվրդով էր:*

Թուրքերը մեր տեղը միշտ էլ իմացել են եւ մի քանի անգամ փորձել են հասնել մեզ եւ ոչնչացնել, սակայն երբ չեն կարողացել, այլեւս մեզ հասնելու փորձեր չեն արել: Զեն համարձակել: Մենք յաջողութիւնների ենք հասել հիմնականում մեր յանդուգն պահուածքի շնորհիւ: Դրա վերաբերեալ նկարահանուած կադրեր կան ***Նէվզորովի*** *կողմից արուած, որոնցում նա ֆիքսում է թուրքերի անփառունակ նահանջը Քեալբաջարից, որի համար թուրքերը չգիտեմ թէ ինչ են խոստացել Նէվզորովի գլխի համար:* ***Յակոբն*** *էլ ահա՛ մասնակից է եղել իրադարձութիւններին, երբ այնպիսի վիճակի մէջ էինք դրել թուրքերին, որ Սարսանգի ջրամբարի հէնց դէմից սկսած մինչեւ Ումուդլու գիւղը ամէն մի չրջադարձի վրայ պոստ էին դրել, իբր թէ մեզանից մաքրել են տարածքը, բայց մենք իրենց մի հարիւր մետր վերեւ՝ անտառի մէջ նստած ամբողջ տարածքը էլի հսկում էինք, հէնց պէտք էր լինում՝ յայտնւում էինք ճանապարհի վրայ, այդ նոյն վնասները տալիս եւ այսպիսով խափանում էինք Մարտակերտ Քեալբաջարի ճանապարհով թուրք զօրքերի նորմալ մատակարարումը»:*

Յակոբ Պօղոսեանը, *որքան էլ անհաւանական թուայ, «Եղնիկներ»ի ամենակարեւոր գործողութիւնը համարում է* ***Քեալբաջարի ազատագրումը****, մի իրադարձութիւն, որ «Եղնիկների» հետ ընդհանրապէս չեն էլ կապում:*

Յակոբ *«Եղնիկներ»ի դերը շատ մեծ է եղել Քեալբաջարի ազատագրման գործում: Երբ մենք բազան Արտատափից տեղափոխեցինք եղակեր եւ Գեօգթափա, տեսանք, որ այնտեղ նախապատրաստական աշխատանք է կատարւում Գիւլիստանն ազատագրելու ուղղութեամբ: Այդ պահին Շահէն Մեղրեանին կանչեցին Երեւան: Մեղրեանը Երեւանում հանդիպեց* ***Վազգէն***

***Սանուկեանին**, յետոյ եկաւ անտառ ու ասաց. «Տղե՛րք, Գիւլիսոտանի ազատագրութեան գործողութիւնը յետաձգուում է: Եթէ կարողանանք մի 3-4 օր էս ճանապարհը պահենք՝ Քեալբաջարը կ՚ազատագրուի»: Ինքը ստոյգ յանձնարարական էր ստացել նոյն Երեւանից: Ու **Նովիկենք** եկան եւ այդ ճանապարհը 3-4 օր պահում էին՝ պայթեցնելով անցուդարձ անող մեքենաները: Եւ արդէն բեռնատարների մի քանի տասնեակ էր գոյացել, որոնց կմախքները կարելի է տեսնել հիմա, յատկապէս քարիւղատարներինը (բենզավոզ):*

***Արթուր**. «Դա թուրքերին, ի հարկէ, թիկունքից մեծ հարուած էր, որ նրանք ստացան, եւ մինչեւ վերջ էլ խելքի չեկան...*

Նախագահական ընտրութիւններին Շահէնն արդէն անհրաժեշտ քանակութեամբ ձայներ ստացել էր եւ պիտի ընտրուէր, սակայն ՀՀՇական իշխանութիւնները իրարով անցան, մեքենայութիւններ արեցին եւ հէնց դաշնակցականներից ոմանց, ստոյգ՝ 6 հոգու, կարողացան այս կամ այն ճանապարհով թեքել, որպէսզի Շահէնը չընտրուի: Սկզբնական տարիներն էին Դաշնակցութեան վերահաստատման, եւ նրանց չարքերում էլ կային գաղափարապէս եւ հոգեբանօրէն անկայուն մարդիկ: Սկզբից Շահէնն իրօք ընտրուած է եղել»:

***Յակոբ**. «ՀՀՇական ստեփանակերտեան դեսանտն իր գործն արեց, Վազգէն Սարգսեանն էր այնտեղ, Բաբկէն Արարքցեանը եւ իշխանական մեծ այլ գլուխներ, եւ ես տեսել եմ, թէ ինչպէս **Շահէն Մեղրեանը** թատրոնի մօտ դէմ-դիմաց դուրս եկաւ **Սամուէլ Բաբայեանին** եւ էլի մի քանիսի, հայհոյանք տեղաց նրանց վրայ:*

*Շահումեանի տղաները եւ այնտեղ եղած հայաստանցի մարտիկները համեմատաբար անտեսուած են: Օրինակ, **Շուրիկը**, **Զարզանդ Մարտիրոսեանը**, **Սեյրանեան Շահէնը**... Հանգիստ, համեստ տղաներ էին, բայց որ ասում էիր այս բանը գնա արա, գիտէիր, որ ինչ էլ լինի՝ գնալու են ու անեն, եւ անելու են քո ակնկալած ձեւով: Եւ նրանք բոլորովին գլուխգովան չէին եւ չեն: Ափսո՜ս, այդ Շահէնն էլ զոհուեց:*

*Մեր բժիշկները՝ **Սմբատը, Արմինէն, Գեւորգը**, այս մարտիկ-*

*ներն ու բժիշկները բոլորը լսում էին իրենց հրամանատարնե-րին, յարգում մեծերին: Նրանք հրամանները կատարում էին յստակօրէն, ճիշտ եւ ժամանակին: Նրանք տարիքով էին եւ շատ կարգապահ: Իսկ ջահելներն իրենց պարզապէս խենթերի նման նետում էին մարտի եւ նրանց համար նահանջի գաղա-փար չկար, պիտի մինչեւ վերջ գնային: Այդպիսին էին **Թոքի Կամօն /Ցարուխիւնեան/, Վահէն** եւ ուրիշներ: Նրանք անասե-լի ոգեպինդ էին եւ միշտ ուզում էին իրենց առաջ գցել: Նրանք շատ դուխով էին, բայց կարծես իրենց մտածել պէտք չէր: Ի հարկէ, իրենք էլ աստիճանաբար իմաստութիւն էին ձեռք բե-րում եւ գործում իրավիճակին համապատասխան: Շատերը պատկերացում չեն ունեցել, թէ ինչ է Շահումեանը եւ եկել են ու բոլորովին այլ իրականութեան առընչուել: Օրինակ, բժիշկ **Սմբատը** եկել էր Շահումեան արջի միս ուտելու: Եկել են եւ միանգամից տեսել անընդհատ զոհեր ու վիրաւորներ: Եւ ի պատիւ իրենց, պիտի ասեմ, որ նրանք էլ չընկրկեցին, դիմացան եւ իւրաքանչիւրը փորձ եւ այլ կարողութիւններ ձեռք բերեց, որ անհրաժեշտ է շարունակական էքստրեմալ պայմաններում գոյատեւելու, այլեւ յաղթելու համար»:*

***Արթուր**. «Տարիքաւորները խոհեմ էին, հաշուենկատ էին եւ պայմանները հաշուի առնող, իսկ ջահելներին «տորմուզ» չկար, իրենց արգելակել չէին կարող:*

*Լաւ տղաներ շատ կային, օրինակ՝ **Բոսը**: Փոքր ժամանակ ինքն է իրեն այդպէս անուանել: Նա իր համեստութեամբ եւ սառնախոհութեամբ շատ աւելի էր անում, քան տաքարիւն ջահելները: Շատ յարգուած մարտիկ է եղել:*

*Երեւելի դէմք է եղել **Ֆեդօն**: Եթէ **Մեղրեանի աջ թեւը** եղել է **Նովիկը**, **ձախը Ֆեդօն էր**: Վերին Շէնը երկու վաշտից էր բաղկացած. մէկի հրամանատարը ես էի, միւսը՝ Ֆեդօն: Շատ կազմակերպուած մարդ էր, ամէն ինչի մասնակցել է, առանց ընկրկելու, վարանելու գնացել է ամէն հրաման կատարելու»:*

***Ցակոբ**. «Պակաս կարեւոր հանգամանք չէ այն, որ թէ Մեղրեանի ասածը եւ թէ **Զալեանի** ասածը, հրահանգները եր-բեք չի քննարկուել, կատարուել է անմռունչ եւ շատ կարգա-*

պահ կերպով: Երբեք քարտէզի մօտ չեն նստել եւ սկսել կարծիքների բախում կամ տարաձայնութիւններ. իսկական, գիտակցական, կատարեալ կարգապահութիւն էր տիրում: **Ֆեդօն** առհասարակ լուռ էր, եթէ **Նովիկը** կարծիք յայտնում էր, երբեմն առարկում էր եւ փորձում էր աւելի նպատակամէտ տարբերակ ասել, Ֆեդօն երբէք չէր խօսում: **Շուրան** էլ երբեմն կարծիք յայտնում էր, բայց Ֆեդօն նստում էր հեռուում եւ սպասում հրամանի: Ասենք, օրինակ, բոլոր հրամանատարները կարծիքներ էին յայտնում՝ **Արաքս Մանուէլն** ասում էր՝ այսպէս անենք, **Ադմիրալ Սամոն** իրեններ էր ասում, եւ **Կոմանդոսը** նստած լսում էր այդ կարծիքները: Սակայն «Եղնիկներում» այդպիսի մթնոլորտ չի եղել»:

Արթուր. «Ներքինչէնցի **Յակոբ Խիդիրեանը** եղել է Մեղրեանի տեղակալը չրջանում: Շատ կշռադատուած մարդ է, ամէն ինչ իմացող հրամանատար: Նա սկզբում եղել է Ներքինչէնի հրամանատարը եւ երբ Շահէնի տեղակալն է դարձել, նրա տեղը զբաղեցրել է **Վարդանը**, որը յետագայում վիրաւորուեց եւ այժմ Մոսկուայում գեներալ է:

Զալեան Սերգէյը չրջանում մեծ դերակատար է եղել, հէնց սկզբից էլ նա դրսեւորել է իր հրամանատարական, մարտական կարողութիւնները, գիտելիքները եւ մեծ դեր խաղացել ինքնապաշտպանութեան գործում: Սկզբից եղել է շտաբի պետ **Ֆելիքս Գզողեանի** տեղակալը: Թէ՛ իբրեւ սպայ, թէ՛ իբրեւ հետախոյզ, թէ՛ իբրեւ նախորդ պատերազմների մասնակից՝ կարեւոր դեր է ունեցել չրջանի պաշտպանունակութիւնը բարձրացնելու գործում: Շահէնը նրան եւ շատ էր գնահատում, եւ ամէն կերպ վստահում»:

Յակոբ. «Եթէ Շահէնի բացակայութեան ժամանակ Զալեանը մի բան կատարում էր մարտավարական եղանակով ճիշտ, որն այնուամենայնիւ պիտի այդպէս չարուէր, Շահէնն այդպիսի դէպքերում յիշեցնում էր, որ կայ նաեւ քաղաքական կողմ:

Շատ դրական բան կարող եմ ասել նաեւ **Շուրայի** մասին: Նրա համար էլ քննարկելու բան չկար: Նա գիտէր, որ սա իր հողն է, իր հայրենիքը եւ բացէիբաց, ճակատ առ ճակատ գնում

էր կռուելու, մեռնելու»:

***Արթուր**. «Շուրան 91 թուականին առաջին անգամ վիրաւորուելուց յետոյ ունեցել է ժամանակաւոր յուսախաբութիւն եւ ինքնակամ որոշել էր այլեւս չմասնակցել եւ դուրս գալ ջոկատի կազմից: Ասել է, որ այլեւս այդ ջոկատ չի վերադառնայ: Ես այն օրերին երկու-երեք նախադասութիւն եմ Շուրային ասել, որ՝ յաջորդ օրը քո զէնք ու զինամթերքով, հանդերձանքով լինես Մանաչիդում, եւ Շուրան եկել է, ու մինչեւ վերջ մնացել»:*

Կամօ Յարութիւնեան. «Շահէնի պարտիզաններին ես միացել եմ մի քանի օր յետոյ: Ձիշդում եմ, գնացել ենք հէնց Վերին Շէն, մտել ենք մեր ընկերների բոլորի տները: Այդ տների մի մասը նոյնիսկ սկսել էին վերանորոգել եւ միտք կար այդտեղ բնակուելու: Սակայն տներ մտնելը մեզ համար նպատակ չի եղել. մենք տեղանքը պիտի հետախուզէինք՝ դիւերսիա անելու համար: Մենք մեզ հետ տպուած աղբբեջաներէն թուուցիկներ ունէինք, «Շահումեան գիշաշլար» կամ «Շահումեանի վրիժառուներ» անուամբ: Այդ թղթերը Վերին Շէնի ամբողջ տների վրայ կպցնելով դուրս ենք եկել: Դրանց բովանդակութիւնը մօտաւորապէս սա է. «Մտաբերէք, թէ երբ է սկսուել պատերազմը եւ որքան կորուստներ, որքան հողեր էք կորցրել: Լա՛ւ յիշէք այդ ամէնը եւ իմացէ՛ք, որ Շահումեանը բացառութիւն չի լինելու, երկար չէք մնալու այստեղ: Անկախ նրանից, թէ դուք քանի միլիոն էք, ձեզ խորհուրդ ենք տալիս չուտ դուրս գալ»: Եւ իրօք դրանից յետոյ նրանք դուրս եկան: Իրազեկ էինք, թէ թուրքն այդտեղ ինչ է ուզում անել, ասենք՝ ուզում է բնակուել, եւ դա երեւում էր այն բանից, որ տները պահպանում էին ամբողջական վիճակով, յետոյ մենք այնտեղ «Սպիտակ աղբիւր» անուամբ մի ռեստորան ունէինք, այդ աղբիւրի մօտ եկել եւ դիւերսիա ենք արել, մարդ ենք գերի վերցրել: Այդտեղ մեր **Վահէ Բաղդասարեանը** վիրաւորուել է: «Մուխայի» կրակելուց յետոյ, որ **Նովիկն** էր առհասարակ օգտագործում, պատից պոկուած բեկորները խփել էին երեսին, նոյնիսկ աչքերն էին

լցուել: Ամբողջ երեսը դրանցից արիւնակալած էր եւ վիրաւորուած այդ վիճակում, թուրքին էլ բռնած՝ ինքը մի անգամ չի ասել, որ ես վիրաւորուած եմ: Ինքը ոչ մէկին չէր ասել եւ միայն ես գիտէի, որ վիրաւոր է: Իսկ այդ թուրքը ճանապարհից ուզեց փախչել, բնականաբար չթողեցինք, խփեցինք:

Յետոյ մտել ենք Շահումեան, շրջկենտրոն, եւ էդ թղթերից նոյն ձեւով դռներին փակցնելով բարձրացել ենք մեր Շահումեանի զոհուած տղաների չիրիմների մօտ: Մենք այնտեղ առանձին տեղ ունենք, **Յակոբ Խիդիրեանի մօտ** մի չիչ կոնեակ կար, տղաների կենացը խմեցինք: Թուրքերն, ի հարկէ, այնտեղ էին, սակայն վիճակն այնպիսին էր, որ պէտք չէր իրենց զօրանոցին կպնելը, ճիշտ չէր լինի, որովհետեւ ուրիշ նպատակ ունէինք: Ուսումնասիրել ենք անհրաժեշտ կէտերը, հիւանդանոց, դպրոց եւ այլն, որտեղ կարող էր զօրք լինել: Յետոյ շրջկենտրոնից դուրս ենք եկել Վանք կոչուող տեղը: Արդէն լուսացել էր: Դուրս ենք եկել Գիւլիստանի ուղղութեամբ եւ բնականաբար որեւէ հետք չենք թողել, թէ որտեղով ենք մտել եւ որտեղից դուրս եկել:

Մեր պարտիզանական ջոկատի առջեւ խնդիր չէր դրուած մօտ 30-40 հոգով ազատագրել մի ամբողջական շրջան: Հասկանալի է, որ դա ֆիզիկապէս հնարաւոր չէ: Մեր խնդիրն այս էր. թոյլ չտալ հակառակորդին մեր շրջանում բնակութիւն հաստատելու: Մենք համոզուած էինք, որ ուշ-չուտ մեր շրջանն ազատագրելու ենք, թոյլ չտանք, որ այն կեղտոտուի, գան եւ մեր օջախներում բոյն դնեն, կեղտոտեն, մինչեւ որ մենք ի վիճակի լինենք եւ ազատագրենք: Դէ մենք հասարակ զինուոր էինք եւ այդ նշեալ հարցի երկրորդ կողմը մեզ չէր վերաբերում: Մենք պիտի կատարէինք այն, ինչ որ մեզ էր առաջադրուած:

«Արաբոյի» վերաբերեալ մի յուշ կայ: Շահէն Մեղրեանը մի ռադիոհեռագիր է ուղարկում Պաշտպանութեան նախարարութիւն, որ հակառակորդը շահումեանցիների դէմ սկսել է օգտագործել զրահատեխնիկա: Մեզ անհրաժեշտ է տրամադրել հակատանկային միջոցներ: Մեղրեանին պատասխանում են, սա իր բառերից եմ ասում, «Ձեր մօտ գտնուում է **«Արաբօ»**

ջոկատը, այն օգտագործէք որպէս հակատանկային միջոց»: Նրանք նկատի ունէին «Արաբոյի» մարտունակութիւնը, ընտիր լինելը: Սա վերաբերում է նաեւ Կարօտի ջոկատին եւ այլ ջոկատների, «Տիգրան Մեծին», Ալավերդու վաչտը Յատուկ գնդի, անհատներ են եղել, որոնք մեծ հետք են թողել: Ալավերդու վաչտն այն ժամանակ եղել է Մանասի Շէնում, որը մեր գիւղին՝ Կարաչինարին կպած մի գիւղ է:

Իմ մէջ տպաւորուել է յատկապէս Գիւլիստանի գրաւումը **Շահէնն Մեղրեանի** նախաձեռնութեամբ: Շահէնը եղել է շատ խստապահանջ, սակայն գնահատել է ամէն մի մարտիկի եւ որեւէ մէկի կատարած գործողութիւն իր աչքից չի վրիպել: Առհասարակ չի սիրել վախկոտներին: Վախկոտը եւ զգուշաւորը նոյնը չեն. սա այն պահը չէ, որ ասենք, թէ որեւէ մէկը կարող է լինել, որ վախի զգացում չունենայ: Դա յիմարը կը լինէր: Սակայն նա գտնում էր եւ ձգտում էր, որ մեր շարքերում վախկոտներ չլինեն: Քեզ ո՞վ է ստիպել զէնք վերցնես, գաս եւ գործողութեան ժամանակ խուճապ առաջ բերես, որն էլ ձախողման գլխաւոր պայմանն է: Ահա այդպիսի մարդկանց, ովքեր զէնք են վերցրել, մտել ռազմադաշտ եւ այնտեղ վախենում են, Շահէնն ատում էր:

Գոքորը շատ լաւ տղայ էր, ինքը եղել է աֆղանեց, այդ պատերազմի վետերաններից էր: Ծառայել է դիւերսիոն հետախուզութեան վաշտում: Մեծ փորձ ունեցող տղայ էր: Ես յիշում եմ, որ ինքը եկել էր՝ առաջին անգամ գնացին եւ Սարսանգում երեք հոգով դիւերսիա կազմակերպեցին, մէկը զագլիկեցի մի տարեց մարդ էր, անունը չեմ յիշում, միւսին էլ չեմ յիշում, թէ ով էր, սակայն ինքը գերազանց կերպով իր խնդիրը կատարեց: Գնաց, հասաւ տեղ, դիւերսիան կատարեց եւ ետ եկաւ: Դիւերսիան կատարել է Սարսանգի ջրամբարի մօտ, ճանապարհի վրայ: Եւ այդ պահին կարեւորը ոչ այնքան դիւերսիայի յաջող աւարտն էր, այլ մենք ցանկանում էինք իմանալ, թէ այս տղան իրենից ինչ է ներկայացնում: Բացի այդ, ինքը տիրապետում էր բոլոր զէնքերին, եւ իր կարգախօսն էր. «Մի բան, որ ես գիտեմ, դա չի նշանակում, թէ մէկ ուրիշը պիտի չիմանայ»: Ընդհակառակը, մտածում էր, որ զէնքին որքան շատ տիրապետողներ

լինեն, այնքան մեզ համար լաւ է: Շատ լաւ տղայ էր Գոքորը, միայն ափսոս, որ իր կեանքն այդ ձեւով վերջացաւ, ինքը Շահէն Մեղրեանի հետ զոհուեց ուղղաթիռում: Շա՜տ, շատ եմ ափսոսում, որովհետեւ ինքն ինձ ընկեր է եղել: Ե՛ւ մարտական ընկեր է եղել, ե՛ւ առհասարակ, երբ չփւում էինք առօրեայ կեանքում, ինքը շատ հաճելի տղայ էր, շատ մարդկային էր, լաւն էր: Գիւլիստանի ազատագրմանն ինքը մասնակցել է մեզ հետ, օգտագործել անձամբ ծանր զէնք՝ ե՛ւ ԴԷՇԷԿԱ, ե՛ւ ԷՍՊԷԴԷ: Որ ասեմ, թէ ես իր մօտ նկատած լինեմ, որ ինքը հոգնի եւ չկարողանայ անել կամ վախենայ ու չանի, կամ իր խնդիրը մասամբ դցի ուրիշի վրայ, այդպիսի բան ես չեն յիշում: Որպէս իր բնաւորութեան լաւ գծերից՝ կարող եմ ասել այն, որ ինքը շատ քիչ էր խօսում, լռակեաց էր, սակայն խօսելիս էլ աւում էր այն, ինչ խիստ անհրաժեշտ էր, ինչ որ կ՛ակնկալէիր լսել, բայց ուրիշ աւելորդ զրոյցներ չէր անի: Գործողութեան ժամանակ ամէն մանրուք թուացող բան էլ հաշուի էր առնում, ասենք՝ ժամացոյցն էր փակում, թէ կարող է մետաղ է՝ փայլի: Այդքան նա ուշադիր մարդ էր: Եթէ սկսեմ յիշելով ասեմ, նրա մասին շատ-շատ բաներ կարող եմ ասել:

Բոսը լաւ մարտիկ էր, բացի այդ՝ լաւ հետախոյզ: **Նա, Յովիկ դայլին, Վալօն** եղել են ջոկատի աչքերը: Նրանք բոլոր ուղիները, կածանները շատ լաւ գիտէին եւ խմբերին կարող էին հասցնել ցանկացած կէտ եւ իրենք էլ անմիջաբար խմբերի հետ մասնակցել են մարտերին՝ բոլորին հաւասար չափով, առանց որեւէ խնդրի: Ուղեկցորդի իմաստով չնայած **Ֆեդօն** էլ էր պակաս, **Նովիկն** էլ էր պակաս, Գիւլիստանից տղաներ կային, նրանք էլ էին պակաս, դէ ես էլ լաւ գիտէի: Երբ գնացինք մինչեւ Կարաչինար՝ ոչ մի ուղեկցորդ չունէի: Մենք եղել ենք 4 երիտասարդ տղաներ, գնացել ենք եւ մեր գործը կատարել ու եկել: Երեք օր ու գիշեր ճանապարհին էինք: Եւ դա եղել է ձմեռը, երբ ոչ մի կածան էլ էր երեւում: Մեզ ուղարկողն, ի հարկէ, եղել է Շահէն Մեղրեանը, բայց, կրկնում եմ, այդ նշուած մարդիկ մեծ դեր ունէին ճանապարհների համար եւ ամէն հարցում:

Ինչ մնում է **Ֆեդոյին**, նա թէ Շահումեանի շրջանի ժամա-

նակ, թէ պարտիզանականի ժամանակ եղել է ակտիւ ազատամարտիկ, եղել է դասակի հրամանատար, Վերին Շէնի վաչտից: Իսկ պարտիզանականի ժամանակ ունեցել ենք մէկ-երկու հրամանատար, մենք այլեւս չունէինք վաչտ, դասակ հասկացութիւնները. եղել է մի ջոկատ, որում միաւորուել են այնպիսի մարդիկ, ովքեր ի վիճակի պիտի լինէին որոշակի խնդիրներ կատարելու: Աւելորդ մարդ այնտեղ լինել չէր կարող:

Յակոբ Խիդիրեանը ժամանակին եղել է չրջկենտրոնի ջոկատի հրամանատարը, յետոյ եղել է Մեղրեանի տեղակալը: Նա մեր ջոկատի կազմակերպիչներից մէկն էր: Նա ջոկատում դէմք էր, խելացի, փորձառու մարդ, լաւ խորհրդատու, լաւ կազմակերպիչ: Իրար հետ մասնակցել ենք «Սպիտակ աղբիւրի» գործողութեանը: Ընդհանուր հրամանատարը եղել է **Շահէն Մեղրեանը,** օպերատիւ գործերն արել է **Զալեանը**, որ մեզ հետ յետոյ մասնակցում էր գործողութիւններին, մեզ հաւասար բեռ էր վերցնում, փամփուշտ էր վերցնում, տարբերւում էր մենակ է՛ն բանով, որ գործողութիւնը կազմակերպում էր եւ ասած խօսքն էլ խօսք էր: Նոյնն էլ կարող եմ ասել **Նովիկի** մասին: Եւ երբ պարզւում էր, որ կամ Զալեանը, կամ Նովիկը մեզ հետ է, հնարաւոր չէ, որ այդ գործը ձախողուի: Էլ չեմ ասում **Շահէն Մեղրեանի** մասին: **Նահապետեան Սեւանի** մասին էլ եթէ պատկերացում ուզենանք կազմել, հերիք է այն, որ ինքը 6-7 ամսով տուն չէր գնում, ինքն իրեն ոչ մի բանում չէր խղճում. է՛ւ կապաւոր էր, է՛ւ ԷՍՊԷԳԷ էր օգտագործում, է՛ւ գնդացիր էր օգտագործում, է՛ւ հետախուզման էր գնում. պէտք էր փոս փորել, փոսն էր փորում, կամ որեւէ խրամատ էր կահաւորում, եւ չեմ յիշում, որ ինքն իրեն որեւէ հարցում խղճար, չեմ տեսել, որ ինքը երբեւիցէ մտներ մի բլինդաժ կամ խրամատ, պառկէր եւ գործ չունենար անելու: Ես իրենից թերի բան չեմ տեսել:

Ինչ մնում է Հերոսի կոչման արժանի լինելուն, դրան իմ ճանաչած շատ տղաներ էին արժանի, սակայն ո՞վ է պարգեւի մասին մտածել: Մենք էն ժամանակ չգիտէինք էլ, թէ Մարտական խաչի առաջին աստիճանը տարբերւում է երկրորդից: Ինչ մնում է Հերոսի կոչմանը, դէ դա տալիս է Ազգային ժողովը եւ

ում որոշում՝ նրան էլ տալիս են, դա հո մեր ցանկանալու կամ իմանալու բանը չէ՞:

92-ի յուլիսի 16-ին **Կոմանդոսն** ինձ հարցրել է, թէ ինչպէս եղաւ պարտութիւնը: Ես այն ժամանակ Ինքնապաշտպանութեան ուժերի աւտոբազայում եմ եղել, Ստեփանակերտում, եւ Կոմանդոսն անձամբ ինձ խօսեցրել է: Ես իրեն ասել եմ է՛ն, ինչ որ տեսել եմ: Հարցրեց տեխնիկայի մասին, ես տեսել եմ միայն մեր գիւղի վրայ 20 տարբեր տեխնիկա, չհաշուած ուղղաթիռները, ինքնաթիռները եւ չհաշուած 9 «Գրադ»ները, որ միայն մեր գիւղի վրայ էին աշխատում, չհաշուած հրետանին: Այսքանը որ ասացի՝ ինքը սկսեց հաշուել եւ ասաց, որ գրոհի նետուածը նուազագոյնը եղել մէկ դիւիզիա:

Էդ որ խորքային հետախուզութիւն են ասում, ո՞վ չէր իմանում, որ հակառակորդն օգտագործում է իր տարածքի վրայ եղած տեխնիկական եւ մարդկային ուժերը: Մի՞թէ դա գաղտնիք էր, կամ ծածուկ էր արւում, որ խորքային հետախուզութիւնը պիտի պարզէր: Կամ գաղտնի՞ք էր, որ հակառակորդն աւելի շատ տեխնիկա եւ մարդուժ ունի, քան մենք:

Ի հարկէ, իրենց յարձակումն անակնկալ էր, չէ՞ որ 14-ին մենք պիտի յարձակուէինք: Կարաչինարի ուղղութեամբ մինչեւ Շաքիրբայլի մենք պիտի գնայինք, իսկ Հիւսիսային ուղղութեամբ՝ պիտի Գետաշէնը վերցնէինք:

Ես կարող եմ ասել, թէ հակառակորդն ինչ ծրագրեր է ունեցել եւ ինչպէս պիտի իրագործէր:

Պարտիզանական գործողութիւնները բոլորը հերթականութեամբ նշել հնարաւոր չէ, քանի որ մէկ օրուայ ընթացքում 4 ուղղութեամբ գործողութիւն է կատարուել. ասենք՝ մի ուղղութիւնը եղել է Գիւլիստան, երկրորդը՝ Թալիշ, երրորդը՝ Սարսանգ, չորրորդը՝ Տօնաշէն. դրանցից ո՞րը համարես առաջնային: Մտքի մէջ բոլորը վերականգնել չի լինի, իսկ այն օրերին գրագրութեան մասին մտածող էլ չկար: Անտառային չրջանը եղել է մեր հսկողութեան տակ: Հիւսիսային Արցախը, որ նայում ես քարտէզով, մի եզրը՝ Սարսանգի ճանապարհն է, որ մենք նրանից անդին չենք անցել, դա Մարտակերտի հիւսիսային մասն

է, Շահումեանի շրջանը՝ նոյնիսկ մինչեւ Հայ Պարիս, որտեղ ամտառը վերջանում է, մինչեւ Կեփաս եղել է մեր հսկողութեան տակ: Էդ ամբողջ տարածքը վերահսկելու համար մենք տարակողմ գործողութիւններ էինք անում, օր է եղել 4-5 ուղղութեամբ ենք գործել եւ երբեք ճախողած գործողութիւն չենք ունեցել»:

Գլուխ քսաներկուերորդ
ԸՆԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՋԻՆԱԿԻՑՆԵՐԸ ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

«ՇԱՀԷՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄՌՈՎ ՍԱՐՆ Է...»

Շահէն Մեղրեանի մասին սիրով են արտայայտուել նրան ճանաչող այն մարդիկ, որոնց մենք դիմել ենք: Նրանք Շահէնին ճանաչողների մի մասն են միայն: Շահէնն իր ժողովրդի սրտի մէջ է եւ բոլոր ճանաչողների մտքերը ամփոփում ենք ներքոյա-րադրեալ ակնարկներում:

ՊԱՐԳԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ. *Բոլոր ճանա-չողների մտքերը բնականաբար չէինք կարող զետեղել մեր այս սահմանափակ երկի մէջ: Ընտրեալ յղացքների համակարգում խօսքի անդրանկութիւնը բնականաբար վերապահւում է Արցախեան պատերազմի զօրաւոր դէմքերից* **Տ. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանին:** *Ազատագրական պայքարը նաեւ եւ առաջին հերթին հոգեւոր ազատագրութեան նպատա-կի իրականացումն է, որը վերազարթօնք ապրող Արցախում սկսուել է Արցախեան թեմի վերականգնման գործընթացով: Միւս բեւեռը՝ ժողովրդականը մարմնաւորել է* **Շահէն Մեղրեանը***: Նա էր իշխանական այն դէմքը, ով իր բոլոր բջիջ-ներով զգաց ազգային պետականութեան հիմքը՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին Շահումեանում վերականգնելու այրող ան-հրաժեշտութիւնը: Զի ազատագրական պայքարում յաջո-ղութեան հասնելու կարեւորագոյն պայմաններից է, բացի ար-տաքին թշնամուն պարտութեան մատնելը, ներքին պետակա-նաշինութիւնը, որի առանցքն ու կենդանի ուժի աղբիւրը Աստուածային արդարութեան հիմքով ստեղծուած հաստա-տութիւնն է՝ Եկեղեցին՝ բարեպաշտութեան, բարեկրթութեան եւ հոգեւոր զօրութեան Մայրը, որն այլ կերպ կոչւում է ճշմա-րիտ Աստուածութեան հաւատքով միաբանուած ժողովրդի ազ-գային ժողով: Եւ Շահէնն էր, որ սրբավայրերը պահպանելու եւ վերականգնելու չարժում սկսեց՝ ճիշտ ժամանակին Հոգեւոր*

առաջնորդին հրաւիրելով Շահումեան:

Ինձ վրայ չատ մեծ տպաւորութիւն է թողել, եւ այդ տպաւորութիւնն այժմ էլ կայ, իր հայրը՝ **Զինաւոր Մեղրեանը**: Պատկառելի, հոգով չատ հարուստ անձնաւորութիւն է, ինչպէս մեր բարբառով են ասում՝ քեօթուկ է, մեծ նահապետի նման պատկառելի, ծանր բնաւորութեամբ լուրջ մարդ է, եւ բնական է, որ իր որդիներին էլ այդպէս է դաստիարակել, եւ չատ բա-նով Շահէնը պարտական է իր հօրը, նաեւ իր մօրը: Մանաւանդ որ ամէն չահումեանցի, առաւել եւս Շահէնը, մանուկ հասակից քաջատեղեակ են եղել Գիւլիստանի փառաւոր անցեալին, եւ այդ ամէնն անմոռանալի, չատ խորը հետք են թողել Շահէնի հոգու մէջ: Եւ այդ ամէնը, ինչպէս յայտնի դարձաւ, դրսեւո-րուեց այս պայքարի ընթացքին, եւ նա դարձաւ Շահումեանի չրջանի ազգային առաջնորդը, քաղաքական ղեկավարը, ռազ-մական ղեկավարը, բոլոր ոլորտներում եղաւ ղեկավար:

Շահէնենց տունը չատ մօտ է եղել Գիւլիստանի եկեղեցուն, եւ բնական է, որ նա եկեղեցու պատերի տակ է մեծացել: Շահէնը քաջատեղեակ է եղել Հայոց պատմութեանը եւ նա տեղեկութիւններ է քաղել նաեւ մեր եկեղեցու պատմութիւնից, եւ նա ամէն ինչ անում էր, որ այդ չրջանն իր քահանան ունենայ: Եկել էր, որպէսզի քահանային տանի, ու այսպիսի դէպք եղաւ. իրենց մեքենան գողացան եւ խոստացաւ, որ երկու չաբաթ յետոյ գան եւ տանեն քահանային, սակայն այդ ժամանակ Շահումեանն ընկաւ: Զհասցրեցինք: Մինչ այդ նախապատրաստական աշխատանք էինք կատարել, երգչա-խումբ էինք պատրաստել եւ այլն, եւ այս ամէնը կատարւում էր իր մտահոգ մասնակցութեամբ:

Նա ունէր անընկճելի, բայց միաժամանակ համբերատար եւ խոհեմ բնաւորութիւն: Մինչեւ վերջ լսում էր իրեն դիմողին, խորհում էր, յետոյ պատասխանում, եզրակացութիւններ անում եւ յստակ արտայայտում պատասխանը: Նա կեղծաւորութիւն չու-նէր բնաւորութեան մէջ, ինչ մտածում էր՝ այն արտայայտում էր:

Շահէնը կարողացաւ անձամբ ի յայտ բերել մարտունակ, խիզախ մարդկանց եւ միաւորել ժողովուրդը: Կարողանում էր

սերտօրէն համագործակցել բոլորի հետ: Այդ տարիներին կային այլ կազմակերպութիւններ՝ ՀԱԲ, ԱԻՄ, այլ ջոկատներ: Բոլոր ջոկատները եղել են Շահումեանում: Առաջինը եկել է «Տիգրան Մեծը»: Բոլոր այդ ջոկատները միահամուռ կերպով են-թարկուել են մէկ հրամանատարի: Խառնաչփոթութիւն, կրքերի բորբոքում կամ անհասկացողութիւն չի եղել: Ամէն ինչ բնականոն էր, յստակ, որոշակի:

Շահէնի մօտ կար նշանակալից մի յատկութիւն. նա մարդ-կանց թոյլ տուած սխալը փորձում էր հասկանալ, թէ ինչու է տեղի ունեցել, ինչումն է սխալը: Վեր էր լուծում, միանգամից, անզուսպ կերպով չէր յարձակուում մարդկանց վրայ: Եւ ժո-ղովրդի հետ էր կարողանում ճիշտ փոխըմբռնման հասնել, ճիշտ հիմքերի վրայ էին փոխյարաբերութիւնները:

Շահէնն սկզբում պահածոների գործարանի տնօրէնն էր, յետոյ դարձաւ գիւղարդիւնաբերութեան նախագահ, ապա՝ գործկոմի նախագահ: Նա ժամանակ էր գտնում գործնապէս շփուելու ժողովրդի հետ եւ գիւղատնտեսութեամբ էր նրա միտքը զբաղուած եւ յատկապէս պաշտպանութեան գործով:

Մեծ մարդ էր, շատ մեծ: Բոլորն իրեն գնահատում էին՝ թէ Հայաստանի իշխանութիւնները, թէ Արցախի հրամանա-տարութիւնը: Բոլորի հետ լաւ յարաբերութիւններ էր պահ-պանում: Գուցէ դրա համար նա հոգ էլ չէր տանում, որով-հետեւ իր բնաւորութիւնը, բնոյթն էր այդպիսին, բնատուր կարողութիւններով եւ շնորհներով: Հարցը, սակայն, վերա-բերում էր հողի պահպանմանը, եւ Շահէնը կարողացաւ ի մի բերել տարբեր կուսակցութիւնները, ջոկատները, տարբեր համոզմունքի տէր մարդկանց: Որովհետեւ անճամբ հայրենիքի զինուրների միջեւ տարբերութիւն չէր դնում»:

ՆՈՎԻԿ ԳԻԻԼՈՒՄԵԱՆ. «Շահէնն ուժեղ կամքի տէր մարդ էր: Իր մտածողութեան թափն ու ուժն ո՞վ ունէր: Նպատակը չրջանը պահելն էր ամէն գնով: Նա մտածում էր նաեւ Գե-տաշէնի ենթաշրջանը պահելու մասին: Մեզ մի քանի անգամ նամակով ուղարկել է *Թաթուլի* մօտ, նա էլ պատասխան էր

գրել: Տարել ենք նաեւ զինամթերք: Ինքն էր Շահումեանի եւ Գետաշէնի ղեկավարը:

*Մեծ չըջապատ ունէր Հայաստանում: Մնունդը եւ մնացեալ անհրաժեշտ մթերքները ստանում էինք իր ծանօթների, ընկերների միջոցով: Թէ մտածողութեամբ եւ թէ մարդկայնօրէն շատ ուժեղ էր: Շահումեանի չըջափակման պայմաններում բոլոր զինուորներն էին նրան սիրում: **Փոքր երեխայի հետ էլ կարող էր ընկերութիւն անել**»:*

ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆ. *«Շահէն Մեղրեանին ծանօթացել եմ Երեւանում, Դաշնակցութեան գրասենեակում, երբ ինքը եկել-գնացել է Շահումեան: Գետաշէնի անկման օրն ենք գնացել, ապրիլի 30-ին, եթէ չեմ սխալւում: Մենք գնում էինք Գետաշէնին օգնութեան, սակայն մինչեւ այնտեղ հասանք, ասացին, որ Գետաշէնը ընկել է: Ես երկու առիթով եմ եղել Շահումեանում. 91-ի գարնանն ու ամռանը: Սկզբում եղել եմ պարզապէս որպէս ջոկատի օժանդակ խորհրդատու, չարքային: Յետոյ եղել եմ ջոկատի հրամանատար, այստեղից գնացած ջոկատի: Արդէն այդ ժամանակ գործի բերումով Շահէնի հետ չփուել ենք: Բացի դրանից, մի քանի սփիւռքահայ էինք մենք, իսկ ինքը սփիւռքահայերիս յատուկ ուշադրութիւն էր դարձնում այն իմաստով, որպէսզի յանկարծ այնպէս չլինի, որ հակառակորդի ձեռքն ընկնենք, որովհետեւ այդ ժամանակ կարող էր մեծ աղմուկ բարձրանալ, այդ հանգամանքը նկատի առնելով՝ մենք իրենց տանն էինք մնում, անտառից իջնում էինք, իրենց տանն էինք մնում: Ռուսները պարբերաբար մտնում էին եւ հասնում էին նոյնիսկ մինչեւ Գիւլիստան:*

*Շահումեանցիների մօտ կազմակերպուելու խնդիր կար, եւ մենք չէինք պատկերացնում Շահումեանն առանց Շահէնի: Արդէն 91-ին պատերազմն սկսուել էր եւ այդ օրերին միաւորուելու, համախմբուելու խնդիր կար: Շահէնն օգտակար շատ մեծ կերպար էր եւ մեծ գործունէութիւն էր ծաւալել: Որովհետեւ **ամէն մարդ չի կարող իրականութեան տարբեր կողմերն ի մի բերել եւ ամէն ինչ միաւորել եւ ղեկավարել**: Իսկ*

պատերազմական իրավիճակը թելադրում էր հէնց այդպիսի միաւորում, ամբողջականութիւն: Շահէնն այդ կարողութիւնն ունէր, իր կամային յատկութիւններով նաեւ: Իսկական հողի մարդ էր եւ շատ բան Շահէնի մօտ առաջ էր գալիս այն հանգամանքից, որ ինքը շատ կապուած էր իր հողին: **Երբ Շահէնի աչքերի մէջ նայում էիր՝ Շահումեանն էիր տեսնում, այլ պատկերացում չկար:** Այդ պատճառով ես կարծում եմ, որ Շահումեանի կորուստը նրա վրայ շատ պիտի ծանրացած լինի: Պարտիզանական չարժումը որ սկսուեց, դա էլ պայմանաւորուած էր այդ հանգամանքով, որ Շահէնը չէր կարող ապրել առանց Շահումեանի:

Կարելի է ասել, որ պատերազմն սկսուեց Շահումեանից եւ միայն 91 թուականի վերջից Արցախում իրավիճակը սկսեց յիշեցնել պատերազմականը: Շահումեանի ժողովուրդն ամբողջապէս մասնակից էր այդ պայքարին: Մարտական ջոկատների տղաների նկատմամբ տեղիս ժողովրդի վերաբերմունքը շատ ջերմ էր եւ հիացական: Նրանք մէկը միւսից պոկում էին մեզ՝ հիւրասիրելու համար: Շատ հոգատար էին եւ շատ հիւրասէր: Սակայն, ցաւօք, կարճ ժամանակամիջոցում չկարողացանք լուրջ կազմակերպուել: Որովհետեւ եթէ կազմակերպուած լինէինք՝ այս վիճակը չէր լինի: Մի խօսքով, մեղքը մերն է, որ Շահումեանն ընկել է: Դա գուցէ մայրաքաղաքներում կազմակերպելիք գործ էր, որպէսզի ռուսական զօրքը յատուկ կերպով չօգնէր ադրբեջանցիներին եւ մեր տարածքը չզաւթէին: Շատ հարցեր կարելի է լուծել քաղաքական, դիւանագիտական խաղերի միջոցով, բայց ես հիմա խօսում եմ գետնի վրայ կանգնողների մասին: Ասեմ, որ նախ Երեւանը արժանի կերպով թիկունք չէր կանգնում, Շահէնի՝ Դաշնակցական կուսակցութեան անդամ լինելու հարցը շատ քաչքչուկների եւ յապաղումների տեղիք էր տալիս, այդպէս էլ ասում էին. եթէ դաշնակցական չլինէիր, այսպիսի օգնութիւններ կը ցուցաբերէինք: Մի խօսքով՝ շատ ճղճիմ վիճակ էր դժբախտաբար, որը շատ մեծ վնաս տուեց մեզ: Պատերազմում: Հայերիս ներքին պառակտուածութեան պատճառով մենք Շահումեանում անկարող

եղանք իսկական պայքար ծաւալել եւ յաջողութեան հասնել»:

ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐԵԱՆ. *«Շահէն Մեղրեան... Այս անունը սուրբ է ինձ համար: Ես բախտ եմ ունեցել լինելու ոչ միայն իր ժամանակակիցը, այլեւ լինելու իր ընկերն ու զինակիցը:*

Մենք բարեկամներ էինք վաղուց ի վեր, իսկ պայքարի տարիներին մեր բարեկամութիւնը դարձաւ անխախտելի, անլուծական: Դա նոյնիսկ աւելին էր, քան բարեկամութիւնը: Ես նրան սիրում էի ինչպէս եղբօրս: Կարելի չէ չհիանալ նրանով. խելացի, բարեկիրթ, ազնուաբարոյ, խորապէս հաւատացեալ մարդ: Յիշում եմ, 90-ական թուականների սկզբում նա ինձ խնդրեց վերականգնել հայոց հանճարի միջնադարեան գլուխգործոց Գիւլիստանի եկեղեցին: Ուրախութեամբ կատարեցի այդ յանձնարարութիւնը: Օծման արարողութեան համար ժամանեց Արցախեան թեմի առաջնորդ ***Պարգեւ արքեպիսկոպոսը****: Մենք էլ արժանացանք Սրբազանի օրհնութեանը: Ա՛խ, եթէ տեսնէիք թէ ինչպէս էին վառւում Շահէնի աչքերը, ինչպիսի հոգեզմայլանքի եւ ոգեչնչուածութեան մէջ էր...*

Հայոց ռազմա-քաղաքական վերնախաւի ներկայացուցիչներից, թերեւս, միայն Շահէնն է զէնքը ձեռքին մարտնչել յանուն իր գաղափարների:

Շահէնի մասին ասել, որ նա խիզախ էր, նշանակում է՝ բան չասել: Հայոց լեզուի մէջ կայ մի ածական՝ «խենթ», որը կարելի մեկնել որպէս «խելակորոյս», սակայն կարելի է նաեւ հասկանալ «խելացնորութեան չափ խիզախ», «աներեւակայելի, սանձարձակօրէն խիզախ»: Ուժականութիւն ներչնչող այդ բնորոշումն, անկասկած, ամենապատշաճն է Շահէնի բնաւորութեանը:

*Շրջանի անկումից յետոյ նա մի բուռ քաջերով ձեռնարկեց Գիւլիստանի ազատագրման գործի նոր շարունակութիւնը: Այդ մի բուռ մատիկները դարձան լեգենդար «****Եղնիկների****» ողնասիւնը:*

1993-ին սկզբնաւորուեց Արցախեան պատերազմի նոր շրջանը, երբ մեկը միւսի յետեից ազատագրւում էին հայոց պատմա-

կան քաղաքներն ու բնակավայրերը: Շահումեանում էլ մինչ այդ տիրապետողները «Եղնիկներն էին» եւ թւում էր, թէ չրջանի ազատագրումը էդ օրերի համար խաղուպար է, եւ հայոց բանակը ուր որ է մտնելու է Շահումեան եւ իրագործելու է հայ ժողովրդի եւ նրա հերոս հայդուկների նուիրական կամքը: Սակայն... ապրիլի 17-ը դարձաւ Բազէի վերջին թռիչքը /Շահէնը բառացի Բազէ է նշանակում/ եւ մի սեւ վարագոյր իջաւ ու ծածկեց Գիւլիստանի չքնաղագեղ դէմքը: Եւ հիմա հարամիներն են այնտեղ անում իրենց խրախճանքը:

Ամէն գարնան, բնութեան զարթօնքի հետ հոգիս համակում է մի անասելի տրտմութիւն: Թախիծն ինձ այրում է ներքուստ, երբ ակամայ մտաբերում եմ 1993ի գարունը: Մենք բոլորս ենք յուղարկաւորուելու, ուղեւորուելու ի Տէր, փոխուելու ի Քրիստոս, սակայն Շահէնի մշտապայծառ, աստուածանկար պատկերն է զարդարելու Մռաւի դէպի երկինք նայող դէմքը»...

ՀԱՐՄԻԿ ՅՈՍԷՓԵԱՆ. «Շահէնը մեր Ղարաբաղի պատերազմի պատմութեան մէջ չատ իւրայատուկ տեղ է գրաւում: Շահէնն էն չողացող աստղերից է, որ տասնեակ տարիները մէկ գալիս են երկնքով անցնում եւ չատ քչերին է բախտ վիճակւում էդ աստղը տեսնել:

Շահէնի անձնական յատկանիշներից պիտի նչեմ իր անխոնջ եւ չարունակական աշխատանք կատարելու կարողութիւնը: Նա քնից արթնանալով պիտի մի օգտակար գործ անպայման կ'ատարէր: Շատ բարեսիրտ, մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր, եւ չատ չնորհների ու կարողութեանց տէր մարդ, որ չատ քաջիմաց էր թուրքի հոգեբանութեանը, ռուսի հոգեբանութեանը, իր ժողովրդի եւ գինուորականութեան տարբեր դասերի հոգեբանութիւնը: Նա ժողովրդի առաջնորդն էր եւ այդպիսին էր ժողովրդի կողմից ընկալւում եւ ինքն էլ ընտրութեամբ չէր առաջնորդ դարձել, այլ իր բնոյթն էր այդպիսին, եւ բոլորը իրեն ճանաչեցին որպէս իրենց հրամանատար: Դա իր մեծ սիրուց էր գալիս առ հայրենիքը եւ ժողովուրդը: Մարտական, ռազմավարական իմաստով չէի ասի, թէ յատուկ համակար-

գուած եւ նախապէս ձեռք բերած գիտելիքներ ունէր, սակայն իր տունը, այսինքն Շահումեան աշխարհը վտանգուած էր, եւ եթէ մարդը ուղեղ ունի, սկսում է այդ ուղղութեամբ մտածել եւ արդիւնքի է հասնում, որը չէր զիջում յատուկ կրթութիւն ստացած եւ լուրջ զինուորականների գիտելիքներին: Բացի այդ, իր կողքին կային նաեւ զինուորական մարդիկ, կամաւորներ:

*Կարող եմ համամիտ լինել այն գնահատականին, որ **կար հակահայկական մի ուժ, որը պարբերաբար եւ շարունակաբար պարզապէս ոչնչացնում էր աճած կամ աճող ներզօր ուժերին, որոնց չնորհիւ, եթէ նրանք ողջ մնային, մեր յաղթանակները գուցէ չատ աւելին կը լինէին:** Ասենք՝ եթէ Շահէնը կենդանի լինէր, անպայման չարունակելու էր պայքարը Շահումեանի ազատագրման համար, եւ այդ մարդիկ կարող էին պատերազմից յետոյ Հայաստանը զօրաւոր պետութիւն դարձնել եւ այսօրուայ նման չէինք լինի պարզապէս ոտատակ տարածք մեծ տէրութիւնների համար եւ կ՚ունենայինք իսկական անկախութիւն:*

Պատերազմական չարժման գլխաւոր մղիչն ինքն է եղել, սակայն պարտիզանական այդ պայքարի նպատակը ոչ միայն Շահումեանի ազատագրումն էր, այլեւ Մարտակերտի, քանզի այդ ժամանակ Մարտակերտը գրեթէ ամբողջութեամբ հակառակորդի ձեռքին էր: Իրենք որպէս կղզեակ էին անտառում եւ հէնց իրենց պայքարի չնորհիւ դիւրին դարձաւ Մարտակերտի ազատագրումը: Իրենց ներկայութիւնը չատ կարեւոր էր հակառակորդի թիկունքում: Շահէնի պայքարը, այո, չատ նպաստեց Մարտակերտի ազատագրմանը եւ մեծ օգուտ տուեց, որպէսզի սահմանները լինեն այսօրուայ վիճակով: Ի հարկէ, կան մարդիկ, որոնց համար կենսական է Շահումեանի ազատագրումը եւ դա չի դադարել երազանք մնալուց, իսկ ամէն ինչ սկսւում է երազներից, որոնք մի օր իրականութիւն են դառնում:

Շահէն Մեղրեանը բնածին զեկավար է եղել: Իրեն տրուած էր այդ չնորհը, եւ մեծ չափով: Լաւ կողմնորոշուող եւ խնդիրների խորքն ըմբռնող մարդ էր: Ինչ հարց էլ որ լինէր, թէ քաղաքական, թէ զինուորական, ինքը միայն երեւոյթներով չէր

բաւարարւում, այլ փորձում էր թափանցել, իմանալ, թէ դրանց յետեւում ինչ է թաքնուած, ինչ է կատարւում: Եւ այս ձեւով կարողանում էր շատ ճիշտ կողմնորոշուել ընդհանրապէս:

Այդ շնորհը շատ քչերին է տրուած:

*Շահէնի հետ համատեղ ձեռնարկումներ շատ են եղել: Նախ ասեմ, որ այդ շնորհների առկայութեամբ շատ լաւ փոխյարաբերութեան մէջ է եղել ռուս հրամանատարութեան հետ: Եւ այն բանից յետոյ, երբ Բաքուն եւ Մոսկուան իմացան, որ տեղի հրամանատարութիւնը շատ լաւ է տրամադրուած հայերի նկատմամբ, այդ հրամանատարին փոխեցին եւ ուրիշին նշանակեցին: Գնդապետ **Մարչենկօն** շատ լաւ յարաբերութիւնների մէջ էր Շահէնի հետ: Պատահում էր, որ ռուսական (թուրքական) կողմը պիտի հետախուզումներ, խուզարկումներ անցկացնէր տեղում, խստակարգ մտցնէր եւ այլն: Շահէնը նախապէս իմանում էր այդ մասին, եւ անելիքը որոշւում էր: Շատ է պատահել, որ ուղեցել են Գիւլիստանի անտառները սանրել եւ մարտիկներին, ջոկատների մարտակայանը յայտնաբերել: Եւ մենք կարողանում էինք ժամանակին տեղափոխուել կամ թաքնուել: Խօսքը յատկապէս վերաբերում է Հայաստանցի տղաներին: Այդպէս Շահէնն իմացաւ «Օղակ» գործողութեան մասին եւ Շահումեանի տղաներից լաւ ջոկատ ստեղծեց եւ թուրքերի գիւղարանքներով այդ ջոկատը հասցրեցին Գետաչէն եւ Մարտունաչէն: Եւ տղաները բաւականին երկար ժամանակ մնացին այնտեղ, եւ իմ կարծիքով՝ ռուսները մի բան հասկացել էին եւ այդ յարձակումը բաւական յետաձգուեց: Գրեթէ ապրիլի վերջերին եղաւ այդ բանը»:*

ԱՇՈՏ ՂԼԵՋԵԱՆ. *«Բոլոր զինուորների հետ եղել է ընկեր, բոլորին անձամբ ճանաչել է, բոլորին եղել է զինակից: Թէկուզ հրամանատար էր, սակայն նա զինուորների հետ մարտի է գնացել, մասնակցել է անմիջաբար բոլոր գործողութիւններին, անձամբ տարել է զինուորական բեռը, կիսել է դժուարութիւնները, վտանգն է դիմակայել: Միաժամանակ եղել է խիստ հրամանատար, հզօր կազմակերպիչ եւ ամէն ինչ ներդրել է*

Շահումեանը նորից ետ վերցնելու համար:

Երբ յուլիսի 13-ին ժողովուրդը ստիպուած է եղել թողնել Շահումեանը, լքուած, անօթի, անօթեւան, Շահէնը նորից հաւաքել է շահումեանցիներին, հաւատ եւ ուժ է մտցրել նրանց մէջ, համոզել, հաւատացրել է, որ չրջանը նորից ենք վերցնելու: Շահումեանցին այլ տեղ հայրենիք չունի,- սա է եղել իր նշանաբանը: Շահումեանցիներն իր հրամանատարութեան տակ փայլուն գործողութիւններ են կատարել:

Շահումեանի համար շատ բան է արել թէ՛ խաղաղ ժամանակ, թէ՛ պատերազմի: Շահումեանը հէնց այնպէս չի յանձնուել: Մինչեւ վերջին մարդը պայքարել են եւ համոզուելով, որ պայքարն արդէն անիմաստ է, ապահովել են բնակչութեան գաղթը Հայաստան եւ Ղարաբաղ: Իսկ բնակչութիւնը Հայաստանում իրեն ապահով չի զգացել եւ ցրուել է ամբողջ աշխարհով: Այնուհետեւ նա կազմակերպել է պարտիզանական շարժում: Անդրանիկից յետոյ միակ հայդուկապետը նա է եղել»:

Սիմոն Գաֆալեան. «Մեզի բոլորիս տպաւորած էր **Շահէն Մեղրեանը**: Պապենական հերոսութիւն ունէր մէջը եւ կարողութիւն ունէր տղոց հետ չփուելու, կարողութիւն ունէր բանակին հետ, ամէն մարդու հետ կապ ստեղծելու եւ բոլորին ամէն բանէ վեր պահելու: Շահէն Մեղրեանի համար լուրջ մտահոգութիւն էր այդ հողերն իսկապէս ազատ պահելը եւ ժողովուրդէն որեւէ մէկի մազին վնաս չհասցնելը: Շահէն Մեղրեան ամէն բան կ՚ընէր, որպէսզի իր ժողովուրդն իրօք բարձր պահէր: Տեսնելով Շահէն Մեղրեանի այդ պահուածքը, մէջերնիս վստահութիւն կ՚առաջանար, որ եթէ այսպիսի ղեկավարներ կան, մենք որեւէ բանի պէտք չենք ունենայ: Եւ ինքը մեր հետ էր ամէն վտանգի պահին: Մեզ հետ էր ամէն րոպէ: Ան կը ղեկավարէր ո՛չ թէ նստած տեղէն, այլ՝ ամենուրեք էր լինում»:

ԽԱԺԱԿ ԳԵԹՍԵՄԱՆԵԱՆ. *«Շահէնն ինծի համար շատ հետաքրքրական տիպար մըն էր: Շատ աշխոյժ, շատ մեզի մօտ: Մենք առաջին անգամ Պէյրութէն եկել էինք, լեզուն անծանօթ էր մեզի համար, եւ Շահէնը շատ հարազատ զգացուց մեզի:*

Շահէնն արդէն պատրաստ էր իր գործին, որը թոյլ տուեց

*մեր աւելի մտերմացմանը եւ գործերի աւելի դիւրին ընթացքին: Շահէնի հետ մենք պիտի ճգտէինք որպէսզի Սփիւռք-Հայաստան կապը ամրանար, ծաւալուէր, ըլլայ կազմակերպական իմաստով, ըլլայ մարտական իմաստով, ըլլայ գաղափարական իմաստով: Մեր ընկերական կապի սկզբից մեզ համար պարզ դարձաւ, թէ ինչ է հարկաւոր Շահումեանին, որ հոն պէտք է մարտական տղաք ըլլան, որ պէտք է զինուորական գործը կազմակերպուի: Ժողովրդին առաջին հերթին ամենակարեւորը զէնքն էր: Շահէնի բարեկիրթ պահուածքը, տղաների հետ մտերմիկ վարուելակերպը. առաջին հայեացքից թաքցնում էր, որ նա հրամանատար է, եւ այդտեղ միմեանցից խորթանալու հող չկար: **Շատ գօրաւոր էր իր ներկայութիւնն այդտեղ**: Տարբեր տեղերից եկած տղաներ էին եւ արագ մտերմանում էին փոխյարաբերութիւնների ճիշտ կառուցման շնորհիւ: Տեղում գտնուղ ռուսական զօրքն էլ Շահէնի շնորհիւ բաւականին յարգանք էին տածում մեր նկատմամբ»:*

ԴԵՐԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ. *«Շահէնին ճանաչել եմ շատ մի կարճ ժամանակ: Եղել ենք միասին միայն Մատաղիսի գործողութեանը: Նա լեգենդ է: Ես արցախեան չարժման համար եմ ասում: Նա որպէս է՛ մարտիկ է շատ լաւը եղել, է՛ մեզ որպէս ոգեշնչող, է՛ որպէս արդար մարդ: Որովհետեւ նա չէր նայում, թէ ով է դիմացինը»:*

ՄԱԿԻԶ ՄԿՐՏՉԵԱՆ. *«Շահէնին երբ հանդիպեցի, ինձ թուաց, թէ մենք երկար ժամանակուայ մտերիմներ ենք. նրա վերաբերմունքը շատ ջերմ էր: Նա մարդ էր, ում չրջանն ընդունում էր աներկբայ, առանց կասկածի եւ տատանման, հաւատալով նրա առաքելութեանը: Ինքն էլ բնականաբար նոյն կերպ էր մօտենում իր չրջանին: Նա տիրապետում էր չրջանում:*

Ամենալարուած եւ դժուարին վիճակներին, երբ հասնում էր խռնուած եւ չփոթահար մարդկանց, նրանց մէջ կարծես յարգանքի մի հոսանք էր թափանցում, եւ նրանք հանդարտւում էին: Շահէնն իսկապէս տիրապետում էր:

*Դա գուցէ տարիքից էր կամ կենսափորձից, որ կուտակել էր տեւական վարչական աշխատանքի ընթացքին, կամ երկուսից՝ միանգամայն: Հիմա դժուար է ստոյգ ասել: **Նրա ներգործական ուժի առկայութիւնն անկասկած էր եւ մեծ էր այդ ուժի զօրութիւնը**: Շահումեանում այնպիսի մթնոլորտ էր ստեղծուել, որ այդտեղ այցելող կամ եկուոր մարդն իրեն զգում էր ինչպէս իր տանը: Երբ ես առաջին անգամ եկայ Շահումեան, ինձ անծանօթ ու խորթ չզգացի: Այնպէս պատահեց, որ իմ կուսակցական ընկերները մէկ շաբաթից վերադարձան Հայաստան, իսկ ես մնացի: Ես շատ էի շփւում Շահէնի հետ: Իւրայատուկ լաւ յումորով էր օժտուած, թէեւ նա յաճախ չէր դիմում վերաբերմունքի այդ ձեւին: Կային բոլոր նախադրեալները, որպէսզի մարտիկները՝ որպէս մարդիկ, իրենց մենակ չզգային: **Եթէ զինուորի հրամանատարը լաւն է, նա արդէն իր գործից բացի ուրիշ բանի մասին չի մտածում**:*

Եւ որեւէ մէկի մտքով չէր անցնում, թէ Շահումեանը կարող ենք կորցնել: Շահումեանի հայն ինքն իրեն զգում էր իր երկրի, իր փոքր աշխարհի տէրը եւ բոլոր նախադրեալները կային այն պահելու, եթէ քաղաքական յայտնի խաղերը չլինէին եւ հայը լինէր մենակ թուրքին դէմ-յանդիման: Այս իմաստով՝ շահումեանցիների հանդէպ խաղեր կիրառելը դաւաճանութիւն էր, իսկ մեղքը շահումեանցիների վրայ բարդելը, Շահէնին մեղաւոր հանելը՝ ստորութիւն:

*Մենք Շահէնի վերաբերմունքի մէջ զգում էինք տանտիրոջ ինքնավստահութիւնը, սակայն նա իրեն այնպէս չէր պահում, որ ասես այդ տունը միայն իրենն է: **Մտաւոր մեծ կարողութիւններով ներքին հարստութեան տէր մարդ էր**: Երկար չէր խօսում, կարճ էր արտայայտւում, սակայն իմաստը լիովին հասկանալի էր լինում: **Շահէնն ունէր լուսաւոր միտք եւ ռազմագիտական մեծ հմտութիւն**: Մենք ընդամէնը զինուոր էինք, պատասխանատու իւրաքանչիւրս մեզ համար, այնինչ ամբողջ շրջանի, մարդկանց ճակատագրի եւ հողի պաշտպանութեան պատասխանատուութիւնն իր վրայ էր: Անկարելի է արտայայտել այն ամէնն, ինչ Շահէնն է զգացել դերով*

պարտադրուած իր վիճակում»:

ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. *«Բոլորովին ուրիշ արմատներ, բոլորովին ուրիշ ծագում, դաստիարակութիւն, բոլորովին այլ կեանք են կոփել իմ ընկերոջը՝* ***Շահէն Մեղրեանին:*** *Նրա ամենազօր, աննկուն ոգին հասկանալու համար բաւական է իմանալ, որ նա գիւլիստանցի նահապետ* ***Զինաւոր դայու*** *արժանաւոր զաւակն էր»:*

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ. *«ԳԱ («Գոլոս Արմենիի») թերթը «Նոր ժամանակ» (ռուս., 1991, թիւ 47) պարբերականից արտատպել էր «Ֆիդայիների հրամանատար Շահէնը» հարցազրոյց-ակնարկը, որ ռուս լրագրող, Շահումեանի ազատամարտիկներին սիրահարուած* ***Նիկոլայ Կալինկինի*** *գրչի գործն է, որը գրական քիչ արժանիքներ ունի, բայց, այնուամենայնիւ, գրաւիչ է, հետաքրքիր, որովհետեւ ներկայացնում է ազատագրական պայքարի նուիրեալին, ջահել ու հմուտ ռազմավարին, ժողովրդական առաջնորդին: Այո, առաջնորդին: Ես չեմ ափսոսում կամ չահարկում բառը, որ վաղուց արժեզրկուած է մեր լեզուի մէջ:*

Միայն մէկ անգամ եմ տեսել: ***Զօրի Բալայեանի*** *պատգամաւորական սենեակում զրուցում էինք... Ներս մտաւ 35-40 տարեկան, միջահասակ, թուխ-արեւահար, կրակոտ մէկը, փուքիկոտ աչք ածեց ներկաներին եւ սեղմեց ձեռքս: Մնացած ներկաներին երեւի էլի էր տեսել այդօր: Նորութիւնը ես էի. ձեռքս սեղմեց գիւղավարի, ամուր, որից պէտք է զգայի ե՛ւ ուժը, ե՛ւ վերաբերմունքը:*

Զօրին, իր սովորութեամբ, բարձրաձայն, աւելի ճիշտ՝ գոռգոռալով խօսում էր Մոսկուայի հետ: Նա դուրս եկաւ, գուցէ չտապ գործ ունէր: Իսկ ես, չգիտեմ՝ ինչու եւ ինչպէս, մտածեցի, որ ***Շահէն Մեղրեանն է,*** *Շահումեանի չրջանի գործկոմի եւ ռազմական իշխանութեան ղեկավարը: Եւ երբ խաղաղուած Զօրիին հարցրի. «Ո՞վ էր այն տղան», զարմացաւ. «Ձե՞ս ճանաչում, Շահէն Մեղրեանն է: Կարծում էի՝ իրար գիտէք,*

ձեռքդ էլ սեղմեց»:

Այս մի անգամ էր, որ տեսայ: Բայց այնքան եմ լսել, այնքան հաւանական ու անհաւանական, նոյնիսկ առասպելական բաներ, որ «Շահումեան» լսելիս նրան եմ պատկերացնում, «Շահումեանը» հիմա նրա հետ այնպէս եմ կապում, ասես իր Շահէն անուան արմատն է նրա հիմքում:

Ասում է՝ ազատամարտիկների խմբերն աշխարհում ուրիշ ոչ ոքի չեն ճանաչում իրենց գլխի վրայ, նրանից բացի, նրա խօսքից բացի:

Ասում են՝ կռուի ամենաթէժ կէտերում է. ամենուր ուժ ու ոգի է պարգեւում. ամենափոքր ջոկատով ճակատամարտի նետւում թուրք մեծաթիւ աւազակախմբերի դէմ եւ յաղթում, ազատում հայ պատանդներին. հայրենի գիւղերն ազատագրում:

Շատ բաներ են պատմում, իսկ ես ցաւում եմ, որ անձամբ չեմ տեսել:

Պատմում են նրան ճանաչող, նրա ռազմավարութիւնն ու մարդկային կեանքը սեփական աչքերով տեսած մարդիկ, եւ բոլորի խօսքի մէջ էլ կայ սիրահարուածութիւն, հերոսականը չեշտելու միտում, որը ժողովրդական խօսքի աղն է: Էհ, ի՜նչ վնաս, թող այդպէս պատմեն: Չէ՞ որ ամէն մի ժամանակն իր հերոսն ունի, ժողովրդական ոգու իր խորհրդանիշը: Հարիւր տարի առաջ մղած մեր ազատամարտերի, մեր նահատակութիւնների հերոսների անուններին չպէ՞տք է գումարուեն նորերը, արժանաւորները, որոնք ազգ են պահում, որպէսզի յետոյ էլ ազգն իրենց պահի:

*Այս տողերը գրելիս մի ցանկութիւն ունեմ միայն, յաղթանակով պսակուի այն մեծ կռիւը, որ մղւում է այսօր, եւ ես էլ իմ ցաւալի բախտից՝ վկա՛յ միայն, հնարաւորութիւն ունենամ գրելու մեր նոր ֆիդայիների ու նրանց առաջնորդ Շահէնի վէպը»: (**Բագրատ Ուլուբաբեան**, «Արցախեան գոյապայքարի տարեգրութիւն», Եր.,1997, էջ 291):*

ԿՈԼԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ. *«Խորհրդային զօրքերի միջոցաւ*

Շահումեանի բռնազաւթումից մէկ չաբաթ անց Շահէն Մեղրեանը կազմաւորում է հայդուկային ջոկատ եւ այն թափանցում է Շահումեանի գիւղերի մերձակայ անտառները եւ սկսում հայդուկային պատերազմը՝ նպատակակէտ ունենալով նաեւ Շահումեանի ազատագրումը: Ամբողջ այդ պայքարի ընթացքում հայդուկային խմբերի գործողութիւնները լիովին ներդաշնակ էին հիւսիսային ռազմաճակատի ուժերին եւ համաձայնեցուած Արցախեան ընդհանուր ռազմավարութեանը: Եւ դա գլխաւոր հրամանատարի անձնական բարեմասնութիւնների արդիւնքն էր: Երկար ամիսներ բնականոն կենցաղավարութիւնից զրկուած եւ ամէն զրկանքներ կրող ռազմիկների վարքի եւ գործողութիւնների մէջ արկածախնդրային ու անհաւասարակշիռ դրսեւորումներ չնկատուեցին: Այդ տարիների պայքարը մեծապէս նպաստեց Արցախեան բանակի ընդհանուր ռազմավարական ծրագրերին, որոնց մէջ, աւա՜ղ, տեղ չգտաւ Շահումեանի ազատագրումը: Բուն այդ պայքարի մտայղացումը ռազմագիտական հանճարի փայլատակում էր այն մարդու գիտակցութեան եւ հոգու մէջ, ում պատրաստ էին ծւատել մարդկային բարոյականութիւնից անչափ հեռու մոլեռանդներն ու անգէտ մոլորեալները:

Անհրաժեշտ ենք համարում յաւելել էլի մի քանի բան: Մեղրեան Շահէնն անձամբ բոլոր գործողութիւններին մասնակցել է հէնց սկզբից՝ լինելով դրանց կազմակերպիչն ու ինքնապաշտպանութեան ուժերի առաջատարը: Առանց մասնագիտական կրթութեան՝ նա զարմանալիօրէն լաւ էր հասկանում ռազմական գործը: Այդպիսի մարդու հրամանատարութեան տակ ծառայելը՝ հաճելի էր: Բացի այդ, նա լաւ ընկեր էր, բարեկամ եւ հայրենապաշտ: Մենք յիշում ենք նրա հետեւեալ խօսքը. «Եթէ մենք զրկուենք մեր հողից, ապա օտարութեան մէջ մենք մեզ զգալու ենք «կէս մարդ», որի ճշմարտութեանը մենք համոզուել ենք բազմիցս: Շահէն Մեղրեանը խիզախ մարդ էր, որը հաստատուել է ինչպէս մարտերի ընթացքին, այնպէս էլ տարբեր իրավիճակների: Ի տարբերութիւն հեռուներից խօսող ծանծաղամիտ եւ չարամէտ մարդկանց, մենք՝ կարաչինարի գու-

մարտակի ռազմիկներս Շահումեանի ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատարի նկատմամբ համակուած ենք եղել խոր-րագոյն յարգանքով եւ ներկայումս էլ պատուով ենք պահում նրա պայծառ յիշատակը»:

ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՑԵԱՆ. *«Շահէնը շատ իւրատիպ մարդ էր: Սակաւաթիւ են մարդիկ, որոնց անուն-ազգանունը համապատասխան է իրենց կերպարին: Եւ ինքը ճիշտ՝ Շահէն էր եւ ճիշտ՝ Մեղրեան՝ իր բնաւորութեան քաղցրութեամբ, իր պայծառ ժպիտով, իր լիաթոք ծիծաղով, իր յումորով, իր սրամտութեամբ, նրբազգաց հոգով:*

Եւ է՛ն խիզախութիւնը, որ յետոյ տեսայ իր գործողութիւններ-ի, Շահումեանը ղեկավարելու ընթացքում, այդ ամէնը ես զգացել էի ուսանողական տարիներին, որոնք թաքնուած էին նրա մէջ եւ նա այդ ներզօրութիւնը բարեկրթօրէն եւ համբերութեամբ, նոյնիսկ որոշ իմաստով՝ խոնարհութեամբ պահել էր իր մէջ, որպէսզի յետագայում, երբ պայմաններն ու առիթներն առկայ լինէին, լիովին արտայայտուէին՝ բացայայտելով մեր ազգի նշանաւոր դէմքերից մէկին, որի կեանքը ցաւօք պիտի ողբերգական վերջաբան ունենար: Իր յումորը, զուարճալի մանրապատումներ անելու եւ կենդանի իրողութիւններից յօրինելու կարողութիւնը ցոյց էր տալիս իր կենդանի միտքը եւ սուր, նրբազգաց կռահողականութիւնը, իրողութիւններն իմաստաւորելու բազմաշնորհութիւնը: ***Նա մի անասելի գեղեցիկ կերպար էր, որը վերացնում էր կեցութեան ծանրութիւնը*** *եւ պայծառ տրամադրութիւն էր ստեղծում ամէն պահի:*

Նրա նուիրուածութիւնը բացարձակ անանձնական էր: Իր համար հոգ չէր տանում, ինչ որ խօսում կամ անում էր, ուզում էր քեզ համար լինէր:

Յետագայում, երբ մենք զարձանք գաղափարակից ընկերներ, ես սկսեցի հասկանալ նրա՝ Հայդուկապետի կերպարը: «Օթելլո» ողբերգութեան մէջ մի պահ կայ, երբ մաւրն ասում է. «Ես շատ եմ տարբերւում այս քաղաքի ստուեր-մարդկանցից»: Կուսական ընութեան մէջ ծնուած մարդը յայտնւում է մեծ քա-

ղաքում եւ հանդիպում է մարդկանց, որոնք քաղաքի ստուեր-ների մէջ են ծնուել, ստուերների միջից են դուրս եկել եւ իր նման մարդու համար հեշտ պիտի չլինէր միանգամից յար-մարուելը Երեւանի նման քաղաքում: Բայց ինքը շատ արագ մտաւ նոր կերպարի մէջ, որովհետեւ ինքն այնքան հողեղէն, հզօր մարդ էր, որ կարելի չէր դրա դէմն առնել եւ նրա այդ ներքին զօրութիւնն օգնեց շատ արագ քաղաքում յարմարուել:

Նրա մասին ես յաճախ եմ մտածել եւ գիտեմ, որ նա շատ հանդիստ կերպով կարող էր իրեն խնայել, այնպիսի հանգա-մանքներ եւ պայմաններ ստեղծել, որ շատ լաւ էլ կ'ապրէր, եւ մաղն էլ չէր ծռուի: Բայց ինքն այդ առումով ոչինչ արեց: Ուրիշներն այդ հնարաւորութիւնը չունէին, որ կարողանային իրենց պահել, չզոհուել, Շահէնը շատ ունէր, բայց չգործադրեց:

Նա գիտակցաբար գնաց զոհուելու: Իր մատաղացու լինելն ինքն ընտրեց:

Շահէնն իր մասին բան չէր պատմում:

*Վերջին մեր հանդիպմանը նա ասում էր, թէ էս սրիկաներն ուզում են Շահումեանը տալ, բայց դու չվախենաս, կը գաս եւ քեզ Շահումեանում մի լաւ տնամերձ եմ տալու: Ես էլ Շահումեան գնացի, երբ տղաներին Գիւլիստան տարանք որպէս ուսուցիչներ, եւ **Շոթա Քերոբեանն** էլ գնաց կարաչինար: Ես **Գեղամ Գաբրիէլեանի** հետ եմ գնացել: Ժողովրդի բնաւորութիւնը լաւն էր, երկիրն էլ լաւն էր»:*

ԿԻՄ ԲԱԼԱՑԵԱՆ. *«Շահէն Մեղրեանին ես չեմ նայում որպէս անհատ, որպէս անձ, այլ կերպար, հայոց ազատագրա-կան, ֆիդայական պայքարի ղեկավարի խտացեալ կերպար, ազատութեան պայքարի առաջնորդի մարմնացում: Կարելի է ասել, որ Շահէն Մեղրեանը միակ անձն էր, որ մեծ հեղինա-կութիւն ունենալով ժողովրդի մէջ, միանշանակ զբաղեցրեց չրջանի վարչական ղեկավարի պաշտօնը եւ կամաւորական չարժման ղեկավարի դերը ստանձնեց:*

Շահէնը նաեւ մեծ հումանիստ էր: Շահումեանի անկումից յետոյ, երբ պարտիզանական պայքարն էր ծաւալում, ես իրեն

ասացի, որ բաւականին թուով տղաներ կան, որոնք կարող են գալ եւ միանալ իրենց: 15-16 տարեկան տղաներ կային, եւ ես ասացի, որ իրենց տանի: Շահէնը սակայն պատասխանեց. «Էս երեխայ-տղաներին տանեմ ի՞նչ լինի: Ափսոս են էս երեխաները»: *Ես ասացի, որ ինքս էլ չատ եմ խնդրել, համոզել որ չգան, սակայն խնդրում են գալ եւ որեւէ ձեւով օգտակար գործ անեն՝ կրակ վառեն, փայտ հաւաքեն, ջէնքեր մաքրեն եւ այլն:* «Գիտե՞ս, Կիմ, գալուցս առաջ, երէկ չէ առաջին օրը, մտքիս մէջ մօրս յանդիմանել եմ»: *Ինձ համար այդ անհասկանալի էր. ի՞նչ է նշանակում Շահէնի համար մտքի մէջ մօրը նախատի: Աւելացրեց, որ էնքա՜ն մեծ տանջանքով են եկել եօթ կիլոմետրը ձեան մէջ թաղուելով:* «Ասացի, այ մեր, եթէ ինձ այսչափ տանջանքների համար էիր բերել, ինչո՞ւ բերեցիր: Ես որ էդքան փորձառու եւ հասուն մարդ եմ, գաղափարով պատրաստուած, գիտեմ, որ դժուարութիւնից դուրս գալու ուրիշ ելք չունենք, եւ էդքան ինձ համար դժուար է, ինչպէ՞ս կարող եմ էդ երեխաներին տանել: Եթէ չատ ուզենան, յաջորդ անգամ որ եկանք՝ կը տանենք»:

Դա Շահէն Մեղրեանի վերջին վերադարձն էր: Հէնց այդ ժամանակ տեղի ունեցաւ այդ սոսկալի դէպքը, որ մինչեւ հիմա առեղծուած է:

Շահէնը հզօր մարդ էր: Նա ի զօրու էր ամենածանր պահերին դրսեւորել մեծագոյն ինքնատիրապետում եւ իր հանգստութեամբ եւ կամքով ներգործել ընդհանուր վիճակների վրայ, կայունացնել իրադրութիւնը, մարդկանց ներշնչել ինքնավստահութիւն, հաւատ: Բազմաթիւ ծանր վիճակներ կարելի է մտաբերել, երբ Շահէնը չատ հանգիստ կերպով ասում էր. «Դէ լաւ, ինչո՞ւ էք տրտմել, եկեք մի երգ երգենք»: *Եւ լաւ էլ երգում էր: Նա մանրախնդիր չէր, բայց նրա համար ոչ էական հարցեր չկային: Թւում է, թէ դա հակասութիւն է:*

Նա երբեք չէր ընկճուի նոյնիսկ ամենամտերիմի զոհուելուց: Նման դէպքերում ասում էր. «Մենք պայքարի ենք դուրս եկել եւ պատրաստ պիտի լինենք դրան: **Եթէ մենք ընկճուենք, յուսահատուենք եւ պերճաչուք ծէսերով թաղումներ անենք**

մեծագոյն վչտահարութեամբ, մենք դրանով մեր կործանումը կը բերենք: Մենք պիտի ամէն պահ պատրաստ լինենք զէնք վերցնելու եւ պայքարելու: Նաեւ կորուստները անյողդողդ տանելու»:

*Շահէնի ջոկատներում կարգապահութեան մակարդակը շատ բարձր էր, եւ մարդիկ գիտէին, թէ ինչի համար են պայքարում: Յետին թուով, իրրեւ կատարեալ եղելութիւն, դրանց մասին խօսելը շատ հեշտ է: Սկսած 86 թուականից, նա կազմակերպական մեծ աշխատանքներ է տարել ազատագրական պայքարը կազմակերպելու եւ ընթացքի մէջ դնելու համար: Իսկ այն ժամանակ կային ՍՀՄ զինեալ ուժեր, կար Ադրբեջանի ՕՄՕՆ եւ Շահումեանն իրենց տարածաշրջանը համարող նախանձախնդիր թուրքեր: Այն ժամանակ դեռ ՀՀՇն ի յայտ չէր եկել եւ Արցախեան պայքարը թուում էր բոլորի մտահոգութեան առարկան: Սակայն այն ժամանակ էլ Շահէնը կարողանում էր խորաթափանցօրէն կարդալ եւ հասկանալ մարդկանց հոգիները, հասկանալ նրանց վարքի դրդապատճառները եւ մեր պայքարից հնարաւոր չեղումները, ի տարբերութիւն, ասենք, ինձ, որ այն ժամանակ դեռեւս չէի կարող պատկերացնել, որ, օրինակ, Լեւոն Տէր-Պետրոսեանը ազգային պայքարին, Արցախին կարող է այդպիսի վերաբերմունք ցուցաբերել եւ իշխանութիւնները կը գործեն դրսի թելադրանքով: Սակայն Շահէնը երբեմն այդպիսի միտք էր արտայայտում. «Ես տեսնում եմ, որ մե՛նք պիտի կազմակերպենք մեր ինքնապաշտպանութիւնը»: Ինքը շատ էր խորաթափանց: **Շահէն Մեղրեանի վարկանիշի եւ հեղինակութեան վրայ մեծ իրաւարժանութիւնները ու յեղաբեկումները չազդեցին, որովհետեւ նա գործում էր ոչ թէ պահի թելադրանքով, այլ իր գաղափարախօսութեամբ,** իսկ այդ գաղափարախօսութիւնն ազգային էր: Նա իսկական դաշնակցականի կերպար էր էդ առումով: Նա միշտ իր ժամանակից առաջ էր նայում եւ գիտէր ազգային հարցերի լուծման բանալին:*

Շահէն Մեղրեանը Հայոց պատմութիւնը լաւ էր ուսումնասիրել, գերազանց գիտէր Արցախի մելիքութեանց պատմութիւնը, նա գիտէր, թէ հայ ժողովուրդը որտեղից է եկել եւ

դէպի ուր պիտի գնայ: Նա այդ հարցի պատասխանը չատ լաւ ունէր: Եւ բացի այդ, ամէն մարդ իր գեներուի կրողն է, եւ եթէ ծննդաբանութեան հետազօտութիւն կատարենք, կը տեսնենք որ Շահէն Մեղրեանը այդ մելիքական տոհմի մի չարունակութիւնն է եւ իր գեներով մեր ժողովրդի այդ ներզօրութիւնը եւ փորձառութիւնն ինչ-որ կերպ անցել է նրան: Դա եւս կարեւոր է»:

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ. *«Շահէնի մէջ կար մի ջիղ, նախատրուած մի չնորհ, որին բոլորը հաւատում էին: **Դա Հէնց իսկական մտաւորականութիւնն է, որի առաջ նոյնիսկ թշնամին է խոնարհւում**: Դա բնածին է կամ ժառանգական, որ գալիս է Զինաւոր դայուց:*

***Իսկական մտաւորականն ազգային մտաւորականն է, զի ազգային մտաւորականը երբեք չի կոտրւում եւ չի չեղում իր ճանապարհը**: Դա Շահէն Մեղրեանն էր: Շահումեանի շրջանում մարտիկները չէին թաքնւում, իրենց հզօր էին զգում եւ դա տեղիս հրամանատարութեան եւ մեծապէս Շահէնի չնորհիւ էր: Այդ ոգին փոխանցուեց այնուհետեւ ամբողջ Արցախին: Շահումեանի շրջանում զէնքը չէին թաքցնում, եւ երկրորդ շրջանը, որ հասաւ դրան՝ Հադրութն էր: Այդտեղ ռուս զինուորականութիւնը յանդուրժում էր, որովհետեւ նրանք լաւ էին հասկանում, որ դա երկրի պաշտպանութեան համար է եւ եթէ իրենք խանգարէին այդ գործին, ուրեմն իրենք պիտի թիրախ դառնային: Այլ տեղերից գալիս՝ նայում էին եւ իրենք էլ խիզախում այդպէս անել: Շահումեանը կարծես փորձադաշտ լինէր: Առաջին «Գրադ»ը այդտեղ են խփել: Եւ այդքան դժուարին պայմաններում **Շահէնի ոգին էր Շահումեանում թեւածում**: Անասելի հետաքրքրական մարդ էր, կարող էր օրերով չքնել, անընդհատ մարդկանց ընդունել, բոլորի հետ հաղորդուել, բոլորի հարցերին պատասխան, լուծում տալ: Ծանր ժամանակներ էին, բայց Շահումեանում սեղանի վրայ միշտ հաց էր լինում, միս էր լինում, գիչեր-ցերեկ հացի գործարանն էր աշխատում, ցանքատարածութիւնը պատերազմի օրերին*

աւելացնում էին, երկրի պաշտպանութեան մասին էին մտածում, եւ ժողովրդին պահելու: Հասցնում էին այդ ամէնն անել:

*Եւ նա միշտ էլ բարձր է եղել, սակայն եղել են իրեն չճանաչողներ կամ պարզապէս չսիրող մարդիկ: Եթէ **դարեր էլ անցնեն, Շահէն Մեղրեանը եւ Հայկը մնալու են մեր ժողովրդի յիշողութեան մէջ,** եւ մենք պէտք է մեր մէջ վարդան Մամիկոնեաններ փնտրենք, որովհետեւ, փառք Աստուծոյ, ունենք»:*

ՌԱՖԻԿ ՂԱԶԻՆԵԱՆ. *«Շահէնին ճանաչել եմ վաղուց: Շահէնը, նախ, եղել է երիտասարդ, եռանդով լեցուն մարդը: Թումանեանի շրջանում, զգալով մեր երիտասարդների նուիրուածութիւնը, այդ տղաներին ասաց, որ վաղ թէ ուշ Շահումեանը լինելու է Հայաստանի կազմի մէջ: Եւ դա 85 թուականին էր: Եւ ինձ համար պատահական չէր, որ Շահումեանի շրջանում պայքարի գլուխ պիտի լինէր Շահէն Մեղրեանը: Եւ երբ մենք եղանք Շահումեանում, իր ճեռնարկութեան մէջ, որի նման գործարաններ լիքն էին Հայաստանում, սակայն թէ ինչ աշխուժութիւն էր այնտեղ, միայն տեսնողը կ'իմանար: Շահէն Մեղրեանն իր արտադրանքով դուրս էր եկել Ճապոնիա: Եւ այն ամենը, որ այն օրերին չէր ճարւում, Շահումեանի խանութներում կային: Եւ դա Շահէն Մեղրեան-տնտեսագէտի եւ քաղաքական դէմքի չնորհիւ էր:*

1989 թուականի դեկտեմբերին Մոսկուայում գումարուել էր ԽՍՀՄ պատգամաւորական համագումար: Առաջին եւ վերջին անգամ ԽՍՀՄում նման բան տեղի ունեցաւ:

Շահէն Մեղրեանը Մոսկուայում չատ բան արեց Հայաստանի եւ հայութեան նկատմամբ ղրական վերաբերմունք մշակելու ուղղութեամբ եւ միաժամանակ այնտեղ նա զբաղուած էր զէնքի ճեռք բերմամբ: Նա մի հեքիաթային ճանապարհով զէնք բերեց, որ անկարելի է երեւակայել: Նա զէնքը տուն բերեց պատգամաւորական ինքնաթիռով, հէնց պատգամաւորների ճամպրուկների հետ միասին: Եւ այդ ճամպրուկները բերեցին Հայաստանից պատգամաւոր ընտրուած մարդիկ: Սա է Շահէնը: Շահումեանի պատուիրակութիւնն այնտեղ առանձին էր, եւ

երբ Շուշիի հարցն էր դրուած, Շահէնն ասաց. «եթէ դուք չէք ուզում այդ հարցը դնել, թողէք ինձ վրայ, իսկ դուք զբաղուէք Շահումեանի հարցով»: Այսպիսին էր Շահէն Մեղրեանը:

Երրորդ, Շահէնին ես ճանաչեցի Դաշնակցութիւնից ներս: Առաջին շրջանային ժողովին ֆրակցիայի մեր անդամներով մասնակցում էինք այդ ժողովին, տեսնում էինք ***Արթուր Մկրտչեանի, Շահէն Մեղրեանի*** *նման պայծառ մարդիկ: Արցախի այդ հրաշք տղաները պարզապէս հրաշալի է, որ իրենք էլ դաշնակցական էին: Եւ սա էլ ինձ համար յայտնութիւն էր:*

Չորրորդ յայտնութիւն. տարատեսակ վէճեր էին լինում՝ թէ պիտի ղեկավարի որեէ կառոյց, կամ կուսակցական ղեկավարները կային, որոնք վախենում էին զէնքից, զինամթերքից, կամ անգամ մարտական ջոկատների մասին խօսելուց: Շահէնը արդէն 89 թուականից ձեւաւորուող մարտական ջոկատների մասին էր տեղեկացնում: Հողի, հայրենիքի մասին հիմա շատերն են մեծ-մեծ խօսում: Այն օրերին ես դա միայն Շահէն Մեղրեանից եմ լսել: Նա ասում էր. «Ես ձեր ցաւը տանեմ, առանց արեան հող չեն տալու: Թշնամուն տրուած հողը արիւնով ենք ետ բերելու: Կեղծիքներով, դաւաճանութեամբ տրուած հողը արիւնով ենք ետ բերելու»: Սա էլ ինձ համար չորրորդ յայտնութիւնն էր Շահէն Մեղրեան մարդու: Եւ այս գիտակցումով էլ կանգնել է թէ գետաչէնցիների, թէ շահումեանցիների գլխին եւ կազմաւորել այն մարտական ջոկատները, որոնք այսօր էլ պատրաստ են յանուն Շահումեանի գնալ ամէն ինչի, մէկ իսկ վայրկեան չյապաղելով գնալ ի մարտ, եւ իր հրամանատարներից ամէն ոք կարող է կանգնել ջոկատների գլուխ: Կենդանի մնացած այս շուրջ վեց հարիւր տղաները: Նրանք «եղնիկներն» են, իսկ թէ ովքեր են «եղնիկները», գիտեն նրանք, ովքեր իրենց հետ մարտի են գնացել:

Շահէնի չորրորդ յայտնութիւնը. Գետաչէնի, Բուզլուխի, Էրքէչի, Մանաչիդի անկումից յետոյ էր, երբ Շահումեանը գտնւում էր ծանր վիճակում, երբ ղեկավարութիւնը գտնւում էր Հայաստանում եւ շրջանն ունէր մարտական ղեկավար, բայց չունէր տնտեսական կամ վարչական ղեկավար: Եւ այդ պահին

Շահէնն ինքը յանձն առաւ նաեւ տնտեսութեան ղեկավարումը: Շահէնի տնտեսութիւնը ղեկավարելու ընդունակութեան մասին կարելի է երկար խօսել, օրինակելի ուղեցոյց գրել, թէ ինչպէս կարելի է ղեկավարել չրջանը, ինչպէս կարելի է ղեկավարել հանրապետութիւն: Նա չատ հմտօրէն էր ստեղծել ղեկավարման կառոյց եւ սերմանում էր հայրենիքը պաշտպանելու եւ կառուցելու ոգի: Նա քաղաքական այլ երազների մէջ չկար: Եւ նա այդ օրերին կարողացաւ արագ կերպով օգտագործել ջրկատները եւ օգտուելով պատեհ պահից, մէկ հարուածով ետ բերեց երեք գիւղերը: Պատրաստ էր, սեղանին էր գրեթէ նաեւ Գետաշէնի ծրագիրը, սակայն 91-ին ԽՍՀՄ դեռ վերջնական չէր փլուզուել եւ այդ ծրագիրը յետաձգուեց:

*Եւ նա այդ բոլորը ստեղծեց չնորհիւ մի քանի ամսում ստեղծած իր մարտական կառոյցի: Շահէնը կարողացել էր ընտրել լաւագոյններին: Նա այդ օրերին կորցրեց **Կամոյի** պէս ընկեր եւ հրամանատար նշանակեց **Յակոբին**: Բոլոր տղաները հզօր էին, քաջ, որովհետեւ միայն քաջերը կարող էին դիմանալ Շահէնի մօտ: Նա յանկարծ չտաբի պետ նշանակեց **Սերգէյ Զալեանին**, ում Շահումեանում ոչ ոք էր ճանաչում: Նա կարողանում էր մարտերի ընթացքին արագ ճանաչել մարդկանց եւ նշանակել հրամանատար եւ նոյնիսկ նշանակուողն էր անակնկալի գալիս, մինչեւ որ իրօք իրեն արդարացնում էր եւ ինքն էլ զարմանում Շահէնի խորաթափանցութեան վրայ:*

*Կայ նաեւ Շահէն Մեղրեան-Մարդու յայտնութիւնը: Այդ օրերին մարտական հիմնական գործողութիւնները Շահումեանում էին, Գետաշէնի ենթաշրջանում եւ Հադրութում: Եւ այսօր **չկայ մի մարտական միաւոր, հրամանատար, որ անցած չլինի Շահէն Մեղրեանի բարոյական քուրայով**: Շահէնի համար այդ ընթացքում գոյութիւն չունէր կուսակցութիւն, կուսակցականութիւն, այլ սիրում, գուրգուրում էր ամէն Շահումեան եկածի, ինչպէս օրինակ՝ **Ջիւանին**, որ զոհուեց Վերին Շէնի բարձունքներում: **Գագիկ Մելքոնեանը** կը լինէր, միւսը կը լինէր, բոլորի համար կար պետական մտածողութիւն: Որովհետեւ **Շահէն Մեղրեանը խորութիւն չէր դնում***

եւ ազգը չէր տարաբաժանում դաշնակցականների եւ մնացեալի: Ամէն գինուոր էլ թանկ էր իր համար: Եւ եթէ նոյնիսկ պատահական կերպով մէկը Հայաստանից յայտնուէր Շահումեանում, այլեւս չէր ցանկանում վերադառնալ այնտեղից: Շահէնը այն ուժն էր, որ դէպի իրեն էր ձգում չատերին, նոյնիսկ անկախ իրենց կամքից: Նա մեծ մագնիս էր:

Նա եկած օգնութիւնը նախ գնդի տղաներին էր տալիս, նոր ապա իր ընկեր-դաշնակցականներին: Ամէն անգամ նա կարողանում էր յիշել Շահումեան եկածի այն խնդիրները, որոնք նա ունեցել է նախորդ անգամ լինելով Շահումեանում եւ հարցնում էր այդ մասին, եւ զարմանում էին, թէ ինչպէս է յիշում իւրաքանչիւրի ամէն խնդիր ու հոգս: Եւ առաւել էին զարմանում, երբ վերադառնալով Հայաստան, իմանում էին, որ Շահէնն իր ընկերների միջոցով հոգ է տարել իր մասին: Դա էր Շահէն Մեղրեանի մեծութիւնը: Նա գիտէր իր ամէն գինուորի տան հոգսն ու կարիքները: Սրա մասին որեւէ մէկը չի գրել:

*Նա չատ էր սիրում **Պարգեւ Սրբազանին**: Սա արդէն մէկ այլ Շահէն Մեղրեան էր, իբրեւ հայ քրիստոնեայ: Պարգեւ Սրբազանը Շահէնի հրաւէրով եղաւ Շահումեանի հրաշալի եկեղեցի-վանքերում: Եւ գիւղ առ գիւղ, ջոկատ առ ջոկատ այնտեղ մկրտուեցին Պարգեւ Սրբազանի ձեռօք: Հիմա ես նոյնպէս այդ մկրտուածներից մէկն եմ: Եւ Շահէն Մեղրեանը ցանկանում էր, որ ի մի լինի ժողովուրդը ոչ միայն պայքարի, այլեւ հայ քրիստոնէութեան, այսինքն եկեղեցու առումով, միաբան մէկ հաւատքով: Եւ նա այդ իմաստով պարտական էր Արցախի ոչ միայն հոգեւորը, այլեւ մարտական մեծ առաջնորդներից մէկին:*

Եւ ինչ որ Շահումեանում կատարւում էր դրական առումով, այդ Շահէնի չնորհքն էր. որ, ասենք, թուրքը քեզ չէր խփում, այլ դու էիր թուրքին խփում: Նա գալիս էր եւ ստուգում ամէն մի ընտրուած դիրք, իսկ դիրքի ընտրութիւնը չատ կարեւոր է մարտական գործողութեան ժամանակ եւ առհասարակ պատերազմում: Նա ընտրում էր ամենաճիշտ դիրքերը. դա յետոյ էր պարզւում: Եւ նա լուսաբանում էր պաշտպանուելու նրբութիւնները եւ նրա հայեացքը մինչեւ Քուռն էր հասնում

Արտաշէս արքայի *նման: Նա ասում էր՝ այդքանը մերն է, դրանից յետոյ, ես ագրեսոր չեմ, խնդրեմ, թող ձերը լինի: Եւ նա չատ լաւ գիտէր Շահումեանը, եւ դիրքերը պիտի որ լաւ ընտրէր: Ի՞նչ կայ զարմանալու. դա մելիքներից եկող արիւն էր, ընազդն էր եւ նա պատասխանատու էր իրեն զգում բոլորի համար:*

Շահէն Մեղրեանը ***Նժդեհի*** *նման ստեղծել է իր պետութիւնը Շահումեանում: Նա դարձաւ Շահումեանի փաստացի ղեկավարը, կամաւոր մտաւ այդ մեծ բեռի տակ: Նա զգաց այդ ծանրութիւնը եւ չխորշեց դրանից, այլ ասաց. «Այո, ես տէր եմ այս ամենին»: Տէր լինելու խնդիր էր եւ Շահէնը տէր եղաւ: Եւ նա իմաստուն կերպով դերաբաժանում կատարեց՝ տեխնիկան տալով* ***Յակոբին****՝ իր զօրաջոկատներից մէկի հրամանատարին: Եւ նրա մօտ կային գիւղապետները կամ կազմակերպ տնտեսութիւնը: Նա ջրաղացներ էր կառուցել եւ չրջափակուած Շահումեանը կարող էր գոյատեւել: Վաղամեռիկ* ***Ալբերտ Յովհաննիսեանի*** *հետ միասին նրանք հիմնադրեցին մի ձեռնարկութիւն, որը կարողանում էր չրջակայ բնակավայրերից բերուած հումքը մչակել: Նրա տեղակալները պատասխանատու էին ոչ միայն մարտական կառոյցի մէջ, այլեւ բնակչութեան: Մարտական տղաները, բացի իրենց անմիջական պարտականութիւններից, նաեւ գիւղերի բոլոր հոգսերն էին հոգում: Օրինակ, ասենք, Մարտակերտում իրար փոխարինել էին հզօր մարտական ղեկավարներ, սակայն այնտեղ չկար տնտեսական ղեկավարը: Ահա թէ ինչու Մարտակերտը մասնատուած էր, մասնատուեց:*

Այնպէս կարող էր դիմացինին բան սովորեցնել, որ դիմացինը չզգայ, որ սովորեցնում է եւ չնեղանայ: Նա երբեք իրեն ուսուցչի տեղ չէր դնում: Եւ ամէն ոք, ինչ հրամանատար էլ լինէր, երբ գալիս էր Շահումեան, չէր զգում, որ Շահէնի ենթակայութեան տակ է, որովհետեւ Շահէնը այդ զգացնել չէր տալիս, որովհետեւ նա վարչարարական յիմար եւ գոռոզ տօները չունէր: ***Նոյն Լէոնիդը, Վլադիմիրը, Մոնթէն, Նորիկը*** *կռուել են Շահէնի հրամանատարութեան տակ, սակայն նա իրեն իբրեւ հրամանատար զգացնել չի տուել, եւ որեւէ մէկը*

չէր զգում, որ նա իրենց հրամանատարն է, գլխաւորն է: Սրա մէջ է նաեւ իր մեծութիւնը: Սակայն այդ մարդիկ, բոլորն էլ ընդունում էին, որ Շահէնն է իրենց ղեկավարը: Նա պարտադրելու խնդիր չունէր:

*Շահէն Մեղրեանը նաեւ քաղաքական գործիչ էր: Շահումեան եկող ամէն պատգամաւոր, **Դաւիթ Շահնազարեանը** ժամանակին, **Իւրա Յարութիւնեանը**, «Տիգրան Մեծ» ջոկատի ղեկավար **Սմբատ Այվազեանը, Իգոր Մուրադեանը, Տիգրան Կիւրեղեանը**... բոլորը Շահէնի ընկերներն էին՝ անկախ իրենց քաղաքական հայեացքներից: Եւ կուսակցականութեան բարդոյթ չկար, որովհետեւ Շահէնի համար նախ կար հողհայրենին: Շահէն Մեղրեանը գտնում էր, որ Հայաստանում չէր կարող լինել քաղաքական որեւէ ուժ, որ չուզենար այդ խնդրի լուծումը: Պարզապէս մենք՝ դաշնակցականներս, ասում էր Շահէնը, աւելի շատ ենք ուզում: Նա քաղաքական մեծ վերլուծաբան էր եւ մարգարէաբար շատ առաջ էր տեսնում: Դա ի՛նչ ուժ էր... **Մենք յաճախ Շահէնին նոյնացնում էինք Մռաւ սարին: Նա այդ տարածքի Մարդ-Մռովն էր,** որ կարողանում էր իր մէջ այդ բոլոր արժանիքները կրել:*

Եւ զարմանալի է, թէ որտեղից է տարբեր տէրութիւնների՝ ԽՍՀՄի, Ադրբեջանի լծի տակ ապրած հայի մէջ պետականութեան այդպիսի դրուածքն ու գիտակցութիւնը: Եւ բոլոր կենտրոններից մեկուսացուած Շահումեանում, լրատուամիջոցներից զուրկ մարդը կարողանում էր այնպիսի վերլուծութիւններ անել, յաճախ կռահումներ, որոնք ի ցաւս մեզ իրականանում էին: Ռազմամթերքի չափ կարեւոր էր համարում մամուլը եւ պահանջում, յորդորում էր Հայաստանից լրագրեր հասցուեն Արցախ: Նա տագնապով էր հետեւում Հայաստանում կատարուող քաղաքական իրադարձութիւններին եւ վախ ունէր ներքին խժդժութիւններից եւ պատրաստ էր կանգնելու օրուայ նախագահի կողքին, որովհետեւ երկրի ղեկավարը նա էր: Այդքան հաւատաւոր դաշնակցական էր եւ այդքան մեծահոգի, որ կարող էր գալ եւ միջնորդ լինել իր ընդդիմադիր կուսակցութեան եւ ՀՀՇի արանքում, Լ. Տէր-Պետրոսեանի

արանքում: Դրանում էր նաեւ իր մեծութիւնը:

Հայրենիք կորցրած մարդու նման նա գնաց **Վազգէն Սարգսեանի** մօտ, նա գնաց **Սամուէլ Բաբայեանի** մօտ, եւ նաեւ Դաշնակցութեան աջակցութիւնն ստացաւ եւ եղակերա եկեղեցու՝ երիցմանկուքի առաջ իր առաջին շտաբը դրեց: Այդ շտաբը նախ դրեց Արտատափում եւ ծաւալեց պարտիզանական պայքարը, միակը Արցախում, որը տուեց փառաւոր արդիւնք:

Նա միշտ հպարտանում էր իր մելիքական ծագմամբ եւ Գիւլիստանի մելիքութեամբ: Նա ասում էր՝ Գիւլիստանի մելիքութիւնը պիտի վերականգնուի իր սահմաններով: Նա չէր ընդունում «Շահումեանի շրջան» անուանումը: Եւ Մատաղիսի ենթաշրջանը, Թալիշի ենթաշրջանը, որ նախկինում Գիւլիստանի մելիքութեան մէջ են եղել եւ յետոյ արհեստականօրէն կտրել են, հանել Շահումեանի շրջանից: Եւ նա այդ գաղափարը կարողացաւ դնել թալիշցիների, մատաղիսցիների մէջ: Եւ նրանք ասում էին, որ մենք Գիւլիստանի մելիքութեան մէջ ենք: Եւ այդ էր պատճառը, որ մեծաթիւ տղաներ Զայլուից, Թալիշից, Տօնաշէնից, Մատաղիսից եկան Շահումեանի զօրքի մէջ, մօտ 300 հոգի: Եւ Շահէն Մեղրեանը փաստօրէն Գիւլիստանի մելիքն էր: Եւ ծնուեց ԵՂՆԻԿՆԵՐի հրաշքը: Եւ կարեւորն այն չէ, որ տղաներն իրենց զարանից կարող էին այս կամ այն բանակի տեխնիկա ոչնչացնել, որովհետեւ իրենց դիրքերից երեւում էր Գանձակից եկող ամէն ինչ եւ տեղ չէր հասնում, եւ այդ խփուած տեխնիկան առ այսօր մնում է տեղում գամուած: Առանց «եղնիկների» անհնար կը լինէր Հաթերքի ենթաշրջանի ազատագրումը, Մարտակերտի ազատագրումը, եւ ոչ միայն այն առումով, որ պարտիզանական շարժումը դէպի իրեն է քաշում թշնամու մեծ ուժեր, եւ բոլորս լաւ ենք յիշում Հաթերքի վերեւը տեղի ունեցածը, այն մեծ գործողութիւնը, այն տեխնիկան, ռազմամթերքը, որ պիտի հասնէր Քեալբաջար, դժուար թէ Քեալբաջարը մերը լինէր: Դժուար թէ տեղի ունենար այդ մեծ շրջադարձը Արցախի ազատագրական պատերազմում: Ահա Շահէնի մեծութիւնը, որպէս պարտիզանական շարժման հիմնադիր եւ ղեկավար»:

ԱՐԿԱԴԻ ՏԷՐ-ԹԱԴԷՈՍԵԱՆ. *«Անձամբ բարձր եմ գնահատում Շահէն Մեղրեանի մարդկային յատկութիւնները, նա արժանի մարդ էր եւ կարող էր ղեկավարել ոչ միայն Շահումեանի շրջանը, այլեւ ամբողջ Արցախը եւ կարծում եմ, որ եթէ իր նմանները ղեկավարէին, մեր վիճակն աւելի լաւ կը լինէր»:*

ՀՐԱՆՏ ԽԱԶԱՏՐԵԱՆ. *«Շատ առիթներ չեմ ունեցել հանդիպելու Շահէն Մեղրեանին, սակայն ինչքան չփուել ենք, միմեանց վերաբերել ենք հարազատի պէս, հարիւր տարուայ ծանօթների նման:*

Վստահութիւն ներշնչող անձնաւորութիւն էր, արտակարգ կոլորիտով, յումորի խորը եւ նուրբ զգացումով, որ վկայում է իր բարի լինելու մասին:

Մենք մէկ շաբաթուայ չափ հնարաւորութիւն ունեցանք հիւրընկալուելու Շահէնի հայրական տանը, այն ժամանակ, երբ յայտնուեցինք Շահումեանում: Մնում էինք Շահէնի հայրական տանը, ազատ ժամանակը շատ էր, իսկ Շահէնը բնականաբար զբաղուած էր իր գործերով, բայց օրուայ մէկ մասն անց էինք կացնում շտաբում, եւ այդ ժամերը յագեցած էին իր առօրեայ, սակայն հերոսական գործունէութեամբ: Յաճախ էր կատակում: Մի անգամ անակնկալ ռմբակոծումներ սկսուեցին եւ ռումբերը թափւում էին շտաբի շրջակայքում: Երեւանից մեկնած մի քանի պատգամաւորների համար դա միանգամայն անակնկալ էր, եւ իրենց բնական հունից դուրս բերելով գցեց տագնապալի վիճակի մէջ: Շահէնն իրեն յատուկ միջոցներով եւ առաջին հերթին յումորով կարողացաւ շատ արագ այդ մարդկանց մէջ վերականգնել ինքնավստահութիւնը, եւ նրանք համոզուեցին, որ մեր գլխին ռումբ չի ընկնի: Հանգստացան, հանդարտուեցին:

Խորին ցաւով ընդունեցի Շահէն Մեղրեանի ողբերգական մահը: Դա այն ժամանակներն էին, երբ մէկը միւսի ետեւից հանելուկային պայմաններում զոհ էին դառնում Արցախեան ազատամարտի երեւելի զօրավարները, չեմ թուարկում,

որպէսզի որեւէ մէկին չմոռանամ, եւ մենք լսում էինք Արցախի ինքնապաշտպանութեան երաշխաւորների մահուան գոյժերը եւ այդ ամէնը ցաւալի էր. նրանցից ամէն մէկի կորուստը պակասեցնում էր յաղթանակի երաշխիքը: Բոլորի համար էին այդ կորուստները մեծ եւ բոլորին էր պարզ, որ այդ մարդկանց պէտք է փոխարինողներ լինէին»:

ԱՇՈՏ ՊՈՒԱԶԵԱՆ. *«Պատերազմի ժամանակ մօտ քառասուն անգամ թռել եմ Գետաշէն, Շահումեան, եկել եմ, գնացել եմ պոստերի: Երբ ես եկել եմ, դա զինուորների համար ուրախութիւն է եղել, ոգեշնչել ենք: Ինքս Բուզլուխից եմ: Ցաւօք, մենք կորցրեցինք մեր հայրենիքը, որի համար կան պատճառներ:*

Երկրի բոլոր մասերն էլ կարեւոր են, սակայն Ադրբեջանի մատոյցներում կանգնած այդ չրջանը պիտի պահուէր: Մեր պապերը մեզնից խելօք էին, նրանք ամէն ինչ տալիս էին, բացի Գետաշէնի բարձունքը, որը ռազմավարական կէտ էր:

Շահէն Մեղրեանը մեր հայրենիքի մեծագոյն զաւակն է, երեւի նման մարդիկ հազար տարին մէկ են ծնւում: Չի եղել, որ նա գայ Հայաստան եւ մենք գնացած դիմաւորած չլինէինք: Միասին կարեւոր հարցեր ենք լուծել:

*Յիշողութիւններս շատ են: Զանգեց, գնացինք մեր պայմանաւորուած տեղը եւ էնպէս արեցինք, որ ոչ ոք մեզ չտեսնի: Եղբօրս, լուսահոգի **Գրիշայի** հետ գնացինք, մօտ 3-4 ժամ մնացինք, տարբեր հարցեր քննարկեցինք, որոշեցինք մեր անելիքները, եւ ես ասացի, որ այդ ամէնն իմ ու Գրիշայի վրայ թողնի եւ գնայ:*

Դէ կողքից լաւ է երեւում, հայրենի հողը սրբութիւն է, բայց դրա պահելու համար էլ նա իր համար հակառակորդներ էր վաստակում:

*Շահէնն ազգային մեծ հերոս է, նա մեր մեծերի պէս մի քանի դար յետոյ էլ պիտի յիշուի, ինչպէս յիշում ենք **Գարեգին Նժդեհին**: Նա նմանատիպ մարդ էր. եթէ որոշել էր, թէ այս բա-*

նը հայրենիքի համար պիտի անի, ուզում է դէմը հազար հոգի էլ դուրս գայ, պիտի անէր:

Շահէնն Մեղրեանի տարերքը ոչ թէ հատուածային խաղերն էին, այլ հայրենիքի ազատագրումն էր, հայրենիքի ցաւն էր: Եթէ լինէր մի հայկական այլ կուսակցութիւն, նա կը լինէր դրա անդամը եւ իր էութեան մէջ ոչինչ կը փոխուէր, եւ իր նպատակը կը մնար նոյնը: Նա շատ մեծ մարդ էր, մեծ զօրավար, մեծ հայրենասէր: Զարախօսներ էլ կը լինեն, եւ դա էլ կեանքի օրէնք է: Ի՞նչ անես: Եւ բամբասում են նրանք, ովքեր ճակատում չեն եղել եւ լսել են սրանից, նրանից: Ով գործի վրայ չէ, նա կը բամբասի պարապութիւնից: Բամբասանքը երեւակայութեան անպտուղ, անստեղծագործ խաղ է եւ չարակամութիւն: Նա մեզ հրամայել է, խելացի կերպով հրամայել է, եւ մենք իր ասածը կատարել ենք: Կարելի է Շահէնի մասին օրերով խօսել եւ հնարաւոր չէ մեծ մարդու սպառիչ գնահատականը տալ: Մեծ մարդու գնահատականը կարող են տալ անչահախնդիր մարդիկ: Քէն պահող գեաղա-գիւղերը չեն կարող: Դէ գիտէք, բոլոր մեծերն ունեցել են իրենց փոքր հակառակորդները, քանզի Մեծը չի կարող Մեծ հակառակորդ ունենալ: Մեծը չի հակառակւում:

Ինքը շատ ուժեղ տղամարդ էր, ժժդահայ տղամարդ էր, ինճ վերցրեց, բարձրացրեց եւ ասաց. «Դու ուղղաթիռով չգաս: Կը գաս մեքենայով եւ Ստեփանակերտով»: *Ես ուզում էի մօրս այնտեղից տեղափոխել, ինքը թոյլ չտուեց, ասաց. «Երբ իմ մայրը կը գայ, քո մօրն էլ կը տեղափոխենք, դու ուզում ես, որ Շահումեանի ժողովուրդը տեսնի եւ դո՞ւրս գայ: Եթէ մայրիկիդ հանես, խուճապ կը գցես Շահումեանի չրջանում»: Ես երգ էլ ունեմ գրած նրա մասին»:*

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԵԱՆ. *«Այդ ժամանակ մեծ դեր էր կատարում Շահէն Մեղրեանը: Նրան մեծ թէ փոքր՝ յարգում, սիրում էին: Նա տեսնում եւ զգում էր վաղուայ օրը, գիտէր, թէ մէկ ամիս յետոյ ինչ կը լինի, մէկ տարի յետոյ ինչ կը լինի, կանխատեսման բնական ընդունակութիւն ունէր: Շահէնի վերաբերմունքն*

ու փոխյարաբերութիւնը թէ՛ դէպի ժողովուրդը եւ թէ՛ մնացեալ մասնագէտները չատ լուրջ էին, չատ խորն էին եւ իմաստալից: Եւ նրա բոլոր ասածներն իսկապէս կատարւում էին, եւ նրա մահը չատ ծանր անդրադարձաւ Շահումեանի վրայ: Նոյնիսկ զառամեալ մարդիկ կանգնում եւ խոնարհաբար բարեւում էին Շահէնին»:

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ. *«Ես իրեն գիտէի մինչեւ չարժումը, երբ ինքը Շահումեանում պահածոների գործարանի տնօրէն էր: Յետոյ դարձաւ Գործադիր կոմիտէի նախագահ: Մենք թէեւ յաճախակի չէինք հանդիպում, սակայն մտերիմներ էինք: Մենք իրար հետ եղել ենք Դաշնակցութեան ընդհանուր ժողովում: Երբ այստեղ այն արգելեցին, ժողովը եղաւ Փարիզում, Փարիզից հեռու մի ագարակում, եւ Շահէնն էլ եկաւ հասաւ այնտեղ, բաւականին ուշացումով, երկրորդ թէ երրորդ օրն էր: Ինքն էլ լեզու չգիտէր եւ մեքենայով մի կերպ եկել հասել էր: Շատ տպաւորիչ մի բան եմ յիշում: Ժողովն աւարտելուց յետոյ մէկ օր ունէինք եւ միւս օրը պիտի Փարիզից թռչէինք Հայաստան, կէս օրի չափ ժամանակ կար, եւ ով որտեղ հասցնում գնում էր, խանութ, ցուցահանդէս եւ այլն: 3-4 հոգով գնում էինք փողոցով, եւ չեմ յիշում, թէ որ փողոցն էր, մէկ էլ մեր դիմացից մէկը գալիս է, եւ ինչքան մօտենում է, տեսնում ենք, որ Շահէնն է: Գօտկատեղում մի կացին էր եւ ձեռքին մի սղոց: Պատկերացրու Փարիզը եւ կենտրոնական փողոցներից մէկով քայլում է Շահէնը՝ կացինով եւ սղոցով: Մտել էր խանութ, եւ աչքին ընկած բաներն էր առել, այն, ինչ պէտք էր անտառում: Տեսել էր լաւ որակի են՝ առել էր: Աչքիս առաջ է այդ պատկերը:*

Եւ իմ վերջին հանդիպումը: Սփիւռքից մարդ կար, ինքն էլ այստեղ էր էդ ժամանակ, Երեւանում էր, գնացինք, էդ օդանաւակայանի կողմերը մի վետերոկ կար, մենք մեր ընկերոջը ճանապարհ դրեցինք եւ գնացինք այդ ուտելու կէտում մի քիչ խմեցինք: Վերադառնալիս ասաց, որ վաղն առաւօտը ինքը պիտի թռնի, եկել էր մթերքի հարցով, եւ պիտի գնար: Մի տեսակ չատ մտախոհ էր: Ինքը սեղանի, ուրախութեան մարդ

էր, ասող, խօսացող: Օդանաւակայանից երբ վերադառնում էինք, մի մեքենայի մէջ էինք ես, ինքը, **Տիգրան Ճինբաչեանը**: Նոր էինք դուրս եկել արդէն «Զուարթնոց»ից, ասաց.

– Արի գնանք մեր տուն:

Արդէն նոր տունն ստացել էր այստեղ, Տէրեանի վրայ:

– Կը գնանք մեր տուն, երեխաներին կը տեսնես…

– Առաւօտը պիտի գնաս՝ գնա հանգստացի:

– Չէ, արի գնանք, երեխաներին կը ծանօթանաս:

Տիգրանին հարցրեց.

– Կը գա՞ս:

– Կը գամ:

Ու գնացինք իրենց տուն: Առաջին անգամ էի մտնում այդ տունը, որովհետեւ նոր էր, մի ամիս թէ երկու ամիս կը լինէր, որ ստացել էր: Որ մտանք, բաւականին ուշ էր արդէն, երեխաները քնած էին: Նրանց հանեց քնից, ծանօթացրեց ինձ: Եւ մէկ էլ զգացի, որ, չգիտեմ ինչու՝ այդպիսի զգացողութիւն ունեցայ, որ հրաժեշտի նման բան է կատարում, ուզում է ծանօթացնել ինձ, թէ տես ինչ ունեմ եւ այլն: Երեւի այդ զգացողութիւնից էր, որ իրեն ասացի.

– Ինչի՞ ես գնում, մի՛ գնա, թող Փոքր Շահէնը գնայ, դու մեծ ես արդէն, անտառ է, բան է, թող նա գնայ:

– Զինաւորը կը ծեծի, որ ես չգնամ: Վերջին անգամ եմ գնում: Գնամ, գամ, թող յետոյ Շահէնը զբաղուի, ես թիկունքով կը զբաղուեմ, ինքը կը ղեկավարի:

Գնաց եւ էդ վերջի գնալն էր:

Ամբողջ խնդիրն այն է, որ երբ այդ պատմութիւնը եղաւ, այստեղ սկսեցին բամբասանքները, ուժեղ թափով: Դա, երեւում է, վերեւից տուած հրահանգներ էին: Շատ արագ սկսեց տարածուել, որ ինքն այնտեղ չգիտեմ ինչ հարստութիւն է ունեցել, այստեղ ինչ տներ ունի, եւ այլն, եւ այլն, փոխանակ ժողովրդին այնտեղից դուրս բերելու՝ ապրանքներն է սկսել դուրս բերել… ահա նման բաներ, վարկաբեկելու գործընթաց էր:

Մենք տեղն ու տեղը սկսեցինք պատասխանել, իրեն բերե-

ցինք հրապարակ, ինքը ելոյթ ունեցաւ, յօդուածների դէմ յօդուածներ, եւ կարծես թէ փրկուեց անունը, քանզի եթէ այդ օրերին վարկաբեկէին, յետոյ շատ դժուար էր լինելու մաքրելը: Մահից յետոյ էլ մի փոքր փորձեցին, բայց յաջողութիւն չունեցան: Պատասխանը երեւի ստացան: Ես էլ մահուան առթիւ մի խօսք գրեցի եւ այդ խօսքի մէջ այդ բանները գրել էի, թէ այս ինչ դիւային գրասենեակից են դուրս գալիս յերիւրանքները: Մի խօսքով՝ էդ մարդը, որ շատ պէտքական մարդ էր թէ՛ կռուի դաշտում եւ թէ՛ առհասարակ, կորցրեցինք՝ գնաց:

Շահէնի համար մարդկանց հետ մտերմանալը շատ հեշտ էր ստացւում, ունէր չափան բնատուր մեծ կարողութիւն: Նա առերեւոյթ նոյնիսկ պարզ հոգեբանութեան մարդ էր եւ ազնուական նկարագրի տէր: Իմ գրուածքի մէջ մէկ արտայայտութիւն կայ՝ ինքը ինձ պատմել է, թէ ինչպէս են իրենք մի անգամ երիցմանկանց վանքում պատսպարուել: Այնքա՜ն սիրուն էր նկարագրում, որ հիմա ես չեմ կարող ամէն ինչ ասել եւ որեւէ մէկը չի կարող, բայց յիշում եմ իր հաղորդած մէկ պատկերը. «Հաստ ձիւների տակից դուրս եկած մասրենին եւ մասուրը՝ կարմիր: Ջորս կողմը ձիւն էր, եւ մենք մտանք գաւիթը, այդտեղ՝ չոր, եւ ոնց որ Աստուած էր նախապատրաստել, եւ մասրենու պատկերը...» Մի խօսքով... ափսո՜ս, ափսոս... Ցետոյ իմաստութիւն կար մէջը, ինչպէս ասում են՝ աղայութիւն կար, ազնուութիւն եւ ազնուականութիւն:

*Շարժման առաջին օրերն էին, ճանապարհը բաց էր: Գնացել էինք Շահումեան, **Մելոյեան Ցեղիքան** էլ էր ինձ հետ: Գործարանի տնօրէնն էր ինքը: Գնացինք, իջանք ձորը, մի մեծ քար կար ջրերի մէջ: Նստեցինք այնտեղ եւ օգտուեցինք այդ քարից իբրեւ սեղան: Սեղան բացեց, լաւ գինի բերեց, կերուխում արեցինք: Դա այն գէտն էր, որի էս ափը Շահումեանն է, էն ափը՝ ԼՂԻՄը: Այդ օրը հոգով մտերմացայ իրեն, մի առանձնայատուկ ազնուականութիւն ունէր, աղայութիւն: Սրան էր ղեկավարում, նրան էր սիրում, կարողանում էր մարդկանց սիրել, որ հաւանաբար քչերին է յաջողւում:*

Շահէնին կորցրինք, շատ լաւ մարդկանց կորցրինք...

Ազնուականութիւն ստեղծելը շատ դժուար է: Երբ կաթի սերը քաշում ես, տակը բարակ շերտ է մնում, որը քիչ յետոյ էլի հաւաքւում է, եւ եթէ դա էլ քաշում ես, տակի մնացածը այլեւս լիարժէք կաթ չէ: Նորից պիտի սպասես, որ կաթ լինի, որ սերուցք ունենայ: Ժամանակ է պէտք, իսկ մենք ժամանակ էլ չենք ունեցել եւ մեր սերուցքը շատ, շա՜տ են քաշել տարել: Կաթի սերը գոյանում է եւ մի բկլիկ գալիս քաշում տանում է: Դա կամ թշնամին է կամ մեզնից են յաճախ թշնամու գործն անում: Տակը մնում է լխպոր յեղուկը, որ չգիտես կաթ է, թէ կաթ չէ: Ափսոս է, ափսոս է... Զգիտեմ դա մեր մեղքն է, թէ մեր բախտն է: Անընդհատ մեր սերը տարել են, մեր սերուցքը տարել են:

Շահէնի կողքին որ կանգնում էիր, դա էլ հերիք էր, եթէ ինքը որեւէ քայլ էլ չանէր, որեւէ բան չանէր: Այո, Փարիզում տեսանք իրեն փողոցով քայլելիս, կացինը գօտկատեղին, սղոցը թեւի տակ: Մէկ ուրիշը Փարիզում մի լայն սպառման առարկայ, մի թրաշի սարք կառներ, անճի համար օգտակար մի իր, երեխային նուէր: Նա կացին էր առել, պատկերացնո՞ւմ էք, Փարիզից կացին էր առել եւ սղոց: Եւ իրեն նայողն ու չճանաչողը կարող էր ասել՝ ով է էս բոլին, որ եկել է աշխարհի կենտրոնով անցնում է: Դա ինձ համար փառաւոր բան էր, որ աչքին ուրիշ բան չի երեւում, ոչ մի գեղեցկութիւն, ոչ մի աշխարհիկ արժէք, բայց նա գեղեցկութիւն գնահատել էլ գիտէր չէ՞, երբ մասուրի պատմութիւնն արեց... Ամէն մարդ չի կարող այդ գեղեցկութիւնը տեսնել: Սակայն այդ պահին իր ուղեղում իր Շահումեանն էր, իր պարտիզանական ջոկատն էր, անտառն էր, որտեղ հէնց այդ իրերն են պէտք: Նա մեծ Փարիզում գտել եւ առել էր Շահումեանի համար օգտակար, անհրաժեշտ իրերը: Սա է հէնց ազնուականութիւնը:

- «Ամէն մարդի, գաւառի հայութիւն եւս ունի իր անկրկնելի անհատականութիւնը, Աստուծոյ կողմից տրուած չնորհների հիմքի վրայ առաջացած ինքնատիպ մարդկային նկարագիրը, որը գիւլիստանցու մօտ ձեւաւորուել է վաղնջական ժամանակներից, եղել է ի սկզբանէ եւ այժմ այդ անհատականութիւնն ի սպառ կորցնելու վտանգի առաջ ենք կանգնած, քանզի գիւլիս-

տանցիներն այժմ աչխարհով մէկ ցրուել են, եւ ի՞նչ հնարաւորութիւններ կան ազատագրելու Շահումեանը: Դա հնարաւո՞ր է»:

– «Ես չունեմ իրաւունք ասելու՝ ոչ, չահումեանցին հնարաւորութիւն չունի: Մեր ազգի բոլոր մտածողների մէջ նստած է այդ յոյսը եւ ոչ բառը պիտի չլինի: Նոյնիսկ եթէ դա իմ համոզմունքն էլ չլինէր, ես չէի ասի ոչ-ը, որովհետեւ դա ուրիշների վրայ էլ է ազդում: Չէնց միայն դրա համար դու ո՛չ ասելու իրաւունք չունես: Եւ այս իմաստով մեր հոգեբանութեան բացերը, թերութիւնները, ոգու նուաստացումը ես չատ լաւ տեսնում եմ: Պիտի ցաւով ասեմ, որ էս պայմաններում, էս կենսակերպի սահմաններում, էս հոգեբանութեամբ հնարաւորութիւն չեմ տեսնում, ինչպիսին հիմա է ստեղծուել կամ գոյութիւն ունի: Ուժեղանալու դէպքում միայն կարելի է հասնել նման յաջողութեան: Քիչ առաջ նշեցի, որ Շահումեանը Արցախից անջատ ենք պատկերացրել, Շահումեանը չենք դիտել որպէս Արցախ: Նոյնիսկ դա չենք կարողանում այսօր հասկանալ եւ հասկացնել տալ իշխանութեանը... Աջից, ձախից բզկտում են, ճզմում: Աչխարհը չատ է փչացել, աչխարհն այնքան է փչացել, որ ոչ թէ, ասենք, անպայման յոյսը պիտի դնենք աչխարհի վրայ, որ արդար լինի, ժողովրդավար լինի եւ այլն, ոչ թէ միայն դրա համար, որ առհասարակ պիտի էյուսաս դրսի ուժին: Դա չեմ ուզում ասել, այլ այն, որ աչխարհից մեծ վտանգ կայ, աչխարհը ոչ միայն արդար չէ, այլեւ վտանգ կայ աչխարհից: Ես աչխարհից որեւէ բան չեմ խնդրում, բայց չեմ ուզում նաեւ իր անարդարութիւնը ինձ վրայ իչխի: Ինքն ինձ պարտադրում է անարդարութիւն: Սա է, որ ինձ անձնապէս մտահոգում է: Մենք չլուծուած չատ հարցեր ունենք եւ մեր չլուծուած հարցերի վրայ աւելացաւ Շահումեանի հարցը: Ես Շահումեանը չեմ կարող մնացեալ Հայաստանից անջատել: Ես այնպիսի վիճակի մէջ եմ, որ ինձ համար բոլոր կորուստներն էլ թանկ են: Եւ ես չեմ կարող իմ ցանկութեամբ առաջնահերթութիւն մտցնել: Բոլորն էլ ինձ համար թանկ են, եւ ես չգիտեմ թէ դա ինչպէս է արուելու: Մեր ազգային ներուժը զօրաց-

նելու պարագային եթէ կարողանանք Արցախի հարցը լուծել, գուցէ նրանից այդքան մօտ Շահումեանն էլ ազատագրուի:

Շահէնի կորուստը ծանր էր ոչ միայն իր մարդկային որակների առումով, այլ այն բանի համար, որ իր հետ գաղտնիքներ տարաւ: Ինքն էդ օրը ինձ հետ գուցէ բացուելու պահանջ ու բանալի ունէր, բայց էլի զսպեց իրեն: Ամենաճչգրիտն ինքը գիտէր, թէ ինչ է կատարուում: Իր յոյսերն ու յուսախաբութիւնները, իր գաղտնիքները նա, իբրեւ ուժեղ տղամարդ, ցրիւ չէր տալիս, իր մէջ պահում էր եւ իր հետ էլ տարաւ: Նա շատ բան գիտէր»:

***Նազարէթ Պէրպէրեան. «Շահէն Մեղրեանի** հետ մեր առաջին եւ միակ հանդիպումը Հոկտեմբեր 1992-ին էր, երբ Դաշնակցութեան 25-րդ ընդհանուր ժողովը կայացաւ Փարիզին արուարձաններէն մէկուն մէջ: Յունիսին, որ պիտի կայանար Երեւան այդ ընդհանուր ժողովը, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ծանօթ ելոյթով խափանուեց: Բացման նիստը, որ կայացաւ Երեւանի մէջ, Շահէնը ներկայ չէր, դեռ չէր հասած ժողովի նիստին: Բնականաբար, երբ խափանուեցաւ եւ հետաձգուեց գումարումը, Շահէնին չեմ տեսել Երեւանում:

Հոկտեմբերին ընդհանուր ժողովին բացումը բաւականաչափ ձգձգուեցաւ, որովհետեւ դժուարութիւն ունեցան Հայաստանի պատգամաւորները վիզա ստանալու եւ ամենաարագ ժամանակում դուրս գալու: Երեք-չորս օր ուշացումով հասան: Բայց իրենց հետ դարձեալ չկար Շահէնը: Բաւական հեռաւոր տեղ էր այդ ընդհանուր ժողովի գումարման վայրը. մի 350-400 կմ հեռու էր Փարիզէն: Փարիզի մեր ընկերները կը դիմաւորէին պատգամաւորները, եւ որոնք իրենց վրայ պիտի ունենային իրենց չրջանի պաշտօնաթերթից օրինակ մը, որպէսզի ճանաչէին մեր տղաքն իրենց: Շահէնը չէր եկել եւ մէկ օր յետոյ տաքսիով անակնկալ եկաւ: Որովհետեւ մենք ամենքս գնացինք գնացքով, որ շատ աւելի դիւրին էր եւ ոչ թանկ, իսկ տաքսին Փարիզում շատ թանկ փոխադրամիջոց է, եւ մէկ էլ մի տաքսի կանգնեց եւ յաղթահասակ, բարի մէկն իջաւ տաքսուց: Շահէն

Մեղրեանն էր: Անշուշտ բոլորիս դէմքին մեր գոհունակութիւնը, ուրախութիւնը կար, կը սպասէինք, որովհետեւ բոլորիս համար հերոս էր Շահէնը: Վերջին իրողութիւնը, որ Շահէնի հետ կապուեցաւ, այդ Արցախի Գերագոյն խորհրդի նախագահի ընտրութիւնն էր, երբ ***Գէորգի Պետրոսեանը*** *մնաց պաշտօնակատար եւ յայորդ իր ընտրութիւնը շատ դժուարացաւ: Այդ Գերագոյն խորհրդի մէջ, իրաւ, մեծամասնութիւն ունէինք, դաշնակցական պատգամաւորները մեծամասնութիւն կը կազմէին, սակայն միաձայնութիւն չկար: Ու թէեւ Գէորգի Պետրոսեանը համակրանք կը վայելէր, սակայն մեծամասնութեան քուէն չունէր, որպէսզի ընտրուէր պաշտօնակատարից Գերագոյն խորհրդի նախագահ: Եւ պահ եղաւ, որ իբրեւ յարմարագոյն լուծում՝ Շահէնի անունն առաջադրուեց իբրեւ Գերագոյն խորհրդի նախագահի թեկնածու: Շահէնն, անշուշտ, համեմատաբար աւելի մեծ քանակի քուէներ ստացաւ, բայց դարձեալ բաւարար չէր նախագահի համար:*

Ուրեմն, անկախ առանձին չըլլանի մարտական ղեկավար լինելուց, նա քաղաքական հեղինակութիւն էր, եւ մենք իրեն այդպէս ընկալած էինք, այսինքն՝ անոնք, որ դուրսէն էին դիտում Արցախի իրադարձութիւնները: Հետեւաբար երբ եկաւ, ընդհանուր ժողովի կազմը Շահէնին դիմաւորեց իբրեւ ազգային հերոս: Ուղղակի Արցախի Կենտրոնական կոմիտէին ընտրած պատգամաւորը՝ **Գարիկ Պետրոսեանը** էդպէս մի տեսակ աչք չէր լցնէր, ինչպէս փիղիքապէս, այնպէս ալ խօսքով: Շահէնը պարզ, էդպէս ընկերական ժողովից դուրս հանդիպումներուն իր համովհոտով խօսելու ոճը, նիստ ու կացը, որ անընդհատ քեզ ինքնավստահութիւն, հողի մարդու, Գիւլիստանի մարդու ամրութիւնը կը ներկայացնէր, բնականաբար իր վրայ կենտրոնացուցած էր բոլորիս ուշադրութիւնը: Երեւի տաքսու պահը յիշեցի, որովհետեւ լայն սրտով մարդ էր եւ հետեւեալ դէպքը պատահած էր: Ինքը ռուս ճամփորդներու ծանօթացած էր օդանաւի վրայ, եւ նրանց հետ զրուցելով իջած էր օդակայանից: Հենց օդակայանի մօտ էր նաեւ երկաթուղային կայարանը: Ինքը որովհետեւ ֆրանսերէն չէր իմանում՝ էդ կողքի ռուսները, որոնք

ֆրանսերէն քիչ մը գիտէին, խնդրած էր, որ իրենք մնան մինչեւ ինքը հանդիպի դիմաւորողներուն. գիտէր, որ պէտք է զինք դիմաւորեն: Բայց այդպէս էլ իրեն մօտեցող չէր եղած: Բայց ինքը ունեցած էր հասցէն մեր ժողովատեղիի: Այդ ռուսները տաքսի կանչած էին, եւ իր վրայ սահմանափակ գումար ունեցած է եւ հակառակ դրան տաքսի կանչած է, եւ տաքսիով եկած էր մինչեւ հոն: Արդէն որ մօտեցաւ, մեր գործավարութիւնը պարտաւորուեցաւ այդ տաքսիի վճարը կատարել, որ ինքը էդ դժուարութիւնից դուրս գայ: Բայց հէնց այդ ազատ վարմունքն իմ պատկերացուցած Շահէն Մեղրեանի մի ակտն էր դա: Թէկուզ իր մօտ գումարի սակաւութեանը, սակայն վճռականութիւն ունեցած էր տաքսի վերցնել եւ հասնել ժողովատեղի, այն վստահութեամբ, որ իր կազմակերպութիւնն իր թիկունքին է:

Ինքն ալ բոլ մարդ էր, սիրտը լայն եւ իր մտածումների ու գործելու մէջ էդ սահմանափակումները չկային: Էդ ժողովը տեւեց 16-17 օր, եւ այդ երեք շաբաթները, էդ օրերին կը զգայիր, որ իշխանական ինչ-որ բան ունի իր մէջ, հոգեբանութիւն, մենթալիտէտ: Ընդհանրապէս ինքը չմասնակցեցաւ մեր օրակարգի բոլոր այն հարցերու քննարկմանը, որոնք մեծ քաղաքականութեան, ռազմավարութեան հարցեր էին, Հայ Դատի ռազմավարութիւն, Խորհրդային Միութեան նկատմամբ մեր ռազմավարական ուղեգիծը: Որովհետեւ ինքը գործնական մարդ էր, քաղաքական հեղինակութիւն ունենալով հանդերձ, կը նախընտրէր այն բանի մասին խօսել, որ գիտէր կամ վստահ էր: Այն բանի մասին, որ ամբողջական ինքնավստահութիւն չունէր, կամ պէտք եղած չափով իրազեկուած չէր, կը նախընտրէր լսել եւ կողմնորոշուիլ տարբեր տեսակէտներ լսելով: Բայց նաեւ խորհրդատուութեան համար կարեւոր կէտէր նշում էր: Այդպիսի մարդ էր Շահէն Մեղրեանը: Եւ պատահեցաւ, որ Արցախի ներքին վիճակը եւ Դաշնակցութեան գործունէութիւնը քննարկելու պահուն Արցախի պատգամաւորը կը դժուարանար հարցերուն պատասխան տալ, բայց զգացում էր, որ չատ տեղայնական եղանակով էր հարցերին լուծում, ելքեր առաջադրում: Եւ հոն արդէն զգացում էր Շահէն Մեղրեանի նկարագրի ցայտուն

գիծը, որ բռնկուն, պոռթկուն, յախուռն բնոյթի գիծ էր: Պոռթկումը, որ ունեցաւ, որ Գարիկի համար ըսի, որ աչք լցնող ներկայութիւն մը չունէր, փիղիքապէս ալ, իր խօսքով, ելոյթներով եւ այլն: Շահէնը խեղճացուց Գարիկին նրանով, որ դրեց այն խնդիրը, թէ պէտք չէ տեղայնական մօտեցում, այսպէս՝ հաղրուժցի, ստեփանակերտցի... մօտեցում մը ցուցաբերել: Այդպէս դուք ո՛չ կրնաք կազմակերպութիւնն այն հզօրութեանը հասցնել, որ պէտք ունինք այս անհաւասար կռիւը յաղթական աւարտին հասցնելու համար, ո՛չ ալ ընդհանրապէս Արցախի ճակատագրին տէր կանգնելու համար անհրաժեշտ հեղինակութիւնը կրնաք հաստատել:

Իր պոռթկումը ժողովին վրայ հիմնական անդրադարձ մը ունեցաւ, որ կրնամ ըսել, որ 93-էն ետք, երբ Արցախի նկատմամբ Դաշնակցութեան քաղաքականութեան մէջ կար որոշակի գիծ մը, կը գար Շահէնի այդ ներդրումէն այդ ժողովին մէջ: Որոշակի այդ գիծն այն էր որ, Արցախը ուժեղ է եւ ներքին տեղայնական, մասնակի անձնականացուած կեցուածքներէն վեր կը բարձրանայ եւ կը հաւաքէ, կը համադրէ ամբողջ կարողականութիւնը: Եւ Արցախի ժողովրդի հասկացողութեամբ, եւ մեր կազմակերպութեան հասկացողութեամբ՝ այս գծի մէջ իր ներդրումը բաւականին ուժեղ եղաւ, եւ օրակարգին իր մասնակցութիւնն ամբողջական էր:

Մասնակի մէկ յուշ կայ, որ ուղղակիօրէն կ՚առընչուէր «Դրօշակին», կ՚ուզեմ այս առիթով նաեւ այս յուշն արձանագրել: Այս շրջանին, երբ Հայաստանի հայրենական մեր կառոյցն իր առաջին քայլերը կը նետէր, Բիւրօն որոշած էր Հայաստանում ունենալ պաշտօնաթերթ երկրին մէջ: «Ազատամարտ»ի հրատարակութեան որոշումը, նախքան չաբաթաթերթի հրատարակումը Բիւրօն մամուլով արդէն հրապարակած էր: Եւ այդ առաջին ժողովն էր, որ գումարուեցաւ մեր Հայաստանեան կառոյցի բացայայտումէն ետքը: Ընդհանուր ժողովը պիտի յստակեցնէր այն հարցը, թէ ինչպէս պիտի Բիւրօն ունենայ երկու պաշտօնաթերթ, մանաւանդ կար մտավախութիւնը Բիւրոյական երկատուածութեան մասին՝ Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան

միջեւ, եւ այդպիսով ստեղծած պիտի ըլլանք պաշտօնաթերթ Սփիւռքի համար եւ Հայաստանի համար: Բիւրօն, անշուշտ, այդ պիտի բաժանման միտում չէր ունեցած, սակայն քայլերը կը գնային այդ ուղղութեամբ: Եւ այդ քննարկումի օրակարգն էր, եւ այդ օրակարգի ընթացքին, որովհետեւ Հայաստանի նիւթական վիճակը թաւալգլոր անկումի մէջ էր արդէն, Հայաստանի պատգամաւորութեան մէջ երբ իմացած էին «Դրօշակի» տարեկան բիւջէն, թէ ինչ թիւ կը կազմէր, որ Հայաստանի էդ ժամանակուայ ըմբռնողութեամբ մի ֆանտաստիկ գումար էր թուում: Որովհետեւ իրենց առաջին մասնակցութիւնն էր Ընդհանուր ժողովին, քանզի 88 թուականին Հայաստանեան կառոյցը դեռեւս գոյութիւն չունէր, վախվխելով եւ զգուշութեամբ կ՚արտայայտուէին, որպէսզի կարգէն դուրս, մեր աւանդութիւնէն դուրս ընկած չլինեն: «Դրօշակ»ի բիւջէի հարցով Հայաստանեան ընկերներէն մէկը հարց դրաւ, որ կրճատէք հաստիքը բիւջէի նուազեցման համար: Այդ ժամանակ Բիւրոյի ներկայացուցիչն ասաց, որ Հայաստանի օրինակաւ մի՛ չափէք սփիւռքեան կառոյցի եւ մեր մամուլի գործունէութիւնը, որովհետեւ նշեց, թէ ինչպէս կրճատենք, երբ մէկուկէս հոգիով լոյս կը տեսնի այս թերթը: Ժողովի մէջ Շահէնն արդէն չդիմացաւ, ձայն առաւ եւ ասաց, թէ ընկերոջ համար ես մի բան պատմեմ, իրական դրուագ պատմեմ, որպէսզի չիմացած բաների մասին ելոյթներ չունենան ընկերները: Եւ պատմեց, որ իրենց շրջանի մէջ Սովետին ժամանակ, որ տեղեկագիրներ կ՚ուղարկուէին Կրեմլ, գրել էին, որ Շահումեանի այսինչ գիւղի մէջ ձիու գլխաքանակը կիսով չափ փչացել է: Մեծ իրարանցում էր ստեղծուել, յանձնաժողով են ստեղծել, որ տեսնեն ինչ համաճարակ է, պատճառը որն է, որ ձիու ֆոնդը կիսով չափ փչացել է: Գալիս են Արցախ եւ ձիու ֆոնդ են ասում, իսկ մարդիկ զարմացած իրար են նայում, թէ էս ինչ բանի մասին են խօսում: Ի վերջոյ գիւղացիներն ասել են, որ մենք մի ձիապահ ունենք, նա էլ սարում է, գնացէք գտէք: Երբ գնացել են այդ մարդու մօտ, նա ասել է.«Այ ձեր ցաւը տանեմ, էնտեղից էստեղ գալու ի՞նչ պէտք ունէիք, երկու ձի ունէի, մէկը սատկել է եւ ձիու ֆոնդը կիսով չափ փչացաւ»:

Սա տիպիկ Շահէնի ոճն էր, իր ասելիքը համով ասելու, տեղին ասելու, եւ առանց վիրաւորելու, համախոհուքիւն առաջացնելու, չրջագիծ մը պահպանելու»:

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ. *«Շահումեանի չրջանը (կամ Գիւլիստանի մելիքութիւնը) միշտ ինչ-որ բանով տարբերուել է մնացեալ Ղարաբաղից: Կա՛մ դա «ոչ այնքան» Ղարաբաղ է, կա՛մ լաւագոյն Ղարաբաղը... Շահումեանի չրջանը Ղարաբաղի համապատկերի վրայ առանձնանում է ինքնաբաւութեան բաւական բարձր մակարդակով, ուր պահպանուել է իրենց հողի նշանակութեան գիտակցումը:*

*Ահա այս հողում, այսպիսի ժողովրդի մէջ էին ապրում Մեղրեանները՝ մարդկանց առանձնայատուկ մի տեսակ, ովքեր հոգու խորքում համոզուած են, թէ իրենք են Գիւլիստանի մելիքութեան իսկական տէրը, որ յատկապէս իրենք կարեւորագոյն վճիռներ ընդունելու իրաւունք ունեն եւ պատասխանատուութիւն պէտք է կրեն իրենց ժողովրդի առաջ: Եւ **բոլոր Մեղրեաններից «ամենաՄեղրեանը» Շահէնն էր**, ով ճակատագրի կամօք առաջնորդեց իր ժողովրդին, նրա պայքարը պատմութեան ամենադրամատիկական եւ ամենաողբերգական ժամանակահատուածում: Եթէ փորձես տիպիկ գիւլիստանցի ընտրել, ապա, անկասկած, Շահէնն է լինելու:*

*...կարեւորը, որ հասկանում էր այդ մարդը՝ «**...օգնութեան են գնում միայն այն մարդուն ու ժողովրդին, ով ուզում է պաշտպանուել, ով ինքն է ուզում փրկել իր հողն ու իրեն**»: Այս սկզբունքը շատ արդիական էր, քանզի Ստեփանակերտում, Երեւանում (որտեղ Շահումեանը սկսեցին համարել Ղարաբաղի մասը՝ չարժման առաջնորդների հետ երկարատեւ պայքարից յետոյ) քիչ չէին նրանք, որ Շահումեանը համարում էին իրենց հիմնախնդիրներին բեռ դարձած աւելորդութիւն: Անհաւանական պայմաններում **Շահէն Մեղրեանին յաջողուեց ապացուցել, որ Շահումեանը Հիւսիսային Ղարաբաղի ոչ պատահական պահպանուած կղզեակ է, որ Շահումեանը ինքնաբաւ ժողովուրդ ունի, կարող է պաշտպանել ինքն իրեն:***

*Այդ համոզուածութիւնը չէր լքում նրան ո՛չ Գետաշէնի հայաթափման ողբերգական օրերին, ո՛չ 1991 թուականին Շահումեանի գիւղերի դատարկման օրերին: Երբեմն թւում էր, թէ նա այնպիսի արարքներ է գործում, որ աւելի շատ դատապարտուածի գործողութիւններ են յիշեցնում, սակայն յետոյ գալիս էր այն ըմբռնումը, որ նա յամառօրէն կեանքի էր կոչում իր սկզբունքը. «**օգնութեան են գալիս միայն նրանց, ովքեր պաշտպանում են իրենք իրենց**»: Եւ նա հասաւ իր ուզածին՝ ողջ Հայաստանն էր պաշտպանում Շահումեանը:*

*...Նա ամէն կերպ խուսափում էր «քաղաքական գործիչ» պիտակից, նա տհաճութեամբ էր մասնակցում քաղաքական յարաբերութիւններին՝ որպէս այդպիսիք, սակայն, անկասկած, կայացել էր որպէս քաղաքական գործիչ: Շատերը չուտով համոզուեցին, որ նա քիչ չանքեր չի դրել իր մէջ ճնշելու համար քաղաքական հաւակնութիւնները, ինչը պայմանաւորուած էր ոչ միայն Շահումեանի չրջանը, այլեւ ողջ Ղարաբաղը ղեկավարելու իր առաքելութեան գիտակցմամբ: 1992 թ. ԼՂՀ ԳԽ նստաշրջանի ժամանակ նրան առաջարկեցին ընտրուել ԳԽ նախագահ: Նա ընդունեց այդ առաջարկութիւնը եւ, չնայած ԼՂՀ ԳԽի անձամբ իր վրայ դործադրուած ճնշմանը, չնայած չանտաժին եւ «**Շահումեանի ճակատագիրը դեռեւս պարզ չէ**» անխիղճ յայտարարութեանը, չհրաժարուեց մինչեւ վերջ նախագահի պաշտօնի համար պայքարելու մասին տուած խօսքից: **Դեռ մինչեւ աղէտը, միգուցէ այն զգալով, Շահէնն ասաց. «Դուք կարծում էք, եթէ մեզ վռնդեն այս հողից, ես կը հաշտուե՞մ դրա հետ, Երեւանում ջոկատ կը ստեղծեմ, եւ կռիւը կը շարունակուի»**: Նա կատարեց այն ամէնը, ինչ պէտք է կատարէր: Նա պահեց խոստումը, որ տուել էր ինքն իրեն: Ռուսական զօրքերի միջոցով մտնելով Շահումեանի չրջան՝ **ազերիները Գիւլիստանում պայթեցրին եկեղեցին եւ դրա մօտ գտնուող մելիքների գերեզմանոցը: Դրանով ամենամեծ հարուածը հասցուեց այս մելիքութեան ինքնաբաւութեանը:** Բայց քանի դեռ կենդանի էր Շահէնը, ինչ-որ մի անորսալի ուժ էր միաւորում շահումեանցիներին: Ուր են հիմա այդ մարդիկ,*

*այդ ղարաբաղցիները՝ որակի նշանով: Նրանք իրենց դարն ապրելու են վտարանդիութեա՞ն մէջ, թէ՞ ապրելու են իրենց հողի վրայ: Դա կախուած կը լինի եւ միշտ կախուած է լինելու այն բանից, թէ հողը տէր ունի արդե՞օք, որը կարիք չունի, որպէսզի իրեն ընտրեն ու ճանաչեն որպէս տէր» (**«Գիւլիստանցի Շահէն Մեղրեանը»,** «Գոլոս Արմենիի», 17 ապրիլի 1997 թ.):*

Սամուէլ Բաբայեան. *«Շահէն Մեղրեանը մեծ հայրենասէր էր, ականաւոր ռազմական եւ քաղաքական գործիչ: Արցախեան շարժման հէնց սկզբից Շահէն Մեղրեանը դառնում է Շահումեանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի կազմակերպիչը: Ակտիւ գործունէութեան պատճառով 1990 թ. յունուարի 9-ին Մարտունաշէն գիւղի մօտ նրան պատանդում են, սակայն չուտով Շահէնի ընկերները կարողանում են ազատել նրան (փոխանակման միջոցով): Շահէնն աչքի էր ընկնում առինքնող ղեկավարի բնատուր ձիրքով, մարդկանց, մարտիկներին իր ետեւից տանելու կարողութիւններով:* ***Նա կարողացաւ միասնական հրամանատարութեան ներքոյ համախմբել Շահումեանում գործող տարբեր ֆիդայական ջոկատները:*** *Կազմակերպական ունակութիւնների չնորհիւ* ***նա յաջողել էր նաեւ օդային փոխադրակապ հաստատել Հայաստանի հետ, եւ յաջողութեամբ զէնք ու զինամթերք էր տեղափոխում Շահումեան, իսկ այնտեղից էլ Արցախի միւս շրջանները:***

Շահէնը չունէր ռազմագիտական կրթութիւն, սակայն փայլեց նաեւ իր ռազմական տաղանդով: *1991 թ. յունիսին ադրբեջանական ՕՄՕՆը բռնազաւթել էր Շահումեանի շրջանի հայաբնակ Բուզլուխ, Մանաշիդ, Էրքէջ գիւղերը: Շահէնը կազմում է հայկական գիւղերի ազատագրման մարտական գործողութեան կիրառական ծրագիրը (օպերատիւ պլան) եւ հրաշալիօրէն իրագործում: 1992 թ. փետրուարին Ադրբեջանը ստանում է նախկին խորհրդային Զորրորդ բանակի ամբողջ զինանոցը. չուտով կարողանում է նաեւ վարձել խորհրդային զօրքերում ծառայող սպայակազմի զգալի մասին: Միեւնոյն ժամանակ Հիւսիսային Արցախի ինքնապաշտպանական ուժերը*

նախապատրաստուում էին մի շարք մարտական գործո-ղութիւնները իրականացնելու եւ վերադասաւորում էին իրենց ուժերը: Սակայն 1992 թ. մայիս, յունիս ամիսներին հակառա-կորդը, նշուած խորհրդային բանակի զօրամասերի օժանդա-կութեամբ, անցաւ հակայարձակման եւ չուտով հայաթափեց Շահումեանի շրջանն ու Գետաշէնի ենթաշրջանը:

Հայկական կողմի պարտութեան մեղքը Մեղրեան Շահէնինը չէր: Հայկական ուժերը պարզապէս այդ ժամանակ վերջնական կազմաւորման չէին հասել եւ ի վիճակի չէին դիմակայելու բազմափորձ խորհրդային կանոնաւոր բանակին:

*Շահումեանի անկումից յետոյ Շահէնը ձեռնարկում է պար-տիզանական մարտավարութեան կռիւներ եւ ձեւաւորում է «Եղնիկներ» ջոկատը: Պատսպարուելով անտառներում՝ նա իր փոքրաթիւ զինուորներով Գիւլիստանի մատոյցներում մեծ վնաս էր հասցնում հակառակորդին: Պարտիզանական կռիւնե-րը նա շարունակեց անգամ այն ժամանակ, երբ ընկել էր Մարտակերտը: Այդ դժուարին ժամանակաշրջանում **Շահէնը եւ իր ընկերները** (ապագայ գեներալներ **Զալեան Սերգէյ, Յովասափեան Շահէն** եւ այլք) **կարողացան իրենց ուղղու-թեամբ բեւեռել հակառակորդի ուշադրութիւնը՝ դրանով իսկ հնարաւորութիւն տալով Արցախի բուն պաշտպանական շրջաններին կազմաւորելու եւ արդիւնաւէտ կերպով վերա-դասաւորելու իրենց ուժերը**: Յաւօք, 1993 թ. ապրիլի 17-ին Շահէնը զոհուեց ուղղաթիռով Երեւան թռչելու պահին: ԼՂՀ պաշտպանութեան բանակի ձեւաւորման այդ սկզբնական ու ծանր փուլում Շահէնը ունեցաւ իր նշանակալի ներդրումը, որը մենք բոլորս պարտաւոր ենք յիշել ու գնահատել»:*

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- *Շահումեանում խնդիրներ շատ կային, ադրբեջանական կողմի յարձակման արդիւնքում մի ան-մեղ բնակիչ էր զոհուել:*

*Այն ժամանակ ես Բիւրոյի լիազօր ներկայացուցիչն էի Հա-յաստանում (Դաշնակցութիւնը նոր էր բացայայտուել, 1990 թ. օգոստոս): Մեր գրասենեակ (Միասնիկեան 2) եկաւ **Շահէն***

*Յովասափեանը ու հետս խօսեց **Շահէն Մեղրեանի** անունից: Ներկայացրեց իրավիճակը եւ օգնութիւն խնդրեց: Մենք արդէն իսկ զբաղւում էինք զարաբաղեան պայքարով, Արցախի մէջ կառոյցներ ունէինք (Ստեփանակերտ, Հադրութ, Մարտակերտ, Մարտունի), ունէինք նաեւ ձեւաւորուած ինքնապաշտպանական խմբեր, որոնց օգնում էինք, մատակարարում անհրաժեշտը: Շահումեանում սակայն ներկայութիւն չէինք: Շահումեանն ինձ համար անծանօթ վայր էր: Եւ հետաքրքրականն այն էր, որ իմ անմիջական շրջապատում գտնվող տղաներին եւս Շահումեանն անծանօթ էր: Որոշեցինք գնալ օգնութեան:*

*Մի շարք պայմաններ առաջարկեցի Շահէն Յովասափեանին: Վերջինս փոխանցեց Մեղրեանին եւ համաձայնութեան գալով, մօտաւորապէս 40 (ստոյգ թիւը չեմ յիշում) զինուած տղաներով գնացինք Շահումեան (Գիւլիստան): Սեպտեմբերի 2-ին (յետոյ նշանաւորուեց այդ օրը, դրա համար տպաւորուել է մէջս) ուղղաթիռը վայրէջք կատարեց Գիւլիստանում: Այնտեղի անտառներում հիմնեցինք մեր առաջին բանակավայրը (բազա): Փորձեցինք հաստատուել: Բնութիւնը հրաշք էր: Հէնց այստեղ էլ առաջին անգամ հանդիպեցի **Շահէն Մեղրեանին**՝ ինքնավստահ, շրջապատում հեղինակութիւն, յարգանք վայելող մի անձնաւորութեան: Արդէն մի քանի ամիս էր, ինչ ես հաստատուել էի Հայաստանում (մայիս) եւ Շահէն Մեղրեանն ինձ համար առաջին հերթին շրջանի կողմից կուսակցութեան քարտուղար էր:*

Ճիշտ է, բաւական քանակութեամբ յաւելեալ զէնք ունէինք: Սակայն պայման էինք դրել, որ զէնքը տրամադրուելու է միայն տեղացի կառուցին, միայն նրան, ով մեզ մօտ զինուորական պատրաստութիւն է անցել: Տարբեր շրջաններից խմբեր, տղաները սկսեցին մարզումներ անցկացնել եւ ով քննութիւնը յաջող էր յանձնում, նա էլ զէնք էր ստանում: Ինձ հետ էին երկուերեք անձինք, որոնք կազմակերպական գործով էին Շահումեան եկել: Հետաքրքրականն այն է, որ թէպէտ մենք Շահէն Մեղրեանին վստահելով էինք շրջանում յայտնուել, սակայն հէնց նրա գիտութեամբ, իրեն շրջանցեցինք, եւ փորձեցինք

ներքեւից կազմակերպուել: Այսինքն փոխանակ յենուէինք Շահէն Մեղրեանի վրայ՝ կազմակերպութիւն ստեղծելու նպատակով, հակառակը՝ մեր գործիչները սկսեցին աշխատել տեղի բնակչութեան, կռուող տղաների հետ:

Խմբերն արդէն ձեւաւորուել էին, երբ Շահէն Մեղրեանն ընդունուեց Դաշնակցութեան շարքերը: Նա աւելի ուշ ընդունուեց, քան միւսները:

Ի սկզբանէ ինձ համար պարզ էր, որ Շահէն Մեղրեանը քաջ եւ ազդու մարդ է: Չեմ կարող ասել, թէ ռազմական, ռազմավարական մեծ կարողութիւններ ունէր, բայց ղեկավար էր բառիս բուն իմաստով, որովհետեւ ***կարողանում էր ամէն ինչ կառավարելի դարձնել***: Նա ընդունուած հեղինակութիւն էր: Սա, կարծում եմ, նրա գլխաւոր յատկանիշն էր: ***Ունէր շրջանային մակարդակից շատ աւելի բարձր ղեկավարման չնորհք: Վստահ եմ, որ եթէ այսօր ողջ լինէր, բարձր դիրքերում կը լինէր: Նրա կարողականութիւնը թէ՛ քարոզչական էր, թէ՛ կազմակերպական:***

Շահումեանը բախումների վայր էր, եւ մենք շատ արագ այնտեղ զինեալ ուժեր (չուրջ 250 հոգի) ստեղծեցինք: Շահէն Մեղրեանը լաւ յարաբերութիւնների մէջ էր շրջանում տեղակայուած ռուսական զօրամիաւորումի հրամանատարութեան հետ: Բնականաբար կապեր ունէր նաեւ Հայաստանում: Այդ ժամանակ, այնտեղ մեզ հետ տեւական ներկայութիւն էր ***«Տիգրան Մեծ»*** ջոկատը, որը եթէ չեմ սխալւում, Բուզլուխ գիւղի մէջ էր հաստատուած: Մնացածը տեղական խմբերն էին ու մեր խումբը, որոնք իրար համախմբուած ողջ շրջանի կազմակերպական ու ինքնապաշտպանական գործն էին ձեռնարկում:

Մեր կառոյցն այնպիսին էր, որ ամէն երկու ամիսը մէկ խմբերը փոխւում էին: Խմբերի փոփոխմամբ փոխւում էին նաեւ հրամանատարները: Ընդհանուր հրամանատարը Շահէնն էր, բայց առանձին ջոկատներ ունէին իրենց պատասխանատուները Հայաստանի տարբեր շրջաններից, Սփիւռքից (մի քանիսը), նոյնիսկ Ջաւախքից տղաներ կային: ***Շահումեանը ասես***

դարձել էր համահայկական գաղափարական մարտիկների մի-ջավայր: *Այդ առումով հրաշալի մթնոլորտ էր տիրում:*

Շատ մանրամասներ կարող եմ պատմել, բայց կարծում եմ, որ դրանք այնքան էլ էական չեն: Այն, ինչ կատարուեց, առա-ջին հերթին, մեր եւ Հայաստանի իշխանութիւնների միջեւ ստեղծուած հակասութիւնն էր: Խմբերը նոր էին հաստատուել, եւ պէտք է ասեմ, որ խմբերին Շահումեան էինք ուղարկում կի-սով չափ գաղտնի: Նրանց օդակայանից ուղղաթիռներով էինք փոխադրում, բայց մինչեւ օդակայան հասնելը գաղտնի էր, այսինքն եթէ ձերբակալէին, կը ձերբակալուէինք:

*Առաջին կազմակերպական դրսեւորումները որ եղան, **Լ. Տէր-Պետրոսեանը** Գերագոյն խորհրդի նախագահն էր, ինձ, իբրեւ պատասխանատու, իր մօտ հրաւիրեց եւ պահանջեց, որ խմբերը յետ կանչուեն: Հարցրեցի՝ ինչո՞ւ: Պատասխանեց՝ կուսակցութիւնը քաղաքական է եւ չի կարող մարտական գոր-ծունէութեամբ զբաղուել: Ասացի՝ Ֆրանսիայում եւս մարտա-կան խումբ ունենք, նրանց էլ յետ կանչե՞նք: «Ֆրանսիան ինձ չի հետաքրքրում»,- պատասխանեց նա: «Եթէ Ֆրանսիան չի հետաքրքրում, Ադրբեջանն ինչո՞ւ պիտի հետաքրքրի»,- ասացի ես: Դրանից յետոյ խօսակցութիւնը «վատ» ընթացք ստացաւ, Լ. Տէր-Պետրոսեանն սկսեց նոյնիսկ սպառնալ:*

*Յետոյ ես հանդիպեցի **Վազգէն Սարգսեանին,** որի հետ զրոյցն աւելի հեշտ ստացուեց:*

*Պէտք է ասեմ, որ **ի սկզբանէ կար լարուածութիւն, որի հիմքը նախանձն էր, խանդը**: 1991 թուականի աշնանն էր, Գետաշէնն արդէն ընկել էր, երբ Վազգէն Սարգսեանն առաջին անգամ համապատասխան մարտական խմբերով եկաւ Շահումեան: **Տեղի ունեցաւ համադրուած աշխատանք**: Մի բան պարզ էր, **մենք մեզ Հայաստանի իշխանութեան հետ հակադրութեան մէջ չէինք տեսնում, եւ ոչ էլ մրցակցութեան**: Մեր քաղաքականութիւնն այլապէս այնպէս էր ձեւաւորուել, որ **մենք Հայաստանի Հանրապետութեան իշխանութեանը պէտք է պարտաւորեցնէինք զբաղուել Ղարաբաղով**: Այն անկախ ուժը, որ Ղարաբաղում գոյութիւն ունէր, ուղղակի*

պարտադրում էր, որ Հայաստանի իշխանութիւններն աւելի ակտիւ մասնակցութիւն ցուցաբերեն: Հէնց այն փաստը, որ Շահումեանի մէջ դէպքերը սկսել են 1990-ի աշնանը եւ տեւել մինչեւ 91-ը՝ դրա ապացոյցն է: Այսինքն, մի քիչ կոպիտ ասեմ, **կռուողը պարտաւորեցրեց պետական անճանց իրենցով զբաղուել: Եւ որովհետեւ կռուողը անկախ էր եւ վիճակ ստեղծող՝ պետականութիւնը դրանից չէր կարող ճերբազատուել: Դրա համար տէր կանգնել էր պէտք: Նախ պէտք է տէր կանգնէր, որ յետոյ կարողանար ստեղծել կացութիւն**: Սա մենք գիտակցում էինք հէնց սկզբից: Եւ ամէն անգամ, երբ Հայաստանի իշխանութիւնը փորձ էր անում այնտեղ դերակատարութիւն ունենալու, մենք ողջունում էինք այդ քայլը: Դա եղաւ թէ Շահումեանում եւ թէ հետագայում նաեւ Ղարաբաղում:

Հրամանատարները, որոնք մեր կողմից էին նշանակուած, յետոյ ամբողջութեամբ ենթակայ դարձան Պաշտպանութեան նախարարութեանը: Սա ամենավառ ապացոյցն էր այն բանի, որ մենք կորցնում էինք զինուորական ղեկավարութեան հնարաւորութիւնը, բայց մենք այդպէս չէինք ընկալում՝ մենք իրագործում էինք մեր ծրագիրը. սա էր ճշմարտութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը Ղարաբաղի պայքարն իրենն էր համարում: Սա էր մեր ի սկզբանէ հետապնդած նպատակը:

Շահումեանի անկումը մէկ-երկու օրուայ ընթացքում տեղի չունեցաւ: Զգում էինք մօտալուտ վտանգը եւ մինչեւ վերջին մարտը, մինչեւ Շահումեանի անկումը, Շահէն Մեղրեանը գրեթէ ամէն օր (այդ ժամանակ մենք ռադիոկապով էինք կապի մէջ հրամանատարութեան հետ) օգնութիւն էր խնդրում: Եթէ թերթէք այդ օրերի մամուլը, կը տեսնէք, որ Ղարաբաղի, Շահումեանի, Գետաշէնի հարցով ամենօրեայ հանրահաւաքներ էին տեղի ունենում: Դրան զուգահեռ, մենք մօտ հարիւր հոգուց կազմուած, պատրաստուած խումբ ունէինք օդակայանում՝ Շահումեան մեկնելու նպատակով: Սակայն այդ թռիչքը այդպէս էլ տեղի չունեցաւ: *Բերեցին զանազան պատճառաբանութիւններ, միայն թէ թռիչքը տեղի չունենայ: Ճարահատ փորձեցինք Ղարաբաղից մտնել Շահումեան: Սակայն ուշա-*

ցանք: Զինամթերք չկար, սակայն հարցն այլ էր. քանի դեռ կռւում էինք ադրբեջանական բանակի դէմ, խնդիր չունէինք, սակայն երբ ադրբեջանական ու ռուսական բանակը միասնաբար սկսեցին կռուել մեր դէմ, յայտնուեցինք թոյլ կարողութեան դիրքերում: Գետաշէնի անկումից յետոյ, Շահումեանի անկման օրերին, զգալի էր, որ պատերազմը լինելու է ռուսական բանակի եւ կամ Խորհրդային Միութեան հետ: Հետեւաբար ունէինք յաւելեալ ուժերի անհրաժեշտութիւն:

Մեր պատմութեան ամենափայլուն էջերից մէկը՝ դա Հայդուկային կռիւն էր: *Պատկերացրէք, կիչանից այն կողմ թշնամին գրաւել էր ողջ Շահումեանի շրջանը եւ Մարտակերտի հիւսիսային շրջանը, եւ թշնամու սրտում, Գիւլիստանի անտառների մէջ, մենք ծաւալեցինք հայդուկային կռիւ: Տղաները ուղղաթիռներով իջնում էին անտառների մէջ: Շուրջբոլոր թշնամու զօրքերն էին, ոչ մի հայկական գիւղ, աւան չէր մնացել: Եւ թշնամու սրտում հայդուկային կռիւ ծաւալուեց:*

Դաշնակցութեան պատասխանատու մարմնի որոշումով եւ յանձնարարութեամբ այդ գործը սկսուեց: Շահէն Մեղրեանն այս գործում մեծ դերակատարութիւն ունէր: Ծանր բեռ էր դա Դաշնակցութեան համար, որովհետեւ ամէն բան պայմանաւորուած էր կուսակցութեան հնարաւորութիւններով: Յիշում եմ, առաջին երկու յարձակումները երբ եղան, դրան չէին հաւատում ոչ մեր պաշտպանութեան եւ ոչ ադրբեջանական պաշտպանութեան նախարարութիւնները: Նրանք չէին պատկերացնում, որ կարող են լինել խմբեր եւ նմանօրինակ պայքար ծաւալել: Հերոսական պայքար էր: Մի օր հաւանաբար կը գտնուի մէկը, ով այդ ամէնի մասին կը գրի: ***Թշնամու սրտի մէջ ծաւալած հայդուկային կռիւը՝ չահումեանցիների եւ Շահումեանի շրջանի մարտիկների միջոցով, ոսկէ տառերով պէտք է գրուի:*** *Յաւօք, հէնց այդ կռուին էլ զոհ գնաց Շահէնը եւ դրանով կարծես պայքարը թիկունքից հարուած ստացաւ, չշարունակուեց: Շահումեանի անտառներում հայդուկային կռիւների կազմակերպումն ու ծաւալումը Շահէն Մեղրեանի կերպարի դրսեւորման ամենավառ ապացոյցն էր: Քաջութիւն,*

համարձակութիւն, կազմակերպուածութիւն, հայրենիքի հան-դէպ նուիրուածութիւն. սրանք այն յատկանիշներն էին, որ նա իր մէջ մարմնաւորում էր: Շատ զոհեր եղան, սակայն կան նաեւ կենդանի մնացած շատ անձինք: Կենդանի թէ մեռած՝ ամենքն էլ հերոսներ են:

Յաւօք սրտի, դա անհրաժեշտ ձեւով չկարեւորուեց: Գուցէ այն պատճառով, որ այդ գործի նախաձեռնութեան մէջ աւելի շատ կուսակցութիւնն էր ղեկավարում: Կարծում եմ՝ սա անար-դար մօտեցում է, որովհետեւ **Հայդուկային կռիւը վերաբերում է հայ ժողովրդին, այն հայ ժողովրդի հպարտութիւնն է:** *Հայդուկների ցուցաբերած համարձակութիւնն ու քաջութիւնը կարող է այսօրուայ մեր բանակի համար դաստիարակչական լինել: Հետեւաբար պէտք է այդ պայքարի կռիւը ներկայացնել իր բոլոր դրսեւորումներով ու մանրամասներով. վստահ եմ, այն ամենաուսուցողական դասը կը լինէր մեր սպայական կազ-մի համար:*

Մարդիկ իրենց տուն-տեղը թողած գնացին մի այնպիսի վայր, ուր չկար նահանջի ճանապարհ, մի վայր, ուր կա՛մ մահ էր, կա՛մ ազատութիւն:

Հայդուկային կռիւը ես առանձնացնում եմ Ղարաբաղեան պատերազմի ողջ ընթացքից: Ասեմ նաեւ, որ Շահումեանի պայքարը առընչւում էր ղարաբաղեան պայքարի հետ, այն անջատ չէր Ղարաբաղի ազատագրական պայքարից: Նոյնիսկ կարող եմ ասել, որ դա էր պայմանաւորում Ղարաբաղի անվտանգութիւնը եւ պայքարին աւելի վճռական բնոյթ տալիս: Շանրութեան կենտրոնը փոխադրուելով Շահումեանի շրջան, Ղարաբաղին ինքնապատրաստման ժամանակ էր տուել: Իսկ Շահումեանի օրինակը Ղարաբաղին հնա-րաւորութիւն տուեց նաեւ ինքնակազմակերպուել:

– Դուք օգնում էիք Շահումեանի պայքարին: Իսկ Հայաստա-նի Հանրապետութիւնը մի բան արե՞ց, որ Շահումեանը չընկնի:

– *Մենք չէինք օգնում այդ պայքարին, մենք այդ կռուի մէջ էինք: Մենք այդ կռուի մասնակիցն էինք, կազմակերպիչը: Չեմ սիրում մեզ մեծարելու համար ուրիշներին նսեմացնել, դա*

սիրուն բան չի: Վստահ կարող եմ ասել, սակայն, որ Հայաստանի իշխանութիւնները կարող էին աւելին անել: Քիչ անելու մէջ որեւէ միտում չեմ ուզում տեսնել: Ջեմ ուզում հաւատալ, որ որեւէ հայ մարդ հայրենիքի նկատմամբ կարող է այլ վերաբերմունք ունենալ: Ջունեմ այն համոզումը, թէ դաւաճանութիւն եւ կամ նման կարգի բան է եղել: Վստահ եմ, որ ինչ-որ առումներով կարելին էր աւելին անել, բայց չարուեց: Հաւատում եմ, որ այդ պատերազմում կարելի էր աւելի մեծ ներդրում ունենալ եւ նաեւ աւելի մեծ կարեւորութիւն տալ այդ պատերազմին: Բայց հաւատալ, թէ դաւաճանութիւն է եղել, չեմ կարող: Եւ Աստուած չանի, որ մի օր պարզուի, որ ես սխալուել եմ:

Շահէն Մեղրեանը Շահումեանի համար պատրաստ էր դիմել ամենքին: Այն, ինչ մեզանից ուզում էր, տանապատիկը Հայաստանի իշխանութիւններից էր ուզում: Յատկապէս վերջին շրջանում, 1991 թ. աւարտից յետոյ, **երբ Վազգէն Սարգսեանը անճամբ այնտեղ եկաւ, Շահումեանի պայքարը ամբողջութեամբ այլեւս մերը չէր, այլ համընդհանուր պայքար էր: Կար ամբողջական համագործակցութիւն Պաշտպանութեան նախարարութեան հետ:** Բնականաբար ակնկալիքները շատ մեծ էին: Ես չգիտեմ, թէ ուղղաթիռներն ինչու չթռան. իսկապէ՞ս հնարաւոր չէր, եղանա՞կը լաւ չէր, անկարելի՞ էր, թէ իրենք ինչ-որ բան նախապէս իմանալով՝ յոյսները կտրել էին եւ, այդ պատճառով, աւելորդ համարեցին որեւէ ուժի տեղափոխումը:

Օդաչուների ներդրումը ղարաբաղեան պայքարում շատ մեծ էր: Յաւով պէտք է ասեմ, որ նրանց արածը անհրաժեշտ չափով չի արժեւորուել: Այո, մենք վճարում էինք օդաչուներին, որպէսզի ուղղաթիռները Ղարաբաղ թռչեն: Մենք վճարում էինք, որ գնանք ու մեռնենք: Սա ես, իհարկէ, կատակով էի ասում, բայց դա այդպէս էր: Ջէնքը գաղտնի օդակայան հասցնելու համար վճարում էինք, ուղղաթիռի համար վճարում էինք, Ղարաբաղ գնալու ու մեռնելու համար եւս վճարում էինք: Ամէն ինչ արւում էր գաղտնի: Վազգէն Սարգսեանն

ամէն ինչից տեղեակ էր: Գուցէ զարմանաք, բայց այդ օրերին նա կարող էր ինձ զանգել ու հարցնել՝ այսինչ զէնքի այսինչ փամփուշտը կարո՞ղ է ունենաք: Եւ կամ զանգել եւ զինեալ, կռուող տղաներ եւ կամ զինամթերք խնդրել: Դրանով հանդերձ, եթէ մէկն ու մէկի մօտ զէնք յայտնաբերէին, անպայման կը ձերբակալէին: Եւ այդպիսի դէպք եղել է, երբ զէնք յայտնաբերելուց յետոյ ձերբակալել են, յետոյ ենթարկել ծեծի:

Մենք դեռ 1989 թ.-ից սկսել էինք օգնել Ղարաբաղին զինամթերքով: 1988 թ.-ից Ղարաբաղում ունէինք կուսակցական բջիջ, որոնց արտասահմանից տրամադրում էինք ինքնապաշտպանական միջոցներ: Հայաստանում դեռ բացայայտուած չէինք, գաղտնի էինք: 1990 թ.-ին, երբ առաջին կուսակցական միաւորումները Հայաստանում ձեւաւորուեցին, այդ գործը ստացաւ շատ աւելի կազմակերպուած բնոյթ: 1990-ին դեռեւս Խորհրդային Միութիւն էր: Անկախութեան չրջանում այդ աշխատանքները աւելի դիւրին դարձան:

*Ես հաւատացած եմ, որ Շահէնի կոմունիստ լինելու հանգամանքը իր ժողովրդին ծառայելու միջոց է եղել: Իսկ դաշնակցական եղել է, թէ ոչ, ես կ՚ասեմ՝ այո, եղել է, որովհետեւ **դաշնակցական լինելու համար կուսակցական դառնալը պարտադիր չէ: Նա իր հայրենիքի ու իր ժողովրդի ազատագրումը նպատակ դարձնելով, արդէն իսկ դաշնակցական էր**: Շահէնի համար հայրենիքն ու ժողովուրդը իր կեանքի գերնպատակն էր: Սա մարդկային այլ որակի մասին է խօսում: Սա չինովնիկ-ղեկավարի մասին չի խօսում: Սա գաղափարական մարդու կերպարի մասին է խօսում: Երբ ես Շահէնի հետ խօսում էի հայդուկային կռուի մասին, նա ասում էր, որ եթէ սա էլ չանենք, մենք պատմութեան կողմից ամբողջութեամբ կը դատապարտուենք: Այն հնարաւորութիւն է տալիս մեզ ամէն ինչին վերատիրանալու: Ես հաւատացած եմ դրանում: Ես հաւատում եմ, որ Շահումեանը մերն է լինելու: Ես համոզուած եմ, որ Շահումեանը ազատագրուելու է: Հաւատացած եմ, որ վերականգնուելու են Լեռնային Ղարաբաղի ամբողջական սահմանները: Եւ շատ կարեւոր է, որ սրան բոլորը հաւատան:*

Շահէնը վերահսկում էր բոլոր ջոկատները: Նա կարողանում էր կարգաւորել ներկազմակերպական յարաբերութիւնները: Առաջացած խնդիրներն էլ, որ հիմնականում լինում էին ջոկատի եւ գլխաւոր հրամանատարութեան միջեւ, Շահէնը շատ արագ կարգաւորում էր: Նա կռուող ուժի պակաս չունէր, թէպէտ չրջանի տարածքը մեծ էր, իսկ բնակչութիւնը որոշ տեղերում սակաւաթիւ:

Զինաւոր պապը *ինձ հանդիպած հետաքրքրական մարդկանցից մէկն էր: Նա յատուկ նկարագիր էր: Բերեմ տխուր օրուայ, բայց եւ ամենացայտուն մէկ օրինակ. յիշում եմ Զինաւոր պապի սուգը, երբ Շահէն Մեղրեանը զոհուել էր, եւ նրա դին տանն էր: Ասում էր՝ «Տղայ ջան, որ զոհուել ես, դա ինձ չի զարմացնում: Քանի-քանիսին ես ղեկավարել, տարել կռուի, քանի-քանիսն են զոհուել քո հրամանատարութեան ներքոյ: Դու դրանցից աւելի լաւ չես: Դու էլ պէտք է զոհուէիր»:*

Այն, որ իր հերոս, հրամանատար որդուն նա աւելին չէր համարում, քան նրա զինուորին, սա մեծ, պինդ, զօրեղ, հնի ողջ մաքրութեամբ մարդու դատողութիւն է: Շահէնը նկարագրային յատկանիշներով իսկապէս իր հօր արժանի զաւակն էր:

Նա կտրուկ մարդ էր: Կարող էր հարցերին լուծում տալ նաեւ յարաբերութիւններ խզելով: Սակայն նեղմիտ չէր, որ անձնականը դարձնէր ընդհանրական: Յամենայն դէպս ինքնապաշտպանական կազմակերպման գործում անհատական յարաբերութիւնները նրա վրայ չեն ազդել:

- Երբ Շահումեանն ընկաւ, ժողովրդի մէջ խօսակցութիւն կար, իբր Շահէնն է մեղաւոր:

- Երբ ղեկավարից սպասում են փրկութիւն եւ չեն ստանում, բնականաբար մեղադրում են նրան: Այդպէս է եղել միշտ: Բնական է, որ Շահէնին մեծ հաշուով մեղաւոր համարէին, բայց որ նրա սխալի կամ թերանալու պատճառով էր, որ Շահումեանն ընկաւ, դա ճիշտ չէ:

Ես էլ եմ ինձ մեղաւոր համարում, մենք էլ ենք պատասխանատու եղել այդ ժամանակուայ համար: Պատասխանատուութիւնն արժէքաւոր է, երբ յաղթանակով ես այն

*աւարտում: Եթէ՝ ոչ, ուրեմն պատասխանատուութեանը տէր չես եղել: Ես Շահէնին չեմ ուզում մեղադրել, որովհետեւ այդ պատասխանատուութիւնը կիսել եմ նրա հետ: **Շահէնն ու Շահումեանը զոհ եղան չատ աւելի մեծ խաղի:** Այդ կռիւը Հայաստանի ու Ադրբեջանի կռիւը չէր: Այդ կռիւը նոյնիսկ Ղարաբաղի ու Ադրբեջանի կռիւը չէր, նոյնիսկ Շահումեանի ու Ադրբեջանի կռիւը չէր: Դա ուրիշ կռիւ էր:*

Դրա համար այս կամ այն մարդուն եւ կամ մարդկանց մեղադրելը ճիշտ չէ: Զոհը միշտ էլ կարող է ենթարկուել քննադատութիւնների, բայց միշտ չէ, որ այդ քննադատութիւնները լինեն արդար ու ճշմարտացի:

Իմ կարծիքով՝ Շահէն Մեղրեանը, որքանով որ չփուել, առընչուել ու նաեւ ճանաչել եմ, հերոս է եղել: Սա է ամենաարդար եւ ճիշտ գնահատականը, որ ես կարող եմ տալ:

- Շահէնն առաջարկել է «Եղնիկների» հետ մարտեր սկսել: Նա հաւատացել է, որ կը կարողանայ այդ սկզբունքով մնալ այնտեղ ու վերադարձնել Շահումեանը: Այդ հաւատամքը եղե՞լ է:

- Ես հաւատացած եմ, որ եթէ հարցերի դասաւորումն այլ ընթացք ստանար, նրա բռնած ճանապարհը մեզ տանելու էր դէպի Շահումեանի ազատագրում: Հիմա էլ եմ հաւատացած, որ մի այլ դասաւորումով Շահումեանը մի օր ազատագրուելու է: Եւ սրա մէջ ոչ մի չափազանցուած բան չեմ տեսնում: Ուրիշ որեւէ բան չի կարող պատճառ դառնալ, որ մարդ այդ տեսակ կռուի մէջ մտնի: Դրա համար գերհաւատք է պէտք ունենալ: Ինքնասպանութիւն կատարում են թոյլ մարդիկ: Թոյլ մարդը նման կռուի ընդունակ չի, ինքնասպանութեան աւելի հեշտ ճեւեր կ՚ընտրի:

*Պատմութեան մէջ անճանց դերը ես չեմ գերագնահատում, բայց հաւատում եմ, որ եթէ Շահէնը կենդանի լինէր, Շահումեանի պայքարը չատ աւելի իրական չարունակականութիւն կ՚ունենար 1993 թ.-ից այս կողմ: Վերջապէս **նա էր Շահումեանի ժողովրդի կամքը մարմնաւորողը, նա էր ժողովրդին ոգի տուողը, նա էր բոլորին ի մի բերողը**, հաւաքողը: Վստահ եմ, եթէ մահը նրան չխլէր մեզանից, այսօր մենք պայքարի տարբեր աստիճաններում կը լինէինք:*

Վերջաբան
ՆՐԱ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ՄԱՀՈՎ ՉԷ ՊԱՅՄԱՆԱՒՈՐՈՒԱԾ

Շահէն Մեղրեանն *իր երկրային կեանքն ապրեց թէեւ բարդագոյն պայմաններուն, սակայն ոչ մի պահ չկորցրեց լաւատեսութիւնն ու հաւատն իր ժողովրդի գերբնական /իռացիոնալ/, Աստուածային օժտուածութեան եւ նրա մակերես չելնող անսպառ ուժերի նկատմամբ, նրա արդարութեան նկատմամբ: Նա հաւատում էր մեր յաղթանակին, իր ժողովրդի անպարտելութեանը:*

Իրենք՝ շահումեանցիներն աւանդապահ եւ աւանդապաշտ ժողովուրդ են, հիւրասէր եւ միմեանց նկատմամբ յարգանքով լեցուն: Շահումեանցիների մէջ Շահէնը մեծ առաջնորդ էր, անընկճելի կամքի տէր, եւ գործնական հսկայական իմաստութեամբ, որ լաւագոյն շարունակութիւնն է մեր հին ազնուական մելիքութեան՝ նորագոյն պայմաններիս համեմատ:

*Եթէ նման հզօր թափի եւ անբասիր բարոյականութեան մարդիկ ներկայումս գտնուէին, մենք այլ որակի եւ մակարդակի կեցութիւն պիտի ունենայինք: Հայ ժողովրդի արգանդը **բնածննդային** /գենետիկ/ ներզօրութիւնից չի զրկուել, սակայն բնատուր տաղանդը զարգանալու, դաստիարակուելու պայմաններ եւ դպրոց պիտի ունենայ, որպէսզի նրա հոգին պարարտ հող դառնայ իւր ազգի գոյութեան եւ աճի համար:*

Բազմահազար մարդիկ են ճանաչել Շահէն Մեղրեանին, գուցէ աւելի շատ, քան որեւէ հանրածանօթ հայի: Այո՛, ճանաչել են իսկապէս եւ ոչ թէ միայն ծանօթ են եղել: Եւ այդ ճանաչողներից իւրաքանչիւրը իւրովի է բնութագրում, նկարագրում նրա մարդկային դիմագիծը, ի յայտ բերում ազգային գործչի, ռազմիկ-պատերազմագէտի, մարդու եւ ընկերոջ առանձնայատուկ գծերը, սակայն այդ արտաքին բազմակերպութեան տակ ի յայտ է գալիս մի ընդհանրական նկարագիր, առաքինութիւնների շարք, որոնք վկայւում են բազմաթիւ մեկնախօսների ասոյթներում: Շահումեանի ժողովրդի ընդհանուր գծերի բնութագրման,

Շահումեանի շրջանի յանձնման հարցերում անգամ մենք հանդիպում ենք համանման գնահատականների, որոնք հաւաստի են դարձնում ինչպէս Շահէն Մեղրեանի մարդկային կերպարը, այնպէս էլ պատմական իրադարձութեանց գնահատումները: Բոլորն էլ մեծ ցաւ են ապրել այդպիսի մեծութեան կորստեան համար, մանաւանդ՝ քաղաքական գործիչներն անձրեւից յետոյ սնկերի նման հողից դուրս չեն գալիս:

Շահէնի մասին կարողանում են խօսել ե՛ւ նրա հին ընկերները, որոնք միասին եղել են բազմաթիւ մարտերի մէջ, ե՛ւ նրանք, ովքեր համեմատաբար քիչ շփում են ունեցել: Թէեւ շատերի հետ անմիջական գործնական կապերով շատ չի առընչուել, սակայն նրա ներկայութիւնն ամբողջ Շահումեանում միշտ զգացուել եւ ներգործական է եղել: Շահէնը եւ անմիջական ներկայութեամբ, եւ հեռու տարածութիւնից իր մասին մտածել է տուել, նրա շունչը միշտ էր զգացւում, քանզի իւրայատուկ ապրելակերպ էր ստեղծել եւ իր համախոհների ու զինակիցների բանակը մտքով, խօսքով եւ գործով հաստատում էր Շահէն Մեղրեան առաջնորդի եւ մարդու կենսական սկզբունքները: Շահումեան եկած բոլոր մարդիկ հոգեպէս իրենց բաւարարուած էին զգում, որ շրջանի ղեկավարութեան համար իրենք ոչ միայն մոռացուած չեն, այլեւ իսկական արժէք են:

Չնայած Շահումեանի պարտութեանը՝ Շահէնը եւ իր զինակիցները ապահովել են մեր յաղթանակը դարաւոր գօտեմարտի այս հատուածում:

Շահէնն իր կազմակերպական հանճարի չնորհիւ յաջողում էր ժողովրդական անհուն բազմազանութիւնը միաւորել եւ ղրական արդիւնք ստանալ: Նա թմրամոլին, քրէականին եւ այլ տարրերի համադրում էր ազգային եւ բարոյական բարձր նկարագրի տէր մարդկանց: Նա տիրապետում էր տարատեսակ մարդկանց հոգեբանութեան վրայ ներգործելու գաղտնիքներին եւ կարողութիւն էր գտնում իր մէջ բոլորին օգտագործել ի շահ գաղափարի եւ պայքարի: Այդպիսի մարդիկ ձեռք էին բերում բնականաբար որոշակի ղրական յատկութիւններ, գնահատելով այստեղ՝ Շահումեանում, եւ նրանց խոցուած ար-

*ժանապատուվթիւնն իր բաւարարուվթիւնն էր գտնում Շահէնի նման մարդու հետ չփուելով: Գռեհիկ եւ կոպիտ մարդկանց մէջ փոփոխուվթիւններ էին առաջանում եւ նրանք գալիս էին Շահումեան չարունակաբար: **Պատերազմը Շահումեանում այս առումով, անկախ իր տառապանքներից, զրկանքներից եւ զոհերից, ազատագրական էր բառի բուն իմաստով եւ մաքրագործման մի ասպարէզ էր դարձել, քանզի ազատագրւում էր ոչ միայն հայրենիքը, այլեւ մարդկային անձերը: Այն ազգային ոգու յաղթանակն էր:***

*Եւ այդպիսին էլ այն կը մնար, եթէ հրադադարից յետոյ քաղաքացիական իրավիճակում, «խաղաղ» տարիներին Հայաստանի իշխանուվթիւնները կարողանային պահպանել այդ ոգին ներքին՝ հոգեբանական պատերազմում, որի գոյուվթեան մասին հաւանաբար շատ իշխանաւորներ գաղափար էլ չունեն կամ չեն ուզում հաշուի առնել, որ մարդ ասածը մի էակ է, որը պիտի յաղթահարի ինքն իրեն, այսինքն՝ բարձրակարգ կրթուվթիւն եւ դաստիարակուվթիւն ստանայ, զգայ ազգային պետականուվթեան սրբուվթիւնը: Նրա ազգային ինքնագիտակցուվթիւնը, բարոյական նկարագիրն ու մարդկային մնացեալ բարեմասնուվթիւնները միասնաբար մեր ազգի համար ստեղծեցին այդ մեծ մարդուն, որը ազգային պատմուվթեան նշանաւոր դէմք է: **Շահումեանի ժողովուրդն է ծնել Շահէնին եւ Շահէնն արժանաւոր առաջնորդն է եղել այդ ժողովրդի:***

*Մարդն իր ծննդով եւ էուվթեամբ առնուազն թռիչք է, բայց անհատականուվթեան համեմատ կան մեծաթռիչք անձինք: Շահէնի **մեծուվթիւնը մահով չէ պայմանաւորուած:** Իր մտածողուվթեան հիմքը բետոնէ ամբարտակն է, որ կարելի է չէ փչրել:*

*Թէ՛ Շահէն Մեղրեանը, թէ՛ Մոնթէն եւ թէ՛ մեր մնացեալ նուիրեալ զօրականներն իրենց գործնէուվթեան ծիրերում իրագործել են **ռազմա-քաղաքական եւ բարոյա-հոգեբանական համադրական ծրագրեր:***

Նորի՞ց կը յայղղուի Գիւլիստանի մելիքների ժառանգներին հաւաքուել հայրենի հողի վրայ՝ Շահումեան կոչուած չրջանում՝ չենք կարող ասել, մանաւանդ Շահումեանի հարցը ներ-

կայիս հայ իշխանութիւնները նոյնիսկ չեն համարձակւում բարձրացնել, կամ պարզապէս մոռացել են նրա գոյութիւնը, ինչպէս ժամանակին լռութեան մատնուեց Նախիջեւանի հարցը, ինչպէս ներկայումս է լռութեան մատնւում Ջաւախքի խնդիրը:

*Շահումեանի կորուստը մեզ ներելի չէ: Գուցէ դա դիւանագիտական սխալի կամ անտարբերութեան հետեւանք էր, սակայն ամենավատը այսօրուայ անտարբերութիւնն է: **Շահումեանի ազատագրական մարմինը պէտք է գործի** եւ այն պիտի համադրի համայն հայութեան ջանքերը: Սակայն այսօր մեր ժողովուրդը համախումբ չէ եւ ընդհանուր նպատակադրութիւն չկայ եւ մենք մեր յոյսն արդէն դրել ենք հրաշքների վրայ, Աստուծոյ վրայ: Դա լաւ է, սակայն Վերնայինը ներքեւում գտնուողներիս ցանկութիւնն է ակնկալում, պահանջում. մե՛նք պիտի անհանգստանանք, տառապենք, որ Աստծուն մեր ձայնը լսելի լինի եւ բարեյաջող ելթակայական պայման ստեղծուի մեր երկրի ազատագրման համար: Համախումբ չենք, որովհետեւ միաբան չենք եւ անառակ որդիների նման օտարների խոզերն ենք արածացնում՝ օտարածին աղանդների մագիլներում: Շահումեանը պիտի մե՛ր ձեռքով, մեր միջոցով ազատագրուի, մինչդեռ մենք թմրած ենք, քնած ենք: Մեր հողը պիտի մե՛նք ազատագրենք, որպէսզի գալիք սերունդներն այն ժառանգեն, որպէսզի ազատ ապրելու բարոյական հիմք լինի: Այստեղ քաղաքական դիւանագիտութեան խնդիր չկայ: Այսօր ոչինչ չի լինում, ժողովուրդը պարզապէս յիշում է անցեալը, ինչպէս Կարսը, Կարինը: Եւ դրա համար անհրաժեշտ են **Շահէնի** եւ իր զինակիցների նման մարդիկ:*

*Շահէն Մեղրեանն իր առաջնորդական չնորհներն ստացել է ի վերուստ, եւ պատմութեան մէջ է մտած որպէս Արցախի մելիքների կենսակերպի եւ բարոյականութեան չարունակող, որպէս դաւանանքի եւ մշակոյթի ժառանգորդ: Եւ ինչպէս ցոյց տուեց կեանքի յետագայ ընթացքը՝ **պատերազմիկների մէջ Շահէն Մեղրեանից աւելի ամբողջական, անընկճելի, հաւատարիմ, ազգապաշտ, ժողովրդական, բարեսիրտ,***

Հալածեալ, ողբերգականօրէն մարտիրոսեալ մէկին չենք ճանաչուած, որն իր կերպարով եւ ինքնութեամբ, իրեն բաժին ընկած ժամանակաշրջանում այդքան տիպականօրէն եւ տիրականօրէն ցուցանէր նախասկզբնական եւ յաւիտենական Հային, յաղթական Հային, մարդուն, որ մարտիրոսուելուց յետոյ իսկ իր բանակն առաջնորդում է դէպի ռազմադաշտ: Նա դնաց լրացնելու յաւիտեանների հերոսաբոյլը՝ յանձինս Վարդան Մամիկոնեանի, Յովնան Եպիսկոպոսի, Դաւիթ Բէկի, Գարեգին Եպս. Յովսէփեանցի, Գարեգին Նժդեհի, Անդրանիկի, Դրոյի, Արթուր Մկրտչեանի, Մոնթէ Մելքոնեանի...:

ՇԱՀԷՆ ԶԻՆԱՒՈՐԻ ՄԵՂՐԵԱՆԻ /1952-1993/ ԿԵՆՍԱԳՈՐԾՆԷՈՒԹԵԱՆ ՆՇՄԱՐԱՆԴԸ

2-ը յունուարի 1952 - ծնունդը Շահումեանի շրջանի Գիւլիս-տան գիւղում:
Հայրը՝ Զինաւոր Պօղոսի Մեղրեան /1907- 2002/
Մայրը՝ Մարգուշա Մեղրեան /Խաչատրեան/ /1914-1994/
Կինը՝ Ստելլա Շիմշատի Մեղրեան
Զաւակները՝ Լուսինէ, Լիլիթ, Զինաւոր
1960-1970 - ուսումնառութիւնը միջնակարգ դպրոցում
1970-1975 - ուսումնառութիւնը Երեւանի պետական համալ-սարանում, տնտեսագիտութեան կրթաճիւղում
1975-1978 - տնտեսագէտ Շահումեանում
1978 - Շրջանի կոմերիտմիութեան առաջին քարտուղար
1981-1988 - Շահումեանի պահածոների գործարանի տնօրէն
1988-1991 - շրջանի Ագրոարդի վարչութեան պետ
1990 - անդամագրութիւնը ՀՅԴ-ին
1989-1991 - կամաւորական ջոկատների կազմաւորումը
1991-1992 - Շահումեան շրջգործկոմի նախագահ եւ կուս-շրջկոմի առաջին քարտուղար
1990, յունուարի 9 - Շրջանի ղեկավարութեան պատանդումը ՕՄՕՆի կողմից
1990, յունուար 12 - Մանաշիդի կռիւը
1990, փետրուարի 18 - ազատումը պատանդութիւնից
1991, ապրիլի 28 - Գետաշէնի եւ Մարտունաշէնի անկումը
1991, մայիսի 25-ին - Հարուած Ումուդլուին
1991-ի յուլիս - Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գիւղերի կորուստը
1991-ի սեպտեմբեր - նոյն գիւղերի ազատագրումը
1991, աշուն - կամաւորական ջոկատներից միասնական զօրա-մասի կազմաւորումը
1991, դեկտեմբեր 11 - Թոդանի կռիւը
1992, յունուարի 5-7 - Նախագահական առաջին ընտրութիւն-ները ԼՂՀում:
1992, փետրուարի 17 - Թուրքերը յարձակում են Մանաշիդի

վրայ եւ ետ են մղւում:

1992, յունիս - նախագահական երկրորդ ընտրութիւնները ԼՂՀում

1992, յունիսի 13-15 - Շահումեանի գրաւումը խորհրդա-թուրքական զօրքի կողմից բնակչութեան դուրսբերումը եւ գաղթի կազմակերպումը Հաթերք-Մատաղիս ուղղութիւններով

1992-ի յունիս - 1994 մայիս - հայդուկային պատերազմը

1992, յունիսի 17 - Հայդուկային առաջին խմբի կազմաւորումը Հաթերքում եւ ռազմակայանի հիմնումը Եղակերում

1992, յունիսի 20 - Շահումեանի հրամանատարութեան տեսագրուած հարցազրոյցը

1992, յունիս - Շահումեանի անկման պատճառները քննող յանձնաժողովի ստեղծումը ՀՀ Գնում

1992, յունիս-յուլիս - հետախուզական գործողութիւնները, առաջին բախումները, տեխնիկայի ոչնչացումը եւ ճանապարհների վերահսկումը:

1992, յուլիսի 8 - Շահէն Մեղրեանի մամլոյ ասուլիսը

1992, «Ազատամարտի /յուլիս, թիւ 30/ հարցազրոյցը Շահէն Մեղրեանի հետ

1992, յուլիս-դեկտեմբեր - հայդուկային պայքարի յետագայ ծաւալումը եւ Սարսանգի ճանապարհների վերայսկումը, գործողութիւնները բնակավայրերի վրայ

1993ի յունուարի 15-ից - նոր գործողութիւնների սկիզբը Արտատափի ռազմակայանից

1993ի փետրուար - Սարսանգի գործողութիւնը եւ Գերամբոյի գումարտակի ջախջախումը

1993, մարտի 11 - հայդուկային ջոկատի վերաստեղծումը ՀՀ ՊՆ Յատուկ նշանակութեան ջոկատի

1993, մարտի 25-ից - Տօնաչէնի, Թալիշի Գիւլիստանի գրոհային գործողութիւնները

1993, մարտ - Քարվաճառի ազատագրումը

1993, ապրիլի 17 - ուղղաթիռի կործանումը, Շահէնի եւ իւր զինակիցների զոհուելը

SHAHEN MEGHRIAN, ZEENAVOR (FATHER'S NAME) (1952-1993)

THE OUTLINE OF VITAL ACTIVITY

Was born in the Givlistan village of Shahumian region on January 2nd, 1952
Father – Zeenavor Meghrian, Poghos (father's name) /1907- 2002/
Mother – Margusha Meghrian /Khachatrian/1914-1994/
Spouse – Stella Meghrian, Shimshat (father's name)
Children – Lousine, Lilit, Zeenavor
1960-1970 – studied at a secondary school
1970-1975 – studied at Yerevan State University, the faculty of Economy
1975-1978 –Economist in Shahumian
1978 - The first secretary of the Union of Young Communists of the region
1981-1988 – Director of packing plant in Shahumian
1988-1991 – Chief of Agroard administration of the region
1990 - Membership in ARF
1989-1991 - Formation of voluntary detachments
1991-1992 - President of executive committee of Shahumian region and the first secretary of regional committee of the party
1990, January 9 - Captivity of authorities of the region by Special Police Force
1990, January 12 - Battle of Manashid
1990, February 18 - Recovered prisoner
1991, April 28 - fall of Getashen and Martunashen
1991, May 25 - Attack on Umudluin
1991, July - loss of Erkedzh, Buzlukh, Manashid villages
1991, September - Liberation of the same villages
1991, fall - Formation of the united troop unit through voluntary detachments
1991, December 11 - Battle of Todan
1992, January 5-7 - First ever presidential elections in Nagorno Karabakh

1992, February 17 - Turks lunch an attack on Manashid and were driven back
1992, January - the second presidential elections in Nagorno Karabakh
1992, January 13-15 - Seizure of Shahumian by the Soviet-Turkish troops, people's leading out and arranging migration issues toward Haterque-Mataghi
1992, June -1994, May - Hayduks' War
1992, June 17 - formation of the first group of Hayduks in Haterque and foundation of the military base in Yeghaker
1992, June 20 - video-record of the interview of the leadership of the Shahumian region
1992, June - formation of the Committee investigating the causes of the loss of Shahumian at the Supreme Council of RA
1992 June-July - intelligence coup, the first fights, mowing down of the military technology, and the control of roads.
1992, July 8 - press conference by Shahen Megrian
1992 - "Liberation Fight" journal (July, 30) interview with Shahen Meghrian
1992 July-December - battle of Hayduks and control of Sarsang road, operation over the settlements
1993, from January 15 - start of new operations from Artatap military base
1993, February - operation in Sarsang and overthrow of battalion of Gerambo
1993, March 11 - reformation of Hayduks' detachment into the special oneof the Ministry of Defense of RA
1993, from March 25 - attacking operations in Tonashen, Talish, and Givlistan
1993, March - Liberation of Karvachar
1993, April 17 - helicopter crash, the fall of Shahen and his comrades

REPORT

Ashot Petrosian's book, named «Great Shahen» consists of three parts divided into 22 chapters, with foreword and epilogue. There are also enclosures, outline on Shahen Meghrian's vital activty presented in three languages, reports (English and Russian), the name list of fighters of Shahumian region and also the general name list.

In foreword *Shahen Meghrian's activity and characteris assed, the one who was the leader for freedom fight in Shahumian region. The author does not give any answer how the Artsakh war and particularly the events in Shahumian have been reflected in political journalism and literature, but considers that it has not been fulfilled with sufficient extent and impartiality.*

Afterwards the author connects the revelation of character of Shahen Meghrian as the historical person togeographical and historical-cultural environment. The author mentions the works of authors, those which refer to Artsakh, Melikutyun (Armenian province) of Givilistan and Shahen Meghrian himself.

The author focuses on the role of Artsakh and particularly Givilistan province in the perspective of Armenia's defense, and the illustration of special spirit of Artsakh.

The first part *of the book is a historical report that consists of three chapters. In the first chapter the whole attention is on Givilistan Province, telling about the most prominent events in Artsakh history. As the northern-eastern part of Artsakh, the mentioned province was the first target of attacks of semi-wild tribes invading from the Caucasus. And it is quite usual that there the strong official system was formed and the fortress of Givilistan had a special role in that process. The author also tried to illustrate the peculiarities of the Meliques (Governors) of Artsakh and particularly Givilistan province. In the same chapter the important events happened in Khamsay province as a result of settling of foreign repressors in Shushi castle, as well as the migration of population of Givilistan and Jraberd for different reasonsto Georgia and their return to the motherland are shown. The situation in Givilistan and*

Artsakh is also described after the provinces passed into the possesion of Russia. The chapter ends with the highlighting the changes that took place during the Soviet period in the outskirt.

Chapter two: *the geneaology of the Meghrians starts with the name founder* ***Zeenavor Meghrian - (father's name Poghos)*** *-Shahen Meghrian's father's biography. The most marvellos thing is that grand-father Meghri did not migrate to Georgia with the rest, but settled in a place where he lived through having his own household till 1809, e.g until the population of Givilistan was back.*

Chapter two ends with the insert of the Meghrians's lineagethrough which Meghri's children and the succeeding generations are presented.

Chapter three*- the final chapter of the book is dedicated to Meghrian family. There much attention is on Zeenavor and Margarita Meghrians, Shahen Meghrian's parents who used to live by strictly following the traditions. Zeenavor Meghrian was very famous in the region and was called Beghdad (prince of mountains) when he was young. He was respected both among Armenians and the foreigners. The hospitability of his house made many Armenians and Turks to stay at. Margusha mayrik was also known for her exclusive grace. She was able to take care of and educate eleven children, seven sons and four daughters. She was honored as mother-hero, rewarded with "Golden Star" medal and the highest medal of the country. Shahen Meghrian is presented as pupil and student under the next title of the book. He was always exceled with his politeness and diligence both in the family and school. He was «A» level pupil and after school, from the first attempt entered the Yerevan State University, the faculty of economy and graduated in 1975. After that Shahen returned to Shahumian region and started to work, at first as economist, then as secretary for the Union of Young Communists. Later he was appointed as director of packing plant. Only the beginning of his work background is presented here.*

The second part *of the book, titled "Freedom Fight in Shahumian" and enumerated with general first number as Chapter four, is titled «Armenian-turkish contradiction». Over again the author refers to some differences of Shahumian province which are the results of artificial sep-*

aration from Artsakh and of considering it as a separate region. As per author those differences are insignificant for not including it within the Artsakh region. Each province of Artsakh has its peculiarity but it does not impede the Artsakh integrity.

What refers to Armenian-Turkish contradiction, the author is sure that the struggle between two nations for the same territories is of radical character and this is the struggle for the regional domination, therefore it is uncompromising and longlasting and will end with the full victory of one of the sides. The author thinks that this circumstance must taken into consideration, so we keep our consiossness awake and not unarm with the false peacefulvows.

***In the Chapter five,** titled «Martial Law» several issues are touched upon. At first it is shown how Shahen Meghrian normally becomes the leader of the province. He became so not through election but unprotestingly and by assent of many people as showed character, will and devotion to self-defense of the provinceinherent to the leader.*

The second problem was the weapon purchase and the ARF's participation to this was obvious, which intended to help with the self-defense matter of the province. The Party spread its activity with much devotion and vim. And the formation of detachments was also connected to this. The emphasis of the book is on detachment formation process in some settlements of Shahumian, which had a key role in the self-defense of the province. The formation of the detachments in the province started in 1989 and process improved in 1990. The author talked also on the foreign detachments arriving to Armenia.

***Chapter six** refers to the spiritual and ideological cast and to the role of the Diaspora in the region. At first the problems of ideological upbringing and reaching the high level of discipline are discussed. The author speaks about the activity of some individuals from Diaspora by naming them.*

Spiritual awakening refers to the sedulous work of creating of spiritual consiossness and to the reproduction of corresponding institution, the church and in those works Shahen Meghrian's role was outstanding.

***In Chapter seven** the author meets the eye of the readers onto two*

events. The Special Forces of Azerbaijan aiming to weaken the defense of the province arrested and captured the heads of the province on January 9, 1990. But people were not disillusioned. They undertook steps of equal strength and enemy had to free them from captivity. The second event is the battle of Manashid in January, 1990. The main goal of the capture of the heads of province was to exile Armenians from there. And the second step for the realization of it was the attack of Turks on Manashid on January 12, 1990. The Armenian freedom fighters orginized a strong counterattack and Turks dropped back with great number of victims. Small Russian squadron on the side of Armenians took part in this battle for the first time which was also the last.

***Chapter eight** tells about the "Circle" operation which is an in-depth look at the eventsin Getashen and Martunashen titled «The loss of Getashen and Martunashen» observed from several points. At first the situation of the sub-province is described, particularly horrible threat hung over those settlements. They were almost isolated. There were forces which were to defend Armenian settlements from Turks invasions. But for that period the Russian (Soviet) forces were in a leading role. And they, actually, were passing the Armenian settlements, one after another, into the hands of Turks following the special program and tactics. This time the same happened but with one distinction: self-defense forces in Getashen were not able to show any resistance. But the real battle occurred in Martunashen.*

***Chapter nine** is devoted to the defense, fall and liberation of Erquej, Buzlukh and Manashid villages. After occupation of Getashen and Martunashen with the help of Russian troops the next targets were those villages in peripheral parts of the country. After two months of periodical attacks Turks eventually occupied the villages on July 14, 1990. They were still assisted by the troops of the Russian state.*

The liberation of the three villages occurred on 14-18 September, 1990 owing to mighty attacks. And this time no troops from Russian state took part, so Turks remained face to face with Armenians.

Interview with Shahen Maghrian by the Russian journalist Nikolay Kalinkin is presented in the same chapter. Here one will find alsolink on

clashes in Karachinar and on the battle of Todan. Then an enclosure with the following information is available: St. Astvatsatsin, the church of Givilistan was re-dedicated in 1989 and the memory book is available for the impressions and prayers of pilgrims. Here are presented the most noticeable once from the large number of impressions shared and gathered in four books.

***Chapter ten –** «The beginning of 1992». Here one can find information on the visit by Arthur Mkrtchyan to Shahumian. President of Supreme Council of NK considered Shahumian as a very important part of Artakh and his first visit was here. The cooperation and contacts between NK and Shahumian grew weak.*

*The next point is the crash of the helicopter. Turks bagged MIG-26 helicopter on March 2, 1992 which headed for Yerevan. 21 people were dead and **Petros**, Shahen's brother, was among the survivors.*

***Chapter eleven** is devoted to the second presidential election held in Supreme Council of Artsakh in June, 1992 . After Arthur Mkrtchyan was killed election campaign was set between Armenian Revolutionary Movement and the Alliance (Dashnaktsutsyun).For appointing insider to the main post in Artsakh the most outstanding figures and so called agents of the Armenian Revolutionary Movementput on the ground in Stepanakert to direct the election course to the benefit of them.The role and reputation of the Alliance (Dashnaktsutsyun) in struggling Artsakh was so big that the Movement couldn't enthrone their insider but impeded the Alliance to do it as well. Shahen Meghrian was offered as a candidate for the president from Alliance (Dashnaktsutsyun) for the second time. But he failed to gain three votes.*

The archival shorthand from the sessions of the Supreme Council almost totally is published in this book. Comments are available in the end.

***Chapter twelve** – "Fall of Shahumian, June 13, 1992"– refers to the psychological state of the Armenian soldiers, which were ready to liberate Getashen and a day ago it would have happened yet enemy hinder the attack and the second division of the Soviet 4th Army surprisingly went to the offensive with all the mightiness of its weapons and military*

equipment, personnel and total of tactics. The Armenian small forces resisted to the best of their ability in order to ensure people could flee from the settlements and survive the massacre. Armenian military groups and detachments were receding while the enemy did not give even a chance to re-group, to organize defence. All the detachments gathered in Givilistan and protected deporters from dangerous attacks and threats. Some reached Haterque, the others Mataghis, and then Stepanakert and RA.

The Command of Shahumian commented on the events on June 20, stating that there had had been non-compliance between two sides forces and lack of help from anywhere.Yet on the recede way Shahen Meghrian set up an idea of Hayduk fight and the implementation of that idea started a week later. So, this was the right decision by Shahumian Command as owing to it l people were saved at least and took a right course for the liberation of the Mother land through Hayduk's fight.

***Chapter thirteen** – "Field episodes, June 13, 1992"- reveals the course of the military of commitment in the different part of the battle field. The detachment of Alaverdi was in Jambaz base N29. This detachment could resist and hold its position till it was able to defense oneself. The detachment was occupied fully but had a marvelous survival.*

***The detachment of Proshian** was in base N26 which left its position and came down after being attacked by the armor of the enemy. Karot Mkrtchian, the commander came later and commanded to sweep and conquer the hill. Andit was a brave behavior as it was apparent that enemy was on the hillarmed with the technich and it controlled not only the near territories but the far as well. Karot Mkrtchyan failed to conquer the hill and he went missing. The detachment of Hoktemberyan was located in Manashid positions, Kolya Petrosian's unit was in Karachinar. Turks did not attack the latter position at once as they were aware of the antitank weapons. They outflanked the positions. In order not to get into occupation the detachment left the positions.*

***Chapter fourteen** presents scenes of deportations based on the evidence of soldiers of Alaverdi and Proshian. They helped people to reach Haterque, they left for Shushi.*

Deportees were treated like cravens and betrayers on the territory of Artsakh and RA. This was the continuation of the policy toward those who surrendered Shahumian to enemy. Not so long after Martakert turned out to be in the same situation as Shahumian. Here also it was not possible to arrange a good resistance, thus had an additional period and the larger opportunities.

Chapter fifteen *is titled "For Atean Shahen Meghrian". Here is shown the odd attitude toward Shahen Meghrian, Shahumian Command and Shahumian people in general. In attempt to defame famous politician and the Commander the Supreme Council set up a commission on the investigation of the details on the fall of Shahumian. After Hayduks detachment was on the way Shahen Meghrian flied to Yerevan and revealed the real reasons of fall of Shahumian at the briefing. And the existence of the Committee was aimless any longer as there was nothing to investigate anymore and they made beat of silence of it. In the other interview Shahen Meghrian proved that the fall was of someone's interest. «Someone» was the international force in very deed which dictated the Armenian authorities which direction to move on.*

Chapter sixteen *is titled "The Reasons of Shahumian Fall". It starts with the research of a link where the principle of differentiation of the real from the false is illustrated and that principle should have serve as a base for the investigation of the events in Shahumian. As a sample it is taken a fact that a deep exploration had been missing in Shahumian, thus the intention of enemy and was not hit the nail on the head, so enemy came and invaded the land. The author proves that this is only a seeming reason and the real one is deeper, e.g. contradictions within the country.*

Chapter seventeen *is a summary of different viewpoints titled "Additional Illustrations" in regard of the Shahumian fall. Some people prove with facts that the fall of Shahumian had been organized by Levon Ter Petrosyan. Then publications on the fall of Shahumyan follow. As per AramG. Sargsyan the fall of Shahumian is a political decision. "Blood and Ash", essay by Ruben Hovsepyan and "The Enemy of my Enemy is my Friend" by Hakob Chakryan publications are available in the*

Chapter. There are also interviews with ***Arkadi Ter-Tadevosyan and Vazgen Manukyan****. In the end author makes emphasis on the consequences of loss of Shahumian on Artsakh.*

The second part of the book ends with this chapter.

The Third Part – Chapter eighteen *is titled "The start of Hayduks Fight". It is an outline on how the Hayduks movement was formed. Shahen Meghrian announced about the decision of Shahumian people on start of the Hayduks Movement on June 17, 1992. He arranged the first group that stole into the enemy's back, founded the base and started the research of the territory in order to reveal the operational directions. The armor and the vehicles of the enemy went off one after another. Shahen Meghrian was declared as leader of Hayduks, the only commander on the territory of Artsakh acting in a manner of Partizan. In the same chapter author explains some features of Hayduks in Shahumian as well.*

Chapter nineteen *is titled "First Operations of Hayduks in 1993". There is a gradual rise of the volum of the operations carried out within the Hayduks detachment and the sphere of activity is enlarged, together with mowing down the military equipment, the liberation of settlements was on the way. Hayduks detachment took the control of the strategic roads over that territory. The detachment carried out several operations in Sarsang, Tonashen, Talish, Givilistan more than good. And at that period it became the Special Detachment of the Ministry of Defense of RA.*

Chapter twenty – *"Helicopter Crash". Shahen and his comrades were killed on the helicopter crash which was fired by the enemy when they made their way to Yerevan on April 17, 1993. No one survived. The entire Armeniannation was mourning. By the sacrificial death of Shahen Meghrian authorities seemed to make away with a headache of liberation of Shahumian as this was not encouraged by the western governors of the RA. They would not allow another individual to strengthen and become the one who would be so brave to pose the issue of Shahumian liberation. There were many field commanders but no Shahumian. The weird thing about the helicopter was that it was on the territory monitored by our forces and Turkish missiles did not reach the territory.*

Shahen Meghrian's death is still a mystery as a mystery remains martyrdom of many military and political activists.

***Chapter twentyone** is titled "The Hayduks Fight after Shahen Meghrian". Shahen Meghrian created tradition of struggle and his comrades continued the battle till the front line and reached the territory which was under the control of Hayduks. There was no longer a condition of an individual (detachment) initiative. But before, operations carried out, among which the author separated the ones in Dastagir and Mataghis and they were described as glorious. Unfortunately, Vahe Baghdassarian, doctor and brave fighter was killed during the operation in Dastagir. Already considered as a special detachment it used to be on its best and it is not possible to forget the penetrative operation during which Shahen's "school" eagles showed themselves brilliantly.*

***"Karabakh War" by Alexey Kurepin** referring to the productive activity of Russian fighter with "Deers" is included in this book as appendix. The second appendix is about pilots that showed themselves brilliantly in Artsakh and specially Shahumian. The doctors tell about their difficult but very interesting participation to the battle within the "Deers" detachment in the fourth appendix. Famous other fighters are included in the fourth appendix.*

***Chapter twenty two**, titled "Shahen Meghrian's Friends and Comrades about him", tells about the accents and reminiscence of his friends and comrades. Those are words of the soul by people who knew Shahen Meghrian and we are convinced of their sincerity unconditionally. The national hero image grows total through it, which, hereinafter must be referred as truth of textbooks and will become the way of educating our youth.*

Book ends with the conclusion of the author.

ВЕХИ ЖИЗНЕДЕЯТЕЛЬНОСТИ ШАГЭНА ЗИНАВОРОВИЧА МЕГРЯНА

2-го января 1952г. - родился Шагэн Мегрян, в селе Гюлистан Шаумянского района.
Отец - Зинавор Погосович Мегрян /1907-2002/
Мать - Маргуша Мегрян /Хачатурян/. /1914-1994/
Жена - Стелла Шимшатовна Мегрян
Дети - Лусинэ, Лилит, Зинавор
1960-1970 - учился в средней школе
1970-1975 - учился в Ереванском государственном университете, на Экономическом факультете
1975-1978 - работал экономистом в Шаумяне.
1978-1981 - Первый секретарь комсомола района.
1981-1988 - начальник консервного завода Шаумяна
1988-1991 - начальник управления Агропрома района
1990 - вступил в партию АОД
1989-1991 - период формирования добровольных отрядов
1991-1992 - председатель Шаумянского райисполкома и первый секретарь райпарткома
9-го января 1990 - взятие ОМОН-ом руководства района в заложники
12-го января 1990 - Манашидское сражение
18-го февраля 1990 - освобождение руководства района
28-го апреля 1991- падение Геташена и Мартунашена
25-го мая 1991- удар на Умудлу
июль 1991- взятие турками сел Эркедж, Бузлух, Манашид
сентябрь 1991- освобождение сел Эркедж, Бузлух, Манашид
осень 1991- формирование единой войсковой части из добровольческих отрядов
11-го декабря 1991 - сражение в Тодане
5 - 7-го января 1992 - первые президентские выборы в НКР
17-го февраля 1992 - нападение турков на Манашид и их отступление

июнь 1992 - вторичные президентские выборы в НКР

13 -15 июня 1992 - захват Шаумянского района советско-туркскими войсками, эвакуирование населения по направлениям Атерка и Матагиса

июнь 1992 - май 1994 - партизанская война

17-го июня 1992 - формирование первого партизанского отряда и создание военной базы в Егакере

20-го июня 1992 - видеозапись собеседования командиров Шаумяна в Атерке

июнь 1992 - создание в ВС РА комиссии расследования причин падения Шаумяна

июнь-июль 1992 - первые партизанские сражения и разведывательные действия в тылу врага, уничтожение техники и контроль над дорогами

8-го июля 1992 - пресс-конференция Шагэна Мегряна в Ереване

июль 1992 - собеседование корреспондента газеты "Азатамарт" /в номере 30/ с Шагэном Мегряном

июль-декабрь 1992 - дальнейшее развертывание партизанских действий и контроль над дорогами Сарсанга, операции освобождения населенных пунктов

с 15-го января 1992 - начало новых действий с базы Артатап

февраль 1993 - операция Сарсанга и разгром Герамбойского батальона

11-го марта 1993 - переформирование партизанского отряда в Отряд особого назначения МО РА

с 25-го марта 1993 - наступательные бои по направлению Тонашена, Талиша и Гюлистана

март 1993 - освобождение Карвачара /Келбаджар/

17-го апреля 1993 - сбит вертолет, в котором Шагэн Мегрян и его воины улетели в Ереван. Все погибли.

РЕЗЮМЕ

Книга Ашота Петросяна "Великий Шагэн" состоит из трех частей: введение, двадцать две главы, заключение. В книге помещен также список воинов добровольческих отрядов, список личных имен, вехи жизнедеятельности Шагэна Мегряна.

В введении характеризуется детельность и человеческие качества вождя Шаумянского района, крупного представителя освободителной борьбы, выдающего государственного и политического деятеля Армении и Карабахского движения Шагэна Зинаворовича Мегряна. Во вводной части одновременно дается ответ на вопрос: как отражена в армянской публицистике и литературе Шаумяновский вопрос и образ Шагэна Мегряна.

Далее, автор связывает раскрытие образа Шагэна Мегряна с непосредственной географической и историко-культурной средой родного края героя. Автор также отмечает тех авторов и их работы, которые посвящены раскрытию этих проблем.

Во введении автор поставил вопрос о роли Гюлистанской губернии для обороны Арцаха в целом и Армении.

Первая часть книги представляет собой исторический очерк, состоящий из трех глав. В первой главе, отмечая исторические вехи развития событий в Арцахе, автор сосредотачивает свой взгляд на Гюлистанском меликстве. Поскольку, как северо-восточные ворота Арцаха, это княжество и меликство первое взяло на себя удары полудиких племен, идущих из Северного Кавказа. Естественно, в Гюлистане сформировалась стройная система защиты, в которой особую роль сыграла Гюлистанская крепость. В той же главе автор пытается раскрыть особенности образа жизни и быта Гюлистанских меликов, а также сдвиги в общественно-политической жизни после завоевания Шушинской крепости туземными ханами, депортация населения в Грузию и возвращение, а также состояние Гюлистана после соединения с Россией. Глава завершается описанием периода советской

власти и началом освободительной борьбы.

Вторая глава - Родословие Мегрянов - начинается жизнеописанием прадеда и зачинателя рода Мегрянов-Мегри, рассказчиком которого выступает отец Шагэна- Зинавор Апа. И замечательное здесь то, что Мегри с остальными гюлистанцами не покинул свою землю, а вел домохозяйство и остался в обособленном месте - Кети кюмер - до 1809 года, пока остальные не вернулись с чужбины. Вторая глава заканчивается помещением родословия Мегрянов, который представляет как сыновей Мегри, так и их дальнейшее разветвление до наших дней.

Завершающая третья глава посвящается семейству Мегрянов. В данной главе большое место отведено патриархально живущим родителям Шагэна Мегряна Зинавора и Маргуши Мегрян. Зинавор Мегрян славился в регионе как знаменитая личность и еще с юношеских лет ему дали прозвище Багдади, то есть рыцарь гор. Он был в почете как у армян, так и азербайджанцев. Его гостеприимный очаг был открыт перед всеми. Маргуша Майрик тоже отличалась исключительным дарованием. Она родила и воспитала одиннадцать детей, в том числе семь сыновей, которые были бравыми воинами родины. Женщина стала Мать-героиней.

Далее речь идет о школьной и университетской жизни Шагэна Мегряна. Шагэн с ранных лет детства отличался незаурядными способностями, отлично учился в школе и в 1982 году успешно закончив учебу, возвращается в свой родной край и работает сначала экономистом района, а потом первым секретарем Райкома Комсомола, а через два года становится директором районного консервного завода.

Вторая часть книги "Развертывание освободительной борьбы в Шаумяне", состот из двенадцати глав. В первой, по порядку четвертой главе - "Армянско-туркские противоречия" автор сначала направляет взгляд на некоторые особенности Шаумянского района, которые образовались вследствие искусственного отделения района от Арцаха. Однако, эти особенности не в силе быть помехой для того, чтобы Шаумян считался полноправной частью Арцаха, ибо этот район яв-

ляется таковым и в историко-культурном и в географическом смысле.

В отношении противоречия между турками и армянами, автор поддерживает взгляд на неразрешимость обычными мирными путями этих противоречий, так как они основываются на борьбе за землю и это борьба заканчивается господством одной из противоборствующих сторон и полным разгромом и выходом из арени другой. Такова жестокая действительность, и потом необходимо быть всегда начеку, т.е. сильным и в форме. Сила сосредоточена в тех системах, которые отличаются внутренней гармонией развития и основываются на духовном начале.

В пятой главе, под названием "Военная ситуация", рассматриваются несколько вопросов: как Шагэн Мегрян без выбора и борьбы, с всеобщим соглашением, в силу своих личных качеств, необходимых для предводителя, стал вождем Шаумяна.

Следующий вопрос относится к приобретению оружия и боеприпасов, в котором очевидна роль АОД в Шаумяне. В Шаумяне АОД действовал энергично и с большой отдачей. Этим вопросом связана и проблема формирования отрядов. Процесс этот начался в 1989 году и завершился в 1991году. В книге основное внимание обращено на создание отрядов в некоторых населенных пунктах Шаумяна, которые играли стержневую роль в сражениях. Автор, естественно, обратил свой взор и на отряды, приехавшие из Армении.

Шестая глава относится к духовно-ментальному развороту в районе. В начале рассматриваются проблемы возвышения уровня духовного воспитания и дисциплины, отмечается положительная роль тех армян диаспоры, которые в добровольческом начале прибыли и занимались с воинами местных отрядов.

Духовный подъем подразумевает возвышение духовного сознания и пересоздания соответствующему институту, т.е. церкви. В этом деле тоже огромна роль Шагэна Мегряна.

Седьмая глава - "1990, начало противоборства" - обращает внимание на два события. 9-го января 1990 года Азербай-

джанский ОМОН, поставил перед собой цель ослабить район. Арестовав руководство Шаумяна, азербайджанцы оставляют их у себя в заложниках. Однако, люди в районе не только не отчаиваются, но тут же предпринимают соответствующие меры и отвечают туркам тем же способом, взяв в плен столько турок, чтобы было достаточно для обмена.

Конечная цель турок - оттеснение армян и депортирование их из района. Второй шаг турок в этом направлении - нападение на село Манашид 12-го числа того же месяца. В этом бою армяне были сильны, тем более, что на их стороне впервые /увы и в последний раз выступали русские: один отряд из русских, под командованием капитана Спиридонова, способствовали победе армян. Оставив многочисленно убитых, турки отступили.

Восьмая глава под названием "Операция "Кольцо": падение Геташена и Мартунашена" представляет глубинный взгляд на событие Геташена и Мартунашена из нескольких точек зрения. Сначала выясняется ситуация в этих населенных пунктах, страшную опасность возвышающуюся над этими селами, которые оторваны чуть ли не от всего мира. Далее представляются те силы, которым выпала доля защищать эти армянские села. Однако, в этот период решительную роль сыграли советские /русские/ вооруженные силы, которые были на стороне турков. И они, руководствуясь особенными сооружениями и программой, отняли у армян один за другой армянские населенные пункты и подарили туркам Азербайджана.

То же происходило и в этот раз, с той особенностью, что в отличие от крупного Геташена, армянам удалось организовать достойное сопротивление в деревушке Мартунашен.

Девятая глава посвящена защите, падению и освобождению трех сел - Эркедж, Бузлух, Манашид. После захвата Геташена и Мартунашена, турки предприняли серию атак в направлении вышеуказанных сел. После двухмесячных продолжительных наступлений, 14-го июля 1991года туркам удалось взять эти села, опять таки посредством советских вооруженных сил.

Освобождение трех сел происходило 14-18 сентября 1991 года, после мощных наступательных боев. В этот раз русские отсутствовали и турки оказались один на один с армянами.

В той же главе помещено собеседование знаменитого русского журналиста Николая Калинкина с Шагэном Мегряном, а также мимолетные заметки о Карачинарских схватках и о Тоданской битве. Далее следует добавочный материал об открытии Гюлистанской церкви Святой Богоматери. В тот же день была окрыта книга посвящение, в которой оставили свои заметки, пожелания и молитвы поломники. Из этих записей выбраны несколько десяток.

В десятой главе - "Начало 1992-го года" - помещен маленький очерк о посещении Председателя Верховного Совета НКР Артура Мкртчяна в Шаумянский район, который, кстати, был первым визитом Председателя среди районов Карабаха.Настолько высоко оценивал роль Шаумяна этот человек, что чувствовалось этим посещением.

Следующий вопрос касается сбившего нашего вертолета, который был поражен ракетой противника в Кельбаджарских горах. Вертолет вылетел из Шаумяна, на нем был и брат Шагэна - Петрос, который чудом остался жив. Погибли 21 человек, большинство воины Гюлистанского отряда.

В одиннадцатой главе описываются вторичные выборы на пост председателя Верховного Совета НКР. После трагической гибели Артура Мкртчяна борьба за его место велась между партиями Дашнакцутюн и АОД. Для того, чтобы обеспечить победу "своего человека", АОДовцы вышли за границы всякого приличия. Они отправили несколько десятков своих видных деятелей в Степанакерт. На этот раз представителем Дашнакцутюна был Шагэн Мегрян, которому не доставало всего три голоса, чтобы быть выбранным, а за АОДовцев голосовали минимальное число депутатов.

В книгу вложена стенограмма заседаний сессии.

Двеннадцатая глава: "92 год, 13 июня, падение Шаумяна". Во-первых, отражает психологическое состояние армянских отрядов, которые были готовы для освобождения Геташена и

Мартунашена отдать жизнь и были настроены на наступательные действия. Однако, противник опередил наших и неожиданно вместе с силами Второй дивизии 4-ой Армии Советского Союза, прорвал оборонительную линию в участке Эркеджа и Бузлуха и после непродолжительного 4-5 часового сражения практически обеспечил небывалый успех для турок, самое крупное в течение всего периода войны.

Армянские отряды отступили и лишь смогли обеспечить выход населения без крупных потер по направлениям Атерк и Матагис.

Еще будучи на дороге отступления, Шагэн Мегрян был охвачен идеей партизанской войны. Об этом он высказался 20-го июня, в видеозаписи, в беседе с журналистами, в котором командиры войска комментировали происходящие события в Шаумяне, выявляя истинные причины поражения. Идею такой войны Шаумянцы во главе с Шагэном Мегряном стали осуществлять через неделю после этого события, создав партизанский отряд "Егникнер".

В тринадцатой главе: "1992, 13 июня, военно-полевые кадры" проявляется ход военных действий на разных участках фронта. На 29 посту был Алавердинский отряд, воины которого проявили мужество и отстояли свои посты до тех пор, пока не оказались в окружении войсками противника. Они прорвали окружение и соединились с остальными силами. То же происходило и в Карачинаре, правда, там давление не было столь высоко, поскольку разведкой противник узнал, что на этом посту есть достаточное количество противотанковых оружий и легким соприкосновением обошли этот пост. Войска Мегряна собрались в Гюлистане, однако не успели организовать линию оборона.

Четырнадцатая глава представляет собой образцы депортации населения Шаумяна, основанные на свидетельствах бойцов Алавердинского и Прошянского отрядов, которые помогли людям добраться до безопасных мест.

На территории Арцаха и РА к шаумянцам относились неуважительно, как к трусам, которые покинули свои земли. Это было результатом той политики, которую развили

"крупные стратеги" - местные исполнители программы Поля Гобла, по которой Шаумянский район должны оставить в составе Азербайджана. После нескольких недель Мартакертский район оказался почти в том же положении, в котором был Шаумянский, несмотря на то, что здесь были достаточные возможности для организации обороны.

В пятнадцатой главе: "Суд для Шагэна Мегряна" речь идет о непонятном негативном отношении к Шагэну Мегряну и к шаумянцам. Пытаются обесчестить знаменитого политического деятеля и командира и Верховный Совет создает коммиссию расследования причины падения Шаумяна.

После создания гайдукского отряда "Егникнер", Шагэн Мегрян вылетает в Ереван и 8 июля на пресс-конференции выявляет истинные причины падения Шаумяна и тот, которого намеревались судить, сам становится судьей и все становится на свои места. В другой беседе Шагэн Мегрян доказывает, что кое-кому было выгодно падение Шаумяна: именно кому, и так было ясно.

В шестнадцатой главе: "Причины падения Шаумяна" уясняются сами категории причины и ее связь и на этой основе - принципы различения истинных причин от кажущихся и ложных. Все это служит критерием оценки Шаумянских событий. В качестве примера берется тот факт, что причиной падения Шаумяна, как считают близкие к Шаумяну лица, в Шаумяне не было глубинной разведки. Автор не соглашаясь с этим представлением, истинной причиной считает противоречия и борьбу между влиятельными силами внутри страны и воздействие глобальных /международных/ сил, которые стремятся начертить карту мира по своим соображениям.

Семнадцатая глава, под заглавием "Добавочные выяснения", резюмирует различные точки зрения, вокруг вопроса о падении Шаумяна. Ряд авторов и лиц доказывают, что падение Шаумяна подготовил Левон Тэр Петросян. В этой же главе помещены несколько публикаций. Арам Г. Саркисян считает, что падение Шаумяна происходило вследствие политического решения. Помещены также эссе Рубэна Овсепяна "Кровь и пепел", публикация Акоба Чакряна "Враг моего врага - друг", а

также беседы с Аркадием Тэр Тадеосяном, с Вазгэном Манукяном.

Вторая часть книги, т.е. восемнадцатая глава, есть взгляд на начало партизанской борьбы. 17-го июня Шагэн Мегрян провозглашает решение о начатии партизанской борьбы. Создается первая группа, которая проникает во вражеский тыл, основывает базу и начинает разведку окружности, для уяснения направления действий. Взрывают военную технику и боевые машины противника. Шагэн Мегрян провозглашается Айдукапетом, командиром единственного в крае действующего партизанского отряда. Автор выясняет также особенности партизанской борьбы в Шаумяне.

Девятнадцатая глава - "Первые партизанские действия в 1992 году"- отражает ход партизанских действий, которые постепенно становятся решительным фактором в районе Сарсанга, где все важные дороги переходят под контроль партизанских групп. Начинается процесс освобождения сел. Отряд совершает ряд блестательных операций в районе Сарсанг, а также в Тонашэне, в Талише, Гюлистане. Гайдукский отряд переформировался в особую часть в составе МО РА и называется Отрядом особенного назначения.

Двадцатая глава носит название "Сбивший вертолет". 17 апреля 1993 года тот вертолет, который был назначен для поездки Шагэна Мегряна и его друзей в Ереван, был сбит ракетным ударом. Погибли все пассажиры и личный состав вертолета. Весь армянский народ был в трауре. Гибелем Шагэна Мегряна АОДовская власть вроде избавилась от задачи освобождения Шаумяна и многие ее представители сделали свободный вдох. Эти власти больше не допустят появлению, нового лидера Шаумянцев, который был бы в состоянии поднять вопрос освобождения района, тем более мог бы бороться за это. Странным было то, что вертолет сбили на территории контолируемым партизанами: турки находились слишком далеко, чтобы смочь это сделать сами. Обстоятельство гибели вождя и его соратников остается до сих пор загадкой.

В двадцать первой главе: "Партизанская борьба после гибе-

ли Шагэна Мегряна", продолжается рассказ о боевых действиях "Егников", которые основывались по Мегрянской традиции ведения борьбы в экстремальных условиях. Гайдукская борьба продолжалась до тех пор, пока войска Мартакертского фронта не уровняли линию фронта с позициями партизанов. До этого "Егникнер" провели несколько блистательных операций, в одном из которых погиб врач-храбрец Вагэ Багдасарян. Дух Гайдукского отряда и впредь был на высоте, хотя воины напрасно надеялись на освобождение Шаумяна.

В приложении, включенную в книгу, есть публикация под названием "Карабахская война Алексея Курепина", которая относится к эффективной деятельности русского офицера в составе отряда "Егникнер", в которую он вошел как доброволец. Второе приложение относится к прославленным в Карабахской войне и особенно в Шаумяне - вертолетчикам. Третье приложение относится врачам-воинам. В последнем приложении выступают несколько бывалых воинов.

Книга завершается авторским послесловием.

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՋՈԿԱՏՆԵՐԻ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

Շահումեան շրջկենտրոն

1-ին խումբ

1.Խիդիրեան Յակոբ - ընհանուր հրամանատար
2.Վելեան Աւագ - հրամանատարի տեղակալ
3.Մկրտումեան Վարդան - ջոկատի հրամանատար
4.Ղահրամանեան Դաւիթ
*5.**Մատրյան Կարօ***
*6.**Ղարագուլեան Ներսէս***
*7.**Մովսիսեան Աշոտ***
*8.**Հայրեան Արսէն***
9.Բալեան Կարէն
10.Հախեան Ողջիւն
11.Օրդուխանեան Կամօ
12.Դանիէլեան Ալեքսանդր
13.Պետրոսեան Արամ
14.Տօնոեան Վարդան
15.Խաչատրեան Արտակ
16.Շատվերեան Արթուր
17.Բաղմանեան Հերոս
18.Արզուխանեան Կարօ
19.Ներսիսեան Նորիկ
20.Մակարեան Ռուդիկ
21.Օհանջանեան Գեղամ
22.Խիդիրեան Կարօ
23.Մովսիսեան Արսէն
24.Ղահրամանեան Իսահակ
25.Գրիգորեան Գեղամ
26.Առուստամեան Սլաւիկ
27.Հախեան Անդրանիկ
28.Բալեան Խաչօ

2-րդ խումբ

1.Առուստամեան Ռուսլան - հրամանատար
2.Բաղմանեան Ժորա
3.Վելեան Սպարտակ
*4.**Ղաբուլեան Ստեփան***
*5.**Յարութիւնեան Գէորգ***
6.Անդրանիկ
7.Սանթրոսեան Վահագն
8.Նալբանդեան Կամօ
9.Պետրոսեան Դաւիթ
10.Ղաբուլեան Արթուր
11.Առուստամեան Արտուշ
12.Բաբաջանեան Բորիկ
13.Սանթրոսեան Ալեքսան
14.Մակարեան Դերենիկ
15.Հայրեան Դորիկ
16.Սանթրոսեան Աշոտ
*17.**Բազդասարեան Սամուէլ***
18.Ստեփանեան Շիմշադ
19.Բաղմանեան Ալեքսանդր
20.Սաֆարեան Գրիշա
21.Բալեան Գենադի

Հրետանի

1.Արղուխանեան Գենադի 2.Շահնազարեան Լիովա
3.Մինասեան Արժան

Վերին Շէնի ջոկատ

Ազարեան Վալերիկ	*Ազարեան Դաւիթ*
Ազարեան Գագիկ	*Աղաջանեան Սարօ*
Աղաջանեան Աշոտ	*Աղաջանեան Միշիկ*
Աղաջանեան Ռօմա	*Աղաջանեան Սայադ*
Աղաջանեան Տիգրան	*Աղաջանեան Ներսէս*
Բաբաքեոխեան Սաշիկ	*Բաղեան Նահապետ*

Գիւլումեան Նովիկ /Արմօ/ - հրամանատար

Գիւլումեան Համլետ	*Գեոգեան Գրիշիկ*
Գզիրեան Աշոտ	*Գզիրեան Փեդօ*
Գզիրեան Խորէն	*Գզիրեան Շուրա*
Գզիրեան Զօրիկ	*Դանիէլեան Կարապետ*
Դալլաքեան Գրիգոր	*Եսայեան Զոհրաբ*
Եսայեան Կարմէն	*Զարգարեան Գրիշիկ*
Զարգարեան Սեյրան	*Զարգարեան Վալերիկ*
Հախունց Արտակ	*Յովհաննիսեան Դաւիթ*
Հախունց Իւրա	*Յակոբեան Արթուր*
Յակոբեան Ժորա	*Յակոբեան Համբարձում*
Յարութիւնեան Շահէն	*Յակոբեան Յովիկ*
Յովակիմեան Հայկ	*Խաչատրեան Ռօմա*
Մարտիրոսեան Կոստիկ	*Մարտիրոսեան Ռոբերտ*
Մարտիրոսեան Խորէն	*Ղազարեան Հրաչ*
Մարիանեան Գենրիխ	*Մարիանեան Ռուբիկ*

Մարիանեան Սամսոն - հրամանատար

Մարիանեան Վոլոդիա	*Միրաքեան Մեժլում*
Մկրտչեան Մկրտիչ	*Մովսիսեան Հրանտ*
Նահապետեան Համազասպ	*Շախեան Վարդան*
Շելլունց Հայկ	*Շելլունց Գարիկ*
Շելունց Վարուժան	*Շելունց Վալերիկ*
Ջանունց Մամիկ	*Ջանունց Դաւիթ*

Ջանունց Վալօ
Ջանունց Վալերիկ
Ջլաւեան Վալերի
Սաքունց Օմօ
Սամուէլեան Միշիկ
Սիմոնեան Աւագ
Սուղեան Շամօ
Սուղեան Մաքսիմ
Սուղեան Արէգ
Սուղեան Ռոբերտ
Քոչարեան Միշիկ
Քեոխեան Գուրիկ
Քեօխեան Մամիկ
Քեօխեան Ռշտունի
Սաղաթէլեան Կարօ
Միրաքեան Արման
Ղազարեան Արթուր

Ջանունց Ռափիկ
Յովսեփեան Ռափիկ
Ջլաւեան Գագիկ
Սաքունց Սամուէլ
Սիմոնեան Մարատ
Սուղեան Անատոլի
Սուղեան Շագոր
Սուղեան Գեղամ
Վերդեան Մարտիկ
Վերդեան Հայկ
Քեոխեան Մհեր
Քեոխեան Նիկոլայ
Քեօխեան Վալերիկ
Քեոխեան Վովա
Հախեան Համլետ
Սահակեան Խաչիկ
Յովսեփեան Նորայր

Մանաչիդի Ջոկատ

1.**Վարդանեան Հայկ**
2.**Յարութիւնեան Էդիկ**
3. **Աւագեան Ալեքսանդր**
4.**Պետրոսեան Արծուիկ**
5.Նազարեան Նիկոլայ
6.Յովսէփեան Նորայր
7. Յովսեփեան Ֆելիքս
8.Սահակեան Ռաչիդ
9. Սահակեան Մոսի
10.Մնացականեան Պաւէլ
11. Վարդանեան Գէորգի
12.Ալեքսանեան Արարատ
13. Տօնեան Կոլիկ /Նիկոլայ
14.Տօնեան Վանիկ
15. Ասկարեան Վալերիկ
16.Վերդեան Սուրիկ
17. Հայրապետեան Անդրանիկ
18.Յովհաննիսեան Շամիր
19. Վերդեան Արտուշ
20. Վերդեան Արթուր
21. Գալստեան Անդրանիկ
22. Օհանջանեան Հայկ
23. Յովհաննիսեան Գառնիկ - Ներքին Հոռաթաղից
24. Սահակեան Խաչիկ

Էրքեչի ջոկատ

1. Իվան /Վանիկ/ Սամսոնի Լալայեան -Հրամանատար, զոհուել է 1991թ.յուլիսի 15-ին
2. Սլաւիկ Շմավոնի Դանիէլեան,- հր.օգն., զոհուել է 1991թ. փետրուարի 15-ին
3. Սարգիս Սամսոնի Լալաեան, հրամանատար 1991-1994թ.
4. Կամօ Արմէնակի Հովհաննիսյան հրամանատար, զոհուել է 1991թ դեկտեմբերի 11-ին
5. Ալեքսանդր /Շուրիկ/ Մովսէսի Խաչատրեան, զոհուել է 1992թ. յունուարի 27-ին
6. Լեռնիկ Աբրահամի Յովհաննիսեան, հր. օգնական
7. Աչոտ Սարգսի Դաղեան, զոհուել է 1992թ. յունիսի 16-ին
8. Մելսիկ Սամսոնի Լալաեան
9. Սողոմոն Սամսոնի Լալաան
10. Արայիկ Ասքանազի Յովհաննիսեան
11. Ասքանազ Արմենակի Յովհաննիսեան
12. Մարտին Արմէնակի Յովհաննիսեան
13. Գէորգի Արմէնակի Յովհաննիսեան
14. Մանուէլ Մելսիկի Լալաեան
15. Ռուդիկ Արմէնակի Յովհաննիսեան
16. Ալեքսանդր /Սաչիկ/ Մինասի Մարտիրոսեան, զոհուել է 1994թ. մայիսի 12-ին
17. Լիովա Սարգսի Լալաեան
18. Սլաւիկ Մինասի Արզումանեան
19. Սլաւիկ Ալեքսանդրի Խաչատրեան
20. Ռաֆիկ Սարգսի Դիվանեան
21. Խաչիկ Հրանտի Դիվանեան
22. Կամաւոր /Կամօ/ Ռաֆայէլի Դիվանեան
23. Սլաւիկ Ռաֆայելի Նաւասարդեան
24. Աչոտ Բորիկի Ղազարեան
25. Աչոտ Նիկոլայի Ղազարեան
26. Իւրա Մամիկոնի Սարգսեան
27. Վովա Սարգսի Լալայան
28. Ժորա Սերիոժայի Առուստամեան

29. Կոլիա Սերիոժայի Առուստամեան
30. Կարէն Սուրէնի Մանուկեան
31. Արմիկ Արամայիսի Մարտիրոսեան
32. Մամիկոն Սամսոնի Լալաեան
33. Վոլոդիա Յարութիւնի Յովհաննսիեան
34. Կարօ որէնի Առուստամեան
35. Կառլէն Հրանտի Ղազարեան
36. Արարատ Սիմոնի Ղազարեան
37. Վանիա/Վանէս/ Սերիոժայի Առուստամեան
38. Մարտին Վոլոդիայի Առուստամեան
39. Խորէն Բախչիի Արզումանեան

Բուզլուխի ջոկատ

1.Մուրադեան Գեղամ Արմէնակի, Գիւղ. խորհրդի նախագահ, պաշտպան, ընդհանուր ղեկ.
2.Ստեփանեան Համլետ Խաչիկի, ջոկ. հրամանատար
3.Յովհաննիսեան Սէրժիկ Յովհաննէսի
4.Մուրադեան Վահան Արմէնակի
5.Մանուկեան Մեժլում Իւրիկի
6.Ղազարեան Ալեքսանդր Մանուէլի
7. Խաչատրեան Պավլիկ Ժորիկի
8.Ստեփանեան Արարատ Վլադիմիրի
9. Խաչատրեան Արամ Վաչագանի
10.Գէորգեան Կամօ Ռազմիկի
11.Գէորգեան Արարատ Ռուբէնի
12.Գէորգեան Արմէն Ռուբէնի
13.Մինասեան Զորէն Շահէնի
14.Յովհաննիսեան Աչոտ Ժորիկի
15 Յովսեփեան Ռազմիկ Զարմիկի
16.Կարապետեան Ռազմիկ Միշայի
17.Կարապետեան Բագրատ Միշայի
18.Ղազարեան Մուխան Մայիսի
19.Մանուկեան Իւրիկ Սիմոնի

Գիւլիստանի Ջոկատ

Մեղրեան Պողոս Զինաւորի — ***Ջոկատի հրամանատար***

Խաչատրեան Կարօ Մինասի — ***Ջոկատի հրամանատարի տեղակալ***

Մակեան Սեյրան Յուրայի

Ազատամարտիկներ

1.Բալայեան Օլեգ Ռաֆիկի
2.Սեյրանեան Կարմէն Զինաւորի
3.Սեյրանեան Էնգելս /էգօ/ Զինաւորի
4.Սեյրանեան Շահէն Զինաւորի
5.Մակեան Սարօ Բահատուրի
6.Մակեան Անատոլի Մայիլի
7.Մակեան Օլեգ Վազգէնի
8.Մնացականեան Ռաչիդ Գուրգէնի
9.Կոսեան Ռօմա Մինասի
10.Սեյրանեան Արկադիա Խորէնի
11.Ադամալեան Վլադիկ Արմիկի
12.Սարգսեան Ժորա Մինասի
13.Յովհաննիսեան Ռուսլան Շուրայի
14.Բալաեան Սլաւիկ /Ապերիկ/ Իւրայի
15.Բալաեան Կոլիկ Կառլէնի
16.Սաղաթէլեան Պարգեւ Զարմիկի - վիրաւորուել է 1993թ.
17.Բալաեան Գարիկ Բորիկի
18.Մնացականեան Էնգելս Ռանտիկի
19.Եսաեան Գարիկ Աչոտի
20.Սարգսեան Յովիկ Զաւէնի
21.Ստեփանեան Վլադիկ /Վադօ/ Արկադիայի
22.Մեղրեան Կոլիկ Վոլոդիայի
***23.Մեղրեան Հայկ Լեւոնիկի** - զոհուել է 1993թ.*
24.Կոսեան Դերօ Ռաֆիկի
25.Յովսեփեան Մելիք Վարդգէսի
26.Արզումանեան Սլաւիկ Ռանտիկի
27.Սեյրանեան Լիովա Շամիրի
28.Եսաեան Վանիկ Ռանտիկի

29.Բեգլարեան Աւետիք Շուբայի
30.Խաչատրեան Կիմիկ Աւագի
31.Մեղրեան Թաւադին /Իւրիկ/ Զինաւորի

Կարաչինարի ջոկատ /գումարտակ/
1.Պետրոսեան Կոլիկ ԽՄՀԳի հրամանատար
2. Ղուլեան Գենադի ԽՄՀԳի չտաբի պետ
3. Իվանեան Միշա ԽՄՀԳի հրամանատար տեղակալ

1-ին մոտո-հրաձգային վաշտ՝ ՄՀՎ

4.Սարգսեան Բէնօ
5. Ապրէսեան Վովա
6. Մարիանեան Ռուսօ
*7. **Յակոբեան Իւրա***
8. Աբրահամեան Դաւօ
9. Յովսեփեան Ռուսօ
*10. **Մովսիսեան Ռօմա***
11. Անանեան Ռաչիդ
12. Մարիանեան Պետիա
13. Իկրունց Վալերիկ
14. Միրզոյեան Արթուր
15. Սողոմոնեան Կոլիկ
16.Աւագեան Միրոն
17. Ոսկանեան Ռուդիկ
18. Լալայեան Ռուբիկ
19. Ոսկանեան Միշիկ
20. Խաչատրեան Հրանտօ
21. Մովսիսեան Ռուբիկ
22. Յովսեփեան Գէորգի
23. Յովսեփեան Ռաֆիկ
24.Գրիգորեան Վլադիկ
25. Յակոբեան Արամ
26. Օհանեան Իւրա
27. Աւագեան Գառնօ
*28. **Ոսկանեան Հրաչօ***
29. Աբրահամեան Ստեփան
30. Աբրահամեան Պաւլիկ
31. Պօղոսեան Կոլիկ
32. Միրզոյեան Աչոտ
33. Աւագեան Սամուէլ
34. Մակարեան Վիտալիկ
35. Իվանեան Խորէն
36. Յովսեփեան Օհան
*37. **Խաչատրեան Սլաւիկ***
38. Յարութիւնեան Յակոբ
39. Բաղմանեան Վովա
40. Բաղմանեան Լիովա
41. Բալասեան Սամուէլ
42. Օսիպով Կոլիա
43. Յակոբեան Վովա
44. Շահնազարեան Շահէն
45. Աւանեան Բարմիկ
46. Նազարեան Մանուէլ
47. Գրիգորեան Սլաւիկ
48. Ղուլեան Կարօ
49. Նազարեան Իւրա
50. Գէորգեան Ռչոունի
51. Բաղմանեան Աչոտ

52. Բալայեան Գիշո
53. Բալայեան Թելման
54. Բալայեան Հրայր
55. Ղուլեան Սարօ
56. Բալասեան Վլադիկ
57. Գէորգեան Ժորիկ
58. Գէորգեան Արթուր
59. Աւետեան Դանիկ
60. Զօրաբեան Սաքօ
61. Զօրաբեան Շահէն
62. Խաչատրեան Բերօ
63. Նասիբեան Վլադիկ
64. Գրիգորեան Արթուր
65. Յովսեփեան Տոլիկ
66. Աւանեան Կարօ
67. Սամուէլեան Կամօ

Յատուկ նշանակութեան ջոկատը.

68. Մարիանեան Սլաւօ
69. Օհանեան Օքօ
70. Աւանեան Ժակ
71. Բաղեան Սեյրան
72. Ստեփանեան Գէորգի
73. **Բալաբեկեան Արամ**
74. Պետրոսեան Գէորգի
75. Վեքիլեան Աչոտ
76. Ստեփանեան Արթուր
77. Ղազարեան Լիովա, վաչտի աւագ

Կապի խումբը

78. Սողոմոնեան Արամ
79. Ղարիբեան Միշօ
80. Ղազարեան Յակոբ

2-րդ մոտոհրաձգային վաշտ /Գաղտուբ/

81. Յակոբեան Վոլոդիա — ՄՀՎի հրամանատար
82. Ղլեչեան Միշիկ — ՄՀՎի հրամանատար
83. Եղեան Ռուդիկ — ՄՀՎի հրամանատար
84. Ղլեչեան Ներսէս
85. Ղլեչեան Սերգէյ
86. Խուդեան Ռուդիկ
87. Յակոբեան Ազատ
88. Յակոբեան Ալբերտ
89. Յակոբեան Սամուէլ
90. Յակոբեան Յակոբ
91. Եղեան Սլաւիկ
92. **Նալբանդեան Գագօ**
93. **Նալբանդեան Զիվիկ**
94. **Խաչատրեան Էդօ**
95. Յովսեփեան Կարօ
96. Յովսէփեան Վիտալիկ
97. Խաչատրեան Ռուդիկ
98. Խուդեան Անուշաւան
99. Վանեան Գէորգի
100. Յակոբեան Արամ
101. Եղեան Վիտօ

102. Հալբանդեան Զամօ
103. Մարիանեան Իլիազ
104. Դաւիդեան Իչխան
105. Եղիեան Տոլիկ
106. Յակոբեան Արմէն
107. Կարավարիչեան Բուդդան
108. Խուդեան Մամիկոն
109. Շահնազարեան Իսակ
110. Նալբանդեան Մարտիկ
111. Նալբանդեան Վալերիկ
112. Սահակեան Շահէն
113. Յակոբեան Ռուդիկ
114. Գդէեան Գրիշիկ
115. Մելքումեան Վալերիկ
116. Վանեան Սէրժիկ
117. Ղլեչեան Վաչօ
118. Ղլեչեան Սաշիկ

3-րդ Մոտոհրաձգային վաշտ /Մանասի Շէն/

119. Եսայեան Կամօ — Մշվի հրամանատար զոհուած
120. Մալխասեան Վարդան — Մշվի հրամանատար
121. Յակոբեաբ Գէորգի — Մշվի հրամանատար
122. Եսայեան Արթուր
123. Եսայեան Վիտիա
124. Բաղեան Կարօ
125. Զօրաբեան Զաւէն
126. Զաքարեան Յովսեփ
127. ——— Ռաջ
128. Եսայեան Կոլիկ Է.
129. Եսայեան Կարօ Մ.
130. Եսայեան Դաւիդ
131. Եսայեան Նիկոլայ Վ.
132. Զաքարեան Գերասիմ
133. Զաքարեան Սիոմա
134. Յակոբեան Արտաշ
135. Զաքարեան Կարօ
136. **Զաքարեան Գեննրիկ**
137. **Զաքարեան Գրիգոր**
138. **Գալստեան Բաքօ**
139. **Սահակեան Վրէժ**
140. Զաքարեան Կարօ Ս.
141. Զաքարեան Էդօ
142. Աւետեան Վիտալիկ
143. Բուդաղեան Ռօմիկ
144. Բուդաղեան Վալոդ
145. Բալայեան Կարօ
146. Բալայեան Արմիկ
147. Բալայեան Զարմիկ
148. Եսայեան Սիոմիկ
149. Եսայեան Սերգէյ
150. Բալայեան Աւագ
151. Ազարեան Սամուէլ
152. Ազարեան Հրաչիկ
153. Ազարեան Հայրապետ
154. Սամուէլեան Զարմիկ
155. Սահակեան Միշիկ
156. Յարութիւնեան Կամօ
157. Բաղեան Կամօ
158. Բալայեն Միշիկ
159. Յովսեփեան Առաքել

160. Բաբայեան Յովիկ
161. Յովսեփեան Զարմիկ
162. Եսայեան Ռոբերտ
163. Եսայեան Արկադիա
164. Եսայեան Գրիգոր
165. Բալեան Ռուդիկ
166. Զաքարեան Հայկ
167.Հայրապետեան Ռազմիկ
168. Բոզեան Գարիկ
169. Բուդաղեան Գարիկ
170. Բուդաղեան Բարիս
171. Բաչրաթեան Ռուբիկ
172. Բաչրաթեան Իւրիկ
173. Եսայեան Արմիկ
174. Աբրահամեան Ալբերտ
175. Յովհաննիսեան Ռօմա
176. Անտոնեան Իւրիկ
177. Բաղեան Գարօ
178. Զաքարեան Ալեքսան
179. Յովսեփեան Վլադիմիր
180. Յովսեփեան Իսակ
181. Բաղեան Սերոժ
182. **Անտոնեան Լեովա**

Մոտոհրաձգային առանձնակի դասակ / լխապուտ/

183. Գէորգեան Վագիֆ — ՄՀԱԴի հրամանատար
184. Կոսեան Սմբատ
185. Յակոբեան Ռաշիդ
186. Ազաբեկեան Միքայէլ
187.Յարութիւնեան Էդուարդ
188. Աւանէսեան Սերգէյ
189. Աղաբեկեան Կարօ
190. **Ղուլեան Վալերա**
191. Ազիզեան Արտակ
192. Ազիզեան Արմօ
193.Ղուլեան Ռուդիկ
194. Ազաբեկեան Գալէն
195. **Աւանէսեան Խաչիկ**
196. Գէորգեան Կամօ
197. Բեգլարեան Կարէն
198. Մխիթարեան Արթուր
199. Պետրոսեան Դաւիթ

Շտաբի օպերատիւ խումբ

Սահակեան Մանուէլ
Աւանեան Գրիշա
Բաղեան Վալերիկ
Բաղմանեան Ժորիկ
Աբրահամեան Օբիկ
Մակարեան Ռօմա
Բաղեան Վլադիկ

Ծանօթ. Կարաչինարի զօրամասի անուանացանկի մէջ հաշուառուած են նաեւ աշխարհազօրայինները:

Ընդհանուր անուանացանկ

Անուանացանկի մէջ ընդգրկուած չեն.

1. Մեղրեան տոհմածառում նշուած անձիք

2. Գրքի վերջում զետեղուած ջոկատների մարտիկների անուանացանկերը

Ա

Աբբաս Միրզա 50
Աբգարեան Երջանիկ 439, 440
Աբովեան Խաչատուր 26, 56, 504
Աբէլեան Սեյրան, թալիչցի, 595
Աբրահամ /Ալարանցի/ 301
Աբրահամ Սալարապետ 37, 104, 313
Աբրահամեան Զիւան 156, 163, 276, 282, 322, 639
Աբրահամեան Հայրապետ 259
Աբրահամեան Ռօմիկ 537
Ագօ, Արեւստակ, Բաբկէն /Սասունի ջոկատից/ 400
Ադմիրալ Սամօ 609
Ազատը Ալարանի 409, 410, 412, 413, 414
Ազարեան Վիգէն 404
Ազգալդեան Լէոնիդ 148, 156, 198, 209, 342, 492, 507, 641
Աթանէսեան Հրաչիկ 229
Ալավերդեան Ալբերտ 160, 223
Ալեքսանեան Ալեքսան /Հոկտեմբերեանցի Ալիկը/ 406, 414-417
Ալեքսանեան Արարատ 279
Ալեքսանեան Արթուր /Ամարասի Արթուր/ 141, 196
Ալեքսեեւսկի Կիրիլ 199, 552
Ալիկը Կարօտի ջոկատից /զոհուած/ 400, 405
Ալիեւ Իրշադ 290
Ահարոնեան Աւետիս 22
Աղաբաբեան Մնացական 592
Աղաբալեան Վ. 355, 362
Աղաբեկեան Ռօմա 364
Աղամալեան Իշխան 528
Աղա Մահմադ խան 45
Աղաջանեան Գայանէ 327
Աղաջանեան Դաւիթ 537
Աղաջանեան Մհեր 529, 592, 596
Աղաջանեան Ներսէս 509
Աղաջանեան Սարօ 528
Աղաջանեան Վլադիմիր 130, 142, 206, 207, 208, 284, 482, 485, 604
Աղաջանեան Վրէժիկ 517
Ամիրխանեան Դաւիթ 164
Ամիրխանեան Հենրիկ 161, 172, 178, 183, 187
Այան Սաւօ, տե՛ս՝ Իսկանդարեան Սլաւիկ
Այբներ Ջոն 291
Այգեկցի Սալարտակ 161
Այդինեան Ռոբերտ 430
Այվազեան Սմբատ 166, 439, 441, 442, 642
Այվազեան Սուրէն 112
Անանիա Շիրակացի 24, 33
Անդրանիկ Զօրավար 109, 626, 675
Անդրէ /Հետախոյզ/, տե՛ս՝ Սարիչեւ Անդրէյ
Անտոնեան Էմմա 323
Անտոնեան Մուշեղ 587

Աչոտ Գրաչի 112
Աչտարակցի Արմէն 161
Աչիգեօզեան Սիմոն 156, 226, 242, 243, 245-246, 247-248, 249, 251, 381
Ապարանի Անդրանիկ,տե՛ս՝ Ցովակիմեան Անդրանիկ
Ալբէսեան Էդիկ 537
Ալբեսեան Կարէն 314
Առաքելեան Սերգէյ 165
Առաքելեան Վլադիմիր 166
Առստամեան Ռօմա 328
Առուշանեան Բորիս 352, 368
Առուշանեան Վաղարշակ 347
Առուստամեան Վազգէն 523, 528, 529, 530, 534, 535, 604
Ասատրեան Ալիկ 431
Ասատրեան Բագրատ 343
Ասատրեան Հայկ 18
Ասլանեան Արշաւիր /Աչոտ/ 160, 300, 301
Ասլանեան Վանիկ 523, 529, 530, 531, 532, 533, 542, 559, 560
Ասկարեան Լենա 312
Ասկոլկա, տե՛ս Ղուլեան Աչոտ
Աւագեան Արկադիա 288
Աւագեան Խորէն 121
Աւագեան Ռօմա 288
Աւանեան Ֆենիա 95
Աւանց Աղաջան 72
Աւանէսեան Մարինէ 326
Աւետիսեան Ցարութիւն 326
Աւուշեան Մանուէլ 224, 225, 244, 246, 414
Արաբօ 164
«Արաբոյի» Մարսէլ 162, 165, 243
«Արաբոյի» Մելիք 162, 237, 239
Արարատը Սասունի ջոկատից 163, 400, 401
Արարքցեան Բաբգէն 343, 344, 345, 346, 348, 352, 357, 370, 441, 464, 490, 550
Արզումանեան Ենոք 537
Արծիւը Կարաչինարցի 301
Արմէնը Կոռնիձորի ջոկատից 309
Արմէն Պռօշեանցի /Բոյով Արմէն/ 160, 180, 244, 247, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 428
Արմէնակեան Արմէնակ 153, 154, 156, 166
Արսէնը Երեւանից 185
Արտաշէս արքայ 641
Արշակեան Ազատ 439

Բ

Բաբայեան Աստղիկ 318
Բաբայեան Բորիս 364
Բաբայեան Թամարա 318
Բաբայեան Սամուէլ 256, 343, 378, 643, 659
Բաբայեան Սասուն 318
Բաբայեան Վանիա 548
Բաբայեան Վաչիկ 318
Բաբանով Ի. 552
Բաբաջանեան Բորիկ 134, 267, 560, 563
Բաբաջանեան Նինա 320
Բաբաջանեան Ռուսլան 157, 163
Բաբեկ 29
Բաբկէնը Ալավերդիից 425
Բաբուրեան Կարէն 352
Բաղալեան Ռաֆիկ 550
Բազեան Արմէն 550
Բաթու խան 30
Բալայեան Բախչի 111
Բալայեան Գարեգին 105, 110, 111
Բալայեան Զօրի 16, 253, 355, 371 - 375, 376, 629
Բալայեան Կիմ 134-136, 347, 360, 369, 439, 462, 633, 634

Բալայեան Մեժլում 100
Բալայեան Սլաւիկ 528
Բալայեան Վալերի 355, 356, 366, 369
Բալայեան Վլադիմիր 143, 507, 641
Բաղդասար /Արջ/ 278
Բալասանեան Գագիկ 106, 107
Բաղդասարեան Դինեպրիկ 17, 136, 166, 267, 268, 269, 304, 307, 327. 462, 470, 471, 473, 492
Բաղդասարեան Ռուբէն 166
Բաղդասարեան Վահէ 156, 528, 529, 530, 533, 560, 561, 561, 596, 591, 596, 598, 601, 602, 610
Բաղեան Վալերի 121, 255
Բաղմանեան Հայկազ 230
Բայունց Աչոտ 537
Բայունց Արամ 537
Բայունց Սլաւիկ 529
Բախօ իւլխտանցի 148
Բարսեղեան Արմէն /Տլոտ/ 163, 225, 243, 251
Բարսեղեան Էդմոնդ 203
Բեզլարանց Մամաչ 104
Բելոզերցեւ Ս. 262, 290
Բէյրութցի Ռոպեր 200
Բէնօ Գալտուէցի 148
Բերբերեան Ներսէս 163, 263
Բոյով Արմէն, տե՛ս՝ Արմէն Պուօչեանցի
Բոններ Ե. 461
Բուդեյկին, գնդապետ, 283
Բուզլուխեցի Համլետ 412
Բուզլուխեցի Պետօ 335
Բուղա, արաբ զօրավար 28
Բուշ Ջորջ 290
Բուրբուլիս 294
Բուրլաք Ռաֆիկ 200
Բուրկովա Ինեսա 552
Բօղոսեան Ջորջ 525
Բօս, տե՛ս՝ Հախունց Իւրա

Գ

Գաբրիէլեան Ալեոշա /պատգամաւոր/ 365
Գաբրիէլեան Գեղամ 331, 415, 556, 579, 580, 582 - 586, 633
Գաբրիէլեան Մելսակ 377
Գաբրիէլեան Նուէր 528, 530
Գաբրիէլեան Վ. 348, 353, 355, 366
Գագիկ, Հենրիկ, Ռուսլան /վիրաւորներ Ջամբազում/ 400
Գալստեան Գագիկ 281
Գալստեան Խաչիկ 166, 405
Գալստեան Հրանտ 275
Գալստեան Ռ., 354
Գալստեան Վազիֆ 352, 355, 514
Գայդար Եգոր 552
Գասպարեան Միշա 164
Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանց 682
Գարեգին Նժդեհ 17, 57, 116, 170, 171, 220, 319, 327, 328, 474, 475, 505, 641, 645, 675
Գառնիկը Կարօտի ջոկատից /զոհուած/ 400, 405, 407
Գարիկը Սասունի ջոկատից /զոհուած/ 402
Գաֆալեան Սիմոն 169, 172, 173, 174, 178, 179, 180, 181, 187, 315, 626
Գեանջումեան Բէնիկ 229
Գեթսեմանեան Խաժակ 115, 172, 173, 182 - 183, 187, 316, 626
Գզիրեան Շուրա 148, 158, 406, 522, 523, 528, 539, 542, 543, 544, 543, 544, 604, 607, 609, 610
Գզիրեան Ֆեդօ 147, 148, 158, 509, 528, 539, 604, 608, 609, 613
Գզողեան Բարիս 314

Գլողեան Ֆելիքս 117, 136, 153, 155, 266, 267, 280, 288, 458, 492, 609
Գէորգ /զոհ. կարաչինարում/ 301
Գէորգ Ջավուշ 144, 146, 164
Գէորգեան Արկադիա 529
Գէորգեան Գրիգոր /Մախնօ/ 153
Գէորգեան Կարէն 105-107
Գէորգեան Սամուէլ 165
Գէորգեան Վազիֆ 151, 152
Գէորգի ժԲ 47
Գիւլումեան Գարի 516
Գիւլումեան Նովիկ /Արմօ/ 117, 138, 139, 142, 145, 146, 148, 156, 179, 233, 276, 285, 286, 288, 306, 308, 333, 336, 390, 391, 395, 406, 451, 508, 509, 515, 517, 519, 525, 528, 533, 535, 536, 539, 540, 542, 559, 560, 563, 565, 572, 588, 696, 599, 603, 606, 607, 608, 609, 610, 613, 614, 619
Գիւրզա Ալի 223
Գնէլը Հոկտեմբերեանից 595
Գոլեցեան Արարատ 308
Գորբաչով Միխայիլ 218, 290, 295, 482, 483, 484
Գրաչով 396
Գրիգոր Լուսաւորիչ 24, 103
Գրիգոր Նարեկացի 85
Գրիգորեան Արամ 550, 552
Գրիգորեան Գէորգ 232, 251
Գրիգորեան Գրիգոր /Գոքոր/ 156, 168, 528, 550, 557, 586, 612 - 613
Գրիգորեան /պատգամաւոր/ 362
Գրիգորեան Մանուէլ 565, 566, 567
Գրիգորեան Ռօման, 268
Գրիգորեան Սուրէն /Սուրէն Գրիգոր/ 379
Գրիգորիս 24, 103
Գուլիաեւ 585
Գուսան Շահէն 112

Դ

Դաղամեան Բորիս 141
Դաղեան Բորիկ 273
Դալի Բալթայեան Գուրգէն 305, 499
Դալի Մահրասա 39, 101
Դալլաքեան Արարատ 587
Դալլաքեան Հասմիկ 321
Դալլաքեան Սեյրան 529
Դանիէլեան Աղաւնի 501
Դանիէլեան Զարզանդ /Հրաչ/ 157, 220, 226, 227, 228, 232
Դանիէլեան Կարապետ 145
Դանիէլեան Նորիկ 641
Դանիէլեան Սլաւիկ 278
Դաշկեւիչ Վ. 552
Դաւթեան Սուրիկ 537
Դաւիդեան Իշխան 598
Դաւիթ Բեկ 38, 474, 675
Դաւոյեան Մհեր 398, 400, 405, 426
Դաւուդ բեկ 38
Դեւրիկեան Վարդան 16, 322
Դրօ /Դրաստամատ Կանայեան/ 62, 675

Ե

Եազով 482, 483, 484
Եակովլեւ 461
Եասաուլ Սուրէն 203
Եգորեան Էդուարդ 490
Ելցին Բորիս 290, 330,
Եղեան Ռուդիկ 151
Եղեան Վալտեր 136, 252
Եղիազարեան Մանուէլ 148, 154, 156, 162, 222, 223, 237 - 239, 240, 241, 242, 243, 244, 250,

286, 609
Եղիշ Դայի /Համբարձումեան Եղիշ, Ղաչաղ Եղիշ/ 219, 250 - 251
Եղիչէ 7
Եղիչէ Առաքեալ 100
Եղուարդցի Համօ 163
Եսայեան Արմիկ 528
Եսայեան Զոհրապ 509, 516
Եսայեան Օլէգ 355, 363, 502
Եսայի Աբու Մուսէ 28, 29
Եսայի Հասան Ջալալեան 33
Եսայի Մարգարէ 46
Երանեան Սամուէլ /Սմբուլ/ 155, 160, 179, 185, 188, 224, 244, 255
Երզնկացի Մարտիրոս, տե՛ս՝ Շահ-նազարեան Մարտիրոս

Զ

Զատիկեան Վահան 157, 163, 220, 224, 226, 249
Զարգարեան Գրիգոր 528
Զաքարեան Լ. 311
Զաքարեան Մուրադ 414
Զաքարեան Վովա 281, 398
Զոլեան Սուրէն 439
Զոհրաբեան Սամուէլ 302, 316

Է

Էլմիրա, բուժքոյր 590
Էյվազ, Քելբաջարի թուրք ղեկավարներից, 605
Էջմիածնի Հայկ /Կարապետեան/153, 159, 161, 176
Էրքեջցի Երուանդ 287
Էրքեջցի Էդո 212
Էրքեջի Լիովա 523

Թ

Թաթուլը Կարճաղբիւրցի 596, 597
Թալինցի Արտակ 305
Թալիշցի Անդօ 564
Թալիշցի Սաչկա 595
Թաչչեան Վարդան 183
Թեյմուրազ 22
Թերզեան Աշոտ 166
Թորգոմեան Արամ /Արամօ/ 153, 285

Ժ

Ժամկոչեան Մարտիրոս 307

Ի

Իբրահիմ Խան 41, 43, 44, 47, 49
Իշխանեան Դաւիթ 357 - 359, 433
Իսագուլեան Գառնիկ 198
Իսագուլով Արմէն 347, 348,
Իսկանդարեան Սլաւիկ /Այան Սաւօ/ 537, 541
Իսկանդարեան Սիօմա 537
Իսրայէլ «կաթողիկոս» 44
Իսրայէլ Օրի 112

Լ

Լաթիֆ /թուրք գերի/ 601
Լալայեան Երուանդ 15, 36, 37, 45, 46, 50, 52, 112
Լալայեան Լիովա 528
Լալայեան Մելսիկ 212, 273, 277, 278, 280
Լալայեան Վանիկ 148, 154, 156, 163, 210, 211, 212, 273 - 274, 276, 277, 278, 287, 317
Լալայեան Սողոմոն 429
Լենա Գետաշէնցի 222, 224
Լենկ-Թեմուր 31
Լէօ /Առաքել Բաբախանեան/ 15, 19-20, 39, 216
Լենինականցի Պարգեւը 185
Լոբով 294
Լուկիանով Անատոլի 290

Խ

Խաթայեան Թելման 229
Խաժակ, Կարաչինարի ճակատ, 301
Խալափեան Անդրանիկ 319
Խալափեան Արուդիկ 537
Խալափեան Սամուէլ 319
Խանզադեան Սերօ 112
Խաչատրեան Աչոտ Մարտիրոսի 17, 134, 136, 206, 210, 211, 333, 335, 371, 372, 376, 622
Խաչատրեան Աչոտ, «Գարեգին Նիւդհ»ից 161, 261
Խաչատրեան Արտակ 549, 550, 586, 589, 590, 591, 592 593
Խաչատրեան Բէնիկ 121, 130
Խաչատրեան Ջարմիկ 529
Խաչատրեան Կիմիկ 143
Խաչատրեան Հայկ 528
Խաչատրեան Հրանտ 137, 344, 348, 349, 356, 377, 439, 440, 441, 442, 552, 644
Խաչատրեան Մինաս 312
Խաչատրեան Իւրա 207
Խաչատրեան Նորիկ 431
Խաչատրեան Ռոմիկ 517
Խաչատրեան Սամսոն 121
Խաչատրեան Սամուէլ 537
Խաչատրեան Սիլվա 200
Խաչատրեան Վալերի 141, 150, 232
Խաչատրեան Վարսիկ 312
Խիդիրեան Ցակոբ 148, 150, 163, 226, 251, 265, 266, 285, 308, 327, 328, 371, 377, 388, 394, 519, 529, 538, 563, 583, 588, 599, 603, 604, 609, 611, 614, 639, 641
Խիտարեան Սարգիս 159
Խոսրով բեկ Սուլթանով 61
Խոսրով դայի 66
Խուդավերդեան Արայիկ 200, 269, 270
Խուդոյ -տե՛ս Պետրոսեան Դաւիթ

Ծ

Ծատուրեան Արարատ 161
Ծատուրեան Արժան 207
Ծատուրեան Արտուշ 304

Կ

Կաղենկօ 577
Կարաչինարցի Սամուէլ 302
Կալինկին Նիկոլայ 292, 629
Կարապետեան Արթուր 226, 228, 232, 251
Կարապետեան Արկադի /Դաշնակ Ադօ/ 256
Կարապետեան Բակուր /Բակուր/ 16, 30, 31, 33
Կարապետեան Էդիկ 586
Կարապետեան Լեւոն 202
Կարապետեան Կարէն /Դուշմանչիկ/ 163, 227, 239, 240, 242, 243, 246, 247, 248, 250
Կարապետեան Կարօ /Դուշման/ 163, 236, 239, 240, 243
Կարապետեան Հրայր 161, 377, 550
Կարապետեան Սամուէլ 16, 217
Կարապետեան Սարգիս 158, 159, 160, 176, 184
Կարապետեան Վլադիմիր 153, 156, 165, 384, 393, 394, 405, 420, 446, 458, 492, 507, 585
Կարպոչեան Ծերուն 153, 157, 159, 160, 172, 173, 176 - 178, 182, 184, 185, 187
Կարէն, Տիգրան, Փոքր Գագօ, Ժորա, Միշա, Մարատ, Գնէլ /Աբովեանի ջոկատ/ 302, Արտակ 303
Կարօ Սասունի 39
Կեաժ Հայկ /Վաղուհասցի/ 258

Կեփաս /Ճգնաւոր/ 266
Կիրակոս Գանձակեցի 15
Կիրակոսեան Արարատ 163, 164
Կիրակոսեսան Հրայր 587
Կիւրեղեան Տիգրան 642
Կոզիրեւ Անդրէյ 396
Կովալենսկի Ս.Ս. 47
Կրիւչկով Վլադիմիր Ալ. 489, 490, 491
Կրպէեան Թաթուլ 154, 156, 157, 159, 160, 161, 163, 182, 184, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 228, 229 - 233, 241, 244, 251, 381, 421, 581
Կումբաթով, Թուրք մայոր 286
Կուրքանեանց Գարիկ 576
Կուրեպին Ալեքսանդր 539, 563, 564, 569 - 575

Հ

Հաթամ Բաչի 66, 68, 69
Հախունց Արտակ 337
Հախունց Իւրա /Բօս/ 526, 528, 531, 608, 613
Համբարձումեան Կնիազ 203
Համբարձումեան Սարգիս 62
Հայկ Նահապետ 25, 91, 175
Հայրապետեան Գրիշա 361
Հայրեան Անդրանիկ 529
Հայրեան Արամ 529
Հայրեան Արսէն 531
Հայրեան Ռաֆիկ 568
Հայրումեան Բորիկ 232
Հասան Ջալալ-Դոլա 30
Հերակլ, վրաց թագաւոր 49, 215
Հիւսնունց Ռ. 311
Հոբլ Պօլ 341, 378, 380, 386, 469, 476, 506
Հրազդանի Ռուբօ 160, 223
Հրազդանի Սմբօ 160, 233
Հրազդանի վաշտից՝ Ս. Սամուէլ, Ա. Կորիւն, Ա. Արթուր, Հ. Գրիգոր 318
Հրաչիկը Սասունի ջոկատից 432

Ղ

Ղաբուլեան Ստեփան 335
Ղազարեան Գառնիկ 165, 166
Ղազարեան Կարէն /Մուզմուզ/ 163, 225, 243, 247, 249, 251
Ղազարեան Կարէն /Սրբազանի վարորդը/ 199
Ղազարեան Մանուէլ 540
Ղազարեան Մկրտիչ 158, 160, 184
Ղազարեան Մովսէս 17
Ղազարեան Նորայր 166
Ղազարեան Սարգիս 322, 540
Ղալիեան Ալվարդ 122
Ղալինեան Ռաֆիկ 163, 370, 398, 401, 424, 425, 426, 439, 637 - 643
Ղահրամանեան Անուշ 321
Ղահրամանեան Կիմ 15, 16, 37, 54, 56, 57, 58, 59, 60, 121, 122, 470, 471
Ղարագեօզեան Ռուբիկ 529
Ղարիբեան Արթուր 185
Ղեւոնդ Ալիշան 15
Ղեւոնդեան Գագիկ 180
Ղեւոնդեան Պետրոս /Պետօ/ 156, 160, 179, 180, 225, 244, 245, 246, 260, 398, 404, 405, 409, 410, 411, 412, 413, 414, 424, 425
Ղլեչեան Աչոտ 625 - 626
Ղուլեան Աչոտ /Ասկոլկա/ 223, 256
Ղուլեան Արտակ 16, 35, 190, 255, 313
Ղուլեան Բէնիկ 36, 70, 71, 72, 84, 88, 92, 99, 100, 101, 104, 121,

194, 255, 262, 340
Ղուլեան Գագիկ 529, 539, 561
Ղուլեան Գենադի 151, 152, 153, 303, 395
Ղուլեան Գրիչա 95
Ղուլեան Էդուարդ 141
Ղուլեան Հերմինէ 314
Ղուլեան Ռուզաննա 316
Ղուլեան Ս. 313
Ղուլեան Վլադիկ 141
Ղուկասեան Բորիս 172
Ղուկասեան /դասախօս/ 106
Ղուկասով Իվան 471
Ղումաչեան Կորիւն 166

Ճ

Ճաղարեան Աշոտ 537
Ճինբաշեան Տիգրան 648
Ճուղուրեան Սուրիկ 164

Մ

Մաթեւոսեան Սամուէլ 166
Մաթեւոսեան Սարգիս 263
Մալայեան Պետրոս 154
Մալիարենկօ Վերա 317
Մալխասեան Վարդան 151
Մախնօ Վրէժ 581
Մակար Եպիսկոպոս Բարխուդարեանց 15, 16, 34, 112, 265, 266
Մակեան Ալբերտ 646
Մակեան Իրա 318
Մակեան Միրա 318
Մակեան Մարկոս 150, 313
Մաղալեան Արտակ 15, 48
Մամեդ Հասան խան 217
Մամեդով 277, 279
Մայսուրեան Լեւոն 166
Մանաս բեկ 47, 48
Մանուէլ Ջաւախք 17
Մանուկեան Աշոտ 153, 165, 166
Մանուկեան Արամ 589
Մանուկեան Նաիրի 162
Մանուկեան Ներսիկ 166
Մանուկեան Վազգէն 134, 344, 493-498, 523, 539, 550, 581, 607
Մանուչակեան Նշան 200, 590
Մանուչարեան Ալեքսանդր 439
Մանուչարեան Աշոտ 134
Մանուչարով Արկադի 120, 366
Մարգարեան Անդրանիկ 220
Մարգարեան Կարէն 587
Մարգարեան Հրանտ 142, 172, 184, 222, 232, 271, 59, 581, 660
Մարգարեան Ռօմիկ 148, 160, 302, 303, 414
Մարդանեան Հայկազ 163
Մարիանեան Սամսոն 134, 145, 603
Մարչենկօ, գնդապետ, 625
Մարտիրոս Վարժապետ 216
Մարտիրոսեան Արշակ 333
Մարտիրոսեան Զարզանդ 525, 527, 607
Մարտիրոսեան Կարէն 530
Մարտիրոսեան Կոստիկ 145
Մարտիրոսեան Միքայէլ 165
Մարտիրոսեան Հմայակ 117
Մարտիրոսեան Նորիկ 540
Մարտունաչէնցի Մեժի 225
Մարութեան Նորայր 521
Մաքսիմ /ստեփանակերտցի/ 588
Մաֆիոզ Գագօ 581
Մարուխեան Հրայր 509
Մարուխեան Շաղիկ 509
Մեժլումեան Արագած 319
Մեժլումեան Իւրա 537
Մեժունց Սաչա 537, 564
Մելիք Ադով Ա /Սեւ Ադով/ 36, 37
Մելիք Ադով Բ /Կաղ Ադով 37, 42, 44, 45, 52

Մելիք Աբով Գ 45, 46, 47, 48, 49, 50, 52
Մելիք Ադամ 44
Մելիք Ալլահ-ղուլի Սուլթան 40
Մելիք Բեգլար Ա 36, 37,
Մելիք Բեգլար Բ 45, 52, 217, 216
Մելիք Թամրազ 38, 44
Մելիք Եաւրի 37
Մելիք Մեջլում 48, 49
Մելիք Ցովսեփ Ա 34, 37, 38, 41, 45, 52
Մելիք Ցովսեփ Բ 50, 215, 216, 313
Մելիք Շահնազար Բ 10, 40, 41, 42
Մելիք-Շահնազարեան Լեւոն 122, 137, 197, 198, 351, 352, 353, 357, 362, 364, 365, 368, 636
Մելիք Ջումշուտ Մելիք-Շահնազարեան 46
Մելիք Ռուստամ 50
Մելիք Վանի 50
Մելիք Փրիդոն Մելիք Շահնազարեան 46, 50, 52
Մելոյեան Ֆելիքս 649
Մելքոնեան Գագիկ 639
Մելքոնեան Էդիկ /Թիֆլիսեցի/ 518
Մելքոնեան Մարգար 288
Մելքոնեան Մոնթէ /Ավօ/ 169, 201-202, 288-289, 307, 569, 574, 641, 673, 675
Մելքումեան Էդուարդ /Արջ Էդօ/ 156, 162, 163, 225, 240, 243, 247, 249, 251
«Մածն Տիգրանից»՝ Եղիշէ, Սաքօ, Նաիրա, Հայկ 317
Մեհդի-ղուլի խան 53
Մեհրաբեան Ռաֆայէլ 556, 588
Մեղրեան Ալեքսանդր /Շուրա/ 93, 94, 208
Մեղրեան Անահիտ Արշաւիրի 81
Մեղրեան Արշակ 81-83
Մեղրեան Արշաւիր 81
Մեղրեան Արտուշ Զինաւորի 93,94, 108
Մեղրեան Բէնիկ 105
Մեղրեան Գարեգին 77
Մեղրեան Զինաւոր Շահէնի 80, 96, 451
Մեղրեան Զինաւոր Պօղոսի 66, 69, 71, 84, 86-91, 194, 195, 196, 197, 208, 253, 257, 493, 618, 629, 648, 669
Մեղրեան Էմմա Զինաւորի 93
Մեղրեան Ժենիա Զինաւորի 93
Մեղրեան Իշխան Պօղոսի 105
Մեղրեան Իրինա Զինաւորի 93
Մեղրեան Լիլիթ Շահէնի 96
Մեղրեան Լուսինէ Շահէնի 96, 319
Մեղրեան Խաչատուր 105
Մեղրեան Հայկ 105, 549, 550, 586
Մեղրեան Մայիլ Պօղոսի 105
Մեղրեան Մարգուշա 84, 91-94
Մեղրեան Մեխակ Պօղոսի 105
Մեղրեան Իւրիկ /Թաւադէին/ 93, 108
Մեղրեան Նանիկ 315
Մեղրեան Նունիկ 315
Մեղրեան Նուշի 315
Մեղրեան Շահէն Զինաւորի 2-706
Մեղրեան Պետրոս Զինաւորի 2, 66, 82, 93, 94, 95, 148, 192, 208, 218, 234, 251, 309, 330, 331, 332, 333, 334, 335, 361, 406, 423, 481, 507, 512, 529, 538, 555, 576, 579
Մեղրեան Պօղոս Վերդիի 72, 77, 87, 257
Մեղրեան Պօղոս Զինաւորի 91, 93, 95, 117, 140, 141, 148, 152, 153, 159, 178-180, 181, 182, 186, 189, 221, 222, 223, 233, 259, 261, 380, 406, 434, 515, 555, 589

Մեղրեան Ռաշիդ /Կաուէյն/ 93, 94
Մեղրեան Սեդա Ֆրիդոնի 104
Մեղրեան Սերգի 105
Մեղրեան Սոնիա Զինաւորի 93
Մեղրեան Ստելլա Շիմշատի 95-97, 102
Մեղրեան Վերդի Մեղրիի 72
Մեղրեան Վլադիմիր 105
Մեղրեան Ֆրիդոն 81, 105
Մեղրի, նահապետ եւ անուանադիր տոհմի 66-71, 72, 84, 133
Մեյրոյեան Ատոմ 261
Միհրան 27
Մինասեան Համլետ 304, 305, 306, 308
Մինասեան Հռիփսիմէ 229
Միչիկը Երեւանից 260
Միսակեան Լեւոն 166
Միրզա Իսաքաշի 47
Միրզա Մահմուդ Մուստաֆա 37
Միրզոեւ 129, 130,
Մխիթարեան Աղուան 166
Միքայէլեան Իոսիֆ 550, 552
Միքայէլեան Լիւդվիդ 317
Մխիթարեան Մայիս 406, 414 - 417
Մխիթարեան Ռաֆիկ 314
Մկրտիչ Կաթողիկոս Խրիմեան 26
Մկրտչեան Արթուր 4, 64, 320, 329, 330, 331-332, 338, 339 - 340, 347, 348, 349, 351, 352, 357, 358, 378, 554, 555, 638, 675
Մկրտչեան Կարօտ 153, 155, 156, 160, 179, 180, 223, 224, 225, 244, 245, 260, 382, 398, 400, 402, 405, 408 - 414, 416, 419, 421, 430
Մկրտչեան Մակիչ 160, 413, 421, 627 - 628
Մկրտչեան Մկրտիչ /Մարշալ/ 244, 246, 249, 252, 253, 253
Մկրտումեան Վարդան 150, 616
Մնացականեան Աչոտ 529
Մնացականեան Գեորգիմ 288
Մնացականեան Լենա 315
Մնացականեան Ռոբերտ 439
Մնացականեան Սոնիա 316
Մովսէս Խորենացի 7
Մովսէս Կաղանկատուացի 15, 28
Մռաւեան Հրաչիկ 148
Մուզմուզ- տե՛ս՝ Ղազարեան Կարէն
Մութալիբով Այազ 290, 371, 482, 483
Մուշեղը Պոլշեւիկից 405, 409, 411
Մուրադ Զաքարեան 410
Մուրադեան Գեղամ 148, 156, 210, 212, 275, 278, 402, 529
Մուրադեան Իգոր 114, 115, 138, 161, 198, 251, 252, 342, 349, 351, 355, 363, 364, 368, 370, 642, 657-659
Մուրադեան Հրաչ 160, 179, 180, 186, 224, 225, 244, 245, 409, 410, 411, 412, 413, 428
Մուրադեան Ջանփոլադ 549, 550, 552, 556, 593, 586, 587, 588

Ն

Նակոբ, Գրիչ 104
Նակոբեան Արթուր /Քեաբի Արթուր/ 145, 156, 207, 285, 287, 333, 336, 357, 522, 523, 528, 588, 602 -605, 606, 607, 608, 609
Նակոբեան Գայանէ 317
Նակոբեան Գարրի 317
Նակոբեան Լադիկ 166
Նակոբեան Լէոնիդ 370, 439
Նակոբեան Նովսէփ 307
Նակոբեան Մանուշ 318
Նակոբեան Նովիկ 156, 516, 526, 528, 604, 613

Յակոբեան Ռուբէն 166
Յակոբեան Լադիկ /Ալաւերդիից/ 164
Յակոբեան Վլադիկ 347, 348, 349, 351, 352, 354, 355
Յակոբեան Տիգրան 337
Յակոբեան Տոլիկ 543
Յակոբեան Ֆրեդիկ320
Յակոբջեօխեան Սարգիս /Կոստան/ 232
Յարութիւնեան Ալեխս 327
Յարութիւնեան Արայիկ 327
Յարութիւնեան Գէորգ 335
Յարութիւնեան Էդիկ 273, 279
Յարութիւնեան Լիւդմիլա 484
Յարութիւնեան Կամօ 156, 528, 530, 543, 561, 597, 598, 599, 602, 608, 610
Յարութիւնեան Մհեր /Ճուտ/ 160, 226, 229, 230, 241
Յարութիւնեան /գեներալ/ 500, 501
Յարութիւնեան Իւրա 439, 642
Յարութիւնեան Սամուէլ 352, 360, 378
Յարութիւնեան Վոլոդիա 433, 493
Յովակիմեան Անդրանիկ /Պռօշեա-նից/ 180, 244, 245, 315
Յովակիմեան Հայկ 272
Յովասափեան Անդրեաս 98
Յովասափեան Եղիշէ 98
Յովասափեան Մելիք 120
Յովասափեան Շահէն /Կուճուր Շահէն/ 115, 134, 148, 149, 153, 156, 157, 159, 160, 189, 210, 266, 285, 328, 370, 372, 420, 515, 529, 539, 558, 582, 583, 648, 660, 661
Յովիկը Ոսկեհատից 260
Յովիկ Դայի, տե՛ս՝ Յակոբեան Յովիկ
Յովհաննէս Հասան Ջալալեան 44, 103
Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր 29
Յովհաննիսեան Արա 528
Յովհաննիսեան Ալբերտ 641
Յովհաննիսեան Ասքանազ 207
Յովհաննիսեան Արկադիա 279
Յովհաննիսեան Գառնիկ 431
Յովհաննիսեան Գենիա 318
Յովհաննիսեան Դաւիթ 145, 146
Յովհաննիսեան Կամօ 154, 156, 163, 307, 308, 646
Յովհաննիսեան Համլետ 164
Յովհաննիսեան Մայիս 261
Յովհաննիսեան Մայոր 161
Յովհաննիսեան Մարտին 276
Յովհաննիսեան Մերի 320
Յովհաննիսեան Սասուն 236
Յովհաննիսեան Վահան 16, 141, 142, 157, 161, 221, 233, 234, 256, 257, 258, 259, 261, 263, 264, 271, 377, 545, 550, 629
Յովհաննիսեան Րաֆֆի 253 - 255
Յովնան Եպիսկոպոս 38, 39, 675
Յովնան Խուրեցի 28
Յովսէփ Էմին 38, 39, 112, 215
Յովսէփեան Դիմա 273
Յովսէփեան Լեւոն 268
Յովսէփեան Համլետ 165
Յովսէփեան Հարմիկ 160, 161, 172, 174, 178, 184, 185, 186, 187, 623-625
Յովսէփեան Նորայր 279, 288
Յովսէփեան Ռուբէն 487, 488, 523, 647 - 652

Ն

Նադիր Շահ 40
Նազարեան Նիկալ 281, 282
Նազարէթեան Վալերի 231, 234
Նալբանդեան Արմինէ 529, 590,

591, 592, 593 - 594, 596, 597, 598, 599, 601-602, 607
Նալբանդեան Միքայէլ 26
Նահապետեան Համազասպ 417, 431
Նահապետեան Սեւան 156, 528, 614
Նանագիւլեան Սեդրակ 16
Նասիբեան Մարտիկ 528
Նաւասարդեան Աշոտ 439, 581
Նեվզորով Բորիս 535, 606
Նիկողոսեան Ստեփան 199, 579-582, 584, 595, 586, 593
Նոյ Նահապետ 69
Նույկին Անդրէյ 552
Նույկինա Գալինա 552

Շ

Շաքաղ Ան. 290, 386
Շախեան Մհեր 202, 286
Շահ Աբբաս 20
Շահբազեան Նորիկ 593
Շահմուրադեան Սամուէլ 439
Շահնազարեան Դաւիթ 439, 642
Շահնազարեան Մարտիրոս /Երզնկայից/ 226, 232
Շահվերդի Խան 215
Շամլուղեցի Գարիկ 163
Շամլուղեցի Միշա 398, 399, 400, 424, 425
Շապոշնիկով /մարշալ/ 285
Շառոյեան Ռոլանդ 632
Շատալին 482
Շելլունց Ահարոն 150
Շելլունց Եաչա 156,
Շելլունց Հայկ 146, 156, 275, 279, 333
Շեվելեւ Միխայիլ 212
Շիմօ /Ներքինչէնցի հետախոյզ/ 516
Շիրինեան Վիգէն 137
Շիրխանեան Վահան 134, 357, 358, 367
Շուշմանեան Վարդան 200

Ո

Ոսկանեան Գէորգ 529, 591, 594, 596, 598, 600, 601, 602, 607
Ոսկանեան Շիմշատ 95
Ոսկանեան Սամսոն 291, 328

Չ

Չալեան Սերգէյ 136, 150, 153, 155, 156, 163, 285, 305, 307, 308, 328, 334, 337, 388, 390, 402, 403, 420, 446, 450, 491, 492, 494, 509, 518, 526, 529, 537, 508, 548, 558, 588, 591, 592, 594, 599, 608, 609, 614, 639, 660
Չաքրեան Յակոբ 488
Չիբուխչեան Անահիտ 17
Չիլինգարեան Հայկ 314

Պ

Պապիկեան Արայիկ 540, 593
Պատկանեան Ռափայէլ 26
Պարգեւ /հետախոյզ/ 597, 598
Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան 196, 197, 198, 299, 200, 202, 203, 356 596, 617-619, 622, 640
Պաւէլ Ա 46
Պետրոս Մեծ 11, 42
Պետրոսեան Անդրանիկ 163, 164, 281, 282
Պետրոսեան Աշոտ 165
Պետրոսեան Գարիկ 653, 655
Պետրոսեան Գէորգի 340, 344, 347, 348, 350, 352, 354, 355, 357, 360, 361, 362, 363, 364, 365, 357, 373, 374, 378, 653
Պետրոսեան Դաւիթ /Խուդոյ/ 598, 599

Պետրոսեան Դերենիկ 482, 521
Պետրոսեան Լէոնարդ 352, 363, 370
Պետրոսեան Կոլիա /Կոլիկ/, 148, 151, 153, 395, 418, 630
Պետրոսեան Կոստիա 200
Պետրոսեան Մուրադ 368
Պետրոսեան Ռազմիկ 210, 211
Պետրոսեան Վրէժ 400, 402
Պետրոս Մեծ 41, 42
Պետունց Ռուբէն 333
Պետօ տե՛ս՝ Ղեւոնդեան Պետրոս
Պէրպէրեան Նազարէթ 652-657
Պոլիանիչկօ Վ.Պ. 130, 151, 371, 374, 375
Պուազեան Աչոտ 645
Պուազեան Գրիչա 645
Պրալնիկով Անդրէյ 131, 136, 207, 211, 212, 218
Պօղոսեան Ալբերտ 529, 593, 594, 596
Պօղոսեան Արամ /Պոնչ/ 184
Պօղոսեան Հենրիխ 120, 121
Պօղոսեան Յակոբ 198, 343, 377, 522, 534, 540, 591, 602, 604, 605, 606, 607, 608, 609

Ջ

Ջամալեան Սմբատ 529, 591, 694-592, 594, 595, 599, 600, 601, 607, 608
Ջամալով 207
Ջանունց Մամիկ 145, 517, 525, 528, 549, 601
Ջանունց Ռաֆիկ 145, 509
Ջանունց Ռոզա 509
Ջանունց Վալերի /Վեալօ/ 145, 417, 526, 531, 613
Ջաւադ խան 47, 48
Ջիլաւեան Աբօ 586
Ջիւանչիր 27, 28
Ջլաւեան Արկադի 328
Ջլաւեան Վալերա 156, 528

Ռ

Ռօմա դայի 273
Ռոստոմեան Վաչէ 161, 260
Ռուցկոյ 293

Ս

Սալահեան Անդրանիկ 322
Սալահեան Մերուժան 322
Սալահեան Ջուլիետ 322
Սալահեան Սասուն 322
Սալում 67
Սախարով Անդրէյ 461
Սահակ Սեւադա 22
Սահակեան Արարատ 160, 168, 223, 224, 243, 244, 245, 246, 253, 260, 281
Սահակեան Գագիկ 218
Սահակեան Գուրգէն 201
Սահակեան Խաչիկ 154, 210, 272, 279, 280, 287, 288, 515, 516, 523, 529
Սահակեան Մօսի 279
Սահակեան Ցովիկ 537
Սահակեան Ռուբէն 279
Սահակեան Սլաւիկ 537
Սահլ Սմբատեան 28
Սաղաթէլեան Ժորա 144, 145, 311
Սաղաթէլեան Լաերտ 148. 153, 167
Սաղաթէլեան Պարգեւ 528
Սայէ /Մելիք Բեգլարեան/ 50
Սայիլեան Շահէն /Շուն-Շահէն/ 156, 526, 528, 531, 532, 559, 561, 564, 567, 598
Սանթրոսեան Ռաֆիկ 312
Սառաջեան Արթուր 120, 121
Սասունցի Դաւիթ 91
Սարապեան Դաւիթ /Դեւ/ 304, 305,

306, 308
Սարգիս Եպիսկոպոս /Կաթողիկոս/ Հասան Ջալալեան 44, 53
Սարգսեան Անդրանիկ 537
Սարգսեան Առաքել 160, 259
Սարգսեան Արամ Գ. 481, 482-486
Սարգսեան Արտուշ 150
Սարգսեան Գարիկ 399, 402, 431
Սարգսեան Դերենիկ 528, 543, 545-547, 550, 559, 627
Սարգսեան Ջօրիկ 537
Սարգսեան Ժորա 166
Սարգսեան Լենա 315
Սարգսեան Լուսինէ 316
Սարգսեան Կարէն 315, 528
Սարգսեան Հասմիկ 311
Սարգսեան Մերուժան 307
Սարգսեան Մինաս 315
Սարգսեան Իւրա 154
Սարգսեան Նորայր 166
Սարգսեան Շալիկօ 537
Սարգսեան Սէրժ 363, 452, 569
Սարգսեան Սօս /Գորիսեցի/ 260
Սարգսեան Տիգրան 166, 304, 305
Սարգսեան Վազիֆ 537
Սարգսեան Վազգէն 218, 226, 343, 344, 346, 352, 357, 358, 367, 371, 377, 386, 406, 408, 414, 420, 429, 458, 463, 493, 510, 511, 550, 581, 583, 585, 643, 663, 667
Սարգսեան Վաչիկ 327
Սարգսեան Քէրոր 17, 131, 422, 462, 493
Սարիչեւ Անդրէյ 533, 569, 571, 573
Սաֆոնով Վ.Ն., գեներալ 142, 375
Սեդրակեան Սեդրակ 550
Սեյրանը Թալիշեցի 595
Սեյրանեան Շահէն 156, 528, 598, 607
Սեյրանեան Պապիկ 229
Սեյրանեան Ռաշիդ 150
Սենեքերիմ 29
Սերոբ Փաշա 164
Սեփեան Հենրիկ 141, 254
Սեֆիլեան Ժիրայր /Ժիրօ/ 172, 183, 186, 187, 620-621
Սիմէոն Կաթողիկոս Երեւանցի 39
Սիմոնը Երեւանից 260
Սիմոն Խոտորաչէնցի 103
Սիմոնեան Անուշաւան 164, 405, 426
Սիմոնեան Պօղոս 543, 549, 550
Սիմօնեան Ռաֆայէլ 166
Սիմոնեան Ռուզաննա 316
Սիմոնեան Սասուն 153, 156, 163, 281, 282, 398, 399, 402-405, 423-424
Սմիռնով Վ.Խ, ռուս գնդապետ 262, 282, 290
Սոկոլով Վալերի. ռուս գեներալ, 4-դ բանակի հրամ. 283
Սողոմոնեան Մարինէ 326
Սողոմոնեան Մելսիկ 229
Սողոմոնեան Յակոբ 507
Սպիրիդոնով, ռուս սպա 211
Սպիտակի Միքօն 236, 239
Ստամբոլցեան Խաչիկ 377, 441-442, 500-503
Ստարովոյտովա Գալինա 461
Ստեփանեան Գենադի 206, 207
Ստեփանեան Կոլիա 271
Ստեփանեան Համլետ 148
Ստեփանեան Վարդան /Դուշման/ 168
Սրբազանը տե՛ս՝ Պարգեւ Արքեպիսկոպոս
Սուղեան Արէգ 417, 431
Սուղեան Գեղամ 509
Սուղեան Դաւիթ 517

Սուղեան Շամօ 146, 272
Սուրիկը Գրիբոյեդովից 161

Վ

Վազգէն Ա. 319
Վալոզ դայի /Մարտունաշէնցի/ 239, 240
Վախթանգ, վրաց թագ. 38, 39
Վախտանգ, Խաչէնի տէր 30
Վահանեան Վարդան 540
Վանցեան Սերգէյ 218, 512, 556, 577-582
Վանա Իշխան 125
Վաչագան Բարեպաշտ 25, 36, 101
Վարդան Մամիկոնեան 675
Վարդան /Ցատուկ Գնդից/ 303
Վարդանեան Աթաբեկ 160, 301
Վարդանեան Բէնիկ 210
Վարդանեան Ջարմիկ 529
Վարդանեան Մեխակ 279
Վարդանեան Սամուէլ 200, 202, 282, 285, 286
Վարդգէս Թալինցի 160
Վարդգէս Պուշկանցի 160, 409, 413
Վեղիի Հրաչ 557
Վելեան Աւագ 148, 150
Վերդեան Արտուշ 279, 302
Վերդեան Հայկ 156, 528, 540
Վերմիշեւա Սեդա 552
Վիրաբեան Իսահակ 339
Վոլսկի Արկադի 61, 121, 209, 211, 294
Վրէժ /«Հաւատացեալ»/ 501

Տ

Տէր Գրիգոր քահանայ 198-203
Տէր Թադէոսեան Արկադի /Կոմանդոս/ 359, 367, 377, 429, 469, 491 - 493, 609, 615, 644
Տէրիոխին, օդաչու 584
Տէր Կորիւն Ցովասափեան 98
Տէր Մինասեան Ռուբէն 171
Տէր Պետրոսեան Լեւոն 134, 139, 292, 313, 338, 361, 387, 437, 471, 481, 483, 484, 488, 489, 635, 642, 652, 663
Տիգրան Թալինցի 230
Տիգրան Մեծ 24
Տիգրան, Վապիֆի վարորդը 507
Տիկօ, Կարաչինարցի 594
Տլոտ, տե՛ս Բարսեղեան Աբրամ
Տէրտէրեան Համբարձում 183
Տօլիկ, Հրետանաւոր 543
Տօնեան Կոլիա 274
Տօնեան Նելլի 322
Տօնոյեան Շահէն 442, 487
Տօնոյեան Սալարտակ 268

Ր

Րաֆֆի /Յակոբ Մելիք Յակոբեան/ 15, 16, 19, 23, 26, 32, 36, 37, 42, 46, 49, 51, 100, 101, 104, 112

Ու

Ուլուբաբեան Բագրատ 15, 16, 30, 31, 370, 519, 551, 629 - 630

Փ

Փամբուխչեան Սարօ 160, 414
Փամբուխչեան Վարուժան 400, 407
Փանահ Խան 20, 40, 41, 42, 43, 45
Փոքր Գագօ 302
Փոքր Հրանտ 174, 187, 260
Փոքր Սիմոն 40

Ք

Քեաւառցի Թաթուլ 568
Քեօխեան Գուրօ 145, 526, 528
Քեօխեան Մարտին 417

Քեօխեան Մխիթար 317
Քեօխեան Մհեր 417
Քէրոբեան Աչոտ /Շոթա/ 159, 161, 184, 633
Քոչարեան Արտիկ 164
Քիաճորան Գիւրգուն 489
Քոչարեան Ռոբերտ 349, 350, 352, 353, 357, 358, 360, 363, 364, 365, 373, 374, 378
Քոքս Քերոլայն 291, 344, 367, 552

Օ

Օհանեան Գրիգոր 537
Օհանեան Համլետ /Ստեփան/ 587 - 589
Օհանեան Վանիկ 537
Օհանեան Սերգէյ 110, 111
Օչին Իշխան 30, 31
Օսոցկի Վալենտին 552
Օվչեան Արթուր /«Արաքսյի» Ճուտը/ 239

Ֆ

Ֆաթալի խան 42
Ֆելիքս, Կարօտի ջոկատից 411, 428

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածութիւն 3
Շահումեանի խնդրի եւ Շահէն Մեղրեանի կենսագործունէութեան լուսաբանման վիճակը 3
Աշխարհագրական գործօնը եւ Արցախի առանձնայատուկ ոգին 18

Մասն առաջին
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
Գլուխ առաջին
ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՒԱՌԸ

Նշմարներ Արցախի պատմութեան *24*
Գիւլիստանի մելիքութիւնը *33*
Շուշիի բերդաքաղաքի զօրացումը եւ դրա հետեւանքները *40*
Գաղթ դէպի Վրաստան *45*
Արցախի, մասնաւորաբար Գիւլիստանի մելիքների կենցաղավարման իւրայատկութիւնները *51*
Արցախը ռուսական տիրապետութեան տակ *54*
Արցախը խորհրդային տարիներին եւ Արցախեան ազատագրական պայքարը *61*

Գլուխ եկրորդ
ՄԵՂՐԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ձինաւոր ապայի ազգապատումը. Մեղրի պապը *66*
Մեղրեաննների տոհմածառը *72*

Գլուխ երրորդ
ՄԵՂՐԵԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Ծնողները *84*
Դպրոցական տարիները եւ ուսանողական կեցութիւնը *97*
Աշխատանքային գործունէութեան սկիզբը *108*

Մասն երկրորդ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱԽԱԼՈՒՄԸ ՇԱՀՈՒՄԵԱՆՈՒՄ

Գլուխ չորրորդ
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Շահումեանի շրջանի առանձնայատկութիւնները 113
Հայ-թուրքական նոր հակամարտութիւնը. քաղաքական գործընթացներ եւ դիւանագիտական ակտեր . . . 117

Գլուխ հինգերորդ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Շահէն Մեղրեանը շրջանի առաջնորդ 133
Զէյնք-զինամթերքի խնդիրը 140
Ջոկատների կազմաւորումը 143
Հայաստանի Հանրապետութիւնից ժամանած ջոկատները 157

Գլուխ վեցերորդ
ՀՈԳԵՒՈՐ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՎԵՐԸՆԹԱՑՔ

Սփիւռքահայերի ներգրումը 168
Շահումեանը համահայկական մերձեցման /միաբանութեան դաշտ 168
Գաղափարական դաստիարակութիւն 168
Կարգապահութեան խնդիրը 168
Հոգեւոր զարթօնք 190

Գլուխ եօթերորդ
1990 ԹՈՒԱԿԱՆ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Շրջանի ղեկավարութիւնը՝ պատանդ 205
Մանաչիդի 1990-ի յունուարեան կռիւը 209

Գլուխ ութերորդ
«Օղակ» գործողութիւնը. Գետաշէնի եւ Մարտունաշէնի անկումը

Իրադրութիւնը Գետաշէնում եւ Մարտունաշէնում . . . 217
Գետաշէնի անկումը . . . 225
«Արաքօն» Մարտունաշէնում . . . 235
Դիւցազնական ոգին Մարտունաշէնում . . . 242
Ենթաշրջանի անկումից յետոյ . . . 249
Հարուած Ումուդլուին . . . 255

Գլուխ իններորդ
Էրքէջ, Բուզլուխ, Մանաշիդ

«Օղակ» գործողութիւնը շարունակւում է . . . 261
Երեք գիւղերի կորուստը . . . 271
Երեք գիւղերի ազատագրումը . . . 281
Պատգամաւորների եւ լրագրողների օժանդակութիւնը Շահումեանին . . . 290
Բախումներ Կարաչինարում . . . 300
Թոդանի մարտը . . . 304
Յաւելուած. Գիւլիստանի Սբ Աստուածածին եկեղեցու Յիշատակաց մատեանը . . . 309

Գլուխ տասներորդ
1992 թուականի սկիզբը

Արթուր Մկրտչեանն այցելում Շահումեան . . . 327
Կարճատեւ բախում եւ աղէտ երկնքում . . . 333

Գլուխ տասնմէկերորդ
1992 թուականի նախագահական երկրորդ ընտրութիւնները ԼՂՀում

Զօրի Բալայեանի ազատ նավարկութիւնը . . . 371
Այլ կարծիքներ . . . 377

Գլուխ տասներկուերորդ

92 թուական, յունիսի 13. Շահումեանի անկումը

Անկատար նպատակ. իրադարձումիւնների կտրուկ շրջադարձ 382
Իրադարձութեան մէկնումիւնը Հաթերքում 388

Գլուխ տասներեքերորդ

1992թ. յունիսի 13. Ռազմադաշտային դրուագներ

Բուզլուխի դիրքերում 398
Կարօտի անհետացումը 408
Մանաչիղի դիրքեր 414
Կարաչինարի դիրքեր 418
Այլ մեկնումիւններ 420

Գլուխ տասնչորսերորդ

Բռնագաղթի պատկերներ

Ալավերդու ջոկատը բռնագաղթի ճանապարհին 423
Պուշեանի խումբը բռնագաղթի ճանապարհին 428

Գլուխ տասնհինգերորդ

Ատեան Շահէն Մեղրեանի համար

Քաւութեան նոխազներ 432
Շահումեանի անկման պատճառները քննող յանձնաժողովը 438
Շահէն Մեղրեանի մամլոյ ասուլիսը 443
Փոխանակում. Շահումեանը Լաչինի դիմաց 461
Ինչ-որ մէկին ձեռնտու էր ազատուել Շահումեանից . . 463

Գլուխ տասնվեցերորդ

Շահումեանի անկման պատճառները

Պատճառագիտութեան հղացք 467
Խորքային հետախուզութեան բացակայութիւնը 469

Գլուխ տասեօթերորդ
Յաւելեալ լուսաբանումներ

Հրապարակումներ Շահումեանի պարտութեան վերաբերեալ 480
«Յաղթանակած երկրի կորցրած տարածքները» 480
«Շահումեանի յանձնումը եղել է քաղաքական որոշում» 481
«Շահումեանի յանձնումը նախապատրաստուել է Լեւոն Տէր Պետրոսեանի հետ» 484
«Ինձ չեն հրաւիրել յանձնաժողով...» 485
«Արիւն եւ Մոխիր» 487
Յակոբ Զաքրեան. «Թշնամուս թշնամին իմ բարեկամն է» 488
Արկադի Տէր-Թադէոսեանը Շահումեանի անկման պատճառների մասին 491
Վլադիմիր Յարութիւնեան 493
Վազգէն Մանուկեան 493
Շահումեանի անկման անդրադարձումը Արցախի ընդհանուր դրութեան վրայ 499

Մասն երրորդ
ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Գլուխ տասնուերորդ
Հայդուկային պայքարի սկիզբը

Առաջին խումբը եւ ռազմակայանի հիմնումը 504
«Դուք մեր հայդուկապետն էք» 514
Հայդուկային առաջին կռիւները 517
Շահումեանի հայդուկային ջոկատի առանձնայատկութիւնները 525

Գլուխ տասնիններորդ
1993-ի առաջին ամիսների գործողութիւնները

Հայդուկային ջոկատը մեծ ճանապարհների տիրակալ 528

Սարսանգի գործողութիւնը 532
Տօնաչէնի, Թալիշի, Գիւլիստանի առաջին մարտերը . . 540

Գլուխ քսաներորդ
Ուղղաթիռի կործանումը

Նենգամտութիւն 548
Հայութեան ընդհանրական սուգը 550

Գլուխ քսանմէկերորդ
Հայդուկային գործողութիւնները
Շահէն Մեղրեանից յետոյ

Դաստագիրի գործողութիւնը 559
Մատաղիսի գործողութիւնը 562
Յաւելուածներ 569
1. Ալեքսանդր Կուրեղինի Արցախեան պատերազմը . . 569
2. Օդաչուները 577
3. Շահումեանի բժիշկները 589
4 Արթուր Յակոբեան, Յակոբ Պօղոսեան, Կամօ Յարութիւնեան 602

Գլուխ քսաներկուերորդ
Ընկերներն ու զինակիցները Շահէն Մեղրեանի մասին

Վերջաբան. Նրա մեծութիւնը մահով չէ պայմանաւորուած 671
Շահէն զինաւորի Մեղրեանի /1952-1993/ կենսագործնէութեան նշմարանքը 676
Շահումեանի շրջանի գոկատների անուանացանկը 700
Ընդհանուր անուանացանկ 710

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԵՇՆ ՇԱՀԷՆ

Խմբագիր՝ Ռուբէն Յովսէփեան
Սրբագրիչներ՝ Գէորգ Եազիճեան, Սամուէլ Խաչատրեան
Խորհրդատուներ՝ Պետրոս Մեղրեան, Նովիկ Գիւլումեան
Գեղարուեստական ձեւաւորումը՝ Սիմոն Միլիտոնեան
Համակարգչային էջադրումը՝ Նունէ Սամուէլեան
Համակարգչային շարուածքը՝ Նարա Գէորգեան

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրութիւնը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Ծաւալը՝ 46.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300:

Տպագրել է «Արսոն» ՍՊԸ